



Handwritten scribbles and numbers: 082, 4-15

Հ Ե Ն Գ Ի Դ

ՅՅՈՒԳԱԿԱՆ Ե ԼՈՒՍ

ՆՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՆՆՆԵՐ

ԵՇԻՔՏՈՒԹՅՈՒՆ

ՍՏՐՈՒԿՆԵՐԸ և ԵՐԵՎԱՆԻ ՏԵՄ

ՆԵՐՔԵՐԵՆՅՑ

ԵՐԿՐՈՐԴ ՄԵՍՆ

Die Wissenschaft hat keine Geheimnisse mehr, die sie ängstlich und neidisch verbirgt, sondern frei und freudig sprengt ihre Quelle für Jeden, der mit dem edeln Durste des Wissens ihr naht.

Schardler: das Buch der Natur, Einleitung, S. XIX.

Գիտականությունը չունի այսուհետև ոչինչ գաղտնիք ինչպես անհատական անհատի և նախանշանների, այլ ազատաբան և առատապետ զննիչ և յայտնում նորա ազդիչը ամեն մարդու համար, որ գիտական ազնիւ ծարսով հետևում նորան:

Հեղինակի թնայանալ իր. Նյու-Յիքս 19 թվ:

Handwritten notes on the left margin: 40295, A II 288M



Handwritten initials or signature in the top right corner.

Имя

Иван Иванович Шубинский
Иван Иванович Шубинский
Иван Иванович Шубинский
Иван Иванович Шубинский

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

с тем, чтобы по отпечатании представлено было в Ценсурный Комитет указанное число экземпляров. Июня 25 дня 1856 года, Тифлис.

Ценсоръ И. Кайтмазовъ.

Handwritten notes on the right side of the page, including the number 1122.



Handwritten text at the top of the page, possibly a signature or title, written in a cursive script. The text is oriented upside down relative to the rest of the page.

RECEIVED

Main body of the document containing several paragraphs of faint, illegible text, likely a receipt or ledger entry.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ.

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
 սիրտ, ընտանի իմ հոգու համար.
 Եստի՞ն զու խոսք, սխմելիս հասած,
 զու սիրոյ քաղցրեկ առաջին յայտած.
 Մանկական լեզուիս թմբակա՞նք ուղիւր,
 հընչումս իմ ձէլ զու մըս անգաղար:

Ո՛հ, թնչիս պղտոր է սքրտիս սքը,
 էրբ պանդուխտ էի սուտի սանք.
 Եթէ հարկ էր ինձ այլապէս լեզուով
 իմ մարտը յայտնել սուտը բաներով,
 Ար էրբէք սիրել հարեի չե ինձ,
 որ ձայն պղտորի բնու իսկ չե՞ն ինձ:

Գեղեցիկ լեզու, հրաշուն լեզու,
 այդ թնչիս քաղցրը հընչումս ինձ զու.
 Կամի՞տ աւելի քով ծանոթանալ
 քո Խոթ գանձերին, հոգով հայտնաւ.
 Եսես թէ ահա գանձումն ինձ
 պատկեր ու հայրեր խոր գերեզմանեց:

Հընչիք զու հընչիք այժմ է յարեան
 մայրենի լեզու, բարբառ սիրական.
 Երբ, բարեբախտի հնարական փոշոց,
 զու իմ հոյ լեզու, մտառած վաղուց.
 Ըզրեցիք նոր կեանք սուրբ գրասաններով,
 որ անձանք սիրտ վառի քո սիրով:

Եսն անց փշուռ Եստանց շունչը,
 սուրբ է այն միտ, այլ ձե ու սը.
 Բայց թէ անթիւ, գործնաւոր պէտք էր,
 իմ սքրտի սեղանը յայտնել սքրտն էր
 իմ երանական ժամանակներդ —
 սպա չէ խոսել իմ մըսս խոսել:

սես թէ արհամարհումք նորան, Բաղուկները չեն տուած նորան, որ լինին նորա համար սխներ, կամ յինարան նորա մարմնի ծանրութիւնը կրելու: Նորա ձեռքերը չէ պիտոյ կոխեն հոգը և յաճախ շփելով նորան, կորուսանեն նրբութիւնը շոշափութեան, որի գրկիսաւոր գործարանը նորա են. նորա բաղուկները և ձեռքերը ստեղծած են աւելի աղնիւ սյաշտոններ կատարելու համար, տեղ հասուցանելու կամքի հրամանները, ըմբռնելու հեռաւոր բաները, հեռացնելու խափանները, ընդդիմանալու ֆրասակար պատահարներին, ընդունելու և պահելու հաճոյական բանը և տանելու հասուցանելու միւս զգայարաններին:

Աչբը որ հոգին հանդարտ է, երեսի բոլոր մասները խաղաղ գրութեան մէջ են. նոցա համեմատութիւնը, նոցա միաւորութիւնը, նոցա զուգահեռանութիւնը դեռ ևս բաւական յայտնապէս ցուցանումն նորա խորհուրդների քաղցր ներդաշնակութիւնը և համապատասխան էին նորա սրտի խաղաղութեանը: Քայց երբ որ հոգին խռոված է, մարդու երեսը լինում մի կենդանի պատկեր, որի մէջ նկարվումն նորա ախտերը երբեմն մեղմ և երբեմն զորաւոր կերպով, որի մէջ հոգու ամենայն շարժողութիւնը բացայայտվում մի առանձին գծագրութիւնով, ամենայն գործողութիւն մի յատուկ շարժառիթով, որի կենդանի և արագ տպաւորութիւնը կորում կամքի առաջը և ազդու նշաններով յայտնի է կացուցանում, դուրս է բերում մեր ծածուկ զգացողութիւնների պատկերքը:

Այս բաղմնական որպիսութիւնքը հոգու և սրտի նկարագրվումն մանաւանդ թէ աչբերի մէջ, և սոցա մէջ կարելի է առաւելապէս մերահասու լինել նոցա: Աչբը աւելի մտ կապակից է հոգու հետ, քան թէ մի այլ գործարան. ասես թէ աչբը շոշափում հոգին և մասնակից է նորա շարժումներին. նա երեւելի է կացուցանում հոգու շատ ուժգին կրողութիւնքը և նորա խռովալից ալեկոծութիւնքը, որպէս դարձեալ նորա շատ հանդարտ ախտերը և նորա շատ մեղմ զգացողութիւնքը: Աչբն է, որի մէջ այս բոլոր որպիսութիւնքը պատկերանումն այնպէս ազդու, այնպէս պարզ ու պայծառ կերպով, ինչպէս որ գոյացած էին մարդու ներսումը. աչբն է, որ արագաշարժ տանում և հասուցանում միւսի հոգուն այն հոգու կրակը, գործողութիւնը և պատկերը, որից յառաջանումն սոքա: Աչբը միանգամայն ընդունում և արձակում իւրանից մտածութեան լոյսը և զգացողութեան ջերմութիւնը. սա հոգու զգայարանն է և իմացականութեան բարբառը:

2. Երբ որ զայն անգամ զի արարեալ է զմարտիկն:

Ընկալն ներգործականութիւն, թէ մարմնաւոր և թէ հոգեղէն, յառաջանում հարկաւորութենից. ինչքան որ շտաանումն և գործումն պիտոյքը, այնքան ևս աճում և ճիւղաորում մարդու աշխատարութիւնը: Սա հետ դժեռէ յառաջ է դնում, առաւել պարզ սկիզբներից մինչև առաւել բարձրասանեայ գրութիւնը: Սովն է, ծարաւն է, որ դեռ ևս վայրենարարոյ մարդու մէջ զարթնցնումն առաջին հոգեւոր և մարմնաւոր զարթութիւնքը, այս կարիքն են, որ հարկադրումն նորան վազել, որանել, լրտեսել, խորամանկութիւն և բռնութիւն գործ դնել: Նորա բոլոր բան ու գործը այն է, որ կարողանայ հոգալ իւր սպրուաւոր: Եթէ այս սպրուաւոր ճարելու հնարները հեշտ են, եթէ նա իւր ձեռքի տակին ունի պտուղներ, վայրի որս, ձուկն, ապա չէ այնքան աշխատատէր, բայտ որում պարզելով ձեռքերը գտնում և կերակուր և յազնալով անձնատուր է լինում հանգստութեան, մինչև այլ վայելչութենների համը տեսած, զարթնումն նորա մէջ ցանկութիւններ, որ և գտնումն նոր նոր հարկաւորութիւնք և նոր նոր շարժարանք գործականութեան: Բայց եթէ կերակուր ճարելու ճանապարհները դժուար էին և, զոր սրինակ, վայրի որսը սակաւագիւտ էր և հեշտ բմբունի չէր, ձուկը խորամանկ, և պտուղքը անցաւոր էին, այն ժամանակ մարդը ստիպում ևս ի գործունեայ լինել. պիտոյ է նորա մարմնը և հոգին կրթվին յաղթելով այն դժուարութեններին, որ կան նորա սպրուաւոր մասին. պիտոյ է լինի նա այնպէս արագ, ինչպէս գազանքը, խորամանկ որպէս ձուկը, և նախատես, որ կարողանայ պահպանել երկրի պտուղները: Ապա իւր բնական կարողութիւնքը ճոխացնելու համար, աշխատում, մտածում, քննում նա. յետոյ մտաբերում կորացնել մի ծառի ճիւղ, աղեղն շինելու համար, սրացնել մի եղէգն, որ գառնայ նետ, ամբացնել մի դաստակ (կոթ) մի սուր քարի վերայ, կացին շինելու համար. յետոյ աշխատում վարձք հիւսել, ծառեր կրտրել, սոցա բունը փորել և գողաւորել, որ նաւակներ գառնային: Ահա այսպէս, հարկաւորութեան սահմանից դուրս է գնացել, ահա փորձելով անչափ բաներ, ծանօթացել է վայելքների և վտերի. այժմ ևս առաւել լարում նա իւր գործականութիւնը, որ հետացնէ իւրանից ցաւացուցիչ բաները և բազմապատկէ ուրախացուցիչքը: Նա ճաշակել է այն հոգմանաւոր ծառի հեշտութիւնը, որ պաշտպանում նորան արեղակի ջրամութենից. նա շինում իւր համար մի հիւղ (մարագ): Նա փորձել է, որ մի մորթ կարող էր պահպանել նորան ցրտի երեսից, նա պատրաստում իւր համար զգեստ: Նա բնակել է

ցքի և ծխել և թարօք և սիրել և նորանց, Բայց նա ցանկանում
այժմ աւելի բաների, որոնց այլապէս չէր կարող հասանել, եթէ
ոչ կատարի մորթներով, փիլի առաններով և ոսկի խոտն աւազով
և այլն. ուրեմն կրկնապատկում նա իւր գործականութիւնը և իւր
չափազանց աշխատիրութենից այն տեղ և հասանում, որ պիտոյ է
վաճառէ իւր ընկերը:

3. ԲՆԵՒՆԷՆ:

Վաղեցէք այս տխուր պատերին որոնց մէջ փակած է մարդկային
աղատութիւնը և ծանրաբեռնած է երկաթի շղթաներով, որոնց մէջ
երբեմն անմեղութիւնը խառնակած է յանցաւորութեան հետ, և ինչ
տեղ զօրծ են դրվում ամենայն տեսակ պատիժներ մինչև հասանու-
մէ վերջին պատուհասը: Մտն հեկեցէք. եթէ երկաթների ահարկու
խոտիութիւնը, եթէ զարհուրելի մութը և խաւարը, եթէ այն մըր-
մունջը և արտասուքը, որ լսվումին հետուից, սասեցնելով ձեր
սիրտը կը փարատէին ձեր երկիրը, և դուք ա՛հ չունէիք, ապա ներս
մտէք այս ցաւալից բնակարանի մէջ, համարձակվեցէք մի բոլոր ցած
իջանել այս սև զնդանների մէջ, ուր ցերեկի լոյսը երբէք չէ թա-
փանցում, և քննեցէք ձեր ընկերները, զոցա խանգարված կերպա-
բանքը, զոցա մարմինը երկաթների մէջ ճնշած, կիսով չափ ծած-
կած մի պատառ զգեստով, ապականած այն սղոյթը որ երբէք չէ նո-
րոզվում, և ասես թէ ծծումէ իւր մէջ յանցանքի թոյնը. քննեցէք
այս մարդիկը, որ կենդանի կենդանի ուսումնն այն ճճիներից որ
կընունումին մեկ լոտիքը դերեզմանների մէջ, տեսէք այս վատարազդ-
ները, որ կերակրվումեն մի քանի կոպիտ նիւթներով, թէպէտ՛է այդ
իննայն լոյժ բաժանումնին նոցա, նայեցէք սոցա, որ անզգար սար-
սափի մէջ են, ակնատես լինելով իւրեանց վատարազդ ընկերների
ցաւերին և լսելով անողբքելի պահապանի սպառնալիքը. որոնց հա-
մար այնքան զարհուրելի չէր պատուհասը, ինչքան ակնկալութեան
մտատանջութիւնը. սոքա, այս բոլորովան տանջանքի ու տառապան-
քի մէջ, սգնութիւն են զանչում մասը որ աւելի քաղցր էր նոցա,
քան թէ իւրեանց թշուառ կեանքը:

Վստ մարդիկը թէպէտե պարտաւոր էին, սոյնու ամենայնիւ ար-
ժանի են ցաւակցութեան, և այն դատաւորը որ յետ էր ձգում նո-
ցա գատափճիւրը, յայտնապէս, անիրաւարար էր վարվում նոցա հետ:
Օրէնքը վճուել է մի հրապարակական պատիժ, որ պիտոյ է լինի բա-
ւական հատուցումն և յանցաւորի և հասարակութեան համար. բայց
այս ելիար տանջանքը մի գժնդակ բանտի մէջ, նոր տառապանք էր,
որով ծանրաբեռնվում պարտաւորը, օրինազանցութիւն էր օրէնքի

սահմանից դուրս գալ, մի շտապանցութիւն որ այնքան առաւել ողբալի էր, ինչքան որ ֆնասահար էր թէ յանցաւորին, թէ հասարակութեանը միասին, և ըստ որում այն բոլոր բողբոջ որ յանցաւորը անցուցած էր բանտի մէջ, անոգուտ էին, նորա վարքի ուղղութիւնը ցոյց տալու համար:

Բայց եթէ այս բանասրկեալքը անմեղ էին, ապա ինչպէս ցուելի, ինչպէս ողորմելի էր. այս բանի վերայ մտածելով մարդկութիւնը, իւր սրտի խորքից արձակումէ մի ահարկու և գորովալից ձայն. ինչպէս, այս մարդը ծնած աղատ, հեծեծումէ երկամների ծանրութեան տակ. այս մարդը, որի համար սահմանած է երկերի լըյսը և ոգը, հազիւ թէ չունէ է քարշում մի խաւար բանտի մէջ. այս հայրը զերդաստանի բնութեամբ դուրս է խլած իւր ամուսնու և զաւակների զրկախառնութենից, Տրամութիւն, յուսահատութիւն և սով տիրապետել են նորա խաղաղ բնակարանին. այս ձեռքերը, որ գլուկախառնումէին մի քերտ շ ամուսին և մանուկ ժառանգներ, այս ձեռքերը, որ հաց ու ջուր էին տալիս նոցա, որ սերմանումէին և ժողովումէին, այս ձեռքերը այնքան հարկաւոր թագաւորութեան համար, այժմ կապած են անարժանապէս. մի մարդու և անարատ սիրտ գտանվումէ այնպիսի տեղերում որ ապականած էին խղճմտանքի խայթերից. մի բառով, անմեղութիւնը բնակակից է յանցանքին. այսպիսի տեսարանի մէջ չէր կարելի համբերել, առանց ի խոր յոգոց հանելու մարդկային թշուառ գրութեան վերայ. այս տեղ վերագրելով մը աչքերը դեպ ի նախախնամութիւնը, պիտոյ է ասելք և զառնապէս ցուելով և սքանչանալով. ո՞վ մարդ, ինչ բանի համար սահմանված ես դու. շարձարթիլ և մեռանել, ահա քո երկրաւոր աստղերէն երկու նպատակը:

4. ԱՆՆՆ Ե ԸՆ ԸՆ--ԸՆՆՆ:

Ընտութիւնը Աստուծոյ մեծութեան արտաբն աթոռն է. մարդը որ նկատումէ նորան, որ քննումէ նորան, աստիճան առ աստիճան բարձրանումէ դեպ ի Ամենակարողի ներքին աթոռը: Մարդը ստեղծած լինելով, Արարիչը պաշտելու համար, հրամայումէ բոլոր արարածներին. նա որպէս հրատակ երկնքի, և որպէս թագաւոր երկրի վերայ, ազնուացնումէ սորան, բաղմացնումէ և ճոխացնումէ սորան. նա շնչաւորների մէջ հաստատումէ կարգ, ստորադրութիւն և միարանութիւն. նա զեղեցկացնումէ բնութիւնը ևս, մշակելով ընդարձակելով և քաղաքագործելով նորան, նա սրբումէ փուշը և տատակը, շտտացնումէ խաղողը և վարդը, Նայեցէք այն անապատ սահմաններին, այն տխուր աշխարհներին, ինչ տեղ մարդու ոտք կոխած չէ:

երբէք, որ անտառացած, կամ մանաւանդ թէ զիղացած էին թան-
ձրախիտ և սև փայտերով: Ոմանք ծառեր կեղևից ու տերևից մերկ,
կորացած, ջաղջախոված կործանվումէին հնուցմենից. աւելի շատ մի-
սերը զլորոված էին առաջինների տակին և փոխելով միս թմաւալված
ծառերի վերայ, որ արդէն ապականված էին, հեղձուցանումեն և թա-
ղումեն հողի տակ այն բողբոջքը որ մտ էին բացվելու, բնութիւնը,
որ ամենայն տեղ ծիծաղում մանկական կերպարանքով, երևում այս
տեղ որպէս մի հալումաշ ձերունի: Երկիրը բնաւորված իւր սե-
փական պտուղների աւերակներով, կրում է իւր վերայ փլատակներ
փոխանակ ծաղկազարդ կանաչի, և ձերացած ծառեր պատած սա-
րանունդ բուսերով, մամուռներով և սունկերով: Բոլոր ցած տեղե-
րումը անշարժ գազարեւ է մեռեալ ջուրը, ըստ որում շունի ոչ
անցք, և ոչ օրինաւոր գնացք. աղմուտ հողը ոչ ամուր և ոչ հո-
սանուտ լինելով, և այս պատճառով անանցանելի դարձած, մեռն
անոգուտ և անպիտան որպէս ցամաքաբնակների, նշնպէս և ջրաբնակ-
ների համար: Զախիմներ, գարշահոտ ջրային բուսականներով ծած-
կած, սնուցանումեն իւրեանց մէջ թունալից ճճիներ միայն, և պիղծ
գազանների բնակարան են: Այս ճախիմների և այն շատ ձերացած
բարձրանիստ անտառների մէջ, գտանվումեն զաշտեր և խոտաղե-
տիմներ որ ոչինչ կերպով նման չեն մեր կանաչազարդ դաշտերին:
Անպիտան խոտերը բարձրանալով այն տեղ և յաղթելով լաւերին
խեղդումեն նորանց: Այս չէ այն գալարի հոգառախոտակը որ կարելի
է երկրի աղուամաղերը ասել. այս չէ այն զարդարուն մարգաղե-
տիմը որ հեռուից ծանուցանում է իւր փայլուն հարստութիւնը. սո-
քա են խոշոր բուսականներ, կոշտ, փշուտ, միմեանց հետ խոտնա-
չիթիթած, որ երևումէին ոչ թէ ամբողջ արմատացած հողի մէջ, այլ
միմեանց հետ կապած և միացած, որ և հետ զհետէ միանալով և մինը
միւսին արտաբերելով կերպաւորումեն մի կոպիտ բրդի խուզածք շատ
տունաչափ հաստութեամբ: Ոչինչ ճանապարհ, ոչինչ հաղորդակցու-
թիւն և ոչ մի բանաւոր արարածի հետք չէ տեսնվում այս անա-
պատի մէջ: Եթէ մարդս կամելու մեր ճանապարհորդել այս տեղերումը,
ապա պէտք էր նորան վայրենի գազանների գնացքին հետևել և միշտ
զգոյշ լինել, որ չը գտնույ նոցա կերակուր: Նոցա մնչիւնքը ա-
հացնումեն նորան, զարհուրանք է գալիս նորա վերայ, տեսնելով
այս խորին անապատի հանդարտ լռութիւնը: Յարդը յանկարծ դար-
ձուցանում էրեսը և ասում. գարշելի է բնութիւնը և իւր վերջին
չնչաութեան մէջ է. և միայն կարող եմ տալ նորան վայելչու-
թիւն և կեանք: Արի՛ ապա, աշխատէր ցամաքեցնել այն ճախիմ-
ները, կենդանացնել այն մեռեալ ջրերը, գնացք տալ նոցա, սուու-

ներ, ջրանցքներ բանալ, Արի գործ զենք այն ազգու, ուսող սրբորոշ կրակը, որ յառաջուց ծածկած էր և ապա գտանվեցաւ մեր Տնարագիտութենով. թող այս աւելորդ ապականութիւնը, ահա այն կիսաւեր անասունները այրենք բոցով, և ինչ որ կրակը անփնա կը թողու, կործանենք կաշինով, քոթանակ պրտուի և ջրաշուշանի, որոնց տակին բնակու՞մք խոշոր և թու՞նաս որ գորտը, շուտով կը տեսանենք որ բուսանու՞մք Տրանունի և սոսուոյտ և այլ քաղցր և օգտակար բանջարներ. քող տաւարի և բամբակներ ուստասելով կոխեն այս գետինը որ յառաջուց անանցանելի էր. նորա կը գտանեն այս տեղ առատ կերակուր, մշտականաչ գաշտեր և կը բաղմանան օրէ օր առաւել, Այս նոր օգնական Տնարները գործ զենք, մեր վստակը կատար Տասուցանելու համար. եղի պարանոցը կորացնենք լծի տակ և թողու՞ք որ նա ահոս ձգէ հողի մէջ. շուտով կը կանաչի սերմանածը մեր արտերի մէջ, և մի նոր ու մանկացած բնութիւն դուրս կ'երևի մեր ձեռքերի աշխատութենով:

Ահա ինչպէս գեղեցիկ է այս շէն բնութիւնը. մարդու հոգատարութիւնը ինչպէս փառահեղ զարդարել է նորան, Ինքը մարդը նորա առաւել պատուական զարդն է, նա առաւել ազնիւ արարածն է երկրի վերայ. նա բաղմանալով ինքը, անեցնում էրկրի աւելի ազնիւ ընծիւղքը, և ինքը երկիրը, ասես թէ, ճոխանում նորանով. ամեն բան, ինչ որ նորա ծոցի մէջ թաղած է, մարդու ճարտարութենով դուրս է գալիս դեպ ի լոյս. ինչքան գանձեր, որ մինչև այժմ անձանթով էին. քանի նոր նոր հարստութիւնք, Կողմիկներ, պտուղներ, ցորենի տեսակներ, ամենայն բան կատարելագործում է և բազմապատկում անվերջանալի շտիով: Օգտակար անասունները բազմացնում են, փասակարները փոքրացնում են, շտիարգում են և հալածում են: Ոսկին և երկաթը, որ աւելի հարկաւոր էր քան թէ ոսկին, երկրի խորքից դուրս է հանվում: Գետերը պահում են իրենանց եղերքի մէջ, հոսանքները կանոնաւոր բնթացքի ու սահմանի տակ են ձգվում, և ծովը ստորագրվել է մարդու իշխանութեանը, որ քննելով տեղեկացել է նորան և կարող է անցանել նստով մի կիսագնտից դեպ ի միւս կիսագնտու: Երկրի տարածութիւնը ամենայն կողմից մտանալի է մարդու համար, ամենայն տեղ ճոխացած է թէ կենդանութենով և թէ պողարերութենով, Չորերի մէջ գտանում ենք ծիծաղազէմ սեղք, գաշտախայրերումը պարարտ արտներ և աւելի ևս պարարտ արտեր: Բլուրները պսակած են խաղողի և մրգի ծառերով և նոցա գլուխները օգտակար անասուններով, Անապատները դարձել են մարդաշատ քաղաքներ, որոնց բնակիչները անզաղար պտուղա գալով, այս միջախայրից կարող են տարածվել դեպ ի առա-

ւել հետաւոր կողմերս ճանապարհները և առուտուրքը զբացինքի հետ վկայութիւն են տալիս, թէ ինչպէս էր ընկերութեան և միաբանութեան զորութիւնքս Գարդկային կարողութեան և պարծանքի հազարաւոր յիշատակներ քստ բաւականին ազայուցանումեն, թէ մարդըս որպէս սեփական աէր երկրի, փոխարկում և նորոգում նորա բոլոր կերպարանքը, թէ նա արդարև սկզբիցը իշխանակից է եղած բնութեան հետ :

Իսկ մարդը թագաւորում տիրապետութեան օրէնքով միայն. նորան աւելի քաղցր էր վայելել քան թէ ունենալ. նա պահպանում էր ունեցածը միշտ նոր ի նորոյ հոգատարութենով, որ եթէ դաշարեց, բոլորը թուլանում, ապականվում, փոխվում, բոլորը միւսանդամ մտանում ընտելեան ձևքի տակ. բնութիւնը կրկին ստանալով իւր իրաւունքը, ընջում մարդու գործերը, փոշով ու մամուլով ծածկում ամենապանծալի յիշատակարանքը, կործանում նորանց ժամանակով, և մարդու համար թողում միայն սրտցաւութիւն և ախտանք, որ սա իւր անհոգութենով կորուսել է, ինչ որ նորա նախնիքը իւրեանց աշխատանքով ձևք էին բերած : Այսպիսի ժամանակներ, երբ մարդը կորուսանում իւր ստացուածքը, այս բարբարոսութեան դարերը, որոնց մէջ կորչում ամենայն բան, յաւաքանումեն միշտ սրտերազմից և բերումեն իւրեանց հետ չբաւորութիւն և աւերածք : Գարդը, որ կարող է միայն իւր բազմութենով, որ զորաւոր է միայն իւր միաբանութենով, որ երջանիկ է միայն խաղաղութեան մէջ, կատաղելով բարձրացնում սատակիչ և թշուառացուցիչ ղէնքը, որ պատերազմելով կործանէ իւր անձը : Նա բոբրոգրված անյազ ցանկութենով, կուրացած մի աւելի ևս անյազ փառամոլութենով, հրաժարվում մարդկութեան զգացողութեններից, իւր բոլոր զորութիւնքը դարձուցանում ընդդէմ իւր անձին, աշխատում կործանել իւր ընկերը և կործանում յիրաւի. և արիւնհեղութեան և կստորածի օրերից յետոյ, երբ որ փառքի ծուխը ցրուած է ահա, մարդը տխուր աչքով տեսնում երկիրը աւերած, ճարտարութիւնքը թաղած հողի տակ, ազգերը ցանուցիր, ժողովուրդքը ակարացած, իւր սեփական երջանկութիւնը քուլքայած և իւր ճշմարիտ կարողութիւնքը ոչնչացրած :

Յ. ԿՐԻՔ Ե ԱՎՐԻՔՆԻՆԵՆ ԲՆՎՈՆ ԱՆՎՈՆ ԳԵՂ :

Ինչ բան է Կարդը և Ենկարդութիւնը բնական աշխարհի մէջ. Երի՛ մտանենք միասին այս ձորի մէջ որ ձգվում ան սառչև. բարձր բարձր սարեր պաշտպանումեն նորա շրջապատը. նոցա գլուխները մշանջենաւոր ձիւնով ծածկած փայլատակումեն հետուից շողողելով

ցերեկի լուսաւորի կրակներովը. ձիւնապատ սահմանից ներքե և բարձր ու ցած տեղերի վերայ տարածվումք մի անչափելի անտառ մայրի ծառերով, որոնց միմազոյն տերևները ակելի պայծառութիւն են տալիս նորա սահմանակից լուսեղէն կամարին. ակելի ցած իջանելով թուրանումն գունափայլութիւնքը: Շատ կամ փոքր բարձրացած բլուրներ իւրեանց կանաչապատ կատարներովը հաստատումն սարերի կողերի վերայ և իւրեանց կենդանագիր կերպարանքովը պատկերացնումն հիացած աչքի առաջև երբեմն շինական անապատներ, երբեմն փառահեղ դաշտեր. այս տեղ, հոգմանաւոր և ծածուկ պատրուպարաններ, այն տեղ հեռահայեաց տեսարանք, որոնց թռուցիկ գծագրութիւնքը փոքր աւ փոքր աներևութանումն կապուտակ երկնակամարի մէջ կամ թէ քաղցրութեամբ զոյնումն այն փառահեղ լճի անորոշ ծածանումնքի մէջ, որ սահմանումք հորիզոնը: Ջրեր, այնպէս պայծառ որպէս շնչական օդը, դուրս բղխելով իւրեանց լեռնային աւազաններից և բաժանվելով որպէս յստակ առուններ կամ թէ որպէս արծաթափայլ սահանքներ, իւրեանց բազմաբինակ ներգործութեններով ճոխացնումն աշխարհի վայելչութիւնը: Տեսէք այն տեղ, թէ քնչպէս այն ցանուցիր խրճիթները վայելչապէս զաստորումն կանաչադարդ նիւթերի հետ, որ շրջապատումն նորանց: Բնն խրճիթ պահպանութիւն է գտանումք հիւսիսային հողմից, կամ թէ կեսարի նեղիչ ջերմութեան երեսից, կնձնի, փեկնի և կաղնի ծառաստանով. ամեն մարդ ունի իւր մրգաբեր այգին, շրջափակած կրկնապատիկ կանաչարոյս ցանկով խառն հոտուէտ թուփերի հետ. խրճիթների առաջև կան շէն դաշտեր, որ նայելով եղանակին, ծածկած են համեղ բանջարներով կամ թէ առատ հունձերով, և այս միջոցումը շրջումնին պատուական երամակներ արածելով ընդարձակ արտներումը, որ այս տեղ և այն տեղ ընդհատումնին վայրենի վարդաթուփերով, մշտականաչ աբնոս ծառերով կամ յաղթանդամ ուսնիքով, որոնց ճիւղերին ակնածելով խնայել է կործանական տապարը: Բայ տեղ է խորին խաղաղութեան և անմեղ ուրախութեան բնակարանը. քնչպէս կենդանի խօսումք երջանկութիւնը այս կանանց, այս երեսիտների, այս ծեր մարդերի կերպարանքի վերայ, որ հասարկած իւրեանց գիւղական աների մտ, միասին պարագումն այնպիսի գործերի որ յարմար էին նոցա սեռին և համեմատ նոցա կարողութեններին: Ինչպէս զուգախառնվումն միմեանց հետ այնուութիւնը և ուրախամտութիւնը, պարզասիրտ հասարակ և արիական քաղցրութիւնը այս երիտասարդների երեսի վերայ, որ իւրեանց գերզատանի աչքի առաջև բաժանումն իւրեանց մէջ երկրազորութեան աշխատութիւնները կամ թէ երամակների հոգատարութիւնը: Լսու-

մէք այս երկարաձայն շեշտերը, այս եղանակաւ որ տաղերը, այս մըր-
մանջները, այս հնչիւնքը, այս անհամար ձայները որ այս երջանիկ
աշխարհի ամենայն դարուփոսից բարձրանումն, և ասես թէ ելլելք
ասնելով միմեանց հետ, փառարանումն այդքան պարզեաների յաւի-
տեանկան և անսպասելի հեղինակը. ինչպէս հոգեւորժ, ինչպէս մի
փեմական բան է այս հանդիսաւ որ միարան գոհարանութիւնը և
շնորհակալութիւնը... Այժմ, նայելով այս փառահեղ և գեղեցիկ
տեսարանին, ասացէք ինձ, ինչ տեղից է ծնանում ձեր սրտի մէջ
այն ակամայ քաղցր շարժողութիւնը. ինչ բանից է, որ այս տեղ
ձեր մարմնի գործարանքը աւելի շողալի, աւելի աղատ և արագա-
շարժ են. ինչից է, որ ձեր մտածութիւնքը աւելի բարձրացած, ա-
ւել մարուք են, ձեր զգացողութիւնքը աւելի արձակ և աւելի հան-
դարտ, ձեր կարողութիւնքը աւելի ներդրական, Ինչիցն է, որ դուք
այս տեղ կրկնապատիկ կենդանութիւն էք վայելում: Ահա՛ ձեզ պատ-
ճառք. այս տեղ ամենայն բան իսկութիւն է, ամենայն բան կենդա-
նութիւն է, այս տեղ ամեն մի էակ աճելով և զորանալով իւր հա-
մար, խափան չէ, միասակար չէ միւս էակին որ աճում և զբանում
նորա կողքին. այս տեղ, այս հրաշափառ կենդանագրի մէջ, ուր բազ-
մութեանութիւնքը, գոյները, տարբերութիւնքը, ներհակութիւնքը,
ձեակերպութիւնքը անվերջանալի են, այնու ամենայնիւ դուք չէք
կարող գտանել ոչինչ տարածայնութիւն, ոչինչ բռնադատութիւն,
ոչինչ բան խռովեցուցիչ ձեր հայեցումքի համար. մի խտրով, այս
տեղ, իւր բոլոր հրաշափառութենովը, իւր բոլոր ճոխութենովը
հանդիսանում այն մեծակարող կարգը բնութեան, որի պաշտօնը,
ինչպէս տեսանումք, այն է որ ամենայն էակի տայ իւր զուգապատ-
շածութիւնը, այսինքն իւր էութեան և իւր յարաբերութենների
լիութիւնը, և այն բոլոր զուգակշիւներովը որ յառաջացնում ինքը,
անդադար կազմակերպէ նոր նոր աւելի բազմազան և աւելի մեծ մեծ
զուգաշափութիւնք:

Ի այց մի անկարծելի խռովութիւն լսելի է լինում: Պարերի
գլխիցը ձայնելով վայր է գլորվում մի ահարկու ձիւնակոյտ, որի
տեսանելի ծանրութիւնը փշրում, ճնշում, վեր ի վայր է գար-
ձուցանում բոլոր օդեղէն տարածութիւնքը որոնց միջից անցանում
նա իւր անկեան միջոցին. այս յանկարծակի խռովութենից օդի մէջ,
յառաջանումն հողմը, փոթորիկի յառաջընթացքը: Կոցա սաստիկ
ներդործութեամբը թանձրանալով տարածութեան մէջ ցանկցիր գո-
ւրջիքը, իսկոյն փոխարկվումն սպառնալիս անդեր, ցերեկի լուսա-
ւորը այլազանվում, հորիզոնը յանկարծ պատվում խաւարով, որ
հետ գհետե ընդարձակվելով թաղում իւր թուխ ներկերի մէջ այն

հրաշալի անտառները, այն գեղեցիկ գաշտավայրերը, այն կենդանագիր բնակութիւնքը և այս, մի հաճոյական կանաչով զարդարած բլուրները: Ահա բարձրանում փոթորիկը, զարհուրելի փայլատակութիւնք տեսանվումն երկնակամարի տակ. ամպերը որսուումն ամենայն կողմից, աւելի ահարկու ձայն ստանալով աշխարհի արձագանգներէց: Ախ՛ը սաստիկ խռովութեան մեջ, մոնչելով բարձրացնում իր փրփրած ալիքները. հողմերը փչումն կատաղութեամբ, բարձրահասակ եղևինը, ամբարտաւան կաղնին զողջումն իւրեանց հաստամարմին բունների վերայ, ցածահասակ փոքրիկ ծառերը տարուբերումն իւրեանց կախուղ բունների վերայ. բարձր օդի մջ ամպերը զարկումն միմեանց. նոցա կողքերը ջարդվելով կայծակից, կրկնապատիկ հեղեղատներով թափում և ահարկու անձրև. մի բուպեում բոլոր աշխարհը ծածկվում էրով. վաղումն սուռներ խաղալով որպէս սաստիկ հոսանքներ. սահանքները դառնումն ահագին ջրաղբջջաութիւնք, և այս ծիծաղաղեւ ու գեղեցիկ ձորը, այժմ պատած աւերակներով, ոչինչ չէ ներկայացնում աշքի առաջև, եթէ ոչ մի անապատ ու ամայի տեսարան: Աւր էք փախչում դուք, քաղցրարարչ և պարզասիրտ բնակիչք այս խրճիթների, ուր են երթում այս շուտրեալ կանոյքը, այս երկխոյքը արտասուալից աշքերով, այս բազմալիշա ծերունիքը, ջեսանում: որ զորս պատսպարան են որոնում քարանձաւների մեջ, և այս միջոցում անհանդիս հոփները խոր ձորի մջ պատերազմելով ջրհեղեղի հետ և իւրեանց շինական սրնցի սուր ձայնը խառնելով փոթորիկի ողբալի աղաղակի հետ, զանչումն և ժողովումն իւրեանց, երկիւղից ցածուցիք եղած երամակները, որ և նորա յառաջ ձգած վարումնին դեպ ի աւելի հանգարտ տեղերը: Այժմ, այս բարձր տեղումը կանգնած և այս բնական կամարի տակ որ հոփանաորում մեզ, կարող ենք պարսպով գննել փոթորիկի ներգործութիւնքը, առանց երկիւղ ունենալու նորա կատաղութենից: Ի վերայ այդ ամենայնի, ասացէք ինձ. ինչ տեղից է յառաջանում այդ սարսափը որ ըմբոնել է ձեզ. ինչ է պատճառը, որ դուք տեսնելով այդ ահարկու թատրոնը ձեր առաջև, ձեր կենսական հիւթերը, ասես թէ, յանկարծակի խախտված իւրեանց ընթացքի մջ, պոռչա են գալիս ծանր ու զանգաղ. ինչ է ձեր արտում մտածութենների պատճառը, ինչո՞ւ համար պղտորվումն ձեր զգացողութիւնքը, ընդէր ճնշած են ձեր բոլոր կարողութիւնքը: Ահա՛ պատճառը. այս տեղ չը կայ աւելի — շարժողութիւն, կեանք. այս տեղ բոլոր գոյութիւնքը շարժարանքի մջ են, բոլոր կերպարանագործութիւնքը խախտված են, այս տեղ մի գոյութենից դեպ ի միւս գոյութիւն չէ փոխանցում այլևս ոչինչ բա-

բերար ներգործութիւն, ոչինչ փրկուէս արտահոսութիւն. այս տեղ
ամենայն էակ դադարեցուցել է իւր կապակցութիւնը միւսի հետ,
այս տեղ քայքայվել են բոլոր նմանակցութիւնքը, չքայցել են բո-
լոր համաձայնութիւնքը, բոլոր երանգները կոմունեն կամ թէ խառ-
նակութիւնն միմեանց հետ. մի բառով, այս տեղ անկարգութիւնը ե-
րևում է իւր բոլոր տեղում, անկարգութիւնը, որին սեփական
է ճնշել և առանձնացնել ամենայն բան, որին մտնում է նա, վեր
ի վայր առնել և աւերել ամենայն զուգապատշաճութիւն, յափշտա-
կել է արարածներից իւրեանց յատուկ սարածութիւնը, և ներգոր-
ծութեաննրի բաղձութենից իւրեանց միանակամութիւնը և միու-
թիւնը:

Յ. Ընդհանրէ և սահմանափակութիւնը:

Մի երկնակամարի տակ, որ մշտապէս ծածկած է թանձր մթու-
թեանով, և որի մէջ ցերեկի լշտը հաղիւ թէ ներս է մտնում,
բարձրանում են ահագին և վաղեմի անտառներ: Նոցա մէջ բնակում են
աչ, լուսութիւն և աղջամուղջ գիշեր. ծառեր, որ համարեա թէ այն-
քան հին էին, ինչպէս երկիրը որ կրում էր նորանց իւր վերայ, բար-
ձրանում են և գիղանում են այն տեղ տանց կարգի, միները միւսերի
վերայ: Նոցա սաղարթալից և միմեանց հետ հիւսված ճիւղերը հա-
ղիւ թէ ցուցանում են մի ծուռ ու թեք ճանապարհ, որ դժուարանու-
մէր զեռ ևս փշուռ մտցաներով: Ընդ տեղ ծառերի բարձրաբարձր
կատարները ճնշվում են ժամանակի ծանրութեան տակ, կամ թէ հող-
մերի սաստկութենից. նորա ջաղջախվելով վայր են կործանվում հին
կոճիւնրի վերայ որ կային նոցա ոտքի տակ, և ծածկում են միւս,
կիսով չափ փոսած, կոճիւնր: Ընդ ահաւոր անապատներումը, այս
բիրտ և վայրենի բնակարանումը ոչինչ բան չէ լսվում, եթէ ոչ
խոշորածայն և ողբալի աղաղակները շտապկեր թռչունների, կաղկան-
ձիւնը արջերի որ խնդրում են մի որս, շառաչիւնը մի հեղեղատի որ
սեպտեմբալ սարից վայր թափվելով ցայտվում որպէս շոգիք, և զզբ-
դում այս անշնե և անապատ տեղերի արձագանդը, կամ թէ թըն-
դիւնը քարաժայռերի որ ժամանակի ձեռքը գլորում էր այս որոտա-
ձայն անտառների մէջ:

Ընդ տեղ քարանձառների մէջ բնակում են կոպիտ, զաղանարա-
բոյ, աննուաճելի մարդիկ որ ապրում են միայն իւրեանց որսից, որ
աննուաճն միայն արիւնով և ցանկանում են միայն ըմպել սորան իւր-
եանց թշնամիների գազաթովը: Երբ որ գայիս է ձմեռը և ձիւնով
ու սառուցով պատում է այս դառնաշունչ աշխարհը, երբ ջրերը զա-
գարում են հոսելուց, սառչում են և կարծրանում են, երբ զեռերը փոխ-
վել են պինդ պինդ նիւթեր որ կարող էին դիմանալ ամենածանր

բեռների, և ծովի երեսը մի այլ բան չէր ցուցանում քան թէ մի սառնապատ, կոշտ, միապաղաղ դաշտավայր, այն ժամանակին այս վայրերն արարող մարդիկը դուրս են գալիս իւրեանց վիրապներէց. ամենայն տեղ ճանապարհ է նոցա համար. ծովի և գետերի վերայով գտանում են նորա ճանապարհներ որ աւելի ապահով, աւելի կարճ և աւելի փոքրատախան էին քան թէ այն ճանապարհները որ անցանում էին նոցա անտառների միջով : Ախտը մի ձևութիւն, կացինը միս ձևութիւն դուրս են ելանում նորա որսալու այն զազանները որոնցով կերակրում էին իւրեանք, կամ թէ յափշտակելու մի ամբողջ բազմութիւն, որ պիտոյ է ամարգարար մորթիներ և ուտելին : Նորա երթում են կամ մահ տալու միսերին, կամ թէ գուցէ մահ ընդունելու ուրիշներէց : Նորա ասնջիւլով սովից, կատաղած իւրեանց վայրենաբարոյութենով, լի քաջարտութեամբ, անգթութեամբ և ուժով, բորբոքված իւրեանց արած յաղթութենների յիշատակով, աշխատելով թմբկնայնի իւրեանց միտքը ղէպ ի մտահաս վտանգը, բարձր ձայնով բացալստում են իւրեանց սրտի խորին ու ահարկու զգացողութիւնքը : գոռում են, աղաղակում են սաստկապէս, հնչեցուցանելով բոլոր տեղերը, ուր անցանում են նորա : Մի գաղանական հոգեշարժութիւն տիրում նոցա վերայ, մի վայրենի տաղ, մի բարբաբոսական երգ ասելով, կամ մեռանում են կամ թէ մեռուցանում են :

7. Հոգեւոր փոփոխութիւնը :

Արարիչը, այս տեղ, ինչպէս իւր բոլոր գործերի մէջ, յայտնում է իւր իմաստութիւնը և բարութիւնը. նա կառավարում է հոգեւորի շարժողութիւնը, զօրութիւնը և տեղութիւնը, և հրամայում նոցա այն ընթացքը որ պիտոյ է կատարելին նորա : Երբ որ մի երկար շորութիւն հալումահալ է անում զազանները և ցամաքեցնում բուսականքը, այն միջոցին մի հոգով գալով ծովի կողմից և բեռնաւորված օդաւկար շողինելով, արբուցանում մարդագետները և զուարթացնում համբերն բնութիւնը : Այս գործը լրանալուց յետոյ, մի շոր հոգով փչում է արեւելքից և օդին պոյծառութիւն տալով, յառաջացնում քաղցր եղանակը : Հիստիային հոգեւոր ցան և ջիբ անելով հալածում է աշնանային օդի բոլոր վնասակար գոլորշիքը : Հիստիային խտաշունչ հոգեւոր քամակից գալիս է հարաւային հոգեւոր որ բարձրանալով միջօրեական աշխարհների կողմից, ամենայն տեղ լցուցանում է իւր կենդանացուցիչ ջերմութենով : Հոգեւոր այսպէս փոփոխելով անդադար, պահպանում են պտղաբերութիւնը և առողջութիւնը երկրի վերայ :

Ովկիանոս ծովից բարձրանում են ղէպ ի օդեղն կամարը գե-

Այս սարսափելի տեսարանքը առ փոքր փոքր հանդարտումն, կրակները հանգչումն, ծովը կիսով չափ խաղաղացած, մասնալով յետ և քարշում իւր եռացող ալիքները, գետինը հաստապումե միւսանգամ, խառնութիւնը գաղարումե և որը պայծառանումե, Բայց ինչ տխուր և ողբալի տեսարան հանդիպումե մեզ ապականեալ դաշտի մէջ. այս տեղ չէր երևում ոչինչ, եթէ ոչ մոխրակոյտք, ահագին քարածայտեր միմեանց վերայ խառնաչիտած, հրանիւթ գետեր, դեռ ևս սյրովող անտառներ, արտասուելի մնացուածք այն անբողոքներից որ կորած էին այս ձախորդութենների մէջ, Վայերով պատած երկինքը լուսաւորումե միայն այս աւերածները մի գունաթափ և պղտոր պայծառութենով, մի շարագուշակ հանդարտութիւն թաղաւորումե ոգի մէջ. հեռաւոր խառնութիւնք ծանուցանումն նորանոր ազէտներ և ծովը շնչաձայն հեծեծելով պտտախան և տալիս այն ողբալի աղաղակին, որ հնչեցնումն երկրի խոր գետնափոքրը, Ճողովուրդը ահէ և տարակուսանքի մէջ, հաւաքված և ճընչված մի տեղում, ուր չէր հասած կրակը, ձեռքերը բարձրացնելով դէպ ի երկինք, որ միայն կարող էր սշնութիւն ուղարկել նոցա, վերուղղումն իւրեանց ջերմեանդ ազտքը դէպ ի նա որ հրամայումե ծովին և կայծակին. նոցա աղտօքը կարճ էր, բայց սրտառուչ. նոքա յաճախ կրկնումն այս աղտօքը և ամեն անգամ աւելի խորամուխ ձայնով, որպէս թէ աշխատումին իւրեանց պաղատանքը լսելի կացուցանել այն էակի ականջին, որի գոթը աղաչումեին նոքա. նոցա տառապանքը, նոցա ահաբեկութիւնը, սաստիկ անհանգստութիւնը և անմոխթար գրութիւնը պատկերանումն այն ձայների մէջ որ արձակվումին նոցա բերանից, յառաջ գնալով ազդողապէս:

Գ. 2-րդ հոտինքը:

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿԵՐ:

Արեւտան կարող է լինել հաճոյական, նորհալի և վայելչատեսելի, եթէ մի խելացի դաստիարակութիւն չէ ճնշել նորա շարժողութիւնքը, եթէ պարզ բնութիւնը ազատապէս աճեցուցել է նորա անդամները, եթէ երեխան կարողացել է գործ գնել նորանց ամենայն վարժութեններով որ պատշաճաւոր էին այս բնութիւնը, շարժութիւն և ամենայն տեսակ փոփոխութիւն սիրող, հասակին Վանաշարացի համեմատութիւնք, այսինքն ամենարեւական զուգաշարժութիւնք թաղաւորումն նորա անդամների մէջ. նա դեռ ևս ուսած չէ պատշաճի աղաղաւ ծալել իւր անդամքը, պարզել նորանց կամենալով վայելուչ երևել, կամ թէ տալով նոցա անհեթեթ գրութիւնք,

ինչպէս պահանջուի ընկալած սովորութիւնը. ստիպողական աշխատութիւնքը զեռ ևս չեն աւերել, չեն տղեղացուցել կամ վատթարացուցել նորա անդամները: Կորա ձեռքը տակաւին չէ մտնեցած ծանր և կոշտ գործիքների, նորա քամակը կորացած չէ արտ ձգելով կամ թէ արհեստագործի պէս աշխատելով. նորա մազերը ծրիծփումեն թող առած հողմերի և գեղեցիկ բնութեան կամքին, առանց գունափոխ լինելու անպատշաճ կերպով, առանց պայլելու արուեստապէս և առանց պէն ծաղրալի հարկադրանքների տակ ընկնելու, որ պատահումին յաճախ: Կորա մորթը չէ թխացած զեռ ևս արեգակի սլորոզ ջերմութենովը և ոչ ճարձատփել և ցրտի խտտութենից, փոթորիկը զեռ ևս չէ վերկացել նորա գլխի վերայ. նա նայումէ միայն իւր ներկոյ կեանքի վերայ, որպէս թէ զա ծաղիկներով ցանած մի ճանապարհ էր. նա յառաջատես չէ գալոց վտանգների, ձախորդութենների և ոչ մինին. վիշտը զեռ ևս չէ խորշումեցուցել նորա ձակատը, զեռ ևս չէ ջնջել նորա կերպարանքի ազնուութիւնը, Գեռ ևս կարելի է ճանաչել նորա մէջ բնութեան թագաւորի նախատոհմութիւնը. կասկածամտութիւնը զեռ ևս չէ ծանրացուցել, չէ կորացուցել զէպ ի վայր նորա պնացքը, Կորա հողին զեռ ևս ազատ լինելով կանխակալ դատողութեններից և հոգսերից, ըմբռնումէ միայն ախորժ գաղափարներ և ծնուցանումէ միայն փայլելու և պատկերներ. եթէ մի քանի թեթեւ ցաւեր երեւումեն և պտորումեն այն գեղեցիկ օրերը որ հիւսած էին երկխոյի համար, գոքա բոլորովին մնումեն նորանից զուրս, ոչինչ յիշատակ չեն թողում, շուտով ցան և ցիր են լինում այն բաների հետ միասին որ պատճառ էին այդ ցաւերին: Ինչ է պակաս երկխոյին, որ պատկերացնէր մեր աչքի առաջն ամենահաստատ վայելչութեան, զուարճութեան, ուրախութեան և սիրտ գրուող քաղցրութեան օրինակը:

ՄԵՆՊՈՒԹԻՒՆԸ .

Եւ յիմ հանդիսանումէ մեր առաջն պայծառափայլ մանկութիւնը, մի այնպիսի հասակ որի մէջ բարոյական և նիւթական բնութիւնը աճումէ և ընդարձակումէ իւր կարողութիւնքը, որի մէջ հողին երեւեցնումէ իւր յաջողակութիւնքը, և որի մէջ տպագորութիւնքը կը լինէին աւելի խոր, քան թէ երբ և իցէ, եթէ մտածութիւնը ընկերակից լինէր նորան, մտածութիւնը որ այն կարողութիւնն էր, որ միայն հնարագոր էր զազարեցուցանել մեր գաղափարքը, հաստատել մեր զգացողութիւնքը և ճամարտապէս ամրացուցանել նոցա տպագորութիւնքը: Սա այն հասակն է, երբ կիրքը սխումէ գործ զնել իւր մրկակից իշխանութիւնը. սա այն ժամանակն է, երբ բոլոր

առարկայքը ամենայն հեշտութենով աղգումն նորա սրտի վերայ. անցած էին երեխայութեան միջոցի թեթև տպագրութիւնքը. այնուհետև ամենայն բան սաստիկ զգրգումն նորան. պատանու կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ուժգին ձգտողութիւնք և զօրաւոր կիրք. երանի՛ թէ այս զօրաւոր կիրքը քարշէր նորան զեպ ի այն ճանապարհը միայն, որ պարտ և արժան էր զնալ. երանի՛ նորան, եթէ այն իմաստուն ձեռքը որ առաջնորդումը նորան, չ'ախտաւեր շիջուցանել այն կրակը որ մտալումն պատանու մէջ, որ և անհնար էր հեղձուցանել, այլ մանաւանդ, եթէ առաջնորդը ջանադիր լինէր սանձահարել այս կրակը, ուղղեցնել նորան զեպ ի սեռմական առաքիչութիւնքը, զեպ ի ամենայն պնդութեան, որին կարող էր հասանել մանկութիւնը:

Վրամեկումը թողած այնպիսի տարիք, երբ ոչ ով կարտա չէր պաշտպանութեան նորա երեսից, կամ թէ ոչ ով երկխոյ չունէր նորանից, ուրեմն և ոչինչ բան ընդդիմացած չէր նորան. պատանին որը որ զգալով իւր մէջ նոր նոր զօրութիւնք, երեակայելով թէ նորա միշտ առաւելանալու են, զեռ ևս ոչինչ արգելք չը տեսած, որ հասկանար իւր զօրութեան չափ ու սահմանը, մտածելով թէ ոչինչ բան չէ կարող հասարակիլ նորա հետ, կարծելով թէ ամենայն դարուփոս պէտք է չքանայ նորա առաջև. պատանին, ամբարհատած և աննուաճելի, կամենալով ամենևին բացընկեցիկ առնել այն լուծը որի ներքոյ իւր տկարութիւնը պահումը նորան երեխայութեան միջոցին, պատանին է աղափութեան և անկախութեան օրինակ, ՚սա մատչումն ամենայն բանից, որ կարող էր նորան յիշելի կացուցանել իւր առաջին սարկութիւնը և ցածութիւնը. նա արհամարհումն այն օթեանը, ուր իւր մարմինը և հոգին նեղի մէջ էին, նորան համոյ էր միայն, լինել մի արձակ դաշտալայրի մէջ, ուր կարող էր աղափութեամբ վարժել իւր զօրութիւնքը վազելով, իւր քաջարտութիւնը, նուաճելով վայրենի երկվարներ (ձիւնք), իւր աջողակութիւնը, կրթութենով և մարդութենով, և իւր քաներկիւղութիւնը, յաղթելով և սպանելով պատառոզ գազաններ, ՚սա ուրախութենից վեր վեր է թռչում այն հրապարակի մէջ, ուր կարող էր այժմ վազվազել, ինչպէս համոյ էր նորան. նա շարժումն իւր զօրնդ անդամները, նա փորձումն տեղափոխել ծանր ծանր բեռներ, նա կարծումն թէ մեծ գործ է կատարել, եթէ ուժով թաւալեցուցել է մի քարածայտի կոտոր, եթէ զօրութեամբ խորտակել է մի ծառ կամ վազելով կտրել է իւր որսորդ շների առաջը, ՚սորա կերպարանքը շնն այլ ևս այնպէս քաղցր և սիրտ գրաւող, ինչպէս երեխայութեան ժամանակը, այլ մի յանդգնութեան պատկեր. նո-

562204
 1882
 11



բա մարմինը որի պարագիծքը աւելի խիտ ճշգումենով որոշվումն այժմ, ցուցանում զօրեղ մինակներ, որոնց արագ ու կարող շարժողութիւնքը ծանուցանումն մարմնի պատուականութիւնը. նորա մազերը թխացած լինելով արեղակի աղղեցութեամբ, որին պատրաստ էր նա ընդդէմ դուրս գալ, աւելի երկար և աւելի թանձր են այժմ. նորա կրակոտ աչքերը փայլումն քաջարտութենից, նորա բազուկները կարող են ահա կոպիտ սպառնութենների տանել ոչ թէ իւր սգտակար, այլ իւր կամահաճոյական աշխատութենների մէջ. նորա զնացքը հաստատ է, նորա գլուխը զէպ ի վեր ուղղած, նորա ձայնի հնչիւնը պատկառելի. նորա կերպարանքը Հերբուլէսի որդու կերպարանքն է. նա երեսում, թէ սահմանած էր շարժելու Հերբուլէսի լախոր և սանձահարելու ճիւղները (անձոտնի գաղանները). Նա կատաղի է, շարժուն է այնքան յաճախ, ինչպէս երեսալայութիւնը, բայց միշտ աւելի սաստիկ խոտլութեան մէջ, ամեն մի նոր տեսարանի թոյլ տալով, որ յարշակէ նորա մտքը, ամենայն բոլոր փոփոխելով ակզը, դիտարտութիւնքը և ցանկութիւնքը, կոխելով և անցանելով ամենայն խափանների վերայից, անհամբեր ամենայն յապաղանքի, որ կարող էր ծանրացնել նորա շուտախոյթ և և շրջմուխի ընթացքը. Զգացողութեան ձայնը միայն բաւական զօրեղ էր, որ կարողանար շարժարեւ նորան. բնութիւնը որ խստում է նորա սրտի մէջ աւելի բարձր ձայնով քան թէ բոլոր շրջակայ իրքը, թեւադուրս նորան ծանաչել, սիրել և պատուել այն մարդու ձայնը, որ տուել է նորան կենդանութեան լոյսը, որ և հոգաբարձու է եղած նորա երեսալայութեանը. սա մի առիժ է, որ տանումն վարդապատ շղթայով, և նա չէր մտածում կտրել այդ քաղցր կապանքը, Երջանիկ է պատանին, եթէ հոյրական գութը նորա համարձակութեան միայնակ սանձն է, եթէ ախտերը, որ այնքան միասակար, այնքան սաստիկ էին այս սխալական հասակումը, չը տիրապետեն նորա հոգուն և չը մտանեն նորան, որպէս որս, բոլոր մելորութենների ա բոլոր սուտ յոյսերի և տանջանքների ձեռք. եթէ այս ախտերից աւելի սարսափելին չը թագաւորէ նորա վերայ. Սա սխանում նախապէս ճանապարհից հանել պատանին, նորա աչքի առաջն և կարում բոլոր առարկայքը զեղեցիկ գուներով. նորա մթննայած աչքին ցուցանում բնութիւնը աւելի ծիծաղողէմ և աւելի չքնաղ, տանում նորա քայլախիտքը զէպ ի մի ճանապարհ, որ ըստ երեսութին ցանած էր ծաղիկներով. մի կախարդական հնարագործութեամբ ցոյց է տալիս նորան այս կորստական ասպարէզի վերջումը երջանկութեան տաճարի դռները որ բաց էին ընդունելու նորան, ուր և նա գտանելու էր իւր սրտի ցանկալին. սա է այն Երթիղը որ

տանու մէ քաջանքն Բենալլոսին զէպ ի մի զմայլեցուցիչ կղզի, որ պահու մէ նորան Հեռի իւր զինուորակիցն րից, իւր պարտականութենից և իւր փառքից, որ և նորան շրջապատած ծաղկազարդ կապերով, փաթածութեամբ շրջաների մէջ, որոնց ծանրութիւնը պիտոյ է շուտով զգայ կուրացած պատանին:

ԵՐԵՎԱՆԵՐԴՈՒԹԻՒՆԸ.

Մարդը այս հասակի մէջ ստացած է իւր մարմնի և հոգու բոլոր զորութիւնքը. այն խոզվալից ախտերը, որոնց հետ անզազար ընկերակից է մոլեղնութիւնը, այլ ևս չեն թաղաւորում նորա վերայ այնպիսի սաստկութեամբ որ մթաքնեկին նորա բանականութիւնը: Եստուանդէն ճառագայթը որ հոգիւորութեամբ նորան, այժմ փայլում է իւր կատարեալ լուսովը. նորա իմացականութիւնը, ջերմացած լինելով այն կրակից, որ մանկութեան անհանգստութիւնը թողել է նորա երևակայութեան մէջ, գործ է դնում իւր բոլոր իրաւունքը և ամենայն բան ստորագրում է իւր իշխանութեան ներքոյ: Նորա հոգին կենդանագործելով մի կատարեալ մարմին, որի բոլոր գործարանքը ստացել էն մի պատշաճաւոր աստիճան անելութեան, որ ունի իւր մէջ միանգամայն և զորութիւն և զիրաթեքութիւն, որ և ամենայն բան ձեռնտու է այն տեսակ տեսակ շարժողութեաններին, որ տարբերութեամբ նորան, նորա հոգին վերասլանում է զէպ ի ամենարարձր տեսութիւնքը, յայնանգործում է մեծամեծ ճշմարտութիւնք, յանձնառու է լինում, կատարում և աւարտում ամենամեծ գործեր. այնուհետև մարդը, որպէս մի ճշմարիտ օրինակ մեծութեան և կարողութեան, բարձրացնելով իւր ուղիղ և օգոստափառ գլուխը մի յաղթանդամ և ամբողջացած մարմնի վերայ, քայլում է, խոսում է, գործում է որպէս բնութեան տէր, հրամայում է նորան և ծառայեցնում է նորան իւր ազնիւ խորհուրդներին:

Ինչպէս էթէ մանկութեան կատարի ախտերը չեն զղրղում նորա սիրտը, նա թողած է այնպիսի ախտերի կախին, որ նոյնպէս վտանգաւոր էին, որովհետև դոքա, թէպէտ չէին այնքան սաստիկ, բայց շատ աւելի հաստատ են այժմ: Պատուասիրութիւնը շողջողեցնում է նորա առջև ամենայն տեսակ պատկեր. նա տանում է նորան փշուտ ճանապարհների վերայ, որ պիտոյ է հասուցանելին այն փայլուն նպատակին որ ցուցանում է նորան պատուասիրութիւնը, մի խորեւայական և կամաճառական նպատակի, որ դրեալ է միշտ փախչում է իւր ինքնորոշութից, որ և աներևութանում է նոցա առջև որ մտ էին նորան: Նա հետևում է այն խոստասիրտ պատուասիրութեան և սուտ փառքի ձայնին, յղանում է իւր մէջ արիւնշաղախ խորհուրդ-

ներ, կանուձ շղթայք իւր զբացինների համար, որոնց բոլոր յան-
ցանքը էր միայն, որ նորա շատ մօտ սահմանակից էին սորան. ձեռքը
ձգուձ ղէնքի, սրուձ սատակիչ երկամբ. կրակը ձեռքուձր զիմուձ
նա, որ մի անիրաւ և բարբարոսական սրտերաղմի ստեղծի հանդի-
սուձ ժողովէ զարնիք, արիւնով ներկած. մի ծխապատ քաղաքի ա-
ւերակների վերայ նստած, իւր կատաղեալ ախարն հազարաւոր մար-
դերի կեանք զո՜հ բերելուց յետոյ, վայրենի և անզուձ աշխարհով
նկատուձ այն կործանութիւնքը որ լայն ու արձակ ծածկուձին զաշ-
տերի երկը. և նորա անդամների բոլոր շարժուձքը էին ակնար-
կութիւնք զէպ ի մահ ու ապականութիւն: Մի այլ տեղուձ, ծարա-
ւելով ոսկու և ունայն հարստութիւնների, ինչ վտանգներ չէ ար-
համարհուձ նա, որ յագեցնէ իւր գաղանական աղահուձութիւնը. իւր
վայրենի կատաղութեան մէջ, մարձուձ նա մի ողջոյն նոր աշխարհ, և
որ մարդկային հանձարը չէր գտած նորա համար, որ այն տեղ կա-
տարվին սարափելի շարագործութիւններ, ՚հա անապատ է կացու-
ցանուձ այն աշխարհը, յետոյ վաղուձ որ ցանկ ամենաստեղծի յան-
ցանքներ հին աշխարհի մի լայնատարած բաժնուձը, ծառայութեան
լուձ է ղնուձ նորա անբաղդ բնակիչների վերայ, և շղթաներով
բնանաւորած տեղափոխուձ նորանց զէպ ի նոր աշխարհ, որ աւե-
րել է ինքը, ուր և, իւր խելացնոր կատաղութեան մէջ, կարծիք է
զրել մտքուձր ոսկի ծնուցանել արբուցանելով երկիրը արիւնով:

Մի այլ կողմից, փառքը և, շատ անգամ, առաքինութիւնը
գանձուձն տղամարդը զէպ ի նորանոր ասպարէզներ որ կորստվու-
մին բազմութիւ անզուններով, լձեպեա նոցա նպատակը ցուցանու-
մը որ լձէ մի ունայն ցնորք, այլ հասարակաց օգտի սուրբ պատ-
կերը: Այդ ասպարէզների մէջ, լինելով նա արգար, բարի և աղ-
նիւ իշխանաւոր, շնորհուձ աշխարհին խոզաղութիւն և երջանկու-
թիւն և իւր օրերը համարուձ միայն իւր արած բարեգործութեն-
ներովը: Այս տեղ, որպէս Աստուծոյ բանի սպասաւոր և քահանայ,
բաշխելով միութեամբուցիչ կրօնի շնորհները, կամ լձէ, որպէս քաջ
պատերազմող և սուրբ սրէնքների կատարող, պահպանելով հասա-
րակաց սեփականութիւնը և ապահովութիւնը, ստանուձ միութեամբ
և պաշտպանված քաղաքակիցների գովասանութիւնը որպէս քաղցր
վարձ իւր բարեգործութիւնների համար: Միւս տեղ, նա սորի վե-
րայ է կանգնեցնուձ երկրագործութիւնը, առուտուրքը և օգտակար
ձարտարութիւնքը, և հրամայուձ նոցա որ պողարեր շինեն և բնա-
կութեամբ ձոխացնեն մի անչէն աշխարհ, ՚իւր բարբարոսութիւննե-
րով, իւր աշխատանքներով և արուեստասիրութեանով միաւորուձ
նա շատ հեռաւոր լձագաւորութիւնք, հարստացնուձ նորանց իւր հո-

դարարձութենով, պաշտպանում և նոցա իւր պատերազմական կարողութենովը, իւր զինուորական քանքարներովը, իւր քաջազնական առաքինութեններովը: Հանդէս տալով ախորժելի ճարտարութեններին, տարածում ևս հաղարար վայելչութիւնք իւր նմանների բնակարանի մէջ. ևս միարանում և որանց, քաղցրացնում և նոցա բնաւորութիւնքը և մեղմացնում և նոցա կողմն ու խոշոր բարքովւարքը, ազգում և նոցա մէջ սիրելի առաքինութիւնք, քաղցրացնում և նոցա վշտերը կենդանի և անմեղ ու բախութեններով, Նկարագրում և նոցա իւրեանց նախնի քաջազունքը, իւրեանց անուանի պատերազմողքը, իւրեանց մեծամեծ մարդիկը, վերստին կենդանացնում և նոցա պանծալի գործերը և նոցա մտմտական մտածութիւնքը: Ահրջապէս փակվելով մի խաղաղ առանձնութեան մէջ, թաքուն խորհրդակից լինելով բնութեան հետ, որպէս թէ հրաժարվելով իւր մահկանացու մարմնից, վերանալով իւր հայր և հետազննութեան թեկերի վերայ, հանդիսացնում ևս իւր ընկերների առաջն գաղտնածածուկ և ամենպիտանի ճշմարտութիւններ:

ՄԵՐՈՒԹԻՒՆԸ.

Եթէ մարդը, այրական տարիներին հասած, զգում իւր զոյութեան ամենեկն կատարելութիւնը, եթէ ևս այս տարիներումը հասած է իւր կարողութեան ամենավերին աստիճանին, ապա շուտով զէպ ի ցած է շնչվում. ամենայն սր նուազումն նորա ընդունակութիւնքը, նորա մարմնի զորութիւնքը պակասումն, ևս անցանում զէպ ի ծերութիւն: Ինչ այս հասակը, որ արժանի էր մեր ամենայն մեծաբանքին, այնպիսի կերպով զուրս բերեն եղբրերգական բեմի վերայ, որ շարժէր մեր կարեկցութիւնը, որ մի արտասուք թափէինք նորա վերայ:

Թող ծերութիւնը, որ պիտոյ է երևէր թատրոնական հանդէսի մէջ, վառ և բորբոք պահէ բանականութեան և փորձառութեան լոյսը. թող նորա մէջ երևի երբեմն և ուժեղ մարմին, և ևս իւր սպիտակ մազերի տակից ցոյց տայ մեղ մի վեհափառ ճակատ. թող ծերունին ներկայանայ որպէս մի հին կաղնի, որ զեռ ևս զընդապէս կրումը իւր վերայ իւր ահագին ծիղերը. թող լինի ևս հեղ, քաղցր և զթած. թող այն աղէտքը որոնց համբերած էր, թող այն մարդկեղէն տկարութեան փորձը որ փորձել էր ևս, և այն տեսակ տեսակ վտանգները, որոնցից պաշարված էին նորա ընկերքը, լցուցանեն նորա սիրտը մի քաղցր մարդասիրութենով. թող ծերունին զանգատի և ներէ, թող բնութեան բարբառը լսելի լինի նորա սրտի տկանջին:

Իրպիսի կարեկցութենով պիտոյ էր մեզ նայել այս պատկե-

բին որ քնքուշ երեխայութեան տկարութիւնը ցուցանում քիւտոր-
 փած այրական հասակի բոլոր մեծապատգոյթական և զեղեցիութեան
 հետ, այլև մի այնպիսի յատկութեան հետ որ աւելի շարժումը մեր
 սիրտը, զարթեցնումը մեր գութը և արժանի էր աւելի մեծ պատ-
 կասանքի: Ինչպէս արժանի ուշադրութեան կը լինէր ծերունու ա-
 մենայն խօսուածքը, եթէ նորա բերանից, որ բացումը միայն մի
 քաղցր գութի պատճառով, կը թափվէին միշտ հեղութեան խօսքեր:
 Այդպիսի ծերունին մի մտիմարիչ հայր է, թողած իւր զաւակնե-
 րի մէջ, որ լինի այն Աստուծոյ կենդանի պատկերը, որ պաշտումին
 նորա, որ բաշխէ նոցա իւր սրհնութիւնքը, օգնէ նոցա իւր խոր-
 հրդատութեամբը, սիրտ սոյ նոցա իւր քաջալերական խօսքերովը
 և իւր քաղցր գգուանքովը, երբ որդիական սէրը և երախտագիտու-
 թիւնը ցուցել են նորան այն օգնութիւնը, որ կարող էր պահան-
 ջել ծերունու տառապեալ գրութիւնը: Եւ ո՞ր սիրտը չէր բորբոք-
 վելու ցաւով, եթէ այս վեհախառ և պատկառելի ծերունին ստիպ-
 ուած է կորացնել իւր տկար գլուխը շքաւորութեան կամ անբաղ-
 դութեան լծի տակ:

ՊԵՏՄԵԿԵՆ ԿԵԼԵՐԵՎՐՈՒԹԻՒՆԻՆԵՐ.

10. ՍՈՐԷՔ ՊԵՐՈՒՆԻ ԵՒՆԵՆԻ ԼՈՒՆԻ ԿԷՂ.

Ընթարհի վեհմեկան հրաշք. իմ հոգին բարձրանում մի սուրբ
 արբեցութեան մէջ, երբ որ ես հիանալով քննումեմ քո անշափե-
 լի վայելչութիւնը. դու քո անխառ մեծախառութենով զարթեցնու-
 մես մտածութիւնը մտածութենների վերայ և շեւ թողում, որ սքան-
 շացող սիրտը հանդարտէ երբէք:

Մի ողջոյն դար ժողովել է և զիղել է քո քարանխմեայ մե-
 ծութիւնը, և անհամար մարդիկ եկել ու գնացել են, մինչև դու
 այդքան բարձր վեր ես ուղղել քո գլուխը:

Ըպտած քարահանքների մէջ է ձեր հայրենիքը, ո՞վ դուք
 ստուարամարմին պատեր ու սիւներ. քանի կոպիտ ձևերը աղքատին
 վարձով հարկադրել են այն անհնազանդ և բիրտ բնութիւնը, որ
 սոյ իւր մարմարենայ ժայռերը, առանց հոգալու, թէ մի ժամա-
 նակ ինչ պիտոյ է պոյանայ այդ անկերպարան խոշոր նիւթերից. աշ-
 խատողի ամենարեայ մտածութիւնը էր միայն իւր երկաթը և դոր-
 ծին, մինչև նա վերջին անգամ ձեռք առաւ նորանց և խից աշքերը:

Քանի մարդիկ, որ ոչինչ հոգա չունէին աշխարհի վերայ, բոց
 է նորանից որ շնչին վարձով այս քարերը մինը միսի վերայ հագ-

ցնեն ամբաստան, քանի՛ մարդիկ այսպէս աշխատելով գնացել են աշխարհից, քանի՛քը, որոնց բան ու գործը այն էր, որ այս սխմերը և գերանները իւրեանց բոլոր զարդարանքով ազատ և ուղիղ տանն ու կոփեն, քանի՛քը, որ իւրեանց սրտումը կ'սխորժէին պարծենալ մի գեղեցիկաշէն սխմազոյսով որ այժմ երևում չէ անշափելի բոլորի մէջ, փակել են իւրեանց աչքերը, և գուցէ թէ ոչ մի նայողի աչք այնպէս քննելով չէ նկատել միստնգամ այս սխմազոյսը, ինչպէս նորա շինողը որ վերջին անգամը նկատումեր նորան:

Ըստ և շատ ճարտարագետներ այս յաղժամարմին շինութեան վերայ աշխատել ու գնացել են, դորա էին, որ փոքրիկ ստուերագիրներով և զաղափարներով կատաւարումէին Հարիւր և Հարիւր կոպիտ ձևօքեր, պառաժի բոլոր անկերպարան որդիքը ձևակերպումէին որպէս ընտիր շինուածք. մի Հատ ականաւոր ճարտարագետ էր, որ չոր ու ցամաք Հաշուաճամարով և կոր գիծերով մի շնչին թողնի վերայ սրնադրեց այնպէս, որ աճադին գմբէթը Համարձակ վեր ելանէ պատերի ստուարութեան վերայ և բարձր կախած պահպանվի օդի մէջ:

Ինչ հասմեկան ամուսի շատ և շատ տեղակալները, որ շնչին մանր մանր մտալի կտորները իւրեանց մտնալ և անապատ զանձաներից ցրուելով ժողովրդի մէջ — որպէս թէ և լեքարական կայծերով — այն կոպիտ ձևօքերի մէջ քնած զօրութենից, քարահասաների ներհոյ արուեստից և ճարտարագետների երազող հոգիներից, դէպ ի լոյս հանեցին մի զուգայարմար տեսանլի իրագործութիւն. հասմեկան ամուսի տեղակալները որ միլիոնաւոր շնչին միատեսակ և անխորհուրդ արծաթի կտորներ այդպիսի մեծահասնձար սիրազոր ծուլեան, այդպիսի անսպասելի գեղեցիկ և վսեմական շինուածի հետ փոխանակեցին, աշխարհի և մարդկութեան պարծանքի համար, և այդ տեղակալները վաղուց վեր են կացել իւրեանց փառահեղ ամուսից և իւրեանց սուրբ ոտքը խոնարհութեամբ դրել են դէպ ի այն երկիրը, ուր տեղափոխված են այն մարդիկը որ պաշտումէին նորանց որպէս Ըստուծոյ տեղակալներ:

Ինչպէս բազմութեան հետքեր մարդկեղէն աշխատութեան լեզու առած խօսումէն քո բոլոր քարերի միջից, քանի՛ քանի՛ մարդերի կեանք մաշվելով քո ստեղծագործութեան վերայ խորտակվել է, և զու կանգնած կաս որպէս մի անմահ շինուած, հաստատած ևս քո ամուր պատերի վերայ և աներկիւղ նայումս դէպ ի գալոց երկար ու ձիգ զարերը:

Ընդ հարիւրաւոր, մի մի հատ ժոյռաքարերը, այն անկերպարան նիւթերը, որ նման էին ծայրակոտոր արած անդամների, այժմ

ձեւաորովէլ են որպէս նուրբ և բարակ սիւներ, որոնց մեծապայծառ կերպարանքը քաղցրահայեաց հանդիպում անսանոցի աչքին, կամ թէ բարձրացել են որպէս մի գմբէթ, որի գեղեցիկ ահագին կամարակապը քննելով դէպ ի վեր և նայում ցնծալից աչքը: Աներևութացել են այն անհամար ծայրակոտոր անդամները, կառուցած կանգնած և այն տեղ մի ողջոյն շինուած պատերով ու սիւներով, որպէս թէ աշխարհի ստեղծագործութեան ժամանակը հսկաների ձեռքով կազմած լինէր պարարտ կուից, կամ թէ հալած ապառաժից թափած լինէին ահագին ձեացութիւնք:— Եւ այս անհաւատալի երազի զարմանալի իրագործութիւնը որ զարհուրեցնում և բերակայութիւնը, այդ բանը ինչպէս և յառաջացել. այն երկրպագակ պատկեալ գլուխների քանի մի թռչուն խաղերով կամ թէ քանի մի տող գրուածով:

Բայց զու պանծալի ևս քո ներկայութենովը, և ոչինչ բան չունիս այն նիւթների հետ որ ծնուցել են քեզ. հողեղէն մարդիկ ստեղծագործեցին քեզ, բայց զու բնութեամբ աւելի բարձր ևս քան թէ քո արարիչների ազգը. զու թողումս, որ և բերարածից զարերի մահկանացու որդիքը երկրպագեն Քսաուծուն քո կամարակապի տակ և հովանաորումս նորանց այն աստուածութեամբը որ մշտապէս քարոզում են քո պատերը:

Այրանի ապականացու մարդուն, որ կարող է անապականութիւն հրաշագործել. երանի տկարին և անսուրբին, որ կարող է այսպիսի վսեմական սրբութիւն զոյացնել, որի առաջն նա ինքը ծունր է իջուցանում: Երկիւղած ճարտարութեան թևերի տակ, մահկանացուի ծնուցիչ զօրութիւնը սնուցանում մի ոսկեղէն պտուղ աւելի ազնիւ քան թէ ծառի բունը և արմատը. թող ցամաքի արմատը, բայց ոսկեղէն պտուղը փակում իւր մէջ աստուածեղէն զօրութիւնք:— Մարդիկ այն զուաներն են միայն, որոնցով աստուածեղէն զօրութիւնքը, սկսեալ աշխարհի արարչագործութեանից, ցած են իջնում երկրի վերայ և տեսանելի են լինում մեզ կրննի և տեղական ճարտարութեան գործակցութենով:

Մի մեծափայլուչ վտառ միտք էր, այն գեղեցիկ ձեակերպութիւնքը որ ախորժելի էին մեզ փոքրիկ և անցաւոր գործերի մէջ, մշտնջենաւոր կացուցանել այսպիսի մեծատարած չափով, վսեմափառ կերպով և ապառաժեայ նիւթով: Մի շատ ազնիւ ճարտարութիւն էր այն հմտութիւնը, որ արհամարհելով ամենայն մարդկեղէն կերպարանք և բարբառ, որոնց սպասաւորումն բոլոր միւս ճարտարութիւնքը, պարծենում նորանով միայն, որ կարող է մեր աչքի առաջն գնել մի ահագին զգալի պատկեր այն գեղեցիկ զուգաշափութեան:

ամբուժեան և պատշաճաւորութեան որ հիմնական առարկան թիւնքն են և ընդհանուր սկզբնական և գաղափարական պատկերքը մարդու հոգու մէջ, Այս ճարտարութեան գործերը (որպէս իմաստութեան զուգապատշաճ գիտութիւնը իմաստնաւորի հոգու մէջ) մի ամբողջնոց զեղեցիկ չղձայական են, բաղկանալով նիւթերից մինք միւսի վերայ հաստատած, սիններից և պատերից որ համարձակ դէպ ի վեր էին ձգժուս և հոգնաւոր ծածկոցներից և կամարներից որ անշարժապէս կախ ընկած դէպ ի ջած էին նայուս, Բայց և արձակ, Աստուծոյ երկընքի տակ կանգնած են նորա գործերը և անմիջապէս արմատանումն երկրի մէջ, որ ամեն իրական բաների տեսարանն է. գորանց չէ կարելի, ինչպէս ուրիշ ճարտարագործութիւնք, կառաւարել ձեռքերով. այն ազգը որ գոյութիւն է սուել գոցա, ներս է մտանուս նոցա մէջ, զգուսէ իւր անձը նոցանով շրջապատած, և նոքա այն աչնիւ անօժքն են, որ իւրեանց տարածութեան մէջ պահպանումն ամենայն միւս ճարտարութիւն և գիտութիւն, այն աշխարհի ամենազնիւ ներգործականութիւնք:

Ինչ ասելի մեծ բան կարող էին նոքա պահպանել և շրջափակել իւրեանց մէջ քան թէ մարդու ձգտողութիւնք դէպ ի Աստուած: Երգարեւ, ապա պիտոյ է որ այս ճարտարապետական շինուածը ընդարձակէր իւր պատերը և բարձրացներ իւր գմբէթները, ինչքան կարող էր, որ այդպէս մի մեծ տարածութիւն շրջափակէր, շատ և շատ հողանին որդիք ժողովէր մի մայրական գոգի մէջ, որ հաղարաւորների առանձնական, թափառական ջերմեանդութիւնք հաւարժելով այս կամարակապի տակ, և ընդունելով այս սուրբ պատերի գրկախառնութեան մէջ, վառվէր միւսորեալ բոցով, և Աստուածութիւնք արժանաւոր պաշտօն ստանար: Անցեալ ժամանակի անհամար ազգեր նուիրել են այս սուրբ պատերը որպէս ջերմեանդութեան տեղի, և զալոց ժամանակի անհամար մարդիկ իւրեանց գրկի մէջ փակելու սպասումն քղոս կարօտով:

Այն թուամբ ևս այն առողջամիտ իմաստունների ձայնք, որ ծաղր անելով խօսումն այսպէս. Ինչ սոցուս աշխարհին այդ մեռած ու անպտուղ փառահեղութիւնք. նեղ, անզարդ տարածութեան մէջ կարող է մարդս շատ ջերմեանդարար աղօթք անել, և շատ կարտեալք, այրիք և որբը կարող էինք կերակրել և զընցուցանել այս քարանիւթ գանձերի զնովք: Գիտեմ այն, որ զառնապէս բամբասումն ճարտարութիւնք և կրներ իսկ, երբ որ սերս ձոխ և արքայական փառահեղութեանով հանդիսանումն աշխարհի առաջն: Թող լինին որքա շատ հաստարմատ մտածութիւնք մարդկային բանականութեան, բայց չեն որքա արարիչ նախախնամութեան մտածութիւնքը:

Իմաստնաւորքը մարդկեղէն խնացութեամբ հաշուելով ու դու-
զաշախելով և մի խիստ բանասոր կարգ աշխարհի գործերի մէջ պա-
հանջելով, կամենումն երկիրը նոր ի նորոյ անեղծագործել. բայց
ինչ է երկիրս, եթէ ոչ մի լսելի ձայն, որ գալիս էր երկրագունդ-
ների թագուն ներգաշնակութեան միջից, մի տեսանելի թռուցիկ
կայծակն, որ փայլումէր տիեզերքի ծածուկ և խաւար ամպերի մի-
ջից, և մէք ի՞նչ ենք. — Այն աշխարհային բաների ելեւէջքը, որոնց
մէջ բարձրը ընկերանումէ բարձրի հետ և տափարակութիւնքը և խո-
րութիւնքը անհոգ թողած չքանումն, և բնումն ինձ թէ ոչինչ այլ
բան չէր, եթէ ոչ այս երկրանիւթ արարածի առանձին խորհրդա-
ւոր երակաղարքը, նորա ահարկու և անհասկանալի շնչատութիւնը:

Եթէ երկիրը կամենում մեծ և վտեմական բաներ գոյացնել ի-
րապէս և Նիւթակամարար, նորա ձգտողութիւնը մնում միշտ երկրա-
ւոր, և նա չը գիտէ այլ ընկերներ տալ մեծութեանը և վտեմակա-
նութեանը, եթէ ոչ հողեղէն գանձեր: Եւ ինքը անշունչ բնու-
թիւնը, բոլորովին երկրասոր մտքով, իւր սարերի զարմանալի գե-
ղեցիկութիւնը շտայլարար ճոխացուցել է ստորերկրեայ թանգազին
մտայնելով, թէպէտ անվերջ անապաններ նորա չոր ու ցամաք ձևա-
քի տակին հալումաւ են լինում:

Իբրեմն լուս կոց դու, մարդկային հանձար, և դուք, երկի-
զած զգացողութիւնք, զմայելեցէք այս վտեմական փառահեղութե-
նովք:—

Իսոյց ԲՏ, և այս հրաշքը աշխարհի վերայ ինչպէս չքանում
այս փոքրիկ երկրի անհամար բաների մէջ, Այս հաշակն ճարտարա-
պետական գործը փոքրանում անշափ, երբ որ աշքը մի քանի թիղ
հեռացաւ նորանից, և չքանում բոլոր միւս մարդերի համար: Աղ-
ջոյն աշխարհներ դորա համբաւը երբէք չեն բաժ, և այն հազարա-
ւորքը ևս, որ աշքով անսանումն նորան, աւելի հարկասոր բաներ
ունենն մտածելու և ստան սրտով անցանումն նորա մտից:

Այս հրաշալի շինուածի նախագալիքը այնպիսի գեղեցիկ դիրք
ունի, որ եւրոպական առաւել փառասոր տեղերից մինն է: Մի լայն
ու արձակ շրջագաթի մէջ որ բոլորակաձև պտակազարդում մի ա-
հազին սիւնաշէն սրահով, չորս հարիւր հոյակապ սիւներ կրումն
Իւրեանց վերայ երկու հարիւր հսկայաձև արձաններ. երկու փառա-
ւոր աւազանների միջոցում, որ սեւացած էին ժամանակի հնութեանից,
որոնց միջից հանապաղատից ջրեր դեպ ի վեր են ցայտում, կայ-
ծակի պէս փայլատակումն, վայր են թափում և մրմնջումն գի-
շեր ու ցերեկ, բարձր ի գլուխ վեր է ջջում մի հրաշալի քարկո-
թող (սրելիակոս): Այս քարկոթողը ապառաժից է, որ կոխած է

Եղիպտոսումը և յետոյ բերած և Հռոմ, ուր և հրամայեց կառուցանել Նորան հինգերորդ Յիքստոս պապը ասանեփեցերորդ զարու միւս կէտումը:

Օգարմանք չէ, որ սուրբ Պետրոսի եկեղեցին այդպիսի զարմանահրաշ շինութիւն է գարձել, Նորան յղացաւ իւր մտքումը երկրորդ Յուլիոս պապը, սկսեց յառաջ տանել ճարտարութիւն սիրող Լևոն ասաներորդը, որ ցանկացաւ բոլոր գեղեցիկ հմտութեանն երի գերազանձ գործերը մի տեղ հաւաքել և բոլորել. վերջպէս շատ գարեք գալով ու գնալով, այն շինուածը գլուխ եկաւ ժբագլուխ Յիքստոսի հինգերորդի հոգաբարձութենով, որ սովոր էր ամենայն բան կատար հասուցանել:

Եւս յիշատակարանը այն առաւել մեծամեծներինն է որ ծանօթ են երկրի վերայ. նա երկու մասն է բաժանում Աստիկանի սարը, ծածկումէ Ներոն կայսրի կրկէսը (ցիբլոսը) որի վերայ հիմնած է: Նա վերջանումէ փակելով հռչակաւոր յաղմանակի ճանապարհը, Հռոմի և միւս աշխարհների մէջ:

Աշինչ լեզու չէ կարող բացայայտել այն հիացութիւնը որ գալիս է մարդու վերայ, երբ որ առաջին անգամը ներս ես մտանում սուրբ Պետրոսի եկեղեցին, երբ որ կանգնած էիք այն արձակ սալայատակի վերայ, անչափելի խորիսինների մէջ, այն բրծողեղէն սիւնների հանդէպ, տեսանելով այն բոլոր կենդանագիր տախտակները, այն բոլոր արձանները, այն բոլոր հրաշափառ յիշատակարանքը, այն բոլոր սեղանները, և այսպիսի տաճարի, այսպիսի լայնատարած շրջապատի մջ, ուր Հռոմի քահանայապետների երկիւղածութիւնը և բոլոր գեղեցիկ ճարտարութեանների փառասիրութիւնը այսբան գարեքից յետոյ շին գաղարում թէ ապառաժով, թէ ոսկով, թէ մարմարիով, թէ բրծողով և թէ պատառով ճոխացնել Նորա մեծութիւնը, հշոյակապութիւնը և յաւերժականութիւնը:

Կարելի էր մի աւելի մեծ բազմութիւն քարերի կուտել դիզել միմեանց վերայ աւելի գերազանց բարձրութենով և աւելի լայնարձակ դաշտի վերայ. բայց այդքան հսկայամարմին կոտորներից ձեւաւորել մի բոլոր շինուած, որ երեւէր միայն մեծափայլուչ, այդքան փայլուն ճոխութեաններից կառուցանել մի յիշատակարան, որ երեւէր միայն փառահեղ, և այդքան բազմամասնայ նիւթերից բաղկացուցանել մի բոլոր. այդ էր հմտութեան գերազանձ վաստակը և մասնաւորապէս Անջելո Բանարստոսի ճարտարապետի աշխատանքը: Եւս մեծանուն ճարտարապետը, քանդակագործը և կենդանագիրը միանգամայն (որ ծնաւ 1474 թուակ. և մեռաւ 1564 ին) տասն և ութ տարի իւր կեանքից գրել է սուրբ Պետրոսի եկեղեցու շինութեան վերայ:

Բայց ինչքան սխալանք կան այս շինութեան մէջ, կարող էր
ստեղծ մինչ, սխալանք որ թէպէտ զգալի չեն սրտի և աչքի համար,
բայց պիտոյ է կարկինը որոնէր նորանց այն տեղ և հետազոտու-
թիւնը գտանէր մին մին:

Պարզ վեր էք ստնում մի շնչին շափ, որ խմանաք այս տա-
ճարի մեծութիւնը. բայց ես, ինչքան որ այն տեղ կանգնած էի,
միշտ մտածումի լստուծոյ և անանց մշանջենաւորութեան վերայ. ա-
հա՛ ձեզ նորա ճշմարիտ մեծութիւնը. այս տաճարի մէջ լինելով,
անկարելի է ունենալ միջակային զգացողութիւնք և հասարակ մտա-
ծութիւնք:

II. Ծ-ԷԸ:

Ընթացին բանը որ հանդիպում և շխարհագրին մարդու աչքին,
է այն ահագին ջրի բազմութիւնը որ ծածկում և երկրագնդի տա-
ւել մեծ մասը. այս ջրակոյտը բռնումն միշտ տեւիլի փոս տեղերը,
բայց նոյնպէս միշտ հարթակչիտ են և անդադար աշխատումն մեալ
հաւասարութեան և խաղաղութեան մէջ: Ընդու ամենայնի տեսա-
նումներ, որ ջրերը խոռվումն մի սաստիկ զօրութենից որ յաղթե-
լով այս տարրի հանդարտութեանը ներգործում նորա մէջ մի շրջա-
բերական և կանոնաւոր շարժողութիւն, փոխ առ փոխ բարձրացնու-
մ նորա ալիքները և ճօճեցնելով ծովերի բոլոր նիւթը, զղղում
նորանց մինչև ամենախորին յատակը: Մէք գիտե՛ք որ այս շարժո-
ղութիւնը լինում ամենայն ժամանակ, և թէ նա կը տեւ պէքան
երկար, ինչքան լուսինը և արեգակը որ նորա պատճառքն են:

Յետոյ քննելով ծովի յատակը, այն տեղ կը նկատուք այն-
քան անհասարարութիւնք, ինչքան որ կան երկրի երեսի վերայ.
Մէք կը գտանէք այն տեղ սարեր, ձորեր, դաշտավայրեր, խորու-
թիւնք, քարածոյտեր, ամենայն տեսակ ցամաքահողք: Տեսանումներ,
որ բոլոր կղզիքը ոչինչ այլ բան չեն, եթէ ոչ ահագին սարերի
կտտարներ, որոնց ոտքը և արմատը ծածկած են հեղանուտ տարրովը.
Մէք գտանումներ այն տեղ այլ սարերի գլուխներ, որ հաւասարա-
կչիտ էին ջրի հետ, տեսանումներ սրճնթաց հոսանքներ որ երևումք
թէ կամնումին հրաժարվիլ ընդհանուր շարժողութենից. այս հո-
սանքները երբեմն ցուցանումն շարունակապէս մի ընթացք, երբեմն
յետ են դառնում, բայց երբէք դուրս չեն գալիս իւրեանց սահման-
ներից որ երևումն այնպէս անփոփոխ ինչպէս ցամաքահողի գետե-
րի սահմանները: Ընտ տեղ են մրբկալից կողմերը, ուր կտտաղած
հողմերը արձակումն փոթորիկը, ուր ծովը և երկինքը հաւասարա-
պէս խոռված զարկվումն միմեանց և խառնակվումն միմեանց հետ.

այս տեղ հանդիպումն ներքին շարժողութիւնք, եռացութիւնք, ջրափիւնք և անսովոր տատանումնք, յաստիճանալով այն հրաբուլիս սարերից որոնց զէպ ի ցած ընկզման բերանը ջրերի միջից դուրս է փսխում կրակ և մղում մինչև ամպերը մի թանձր շողի, խտն ջրի, ծծմբի և կարբի հետ. փոքր մի հետի ստրանից երևումն ինձ այն անդունդքները որոնց մտանալու շը կար համարձակութիւն, որ և լիքփումը թէ մտ էին քարշում նաեւրը որ կլանեն նորանց. ստրանից միս կողմումը տեսանումմ այն արձակ ջրադաշտերը որ միշտ խաղաղ ու հանգարտ էին, թէպէտ և վտանգաւոր նշոյպէս, ըստ որում անօդուտ էր այն տեղ նաւարկութեան արուեստը և նաւարկողքը պիտոյ է այն տեղ անշարժ մնային և մեռանէին: Պերջապէս տանելով աշքերս մինչև երկրորդ յարակի ծայրերը, տեսանումմ այն ահագին սառոյցները որ արձակվելով բեկոյային աշխարհէնրից, գալիս են որպէս լողացող սարեր, որ անցանեն մինչև բարեխաւն սահմանները:

Մհա այն գլխաւոր առարկայքը որ հանդէպ է կացուցանում մեզ ծովի լայնատարած թագաւորութիւնը. հազարաւոր պէտպէս բնակիչներով լցված է նորա բոլոր տարածութիւնը. ոմանք, թեթև կեղևով պատած, արագութեամբ անցանումն զէպ ի զանազան աշխարհներ, միսերը թանձր խեցեմորթով ծանրաբեւոնած, զանգաղապէս սողումն քրքելով ի բեանց ճանապարհը աւազի վերայ. միսերը, որոնց տուէլ է բնութիւնը թեւանման լողարաններ, գործ են ածում ստրանց. ջրից զէպ ի վեր բարձրանալու և պահելու ի բեանց օդի մէջ. այլ միսերը վերջապէս, որոնց չէ տուած ոչինչ շարժողութիւն, ածումն և ապրումն, քարածայրերի վերայ կայած. բոլորեքեան զամումն ի բեանց կերակուրը այս հասկան տարրի մէջ. ծովի յասակը առատապէս բուսուցանում անկականներ, մամուռներ և աւելի ևս գիտութեան արժանի անեցականներ. ծովի ցամաքը բազկանում աւազից, խճից, շատ անգամ կաւից, երբեմն ամուր հողից, խեցիներից, ժայռերից, և ամենայն տեղ ծովը նման է երկրին որի վերայ բնակումներ մը:

12. ԲՆՈՒՄԻՆ ԸՆԴՈՒՄԸ - ԲՆՈՒՄԻՆ ԲՆՈՒՄԻՆ ԲՆՈՒՄԻՆ:

Ս և ր տեղէք մի խոշորացոյց և նկատեցէք բնութեան կրկնապատկութիւնը, այնքան լարելով ձեր ուշադրութիւնը, ինչքան նորա գործերը փոքր էին մեծութենով: Տեսէք այն ոսկիփայլ ծիրանի, կապտագոյն, սաստախանձան նիւթերը և այն բոլոր ջրած գոյները որոնցով բնութիւնը զարդարել է երբեմն ամենաչնչին միջատի լանջապանակը (կուրծքի պատեանը): Նայեցէք այն ճառագայթաւառ հիւս-

ուածին որով պատել է նա մթևի թևերը, սեւեք այն աչքերի բազմութիւնը, այն լուսապայծառ թաղը որով կամեցել է բնութիւնը պսակել ճանճի գլուխը: Այն մարդուն, որ ամենայն հայեցումքով նկատում արարչագործութիւնը, երևում թէ նրբակազմութիւնը ամենայն տեղ աշխատումը յաղթել փառահնչումով հանը. բայինա ձկի կամ թէ փիլի աչքը ցուցանում քննողի աչքին այնպիսի մանրամասն բաներ, որոնց փոքրութիւնը փախում նկատողի աչքի տակից. և այս մանրամասն հանգամանքները զեռ ևս չէին այն վերջինքը, որ կապումն քննութեան ընթացքը. մի և նոյն մասները և նոցա բաղկացական կոտորները հանդիպումն նոյնպէս այն փոքրիկ ճանճի ցանցակերպ աչքամբութի և եղջերայ մաշկի մէջ. ինչ ևս ասում, այն ժամակի աչքակազմութեան մէջ, որի մասին, խոշորացուցի գիտից յառաջ, չը գիտէին ևս, կայ թէ չը կայ նա:

Ինչքան կատարելագործվել է խոշորացոյց աղակին, այնքան ևս ամենայն կողմից լուսափայլում կենդանութեան ներկայութիւնը. ամենափոքրիկ հիւլէքը դարձել են բնակաւոր աշխարհներ և հեղանիւթի ամենափոքր կամիւրը ցուցանումն ձկնառատ ծովեր, և այս բոլոր, յառաջուց այնպէս, էակները ունին գործարաններ, որոնց ամենափոքր մասները նոյնպէս համեմատ էին իւրեանց ամբողջ մարմին, ինչպէս հսկայ գաղանների մէջ: Այլև ունին նորա իւրեանց յատուկ պիտոյքը, իւրեանց օգտասիրութիւնքը, իւրեանց բնական աղեկցութիւնը, իւրեանց բարքը, սէրը և թշնամութիւնը. նորա շարժումն, անանումն, պահպանումն իւրեանց անձը, ածումն և բազմանումն: Այս մի այնպիսի էական աշխարհ է, ինչպէս մերը, այնքան հին, որքան մերը. մի աշխարհ, որ կարելի է թէ իւր ներքոյ ունէր այլ աշխարհներ որ այնպիսի յարաբերութիւն ունէին նորա հետ, ինչպէս նա ունի մերի հետ:

Սորանից յետոյ կը համարձակվիք դուք մտածել թէ բնութիւնը անհոգ է որ և իցէ բանի մասին: Ոչ. նա մի և նոյն է ամենայն տեղ. և մի փոքր հոգմի փռոզութեանից վեր ի վայր շարժված հիւլէների պտոյտքը այնքան ևս մեծակշիռ է այն զորութեան համար որ կառավարում նորանց, ինչպէս մի բոլոր շրջաբերութիւն արեգակի գործատան մէջ. մի հատիկ աւաղ այնպէս ճիշդ կշռած է տեղիճագործութեան լծակի մէջ, ինչպէս երկնակամարի վերայ շրջող աստղը. նա սեղմում, յեռ է քարշում, ընդդիմանում, ազդում ամենայն շրջակայ բանի վերայ. նա, իւր մեծութեանը համեմատ, գործ է դնում այն բոլոր յատկութիւնքը որ պատկանումն նիւթի բոլոր քանակութեանը. բնութիւնը այնքան ևս հոգարարու է այդ մի հատիկ աւաղին, ինչքան իւրիտերի և Սասունի գուն-

ղին, Յիրաւի, եթէ այդ մի հասիկ աւազը աւելի կամ պակաս էր արարածներէ ամբողջ զուժարի մէջ, այն ժամանակը տիեզերքի կարգը ոչլ կը լինէր, քան թէ է :

13. ԵՂԻՎԱԿՈՒՆ ԲԻՊԻՆՈՒՆ :

Ժամանակի ձեռքը և մանաւանդ թէ մարդկային ձեռքը, որ ապականել է հնու.թեան բոլոր յիշատակարանները, այնու ամենայնիս ոչինչ չէ կարողացել փնտել Նդիպոտի բուրգերին, Նոցա կաշ մածի ամբութիւնը և Նոցա մեծութեան անչափութիւնը պահպանել են նորանց ամենայն փնասահարութենից և երևում թէ յախտեան կը պահպանեն : Ճանապարհորդները ամենեքեան խօսումն Նոցա մասին զարմանալով և հիանալով, և այս հիացքը շարագանցութեամբ չէ : Այս արուեստական սարերը տեսանելի են տան և ութ փարիզեան մղն հեռուորութենից. երևում թէ այնքան հեռանումին Նոքա, ինչքան զու մտանումներ Նոցա. մի մղն զեռ ևս հեռի լինելով Նոցանից, և ահա այնպիսի բարձրութեամբ ջգջումն Նոքա մարդու գլխի վերայ, որ կարծումներ, թէ Նոցա ոտքին կանգնած ևս. վերջապէս մտանցար զու, և ոչինչ լիզու չէ կարող բացայայտել այն բազմաբնակ զգացողութիւնք որ ծնանումն քո սրտի մէջ. Նոցա կատարի բարձրութիւնը, Նոցա շեղութեան արագութիւնը, Նոցա մակերևոյթի լայնարձակութիւնը, Նոցա նստուածքի ծանրութիւնը, հին ժամանակների յիշատակը որ նորդումն Նոքա, այն ջանքի ու աշխատանքի հաշիւը, որ արժէլ են Նոքա, այն մտածութիւնը թէ այս անչափելի քարաժայռերը այնպիսի մարդու գործ էին, որ այնքան փոքր և այնքան սկար էր, որ և սողումը Նոցա ոտքումը. այս բոլոր բաները յանկարծ բերումն սրտի և հոգու վերայ հիացումն, ահ ու զող, խոնարհութիւն, զարմանք և պատկատանք : Բայց պիտոյ է խոստովանել թէ մի ոչլ զգացողութիւն հեռուում այս առաջին հիացքի քամակից. այդպիսի մեծ կարծիք մարդու կարողութեան մասին ստանալուց յետոյ, մտածելով և քննելով թէ այդ կարողութիւնը ինչ տեղում է գործ դրած, պիտոյ էր ցաւելով միայն նայել Նոքա գործի վերայ. մէք արտոմումը մտարերելով, թէ մի ունայն զերեզմանի համար հարկաւոր է եղած քան տարի տանջել մի բոլոր ժողովուրդ. մէք արտասովումնը այն անհամար անիրաւութենների և սանջանքների վերայ որ պիտոյ է արժէին այն ծանր ծառայութեան հարկերը, որպէս. տեղափոխել, հատանել և միմեանց վերայ գիպել ու կուտակել այնքան քարեղէն նիւթեր :

Մեր սիրտը արդար բարկութենով զայրանում այն բռնակալների անտոութեան վերայ, որ հրամայել են այդպիսի բարբարոսա-

կան գործեր. կրկին և կրկին անդամ խոսովումն մեր սիրտը, աչք ձգելով Նզխույտոսի յիշատակարանների վերայ. այս լարիւրինժոսքը, այս տաճարները, այս բուրգերը և նոցա պինդ կազմածը ասացուցանումն ոչ թէ մի հարուստ և ճարտարութիւն սիրող ազգի հանձար, այլ մանաւանդ թէ մի ազգի ծառայութիւն, որ տանջված էր հնազանդելով իւր իշխանաւորների ինքնահաճոյ կազմին: Ապա ներկէի է այն ազահութիւնը, որ պղծելով այս բունաւորների գերեզմանները, ունայնացրել է նոցա յոյսը. նշնուէս ցաւակցութեան աւարժան էին այս աւերակները. թող ճարտարութիւն սիրող մարդը բարկանայ տեսանելով Ալէքսանդրիա քաղաքի մէջ, որ հին եզիպտոսեան տաճարների սիւները սղոցումն, երկանաբար շինելու համար. բոլոր իմաստասէրը, թէև մի վայրկեան տեղի տալով այն սրտցաւութեանը որ կարող է պատճառել ամենայն գեղեցիկ բանի կորուստ, այնու ամենայնիւ պէտք է ժպտի աշխարհի ծածուկ արդարադատութեան վերայ, որ յետ է տալիս ժողովրդին այն բանը որ նորա արխնոտ աշխատանքի գինն էր, որ և մի անօգուտ գեղջութեան ամբարտաւանութիւն խոյտառակում, ծառայեցնելով նորան ժողովրդի ամենացած պիտոյքներին:

14. Խան Կոբրէանսը:

Ընդհանուր բառոյս խան, արևելեան աշխարհներումը ասվումն այն բոլոր հասարակաց տեղերը, ուր ընդունվումն ճանապարհորդքը. աւելի մասնաւոր մտքով, քարվանսարայի անուն տալիս են բուսական ընդարձակ շինուածների, ինչ տեղ իջևանումն բազմաթիւ ժողովրդ մաճառականների, որ ասվումն Կոբրէան, որ և մեք հայերէնումը մի փոքր այլպէս ասումնք Կոբրէան: Այս շինուածները համարեա թէ բոլորեքեան փաշաների մարդասիրութեան գործ էին, կամ թէ հարստական մասնաւորների, որ շինած էին պայպիսի հիւրանոցներ և դրած էին կրօնի հովանաւորութեան տակ, ընծայելով նոցա շախաւոր եկամուտքը մահմետական մզկիթներին:

Քարվանսարայքը համարեա թէ միշտ բաղկանումն չորս շինութեանից, որ պարունակումն իւրեանց մէջ մի ընդարձակ գաւիթ. ներքևի տներումը կան ախոսներ և շտեմարանք. վերին յարկը բաժանված է բաղնաթիւ սենեակներ. համարեա թէ ամենները ունին մի ծխահան և կապակից են միմեանց հետ մի արտաքին նեղանցքով. գաւիթի մէջ տեղումը կայ մի առատաջուր աւաղան վայելչապէս զարդարած. սորա չորս կողմը հովանաւորումն փառահեղ սոսի ծառեր և հանգիստ են պատրաստում վատտակած ճանապարհորդներին: Երժանի ուշադրութեան տեսարան է այս խանը, երբ գեղջի երկկայ:

բազմամիլի. ճանապարհորդներ զանազան տեղերից գալիս էին այս տեղ գիշեր անցուցանելու. երկար ու ձիգ շարած ուղտեր գալիս են թափելու այն տեղ իրենանց թանգագին բեռները. ձիաւորներ բազմութեամբ ճանապարհակից են նոցա կամ թէ հետևումն քամակիցը. նորա զգեստաւորված են զանազան հանդերձներով, ունին զանազան զէնք և կերպարանք, ամենեքեան ոտքի վերայ են և գործի մէջ, խառումն միմեանց հետ զանազան լեզուներ, զարմանումն հանդիպելով ծանօթ ծանօթի և ուրախանումն ճանաչելով միմեանց: Մի քանիքը առաջարկումն իրենանց ազրանքը, միւսերը հարցնումն ճանապարհի փոանջների մասին. բոլոր ազգերը և բոլոր հաւատները մտանումն միմեանց իրենանց հասարակաց ոգտի համար: Մի ծերունի մարդ, խանի վերատեսուչը, որի պաշտօնը այն էր, որ հսկէ այն տեղ բարեկարգութեան վերայ, նստած է իջևանի մուտքի մտ. նա ընդունում ճանապարհորդները, կրկնում այն ողջոյնը և բարի մաղթանքը որ տալիս են նորան, տեղեկանում և այն եկաւորներին, որոնց զեռ ևս հանդիպած չէր երես առ երես. ամենեքեան ուրախանումն տեսանելով սորան և պատկատանքով վարվումն նորա հետ: Նա զգաստութեամբ հոգատար է հիւրերի պիտոյքներին, նշանակում է նոցա սխևաններ, չէ թողում, որ անկարգութիւնք պատահին: Եւ եթէ այս հարուստ կարուանների հետ որ եկած էին հետաւոր աշխարհից, գտանվումն անբաղդ մարդիկ, մերկ և քաղցած, ինչպէս լինումը յաճախ, այդպիսիքը Եստուծոյ և Մուհամմեդի անունով ընդունվումն որպէս եղբայրք, որ աւելի մեծ տառապանքով քան թէ միւսերը, կատարումին կեանքի պանդխտութիւնը: Եւ այդպիսիքը կարող են համարձակ ներս մտանել, ըստ որում գրան վերայ կարգացած էին այս բաւերը, ոսկեղէն տաւերով փորած. «Երբայտութիւնը պատկանում է նոցա, որ Եստուծոյ սիրու համար կերակրումն անբաղդները և կարտները, որբերը և ծառաները:»

15. Երէւնի — շիշտակարաններ տեսանելով:

Եւ այդպիսի մարդասիրութեան յիշատակարաններ տեսանելով, կարելի է արդեօք մի քանի բուպէ չը ժողովել իւր մտածութիւնը այս արեւելեան առաքինութեան ազրիւրի և նորա զանազան գործադրութեանների վերայ: Եւս առաքինութիւնը, ինչպէս երևում է, մամանակից է աշխարհի մանուկ հասակին. այն երկիրներումը մանաւանդ, ուր մարդու բարք ու վարքը պահպանել են իրենանց պարզութիւնը, այն թափառական ազգերի վրանների մէջ, որ հարուստ էին իրենանց բազմամիլի ունեւորներովը և երջանիկ իրենանց անկախութեանով, միւսանգամ գտանումներ մէք այն նահապետական սովոր-

բութիւնքը, կարծումներ որ ներկայ էր գեռ ևս հայր Արքայապետը, որ մտանալով իւր տարիների ծանրութիւնը, հանդեպ էր վաղու՛մ անծանօթ ճանապարհորդներին և աղաչումէր նորանց, որ անխժ չը համարեն իջեանել իւր տանը. կամ թէ այն բարեպաշտուն Իսրայէլացի, բարեգործութեան սրինակ Տօրիթը, որ միտմարմուտներ իւր գերութեան մէջ, թեթևացնելով իւր եղբայրակիցներէ վիշաբ և առապանքը: Այն երկիրներումը, ինչ տեղ միւսանցած հանդիպումէ մեզ այն հին և վաղեմի բարբերի պատկերը, ճանապարհորդը գտանելով ընդունելութիւն և օգնութիւն, օրհնում արդէն ազգերի հաւատարմութիւնը իւրեանց պատկերի երկիրը՝ ստորութեանն ինն. նա մաղթումէ Աստուծուց, որ ձախորդութիւնը չը հասանէ նոցա, որ նորա արնուստիրտ հիւրընկալը երբէք հարկադրված չը լինի գանգատել Յովրի պէս իւր անշտիլի ցաւերի մէջ. «Ի՛մ տանից գուրս ոչ ով էք իջեանում, որովհետեւ ի՛մ գուրս բաց էր ամենայն եկուորի համար:»

Արդարև բոլոր Արարացիք կարող էին և պատր, ինչպէս Յովր, երկիւնքը վկայ բերել այն բանին, թէ նոցա հաւատարմապէս պահպանումն այս պատուելի կանոնները: Այդ հիւրատիրական բարքը որ սեփական էր նոցա, պատկանումէ, ինչպէս նոյն իսկ ազգը, աշխարհի մանկական ժամանակին: Պանդխտականը քանի մի բարեկամական խօսք խօսելով և լսելով տանուտիրոջ բերանից, մատուցանում նորան մի թեթև ընծայ, որ տանուտերը ընդունումէ միշտ երկիրը՝ սրտով. մի աւելի ծանրացին ընծայ յետ կը զարձուցանէր նա որպէս նախատիրք, և եթէ օտարականը երկար ժամանակ ճանապարհորդելով, բաժանել էր ահա իւր հետ վեր առած հայրենի աշխարհի բերքը, ազգա վեր է կաշնում նա մի ծաղիկ, մի հասարակ ծառի ճիւղ որ կար տան մտին, և ընծայումէ տանուտիրոջը, ներս մտանելով: Այս գործողութիւնը նշան է իջեան խնդրելու, և ընդունելի էր միշտ: Մի կանաչ տերև մատուցանել մի մարդու, այս ազգերի մէջ մի և նոյն էր, որպէս թէ հիւրատիրութիւն խնդրէիր. տանուտիրոջ ծառայքը շրջապատումն մուսափիրի (ճանապարհորդի) շորս կողմը, որպէս թէ մի յաջողութեան լուր էր բերած. նորա ներկայութիւնը ուրախութեան պատճառ է, և ահա կարող էր նա միամիտ լինել թէ ամենայն կերպով հոգաբարձութիւն կը լինի իւր կեանքը քաղցրացուցանելու համար: Մի սուրբ և անժխտելի պարտականութիւն էր պահպանել հիւրը գոնեայ երեք օր, մորթել նորա համար աւելի պարարտ գառը: Մուսափիրից խնդրումն, որ ամենից յառաջ ձեռք պտրղէ գէղ ի կերտիւրը, համարելով իւր անձը տանուտեր, և ընդհանուր ստորութիւնը պահանջումէր, որ հիւրը

ձեռքէ միւսերը այն կերակրով, որ մատուցանումն նորան, և առաջին պատառ սոյ իւր հացասու տանուտիրոջը որ ապա շնորհակալութիւն է մատուցանում հիւրին, ըստ որում ընտրել էր նորա տունը որպէս իջևան, և ուրախանումն այն բաղդաւորութեան վերայ, որ դաշակումք ոչոյ գերազանց շնորհը հիւրի կողմից:

Ընապատական Արարացիք որ ասվումն և Յեզուիներ, որ միշտ պատրաստ են կողոպտել ու յափշտակել, որ ոչինչ կերպով կապակից չեն ուրիշ ազգերի հետ, որ անգլմութեամբ գերբութեան անապատից անցանող կարաւանները և հալածումն ճանապարհորդ մարդը, երբ որ սա փախչումք նոցա տեսութենից, որ կարծումն թէ իրաւունք ունին բռնութեամբ յետ անուլ այն հին ժառանգութիւնը, որից, ինչպէս ասումն, զրկված էին Խամայէլի անունով, այս գաղանարարոյ Արարացիք, ասես թէ, յանկարծ մի զարմանալի ներհակութենով մոռանումն իրեանց բնաւորութիւնը և յոժար էին ցոյց տալ մի գերազանց այնուական և քաջասիրտ հիւրասիրութիւն: Եթէ սոցանից մինը ընդունել է մի ստարական որպէս հիւր, այնուհետեւ ամենայն կերպով հոգատար է նա սորա ապահովութեանը, բոլոր զերբաստանը պատրաստ էր մանաւանդ թէ մտանել հիւրի պահպանութեան համար, քան թէ նախատիք և անարդարութիւն բերել իւր անուանը, թոյլ տալով որ մի հիւր մարդ անպատիւ լինի Օտարականը, հիւրի սուրբ անունը հովանաւոր ունելով իւր վերայ, կարող է անցանել անապատը թշնամի ազգերի միջից, պաշտպանութիւն տառալով արարական անուան պարծանքից և կրնից միանգամայն: Ամենեքեան պիտոյ է կատարելին բարկութենից, մաածելով անգամ մատնող լինել այն վտարադղին որ իջևան էր խնդրած նոցա վրանի տակ, որ շոշափած էր նոցա հանգերձի ծայրը:

15. ԱՐՔԻՆԻ ԱՆՊՊՈՒՆ:

Աշխարհի սահմանին հասար դու ահա, աշքիդ առաջն բացվումն անապատի հանդարտ ծովը, մի անշափելի աւաղազաշտ: Դու մի անհասկանալի ահ ու գողով ոտքդ կոխումես հողի վերայ, մի բույլ յառաջ բած էիր մարդկային ձայն, լնչումների երգ, գաղանների մոնչիւն, տաւարների բառանջիւն, հովիւների սրնգի ձայնը, հողմերի հնչիւնը տերեւների մջ, և ահա առ փոքր փոքր շքանումք բոլորը, բոլորը: Խայտաճամուկ գոյների բողմաստեակութիւնը վերջանումն նոյնպէս. դու ոչինչ չես տեսնումք բաց ի մտրադոյն, անշարժ, ուղղագիծ աւաղազաշտից և բաց ի կապոյտ երկնականաւորիցը որ կապվել է նորա վերայ, և երկուսի մջ տեղումը չը կոյ ոչինչ, ամենեին ոչինչ:

Ինչքան որ դու յառաջ ես գնում, այնքան ես աւելի վերջանում կենդանութիւնը. բնութեան կենդանական շունչը որին դու չէիր ուշադիր, զաղարուձէ իսկոյն. սդի շնչողութիւնը երևումը միայն մի քանի ցան ե ջիւր խոտերի հասկերի մէջ. հանդարտութիւնը ահարկու է, սրանեղիչ է.

Չը կայ ոչ մի բլուր, ոչ մի խլրդի թումը քո ե հորիզոնի մէջ. դու քո ուղտերի հետ միասին միայն ես բնութեան մէջ:

Գու յառաջ ես գնում, անկենդան հանդարտութեան մէջ ականջ զննելով մի ձայնի որ կարող էր առաջնորդել քեզ. բայց լուռ են քո բոլոր շրջակայքը: Եպա քո ուղեցոյցը, որի տեսութիւնը վարժած է անապատի անշտիւլի տարածութեանովը ե ուսած է զգաստութիւն երկիւղի մէջ, առանց խօսելու ցուցանում քեզ մի քանի նիզակ որ աւագի վերայ ջցված էին. դու ոչինչ չես տեսնում, ապա քո հեռացուցովը նկատումս հորիզոնի մտա երկու սեւա կէտեր, որ քո ուղեցոյցը ճանաչում որպէս երկու ձիւռոր որ վաղուց տեսած էին քեզ, իւրեանց հեռատես աչքերովը նկատելով: Յորա զգուշապէս մտնումեն քեզ ե տեսանելով քո հրացանը, որից միայն ահ ունին այդ անապատի որդիքը, շին համարձակվում կողոպտել քեզ:

Գու նկատումս այս անապատացիքը. սևադեմ, փոքրահասակ, նուաղամարմին են սոքա, ոչինչ այլ բան, եմէ ոչ ջիւ ու կաշի, իւրեանց ցամաք անապատի սրինակը: Գու հարցնումս. «Ա՛ր է Ամիրի (խխանի) բնակարանը. ես նորա բարեկամն եմ ե ունիմ նորանից պաշտպանական թուղթ»: Նորա բարեկամարար առաջնորդումն քեզ մինչև Ամիրի բնակը, ուր կը կամենայիր դու, նորա ցուցանումն քեզ նորա վրանները. դու ե քո հեռացուցով չես տեսնում այն բանը, ինչ որ նորա տեսնումն իւրեանց արծուի աչքերով:

Գու հանգստանումս երեկոյին, ե առաւօտուն տեսնումս հեռուից մի սևանշան բան որ գնալով գնալով աւելի մեծանում. դու մտնումս դորան երեկոյեան պահուն. կը հասանէիր բանակին, որ այն տեղ գիշեր անցուցանես, բայց քո երկու առաջնորդը զգուշացնումն քեզ. մեծ ե չար շուներ հեռուից պտոյտբումն ապահով բանակի շորս կողմը ե պատառումն ամենայն մարդ որ գիշերով կը մտննար նորան:

Ընտանուուն վաղ հասանումս դու սևազոյն վրանների բոլորակին. նոցա մէջ տեղումը կանգնած է Ամիրի աւելի մեծ կանաչազոյն վրանը, որ շրջապատած լինելով իւր զերդաստանի վրաններով, մի արձակ տարածութեամբ բաժանված է իւր ջեղակիցների վրաններից: Քո առաջնորդը տանում քեզ ե ցուցանում վրանը Ամիրի, որ երեկից թողել է իւր բնակարանը, անապատի մէջ թափառելու հա-

մար: Ապա տեսանումես զու Ամբրի երեք տղայքը և մի աղջիկը զեռ
ևս քնած մերկանդամ. մի երեք տարեկան մանուկ հանգստացած է
մատակ ձիու վերայ. հաւերի և ձիաների մէջ տեղումը քնած են մի-
տերը: Մատակ ձին բարձրացնումէ գլուխը, զգուշացէս թափ է տա-
լիս վզիցը այն քնած երեխան և կանգնումէ, որ ողջունէ իւր տերը.
նա զգուշութեամբ անց է կենում քնած մանուկների վերայից:

Ընտոյ այն Արարացին որ այժմ քո տանուտերն է, ձեռքը տա-
լիս է քեզ և ասում. «Խաղաղութիւն քեզ.՝ մի և նոյն ողջոյնը
որ հայր Արարածը հազարաւոր տարիներով յառաջ գործ էր ա-
ծում. և զու պատասխանումես նորան. «Եւ քեզ խաղաղութիւն.»
այպա տասերիու և աւելի անգամ բարձրացնումէ նա քո ձեռքը, համ-
բուրումէ իւր ձեռքը և հարցնումէ տասերիու անգամ. Ինչպէս կաս,
ի՞մ եղբայր, և զու տասերիու անգամ մի և նոյն բանը հարցնու-
մես նորանից:

Ապա նա համբուրումէ քո մորուքը, որովհետև արեւ լեան տղա-
մարդը մորուք է կրում. ծառան միայն շունի այդ համարակալութիւնը,
և նա որի վերայ նախատինք և կեղտ անուն կայ. նա համբուրումէ
քեզ ասելով. Աստուծոյ օրհնութիւնը քո հետ մտանումէ իմ վրանս,
մեր բանակը, այպա բարի լինի դալուսադ: Գու պատասխանումես նո-
րան նոյն կերպով. նա համբուրումէ քո մորուքը մի նոր ողջունա-
տուութեամբ, և զու կրկնումես նորա ողջոյնը:

Ապա տանուտերը բանումէ քո ձեռքը և տանումէ քեզ մանդիլը
կամ հիւրընկալական վրանը Ամբրի, որին ահա տեղեկութիւն է
տուել քո ուղեցոյցը:

Գու հանդիպումես Ամբրի ծառաներին, որ օխումեն յատակի
վերայ օժոցների, մահճիճք և բարձեր: Ամբրը մտանումէ վրանի մէջ
ողջոյն տալու քեզ. լինումեն նոյն երկար ու ձիգ քաղաքավարական
զրոյցները, գրկախառնութիւնները և համարյոնները մորուքի վերայ.
բերումեն քեզ զահվէ և ծխարան, քո ուղտերի բեռները ցած են
գնում, խնամք են տանում քո ձիաների համար, ջուր և կերակուր
են տալիս նոցա: Քեզանից հարցնումեն քաղաքավարութեամբ, ինչ
էր քո կամքը կամ թէ ո՞ւր կամէիր ճանապարհորդել:

Գու յայտնումես քո գործի որպիսութիւնը, բերումեն քեզ
ճաշու հաց. բանակի երեւելի մարդիկը սեղանակից են լինում քեզ,
զու տանումես նախապատիւ տեղը. ամենախոյնելուչ կերպով մատու-
ցանումեն քեզ ինչ որ ունին ինքեանք. բրնձի կերակուր, կաթ,
պանիր, մրգեղէն և մեղր: Եթէ քո հիւրընկալը Ամբր մարդ է, այպա
բերումեն քեզ միս խորշած կամ խորոված: Հացի վերայ պարզու-
մեն աջ ձեռքը, ձախը չէ մտանում կերէք կերակրին: Չեռքերը

սրբումն քիժի թաշկենակով որ սխառմէին գողի վերայ: Հաց ուտելու միջոցումը չէ լինում խոսակցութիւն ոչինչ գործի մասին: Ամեն մինը մատերով սանրում էր մտքերը, որի մէջ բնականին հրեշտակներ, Բերումն զաշփէ և ծխարան, ապա սխառում խոսակցութիւնը. բաղմակները ուրախ են, սխառումն միմեանց Հուշեր և Գիշեր ասած վիպասներովն ից:

Աթէ կը մտայիր գիշեր անցուցանելու բանակումը, և վաղիւր միասնգամ դնալու էիր տեսանելու Ամիրը, կամ թէ մի այլ գործի պատճառով կամենում էր մնալ, ապա կը տային քեզ նախաձաշիկ: Շէյխը տեղեկանում էր առողջութեանը և հարցնում թէ ինչպէս հանգստացար գիշերը:

Արը ճանապարհ ևս ընկնում, Շէյխը ներողութիւն է խնդրում որ չը կարողացաւ աւելի լաւ ընդունել քեզ. նա գանգատում է, որ դու կարճ ժամանակ մնացել էիր նորա մտ. հրաժարական ողջոյնը նշնպէս ճոխարան է. գրկախտանումն միմեանց, հարիւր անգամ օրհնութիւն են տայիս միմեանց, ապա համբուրում մինը միսի մտքերը. սորանից յետոյ ճանապարհորդը հեծնում էր ձին. ուղտերի վերայ, նորա համար բարձած են ճանապարհի պաշար, կերակուր ձիաների համար և առաջնորդումն նորան, և թէ վտանգաւոր են ճանապարհները, մինչև մերձակայ բանակը:

Մի և նոյն կերպով կը վարվին քա հետ ութ օր, և թէ աւելի երկար մտայիր այս տեղ, ըստ որում ձիաներից մինը հիւանդ էր կամ թէ այլ պատճառով, Հրաժարվելուց ժամանակը, և թէ կամա, կը տաս ծածկապէս մի փոքր բան Շէյխի կամ Ամիրի ծառաներին, և այն բարի մարդերի օրհնարանութիւնքը զեռ ևս երկար լսումնին քա քամակից:

17. ԱՆՆՈՒՄԻ ԸՆՆՈՒՄ:

Մի տեսակ գաղան, որ թէպէտ ամենայն աշխարհներում պահպանուի որպէս ընտանի անասուն, բայց Ռուսաստանի մէջ մի շատ անսովոր կերպով գործ է անվում մարդու սպտի և յարմարութեան համար, էին շունքը որոնցից մեծ մեծ բազմութիւնք գտանվումն գրեթէ ամենայն վրանարանակ ազգերի մէջ որ և մանասանց կամ շատ կայացոյց, Օստակների, արևելեան Մամուլեղների, Տունդուղների և քանի մի Բանջուրեան ցեղերի մէջ գործ են անվում որպէս բնական անասուն. նոյն գործը կատարումն զորա և Ռուսաստանի Իրկուսական Աուսակալութեանումը, ուր մի քանի տեղերում, սուրհանդակի ձիաների փոխանակ, լծվումն սայլի մէջ: Բայց ոչինչ տեղ այս գաղանների պահպանութիւնը չէ այնքան խորհրդաւոր և պիտա-

նի, ինչպէս Կամչատկայի մէջ, ուր զօրաց միայն էին ընտանի անասունը, ուր և զօրաց այնքան օգտակար են, ինչքան այլ աշխարհներում եղջիրուօր անասունքը կամ ձիաները: Կամչատկեան շուները իւրեանց մեծութենով և կերպարանքով սակաւ միայն զանազանփո-մեն Ռուսաց շինականների գամիտներից: Բայց նոցա բարբոսփորքը գրեթէ միանգամայն փոխվել են իւրեանց ջոկ տեսակ դաստիարակութենով, ապրուստով և գործածութենով: Այդ շուները համար-վում են ամենալաւ և ամենադիմացկոտ փառազքը բոլոր Սիբերիայի շների մէջ, և այնպէս կրակոտ են, մինչև որ բռն քարշելու միջոցին շատ անգամ տեղից խախտում են իւրեանց անդամները, և նոցա մազերը կարծրաներկվում են այն ուժգին աշխատութենից որով արիւնք մզմում է զէպ ի արտաքին մասները: Այնչափ շատ է նոցա ոչմը, մինչև չորս շուն, որ սովորաբար լծում են մի սահնակի մէջ, շատ հեշտ քարշելով տանում են երեք չափահաս մարդիկ, մի պուդ ու կէս ծանրութենով միասին: Ափօրական բռնաբարձութիւնը չորս շունի համար բաղկացնում է հինգ մինչև վեց պուդ, և այսպէս կա-րող է մի մարդ մտն Ծանապարհների ժամանակին ու թնու՛ն մինչև հարիւր քառասուն վերստ անց կենալ մի օրի մէջ: Այն խոր ձիւնը, որի վերայով այդ շուները առանց ներս խրվելու փառում են և անցանում են, այն զէպ ի վեր սարերը և նեղ նեղ ձորերը, այն խիտ խիտ անանցանելի անտառները, այն բաղձաթիւ գետերը և աղբիւր-ները որ կամ երբեք չէին ստացում, կամ թէ ստացում էին, բայց ոչ բուսական պինդ, այն մրրիկները, որ ցանուցիր էին ստնում ձիւնը և աւերում էին Ծանապարհները—այս բոլոր հանգամանքները առած միասին, պիտոյ է գոնեայ ձմեռան միջոցին խափան լինելին ձիաօր Ծանապարհորդութեանը, եթէ ձիանքը շատ առատ ևս լինելին այս կողմերումը: Այս պատճառով շատ հաւանական է մտածել, թէ շունքը, թէև Կամչատկայի աշխարհը ստանաք ամենամեծ բարեշինութիւն, այնու ամենայնիւ պիտոյ է մեային ամենապատուական և ամենապիտա-նի բռնաքարշ անասունը: Այլև այս կողմերումը այնքան մեծ էր շուն պահելու ատորմակը, ինչպէս ուրիշ տեղերում ձի պահելու օտերը. և սակաւ չէր պատահում, որ մեծ մեծ քանակութիւնք ար-ծաթի գործածվէին, նորանց ձեռք բերելու և գեղեցկապէս զարդա-րելու համար: Այս անասունքը թէ ինչպէս կրթվում են իւրեանց օտարանշան գործակատարութեան համար, այդ բանը պահանջում էր մեծապէս ուշադիր լինել բոլոր տեսակի առանձին յատկութենե-րին. որպէս տիրապէս բռնաբարձ շունք բնաբում մանաւանդ այն-պիսիներ որ ունենին բարձր ոտեր, երկար պանջներ, սուր կնջիթ, լայն գլուխ և հաստ գլուխ, այլև ցուցանում էին առաւել զուարթու-

Թիւն և արխութիւն: Երբ որ այգորինակ շների լակտները ստանու-
մն տեսութիւն, նորանց ձգումն մի մութ փոսի մէջ, ինչ տեղ մնու-
մին նորա այնքան ժամանակ փակված, մինչև կարելի էր փորձ կա-
տարել նոցա հետ: Անոց լծումն նորանց միւս վարժած շների հետ
միասին սահնակի մէջ, որի առաջև անփորձ շուները վազումն ամե-
նայն զորութենով, ըստ որում վախեցած էին լուսից և այլ շատ,
անծանօթ առարկաներից: Այս կարճ փորձակատարութենից յետոյ,
միասնգամ փակումն նորանց իւրեանց խաւար բանտի մէջ, և այս
վարժութիւնը կրկնվում ւայնքան անգամ, մինչև նորա սովորած էին
քարշել և հնազանդել իւրեանց առաջնորդին: Այնուհետև սկսա-
նում ւայս շների տառապագին վիճակը որ թեթեւանումը այն կար-
ձաստև հանգստութենով միայն, որ հասուցանումը նոցա ամառնային
ժամանակը: Որովհետև նորա անօգուտ էին այս ժամանակի համար,
այս պատճառով ոչ ով խնամատար չէ նոցա, այլ նորա վայելումն
բոլորովին ազատութիւն, որ և զորձ են դնում, իւրեանց սոված փորը
կշտապնդելու համար: Նոցա միայնակ կերակուրը են ձկնէր որոնց այս
բոլոր միջոցին դարան էին գործում շուները, կանգնած գետերի ա-
փերին, որ և շատ յաջողակութեամբ և խորամանկութեամբ որսու-
մին նորանց: Երբ որ սորա առատ ձուկն էին ձեռք բերած, արջե-
րի պէս ուտումին նոցա գլուխները միայն և բաց էին թողում թա-
ցածը: Այս հանգիստը տեսում մինչև Հոկտեմբեր ամիսը, և այնու-
հետև ամենայն տանուտէր հաւարումէ իւր շուները և կապումէ իւր
բնակարանի մտա, ուր նորա նախ և յառաջ պիտոյ է լու քաղցե-
նային, որ կորուսանեն իւրեանց աւելորդ պարարտութիւնը և տե-
լի յաջողակ լինին վազելու համար: Երբ որ երևում ասալին ձիւնը,
այնուհետև սկսանում է նոցա ամենայն ժամանակը, այնուհետև օր
ու գիշեր լսելի էր նոցա զարհուրելի կազկանձիւնը, որով ասես թէ
զանցատու մին դորա իւրեանց ողբալի դրութեան վերայ: Այս ծանր
դրութեան մէջ, որին այդ անասունքը պիտոյ է համբերելին բոլոր
ձմեռը, նոցա կերակուրը չէր մի այլ բան, եթէ ոչ քացախացրած
կամ թէ նեխած ու չորացրած ձուկն, բայց և այս քացախացրած
ձուկը, որպէս տեղի պատուական կերակուր, տալիս էին նոցա,
զուարթացնելու և ամրացնելու համար միայն, որովհետև նկատած
էին, որ շուները փափկասէր դառնալով թուլանումին շուտով, ե-
թէ այս համը կերակուրը ստանումն ճանապարհորդութենից յա-
ռաջ: Նոցա սովորական ուտելիքը են բորբոսեալ և բաց օգումը
չորացրած ձուկն, արգարև մի այնպիսի կերակուր որով չէին կա-
րող նորա այլապէս յագնեալ, եթէ ոչ արիւնշաղախ ամենով
իւրեանց ցուկը, ըստ որում այդ ձուկների մեծ բաժինը էին փշեր

ու ոսկրներ: Բայց այս անգթութեանը վրէժինդիր են լինում շու-
ները իւրեանց զարմանալի շատակերութեամբ, որ չէ իմայում ոչ-
ինչ բանի, որ հանդիպումը նոցա: Գողանման խորամանկութենով
սանդուղներէից վեր են ելանում և ներս մտանելով իւրեանց բըռ-
նակալ տերանց բարձրաչէն շտեմարաններէ մէջ, անընական կատարի
սոխածութենով կրծոտումն խրացներ և կաշիղէն նիւթեր, ուր և գտա-
նումնին այդպիսի բաներ. այնքան այլանդակիւմ է նոցա բնութիւնը,
որ փոքր կը պատահէր, որ մի կամ շատակացի կարողանար իւր մարմնի
կեղտոտ կարիքը կատարել աւանց մի գաւազանով զինուորովելու:
Ըստ որում ամենայն ժամանակ մի սոված բազմութիւն շների պատ-
րաստ էր կուր բանալ այն զգուելի կերակուրի վերայ, մինը միւսին
պատասելով և արիւն թափելով:

Բայց ոչ թէ շատակերութեան մասին միայն, այլև բոլոր ա-
նանական բնաորութեան կողմից, երևում այս այլանդակութիւնը:
Փոխանակ արթնութեան, հաստարմութեան և ջերմնանդութեան
որ շունը ամենայն տեղ ցուցանում է իւր կերակրողին և պահպանու-
ղին, կամ շատակացի շուները վեր են առել նենգաւոր ծառաների բարբ-
Նրկիւղոտ և շարակամ, հեռանումն նորա իւրեանց տիրոջից, ան-
հոգ և անիղջի լինելով նոցա սեփականութեան մասին, որ և չէին
համարանկելում պահպանել անձանսթ մարդու երեսից: Ատելոտ և
տրտում, ջոկ ջոկ քարշ էին գալիս այս տեղ և այն տեղ, և կաս-
կածոտութեամբ նայումնին միշտ դեպ ի քամակ: Խորամանկութենով
և խարէութենով պէտք էր նորանց լծել սահնակի մէջ, մինչև այս
բանը լինում, նորա միանգամայն վեր են պարզում գլուխները և
բարձրացնումն մի ցուելի աղաղակ. բայց երբ որ սկսվեցաւ ճանա-
պարհորդութիւնը, հանդարտումն իսկոյն, և ապա ասես թէ հազար
գաւաճան հնարներով կամենումնին, մինը միւսից աւելի քաջ վազելով,
ձանձրացնել իւրեանց առաջնորդի համբերութիւնը, կամ թէ նորա
կեանքը վտանգի մէջ ձգել: Երբ որ նորա հասած էին մի վտանգա-
ւոր տեղի, սկսումն վազել կրկնապատիկ արագ, և ճանապարհորդը
չը կամենալով մի դեպ ի վայր սարից ներքև կործանվիլ կամ թէ
մի գետի մէջ խորասոյղ լինել, հարկադրված է սովորաբար բաց
թողուլ սահնակը շուների կամքին, որ և նորան զժուար թէ այլա-
պէս, քան թէ ջարդուփշուր արած, հասուցանումն մտակալ իջե-
ւանին, եթէ չեն կարողացած ամենին ազատել իւրեանց անձը:

Ըրդարև շատ այլանդակիւմ են կամ շատակացի շուները, բայց
այդու ամենայնիւ պակաս չեն նոցա այնպիսի յատկութիւններ, որոն-
ցով կարող էին կամուսորապէս ոգտակար լինել մարդուն: Քոնդ այն
շահաւետութիւնը, որ այս թէթեւաշարժ անասուններով կարելի է

Ճանապարհ կորել անանցանելի սարերի միջով և շատ խոր ձիւնների վերայով, նոքա են նոյնպէս ընտիր ուղեցոյցք որ ամենամտթ խտարի մէջ և ամենասաստիկ բուքի ժամանակում կարող են գտանել ճանապարհորդութեան նպատակը: Բուքը այնպէս սաստկացած լինելով, որ հարկ էր զազարել, ինչպէս պատահում յաճախ, շուները հանգստանումն իւրեանց տիրոջ մտ և նորա կեանքը պահպանումն իւրեանց բնական վերմութենով: Այլև, նոքա շատ ստոյգ նշան են տալիս գալոց մրրիկների մասին, փոսեր փորելով ձիւնի մէջ և աշխատելով պահպանել իւրեանց անձը այն տեղ, Այսպիսի և այլ տեսակ լաւ յատկութեններով կամ շատկայի շուները աւելի մեծ կշռով փոխաբնումն այն ֆեստը որ պատճառումին նոքա անկարգութիւնքը: Եւ ինչ այլ բան, քան թէ մարդու խտտախրա բռնակալութիւնը, էր գոցա պլանդակութեան պատճառը: Ինչքան ևս մեծ լինէր այդ շուների խորդախութիւնը, այնու ամենայնիւ չէ կարող դեռ ևս համեմատվիլ այն քարասիրտ շահախնդրութեան և ապերախտութեան հետ, որոնց պիտոյ է համբերելին մարդու ձեռքից այս անարգված և ամենախիտ ծառայութեան լծով շարաբոված անասունքը: Երբ որ կամ շատկայի շունը իւր շտապանց տանջանքների մէջ հալումտը լինելով, պտտած էր կանուխ, նորա անգութ տէրը պահանջումը նորանից վերջին բանը, որ այդ շունը կարող էր դեռ ևս հասուցանել նորան, այսինքն իւր կաշին. և նոյն անողորմապէս շարաբոված ծառան, որ մի կարճ և բազմաշխատ կեանքի մէջ այնքան յաճախ օգուտ է բերել իւր կենդանական վերմութենովը իւր բռնակալին, պիտոյ է սպասաւոր լինի նորան և իւր մահուց յետոյ:

18. Բէշ փոխ օրէնքը Շ-ֆիւստը Իւստի Դո:

Վաւ կը կարծէիր, թէ մի ջրեղէն աշխարհ բնութեան օրէնքների տակից գուրս վազելով թաւալում անդունդքի մէջ: Փըրփրած ահագին ալիքները կամար կապած կատաղաբար յարձակելով, վառվումն որպէս անձրևի կարմրափայլ աղեղը, որպէս մի բարկութեան ոգի: Բշինչ յիշողութեան զորութիւն, ոչինչ և րեակայութեան թռիչք կարող չէր այնպէս պատմել այս տեսարանը, ինչպէս ինքը ակնատեսը պիտոյ է զգար: Բնութիւնը հանդիսանում այս տեղ իւր բոլոր մեծափառութենով, նորա զորութենների ամենակարողութիւնը որոտալով վայր է իջուցանում եռացող հոսանքները և ահագին ջրակայաններին տալիս է կայծակի արագութիւն: Սա է բնութեան առաւել զորուոր, առաւել կատաղի և փոթորկալից կենդանութիւնը, որին կարող էին տանել մարդկեղէն զգայարանքը. մարդս

այս տեսարանի առաջն կանգնած, ոչնչանում միանգամայն, և կարող է միայն խորատույզ լինելով զգացողութեան մէջ, նկատել այդ խորութեան հանդէսը: Եւ ամենախոշոր հոգին չէ կարող յազննալ տեսանելով այդ ջրեղէն սարերի կարկաշատահանքը: Ամենահին իմաստասէրը պիտոյ է ասէր. սա մինն է այն մտաքարողական զարութեան ամենամեծ ներգործութեանն ից որ ընկնումն մարդկային զգայարաններէ տակ: Եթէ հարիւրերորդ անգամը ևս տեսանելի սորան, նոր ի նորոյ հիացք է բռնում քեզ, որպէս թէ առաջին անգամն էիր տեսանում: Մի հակայածն մըրիկ է սա, և մարդու համբերութիւնը վերջանում, որ նա լինելով այնքան փոքրիկ, ծանր, դանդաղ և րեկանուտ իր, չէր կարող զորա հետ յառաջ դնալ միասին: Մարգարիտների պէս ցանած փոշին, որ ամենայն տեղ, ասես թէ, մի մեծ և սաստիկ կրակից շողիտպէս տարածվումը, և որպէս թէ մի հողմի մըրկից աստանդական հալածվումը, և բոլոր մեծամեծ նիւթերին տալիս էր մի այնպիսի ստուեր, որ նորա կերպարանվումին որպէս փոթորկի ամպեր, ձևաորում մի այնպիսի ահաւոր բոլորամասն բան, յարձակվելով, վազելով, շապակելով, մտա զարկվելով և յետ թնդալով և պողպարելով և եփելով և փրփրալով խորքի մէջ, և խոխոջելով և փառահեղաբար, երկրաշարժութեան պէս, ճարճատվելով և բրբեմն, որ բոլոր Տիցիանները, Ռուբենները և Վերմեյստերը բնութեան առաջն պիտոյ է դառնային փոքրիկ երեսաներ կամ ծիծաղելի կապիկներ: Աստուած, Աստուած, այս ինչ նուազածութիւն է, ինչ որտաղին ձայն է, այս ինչ մըրիկ է, որ թնդում իմ բոլոր գոյութեան մէջ. սուրբ, սուրբ, սուրբ, զղրղում իմ ուղեղիս և ոսկրներս մէջ: Եկեցէք այս տեղ և թողէք որ բնութիւնը պատկերացնէ ձեր աչքի առաջն մի այլ նուազածութեան հանդէս, այլ ճարտարպետական կազմածով և այլ հրաշալի կենդանագրութենով և այլ ներդաշնակութենով ու եղանակով, քան թէ այն, մարդկեղէն տկար արուեստով, շինածն էր, որ զմայլեցնում ձեզ: Քոյում է ինձ, որպէս թէ գտանվումն ևս արարչագործութեան ամենածածուկ արուեստանոցի մէջ, որ ջրեղէն տարրը իւր ահաջուցիչ ամենակարողութեամբ հարկադրված էր ցոյց տալ իւր զորութիւնը այնպէս, ինչպէս է իսկութեամբ, մըրկաշփոթ և ահաւորապէս մեծ նիւթերով, բայց այն կենդանութիւնը որ յատուկ է այս տարրին, այնու ամենայնիւ թոյլ չէ տալիս որ ամենեին սանձի և կապի տակ դնես նորան. նա փրփրում, կատաղում, մտնում զղրղում քարածայտերը և սարերը, և երկինքը զորա հանդէպ ծածկում է իւր պայծառ երեսը և բոցախառ ամառնային արեգակը իւր մեղմ ճառագայթները շողշողեցնում զորա մէջ:

Սա է մեծ հեղեղատը Ռէյնի, սա երևում է թո աչքին ամենայն աղբիւրների բովանդակութիւն. այդպէս լայնարձակ էր նա. այնու ամենայնիւ նորա ջրակղզտքը այնքան սաստիկ են, որ գղրղումն սիրտը, փոխանակ դմայլեցնելու տեսութիւնը, որ նոցա շարժողութիւնը այնպէս սասանեցուցիչ է, մինչև տկարանում աչքը հետևել նորան, և այդ տեսարանը մտումը միշտ նոր, միշտ ահաւոր և հիացուցիչ:

Ի սողութիւնը և իմացութիւնը վերանում է մարդուց. աչքը չէ տեսանում այլ ևս, յաղթահարվելով լոկ տպաւորութենիցը միայն. այնպէս ուժգին է այս տեսարանի ներդրածութիւնը, որ գոյացնում է սրտի մը երբէք չզգացած շարժողութիւնը: Ահրևումը և ներքեւումը կրումն ու կռումն փոշիացած ամպեր և մեջ տեղումը կայծակի պէս արագ թաւալում է թանձր ջրհեղեղը, ինչպէս կանաչագոյն մտալ հալվելով և փրփրալով արծաթապէս. ցածումը, ամենասաստիկ զորութենով յարձակվում է շուրջ կռացող փրփուրի միջից դէպ ի տեղունդքը, այնպէս որ փրփուրը ասես թէ մի խիտ հրայրեացքով փոխվում է շոգի և ծուխ, և լայնարձակ աւազանի վերայ պտոյտքելով շրջաբերվում: Չախ կողմումը, ուր աւելի ուժգին ներս է թաւալվում նորա հոսանքը, ջրացայտքը թնդանութի փոշիացած գունտերի պէս յարձակվումն աւազանի մէջ, զարկվելով ազատած պատերին և զղրղելով որպէս մի երկրաշարժութիւն: Բոլոր շրջակայքումը ամենայն տեղ մտտից ու հեռուից լսելի են միայն աղաղակ և կատաղութիւն, և սիրտը և երանները զարկումն փողարանելով այս ջրեղէն տեսարանի սկզբնապատճառը, ինչպէս զարկումը Ալէքսանդր Մակեդոնացու սիրտը մի յաջող պատերազմից յետոյ:

19. Նշն Գիւրգուշ Բն-Բիւն, -յլ -ճ-լ:

Երբ որ հասայ ևս Ղաուֆըն անունով ամրոցի մտ և տարան ինձ դէպ ի այն գմբէթը, ինչ տեղից այս հանդէսը բնութեան կարելի է տեսանել բոլորովին, զարմացայ ևս ոչ թէ տեսարանի մեծութեան, այլ այն բանի վերայ, որ նա շատ աւելի աննշան էր քան թէ մտածել էի ևս: Այն տեսայ ևս սպիտակ փրփրած ջրերի հոսանք որ բոլոր գետի լայնութենով ցած էին վաղում, և լսեցի մի սաստիկ թնդիւն, բայց ոչ տեսանելիքս և ոչ լսելիքս չը շարժվեցան այնպէս, որ չը զգայի իմ մէջ մի ծածուկ արտունջ այն մարդերից որ կարողացել էին այդքան մեծ համբաւ տարածել այդ ջրվեժի վերայ, որ այժմ տեսանում էի աչքիս առաջև: Բայց, երբ որ ցած իջայ Ռէյնի դէպ ի վայր եզրից, փոքրիկ փայտաշէն սանդուղներիցը ներքև քայլելով և հասայ կամրջին կամ փայտաշէն ձեմելիքին որ յորինված է ափի մտ, կամ որ, կարելի է ասել, ներս է ցցուած

նոյն խնկ ջրվէժի մէջ, այն տեղ ահա լսեցի ու տեսայ ես բաներ որ իմ տկաննս երբէք չէր լսած, իմ աչքս երբէք չէր տեսած, որ և ոչինչ մարդկեղէն լեզու չէ կարող արտասանել, որին ոչինչ ճարտարութիւն չէ կարող հասանել. մի տեսարան որ յառաջացնումէ այնպիսի զգացողութիւնք որոնց մասին անկարելի է թէև մի թեթեւ կամ ստուերագրական տեղեկութիւն տալ ընթերցողներին կամ լսողներին: Գեղեցիկ եւ ամենայն բոյէ, մանաւանդ երբ որ հողմը զարկումէր շոգիները դեպ ի մեր կողմը, ծածկվումէի նուրբ փոշխացած անձրևով որ ամպերի պէս շրջապատումէր ինձ, թեպէտ յատակը որի վերայ կանգնած էի եւ, զողումէր այնպիսի ահաւոր կերպով, որպէս թէ գոյրգլումէր մի սաստիկ գեանաշարժութենից, թեպէտ եւ միշտ ահի ու երկիրդի մէջ էի, մի՞ գուցէ ըմբոնէ ինձ մի փոթորկային անձրև, այդու ամենայնիւ չը կարողացայ հեռանալ այն տեղից, մինչև այդ տեսարանի վայելչութիւնը չէի նկատած բոլորովին: Առաջին բոպէներումը կանգնած մնացի այն տեղ անբարբառ և երկիւզած հիացութեան մէջ. յետոյ կարող էի իմ սքանչացումը հասկացնել նշանախօսութեամբ, կերպարանախօսութեամբ և աչքերով միայն, որովհետև բառեր և աղաղակ անլսելի կը լինէին նոյն խնկ ջրվէժի որոտացին թնդիւնից, Երբ որ ես մի փոքր շունչ էի առել իմ առաջին խլացուցիչ, համարեա՞ թէ, սարսափելի հիացութենից, և կարող էի որոշել այն բանը որ տեսանումէի և լսումէի, և գորանից յառաջացած տպաւորութիւնքը իմ մէջ, այնուհետև ձեռնարկեցի այն վսեմական ազդու տեսարանը, թէև հարևանցի, ստուերագրել բառերով, ըստ որում զգումէի, որ եթէ խնկն շառնեմ այդ բանը, ապա մի ժամից յետոյ չէի կարող իմ երևակայութենովս միտանգամ պատկերացնել և ոչ հարիւրերորդ մասը այն տպաւորութենների, որ ընդունած էին իմ զգայարանքը: Բայց իմ ձեռնարկութեան մեծութիւնը շուտով յաղթեց ինձ, և ես հասկացայ, թէ ճարտարութիւնը կարող է նմանել իւր յատուկ գործերին, այո՞ և բնութեան գեղեցիկ գործերին, բայց անկարող է նա վսեմական աւարկաներ և տեսարաններ բառերով կամ թէ այլ նշաններով նկարագրել ճշգրտապէս և որքան և իցէ բացայայտել այն իրողութիւնը որով Ռէյն գետը լինումէր բնութեան մէջ եղած ամենագեղեցիկ տեսարաններից մինը: Արդարև այն արագութիւնը որ գերազանց է ամենայն միւս տեսանելի շարժողութենից և մեր մտածութենների արագութենից եւ, այն արագութիւնը որով անզազար յարձակվումն ալիքներ ալիքների վերայ, որպէս թէ զոքա Մանակարողի ձեռքովը ներքև էին գլորվում. զարձեալ, այն անհաստալի զորութիւնը որով այս ալիքները ջարդուբարդ են առում այն քարա-

ժայտերը որ դուրս էին ցցվում նոցա, հազարաւոր տարիներով յառաջ, փորած գոգիցը և ասես թէ կամենումն էին իւրեանց անձը պատասել. յետոյ, այն անվերջ բողբոսիմա կութիւնը ամենին նոր ձայների, շառաշխունների և կերպարանքների, որ նկատվումն ալիքների ներս ու դուրս պտոյտելովը, ուրեմն այն բանը իսկապէս, որ յառաջացնում ատաւել զարմանք ու սքանչելիք, չէ կարելի բացայայտել ոչ բառերով, ոչ պատկերներով, և սոցանով աւելի փոքր քան թէ նոցանով, քեպէտ ոչ մի մարդ կարող չէ բառերով արժանապէս նկարագրել այն բանի մեծափառութիւնը որ տեսած է ինքը, բայց կարելի է նշանակել ինչ որ չէ կարելի արտասանել, և որքան և իցէ մասնացոյց առնել ինչ որ մարդ զգացել է ականատես լինելով այս հանդիսարանին: Այս բոլորը կարող չէ ոչ կենդանագիրը և ոչ նկարիչը, և ոչինչ հնար չէ մտում նորա ձեռքին, եթէ ոչ կիսատ ու պակաս, կամ գոնեայ անհամեմատ շատ փոքրացուցիչ պատկերով ներկայացնել Ռէյնեան ջրվէժի շրջակայ սահմանքը, այն քարածայտերի ձևակերպութիւնքը, որոնցից և որոնց մտից վայր է վազում Ռէյն գետը, ալիքների կերպարանքը և գոյնը և այլն, ուրեմն այն բանը միայն որ կարելի է պատկերացնել առանց ցոյց տալու այն հոյակապ փառաւորութիւնը որով Քէյնի հեղեղատը շինվում մի սկիւապիտ տեսարան: Այ՛ո և շատ ճարտարապետական պատկերները տալիս են այն մարդուն, որ նկատել էր մի այլ բան, քան թէ ճարտարապետ մարդը, ոչ թէ այն յափշտակիչ տեսարանի իսկական պատկերը, այլ մի թռչլ ստուերայրութիւն որ կարող էր միայն օգտարեր լինել, ժամանակ առ ժամանակ պայծառացնելով և նորոգելով այն բաների յիշատակը որ յառաջուց տեսած էին:

Այն ժամու ճանապարհ մինչև յիշեալ ջրվէժը, այսինքն Ռէյն գետի փառաւոր կամրջից յառաջ, Ռէյնի ջրագոգը սկսանում այնպէս դեպ ի վայր թեքվիլ, և գետը ստանում այնպիսի սրննիմացութիւն, որ հարկ էր բոլոր նաւերին թափել իւրեանց բեռները. բայց փոքր ինչ յառաջ, քան թէ բոլորովին դեպ ի ցած էր յարձակված, նորա ջրերը կէս մի ծածկած և կէս մի դուրս ցցված անհամար քարածայտերից ձեղքոտվելով ձևացնումն ահարկու պտոյտքներ և փրփրուն ալիքներ, մինչև վերջումը գետը եօթմանասուն և հինգ ասնաչափ բարձրութեանից, մի դեպ ի վայր դարուփոս ժայռեղէն պատից, ներքև է վազում: Իսկապէս այն տեղումը, ուր վայրասահ հեղեղները գետի հետ միանումն դարձեալ, դուրս են բարձրանում երկու քարածայտք, որոնց երկրորդը աւելի մեծ է, բայց առաջինը որ տեսանելի է Յիւրիխ քաղաքի կողմից, աւելի փոքր և աւելի վաղջախուս է: Սորա ստորոքը ալիքների երեսից վնասված են ըստ մե-

ծի մասին, և ասես թէ ամեն մի ջրասին յարձակվելով կրկին, կարող էր ցած գլորել նորան: Այս քարածայուր պատճառ է, որ կարելի էր բովանդակապէս տեսանել ջրվէժի մի բաժինը, այսինքն այն բաժինը որ նորա և զետափի մէջ էր, որի վերայ կանգնած էիր դու: Այս մասը, ստանց հակառակութեան, աւելի խորհրդաւորն է, և նորան կարելի է դարձնել շորս մասն բաժանել: Առաջին մասնումը ալիքները ցած են թաւալվում այնպիսի ուժգնութենով, որ գրեթէ անհնար էր մահահանցու աչքերով տանել մի աւելի սաստիկ նիւթական ներգործութեան: Կորանից յառաջ բարձրանումն անդադար ալիքներ գետի վերին գոգի վերայ և այնպէս էր երևում, որ պէս թէ տեսանումէիր մի ահագին ջրասինն ծայր, որ արուեստական գործարաններով զէպ ի վեր բարձրանալով ցնդվումէր յետոյ լուծանվելով շոգի և անձրև: Միւս երեք ջրվէժքը աւելի ցած են, բայց ալիքների կատաղութիւնը սաստկանումէ առաւելապէս այն տեղ, ուր նորա շքանումն այն անդունդների մէջ որ ինքեանք փորել են իւրեանց համար: Այս անդունդները անդադար դուրս են ցայտում կաթնանման սպիտակ ջրի ճառագայթներ և թանձր փոշիղէն ամպեր, որոնց կերպարանքը և թաւալումըը այնքան ևս բազմաբինակ էին, ինչքան նոյն իսկ ալիքները, որոնցից զոյանումն նորա: Զբրվէժը ամենագեղեցիկ կողմից նկատելուց յետոյ, դարձնել վեր ելուց ևս վերին ձևն իրքը, բայց հաւանցի իսկոյն անցուցանել տալ ինձ զէպ ի Ռէյնի միւս եղբւր: Մագղցի ներքև իջայ մի գրեթէ անանցանելի, այժմ փոանդաւոր ռոնաճանապարհով, որ առաջնորդումէր զէպ ի այն տեղ, ինչ տեղից կարելի էր անցանել գետի միւս կողմը: Այս ռոնաճանապարհը փոանդաւոր է այն պատճառով, որ իջանողը շունի մի բան որ կարող էր հաստատութիւն տալ նորան, այլև գրեթէ ամենևին պատած էր փոքրիկ, լղրծուն և շարժելի սեպարարբով, որ անզգուշապէս քայլողի ոտքի տակին շքանումէին: Այն փոքրիկ նաւակը որի մէջ մտայ ևս, պար էր գալիս ալիքների վերայ, բստ որում գետը սաստկապէս ներքև հոսելով զարհուրելի շարժութիւնք և, ասես թէ, ցնցիւնք էր կրում: Խոստովանումն պարզապէս, թէ ևս ոչ ամենևին աղատ էի երկիւղից, թէպէտ շատ անգամ փորձած էի աւելի կատաղի ալեկոծութիւնք և աւելի սաստիկ նաւաշարժութիւնք:

Եւ նաւակի առաջնորդը մի երիտասարդ շինական էր, որ թէպէտ փոքր ինչ յառաջ անցուցել էր իմ ծանօթներից մինը, բայց ինձ յայտնի չէր նորա աղոթակութիւնը, և երկիւղ ունէի, մի գուցէ որ մի ձախողակ շարժողութենով վեր ի վայր շրջէ նաւակը: Այս բանը կարող էր պատահել, եթէ իմ ընկերներից մինը անյուսալի

ասից, շախազանց շատ հակվէր գէպ ի մի կողմ: Այն ամենամեծ
փոսնոցը որի մէջ ընկոյ կս իսկապէս, երբէք չէր անցած մտքիցս,
այսինքն թէ գետի մէջ տեղումը կարող էր ինձ վերայ հասանել հող-
մագարիութիւն: Բայց ես ողջ և առողջ հասայ միւս եզրին և միանգա-
մայն տեսութեամբ ըմբռնեցի ջրվէժի բոլոր լայնութիւնը և բոլոր
մասները, բայց այս տեսարանը մանաւանդ թէ նոր և ստարտի էր
քան թէ մեծ և զարմացուցիչ, ըստ որում ես աւելի հետի էի, քան
թէ կարող էի լիովին նկատել ալիքների զորութիւնը և արագու-
թիւնը, Հարեանցի դնացի ես տեսանելու մտալաթիւնի գործատունը
որ շինած է նոյն իսկ ջրվէժի մէջ, և որի անիւները շարժումն
Ռէչնի սանձահարմած ալիքների ազդեցութենով, Թէպէտ անձրև էր
գալիս և ես թաց խոտերի և թուփերի միջով դուրս էի քերում
ինձ, այդու ամենայնիւ ցած իջոյ ջրվէժի ափի մօտ և այսպէս շատ
մերձաւոր էի նորան: Այս տեղ թէպէտ սաստիկ է գետ ևս ջրի ար-
շաւանքը, բայց այնքան նուազ, համեմատելով նորա զարհուրելի
արշաւանքին հանդիպակաց կողմումը, որ ես իմ աշխատութիւնը ան-
վարձ տեսայ: Աւերադարձի միջոցումը, բոլոր ջրվէժի մեծախառու-
թիւնը հանդիսացաւ իմ առաջն աւելի լաւ, քան թէ նայելով այն
գետեղբից, որից հրաժարվել էի ամենին: Բովանդակ տեսարանը մի
քանի բողբ լուսաւորվեցաւ արեղակի ճառագայթներով, և այս լու-
սաւորութեան մէջ բոլոր առարկայքը աւելի մտնեցան մեզ, և մեծ
մեծապանութիւն ստացան որպէս սպիտակափայլ ալիքները և փոշե-
ղէն ամպերը, նոյնպէս կապտագոյն և կանաչագոյն շերտերը որ եր-
բեմն երբեմն տեսանլուսեմին վայրասահ ջրի մէջ, Կրիստալները չը
տեսայ ես և կարօտ չէի դոցա, որովհետեւ դորանց կարելի է տեսա-
նել ամենայն արուեստական ջրվէժի մէջ, թէպէտ դոքա ոչինչ տեղ
այնպէս գեղեցիկ և փառաւոր չեն ինչպէս երկնակամարի վերայ: Եւստ
դառնալով թժումէր ինձ, որպէս թէ աւելի մտնեումէի ջրվէժին,
քան թէ ճանապարհ դուրս գալով Յիւրիիի եզրից. առաջը մի
բան, որի պատճառը այն էր անտարակոյս, որ ես այս բոլոր ահար-
կու տեսարանը այժմ իսկապէս ունէի իմ աչքիս առաջն:

20. ԳՆՆԱՆ ՄԵՐՈՐԵՆԸ:

Ինչպէս ուրախ երգումէ բոլոր բնութիւնը գարնան վերստին
գարձի վերայ. ինչ կենդանութիւն, պայծառացած օդի մէջ որ լըց-
ված էր արտուաների ուրախական տաղասացութենովը. այս տեղ կա-
նաչապատ զարդարուն ծառեր, այն տեղ խոտապատ բլուրներ, որոնց
վերայ զուարճանալով ստատումն հարիւրաւոր դառներ. այս տեղ
ծիճաղումէ ծովակը, ուր արեղակը շողշողեցնումէ իւր ցոլացողական

կերպարանքը, այն տեղ տիրած է զոյն զոյն կանաչափայլ դաշտա-
փայրը, ուր ցան և ջիւր հանդիպումեն մեղ շինականների պիտանի
աշխատսիրութեան տեսարանքը: Այս ինչ ուրախ դուգախառնած ձայ-
նարկութիւնը են մեր շրջակայքումը. ինչպէս վաղուքն այն առու-
նները ծաղիկների միջով. ինչպէս ուրախանալով դիմումն տաւար-
նները դէպ ի դալար արօտները. այն բաղմանուազ ձայնները թռչուն-
ների, որ կապոյտ երկնակամարի տակ թափառումն այս տեղ այն
տեղ, ինչպէս միախառնումն յոպոպի միատեսակ երգի հետ որ հրա-
տարակում գարնան գալուստը, և գորտերի շատախօտութեան հետ,
և այս միջոցումը մի ջերմ հարաւահողմ շողորթութեամբ համբուրու-
մէ մեր թշերը, և մի անուշահոտութիւն դուրս է փչում մանուկ եր-
կրի ծոցից: Ամենայն տեղ գարուն է, ամենայն տեղ հնչում նորա-
հասակ տարու ուրախութեան ձայնը և զարթուցանում արձագանգ:

Ինչ փոխարկութիւն բոլոր բնութեան մէջ. ինչպէս համատա-
րած է այն բարերար էակի գութը, որ անտեսում տարու եղանակ-
ների փոփոխութիւնը խրեանց կարգին պատշաճ, որ մեր, իւր աշ-
խատանքից հանգստացած, երկիրը միւսանգամ զարդարում պողարե-
րութենով և ուրախութենով և բոլոր արարչագործութիւնը կենդա-
նացնում մինչև նորա ծածուկ ու թագուն խորքերը: Մի քանի ա-
միս յառաջ, դեռ ևս երկրի երեսը պատած էր մի սառն անպողու-
թեամբ և մեռեալ հանգարտութենով: Այս ձորերը որ այժմ գմայ-
լիցնումն մեր աչքերը, թաղած էին մի խոր տրտմութեան և սու-
գի մէջ. այս սարերը որ խրեանց կանաչապսակ կատարները բար-
ձրացնումն մինչև երկինք, և որոնց պաղաւէտ կողերի վերայ շրջու-
մէ բրդազդեստ հօտը, պաղած ու սառած էին խոր ձիւնի տակ. այս
տերեալարդ ճիւղերը որ այժմ տալիս են սոխակին հօմնաւոր պա-
տապարան, էին մերկ և ցամաք ոստեր որ ձմեռան սառն բոխի տակ
աշխատումին. այս առուները և վտակները որ այժմ բարձրաձայն
մրմնջելով վաղումն և գնումն, մի երկամի շղթայով կապած ու
կաշկանդած էին խրեանց բնթացումը. շխտապին հողմը օտնա-
լով փչումը քաղաքների և դիւղերի վերայ և իւր ահարկութեան-
րից ցած էր թափում եղեամբ և սառոյց, ցուրտ և ապականութիւն.
արարչագործութիւնը երեսմեր բանտարգել մի մշանջենաւոր մահու
ձեռքում:

Իպոչ Ամենակարողի շունչը փչելով, խելոյն շարժվեցաւ կեն-
դանութիւնը թմրած արարածների բոլոր երակների մէջ, Ամենակա-
րողը ակնարկի արեց արեգակին, որ մտանայ մեր երկրին, և օդը
լցվեցաւ մի պողպատե ջերմութենով: Բոլոր բուսական աշխարհը
զգաց այն քաղցր աղղկութիւնը և նորա կենդանացած հիւթքը յա-

աջ խաղացին որ օգնեն, վերստին ածելու թեանք: Երկիրը իւր մայրական արգանտի մէջ յղացաւ խոտեր, բանջարներ և ծաղիկներ և ծնաւ իւր մանուկները որ լինին նորա փառք ու պարծանքը: Իսաւարատեսիլ անպէրը ցրվեցան, փախան, և երկիրը ծիծաղում զաշտերի զուրս ծլած կանաչի վերայ:

Ըստի զեռ ևս շատ անգամ կորուսանում և երկիրը իւր պայծառութիւնը և ծածկում և փայլուն երեսը ձիւնով և կարկուտով, վերադարձած ցուրտը խափանում արեգակի ճառագայթներէ ներքործութիւնը, և երկիրը կար թէ մի զուցէ տարու զեռ ևս տկար զսրութիւնքը վաղամեռիկ լինելն իւրեանց խանձարուրքի մէջ, բլուրները, որանց վերայ կանաչել էր գառների արտօր, միսանգամ ծածկվեցան սառնափայլ զգեստով: Երականաչ պտղատու ծառերի տառջին զարդը կրկին անգամ պատվեցաւ ձիւնի տարափներով, և զեռ ևս կիսամերկ և կիսածաղիկ դաշտավայրը, արևը այս տեղ և այն տեղ անպերի միջից զուրս ցլափելով, շողշողում մխրադոյն և սպիտակ և կանաչ խառնիխառն գուներով: Եւ քանի անգամ տեսած ենք մեք, որ արտօտը, իւր երգասացութենով քաղցր զարնան զալուստը շորհաւորելուց յետոյ, միսանգամ լուեցուց իւր ձայնը և արտնութեամբ ժողովումը փոքրիկ թեւերը և խարերայ եղանակից յետ էր փախչում զէպ ի ձմեռնային տխուր օվեանքը:

Իայց բնութեան կենդանացուցիչ զորութիւնը միսանգամ շօր ծոցիցը զուրս թափվեցաւ բոլոր արարածների վերայ. արեգակը տեւի զսրանալով հասկեց ու անհնաւացուց ձմեռան սառն մնացուածքը, և այժմ յաղթութեամբ պակփած գարունը թագաւորում սարերի և ձորերի և այգիների մէջ: Ըմենայն տեղ լցուած են նորա վայելչութիւնքը:

Օտրթեցէք ապա, զուր քաղտքներ, և տեսէք զեղեցկացած տարու ուրախութիւնքը և նոցա մասնակից եղէք դաշտավայրի մէջ: Դուք բոլորեքեանքդ, որ համբերել էք արտուժ ձմեռան անյարտարութիւններին, զուր որ անախօթ թացութեանից, ցրտից և հիստիսային սուլիչ հողմերից փակված էիք ձեր օվեանների մէջ, և նորանց տեսանումիք բուքով պատած և ձեր պատուհանները զիշերային ցրտից սառչոյց կտրած, մոռացէք այժմ զմնչակ ամիսների վիշտը, թողեցէք քաղտքների պատերը և զուրս եկեցէք զարնան զաշտերը, ուր ամենայն տեղ ուրախութիւն է ծաղկում և բոլոր երկիրը ծիծաղում մի նոր պայծառութենով: Ըստի, այս օրերիս, որ սահմանած են անարատ հեշտութիւն վայելելու համար, պարտական է ամենայն մարդ, որի սիրտը կարող էր ուրախանալ, փախչել քաղաքային բանտից և որանել բնութեան վայելչութիւնքը դաշտավայր:

րի պարզ օգուժը: Ամենը կենդանութիւն է ստանում ուրախութեանից, ամենը ձայն է տալիս քաղաքացիներին զաւ մասնակից լինել այն ուրախութեններին որ գարունը սփռել է շինականների խորճիմների շրջակայքումը: Մարերը շոր կողմից զեպ ի վեր են պարզում իւրեանց հպարտ գլուխը որ պակկած է մի կանաչ զարդարանքով, և քարոզումն գարունը, տերևազարդ անտառները ամենայն կողմից զմայլեցնումն տեսութիւնը և պատմումն գարնան հրաշքները: Տաւարների և բամբակները արանների մէջ լայն ու արձակ ցան և ջիր եղած, հնչեցնումն իւրեանց բառանջիւնի ձայնը մինչև քաղաքի մտայլ պարխպները և քարոզումն գարնան ուրախութիւնը: Այն լուսմներ բոլոր բնութեան քաղցր և հեշտացուցիչ բորբառքը, և զգացող մարդիկը հետևումն այդ հրաշքանքին: Ահա տեսանումս որ բնութիւն սիրողքը հեռանումն քաղաքից, որ մայրական բնութեան գոգումը ճաշակէն մտքուր ուրախութիւնք: քաղաքի տուները և փողոցները դատարկումն և առ փոքր փոքր անապատանումն: Արեմն, վայելեցէր մանուկ տարու բոլոր քաղցրութիւնը, զո՛ք ազնիւ հոգիք, որ կրկնված էիք նուրբ զգացողութեան համար. բմպեցէք լի ուժակրով այն քաղցր ուրախութեան բաժակը որ գարնան շայրը ամենայն տեղ պատրաստել է ձեր համար. ճաշակեցէք և տեսէք թէ ինչպէս քաղցր է Տէրը:

21. Ա՜ր-ը-յն — — — — — Գ՛ւ-ը-ը-ը-ը-ը: Ի՛նչ:

Լուսինը իւր գունամաքի փայլողութենով հեռանում և հա. արևարացի երկնականարումը սխումն հա մտովիլ առաւտեան արշալուսի ստաջին զոյնները. փոքր առ փոքր, զժոյշն ստուերները հրաժարումն զաշտերից և հեռանումն, որ թաղշին անտառների գիշերի մէջ: Մարերի ծայրումը վեր ի վայր են պտուտվում մառախուղները և տես թէ փիճումին միմանց հեռ, թէ ինչպէս պիտոյ էր նոցա փախչել արեգակի ճառագայթներից, Գեաի արագ ընթացքը և ծովի հանդարտ հոսանքը ծածկած են մի գոլորշիով որ հեռ զհետեւ բարձրանում զեպ ի սահմանակից բլուրները, և այս միջոցին անտառների և ամառանոցների ծայրերը զուրս են ջջվում մութի միջից. այն տեղ միւսանդամ երևում ևրկարածից գոտին մոխրագոյն սարերի որ խանութումին կապտագոյն երկրքի հետ. այս տեղ շրջումն մի հովարար հողմ ահա պայծառացած առունների վերայ և իւր կամքի պէս խաղալով ոլոր ոլոր է բերում փոքրիկ ալիքները, և այն տեղ զաւար տերևների հետ զբոսանք ասնելով վայր է ցնցում ցողը: Մի ծիրանի կարմրութիւն աւելի և աւելի պայծառափայլելով թափանցում ամպերի մէջ և ցերեկի իշխանը մտանալով, նո-

րա յառաջընթաց փայլերը խաղ են առնում՝ քարածայտերի և բլուրների վերայ որ ստանումին ցօղի վերջին շիթերը, և զարթուցանումն բոլոր բնութիւնը ուշադիր լինելու նորա գալստեանը: Բոլոր արևելքը բոցավառում, և բլիթքը փայլում գողգողուն լուսով, սարերի ճակատները պրլումն, կամարակապ անտառի վերայ թափում մի ախորժ կարմրութիւն և աւելի մտ շողշողումն ահա դաշտերը մի սփեփայլ պայծառութեան մէջ: Աւերջապէս բարձրանում արեգակը հորիզոնի վերայ, մի թաւալական ծով կրակի. նորա շուռախոնքերը լուսապատումն ամենայն բան. լայնատարած արարչագործութիւնը զգում նորա քաղցր ներկայութիւնը, լուսի նշոյնները փայլատակումն ցօղալից դաշտերի վերայ, մարգագետինքը փայլափայլումն քաղմորինակ ջրած գուներով. ծաղիկները բացվումն և նայումն իւրեանց թաց տերևների վերայ զարթած արեգակի հայելիովը. արևմտեան հողմը գլորվում թարմացած բուսականների վերայ, սղը հովարար է, արտուտը գեղեցիկում իւր առաւօտեան երգը պայծառացած անպերի մէջ. բնութեան ամեն մի գեղեցիկութիւնը միասնեզամ հանդիսանում և ուրախութեան յօժարութիւնը տիրապետում ամենայն զգայարաններին: Գի քնքուշ գոլորշի, որ զև ևս ծածկումը ձորը մի թեթև վարագուրով, փոքր առ փոքր հեռանում և անյայտանում պայծառ օդի մէջ: Հեռաւոր սարերը իւրեանց ազատութեան միջից պայծառանալով դարձեալ, մասնուամեն մեր աչքին և մեր բոլոր տեսութիւնը զրօնում լուսաւորեալ գաշտափայրի վերայ: Աւաղուց ահա շինականը որձակի ձայնարկութեանից զարթած, թողել է իւր օթեանը և զգաստութեամբ պատրաստում իւր դաշտի անօթները իւր խրճիթի առաջը, որ հովանաւորված էր կաղնի ծառերից և լցված անուշահամութեանով մտակալ մարդերիցը: Անտառի սկզբումը կանգնած է սյծեանը. սա տեսանելով ճանապարհորդի անցանելը նորա մօտից, աչքերը դուրս ձգած նայում նորան վախկոտ նորատիրութեանով և յետ է քարշվում ապահով թուփերի մէջ: Քաղանքը ուրախանումն մանուկ օրի վերայ և որսնումն իւրեանց կերակուրը. ցուր իւր շափած կշուած քայլախոխերով առաջնորդում հօտին դէպ ի արտը, և տաւարների բաւանջիւնը և նոցա վղերից կախած զանգակների ձայնը լցուցանում ճանապարհը. ցլի մօտից ուխարները դուրս են թնչում իւրեանց պարագի միջից և շրջակայ բլուրները պատասխանումն ոչխարների մայելուն և հովուի սրնային: Եւ անտառները համաձայնումն բնութեան ընդհանուր նուազածութեանը, հազարաւոր զուգախառնած ձայներ բարձրանումն ուրախութեամբ դէպ ի երկինք, շինականը սրում իւր մանգաղը, հնձում խոտը և երգում. բոլորը կեանք ու ցնծութիւն է:

22. ԱՐԵՂԱԿԻ ԿՐԻՒՆ ԴՆԵՆՆԵՐ:

Արեղակը կրակախոյլ կարծրութենով ահա իջանում արևմտքումը. նորանից բոլոր ամաբանոցը ստանում մի խաղաղ ոսկեփայլութիւն: Արեղակը իւր վերջին ճառագայթները տարածելով սարերի վերայ, իւր փայլատակող լոյսը պատառված ամպերի միջից ցուացնելով, անտառի կատարքը ոսկեզօծելով և վարդագոյն ծածանմամբ պատկերանելով ջրի երեսին, փոքր առ փոքր շիջանում երկնամարի վերայ և հրաժարվում նորանից լողլով նորան մի քընքուշ կարծրութենով պատած: Եւ այս տեղ ինչ փառահեղ տեսարան, որին անձանթ էին միւս աշխարհները, ներկայացնում քո երեկոյեան լոյսը, դու հրաշալի Շվեցիա: Քո անշափելի երկայնաձիգ Ալպեան սարերը, որ ասես թէ իւրեանց ուսերի վերայ պահումն երկինքը, ինչպէս անմամնելի զարդարվումն բնութեան պատկերներով, երբ որ արեղակը տալիս է նոցա հրաժարական ողջոյն: Երձակ ու լայն շողշողումն յառաջ նոցա կատարները, հազարաւոր տարիների ձիւնը պայծառափայլում և մշանջնաւար սառչոյցը փայլատակում ոսկու պէս. փոքր ինչ յետոյ սորանից, բնութիւնը կոխում իւր գրէշը ամենապայծառ ծերանի ներկի մէջ և մի քանի միջոց կենդանագրում սարերի ամենալերին ծայրերը. նոցա բոլոր աւելի լուսաւորված զառ ի վայրքը սկսումն փայլիւլիլ միանգամայն, մինչև ընդարձակ հորիզոնը, որ շրջապատումը նորանց, լող է տալիս ամենեկն ճառագայթների մէջ: Զմայլիցուցէք ձեր աչքերը այս տեսարանի վերայ, դուք բանաստեղծք և կենդանագիրք, բոլոյց արուստը պիտոյ է ամօթով մնայ յաղթվելով բնութեան առաջն: Մի քանի բուպէի մէջ բնութիւնը ժողովում իւր ծիրանի ծածկոցը և պարզում այն տեղ միւսեր աւելի մեղմափայլ վարդագոյն փառահեղութենով, որ ոչինչ պակաս զմայլիցուցիչ չէին: Եւ սոքա հետ զհետեւ գունաթմալելով փոխվումն մի քնքոյշ կապոյտ գոյն որ ցան և ցիր զեռ ևս հիւսած էր մի լողլ կարծրութեան հետ, մինչև պայծառ գոյները շիջանումն և մի մանուշակափայլ գոյն առ փոքր փոքր թխանալով անցանում մի նետութենից զէպ ի միւսը և աւելի խոր ծածկվում: Աւերջապէս սարերի երկնածեմ կատարները որ յառաջ ոլորվումն պայծառ կրակի պէս, յաղթահարվումն ընդհանուր խաւարիցը, Այժմ ահա զարկում երեկոյեան զանգակը, աշտարակից ցած հնչելով զէպ ի խաղաղ գիւղը, և լայնարձակ գաշտիցը յետ գանչելով շինականը զէպ ի հանգիստ իւր սիրելի գերգաստանի մէջ որ սպասումը նորան, Աստաակեալ ձեռքը յոժարութեամբ ցած է լոռղում մանգաղը կամ թէ դազարեցնում գութանը. նորա հաւատա-

րի՛մ օգնակները, նորա ծառայքը և նորա եղանքը արձակվումն իւրեանց աշխատութենից. երկրագործը շինական անօթները դրած ուսերի վերայ ճանապարհ է ընկնում՝ զեւր ի իւր իրճիթը, ինչ տեղից մի ծուխ բարձրանալով զեւր ի երեկոյեան մութը, տեսանելի և ուրախացուցիչ էր տանուտիրոջը: Տան առաջև ուրախերես հանդիպումն նորան իւր սիրելի երեսայքը, կամ թե մանուկը վերու վեր թռչելով բերումէ հօրը մի բմբու՛նած ծիծեռնակ որ բարեսիրտ հօշորը հրամայումէ արձակել խեղճն, թեպէս արտում էր որդին կորուսանելով իւր քաղցր գիւտը, բայց դարձեալ մխիթարվումէ նա երեկոյեան հացի վերայ, սեղանակից լինելով իւր ծնողին, որին մայրը պատմումէ զանազան անային բաներ: Մտուերները ցած են իջանում ամպերից, ծածկումն զաշտերը և ելանումն սարերի վերայ. զաշտը միայնացած է, մի քանի հոգիներ, որ հաւաքվումն միասին զուարճաաղեր ստելու համար, հեռուից լսելի էին զեռ ևս: Նոցա տաղերգութեան միջոցին լուսինը դուրս է գալիս մութն անտառի քամակից. ծառերի բոլոր տերևները, ինչքան որ նորա լոյսը ներս էր սողում, խաղումն մի քնքուշ փայլողութենով և նորա օպիտակ ճառագայթների բացարձակութիւնը զողողումէ զնացական գետի երեսին: Անտառների մէջ և արտներումը թագաւորումէ լուռ հանդարտութիւն. լծից արձակած եղը հանգստանումէ և գտները քնած են անհօգ. ոչինչ բան չէ շարժվում այլևս, թող զատարկածայն շառաշիւնը յափշտակող թռչունների, որ չը գիտեն ոչինչ հանգիստ, կամ փոքրիկ մրմնջող հոսանքը և վեր ցոյտող շարուանը այգումը կամ թե սօսափիւնը ծառերի կամ թե ձայնը Սալոմի որ կամենալով փայելլացնել երեկոյեան պահը, մի տաղ Վլէյմի կամ շաղեղօտնի գրուածներից առած էրգումը անելով նուագարանը, և երգելիկ սոխակը իւր քաղցր եղանակներով անլսելի էր կացուցանում Սալոմի ձայնը:

Վտանախոր շողջողիւնը լուսնի, որ ստես թե կապոյտ երկնակամարի մէջ լող է տալիս մեր գլխի վերայ, առաւել պոյծառութիւն է ստանում աստեղների երևելովը, որ այս տեղ և այն տեղ սկսանումին փառփիլ, մինչև վերջումը բոլոր երկինքը զարդարվումէ անհամար և լայնատարած բոցափառ ճրագներով: Ինչ տեսարան հանդարտ հիացութիւն է գալիս մտախօհ խնայողների հոգու վերայ և քաղցր իմացութեններով լցվումէ նորա սիրտը, երբ որ նա իւր քնից մի քանի ժամ կտրելով, նկատումը կէս գիշերի վայելչափառութիւնը և նորա բոցափառ սրանչելիքը երկնքի վերայ, ճրագները իւրեանց շողջողիւնը տարածումն զաշտի վերայ, մեզմ լուսով լուսաւորումն սարի մի կողմը, թող տալով որ միւս կողմը աւելի գե-

զեցկարար երևի իւր ստուերապատ մնալովր: Հաս անգամ անյայտանում զիշերի իշխանը ծածկվելով ամպերից որ լմաւովելով անցանումն նորա առաջեից. այժմ տիրում արձակ զաշտափայլը, սպաբլուրները և ձորերը խանիխուն լող են տալիս ընդհանուր ամենատարած խաարի մէջ, բայց շուտով աւելի պայծառապէս երևում է նա, երբ որ վարպելները յետ քարշվեցան, և բոլորը նորի նորոյ ծիծաղում լուսնի հեղ փայլողութեան տակ: Այն տեղ, հեռաւոր անտառների մէջ, նուազ լուսով վառվում մի լապտեր որ դուցէ թէ պահպանումը անքուն արթնութիւնը մի իմաստաւորի նկատելով բնութիւնը և մտածելով շինական կեանքի բաղդատարութեան վերայ: Յօրը մեզմով թափում օդի միջից և գիշերային մանուշակը փչում աւելի զմայլեցուցիչ խնդահոտութիւն. վաստակած սոխակի անօդուտ հեծեծանքը զեռ ևս լսելի են մտակոյ անտառումը և զարթնացնումն մի քաղցր ու տիրող զգացողութիւն: Ինչպէս շուտով հանդարտում ակտերի փոթորիկը սրտի մէջ, երբ որ լուս է բնութիւնը և օդի շունչը ևս զաղարկ է. Ինչպէս խաղաղ փակվում սիրտը իւր մէջ և սխանում ծածուկ խոսակից լինել իւր հետ, մինչև քունը իջնում և աչքերի վերայ, և քաղցր երազներ հիացնումն նորա միշտ արթուն երևակայութիւնը:

23. Սոսոցիւն - գործնիչ:

1740 թուականի ձմեռումը, Աննա, Ռուսաստանի թագուհին, հրամայեց շինել և գլուխ բերեց մի ճարտարապետական գործ, որ թէպէտ և կարճատև էր, բայց իւր նմանը չէ ունեցած երբէք: Այս սինըն այն հաշակատր ստացակերտ ապարանքը որ Ալեքսիս Դանիլովիչի առաջարկութեամբ գլուխ եկաւ:

Աս կառուցած էր շատ յստակ և շատ թափանցուն սառուցից որ մեծ մեծ կոտորներով սառած Նեվայի գետից զուրս կարած, բեռնարարձ ձողերով և ճախարակներով քարշեցին զէպ ի շինութեան տեղը: Զուկ ջուկ կոտորները ամենաճշգրտապէս պատրաստելով, յարգարեցին բազմաբնակ ճարտարապետական զարդարանքներով. երկու պատրաստած ստացակոտոր միմեանց վերայ զնելուց յառաջ, ցածի կոտորի վերայ մի փոքր ջուր էին ածում, սպա շուտով վայր էին թողում վերինը. ջուրը սառնելով, երկուքը կապակցվումին այնպէս, որ բողբոջումն մի ստրողջ նիւթ. այս պատճառով երևումը որպէս թէ բոլոր տունը շինած է միապաղաղ, և պայծառ սառուցի կապտապոյն շողջողիւնը տալիս էր նորան մի կերպարանք, որպէս թէ սա այն ապարանքներից մինն էր, որոնց մասին լուսմեք առասպելների մէջ թէ շինած էին մի հաս պատուական քարից:

Իսկական տունը ուներ 46 սանաչափ երկայնութիւն, 18 սանաչափ լայնութիւն և 21 սանաչ. բարձրութիւն: Շինութեան ձախտը սիւներով բաժանած էր սենեակներ, ամենայն բաժինում կար մի լուսամուտ, սոցա պատեաները ներկած էին կանաչ գունով. պատուհանների տեսանելիքը այնպէս պայծառ և կոկած էին ինչպէս յղկած ապակի: Այս սենեակքը գիշերով լուսաւորումէին սոփորարար ներսից, և այսպէս բոլոր տունը շողշողումէր ամենաբնուշ մարդարտախայլով: Միջին բաժինը ուներ մի դարպասի կերպարանք և շատ ճոխ զարդարած էր. բոլոր իսկական ներսամուտքը յետի կողմից էր. դա բաղկանումէր երկու շափաւոր բացուածից և զարդարած էր ծաղիկներով ու ծաւերով որոնց վերայ նստած էին թռչուններ, բոլորը սառուցից շինած և հիանալի գուներով ներկած: Առաստաղը տափակ էր և շրջապատած ձեւելիքով, որոնց սիւների վերայ դրած էին արձաններ:

Տան շորս կողմովը ձգվումէր մի գեղեցկաչէն ցանկապատ, նոյնպէս սառուցից. սոցա միջոցումը կար մի լայն ձեւելիք դրանակ լուսամուտ. ցանկապատի առաջն էր արած էին վեց թնդանօթ իւրեանց պատուանդաններով և անիւներով, երեք հաս ամեն մի կողմից: Արքա երեք ֆունտ մտանութիւնով և գնտակը, որ բաղկանումէր ջարդած խճուճից, նեղակ լով մաթնուն քայլաչափ հեռաւորութեամբ անցանումէր երկու մասնաչափ հաստ տախտակից: Աղմբումը ղետեղած էին երկու ղեկփնտար որ գիշերով ահագին նափթեղէն ցայտեր դէպի վեր արձակելով ձեւակերպումէին երկու փառաւոր հրարուզի ալբիւրններ: Քնդանօթների շարքի երկու ծայրումը, ցանկապատի առաջն, կանգնած էին երկու բուրգեր մի շրջապատ լուսամուտքով որի վերայ շորս կողմից նկարած էին արեւացոյցներ: Արքայիցը դատարկ էին սոքա և գիշերով լուսաւորումէին թղթեղէն լապտերներով: Շինութեան ձախ ձևերի վերայ կանգնած էր մի փիլ բնական մեծութեանով, նորա քամակի վերայ նստած էր մի մարդ, պատերազմական տապարը ձեռքին, և նորա առաջին կանգնած էին երկու փիլապանք պարսկական զգեստով: Այս փիլը դատարկ էր ներսից և իւր կնջիկից զուրս էր ցայտում ցերեկով մի ջրեղէն շտաւիլ, գիշերով մի մտուն նափթեղէն ձառաղայթ 24 սանաչափ բարձրութեանով: Աջ ձեռքի վերայ, Ռուսաց քրտնեցոյցիչ բաղանիքների պէս, շինած էր մի փառաւոր լուսարարան բոլորակ ստոցակտորներից:

Տան ներսը բաղկանումէր միայն երեք մասնից, մի արձակ սրահից և երկու կողմնական սենեակներից: Առջածից մինը պատրաստած էր քնարանի համար: Այն սեղ դրած էր մի սեղան որ կրումէին երկու պատկերաւոր ոտքեր: Նորա վերայ, բաց ի ամենայն տեսակ

անուշահոտութեան անօթներէց, կար մի զոյգ ճրագակալ, և նոցա մոմերը պատած էին նախժով և փայլումն գիշերը տաանց հալվելու, Պատի վերայ կախած էր մի հայելի և մի փոքր ժամացոյց. ննջարանը մահիճներով ծածկոցներով և նուրբ վերարկուներով զարդարած էր ձօնապէս. սորա միայն էին պալատի մէջ, որ սառուցից ձեւաւորած չէին: Մի պատի մտ շինած էր զարդարուն կրակարան սառուցի ածուխներով, որ նոյնպէս պատած էին նախժով և փայլումն գիշերով:

Արկրորդ սենեակը կարելի էր ասել սեղանատուն. այս սեղահանդիսանումեր մի փառաւոր ժամացոյց, որի թափանցիկ պատենիցը կարելի էր տեսանել նորա բոլոր անխնկերի շէնքը. ամեն մի կողմով զրած էին նստարանք և թեւաւոր աթոռներ, և անկիւններումը արձանք: Այլ թափանցիկ պահարաններ փայլիփայլումն պատերի միջից. սոցա մջ տեսանելի էին ուտելու և ըմպելու անօթներ, պատառաքաղներ, զրգալներ, դանակներ, բաժակներ և ամենայն տեսակ ներկած կերակուրներ: Ամենը և բոլորը սառուցից արուեստակեալ, այս բանը թափանցուն շողողելով, այն բանը վերայից ներկած պատկերացուցեալ առարկաների բուն գուներովը:

Այս հրաշալի ճարտարագործութիւնը, որի ահագին ծախքը կարելի է միայն նորանով անմեղադիր առնել, որ զորանից հազարաւոր մարդիկ օգուտ էին ստացել աշխատելով, յունկարից մինչև մարտի կէսը կանգնած էր, մինչև զարնան մեղմ արեգակը փորելով նորա հիւրերը, առ փոքր փոքր ապուսեց նորա կազմաւածքը:

24. Բ---դ:Ա ---ւ:ւ:ւ:վ Բ---դը Փ---դ:Ա: Դ:Ջ:

Այս բանտը որ 1371 թուականին շինեց կարոլոս հինգերորդը որպէս թագաւորութեան պատժարան և մանուանդ այնպիսի հպատակների համար որ զազդիսյի թագաւորը ծածուկ հրամանաթղջով, տանց պատճառը յայտնելու բանտարկումն, այս ահաւոր պատժարանը եզած ու անցած միայն բան է այժմուս: Արժանովէ և, 1789 թուականին Յուլիսի 14 ին, այդ դժոխային փերապը, զարհուրելի իշխանական բռնակալութեան գործ. այսուհետև ոչինչ Պրանսիացի չէ միասնդամ լսելու այն սեղ մեռանողի հեծեմանքը և անիրաւութեամբ հալածվածի անեծքը: Տեղեկանանք այդ բարբարոսական շինուածի որպիսութեանը:

Ահագին պատեր քառակուսի անտաշ քարերով շինած և հրակայն և կամարասիւնների վերայ հաստատած կապակցումն այն ութը խաւարալից բանախ աշտարակները, որոնց մէջ անդուժ բռնակալութեան վատարազդ զոհերի արտասուքը կարող էին միայն վերջանալ

կամ խելագարութենով կամ թէ մահով: Բանտի բարձր պարսպի վերայ կար մի հովանոց ուր քանի մի բաղդաւորներէ թոյլ էր տուած պահապաններէ նիղակներէ տակ ման գալ որոշած ժամերով և փոքր մի արձակ սո վշտէլէլ: Բայց և այս հաղուադիւտ բաղդը որ միայն կարելի էր գնել կաշտաքով, չէր այլ ինչ, եթէ ոչ մի նոր տանջանք, որովհետեւ բանտարկեալքը այն հովանոցից, զէպ ի ցած նկատելով միտերի արձակ համարձակ կեանքը, մտաբերումէն միշտ այն գեղեցիկ աղաաութիւնը որից անմասն էին ինքեանք: Տասերեք թընդանովք պատի ծակերի մէջ դրած, սանձահարումէն ժողովուրդը, եթէ սա կամք ունէր յարձակիլու իւր տանջանարանի վերայ, խոր և քարաշէն փոսի վերայից, որ լի էր նեխեալ և աղակցի ջրով, մի շղթայակապ շարժողական կամուրջ աւաջնորդումէր զէպ ի ցած, կամարակապ սձագարպասը. և այս տեղի երկաթի փակարաններ վերեւից ցած ձգվելով պիտոյ է ջաղջախէին այն մարդու գագաթը, որ կը համարձակիէր թշնամարար ներս վաղել: Առաջին փոքրիկ նախագախթումը երկաթի ցիցեր շրջապատելով պահապաններէ տունը, շինումէն սորան մի անմեքննալի պատպարան: Խաւար, ծանր կամարներով շինած դարպասներ սրածոյր անկանողական փակարաններով տանումէն զէպ ի երկրորդ ներքին գաւիթը, որ ունէր 120 ասնաշափ երկոյնութիւն և 80 ասնաշափ լայնութիւն: Չորս կողմից երկաթի դարպասներ փակումէն ծիտով ներկած պատերի մէջ այն վերայները և կամարաշէն գնացքները որ տանումէն զէպ ի ճեմելիքը անհամար քարաշէն բանտերի, որոնց մէջ բոնակալութեան անբաղդ զոհերը ասեա թէ կենդանւոյն թաղած էին:

Բայց և այս պատիժը զեռ ևս բաւական ծանր չէր համարում մի վշտացած կարող մարդու ստանասիրտ և հնարագէտ վրէժխնդրութիւն: Աշտարակը, ամբողջ խորանի մտա, ասումէր խորանի աշտարակը որ իւր մեծութենով զարհուրանք ու տխրութիւն էր բերում սրտի վերայ: Այս աշտարակի վերայ բարձր ամրացրած էր մի ձող, որ մի պատահանի բացուածով կարելի էր զէպ ի ներս ոլորել, Բայց և նշնպէս զէպ ի դուրս պարզել գաւիթի վերայ: Յակաւ չէր պատահում որ երեւէր այս ձողից կախ տուած մի երկաթի վանդակ, և հայեցողի աչքը, երկար ժամանակ զէպ ի վեր նայելով, որոշելու էր այդ վանդակի մէջ մի շարժողական բան, և ինչ զարհուրելի ու ահացուցիչ տեսիլ, մարդու կերպարանք: Երեկոցեան պահուն վանդակը ներս էր քարշլում և մտումէր կախած աշտարակի մի փոքրիկ սենեկի վերայ:

25. Ժողովրդի վայելուխը և զանազան անարգելի և նոր լիբերալիզմը:

Մի գերազանց ուրախամտութիւն տեսնւում է այս տեղ ամենայն կողմից և ամենայն մարդու սիրտ քաղցր հաճութենով մասնակից է նորան: Այն քաղաքական գունազոյն ծաղիկները և պտուղները, որոնցով բնութիւնը զարդարւում է, ասես թէ յորդորում են մարդը, որ իւր անձը և իւր բոլոր անօթները գեղեցկազարդ էին քան կարելի էր պայծառ գուներով: Մետաքսեայ թաշկինակներով կապոյտներով և ծաղիկներով զարդարում է իւր գզակը ամենայն մարդ որ փոքր ի շատ կարողութեան տէր էր: Աթոռները և պահարանքը շատ հասարակ տների մէջ ևս զարդարած էին խոյտաճամուկ ծաղիկներով, ոսկեզօծեալ յատակի վերայ: Եւ միայն ի կողմերը ներկած էին դուրսի կամեր գունով, քանդակագործութիւնքը ոսկեպատ, ձիանքը զարդարած արուեստական ծաղիկներով, թխագոյն կարմիր փունջերով և ոսկու շիզերով: Մի քանիքը այդ ձիաներից ունէին գլուխների վերայ փետրաւոր փունջեր, միւսերը փոքրիկ դրոշակներ, որ պոչայում են ամենայն շարժումներից, երբ որ վազում էին ձիանքը: Մեք, սովորապէս, բարբարոսական և անալի բան էրք ասում խոյտաճամուկ գոյներ սիրելը, որ մի հայեցումով և սյգպէս էր բոլոր մի շատ պայծառ և կապտազոյն երկնակամարի տակ, խոսելով իսկապէս, ոչինչ բան խոյտաճամուկ չէ, որովհետև ոչինչ կարող չէ գերազանցել արեղակի փայլողութիւնը և նորա ցոլացմունքը ծովի մէջ: Ամենապայծառ գոյնը թուլանում է այն սաստիկ լուսի առաջն, և որովհետև ամենայն գոյները, ծառերի և բուսականների կանաչը, դեղնագոյն, թխագոյն և կարմիր կերպարանքը երկրի, ամենայն զտրութենով ներգործում են տեսութեան վերայ, այդ պատճառով և գունազարդ ծաղիկները և հանդերձեղէնքը զուգապատշաճ վում են ընդհանուրի հետ: Նետառնա քաղաքի կանանց բաճկոնները և վերնազգեստները, որ վերջուորված էին ոսկի և արծաթի ժայթակներով, միս գունաւոր աղջկան հագուստները, նկարազարդ նաւերը, ամենայն ինչ ասես թէ ջանագիր էր փոքր ի շատ երեւելի կացուցանել իւր անձը երկնակամարի և ծովի փայլողութեան տակ:

Եւ ինչպէս Նեապոլիցիք ապրում են, այնպէս և թաղում են իրենանց մտեալքը. այն ուրախամիտ մարդերի փայլելութիւնը չէր խոփանցում մի սեւազգեստ, ծանրագնաց թաղման հանդիսով: Ես տեսայ որ մի երեկոյ տանում էին թաղելու մի երեկոյ. պատգարակը ծածկած էր կարմիր բարձուցի և ոսկուց լայն գործած օթոցով. նորա վերայ դրած էր մի քանդակաչէն ճօխապէս ոսկեզօծ և արծաթապատ դադաղ, սորա մէջ սպիտակազգեստ ննջեցեալ անփոփած և վար-

դազոյն կապերով բոլորովին ծածկած: Գազազի շորս անկիւնումը կային շորս հրեշտակներ, ամեն մինը որպէս թէ երկու սանաչափ բարձրութենով, որ մեծ մեծ ծաղկափունջեր բռնած էին ձեւերումը երկաթի վերայ, և որովհետեւ տակից ամբողջած էին միայն մտաւաթիւններով, ապա դազազի շարժողութենից նշանակաւ տատանվումէն, և սեսս թէ ծաղիկները անուշահոտութիւն էին ցանուժ երկաթի վերայ, շրեշտակները շարժումէն այնքան առաւել սաստիկ, ինչքան ննջեցելու ուղարկուողը շտապումէն փողոցների միջով և յառաջադնաց քահանայքը և մով տանողները վաղումէն մանուանց, քան թէ քայլումէն:

Տարու ամենայն եղանակի մէջ կը տեսանէիր դու այս տեղ, որ շրջապատումէն քեզ կերակրեղէնք, և Նեապոլեցիցն ուրախ է ոչ թէ միայն ուտելու վերայ, այլև կամենում նա, որ ուտելիքը գեղեցկապէս զարդարած լինէին վաճառանոցի մէջ:

Սանտա Լուկիա քաղաքի մտ կը տեսանէիր, որ զանազան տեսակ ձկներ ըստ մեծի մասին մարուր և զեղեցիկ կողովների մէջ, խեցգետինք, ստորկայք, փոքրիկ խեցեմորթներ, ամեն մինը ջոկ ջոկ պատրաստած և կանաչ տերեւներ տակը դրած էին: Յամար մրգեղէնի և ընդեղէնի խանութները շատ բազմաթիւնակարար զարդարած էին: Սրբուած նարինջները և կիտրոնները ամենայն տեսակից, կանաչ ճիւղեր դուրս ջգվելով նոցա միջից, շատ ուրախարար էին աչքի համար, բայց ոչինչ տեղ չէիր տեսանելու այնքան զարդարանք, ինչքան մտեղէն պաշարների վերայ, որոնց նայումէն ժողովրդի աչքերը տակի տաստիկ ցանկութենով, ըստ որում ախորժակը զորացած էր, ժամանակ առ ժամանակ պահք պահելով:

Սասիվաճառների խանութներումը ոչինչ ժամանակ չէիր տեսանելու, որ կախ տուած լինէին եղի, որթի և ոչխարի մասներ, եթէ ճարպի մտ լու ոսկեզածած չէին կողբերը կամ ազգրը: Չանազան օրեր տարու մէջ, մանուանց ծննդեան տօնի օրերը նշանաւոր էին որպէս հացիկրութեան օրեր: Ենտեղեան սկսանում մի ընդհանուր ուրախութեան տօն, որին ժամադիր էին մասնակից լինել 500000 հոգի. այս միջոցումը Տօլեդոյի փողոցը և նորս մտ այլ փողոցներ և տեղեր զարդարվումն շատ հաճոյական կերպով: Խանութները, որոնց մէջ դուրս էին դրած կանաչեղէնք, չամիչ, սեսս, ձմերուկ և արմտ, շատ ախորժակի են տեսութեան համար: Ատակի պաշարները, որպէս ծաղկահիւս շղթաններ, կախ էին տուած փողոցի մի կողմից զեպ ի միւսը. մեծագիր շղթանները ձեւացրած որպէս երշիկներ, որ ոսկեզօծեալ և կապած էին ժապաւեններով. խտալական վառեկներ որոնց ամենների յետոյքը շամիրած էին մի կարմիր

որոշակի վերայ, Հաստատումներն ինձ, առումը Վեօթը զերմանացի հաշակաւոր բանաստեղծը, որ ականատես է եղած այս բաներին, թէ 30,000 այդպիսի վառեկներ ծախսած էին, առանց համար ձգելու այն վառեկները որ տների մէջ պարարտացրած էին Թող այս բազմաթիւ, կանաչեղէնով, որձառնեցով և մանուկ գառներով բնուստրած էջերը որ շրջումեն քաղաքի մէջ և հրապարակումը, և այն ձուերի բազմութիւնը որ այս տեղ և այն տեղ անսանձումէ, սշնպէս է, որ ոչ ով այդքան ահագին բազմութիւն ձուերի մի տեղ ժողոված երբէք մտածել չէ: Բաւական չէր, որ այս բոլոր բաները ուսովումին, ամեն տարի պօլիցիսոյի պաշտօնատարք մի փողահար վեր առած հետը, ձիւ վերայ շրջումէ քաղաքի մէջ և քարոզումէ ամենայն տեղերում և ճանապարհներում, թէ քանի հազար կոյն, որթ, գառն և այլն, կերել և Նեապոլսեցիներ: Այս բանին մտադիւր ականջ է դրնում ժողովուրդը, անչափ ուրախանում է իւր շտապեցրութեան վերայ և ամենայն մարդ մտաբերումէ որ և ինքը ուրախութեամբ մասնակից է եղած այդ վայելքին:

Այնքան ուշադիր լինինք այն ալիւրային և կաթնեղէն կերակուրներին որ մեր հացեփող կանաչքը շատ կերպերով պատրաստել գիտեն, ապա պիտոյ էր սակ, որ Նեապոլսի ժողովրդի համար, որ այդպիսի բաների մէջ ուրախ էր կարճացնել աշխատութիւնը, կրկնապատիկ հոգս է արած: Մակարոնի անունով կաղմածը, որ մի քրնքուչ, լաւ տրորած, կփած և զանազան ձևերով ձմլած խմոր է նուրբ ալիւրից, ամենայն տեղ, ինչ տեսակը կամենաս, կարելի է ստանալ շատ թեթեւ գնով: Այս մակարոնին ըստ մեծի մասին խորչումն ջրի մէջ, և տրորած պանիրը ցանկելով այդ կերակուրի վերայ, և իւզում և համեմում նորան: Համարեա թէ ամենայն մեծ փողոցի անկիւնում քարքարագործքը իւրեանց տապակներով, որ լի էին եռացրած ձիւթով մանուանդ պահոց օրերի մէջ, պարապած են ամենայն մարդու համար խկոյն ձուկն տապակել և քարքար պատրաստել, ինչպէս հաճոյ էր նորան: Այս քարքարագործ մարդիկը վաճառումն անհաւատալի շատ կերակուր, և քանի քանի հաշարներ իւրեանց ճաշու և երեկոյի հացը մի կոտոր թղթի մէջ տանումն այն տեղից: Կերակրատուները այս հացեփողների, որ ասումնին Գրիջիտտորի, պատկերացնումն մի զուարճ տեսարան մանուանդ սուրբ Եփրէփի սունի օրումը, որ նոցա պաշտպանն էր: Խանութիւր զարդարած է այս սուրբի պատկերով և այլ նկարներով որ ցուցանումն հոգիների տանջանքը քաւարանի մէջ, որպէս ականարկութիւն դեպ ի այն բոցերը, ուր ձկները տապակվելով պատրաստումնին: Կի մեծ տապակ ջերմանում կրակի վերայ, ոմանք պատրաստումն խմորը, միւսերը ա-

նումն խնորի կտորները և ձգումն եռացրած ձեթի մջ. բայց այն երկու մարդիկը որ մեծ երկժանի պատասաքաղներով դուրս են հանում տապակած բոլորակները, առաւելագէս արժանի են ուշադրութեան. նորա պատկերացնումն հրեշտակներ, բայց լմէ ինչպէս, ոչ որ կարող չէ մարդարեանալ:

Հինգելով այն հասկացողութեան վերայ, լմէ հրեշտակներն պէտք էր ունենալ մեծ, գեղեցիկ, ոսկեփայլ խողովք, (ոլորած մազեր), կարելի է որ հանդիսաւոր թախարներում խարտեաշ կեղծամներ էին դրած այն մանուկների զլիւն, որ պիտոյ է երեւին հրեշտակք. կարելի է որ այս կեղծամքը ժամանակի ազդեցութենից ճաղատել էին, կամ լմէ չեն կարողացել միշտ ձեռք բերել արուեստական ճոխամաղ խողովք. հերիք էր միայն սակ, լմէ մի աշխարհում, ուր ըստ մեծի մասին ամենայն մարդ կրում իւր յատուկ մազը, կեղծամ և հրեշտակ սասձ իմացութիւնքը մնացել են կապակից միմեանց հետ և զլիսաւոր ըմբռնութիւնը խողովքների կորել է ամենեւին, այնպէս որ այս երկու մարդիկը որոնց կերպարանքը այնքան պատառոտուն են, ինչպէս վերջին Նեապոլեացու կերպարանքը, կարծումն պահպանել իւրեանց արժանաւորութիւնը որպէս հրեշտակներ, և լմէ մի հին կեղծամ դրած էին մի ականջի վերայ և ուշադիր կոխումն պատասաքաղը տապակի մջ և հայելի օրինակով պատկերացնումն այն բարի հրեշտակները որ հողիքը դուրս էին քարշում քաւարանից: Սոցա ստարակսիւ զարդարանքը, անսանձ ազաղակը, բայց ևս առակել կերակրեղենների լմեթեակնութիւնը այս օրի մջ քարշումն դէպ ի այս տեղ մեծ բաղձութիւն գնողների որ իւրեանց ախորժակը մի փոքր բանով լցուցանումն և նոյն միջոցին ջերմեանդ աղօթք են կատարում քաւարանի մջ եղած սրճնեալ հողիների համար:

26. ՀԱՅԿԻՆԻ ԵՎ ԳԵՂԱՄԻԱՆԻ:

Խոսիլիա աշխարհի հիւսիսեղծումը ներկայանումն Ալպեան սարերը: Պիւնտանից մինչև Խաթիա, մեծ կիսալուսնի ձևով ձգվում մի երկնամեծ սպիտակ պատուար անելանելի կատարներով, որ 15000 ոտնաչափ բարձրանումն միջերկրական ծովի վերայ: Յայտնի են միայն քանի մի անձինք որ վեր են ելած Սպիտակ սարի (Մոն բլանի) վերայ, բայց յայտնի են սակաւ մարդիկ կամ լմէ ոչ որ, որոնց սոքը կոխած լինէր Ահաւոր եղջիւրի (Շուէրհոնի) վերայ. նոցա բրդաձև ծայրերը երևումն դրահաւորված մշանջենաւոր սառուցով և շրջապատած ձեղբերով, որոնց անյայտ անդունդքը ծածկումն խաբերայարար սպիտակագոյն ձիւնը: Ամառաշէլի մեծափառութեան մջ

փայլումն նորա բարձրանալով ամպերի վերայ և լոյն ու արձակ շողշողելով մարդարնակ աշխարհների վերայ: Նոցա ստուցի բազմութիւնը արհամարհումն արեգակի ճառագայթները որ նորան սուկեզծումն միայն: Այս ստոցապատ կատարները, պաշտպանվումն սգի աղղեցութենից որ հազարաւոր տարիներէ միջոցում ապականելով աւերել և Բողոք և Պարլեան սարերի մերկանդամ բարձրութիւնքը, եթէ կապած ու փակած գեանակամարների մէջ վառվումն զեռ ևս երկրագունդի երրէք շրննած ներքը, և այս կրակից հետի և բարձր էին Ալպեան սարերի ստոնամանիքը. հոգի մէջ տակիցը հալվելով ստոյշը դուրս է բղխում և վազելով ձորերի մէջ սառչումն երեսիցը, և այսպէս, անհամար տարիներ անցանելով, գոյացել են անքննելի, պնդացած և միմեանց վերայ դիդած ծանրանիւթեր, ձգվելով որպէս բնական ճանապարհներ: Կորքերի մէջ անդադար աշխատումն բնութեան բարերար ջերմութիւնը, խաւար ստոնարաններիցը թափումն գետեր, գոգաւորումն ձորեր, լցուցանումն լճեր և հոխոցումն դաշտերը: Բայց ով կարող էր մարդկեղէն դորութենով միջամուխ լինել մի հաս կենդանութեան ընթացքի մէջ, այն անքննելի խորքի մէջ, ուր Ալպեան սարերի հիմնայատակը մշտնջենաւոր գիշերի մէջ կամ շատ վաղածամանակեայ բոցերի լուսաւորութեան մէջ հանդիպումն միս կիսադնդին, կամ, ուր հնացած ու ծեւրացած ձեղքեր նոցա և մեզ կործանումն էին պարաստում:

Ալպեան սարերի հիւսիսահայեաց կողմը ցածանումն, Ճիւղաւորվելով շատ սարագոտիներ մինը միսի քամակից. սոցա բոլորների վերայ կատաղարար ներգործել են ջրհեղեղներ, բարձրանալով 9000 ոտնաչափ Ըփլեցիոյի միարանեալ քաղաքների և գիւղերի վերայ, բայց 10.800 ոտնաչափ, հաշուելով միջերկրական ծովի երեսից, Կարելի է, թէ ծածուկ պատճառներ և աղղեցութիւններ խորտակել ու փշրել են այնպիսի կամարներ, ինչպէս անխարհի մասներն էին, և ջրերը խրեանց բոլոր ուժով ցած են կործանվել հաստամանակեայ աղջամաղջների մէջ: Մարդկեղէն աղբը երկեան օրիցն է, և հազիւ թէ այսօր բացումն աչքերը, որ նկատէ բնութեան ընթացքը: Ղերբապէս արեգակը լուսաւորեց այս սարերի ոտքերը. անհամար աւազուտ և աղճոտ բլուրներ լի էին ջրեղէն բուսականներով, խեցիներով, մկներով և փոխալ ծաւերի կոճիկներով: Հարսումը և հիւսիսումը գտանվումը անյատակ ճախին. սորանից յետոյ բարձր, ահապն տարածութեամբ ծաւեր ծածկեցին անանուն անապատը մութ և խաւար անտառով, անթումը հասանքների և հարիւրաւոր ճախճախուտ լճերի վերայ կախված էին սասն թունաւոր մառախուղներ և, ինչպէս սովորական և անչէն հոգի վերայ, բուսականների մէջ ներս

մտան անառողջ հիւժմեր, սորանից ծծեցին ճճիքը խրեանց թշնը
և անելով սաացան անձտնի հաստութիւն և մեծութիւն: Բաց ի
ձերպարնակ գտանակեր անզղների աղաղակից, բաց ի վշտրենի գո-
մէշների մանչիւնից և մեծամեծ արջերի բառանջիւնից, հարիւրաւոր
տարիներ այն շոր ու ցամաք աշխարհումը զէպ ի հիւսիս, թագաւոր-
ութիւնը տխուր հանգարտութիւն:

ԲՆՈՒԹԵԼՆ ՏԵՍԵՐԸՆԵՆԵՐԻ ՆԿԱՐԸԳՐՈՒԹԻՒՆԷ:

27. ՎԷՂՈՎԻ ԿՐԻՍՏՈՍՈՒՄԻ ԿՆՆՈՒՄ 1794 ԲՆՈՒՄԸ:

Վ Է Ղ Ո Վ Ի շատ անգամ պատահած արտահոսութիւնների մէջ
յայտնի են միայն երկուքը որոնց հետ համեմատելով 1794 թուա-
կանի արտահոսութիւնը, շուներ այնպիսի ահարկու մեծութիւն: Վ Է
Ղ Ո Վ Ի առաջին արտարդիութիւնով, որ պատահել է Տիտոս կայսրի
սրերումը, 79 թուականին Քրիստոսից յետոյ Օգոստոսի 23 ին, ա-
ռաջին ժաման, ճաշից յետոյ, կործանվեցան հարուստ շերքուլանում
և Արմեդէյի ծովափայտաց յաղարքը, և ծովը ստացաւ նոր սահմանը:
Երկրորդը որ պատահել է 1631 թուակ. Գեկո. 16 ին արձակեց
համարեալ թէ անհամար հրահոսութիւնը այն բազմաթիւ տեղերի
վերայ որ կային հրարուղի սարի ոտքին: Բոլոր ցանած ու սերմա-
նածը աւերվեցաւ ամենին և բնակիչների գրեթէ կեսը մահ գտաւ
կրակի մէջ: Այս երկու զարհուրելի անցքերը պատահեցին այնպի-
սի ժամանակում, երբ մերձակայ բնակիչների մէջ, շատ տարիներ
անց կենալով, համարեալ թէ ջնջած էին ամենայն աւանդութեան
հետք սարի ներսումը ծածկած կործանողական աղբիւրի մասին: Բայց
նոր ժամանակներում գրեթէ տարի շէր անցել, որ հրարուղի սարը
ցոյց տուած շը լինէր նոր և մեծ* տեսարաններ, և այս սահմանումը
մարդ չը կար, որ շը լինէր կամ տեսած կամ թէ նկատած շատ ար-
տահոսանքների աւերածք: Ի վերայ այդը ամենայնի, երկու տարի
խաղաղ մնալով սարը, այդ միջոցումը գոլորշիք ևս երևած շը լի-
նելով նորս կատարի վերայ, այնպիսի անհոգութիւն էր եկել բա-
կիչների վերայ, մինչև սոքա ամենին մտացան Վ Է Ղ Ո Վ Ի բնութիւնը
և այն միջոցին, երբ 1794 թուականի Յունիսի 12 ին, գիշերի մէջ
11½ ժաման մի սաստիկ երկրաշարժութիւն յանկարծ սասանութիւն
բերեց նոցա վերայ: Կամպանիայի բոլոր դաշտագետինը տատանվե-
ցաւ արեւելքեց զէպ ի արեմուտը, հեղոնուս ախրների պէս: Նեա-
պոլեցիք գուրս վազեցին աներից զէպ ի թագաւորական պալատի
արձակ տեղերը և հրապարակքը: Նոքա կործումէին որ աները միւս

բուսկին կործանվելու էին, և ահ ու զողի մէջ կանգնած զուրումը սպասումին լուսարացին, հոգալով Ասլարբիայի գլխի գալոց անցքը, Քայց երբ որ արեղակը զուրս եկաւ պայծառապէս, և նորա տեսան որ հրարուզն սարը խաղաղ էր սովորականի պէս, կործեցին թէ վտանգ կար թագաւորութեան հարաւային գաւառների համար, և մտածումին թէ անցած գիշերի պատահածը այն կողմիցն էր. բայց երկար չը տեսեց նոցա սխալանքը. երեք օրից յետոյ, Յունիսի 15 ին գիշերի 11 ժամուն, միսանդամ զողաց գետինը. այս երկրաշարժու. թիւնը չէր մի այնպիսի ալիքանման տատանումն, ինչպէս յառաջ, այլ մի անկանոն զարկողութիւն որ շինուածները ճեղքեց, պատուհանները զգրղեց և բռնութեամբ վեր ի վայր գլորեց աների կարասիքը: Աւ իսկոյն կարմիր բոցեր և փայլուն գոլորշիներ լուսաւորեցին երկնակամարը: Աւելու մի սարակոնոնի ոտքը պատասովել էր և ամառներից տեսանումին, որ կրականիւթ հեղեղը (լափա) զանազան բացուածներից զուրս էր վազում կամարանէ: Տեղապէս լսելի էր մի աղտաւայն բայց սաստիկ խոտվութիւն, որպէս թէ մի գետացած էր յարձակվում մի խոր փոսի մէջ. անզազար տարուրբութեան սարը, և մի քառորդ ժամից յետոյ քաղաքը նոյնպէս սխեց երեք միլ տեղապէս: Երբէք տեսած չէին, որ լափան այսպիսի կատաղութեամբ զուրս յարձակվէր: Աւսպայի գիրքազրդիւ ժողովուրդը կարծելով թէ ահա գետինը պիտի փուլ գայ նորա ոտքի տակին, տեսանելով սղը բոցափառված, և ինքը տագնապի մէջ անլսելի և զարհուրելի ձայների երևախց, ահով ու երկիւղով ըմբռնված, զուրս է թռչում և վազում որ ընկնի սուրբերի ոտքը խորանների և եկեղեցիների մէջ, խաչ ու պատկեր ձեռք առած վազում փողոցների միջից, աղաղակելով և վայրենի խոտվութիւն գործելով: Քայց կատաղած սարը բանի տեղ չէ դնում զոցա ահ ու երկիւղի աղաղակը. բացվումն սարի մէջ նոր նոր ճեղքեր, որոնցից մի և նոյն կատաղութեամբ զուրս է թռափում լափա: Ծուխ, բոց և զոլորշիք անշափ վեր բարձրացան, անկերը ցած թողլով, և ապա տարածվեցան կողմակի, ձեւանալով որպէս մի լայնատարած եղևնածառ: Ահ գիշերից յետոյ հանդարտեց այս անզազար, զարհուրելի աղտաւայն թրնգիւնը և մի և նոյն միջոցումը լուց սարի ցնցիւնը և երերումը: Ապա հրանիւթ հեղեղը բազմելով զուրս յարձակվեցաւ բացուածների բերանից, արագ արագ, հետ զհետեւ զարկելով որպէս որոտի ձայնումն: Այս սաստիկ և կատաղարար զուրս վազող հեղեղքը անշափ բարձրութեամբ զէպ ի վեր էին նկատում անհամար մեծ մեծ ժայռակոտորներ. ապա քամակից հետևումին նոր բոցեր, նոր սև ձխային ամպեր: Աս փոքր փոքր սահուանումներն շարունակ զարկուածքը, բայց

նոցա զորութիւնը կրկնապատկ յաւելանումը, մինչև վերջապէս պիտոյ էր կարծել, որպէս թէ բոլոր սարը դարձել է շարակարգ թընդանթններ որ ի միասին արձակումէն իւրեանց կրականիւթը: Այս ահարկու որոտի միջոցումը, որ կէս զիշերից յետոյ էր, տեսանումէն որ և հրարուղի սարի միւս կողմումը եղած օդապատը լուսաւորված է: Քոյզ այն աւերածքը որ եղած էին սարի այս կողմումը, հրանիւթ հեղեղը պատասելով և միւս կողմի սարակործքը, սարի կատարից աւելի ցած և աւելի հեռի, կատարար զուրս փաղեց ճեղքուածովը և յարձակվեցաւ մի լայն ձորի մէջ որ յառաջուց ահա ապականած էր հրահոսութեններով, և ուղղեց իւր ընթացքը դէպ ի Մաուրս: Նա աւերածք շատ արեց անտառների մէջ, ձորի վերջումը տարածվեցաւ դաշտի վերայ որ այնքան դէպ ի վայր չէր, սկսեց ապա ծանր հասել և երեք օրից յետոյ ստեղծ և պնդացաւ բոլորովին առանց հասանելու բնակութեններին: Այսպէս չը վերջացաւ այն որոտածայն հրահոսութիւնը որ ուղղել էր իւր ընթացքը Նէպոլիտի վերայ: Նա սաստկապէս և արագութեամբ դէպ ի ցած էր վազում սարի կործքից. ամեն մի արտահոսութիւն սարի հրարուղի բերանիցը դէպ ի վեր էր թաւալում մի հրեղէն հեղեղ, որ հանդիպելով յառաջուց զուրս հոսած հեղեղին, ասես թէ տալիս էր նորան մի նոր ոյժ և զորութիւն: Ռեզինա, Պօրփշի, Տօրրէ դէլ Գրեկօ քաղաքների բնակիչների կէս մասը տաղնապի և տարակուսի մէջ, աչքը անկած նայումը հրահոս հեղեղի ամեն մի շարժողութեանը որ վտանգաւոր էր երևում երբեմն այս տեղի և երբեմն այն տեղի համար: Ժողովրդի միւս մասը ընկած և տարածուած էր սեղանների առաջև, փրկութիւն աղաչելով ահաօր հրահոսանքի երեսից: Բոլոր լավայի նիւթը յանկարծ ուղղեց իւր ընթացքը Ռեզինա և Պօրփշի քաղաքների վերայ: Ամենայն հասակ թէ մեծ և թէ փոքր, ինչքան կային Տօրրէ դէլ Գրեկօ քաղաքի մէջ, վաղեցին դէպ ի եկեղեցի, որ շնորհակալութիւն մատուցանեն Աստուծուն իւրեանց կարճեցած փրկութեան համար. այս շափաղանց ուրախութեան մէջ մոռացան նորս իւրեանց դրացիների գրեթէ անհրաժարելի կորուստը: Բայց մի խոր փոս ընդդիմանում լաւայի դնացին. նա հետևում փոսի ուղղութեանը և փոսը պատաստվում վատարաղք Տօրրէ դէլ Գրեկայի վերայ որ իւր անձը ապահով էր կարծում: Նոր կատաղութենով յարձակվում հեղեղը սարի կողից, նա չէ բաժանվում այլ ևս, և 2000 տանաչափ լայնութենով հասանում ծաղկաթիթի քաղաքին: Այս բոպէումը 18000 մարդ պաշտպանութիւն են որոնում ծովի վերայ, բայց դեռ ևս ծովափից չը հրաժարված, տեսանումն նորս, որ վրասակված տանիքների վերայ լաւայի միջից բարձրանումն թանձր

սեաւ ծխասխանք և զէպ ի վեր են բորբոքվում մեծամեծ բոցեր, Ապարանքներ և Եկեղեցիներ ճայթեւելով վայր են կործանվում և այս միջոցումը ահաւորապէս որսառեալ սարբ: Գիշերի 11 ժամուն կրակահերթ Տեղեղը դուրս վաղեց սարի ներսից, և ահա առաւօտու 5 ժամուն չը կար այլ ևս Տորբէ զեւ Գրեկս քաղաքը: Անց ժամու միջոցում վառուն նիւթը անցել էր 4 խաւական մղոն, որ մի շտեմած ու չլսած արագութիւն էր այս սարի աւերածների պատմագրութեան մէջ: Ահագին ծովը ևս դժուար թէ կարող էր շարժու սահման զնել լաւային: Աորա վերին երեսը, որի ստորինը սառեալ մըրի տակին, կատաղութեամբ թաւալվելով անց է կենում սառածի վերայից: Չորս կողմից բլին և արձակ ետ է գալիս ջուրը, Երբ ձկներ անհամար բազմութեամբ ծածկումեն ծովի երեսը, այս աւերածների մէջ լուսանում որը. այժմ տեսանելի չէին այն բոցերը որ բարձրանումեն սարի բերաններից, և սարբ, ոչ: Մի սև, ըստ երևութին, անշարժ անպ շրջապատելով սարբ, առ փոքր փոքր տարածում որպէս թէ մի խաւար վարագոյր ծովածոցի և ծոցի վերայ: Անդադար թափումէ Նէապոլի և նորա շրջակայքի վերայ մի նուրբ մոխրափոշի և ծածկումէ բոլոր բուսականները և ծառերը, բոլոր աները և փողոցները: Երեգակը երևումէ անձառագայթ և անփայլ, ցերեկի պայծառութիւնը դժուար թէ հասարակ էր առաւօտեան միտփայլ արշալուսին: Մի անձածկոց լուսաւոր շաւիղ ամենահեռի արևմտեան հորիզոնի վերայ կրկնապատիկ տալիս էր ժողովրդին զգալ թէ ինչ խոր խաւարի մէջ թաղած էին ինքեանք. այս ահաւոր տըխուր տեսարանը անտանելի էր Նէապոլեցոց համար. ամենեցուն վերայ յարձակվումէ մի տաղնապեցուցիչ խաւար փերաստութիւն, և անդադար թափոր առնելով քաղաքի մէջ աշխատումին հաշտեցնել բարկացած երկիւրը. բայց այս չէր այն դիւրագրգիւ ժողովուրդը որ աղմուկ բարձրացնելով, խաչ ու խաչվառ ձեռքն առած վաղվազէր փողոցների մէջ: Նէապոլի առաւել նշանաւոր գերդաստանքը մասնակից լինելով հանդիսաւոր և ծանրաբայլ թափորակատարութեանը, հառաչանքով և անբարբառ երկարածիգ շարքով զնումին խաչի հետեից, խաւարի միջոցը: Ապրումեն թէ ինչ բանի մտեցաւ սարից դուրս ձգած մոխիրը, նորան հանդիպել էր ահա մի մահարեր շունչ: Արջակայ պողարեր ծառաստանի կարծեցած կորուստը մի անխօս յուսահատութիւն էր բերում մարդերի վերայ, և կտաւ վարութիւնը մեծ դժուարութեամբ կարողացաւ հասկացնել ժողովրդին, թէ այն մոխրի բազկացական մասունքը վնասարեր չէին, և պողպէս հալածել նոցա երկիւղը: Այս մոխիրը աւելի թանձր և յաճախ թափվումէր սարի մօտ. սա մի գիծ հաստութեամբ ծածկե-

լով Նեապոլի ճանապարհը, հինգ դիժ հաստութեանով ծածկել էր հողը Պորտիչի քաղաքում, 9 դիժ Բեզինայումը և 15 դիժ լապլի մերձակայքումը: Նեապոլի մէջ մոխիրը տեսանլումը որպէս սև ու նուրբ փոշի, աւելի մօտ դէպ ի հրարուղի սարը, որպէս խիտազոյն աւազ զանազանելի մասնելով. և Վեզուզի վերայ ընկած էին փոքրիկ քարակոտորներ: Էրանխիմ հեղեղը շարժվումը դեռ ևս, բայց ծանրաբայլ և տեսանելի միայն, ամենավերջին ծայրումը: Մի կոշտ, պնդացած կեղև ծածկել էր հոտուն հեղեղը. այս հրանխիմի երեսը այնպէս շուտով ստուց, որ, 12 ժամ քաղաքի կործանմանից յետոյ, նորա բնակիչներն շատերը համարձակվեցան վերադառնալ խրեանց քանդած օվկաններն մէջ, որ փրկելն զոնէ այն սակաւ բաները որ դեռ ևս խնայած էր լուան: Այս բերեց բազրը, որ նորա ազատեցին քանի մի անձինք որ փակած լինելով մի վանքի մէջ, ի դուր օգնութիւն էին խնդրած այն մարդերից որ փրկութիւն էին գտել լապլի միւս կողմումը: Շատ տեղերում ճեղքվել էր լուան, արձակելով ներսից մի սաստիկ, ժահահոտ ազախթու գոլորշի. տեսանլումն լուսափայլ բոցեր ճեղքուած ի երկու կողմումը, լսելի էր մի անդադար և բոտ երևութիւն հեռուոր որտ, և արագ արագ փայլատակութիւնք սև մոխրատարախներն մէջ, որ սարիցը վայր էին գլորվում, լուսաորումն աղջամուղջ գիշերը: Ցեսանումն որ այս ահագին մոխրանխիմը սարի լոյն բերանից դուրս էր թաւալվում կատարի վերայ, տեսանումն մի մեծամարմին թանձր և բոլորակաձև անոց բարձրանալով ներսիցը և ուռլելով բոտ երևութիւն, քանի որ դէպ ի վեր էր գնում: Խոշոր ծանր ծանր ժայռակոտորներ շարունակաբար ուղղահայեաց վայր էին ընկնում ամպի ափերից դէպ ի անդունդքը: Առաջին ամպի քամակից հետևումը մի նոր անոց նոյն տեսիլներով, և այսպէս անհամարելի շատերը միմեանց հետևից դէպ ի վեր ջջվելով անչափելի բարձրութեամբ: Մի մեծ վտեմական տեսարան, շատ անդամ երևումը թէ բոլոր սարը սլակաւորված է այսպիսի ամպերով. սոքա առ փոքր փոքր շքանումն: Մեծամեծ քարանխիմեր ուղղահայեաց ցած էին գլորվում սարակոտորն կողից, աւելի նուրբ մոխիրը խլումը ու ամանումը հողը և ջրվումը դաշտի վերայ: Մի քանի ժամից յետոյ մոխիրը դարձեալ ծածկեց բոլոր երկինքը, և դիշեր ու ցերեկ, քնուկս յառաջ, ոչինչ սահմանով չէին բաժանվում միմեանցից: Ցերեկով տեսած էին մի քանի թռչլ երկրաշարժութիւնք: 18 ին, դիշերի 2 ժամուն, մի նոր սաստիկ զարկողութիւն ահ ձգեց ժողովրդի վերայ, որ անցած օրերի սասանեցուցիչ տեսարաններովը բնացած, չէր ընդունակ զգալու աւելի փոքր սրտահարներ: Այս խնդիւնը աւելի զգալի էր Պորտի-

չի, Բեզինա քաղաքներն մէջ և այլ տեղերում որ աւելի մերձակայ էին սարին: Օրը լուսացած և շը լինելով ևս այնքան մոխրապատ, կարելի էր տեսնել Հիանալով, որ հրաբուլի սարի արտանը փլատակվել էր: Անդադար ներքին մոխրաբծակութիւնք այնքան մաշած ու աղաւած էին սարի ներսը, որ նա կարող չէր աւելի երկար պահել իւր վերայ գազաթը: Ըստր ծանրութիւնը փուլ եկաւ սարաբերանի մէջ: Առաջին կատարի փոխանակ, տեսանելի էր այժմ մի շեղ բնացած գրութիւն դէպ ի ծովակողմը: Բայց այս անցքովը շը վերջացաւ դեռ ևս անդադար մոխրաթմախութիւնը, Թւեպա Նէսպօլսուսը, Պօրտիշի և այլ շրջակայ տեղերումը փոքր էր իջանում մախիթ, քան թէ անցած օրերի մէջ, և արեգակի թոյլ կարմրափայլ դեմքը մի քանի ժամ երևումը փոշով պատած ոչի մէջ, բայց սարա հակառակ, աւելի մնասփեցան այն սահմանքը որ սարի արեւելան կողմումն էին: Մի արեւմտեան հողմ ծովակողմից տանելով Հեռացնելով սարաբերանից գուրս բարձրացած նիւթը, կրկնապատիկ կատաղութենով փիմեցնումը Մամնա, Օտայիանո, Նօլա, Գաղերտա քաղաքների վերայ: Մինչև Ապրիլինեան սարերը պատած էր իւր գիշեր, բոլոր Ալգուզը, ասես թէ, կամենումը փոշիանալ և ցած խորտակվիլ: ամպերը պտտաւելելով և ջրհեղեղ պատճառելով, խանձումն ոչի մէջ մոխրի հետ, որ մի մածուն խմոր դարձած, թափումը բոլոր երկրի վերայ և նստումը տունկերի և ծառերի քրնքուշ ճիւղերի վերայ: Բոլոր անկած բաները այս պողաւէտ սահմանի մէջ ջարդվեցան այն անտանելի ծանրութեան տակ: Շատ տանիքներ այս տեղերումը խորտակվեցան և բնակիչքը ստիպված էին փրկել իւրեանց կեանքը շտապ փախչելով սարերի մէջ: Այսպէս ահա, մի ժամանակ, կործանվեցան շերքուլանում և Պոմպիլի քաղաքները: Եւ այժմ արդարեւ տեղիք կար երկիւղի, մի գուցէ թէ աւելի տխուր լինէր պատահարը. ըստ որում այն միջոցին, երբ որ ջրաշագան տեղը և մոխրը, 18 և 19 թուականի մէջ, ցած էին իջանում այնպիսի թանձրութենով, որ անթափանցելի էր ցերեկի պայծառութեան համար, վայր էին յարձակվում և սրընթաց ջրհեղեղք սարի կողիցը: Սրա և ամենասաստիկ զօրութեամբ թաւալումն իւրեանց առաջև լուսնաման քարեր և ծառեր, և ծածկումն զաշտը ահային ժայռակոտորներով: Եռնիսի 20 ին գիշերի մէջ միայն գլորվեցան հինգ այդպիսի հեղեղներ սարի վերեկից. երեք անգամ օրի մէջ նորոգվեցաւ այդ ապականիչ տեսարանը, վերջին անգամը, կրկնապատիկ սաստկութենով և զօրութենով: Ալգուզի բոլոր շրջակայ սահմանը ակերվեցաւ այս ջրհեղեղով. ամենայն փոքրիկ ամպ, ասես թէ, բռնի քարշումըր դէպ ի սարի ծայրը և շրջապատելով սարի

կատարը, խեղճն զէպ ի ցած էին վազում ջրերը, պատասուձին անտաններ, փողոցներ, կամուրջներ և ակերուձին տներ ու գաշներ: Աւտարադդ բնակիչքը ամեն կողմից շրջափակած էին մահու վտանգներից. ամենայն բոպէ ստիպված էին նորա պատրաստ լինել փախչելու շուտով: Բակօ, Յամա, Օտտայիանս, Տորրէ զէլ Անունչիասա քաղաքները սյսպիտի կերպով զրկվեցան իւրեանց աշխատսիրութեան արդիւնքից, տանց խմանալու թէ երբ կարող էին փոխարինել ուրդ քնասը: Նոյն խկ ակերածքը որ հրահասութիւնը պատճառել էր Տորրէ Վրեկչի մէջ, զժուար թէ այնքան կործանական և սաստիկ էր, ինչպէս այն զարհուրելի ջրհեղեղի ակերածքը, որ հրարուղի սարը վայր թափեց երկրի վերայ: Աս սակաւ սակաւ փոքրացաւ զուրս փրսխած մոխրի բազմութիւնը. այժմ տեսանելի էր, որ մոխրի հետ միասին բարձրանումէին լեռնաբերանից գոլորշիղէն ամպեր որ ցնդվումէին ոգի մէջ: Դեռ ևս Նէպոլսի մէջ գիշերները անդադար լուսաւորութեան անհամար փայլակներով, որ մոխրային ամպերի միջից անընդհատ զուրս էին վազում. մի սաստիկ, բայց ոչ թուալազոր որտա համակից էր զոցա. այս պատճառով դեռ ևս քանի մի սր տեւեց սարի թնդիւնը: 24 և մանաւանդ 26 թուակ. զարձակ ցած իջաւ շատ մոխրի զէպ ի Նէպոլսի կողմը. բայց երբ որ բնակիչքը տեսան նորան, բարձրացրեցին ուրախութեան ձայն, որովհետեւ զաչէր այլ ևս թուխ մոխրազոյն, կամ թէ սև, այլ բաց մոխրազոյն, և վերջապէս համարեալ թէ ամենեին սպիտակ: Բոլոր հրարչութեանների միջոցում տեսած փորձը ուսուցել է, որ այսպիտի մոխրը վերջին մրուրն էր սարի խմորուն ներսի մէջ, որ և զորանով սովորաբար վերջանումէր բոլոր հրահասութիւնը: Աս այս անդամս չը սխալվեցան. այսուհետեւ ծուխ էր բարձրանում միայն Աեղուձից, և մոխրի էր իջանում քանի մի օրերով, բայց Յուլիսի 8 թուականին վերադարձաւ Նէպոլսեան բաղաւոր եզանակի սովորական պայծառութիւնը: Տորրէ զէլ Վրեկոն միասնեղամ բարձրացաւ իւր ակերակների միջից, վերադարձած բնակիչների անձանձիր աշխատսիրութենով, շազարաւոր մարդիկ ցրուած էին գաշտերումը, որ ծաւերի տերևները և ճիւղերը և ողկուղենիքը յտակեն համատարած մոխրիցը: Նէպոլսի ժողովուրդը միասնեղամ սկսեց մեծ բազմութեամբ դիմել զէպ ի փակած թատրոնքը, և այժմ, ինչպէս յտառջ, կատակերգակի խօսուածքը լսելու համար հաւաքվեցաւ անգործ ամբողջ փողոցների անկիւնների մաս:

28. Մոլիսի քաղաքները 1840 թվականին, Յուլիսի 20 ր.

Թեպետ բոլոր եւրոպական բնազնիքը, որ քննած էին Մասիս սարի շրջակայքը, տեսած են այն տեղ հրարչութեանից զոյացած և

յետ մնացած նիւթեր, բայց Հայաստանի պատմագրութեան մէջ ոչ մի վկայութիւն պահած չէ Մասիս սարի կրակախիտութեան համար, Մի մեծ երկրաշարժութեան մասին, որ Աժդահակի, Մարաց թագաւորի ժամանակումը, պատահած էր այս սարի մաս, որ և պատճառած է փլատակութիւնը, թեպէտ խօսուեւ Մովսէս խորենացին իւր պատմութեան մէջ, գիրք Ա. գլ. 30, բայց ոչ այնքան հաստատապէս, այլ միայն լսած լինելով համբաւից: Կոչն խորենացու բերանից լսուեմնք, գիրք Բ. գլ. 60, թէ Արտաշէս արքայի որդի Արտաւազդը որ թագաւորած է Հայաստանի վերայ 129—136 ֆրեստոսից յետոյ, մի վատարարոյ իշխան լինելով և միանգամ, Արտաշատ քաղաքից գուրս Գին գետի աղբիւրների մտակալքումը, վայրերն ի սող և էշ որսալով, յանկարծ իւր ձիու հետ վայր ընկաւ մի խոր փոսի մէջ և անյայտացաւ: Այս դրուցից գուցէ թէ պիտոյ էր իմաստասիրել թէ, երկրաշարժութիւն լինելով Մասիս սարի շրջակայքումը, գետերը պատռուցեալ և կուլ տուց Նրատաղդին, ըստ որում, ինչպէս Գողթն աշխարհի երզնցոյքը առասպելաբանուեմն, Արտաշէս հայրը անէծք էր գրած նորա վերայ:

Ի՛նչնէզս զերմանացին որ տանեութեանը զարու ելբումը ճանապարհորդած է հովհաննէս աշխարհների մէջ, հաստատուեւ իւր յիշատակաբանումը (հովհաննէս շ. 1, եր. 28), թէ նա հովհաննէս սարերի աւելի բարձր տեղերից տեսած է Մասիս սարի զարհուրեցուցիչ լեռնաբերանը, որի միջից 1783 թուակ. Յունվ. 13 ումը և Փետր. 22 ումը գուրս է յարձակված որպէս թէ ծուխ և կրակ, բայց այս տեղեկութիւնը լինելով մի օտարամիտ և պարծեցող հեղինակի գրքից բղխուած, ինչպէս յայտնի է Բէյնէզսը, չէ երևում բաւական արժանահաստ: Ըստ որում անհասկանալի բան է, թէ ինչպէս կարելի էր երեսուն աշխարհագրական մղոն հեռաւորութենից ոչ թէ միայն Մասիս սարի ձեղքուածը տեսանել, այլև գորս տեսութենից զարհուրել: Այս բանիս հակառակ է քէր Պատուր ուսումնական ճանապարհորդը որ նշնպէս տեսած էր Մասիս սարի վաղաժամանակեայ հրաբխութեան մնացած նշանները, ըստ որում այդպիսի արժանի ծանօթութեան անցքի յիշատակը պիտոյ է պահած լինէր Էջմիածնու վանքի ժամանակագրութեանների մէջ, եթէ ստոյգ էր անցքը: Բաց ի դորանից, Բէյնէզսի տեսած իրողութիւնը չէ հաստատում ոչինչ միւս մարդու ականատես վկայութենով: Եթէ միտ դնենք Մարիեր անգլիացի ճանապարհորդի և Գօրպատեան ուսուցչապետ, այժմ հանգուցեալ, մեծանուն պարբոսի նկարագրութեանը այն առանձին երևոյթներն մասին որ հանդիպուեմն Մասիս սարի մտակալքումը, այլև այն զեղեցիկ պատկերին որ նկարագրուեւ սարը, յիշուի հաւա-

նական էր երևում հարծել, թէ Մասիսը կարող էր հին հրաբուխի սար եղած լինել: Նա վեր է ջղված որպէս հսկայամարմին կոնոնանե սար, որ մի լայն և ընդարձակ դաշտից զեղ ի վեր բարձրանալով, ճշգրտէս որոշվում և հոմանասորում միւս շրջակայ բարձրութիւնք, այլև ոչինչ յարարերութիւն շունի միւս նորան համեմատ սարացօտու հետ: Այս յատկապէս հրաբխական ձևակերպութիւնը շատ առիթ է տալիս մեզ համեմատել Մասիսը Էանայի, այն և Չիմբորասայի հետ: Մորիերի ծանօթութեանը համեմայն է պարոն ֆօն Գրէյ-գանդից առած ձևակերպութիւնը Մասիս սարի: Մորիերի ստորագրութիւնը փորրիկ Մասիսի, որ մի աւելի փոքր կոնոնանե սար է, նստած աւելի մեծ Մասիսի կողքին և իւր կերպարանքով աւելի նման նորան, նշնդէս իրաւացի պատճառ է տալիս մտածելու թէ փոքր Մասիսը գոյացել է հրաբխութեանից պատահած կողմնակի փլատակութեամբ:

Սաստիկ երկրաշարժութիւնք հին և նոր ժամանակներումը այնքան յաճախ պատահած են վերին Հայաստանի մէջ, ինչքան Ասիայի այլ աշխարհներումը: Գիւրոս գը Վոնդերեօ իւր ճանապարհագրութեան մէջ, գիրք 3, երես 475, հաստատվելով սուրբ Եփրեմ Եղեճացու վկայութեան վերայ, պատմում թէ ահա 341 թուականին Քր. յետոյ, մի երկրաշարժութիւն Հայաստանի սարերը պատռելով խախտել է իւրեանց տեղերից և ապա միասնդա՛մ զարկել է միմեանց, ահարկու խռովութիւնք գործելով, բոց և ծուխ արձակելով, բոց յետոյ զգրգված սարերը դարձած ու ամբացած էին իւրեանց տեղերումը:

Այժմեորդ զարու մէջ պատահած մի շատ սոսկալի գեանաշարժութիւն, Ստեփաննոսի, Սիւնեաց 22 երորդ եպիսկոպոսի մահուց յետոյ, աւերեց բոլոր Աւայաց ձոր ասած տեղը բարձր Հայաստանի մէջ. քառասուն օր խաւար պատելով աշխարհի վերայ, ապա մի ամբողջ ձոր վեր ի վայր կործանվեցաւ, և նորա աւերակների տակ թաղվեցան 10,000 մարդ: Եւ 1319 թուականին, ինչպէս յիշատակութիւն է լինում Հայոց պատմագիրների մէջ, եղած է մի սաստիկ գեանաշարժութիւն, մեծ մեծ փլատակներ պատճառելով. և թէ այսպիսի շատ անգամ պատահած բնական անցքեր ինչքան ասպակնութիւն են բերած բարձր Հայաստանին, այդ բանը հաստատում են յանկարծ վեր ի վայր դարձուցած քաղաքներ, որպէս բոլոր Ենին, Երուանդակերտի, Երոզանդաշատի և Աղզրի եկեղեցիքը և միւս, երկաշարժութեաննով խորտակված, փառասօր շինութիւնք, որպէս Տրտագ թագաւորի ամրոցը:

Ինչպէս գրում է վերոյիշեալ Գիւրոս ճանապարհորդը, մեր ներ-

կոչ գարու 1827 թուակ. Նոյեմբ. ամսուամբ, նոյն կերպով կործանվեցան Կեչաուս վանքի գմբեթը և միւս շատ եկեղեցիք Գեղամայ (Գեօկչայ) ծովի շրջակայքումը, որ գլխաւոր տեղն էր, ուր պատահած է ու թերորդ գարու երկրաշարժութիւնը, Բայց այս բոլոր պատահարներից ամենէն անփեսա են մնացել այն երկու հին վանքերը, որ առաւելագէս կից էին Մասիս սարին, այսինքն սուրբ Յակոբի և Եկոսի վանքը, այն և Էջմիածնի պատրիարքանիստ վանքի վաղածամանակեայ շինուածքը, չորրորդ, հենգերորդ և վեցերորդ դարերից բնդդիմացել են ամենայն կործանական պատահարների, թէպէտ շատ հաւանական էր, թէ այդ սահմանները գտանված էին այն զեանաշարժութեան գծի մէջ, Մասիս և Ելաղեօզ սարերի միջոցումը:

1840 թուականը, ցաւելի է ասել, որ խաղաղութեամբ անց չէ կացել այն բարձր սահմանների վերայով, պատճառ, մի այնպիսի ահարկու երկրաշարժութիւն է հանդիպել նոցա, որ մի զարհուրելի փլատակ լինելով Մասիսի ձորումը, ոչ թէ միայն կործանվեցան սուրբ Յակոբի վանքը և Եկոսի գիւղը իւր բոլոր բնակիչներով, այլև այդ երկրաշարժութեան լայնատարած սաստիկ և կրկնապատիկ թնդիւններովը աւերվեցան շատ տեղեր ու սահմաններ, սկսեալ Երփա Չայից մինչև Կասպից ծովը, հարիւրաւոր մարդիկ ոչնչացան, և շատ տեղերում գետնի երեսը վեր ի վայր զարձաւ, որպէս և ջրերի ընթացքը կերպարանափոխ եղան:

Եւս երկրաշարժութեան հետեանքը քննելու և իմանալու համար, Կովկասու գաւառապետ Գոլոպին առաջինը պատուէր տուեց հանքարան Մայկուր Վսկորոյնիկովին, որպէս և հանգուցեալ մեծանուն ձեմական Պարբոտը (հայրը այն Պարբոտի որ վեր ելաւ Մասիս սարի գլուխը) Ս. Պետրբուրգի կայսերական ձեմարանի հանդիսումը ճառ կարդաց և սորանով պատճառ տուեց ուսումնականների ժողովին վճիռ կապելու, որ բանագէտ մարդիկ ուղարկվելով, գիտնականարար և ճշգրտագէտ քննէին այն մեծատարազ բնական անցքը: Եւս գործին կատարումն տալու համար, 1843 թուականին, կայսերական հաւանութեամբ պատուէր ստացաւ Գորպատու համալսարանի հանքարանական ուսումնապետ պարոն Երիհը, որ սկսեալ 1844 թուականից 9 մինչև 10 ամիս ճանապարհորդէ Կովկասու կողմերումը այն խորհրդով յատկապէս, որ քննէ բարձր շայտատանի վուլկանեան ձեակերպումիւնքը և երկրադրական տեսիլները, և մանաւանդ այն սարազօթիքը որ փակումն իւրեանց մէջ Մասիսը և Ելաղեօզը:

Պարոն Երիհի քննութեան արդիւնքը զեռ ևս հրատարակված չեն, գոնեայ մէջ ծանօթ չէին. այս պատճառով ծանուցանումնք այս տեղ Մայկուր Վսկորոյնիկովի յայտարարութեան մէջ դրած գըլ:

խառը գիտելիքը որ հրատարակված էին Ներքին գործերի Նախարարութեան օրագրի մէջ:

1840 թուականին, Յունիսի 20 ումը արևամուտի միջոցին հանդիպեց այն երկրաշարժութիւնը որ Եկոսի գիւղը իւր բոլոր բնակիչներով, սուրբ Յակոբի վանքը և Սարդարի ամառանոցը լցրեց և ծածկեց Մասիսի արտեանից ցած խորտակված ժայռերով, հողով, քարով և սառցակոտորներով: Մի և նոյն ժամանակին վայր թափվելով ձիւնի ջուր, իւր տղմալից հեղեղներովը պատեց ամենայն տեղ և աւերեց բոլոր ույզիքը և դաշտերը մինչև 10 վերստ տարածութեամբ: Նոյն օրին 7 ժամուն, Շարուրի սահմանի մէջ Երասխի (Երազի) մտա, Մասիսի արևելեան կողմումը քանդվեցան 3137 տուն իւրեանց պատկանեալ երկրորդական շինուածներով, և սպանվեցան 33 մարդ և 353 կոտոր անասուն, և պատճառվեցան աշխարհին փեսաներ մինչև 43,929 մանէթի, Նոյն միջոցումը, աւելի հեռի դէպ ի հիւսիսակողման արևելք, Երասխի և Կուր գետերի մէջ տեղումը, Ղարաբաղի գաւառումը, ինչ տեղ գտանվումէ Հուշա ամրոցը, մի բոպէ կատաղութեամբ ներգործեց երկրաշարժութիւնը: Մի եկեղեցի և 169 տուն կործանվեցան, Տաթևայ հնաշէն վանքի պարիսպը ձեղքվեցաւ և քարաժայռեր վայր գլորվեցան Շինգար գիւղի մտա: Եւելի հեռի, դէպ ի հարաւակողման արևելք, Երասխաձորից ցած, Կասպից ծովափի մտա Լէնթորանումը և քաղիշինի խանութեան մէջ պատահեցին երեք սաստիկ թնդիւնք, տեւելով աւելի քան թէ մի բոպէ, բայց առանց մեծ փեսա հասուցանելու: Մի և նոյն ժամանակումը և Երասխաձորի սահմանից դուրս, դէպ ի հիւսիս, Ելէքսանդրոպոլի (Գումրիու) և Թիֆլիզի մէջ իմացվեցաւ մի երկրաշարժութիւն, բայց առանց փեսա: Աեց հետեւեալ օրերումը մինչև Յունիսի 26ը, բոլոր Սուրմալիեան սահմանումը, այլև Մասիսի մերձակայ գիւղորայքումը զգումէին ամեն օր մի թեթեւ երկրաշարժութիւն երկու կամ երեք բոպէ տեւելով:

Հունիսի 24 թուականին, կրկին անգամ պատահեց մի փլատակ Մասիսի վերեւից, որով ամբողջ ժայռակոտորը, ահագին ձիւնակոյտք և ջրհեղեղք սաստիկ թնդիւնով և շտապ տաղնապով վայր թաւալվեցան և ոչնչացրեցին ամենայն բան, ոչ հետք և ոչ նշան թողլով այգիներէից և արտերից և ծածկելով 20 վերստի տարածութիւն: Եյս փլատակից, Մասիսի ոտքին դրած գիւղերի, այսինքն Երաւիտի, Սիրբոկանի, Երազանի և Զրթլուկի բնակիչները զրկվեցան շատ տներէից, և թեպէտ փլատակը չը հասաւ նոցա գլխին, բայց տղմալից ջրհեղեղը աւերեց նոցա դաշտերը:

Մայիսի Աստորայնիկովի աւելի ճիշդ քննութիւնը տալիս է մեզ այս մանրամասնեայ գիտելիքը որ արժանի են ծանօթութեան:

Երկրաչարժութիւնը սկսվեցաւ ԅունիսի 20 ին, 6 ժամուը եւ 45 րոպէին Մասիսի վերայ եւ տեղը երկու րոպէ, փոփոխակի թնդիւնները լինելով գետնի տակ եւ ալիքանման տարուերութիւնք երկրի: Եռաջին շորս զարկուածքը ստորերկրեայ թնդիւններով սկսեալ Մասիս սարիցը գնացին զէպ ի արևելեան հիւսիսակողմը եւ իւրեանց ճանապարհէի վերայ կործանմունքը եւ սասանութիւն տարածելով, այն եւ Երևանի եւ Ղախիջևանի սահմաններումը որ դտանվումն այս պատահարի ընթացքի մէջ:

Ղախ եւ յառաջ Երասխադաշտը զէպ ի վեր մինչև Կարասու գետը եւ Երփաշայի բերանմուտքը Երասիսի մէջ, մի վերստ հեռուութեամբ գետածորիցը, ստացել էր ձեղքուածներ, որ գետի ընթացքի հետ զուգահաւասար երկայնվելով տեղ տեղ քաջուած էին, մինչև երկու ձող լայնութենով, որ եւ փակ էին միւս տեղերում: Մի եւ նոյն միջոցին տեսանվումին այն տեղ գետնի պատասուածներ շատ, որոնց միջից դուրս էին վազում քաղցր ջրի հոսանքներ, շատ անգամ որպէս ահագին շատրուաններ, զէպ ի վեր նետելով առատ գետաւաղ եւ այրող նիւթեր: Նոյն իսկ Երասխաձորի խորիցը դուրս թափվեցան այլալիսի մարմիններ, եւ սորանով Երասիսի ջրերը այնպէս ուժգին շարժվեցան, որ տեղ տեղ եղերներից դուրս ցայտվեցան կամ թէ զէպ ի վեր բարձրացան եւ գետածորի մէջ տեղումը յետ թողեցին փողովակաձև խորութիւն: Յորա հակառակ, միւս տեղերում գետածորը բոլորովին ցամաքեցաւ երկրաչարժութեան միջոցին, կամ թէ ետացող ջրի պէս խռովութիւն գործելով, կուտակվեցաւ ջրով եւ բարձրացաւ ստորահան գրութենից դուրս: Ճշդապէս քընելով այս տեղեկութիւնքը, պիտոյ է ասել, թէ արդարև Օգոստոսի վերջումը տեսանվումին դեռ եւս շատ քաջուածներ Երասիսի գետածորումը, որոնց միջից դուրս էին թափվում ջրեր: Նոյն տեղումը կային եւ ձեղքուածներ, որոնցով գետի ջուրը ցած իջանելով մի քանի ժամանակ թաքչումը հողի տակումը: Մասիսի հարաւային կողմը եւս չը մնաց առանց երերանքի: Մակուի սահմանումը շինուածների տակի մեծ մասը խորտակվեցաւ, Բայազիդումը աւերվեցան շատ տրներ եւ ամրոցը իւր փառասոր շէնքերով: Եւ Քարվիդումը, պյսիքն, Բարմա ծովակի արևելեան կողմումը զգացին մի եւ նոյն երկրաչարժութիւնը, Բայց ամենից առաւել միաս հասաւ: Հայաստանի բնակիչներին: Ահուրի գեղի 1000 բնակիչներից մինը եւս կենդանի չը մնաց: Ղախիջևան եւ Երևան քաղաքները մեծապէս աւերվեցան, որպէս համարեալ թէ բոլոր շրջակայ գիւղորայքը: Շարուրի սահմանումը պատասովեցաւ գետինը, ջրային եւ աղմային հեղեղներ դուրս ձգելով, կամ թէ շատրուաններ արձակելով, որպէս Երասիսի ձախակողման

եղբուժը: Կարչալու, Ալիշէր և Կարա Հասանլու գիւղերին առաւելապէս ֆեոս հասաւ: Ազարակներուժը հաշվումէն 6578 աւերված տունք, 92 աղօրիք, շատ եկեղեցիք, Նախիջևանուժը 779 տունք, երկու եկեղեցի, հինգ մկիթ, Օրդուբազուժը 466 բնակարանք որ կործանված էին: Այս պատահարքի ֆեոսակարուծիւնը զեռ ևս չսփաւոր եղաւ այն պատճառով, որ երկրաշարժութիւնը հանդիպել էր երեկոյեան պահուն և ժողովուրդը, աշխարհի սովորութեան պէս, բացօղեայ (դուրսումն) էր, և այս գիպուածով, ոչ աւելի քան թէ 50 մարդ մահ գասն իւրեանց բնակարանների աւերակի տակ, թեպէս շատերը ֆեոսվեցան և իւրեանց բոլոր զոյքից զոկվեցան, կորուսանելով իւրեանց տունքը և վարուցանքը: Նախիջևանի սահմանուժը մի քանի ժամանակ ցամաքեցան աւելի քան թէ 50 աղբիւրներ, նոյն միջոցուժը միւս աղբիւրներ քանի մի որ գուրս էին բղիւժ մի պղտոր կամենաղոյն ջուր. միւս այլ աղբիւրներ առատահոս գտանվեցան քան թէ յառաջ էին, այլև գոյացան ամենեին նոր աղբիւրներ. Զինդիլա անունով սարի մի ձեղքիցը յառաջացաւ մի այգպիտի նոր աղբիւր, և Աարգարապատի շրջակայքուժը երկու աղբիւրք կրկնապատկեցին իւրեանց ջրի առատութիւնը:

Այն տեղուժը, ուր Արփաշայր և Երասխը միանումն, Կարա Հասանլու գեղի մտա, այսինքն Ախուրեան ձորի բացուածուժը, նոյնպէս շատ ահարկու և կործանական էին երկրաշարժութեան ներգործութիւնքը, ինչպէս յառաջուց մի և նոյն տեղուժը երկրաշարժութենով վեր ի վայր էին կործանված Թալիշ և Անի քաղաքները, Նախ և յառաջ գիւղի բնակիչքը զգոցին գետնի ցնցողութիւն և երերումն և ահարկու որոտպին թնդիւններ որ, ինչպէս երևումը, յառաջանումէն շրջակայ սարերի վերևից, Տեսանումէն ժայտեր և քարեր զէպ ի վայր թաւալվելով սարի կատարներից. միւսանգամ շարժվելով երկիրը, հողաշէն տունքը ճայթելով վայր կործանվեցան և կենդանի մնացածների աչքի առաջև շքացան, որպէս փոշեղէն ամպեր: Ապա պատասովելով և ձեղքվելով գետինը, դուրս ձգեց ջուր, աւաղ և հրեղէն լուցկիք: Գեռ ևս կենդանի մնացածքը ողբ և սուգ բարձրացնելով շտապեցին փախչել զէպ ի աւելի բարձրանիստ տեղերը, բայց ամենայն տեղ հանդիպելով ձեղքուածների, ջրհեղեղների և աւերած շէնքերի, կապվեցան կաշկանդվեցան, և անհնարին յուսահատութեան մէջ կարծումէն թէ հասել է աշխարհի վերջը: Ակոռի գեղից մի մարդ ևս չէ մնացել որպէս կենդանի վկայ այս պատահարներն: Իսկոյն, առաջին գետնաշարժութեան միջոցուժը, ահագին լեռնաձեղքի զէպ ի վայր պատերիցը ցած գլուխվեցան ամբողջ ժայտեր, որ ահաւոր ճայթիւնով և ստեպի ձիւնա-

կոյտերով ներքև թաւալվեցան 6000 ոսնաչափ խոր ձորի մէջ, կայ-
ծակի արագութենով տարածվեցան ձորի երկայնութեան վերայ և մի
րոպէի մէջ ծածկեցին 7 վերստ տեղ, Ահագին սասցակտորներէ և ձիւ-
նակոյտերի տակ թաղվեցան գիւղը և վանքը, ոչ հետք մնալով և ոչ
նշան, Բայց սառուցի կտորները առ սակաւ սակաւ սկսանելով հալ-
վիլ, քարերի կապակցութիւնը քանդվեցաւ, և Յունիսի 24 ին, առա-
ւատու 9 ժամ. սարի փլատակները, որ ասես թէ կախված էին միայն
ձորի վերայ, անհաստալի արագութենով գլորվեցան ձորի երկայնու-
թեամբ դէպ ի կարասու զեար, այնպէս որ երկու րոպէի մէջ սառու-
ցի կտորներ և ձիւնի կոյտքեր, միաւորված ապականիչ տղմային հե-
ղեղների հետ, յառաջ խաղալով մինչև 20 վերստ աւերեցին մտա-
կայ Երասխադաշտը: Այս տիղմը գոյանալով այն հեշտալոյժ շեշտ-
քարից (տրախիտից) որ Մասիսի հրաբուխական կոկորդի մէջ գտան-
վում, որ և շուտով ներս ծծելով ջուրը, խեղչն փխրում և գտ-
նում կապտագոյն հեղանուտ կաւտիղմ, գիւղի ցած կողմից և Սար-
դարի ամարանցի ներքեից արձակեց 15 մինչև 20 ձող բարձրու-
թենով կաւեղէն հեղեղներ, որ 12 վերստ լայնութեամբ ծածկեցին,
բոլոր հողը տղմային հասանքով, կարասու զեար, ըստ մեծի մասին
խցվեցաւ, և այս պատճառով իւր վերին ընթացքումը ջրհեղեղ պատ-
ճառելով վտանգաւոր էր այն պահագան կողակներին որ կային այն
տեղ: Տղմային հասանքները անդադար դէպ ի ցած էին տանում այն-
քան ահագին բազմութիւն պատառոտած ու ստատկած մարդու և զա-
ղանի մարմինների, մինչև երկար ժամանակ կարա Սուի ջուրը ան-
գործածելի էր մնում: Ահաւալ Յուլիսի 5 ից զաղաբեցին այն տղ-
մային հեղեղքը և ցամաքեցան վերջապէս: Խորափոս Ահուի ձորի
լեռնակատարը ներքուստ լայնացած էր կրկնապատիկ, և բաւական
շատ բարձրացած էր մանուսանդ արևելեան կողմից: Մասիսի գլխի
ձիւնանխտը աւելի ցած էր իջել քան թէ յառաջուց էր. սուրբ Յա-
կորի վանքից մի քար ևս չէ տեսանվում. մտտակոյ մարգագետինքը,
ինչ տեղ մնած են 30 տուն քուրդեր, որ բնակումին այն տեղ,
ծածկած են կաւաղմով: Այն տարածութեան վերայ, որ պարզվում
յառաջուց եղած վանքիցը մինչև Ահուի գիւղը, բարձրանումն շար-
քով կանոնաւ սարագմբեթներ ժայռի և սառուցի կտորներից, որ
զաւրջ ժամանակներումը ողողվելով արջապային ջրերից, որ ժողո-
ված էին ձեղքերի մէջ, ցած կը թաւալվին մի երկրորդ փլատակի
քամակից: Աւերակները այն շինական աների որ վերստին աղատվե-
ցան այն տղմային հեղեղներից, պահպանվել էին յայտնապէս, Բայց
նոցա ներսը լցված էր փլածով ու քարերով. շատ տուներ խեղչն
դուրս փորեցին յափշտակասեր քուրդերը որ այս տեղ կողուպտեւ է-

ին որոնում: Այս աների պատերը կանգնած մնալով և նոցա առա-
տադի գերանները վերևից դեպ ի ցած կոտորվելով, այլև նոցա մը
ներս լցված նիւթքը ապացուցանումն որ փլատակը եկել է այս ան-
բազդ տեղի վերայ ոչ թէ կողմնակի, այլ ուղղակի վերևից:

Հունիսի 20 ին պատահած երկրաշարժութիւնից յետոյ սասանու-
թիւնքը զգալի կերպով տեւցին մի ամից աւելի, այսինքն մինչև Յու-
լիսի 28. բայց սորանից մինչև Սեպտ. մինը էին միայն թեթև ե-
րերմունք թոյլ ստորերկրեայ լինդիւններով, որ զգալի էին Շարու-
րի սահմանումը: Սեպտ 21 ից մինչև 28 Յունիսի, Նախիջևանի
սահմանումը այնքան սաստիկ էին երկրաշարժութիւնքը, մինչև որ
ահա փառաբան շինութիւնքը ամենին կործանվեցան գորանով: Սուր-
մալիու գաւառումը, Յուլիսի 23 ին զգացին երեք ցնցողութիւնք,
առաւօտու 10 ժամուն, ճաշից յետոյ երեք ժամուն, և երկկոյի 5 ին,
ճաշից յետոյ 3 ժամուն պատահած ցնցողութիւնը զգալի եղաւ նոյն-
պէս Իզդիր անունով իջևանի շրջակայքումը: Միտ գնելով երկրա-
շարժութեան ընթացքին, պիտոյ է ասել որ նորա ներգործութիւնքը
ու ամենայն տեղ հաւասար էին: Օրգուրագ, Նախիջևան և Սուրմա-
լի լեռնավայրերումը աւելի սաստիկ էր նա, քան թէ զաշտերումը.
սարագլուխների ժայռանիւթքը աւելի սաստիկ շարժվեցան քան թէ
փուխր կաւեղէն և աւազեղէն նիւթքը: Այն գիւղերը որ կան սա-
րերի բարձրութեան վերայ, Ալագեօզից մինչև Աղ մանկանը (Գեւե-
չայ ծովակի մօտ) թէպէտ զգացին սասանութիւնք, բայց սորա աւե-
լի թոյլ էին քան թէ Երասխաձորումը. բայց այնպիսի սահմաններ,
որ ամենին մօտ էին երկրաշարժութեան տեսարանին, անշարժ մնա-
ցին բոլորովին, զոր օրինակ Ելմիածնի վանքը: Այլև այնպիսի տե-
ղեր որ ամենին կից էին Մասիսի ոտքին և Կարա-Սուին, բոլորո-
վին ապահով են մնացած վտանգից, բայց սորա հակառակ, շատ ա-
ւելի հեռաւոր տեղեր փնասվել են: Այս բանի պատճառքը կռա-
գատումն պարուն Աւսօբոյնիկովը որ գերմանագէտ և գիտնաւոր Լայը
կարող է մի ըստ միովէ կարգաւ Բիթլիքը աշխարհագրի մասունի մը
այսպիսի մակագրով. «Die Erdkunde im Verhältniss zur Natur und Geschichte
des Menschen, » zehnter Theil, drittes Buch, West-Asien. Berlin, 1843. Եր. 513),
որ և աւելի պիտանի էր մի մասնաւորապէս բնափոսական գրքի մը
և բնագէտ ընթերցողների համար քան թէ այս մեր համառատ ճա-
ռի մը:

Այս վերջին սարափլակտակներից յետոյ ստում Մայիօր Աւսօ-
բոյնիկովը բացվել է ահա հրարուղիս Մասիսի սիրտը. նորա ճեղք-
ուածը բաղկանումն մի տեսակ սպիտակ և դեղնագոյն դաշտաքարից պըղ-
տոր կերպարանքով, խառն բիւրեղի և ծծմբախճի հետ, այլև երբեմն

ապակենման դաշտաքարից, որ կամ ամբողջ մեծ մեծ բոլորակներով կամ թէ ձեղքերով փոխվումը հասարակ կաւ և ըստ մեծի մասին ծծմբաթթու, այո՛ և ամենին ցամաք կաւի տեսակներ, Այս նիւթը, ինչպէս կարծումէ Վսկորայնիկովը, ջերմ շոգիներէ, ջրերէ և ծծըմբեղէն թթվութեան ներգործութենով գոյացել է այն ամուր շէշաքարից որ բաղկացնումէ սարի միւս մասը, որ և պարունակումէ իւր մէջ ապակեղէն դաշտաքարից և ծծմբաթթու բաղկացած բիւրեղ: Յիշատակեալ կաւը չէր իսկական կաւ, այլ մանուանդ թէ նման էր կիմոլիտեան հողին, մածնումէ լեզուին, պարարտ է, հողատեսակ է, երբ որ փշրվումը, սաստիկ ներս է ծծում ջուրը, ուռչում խմորի պէս, ապա դառնումէ մի մածուն կակղանիւթ, քրի մէջ կոխվելով, մասնատումէ շառաչելով, և քայքայվելով լինումէ ուռուցիկ քրնքուշ խմոր:

Այլ փոփոխութիւններ չեն նկատված Մասիսի վերայ, ուրեմն և նորա կատարը, ինչպէս սկզբումը խոսք է եղած, երբէք ներս խորտակված չէ: Արագեօզը, ինչպէս երևումէ, ոչինչ փոփոխութիւն չէ կրել, թէպէտ Պարբուր համարումը նորան հրարուդի կոնսնասար: Մի այլ հրարդիտական կոնսնասար որ մինչև այժմ ծանօթ չէր այնքան, այսինքն Աղ մանկանը, յիշատակումէ պարոն Վսկորայնիկովը, որի վկայութենով այդ սարը նստած է կարիի Չայի աղբիւրի մօտ, ուրեմն Աջմիածնից աւելի վեր, բարձրութենով համարեալ թէ հաւասար Ալագեօզին, և ցուցանումէ մի հրարդիտութեան բերան 300 ձող շրջաբերութեամբ: Սորանից դեպ ի հարաւակողմեան արևելք, Գեօքչայի ծովակի արևելեան եզրի երկայնութեամբ ձգվումէ մի սարադասի 50 վերստ տարածութենով, որի կատարների վերայ ուղիղ գծով բարձրանումեն 12 հրարդիտական կոնսններ, որոնց բերանները բացվելով 10 մինչև 15 ձող, ունին 100 մինչև 200 ձողաչափ շրջապատ, որ և ծածկած են հրահոսական նիւթերով, և տեղ տեղ ցուցանումեն լեռնային ծովակներ: Նոյն իսկ Գեօքչայի ծովակը չէ այլապէս գոյացած, եթէ ոչ, մի սարի գլուխ աւելի ցած խորտակվելով այս սարերի կողմումը և ուրիշ սարերի մէջ տեղումը, որ լայն ու արձակ շրջապատումեն նորան:

20. Այսինքն էրկուստեքնէ:

Սոր ժամանակների առաւել ահաւոր անցքերից մինը է այն երկրաշարժութիւնը որ 1755 թուականին, Նոյեմբերի առաջին օրումը յանկարծ և անակնկալ աւեր ու կործանութիւն բերեց Պորտուգալիայի մայրաքաղաքի վերայ: Այն ձախողակ պատահարի մեծութիւնը և պարունակութիւնը չափելու համար, պիտոյ է մի քանի

վայրկեան աչք ձգել այն քաղաքի վերայ, այս սարսափելի օրը վերայ հասանելուց յառաջ:

Ըննայն յորքը ի շատե տեղեակը աշխարհագրութեան գիտե որ Լիսաբոն քաղաքը, Լոնդոնից, Բմստերգամից և Լամբուրգից յետոյ, Եւրոպայի նախապատիւ վաճառական քաղաքներէից մին է: Այս քաղաքի առ և տուրքը, մի քանի տարի երկրաշարժութենէից յառաջ, աւելի յաջողակ էր քան թէ այժմ: Քաղաքը նստած էր Տայիս գետի հիւսիսային եզրի մօտ, ետմն բլուրի վերայ, և գետակողմից նայելով ցուցանումէր մի փառաւոր տեսարան: Շինութիւնքը շրջվելով գետի ընթացքի հետ, առ սակաւ սակաւ բարձրանումէին նորա հանդէպ բլուրն ի վեր: Եթէ նայէիր քաղաքակողմից, այն ժամանակը ունէիր քո աչքի առաջն աշխարհի ամենագեղեցիկ գետերի մինը, ըստ որում մի եզրից մինչև ի միւսը կէս գերմանական մղոն է, և այս լայնատարած ջրղէնը գաշտի վերայ անց ու դարձ էին առնում հարստութեններով բեռնաւորած նաւեր շատ ծովագնաց ազգերի: Այս կայմազարդ անտառից դուրս, այն կողմումը գետակղաված էր մի զմայլեցուցիչ աշխարհ, առատապէս զարգարած բնութեան պարզեններով, ճոխացած հարուստ քաղաքներով և զիւղերով: Այն ժամանակի Լիսաբոնը ունէր գրեթէ մի և կէս գերմանական մղոն երկայնութիւն. նա ունէր մի պարիսպ ետմանասուն և ետմն հին աշտարակներով, որ թէպէտ կարող չէին պաշտպանել թշնամու երեսից, բայց տալիս էին քաղաքին մի պատկառելի կերպարանք: Գեղ ի գետակողմը ունէր պարիսպը քսան և վեց դարպաս, և զեղ ի ցտմաքը, ետմանասուն:

Վաղաքը ունէր մի բուրգ, ամուր և հին շինուած, որ ամենաբարձր սարերի մինի վերայ հաստատած էր և կէս մի նշանաւոր էր իւր մեծութենով և կէս մի այն արարական ճարտարապետութեամբ որով շինած էր: Մեծատունները ունէին պատուական տուներ տաշած քարից, գեղեցիկ այգիներով, որ մեծապէս զարդարումէին քաղաքը, բայց հասարակ տուները տղեղ էին տեսութեան համար: Քաղաքի մէջ կային քառասուն եկեղեցիք, բայց ի եպիսկոպոսանիստ եկեղեցուց որ շինած էր մի սարի վերայ, և այս պատճառով հետուից փառահեղ էր երևում. սա մի հին Գօթացոց շէնք էր, բայց ներսից շատ թանգազին բուներով զարդարած: Քաղաքումը գտանվումէին ոչ պակաս քան թէ քսան և հինգ մենաստանք փանականների համար, տասն և ութ հաս, կայսրի համար և մինչև հարիւր երեսուն փանք աշխարհականների համար որ ունէին այն տեղ խորաններ և քահանայք: Այդ քանդակների համար շինած էին մի քանի մեծ մեծ հիւանդանոցներ, Թագաւորական ապարանքը, նայելով գետակողմից, ներկայ-

ացնուձք մի հրաշարի տեսարան. նորա գիրքը շատ պատշաճաւոր էր, ըստ որում նորա պատուհաններէց կարելի էր տեսանել անշափ բազմութիւն նաւերի, որոնցից ոմանք խարխախ էին ձգել, միւսերը կամ ներս էին վազում դէպ ի նաւահանգիստը, կամ թէ առադասաները պարզած դուրս էին ելանում: Այս ապարանքը բաղկացնուձք մի քառանկիւնի տարածութեան մի կողմը. մաքրատունը, մազործների խանութքը, ցորենի վաճառանոցքը բաղկացնումին նորա միւս կողմերը. Այս տեղ էր եղնամարտութեան հանդէսը, այս տեղ էր լինում այն հոգեւոր ատենը, Ննկիդիցիոս անունով, որ բոզինա ասած հրապարակումը գատումէր իւր արիւնշաղախ գատաստանը, այրելով իւր կատաղի հալածասիրութեան անբողջ զոհները:

Փողոցները անշափ նեղ էին, և մի քանիքը դէպ ի վայր շեղած: Պատուական նաւահանգիստը կարող էր ընդունել իւր մէջ 10.000 նաւ, և այնքան խոր էր, որ ամենամեծ նաւեր 18 ձողաւափ ջրի մէջ կարող էին ապարանքի հանդէպ կանգնել ամենեւին ապահով իւրեանց խարխախների վերայ: Նաւահանգստի մուտքը պահպանումին երկու ամրոցք, սուրբ Յուլիանոս, որ շինած էր գետափի վերայ, և Տօրթէ որ մի պատնէշի վերայ կառուցած շրջապատումէր ջրիցը: Բայց նաւահանգստի առաւել զորաւոր պաշտպանը էր և է դեռ ևս այն Աւազուտքը որ խոտորակի պարզումն նորա ստաջն, և շատ վտանգաւոր էին լինում ամենայն նաւերի, որ շուռէին փորձառու ուղեցոյցք:

Ահա թէ ինչպէս էր Ախարանի դրութիւնը մինչև Նոյեմբերի մինը 1755 թուականի: Սա դեռ ևս առաւօտուն լինելով ամենաեղեցիկ, ամենաճոխ և մարդաշատ քաղաքներից մինը, երկեղջյան պահանջներ ոչ մի այլ բան, եթէ ոչ մտերակոյտք, ծխապատ աւերակք, անշափելի զիւնադաշտ: Այս աղէտարեւր առաւօտուն երկիրքը պայծառ էր և ծիծաղադէմ, ինչպէս համարեն թէ միշտ լինում էր Եւրոպայի հարաւորողման երջանիկ աշխարհներումը: Աչ մի շունչ չէր շարժում ողջ, բայց տասերորդ ժամու 57 րոպէին լսեցին մի թնդիւն փողոցների մէջ, որպէս թէ կառքեր էին ներքև գլորվում: Մի և նոյն միջոցին զողաց երկիրը սաստիկ և ալիքանման շարժողութենով: Այն օրը խկապէս, Վանայն սրբոց տան էր, և քաղաքի բնակիչքը մեծ բազմութենով ժողոված էին եկեղեցիներումը, երբ որ վերայ հասաւ պատահարը: Տան րոպէի մէջ ամենաեղեցիկ ապարանքներ, ամենափառաւոր եկեղեցիք և մանաւոր մարդերի բնակարանք արտասուելի աւերակներ դարձան, հաղարար մարդիկ ջարդվելով նոցա տակին: Առաջին երկրաշարժութենովը խկոյն վայր կործանվեցաւ. Քաղա սանտա անունով տունը Հոգեւոր դատաստանի: Թա-

գաւորական պալատը աւելի բաղդասոր չը գտանվեցաւ. նորան իւր բոլոր թանգագին բաներովը կուլ տուեց երկիրը. մի այնպիսի կորուստ որ միայն արժէր 5 միլիոն արծաթ մանէթ. բայց բաղդասոր էր արքայական գերդաստանը, այս միջոցին գտանվելով Բելէմ անուն հռչակասոր վանքումը, որ Տայիս գետաբերանի վերայ Ղիսարունից դէպ ի արևմտեան կողմումն է: Յիսուսեան ընկերութեան փառասոր ժողովատունը քարուքանդ լինելով, իւր աւերակներէ տակ թաղեց հասարակութեան բոլոր միարանքը որ ներկայ էին: Աւելի մեծ ձախորդութիւն և անկշռելի կորուստ պատահեց մաքրատան մեր ձակալքումը, ուր գտանվումէր մի քարաշէն գետեղը: Այս տեղ հարստութեամբ բնոնաւորած նաւերը Բրազիլիայի, արևելեան Հնդկաստանի և Աֆրիկայի դիղել էին իւրեանց պատասանբը, արկղները և պարկերը լցրած սակաւագիւտ բերքերով, որ պիտոյ է գնային դէպ ի Տիւսիտային աշխարհները: Այս տեղ միլիոններէ պարանք կային. շաքար, լեզակ, փղոսկր, ոսկու աւաղ, բամբակ, մետաքս, զահփէ, զարիսին, մշկահոտ ընկոյղ, գեղձբայք, Չինեացոց և Կափոնեցոց ֆարֆօս, ազնիւ փայտեր, թանգագին քարեր, պտուղներ, պատուական ներկեր տեսանվումին այս տեղ. սոցա վերայ յաւելացրու և այն ևւրպական աշխատասիրութեան վաստակները որ նշոյնքան բաղմամբ իւր բնոներով եկած էին Ղիոն, Բիրմինգհամ, Նիւրնբերգ, Բրեսլաւ, Խեմնից, Չոլինգն, Էլբրֆելդ և միւս արուեստանոցասոր քաղաքներէց: Այս ապրանքներէ շորս կողմը պատումին, առաւտուց լըյսը ծագած մինչև գիշեր, վեց հարիւր նաւ վարձողներ, նաւագնացներ, ծառայք, պաշտանաւորք, նաւաստիք, բնուակիրք, բնոնաբարձք, սևամորթ Աֆրիկացիք, Թուրք և Հայ, Հրեայ և Քրիստոնեայ ամենայն աշխարհէց: Երկիրը շարժվում և ահա քարաշէն գետափը մի բոսկէի մէջ վայր ի վեր է լինում առանց կարողանաբու մի մարդ ևս փրկութիւն գտանել. նորա տեղը ծածկվում Զրով, և այն մեծ հրապարակը աներևութանում և ոչ հետք և ոչ նշան մնալով:

Ահա սասանութիւնը, լաց ու սուգը որ ամենայն կողմից բարձրացան, չէ կարելի ոչինչ խօսքերով նկարագրել. ժողովուրդը վազումէր փողոցներէ մէջ և տարածումէր բաղուկները դէպ ի երկինք, ողորմութիւն աղաչելով: Շատերը աշխատումին հասանել մի արձակ տեղի կամ ճանապարհի, և ոմանք կիսամերկ շտապումին աւերակներէ վերայով. ծեր մարդիկ, կանայք, երեխայք և հիւանդներ որ զեռ ևս իւրեանց մահճիճներէ մէջ էին, խեղդվեցան, առանց կարողանալու մի մարդ օգնութիւն հասուցանել նոցա, կամ թէ ջարդ ու փշուր կշան, թաղվեցան փլատակի ներքոյ և այդպէս դատապարտ-

վեցան որ սովամահ լինին: Չիանքը և տաւարները կատաղեցան, պատակցին իւրեանց կապերը և ի դուր աշխատումին իւրեանց հեծեալներէ հետ փախելէ կործանութեան երեսից որ երևումը անփախելի: Թողով ժողով բաղձութիւններ փախտական լինելով, հանդիպեցին նոցա աղիւսների և ձեփածների կոտորներ, կամ լե՛զ զզրգած շինուածների փլատակներ ջարդեցին և մանրեցին նորանց: Մի ամբոխ վաղեց զեպ ի Տերերեա դը Փասսա հրապարակը արքայական պալատի առաջն, որ այս տեղից շուտով հասանէ նաւերին, բայց նա շտապով յետ վաղեց, ըստ որում Տայիս գետը յանկարծ ուռչելով վեր բարձրացաւ քսան մինչև երեսուն ոտնաչափ: Այսուրեան ահաւոր տեսարաններից մինը էր և այն, որ այս գետը կայծակի պէս շուտով վեր ուռաւ և նոյնպէս շուտով ցած իջաւ: Կաւեր որ վեց ձողաչափ ջրի մէջ նստած էին, դուրս բերվեցան և մնացին խրած ցամաքի վերայ: Այս անպատմելի զարհուրեցուցիչ յառաջախաղութիւնը և յետախաղութիւնը գետի չորս անգամ վերագարձաւ այն օրին: Մի քանի նաւակներ ջրակուլ եղան. արքայական նաւագործարանի միջից ջրհեղեղը դուրս լողացրեց բոլոր փոյտաչէնքը կայմերով և սակառներով: Կաւահանգտի մտ, ծովը յանկարծ վեր ջգվեցաւ բերդի պէս, ինչպէս պատահում է մրկի ժամանակը. մի այնպիսի տեսարան որ սոսկալի էր և շատ խոշորարարջ ծովազնացների համար, ջեզիս ամբողջ մեծ վտանգի մէջ էր գետի այսպէս ուռչելովը և լծնդանսմներ արձակելով նշան տուեց:

Քաղաքի մէջ բարձրացան ահագին փոշեղէն սիւներ վայր կործանվելով փողոցների մտ: Աւանդութիւնը ասումն լե՛զ արեգակը մի քանի բոպէ մի՞նացաւ դորանից և այնպէս սեւացաւ ինչպէս ամենախաւար գիշերի մէջ. ահա մի նոր զարհուրելի բան այդքան սոսկալի տեսարանների մէջ: Աւանդութիւնը պատմումն նոյնպէս, ինչ որ ինքներս հեշտ կարող էինք մտածել այս տեղ, լե՛զ ամենայն տեղից անդադար լսվումնին ահ ու դողի աղաղակը, լե՛զ ամենայն սիրտը զգումնին մահու աղէտքը որ հազարապատիկ կերպարանքով պատկերանումը նոցա առաջն: Այս կործանութեան տեսարանները, որոնցից շրջապատած էին անբաղղ բնակիչքը, այն հանդարտեցին մի քանի վայրկեան, բայց ինչ ողորմելի հանդարտութիւն: Արդարև չբացան փոշեղէն ամպերը, աղատուածքը շնորհաբորումնին միմեանց փրկութիւնը, բայց միւսերը արտասվումնին իւրեանց աղգականների կորուստը. երեսաներ, ամուսիններ և բարեկամներ կցած էին ձեռքերը, ծնողները ծնկերի վերայ չողած էին իւրեանց անշնչացած զուակների մտ: Շատերը հրաշալի կերպով աղաաղած լինելով վտանգից, դուրս էին սողում աւերակների միջից և միանումնին կենդանի մտ-

ցածների հետ. ոմանք ահագին բարձրութեամբ կախ ընկած խախտեալ աների զերաններէց, օգնութիւն էին աղաչում: Անխաւան անբաղդացեալք կրճատած անդամներով, արխնաշաղխաւ և մերձ ի մահ, լցուցանումին օդը իւրեանց օդերբով, ցուալից աղաղակներով և պաշտանբով:

Մի քանի բողբոջ յետոյ կրկին անգամ շարժվեցաւ երկիրը. այն սակաւ տուները, որ մնումէին զեռ ևս, սաստիկ երերվեցան այս կողմ և այն կողմ, ինչպէս մի նաւի կայմ մրկկի միջոցում: Նոքա որ ուրախացած էին իւրեանց փրկութեան վերայ, աղաղակումին զէպ ի երկինք, ողորմութիւն ինչրելով, և աշխատումին, ինչքան կարելի էր շուտով, դուրս գնալ աւերակների միջից: Հասանելով եկեղեցիներին, նոր առիթ ստացան շնորհակալութիւն մատուցանելու: Աստուծուն իւրեանց հրաշալի փրկութեան համար, ըստ որում զարհուրելով տեսան այս տեղ, որ փախտական բազմութիւնը այս տեղ պատուարան որոնելով, ըստ մեծի մասին գերեզման էր գտել խորասկզբած աշտարակների, տանիքների և մեծամեծ շինուածների տակ:

Արկար ժամանակ անց չէր կացել, և ահա զգացին մի երրորդ ուժգին երկրաշարժութիւն: Փախչողքը չը կարողացան ոտքի վերայ պահել իւրեանց անձը. նոքա ստիպված էին ցած նստել կամ ծընկերի վերայ խոնարհել. ահ, խռովութիւն, երկիւղալից աղաղակ, մաղթանք օգնութեան և փրկութեան կրկին անգամ բազմապատկեցին այս տեսարանի արհաւիրքը և այս աղէտքի մեծութիւնը:

Տխուր պատահարների շարք լցուցանելու համար զեռ ևս շատ բան էր պակաս. պատճառ, և կրակը պիտոյ է վերայ հասանէր, որ ոյժ և զորութիւն տար բնութեան մէջ եղած կործանութեանը և խռովութեանը: Մի քանի ժամից յետոյ բոլոր ելումուտքը փակվեցան կրակով, որ փլատակված քաղաքի զանազան տեղերումը երևեցաւ, և գիշերը սկսած, Ախարոնի բոլոր աւերակքը պտտվեցան բոցերով: Որովհետև ոչ ով չը կար որ շինուցանէր, այս պատճառով կրակի կատաղութիւնը տարածվեցաւ այնքան, ինչքան որ կերակուր էր դատանում, ո՞նչացրեց ինչ որ զեռ ևս պահպանած էր, և այսպէս մուրացկանութեան հասցրեց մնացեալ ժողովուրդը, ըստ որում ամենների վերայ այնպիսի սասանութիւն եկաւ, որ ոչ ով չը մտածեց մի բան փրկել կրակիցը: Հողմը սաստիկ փչելով տանումը կրակը մի փողոցից զէպ ի միւս փողոց. ութ սր կատաղութեամբ տեսեց հրայրեացքը և մանաւանդ քաղաքի սուսուկ պատուական և նեղ բաժիններումը. ժողովուրդը հարկադրվեցաւ կիսամերկ դուրս փախչել զէպ ի մտակայ դաշտերը: Ապրանք, տան կարասիք, հանդերձեղէնք, բոլորը այրվեցաւ. այս ողբալի պատահումը հաւասարել էր միմանց մեծատուն

և գոհճիկ, պալատականք, ամբոխ, կուսանք և արեղայք. ամենքեան անխտիր ստիպած էին բաց դաշտի վերայ համբերել և զանակի ան-
յարմարութեանը և տանել ոչ թէ միայն ցրտի, այլև սովի:

Այսպէս ահա մի ծաղկաթիթիթ քաղաք փոքր միջոցով մոխ-
րակոյտ դարձաւ. անթիւ հարուստ և ունեոր գերզատանք աղքա-
տութեան և թշուառութեան մը ընկան. Երեխայք որբացան իր-
եանց ծնողներէց, ծնողք զրկվեցան իրեանց զաւակներէց. պատառ-
վեցան ամենպեղեցիկ ընտանեկցութիւնք, ոչնչացան ամենքաղցր յոյ-
սեր, ամենմայրելուչ ուրախութիւնքը փոխվեցան ողբ և սուգ:

Նշառջուց կարծումէին, թէ կրակը գոյացել է գեանի պատառ-
ուածից, բայց աւելի ճշգրտապէս քննելով ստուգեցին, որ այդպէս չէր.
նա կէս մի յառաջացել էր տների կրակներից և կէս մի, մեծ վառուն
ճրագներից եկեղեցիների մը, գուցէ թէ և հրձիգ գող մարդերի
ձեռքով: Հրայրեացից յետոյ տասն և վեց օր անցած, զեռ ևս այն-
չափ ջերմ էր փլատակը, որ այրումը այն սապատները, որոնցով
գուրս էին տանում ապահանութիւնքը: Արքայական գերզատանը
ստիպվեցաւ նոյնպէս զիշեր անցուցանել բացօդեայ դաշտի մը: Ապա-
նիացոց գեւազանը մահ գտաւ իւր տան փլածի տակ, երբ որ ահա
գուրս էր զիմում դարպասիցը: Կոքս որ իրեանց արծաթը փակել
էին երկաթի արկղների մը, կրկին ստացան նորան անմնաս, միւս ար-
ծաթը սևացած էր, և եթէ ում և իցէ վճար կար հատուցանելու
այս դատն պատահարից յետոյ, սովորարար պայման էր կապվում,
արդեօք սպիտակ, եթէ սևացած արծաթով պիտոյ է լինի այդ հա-
տուցումը: Քաղաքի հրատարա լինելը տալիս էին փողոցների անչափ
նեղութեանը միայն. ժամանակակից պատմիչք չը գիտեն թէ ինչ
խօսքերով նկարագրեն աւերակների սարսափելի տեսարանը կրակից
յետոյ. զեպ ի վեր նայելով, կը տեսանէիր զու այրած ու սպառ-
ված տների սուկալի կատարներ, սմանք այս կողմ և ոմանք այն կողմ
հակվելով: Աւրիշ շատ տեղերում, սասանութիւն կը գար քո վերայ
տեսանելով մոտիններ որ շատ անգամ վեց մինչև եսթն
հատ միմեանց վերայ զիզած, կիսով չափ թաղվել էին փլածի տակ,
կիսով չափ այրած, հող և մոխիր էին դարձել:

Ընդ որ թագաւորական շինուածներից պահպանած էին դրամա-
հատական և գանձատան շինուածքը միայն: Երկրի թնդիւնքը մի քա-
նի ժամանակ տակցին, թէպէտ համեմատելով առաջինների հետ, ոչ-
ինչ մնասարեր չէին: Մի տեղական անձրևի հեղեղ հալածումը այն
տառապեալքը, որ մի բարձր տեղում պատսպարան էին գտել երկրա-
շարժութեան, կրակի և ջրհեղեղի երեսից: Խոնաութենից, մրտողու-
թենից և սովից մահ գտան անթիւ մարդիկ, որ իրեանց թշուառ

կեանքը անձնաս պահպանել էին մինչև այն ժամանակը, Գեուածներէ թիւը Հասանումը 30 մինչև 40 հազարի. կալուածներէ կորուստը անչափելի էր և հաշվեցա որպէս հինգ հարիւր և եօթանասուն միլիոն մանեթ, և որովհետև կողտրտախրու թիւը կամենումը իւրացուցանել կենդանի մնացածներէ սեփականութիւնը, այս պատճառով մի քանի զորաժողովք ուղարկվեցան քաղաք, որ վերստին Հաստատեն ապահովութիւնը, և մի օրի մէջ կախվեցան երեսուն և վեց աւազակ, Գինչև երբ հազար մշակ աշխատումին ամենայն օր մտքընով ապահանութիւնքը, և անապատացեալ Վխարոնը միւսանդամ շինվելով և նորոգվելով, ստացա աւելի պայծառութիւն քան թէ ունէր յառաջուց:

30. ԴՆՅԱՆՆԵՐԻ ԵՆՊՆԱՐԻ:

Այն բարձր որձաքարեայ սարակողի ոտքին, որ մեր երկրաւոր մուրթակի մանկութեան հասակումը, երբ որ Ենտիլլեան ծովածոցը կերպարանվումը, ընդդիմացել է ջրի ներս մտանելուն, պարզումն մի արձակ անչափելի տեսութեամբ դաշտավայր: Երբ որ զու քամակումդ էիր թողած կարաքայի սարածորերը և կզգիներով հարուստ ծովակը Քագարիդիա, որի մէջ պատկերանումն պիղանդ ծառերի բուռքը, երբ որ զու հեռացած էիր այն դաշտերից որ Հայիտեան շաքարաբեր եղէզնի քննուչ կանաչովը պայծառանումին, կամ թէ երբ որ հրաժարված էիր կակաս օտենկերի ծանրատեսիլ ստուերներից, այնուհետև քո հոյեցուածքը հանգստանումն հարսումը դաշտավայրերի վերայ որ ըստ երևութին առ փոքր փոքր բարձրանալով, աննկատելի հեռաորութեամբ սահմանաորումն հորիզոնը:

Օրգանական կենդանութեան ճոխ լիութենից զուրս է գալիս ծանաղարհօրդը և տրամումն հասանելով մի անբոյս անսպասի շոր ու ցամաք սահմանին. ոչ մի բլուր, ոչ մի ժայռ չէ բարձրանում կզգիածն այս անչափելի արաժութեան մէջ: Գիայն թէ ցան և ցիր զետեղված են ճեղքաւոր ընկուղիներէ կարծր քարակուտի մղոն պարզվելով, աւելի բարձր էին երևում քան թէ մեր ձակոց սահմանները: Սոցա ստումն բնակչիները Ենպարի, որպէս թէ նշոյն իսկ լեզուի հողովը մարդարեանումին վարձաժամանակայ իրողութենների կացութիւնը, երբ որ այն բարձրութիւնք ցած անգիւր էին ջրի մէջ, բայց նշոյն իսկ դաշտավայրքը, մի մեծ ծովի յատակ:

Եւ այժմ պատահումն շատ անգամ, որ գիշերային մուրթականութիւնը միւսանդամ ներկայացնէր այն վաղ ժամանակների պատկերը. պատճառ, երբ որ առաջնորդական աստեղները շուտով ելանելով ու մտանելով լուսաւորումին դաշտավայրի եղեքքը, կամ

Թէ երբ որ նոքա զողալով կրկնապատկումն նորա պատկերացոյցը տարուբերելոյ շոգիներէ՝ ստորին բաժիններումը, կարծումէր զու, թէ տեսանումս աչքիդ առաջն անեղբական ովկիանոսը, Ինչպէս սա, նոյնպէս և անապատը լցուցանումէ սիրտը անեղբականութեան զգացութենով, Բայց մի և նոյն միջոցումը քաղցրանումէր տեսութիւնը նոյնելով այն պայծառ ջրեղէն հայելու վերայ, որի մէջ շրջանակվումէին գիւրաշարժ, մեղմով փրփրացող պլիքներ. սորա հակառակ, մեռած ու կապած ձգվումէ անապատը ինչպէս մի ապականեալ մուրափի մերկ ժայռակեղև:

Ընկնայն գօտիներէ մէջ բնութիւնը ներկայացնումէ այս մեծամեծ դաշտավայրերի տեսարանը. ամենայն տեղ ունին նոքա մի առանձին յատկութիւն, մի այնպիսի կերպարանք, որ սահմանվումէր նոցա հողի զանազանութենով, նոցա կլիմայով և նոցա բարձրութենով ծովի երեսի վերայ:

Հիսիսային Եւրոպայումը կարելի է ճշմարիտ անապատ համարել այն անպատը զաշտերը որ լոկ միատեսակ տունկերով պատած ձգվումէն Դաւանդիայի ծայրից մինչև Շէլլի գետաբերանը, բայց սորա աւելի փոքրատարած անապատներ էին բարձրաբլուր մակերևութով, եթէ համեմատելի սորանց հարաւային Ամերիկայի Աի. անոս և Պամպաս անունով զաշտավայրերի հետ, կամ թէ խոտուետ զաշտերի հետ Միսուրի գետի վերայ, ուր շրջումէ լուսամաղ բիզոնը և երկայնեղջիւր մչկահաս կզը:

Ընկնի մեծափառ և պատկառելի տեսարան ջուցանումէն զաշտավայրերը Ամերիկայի ներսումը, Ինչպէս խաղաղ ովկիանոսի լայնատարած երեսը, այնպէս և այս զաշտավայրերը սկսել են քննել նոր ժամանակներից. այսինքն մի քանի սահմանք այն աւազեղէն ծովի մէջ որ պողաւետ հողեր բաժանումէ միմեանցից կամ թէ կզգիտանէ շրջափակումէ իւր մէջ, զոր օրինակ անապատը Հարուշեան բազալտեղէն սարերի մօտ, ուր արմատով առատ Միլահ սասած կանաչավայրումը, Ամիսնեան տաճարի աւերակքը ջուցանումէն մի վաղաժամանակեայ մարդկային լուսաւորութեան պատկառելի բնակարան: Ոչ մի ջուղ, ոչ մի անձրև չէ խոնաւացնում այս անապատ տարածութիւնքը. ոչինչ լճացութիւն չէ անկցնում անկական կենդանութեան ծիւր հողի բորբոքեալ գոգի մէջ. պատճառ, ջերմ սղեղէն սիւներ ամենայն տեղ վեր են ելանում, լուծանումն շոգիները և հալածումն անցաւոր ամպերը:

Ինչ տեղ անապատը մասնումէ առլանտան ովկիանոսին, զոր օրինակ Դարասի և Սպիտակ սարաւանդի մէջ տեղումը, այն սահմանումը ներս է հոսում խոնաւ ծովային օդը, լցուցանելու այն դա-

տարկութիւնը որ յառաջացած էր ուղիղ ցած իջանող հողմերից, Այն տեղ հովարար արևմտեան հողմեր զուարթացնումն անապատի բլրային եզերքը. այն, երբ որ նաւարկուն մի ծովի մէջ, որ մարգաղանի պէս պատած է ջրախոտով, ուղղում է իւր ընթացքը դէպ ի Գամրիայի գետաբերանը, խեղճն մարդարեանում է այն լայնատարած ջերմաշունչ աւաղի մտաւորութիւնը, երբ որ արևագարծի արևելեան հողմը յանկարծ հրաժարվում է նորանից:

Այժմեաների հասեր, արագոտն ջայլամներ, ծարաւի յովազներ և առիւծներ, տկարը զօրաւորի հետ պատերազմելով շրջումն անշտիկի դաշտավայրի մէջ: Եթէ դուրս հանկիք արազեղէն ծովի մէջ նոր գտած առատաջուր կղզիքը, որոնց կանաչապատ եզերքումը թափառումին վրանարնակ Տիրբո և Թըվարիկ անունով ազգերը, ապա Եփրիկայի անապատի միւս մասը պիտոյ է անբնակիչ համարել մարդուս համար: Այլև սահմանակից կրճեալ ժողովուրդները համարձակվումն միայն ժամանակ առ ժամանակ ներս մտանել այն տեղ: Այն ճանապարհների վերայով, որ վաճառական առ ու տուրքը անփոփոխելի սահմանել է սկսեալ հազարաւոր տարիներէից, շրջում է երկարածից կարաւանը Տափիլեսից մինչև Թումուրքում, կամ թէ Ֆեցցանից մինչև Դարֆուր. արգարև մի քաջասիրտ զործ որի հնարաւորութիւնը հիմնած է ուղտի կենդանութեան վերայ, ուղտի, որ անապատի նաւն է, ինչպէս արևելեան աշխարհի հին աւանգութեւնով ասվում էր:

Այս դաշտավայրքը Եփրիկայի լցուցանումն պնդան մեծ տարածութիւն, որ համարեալ թէ երկպատիկ գերազանց էր մտակոյ միլերկրական ծովի տարածութենից: Նոքա կէս մի զետեղված են նոյն իսկ արևադարձի շրջանակների մէջ և կէս մի մտ էին դոցա. և այս դրութեան վերայ հիմնաւորվում է նոցա առաջին բնաւորութիւնը: Սորա հակառակ, հին ցամաքահողի արևելեան կիսամասնումը մի և նոյն երկրագիտական իրողութիւնը սեփական է բարեխառն գոտուն:

Միջին Ասիայի սարագոտիների քամակի վերայ, Ալտայի և Մուսթաղի մէջ տեղումը սկսեալ Չինեացոց պարսպից մինչև Արալեան ծովակի մտակայքը, հազար մղոն երկայնութենով պարզվումն աշխարհի ամենաբարձր և ամենամեծ դաշտավայրքը. մի քանիքը խոտաւէտ տափարակներ են, միւսերը հիւթալից մշտականաչ ծնկաւոր կալաքարի բուսերով. շատերը հետուից փայլելով մամուսման դուրս բողբոջած աղից որ անհասարապէս ծածկում է ճարպային հողը որպէս նոր կկած ձիւն:

Այս Մանգոլեան և Թաթարեան անապատները, Տիրեթի և Էինդուստանի հին և վաղածամանակեայ կրճեալ ազգերը բաժանումն

հիւսիսային Ասիայի վայրենարար ազգերից. այլև նոցա լինելու-
թիւնը Ասիայի մէջ բազմաբնակ ներգործութիւն է ունեցել մարդ-
կային ազգի փոփոխական վիճակի վերայ, նոքա յետ են ձնշել ժո-
ղովուրդը դէպ ի հարաւի կողմը. աւելի քան թէ Սիրիսագործի և
Գորկայի ձիւնապատ սարերը, նոքա խափանել են ազգերի առ ու
սուրբը, այլև դէպ ի հիւսիս անանցանելի սահմաններով փակել են
ձանապարհը, որ ոչինչ քաղաքացեալ բարք և ճարտարապետական
հմտութիւն չը տարածվէր այն տեղ:

Իսկոյ ոչ թէ միայն խափանարար նախապարտապ ոյխոյ է հա-
մարեր պատմութիւնը այդ դաշտավայրը խորին Ասիայի. այլև ձա-
խորդութիւն և կործանութիւն շատ անգամ բերել է դա մարդկու-
թեան վերայ: Այս դաշտավայրի տաւարապահ ազգերը, Աւարք, Մոն-
գոլք, Ալանք և Ռոգք սասանեցուցել են աշխարհը: Այն, դարերի
միջոցումը, վաղածամանակեայ իմացական կրթութիւնը զուարթացու-
ցիչ արշալուսի պէս տեղափոխվել է արևելքից դէպ ի արևմուտք,
բայց յետոյ նոյն ձանապարհով բարբարոսութիւն և բարոյական վաշ-
րագութիւն մտախուզի պէս, մտ էր ահա, որ պատէին Եւրոպայի
վերայ: Եթ թխամորթ տաւարապահ ժողովուրդ Հինդդուս անունով
կաշեղէն վրանների մէջ բնակումը Գորի լեռնադաշտի վերայ. սա
կատաղաբար գուրս յարձակվելով յետակողմեան Ասիայի արևելեան
մասնիցը, երևեցաւ յանկարծ (այսպէս է պատմում ազատաստա զրոյցը)
որպէս Հոնեան պատերազմողը, նախ և յառաջ Աւրգա գետի մտ,
ապա Պոմբրանիայի մէջ, յետոյ Լուս գետի վերայ և Պո գետի և-
զերբումը, քանդելով ու անբերով այն գեղեցիկ կանաչատունկ դաշ-
տերը ուր, Անթիոնորի ժամանակներից սկսեալ, ճարտարապետական
մարդկութիւնը շատացուցել էր յիշատակարան յիշատակարանի վե-
րայ, մի պարծանք միւս պարծանքի վերայ: Այսպէս ահա Մոնգոլեան
անապատներից փչելով մի ապականեալ հողմաւունջ խեղդեց այն
քնքուշ, երկար ժամանակներով զգուած ու փայտոյած ծաղիկը որ
Ալլեան սարերի այս կողմումը բուսած էր մարդուս աշխատասիրու-
թենով:

Ասիայի աղարուզի անապատներից, Եւրոպայի խոտաւետ դաշ-
տերից որ ամբային ժամանակին առատամեղր կարմրազոյն ծաղիկնե-
րով պայծառանումն, այլև Աֆրիկայի չոր ու ցամաք անապատներից
հրաժարվելով, յետ ենք դառնում դէպ ի հարաւային Ամերիկայի
դաշտավայրքը, որոնց կենդանագիրը ահա սկսել ենք հարևանցի կեր-
պով ներկայացնել այս տեղ:

Այն հաճութիւնը որ այս կենդանագիրը կարող էր տալ նկա-
տողին, մի լոկ բնաշնական հաճութիւն է: Այս տեղ ոչինչ կանա-

չափայր վկայութիւն չէ տալիս վաղաժամանակեայ բնակիչների մասին, ոչ մի տաշած քար, ոչ մի վայրենացած պտղատու ծառ չէ ցուցանում անցած գնացած ազգերի աշխատսիրութեան հետքը: Այս անկիւնը աշխարհի, ամենեւին ստար մարդկեղէն դիպուածներէց, մի միայն ներկայի հետ կապելով մեր միտքը, դրած է մեր առջև որպէս մի վայրենի հանդէս ազատ գաղանական և բուսական կենդանութեան:

Կարաքրայի եզերաշղթայիցը սկսեալ պարզումն զաշտափայրը մինչև Գուայանայի անտառները, Մերիզա սարերից, ինչ տեղ եռացող ծծմբածին աղբիւրներ զուրս են յարձակում մշտնջենաւոր ձիւնի տակից, մինչև այն մեծ եռանկիւնի տարածութիւնը, որ Օրինսկո գետը ձևացնում իւր բերանի բացուածի մտ: Այս զաշտափայրը ղեպի հարաւային արևմուտք նշգումն մի ծովաբազուկի պէս Մետա և Ախտաղա գետերի միս կողմը, մինչև Գուափիարէ գետի անձանսթ աղբիւրքը, կամ թէ մինչև այն անապատ սարերի զուգահառնութիւնը որոնց Յպանիացոց զօրակները իւրեանց երևակայութեան խաղին հեռակելով, անուն են դրել Պարամո դը Լա զումամս փաց, որպէս թէ «վայելուչ բնակարան մշտնջենաւոր խաղալութեան»:

Այս անապատը պարզումն 14,000 քառակուսի մղոն տարածութիւն: Հատերը անտեղեակ լինելով աշխարհին, նկարագրել են այս անապատը այնպէս, որպէս թէ զա անընդհատ շարունակումը մինչև մագելլանեան ծովանեղոցը, առանց միտք գնելու այն սարաբազուկներին որ Անդեան լեռնագոտին արձակումն ղեպի արևելք, որ և Ամազոնեան գետի գաշտը ղեպի հիսսիս և հարաւ բաժանումն խոտաւէտ անապատներից Ապպուրէ և Լա Պլատա գետերի Սոքա, այսինքն Պամպաս անունով զաշտափայրքը Բուենոս Այրեսի երկքպատիկ աւելի տարածութենով գերազանց են նոցանից, որ ասումն Լիանուք, այժ նոցա ընդարձակութիւնը այնպէս զարմանալի մեծ է, որ նորա հարաւափողումը սահմանաորումն արմաւենութուփերով, և հիսսիսափողումը պատած են գրեթէ մշտնջենաւոր ձիւնով: Քաղուարի նման Տույու թուշուեր սեփական է այս Պամպաս անունով զաշտափայրերին, ինչպէս այն ընկերութիւնքը վայրենացած շների որ միասին բնակումն ստորերկրեայ փոսերի մէջ, բայց շատ անգամ արիւնասիրութեամբ յարձակումն մարդու վերայ, որի պաշտպանութեան համար պատերազմումն են նոցա նախիրքը:

Ինչպէս Սահարա անապատը, նոյնպէս Լիանուք կամ թէ հարաւային Ամերիկայի առաւել հիսսիսային գաշտը ղետեղոված է ջերմ երկրագոտու մէջ: Այդու ամենայնիւ իւրաքանչիւր շտարու կիսումը ցուցանումն դորա զանազան կերպարանք. երբեմն չոր ու ցամաք էին ինչպէս Լիբիայի աւազեղէն ծովը, երբեմն խոտապատ, որպէս բարձր

անապատը միջին Ասիայի Արշիւնաւոր, թէպէտ դժուարին գործ էր ընդհանուր աշխարհադիտութեան մէջ համեմատել միմեանց ճետ հեռաւոր երկիրների որպիսութիւնքը և այս համեմատութեան ճետութիւնքը համառօտ կերպով ցոյց տալ, Բաղձորինակ պատճառներ, որ զեռ յայտնի չէին լիովին, նուազեցնումն նորադիտ աշխարհի ցամաքութիւնը և ջերմութիւնը:

Բաղձատեսակ ձեռքած ցամաքաճողի նեղութիւնը, նորա արձակ տարածութիւնը զէպ ի սառնապատ բնեռները, բաց և ազատ ուկկիւնտը, որի վերայ փշումն արեազարձի հողմերը, արևելեան եղևրներին տափարակութիւնը, սառն ծովաջրի հեղեղները որ յառաջ են դիմում Արևիսային աշխարհից զէպ ի հիւսիս մինչև Թերու, աղբիւրաշատ սարազօտիների բաղձութիւնը, որանց ձիւնապատ կատարները շատ աւելի վեր են բարձրանում քան թէ բոլոր անպակոյտերը. մեծամեծ զետերի առատութիւնը որ շատ աւելի պտոյտբերելով որոշումն ամենահեռաւոր ծովեղբը, աւաղաղուրի և այդ պատճառով ոչ այնքան ջերմանայի անապատներ, անանցանելի անտառներ, որ լցուցնումն զետերով հարուստ դաշտապոյրը հասարակածի մաս և աշխարհի ներսումը, ինչ տեղ սարերը և ուկկիւնտը առաւելապէս հեռի էին միմեանցից, դուրս են շնչում անչափ շատ ջրեր, որ կէս մի ներս էին ծծած, և կէս մի խորեանք ծնուցել էին. այս բոլոր իրողութիւնքը ապիս են Ամերիկայի հողին մի այնպիսի կլիմայ, որ խոր խոնաութեանով և հոգութեանով մեծապէս հակառակ էր Ամերիկայի կլիմային: Այս իրողութիւնքը միայն էին պատճառը այն ձոխ, հիւթալից անձեցականութեան և այն կանաչադարձութեան, որով յատկանումն նորադիտ ցամաքաճողի ստանձին բնութիւնը:

Արեւն և թէ մեր մուրաբի մի կողմը ասլումն աւելի խոնախոր սդի մասին, քան թէ միւսը, սպա բաւական էր նկատել իրողութեանների առաջիկայ որպիսութիւնը, որ կարողանայինք վճռել այս անհասարակութեան խնդիրը, Այսպիսի բնական տեսիլներ բացայայտելու, հարկաւոր չէր բնադնին մարդուն գործ զննել երկրախոսական առասպելներ. հարկաւոր չէր այս տեղ այն ենթադրութիւնը, որպէս թէ տարերբի կորստաբեր հակառակութիւնը անհասարակ միջոցներով վերջացել էր վտաճամանակեայ երկրային մարմնի վերայ, կամ որպէս թէ Ամերիկան խոնդիլուռն ջրապատի միջից դուրս է գոյացել աւելի յետոյ, քան թէ աշխարհի միւս բաժինքը, և այդ պատճառով էր մի ձախնալից կղզի, բնակարան կրակոգիլոսների և օձերի:

Այն, հարուային Ամերիկան, նայելով նորա շրջանադրութեան կերպարանքին և նորա եղբրբի ուղղութեանը, շատ նման է հին ցամաքաճողի հարուահայեաց արևմտեան կիսակղզուն, բայց հողի ներ-

քին կազմածը և նորա դրութիւնը համեմատելով սահմանակից աշխարհներէ հետ, յառաջացնումեն Աֆրիկայի այն զարմանալի երաշտութիւնը որ անչափելի շատ տեղերում խափանարար էր օրգանական կեանքի անցողութեանը: Հարաւային Ամերիկայի չորս հինգերորդ մասը զետեղված է Հասարակածի ստորին կողմումը, ուրեմն այն կիսագնդի վերայ որ աւելի առատաջուր լինելով, այլև բազմօրինակ միւս պատճառներէց աւելի հով ու խոնաւ է քան թէ հին աշխարհի կիսագնդը, և սորան պատկանում Աֆրիկայի առաւել մեծ բաժինը:

Հարաւային Ամերիկայի անապատքը, այսինքն Մանուսքը, չափելով արեւելքից դեպ ի արևմուտք, երեքպատիկ աւելի փոքր են ընդարձակութենով քան թէ Աֆրիկայի անապատքը. նոքա ստանումեն արևադարձի ծովային օդը. սոքա նոյն լայնութեան շրջանի տակ, ինչպէս Երաբիա և Հարաւային Պարսկաստան, շշտիվումեն այնպիսի օդակոյտերից որ անցանումին սովազին ջերմաշունչ հողերի վերայով: Վաղուց ահա Հերոդոտոս, պատկառելի պատմողահայրը, որի գրածը երկար ժամանակ անտես են արել, ճշմարտապէս մեծահայեաց բնատեսութեամբ քննելով բոլոր անապատները հիւսիսային Աֆրիկայի, Եամանի (Երջանիկ Երաբիայի) Քերմանի, Մեխրանի (հին Գեդրոզիայի), այդ մինչև Մուլման, առաջակողման Հնդկաստանումը, նկարագրել է որպէս մի հատ շարունակ աւազեղէն ծով:

Տերմ ցամաքային հողմերի ներգործութեան հետ ընկերանում Աֆրիկայի մէջ, ինչքան որ դա ծանօթ էր մեզ, այլև մեծ անձրևների, միջերկրական ծովակների, բարձր սարերի պահասութիւնը: Մշտնջենաւոր ստուշով պտտած է միայն Ետլաս սարի արևմտեան կողմը, որի նեղ սարաբաղուկը, տանելով կողմնակի, հին ծովազնացների աչքին երևումէր որպէս միայնակ կանգնած օդային երկնախարիսխ: Գեպ ի արեւելք ձգվումեն սարերը մինչև Գուքալ, ուր զետեղված էր ծովակալ Քարկեղոնը, այժմ աւերակ և անյայի Ետլասի արևմտեան սարաբաղուկը որպէս երկայնաձիգ ծովկերևայ շղթայակապ, որպէս Գեթուլեան պամէշ, յետ է պահում ցուրտ հիւսիսային հողմերը և սոցա հետ միասին այն շողիքը որ բարձրանումէին միջերկրական ծովից:

Հուանական է, թէ ստորին ձիւնասահմանից բարձրանումէին դեպ ի վեր Ալ Կոբրի անունով Լուսնի սարերը. սոցա մասին առաջնախոսումեն որպէս թէ բաղկացնումէին զուգահեռական սարեր Աֆրիկեան՝ Բիտոյի, Հարեշտանու, Անոնապաշտի և Սենեգալի աղբիւրների մէջ: Նոյն իսկ կորդիլերանման շղթայակապը Լուպատայի որ ձգվումէ Մոզամբիքի արևելեան եզրիցը այնպէս ինչպէս Անդեսան շղթայակապը Պերուի արևմտեան եզրումը, ծածկած է մշտնջենաւոր

ձիւնով, Բայց այս աստաճուր սարերը զետեղված են շատ հետի այն
ահագին անապատից, որ Առլասի հարաւային լանջակողմից տարածվու-
մէ մինչև զէպ ի արևելք ընթացող Նիգր գետը:

Բայց կարելի է, որ այս բոլոր յառաջ բերած պատճառքը ցա-
մաքութեան և ջերմութեան զեռ ևս բաւական չէին բացայայտելու
թէ ինչպէս այն աֆրիկեան դաշտավայրքը դարձել էին մի աւազե-
ղէն ծով, եթէ միանգամ որ և իցէ բնական յեղաշրջութիւն, զոր
սրինակ ովկիանոսի ներս յարձակվելը, այս տափարակ աշխարհից չը
լինէր կողորտած իւր բուսական ծածկոցը և անկոչիչ հողը: Թէ
երբ այս անցքը անցած է, և ինչ զորութիւն էր, որ ովկիանոսի ներս
յարձակվելուն պատճառ տուեց, այդ բանը ծածկած է նախնի ժամա-
նակների խաւարի մէջ, Գուցէ դա այն ահագին ակեղծութեան հե-
տեւանքն էր, որ Վերսիկոյի տաք ջրերը Նոր Գուեղլանդիայի աւազու-
ների վերայով վարումէ զէպ ի հին ցամաքահողը, և սյրպէս արև-
մտեան Հնդկաստանի կոկոսեան ընկոյզքը լող տալով հասանումն
մինչև Իրլանդիա և Նորվեգիա: Գոնեայ, այս ծովահասութեան մի
բաղունը և այժմ ևս, սկսեալ Ազորեան կղզիներից, ուղղեցումէ իւր
ընթացքը զէպ ի հարաւակողմեան արևելք և կատաղութեամբ զար-
կումէ հիւսիսային Աֆրիկայի արևմտեան եզրին: Այլև բոլոր ծովե-
ղերեայքը (որպէս Պերու աշխարհի ծովեղերեայքը Ամստըպէի և Քո-
կիմբոյի մէջ տեղումը) ցուցանումն թէ հարիւրաւոր, այս գուցէ և
հազարաւոր տարիք պետոյ է անցանէին, մինչև ջերմ, անանձրև սահ-
մաններում, ուր ոչ լիտիզէպը և ոչ այլ տեսակ մածուցք չէին ա-
ծում, շարժական աւաղը սկսանէր ծածկվիլ խոտերով:

Այս նկատողութիւնքը բաւական էին բացայայտելու թէ ինչ
պատճառով Աֆրիկա և հարաւային Ամերիկա, թէ և գուրսից նման
էին միմեանց աշխարհների կերպարանքը, այնու ամենայնիւ ներկայ-
աշնումն շատ տարբեր որպիսութիւնք օդի մասին և շատ զանազա-
նութիւն աննշականութեան մէջ: Թէպէտ և հարաւային Ամերիկայի
անապատը ունէր մի բարակ պտղաւետ հողածածկոց, թէպէտ և նա
ժամանակ առ ժամանակ անձրևի հեղեղներով տոգորվումէր և զարգա-
րումէր ճոխարդա խոտով, սյրու ամենայնիւ չէ կարողացել զբայի
ժողովրդներին յորդոր լինել, որ Պարագուայի պատուական սարածո-
րերը, կամ թէ ծովեղերեայքը և կամ թէ Օրինոկոյի գետավայրը
թողուն և գային ցան և ջիր լինելու այս անձառ ու անջուր անա-
պատի մէջ: Այս պատճառով Եւրոպայի և Աֆրիկայի գաղթականք
գալով այս տեղ դասն աշխարհը համարեալ թէ անժողովուրդ ամ-
նեն:

Թէպէտ Արանուքը յարմար էին տաւարապահութեան համար:

բայց կախման առաջ անասուններ պահել ամենեին անձանսթ էր նորագիտ ցամաքահատի սկզբնական բնակիչներին. Աչ մի ժողովուրդ չէր գիտեր օգուտ քաղել այն տուրքերից, որ բնութիւնը և այս մասին պարզեւած է մարդու. Երկու տեսակ տառար արածուսն արեւմտեան Կանադայի խոտախոտներու, և շրջակայքու, աւերակների Ազոկական ապարանքի, որ ինչպէս մի ամբողջական Պալմիրա լծողած ձգած միայնութեան մէջ բարձրանում անապատումը Գիւլա զետի մաս. Երկար եղջիւրներով Մուշլան կենդանին, ուխարի նախահայրը, պոչոյ գալով շրջում Կալիֆորնիայի ցամաք ու մերկ կրանի լծ ապառամի վերայ. Հարաւային կիսակղզուն սեփական են ըղտանման Ալկուննա կենդանիքը, այլև Ալգոպա և Ախամա շորքոտանիքը. բայց այս բոլոր օգտակար անասունքը, բայց ի Ախամայից, հազարաւոր տարիներով պահպանել են իւրեանց բնական աղատութիւնը. պատճառ, կախման կերութիւնը և մասկերութիւնը, որպէս և այլուրտ բանջարեղէնքը, նոցա անկարկութիւնը և գործածութիւնը այն յատկացուցիչ նշանքն են, որոնցով գանաղանախումն հին աշխարհի ազգերը. Եթէ այս աչգերից մի քանիքը հիստորիան Ասիայի վերայով սեղափոխ են եղած զէպ ի Ամբրիկայի արեւմտեան ծովեղերայքը, և սիրելով սասնութիւնը յառաջ են գնացել Անդեսեան սարահատու վերայով զէպ ի հարաւ, այս սեղափոխութիւնը պիտոյ է պատահած լինի այնպիսի ճանապարհներով, ուր ոչ տառարի երամակներ և ոչ ջորանք ընկերակից չէին եկաւորների հետ. Գուցէ թէ Հոնգնու ազգի մի յեղը, որ, ինչպէս ասում են Չինեացոց տարեգրութիւնքը, իւր ստաջնորդ Պունտի հետ շքացաւ հիստորիան Արեւելայումը, յառաջ է գնացել մինչև Ամբրիկա և, ինչպէս Պաննիայի մէջ Հոնքը, Արեւայի մէջ Նոր Եստրալայի, նոյնպէս և զորա Մեկսիկայի մէջ դուրս են երևել որպէս Ցուլտեկը կամ Ազոկեկը. Այսպիսի մի համարձակ ենթադրութիւն, որ զեռ ևս այնքան հաստատուած չէր լեզուների միմեանց հետ համեմատութենով, կարող էր գտնեսոյ բացայայտել թէ ինչ պատճառով նոր ցամաքահատը չունի ջորան. Պատճառ, ասիական անապատների բնակիչքը ևս չեն երկրագործ. Եթէ այդու ամենայնիւ հոփուական կենանքը, այդ օգտակար միջին աստիճանը կրթութեան, որով լծախառական որսորդ ազգերը կապում են խոտաւետ զետի վերայ և նմանապէս բայցում անապարհը զէպ ի երկրագործութիւն, անձանսթ է մնացել Ամբրիկայի նախնի ազգերին, այս պատճառով ահա, հարաւային անապարտ Ամբրիկայի գառարկ է մարդերից, ևս սորա փոխարեն, արձակ համարձակ ներգործել են բնութեան զարութիւնքը յառաջացնելով բազմատեսակ կենդանիք. այն ազգել է բնութիւնը աղատապէս և ինքը իւրանով միայն չափ և սահման գտնեն-

լով, ինչպէս ջուջանումէ ածեցական կեանքը անասունների մէջ Օրինակօ գետի մաս, ինչ տեղ Հիմնաւայրին և Հսկայարուն դարնի ծառին ոչինչ ժամանակ վտանգարեր չէ մարդու կործանիչ ձեռքը, այլ միայն ղեղիս բնղմնաօրութիւնը պատասխող բուսականների, Ազուտիք անունով խոյտածամուկ եղջերուներ, զրահապատ Արմաղիլներ խոշոր մկնների կերպարանքով, որ զեփնարնակ նայաբառակներին ահ ու գող են պատճառում նոցա փոսերի մէջ, դանդաղեղոտ խիզուիքը, զեղեցկախոյտ Ախիկը որ ապականուանն օդը, մեծ անբաշ տուիծը, Բրազիլեան վազրներ որ մանուկ եղը վայր կոխած շաշկու մկն և տանու մկն դէպ ի բլուրը, — այսպիսի և այլ գաղաններ թափառումն անձառ դաշտաւայրի մէջ, Այս գաշտաւայրը, ուր կարող են բնակել գրեթէ գաղանք միայն, ոչ մի թափառական ժողովուրդ որ, թնօլ այդ պատճառը, ինչպէս Հեղեղեցիք, նախապատիւ է համարում բուսական կերակուրը, չէր կարող գրակել և կապել իւր հողի վերայ, եթէ չը գտանվէր այս տեղ և այն տեղ լայնատերև արմաւենին, այս օգտակար, ապրուստ տուող ծառի պատուականութիւնքը շատ հաշակաւոր են. գորանով միայն կերակրումէ Գուարաունք ասած մի անշաղթ ժողովուրդ Օրինակցի ղետարերանի մաս, Կախելի մահիճներ, հիւսած այս արմաւենու տերևակոթներից, արուեստապէս պարզումին դարբ մի ծառի բունից դէպ ի միւսը, և սոցա վերայ, երբ որ Օրինակցի ղետարերանը ծածկվումէր անձրևի հեղեղով, ապրումին նոքա կապիկների պէս, Այս կախելի խրճիթները մի մասնով սուաղումն կուով, և խոնաւ յատակի վերայ կանաչքը կրակ են վառում անական հարկաւորութենների համար, Ով որ գիշերով անջանումէ գետի վերայից, տեսանումէ բոցեր բարձր օդի մէջ, Գուարաունքը իւրեանց պատ կեցութեան պահպանութիւնը պարտական էին այն փոխք ճախճախուս գետին, որի վերայ թեթև ոտերով վազումն նոքա, և իւրեանց բնակութեան ծառերի վերայ, որ տալով նոցա մի բարձրանխուս պատուարան, ապահով էին կացուցանում նոցա անձը ամենայն վնասից:

Իսկ այս արմաւենիքը տալիս են նոցա ոչ թէ միայն ապահով բնակութիւն, այլև բազմատեսակ կերակուր, Երաւջ քան թէ արու արմաւենու վերայ պատասխումէր ծաղիկ քերուչ պատեանը, բունի ուղեղը պարունակումէ իւր մէջ Պազրի պէս ալիւր, որից բարակ, հացի նման տափարակներ շինած շորանումն, Այդ ծառի քաջախոյզրած ծուծը տալիս է այն քաղցր արրեցուչիչ արմաւազինին Գվարաունեան ազդի, Գալարապատ պտուղքը, որ նման էին կարմրազոյն եղևնաբնձորների, տալիս են, որպէս Պեղանդը և այս կլիմայի համար բնա թէ բոլոր պտղեղէնքը, զանազան տեսակ կերակուր, նայելով

Ընկալաւ գործ էին զբաւաւմ նորա, արդեօք նոցա շարքարանի թը
բոլորովին պատրաստվելուց յետոյ, թէ յառաջուց, երբ որ զեռ եւ
այլերուս որպիսութեան մէջ էին Այսպէս, ուր որ մարդկային իմա-
ցականութեան շարք շատ նուազ էր (նման միջատին որի կերակուրը
մի քանի ծաղկամասունք են), տեսանումներ, որ մի բովանդակ ժողո-
վոցի սպորուստ կապած է մի հաստ ծառի վերայ, նոր ցամաքահողի
յայտնադործութենից յետոյ, դաշտավայրը բնակելի է դարձել մար-
դերի համար. ծովեզրերուցիւրի և Գլխայնայի մէջ կապակցութիւնը հեշ-
տացնելու համար, շինած են այս տեղ և այն տեղ քաղաքներ անա-
պատական գետերի վերայ, Գոցանից հետի, ամենայն տեղ սկսել է
տաւարապահութիւն այն անշարիւր տարածութեան մէջ, որական ճա-
նապարհով հետի միմեանցից կան խրճիթներ եղնի մարթով ծածկած
և կաշեշէն լարերով հիւսած, Ապրենացած ցուլերի, ձիաների և
ջորիների անհամար բազմութիւնը շրջումն զոցա մէջ, Արգարե հին
աշխարհի շնչաւորների մեծապէս բաղմանալը աւս տեղ այնքան զար-
մանալի է, ինչքան բազմատեսակ էին այն փտանքները որոնց հետ այս
կլիմաների մէջ պիտոյ է պատերազմէին նորա, Նրբ որ մշտապայծառ
արեգակի ուղղահայեաց ճառագայթները ներգործելով, կանաչախոտը
ածխացած փշովումին աւաղի պէս, Ճեղքումն կոշտացած գետինը,
որպէս թէ՛ երկրումեր զորաւոր երկրաշարժութիւնով, Եթէ հանդի-
պումն այս տեղ հակառակ տեղէն հոսանքներ և սոցա զարկվելովը
միմեանց գոյանումն շրջնապատշտ շարժողութիւն, սպա մի զարմանա-
լի տեսարան է ցուցանում անապատը, փոշին ձեւանալով որպէս ձա-
գատատեսակ ամպեր, որոնց ծայրերը շփումին երկիրը, շոգիանման
վեր է բարձրանում օդացանցաւ, գուցե և ելերտրականութեամբ լրջ-
ված, միջնավայրովը մրրկի, նմանելով շատաչող թաթառներին որոն-
ցից երկիւղ ուներ և փորձառու նաւարիւն, Ապա ըստ երևութիւն
միայն ցածացած երկնակամարը ձգումը անապատացնալ դաշտի վերայ
մի պզտոր յարդագոյն կիսալոյս. հորիզոնը յանկարծ մտնումն աւե-
լի, անապատը նեղանումն, ինչպէս ճանապարհորդի սիրտը, Այս ջերմ
փոշիացած հողը կախվելով մատախլանման վարագուրված օդապատի
մէջ, սաստիկացնում օդի խեղդողական վերութիւնը, Արեւելեան հողմը,
փոխանակ հովութեան, բերումն միայն նոր տոթ, երբ որ նա անցա-
նումն երկարամիջոց ջրուցած գետնի վերայով. այլև առ սակաւ սա-
կաւ շքանումն ճահճները որ զեղնացած լայնատերև արմաւենին պահ-
պանումը շոգիանալուց, Ինչպէս ստանապատ հիւսիսումը ցրտից կար-
ծրանումն անասունքը, նշյնպէս անշարժելի նշումն այս տեղ կրո-
կողիլտը և բոս օձը, խոր թաղած չոր կաւի մէջ, Ամենայն տեղ ցա-
մաքութիւնը քարոզումն մահ, և լուսի շեղեալ ճառագայթների խա-

դարկութիւնը գոյացնելով մի ցնորական պատկեր, որպէս թէ անպատր արեկոծեալ ջրի երես էր, ամենայն տեղ Հալածումէ ծարախ կենդանին, քանձր փոշեղէն անպերով ծածկած, սովից ու ծարախց պատակելով շրջումն եղները և ձիաները, սորա երկարացնելով վզերը և դեպ ի վեր հոտտակելով հողմը, որ օդի հոսանքի խոնաութենից կարողանային գուշակել մի ճահճի մտաւորութիւն որ գեռ ևս չէր շոգիացած ամենեկն, Աւելի զգաստութենով և խորագիտութենով որոնումն ջորիքը այլապէս հանգստացնել իւրեանց ծարաւը, Բի լուրրակ և բազմակող բուսական, ձմրուկի քարտուսը, իւր փշեղէն պատենի մէջ փակում ատտաջութ ուղեղ, ջորին առաջի տերով դեպ ի մի կողմ վարկելով փշերը, ապա համարձակումէ զգուշութեամբ մտանցնել շրթուները և բռնակ փշեղէն բուսականի հովացուցիչ ծուծը, Բայց ջուր հանելը այս կենդանի բուսական աղբիւրից չէ միշտ առանց մտանգի, պատճառ, շատ անգամ տեսանումնին կենդանիք որ իւրեանց ամբակը գոսացուցել կին քարտուսի փշերով, Եթէ վերջապէս, այրող ցերեկի սովից յետոյ գալիս և նոյնպէս երկար գիշերի հովութիւնը, և այն ժամանակը հանգիստ շունին եղները և ձիաները, Ահագին շղթիկներ հալածումն նորանց գիշերը, անյարար Ծուծումն նոցա արխըր և պինդ կախումն նոցա քամակից, որի վերայ յառաջացումն ժահրակից խոցեր, որանց մէջ բուսաւորումն մոկկտուք, հիպոթորոսկոսը և այլ միւս բազմակիս խայթիչ ճանձեր, Այսպէս, անասունքը վարումն մի յաւակից կեանք, երբ որ արեգակի սովից չքանում ջուրը երկրի վերայ, Աւերումը, երբ որ այս երկար ջամբութենից յետոյ գալիս և զովարար անձրևի ժամանակը, յանկարծ ստանում անապատը մի այլ կերպարանք, Մոյգ կապտութիւնը երկնակամարի որ մինչև այժմ երբէք պատած չէր անպերով, պայծառանում այնուհետև, հազիւ թէ կարելի էր գիշերով նկատել սեւա տարածութիւնը Հարաւային խաչի կենդանակերպի մէջ, մազելանեան անպերի մեզմ փոսփորանման փայլողութիւնը շիջանումէ, և Արծուի և Օնակալի գազաթնահայրաց համաստեղութիւնքը փայլումն զողողուն աւելի նուազ մոլորակեան լուսով, Հետաւոր սարերի պէս երեսումն ջան և շիր անպեր հարաւումը, մատախանման պարզումն զոլորշիքը գազաթնակաթի վերայ, կենդանացուցիչ անձրևի գալուստը ծանուցանումէ հետաւոր որտաը, հազիւ թէ երկրի երեսը թրջված էր, խեղճ ծածկումէ հոտաւտ անապատը քիւլինդիս, բազմաթաղանթ պատաղան բուսականներով և այլ տեսակ խոտերով, Աուսիլը զըրգովելով բանջարանման միմոյքը բացումն իւրեանց նիբհոլ տերեւները և ողջունումն արեւածաղբ ինչպէս թուշունների առաւօտեան երգասացութիւնը և ջրային բուսականների բայտոլ ծաղիկները, Այնու-

Տեսե՛ք ձիանքը և կովերը արածուձն, ուրախապէս վայելելով իւրեանց կեանքը. բարձրահասակ խոտի մէջ թաքչուձէ գեղեցկախայտ Եսդուար կենդանին, և անցաւոր անասունները որսուձէ կատու անման թեթեւութեամբ վերայ վազելով որպէս ասիական վագրը, Պատահուձէ երբեմն, ինչպէս պատմուձնն աշխարհի բնակիչքը, որ ճահիճների արփրումը թորջած կաւը հողակոշտի ձեւով բարձրանուձէ կամայ կամայ, ապա յանկարծ սաստիկ թնդիւնով, ինչպէս սուբրական էր փոքրիկ տղմարուղև կրակասարների պատասջելու ժամանակին, փորած և քանդած հողը դէպ ի վեր-է ցնդվում՝ անցների պէս: Այլ որ տեղեակ է այդ տեսարանին, փախչուձէ դորանից. պատճառ, մի ահապին ջրեղէն օձ, կամ թէ մի զրահապատ կրակողիլուս դուրս է վազում այն փոսից, ըստ որում այդ գաղանքը անձրևի հեղեղից խելոյն զարթած էին իւրեանց մահաման քնիցը: Եւ փոքր փոքր զայրանալով գետերը որ դէպ ի հարաւ սահմանաորուձն զաշտախայրը, զոր օրինակ Երասուկա, Եպզուրէ և Պայխարա, բնութիւնը տարբուձէ այն անասունքը, որ տարու առաջին կիսումը անջուր, փոշեղէն գետնի վերայ պապակուձէին ծարաից, ապրել որպէս երկակենցաղ կենդանիք: Ելնուձէ տեսե՛ք զաշտի մի մասը երևուձէ որպէս մի անշափելի միջերկրական ջուր: Մասակ ձիանքը իւրեանց քուռակներով հեռանուձնն բարձրանիստ աւազուանների վերայ, որ երկայն տարածութեամբ որպէս կղզիք վեր են ջցվում ջրի վերայ, Գնալով գնալով փոքրանուձէ ցամաքահողի տարածութիւնը. միասին հաւաքված անասունքը արտա չը գտանելով, ողջոյն ժամեր լող են տալիս այս կողմ և այն կողմ արոյտքելով և շքաւորապէս կերակրվումն այն խոտի ծաղիկներով որ բարձրանուձէին թխադոյն հուացող ջրի վերայ: Ըստ քուռակներ խեղդվումն, շատերը բնջվումն կրակողիլուններից, որ իւրեանց ստամուսար տանելովը ջարդուձէին նորանց և կլանուձէին: Եղնուձէ տեսանվումն շատ անգամ ձիանք և կովեր, որ ազատվելով այս արևնածարա գազանների բերանից, կրուձէին իւրեանց ազդրների վերայ նոցա սուր ստամների նշանը: Եւս տեսարանը ակամայ յիշեցնուձէ ուշադիր նկատողին այն ընտելականութիւնը որ ամենահար բնութիւնը շնորհել է քանի մի անասունների և բուսականների, ինչպէս հացտարգեկ Կերեսի այլիւրտս պտուղքը, նոյնպէս և ցուլը և ձին բնկերացած են մարդուն բոլոր երկրի վերայ, սկսեալ Գանգես գետից մինչև Պլատոյի հեղեղատը, Եփրիկայի ծովեղեկութից մինչև Ենտիսանայի լեռնադաշտը, որ աւելի բարձրանիստ է քան թէ Տեներիֆայի կոնտանէ սարը: Եւս տեղ հիստիսային սպիտակածաւը (բևուլա), այն տեղ արմաւենին հովանաւորութիւն է տալիս վատտակած ցուլին միջօրեական արևի ճառագայթներից: Մի և նոյն կենդանին, որ արևելեան Եւրոպայումը

պատերազմ ունի արջերի և գայլերի հետ, ուրիշ կլիմաների մէջ երկիր ունի վագրների և կրօկողիլաների երևոյց, Բայց կրօկողիլաբքը և ետղուարքը չեն միայն, որ խնդրումեն հարաւային Ամերիկայի ձիաների կեանքը. և ձկների մէջ ունին նորա մի գտանգաւոր թշնամի Բերա և Բասորո տեղերի ճահճիճքը լցված են անհամար ելեբորական օձաձկներով, որոնց մաղաստա զեղնախալտ մարմինը ամենայն մասնից արձակումէ սասանեցուցիչ զօրութիւն, ինչպէս կամենում. Այս ձրկները ունին հինգ մինչև վեց ոտնաչափ երկարութիւն. Նորա սյներան զօրաւոր են, որ կարող էին սպանել ամենամեծ կենդանիք, երբ որ իւրեանց ստատաջիլ անդամները միասին թափ են տալիս յաջող ուղղութեամբ. Բրդարև միանգամ հարկաւոր եղաւ փոխել Արիստոկոսի անապատային ճանապարհը, ըստ որում այս ձկները մի փոքր գետի մէջ սյներան բազմացած էին, մինչև ամենայն տարի շատ ձիաներ անցանելու ժամանակը խեղդվումէին թմբութեանց. Այս ահարկու ձրկների մասաւորութեանց փախչումեն բոլոր միս ձկները, Այս և ձրկնորաների վերայ, որ բարձրանիստ գետափից ձգումեն իւրեանց լարը, ահ ու զող էր գալիս, երբ որ թաց որսողական լարը հասուցանումէ նոցա այն սասանեցուցիչ զօրութիւնը. Այսպէս ահա ելեբորական կրակը դուրս է զարկում ջրերի խորքի միջից. Կենդանագրութեան արժանի մի տեսարան էր, երբ որ Ամերիկացիք պիտոյ է որսոյին նորանց. Տորիք ու ձիանք ներս էին վարում մի ճահճի մէջ, որ ամենայն կողմից չրջափակումեն Ամերիկացիք. մինչև անսովոր աղմուկը դրգոումը համարձակ ձկները, Պարս օձի պէս լող էին տալիս ջրի երեսին և խորամանկութեամբ անց էին կենում ձիաների փոքի տակից. Ձիաների շտտերը ստատկվումեն աներևոյթ զարկուածների զօրութեանց, միտերը բաշերը քստմեկեցուցած, փչելով, մի անսովոր ահ ու տազնայ կայծակնախայլ աչքերի մէջ, փախչումեն այս կատաղի փոթորկիցը. Բայց Ամերիկացիք, բամբուսեան գաւազաններով զինարարված, յետ են փարում ձիանքը ճահճի մէջ. Առ փոքր փոքր հանդարտումէ կատաղութիւնը այն պատերազմի որ ունին աւելի զօրաւորը աւելի տկարների հետ. Գիւմետորը (ելեբորական ձկները) իւրեանց ծանրութիւնը թափ տուած անպերի պէս, ցան և ցիր են լինում. սորա երկար հանգստութեան և ստատ կերակրի կարտ էին, որ միսանգամ ստանային այն գալվանական զօրութիւնը որ վատնել էին. Այնուհետև աւելի և աւելի թուլանումեն նոցա զարկողութիւնքը. Շոգիապատեալ ձիաների աղմուկից վախեցած, մտռնումեն նորա ճահճի փերին, ինչ տեղ վերադարձելով նորանց բազմած անի թիակով և բունելով չոր, ելեբորականութիւնը շիտազրող փայտով դուրս են քարշում զեղ ի ցամաք. Ահա այս է այն զարմանալի պատերազմը ձիաների և ձկների

մէջ, ինչ որ աներևութապէս ներգործուեալ որպէս այս ջրեղէն բնակիչներին կենդանի ղենքը, ինչ որ, խոնարհ և անհասարար մասների շաշախուժեմնով զարմեցած, պոռյտքուեալ շնչաւոր և բուսական արարածներին բոլոր գործարաններին մէջ, ինչ որ լայնատարած երկնականարբ որոտեցնելով բոցախառուեալ. ինչ բան երկամբ երկամի հետ կապուեալ և կառավարուեալ առաջնորդական ասեղի հանդարտ և անպարտաձական գնացքը, այդ բոլորը, ինչպէս բաժանած լուսեղէն շառախի գոյնը, բղխուեալ մի և նոյն աղբիւրից, ամենը միախառնովելով բաղկացնուեալ մի մշտնջենաւոր ամենատարած զօրութիւն.

Այս տեղ կարող էի ես, ասուեալ Հուսիտը բնաշինը, որ այս ճառի հեղինակն է, վերջացնել այս իմ համարձակ ձեռնարկութիւնը նկարագրելու անապատի բնութիւնը. բայց ինչպէս որ ովկիանոսի վերայ երևախոյութիւնը յոժարութեամբ զբաղած է հետաւոր եղբրնեւրի պատկերներովը, այսպէս ես մէք, յառաջ քան թէ կը հրաժարուիմք այս մեծ անապատից, ձգենք մի հարեանելի հայեցուած այն աշխարհներին վերայ որ սահմանադրուեալն այս անապատը.

Աֆրիկայի հիսթիակոզմուսն անապատը բաժանուեալ այն երկու ազգերը որ սկզբնապէս պատկանումն մի և նոյն աշխարհաբաժնին, և որոնց անհաշտ հակասակութիւնը երևուեալ այնքան հին, ինչպէս առասպելքը Օգիբիոսի և Տիւֆոսի մասին, Առլախից ղեպ ի հիսթիս բնակումն հարթ և երկայն մաղերով աղբեր որոնց երեսի գոյնը ղեղին է, և ղեւթի կազմածը Աովկասեան. Սորա հակասակ Սենեգալի հարաւակոզմուսը ղեպ ի Սուդան բնակումն Նեգրներին ընկերութիւնք որոնց յուսաւորութեան աստիճանը շատ զանազան է, Միջին Ասիայումը, Գանգոսիան անապատով բաժանուեալ մերերական բարբարոսութիւնը վաղաժամանակեայ մարդկեղէն կրթութենից Հինդուստանի կիսակղզումը.

Այս հարաւային Ամերիկայի տարարակքը սահմանադրուեալն Եւրոպեան կիսայուսադրութեան աշխարհը. հարաւակոզմուսը, Վենեզուելայի սարգոտու և Անտիլլեան ծովի մէջ տեղումը դրած են վաստակաւեր քաղաքներ, սիրուն գիւղեր և խնամով շինած դաշտեր, խիտ տախտա միմեանց մտա: Այս և ճարտարութեան արտօժակ և գիտնական կրթութիւն վաղուց զարեմած են այս տեղ.

Ղեպ ի հարաւ, անապատը շրջապատուեալ մի ահարկու վայրենի տեսարանով. հաղարամեայ անտառներ, անանջանելի մաշտոններ պատումն խոնա. հողասահմանը Օրինոկո և Ամազոնեան հեղեղառաների մէջ տեղումը. Գեժամարմին կապարագոյն որձաբարի կոտորներ նեղացնումն փրփրայող գետերի ձորերը, սար ու ձորը թնդումն յարձակվող ջրերի որոտովը, եագուարի գոռացքովը և մորուքաւոր կապիկ-

ների աղաաւայն անձրեագուշակ ունայլով, ինչ տեղ սակաւաջուր հեղեղատը թողումէ աւազուտը, այն տեղ լայն երակով, անշարժելի պարզված էին կրոկողիւթաների անճօռնի մարմիններ, որոնց վերայ շատ անգամ նստած էր թռչունների բազմութիւն. Վագրախայտ բոս օձը իւր տուտը ամբայրած մի ծառի ճիւղի վերայ և ոլոր եղած, նայուած գետի ափումը այն որսին որ անտարակէյս պիտոյ է ըմբռնէր. աբազապէս յառաջ պարզվելով, գետից անշանելու միջոցին, ըմբռնումէ երինջը կամ լճէ մի աւելի տկար վայրենի անասուն, և այդ կողպուտը պատելով իւր լորձուներով, դժուարութեամբ ներս է խրցկում ուղղրած կոկորդովը, Ըյս մեծ և վայրենի բնութեան մէջ ապրումն տեսակ տեսակ աղգեր. զարմանալի զանազան լեզուներով բաժանված միմեանցից, վարումն ոմանք լծախառական կեանք, սպէս են երկրագործութեան, մրջնակներ, խժամեր և հողակեր, մի կղկղանք մարդկութեան, զոր օրինակ Օտտամաքները և Նարուրները. միւսերը ունին հաստատուն բնակութիւնք, սնանումն իւրեանց աշխատութեամբ, ձեռք բերած պտուղներով և խելքը ու աւելի մեղմարարչ են, զոր օրինակ Մակվերիտարըրը և Մակուքը, Մեծ մեծ տարածութիւնք կասիկվարի և Ըմբարայցի մէջ տեղումը բնակարան էին Տասիքների և բնկերական կապիկների, բայց ոչ մարդերի, Ըպտածի մէջ փորագրած պտակները ջուշանումն, որ մի ժամանակով և այս անապատը աւելի բարձր լուսաւորութեան տեղի էր. նոքա վկայումն աղգերի փոփոխական վիճակի մասին, ինչպէս ձեակերպութիւնը այն վախուկ լեզուների որ մարդկութեան անջնջելի յիշատակարաններից մին էին. Բայց, ինչպէս դաշտավայրի մէջ վաղրները և կրոկողիւթաները պատերազմումն ձիաների և եղների հետ, նոյնպէս դաշտավայրի անտառային եզերքումը, Վայրանայի վայրենի սահմանների մէջ, տեսանումներ մարդը միշտ և հանապազ զինաւորված ընդդէմ մարդուն. այս տեղ ողջոյն ժողովուրդներ անբնական արիւնասիրութենով խժումն իւրեանց լճնամու գուրս ծծած արիւնք, միւսերը սպանումն իւրեանց լճնամին, ըստ երեւութին, առանց սրի, լծումաւորած բժամատի եղծագով, Ըւելի տկար աղգերը սուր կոխելով աւազուտ ծովեղերեւայրի վերայ, զգուշապէս քնջումն ձեռքերով իւրեանց սոսնատեղիքը:

Ըյսպէս ահա մարդս գտանվելով ամենախորին անասնական վայրենութեան մէջ, որպէս դարձեալ մոլորվելով իւր կարծեցած խարելայ բարձր կրթութեամբը, միշտ պատրաստում իւր համար մի տառապագին կեանք. Ըյսպէս, ճանապարհորդը շրջելով լայնատարած երկրի, ծովի ու ցամաքի վերայ, ինչպէս որ պատմութեան բնկէր շրջելով դարերի և ժամանակների մէջ, ամենայն տեղ հանդիպումէ մարդկեղէն ազգի միատեսակ անմիտիմար պատկերին, Ըյս պատճառով

այն մարդը, որ ազգերի դեռ ևս չլիքըցած երկպառակութեան մէջ
ցանկանումէ հոգեղէն հանգարտութեան, անտրտելով ընկղմումէ իւր
հայեացքը բուսականների խողալ կենդանութեան և սուրբ բնութե-
նական զօրութեան ներքին ներգործականութեան մէջ, կամ թէ ան-
ձնատուր լինելով իւր ընդարդյս ձգտողութեանը որ, սկսեալ հազա-
րաւոր տարիներից, վառելով բորբոքումէ մարդու ներքինը, գուշա-
կողական հոգով վեր է նայում դէպ ի բարձրանխտ աստղները որ
անխափան զուգապատշաճութենով կատարումն իւրեանց հին յախ-
սենական ընթացքը:

Հոգեւոր գերեզմանական ընթացք:

31. ՊԵՐՈՒ:

Եթէ մարդու հոգին զուարթանումէ յուսալով մի աւելի վե-
րին վայելչութիւն, ուրեմն ճանապարհորդը դարձուցանելով աչքը Պե-
րու աշխարհի վերայ, պիտոյ է նոր զօրութիւններ կենդանանային նո-
րա սրտի մէջ: Թէպէտև ճանապարհորդ մարդը ման էր ստած այն-
պիսի աշխարհների մէջ որոնց բաշխել է բնութիւնը իւր ստատ և
բազմատեսակ պարզեները, այնու ամենայնիւ ունէր նա պատճառ մտա-
ծել, որ իւր անկալութիւնը ևս առաւել զեղեցիկ, ևս առաւել վեռ-
մական հանդէսներ բնութեան մէջ տեսանելու կարող էին կատարվիլ
հիմնաւոր կերպով: Պերուն մի ամենագեղեցիկ, ամենալիսեւ և նոյն-
պէս մի մեծաուսուկ սահաւոր բնութեան աշխարհ է. և այդպիսի դու-
թիւն միայն կարող էր այդպիսի աշխարհ կերպարանել: Մի տարա-
ծութիւն որ մասնապէս մտ 10,000 տանաչափի բարձրանումէ ծովի
երեսից, որի վերայ պարզումն համարեալ թէ կրկնապատիկ աւելի
բարձր սարեր, որ և զետեղված էր ուղղահայեաց արեգակի տակ: Երբ
որ Վույակիվիլի և Մանտայի նաւահանգստից դուրս գալով դէպ ի Քլի-
սո, բարձրանումնս դէպ ի Աորդիլիերեան սարերը, ինչպէս բազմորինակ
տեսարանների, սրպիսի ներհակութեանների բոլոր բնութեան մէջ հան-
դիպումէ քո աչքը: Հետանալով աւազուտ ծովեղերեւալքիցը շրջումնս
դու հազիւ թէ անցանելի անտառների միջով և Հասարակածի արե-
գակը տղմտ գետից դուրս է հանում մի անչափելի բուսական աշ-
խարհ: Ամերիկայի հողապարանոցի աճեցականքը ըստ մեծի մասին և-
րևումնն և այս տեղ, ապա տեսակ տեսակ եղևիքը, բամբակենին, եր-
կաթի և արանոս ծառը, բարձրահասակ, կայմիքի համար շատ պիտա-
նի, Մարիամի ծառը իւր սղիտակ կեղևով, շատ պատուական արմա-
ւենիք արձակումն իւրեանց արմատները գրեթէ միայն հողի երեսի

վերայ, և բազմաթիւ օտարանունող բուսականներ և մեծամեծ լիւնի-
այր պատտովելով նոցա վերայ, ասեա թէ շղթայակապումն միմանց
հետ: Նոցանից շատերը սահմանել է բնութիւնը, որ լինին մեծապէս
օրտակար մարդուս, զոր օրինակ հոշակաւոր բուսականը Կպերաբուսան-
հա, Վանիլլէ և այլն: Ըյս թանձր ստուերների տակ դուրս են բու-
սանում բազմապիս սունկեր, մամուռներ և եղեգնաբոյսեր. այս վեր-
ջիններից մի քանիքը, զոր օրինակ բամբուսեան եղէգը, շատ անգամ
հասանումն 20 մինչև 30 սոնաչափ բարձրութեան և զորն են ան-
գամ բնակիչների սնաչինութեան համար: Նոյնպէս ճոխ և բազմա-
բիւնակ են շէշուոր արարածքը. այս տեղ էր բնակում Եագուարը,
Օջելուրը, Եագուարեաւոր, Պուման և նոր աշխարհի միւս ահարկու գա-
զանները, Ասպիկների և թութակների բազմութիւնը իւրեանց աղա-
ղակով և շատախօսութենով խաչնումն մարդու ականջը, թռչուն-
ներ, ինչպէս ճուկանները, իւրեանց անձոտնի թեպէս մասնապէս գե-
ղեցկադոյն կոուչներով, Վալլինաքը, տեսակ տեսակ Բուքքոներ, շա-
կաչաղակներ, ծառախաղակներ, անտառային աղանիք, փորրիկ երգե-
ցող թռչուններ, կարճ ասեմ, մի անչափիկ բազմութիւն փետրա-
ւորների, կենդանութենով լցուցանումէ ծառաստանների գլուխը, և
նոյն միջոյին վնասակար և անվնաս օձեր, սկսեալ Ըրումս և շառաչող
օձերից մինչև ամենախոր կնջոված օձը, ահայնումն ճանապարհորդի
սիրտը, թանձր անցերի պէս հաւարված մուսկիտոսներ և խոյթնող
ճանձեր, այլև մրջիկներ արիւնածարաւ կերպով յարձակումն մար-
դու վերայ, և ահագին սարդեր որպէս և կանգունաչափ երկայնութե-
նով և բթամատի հաստութենով ճճիներ զարհուրանք են պատճա-
ռում: Ըյս տեղ այնքան չափազանց է խոնարութիւնը, որ անկարե-
լի էր արձակել մի հրացան, որ մի քանի ժամուց յառաջ լցրած էր,
այլև ճանապարհի պարկի մէջ փակած թուղթը հաղիւ թէ բնդդիմա-
նումէ փոտղութեանը: Փարդս կարող էր այս տեղ սպրել միայն բարձր
ցիցերի վերայ: Երբնիտց անտառային հեղեղատներ վայր են թափվում
ճանապարհորդի առաջև: Բաշուդողով շրջումէ նա անդունդների վերայ,
անցանելով ծառերի ճիւղից հիւսած կամրջների վերայով, որ շատ ան-
գամ 1800 սոնաչափ երկայնութեամբ ձգվումն մի ծայրից դեպ ի
միւսը, և ամեն անգամ ոտը կոխելով սոցա վերայ, կարծումէր դու,
թէ կը կործանվիս դեպ ի անդունդքը, այլև դարաւ, ամեն մի հողմի
փշելուց, օրորոցի պէս այս կողմ և այն կողմ են երկրվում, ճանա-
պարհորդը յաջողութեամբ յաղթելով վտանգին, համդիպումէ մի այլ
զգեսարութեան, ըստ որում պիտոյ է նորան տառապանքով վեր ելա-
նել դեպ ի բարձրաբնաց սարեր: Նոյն իսկ ապահով ջորին նախ և
յառաջ զգուշութենով շօշափումէ ամենայն քար որի վերայ ոտը էր

ղնում, և այդու ամենայնիւ եօթն կամ ութ քայլափոխ արած, այնպէս վաստակում, որ պիտոյ է հանգստանար: Այս գեղեցկապէս վայրենի բնութեան մեջ, մարդս որպէս թէ կամենալով ներհակ զուրազալ նորան, շինել է իւր համար ջան և ջիւր բնակութիւնք և սխեւանք: Եւ ինչպէս քաղցր էր վաստակած ճանապարհորդին տեսանել այս բամբուսաշէն գիւղերը: Ինչքան բարձրանումես, այնքան առաւել փոքրանումէ ջերմութիւնը. անտառը անօսրանումէ, վեր ելանելու զբուսարու թիւնը մեծանումէ, բայց նոյնպէս աւելի լաւանումէ օդը: Այս բանը փորձով իմացան Բուզէ և Կնդամին ճանապարհորդքը, որոնցից մինը հիւսիսակողմից և միւսը հարաւակողմից ելանումէին դեպ ի այն բարձր սարերը, այսինքն դեպ ի այն մասը Կորգիլիերեան սարերի որ իւր ներսումը փակումէ անպատմելի փառաւոր աշխարհը Քփիտօ, մի փոքր դեպ ի հարաւ, Հասարակածիցը: Չմայլեցուցիչ էր նոցա համար այս մի հատիկ աշխարհը, զբախտի պէս պարզումէր այս տեղ նոցա աչքի առաջն և արձակ ձոր, գրեթէ վեց մղոն երկայնութեանով, որ կտրատումէին պայծառ վտակներ և միախառնելով շինումէին մի գետ: Ինչքան հետի միայն կարող էր հասանել աչքը, երևումն առասաշէն դաշտեր, խոտնովելով մարգագետինների, խոտաւէտ բլուրների, կանաչապատ ցանկերի, այգիների, ագարակների և ողջոյն գեղերի հետ: Այս գրաւիչ տեսարանը փակումէ իւր մէջ Քփիտօ քաղաքը, մի շատ քաղցր և պայծառ եղանակ յիշեցնումէ քեզ այս տեղ հարաւային Եւրոպայի ամենագեղեցիկ աշխարհների վայելչութիւնը. բայց այս տեղ տեսանլումն ամենայն եղանակների և ամենայն երկրաբանութիւնների պողարերու թիւնք. անդադար կից է այս տեղ զարունը աշնան հետ. ամենայն ժամանակ ծառը կրումէ դալար տերևներ, բողբոջներ, ծաղիկներ. մի և նոյն օրի մէջ տեսանումես զու վարուցանք և հունձ. Շաքարաբեր եղէգնի, լեղակի ծառի և բամբակենու մասին ածումէ Եւրոպայի ջորեանը հարիւրաւոր պտուղ բերելով, Պիզանզը, Կիտրոնը և Պամպլուսը հրաշափայլումն այս տեղ կից Ֆրանսիայի ամենապատուական պտուղների հետ: Այս զմայլեցուցիչ տեսարանից դեպ ի վեր ուղղելով հայեացքդ, կը հանդիպէր քեզ մի անպատմելի վսեմական ամրոզը տեսարան. Քփիտոյի գաւառը իւր 25 եկեղեցաւոր գիւղերով և իւր 30,000 բնակիչ ունեցող մայրաքաղաքովը. այս մ.ծ. 10,000 ոսմաշափ բարձրացած լեռնադաշտակը գտակորումէ գրեթէ մղոնաւոր բարձր ստանապատ սարերով. առաւ վերայի ձիւնը մշտընջեմաւոր է, ինչպէս աշխարհը, բայց նոցա կատարներէ շատերը, զոր օրինակ Պինիլիփա, Ընտիանա, Յանգա, Կոստայաբի դուրս են լնքում կրակ և գոլորչի, հալած ձիւնը ցած են լծաւալում հեղեղների պէս, որ ապա գշայննուանն ահագին խորութիւններ և այրպէս յառաջա-

յնուամենայնսակ զեւոհն և բազմատեսակ կլիմաներ: Այսպէս ա-
հա, այս տեղ ձմեռը սահմանակից է գարնան և աշնան հետ. մի ամ-
փիթեկատրան որ բոլոր երկրի գրեթէ ամենայն գեղեցիկ, պատուական
և մեծախառնակ ահա որ բաները ներկայանում է քիչ միանգամայն:
Այսպէս պատկերանում է միայն այս մի հասո գաւառը Պերուի, և ոչ
մի մասն աշխարհի չունէր ցուցանելու այդպիսի հշակոյ պնտիմիւն.
այլև էթէ բոլոր ընդարձակ երկրի մնացորդը համեմատելի նորա գե-
րազանց բամնի հետ, այն շատ պակաս չէր նորանից իւր բազմութեան
հրաշալի տեսարաններովը և անսոխը կազմածովը:

Համ հողի վերայ, որ հաւասարակչիւն է ծովի երեւի հետ, մի
քանի մղոն ծովիցը հեռի սկսանում է մի բարձրանիստ աշխարհ, որ պարզ-
վելով երբեմն շատ, երբեմն աւելի ընդարձակ դաշտերով, կրում
իւր քամակի վերայ այն հսկայամարմին, ամպերից դուրս վեր բար-
ձրացած, Կորդիլիերեան սարերը: Այն երկու լեռնաշարքը որ բազ-
կայնում են այս սարերը, թողում են իւրեանց մէջ տեղումը շատ մեծ
գաւառներ, բազմատեսակ ձորեր: Այս դաշտերի վերայ, որ այն տեղ
աւալում են — Վեր—, այսինքն բարձր բնակաւոր աշխարհ, երևում են
զանազան տեղերում Կորդիլիերեան սարերի կողմնակի ճիւղերը որպէս
երկրորդական լեռնագոտիք:

Այսպիսի կերպով կան այս տեղ երկրմասնեայ սահմաններ. այն
առաւել ցած, առաւել ստորին ծովեղերեայ հողը. ապա, Վերա որի
մի հաստածը միայն ցուցանում է բոլոր գաւառը Բիլիւայի, և յետոյ ա-
մենարարձր սահմանը Կորդիլիերեան սարերի Ընդէս անունով: Սորա
ջոկ ջոկ ճիւղերը աւալում են շիւնային գոտի, Կնկաների, այսինքն հին
Պերուացոյ թագաւորների թամանակումը. այն պերուական խաւից որ
բացայայտու մը այս իմաստը, ասում են թէ յառաջացել է փոփոխու-
թենով և աւերանքով ձայնս Ընտիս, և սորանից կրկին անգամ բառս
Ընդէս.— Այս սարերը, ուր նոցա արմատըը հանդիպում են միմեանց,
ձևաւորում են բարձր հողի վերայ ահագին ձեղքուածներ, շատ անգամ
մղոնաչափ լայն բացուածք. սոցա միջովը ցած տեղերից հոսում են գե-
տերը արևմտորում ղեկ ի ծովը, և արևելքում ղեկ ի ցամաք-
հողը, Վերումը պիտոյ է ջրերի անցանելու համար մնացած լինէր մի
փոքր ճանապարհ և էթէ քարեղէնը բազկանում են կարծր դժուա-
րամշէլի ազառածից, զոր օրինակ Պորփիրից, ապա կարելի էր մի-
անգամ միաւորել այն սարերի բացուածքը, որ միանգամ միակից էին
եղած. ահա թէ ինչքան ճշգրտակա յարմարութիւն նորա մինը մի-
սի վերայ:

Կորդիլիերեան սարերի ամենարարձր սահմանը անցանում է ամպե-
րից դուրս, ուրեմն և ազատ էր այն սղերեայիմներից որ ծնանում են

նոյանոյ, Մինչև այժմ ոչ մի մահկանացու մարդու չէ յաջողած երանել այս սարերի գլուխը. Կոնգամին ճանապարհորդը շատ աշխատութենոյ և վտանգոյ հասաւ միայն Կորասոնի վերայ 2470 ձողաչափ կամ թէ 14820 ոտնաչափ բարձրութեան, և թեկեա նորանից յետոյ մեծանուն ուսումնական Բարոն Հուսթըրը 3300 ոտնաչափ աւելի բարձրացաւ քան թէ Կոնգամինը, բայց զեռ ևս մետրին աւելի քան թէ 1344 ոտնաչափ, մինչև այս մտաս ընագնինը կարող էր գտանել ևրկրի ամենաբարձր, մեղ ծանօթ տեղի վերայ, Ըսնու ամենայնիս այդ գիտնաւոր մարդիկը վտանգաւոր զգուարութենների մէջ էին ահա, բոս որում շատ անօրացած էր օդը և համարեա թէ ամենայն ջերմութենից զրկված էր ատմոսֆերան, Կերբին և արտաքին օդի անչափ անհասարարութիւնը գուրս էր ճնշում արինը նոցա աչքերից, շրթուներից և ըզերից, և ցրտութիւնը անց կացաւ ջերմաչափի բոլոր աստիճաններից, Ըյս հսկայամարմին սարերի ներքը երկու կերպով արժանի է առանձին ծանօթութեան. առաջինը և աւելի անտօլոր որպիսութիւնը, որով իւր ներսումը նշանաւոր է այս ահագին սարագոտին, որ սկսեալ Պասագոնիայից, հողապարանոցի վերայով, ձգվումէ մինչև Բերինգեան ջրախողջը, էր նորա վուլկանեան կրակը, Ըւելի քան թէ 50 ստորիկերեայ կրակահանք և տղամակեր ծանօթ են մեղ մինչ այժմ այդ սարերի մէջ. սոյանից պատկանումն Պերու աշխարհին բաւական շատեր, զոր օրինակ Ընտիսանա, Կասուպարի, Տունգուրահուա և այլն, բայց ոչ ամեններից գուրս են դալիս հրեղէն խորձեր, ծուխ և բոցեղէն սիւներ և ջերմանիւթ հոսանք, Մեխիկոյի Եօրուլս սարից 1759 թուականի Սեպտ. 15 թն, բարձրացաւ մի բազալտեան կոնուս, որ այժմ մօտ 1500 ոտնաչափի վեր է ցցվում շրջակայ գետնի տարածութեան վերայ, Գվաթինալայի սարերը ժայթքումն շատ մեծ որքանութիւն սալիարի, Պապայեան և Պասսո աշխարհների հրաբուդի սարերը ցուշանումն շատ ծծմբահանք, որ գուրս են փշում ծծմբային թթւութիւն կամ թէ ունէին փոքրիկ բացուածներ լի եռացուն ջրով, որից յառաջանում ծծմբեղէն ջրանիւթ գալ, Գորա հակառակ, Քիլիսայի վուլկանը գուրս են ձգում երբեմն չեւաքար, երբեմն բազալտ կամ թէ նոյնպէս կղկղանքի պէս պորփիւր, բայց երբեմն այնպիսի ահագին հոսանք ծծմբալիւրդեան (hepar sulphuris) ջրի և տղմի, որոնցով աւելի քան թէ հինգ գերմանական մղոն հող պարարտութիւն էր տանում, Ըտաւել գարնանայի տեսիլը որ այս վուլկանը Պերուի իւրեանց ներգործութեան ժամանակը ցուցանումն, է միջոց առ միջոց գուրս ձգած բազմութիւնը այնպիսի ձկների, որ քաղցր ջրի մէջ բնակող էին, Իմբիբարու սարի գրեթէ հանգած վուլկանը, 1691 թուականին այդպի-

սի ձկներով ծածկեց Կրարբա քաղաքի գաշտերը, այնպէս որ կարծու-
մէն թէ այդ էր պատճառը այն ապականիչ տեսչերի որ այն միջո-
շին թագաւորումին այն տեղ, Բայց, որ աւելի արժանի է տեղեկու-
թեան, այս քաղաքի մեծաւորը վկայութիւն էր առլիս թէ այս վուր-
կանը ուրիշ անգամ միջոց առ միջոց, և ինչպէս պիտոյ է մտածել,
ստանց վուրկանական ճայթիւնի, մանաւանդ սաստիկ անձրեւոյ յետոյ
դուրս է ձգել այսպիսի փոքրիկ ձկներ մեծ մեծ բազմութենով, որ
այն տեղ ասումն Պրեմադիլլա: Ասնկտ Գարլայի Էմբրիկալքը շատ
մութ գիշերներով որսումն այսպիսի ձկներ մի առաի մէջ և խեղ-
պէս այն տեղումը, ուր այս առուն դուրս է բղխում սարերի միջոց,
1698 թուականին փուլ եկաւ Քարնիէյրացո սարի կոկորդը, երբ որ
յտաւաջուց դուրս էր նետել նշոյնպէս հազարաւոր այսպիսի ձկներ,
խառնած կաւային սղմի հետ: Աւաղբութեան շատ արժանի բան է,
որ կարծումին, թէ այս ձկների մէջ շատ անգամ տեսած են զետ
և ս կենդանութեան հետք, թէպէտ նորա վաղուց սարերից ներքև էին
թափած: Ըշդպէս քննելով խնայան, որ այս փոքրիկ ձկները մի և
նշոյն տեսակից էին, ինչպէս նորա որ առ հասարակ հանդիպումն այն
տեղ Պրեմադիլլա անունով, և որպէս ուտելի ձկներ գտանումն
առունների մէջ, Եւ որովհետև այս ձկները որսումն այն տեղի առու-
ների մէջ, ապա խելքի մտա բան է, թէ առերկրեայ լճեր և փոսեր,
որոնց մէջ նշոյնպէս բնակումին պղպիսի ձկներ, կապակցութիւն ու-
նին այս առունների և վուրկանների հետ: Բայց միշտ մնում զժուար
բացայայտելի, թէ ինչ զորութենով այդ ձկները այնքան բարձրա-
նումն, որ կարող էին հետևել վուրկանների ճայթիւնի ներգործու-
թեանը: Եւելի մեծ վնասներ, քան թէ այն մասնաւոր զըրգիւնքը,
որ այս սարերը բերումն այս մի հատ աշխարհի վերայ, ստանց հա-
կառակութեան, պատճառումն երկրաշարժութիւնքը: Պերտի մի քա-
պէս թէ չըջարեարար: Եհա 1582 թուականից, ուրեմն Լիմա քա-
ղաքի հիմնարկութենից փոքր ինչ յետոյ մինչև մեր ժամանակները,
պատահել են այս տեղ շատ սասանութիւնք, երբեմն շատ և երբեմն
փոքրիկ աւերածք գործելով: Մեզ յայտնի են յատկապէս 16 սաս-
տիկ երկրաշարժութիւնք. սոցանից աւելի ահացուցիչը իւր ներգոր-
ծութենով արշարեւ այն էր, որ եղած է 1746 թուականին, Հոկտ.
28 ին: Եւս անչքը մի քանի օր յտաջ կանխաջոյց եղաւ մի զար-
հուրելի գոտաջքով գետնի տակից, այլև շատ վուրկաններ սկսեցին
կատաղել: զժուար թէ երեք բոպէ տեսած էր, և ահա քաղաքի տնե-
րի մեծ մասը կամ կործանված էին ստուգապէս, կամ թէ զոնեայ
շատ վնասված: Հազար երեք հարիւր մարդ ջարդուփշուր եղան, բայց

մի շատ մեծ բազմութիւն աւելի ցաւ կրեց անգամազուրկ լինելով, Մի և Նոյն միջոցին ալեկոծվեցաւ ծովը Կալլաս Նաւահանգստի մէջ (որ աւելի մտ Նաւահանգստն էր Լիմա քաղաքի համար), արձակ միջոց յետ քարշվելով եզերքից և ապա վերադառնալով յարձակվեցաւ ամենայն տեղ և հնդկացի բոլոր քաղաքը և Նաւահանգստը: 23 Նաւերից որ կային այս տեղ, խորատեղը եղան 19 հատ, համարեալ թէ 4000 մարդ զրկվեցան կեանքից: Եւս սասանութիւնքը տեւումն մինչև մեր ժամանակները. 1791 թուականի մէջ միայն պատահեցան 5 երկրաշարժութիւնք Լիմա քաղաքումը: Եւս հիների մէջ ևս առաւել զարհուրելի էր արգարե այն երկրաշարժութիւնք որ 1797 թուականին ապականեց Քլիտոյի գաւառը: Փետրվարի 7 ին, Լաքուաքուեղաւ, Համբաթա, Գիորումրա և միւս տեղեր վեր ի վայր շարժվեցան, և քանի մի սեկունդի մէջ 40,000 մարդ չը կային այլ ևս: Եւսյոսիս ճայթիւնք և սասանութիւնք (որ աւելի սաստիկ կատաղումն չսկս, մէջ) յեղափոխումն ապա լուծակոյտերի կերպարանքը. սորա երևումն և շքանումն, մի քանի վուլկանների կոկորդներ և բացումներ փլատակվելով, յառաջացնումն միւսեր. յանկարծ նոցա ներսից դեպ ի վեր է ջցում մի բազալտեան կամ շեշաքարեայ ապտաժ. այսպէս, շատ անգամ սարերը մի քանի բուպի մէջ ստանումն ամենին նոր կերպարանք: Եւն աւերածքը որոնց պտոժաւները ունին իւրեանց մէջ Կորդիլիերեան սարերի Եւրօ-անունով բարձրալայրքը, պատահումն միայն ժամանակ առ ժամանակ. սորա հակառակ, նոցա ներսումը փակած ջոկ ջոկ գանձերը, աղնիւ և պիտանի հանքերը տալիս են տեղապէս առատ շահաւետութիւնք: Եթէ դուրս հանելի Եւրօկայի աշխարհը և դրացի Մեխիկոյի մի քանի բաժինները, այնուհետեւ Պերու, սկեսալ իւր յայննագործութենից, ստորերկրեայ հարստութեններով գերազանց է բոլոր աշխարհներից, ինչքան որ ծանօթ էին մեզ: Սպանիացիք ոտք կոխելով հարաւային Եւրօկայի ամուր հողի վերայ, յուսով էին, թէ պիտոյ է գտանեն այն տեղ ահագին բազմութիւն ոսկու և արծաթի. այն տեղեկութիւնքը, որ Կուրա, Հայիոփ (Սան Գալինդո) և արեմտեան աշխարհի այլ կղզիներում ստացած էին այս մասին, այլև նոյն իսկ ոսկին որ գտած էին այս տեղ, գուցէ թէ և աշխարհի գրութիւնք, ոսկով առատ Եւրօկայի հանդէպ, երևումէր թէ հաստատութիւն էին տալիս նոցա չափազանց ակնկալութեններին: Բայց երբ որ այն ձախորդ, այս և անլսելի պատերազմից յետոյ որ պատահել էր Քաքսամարքա տեղի մտ, գերի ընկած թագաւորը, Եթահայրացաւ անունով, իւր ազատութեան համար առաջարկեց Սպանիացոց մի սրահ ոսկի անօթներով լի, և երբ որ յաղթող Սպանիացիք, այս արհամարհութեան արժանի մարդիկ, ըստ որում խաբերայ, սպանող

և ոսկեակեր, տեսան տառազագես այն մեծ մեծ ոսկեղէն նիւթերը որ գրաստացրած անմեղ Պերուպիք շալակի վերայ գրած, և հազիւ լճեկարողանալով տանել այն ծանրութիւնքը, զուրս բերելցին և մտեցրելցին նոյա, այնուհետև այդ յափշտակող սպանողների վերայ չը մնաց ոչ խելք և ոչ բանականութիւն: Գորա կարծումէն, լճե այս մի կախարդութիւն էր, և այնուհետև Պերուի սարերը երևումէին նոցա աչքին զուրսի ծածկոցներ, որոնց տակումը կային ահագին նիւթք ոսկու, արծաթի և զմրուխտի, Պասաճառ, այս լճանդագին քարերը ոչ լճե միայն շատ ծանօթ էին այն տեղ, այլև այնքան պատուելի, մինչև մի մեծ զմրուխտ պաշտումէն Յմբրիկացիք որպէս ատուած: Եւս պատուական քարը ունէր ջայլամի ձուի մեծութիւն. նորա համար շինած էին մի ստանձին տաճար և կարգած էին սահմանեալ թնուով սպասաւորք. որովհետև բոլոր միւս զմրուխտները համարվումէին այն մեծ զմրուխտի թոռներ, վասն այս պատճառի ժամանակ առ ժամանակ բերվումէին իրեանց մեծ պապի մտ, որպէս լճե սորան երկրպագութիւն տալու համար:

Իսկ այն հանքերը, ինչ տեղից զուրս էին եկած այս քարերը, չը կարողացան գտանել Յայանիացիք, լճեպէս և աշխատեցին, և Յմբրիկացիք որ շատ քաջ տեղեակ էին զորան, այնքան խելոք գտանվեցան, որ այն հանքերը ցից չը տուեցին իրեանց բռնականներին: Եւն գանձերը որ յիշեալ ձախորդ պատերազմից յետոյ յայտնվեցան, լճեպէս մեծապէս գրաւեցին Յայանիացոց անտուր աչքերը, այդու ամենայնիւ նորա մի շնչին բան էին, համեմատելով այն անշախելի հարստութիւնների հետ, որոնցով Պերուն այնուհետև մի նոր զարձուած տուեց բոլոր վաճառականութեանը, բոլոր հին առուտուրին, և այդպէս մի ամենին այլ արժանաւորութիւն սահմանեց բոլոր երուպական սպրանքների և աշխատասիրութեան համար. Պիտոյ է սակը նոյնպէս, որ Յմբրիկացոց ձեռքով հողից զուրս հանած մետալքը շատ փոքր էին. նորա ծանօթ չէին երկաթի հետ անգամ, որով կարելի էր նոցա աւելի հեշտ բանալ սարերի ներքը. լճիլ լճե կարող էին ունենալ ուղիղ տեղեկութիւն մետալպործութեան մասին, Ռեբեն բոլոր մետալը, լճե ոսկի և լճե արծաթ, պիտոյ է հասաներ նոցա ձեռքը կամ ոսկեղէնի լճե աւազով, ոսկի լուսնալով, կամ լճե գետնից զուրս բուսած զուտ արծաթով, կամ լճե փոքր ինչ խան, բայց հեշտ հաղողի լճեամբ քարերից յատակելի արծաթով, Եհս այս էին հետքը և յայտարար նշանքը այն մեծ ստորերկրայ գանձի, որ միանգամ պիտոյ է մրրիկ ու փոթորիկ բերէր աշխարհի վերայ: Մեր ժամանակներումը, գլխաւորապէս երեք տեսակ մետալներ են, որոնց վերայ հիմաւորվումն այս լճագաւորութեան վաճառականութիւնը և

արժանաւորութիւնը, այսինքն ոսկի, արծաթ և ժիպակ: Մինչև 1791 թուականը, Պերուի յատուկ փոխարքայութեան 8 սահմանների մէջ միայն հաշվումներն 69 ոսկեհանք, 784 արծաթահանք և 4 ժիպակահանք, բայց ի 4 պղնձահանքից և 12 կապարահանքից, ճասն տարու միջոցում, 1780 ից մինչև 1790 վերջը աւելցին նորա 35,355 կշիռ ոսկի 22 կարաթի արժանաւորութենով և 3,739,763 կշիռ արծաթ: Ոսկու կշիռը հաշուելով 125 պիասար և արծաթի կշիռը 8 պիասար, այն տասն տարու եկամուտքը կը լինէին 46 միլիոն, 221,280 թաւեր: Այլն երևում չէ, որ այս շահաստացութիւնը փոքրացած լինի, ըստ որում վերջին ժամանակներումը աւելացած են 38,000 կշիռ արծաթ, համեմատելով առաջինների հետ, քոստղի տեղի մեծ արծաթահանքը գտանվում մի սարի մէջ, որ ձեւարարած է որպէս շաքարի գլուխ: սորա համարեալ թէ վեց միլիոնաչափ կայրումը համարումներն աւելի քան թէ 300 հանք: Այժմ աշխատումն այս տեղ 13000 մշակ, և Պոստղու արքայական գրաստաններ տալիս է ամեն տարի 600,000 կշիռ արծաթ և 2000 կշիռ ոսկի:

Պերուացոց սէրը ստորերկրայ գանձերի հետ շատ անգամ պլանդակովում մինչև կատարեալ անմտութիւն. հազն թէ մի մտաւազործ մշակ հասած էր հողի մէջ մի ասործանի, որի մէջ գտանվումներ մի արծաթի երակ, իսկոյն այդ անմիտները շատ անգամ գործ են դնում իւրեանց ունեցած շունեցածը, որ աւելի ծիջը քննէին այս, գուցէ թէ կարծեցեալ, նոր հանքը և գորանով հարստանային ինչպէս մի կրետոս: Այսպէս վերոյստայեալ իրողութիւնը շուշանումն Պերուս որպէս այն մեծամեծ ստորերկրայ շտեմարաններից մինը, ուր պահպանումն համարեալ թէ ամենայն տեսակ հանքային գանձեր, Պատձառ, բաշի ահա յիշատակեալ զմրուխտից գտանվումն այն տեղ փրուզէ, ամբիթիթ և գոհար իսկ: Այն ինչու պիտոյ է սորա պակասէին այն տեղ, եթէ հանդիպակաց Բրազիլիան աստա էր գոյանով, Պերուի այս ահագին ոսկեղէն և արծաթեղէն նութքը պիտանի կացուցանելու, կամ գոնեայ նորանց միւս աշխարհների մէջ տարածելու համար, մեծապէս օգնական էր մի ոչ շատ նշանաւոր կենդանի: Բնութիւնը կամեղէ և հին աշխարհի ուղտերը, որ պակաս էին նոր աշխարհին, փոխարինել այս անասուններով, որպէս Ախամա, Ախուանիս և Ալուպակա: Բեկպեռն այս ամբիթիան կենդանիքը, ինչպէս և միւս շատերը չէին կարող իւրեանց մեծութենով և ուժով հաւասարվիլ մեր անասուններին, այդու ամենայնիւ նման են սոցա որպէս իւրեանց ձևովը, նոյնպէս և բարբերով ու սքտակարութենով, Ախամա կենդանին արժանի է այս տեղ աւելի մանրամասն ծանօթութեան, ըստ որում սա համարեալ թէ Պերուի մի հատ բնուարարած անասունն

է, որի վերայ այն հում մտայնները բարձած բերումն զէպ ի գործա-
տուները, և ապա արծաթեղէն գաւազաները տանձումն զէպ ի փաճա-
ռելու և ուզարկաւորութեան տեղերը: Յասկապէս Ղխամա կենդանին,
որ աւուրմէ Յարանիացոց մէջ վայրի ուխար, նոր աշխարհի ըզակի մէջ
աւելի ամբարտնոյն է. իւր բարձրութենով հաւասարում և չէին. իւր
ձեզ ըզտանման վիզը կրում զէպ ի վեր և ունի հպարտ և հաստատ
դնացք. նորա սև գեղեցիկ աչքերը մեղմ, աներկիւղ և վստահ են.
նա ունի կճղակարաշի ոտեր, գլուխը նման է քուրակի գլխի, մարմինը
պատած է երկար, խոշոր մազերով որ վզի և փորի վերայ աւելի
կարճ են. Նոցա գոյնը դանազան է. կոյ սևադոյն դարսինադոյն, խոյ-
տանձամուկ և սպիտակադոյն Ղխամա: Հարաւակողման Պերուի բար-
ձրանիստ Ղնդէսի վերայ այս ազնիւ կենդանին երամատուսը չընում և
կերակրում միայն կարծաշատակ մամնով ու խոտով. նորա զոփացո-
ւիչ ընկելին է յատակ և ստան ջուր: Բայց յատաջ գնալով զէպ ի
Հասարակածը, տեսանումս դու Պերուի սահմանումը ընտելացրած Ղխ-
ամա միայն. և Պերուացիք որ առհասարակ մի առանձին սէր ունին
ամենայն ընտել անասունների հետ, ցուցանումն Ղխամային մի ձըշ-
մարիտ մեծարներ: Յառաջ քան թէ այս անասունը պիտոյ է գործ
ած վէին որպէս բեռնաբարձ գրաստ, Պերուացիք կատարումն մի առան-
ձին տան, որով իրրև թէ ընդունումն նորանց որպէս իւրեանց ըն-
կեր և կենակից. իւրեանց խրճիթների մտա, փակած գաւիթի մէջ վար-
դարումն նոցա գլուխը բրդեղէն կամ մտարսեղէն կապերով և փուն-
ջերով, ապա հրաւիրումն հացկերութիւն իւրեանց բարեկամքը կա-
նանց և երեխաների հետ միասին:

Այս ուրախութեան անը աւարտելուց յետոյ, Պերուացիք սկսու-
նումն այն կենդանիքը սովորեցնել բեռն տանելու, բայց միշտ շա-
փաւորապէս. չը վարելով նորանց, այլ բաւական լինելով նոցա սո-
վորական գնացքից. և որովհետև Ղխաման մի հեղ, խելոք, հեշտա-
սովոր կենդանի է, խեղոյն հասկանումէ իւր տիրոջ սուլել և թողու-
մէ որ հեշտութեամբ կատարեն նորան: Առանց վաղ ստալու կամ
թէ շտապելու, այնու ամենայնիւ ծանրաշարժ չէ Ղխաման, որ և նոյն
խի սարերի վերայ ունի այնպիսի ապահով և մեղմ գնացք, որ կա-
նալք գործ էին ածում նորան առաւելապէս: Ղխաման ամուսնէ 10
պուգ, այս մինչև 15 պուգ և առանձին կերպով պատրաստում մ-
տալի գաւազանները տանելու համար: Երբ որ այս կենդանին չափից
գուրս ծանրաբեռնած է, երբ որ կամենումն նորան շտապեցնել, կամ
թէ ժամանակ չէին տալիս կերակրելու համար, այնուհետև մի դան-
դառապին ձայնով ցած է նստում, և աւազնորդի բոլոր աշխատու-
թիւնքը ընդունայն էին, նորան յատաջ վարելու համար. նա մնում

նստած և մեռածուք։ Կերբև նստելու ժամանակը Ղիաման խոնարհու-
մէ ծնկերի վերայ և ներս է քարշում բարձրը այնպէս, որ մարմինը
բոլորովին ծածկուի նորանց. բայց գլուխը միշտ ուղղակի դէպ ի վեր
է պահում։ Ղիաման լինումէ վեց ամիս յդի և ծնանումէ մի ձագ մի-
այն, լեւպէտ ունէր շատ ստիւրնէր. Չերացած Ղիամայի միւր ուսու-
մեն Բաբրիկացիք. դա, ինչպէս ասումեն, նման է ոչխարի մի, մի-
այն լեւ փոքր մի քողքահասակ էր. նորս մազը գործ են անում մի
քանի Բաբրիկացիք, սրտորաստելով ամենեին կոպիտ ծածկոցներ և այլ
բաներ. Զատաջ քան լեւ ճորիքը բերած էին Հարաւային Բաբրիկա,
այն չորբոտանին աւելի գործածական էր քան լեւ այժմ։— Ախու-
նիս կենդանին աւելի փոքր և նուազամարմին է քան լեւ Ղիաման,
և ունի շատ նմանութիւն մեր այժի Հետ, միայն լեւ վիզը աւելի եր-
կար է, և գլուխը աւելի բոլորակ, ունի կարճ, դէպ ի վեր ճցված
ականջներ, աւելի բարձր ոտեր և ոչինչ մտուց, քէկէ այս չորբո-
տանին նմանումը Ղիամային. բայց իւր բնաւորութենով շատ զմնա-
զանջումէ նորանից. Ախունիան չէ բնակւում էրէք, նա բնակու-
մէ Իիլիու և Պերուի սարերի ծայրերի վերայ, այս տեղ կրամովին
արածումէ փոքրումանր խոտերը և մնումէ միշտ փայրների դրութեան
մէջ, Կա փախչումէ մարդուց, կրր որ լեւէ շատ Հետուից տեսանու-
մէր նորան, և սրինասր որսողութենով միայն ստանումեն այն լեւն-
գագին վիզոյնեան բուրդը. Եւ որովհետեւ այս կենդանին միակերպ
փախտու ու փախտական էր, այլև յաճախ բնակումէ անտանտալի
սարերի վերայ, այս սրտածառով Հաւարվումեն Բաբրիկացիք, և ընկե-
րութիւնքը ասվումեն Խակուս. Ըատ դժուար է այդ չորբոտանիքը զար-
կել Հրացանով. փան այս սրտածառի որսորդքը մի մեծ սահման, որի
վերայ վիզուհիս կենդանիքը արածումէին կրամովին, չրջափակումեն
չուաններով, որոնց բարձրութիւնը Հասանումէր նոցա գլերին. Բայ
չուանների վերայ յատկացեալ Հետուորութեններով կազումեն կար-
միր կամ լեւ այլ գունասր ծուէնք. ապա տեսնումեն յատկապէս
դորս համար վարժած շներով վարել նոցա մի տեղ. Բայ շատ փախ-
կուս կենդանիքը տեսանելով այն գունասր ծուէնքը, որ շարժումէին
օդի մէջ, չեն համարձակվում փախչել, լինչելով չուանների վերայից,
լեւէ շատ Հէշտ էր այդ. Եպա որսորդքը մտանումեն չրջապատի մէջ,
բմբունումեն վիզուհիսքը, յաջողակութեամբ ձգելով ողակապը նոցա
տարերին, սպանումեն նորանց և հանումեն մորթը, Բայ գործի մէջ
որսորդքը շատ անդամ հարկադրված էին անտանտալի ժամանակներով
կենալ բարձր և ջուրտ սարերի վերայ, ապա տուն էին բերում մաս
500 մինչև 1000 վիզուհիսի մորթեր, Կշտելով այդ չորբոտանու պատ-
ուականութիւնը, այդպիսի որսողութիւն (լեւպէտեւ արգելած էր այն

տեղ անասուն պանելը) շատ դատապարտելի է, պատճառ, որ մի հնչա-
բան էր ըմբռնած վիկուներույքը խուչել, ապա բաց թողուլ և այդ-
պէս շատ տարիներ օգուտ քաղել մի և նոյն անասունից, ձեռնու-
լինել նոցա բազմանալուն և այդպէս շատացնել նոցա թիւը: Այս
որսողութիւնը մի մի ժամանակ անյաշող է լինում մի այլ շորքոտա-
նու պատճառով, որ նման էր վիկուներույին որ և խառնվումը նոցա
երամակի մէջ: Այս շորքոտանին էր Ալլապա կամ Պակո կենդանին
որ զանազանվումէ վիկուներույից մանուսանդ թէ իւր աւելի զօրութե-
նովը, մեծութենովը, համարձակութենովը և աւելի կոպիտ մազովը:
Եթէ մի քանիքը այս համարձակ անասուններից գտնուվումն որսալու
վիկուներույի երամակի մէջ, նոքա բանի տեղ չը դնելով այն գունա-
ւոր ծուաղքը, թռչումն շուանների վերայով, և այդպէս բոլոր ե-
րամակին ցուցնումն փախելու ճանապարհը:

Վիկուներույի մազի առաջին տեսակը տալիս է այն պատուական
վիզյունեան շուխույքը, որոնց մի կանգունը արժէ յաճախ 25 մանթի-
նոքա միսը համարվումէ ամենահամեղ որսը վայրի. պատումն նոյն-
պէս, թէ բոշկական զեղ է աչքացալի համար, եթէ դուրսից դնէիր
նորան հիւանդացած անզամի վերայ, Յաւելի է, որ մինչև այժմ չեն
փորձած մտածելով և զգուշութենով այս կենդանիքը բնտանի շինել և
բազմացնել Եւրոպայի մէջ. Պիւրինէյեան սարերը գուցէ թէ կը լի-
նէին յարմար տեղը, ուր վիկուներույքը կարող էին աճել և զբա-
նալ, եթէ Ամերիկացիք ժամանակ առ ժամանակ հալածումն այս շոր-
քոտանին ձիւնապատ սարերի վերայ, այս անմեղ կենդանին ունի մի
աւելի զօրաւոր բնական թշնամի, որ աւելի վտանգաւոր է այն պատ-
ճառով, ըստ որում ոչ քարածայրք, ոչ սարերի ձեղքուածք, ոչ
ևս անդունդներ կարող էին խափան լինել նորա յափշտակութեանը.
սա է Քունգուր կամ Քունգուր ասած թռչունը, որ անգղների հսկան
է, որ և իւր յափշտակասէր բնութեամբը սո՞վոր է բարձրանալ մին-
չև ամենավերին օդասահմանը: Այս Քունգուրը աւելի բարձր դէպ ի
վեր սլանալով քան թէ այն բոլոր ահագին սարերի կատարը, կտի-
վումէ մի այնպիսի սղի մէջ, որ դժուար թէ տանելի էր մարդուս,
և այս բարձրութենից դէպ ի վայր է յարձակվում իւր որսի վերայ:
Ուլլոս ճանապարհորդը սկանատես էր, երբ որ այս թռչունը սարի
կողքին արածող ուլլաբների երամակից մի գառն վեր առաւ իւր ձան-
կերով և տարաւ դէպ ի վեր. երբ որ բաւական բարձրացած էր, ցած
թողցի իւր որսը, ապա միւսանգամ բռնեց նորան և ապա երկու ան-
գամ ևս բաց թողցի նորան, մինչև անտեսանելի եղաւ աչքի համար.
Քունգուր կենդանին անշափ զօրեղ է, բայց չափազանց մեծ չէ, ունի
8 մինչև 11 փարիզեան ոտնաչափ, երբ որ պարզած էր թևերը: Այն

քօնդօրը որին սպանեց Քրիզիէ ճանապարհորդը, ունէր 9 սոճաշափ մեծութիւն. Այս թռչունը լաւարարոյ և անփնասակար է մարդուն. Ուլուն Տաստասու մէ թէ նորան ընտելացնումեն Պերուի մէջ քանի մի դիզերում. նորա գոյնը լինում սև և սպիտակ. որձակ քօնդօրը միայն զարդարած է մտա, գրեթէ աճառասեակ, մշոյ գեղնագոյն սանրով, որ ծածկումէ կտուցի յետին կողմը և դագաթի առաջին մասը.

Վօնդօրը սպանումէ այն և մանուկ տաւար, և Ամերիկացիք որսումեն այդ փնասակար թռչունը այսպիսի կերպով. մորթումեն մի կտոր անսպիտան տաւար և նորա միւր օժումեն այնպիսի հիւթերով որ սաստիկ թմրեցուցիչ են. Գի գուցէ թէ քօնդօրը զգար այս հիւթի հտար, յաւաջոյ թողումեն, որ միւր մի փոքր նեխփէ. Այնուհետև քօնդօրը յարձակումէ այն գէշի վերայ, թմրումէ և սպանվումէ մտ վազած Ամերիկացոց ձեռքով. բայց քօնդօրը այնքան զօրեղ է, որ շատ անգամ մի մարդ պատերազմելով նորա հետ, գետին է զարկելով նորա թևերի ներդործութենով.

32. Այլ-բո՞ւ գո՞ւր-բէր-նի՞նչ.

Արշակունեաց թագաւորութիւնը Հայաստանի վերայ, որ յառջուց կառավարումը Արշակ որպէս միահեծան թագաւոր, 412 թուականին Քրիստոսից յետոյ բաժանվումէ երկու ջոկ ջոկ իշխանութիւն, և Հայոց աշխարհը ընկնումէ երկու թագաւորների ծառայութեան լրի տակ, ըստ որում Հայոց ազգը Աստուծոյ ամօտի առաջև անարժան էր գտանված թագաւորական պատուի և շքեղութեան, Հայաստանի արևմտեան կողմը մտանումէ Հռոմեական իշխանութեան տակ, և արևելեան կողմը դառն և բռնաւոր ծառայութենով խնայարհեցնումէ Պարսից արքային, Հայաստանի աւելի մեծ, լաւ, պիտանի և արդաւանդ մասը, այսինքն Այրարատու գաւառը Պարսից արքայի բաժնումն էր. բայց Արշակ թագաւորը աւելի լաւ համարելով հրամարմիլ իւր հայրենի ժողովրդական աշխարհից և բնակութեանից, քան թէ ստրկանալ Պարսից ամբարհտած և անիրաւ ազգին, ջառով ու տրտմութեամբ թողումէ իւր բնիկ և սեփական աշխարհը Այրարատու, անդախտովելով դէպ ի Յունաց բաժինը. Բայց թէ Արշակը ինչպէս պատուական աշխարհից տարագիր էր գնում և թէ ինչքան ջաւելի էր նորան այս մտածութիւնը, առիթ է տալիս Ղազար Փարպեցի պատմագրին այսպէս նկարագրել Այրարատ գաւառի գեղեցկութիւնը և պողարերութիւնը, որ և մէք կամենումենք պատմել մեր Հայերին նոյն հեղինակի ճարտարախօս բերանով, նորա հին ոճով հայախօսութիւնը փոխելով դէպ ի նոր հայախօսութիւն.

11. Այսպէս, Արշակ թագաւորը տխուր ու տրտում մտածութենաների մէջ հրաժարվելով թողումը իւր բարի և բնիկ փառանգութիւնը որ մնացել էր իւր նախնիքից, Այրարատու գաւառը, այն հշոյակայ, հաշակաւոր, ականաւոր, ամենայն բոյսերով և ամենայն աղբիւրներով լիացած աշխարհը, ուր ամենայն բան գտանվում է, մարդկային պիտոյքը, շահը և օգուտը լցուցանելու, մարդու կեանքը վայելաշնչելու և պայծառացնելու համար, Նա թողում է հրաժարվում այն մեծատարած և որսալից դաշտերից, այն, չորս կողմից զեղեշկանիտա և պարարտարտ սարերից, որ լի ու առատ են կճղակարածին վայրերի անասուններով, որոճական և միւս այլ շատ կենդանիքով, այն սարերը որոնց վերևից ջրերի հոսանքը, առանց մարդկային աշխատութեան, արբուցանելով դաշտերը պարգևում են ապնուական զերդաստաններին անպակաս հաց ու գինի, անուշահոտ մեղրահամ բանջարներ և զանազան խլաբուրդի սերմեր:

Առաջին անգամ տեսնող մարդիկը ուղղեցնելով իւրեանց հայեացքը դեպի Այրարատու սարերի լանջակողմերը կամ թէ սարահարթ տեղիքը, կարծում են տեսնել ոչ թէ ծաղկաբոյս գոյներ, այլ զգեստներ տխուր և դարդարած պարարտ բոյսերով, ձոխ արաններով և հիւթալից բանջարներով, որոնց թանձրախիտ աճեցութիւնքը յափշտեցնելով բնտանի իշաների անթիւ արտասկանքը և վայրերի անասունների անընկերաւոր բազմութիւնը, ցուցանում են նորանց թանձրամորթ, առողջագաւակ և բոլոր մարմինքը պարարտացած և գերացած, բայց անուշահոտ ծաղիկների սաստիկ բուրումը, որսուէր նետանիք բաջ տղամարդերին և հատարած բացթիւնաններին շնորհելով առողջութիւն, զօրացում է և նորօգում է խելքի զգայութիւնը, Այն տեղ գտանվում են և տեսակ տեսակ բոյսերի արմատներ, որ ստուգահանուտ բախիկների ճարտարապետ ճանաչողութիւնը գործ է ածում որպէս օգտակար զեղորայք, պատրաստելով ազդու օխտահարած օպիզանի կամ թէ առողջարար բնագիւլի երկար ցումով օխտացածների համար:

Ինչպէս զօխտանում ամենայն տեսակ սրտաւետութիւնը դաշտերի, որ աշխատասէր մարդերի կամքը որպէս թէ խօսքով դեպի իւրեանց կողմը դրաւելով, որ ամենայն բարութեանով լցված, շուտով հրախրում են իւրեանց մտա աշխատասիրների դարձը, որ ոչ միայն երևելի բաներով ցուցանում են իւրեանց շահաւետութիւնը մարդկային օրափն, այլև անելի ժրագլուխ աշխատողներին ծանուցանում են երկրի տակ ծածկած օրումները և ուսուցանում են նոցա իւրեանց համար դանձր ժողովել, աշխարհական վայելչութիւն պտորաստել թագաւորներին, հարկահանութիւնը հաստատ պահել թագաւորութեան մէջ, հասուցանելով ժողովրդին սկիի, պղինձ, երկաթ և պատուական

քարեր, որ ընդունելով արուեստագետ մարդու ձեռքերը զարդարու-
մեն թագաւորներին գեղեցիկ յօրինուածներով, պսակով և թագով,
կամ թէ ոսկեհիւս հանգերանների վերայ շարումեն փառաւորապէս:

Ինչպէս անուշութիւններ տալիս են զանազան կերակուրներին
Այրարատու ջրերը. նորա ամենաշանկալի դաշտը ի զուր չէ սնուցա-
նում իւր մէջ եղէգնարոյսերի արմատներ. սոցանից ծնանումն որ-
դուներ տալով կարմիր ներկ, որ գործ է ածվում օգտի և շքեղու-
թեան համար. նորա գետերի գնացքը տեսակ տեսակ մեծ և փոքր
ձկներով, զանազան համով ու կերպարանքով տալիս է հարուստ ե-
կամուտը և յագուրդ ժիր աշխատողների և աներկիւղ ջանաջողների
որովայնին:

Այրարատու երկիրը իւր մէջ ջրերի արուեստովը սնուցանում
հասերի բազմութիւն որսասեր աղնուակամների ուրախութեան և զրո-
սանքի համար. այլև կրկնաձայն քաղցրանուագ, քարուտ տեղեր սի-
րող, սարերի մէջ սորամուտ կաքաւների և սալամիների երամներ,
կամ թէ եղէգնարմանկ, թիփամուտ, մացառների մէջ թուրջող, պա-
րարտամարմին, անուշահամ վայրենի աքարներ. բայց ի սորանից, ջրա-
սոյղ, մամուպատ տեղեր սիրող, մեծ և յաղթամարմին հաւեր, փորը
և թանձրը և սագը և այլ անհամար ցամաքային և ջրային թռչուն-
ների ջոկեր:

Ղաղար փարպեցին չէ մոռանում յիշատակութիւն առնել և
նախարարների և աղնուակամների որսազնացութեան մասին. նա պատ-
մումս մեզ թէ ինչպէս նախարարների բազմութիւնքը ազանների որ-
դիների հետ միասին որս էին գնում, տանելով իւրեանց հետ չըջա-
փակող թակարթներ և զանազան որսորդական գործիներ, զոր օրի-
նակ երազապը և զահողը, Ոմանք վազելով ջիւրերի և այծեամների հե-
տեից քաջալերական ձայն էին տալիս միմեանց յարձակվիլ և նետաձիգ
լինել որսի վերայ. միւսերը եղջերուների և եղների քամակից ձիարձակ
լինելով, ջուշանումն քաջ նետող տղամարդերի գործ. այլ միւսերը
սուրերով, մենամարտիկների պէս, յաղթանդամ վարագների երամքը
դէպ ի վայր գլորելով սպանումն: Հատերը նախարարների մանուկ
որդիներից իւրեանց դաստիարակներով և ծառաներով զանազան տե-
սակ թռչուններ որսացած բազէներով, բերումէին սեղանի ուրախու-
թիւնը յաւելայնելու համար, և այսպէս ամենայն մարդ ճոխ և ա-
ռաա որս կատարելով, ուրախանումէին: Նայելով սոցա և ջրերի մէջ
ման եկող ձկնորսների տղաքը, յառաջ էին գնում նախարարների
բազմութեանը, իշխաններին ընծայ մատուցանելով որսած ձկներ, զա-
նազան հաւերի ձագեր և ձուեր որ ձեռք էին բերած գետի կղզիներ-
ից. և նախարարքը ընդունելով ընծաներից մի մասն, ինչպէս հա-

ճոյ էր իւրեանց պարգևումն ընծայաւորներին և իւրեանց որսածից բաւական շատ, և ամենայն բարութիւնով լի, հասած իւրեանց ապարանքներին, շնորհումն և տանը մնացած անպարասկներին աւելի պատուական որսերը և առաւելապէս ստարներին, Ըմենայն մարդու սեղանի վերայ կարելի է տեսանել զիղած շերջակոյտների պէս որսած բաների բազմութիւն և նոցա գլուխները կարգով ու օրէնքով յառաջ դրած, որ վայելելով ուրախանումն ձկնակեր և մտակեր մարդերի անձինքը աւելի քան թէ այլ կերակուրների անուշութիւնով, և ապա հօգևոր ճաշակներով, սաղմոսներով և մարգարեական երգերով օրհնումն ամենայն բարութիւնների պարգևատուն, սուիչը և լցուցիչը:

ՈՒՍՈՒՄՆԵԿԸՆ ՆՇՈՒՆԻՐ:

1. ԲՆԸԳԸՏՈՒՄ ԳԻՏՈՒԹԻՒՆ:

Բնապատում գիտութեան խորհուրդը է, ծանօթացնել մեզ այն առանձին բաների հետ որ կան մեր երկրաւոր մոլորակի վերայ:

Ըստ ծանօթութիւնը ցուցանումն մեզ որպէս այդ բաների յառաջապայութիւնը և լրագործութիւնը, նոյնպէս և նոցա յարակցութիւնը միմեանց հետ և զէպ ի մարդս: Մի իր ստուգապէս հասկանալու համար, պիտոյ է ոչ թէ միայն նորա արտաքին կերպարանքը և բնական յատկութիւնքը ճանաչել, այլև այն առանձին մասները որոնցից բաղկանումն նա, որպէս նորա գործարանքը, նոյնպէս և քիմիական բաղադրութիւնը: Բայց և այս չէ գետ ևս բաւական, մեզ բոլորովին վերահասու կացուցանելու մի բանի էութեան. պիտոյ է նոյնպէս իմանալ թէ ինչպէս դա բաղադրվումն քիմիական նիւթերից, ինչպէս փոքր առ փոքր յառաջանումն և լծորդվումն միմեանց հետ մերենական մասունքը կամ թէ գործարանքը, մի որոշեալ կերպարանք յանդիման կացուցանելու համար. բաւական չէ և այս. պիտոյ է նմանապէս որոշել այն տեղը, որ նոքա մինի միւսի մօտ, նայելով իւրեանց կարգին, բնութեան, որով ինքնին յայտնվումն նոցա ստղնութիւնը զէպ ի մարդս, որ այն նպատակի վերջակետն է, ուր հասարկելով բոլորվումն բնութեան բոլոր կերպարանագործութիւնքը:

Բնապատում գիտութեան առարկայքը են ~~ստղնային~~ բաներ երկրաւոր մոլորակի վերայ, ոչ շերտեր բաներ, զոր օրինակ ջուր, աղ և եթեր կամ լոյս և ջերմութիւն, որոնց նիւթը թեպէտ գործակից է մեր մոլորակի կազմութեանը ըստ բոլորին, բայց չէ բաժանվում ջոկ ջոկ, միմեանցից որոշ իրեր: Այս լոկ միատեսակ ջուր, որ շրջապատումն երկրաւոր մոլորակը, և եթէ նա ցուցանումն զանազա-

նութիւնք, ինչպէս ծովի ջուրը կամ թէ հանքային աղբիւրները, դո-
շա պատճառը ոչ թէ ջուրն է, այլ օտար խտանակութիւնք, այսինքն
զանազան տեսակ աղեր, որ պատկանում են հողեղէն տարրին: Նոյն
բանը պիտոյ է հասկանալ և օդի մասին որ միատեսակ չորայպատում
բոլոր երկիրը, նոյնպէս կարելի չէ որոշել շատ տեսակ լոյս կամ
ջերմութիւն: Այս պատճառով այս երեք տարերբը են ընդհանուր
նիւթեր և աւարկայք միս գիտութենաների, այսինքն Ֆիզիկայի, Քի-
միայի և Մաթեմատիկայի:

Սորա հակառակ, եթէ նկատում ենք հողեղէն տարրը, իսկոյն դա-
նում ենք դորա մէջ մի ամենեին խտորումն առաջիններից. կեր եր-
կրաւոր մալորակը չէ բազաղրած միատեսակ ամուր նիւթերից, այլ
բազիանում բաշխութիւն իրերից որ շատ զանազան են մինը միւսից.
Ուր և շոշափեիւք օդ կամ ջուր, դորա միատեսակ են միշտ, բայց
եթէ վեր առնուք մի ամուր բան, դա ամենայն տեղ մի այլ բան
է. մեր ձեռքումը ունեինք կամ զայլախաղեայ հող, կամ կաւեղէն
հող, կամ բուհող, կամ թէ աղ, երկաթ, ածուխ և այլն. համա-
ռօտ ասեմ, չը կայ ոչինչ ընդհանրապէս հողեղէն, այլ միայն ջոկ
ջոկ բազիացական մասունք հողի, որ մեր մալորակի վերայ դրած են
առանձին առանձին. Յորանով միայն հնարաւոր է նիւթերի բազմա-
զանութիւն, սորանով միայն կարելի է մի բնայպատում գիտութիւն.
պատճառ, եթէ լինէր մի հող միայն, որպէս կայ մի ջուր, մի օդ և
մի եթեր միայն, ապա կարող էին պարապել գոցա ճիմիականութիւնը,
Ֆիզիկան և Մաթեմատիկան միայն:

Լոյս ուրեմն հողեղէն տարրը միայն տալիս է քննելի նիւթեր
բնայպատում գիտութեանը, և սորա պաշտմը չէ ոչ մի այլ բան,
եթէ ոչ. քննել նորա զանազանութիւնքը: Այդպիսի հողեղէն իրքը
ունին իւրեանց սահմանեալ բազիացական մասունքը, իւրեանց սահ-
մանեալ յատկութիւնքը և ձևաորութիւնքը, որոնցով զանազանում
են միւսերից. Եթէ այս որպիսութիւնքը փոփոխում են, ապա նոյն
իսկ բաները այլայլում են և կաշուցանում են մի այլ իք: Աւրեմն նո-
քա անբաժանելի են և այդ պատճառով աւում են Ընհատը (Indivisua)
բնայպատում գիտութեան քննելի նիւթքը այդպիսի Ընհատներ են:

Եթէ մի շնչաւոր կամ մի բուսական կոտորատումս, ոչնչանու-
մն նոքա կամ թէ գոնեայ բաց կորած մասը. և եթէ սա դարձեալ
շարունակում է իւր կենդանութիւնը, այնու ամենայնիւ փոխում է մի
բոլորովին այլ բան. այսինքն կրկին ստանում է նոր գործարանք, նոր
բերան և զգացողական թերեր, որպէս Պոլիպոզների մէջ, կամ թէ նոր
փորտախք, աչքեր և այլն, մի քանի ճճիւնների մէջ. Դառաից կորած
Ճիւղեր անկվելով հողի մէջ, արձակում են արմատներ, զանում են մի
ամբողջ տունկ, թէպէտ յառաջուց էին միայն նորա մասը:

Բայց ոչ թէ միայն օրգանական մարմինքը են անլսած անելի իրք, կամ ինդիվիդուա, այլև անօրգանական մարմինքը, Երբ որ երկուսն ալը քիմիապէս բաժանվում են, վերլուծանվում մի թիթվութիւն, մի ալքալի կամ մոխրաջուր, այնուհետև փոխարկվում ամենեւին այլ բաներ. նոյնպէս հանդիպելու էր, եթէ նորա ներքին կազմածը փոփոխվում, այսինքն երբ որ նորա թերթիկները այլ անկիւններով դուրսորդում են միմեանց հետ, որ անկարելի է ամենեւին, առանց փոփոխելու քիմիական բաղկացուցիչ մասունքը: Աւրեմ և հանքաքան մարմինքը են նոյնպէս Անհատը:

Եթէ պետք էր, որ տարրերութիւնք յառաջանային հողեղէն տարրի մէջ, ապա պիտոյ է, որ այդ բանին մի պատճառ լինի. այս պատճառը դրած է նորանից դուրս. որովհետև ոչինչ բան ինքն ինքեան չէ փոփոխվում, Բայց Հողեղէնի մաս չը կայ այլ միսս բան բաց ի ջրից, օդից և եթերից կամ կրակից: Այս երեքը ներդրած լով հողեղէնի վերայ, յառաջացուցել են նորա մէջ զանազանութիւնք: Բայց ինչ բան միտքի վերայ ազդողապէս ներդրածում, մասնաորում նորան և փոքր ինչ բան իւր յատկութիւններից, կամ թէ այս և ամենեւին լծորդվում նորա հետ և կացուցանում մի նոր մարմին, որ ուներ երկուքի յատկութիւնքը ևս: Բայց երեք ընդհանուր տարրքը կարող են միայն երեք կերպով կապակցվել հողեղէն տարրի հետ: Պատահում է, որ կամ մի հաստ տարր, զոր օրինակ ջուր, օդ կամ կրակ, կապակցվում նորա հետ, և այդպէս գոյանում մի մարմին որ ուներ լով երկուքի զուգադրութիւն. պատահում դարձեալ, որ ջուր և օդ ի միասին կապակցվում են հողեղէնի հետ, և դրանից յառաջանում երկուքի զուգադրութիւն. կամ թէ վերջապէս ջուր, օդ և եթեր կապակցվում են նորա հետ և կերպաորում մի մարմին չորսուքի զուգադրութենով:

- Երկու պատիկ զուգադրութենից յառաջանում են Հողեղէն Երկուք:
- Երեք պատիկ զուգադրութենից գոյանում են Բուսականութիւն:
- Չորեք պատիկ զուգադրութենից բաղկանում են Ընդհանուր:

Այս բանիս վերահասու լինելու համար, պիտոյ է մեզ նախ և յառաջ աւելի ճիշդ նկատել միակ միակ տարրերը:

1. Երկուք Իմ Իմ:

Եթերը է առաջին, անչափ նուրբ և սորա համար շատ թեթեւ նիւթը, որ լցուցանում բոլոր աշխարհային տարածութիւնը, և այսպէս, այն հիմնական մարմինն է, որի թանձրածալովը գոյանում են բո-

լոր ծանր կամ թէ կշռելի նիւթերը, երբ որ այս եթերը թափանցումէ ծանր մարմինների մէջ և ընդարձակումէ նորանց, ապա երևումէ որպէս $\frac{2}{3} \frac{v}{v_0}$. Բայց եթէ նա, խոտորնակի, գտանվումէ երկու զանազան ծանր նիւթերի մէջ և նոցանից պոլարիզանումէ (*) կամ իբրև թէ երկբորիզանումէ, այնուհետև կերպարանվումէ որպէս $\frac{1}{2} \frac{v}{v_0}$, երբ որ սա, փոխադարձաբար ներգործելովք արեղակի և մոլորակների տեսանելի է լինում: Բայց լոյս և ջերմութիւն կապակցվելով եթերի նուրբ նիւթի հետ, են պէտք: Ուրեմն եթերը երևումէ երեք կերպարանքով. միանգամ որպէս սկզբնական նիւթ կամ որպէս ծանրութիւն, որով հանդատանումէ նա ինքը իւր մէջ և ներսումէ զեւթ ի մի կենարան կամ միջնապայր, որ ցուցանումէ իւր անձը որպէս արեղակն. ապա որպէս ջերմութիւն, որ աշխատումէ ընդարձակել իւրեան և եթերի սահմանների մտա յատաջացնումէ մոլորակները. և երրորդ, որպէս լոյս, որ երկուսի մէջ, այսինքն կենարանի և շրջապատի մէջ նորոգումէ կապակցութիւնը և երկուսը պահպանումէ գործականութեան մէջ:

2. Օր:

Ըստ տարրը պիտոյ է նկատվի որպէս թանձրացած եթեր, որի մէջ գերակշիռ է ջերմութիւնը: Մէք կարող ենք դորա մէջ երեք տեսակ նիւթեր զանազանել, որ սահմանվումն են եթերի երեք գործականութեանովք. Նորա 100 մասունքը բաղկանումն 80 մասն $\frac{2}{3} \frac{v}{v_0}$ և 20 մասն $\frac{1}{2} \frac{v}{v_0}$, որոնց հետ խառնած է այլ ևս մի մասն $\frac{1}{2} \frac{v}{v_0}$: Առաջինը է առուել թեթեր և կարող է նկատվիլ որպէս համեմատ ջերմութեան, երկրորդը լուսի, երրորդը ծանրութեան:

(*) Թէ թէ սակ է պոլարիզանալ. կիտայցի մեկնելով լուսի Պոլարիզացիոս սած երեւոյթը: Սա է թէ թէ լուսաշառուիղների այն յոսովութիւնը, որով նոյս ոչ զեւթ ի աննայն կողմ մի և նայն հայեցումէքը ունին. այսինքն, ընն միաստակ յարեղակուս բացարձակելի զեւթ ի աննայն կողմ: Մէք սովոր ենք տեսանել, որ մի լուսաշառուիղ երբ որ ընկնումը մի հայեւում ժակերութի զեւթոյ, բացարձակումէ մըշտ. և այս բանը առանց բացատրեան, փորձով հաստատումէ, երբ որ մի լոյս արեղակից կամ թէ մի լուսնիցն բոցից հասանումէ հայեւում ժակերութի: Բայց եթէ լուսաշառուիղը արզնն բացարձակել է միանգամ, կամ կտորվել է պորթուգէս կամ թէ կրկնապատիկ (մի կրկնակի բեկումնոց մարմի մէջ), այնուհետև բացարձակութիւնը հանդիպումէ ոչ մըշտ, այլ մըշտ, երբ որ հայեւում ժակերութի ունէք այս կամ այն սահմանեալ գրութիւնը: Լուսաշառուիղը ցուցանումէ զանազան կողմերով զանազան յոսովութիւններ, որպէս թէ զանազան բեկումներ (պոլար): սոբանից յատաջացել է և անուանակոչութիւնը Պոլարիզացիոս:

(Օ)ղբ 800 անգամ աւելի թեթեւ է քան թէ ջուրը, և է հանդէսը ելեքորականութեան որ խկապէս կաշուցանում օդի գործականութիւնը, որի վերջին ազդեցութիւնը է զբսիդայիւ, կամ թթուանիւթի կապակցութիւնը այլ նիւթերի հետ, այսինքն Այրփիւր. այս կապակցութեան ընդհանուր յատաչաճութիւնը է Անձրեւ:

3. Զուր:

Այս տարրը բաղկանում է 85 մասն թթուանիւթից և 15 մասն ջրանիւթից որ, ինչպէս հաւանական է, խեղդողական դազի գլխաւոր բաղկացուցիչ մասն է: Արեւմե սորա բաղադրական մասունքը խոտորնակի համեմատումն օդին, այսինքն ունին աւելի թթուանիւթ և փոքր խեղդողական նիւթ կամ ջրանիւթ. թթուանիւթը, երևում է լուսին համեմատ. գոնեայ ծանր նիւթերի մէջ նոյնպէս պատճառ է նա ամենայն գործականութեան, ինչպէս լոյսը եթերի մէջ. Հաւանական է նմանապէս, թէ կայ ջրի մէջ փոքր ինչ ածխանիւթ, թէպէտ սորան դեռ ևս ջրոյ չեն տուած քիմիապէս: Նայելով սորան, պիտոյ է համարել ջուրը որպէս թանձրացած օդ, փոփոխված բաղադրութեամբ:

Այս առանձին գործականութիւնը որ լինում է ջրի մէջ, է Կիւրի պրոցեսը:

4. Հուր:

Հողեղէն տարրը կարելի է համարել այնպիսի տարր, որի մէջ գերակշիւ է Անիւթ-ճուր. գոնեայ խկական հողերը բաղկանում են մետաղից որ կապակցած էր թթուանիւթի հետ. բոլոր մետաղները կարելի է տեսնել որպէս հալած ածխանիւթ. Այլ հողատեսակ մարմինների մէջ, զոր օրինակ աղերի, ածխաբարի, այլև գույն թէ ծրծուրի մէջ, ստորաբար պարունակված է ջրանիւթ ևս, այնպէս որ հողեղէն տարրը բաղկանում նոյնպէս երեք հիմնական նիւթերից, որոնց մէջ գլխաւոր քանակութիւնը կաշուցանում ածխանիւթը, Նա անտարակոյս համեմատում է Զուր-ճուր հետ որ յատաչաջնում ամբուրութիւնը նիւթերի մէջ:

Հողեղէն տարրի առանձին գործականութիւնը յայտնվում է Մագնետականութեան կամ թէ Կրիստալիզացիոյի (բիւրեղագործութեան) մէջ:

Այր որ հողեղէնը կայ ինքն ըստ ինքեան առանձին, ապա ստորաբար ամուր է նա, և այս պատճառով չունի շարժողութիւն իւր բաղադրական մասերի մէջ, զոր օրինակ գալլախաղը, կաւը, թաւիկը, կիրը և այլն: Ինչ այնպիսի մարմին որի բոլոր մասունքը դեմուդեմ միմեանց մտում են նոյն կալքի մէջ, կամ թէ անընդհատ հանգամի մէջ, ասում են Կիւր-ճուր կամ Կիւր-ճուր մարմինը կամ թէ Հուր:

Բայց կան շատ հանքեր որ պարունակում են և ջուր, զոր օրինակ Եջերը, և այնու ամենայնիս շին փոփոխում իւրեանց մասների կայրը կամ թէ շունին ոչինչ ներքին շարժողութիւն, ըստ որում ջուրը յաղմահարվելով հողեղէն նիւթից, կարծրացած է նորա մէջ. նոյնպէս, հանքերը պարունակում են օդ, կամ թէ ունին նորա յատկութիւնքը, եւ լքարական են և սյրվում են իւրեանց յատուկ ջերմութենով, ինչպէս անխաբարը, ծծումբը, խեժերը և զոյս նմաններ. բայց և այս տեղ օդը կորուսել է իւր կերպարանքը և ամրացած է.

II Երջագէտ կան շատ ծանր, փայլուն և հալածի պէս երևելի հանքեր, որ և ստացած են ծանրութեան, լուսի և ջերմութեան յատկութիւնքը, այդու ամենայնիս ոչ ինքեանք լուսաւորում են ոչ ևս շարժվում են, և այս պատճառով պիտոյ է դասել նորանց մտեալ նիւթերի կարգում, զոր օրինակ բովքը և մետաղները.

III Խորանից բացայայտ է ահա, որ տարերքի երկուպատիկ կապակցութիւնքը այնքան ևս անկարող են յառաջացնել մի կենդանի մարմին, ինչքան հողեղէն տարրը միայն անկարող է.

Օրգանական մարմին:

Վկասելով մի բուսական, գտանում ենք, որ դա բողկանում ամուր կամ թէ հողային մասներից, որ այրվելուց յետոյ ըստ մեծի մասին երևում են որպէս անխառնիւթ. Բայց այս հողային մասների մէջ պարունակվում է ջուր և այն, հասանուտ կերպով, որ շարժվում այս և այն կողմ, որպէս աղբիւրքը երկրի վերայ. Բայց ի սորանից, զորս անին ծախմուտեր օդի համար, որ նոյնպէս անզաղար գուրս ու ներս է մտանում և ամուր մասունքը ելեքարացնում և օքսիդացնում (կապակցում թթուանիւթի հետ), ամեննին սյնպէս, ինչպէս գործակատար է օդը արձակ տեղում. Արեւն այս տեղ երկրաւոր մոլորակի երեք տարերքը այնպէս կապակցած են միմեանց հետ, որ ամեն միւր պահպանում իւր յատկանշանը և իւր գործականութիւնը և այնու ամենայնիս բոլոր երեքը կաշուցանում են մի պինդ և անբաժանելի ամբողջութիւն. Մի այդպիսի պինդ մարմին, որի մէջ օդը փչում և օքսիդացուցանում, որի մէջ ջուրը հասում և վերլուծանում, և որի մէջ հողայինը անզաղար փոփոխվում, կերպարանվում և կործանվում, ասում ենք օրգանական կամ կենդանի մարմին:

Այս պատճառով, մի օրգանական կազմած գոյացնելու համար, պիտոյ են գտնելայ երեք տարերք, որ այնպէս զուգակշիռ են միմեանց, որ ոչ միւր չէ յաղմվում միւսից, որ ջուրը և օդը շին կարծրանում ամեննին, և ոչ կարծրը դառնում հասանուտ և օդային. Երեք տարերքի փոխադարձարար միմեանց վերայ աղբկցութեանից յառաջացած

գործողութիւնը, որ միաւորում է իւր մէջ մազնետեան, ելեքտրական և քիմիական գործողութիւնը, ասում է Վալվանիան, որ և այս պատճառով պիտոյ է նկատուի որպէս իսկ կենսական հանդէսը:

Առաջին օրգանական կազմածը, որ գոյանում է երկրաւոր մոլորակի վերայ, է Տունկը, մի երեքալատիկ կապակցութիւն այն ասերբի, որ սեփական են այս մոլորակին: Տունկը ունի իւր հողային գործարանը խորանանէ հիսուսածի մէջ, որ է բազմութիւն գատարկ բիրեդների, որի մէջ ջուրը անդադար պտտւում որպէս մի կաթիլ ջուր վառուն երկաթի վերայ: Նորա ջրային գործարանը են այն հիւսիսային փողովակները, որոնց մէջ ջուրը հասում ղեպ ի ամենայն կողմ, որպէս մեր մոլորակի վերայ եղած գիտերի մէջ: Նորա օդեղէն գործարանը կաշուցանում են այն ոլորտապտտանութիւնը որ տնկականի օդափողքն են:

Ընդհանուր:

Վեռ ևս հնարաւոր է մի այլ կապակցութիւն. այսինքն այնպիսի, որ և եթէր իւր անխորտի ազդողականութենով ընդունուի տունկի օրգանական կազմածի մէջ: Նորանով այս օրգանական կազմածը ստանում մի սեպակայն միջնափայլք ծանրութեան կամ մի կենտրոն որ նոյան ինքնակայ է կաշուցանում երկրաւոր մոլորակի վերայ, այնպէս որ նա կարող է ազատապէս կախ մնալ, որպէս արեգակը աշխարհի տարածութեան մէջ: Նա ստանում նոյնպէս ջերմութեան յատկութիւնը, այսինքն ընդարձակութիւն և կծկողութիւն կամ թէ մի ինքնիշխան շարժողութիւն իւր բոլոր մասներէ մէջ, կարճ ասեմ, մի կազմաւոր շարժողականութիւն: Աւերջապէս ստանում նա և լուսի յատկութիւնը, որով կազմաւոր շարժողականութիւնը սկսանում ներգործել և բոլոր մարմինը վերաբերում է ղեպ ի մի կենտրոն:

Մի այլպիսի օրգանական մարմին, որ ազատ է երկրաւոր մոլորակից, որ ունի մի յատուկ կենտրոն իւր մէջ, որ և կարող է շարժել ինքը իւր անձը, ասում է Ընդհանուր:

Ընդհանրի հոլանդի գործողութիւն է անօթներէ համակարգութիւնը կամ թէ մանուանդ, Արիւնը, որով մարմնի բոլոր նիւթը կերպարանում է և սնանում է:

Նորա ջրային գործողութիւն է աղերներէ փողովակը, որ կերակուրը մարտում է և վերլուծանում է:

Նորա օդային գործողութիւն է թոքը կամ բրանխիտը, որով արիւնը ստանում օդ և յետ է դարձուցանում:

Նոյնպէս կան երեք գործարանք ծանրութեան, ջերմութեան և լուսի համար, այսինքն օսկրների, մկնամիսերի կամ թէ կազմաւոր

չարժողականութիւն, և ջիղերը, որոնց ամենամբերին կերպարանագործութիւնը պատկերանում որպէս աչք կամ սառչգ գործարան լուսի:

Օրբն-լն Բորննիլ շն-շն-իլ-նը անբն-լն Բորննիլից:

Լական զանազանութիւնը օրգանական և անօրգանական մարմինների մէջ յառաջանում տարբեր կազմակերպութենից մի առանձնական մարմնի մէջ. Եթէ սա բաղկանում մի կամ երկու տարրից, ապա չէ կարող լինել նորա մէջ ոչինչ անօրգանական գործականութիւն, և այդ պատճառով մեռելուի կամ անօրգանական է նա. Բայց եթէ նա բաղկանում երեք տարրից, ապա գուրախանովելով նորա, կացուցանումն մի գալիանական գործողութիւն որի հասարակաց յայտնութիւնը, շարունակ կամ անօրգանական շարժութիւն, է կեանքի յատկացուցիչ նշանը:

Եւս պատճառով արտաքին յայտնութեան մասին կայ մի հաս զանազանութիւն օրգանական և անօրգանական մարմնի մէջ. այսինքն ինքնիշխան և շարունակ շարժութիւնը մի մարմնի սահմանի մէջ. Ինչ տեղ չէ կարելի նկատել ոչինչ շարժողութիւն, կամ թէ ինչ տեղ նա հետևում մի օտար ազդեցութեան, զոր օրինակ ծանրութեանը, այն տեղ մարմնը մեռելուի է կամ անօրգանական: Բայց ինչ տեղ երևում մի շարժողութիւն, որ յառաջանում կամ նոյն իսկ մարմնի մէջ և նորա յատուկ զօրութեններից, այդպիսի մարմնը ստամբ կենդանի: Ուրեմն օրգանական է մի առանձնական մարմն, որ շարժումն ինքն ըստ ինքեան. անօրգանականը է այնպիսին, որ իւր բոլոր մասներովը դադարուն է և շարժումն միայն օտար ազդեցութենով:

Կան և միւս շատ զանազանութիւնք, որ հիմնադրած են կէս մի բաղկացական մասների, կէս մի ձևաորութեան, և կէս մի առանձնական գործարանների վերայ, Թեպէտ և այդպէս կարելի է անօրգանականը որոշել օրգանականից. այնու ամենայնիւ չէ դա ճիշդ սահմանաորութիւն, և էական զանազանութիւնը չէ ակնյանդիման: Եւս ճշմարիտ է, թէ անօրգանական մարմնիքը ըստ մեծի մասին բաղկանումն փոքրաթիւ նիւթերից, և սովորաբար այնպիսիներից որ օրգանական նիւթերի մէջ ամենին չեն հանդիպում, կամ թէ միայն աւելի փոքր քանակութենով, զոր օրինակ հողերից, աղերից, այրեցական նիւթերից և մետաղներից. բայց նորա բաղկանումն և ածխանիւթից որ բուսականի գլխաւոր բաղադրական մասն է: Մի քանի մարմնք, որպէս Աղերը, ըստ մեծի մասին բաղկանումն խեղդողական նիւթից որ կացուցանում շնչաւոր մարմնի հիւքը: Թող այս բանը. էական մասը կեանքի հաստատած է ոչ թէ նիւթի մէջ, այլ նորա շարժողութեան և կերպարանափոխութեան մէջ. Ուրեմն, թէպէտ մի մարմն ըստ մեծի մասին տալիս է ածխանիւթ կամ խեղդանիւթ, և այդ պատճառով

Հաւանական էր թէ անկական կամ թէ շնչաւոր մարմին է, այնու
ամենայնիւ չէ կարելի համարել զորան անտարակոյս կամ թէ ամե-
նեին ճիշդ յայտարար նշան:

Եթէ միտ զնեխը Կէրդը--նիւն, այն որոշապէս սահմանած է զա
շնչաւորների և անկականների մէջ, զոնեայ նոցա առանձին մասների
մէջ, որպիսի էին անրեաները, ծաղիկները, գլուխը, բերանը և այլն.
բայց կային և անօրգանական մարմիններ, որ ունին մի սահմանեալ
կերպարանք և այն աւելի ճիշդ որոշած, քան թէ անկականների և շն-
չաւորների մէջ, այսինքն բիւրեղների կամ կրիստալների մէջ. սորա
հակառակ ճշմարիտ է, որ օրգանական էակների կերպարանքը կարելի
է միշտ բղեղեղացանել զնսակի կամ թէ փամփուշտի ձևից կամ թէ
վերածել դեպ ի այդ ձևը, բայց անօրգանական ձևերը միշտ բազման-
կիւնի են:

Եւ մեծութիւնը չէ տալիս բոտ բառականին ճիշդ յայտարար նշան.
Թէպէտ կարող են անօրգանական մարմինքը, նոյն իսկ կրիստալները
ունենալ մի ամենեին անորոշ մեծութիւն, թէպէտ զա անկականնե-
րի և շնչաւորների մէջ սովորաբար չէ զօրս գալիս մի որոշեալ շա-
փից. բայց այս բանը անշատ շատ զիպուածների մէջ այնքան արտա-
կանոն է, որ չէ կարելի մեծ բանի անդ զնել այդ զանազանութեան
արժանաւորութիւնը:

Սովորաբար, անօրգանական բաների նիւթը է հաւասարատեսակ
և թանձր, առանց բաժան բաժան ներքին մասների և փոսերի. սորա
հակառակ, օրգանական նիւթը անհաւասարակեղպ է և բաղկանում է զա-
նազան մասներից, որ բաց ի զորանից ունին իրեանց մէջ փոսեր և
փողոզակներ, որոնց մէջ պարունակած են հեղանիւթք: Այս բանը
կարող էր պատահել և անօրգանական մարմինների մէջ, սյուս ամե-
նայնիւ չէին նորա կենդանի, եթէ չեն շարժական ոչ նոցա փոսերը
և ոչ նոցա հիւթերը:

Եւելի ուղիղ զանազանութիւնը անկենդան և կենդանի մարմին-
ների մէջ է Եթէրդը--նիւն որ հիմնաւորումն ահա շարժողութեան
վերայ և ենթադրումն զորան: Անօրգանական մարմինները, առումն,
թէ չեն աճում աւելի, եթէ միանգամ լրացած էին կամ թէ ստա-
ցել էին իրեանց կատարեալ կերպարանքը. սորա հակառակ, բուսա-
կանները և շնչաւորները մանկութեան ժամանակին ահա ունին այն
կերպարանքը, որ միշտ պահպանելու էին, և այնու ամենայնիւ կա-
րող են նորա ևս աւելի մեծանալ. Ուրեմն ինչ որ աճում է, քրգա-
նական, և սորա հակառակ, ինչ որ զադարում է, անօրգանական է,
Եթէ ճիշդ քննեխը, և այս զանազանութիւնը, չէ այնքան յատկա-
ցուցիչ: Եւ լիւրեղքը ունին իրեանց սկզբնաւորութեան ժամանակին

մի անողական կերպարանք, միայն թէ նորա աճումն ասելի արագ և ապա որպէս թէ մնանումն, և թէ նոյա մեծանալու համար պետոյ եղած նիւթը սպառած է :

Այս ասելի սոյոց զանազանութիւն ջուշանումն մեզ Աճնցողութեան կերպը և եղանակը, Այսինքն, ասումն, թէ անօրգանական մարմինը աճումն յաւելանալով քառանկէ, բայց սորա հակասակ օրգանականը ներանկէ, Այս իրողութիւնը արդարև կատարվումն այսպէս, երբ որ նորա միանգամ ստացած էին իւրեանց կերպարանքը, բայց առաջին գոյացութեան միջոցին մասունքը տարբանումն նշնպէս դուրսից, զոր օրինակ ձուի սպիտակուչը ձագերի կերպարանագործութեան համար ձուի մէջ, Այս պատճառով սողմբը (եմբրիոնը) աճումն պնդեալ որպէս բիւրեղքը և կարելի է ասել, թէ բիւրեղքը էին եմբրիոններ որ յետոյ շէին աճում այլ ևս, Արեմն թնչ որ աճում, երբ որ միանգամ լրացուցել էր իւր կերպարանքը, է ստուգապէս մի օրգանական մարմին :

Նշնպէս մի լաւ յատկացուցիչ նշան էր նիւթերի շոշանկութիւնը և քառանկէ, որ միշտ լինումն օրգանական մարմիններին մէջ, բայց անօրգանականների մէջ չէ լինում : Եւրախ, թէպէտ անօրգանական մարմինները ներս էին ծծում և աշտանչումն ջուր, քանի մի տեսակ հող և աղ, բայց գոքա զանազանութիւն օրգանական գործողութիւնների նորանով, որ ընդունած և գուցս ձգած նիւթերը մի և նոյն էին, բայց գոքա օրգանական մարմինների մէջ յետապետումն :

Այս ասելի ուղղապէս որոշվումն միմեանից կենդանի և անկենդան մարմինը նորանով, որ կարող էին քառանկէ, Բոլոր բուսականքը և շնչառորը բաղանումն, մի փոքր մասն նոյանից բաժանվելով և դարձեալ տանալով մեծի կերպարանքը, այս բանը անհնարին է անօրգանական մարմինի համար :

Բայց այս բոլոր ուղիղ զանազանութիւնքը հիմնադրվումն մասների ներքին շարժողութեան վերայ, որ և մնումն միշտ օրգանականի էական և միայնակ յատկացուցիչ նշանը :

Այստե՛ս քնններ, թէ ինչպէս են զանազանվում միմեանից շնչառորը և բուսականքը, Բուսականք բաղանումն միայն երկը կրկրաոր տարրից և այս պատճառով ունի իւր մէջ գալվանական գործողութիւն միայն որ միշտ և հանապաղ պահպանվումն ծանրութեան, լուսի և ջերմութեան արտաքին ներգործութեանով : Այդ պատճառով հետևումն նա ծանրութեան օրէնքներին, ինչպէս անօրգանական մարմինները, ձգտվումն դէպ ի միջնավայրը կերպային մոլորակի, և սորա համար մի ծայրովը կապած է կրկրի վերայ, բայց միտովը հետևումն

լուսին և ջերմութեանը կամ թէ արեգակին, Այս պատճառով ունի նա իւր ներքին հասանաւ մասելի շարժողութիւնը միայն. բայց արտաքին ամուր մասերը կաշանաւորված են հողի և արևի միջոցումը և այս պատճառով կարող չեն շարժվել, եթէ արտաքին ներգործութենաներից ստիպուի չեն: Բուսական շարժումը հողի մէջ հետևելով նորա ծանրութեան կենտրոնին, և ջրի մէջ ըստ որում արմատը ածուձեր դեպ ի նորա ներքը. բայց օդի մէջ շարժումը նա հետևելով արևին, դեպ ի որ կողմը շրջումեն նորա տերևները և ծաղիկները: Արևն բուսականը ունի միայն իւր $\frac{1}{2}$ - π - π - π - π - π շարժողութիւնը միայն, բայց $\frac{1}{2}$ - π - π - π - π - π , ոչ, Նա շարժումը միայն ստատորութիւն ասանալով մի հրապուրող պատճառից:

Սորա հակառակ շնչաւորը բաղկանումը բոլոր շորա սարերիցը, և դորա համար կրում իւր մէջ բոլոր բնութիւնը, ուրևն և ունի իւր յատուկ միջնակէտը կամ ծանրութեան կենտրոնը, մի սեփական կարգ շարժողութեան, և կարողութիւն նկատելու արտաքին իրքը կամ թէ հաղորդակցութիւն ունենալու նոցա հետ, որպէս բովանդակ բնութիւնը լուսի ներգործութեանով:

Արևն շնչաւորը արձակած է հողիցը և ոչ թէ միայն շարժումը $\frac{1}{2}$ - π - π - π - π իւր աղերներէ մէջ, այլև իւր π - π - π մասերը և ոչ թէ արտաբուսա գրգռվելով, այլ ներքին զորութեաներից: Նա ունի երկու տեսակ շարժութիւն, այսինքն հիւթերի շարժութիւն ինչպէս բուսականը, և ամուր մասերի կամ գործարանների շարժութիւն, որ սեփական է նորան, Շնչաւոր է մի սունկ, որ կարող էր շարժել իւր բունը, իւր ստերը, տերևները և ծաղիկները: Համաստ խտելով, կարելի է ասել, թէ շնչաւորը շարժումը π - π - π - π - π - π - π - π - π - π , ներքին թելադրութեամբ, առանց արտաբուսա ազդեցութեան:

Այն տնկականի արմատը շարժումը, այսինքն աճելով յառաջ է գնում, այս բանը լինումը միայն, ըստ որում ջրի մերձաւորութիւնը ներգործումը նորա վերայ և աւելի մեծացնումը կամ թէ երկայնացնումը նորան: Եթէ պակաս է ջուրը, ապա տնկականը չէ կարող որոնել նորան, այլ ցածարումը և մուսնումը: Նոյն բանը տեսանումը տերևների և ծաղիկների մասին. սորա իւրեանց երեսը դարձուցումը միայն դեպ ի լոյսը, եթէ սա յիբաւի բնկումը նոցա վերայ. բայց խաւարի մէջ մնումը հանդիստ իւրեանց տեղումը և այդպէս կարող չեն որոնել լոյսը, որ չէր ներգործումը նոցա վերայ:

Սորա հակառակը տեսանումը շնչաւորի մէջ. սա շարժումը յատկապէս, որովհետև արտաքին բաները չեն ներգործումը նորա վերայ, Նորա քաղցնալը կամ թէ ծարաւելը չէ ոչ կերակրի և ոչ ջրի ներգործութիւնը նորա վերայ. այլ յատկապէս, այս արտաքին

Հրապուրանքի պակասութիւնը պատճառ էր, որ նա շարժուեալ, որ նա այս կողմ ու այն կողմ է վազում, ուտելի և ըմպելի որոնելու համար. Բայց որովհետև ոչինչ բան առանց պատճառի չէ լինում, ապա շարժողութեան հրապուրը պիտոյ է գրած լինի նոյն իսկ շնչաւորի մէջ. ուրեմն սա շարժուեալ առանց արտաքին հրապուրի, իբր յատուկ թելադրութենով, այսինքն ինքնորեն և կամայապէս.

Իւրեմն պիտոյ է ասել. տունկը այնպիսի օրգանիսնու է, որ ունի միայն ներքին, բայց ոչ արտաքին շարժողութիւն. բայց շնչաւորը է այնպիսի, որին պատկանումն ևրկուքը ևս. Կամ թէ ասելի համարուա. տունկը շարժուեալ իբր հիւթերը, բայց շնչաւորը իբր օրգանքը:

Այսպէս, ինչ տեղ մէք բաց ի մի հիւթատարից նկատումնք և նոյն իսկ անօթի շարժողութիւնը, այն մարմինը իրաւունք ունինք ծանօթ կացուցանել օրպէս շնչաւոր. Կան և այլ զանազանութիւնք, որ առած էին բաղկացուցիչ մասներէցը, կերպարանքիցը, մեծութեւնիցը, կազմածիցը և գործողութեններէցը.

Այժ բուսականը բաղկանում և համարեալ թէ բոլորովին անխաւնիւթից, սորա հակառակ կենդանին խեղդողական նիւթից. բայց գորանով չէ ստացվում զեռ ևս ոչինչ ըմբռնողութիւն, և թէ գիտեինք միայն, թէ ինչ նիւթերից բաղկանումին նորա, Արդարև կարելի է և սունկերից զոյաջնել շատ խեղդանիւթ, այլև նևխումէին նորա այնպէս, ինչպէս միւր:

Բուսականների կերպարանքը ցուցանում և միշտ մի անորոշ բան, մանաւանդ արմատների մասին և ոտների ուղղութեան մասին, թէպէտ նոցա կոչքը այդպէս չէր. Բայց այս անորոշութիւնը ըստ մեծի մասին յատաշանում արտաքին խափաններից, զոր օրինակ ևրկրի մէջ եղած քարերից, հողմից և լուսից օդի մէջ. Կենդանիքը ասելի նման են միմեանց կերպարանքով. և այս բանին ընդդէմ ապացոյց չէին Ակալիֆայք անունով կազմածքը, ըստ որում էին կուսակութիւնք կենդանի մարմինների. Յովորարար շնչաւորքը համաշափ և ևրկկողմանի են և այդ պատճառով ունին զոյգ զոյգ օրգաններ. Այս բանը չէ ևրևում բուսականների մէջ. թէպէտ և սքա ունէին զուգամասնութիւն տերևների և ճիւղերի մէջ, Համաշափ կամ ևրկմասնեայ բուներ չեն հանդիպում. անկականի կերպարանքը հաստատուում շորջանաւոր կամ թէ բոլորակ ձևի վերայ և նա ցուցանում իբր օրգանները շտապիղների գրութեան պէս, որ արձակվումին մի կենտրոնից. Արդարև կային և այդպիսի կենդանիք, թէպէտ ոչ շատ, զոր օրինակ պօլիպոզքը, ակալիֆայքը և մի կերպով, ծօղային աստղքը. Այս պատճառով կերպարանքի զանազանութիւնը չէ ամենին ընդհանուր:

Ի վերայ այդք ամենայնի բուսականների և շնչաւորների բոլոր ձևակերպութիւնքը ոչինչ այլ բան չեն, և թէ ոչ երկարածգութիւնք կամ ճիւղաւորութիւնք մի փամփուշտի կամ թէ գնտակի որ դարձեալ բաղկանումը անվերջանալի բաղմամբի փոքրիկ փամփուշտներից :

Շնչաւորների մէջ--**Բնչ** սահմանած է ընդհանրապէս, և արդարեւ չք կայ մի հաս ևս, որ անդադար ածէր իւր բոլոր կենդանութեան ժամանակը, ինչպէս որ այդ սովոր են ածել բուսականքը. այս բանը հանգիպումէ ոչ թէ միամեայ կամ թէ երկուամեայ բուսականների մէջ, այլև այն ծառերի մէջ, որ ամենայն տարի արձակումն նոր նոր շառաւիղներ, ուրիմն և մեծանումն, Այս պատճառով բուսականները ածումն ինչքան որ կենդանի են, բայց շնչաւորքը դադարումն :

Բոլոր անկականքը սնանումն ներս ծծելով կերակուրը շատ և նուրբ ծակերով. բայց այս ծակերը, ինչպէս երևումէ, էին միայն բնական ծակախք և ոչ թէ գործարանական բերաններ, այնպէս որ կարելի է ասել, թէ նոքա ներս են ծծում այնպէս միայն, ինչպէս շնչաւորների մտրթը, Բայց սոցա մէջ կայ միշտ գործարանական բացուած, սնունդ ընդունելու համար, որ և ասվումէ բերան. ոմանք Պոլիպոզք թէպէտ ներս են ծծում նոյնպէս բաղմամբի բացուածներով, բայց դոքա են միշտ բերաններ առանձին փողովակների, որ տանումն դէպ ի որովայնը :

Տնկականները չունին որովայն, որ լինէր մի այնպիսի միջնափայր, ինչ տեւից կարող էր յառաջանալ անդառու թիւնը. Նոյնպէս պակաս էր նոցա սիրտը, որպէս հիւթաշարժութեան կենտրոն. Նոքա ունին փողովակների բաղմութիւն, որ ներս են ծծում որպէս աւիչկեան անօթք, և հի թէրը շարժվումն դէպ ի ամենայն կողմ, ինչ տեղ կար հրապոյր. Այս պատճառով չք կայ անկականի մէջ ոչ մի գործարան, որ պատկերայնէր մի նիւթական կենտրոն. թէպէտ բունի և արմատի միջոցը կարելի է համարել մի այդպիսի սկզբնասեղի, բայց շատ ընդարձակ մտքով, որովհետև հիւթերը ամենայն ժամանակ նորանով բարձրանումն արմատից դէպ ի բունը :

Տնկականքը չունին առհասարակ **պն** առանձին փորտոք, զոր օրինակ աղիք, փայծեաղն, լիարդ, թոք, երիկամունք և այլն, այլ նոցա անդամարաշխական մասների ամեն մինը պարզվումէ բոլոր բունի միջոցը, և այդ պատճառով համեմատելի էին նոքա անգամաբաշխական գասակարգերի, բայց ոչ առանձին գործարանների, որ դրած են առանձին փոսերի մէջ :

Բաց ի փորտոքներից ունի շնչաւորը և ոչ մասունք, որ զտնազան են իւրեանց կազմածով և նիւթով, զոր օրինակ ասկերք, մըկ-

նամբար և ջիդր, որոնցից բաղկանում են արտաքին գործարանքը: Այսպիսի բան չէ տեսանվում տունկի մէջ. այլև նորա դուրսի գործարանները, զոր օրինակ կեղեր, սասերը, տերեւները, ծաղիկը, պատանքը բաղկանում են նոյն Տիւսուածից, ինչպէս մարմնի ներքինը: Այս պատճառով տունկի նիւթը հաստարատական է իւր բոլոր մասներէ մէջ, բայց շնչաւոր մարմնների նիւթը շատ անհաստար. այս կանոնի տակ էին այն և Պոլիտոդը և Ակեֆայէրը:

Տունկերը տարուց տարի բաց են ձգում իւրեանց մարմնից կահան մասներ, զոր օրինակ տերեւներ և ծաղիկներ, և տեղական տունկերը դարձնալ նորոգում են նորանց, Այդ բանը չէ տեսանվում շնչաւորների մէջ, Յիրաւի, և սորա երբեմն բաց են ձգում մաղեր, կեղեւանքներ և փետուրներ, բայց դորա էին արդէն կիսամեծ մասներ որ չեն կարող իւրեանց հարկաւորութեան մասին համեմատիլ ծաղիկների հետ:

Այժմէ միտ գնենք տունկերի գործարանքը, արդարև պիտոյ է ընծայել նոցա մարտոգութիւն, շնչաուցութիւն, սննդաուցութիւն և ծննդագործութիւն. բայց այս գործողութիւնքը այժքան փոքր զանագան են միմեանցից և կատարվում են այնպիսի նմանակից Տիւսուածների մէջ, որ շատ փոքր աչքի տակ են ընկնում, քան թէ շնչաւորների մէջ, Վաանձին գործարաններ, արտաթորութիւնների համար, զոր օրինակ երկխամուր, կամ թէ մի ապականութիւն դուրս ձգելու ճանապարհ, պակաս են ամենեին: Տեղականի գործողութիւնքը մնում են միայն մակերևութի վերայ և համեմատում են մորթի արտաշնչութեանը:

Շնչաւորին սեփական է ակրների, միմամիսերի և ջիդրի համակարգութիւն, կամ թէ գործարանը տեղական շարժողութեան, գործարանը անդամաշարժութեան և նկատողութեան արտաքին բաների, այսինքն է զգացողութիւն: Մի այնպիսի բան որ կարելի էր տակ զգայարան, չէ տեսանվում տունկերի մէջ:

Գործարանքը:

Տարերը կարող են զանազան կերպով զուգադրվիլ միմեանց հետ, թէ բազմութեան և թէ դրութեան մասին, և այս պատճառով կան շատ տեսակ հանրեր, տունկեր և կենդանիք: Բայց այս զուգադրութիւնքը լինում են հարկաւորապէս սահմանեալ օրէնքներով, և սորա համար գաղափարքը պիտոյ է հանդիպելին սահմանեալ թաւով, թէպէտ անհատները կարող են լինել անվերջանալի շատ: Այս բոլոր, բնութեան մէջ եղած ջոկ ջոկ գաղափարների գումարը ստվում են իւր-իւր-իւր, և այս պատճառով կան երեք թաղաւորութիւնք.

1. Հանրական թաղաւորութիւն,
2. Տեղական թաղաւորութիւն,
3. Շնչական թաղաւորութիւն:

Բնագրութեան և Գիտութեան Գիտությունները:

Բնագրութեան և Գիտութեան Գիտությունները այնպէս խոստովանված է մեր գարումը, ինչպէս երբէք եղած չէր յառաջուց. նա հասել է այնպիսի բարձր աստիճանի, որ այսուհետև չունի պատճառ գանգատելու, որպէս թէ իւր եղբայրակիցներէ մէջ յետադաս էր. նա ապահով է իւր սրտի մէջ, գիտելով, որ այս իւր աստիճանը և բարեմասնութիւնը լինելու է տեղական, որովհետև գորանց ստացած էր իւր յատուկ աշխատութենով և ոչ թէ ասար հնարներով. որովհետև դորա չէին սպեա ամբոխի շնորհը և ոչ իսկ կարող մարդերի շահանդրութեան պտուղը, ուրեմն և ոչ իւր յատուկ խորամանկութեան ստացուածը:

Հրապարակական կարգադրութիւնքը և օգնականութիւնքը որ անցեալ գարումը նուիրած էին բնագրութեան և Գիտութեանը, զեւ ևս բաւական չէին էին, և ըստ մեծի մասին յառաջացած էին մասնաւոր մարդերի յորդորանքից և հասարածոյ բաներից. Աթէն, Բերլին և Վիեննա քաղաքների մէջ, ապա կը գտաններ նոցա մէջ ամեն բան ժողոված ու գասակարգած, ինչ որ ծնուշանումէ աշխարհը, Նաեւ, որոնց խորհուրդը այն էր միայն, որ տեղեկութիւնք ժողովին աշխարհների և բնական գիտութեան մասին, անդադար չըջումն այժմ երկրի շօրս կողմով, որ նորա գանները անուն և բերեն Արտաղ և գործ զնեն նորանց գիտութեան, վաստակարարութեան և երկրագործութեան համար. Հարիւրաւոր ժողովող մարդիկ ման են գալիս բոլոր աշխարհամասերի մէջ, և տանաւոր եւրոպեական բնաբնիչք իւրեանց համար օթեան են հաստատել Աթէնքայի, Եփեսոյի և Եմբրիկայի մէջ, որ իսկայի կարգով ժողովին բնութեան յիշատակարանքը և, եթէ հարկաւոր էր, իսկոյն նկատողութեան տակ ձգեն նորանց, Գրանսիան և Հոլլանդիան միշտ պահպանումն բնաբնիչ մարդիկ իւրեանց գաղթական քաղաքներումը, և Ենգլիսացոց մէջ բնագրութեան և Գիտութեանը գարնել է արդէն քաղաքական կառավարութեան և Ղիպլոմատիայի մի մասն. Հաղիւ թէ նոցա գորբերը տիրապետած էին մի գաւառի Հնդկաստանումը, և ահա նոցա քամակից զնումէ բնաբնիչներէ բաղմութիւն, որ զէպ ի ամենայն կողմ շրջելով աշխարհի մէջ, ցուցանում տէրութեանը աշխարհի հարստութիւնը, որ կարող էր ստուտուրքի մէջ մտանել:

Մի փոքր ժամանակ յառաջ, բնագրութեան և Գիտութեան պատուականութիւնքը լինելով միայն քանի մի ցան և չէր մարդերի ու շահութեան ստարկայ, այժմուս ամենայն տարի և ամենայն եւրոպական

աշխարհներում հաւարումն հազարաւոր մարդիկ ամենայն կարգից, որ տաներ կատարեն նորա անունով, նորա պատուականութիւնքը գովասանեն և միտքն զօրութեամբ աշխատեն պահպանել և ամենուրեւն շարունակ, Կատալարութիւնքը ուրախանումն այդ գործի վերայ, որով բնապատում գիտութեան սերը և ծաշակը զարթումն և տարածումն ժողովրդի բոլոր կարգերի մէջ և լինումն ընդհանուր խառնելու թեան նիւթ և պարագեղաշէջ առարկայ, Արդարեւ մի աղնիւ, ճամբարս և արդիւնաւոր միտք, որ պիտոյ է զարնուցանել շատ, անպիտան, սուս և դատարկ զբաղմունքից:

Հանքարանութիւնը յառաջագէտ լինելով, էպպես բարւոքացել է մետալագործութիւնը և արուեստակերտութիւնը, և փոխանակ պէտքէն թանգագին ձեռնարկութեաների, որոնցով յառաջուց ծաղալի և աղքատ էին զարձած մարդիկ, յառաջացել են պատուելի և օգտակար ձեռնարկութիւններ, Հարկաւոր էր միայն միտք բերել առաջին ժամանակների ոսկու, կոյնկի և անխի դուրս փորելը, թէև սոցա արդիւնքը ոչինչ այլ բան չէին, եթէ ոչ գլխամբը, շեռլ և սեւա հողակոշակը, և այս միտք բերել այժմուս աղահանութիւնը, պլատինայի ստացումը, այլև մետալագործութիւնը Վսիպի և Ամերիկայի մէջ:

Տնկարանութիւնը լինելով մի քաղցր բարեկամ ամենայն մարդու համար, որ մտնումն նորան, իւր, բոլոր աշխարհի վերայ ջրուած զարգարանքը յանձնել և բժիշկների ճարտարութեանը: Տնկարանական այգիներ ծաղկումն ոչ թէ մայրաքաղաքների մէջ, ոչ թէ համալսարանների մտակալքումը միայն, այլ համարեալ թէ ամենայն արքունի զպոլոցի մտ և ամենայն երևելի քաղաքներում, ուր նորա էին թէ հանգստանալու և թէ ուրախապէս բան ուսանելու տեղեր:

Վոյնպէս հասարակեալ են ամենայն տեղ կենդանարանական հասարածչքը. թէև դժբա, նայելով բանի որպիսութեանը, չէին կարող ամենայն տեղ լիակատար լինել, բայց հալի կը պատահէր Արուսայումը գտանել մի ուսումնարան, ուր չը լինէր կենդանարանական առարկաների մի փոքրիկ թանգարան. դժուար կը պատահէր մի քաղաք, մի բերդ, կամ թէ մի փոքր ի շատե մեծ գիւղ, ուր որ և իշէ մարդ չը լինէր զբաղած հաւարելով թռչուններ, միջասներ, կոնքիլոսներ և քարաջած նիւթեր:

Այնպէս այս բոլոր բաները ոչինչ այլ օգուտ չունենային, եթէ ոչ, յետ պահելով անաղնի զբաղմունքից, այս և այդ օգուտը միայն բաւական մեծ էր, Բայց դժբա զարթումն Նկատողական հոգին և զօրութիւնը, չեն թողում, որ մարդս անմտարար և դատարկութեանից տանջվելով յիմարարար շրջի բնութեան մէջ կամ թէ անձնատուր լինի անարժան բաների. Գոքա առաջնորդումն զեպ ի նորա-

նոր գիտեր, բարձրացնում են ազնիւ պատուաւիրութիւնը, հասուցանում են զիրութիւն և ուսուցանում են գործ գնել գիտերը հասարակաց օգտի համար:

Համարեա թէ աւելի ևս մեծակշիռ բան էր կեանքի համար ծածոթութիւնը փնասակար շնչաորների, որոնց բնազինջ ստնելը հնարաւոր է միայն, տեղեակ լինելով նոցա կեանքի եղանակին: Օգտակարները, մի կերպով, ընտելանում են ինքեանք, և վարեցողութիւնը նոցա հետ յայտնի է սխեւալ հին ժամանակներից. բայց երբ որ և փնասակարները յարձակուում են մեր վերայ, պատահում է շատ անգամ, որ դոքա այնպէս արմատացած էին մեր մտակալքումը, որ չէր կարելի յետոյ դարձուցանել փնասը. և շատ անգամ համարած էինք փնասարեր ամենեին անմեղքը, այս և այնպիսիքը որ փնասակարների թշնամիքն էին և կյանումէին նորանց, Նկատելով այդպիսի շնչաորների ծննդագործութիւնը, կարող ենք ուսանել միայն, թէ որի ընդդէմ և ինչպէս պիտոյ էր մեզ պատերազմել:

Ահա թէ քանի և քանի կերպով օգտուէտ է բնապատում գիտութեան ուսումը ամենայն բանական և խելացի մարդու և ազգի համար:

2. ԲԻՎՈՒՆՆԻՒՆ ԻՆՉՈՒՆ ԵՐՈՒՄ Ե ԸՆԿՐՈՒՄ ԻՆՆԵՆ:

Գալոց և մի ժամանակ, երբ այն բաները որ այժմ ծածկուեցն են, զորս կը հանէ մի որ և շատ դարերի հզորութեութիւն: Այդքան մեծ բաների հետքնութեան համար բուհան չէ մի գործ. կը զոյ մի ժամանակ. երբ մեր ազգայնը կը զարմանան, որ մեր ազգու ենք եղած ազգան յայտնի բաների:

Սենտի բնական իրար Ե. 23:

Նոր ժամանակի գրուածների մէջ այնքան յաճախ խօսուած քրիստոնեականութեան մասին, որ անարդիւն գործ չէր աւելի ճիշդ կերպով ցոյց տալ նորա ազգայնութիւնը արուեստների և վաստակաւթեան վերայ, նորա անձնութիւնքը երկրագործութեան, բնարանութեան և բո՛ղջականութեան հետ:

Յանկալի էր ինձ, առում Լիբիդ ակնանար քրիստոնեանը մեր ժամանակի, այս ճառի մէջ հաստատութիւն տալ այն հաստատին, թէ քրիստոնեականութիւնը որպէս ինքնազոյն զիտութիւն ծանոթացնում մեզ այն շատ զօրաւոր արուեստներից մինի հետ, որ հարկաւոր էին աւելի վերին իմացական լուսաւորութեան համար, թէ նորանով պարագնելը օգտակար էր ոչ թէ միայն նորա համար, լստ որում ներստու:

է մարդուս նիւթական օգուտներին, այլ որովհետեւ կարողութիւն է տալիս վերահասու լինել արարչագործութեան հրաշքներին, որ անմիջապէս շրջապատումն մեզ, որոնց հետ շատ մտ կապած է մեր կենդանութիւնը, տեղով թիւնը և յտառագլխում թիւնը:

Ինտութեան մէջ եղած տեսիլների պատճառը հարշատորձել, փոփոխութիւնը այն ամենայն բաների, որ ամեն օր մեր աչքի տառիկ են, քննել և վերահասու լինել, այնքան պատշաճ է մարդկային բանականութեանը, որ այն գիտութիւնը որ կարող էին այդ մեր աչքի հարշատութեանը պատկանար պատասխան տալ, աւելի քան թէ բոլոր միւս գիտութիւնը, օգնական էին կրթելու մեր խմշականութիւնը, քիմիականութիւնը լինելով բնաղնական գիտութեան մի բաժինը, շատ մտ ազգակից է Գիղիկայի հետ, և սա ճիշդ կապակցութիւն ունի Ատեղարաշխութեան և Մաթեմատիկայի հետ, բնագիտութեան ամեն մի ճիղի հիւնքը է պարզ նկատուցութիւնը բնութեան. առ փոքր փոքր միայն, փորձերից յատաշնանով կերպարանդել է գիտութիւնը, Առախ առնչութիւնը դեպ ի երկիրս, աստղների տեղաշարժութիւնը, ջերեկի և գիշերի փոփոխութիւնը, տարու եղանակը, օդի որդխութիւնը զանազան կլիմաների մէջ առաջնորդած են դեպ ի Ատեղարաշխութիւն:

Ինչ չափով մարդկային խնայականութիւնը անուսն և զօրանում է որ և ից կողմից լոյս ստանալով, նոյն չափով անուսն և զօրանում են նորա բոլոր ընդունակութիւնը դեպ ի միւս կողմեր. մարդս աւելի ճիշդ ծանօթանալով յայտնի տեսիլների կապակցութեան հետ, գտանելով մի նոր ճամբարութիւն, ստանում է որպէս թէ մի այլ նոր զգայարան, որով կարող էր նկատել և ծանաչել անհամար այլ տեսիլներ, որ նորա և միւսերի համար անտեսանելի ու ծածկած էին:

Ատեղարաշխութեան հետ միասին ծագեցաւ Գիղիկան, որ անելով և փոքր ի շատե կատարելագործվելով յտառագրեց գիտական քիմիականութիւնը: Օրգանական քիմիականութեանց կը բացայայտվին կեանքի օրէնքները, կը յատաշնանայ բնարանութիւնը (Գիղիկայի):

Չէ սխալ մտանալ, թէ մարդիկ սահմանած են տարու երկարութիւնը, բացայայտած են տարու եղանակների փոփոխութիւնը, հաշուած են լուսնի խաւարումը, առանց տեղեակ լինելու ծանրականութեան (gravitation) օրէնքներին, Շինած են սղօրիք և շնչահան գործիք առանց իմանալու օդի ճնշողութիւնը. պատրաստած են ապակի և ֆարֆօս, ներկած են զանազան գուներով, և հրահալելիք որոշած են միմեանցից, բոլորը փորձառութեանով միայն, ուրեմն և առանց գիտնական առաջնորդութիւն ունենալու: Այսպէս, Արիքաշատութիւնը, և թէ քննելը նորա հիւնքը, մի փորձական գիտութիւն է, նորա ուսումնա-

կան առածքը դառնեման են փորձով, մինչև նոցա ճշմարտութիւնը հաստատուեցաւ բնաւոր եղբակացութենէն թէ շիշուհեան զէ զիծը, քառակուսի շինած, հասարակ է երկու կաթմաներին (ուղղահայեաց զծերին որ բազմաանունն մի ուղիղ անկիւն), էր մի փորձ, մի դիւտ. ապա թէ ոչ, մի թէ դորա յայտնագործողը, երբ որ դառաւ գորա ապացուցը, կը զոհէր հարիւր գլուխ ոչխար:

Իսկոյ ներկայումս ինչպէս ամենին այլ աշքով պիտոյ է նայելինք բնազնին մարդու յայտնագործութենէն զերայ, երբ որ մի ճշմարտութիւն փխրութայութիւն, անուն զենէր նորան Քիզիկա, Քիզիկա-նու թիւն, Մաթեմատիկա, կամ թէ ինչպէս կը կամենայինք, իւր հոգեզէն շունչը փչելով նորա վերայ առաջնորդել է նորան զէպի անսխիւնների քննութիւնը, որ կարողանար եղբափակել նոցա պատճառքը և օրէնքները:

Մի հաստ մարդու վսեմական հանճարից, մի հաստ Նիւտոն իմաստունի մտածութենից աւելի լոյս է յառաջացել քան թէ հազար ասորիներ նորանից յառաջ կարող էին գուրս հանել: Նորա ուղիղ հայեցումը երկնային մարմինների շարժողութեան մասին, նորա դասողութիւնը մարմինների վայրարելութեան վերայ դարձել է մայր անհամար միւս յայտնագործութենէն. նաւարկութիւնը, վաստակարարութիւնը, ամենայն ժամաւոր մարդ, ինչքան որ կայ մարդկութիւնս, քաղելու է հոգեզէն և նիւթական օգուտ Նիւտոնի յայտնագործութենէն իրից:

Եւանջ հարցաբննելու Քիզիկայի պատմութիւնը, անկարելի է պատկերացնել մտքով, թէ բնազնութիւնը ինչքան գործակից է եղած իմացականութեան յառաջադիմութենին: Եւրոպայի ուսումնարաններումը ապարդիւմնէ երկիւմների մտքի մէջ այնպիսի ճշմարտութիւնք որանց դիւտը և ստացութիւնը արժեք է անչափելի աշխատութիւն, անասելի ջանք ու վաստակ. եւրոպական տղայքը ժպտումն, էթէ մէք պատմումներ նոցա թէ մի խոսքից բնազնին երկար ու ձիգ ճատ գրեց այն բանի վերայ, թէ Կանտ սարի ձիւնը բաղկանումն մի և նոյն նիւթից, ինչպէս Հիլեյիայի Ալպեան սարերի ձիւնը, այլև բազմաթիւ պայտոյցներ մէջ բերեց, որ լուսափայլ կայունցան թէ այն երկու աշխարհի ձիւնքը հալվելով տալիս էին մի ջուր հասարակ յատկութեամբ և որպիսութեամբ. այնու ամենայնիւ, այդ եղբակացութիւնը չէր այնպէս ակնյայտի, ըստ որում Արկիլայի եղանակը շատ զանազան է Հիլեյիայի եղանակից: Այն ժամանակը ոչ ոք իւր մտքից ևս անցուցած չէր զերմութեան տարածութիւնը երկրի երեսի վերայ. և էթէ մի երկնայ մի ջրալից բաժակ արձակ թողնի թերթով փակէր և վեր ի վայր շրջէր առանց մի կաթիլ ջուր ցած թափվելու, այն կա-

բող էր գորանոյժ զարմացնել մի այլ երկխոյ, բայց զա մի և նոյն փորձն է որ անմահացուցել է Տօրիւնի խաւաջու անունը: Նոյն փորձը այլ անսակ կատարելով Մաղգէրու բղան քաղաքացեալ Օտտա Փոն Գերիքէ անունով, ափ ի բերան զարմանք բերեց կայսրի և ժողովրդի վերայ Բեզնարուրը քաղաքումը: Մեր եւրոպեական երեխայքը ունին աւելի ուզիղ տեղեկութիւնք բնութեան և նորա տեսիլների մասին, քան թէ Եւրոպայ Պլատոնը, այն, ունին նոքա համարձակութիւն ծաւր անել այն սխալանքների վերայ որ գործել է Հառմայեցոյ Պլինիոսը:

Պատմարանութիւնը, իմաստասիրութիւնը և Հին ընտիր Հեղինակների գրուածքը ուսանելով, ծանոթանումներ իմացական աշխարհին, տեղեկանումներ Հետաքննութեան և մտածութեան օրէնքներին, մարդկութեան հագեղէն բնութեանը, Բնութեցասիրելով բոլոր ժամանակների մեծամեծ և բարի մարդերի հագեղէն վաստակքը, ուսանումներ անցած դարերի փորձերից, թէ ինչպէս պիտոյ էր մեղմել և կտաւ վարել իւր կիւրքը, սանձահարել իւր սիրտը: Նոյն առաջնորդելով վերահասու: Նրք լինում այժման ժամանակի մարդուն, որի բարձրական բնութիւնը երեկ և այսօր նոյն է յախտեան: Նոյն ուսուցանումն մեղ կրօնի ճշմարտութեան, արգարութեան հիմնական կանոնքը զգետաւորել ամենաղեղեփի ձևով և սյոզպէս աւելի խոր տղաւորութիւն անել միւսերի սրտի վերայ, Բայց պատմարանութիւնը և փիլիսոփայութիւնը չը կարողանան խափանել, որ շարժին մարդիկ կատարողութեան պատճառով, և երբ որ մեծանուն Քիպելը եկաւ Տիրինգն քաղաքը, որ փրկէ իւր մայրը կրակամահ լինելուց, կարողացաւ միայն այսքան ապացուցանել, թէ այն սողոյց յատկութիւնք որ հարկաւոր էին մի կախարդի համար, ամեննին պակաս էին իւր մարդ:

Վիճակահանութիւնը 60 տարի յառաջ որպէս առանձին գիտութիւն բաժանվեցաւ Ֆիզիկայից, ինչպէս մի սերմի հատիկ բաժանվում է մի հասունացեալ սողոյց, Քալենդիլ և Պրիստոյէ ուսումնականներից սկսանում այս գիտութեան նոր տարեհաշիվութիւնը: Բժշկականութիւնը, զեղադործութիւնը, արուեստականութիւնը պատրաստել էին այն հողը որի վերայ այն սերմի հատիկը պիտոյ է կանաչէր, աճէր և զօրանար:

Վիճակահանութեան հիմքը, ինչպէս յայտնի է. հաստատումն այն, ըստ երևութիւն, սրաղ կարծիքի վերայ որ ունէին Ալլիքցականութեան մասին: Այժմ գիտելք մեր, թէ ինչ է յառաջանում դորանից, ինչքան բարութեան և ինչքան օգուտների պատճառ էր զա: Սկսեալ այն ժամանակից, երբ որ յայտնագործել են թթուանիթը, քաղաքացեալ աշխարհի բարքը և սովորութիւնքը փոխել են իւր

եանց կերպարանքը: Այս յայտնագործութեան հետեից տեղեկացան Ատմասփեթայի, ամուր հողակիցի, ջրի բազազրական մասներին, նոցա ազդեցութեանը բուսականների և շնչաորների կենդանութեան վերայ. թէ ինչպէս պիտոյ է աւելի շահաւետ կերպով պատրաստել վաճառաշահական բաները, թէ ինչպէս պէտք է ձեռք բերել մետաղները, սոքա բոլորը ճիշդ կապակից են նորա հետ: Այժմ կարելի է ասել, որ այնուհետև տեքութեանների նիւթական բարեկեցութիւնը բազմապատկ աւելացել է, որ ամենայն մարդու ստացուածք ճոխացել է դորանով:

Վնն մի առանձին յայտնագործութիւն ֆիւթականութեան մէջ յատաջացուցել է նմանապիսի ներգործութիւններ. նորա օրէնքների ամեն մի գործադրութիւնը կարող է որպէս և իցէ սգուտ բերել տեքութեանը. առաւելացնել նորա զօրութիւնը և բարեկեցութիւնը:

Ըստ հայեցուածներով, ֆիւթականութիւնը ունի նմանութիւն Մաթեմատիկայի հետ. ինչպէս սա ուսուցանումէ մեզ շարիւղ գաշտերը, տներ շինել, ծանրութիւնը բարձրացնել, նշնայէս է նա հաշուարարութեան արուեստի պէս մի գործի, որի յաջողակ գործածութիւնը ակիւյայնի սգուտ է բերում: Միւս կողմից Մաթեմատիկան սալիս է մարդուս կարողութիւն ուղիղ բանասօր կզրակացութիւնք հասնել սահմանաւ կանոնների հիման վերայ. նա ծանօթացնում է նորան մի առանձին լեզուի հետ, որ նորան թոյլ էր սալիս մի շարք կզրափակութիւնք բացայայտել անչափ պարզապէս, զիժեքով և նշաններով որ հասկանալի էին ամենայն մարդու, որ ծանօթ էր այդ լեզուին. նա ուսուցանում է նորան որոշեալ գործողութիւններով որ այդ զիժեքով ու նշաններով կատարուէին, ճշմարտութիւններ գտանել. նա ուսուցանում է պայծառապէս ճանաչել այն յարաբերութիւնքը որ յուսուց մտիւթ և անյոյս էին:

Սեքինագործը, ֆիզիկոսը, աստեղարաշխը գործ են անում Մաթեմատիկան ինչպէս մի անհրաժարելի հարկասօր գործի որ ծառայում է նոցա որպէս մի հնար, մի որոշեալ նպատակի հասանելու համար. նորա պիտոյ է այնպէս վարժ և յաջողակ գործ դնելին այդ հնարը, որ նորա գործածութիւնը դառնար նոցա համար մի մեքենական յաջողակութիւն, որ կարուս էր միայն նոցա յիշողութեանը. բայց գործակատարը չէ արդարև գործին, այլ մարդուս իմացականութիւնը. նորա կը խոստովանելին, թէ բոլոր մաթեմատիկական տեղեկութիւնքը անպիտան էին նոցա համար առանց գատողականութեան, սրամտութեան և նկատողական քանքարի:

Վուր կարող էր մտածել մի մարդ, որ ունենալով մի մեծ յիշողութիւն, քաջ ծանօթացած էր Մաթեմատիկայի բոլոր հիմնական

կանոններին, և շատ յաջողակ կարող էր գործ անել այդ հնարք առանց կարողանալու ինքը իւրեան մի խնդիր առաջարկել: Եթէ դուք առաջարկէիք նորան մի խնդիր, և եթէ սայիք նորան մի խնդիր լուծանելու պայմանները, այն ժամանակը կարող էր նա, գործ զնելով այն հնարները որոնց ծանօթ էր, դուրս բերել մի պատասխան, բացայայտելով նորան ձևախօսութեամբ, որոշեալ նշաններով, թէպէտ դոցա խորհուրդը ամենեւնի անհասկանալի էր նորան, որովհետեւ այս ձևախօսութեան ճշմարտութիւնը դատելու համար պակաս էին նորան այն պայմանները: Այսպիսին էր միայն հաշուարար. բայց, երբ որ նա ընդունակ է և ունի այն քանքարը, որ կարող էր ինքը իւրեան մի խնդիր առաջարկել և իւր հաշուարարութիւնը փորձել, այնուհետեւ կը լինէր նա բնազնին, ըստ որում ինչ տեղից պիտոյ է ասնուր նա իւր խնդիրը եթէ ոչ բնութիւնից կամ թէ կեանքից:

Գուք կ'ասէիք նորան մեքենագործ, կամ աստեղարաշին կամ մաթեմատիկոս բնաբնին, եթէ նա հիմնաորվելով նկատողութեան վերայ կարող էր գտանել պատճառները, որոնցից յառաջանումէին այն երևոյթքը, եթէ կարող էր իւր հետաքննութեան հետեւնըները բացայայտել ոչ թէ միայն ձևախօսութենով, Մաթեմատիկոսի լեզուով, այլ և եթէ իմանումը գործ զնել նորանց, եթէ այն ձևախօսութիւնը կարող էր պատկերացնել մի տեսիլքով և այդպէս փորձել նորա ճշմարտութիւնը:

Բասեղարաշին, ֆիզիկոսին, մեքենագործին բուսական շէր Մաթեմատիկան, որ ծառայում է նոցա որպէս գործի. նոքա կարտ էին ղեռ ևս այն հմտութեանը որ է նկատողութիւնը առնել, երևոյթները մեկնարանել, Գորա համար հարկաւոր է մի այլ ճարտարութիւն, այսինքն մի բանաւոր եզրափակութիւն ստուգել մի երևութով, մի մեքենայով, մի կազմածով, մի շարք եզրակացութիւնք ապացուցանել փորձելով:

Ֆիզիկոսը առաջարկում է իւրեան մի լուծանելի խնդիր. նա կամենում է քննել մի երևութի պայմաններ, նորա փոփոխութեան պատճառները, և եթէ նա ուղղապէս առաջարկել է իւր խնդիրը և հաշիւ է զնում բոլոր գործարարքը, ապա կարող է մաթեմատիկական ընթացքով գտանել մի պարզ յայտարար անձանօթ որքանութեան կամ թէ որնած յարաբերութեան համար. Այս յայտարարք, եթէ թարգմանէր նա բաւերով, բացայայտում է նկատած տեսիլների, նորա արած փորձերի կապակցութիւնը: Այդ յայտարարք ուղիղ էր, եթէ կարելի էր նորանով յառաջ բերել մի որոշեալ շարք այլ երևոյթներ, որ այդ յայտարարի հետեւնըներն էին:

Բնա ակնյայտի է ձեռն որ Մաթեմատիկան կապակցի է բնազն-

նույն ժամանակ հետ, որ բաց ի Մաթեմատիկայից քաջ երևակայութիւն, սրամտութիւն և նկատողական կարողութիւն հարկաւոր են, նորանոր գիտեր առնելու համար Գիտելիայի, Աստղաբանութեան կամ Մեքենագործութեան մէջ, Մի շատ հասարակ սխալանք էր, գիտերը ընծայել Մաթեմատիկային. այդ սխալանքը հանդիպումք մեզ հազար այլ բաների մէջ, ուր ներգործութիւնը շփոթումն պատճառի հետ, Այդպէս ահա, շոգեշարժ մեքենաներին են ընծայում այն բանը որ պատկանումք կրակին, ածխաբարին, մարդու հանճարին, Մաթեմատիկայի մէջ նոր յայտնագործութիւնք առնելու համար, պիտոյ է նոյն իմացականութիւնը, նոյն սրամտութիւնը, նոյն մտածողական զօրութիւնը, որ հարկաւոր էին միւս դժուարին խնդիրներ լուծանելու համար, Այդ գիտերի արդիւնաւորութիւնը այնպէս էր, որպէս թէ դու կտտարելայնէիր մի գործիք որ կարող է անհամար օգտակար կերպերով գործ անդիլ, բայց Մաթեմատիկան հիմնաւորվելով ինքը իւր գերայ, բնաբնական գիտութեան մէջ ոչինչ նորանոր գիտեր չէ գործում. նա միշտ մշակումք միայն տուած բանը, զգայարանների նկատողութիւնքը, հանճարի նորածին մտածութիւնը.

Մաթեմատիկական Գիտելիայի զեմուգէմ կանգնած է փորձական Գիտելիան. սա է, որ իրողութիւնքը յայտնագործումք, քննումք և պատրաստումք մաթեմատիկական Գիտելիոսի համար. փորձական Գիտելիայի պաշտօնը այն է, որ իրաւացի տեսիլներով բացայայտ օրէնքները, նոր գտած ճշմարտութիւնքը, որ մաթեմատիկական ձևախօսութիւնը պարզայնէ փորձերով և լուսափայլ կացուցանէ զգայարանների համար.

Քիմիականութիւնը կամենալով իւր հարցուածներին պատասխան տալ, ընթանումք նոյն ճանապարհով, ինչպէս փորձական Գիտելիան. Նա ծանօթացնումք այն հնարների հետ որ առաջնորդումքն զեւ ի այն բազմատեսակ մարմինների գիտութիւնը, որանցից բաղկանումք ամուր երկրակեղևը, որ և յորինումքն կենդանական և ածեցական կազմածի բաղկացական մասունքը, Գորանից ուսանումքն մեր մարմինների յատկութիւնքը, այն փոփոխութիւնքը որ նորա կրումքն մտաւորվելով միմեանց. բոլոր նկատողութիւնքը առած միասին, բաղկացնումքն մի քիմիական լեզուախօսութիւն. ամեն մի յատկութիւն, ամեն մի փոփոխութիւն, որ նկատումքն մարմինների վերայ, մի խորհրդաւոր բառ է այս լեզուի մէջ.

Մարմինները, ինչպէս որ բնաւորված են, ունին որոշեալ յարբերութիւնք միւտերի հետ, նման են նոցա իւրեանց ձևի և քանի մի յատկութիւնների մասին, կամ թէ տարբերվումքն նոցանից, Այս տարբերութիւնքը այնքան ևս բազմօրինակ են, ինչպէս ամենաճորս

լեզուի բառերը. նոյնպէս շատ զանազան են նորա խրեանց նշանա-
կութենով և խրեանց յարաբերութենով զեպի մեր գրայութիւնքը:

Մարմինները զանազան են խրեանց որդիութեան մասին. ինչ
որ նոցա յատկութիւնքը վկայումն մեզ, փոխումն, երբ որ նոցա
այսպէս կամ այլպէս կարգադրած էին: Ինչպէս ամենայն միւս լեզ-
ուի մէջ, նոյնպէս այն ատեննին լեզուի մէջ, որով մարմինները խո-
սումն մեր հետ, ունինք մեր յոգեր, հոլովներ, գոյականների և բոյ-
ների վերջաւորութիւններ, ունինք շատ հոմանշան բառեր: Նոյն տա-
րերքի նոյն որբանութիւնքը այսպէս կամ այլպէս դասակարգելով
յառաջացնումն թոյն, մի բժշկական զեղ, մի սնուցիչ կերակուր,
մի թուուն կամ մի ամուր մարմին, որ անխորտակելի էր կրակից:

Մեր ճանաչումներ մարմինների յատկութենների խորհուրդը,
այսինքն այն բառերի խորհուրդը, որոնցով բնութիւնը խօսումն մեր
հետ, և գործ ենք զնում այրութենքը, որ կարողանայինք կարգալ:
Գի հանքային աղբիւր Յալջիա աշխարհի մէջ բժշկումն վիճի խոյլեր-
քիմիականը հարցատորձումն այդ աղբիւրի ջուրը, և բոլոր տառա-
նշանները միակարգելով, ասումն զա նորան, թէ ունի իւր մէջ Նոյ
անունով նիւթը: Գի մարդ մի կերակուր կերած մեռանումն ամենին
այնպէս, որպէս թէ թունաւորված էր. տեսիլների լեզուախօսութիւնը
որ հասկանալի է քիմիականին, ասումն նորան թէ այն մարդը մեռած
է մկնդեղով (արսենիկով) կամ թէ Յուրլիմատ ասած թունովը: Քի-
միականը հարցուածք ատենով մի հանքային նիւթից, խօսեցնումն
նորան. սա պատասխանումն թէ ունի իւր մէջ ծծումբ, երկաթ, իրօմ
(ներկատու մետալ), խճաւոր հող, կաւ, կամ թէ քիմիական բնույթա-
տումն լեզուիցը մի բառ, որոշեալ կերպով կարգած: Այս էր Գի-
նի վերջը:

Տեսիլների լեզուախօսութիւնը առաջնորդումն քիմիականին զեպ
ի նորանոր բաղադրութիւնք, որոնցից հետեւումն անհամար օգտակար
գործադրութիւնք, և այսպէս կարող է քիմիականը աւելի կատարեալ
կերպով պատրաստել վաճառաշահական և վաստակասիրական յօրին-
ումածք, բժշկական զեղորայք, և յառաջադիմութիւն տալ մետալուրգոր-
ծութեանը: Նա վերահասու է եղել Ուլտրամարին անունով կապտա-
քարի բաղադրական մասերին. այժմ հարկւոր էր, որ նա այդ բա-
ռի խորհուրդը պատկերացնէր տեսիլներով, որ նա արուեստով միւս-
անգամ ծնուցանէ Ուլտրամարինը: Այս էր Գի-նի վերջը:

Արուեստագործութիւնը, վաստակասիրութիւնը, բնարանութիւնը
զգուար թէ մինչև այժմ գիտնական քիմիականութենից արած լինէր
մի հարց որ անպատասխանի մնացած լինէր: Ամենայն խնդիր, ճիշդ և
սահմանեալ կերպով առաջարկած նորան, լուծումն է գտել մինչև այժմ:

այն ժամանակը միայն անպատասխանի է մնացել Հարցանոցը, երբ որ ինքը շուներ պայծառ մտածութիւն այն բանի վերայ, որի մասին լուսափայլութիւն էր պահանջում:

Քիմիայի պաշտօնը այն է, որ քննէ բնական տեսիլների պատճառները, նոցա փոփոխութիւնը, որպէս և այն գործարարքը որ նոյն էին դանադան տեսիլների համար: Քիմիականը հանդէս է հանում այն օրէնքները, որոնց հիման վերայ կատարվում են այդ տեսիլները, և հասարելով միասին իւր զգայարաններով իմացած ու ճանաչած բաները, հասանում է այն տեղ, որ կարող է տեսիլներին մի հոգեղէն յայտարար տալ, այսինքն ստանում է *բնական*:

Անձանօթ տառանչաններով գրած մի գիրք կարգալու և հասկանալու, մի մտահայեաց տեսութեան ճշմարտութիւն պայծառապէս ճանաչելու համար, այն տեսիլները որոնց վերայ հիմնադրված է դա, և այն զօրութիւնները որոնցով յառաջանում են այն տեսիլները, մեր կամքի սակ ձգելու համար, պիտոյ է նախ և յառաջ ուսանել պրորենը, պիտոյ է այդ նշանների գործադրութեանը ծանօթանալ, պիտոյ է վարժութիւն և աշողակութիւն ստանալ այդ բանի մէջ, պիտոյ է տեղեկանալ այն կանոններին որոնց վերայ հիմնադրվում են քիմիական զուգադրութիւններ:

Ինչպէս աւելի վերին մեքենագործութիւնը և Գիղիկան պահանջում են մեծ վարժութիւն Մաթեմատիկական վերլուծութեան մէջ, նոյնպէս պէտք է քիմիագործը, որպէս լնութեան քննող, շատ մտածանօթացած լինի քիմիական վերլուծութեան հետ: Բոլոր եզրակացութիւնքը, իւր հետեւցրած վճիռը բացայայտում նա փորձերով և տեսիլներով:

Անն մի փորձ է մի մտածութիւն, մի երևութի միջնորդութեանով իմանալի կացուցած մեր զգայարանների համար: Մեր մտածութեանների և մեր եզրակացութեանների ապացոյցքը որպէս և նոցա հերքողական պատճառները են փորձեր, որոնցով պիտոյ է մեկնարան վէին կամար կերպով յառաջ բերած տեսիլները: Կար մի ժամանակ, որ քիմիականութիւնը Ատեղարաշխութեան, Գիղիկայի և Մաթեմատիկայի պէս մի սյլ բան չէր, և թէ ոչ օրինակներով գուրք բերած և կանոնների սակ ձգած փորձակատարութեան հմտութիւն: Բայց երբ որ սկսեցին ճանաչել այն պատճառները և օրէնքները, որոնց վերայ հիմնադրվում են այդ կանոնները, այնուհետեւ փորձակատարութեան հմտութիւնը կորուսել է իւր խորհուրդը:

Շատ աշխատութեանով, ժամանակի վատնողութեանով ուսանել այն հնարագործութիւնքը և ճանապարհները, այն գրուչութեան կանոնները քիմիագործութեան մէջ, որպէս և արուեստականութեան և

զեղազործութեան մէջ, այն օտարաձայն անուանակոչութիւնք որ տալիս էին Հին ժամանակների քրիմականներին, նոցա կրակարանքը և ամանները, դորս դարձել են այժմ հաղուազիտ բաներ: Այդ բոլորը շին ուսանում այժմ, այլ հասկանալի են ինքն ըստ ինքեան, ըստ որում յայտնի են պատճառները որ հարկաւոր էին կազուցել այդպիսի պատրաստութիւնք: Մի փորձի, մի գործողութեան յաջողութիւն այնքան կախ չէ մեքենական յաջողակութենից, ինչքան որ կախ էր տեղեկութեններից: Այնպէս զորութիւնք յառաջանումէ պակասաւոր գիտութենից. յայտնագործելը հիմնաւորումէ յաջողակ մտաւորական գուղազորութենի և մտածողական գործարանի վերայ:

Կարողներումը ուսանումներ այբուբենքը, քրիմական արուեստանոցներումը այս նշանների գործածութիւնք. աշակերտը դորանով ստանումէ աջողակութիւն կարողալու երևութենների լիզուախօսութիւնք. նա ուսանումէ բաղադրութենների կանոնները, որպէս և թեթեւաշարժութիւն և յարմար միջոց գործ զնելու այն կանոնները: Երբ որ քրիմարանական ստուերը և նշանները կերպարանվել են որպէս մի հոգեզէն լիզու, այնուհետև անխառն և անկորուստ կը մնայ նոցա խորհուրդը: Յոցա տեղեկակ լինելով կարող էր ուսանողը անձանօթ աշխարհներ քննել, ամենայն տեղ ծանօթութիւնք ժողովել և յայտնագործութիւնք անել, ինչ տեղ արժանաւորութիւն ունէին այդ լիզուի տառանշանքը: Այս քրիմական լիզուն ճանապարհ է հասկանալու այն բարբերքը, այն սոփորութիւնքը, այն պիտոյքը որ հասարակեալ էին անձանօթ աշխարհների մէջ: Աւսանողը կարող էր նոյնպէս, առանց տեղեկակ լինելու այս լիզուին, ոտք կոխել այն աշխարհների սահմանի վերայ, բայց կը հանդիպէր անհամար խառնակութենների և սխալանքների. նա կը պահանջէր հաց և նորան կը ապրի քար:

Բժշկականութիւնք, բնարանութիւնք, երկրաբանութիւնք, փորձական ֆիզիկան, տրաւ են այն անձանօթ աշխարհները որոնց օրէնքները, կարգազորութիւնքը և կառավարութեան ևղանակները կամեւումը ճանաչել նա: Արանց գիտուն լինելու երևութենների լիզուախօսութեանք, առանց կարող լինելու թարգմանել նորան, ոչինչ բան չէ մնում նորան յայտնագործելու, եթէ ոչ ձևերի և յատկութենների ծանօթութիւնք:

Տեսանում չէք արդեօք, թէ ինչ բանով պակասաւոր էր բնարանութիւնք. հասկանալի չէր ձեզ այն առ ի սրտէ վիպութիւնք, որ մեծամեծ բնախօսները տալիս են ամենայն բանի մէջ, որ խօսումէին նորա, ամենայն փորձի մէջ որ փորձումէին նորա: Այսուհետև արտաքին ձևի տեղեկութիւնք չէ հանդատացնում նոցա սիրտը. նորա սրտի մտքով ճանաչումն կշիտը և անհրաժարելի հարկաւորութիւնք

մի աւելի խորին, աւելի ներքին, մի քիմիական վերահաստիճան. սա մի՞ թէ մտածելի կամ կարելի՞ է առանց ծանօթ լինելու քիմիական լեզուախօսութեանը, եթէ միս աւելի փոքրաքանքար բնախօսները մեղադրումն քիմիականութիւնը, որպէս թէ սորա կզրահացութիւնքը անօգուտ էին, պիտառութիւն չունէին նոցա համար, զա մի մեծ անարդարութիւն է, ըստ որում նոքա չեն հասկանում նոցա միտքը և խորհուրդը: Այդպիսիներին անկարելի էր նոյնպէս ընթեռնուլ մի գերմաներէն գիրք, երբայական տառերով գրած, եթէ անղեակ չէին այդ տառերին:

Զը գիտէք դուք, որ և բնախօսութիւնը նոյնպէս, ինչպէս քիմիականութիւնը փոքր արժանաւորութիւն ունի շատ բժշկականների աչքում, որ և բժշկականութիւնը նոյն մեղադրանքի տակ է ձգում նորան, թէպէտ նոյնպէս անիրաւարար: Այն բժիշկը որ ուսել է բժշկականութիւնը ոչ թէ որպէս գիտութիւն, այլ որպէս մի փորձակատարութեան արուեստ, չէ ընդունում ոչինչ սկզբնական հիմքեր, այլ միայն կանոններ, որ առած էին փորձողութենից, թէ ինչ բան այս կամ այն դիպուածի մէջ լաւ կամ վատ ներդրումն է: Բայց թէ ինչ պատճառ կար այս սեղ, դորան չէ քննում փորձակատարութեան արուեստը: Բայց ինչ հայեցումով պիտոյ էր դատել այն անկանոն հիւանդոտ որպիսութիւնքը մարդուս մարմնեղէն դործարանի մէջ, եթէ կանոնապատշաճ որպիսութիւնքը բաւական հասաստութեամբ ծանօթ լինէին մեզ, եթէ մէք կարողանայինք ամենին պայծառապէս պատկերացնել մեզ մարտողութեան, հիսթալոսիսութեան և կղկղանքի պատրաստութիւնքը, Այնուհետև ինչքան այլապէս կը լինէր ջաւերի բժշկութեան կերպը, Առանց ուղիղ մտքով կշտելու զորութիւնը, պատճառը և ներդրումութիւնը, առանց գործական վերահաստիճան բնական երևուածների էութեանը, առանց հիմնուոր բնախօսական և քիմիական կրթութեան զարմանալի է, թէ ինչպէս կարող էին մարդիկ, որ ուրիշ բաների մէջ իսկոյք էին, շատ անմիտ տեսութիւններ հաստատել, թէ գերմանիայի մէջ կարող էր շանեմանի ուսումը հանդէս գտանել և ամեն աշխարհներում աշակերտներ ստանալ: Աոկ իսկըրը միայն չէ կարող պահպանել ազգերը ևս մոլորահասաստութեան երևից, բայց երեխան ամեցնելով իւր իմացականութիւնը և տեղեկութիւնքը, ազատումն ցնորների երկիւղից, Կարելի՞ է այդպիսի մարդերից յուսալ, թէ դոքա որքան և իցէ օգուտ քաղելու էին քիմիականութեան և բնախօսութեան յայտնագործութիւններից: Հնար է մտածել թէ կարող էին թէև շատ փոքր գործ դնել այն յայտնագործութիւնքը, դոքա որ բնաքննութեան իսկութիւնը չեն ըմբռնած փիլիսոփայական հոգով, որ չեն ուսած թարգմանել երևութների լեզուախօսութիւնը:

Գոցա և դոցա հոգու ազգակիցներին ցաւելի է, որ ճշմարտութիւնը այնքան պարզ է, թէև նորա, ինչքան ևս աշխատեն, ձեռնհաս չեն պիտանի կացուցանել նորան գործով ու արդիւնքով. այդ պատճառով առաջարկուածն մեզ ամենեին անկարելի տեսութիւնք, և ~~կենդանութիւն~~ ~~պարտաւորութիւն~~ բառի մէջ զնուածն մի զարմանալի խորհուրդ որով բացօթյայտուածն ամեն բան որ անհասկանալի էր նոցա. բայց այդ ինչ հրաշք է, մի ամենեին անիմանալի, անասճմանելի բանով բացայայտել ամենայն բան որ անհասկանալի էր. Կենդանական զօրութեան էութիւնը հիմնապէս քննելու և նորա ներգործութիւնը հասկանալու համար, պիտոյ է բոխիկներին նոյն ճանապարհով զնալ, որի վերայ այդպիսի մեծ յաջողութեանով ոտք էին կոխել Գիղիկայի և Քիմիականութեան մասին.

Ընդարեւ ոչ մի նիւթեղէն որպիսութիւն չը կայ, որ աւելի ծածկած ու մութն լինէր, թէ մարմնաւոր և թէ հոգեւոր աչքի համար, ինչպէս այն որպիսութիւնը որ նշանակուածներ բառովս էլ ~~պարտաւորութիւն~~ Ըսկեսալ Գիղիկայի գոյացութենից անցել է հազար տարի, մինչև մարդկեղէն իմացականութիւնը կարող էր միայն գուշակել այն ամենեին մեծ բնական զօրութիւնը որ մասնակից է անօրգանական բնութեան փոփոխութեններին, անեցական և շնչաւոր կենդանութեան բոլոր գործողութեններին. Ընփաստակելի հետաքննութեններով, անհամար զոժուարութենների տոկալով ու տեւելով, ճշդապէս ծանօթացած է բնատօսը այդ զօրութեան հետ և ծառայացուցել է զորան իւր կամքին. բնատօսը գիտէ այժմ, որ այդ բանը մի և նոյն ազբիւրից է լոխուժ, ինչպէս ջերմութիւնը, լոյսը և մագնիսական զօրութիւնը. Ելեքորական զօրութեան միջնորդութենով հպատակ է շինել իւրեան նորա բոլոր ազգակիցները, որ խեղճն հետևումն նորա զանազողական ձայնին. զորանով ցուցանուած նա կոյժակին իւր ճանապարհը, զորանով զուրս է հաւուժ նա աղնի մտալներ իւրեանց շնչին խառնուրդների միջից. զորանով միայն յաջողվեցաւ նորան երկրային մարմինների բաղադրական մասունքը ճանաչել ճշմարտապէս. զորա օգնութեանովը կարողանուած նաւեր շարժել և բազմապատկուած ճարտարութեան առարկայքը.

Մի զօրութիւն չէ կարելի տեսանել աչքով. մէք կարող չենք շոշափել նորան ձևքով. նորա էութիւնը և յատկութիւնը ճանաչելու համար, պիտոյ է մեզ ուսումնասիրել նորա յայտնութիւնը, նորա ներգործութիւնը, բայց հասարակ նկատողութիւնը բաւական չէ այս տեղ, ըստ որում սխալները դրած է միշտ երեսի վերայ, բայց ճշմարտութիւնը պիտոյ է քննել աւելի խոր տեղում. Եթէ մէք մի տեսիլ, մի իրողութիւն ծուռ ենք ըմբռնում, անուղիկ կապակցու-

մենք և մեկնումենք, սա սալում և սալանք գործել. բայց մեր ազատ
ենք մնում սալանքից, եթէ մեր ըմբռնողութիւնը, նկատած երևու-
թի մեկնութիւնը փորձումենք, եթէ զանազիւ ենք նորա ճշմարտու-
թիւնը սպասուցանել. Այն սրբանները որոնց մը նկատում և երև-
ւոյթը, սխտոյ է խուզարկութեան տակ ձգվին. եթէ ճանաչված էին,
սպա սխտոյ է փոփոխել այն սրբանները. այս փոփոխութեան աչ-
դեցութիւնը սխտոյ է նոր ի նորոյ նկատել և քննել. Այս ճանա-
սարհոյ, առաջին նկատողութիւնը կուղղագործի և աւելի կը սրբ-
ծատանայ հոգու առաջն. երևակայութեան կամքին չէ սխտոյ թո-
ղու ոչինչ բան: Ճշմարտ բնազններ մեկնում և բացայայտում և
բողոքութեաներով, երևութեաներով, և այս բաները յայտնի կացուցանել
որոնելով, նորա գործն է յատկապէս. նա իւր ապրիպային լեզու կը
սոյ խօսելու: Աչինչ տեսիլ, եթէ առնուս նորան լոկ և միայն, կա-
րող չէ բացայայտվիլ ինքը իւրանով. բայց այն բանը որ կապակից
է դորա հետ, լու նկատելով և կարգադրելով, առաջնորդում զեւ
ի վերահասութիւն: Այնոյ և հաստատ սխտոյ է ունենալ իւր աչքի
առաջն, որ ամենայն երևոյթ ունի իւր հիմքը, ամենայն ներգործու-
թիւն իւր պատճառը:

Այն կարծիքը, որպէս թէ բնութեան արարիչ զօրութիւնը կա-
րող էր խաւրացած սարբի տեսակներէց, փոսած բուսական նիւթե-
րից շատ բազմաբնակ բոյսեր, շնչաւորք ևս գոյացնել առանց սերմի.
տարածութեան անդատարկութիւնը (horror vacui), հաստակի կակը բու-
սականների (spirital rector), այն կարծիքը, որպէս թէ շնչաւոր մարմնի
մը գոյանում և երկամ և փոփոխուն, գորա յտառացած են միայն
հարցարնումութեան պակասութեանց, գորա բոլած են սղխտութեանց,
ծուլութեանց և անկարողութեանց որոնել ու գտանել սկիզբը կամ
թէ պատճառը: Եթէ հասարակ նկատողութիւն, կամ թէ հաղարա-
ւորներ, եթէ չէին կապակցած միմեանց հետ, չունին ոչինչ սպա-
ցուցական զօրութիւն: Եթէ ոչինչ իրաւունք չունինք երևակայութե-
նով պատճառներ հնարաստեղծել, եթէ քննութեան ճանապարհի վե-
րայ անյաջող լինելով չենք լինում վերահասու նոցա, և եթէ տե-
սանումենք որ ինքնագործան կենդանիքը ճանաչում են սերմերից, այնու-
հետեւ մնում մեզ գեռ ևս իմանալու, թէ ինչ ճանապարհներով նո-
քա տարածուցան:

Արևեսլ այն բոլակից, երբ որ մեր թոյլ ենք տալիս երևակայ-
ութեանը առաջնորդել մեզ, շնորհումենք նորան իշխանութիւն վրձ-
ակ մնացած խեղիները. այնուհետեւ վերջանում հետաքննութիւնը.
Ճշմարտութիւնը մնում անյայտ. այս էր ամենախորը փետուր. բայց
ամենամեծ փետուր այն է, որ երևակայութիւնը փոխանակ ճշմարտու-

Թեան կացուցանում մի խոստարանոց շարաբորջ վասմար գաղան, իմացիր դու մուրումնութիւնը, որ ընդդիմանում ճշմարտութեանը, պատերազմում նորա հետ և աշխատում ոչնչացնել նորան, երբ որ սա փորձում վերջապէս հանդէս դուրս գալ։ Այսպէս էր Արարայի մէջ Գալիլէի ժամանակուքը, և այսպէս է այժմ՝ ևս ամենայն տեղ, ամենայն գիտութեանների մէջ, ինչ տեղ կարծիքը համարումն ապացուցութիւն։ Եթէ մէք ճանաչելով մեր անկատարութիւնը, խոստովանումներ թէ մէք մեր այժմեան հնարներովը կարող չենք մի խնդիր, մի երևոյթ բացայայտել, այնուհետև մնում զա մի հարցուած, որի վերայ հազարաւոր մարդիկ մեղանից յետոյ ետանդուն և արիական հոգով կը փորձեն իրենանց ղյժը, և վերջումը պիտոյ է զա վաղ կամ յետոյ լուծուին ստանայ։ Ճշմարտութիւնը բացայայտելով խաղաղութիւն է բերում հոգուն. մուրումնութիւնը, որ ճշմարտութիւն էր համարվում, այնուհետև զաղարկցնում իւր գործականութիւնը, ինչպէս որ հանգստանումն նոյն ինքն ճշմարտութիւնը։ Արեւակոյտութիւնը հազարաւոր դիպուածների մէջ հազարաւոր մուրումնութիւններ է յատաջանում, և ոչինչ բան այնքան փեսասկար չէ գիտութեան յատաջանդիմութեանին, ոչինչ բան այնպէս խափանարար չէ ճանաչողութեանը, ինչպէս մի հին մուրումնութիւն. պատճառ, անչափ դժուար է մի սխալ վարդապետութիւն հերքել, ըստ որում զա արմատացած լինելով սրբաբնի մէջ, համարում սխալը ուղիղ։

Իսկայի բնազնութեանը արգարև անպատշաճ էր ծանօթագանել թէ կերպարորութեան, մարտողութեան և կրկանների գործողութիւնը ինչպէս էին կատարվում մարմնի գործարանի մէջ, մինչև որ յայտնի չէին սնուցիչ հնարները, որոնցից բխումն նորա, մինչև որ անտարակոյս հետաքննութեանների տակ չէին ձգած ձուի սպիտակուցը, պանրանիթը, արիւնը, լիզին, ուղեղի բաղադրութիւնը։ Այս բոլոր բաները էին միայն անուններ, որոնց այրուիները, շատ շատ, թէ գիտեինք. յառաջ քան թէ տեղեակ էինք յատկութեաններին և նոցա յարարութեաններին, յառաջ քան թէ յայտնի էին այն կերպարանափոխութիւնը որոնց ենթարկվումն նոքա մասուորվելով միմեանց, մի բառով, յառաջ քան թէ լիզու էին տուած այն բաներին, որ խոսեն, մի թէ կարելի էր յուսալ թէ նոքա ունեին ասելու մեղ մի բան։

Վնասական տեսիլների պատճառը մի զորութիւն է որ չափելի հեռաւորութեանով ներգործում չէ. գոցա աղղկցութիւնը չէ այլապէս զգայի, եթէ ոչ կերակրի կամ թէ արիւնի անմիջապէս հալարութեանով այն գործարանին, որ կարող էր ընդունել կամ թէ փոխախել նորանց, Ամենին նոյն կերպով երևում քիմիական զորութիւնը։

այն բնութեան մէջ չը կան ոչինչ պատճառներ որ ներգործէին շարժութիւն կամ փոփոխութիւնք, ոչինչ զորութիւնք որ աւելի մտակոյ էին միմեանց, քան թէ քիմիական զորութիւնք և կենսական զորութիւնք: Եւք գիտե՞ք, որ ամենայն տեղ պատահումն քիմիական ազդեցութիւնք, ինչ տեղ տահասարակ շոշափումն միմեանց զանազան մարմիններ. բայց ենթադրել, թէ բնութեան տառել ազդու զորութիւններից մինը մասնակից չէր այդ գործողութիւններին, որ լինումին կենդանի կազմածի մէջ, թէպէտ այս տեղ իսկապէս միտորժումին այն բոլոր պայմանները որոնց մէջ երևումէ նա ներգործական, այդպիսի ենթադրութիւն հակառակ կը լինէր բնափնութեան բոլոր կանոններին: Արեւն փոխանակ հիմնաւոր համարելու այն տեսութիւնք, որպէս թէ քիմիական զորութիւնների ներգործութիւնքը չքանումին մեր նկատողութեան տառչե, զորս հակառակ տեսանումներ, զոր սրինակ, որ թմուանիւթի քիմիական զորութիւնը ամենայն սեկունդ ժամի մէջ ներգործումէ իւր լիամասն ազդեցութիւնով: Եւյդպէս Երկանիւթը, Ելլամտոյնը, թմբութիւնը մըջիւնների և բղէղների մէջ, Օքսալեան թմբութիւնը, Բայդրիանի արմատի թուլուն իւղը, Սպիրեա Ալմարիայի ծաղկի իւղը, Գաութիւրիա Պրոկոմբենի ցնդողական իւղը են կենսական գործողութեան յառաջագոյտութիւնք, բայց ինչիւր է, արդեօք էին գոքս և կենսական զորութեան յառաջագոյտութիւնք:

Եւք կարող եւք քիմիական զորութեանով այս բոլոր բաղադրութիւնքը տեսանելի կացուցանել. օձերի և թուլունների ծրարքը գոյացնումէ քիմիականութիւնը այն բիւրեղանման նիւթը, որ գտնուումէ կոլի ալլամտոյեան հեղանուփի մէջ: Քիմիագործը այրած և ածխացրած արիւնից բաղկացնումէ միզանիւթ, սղոցածի փշուրներից շաքար, մըջիւնական թմբութիւն, օքսալեան թմբութիւն, ուսկնու կեղեկը շինումէ նա Սպիրեա Ալմարիայի ցնդողական իւղը, Գաութիւրիայի իւղը, զեանախնձորից Բայդրիանի արմատի ցնդողական իւղը:

Եւս փորձերը ահա բաւական էին, որ հաստատեն մեր յոյսը, թէ միանգամ կը յաջողէր մեզ հնարաւորել քիմիան և Մորիլին տեսնով բաղադրութիւնքը, որոնցից կազմած էին ձուի սպիտակուցը և մկնամի թելը իւրեանց բոլոր յատկութիւններով միասին: Աթէ մեր այն ներգործութիւնքը, որ պատկանումնէ քիմիական զորութեանը, կը զանազաններ այն ներգործութիւններից որ պատկանումնէ կենսական զորութեանը, ապա այնպիսի ճանապարհի վերայ էինք, որով կարող եւք վերահասու լինել կենսական զորութեան էութեան: Աչ մի ժամանակ չէ կարող քիմիականութիւնը մի աչք, մի մազ, մի տերեւ գոյացնել. բայց անտարակոյս գիտե՛ նա, թէ Բորուսեան թըթ-

փութիւնը (acidum borassicum) և դառը նշի իւղը դառը նշի մէջ, մանա-
նեկի իւղը և նիւթը մանանեկի մէջ, շարքը ծլած սերմի մէջ ոչ
մի այլ բան չէին, եթէ ոչ քիմիական վերլուծութեան հետեանը.
յայտնի է, որ մի անկենդան որթի փոր մի փոքր աղային թթւութե-
անով, որ ցանած էիր մտի և պինդ երած ձուի սպիտակուչի վերայ,
այնպէս է ներգործում ինչպէս կենդանի որթի ստամոքքը, ըստ որում
երկուքը լուծանելի են, այսինքն մարսում են: Այս բոլոր բաները
տալիս են մեզ իրաւունք եղբակացուցանելու, թէ մեր բնազնութեան
ճանապարհով այդժամուայէս վերահասու կը լինեինք այն կերպարա-
նափոխութեաննորին որոնց ենթարկում են կերակուրը կենդանի կազ-
մածի մէջ, և բժշկական գեղերի ներգործութեանը:

Ըստնց հիմնաւորապէս ուսումնասիրելու քիմիականութիւն և ջի-
զիկա, բնափոխութիւնը և բժշկականութիւնը ոչինչ լոյս չեն ստա-
նալու իւրեանց առաւել մեծակշիտ խնդիրներէ մէջ, որ էր քննել և
խմանալ կենդանութեան օրէնքները և փարատել ու հետաքննել ան-
կանոն որպիսութիւնը մարմնի կազմածի մէջ, ըստնց տեղեակ լինե-
լու քիմիական զօրութեաննորին, չէ կարելի վերահասու լինել կեն-
սական զօրութեան իսկութեաննորին. գիտնական բժիշկը այն մամանակը
միայն կարող է ձեռնառուութիւն յուսալ քիմիականութեանց, երբ որ
նա կարող էր առաջարկել քիմիականին կանոնադատուած հարցումներ:

Ս աստակասիրութիւնը տեղեակ լինելով քիմիականութեան, քա-
ղել է նորանից անչափ շատ արդիւնք և օգուտ. Հանքարանութիւնը
ուշագիր լինելով հանքերի բաղադրութեանը և նոցա բաղիւցական
մասնեկի յարաբերութեանը, զարձել է մի նոր գիտութիւն: Անկա-
րելի է յոռաշողիմութիւն յուսալ Արկարանութեան մէջ, եթէ այ-
սուհակ ալնպէս, ինչպէս Հանքարանութեան մէջ լինում է, հաշուի
մէջ չը մասնէին տեսակ տեսակ ապտամներէ որպիսութիւնը և բա-
ղադրութիւնը, քիմիականութիւնը է երկրագործութեան հիւրը. ա-
ռանց ծանօթ լինելու հողի բաղադրական մասնեկին, բուսականներէ
սնուցիչ հնարներին, չէ կարելի մտածել մի գիտնաւորապէս հիմնա-
ւորված երկրագործութեան վերայ:

Վաղարական մարդը, առանց գիտուն լինելու քիմիականութեան,
օտար և անծանօթ կը մնայ իսկական կեանքին տէրութեան մէջ, նո-
րա օրինապատուած կրթութեանը և կատարելագործութեանը. առանց
քիմիականութեան չէ կարող որանալ նորա աչքը, և ոչ կարող է
զարթնուլ նորա խմացականութիւնը այն բաների համար որ աշխար-
հին և մարդկային ընկերութեանը ճշմարտապէս օգտակար կամ ֆե-
սակար էին. ամենափերին և նիւթական շահաւետութիւնը, մարդու
և անասունի սնունդը բազմապատկել և աւելի օգտակար կերպով յա-

առջացնել, առողջութիւնը պահպանել և վերստին հաստատել. այս բոլոր բաները շատ մտա կապակից են բնական գիտութիւններէ և մա- նուանոյ ֆիզիականութեան յառաջադիմութեան հետ ժողովրդի մէջ. Առանց ծանօթ լինելու բնութեան օրէնքներին և բնութեան տեսի- լներին, մարդիկէն հանճարը անյաջող է գտանելու՝ այն փորձի մէջ որ փորձումեր, Արարչի բարութիւնը և անհասանելի խմաստութիւնը պատկերացնելու մտքով. պատճառ, այն ամենայն պատկերները որ ամենաճախ երեւակայութիւնը, ամենաբարձր իմացական կրթութիւնը կարող էին հնարասեղծել միայն, համեմատելով ստուգութեան հետ, երևումն որպէս մի խայտաճամուկ, անհաստատ, գաղտնի պղպղակ սապոնի:

Հաստատելով այնպիսի ուսումնարաններ, որոնց մէջ բնական գի- տութիւնները որպէս ուսանելի առարկայք նախապատիւ տեղ ունեն, գործով արդէն ապացուցանումն նոր ժամանակների հարկապիտոյքը. այդպիսի ուսումնարաններից յառաջանալու են աւելի զորաւոր մարդիկ, խելքով և հոգով զորաւոր, կարող և բնդունակ ամենայն բանի, որ ճշմարտապէս մեծ և պողարեր է, Պոպանով լծալու որութիւնների գոր- ծակատարութեան հնարները կը շատանան, նոցա ստացուածքը և զո- րութիւնը կ'աճեն, և երբ որ մարդը լինելեան լով իւր կեանքի տա- ռապանքից, կարող է առանց յաղթվելու գծուարութիւններով, հո- զալ իւր երկրաւոր պիտոյքը, այնուհետև նորա աչքը աւելի պարզ և պղծառ տեսութեամբ կարող է գտնուել դէպ ի առաւել վերինը և ամենավերինը:

Եւստաս Լիբիգի ֆիզիկան նախկինը, սպոժ
Հեղուկութիւնը մէջ 1833 թուականին. նախկ Ե.

3. Ընդհանուր կոնցրետիւնի և ֆիզիկական ինքնաբերական տեսիլ:

Ի՞նչպէս և այս ճառը, որ գնումներ այս տեղ կենդանական ա- բարջագործութեան վերայ, շատ համաստ է, այնու ամենայնիս բա- ւական է նա տալու մէջ մի բնդունողութիւն կենդանութեան սրան- շելի բազմօրինակութեան և կերպարանքների մասին, Ահանքը և նո- րա վայելքը է անտարակոյս այն խորհուրդը, որով այս բոլոր արա- բածքը, սկսեալ ամենափոքր, խոշորացուցով միայն տեսանելի, շն- շաւորից մինչև մարդս, պահպանումն իւրեանց գոյութիւնը, Ամեն- ների համար հոգարարձութիւն է արած, որ կարողանային լցուցանել իւրեանց պիտոյքը, պաշտպանել և փրկել իւրեանց անձր փտանջների մէջ, Եւր խորհրդով պատրաստած է այն մեծ բազմապնութիւնը բու- սական արարածների, ինչպէս երկրի վերայ, նշյնպէս ջրի մէջ, այդ

խորհրդով զարմեալ այն բազմօրինակ կազմութիւնը և բարբուխարքը շնչաւորների, որ ամենայն կարելի կերպով օգուտ քաղեն բուսական թագաւորութեան բերքերից: Բայց, նորա համար, որ ևս աւելի շատ տեսակ կենդանիք կարողանային տեղ գտանել մինը միւսի մաս, դոշա մի բաժնին սահմանած է կերակուր նոյն ինքն կենդանական թագաւորութիւնը, կամ լոկ և միայն, կամ թէ նոյնպէս բուսական կերակուրների հետ կից, Այս տեղ երևում է մի զարմանալու արժանի հասասարակչութիւն պահպանութեան և կործանութեան մէջ, մի անզազար, անվճակի պատերազմ զորաւորների և քաջների կողմից տկարների, խորամանկների և արագաշարժների հետ: Մասնաւոր անդամներ հաղարաւորներով մահ են գտանում բոլորի օգտի համար, բայց սեռքը պահպանվում են: Անքրը զուգաւորված են միմեանց հետ, ամեն մինը օգտակար է միւսին մշտապէս կամ անմիջապէս. եթէ կորնչէր մի սեռը, այն ժամանակը կը պակասէր մի օղջ արարածների շրջնայակապի մէջ: Բայց առանձին անդամներ պիտոյ է կորնչին, թէ վաղ, թէ յետոյ, թէ այսպէս և թէ այնպէս. այդ բանը կախ է այն ամենատեսու իմաստութեանից, որ ամեն մի ջոկ անդամի, այժ նոյն իսկ աննշան որդի ճակատագիրը պէտք է գիտենայ և կոտավարէ, եթէ պիտոյ է որ պահպանվէին սեռքը:

Այս խորհրդով ամենայն անասունի մէջ անկած է մի անյայթելի հեշտութիւն: Եւ ամեն միմեան տուած են հարկաւոր շարքերը պաշտպանելու և փրկելու իւր անձը: Անասունին չէ թողլուած անփոյթ լինել իւր կենդանութեան համար. ցարք որ պիտոյ է զգար նա կործանութեան միջոցին, հարկադրում է նորան փախչել իւր կորուստի պատճառներից: Նոյնպէս սրատես հսկողներ նորա կեանքի վերոյ էին շէջ և շարժում որ զբոլոր ամասունը որոնել իւր կեանքի պահպանութեան կարեւոր սնունդը: Բայց նորա համար, որ անասունը այս բանի մէջ չը լինէին միմեանց միասակար, և շատերը կարողանային ապահովապէս ապրել միմեանց մտակալչքում, այս պատճառով ամեն միմեան սահմանած է իւր յատուկ սնունդը: Շատերը սնանում են միայն բուսական կերակրով, և այդպէս ձեռնտու են պահպանելու իւր անձը: Այլ մի մասը որ միւսերից աւելի բնասուրված են աճել և բազմանալ, կարող էին հեշտ արտադրել միւս բուսականները, որ սահմանած են որոշեալ անասունների անդեղան համար, և այդպէս խախտել ուղիղ կշիռը բնութեան երկու թագաւորութեանների մէջ: Արք որ մի տեսակ բուսական լստագանց բազմանում է, ապա երևում է մի տեսակ կենդանի որ փոքրացնում է նորա զեղի աճեցողութիւնը: Չոր օրինակ, եթէ մեր գառների խտր սկսանում է միւս հարկաւոր բանջարները արտադրել, այնուհետ

տև գալիս են բազմաթիւ թրթուրներ և ապականուսներ գեղեցիկ մար-
գապետները թէև ցաւեցնելով մեզ . բայց երբ որ այս թրթուրքը
կատարել էին իւրեանց պաշտօնը, ապա յարձակուամեն նոցա վերայ
մի մեծ բազում թիւն ապուսների և կաշաղակների, այնպէս բնաջինջ
առնելով նորանց, որ գալոց տարուժը երևումէին շատ սակաւ քմայն .
Խոտի կորուստը փոխարինւում անչափ, բազմօրինակ ծագելներով որ
միւս ամառան մէջ ծածկուամեն դաշտի երեսը . Պոյնպէս և մայր ու և-
ղին ծառերը որ բերումէին շատ սերմեր, պիտոյ և բազմանային շա-
փապանց, եթէ մի փոքրիկ ուսի՞ չը դնէր մայրի ու ևղինի խողակ-
ների մէջ իւր ձուերը որանչոց յետոյ դուրս է սողում մի ձճի և ա-
ւերում և սերմնահասակը: Գարձեալ, մի գուցէ որ այս ուսի՞ չը շատ
ապականութիւն գործէ, մի սորամուս պիծակ գնում իւր ձուերը այն
ձճիւն գիմակի մէջ, որ պիտոյ և կերակուր լինէր միւսին, Ը, յս սո-
րամուս պիծակի գիմակի վերայ գնում մի այլ, Հալլու թէ տեսանե-
լի միջտա իւր ձուերը, նոյն խորհրդով, ինչպէս միւսերը, Ը, յսպէս
առհասարակ մինը վերատեսուչ է միւսի վերայ, որ նորա չափից դուրս
չը բազմանային և փնասէին միւսերին:

Սակեր անասուները շեն մասնում ամենայն մեղէն կերակրի,
ինչպէս որ բուսակերքը ոչ ամենայն բուսականի: Շուեր որում և
ուսում նապաստակ, բայց ոչ մուկն և աւելի տկար անասուններ, և
ոչ բազեր կամ ագռաւներ: Մի Հաւ ուսում այդ ձճիներ կամ մի-
ջտաներ, բայց ոչ մի թռչուն: Արուրը, ագռաւը և գայլը ուսում են
միւսին մի մեռեալ մարմին, ստանց թ շամարար Հանդիպելու միմեանց:
Բայց ձկները ագրում են ոչ թէ միայն ըստ մեծի մասին միւս ձկնե-
րից, այլ, ինչպէս երևում և, անխտիր ուսում են ամենայն ջրեղեն բնա-
կիչ, որ կարող էին ձուր ձգել, այնպէս որ սոցա մէջ մի յափշտա-
կող ձուկն շատ անգամ ուսում իւր յատուկ տեսակի աւելի փոք-
րիկները: այս բանը ցամաքային անասունների մէջ սակաւ է պատա-
հում, և ամենամեծ կարտու թեան մէջ միայն: Չկների բազմածնու-
թիւնը անփնասակար և կաջուցանում այս կարգադրութիւնը . յաւե-
րացրու սորա վերայ և այն բանը, որ հաշմովածքը կարող են ջրի մէջ
աւելի հեշտ փախել քան թէ կարելի էր այդ, ցամաքի վերայ, և
աւելի տկար ձկները առհասարակ էին նոյնպէս և աւելի արագաշարժ
և յաջողակ իւրեանց դարձուածների մէջ: Սորա հակառակ թռչունե-
ների մէջ կան շատ փոքր սեռեր, որ անանումէին միւս թռչուններից,
ապա թէ ոչ, այդ կենդանիքը չէին կարող հաստատ մնալ իւրեանց
կարգի մէջ: Շատ թռչուններ պաշտօնակատար են փոքրացնելով ա-
ւելորդ միջտաները, որ սորա չը փնասէին բուսականներին . այս բա-
նի համար սահմանած են նոյն իսկ միջտաների քանի մի տեսակները:

Այն կարգը, որ շատ միջատներ բնաւորված էին սնանիչ յատկաշեւալ բուսականներով, թողլ չէ տալիս, որ նորա խափան լինէին միմեանց, որ նոցա սաստիկ բազմանալուցը ֆեաս կրէ բուսական թագաւորութիւնը: Պատճառ, եղանակը և այլ պարագայը որ ձեռնառու էին մի քանի տեսակների, խափանումն զարձեւալ միս տեսակների բազմանալը:

Կերակրասիրութիւնը չափի և սահմանի տակ է. զորանից զուրս գալ չէր կարող անասունը առանց ֆեաս կրելու: Հոտառութիւնը և ճաշակը առաջնորդումն նորան, որ նա հրաժարփի ֆեասակար կերակուրներից, և սակաւ կը պատահի, որ մի կով կամ ձի, որ բոլոր ձմեռը փակած էին եղած օխտի մէջ, զարնան ժամանակին անզգուշութեամբ յարձակվելով զալար խոտի վերայ, ուտէին մի թունաւոր բանջար: Եթէ անասունը յագեցած էր պատշաճապէս, ապա չէ խնդրում աւելի ևս. պատճառ, բնութեան ճոխութիւնը չէր բուսականմանալու, և թէ բոլոր անասունները կամենային այնպէս վեղխանալ ինչպէս մարդը, որ և չէր ունենալու այդ համարձակութիւնը, եթէ զորանով չը լինէր նա հնար յատաջացնելու. շատ բուսականներ և անասունք, Փոքր և մի քանի գազանք միայն, զոր օրինակ վագրը և կզմաքիսը խեղդումն աւելի, քան թէ կարող էին ուտել, բնական սահմանից զուրս գալով, ծնանում անմարտողութիւն և զորանից զշոյնումն հիւանդութիւնք. այդ պատճառը կրումն սովորաբար մարդիկ միայն: Փարգու զգայական ցանկութիւնների զարտուղութիւնը այս և այլ բաների մէջ անհրաժարելի են, որովհետեւ նորա մէջ պիտոյ է մի ազնիւ ընդունակութիւն, բանականութիւնը, աճէր ու զօրանար ուսումով, փորձով և մտածութեամբ. որ անկարելի է մի կոյր զրգաղութեան մէջ:

Վառտ լինելու համար կերակրի կարօտութենից, որ ցուրտ եղանակը սովոր է պատճառել ինչ ինչ աշխարհներում, քանի մի տեսակ անասուններ, մանաւանդ թռչուններ տեղափոխումն զեպ ի աւելի ջերմ աշխարհներ. բայց ոմանք այս միջոցը, որ անարդիւն էր նոցա կեանքի անտեսութեան համար, անցուցանումն մի այնպիսի թմրութեան մէջ, որի մէջ այժ և ջերմարիւն անասունքը հազիւ թէ պահանջումն մի զգալի աստիճան տարութեան:

Սխի պահպանութեան խորհուրդը լցուցանում արդ ինչպէս ինչպէս որով ծնող անասունքը հոգաբարձու են ինչպէս ինչպէս ինչպէս: Միջատները, ջրադամարայիները և ձկները այս գործի մէջ չունենին այլ պաշտօն, եթէ ոչ իր բնանց ձուերը այնպիսի տեղերում դնել, որ նորա ապահով էին, ուր և զուրս հասած ձագերը հեշտ գտանումն անունը: Թռչունքը և կաթնակեր անասունքը պարտական են աւելի մտ կերպով յաջողութիւն տալ բնութեան զիտաւորութեանը: Մեղ յայտնի է, թէ ինչպէս գործունեայ և անձանձիր կեր-

պով Տոգասար են թռչուններ իւրեանց ձագերի երջանկութեան հասար. նոյն գութը անկած է կաթնակեր անասունների մէջ. նորա ստիւգութ կերակրումն իւրեանց ձագերը, լիցումն նորանց և զորանով բժշկումն նոյա վերքը, ամուսնն նորանց մի տեղից գեղ ի միս տեղ, պահումն նորանց իւրեանց մտա միասին, առաջնորդումն և պաշտպանումն նորանց: Մայր գայլը և վայրենի խողը ահարիտ են, երբ որ պաշտպանումն իւրեանց ձագերը, Աշինչ բան չէ այնքան զարհուրելի որպէս մի մտակ առիծ, որից յափշտակել էին նորա կորիւնքը. կգ շունը և վահկառ եղնը զուրա են գալիս իւրեանց որջից և յանձնառու են շների հալածանքին, միայն թէ հեռացնելն այգ գազանքը այն տեղից, ուր գտանումն իւրեանց մանուկները, Մտակեր տեսակները շատ աշխատասեր են յափշտակելով իւրեանց ձագերի համար և շատ հոգասար, գաստարակելու նորանց իւրեանց ապագայ բարբուջարքի համար:

Մանասունների բնածնութիւնը խմաստուն խորհուրդներով չափած ու կշռած է: Նորա, որ պիտոյ է կերակուր լինելին միսերի համար, բաղմանումն շատ սաստիկ, բայց յափշտակող գազանքը սակաւածին են, Բեղմնաորութիւնը առհասարակ նուազ է այնքան, ինչքան որ խոշոր է անասունը, որովհետեւ աւելի խոշոր անասունները, Եթէ լինելին բաղմանին, պիտոյ է խլելին կերակուրը միսերից. սորա հակասակ, այն անասունքը, որոնց պահպանութիւնը փոքր արժէք բնութեանը, սաստիկ բաղմանումն միս անասունների և մարդերի օգտի համար:

Սիւննունի սնունդը փոքր սնունդի օգուտ, ոչ թէ միայն, ինչպէս ահա սկզբումը սաստիկ, օգտակար է այն պատճառով, որ շատ նոր տեսակներ, բայց ի բուսակերներից, գոյանումն կենդանական աշխարհի մէջ, այլև բոլորի օգտի համար հարկուոր ու շահաւետ էր. Եթէ չը լինելին այնպիսի տեսակներ որ սնանկին միսերովը, այնուհետեւ պիտոյ է մնաս կրէր բուսական թագաւորութիւնը և շատով ծնաներ կերակրի պակասութիւն այն անասունների համար, որոնց յատկացել սնունդը են բուսականք: Ինչպէս պիտոյ է լինել մեր մարգագետինների զբուծիւնը, Եթէ այն խոտուեր թրթուրների բաղմութիւնը բնազնից չը լինէր միս անասունների զործակցութեանով և ինչպէս կը ճարտովէին մեր սպասերն ծառերը, Եթէ զիմակները այն ուտիճի, որ իւր ձուերը գնումն եղևնի խողակների մէջ, շաւերջիլն սորամուտ պիծակների զիմակներից, Նորա որ սնանումն մտակ մարմիններով, լինումն անչափ շատ օգտակար, ուտելով և սպասելով ամենայն փոսած, նեխած և անախորժ բան, Խախանելով օգի ապականութիւնը և զորանով մեծակշիւտ արդիւնք բերելով առողջու-

Թեանք: Նորա մի մասնով ոչնչացնումեն և կենդանի արարածք, շատ անգամ այնպիսիներ, որոնց աւելորդութիւնը կը լինէր մեզ և միւսերին փեսասկար, երբեմն և այնպիսիներ, որ կը ջանկանայինք մեք պահպանել մեր կերակրատան համար: Բայց վերջին բանի մասին չը կայ մեզ համարձակութիւն զանդատելու, որովհետեւ չունինք մի առանձին իրաւունք այն անասունների վերայ որ ծառայումէին մեր փորին:

Շատ տեսակ անասուններ այնքան մեծապէս բեղմնաւոր են, որ նոցա բազմածնութիւնը ջրհեղեղի պէս պատահելով խուսիկերը ծածկումէ ջրամաքը, այլև նորա պիտոյ է արտաբսէին միւսերը կամ ինքեանք խափանարար լինելին միմեանց, եթէ կեանքի աւելորդութիւնը չը չափաւորվէր կործանող տեսակներով: Այն չը կայ ոչ մի տեսակ անասուն, որ, եթէ նորա մեծապէս բազմանալուն չը զնէիր չափ և սահման, չը բազմանար այնպէս սաստիկ, որ լինելու էր փեսասրեր բոլորին: Կամ թէ հարկաւոր էր սահմանափակել բեղմնաւորութիւնը և թողլ տալ, որ գոյանային սակաւթիւ արարածք: Այնուհետեւ պիտոյ է լրջվէր աշխարհը հնացած, անզոր արարածներով, Բայց ներկայ կարգումս մի տեսակը վերատեսուչ է միւս տեսակի վերայ, և մարդը որ այս մտքով արգարե անասունների տէրն էր, վերատեսուչ է ամենների վերայ: Յե՛ծ և ու՛ժեղ զազանները որ երկիւղ չունին մի այլ միւսից, պարտական են հնազանդել նորան և նորա ձեռքով պահպանելու են իւրեանց պատշաճաւոր սահմանի մէջ: Մարդու ահից փախչումեն նորա անտանների և անապատների մէջ, որ մարդս պիտոյ է թողու նոցա, որովհետեւ նորա պիտոյ է նորա հետ միասին ապրեն երկրի վերայ: Բայց անասունքը արտաբսվելու էին յիրաւի և այն պատսպարաններից, եթէ մարդկային ազգը ամենայն տեսակ կործանական պատճառներով չը խափանվէր չափազանց բազմանալուց: Թեպէտ և մեք ինքներս չը կարճէինք մեր կեանքը անչափաւորութենով, թէպէտե արիւժոտ պատերազմեր չը սպառէին մեր կենդանութիւնը, այնու ամենայնիս գոյց է թէ անթիւ բազմութիւն փորրիկ, անտեսանելի շնչաւորների, այն վարակիչ ցաւերովք որ պատճառումեն նորա, պիտոյ է չափ և սահման զնեն մարդկային ազգի այլանդակապէս բազմանալուն:

Արբեմն բաւական չէին և կործանական տեսակները անասունների խափան գործել այս կամ այն տեսակի տարապայտան բազմանալուն. այս տեղ պիտոյ է գործակից լինին ցուրտը, անխորժ եղանակ և հողմեր, միւսանգամ իւր սահմանի մէջ պահելով կենդանութեան հեղեղը:

Կարելի է թէ այս բաները պատճառ տային մտածելու, որպէս թէ մի անասուն մահ գտանելով միւսի ձեռքով, էրբեք անգիտելով

Ընդհանուր հարց անասունների համար չը կայ այն բանը որ մահը զարհուրելի էր հացուցանում մեզ, այսինքն նորա յառաջանալով թիւնը, Կահը սոյնորարար մի արկած է, որ անակնկալ պատահում է նոցա, և յախշատկում նոցանից գիտութիւն ու կեանք համարեալ թէ մի բոցէի մէջ, Թմրութիւն և ուշարարձութիւն որ պատճառում է զարհուրանքը, փորբայնումն երկարաւն պատերազմի ցարքը, Ընասունքը շնն այնքան հարազատ, որ սանջէին միմանց այնպէս, ինչպէս սունում է մարգա. բայց եթէ բոլոր անասունքը պիտոյ է մեռանէին ծերութենից, տկարութենից և սոսից, սա կը լինէր արդարեւ մի անգութ պատահար, Եթէ կամենայինք կշռել միմանց հետ հեշտութիւնը և ցար պիտման կարգադրութեան մէջ, ապա կը լինէին նոքա հասարար միմանց, Սպանող անասունք վայելում է այնքան քաղցրութիւն, ինչքան ցար զգում է սպանելի անասունը, Ըյս հաշտարարութեան մէջ պիտոյ է դուրս հանել մարդու կեանքը, Ըյն շարակը որ նա կրում կամ հասուցանում էր ընկերին, կարոտ են մի այլ քննողութեան և այլ պատաստանի առաջև:

Կենդանական թագաւորութեան պիտման կարգադրութեան հետ ճշդապէս յարակից է որդանէնք ինչ և ինչպէս որդանէնք, Գորանով ոչ թէ միայն ծնանումն աւելի շատ տեսակներ, այլև շատ, առանձին անդամներ աւելի ազգու կերպով մասնակից են կեանքի և ուրախութեան պարզեալարութենին: Կորմանական պատճառները պահանջումն աւելի մեծապէս և աւելի արագ բազմապատկութիւն, ապա ուրեմն այն միջոցը որին կարոտ է անասունը, որ կարողանար ծնուցանել իւր նմանը, պիտոյ է փութացնոյթի, ինչքան որ թշու էր տալիս անասունի բնութիւնը, բայց գորանով կարճանում է նոյնպէս և կեանքի տեղութիւնը, որովհետեւ մի որդանական մարմին, երբ որ հասած է իւր ամենամեծ կատարելութեանը և զորութեանը, իւր փոզովակեայ կողմածի պատճառով պիտոյ է այնուհետեւ սկսանէ նուազիլ և անպիտանանալ, Գորանից յառաջանում է այս բանը, որ շննշարունների սեռը աւելի յաճախ նորոգվումն, որ զուարթութիւն, գորմականութիւն և զկենցիկութիւն և սա աւելի թագաւորումն երկրի վերայ, որ ուրախութենների վայելքը առաւելանում է, որ այնքան և սա աւել արարածք ուրախանումն իւրեանց կեանքի վերայ և երկրի բարութիւնը աւելի արդիւնաւոր են լինում:

Ով կարող է այս տեղ չը խոստովանել ցուցակութիւնը այն ամենիմաստ բարութեան, որ սահմանադրել է մի ընդհանուր վէճ արարածների մէջ, ընդհանուր ոգտի համար: Կայն նախահմանութիւնը, որ կատարում է այս վէճը, այն պատերազմող տարերքը որ անդադար աշխատումն կործանութիւն պատճառել երկրին և նորա բնա-

կիներին, պահպանու մէջ հասարակ շուքի մէջ և կարող էր նոյնպէս հրաշալի օգուտներ յառաջանել այն պատերազմից որ ունենին միմեանց հետ բարոյապէս բարին և շարք:

4. Թէ Բնութի է Ընտրութիւնը Բնականութեան:

Թէ Բնական պատրաստութեամբ սննդական նիւթը բուսականներին մէջ և միտոքոնոմ նոյա հետ, որ նորա գործնով ածելին, զանազան փոփոխութենէն մէջ սննդական լինելին և մի պողպրեր սերմն ծնուցանելին, դա մի այնպիսի խնդիր է, որ այն շատ գրգռու մարդու հարցասիրութիւնը, բայց կրկէք չէ կարող լիովին լուծանալի, բուսականներին ածելութիւնը մի գաղանձածուկ գործ է, որից մէք մի փոքր բան այս տեղ և այն տեղ նկատուանք պաշտափայլ լուսով, մի ներգործութիւն որի պատճառքը և որպիսութիւնը կարող ենք ընդհանրապէս միայն հասկանալի կազուցանել մեր համար, բայց չունինք հնարասիրութիւն մանրամասնարար սահմանել և յատկանշել նորանց:

Բուսականներին Բնականութեան Եւ ինչպէս են կէս մի Եւ ինչպէս են կէս մի Եւ ինչպէս կամ պարզք, որոնց առաջինքը զանազան շախով ու կշտով զուգարգումն են, Նորանց ասումն և անշնչութիւն, որովհետեւ նորա բուսականներին մէջ պատրաստ են ածելին, և զանազան մեքնական կամ քիմիական ճանաչարհով անմիջապէս ստացվումն բուսական նիւթերից, զոր որինակ կարտակելով, արորելով կամ մգելով, այլև գործ գնելով ջուր, գինեղէն ոգի, իւղի տեսակներ, և մեղմ ջերմութիւն. այս հնարներովը ոչ թէ փոփոխումն բուսական նիւթերի բաղկացուցիլ են կերպը, այլ անհասարակերպը նոյա խառնուածի մէջ որոշվումն միայն, Այդպիսի անմիջապէս բաղկացական մասունքը են հիւթը թէ ընդհանուրը և թէ առանձինը, ախշիկը, շաքարանիւթը, ալիւրանիւթը, բուսական թմբուցութիւնքը, իւղը, խեժը, սեւիներ և այլն, Պարզ բաղկացական մասունքը կամ թէ արմատական մասունքը ածելայն բուսականներին մէջ են թմբուցութիւն (զբսիփեն), ջրանիւթ (հիւղրոգեն), ածխանիւթ (քարրան), որոնցից վերջինը, ինչպէս երևումն, կազուցանումն առաւել մեծ մասը, Պատճառ, բուսական մարմիններին բոլոր քիմիական վերլուծութիւնքը ապիւս են վերջումը ջուր և ածխային թմբուցութիւն, որոնցից առաջինը բաղկացանումն երկու նախապէս յիշած արմատական նիւթերից, և երկրորդը ածխանիւթից և թմբուցութիւնից, Յոյա վերայ յաւելանումն յաճախ և խեղդողական նիւթ (Ազոտ), կրակից անեղծանելի Ալյութին, որի մի տեսակը (պատաշը) զտանելումն այրած բուսականներին մեքրի մէջ, երբեմն այս կամ այն հասարակ հողը, փոսփորոն, ծծումք, երկաթ, Նախ և յառաջ խնդիր է, թէ Բնական այն արմատական մասունքը,

որ ամենայն բուսական խր գործարանների մէջ և խր յատուկ կերպով մշակումէ, մտանումն նորա մէջ:

Հողը որի մէջ կան բուսականքը, անմիջապէս գործակից չէ նոցա աննպարարութեանը: Հողային բաղադրական մասունքը, որ գտած են բուսականների մէջ, երբեմն պայտէս, երբեմն պնդակ են, և դիպուածով միայն ներս էին մտել բուսականների մէջ: Հողի յատակի պաշտներ այն է միայն, որ բուսականներին սոյ մի հաստատ կոչարան, և խր մէջ պարունակեալ աննպարար մասունքը խոնաութեանների հետ միասին հասուցանէ նոցա: Փորձով խնայած են, որ ամանների մէջ սնուցած բուսականները ստանումն բուսական շատ կշիւ, բայց պայտի չէ թէ ամանի մէջի հողը թէթեւացել էր: Յիշատիկ բուսականները, ինչպէս յայտնի է, պնդակ ևս լաւ աճումն ու ծաղկումն ջրի մէջ, ինչպէս հողի մէջ: Մի բնական ջրի մէջ ութ տարի սնուցել է այն և մի փոքրիկ կաղնի: Բմանք բուսականք աճումն ազատած քարերի, պարիսպների և այլ տեղերի վերայ, ուր չը կար համարեալ թէ ոչինչ հող, այն խոնաութեանով միայն, որ միւս այլ հարկաւոր չիւթերի հետ միասին ներս են ձգուած ուղիցը:

Մանրական հիւթը, որ արմատքը ներս են ձգուած հողիցը, արդարեւ ամենայն բուսականների մէջ միատեսակ են կամ գոնեայ փոքր ինչ զանազան: Այս բանը տեսանումէ պատուաստած ծառերիցը: Մի նարնջենու ճիւղ պատուաստած մի կիտրոնի ծառի վերայ, աճումէ այդ տեղ ամեննեկն լաւ և անփոփոխ պահպանումէ խր յատուկութիւնը որպէս նարնջենի, առանց և փոքր ինչ բան ընդունելու կիտրոնի ծառի յատուկութեանից: Մշտականաչ կաղնին, պատկիւնած մի այլ ծառի վերայ, ձմեռան միջոցին ևս չէ կորուսանում խր տեղերները, և ոչ խիւթ թողումէ, որ նորա ջամբերին: մի քանի փոքրերից երևումէ նոյն բանը, եթէ նկատելիր եղևնափայտը Ախրանանու, որ պատուաստած էր լարիք ծառի վերայ: Բրեմն հիւթերը հասանումն պատուաստած բուսականին, պատկիւնեալ բունի միջովը, գրեթէ նոյնպիսի որպիսութեանով, ինչպէս անմիջապէս հողիցը. ապա թէ ոչ. չէր կարող աճել պատուաստեալ ճիւղը. բայց անօթների զանազան կաղնութիւնը պատճառումէ, որ մի և նոյն հիւթը զանազան կերպով պատրաստումէ և գործակից յատաճանումն զանազան տեղերներ, փայտանիւթ, պտուղներ և սերմեր: Այս բանը տեսանումն էր և առանձնապէս այն բուսականների վերայ որ կարելի էր սնուցանել ջրի մէջ: Մի և նոյն հողից ստանումէ խր սնուցող և թուճաւոր և օքտակար բուսականք: Այն տեսանումն էր, որ զանազան հողի վերայ մի բուսական տեղի առաւ աճումէ քան թէ միւսը. բայց սորա պատճառը է բուսականների զանազան կաղնութիւնը: Մի հիւթակից տունկ կարտ և արդարեւ խոնա-

ու թեամբ առաա հոդի . մի ծառ որ պիտոյ է ստանար թանձր փայտ , պիտոյ է ունենար աւելի նիհար հող , որ փայտեղէն թեւըը աճէին ծանրապէս և խիտ միաւորվէին միմեանց հետ : Այն ծառերի մէջ , որ խտալից էին , ծանրաշարժ է հիւթի մանաւորութիւնը , ուրեմն և պիտոյ է նորա աճէին աւելի նիհար հողի վերայ , որ լինէին պինդ և ամուր : Այնպիսի տունկեր , որոնց մէջ մի քանի հիւթեր պիտոյ է առաւելապէս զարգանային , կարոտ են այնպիսի գետնի ուր նորա այսպիսի հիւթերի բաղադրական մասունքը գտանոււմն առաա չափով , կամ թէ այնպիսի աշխարհի , ուր ողը հարուստ է նոջանով , զոր օրինակ այն բուսականքը որ պարունակոււմն խրեանց մէջ հանքական ալքալի : Այսպէս ևս ոմանք բուսականք , որ խրեանց սննդական հիւթի համար մի տեսակ բաղադրական մասն պահանջոււմն աւելի յաճախ քան թէ միւսերը , կարող են սպասել հողի զորութիւնը , թէպէտ այդ հողը գետ ևս բաւական պողարեր էր այլ տեսակ բուսականներէ համար , որ այն բաղադրական մասին աւելի սակաւ կարոտ էին : Յորանց օգտակար էր փոխանակել նոջա հետ , և թէ ևս որ խրեանց արտաշնչութիւններով հողի վերայ և հողի տակ տալիս են գետնին այն սննդական նիւթերը , որոնց կարոտ էին նորա : Յորանով և վայրիջուածներով օգիշը , այլև տաւար արածեցնելով հողի վերայ , օգտակար է լինում ջորենի դաշտերի անդորժ մնալը , որովհետև ջորեանք կարոտ է առաա սննդական նիւթի , իւր բազմաթիւ ալիւրալից հատիկների համար : Բայց մի կաղնի որ հարիւրաւոր տարիներով ստանում է իւր սնունդը մի և նոյն հողայատակից , այնու ամենայնիւ գտանում նորա մէջ գետ ևս առաա սննդարարութիւն :

Արհու աղբիւրներ սննդական նիւթերի ունին բուսականքը . դոջանից մինը է հողայատակի մէջ գտանված ջուրը և վերայիշեալ արմատական նիւթերից բաղադրած գոյացութիւնքը , որ խոնտութեամբ , ջերմութեամբ և փոխարեքական աղեղութեաններով ստանոււմն այն որպիսութիւնը , որ կարող էին ներսիս ծծովել արմատների մէջ . մի այլ և , ինչ ինչ գիպուածներում , աւելի ճոխ սննդարուղե աղբիւր է օղը :

Անութիւնը , զօսացած բուսականներից և մտեալ անասունների սպականեալ մնացածից հասուցանում նիւթեր , նոր աճեցականների գոյանալու և սնանելու համար : Այնպիսի աշխարհներում ուր հարիւրաւոր տարիներ եղած են թանձրախիտ անտառներ , ինչպէս հիւսիսային Քմերիկայի մէջ , այնքան առաա ու սննդարար է բուսական հողը , որ սերմանելի դաշտերի հողը ազնուացնելու համար , պիտոյ է յառաջուց անկել նոջա վերայ այնպիսի բուսականք , որ կարող ու կարոտ էին ճոխապէս աճելու , զոր օրինակ թամբարտի բոյսը , նիհար հողի վերայ , շատ բոյսեր յառաջացնելու համար աւելի փոքր

տարածութեան մէջ, արուեստը ձեռնտու է լինում պարարտացուցիչ հնարներով, զոր օրինակ աղբով, թրխրով, զաջով և փոշիացուցած ուկրներով։ Երմասի մանրաթելերի միջով, գուցէ թէ և արմատների վերին մարթիկներովը մտանում լուսականի մէջ մի զարթուցիչ հրապոյց, որ ջերմութեան կամ արևու զօրութենովը հնարաւորութեամբ կամ թէ յաջողութիւն էր ստանում, ներս ծծող անթմները ընդունելով իւրեանց մէջ պիտանի հիւթը և հրատարակելով անպիտանելը։ Այս գիջութիւնը լուսականի մէջ ընդարձակում նորա փողովակները և երկայնացնում նորան, Ծառերի մէջ փայտի թելերն էին, որ ընդունումէն այս զեռ ևս շմարքած ընդհանուր անդական հիւթը։ Մի քանի տունկերի մէջ, զոր օրինակ խաղողենու, Ացերինայի և Քետուլայի մէջ, շատ յաճախ գտանվում էր զա գարնան միջոցին, երբ որ օդի առաջին ջերմութիւնը սկսանում շարժելն թանձրացեալ հիւթը նոցա մէջ։ Անդարար ջուրը դուրս է թափվում ծայրակտուր ճիւղերից կամ ծակած բուներից շատ առատութեամբ, և այնքան աւելի առատ, ինչքան որ վերքը խորամուխ էր ծառի մէջ։ Եթէ կրտրէի միայն ծառի կեղևը առանց մետակու նորա փայտին, ապա փոքր կամ ամենին ոչինչ ջուր չէր թափվելու զեպ ի դուրս։

Ինչ առաջին ներս ծծած հիւթը բարձրանում միայն ծառի փայտեղէն թելերի միջովը, զորան վերահասու են եղած բնաշինքը, պարզապէս ներս բերելով հեղանիւթը լուսականների մէջ, այսինքն լուսականներ արմատով միտան, կամ թէ ծառերի ճիւղեր զնելով ներկած ջրի մէջ։ Լուսականի փայտեղէն մասը ստացել է գոյն, բայց ուղեղը և կեղևը մնացած էին անփոփոխ։ Ներկը երևում երբեմն զեպ ի կեղևը աւելի թանձր, և երբեմն զեպ ի ուղեղը, այլ և ցուցանում քանի մի անգամ, որ հիւթը կարող է զեպ ի վեր ելանել փայտի և կեղևի միջոցովը։

Ոմանք հանգամանքների մէջ կարող են արմատները իւրեանց ստատկապէս մտա ծծած անդական ջուրը զեպ ի վեր մղել մեծ զօրութենով։ Հալեւը, որ աւելի հին բնաշինքների մէջ շատ արդիւնաբեր է գտանվել անկականների բնափօտութեան մտան, մի մանուկ խաղողենու կարած ծայրի վերայ դրեց մի փողովակ 25 սանաչափ երկայնութենով, որ կաղմած էր 3 ապակեղէն կոտորներից կապակցած միմանց հետ։ Տրեղէն հիւթը բարձրացաւ փողովակի մէջ մինչև 21 սանաչափ բարձրութիւն և կը բարձրանար աւելի ևս, եթէ ստորին կապակցական մասը կարողանար տանել փողովակի մէջ եղած ջրի ճրնչողութեանը։ Այս զօրաւոր մղողական կարողութիւնը ջրեղէն հիւթի երևեցաւ միայն գարնան միջոցին, սորա հակառակ Յունիսին, արմատը ցած քարշեց ջուրը փողովակի միջից, որ մի խաղողի ծայրակտուր գաւաղանի վերայ դրած էր։

Իսկական շարժարանը որով զեւոյ ի վեր էր ելանում ջրեղէն Տիւթը, էին Տէշէշէշը: Սոցանով բուսականը արտաշնչումը ջերեկով իւր Տիւթի մի մասը, և սորանով պահպանումը մի անդադար շարժողութիւն զեւոյ ի տերեւները, որին ձեռնառու է ջերմութիւնը ընդարձակելով օդը և Տիւթը բուսականի մէջ, որովհետև նոյն միջոցումը անտարանումը զիջութիւնը և մղումը զեւոյ ի շրջակայ տարածուն նըրբաթեւը արմատի:

Տերեւները չէ պիտոյ համարել տունկերի լոկ դարդարանք, կամ թէ մի պատրաստութիւն, հոգանի տալու մէջ, կամ թէ անդական հնարք ունաց անասունների և մեր համար յատկապէս, այլ նորա, էթէ քննելը նոցա նախապատի խորհուրդը, են մի գլխաւոր գործարան անելութեան և ունին մեծակշիռ ազդեցութիւն այ՛ո և օդեղէն շրջապատի որպիսութեան վերայ:

Սէր սա երկու միմանց նման ճիւղ, գոչանից մինը մերկացրու իւր տերեւներից և զիւր երկուսը ևս մի ջրայից ամանի մէջ, այնուհետև կը տեսանես, որ տերեւաթափ ճիւղը ընդունում է իւր մէջ փոքր ջուր, սորա հակառակ տերեւապատ ճիւղը քարշում է իւր մէջ 15 մինչև 30 անգամ աւելի ջուր, նայելով տերեւների բաղմութեանը. այլ և կը տեսանես դու, որ տերեւաթափ ճիւղը երկիւղեան պահուն աւելի ծանր է քան թէ առաւօտուն, էթէ բոլոր օրը թողած էիր նորան ջրի մէջ. բայց միւսը թէև շատ ջուր ներս էր ծծել իւր մէջ, թեթեւացած է աւելի. Այսպէս ևս փորձով վերահասու եղաւ Հալէսը, թէ մի խնձորենու տերեւադարձ ճիւղ 30 ժամի մէջ վեր քարշեց 18 ունկի ջուր, սորա հակառակ մի և նոյն ճիւղից կտրած դաւազանը, որ ամբողջ էր մի եսթն ունաչափ ջուր ունեցող փողոփակի ցածումը, մի և նոյն միջոցին ներս թողեց միայն վեց ունկի ջուր, Այլև այնպիսի բուսականների վերայ որ դրած են կճոյճների մէջ, փորձեր են կատարած, նոցա արտաշնչութիւնը քննելու համար: Հողի մակերեսովը ծածկումը պատշաճապէս մի խուփով և ջուր տալու համար ներս է բերվում մի փողոփակ որ նոյնպէս փակվումը, Կճոյճը բուսականի հետ միասին կշռումն առաւօտուն և երեկոյին, որպէս և գործ դրած ջուրը: Այսպիսի կերպով Հալէսը, կրկնապատիկ փորձերով ստուգեց, որ մի մեծ արևածաղիկ 12 ժամ ջերեկի մէջ արտաշնչած էր 20 ունկի խոնաութիւն. բայց սորա հակառակ, մի ջերմ և շոր գիշերի մէջ արտաշնչութիւնը բազկացնումը երեք ունկի միայն, և յաճախ ցօղի կամ մի նուազ անձրևի պատճառով առաւելացել էր այ՛ո և բուսականի կշիռը: Բուսականների արտաշնչութիւնը անհասարար է. մի կիտրոնի ծառ, որ ջերմ աշխարհի բոյս է, արտաշնչում է աւելի փոքր քան թէ մի արևածաղիկ, և սա աւելի

Նուազ քան թէ մի կազմարի գլուխ: Հալէսը վերահասու եղաւ մի ճարտարամիտ հաշուարարութիւնով, որ նորա արեւածաղիկը 17 անգամ աւելի արտաշնչած էր քան թէ մի մարդ, եթէ անհասարար պարագայքը հաւասարեցրած էին:

Կառերի տերէնները սովորաբար վերին երեսից պատած են մի խժանժան նիւթով, կոկ և փայլուն են, բայց ստորին երեսից աւելի նուազ փայլուն, բրդոտ և նուրբ փողովակներով պատած: Ներքևի երեսովը անտարակոյս կատարումէ խոնաւութեան արտաշնչութիւնը ցերեկով, և նոցա ճեղքաւոր բացուածներովը կատարումէ զէպ ի ներս ծծողութիւնը երկրից բարձրացած ցոյի և օդի մէջ լողացող շագինների գիշերով: Տերէնների վերին երեսը գուշէ թէ սահմանած է աւելի նուրբ արտաշնչութիւնների համար. նոցա խժանժան պատանը հետի է պահում արեղակի ճառագայթները, և չէ թողում որ նոքա թափանցէին տերևի միջից, ինչպէս մի լուսափայլ յղկած մետալ սակաւ միայն ջերմանումէր արեղակի փայլողութիւնից. այդպէս տերևը պահպանումէ մի հօտութեան մէջ, որով հեշտանումէ խոնաւութիւնների ցած իջանելը օդից ստորին երեսի վերայ. վերին երեսի կոկութիւնը խախտումէ նոյնպէս, որ անձրևի և ցոյի ջուրը չը մածնու տերևների վերայ և չը սոյջ նոցա պատճառ փախլու: Այն սառնութիւնը որ ոմանց տերևների և բունների վերայ զգալի է, շատ հաւանական է թէ յառաջանումէ արտաշնչութիւնից, երբ որ ջերմութեան նիւթը կապակցվումէ արտաշնչելի նիւթի հետ և շինումէ սորան օդատեսակ: Պմանց բուսականների վերայ այնպիսի պատշաճաւոր կարգով գրած են տերևները, որ շին խախտաբար միմեանց թէ զէպ ի վեր ելանոց ցոյի ներս ծծելու ժամանակին և թէ արևից աչդողայպէս լուսաորվելու մասին, Բանջարների վերայ, տերևի երկու երեսքը ունին գրեալ թէ հաւասար կերպարանք, որովհետև նորա, շուտով չափ և հասակ ստանալու համար, շատ գիշութիւն հողից ներս են ծծում իւրեանց արմատներով, ուրեմն պիտոյ է նոյնպէս արտաշնչեն, որպէս և իւրեանց նուազ մեծութիւնովը յաջողակ են ներս ծծելու շատ խոնաւութիւն, որ բարձրանումէր հողի միջից, Կառերի տերևները ջերմ աշխարհներում և յատկապէս նոցա ցամաք և անանձրև սահմաններումը, շատ հաստապատեան են, որ աւելի սակաւ արտաշնչէին. բայց և սպիտակին են, որ իւրեանց ներս ծծող անօթներովը կարողանային շատ ցոյ ընդունել օդիցը, Նորա կերակրվումն այն անուցիչ հիւթովը որ գտանվումէ նոցա տերևների խորանանէ հիւսուածի խորքումը, եթէ ժամանակ առ ժամանակ պակասումէր ցոյը:

Թէ տերևի երկու կողմերը ինչպէս զանազան են, եթէ բններք

նոցա ընդունակութիւնը խոնարութիւն ներս ծծելու, ամենին բացառաւորապէս տեսանելու շատ անգամ, երբ որ երկու հասարակութիւններ մի և նոյն ժողովոյ ղեկավար մի ջրախից ամանի վերայ, մինը ստորին երեսի վերայ, միւրը վերին երեսի վերայ, Աստուծոյ մտած կանաչ մի քանի շարաթ, այդ և ամաններ ևս, բոլոր վերջինը թաղանթաւ մի մի օրի մէջ, 16 տեսակ ծառատերևների մէջ գտաւ բոննետ ընդունելը երկու հատ միայն, որոնց վերին երեսը այնքան ևս կարող էր ներս ծծել, ինչքան ստորինը, Սորա հակառակ, բանջարների տերևները ներս են ծծում ջուրը կամ թէ երկու կողմով ևս հասարակապէս լաւ, կամ թէ շատ անգամ վերին երեսովը աւելի բարձր, քան թէ հանդիպակացովը, բանջարատերևների հիւսուածը աւելի փութը և սպիտակ են և նոցա անօթները աւելի մեծ և հիւթաւից են, քան թէ ծառատերևների մէջ, որոնց որպիսութիւնը ամենին ներհակ են:

Ի՞նչ տերևները բուսականներին հասուցանում են սնունդ, այդ բանը բացառաւորապէս է նորանից, որ մի փոքր ցոլ կամ անընդհատ զուարթացնում ջերմութեանից համարեալ թէ թաղանթաւ բուսականները, որ թաղանթաւ բուսականը միսանգամ նորոգում են, եթէ ղեկեր նորանց խոնար տեղերում, այլև, որ ամենայնայնապէս անուանելի վերայ ևս, ուր ջր կար ոչինչ սնունդ բաց ի օդից, անուանելի հիւթաւից բուսականը, ջերմաստիճանների մէջ անուանելի բուսականը պիտոյ է ժամանակ առ ժամանակ սրկել ջրով, եթէ կամենում ենք պահպանել նորանց, Երաւացի պատճառով կարող ենք աւել, թէ մի ծառ իւր տերևներովը այնպէս ևս անկամ էր օդի մէջ, ինչպէս իւր արմատներովը հողի մէջ, Այդ պատճառով մի ծառի ճիւղ, որ մի կանուտը ձեռք ներս է բերած մի ջերմաստիճանի մէջ, ձմեռան միջոցին բուսուցանում տերևներ, այն բերում և պտուղներ, թեպէտև ծառի բունը հողի կամ թէ մի արկղի մէջ կար դուրսուցը:

Այս իւրեանց կեղևովը ներս են ծծում ծառերը շատ խոնարութիւն. հիւթաւից կանաչ խորանանէ հիւսուածը վերին բարակութիւն տակ, ինչպէս երևում, ունի իւր կազմածովը շատ նմանութիւն տերևների հետ. Գործը ուսուցել է, որ նորատունկ ծառերը լաւ յառաջանում են, եթէ երկողին մի թաց աւելով լուսնային կեղևը բունի շար կողմով և նոյն միջոցին ջրով սրկելիւր նորա կատարը: Եթէ բաց առնուի մի ծառից նորա տերևների մեծ մասը, նա հիւսուածանում և պտուղը չեն հասունանում կատարելապէս. ծառեր, որոնց տերևները ամենին կերած են թթութեանից, գոսանում են, թէև սկզբումը երևում են թէ միսանգամ նորոգում են:

Ինչպիսիք ջուրը, որ պարունակում իւր մէջ անիանիւթ և այլ,

բուսականներին օգտակար մասներ, զանազան կերպով յեղափոխում են նոցա մէջ, Դոր քիմիականութիւնը ջրոյց և տաւել, թէ ջուրը բաղկանում էրկու տեսակ արմատական նիւթերից, այսինքն կենսական օդից և վառելի օդից, որոնց առաջինը համեմատում է վերջինիս հետ ինչպէս շորքը մինի հետ, Եւս համեմատութեան փոփոխութիւնը միայն կարող է զգալի կերպով յեղաշրջել ջրային խոնաւութիւնների որպիսութիւնը բուսականների մէջ, Գորանով կարող էր մանաւանդ կատարել մի վերլուծութիւն զէպ ի վերոյիշեալ երկու արմատական նիւթերը, Աստելի օդի (Հիդրոգենի) արմատանիւթը զուգաւորվելով ածխանիւթի հետ, հասուցանում ապա բուսականների փայտեղէն մասը (փայտը ցամաք քամողութենով տալիս է շատ ածխածնի օդը կերպած մի ծանր վառելի օդի հետ), այլև էր նա առաւել շատ առանձին բուսական հիւթերի բաղկացական մասը, Անասկան օդի (Օքսիգենի) արմատանիւթը գործակատար է կէս մի պարատեղով քանի մի տեսակ հիւթեր բուսականների մէջ, և կէս մի զուգաւորվելով ջերմանիւթի հետ, յորինում կենսական օդ, բայց զուգաւորվելով ածխանիւթի հետ զոչայնում ածխային թթվութիւն և ածխածնի օդ (որ յառաջուց ասփում էր տեղական օդ), Երեզակի լոյսը հրապուրելով տերևները և կանաչ կեղևը, ներգործում կենսական օդի զոչայնութիւնը, որին պիտոյ է ձեռնու լինելն իրենանց կողմից սննդական հիւթի մէջ գտնված անհասարակերպ նիւթերը, Եւս պատճառով յատաջանում կենսական օդի արտահանութիւն տերևների միջից, և գորանով, քարշողութիւն հիւթի զէպ ի տերևները, Եւելի նորահաս ծիւղերի մէջ, զարար կեղևի միջնորդութենով աւելի շոյտ զոչանում են հիւթերը և լանում են տերևների մէջ, Եւսպիսի կերպով սննդական հիւթը յատակում տերևների մէջ և լինում կարող ընդունվելու այն անոթների մէջ որ պարունակում են բուսականների սեփական հիւթերը, Եւս բանը հանգիստում գիշերի միջոցին, էր որ հոյացած օդը խափանում կենսական օդի արտահանութիւնը, և ջրահիւթը փոքր ինչ թանձրանում, և այդ պատճառով զէպ ի վայր իջանող հիւթի համար տեղ ու ասպարեզ է բացում, Հողի յատակը որ իւր ջերմութիւնը պահում աւելի երկար քան թէ օդը, պատճառում, որ այժմ արմատը աւելի արտաշնչեն քան թէ տերևները, և սորանից զոչանում սննդական հիւթի քարշողութիւնը զէպ ի ցած, Եւս էլեւէջ շարժողութենովը ջրահիւթի հասարակապէս բաժանվում սա բուսականների բոլոր մասերի մէջ,

(Ոչը, լինելով աճեցականների երկրորդ սննդական աղբիւրը, անմիջապէս տալիս է նոցա բոլոր հասարակ բաղկացական մասուճքը, Տերևները և կեղևը որսում են նորանից խոնաւութիւն, և նոյն միջո-

ցին բոլոր նորա մէջ վերլուծած նիւթերը, եթէ սորա կարող էին ընդունել, Այսպէս բուսականքը ստանումն ներս ծծած օդովը թըթուանիւթ և ջրանիւթ, պատրաստելու համար, և սոցանից բաղադրութեամբ օդը կապակցվելով ջերմանիւթի հետ, Օդը վերլուծվելով դեպ ի այս բաղկացական մասունքը, ստացվում և գարձեալ թթուանիւթ, թթուութիւնը պատրաստելու համար: Իսկողողական օդը, որ ջրանիւթի հետ միասին բաղկացնում թուշուն Ալքալին (Ամմոնիաքը) այն բուսականների մէջ, որ քամելու ժամանակին տալիս են այս Ալքալին (որպէս արտադրութիւն, այսինքն նոր բաղադրած), մի մասնով յետ է պահպանում և գարձեալ միւսերի միջից գուրս է ձգվում: Բայց Ատմոսֆերայի մէջ միշտ բովանդակվում ամխային թթուութիւն, ըստ որում անասունների արտաշնչութիւնը և բուսականների բարձունքը, թող վերլուծութիւնքը հանքային նիւթերի և բուսական հողի, տարածումն օդի մէջ շատ ամխային: Օդի մէջ եղած ամխային թթութիւնը, որ քիմիական արուեստով հանվում է նորա միջից, թէպէտ որքանութենով փոքր է և չէ աւելի քան թէ բոլորի 1/50 մասն, բայց հաւանական է, որ շատ ամխային թթութիւն ներքին կերպով կապակցի է օդի հետ և նորա մէջ վերլուծած ջրի հետ, Այս կարճատևութեամբ ամխային թթութիւնը, որոնց չափազանց շատութիւնը և աղաս ներգործութիւնը կարող էր փաստել բուսականներին, զուցէ թէ այնքան ևս սննդարար է նոցա, ինչքան խորտ և շատ անգամ օդտարեր է մեղ ամխային թթութիւնը թթու աղբիւրների մէջ. բայց սորա հակառակ, մի չափազանց ամխային օդ կործանական է կենների համար, փորձով տեսած են, որ ամխային թթութեան հետ խառնած ջուրը, որի մէջ ներս էին բերած տերևներ և բուսականներ, շատ ձեռնտու էր կենսական օդի զոյացութեանը նորա միջից: Զուրը յղացուցած ամխային թթութեանով, աւելի օգտակար է, բուսականները ստացելու համար, քան թէ հասարակ ջուրը: Եւ այն բանով կարող է նա արխանի լինել բուսականներին, որ նոցա թող չէ տալիս փախելու:

Այն փորձերը, որ նոր ժամանակներումը արած են բուսականների արտաշնչութեան վերայ և նոցա որպիսութեան մասին զանազան տեսակ օդերի և օդեղէն խառնուածների մէջ, տալիս են մեղ ահա քանի մի գեղեցիկ բացատրութիւնք աճեցականների պաշտանի մասին: Դրանք են տերևներ կամ ճիւղեր կամ թէ ամբողջ բուսականներ, մի ապակեղէն զանգակի տակ, որ լցուցած էին հասարակ օդով կամ թէ մի այլ տեսակ օդով: Այս փորձերը զանազան կերպով փոփոխած են, նորա արած են արևի տակ, ստուերային տեղերում կամ թէ զիշերային խաւարի մէջ և ուշադիր են եղած այն և ջերմու-

Թեան ազգեցու թեմին, Ննգնհատուղ բնազններ բարձրագոյնի փորձերով տեսաւ, որ բուսականները արեւի զօրծակցութեանով առատապէս դուրս են հոսում իւրեանց մէջ մշակած, շատ մաքուր կենսական օդը, և այնքան առատապէս, ինչքան աւելի պայծառ էր օրը և ինչքան աւելի ենթարկւած էր բուսականը լուսի ներգործութեանը, և առաւելապէս ճաշից յետոյ ժամբումը: Պիշերային խաւարի մէջ, և շերեկով խոկ, ստուերի տակ, բուսականը ապականուածն օդը, և մի քանիքը նոցանից աւերուածն մի մեծ սարածութիւն օդի այնքան, որ մի շնչաւոր ներս բերովելով այդ օդի մէջ, ստակզումէ մի քանի սեկունդի մէջ, թեպէտ մի և նոյն բուսականը արեւի տակ դուրս են փչում շատ պատուական օդ: Բայց բուսականների ներգործութիւնը աւելի նուազ չափով ապականիչ էր օդի համար քան թէ մաքրիչ ու յստակիչ: Ազդու, ժահահոտ, այն և թուճաւոր բուսականը տալիս են շերեկով նոյնպէս կենսական օդ, ինչպէս միւսերը: Բուսականի ոչ ամենայն մասները միայն պաշտնակատար են պատրաստելով կենսական օդ, այլ միայն տերեւները առաւելապէս, ապա և կանաչ ստեղծերը և ճիւղերը: Բայց ծաղիկները արտաշնչումն մի տեսակ օդ, որ ճնշվելով մի նեղ տեղում, մետոցիչ է թէ շերեկով և թէ դիշերով, թէ արեւի և թէ ստուերի տակ: Պտուղների արտաշնչութիւնը նոյնպէս փնասկար են շնչաւոր կենդանութեանը, շատ բարեհամ պտուղները, զոր օրինակ գեղձը առաւել ևս, այնպէս որ վտանգի մէջ պիտոյ է լինել մեր կեանքը, եթէ մի նեղ սենեկում, ուր կային այդպիսի պտուղների բազմութիւն, փակված լինեինք: Նոր դուրս հանած արմատները յատաշնչումն ըստ մեծի մասին նոյն ներգործութիւնը, ինչպէս ծաղիկները և պտուղները: Խոշոր սունկերը ամենայն ժամանակ արտաշնչումն փնասկար օդ:

(Դ) զը այնքան ևս հարկաւոր է բուսականներին, ինչպէս շնչաւորներին: Մի բուսական որ իւր արմատներովը գրած մի ջրալից ամառնի մէջ, բերվումէ մի ազակեղէն զանգակի տակ, նա թառամումէ շուտով, եթէ օդահանովը դուրս քարշէր օդը զանգակի տակից: Նմանապէս կարող չեն պահպանվիլ բուսականը մի այնպիսի օդի մէջ, որ չէ պարունակում կենսական օդ: Բայց եթէ կարող էին պահպանվիլ, դորս պատճառը էր նոցանից դուրս փչած կենսական օդը: Այլ և կարող էին նորա զուարթ մնալ մի օդի մէջ, որ խեղդողական էր անասունների և մարդերի համար: Այն և մի փոքր կեղտոտ օդի մէջ ածուածն նորա աւելի զուարթապէս, քան թէ շատ յստակ օդի մէջ: Ածխածնի օդն էր առաւելապէս, որ օգտակար է աճեցականներին, որովհետեւ սրբա կարտ են շատ ածխանիւթի: Եթէ ատմաֆերեան խեղդիչ օդի և վտակի օդի մէջ, որ ըստ իրերան միայն անկարող

էին պահպանել անկական կենդանութիւնը, ներս է բերվում մի որոշեալ քանակութիւն ածխածխու գազի, ապա ստանումն նորո պատուականութիւն բուսականների համար, Պարոն Հումբոլդի փորձերով մի տասերորդ բաժին կամ թէ փոքր ինչ աւելի ածխածխու գազ ատմաֆիերան օդի մէջ է մի շատ օդտակար խառնուած անկականների համար, որ և շատ անգամ պատահում է հանրական փոսերի մէջ, ուր մի ամբողջ կարգ ծածկաղոյց (կրիստոզաման) բուսականների զուարթապէս բողբոջում և աճում, Այս գազի կամ օդի տեսակի ածխածխութիւնը բաժանվում է թթուանիութիւնը (որ բաղկացնում է համարեա թէ երեք քառորդը ածխային թթուութեան) և սեպհականում բուսականին. սորա փոխարէն ինքը թթուանիութիւն կամ բոլորովին, կամ թէ մի մասնով շոգիանում և այդպէս բարեւոքացնում շնչառական օդը, Այն միջոցին, երբ որ բուսականը պարապած է սեփականելով իւրեան թթուանիութիւն, զորա փոխարէն զօրս է ձգվում ածխածխութիւն:

Ճ' ամենային օդը (մի գազ որի հիւմքը է ածխածխութիւն, ջրանիւթի հետ միասին) սահմանաւոր կշռով հասարակ օդի հետ խառնվելով, երբեմն այնքան յաջողութիւն է տալիս բուսականների աճեցողութեանը, որ նորա ստանումն մի երկրորդական համ:

Մ' նիստն, ատմաֆիերան խեղդիչ օդի մէջ չէ բողբոջում սերմը, և բողբոջած սերմերը մեռանումն. այն բուսականըր միայն որ ունին շատ, կանաչ մասներ, զոր օրինակ տերեւեր և հիւթալից խորանաձև հիւտուած, երբեմն կարող են տանել զորան մթնումը, Ատակի օդը ունի ընդհանրապէս նոյն ներդործութիւնը:

Բուսականների աճելութիւնը բաւական նման է շնչառ կեանքին, բուսականների ներս ծծելը հեղանուտ և օդատեսակ նիւթեր, նոյն բանն է, որպիսի է շնչառների սնունդ ընդունելը, Մնդարար հիւթը տարածվում նոցա մէջ այնպէս, ինչպէս կեղտալուր սոցա մէջ, քիմիական ներդործութիւններով յեղափոխվում նա բուսականների սեփական հիւթը, Այս բանը նմանակից է շնչառների մարտոգութեանը, Այս հիւթերը ստանումն իւրեանց ատանձին պահարանըր, նոյնպէս, ինչպէս շնչառների մէջ անթները պահածակատար են անջատելով առանձին հիւթերը, Հիւթերը թանձրանումն և յեղափոխվումն ամուր մարմիններ, զոր օրինակ ծառերի մէջ մի փայտեղէն թերթ յաւելանում միւսի վերայ, որ նման է ոսկրների պոչացութեանը շնչառների մի քանի գասակարգերի մէջ, Անօթները հետ գհետ կերպարովելով, բուսականի մասները երկարանալով, ընդարձակվելով և խտանալով, ինչքան որ նոցա թերթի որպիսութիւնը թոյլ էր տալիս, յառաջանում է բուսականների աճելութիւնը այնպէս,

ինչպէս շնչաօրների աճելութիւնը, Բնդունած նիւթերի անպիտան և աւելորդ բաժնէրը արտաբազումն բուսականների միջից, կէս մի որպէս շարակից հեղանիւթ որ դուրս է թափուում այս տեղ և այն տեղ, և կէս մի, որպէս օդանման շոգի, նուրբ բացուածներով որ դորա համար պատրաստած էին, Բաց ի դորանից երևումէ մի արժանի տեղեկութեան համաձայնութիւն բուսականների և շնչաօրների մէջ, Եթէ նկատուենք այն բաղմամբարտար, անխմանալի անտեսութիւնը, որով յառաջանումեն հաւասար, օրգանագործեալ մարմիններ, Յորա մասին կը խօսենք յետոյ:

Նշանօժարանութիւնը բուսականների սննդատութեան վերայ, ցուցանումեն մեղ մի այնպիսի յարաբերութիւն բուսական թաղաւորութեան կողմից ղէպ ի շնչական թաղաւորութիւնը, որ տալիս է մեղ մի զեղծիկ օրինակ, թէ ինչպէս բոլոր բնութեան մէջ ամեն բան ճշգրտպէս կապակից է մինը միւսի հետ փոխադարձ սպասարութեան համար, Մէք և անասունըը շնչաօրութեան ժամանակին կարտա ենք մի սահմանեալ չափ մարտր կենսական օդի, արիւնի շրջարբերութիւնը պահպանելու համար: Բայց որովհետեւ շնչարձակութեան միջոցին դուրս ձգած օդը սպականջումէ անխային թթվութեանով, ապա օդեղէն շրջապատը այս պատճառով միայն պիտոյ է չուտով նուազեր և չը կարողանար պահպանել շնչաօր կեանքը, և թէ չը լինէր հողաբարձութիւն փարատելու փնասակար օդը և ծնուցանելու նոր կենսական օդ: Եւս երկու բանը ներգործումեն բուսականները, որ այդպիսի կերպով շատ մտա կապակից են շնչաօր թաղաւորութեան հետ, առանց յիշատակելու այս տեղ առանձին յարակցութիւնըը ինչ ինչ անասունների և տեղականների մէջ, Տերևները բուսականների համար, են այն բանը, ինչ որ են թօքերը անասունների համար, բայց հակառակ կերպով, բուսականները իրեանց տերևներով դուրս են ձգում մի նիւթի աւելորդ, որ հարկաւոր էր շնչաօրներին, բայց շնչաօրները իրեանց շնչարձակութեանով հասուցանումեն բուսականներին մի նիւթ, որի չափազանցութիւնը շնչաօրների արիւնի մէջ, պիտոյ է փնասակար լինէր նոցա, բայց դորանից զանազան կերպով օդուտ են քաղում բուսականըը: Կնչքան փնասակար օդի տեսակներ դուրս են փչում բուսականըը, աւելի փոքր է, քան թէ այն օդաւէտ օդը որ ղէպ ի դուրս են շնչում նոքա: Եւս բանը բացայայտ է Կնչնհատուղի, յառաջուց յիշատակած, փորձերից, Բուսականներից դուրս փչած անպիտան օդը ցան և ցիր է լինում նոյնպէս ահագին օդեղէն տարածութեան մէջ:

Վսմանապէս և այլ նիւթերի մասին, որ կենդանի արարածների շնչատութեանով և արտաշնչութեաններով, ներսութեանով, այրեալքով

և ճախնային ջրերի շոգիներէյ յեր ու ցան տարածվումն օդի մէջ և անպիտանացնումն նորան շնչաւոր կենդանութեան համար, բուսականքը անտարակոյս մեծապէս օգտաբեր են շնչական թաղաւորութեանը, ըստ որում ամենանուրբ, շոգիներէի հետ խառնած նիւթը, որպէս պիտանի սնունդ, ներս են քարշում տերեւների և կեղևի միջովը, բայց աւելի կոպիտ նիւթը իջանում զէպ ի երկիր և վերլուծվում ւայն աննդական ջրի մէջ, որ ներս են ծծում արմատները, Այն բուսականքը, որ ածուանն ցամաք և քարուտ յատակի վերայ, պատատուկի նման աճեցականքը և մի կերպով նոքա ևս, որոնց յատակը է այլ բուսականների կեղև, ապրումն այն գլխաւորապէս այսպիսի սնունդից, Առաւել մեծ մասը այն բուսականների, որ շատ առատապէս և բազմաթիւ ածուանն զաղարուն ջրերի մէջ, զոր օրինակ կեղեքնարոյս, պրոու, սուսերածե շուշանը (Iridese), ձիախոտը պարունակումն ըստ բուսականին շատ օդ, օչ թէ, ինչպէս սոփորական էր ուրիշ բուսականների մէջ, այսինքն խրեանց թեւերի միջոցներումը, այլ մեծամեծ պահարանների մէջ փակած, և սորա համար երևումէ, որ նոքա սահմանված էին ներս ծծելու թաց տեղերի փնասկար արտաշնչութիւնքը և զորա փոխանակ գուարթացնելու օդը աւելի մաքուր նիւթով: Այս բուսականքը երևումն առաւելապէս կարող բարւոքացնելու այն անդիտան օդը, որ փակած է նոցա հետ միասին:

Մինչև այժմ անդղած ուսումները պատճառ են տալիս մէջ մի քանի ծանօթարանութիւնք ասնելու, որ օդասկար են ստողութեանը:

Կանաչ բուսականներ և զալար ծառածիղեր գտանվելով արեգակի տակ, կարող են մարբել օդը մի հիւանդի սենեկի մէջ, միայն թէ հարկ էր երեկոյին դուրս տանել նորանց, կամ թէ պիտայ է, որ այդպիսի բուսականք չը լինէին շատ, և սենեակը լինէր լայն ու արձակ: Մասակահատ ծաղիկներ այնպիսի սենեակների մէջ, որոնց պատահանները և զոները բացվումին անյաճախ, կամ թէ ամենին ոչ, փնասկար են և ստողներին, աւելի ևս հիւանդներին, Այս ծ են օրինակներ, որ ծաղիկներ մի փակած սենեկի մէջ պատճառած են սրտի ձնշողութիւն, այն և խեղդամահ ասնելով մարդիկը, Պիտոյ է անկել ծառերը տան արեահայեաց և ոչ հիւսիսահայեաց կոզմուսը, Գանձբախտ թուփեր մի բնակարանի շատ մաս մերձակայքում, կարող են անտողջ լինել խրեանց ստուերի պատճառով, թեպէս այս տեղ շատ անգամ հողմը ցրվում նոցա փնասկար արտաշնչութիւնքը: Ըստ խիտ անտառների վտառտողջ են կացուցանում մի սահման, որովհետեւ օդը անշարժ զաղարումն նոցա մէջ և արեգակի ճառագայթքը չեն կարող թափանցել թանձր տերեւների միջովը: Ճախնային և մա-

բուս տեղեր, եթէ անկէիւր նոցա չըջակուցուածը թուփեր և ծառեր, կը դադարէին փնասարեր լինել, Անհոգութիւնը երկրագործութեան մասին կամ թէ պակասութիւնը ծառերի և բուսականների վատառողջ է շինում մի սահման, Այսպէս են ահա Հոռոմի, և Պոնտոսեան ծախիները չըջակուցը, բայց զորա հակառակ, զբացի, բարեշէն և քաղութացեալ աշխարհը Տոսկանայի ունի շատ առողջ հող:

5. Արդարեւ:

Ոչինչ մեծ չէ, ոչինչ փոքր չէ, ինքն ըստ ինքեան նկատույնով, ամենայն բան չափով ու կշիւով է և լցուցանում այն խորհուրդը, որի համար սահմանած է նա: Մի բան կարող է շատ փոքր և այդու ամենայնիւ անչափ մեծ լինել, կարող է մեծ և այդու ամենայնիւ անչափ փոքր լինել, նայելով այն բանին թէ ինչ խորհրդով գործ էին գնում նորան, Բալեւայի համար ովկիանոսը անչափ լայն ասպարէզ չէ, և միլիոնաւոր ժժմակներ գտանումն բուսական տեղ մի ջրեղէն կաթիլքի մէջ, Ամենամեծ շնչաւորից մինչև ամենափոքր միջտոսի ձուն, կամ թէ նորա նուրբ և մանր երակները, որպիսի հետաւորութիւն: Եւ զարձեալ ինչպէս շքանում մեր երկրի բոլոր մեծութիւնը և հոյակապութիւնը, այն մեր երկրագունդը ևս, համեմատելով տիեզերքի հետ: — Այս նկատութիւնքը այնքան յաճախ արած են, որ, թէև մեծախորհուրդ բաներ էին, բայց փոքր տպաւորութիւն են գործում, այդու ամենայնիւ պետոյ է մարդուս հոգին կուրացած լինելը մեծամտութեամբ, կամ թէ շատ սահմանափակ տեսութիւն ունենար, եթէ նայելով բնութեան վերայ, չէր լցվելու նորա սիրտը խոնարհութեամբ և ցածութեամբ:

Նայն նկատողութիւնքը կարելի է ասնել և այն բանի վերայ, որ մեր ասումները ուրիշ կամ թէ ուրիշ, այս տեղ չէ հանդիպում մեզ մի պակաս բաղձնորինակութիւն, և սա ևս աւելի անհասկանալի էր, Միտքը սարսափում քննելով այն մշտնջենաւոր չըջանապողար որի մէջ գտանվում բոլոր բնութիւնը, այն անհամար շարժութիւնքը, այն անընդհատ տեղափոխ չըջողայութիւնը հիւթերի ամենայն շնչաւորի և ամենայն ծառի ներսումը մինչև չըջարեութիւնը այն միլիոնաւոր տիեզերական մարմինների որ լցուցանումն երկնականարը, որպէս կաթիլներ ովկիանոսը: Այս պատճառով ու շարժութեան անարժան գործ չէր բաղդատել այն շարժողութիւնքը որ լինումն մեր երկրի վերայ, որպէս միմեանց հետ, նոյնպէս և այն շարժողութեանն ինչ որ լինումն երկնականարի վերայ:

Ամենափոքր, խոշորացուցով միայն տեսանելի, սողուն շնչաւորի շարժողութիւնը չէր գեղ ևս առաւել ծանրաբայլը, որ յայտնի

է մեզ. նա, անհամեմատ աւելի արագ է քան թէ սոյն իսկ փոքրիկ անասունի ածողութիւնը, այն քան թէ մի երկիւայի կամ ծառի ածողութիւն որ չէ յանկարծակի, այլ մի տեղական շարժողութիւնով որ այնքան փոքր այնքան փոքր ընդհատումէ, հանգստի միջոցը ունի, ինչքան կայծակի ճառագայթը. Պանրի ճճիւտ սողալը, գուցէ թէ, համեմատելով այս փոքրիկ շնչաւորի հետ, աւելի արագ է քան թէ մի ձիու վազելը, և այս պատճառով սխալ կը լինէր, նորա շարժողութիւնը ստել կամաց. Բայց կան շնչաւորը, որ այն համեմատելով նոցա մարմնի հետ, ստուգապէս արժանի են այն անունին, որ Ֆրանսիացի քնագէտըր տուած են նոցա, այսինքն *Թարտիգրատ* (*tartigrades*, ծանրաբայլ) թէպէտ գերմանական անուանակոչութիւնը *Փաուլտեր* (*Faultlitter* զանգաղ անասուն) չէ այնքան ճիշդ, բնա որում, ինչպէս ուսուցանումն բոլոր երեղթերը, և սոյն այս ծանրաշարժութիւնը պատճառումէ նոցա շատ մեծ աշխատութիւն: Այն շնչաւորների մէջ, որ յատուկ են հարաւային Ամերիկային, առուել ծանրաշարժ է այն կենդանին որ խոր Այս ձայնարկութեանց ստացել է անունս Այ, որ ցուցանումէ մի ճշմարիտ միջասահման, չորրորտանի և սողուն անասունների մէջ. նորա շարժողութիւնը այնպէս զանդաղ էր, որ մինչև այժմ ևս աննըստրած է համբերութիւնը բոլոր բնաբնիչների, որ կամեցած կին ճշգրտապէս չափել նորան. Նա, անդադար յատաջ խաղալով, կարող էր, շատ շատ, 50 քայլախօտ կատարել 24 ժամի մէջ և պիտոյ է մի միոն ճանապարհը կատարէր 5 ամսու մէջ. բայց նա այնքան յաճախ ընդհատումէ այս շարժողութիւնը և այնքան յաճախ դադարումէ, որ գուցէ թէ 6 կամ 7 տարու մէջ յատաջ կ'երթար մի միոն տարածութիւն միայն.

Ինչ ահագին հեռաւորութիւն կայ այս շարժողութեան մէջ, որ կարտ էր երկու բուպէի, մի մասնաչափ լայնութիւնով տարածութիւն անցանելու համար, և մի անգլխական ձիովագի արագութեան մէջ որ 50 փարիզեան ոսնաչափ անցանումէ մի սեկունդի մէջ, կամ թէ համեմատելով առուել արագութիւն թռչունների, զոր օրինակ արծիւների և ծիծեռնակների հետ, որ 75 ոսնաչափ անցանումն մի սեկունդի մէջ. ուրեմն համարեա թէ 12 միոն մի ժամի մէջ, և առանց դադարելու: Այս պատճառով ծիծեռնակները հրատարակելով Պերմանիայից, միւս օրումը կարող են լինել Ամերիկայում. բազենների արագ և անվաստակի թռչողութեան մասին կան շատ օրինակներ. Հենրիկոս երկրորդի բազէն, որսակատարութեան մէջ Պոնտենէրլօ քաղաքումը փոխտակական լինելով, միւս օրումը Մարտ կղզու վերայ (230 միոն հեռաւորութեամբ) ըմլունվեցաւ և ճանաչվեցաւ խոր վրդակայից. Մի բազէ կանարեան կղզիներից ուղարկած լինելով Աերմայի դուքսին,

յետ փոխառ Սթանիսլայից զէպ ի Տեներիֆա և այս Հեռաւոր ճանապարհը որ է 150 մղոն, կատարեց 16 ժամի մէջ:

12. 24-ՆՉԷ, մանաւանդ յափշտակող ձկուները շատ արագաչարժ են. Բայննա կենդանին գնում ամենաշոյտ նախ քամակից, ճանապարհորդելով Եւրոպայից զէպ ի Ընդկաստան և անդադար լող է տալիս նախ չորս կողմնով, այնպէս որ նա այս ճանապարհորդութիւնը կատարում գուցէ թէ երեք անգամ մի և նոյն միջոցին: Սալմն ձկուները 24 սունաչափ ճանապարհ անցանումն մի սեկունդի մէջ, և, ինչպէս յորթ ձկուները, համարեա թէ անընդհատ շարժողութեան մէջ են, այնպէս որ նորա կատարումն իւրեանց ընթացքը աշխարհի չորս կողմով երկու ամիս մէջ, Միջամների մէջ, Լ-ԵՂԷ գուցէ թէ ունէին ամենից անաւել արագաչարժութիւն, թէպէտ սա յաճախ ընդհատւումեր: Այս փոքրիկ կենդանիքը մի ակնթարթի մէջ գործումն այնպիսի ուսմունք, որ համեմատելով դոցա, ոչինչ էր եղելուի ոստինը. այսինքն լուերի ոստինքը այնպէս բարձր են, որ երեքպատիկ գերազանց էին քան թէ նոցա մարմնի մեծութիւնը:

Հ-ՉԷ արագութիւնը, որ ասակ է դարձել, շատ աւելի փոքր էր քան թէ սովորաբար կարծումէին: Ասյուն հողմերը, ինչպէս անդադար չնւղ արևելեան հողմը ջերմ գոտու մէջ, անցանումն 10 մինչև 15 սունաչափ ճանապարհ մի սեկունդի մէջ, փոփոխական հողմերը աւելի արագ են, բայց այնպիսի հողմեր որ մի սեկունդի մէջ 40 մինչև 60 սունաչափ ճանապարհ կատարումն, ուրեմն և հաւասար էին շատ արագընթաց ձիւն, ասումնն ահա մրրիկներ: Ամենասատիկ փոթորիկը, որ մինչև այժմ նկատած էին, անցանում 123 սունաչափ սեկունդի մէջ: Առաջաստաչարժ Ե-ԵՂԷ հասանումն, շատ շատ, կիսով չափ արագութեանը հողմի որ մղումը նորանց. պատճառ, մի առաջաստաչարժ նախ ամենամեծ արագութիւն որ նկատված է մինչև այժմ է 26 սունաչափ ճանապարհ մի սեկունդի մէջ, Բայց թէ ինչպէս դարձանալի արագաչարժ էին մեր ժամանակի շոգենաւերը, պիտոյ է ասել այս անգ, թէ հիստիային Ամերիկացիք ունին մի շոգենաչարժ լաստափայտ որ մի ժամու մէջ անցանում 5 համարեա թէ 5 գերմանական մղոն (35 վերստ), կրելով իւր վերայ 700 ճանապարհորդ: Մի այլ շոգենաւ, Գրեա Ուեստերն անունով, 234 սունաչափ երկար և 58 սունաչափ լայն և մի շոգեղէն մեքենայով, որի զորութիւնը հաւասար է 450 ձիու զորութեան, 14½ օրի մէջ բոլորեց այն 3500 անգլիական մղոն ճանապարհը որ կայ Նիու-Եորքից մինչև Բրիտաու: Եորանից աւելի զորաւոր է մի այլ անգլիական շոգենաւ, « Բրիտանիայի Թագուհին » (the british Queen) երեք կայմով, մի մեքենայով որի զիժը հաւասար է 500 ձիու զորութեան, 275 սունաչափ

երկար, 64 ոտնաչափ լայն. որ պատկանում է Բրիտանիայի և Ամերիկայի մէջ եղած նաւարկութեան ընկերութեանին, Մոսկովայի և Պետերբուրգի մէջ ձգած երկաթի պողոտայի վերայ վազում է շոգեսայլը 30 վերստից աւելի մի ժամի մէջ, բայց այս չէ նորա լուսանդակ լիակատար արագութիւնը, պատճառ, կայսրի ճանապարհորդութեան ժամանակը նոյն շոգեսայլը կարող է վաղել մի ժամի մէջ 50½ վերստ, և 12 ժամի մէջ անշանել մի տարածութիւն 604 վերստ երկայնութեամբ:

Նշանակալից թեպէտ նոյնպէս օդի շարժողութիւն է, բայց ոչ յառաջադարձ և դէպ ի դէ կողմը, ինչպէս Տողմի շարժողութիւնն է, այլ ախրանման դէպ ի ամենայն կողմ, ինչպէս ջրի շարժողութիւնը, երբ որ մի քար ներս է ձգվում, Այս պատճառով հնչիւնը անհասնելի աւելի արագընթաց է քան թէ Տողմը, այսինքն 1038 ոտնաչափ մի սեկունդի մէջ, կամ թէ մի մղոն 22 սեկունդի մէջ. և արժանի է մտաւորութեան, որ մի թոյլ ձայն այնչափ ևս արագ (թեպէտ ոչ այնքան հեռի) յառաջադէմ է, ինչպէս մի սաստիկ ձայն. որ այս շարժողութիւնը իւր բոլոր տեսականութեան մէջ և դէպ ի ամենայն կողմ լինում է հաւասար երազութեամբ, այնպէս որ մի արձակած թնդանօթի բերանի մտակալքը չունին այս մասին ոչինչ գերապանջութիւն. այլն, որ ջերեկի կամ գիշերի միջոցը, ջերմութիւնը կամ թէ ցուրաք չէ յառաջացնում ոչինչ փոփոխութիւն այդ բանի մէջ. Տողմը միայն բազմապատկում կամ թէ փոքրացնում է հնչիւնի արագութիւնը, Ի վերայ այդը ամենայնի դժուար է սահմանել թէ ինչքան հեռի կարող էր տարածվել ձայնը. կան օրինակներ, որ մանաւանդ թէ ջրի վերայով թնդանօթի որտաղ լսված է 31 մղոն հեռաւորութեամբ:

Արուեստական շարժողութեանների մէջ գուցէ թէ ամենից ասուելի արագը, թեպէտ անտարակոյս ամենափնասակարը այն է, որ մէք յառաջացնում ենք վառելով հրացանի լուցիին, Սկզբնական արագութիւնը որ դորանով մասնաորվում է գնտակին, և ինչպէս դա թնդանօթի բերանից դուրս էր արձակվում, գանալան է նայելով թնդանօթի երկարութեանը, լայնութեանը և կազմածին. կիսով չափ լցուցած թնդանօթքը թռուցանում են իւրեանց գնտակը 1500 ից մինչև 1700 ոտնաչափ, հրացանքը 1300 ից մինչև 1400 ոտնաչափ, մի սեկունդի մէջ. բայց չէ՛ պիտոյ մտածել, որպէս թէ գնտակը ստուգապէս ամենայն սեկունդի մէջ անցանում էր այդքան տարածութիւն. Օդի ընդդիմութիւնը փոքրացնում է նորա արագութիւնը մինչև այն աստիճան, որ հազիւ թէ դորա կէս ճանապարհը կարող էր անցանել ստուգապէս, և այդ պատճառով շատ տարակուսելի են այդպիսի արագութեանների կշտաչափութիւնքը:

Ինչպէս որ շարժողութիւնքը այնչափ ևս մեծ են, ինչ-

քան սևասարներ ուր նորա կատարվումին: Բոլոր երկրի շարժողութիւնը իւր լիսեռի շոր կողմով աւելի արագ է, քան թէ աւելի մեծ մասը այն շարժողութիւնների, որ նոյն իսկ երկրի վերայ կատարվումն. երկրի շարժողութիւնը արեգակի շոր կողմով անհամեմատ աւելի արագ է. և այս արագութենից մինչև արագութիւնը լուսի, որ ծառայում է բոլոր փեղկերքի տարածութեան մէջ, ահագին հեռաւորութիւն կայ: Իւր օրական շարժողութիւնով, երկրի ամեն մի կէտը հասարակածի տակ անցանում է 1431 սանաչափ մի սեկունդի մէջ, կամ թէ մտ 16 երորդ մասը մի մղանի: Ընտ արագութիւնը զէպ ի բեկունդը, լինում է աւելի ծանր, և Պետերբուրգը և Մադրաթը անցանումն միայն զորա կէտը կամ թէ 716 սանաչափ, որ և հեռուից մտնենում է ձայնի արագութեանը: Իւպիտեր մոլորակի վերայ ամեն մի կէտ հասարակածի տակ շրջանառութիւնով կատարում է համարեա թէ մի և կէտ մղան սեկունդի մէջ: Տարեկան շարժողութիւնը արեգակի շոր կողմով խլում է և տանում է երկիրը 4 մղան յառաջ մի սեկունդի մէջ, կամ աւելի ճիշդ խսելով, 92,166 սանաչափ, որ 60 անգամ աւելի արագ է քան թէ մի թնդանութի գնտակ: Ընտ քան սկզբումը, երկիրը մի սեկունդի մէջ անցանում է 3300 սանաչափ պակաս քան թէ ձմեռան սկզբումը: Մերկուրիտը մի սեկունդի մէջ կատարում է գրեթէ 7 մղան ընթացք, Վեներա 5 մղան, Մարսը 3 մղանից աւելի, Իւպիտերը համարեա թէ 2 մղան, Սատուրնտը $\frac{2}{3}$ մի մղանի, Ուրանտը մի մղան, մեր լուսինը մի մղանի եօթներորդ մասը միայն:

Բոլոր շարժողութիւնների մէջ որ յայտնի են մեզ, առաւել մինչև պշտմ արագ է Լուսնի շարժողութիւնը: Ուշագրութեան արժանի է, որ բոլոր շարժողութիւնքը որոնց հանդիսարանը է երկիրը, որ և ստակդարաշխութեան քննելի նիւթ են, մատենասիրական ճշգրութեամբ բացադրած են ստակդարաշխների ժրջանութիւնով և արձանութիւնով. բայց սորա հակառակ, մեզ աւելի մտակայ, լուսնի տակ եղած շարժողութիւնքը մեծ երկրայութեան տակ են: Մեր աւելի ստուգապէս դիտները Բանակարողի ձեռքից դուրս թողած մոլորակների ձանապարհները քան թէ մեր յայտնի է ճշգրտակէս, թէ լըսը 8 բողէի և 13 սեկունդի մէջ արեգակից հասանում է զէպ ի մեզ, անցանելով մի հեռաւորութիւն որ մտատարապէս համեմատ էր մեր երկրի 23,600 կիսաչափին, կամ թէ 20,262300 մղան. որ մի թնդանութի գնտակ կարող էր անցանել 20 տարու մէջ միայն: Մորանից բացայայտ է, որ լըսը մի սեկունդի մէջ անցանում է 41,100 մղան և թէ նորա արագութիւնը 625,000 անգամ զերաղանց է այն արագութենից, որով

գնտակը դուրս է թողում թնդանոթի փողովակից, այնպէս որ և այս սկզբնական արագութենովը մի շարքով ժամանակի կարճու էր թնդանոթի գնտակը, որ անցանէր այն ճանապարհը, որ լոյսը անցանում մի սեկունդի մէջ :

Ըստ թէ ինչ հրաշալի արագութենով տարածվում է կլերարական հոսանքները, այդ բանին ևս տեղեկացել է այժմ անվատական աշխատող հանճարը կերպական ազգերի և գործ է դրել նորան մարդկային օգտի համար : Ելեքտրական հոսանքը, ինչպէս յայտնի է Ուեթստոն Ընդլիսցու անչափ սրամիտ ապացուցութենից, մի սեկունդի մէջ տասն անգամ կատարում այնքան ճանապարհ, ինչքան որ երկրի շրջագլանն է : Յիշատակութեան արժանի բան է որ նորերումս Պետերբուրգի կլերարամաղնեական տեղեկարար 4 ժամի մէջ ծանուցել է զէպ ի Էօնդոն Ըլէքսանդր Նիկոլայեւիչէ կոյսրի աժողո նստելը (1855 թուակ. Փետրվ. 18 ին). բայց Ըլէքսանդր Պալլովիչի մահու համբարը 30 տարի յառաջ հասած էր այն տեղ 21 օրի մէջ :

7. ԵՐՐՈՂՅԻ ԻՆՆՈՂՆԸ :

Ո՛վ որ, ուշադիր լինելով երկնքի գոյնին, այս լայն ու արձակ կամարակապը նկատած էր Եւրոպայի զանազան աշխարհների մէջ, հիւսիսումը և հարաւումը, ցած տափարակի և բարձր սարերի վերայ, նա պիտոյ է անպատճառ տեղեկացած լինի, որ հիւսիսումը և զէպ ի ցած, կապուտակ գոյնը օրի չէ երևում այնպէս պայծառ և աւելի խառն է սպիտակի հետ, քան թէ հարաւումը և զէպ ի վեր : Եւրոպայի միջնափայլումը, հիւսիսայեաց արևելեան Պերմանիայի մէջ անթուղպ երկինքը ունի որպէս թէ 4 Էօնդոն ծաղկի գոյնը, առաւել հարաւա-հայեաց Եւրոպայի մէջ նորա կապուտակութիւնը մտանում է կիանոսի (ցորենածաղկի) գունին, բայց հիւսիսումը զարձեալ աւելի պարզ է քան թէ միջնափայլումը, և աւելի խառն է սպիտակ գորշ գունի հետ : Արևելքից զէպ ի արևմուտք գնալով, գտանում ենք երկինքը զէպ ի արևմուտք աւելի թղպամած քան թէ արևելքումը, և օդը այս տեղ աւելի չոր է քան թէ այն տեղ, որովհետև օդաչու սուպերը Եւրոպայումը շարժվում են առաւելագուէն զէպ ի արևելք, լինուաւա հարաւային Եւրոպայումը պատում են բարձր զէպ ի վեր ջջուած սարերի վերայ, մասնաւորելով սոցա անպատելի պաշար անթիւ տղրի բներ սնուցանելու, կամ եթէ դժբա մի մասնով գալիս են և անցանում են ցած միջին Եւրոպայի վերայից, հանդիպում են արևմտեան Ռուսաստանումը և արևելեան Պալմանիայումը ցամաք արևելեան հողմերի, դատարկութեան այս տափարակ սահմանի մէջ, պատում են նորան խոնաւութենով և զարձուցանում են նորան մի մեծ մօրուտ աշխարհ, Ինչ-

պէս որ արեգակի բարձր կոչութիւնը, լուսի առատութիւնը և գոյ-
ների բազմազանութիւնը առաւելանումն սկսանելով աւելի հիւսիս
հասնաց մասերը մինչև աւելի հարաւահասնաց կիսակողմերի վերջը,
նոյնպէս ևս միջակային տարեկան ջերմութիւնը, և ջերմ եղանակի
աւելի երկար տևողութիւնը առաւելանում հիւսիսից դեպի հարաւ:
Արևելեան Եւրոպան այնքան աւելի ջուր է, ինչքան աւելի մտ էր
Եսիայի սահմանին. և այսպէս տեսանումն էր, որ դանազան սահման-
ների արևմտեան Եւրոպայումը գիտեղզիւմ լինելով մի և նոյն լայնու-
թեան տակ, ինչպէս արևելեան Եւրոպայի սահմաներ, ունին աւելի
մեղմ եղանակ քան թէ սորա:

Եթէ բնները ջերմութեան տարբերութիւնը որի զանազան ժ-
ամանակներումը, ապա կը տեսնենք որ Եւրոպայի մէջ **Մինչև 2-րդ**
Շառլ Գլուխ լինում մտաւորապէս 5 ժամն առաւտուն (մտնան
միջոցին, ըստ որում օրերը աւելի կարճ էին, լինում աւելի յետոյ,
բայց ամառան միջոցին, երբ որ նորա աւելի երկար էին, աւելի վաղ)
այսինքն արևաբացից մի փոքր յառաջ: **Այնուհետև 3-րդ Շառլ**
Ժամանակներ 2 և 3 ժամի մէջ կէս օրից յետոյ, Արևմե Ե-
րոպայի Գլուխներ 2 և 3 ժամի մէջ կէս օրից յետոյ, Արևմե Ե-
րոպայի Գլուխներ 2 և 3 ժամի մէջ, սկսեալ մի փոքր յառաջ արևածագից, խոսելով մի-
ջակայէս, առաւելանում ինն կամ տասն ժամ, և կէս օրից յետոյ
հասանելով իւր ամենավերին առօրեանին, դարձեալ նուազում տասն
և չորս կամ տասն և հինգ ժամ, **Մինչև 4-րդ Շառլ** օրի հանդիպու-
մէ մտն 9 ժամն ճաշուց յառաջ և 8 ժամն երեկոյի: Եթէ նկա-
տենք **Գլուխներ 4 և 5-րդ Շառլ** ընթացքը, մտն գնելով օրիչ օրիչ ա-
միսներին, ապա տեսանումն էր, որ Եսիայի և Հոկտեմբեր ամիսները
ցուցանումն համարեալ թէ միջակային եղանակը բոլոր տարու, և տ-
մենասաստիկ ջուրը լինում Եսիայի տաշին օրերումը: Բինչև
Փետրվարի մէջը բարձրանում ջերմութիւնը նուազապէս, յետոյ այն
սահմաններումը, որոնց վերայ արևմտեան Եսիայի ջամբ ու սան
արևմտեան հողմերը շունին ունեն աղղկելութիւն, անդադար անում
ջերմութիւնը բաւական սաստիկ մինչև Մայիսի վերջը, և սկսեալ այս
ժամանակից նուազ էր ջերմութեան ամենօրեայութիւնը մինչև Եսիայի
և Օգոստոսի ներսը: Արևելեան, Եսիայի աղղկելութեան տակ եղած
Եւրոպայի մէջ, զոր օրինակ Մոսկովայումը և Պետերբուրգումը, ջեր-
մութիւնը սկսեալ Փետրվարի վերջից, դարձեալ նուազում յանկարծ,
և մինչև այն սաստիկան, որ Մարտի առաջին օրերի ջրտուութիւնը հա-
սանում Եսիայի սկզբի ջրտուութեանը, այն երբեմն և գերազանցու-
մէ սորան: Բայց սորանից յետոյ կրկին անդապէս զորանում ջեր-
մութիւնը մինչև Եսիայի կէսը, և տեսնում մի ամիս ևս (թէպէտ ոչ
այնքան սաստիկութեամբ), մինչև սկսեալ Օգոստոսից, այնչափ ևս շու-

տով ծուազումէ ջերմութիւնը, ինչպէս զօրացած էր Մարտի առաջին օրերից: Ըվեղիայի Աւձօ քաղաքումը, ջերմութիւնը ահա Յուլիսի առաջին շաբաթումը հասանում ամենավերին առօրեային, սպա Յուլիսի եօթից անգգալի կերպով նուազում քիչը վերջին շաբաթը Յուլիսի, և սկսեալ այս տեղից, օրէ օր աւելի պակասում քիչը Յունիսի մէջը: Սորա հակառակ, Հոտմումը սկսանում նուազել ջերմութիւնը ոչ յառաջ քան թէ Օգոստոսի առաջին շաբաթից, Պետերբուրգումը, ամենասաստիկ ջերմութիւնը սովորաբար հանդիպում Եուլիսի 22 ին, Ստոքհոլմումը Եուլիսի 27 ին, Լոնդոնումը Օգոստոսի 1 ին, Գօթհարդի վերայ Օգոստոսի 6 ին:

Եւս ընդհանուր ծանօթարանութիւնքը, նայելով առանձին աշխարհներէ և տեղերի զանազան դրութեանը, տեսակ տեսակ կերպով եղանակաւորումն: Եւելի փոքր կամ թէ շատ բարձրութիւնը ծովի վերայ, մասաւորութիւնը կամ թէ հեռաւորութիւնը ծովից, որպէս և մերձաւորութիւնը սարերի, հարստութիւնը կամ աղքատութիւնը անտառի մասին, այլև զբացի աւազուստ սահմանները արժանի են ուշադրութեան այս բանի մէջ. բաց ի սորանից, երբ որ ընդհանրապէս խօսք է լինում Եւրոպայի կլիմայի մասին, չէ պիտոյ անտես սանել այն աղղեցութիւնը որ Եսիան արևելքի կողմից, եւրոպական հողը շրջապատող ծովերը հիւսիսից, հիւսիսահայեաց արևմտից, արևմտքից և հարաւից, այլև անհետաւոր Եփրեկան հարաւի կողմից ունին նորա վերայ:

Զբոլով աղքատ, անչէն, ջամաք ու ջուրս հիւսիսային Եսիան իւր բոլոր լայնութեանովը համակից է Եւրոպայի հետ, ուր սա արևելքումը բաղկացնում ամենամեծ կապակից մարմինը, Եուրա եղանակի միջոցին, երբ որ Վերկիայի խոշոր անտառաներից և խոպան դաշտավայրերից ստուգային արևելեան հողմը փչում է դէպ ի աւելի եւրոպական Ռուսաստանի դաշտերի վերայ, որ հիւսիսումը և հարաւումը անձառ են և միջին մասնումը միայն շատ բաղմարնակ և ընդհանրապէս չեն, այնուհետև արևելեան Եւրոպայի եղանակը շուտով հաւասարվում Երկրիայի եղանակին և տալիս է իւր ջրտուփիւնը դէպ ի արևմուտք զետեղված դաշտավայրերին որ ոչինչ սարերով պաշտպանած չեն արևելեան օղեղէն հասանքների երևից. և այդ ջրտուփիւնը այնքան սաստիկ է, ինչքան դաշտավայրերը մտ են Եւրոպայի արևելեան սահմանին: Մի շախար արագընթաց, սակաւօրեայ արևելեան հողմ փչելով Երկրիայի կողմից, չէ հասնում քիչը Քայտեան ծովի արևելեան եզրերը, ուրեմն և արևելքից շնչող ջուրս օղը այն էր միայն, որ յառաջուց գտանվումը եւրոպական Ռուսաստանի վերայ և այս պատճառով չէ այնքան ջուրս: Բայց եթէ արևելեան

Հողմը փոխվումէ մրրիկ և այգպէս յարձակումէ արևելեան Եւրոպայի դաշտերի վերայ և տեսմէ շատ օրեր, ապա Բարսեան աշխարհները, այն և հիւսիսահայեաց արևելեան Գերմանիան զգումեն նորա սառուցիչ շունչը, օրէ օր աւելի սաստիկ, և մինչև այն սաստիճան, որ պարզ օրերի և պայծառ անթուփայ ձմերային գիշերների մէջ, ծովերի և զետեերի սառչըր ճարձատում և որոտալով լծուգում, և կուրացուցիչ լուսափայլ կոշտ ձիւնը ոտքի և սոյլի տակ ձայլթելով շնջումէ։ Ապա մի գիշերի մէջ հաստանում և սառչըր մի քանի ձկու թաշափ և նորա մէջ բացած ծակերը մի օրի մէջ կրկին և զարնեալ սառչումեն այնպէս պինդ, որ կարելի է գնալ նոցա վերայից։ Այսպէս է ձմերան մէջ. սորա հակառակ, ամառան միջոցին նոյն ցամաք արևելեան Հողմը փչելով հեռի սահմաններից, բերում փերոյիչեալ աշխարհներին պայծառ օրեր, հալածում անպերը և յառաջացնում կրաշու թիւն, որ այնքան ևս տառապեցուցիչ է, ինչքան աւելի երկար զաղարու մեր ամառային արեգակը հորիզոնի վերայ։ Ինչ տեղ այս արևելեան Հողմը չէ կարող մտանել, այն տեղ ամենին այլ է և կիսման. Ունգարիա, Մորափա և Բոհեմիա պաշտպանվումեն նորա երեսից, հանդիպակաց սարերովը. ուրեմն և ձմերան միջոցին աւելի ջերմ են և ունին այնպիսի մեղմ կղանակ, որ ողկուղենին կարող է աճել այն տեղ։ Արևելեան Շվեդիան տառում և այդ Հողմը աւելի խոնաւացած և մեղմացած, պատճառ որ նա անցանումըր միջանկեալ արևելեան ծովի վերայից, Կորվեգիայի արևմտեան ծովերըրը պաշտպանվումեն հանդիպակաց լեռնադաշտակներովը, և սակաւ չէ պատահում, որ Բերգընի և Քրիստիանիայի սահմաններումը լաց է ջուրը, երբ որ հիւսիսահայեաց արևելեան Գերմանիայի մէջ կարելի էր հողաթափով սահել տառուցի վերայ։

Ամենին այլօրինակ է Աֆրիկայի արևմտեան Եւրոպայի երկը հարաւային կիսակղզիների վերայ. Աֆրիկայի ահագին անջուր և անտունկ անապատների մէջ, որ զբած են արեգակի ուղղահայեաց ճառագայթների տակ, գոյանում մի այլիչ ցամաք ջերմութիւն որ հոսելով դէպի հիւսիս, թէպէտ մի փոքր մեղմանում և խոնաւանում միջերկրական ծովի ներգործութենով, այդու ամենայնիւ, մանաւանդ թէ վերոյիչեալ աշխարհների առաւել հարաւահայեաց մասներումը, այնչափ անտանելի տօթաբեր է, որ բոլոր արարածըր գորանով հալու մաշ են լինում։ Սպանիայի մէջ այս տօթագին Հողմը ասվում Սոլանո և Մեդինա, Իտալիայի մէջ Սիլովկո կամ Սիրովկո. Եթէ նա լինում էրկարատե, ապա խոտերը և ծառի տերեւները թառամումեն և ցամաքումեն այնպէս, որ կարելի է տրորել նորանց մասերի մէջ։ Փայտաչէնըր թուլանումեն և ցուցանումեն լայնարաց ձեղքուածներ,

որ այն միջոցին, երբ զադարել էր հողմը, զարձեալ փակվումեն. Գարդը թուլանալով, անընդունակ ամենայն մարմնաւոր, այն և իմացական աշխատութեան, զադարեցնումէ իւր գործողութիւնը: Սիրովից հողմի աղղեցութիւնը դգալի է մինչև Ալպեան սարերի ոտքը, թէպէտ առաւել բարեխառնած. նոյն իսկ Ալպեան սարերի հիւսիսակողմումը հանդիպումէ նա երբեմն որպէս գաղջ օդի հոսանք, զիսն անունով: Բարի էր միջերկրական ծովի մտ ընակողներին, որ այս հողմը չէ փչում յաճախ, և ծովի հիւսիսային հողմը այն տեղ առաւել սովորականն էր. պատճառ, հարաւային հողմը միջերկրական ծովի վերայ փչումէ միայն մի երրորդաչափ ($\frac{1}{3}$) այնքան, ինչքան հիւսիսային հողմը, այսինքն, 33 օր, բայց սա 106 օր տարու մէջ, արեւմտեան հողմը 50 օր և հիւսիսակղս արեւմտեան հողմը 26 օր:

Ատլանտեան ովկիանոսի հոսանքը, որ հիւսիսային Ամերիկայի արեւելեան կղերքից խաղալով դէպ ի արեւելք առ փոքր փոքր զօրանումէ լայնութեամբ և նուազումէ արագութեամբ, զարձուցանելով իւր ընթացքը դէպ ի Եւրոպայի արեւմտեան, բազմօրինակարար պատաստած ծովեղերեւայքը, գարնան և ամառան միջոցին թռչլ չէ տալիս, որ հիւսիսային լեռնական ծովից դէպ ի հարաւ լողացող սառցասարերը և սառցակոտորքը մտնելային Եւրոպայի կղերքին, և այդպէս պաշտպանումէ Եւրոպան այն սառնութեան կրեւից որ յառաջացնալու էին այդ սառցեղէն մարմինքը, քանի այդ. այս հոսանքը հարաւային լայնութենից բերումէ ջերմ ջրաշեղջը դէպ ի մեր մտակալքը և դորանով բարեխառնումէ կղանակը, նոյն սառլանտեան ովկիանոսը այդպէս օգտակար լինելով, ունի զարձեալ և փնասակար աղղեցութիւն. պատճառ, գարնան միջոցին, երբ միջին Եւրոպայի մակերևոյթը ջերմացած է օրէ օր աւելի աղղողական արեգակի ճառագայթմերով և տնկական կենդանութիւնը նորոգվել է վերստին, ովկիանոսը իւր ձմեռնային կղանակից չը լինելով դեռևս ամենեւին աղառ, նորա վերայ եղած ցուրտ օդը փչումէ միջին Եւրոպայի տախարակ ծովեղերեւայ աչխարհներէ վերայ, զոր օրինակ հիւսիսային Ֆրանսիայի և հիւսիսահայեաց արեւմտեան Գերմանիայի վերայ. այս պատճառով, Ապրիլի, այն և Մայիսի բաւական ջերմ օրերի քամակից հետևումէ յաճախ զգալի գիշային ցուրտ, արեւմտեան հողմերից գոյացած կղանակ, որ սաստիկ փոփոխական լինելով, շատ անգամ փնասակար է լինում և դեռահաս բուսականներին և ընակիւնների ստողութեանը, Մեծ Բրիտանիան և Իրլանդիան, որ ունին կատարեալ կղղիական կլիմա, այսինքն ոչ այնքան սառն և ոչ այնքան ջերմ, ինչպէս ցամաքահողը, աւելի նուազ գգումն այս փնասակար ներգործութիւնը:

Աթէ քննենք կղանակը, նայելով տարու ժամանակներին, ապա

կը գտանենք զանազանութիւն Եւրոպայի Հիւսիսի և Հարաւի մէջ և արեւելքի և արեւմարի մէջ. Առաւել եղերական հիւսիսը 60 երորդ լայնութեան աստիճանից զուրս, ունի միայն երկու տարեկան եղանակ, ձմեռն և ամառն, և առաւել Հարաւային բաժինների մասին կարելի է նոյնպէս ընդունել միայն երկու տարեկան եղանակ, ամառն և զարուն, որովհետեւ ձմեռը համարեալ թէ զարուն էր այս տեղ. Այս երկու բաժինների մէջ դրած առաւել մեծ աշխարհք ունի շորս տարեկան եղանակ, այսինքն զարուն, ամառն, աշուն և ձմեռն.

Չմերան միջոցին, որ այնքան առաւել երկարատեւ է, ինչքան առաւել բարձրանում էր դեպ ի հիւսիս, ցուցանում է Եւրոպան միատեսակ պատկեր միայն, այսինքն մեռելութեան պատկեր. Այս տեղ, խոր ձիւնի մէջ թաղած է արձակ դաշտավայրը. կարծրացած, այն շատ անգամ մինչև յատակը սառոյց են կորած ջրերը, եթէ չէին սղրա շատ խոր. և եթէ հողմը չէ թափում թոյլ ձիւն ամուր ձիւնի վերայ, ապա թագաւորում է մի անխոռով հանդարտութիւն արձակ անպատի վերայ. պատճառ, մի մասը այն շնչաւորների որ ամառան միջոցին կենդանացնում են աշխարհքը, ընկղմած է ձմեռնային քնի մէջ. թռչուններ հեռացած էին դեպ ի աւելի ջերմ աշխարհներ և բնակիչքը փակած նստում են իւրեանց խուղերի և տների մէջ, զուրս գնալով միայն, երբ որ հարկադրված էին. Չողաչափ խորութենով նրստած է կուրացուցիչ սպիտակափայլ և պինդ կարծրացած ձիւնը որ գեանի լոյր անհարթութիւնքը հաւասարեցնում է, այնպէս որ կարելի է անցանել նորա վերայից առանց հետք թողլու նորա վերայ. Ստորակաց արեգակը ունի մի կարմիր գոյն, և երբ որ մտանում է հորիզոնի տակ, ձիւնը և աստղները երկարածիզ գիշերների մէջ, այն և այն ժամանակը, երբ որ չը կար լուսնակ և հիւսիսային լոյսը չէր կարմրաներկում երկինքը, տարածում են այնպիսի լուսափայլութիւն, որ կարելի էր մտածել թէ առաւօտեան արշալոյս է, և հնար էր որոշել առարկայք բաւական մեծ հեռաւորութենով, այն և կարգաւ խոշոր տատերով գրած բան. Գիշին Եւրոպայի հիւսիսային մասումը նոյնպէս թանձր ձիւնով պատած է բնութիւնը, և անտերեւ սպիտակարուն բնուրայքը, բարձրադէղ ձիւնով ծածկած ասղածաւերը և ձիւնեղէն և սառուցային բիւրեղներով փայլփայլուն բուխնիքը և կաղնիքը և միւս տերեւազուրկ կանաչարեր ծառեր զուրս են բարձրանում ձիւնեղէն տափարակի վերայ, որ ծածկել էր ամենայն ցած թուփեր և մացառներ. Այսինքնի գաղանքը զուրս են գալիս թանձրաբխ անտառներից և մտանում են մարդկային բնակարաններին, պարխապների և ցանկերի վերայով, որ շատ անգամ թաղած էին ձիւնի տակ, նապաստակները մտանում են այգիների մէջ, ձիւնի տակին ծածկած կա-

ղամբների հետքը որոնելով. աղուէաները և գայլերը թափառումն գիւղերի շորս կողմը, զարան գործելով հաւերին և ընտանի անասուններին: Ագռաւները ծառերի և շինութիւնների վերայից սպասելով նայուման զէպ ի ցած, կերակրի վերայ, ծիտերը և ճնճղուկները աների և ախոռների ամենեկն մտակալքումը, փողոցների և ջերմաշունչ աղբիւսների մէջ որոնումն ուտելիք: Արարազայն սպիտակ ծխասիւններ ուղղահայեաց բարձրանումն ծխահաններից զէպ ի տղը և մարդու շունչը գորշ ծուխի պէս բաց է փչում նորա երեսից, կամ թէ որպէս եղեանն նստումէ մագլերի և գլխի ծածկոցի վերայ: Աճերը և զետերը, որ ամառան միջոցին բաժանումն միմեանցից նոցա եղբրների բնակիչքը, ծածկած են պնդպիսի հաստ սառուցով, որ ծանրաբեռն սահնակներ և սայլեր սպահով անցանումն նոցա վերայից, և գոքապն միջոցին կացուցանումն պատուական ճանապարհներ այս աշխարհների համար որ պնդան աղքատ էին շինած ճանապարհներով:

Միջին Եւրոպայի հարաւային բաժինումը, սառնաշունչ արեւելեան հողմերի երեսից պահպանված աշխարհների մէջ գալիս է նոյնպէս ձիւն, որ սարերի վերայ հասանումէր բաւական մեծ բարձրութեան, բայց տափարակ և խոր տեղերումը շէր երկարատեւ: Երանրաշարժ ջրերը միայն ծածկվումն սառուցով, թէպէտ կարճ ժամանակ, ձիւնը հալվումէ յաճախ և վերադառնումէ կրկին. եթէ հալողական եղանակից յետոյ յանկարծ պատահումէ ցուրտ, սպա ձիւնի երեսը ծածկվումէ սառուցով, որ սալումէ լպրծուն սառոյց, բայց շուտով անհետանումէ, միւսանդամ հանդիպելով հալողական եղանակ կամ թէ կրկին ձիւն գալով:

Հարաւային Եւրոպայի մէջ բարձր սարերը միայն ծածկվումն ձիւնով, և ջրերը աւելի հիւսիսային և բարձր չիբ սահմաններումը սակաւ օրերով ծածկվումն բարակ սառուցով: Առաւել Հարաւային և ցածադիր կողմերումը ձիւնը և սառոյցը անձանօթ են բնակիչներին: Սոցա ձմեռը այնպէս է, ինչպէս միջին Եւրոպայի Ալպիէ և Փայիս ամիսները, որովհետեւ շատ տունկեր այն տեղ կանաչ են և ծառերի մի մեծ մասը ոչ ամենեկն կորուսանումէ իւր կանաչը: Տեղափոխական թռչունքը որ ամառան միջոցին բուժարօրումն հիւսիսային և միջին Եւրոպայի մէջ, մեծ մեծ բազմութեանով գալիս են այս տեղ, ձմեռն անցուցանելու և սպասելու համար, մինչև ջերմ եղանակի վերադարձը. և երբ որ եղաւ սա, նորա տա սակաւ սակաւ տեղափոխումն զէպ ի հիւսիս, բոլոր ամառը այն տեղ անցուցանելու և բազմանալու համար: Միջին Եւրոպայի մէջ բուժարօրված տեղափոխական թռչուններից սակաւները միայն ամենեկն հրաժարվումն Եւրոպայից, միջերկրական ծալի վերայից թռչելով և անցանելով զէպ ի Աֆրի-

կա, զոր օրինակ մի քանի ծիծեռնակի տեսակներ, արագիլներ և կուռնկներ, կուռնկները շատ անգամ բոլոր ձմեռը մնում են հարաւային Ապա- նիայումը, նոյնպէս և սոխակները. բայց Պիրոլ թռչունը ճանապարհորդում է մինչև Հնդկաստան: Մեծ Բրիտանիան և Իրլանդիան, Եւրոպայից բաժանված և ծովով շրջապատած, ունին բարեխառն ձմեռ, այնպէս որ նոցա ցած սահմաններումը, նոյն իսկ ձմեռան միջոցին, անասունը կարող է գիմանալ բաց օդին և արածել դուրսումը: Չին գալիս է այն տեղ փոքր և միշտ կարճ միջոցով միայն:

Էւրոպայի մեջ այնքան ևս երկարատե է ձմեռը, ինչքան առաւել զեղ ի հիւսիսահայեաց արևելք գրած էին աշխարհները, և այնքան աւելի սաղաստե, ինչքան աւելի հարաւահայեաց էին նորա: Առաւել հեռաւոր հիւսիսումը սկսանում է կատարել ձմեռը ահա Հոկտեմբերի սկզբումը, Աւլեո և Պետերբուրգ քաղաքների մեջ Հոկտեմբերի վերջումը, և տևում է մինչև Մայիս ամսի մեջը: Ստորհօլմում սկսանում է ձմեռը ոչ յստաջ քան թէ Նոյեմբերի կեսին և տևում է մինչև Մարտի վերջը:

Ինուժեան յանկարծ յեղափոխութիւնը գարնան ժամանակին անձանօթ է Եւրոպայի հարաւային աշխարհներին, բոս որում նոցա ոչ մի ժամանակ պակաս չեն կանաչ ծառեր և դաշտեր, և նորա շունին իւրեանց աչքի առաջն քնած բնութեան երկարածիք ձմեռնային հանդիտար: Ինչքան աւելի բարձրանումս զեղ ի հիւսիս, այնքան ևս յանկարծ դուրս է երևում գարունը, և առաւել հիւսիսային աշխարհներումը այնպէս շուտով, որ մի քանի օրի մեջ ձիւնապատ սահմանըրը ասես թէ մի հրաշագործ գորութեանով կանաչապատ ու ծաղկապատ դարգարումեն, միջատների բազմութիւնըրը զոյանումեն և աճումեն, և տեղափոխված թռչունըրը վերադառնումեն տարմովին, Բայց ծաղկելու և հնձելու ժամանակի մեջ կայ մի փոքրիկ միջոց. Երկար ու ձիգ ամառնային օրերի մեջ, որ իւրեանց երկարատևութեանով տառապեցուցիչ են և շուտացնումեն բուսականների աճեցողութիւնը, այնպէս ջերմանում է օդը, որ և կարծասն գիշերների մեջ, ուր երբէք չէր միժնանում ամենևին, չէ հոգնում այնպէս, ինչպէս հարաւային Եւրոպայի մեջ. այս պատճառով Իտալիայումը արեգակից յստաջ աւելի հով է երևում քան թէ միջին Աուսաստանումը. արդարև այս տեղ աւելի ակտիւթեանամբ կարելի է անցուցանել գիշերը արձակ օրի մեջ, քան թէ այն տեղ: Միջին Աուսաստանի արևելեան մասումը, ուր ցամաք Սիբերիան մտն է, և ծովը հեռի, այնքան անտանելի է լինում չոր ջերմութիւնը ամառան մեջ, ինչպէս առաւել հարաւային Եւրոպայումը, և այն տեղ նոյնպէս, ինչպէս այս տեղ կեսօրի միջոցին դադարումեն աշխատելուց և հանգըստանումեն:

Ընդդարձարձ կերպով, ինչպէս զարուհը հիւսիսումը սկսանում ասելի յետոյ, քան թէ հարաւակողմումը, նոյնպէս աշունը սկսանում է այն տեղ ասելի վաղ և շոյտ, և տևում ասելի կարճ ժամանակ. Եւրոպայ ամառը միջին Եւրոպայի մէջ յիշեցնում զեռ ևս անցած ամառան քաղցր օրերը: Պտուղները հասունացած լինելով և տերևները զեղնացած, նուազում է միջատների բազմութիւնը, և թափառական թռչուններ որ սնանում էին նոցանից, տեղափոխում են զեղ ի հարաւ: Ծառերի ծածկոցը վայր է թափվում, սառն մրրիկները շարժում են տերևազուրկ ծառերի զատարկ ճիւղերը, մինչև ձիւնը և սառոյցը վերայ հասանելով ծանուցանում են ձմեռան ներկայութիւնը:

7. Հիւսիսային ծառերը երբի վերայ:

Սկսական է մարդուն սիրել հսկայաձև բաներ. վաղուց ահա ջանագիր է եղած նա ասելի մեծ տիեզերական մարմինքը որոշել փոքրիկներից. հաղարար փտանգների միջով նորա փառուն հողին զրդել է նորան որոնել և գտանել ամենաբարձր սարերը երկրի վերայ, և նա, որպէս թէ չը կամենալով յետ մնալ բնութեան մեծագործութեններից, կառուցել է իւր համար բարբեր և շինուածներ որ վեր սլանալով զեղ ի երկինք, այսօր ևս ցուցանում են նոյն մարդկային համարձակութիւնը որ միանգամ խորին հնութեան օրերումը պատճառ է տուել նորան յանձն առնուլ Բարելոնի աշտարակաշինութիւնը: Միտ զնելով մարդու այս ընդհանուր բնաւորութեանը, կարճանալի է, որ մանուկ ազգերը իւրեանց երգերը, վիպասանութիւնքը և առասպելքը հիւսել են հսկայ մարդերով և անսոյփ մեծ կերպարանքներով:

Իսկ երկրորդ յատկացուցիչ նշանը մարդկային բնաւորութեան այն է, որ մարդը ասելի մեծ սէր ունի հսկայաձև ծառերի քան թէ հսկայաձև սարերի և շնչաօրների հետ: Շնչաօրի բնութիւնը է շարժականութիւն. հսկայաձևութիւնը շնչաօրների մէջ պատճառ է տալիս մտածելու թէ պղպիսի կենդանիք պիտոյ է լինելին ծանրաչարժ և անաջողակ: Իսկ հսկայամարմին տունկերը լցուցանում են մեր սիրտը այսօր ևս երկիւղած պատկառանքով. իմացականութիւնը նկատելով պոչ տունկերը, ակամայ կամքով հաշվում է համարում թէ ինչքան ժամանակ հարկաւոր էր պղպիսի մեծութիւն և պղպիսի ահագին մարմին զոյսնելու համար և համեմատում նորանց մարդու կարճատև կեանքի հետ և կենդանական աշխարհի սակաւակեցութեան հետ առհասարակ: Նկատելով հսկայաձև սարերը, այսպէս ուշագիր է մարդը, որովհետև նա քարանձախ մէջ տեսանում է միայն ստոսած ու կապածի և անփոփոխականի սկզբնափայլ, բայց բուսականը որպէս օրգանական կազմած ազգակից է նորա յատուկ բնութեանը:

Այս երկիւղած պատկառանքը, որ ունի մարդս հսկայանէ արն-
կական կերպարանքներէից, չէ թողել նոյնպէս, որ կործանիչ կայինը
մտանայ նախնի ժամանակներէ այս կամ այն փառաւոր յիշատակա-
րանին, այդ կայինը որ այլ տեղերում յիմար մարդու ձեռքին բնա-
ջինջ է արել երկրի երեսից այս կամ այն հսկայ անտառը, Գլխու-
թիւնը աշխատել է ժամանակագրաբար հաւաքել այս հին յիշատա-
կարանները և բոլորել նոցանից մի հաս աշխարհագրական պատկեր:

Ըստեւէ Հին բուսական յիշատակարանը երկրի վերայ է Կ-դի-
ն-դի ծառը (*Adansonia digitata*) կամ թէ Բաօրար ծառը, ըստ որում նո-
րա պտուղը Եթովպոյումը ասումն բաօրար, բայց ծառը Սենեգալի
մէջ ասումն Գուլի, պտուղը Բուլի, և Պետերս Ծանապարհօրդի վկայ-
ելովք, բոլոր ծառը Աֆրիկայի արևելեան եզրումը կոչումն Մուլա-
փա: Այդ, մարդու թմաթի պէս տերևաւորված ծառի հայրենիքը է
Աֆրիկա, արևադարձների մէջ, գետեղերեւոյքը Սենեգալի, բոլոր ար-
ևմտեան եզրերը Աֆրիկայի սկսեալ Գամբիայից մինչև Բենինեան
թագաւորութիւնը, գետեղերը Քոնգոյի և Չայրիի, Տնկելով բու-
սուցանումն նորան Մադագասկարի և արևմտեան Հնդկաստանի մէջ:
Սա ամենաստուար ծառն է աշխարհի վերայ, որ սիրումն գէջ աւա-
զային յատակ, բայց առանց քարի, որովհետև փասսահարվելով թէ-
պէս շատ փոքր, այրվումն և աւերվումն:

Այս Բաօրար ծառի գլխաւոր բուներ, համեմատելով նորա հըս-
կայանէ տերևադարգ պսակաւորութեանը, մտումն ցած. գա հասանու-
մէ միայն մտա 10 մինչև 12 ոտնաչափ բարձրութեան, և այս տեղից
սկսանումն ոտները: Միջին ստոր բուսանումն ուղղորդ մինչև 60
ոտնաչափ բարձրութիւն, այնպէս որ բոլոր ծառի բարձրութիւնը կա-
ցուցանումն մտա 70 ոտնաչափ: Բայց կողմեական ոտները տարածվու-
մն միանգամայն 50—60 ոտնաչափ երկայնութենով դէպ ի ամենայն
կողմ, այնպէս որ նորա վերջապէս կացուցանումն մի գմբէթման պսակ,
որի լայնաչափը աւելի է քան թէ 160 ոտնաչափ, որ և աւելի նման
էր մի բոլոր անտառի քան թէ մի հաս ծառի: Գլխաւոր բուներ հա-
սանումն 34 ոտնաչափ հաստութեան: Այժմ պիտոյ է նկարագրել
մտքով այս հրաշալի պսակի մէջ մի անթիւ բաղմութիւն մտրտանէ
ծաղիկների որ հաստատած էին կախ կախ կոթների վերայ հինգ մեծա-
մեծ բոլորակ յետ թեքած ծաղկատերևներով, որոնց մէջ տեղումը կայ
մի հաստ ու կարծ սիւնիկ, որ էր թաղանթային հիւքը մտա 700 փո-
շեղէն անօթների որ միանալով կացուցանումն մի յետ թեքած հո-
գանեակ. պիտոյ է նկարագրել մտքով որպէս թէ այս փոքրիկ հո-
գանեակի միջից պարզվումը մի երկար գալարածոյ շիւղ և նորա ծայ-
րին 10 մինչև 14 աստղանէ զետեղված փոքրիկ սպիներ. յետոյ պէտք

է պատկերացնել մարտի Բաօրարի պտուղը որպէս մի գզում որ պիտայ է երկայնութենովը բաժանել 14 մասն, որոնց ամեն մինը պարունակում է 140 սերմն. ապա կարելի էր լիակատար բնորոշութիւն ստանալ այս բուսական հրաշքի մասին, որ գտնւում է Մագդալենեան կղզիների վերայ, Կանաչ սարսաւանդի մտակալումը, Սենեգալի գետեզումը, որպէս Աֆրիկայի բոլոր արևելեան եղրումը, Նուրիայի մէջ, Նիգրաձորումը և այլ ջերմ աշխարհների մէջ, ուր անկած էին նորան: Բունի փայտը թեպէս փափուկ է, բայց նայելով նորա հըսկայամարմին շրջապատին և բոլորակված պատկին, կարող է զիմանալ իւր վերայի ծանրութեանը առանց Քնաս կրելու մրրիկների երեսից, Գանս Գայարը ասած գիւղումը, Սենեգամրիայի մէջ, գտնւում է մի պղպիսի բուն, ժամանակի ձերութենովը զոգաւորված. աշխարհի սեւադեմ բնակիչը զարդարել են այդ ծակամուտքի դալար փայտը քանդակագործութենով, և բունի ներքը շինելով իւրեանց համար խորհրդատուն, կասարումն այն տեղ իւրեանց հասարակաց ժողովները: Այս ծառի մեծութեանը լիպպէս վերահասու լինելու համար, պիտայ է յաւելացնել միւս ևս թէ, նորա արմատը հողի տակին ունին նոյնպիսի ճիւղաւորութիւն, ինչպէս ծառի պակը, թէ գլխաւոր արմատը ուղղահայեաց ցած է իջանում հողի մէջ, ինչպէս գլխաւոր ստը բարձրանում է դէպ ի վեր, այլև արմատը 70 ոտնաչափ երկայնութենից առաւել են: Հաս ձեր բունը, ինչպէս պատմում է Պետերս ճանապարհորդը, հետ զհետ գտնանալով կորուսանումն իւրեանց պակը, այդու ամենայնիւ չեն զգարում աճել և ստուարանալ իւրեանց շրջապատովը: Այդպիսի էր այն ամենածեր անկական յիշատակարանը երկրի վերայ, որի առաւել հին բուներին տալիս են մի հասակ 5150—6000 տարի: Այս էր ահա բնութեան պատուականութիւնը, որ նա պորութեամբ անսպասելի, այսօր ևս ցուցանում է այն ծաղիկները, նոյն բնակչաւոր պտուղը, ինչպէս այն ժամանակին, երբ որ բնութիւնը գոյացրեց այդ տունը: Նոյն Բաօրար ծառի ազգատոհմից է Պանդի ծառը (*Bombax Ceiba* և *Bombax pentlandrum*) որ ասում է և աշուսանալ ծառ կամ բրդոտ փուշ, որ բուսանում էրկու շնչկաստանի մէջ, Այս ծառի տերեւը և ծաղիկը նման է Բաօրարին. պտուղը բերումն մի տեսակ բուրգ որ կարելի է մանել, որ և Չինեացիք պատրաստումն որպէս գրկու թուղթ: Նորա, թանկ փշով պատած բունը շատ անգամ լինում է այնպէս ստուար, որ հազիւ թէ 15 մարդ կարող էին գրկապատել նորան, և հասանում է մտ 75 ոտնաչափ բայնութեան, և 200 ոտնաչափ բարձրութեան: Սա համարում է թէ ոչ շատ ձեր, գունեայ առաւել ստուար ծառերից մինը, որի բունից կարելի է պատրաստել 4 հատ մակոյկ: *Bombax pentlandrum* ծառից Գուգո ճանապար-

Հորդը գտած է մինը 60 տարի հասակով, որի բունը ունէր 26 սունաչափ չրջապատ, և որի պսակը պարունակումէր 120 սունաչափ լայնութիւն, այնպէս որ այս ծառի հովանաւորութեան տակ Մագդալենեան Կան լուիզ գետաձորի մէջ կատարուեն վաճառահանգես:

Ընդհան ևս, ինչքան Բարբարը, հռչակուոր է Օրոտավայի հըսկայանէ վիշապածատը (Dracaena Draco) Տեներիֆա կղզումը, նշանուոր և հասակով և մեծութեամբ. բայ ի գորանից և դիրքը, ինչպէս ասումէ Լուսթրոլը, շատ պատուականներից մինն է: Եյս բնորներիչը, կրը որ 1799 թուակ. կընուումը Տեներիֆայի սարազլուիը, շափեց այդ ծառի բունը, արմատից շատ սունաչափ դէպ ի վեր, և գտաւ նորա չրջապատը 45 փարիզեան սունաչափ, բայց աւելի մտա դէպ ի գետին չափելով Ղեղբիս Բրանսիացին, գտաւ 74 սունաչափ: Կտուունտան վիզելելով, բունը բարձրանալով 10 սունաչափ, ունի զեռես 12 սունաչափ լայնութիւն: Ծառի բարձրութիւնը չէ շատ աւելի քան թէ 65 սունաչափ, Լուսթրոլին պատմած էին Օրոտավայի բնակիչը պյպլիս գրոյց, թէ Գուանիս ասած ժողովուրդը պահումէ այս հըսկայամարմին ծառը, թէ սա 1402 թուականին ահա նոյնքան ստուար և զոգաւորված էր ինչպէս այժմ, 15 կրորդ դարումը, ինչպէս պատմութիւն է լինում, պատարագ Ըն արած նորա զոգաւորութեան մէջ. իւր պսակի մի մասը կորցրեց նա մրրկի ներգործութեամբ 1819 թուակ. Յունիսի 21 ին, Նկարագրի մտքով մի բնասուլայի սպիտակ բուն քանի մի սունաչափ բարձրութեամբ, նորա կտուարի վերայ գրած մի պսակ ծովագոյն կանաչ, կրկար սուսերանէ փունջ կապած սերուներով. այս բունը նկարագրի մտքով որպէս մի փոքրիկ սաս կապակցած հարիւրաւոր նմանապիսի ստերի հետ, որ հաստատած էին մի մայր բունի վերայ, որի չրջապատը սահմանեցինք վերեւումը. սպա ունէր զու մի տեսութիւն Օրոտավայ փոքրիկ քաղաքի վիշապածատի մասին: Ենտոյ մտածիր զու, որ այս ծառը գտանվումը մի այդում սարերի մէջ. ուր ծագելումին մրտները, նարնջները, կիտրոնները, վարդները, մի աւազանի մտա կրկը ծեր նոճները և մի արմաւենի, որ տեսանելի էին ձորի ամենայն կողմից նայողին, բոլոր չրջակալը համարեա թէ վայրենի. սպա կը ստանալիր մի փոքրիկ լմրոնոզութիւն Օրոտավայեան վիշապածատի գեղեցիկ հայրենիքի մասին:

Ըյս վիշապածատի ազգակից Լալուէ կրկմաննայ (Aloe dichotoma) կամ կապարճատունը ծառը Բարի յոյսի սարաւանդի վերայ, արժանի է ուշագրութեան իւր ճիւղերի ընդարձակութեան մասին, Պատերսունը պատմումէ մի այդպիսի ծառի համար, որի ճիւղը 400 սունաչափ չրջապատ ունին:

Ըրժամաւորապէս մտանումն այս հսկայամարմին կերպարանը

ներին Արմաւենիքը. արգարե որպէս մի անտառ անտառի վերայ, ինչպէս գեղեցիկ խոտու մէջ Լուսնի զրոյսը, բարձրանում են նորա Արեւազարձի անտառների ամենաբարձր ծառերի վերայ և մատչելի են թեթեւասուն կապիկների և թռչնիկների համար միայն: Այդ արմաւենիքը իւրեանց մեծախառ բարձրութենով, դարձեալ իւրեանց բունների ախորժելի ներքութենով, որպէս և իւրեանց գեղեցիկ տերեւազարդ կատարներով միշտ եղած են բանաստեղծական պատկերների նիւթեր, Քղկահասակ փղոսկրական արմաւենու (*Phytelphas macrocarpa*) մտ, որի պտուղը տալիս է բուսական փղոսկրը, մեծախառնապէս նստած է մոմեղէն արմաւենին (*Ceraxylon Andicola*) 180—200 ոտնաչափ երկայնութենով, Արեւելեան Հնդկաստանի բոթանոց ծառին (*Calamus Rotang*), որ է սղանիական եղեգնատունկի մայրաբոյսը, տալիս են 300 ոտնաչափ բարձրութիւն որ համարեալ թէ հասանում էր Փարիզի զինուորական հիւանդանոցի գմբէթին: Խոտելով միջակապէս, կոկոսեան արմաւենին հասանում 60—80 ոտնաչափ բարձրութեան, բայց միջակ ստուարութիւնը կացուցանում 6—8 ձկրլիթ, և միջակային հասակը է 100 տարի: Առաւել ծերունի արմաւաբեր ծառը, Արարացոց համարելով, ուներ 2—300 տարու հասակ, Իսլլքի մտ բան չէ, որ ի զարբեր կոկոսենուն (*Cocos oleacea*) տալիս են 6—700 տարի հասակ:

9. Արտարկարպ. *Artocarpus*.

Հացատու ծառը այն սակաւաթիւ տունկերիցն է, որ մեր երկրի բուսական շատ բաժիններումը ծառայած են: Այսուալ Սուրաթից մինչև Փարսիկեան կղզիքը խողաղ աշխարհածովի մէջ, այսինքն 150 լայնութեան աստիճան, կամ թէ 2000 աշխարհագրական մղանից աւելի տարածութեամբ, հանդիպումներ նորան համարեալ թէ ամենայն ծովեզերեալքում և ամենայն կղզու վերայ. բայց թէ բնութիւնը ամենայն տեղ այս բոլոր սահմանի մէջ սկզբնաբար և ինքնօրէն բուսուցել է սորան, առանց մարդու զործակցութեան, այդ բանը չէ կարելի հաստատուել վկայութեամբ:

Վեղեցիկ է մշակագործութեամբ փոխած կերպարանքը հացատու ծառի, և բազմահոգեման է նորա լայնարձակ տերեւապսակը: Ոչ մի մրգաբեր ծառ Եւրոպայի հիւսիսումը, և ոչ մի ծառ մեր անտառների մէջ, բաց ի կաշնուցը և տիլիպիցը կարող չէ համեմատուիլ նորա հետ թէ հասակի շտիակցութենով և թէ կերպարանքի գեղեցկութենով. Հնդկական շագանակներն որ հետուից երևում էր թէ ունի մի փոքր նմանութիւն նորա հետ, շատ յետ է մնում նորանից բարեձեւութեան մասին: Նորա մեծ և լայն տերեւը, որպէս թզնու տերեւը, լինելով խոր ներս կտրած, վայելչապէս ձևաորոված է և ու-

նի ախորժեկի գոյն։ Յակաւ կը պատահէի, որ նորա բարձրութիւնը ան-
ցանկ 40 փարիզեան ոսնաչափից, որ մի գեղեցիկ միջասահման բար-
ձրութիւն էր ծառերի համար։

Ի՞նչ որ հացատու ծառը խաղաղ աշխարհածովի մէջ եղած կղզի-
արնակ ազգերին հարկաւոր և անհրաժարելի դարձաւ, նորա սկսեցին
գիտնական կերպով քննել նորա որպիսութիւնը։ Տահէյտայիք (Տա-
հէյտի կղզու բնակիչքը) նկատեցին, որ այս ազնիւ ծառը մտա այն ժա-
մանակին, երբ որ արեգակը պիտոյ է հիւսիսային կիսագնդից վերա-
դառնայ դէպ ի իւրեանց կիսագունդը և անցանէ հասարակածից, սկսա-
նում Գրեհամսորգիլ տերեւներով և պոկաւորգիլ մանուկ պտուղնե-
րով որ հասունանումն շոգեմեր. ամսին։ Այս ժամանակից մինչև
Ապրիլը, կամ թէ, ինչքան որ արեգակը մնումը հարաւային կիսա-
գնդումը, երբէք պակաս չէ նոցա դարբ հացեղէն պտուղ. կէս մի նոյն
ծառի և կէս մի այլ ծառերի վերայ, որոնց դրութիւնքը զանազան
էին, ժամանակ առ ժամանակ երևումն նոր պտուղներ և հետ գհտե-
հասունանումն մինչև Յուլիս և Օգոստոս ամիսների մէջ։ Սկսեալ
այս ամսից մինչև Նոյեմբերի սկիզբը, ամենեին չէ կարելի ձեռք բե-
րել այդ պտուղը։ Այն ժամանակի միջոցը, երբ պտուղքը հասանու-
մն ծառերի վերայ, որ և պարունակում Տ ամիս, ասումէ բնակիչ-
ների խօսքով Պա-Սլրու, այսինքն շացեղէն պողպարութեան միջոց։

Գ Էմս Կուկ աշխարհաշրջիկ ճանապարհորդի երկրորդ ուղևորու-
թիւնը աշխարհէ շոր կողմով, որին ընկերակից էր և Գորստեր Գեր-
մանացին, կարող է այս տեղ վկայութիւն տալ։ Այս երկու ճանա-
պարհորդքը երկու անգամ եկան Օտահիտի կղզին և սորա շրջակայ
կղզիքը. առաջին անգամը, Օգոստոսի կէսին, թէ հացեղէն պտուղը
և թէ ջերմ աշխարհի այլ մրգեղները շատ հազուադէպ էին այս
տեղ և չէր կարելի ձեռք բերել նորանց թէև այնպիսի ամենաթանգ
գնով որ քաղցր էր Տահէյտեան բնակիչների աչքումը։ Այս տարե-
կան եղանակումը, որ, թէպէտև արեգակը հետացած էր, այնու ա-
մենայնիւ չէր կարող ասվել ձմեռն, այլև չունէր զորաւոր ջերմու-
թեան պակասութիւն, մանուկ հացեղէն պտուղը երևումը ճիւղերի
ամենապիւրն ծայրերումը ծածկած իւր ծաղկապատեհի մէջ։ Էին տե-
րևը, որ չէ թափում յառաջ քան թէ նորը բոլորովին կերպա-
բանվել էր, նստած էր դեռ ևս ծառերի վերայ և նորա գոյնը էր
աշնանային եղանակի թոյլ կանաչութիւն։ Երկրորդ անգամը, Տ ա-
միս միջոցից յետոյ, հասան նորա կղզուն Ապրիլ ամիս մէջ. այժմ
հացատու ծառի տերեւները ունէին իւրեանց զուարթ կանաչութիւնը և
բոլոր ճիւղերը խոնարհված էին իւրեանց պտուղների ծանրութեան
տակ. այժմ առատ առատ ժողովումէին այդ պտուղները դեռ ևս չհա-

սած կատարելապէս, որ և Հասուցանումին զհիշման կուտակելով միմեանց վերայ, և թողլով, որ ներսից ջերմանային: Եւս որպիսութեան մէջ անճաշակելի էին նորա. վասն որչ կորումն նոցա կոթերը և կեղեր, և մտաւ մատուցրը լցուցանումն մի խոր քարապատ փոսի մէջ, ծածկումն սորան տերևներով և քարերով և թողումն, որ այս բոլոր պաշարը քացախի, խմորը (մաշէյ) որ այսպիսի կերպով զգանում, կատարելապէս քացախած էր և ունի այնպիսի համ, ինչպէս Աւստրալիայի հացը (փումպրնիբլ), զեռ ևս չմխլած լիապէս: Փոսի մէջ փակած պաշարիցը ամենայն ժամանակ հանումն այնքան, ինչքան որ հարկաւոր էր մի հացթխութեան համար, շինումն զորանից բոնաչափ գունդեր, փաթկեթումն տերևների մէջ և թխումն ջերմացուցած քարերի վերայ: Եւ զպիսի կերպով պատրաստած հացը տեսնու մի քանի շարթի և մանաւանդ ծովային ճանապարհորդութեան մէջ, էր սովորական պաշարը, որ Օտաշէյտաշէր վեր են կանուս իւրեանց հետ: Պիտոյ է ծանօթարանել այս տեղ, որ այս խմորեղէն հացը այնպէս սիրելի է նոցա, որ նոցա մեծատուքը, սակաւ կը պատահի, որ հացիերութիւն ունենային առանց զորան. և այն երեք մինչև չորս ամիս միջոցումը, երբ զալար հացեղէն պտուղը ամենեին անկարելի է ձեռք բերել, բոլոր ժողովուրդը համարեալ թէ կերակրումէ այդ ուտելիքով միայն: Եւսանց թխելու, քացախած խմորը շատ ամիսներ մնում ամենեին անփոխփոխ:

Եւս հացեղէն պտուղների անհամեմատ աւելի շատ մասը ուտումէ զալար զալար. բայց և այս գործադրութեան համար, պիտոյ է որ շը լինին նորա հասունացած, այլ միայն կատարելապէս մեծացած: Նոցա կեղեր այս միջոցին զեռ ևս կանաչ էր, բայց միտ ձիւնի պէս ձերմակ, և ունէր փոխոր ալիւրային հիւստած: Եւսնեին հում չէ կարելի նորան ուտել, այլ պտուղը պիտոյ է կեղեկել, կամ բոլորովին կամ թէ կտոր կտոր փաթկեթել տերևների մէջ և ջերմ քարերի վերայ բովել կամ թխել, Թեպետև շատ փոքր է այս աշխատութիւնը, այնու ամենայն: Հետաւոր հարաւարեակ մարդը կը ցանկանար ազատ լինել զորանից. այդ պատճառով երազումը նա իր երանական զրախօսի մէջ մի հացեղէն պտուղ, որ առանց ամենայն պատրաստութեան և խեղճ ծառիցը կորած կարելի էր ուտել: Եւս գեղեցիկ առասպելը գուցէ թէ հարել է մի բարեխիտ պատական քահանայի հանձար իւր քաղցր կեցութեան բուպի մէջ, երբ որ աշխարհի սովորութեան պէս, նորա մի քանի ծառայքը փոխ առ փոխ լին ձեռքերով խցկումէին նորա բերանը այն ազնիւ հացի պտուղը, քաղցր Պիզանդը և պատուական խոզի խորովածը: Արեմն ցանկացած էր նա, որ և աշխատակները վայելին գոնեայ նոյն երանական հան-

գիտօր որ շատ քաղցր էր եղած իւր համար, Այսպիսի աչքով նայելով, նոյն իսկ ազգի անապաշտութեան մէջ հասկանալի էր նորա բնաստութեան սոցորական մեղմութիւնը և հեղահագոթութիւնը:

Բոված հացապտուղը ունի ամենեին այնպիսի համ, ինչպէս ցորենահացի մէջը, եթէ լինէր սա խառնած եփեալ ալիւրային կարտօֆիլի հետ: Մի փոքր անախորժ քաղցրութեան համ տալիս է նա երբեմն, մանաւանդ երբ որ պտուղը մտա էր հասանելուն, կամ թէ թխելուց յետոյ երկար մնացել էր կամ թէ հնացած էր: Առաւել համըը, բոլոր ընկերակից ճանապարհորդների կարծիքով, այն էր, որ ստացած էին Մարկիսիւան կղզիներում, թէպէտ զորանից պակաս չէր, ինչպէս վկայումէ Գորստերը, թահէյտեանը, Երբ որ պտուղը ամենեին հասունացած է, լինումէ զեղնազոյն, կակուղ և ներսիցը նման մի խիստի, որ ունէր անախորժ քաղցր համ և հոտ: Մարիանեան և Պիլիպպիեան կղզիների բնակիչքը ուսումնն այդպիսի հասունացածը և համ, բայց մեծ զգուշութեամբ, որովհետև դա դարձել էր այժմ անառողջ կերակուր, Հասունանալուց յտանջ քաղած և բոված, էր դա, անտարակոյս, մի շատ առողջարար նոյնպէս և սննդարար ուտելի: Բայց ինչքան աւելի հետանումին առաւել պարզ պատրաստութեանից, և ինչքան աւելի օտար հանգերձանք խառնումին հացի պտղի հետ, նորա ճաշակը համեմելու համար, այնքան ևս նրա ուաղ կարող էր շահաւէտ լինել մարդուս մարմնին: Երբ որ հացատու ծառը մի մարդկային հասակի երկարութենով պտուղ էր բերած, հասանումը և նորան ամենայն ապականացու բաների կատարածը. այսինքն սկսանումէր զօսանալ և ամենայն տեսակ արատաստութիւնք ցուցանումին նորա մտակալ կործանումը: Այնուհետև ոչինչ բանի պիտեան չէր նա, եթէ ոչ, նորա բունը կտրելու և զորժ անելու որ և իցէ անային կիրառութեան համար, կամ նորանից մի մակոյղ պատրաստելու, կամ թէ մի գերան շինելու թեթեւ գիւղական խուղի համար: Թէպէտև, անային կարասիք պատրաստելու համար, տահէյտեան հացածառը նախապատիւ էր քան թէ ոչ այնքան մշակագործեալ հացածառը Համեմարեր կղզիների մէջ, բայց նորա փափուկ զեղին փայտը չէ ընդունում ոչինչ որորկութիւն: Ամրոյնիմացիք, ինչպէս ասումն, և Տահէյտացիք սովոր են շինել նորանից թմբուկներ, որովհետև դորա փայտը բարեհնչիւն է և շատ փափուկ: Այլերնի հացատու ծառը, չէ կարելի առանց մշակութեան, ոչինչ այլ բանի համար գործ զնել, եթէ ոչ, վառելու համար:

Այն քերտուշ խորանաձև հիւսուածը որից ամենայն տարի գոյանումէ մի նոր փայտանիւթ բունի և սասերի համար, կամ թէ նոյն իսկ կեղևի տակին զրած սպիտակ պատեանը հացածառի ունի այնպի-

սի կազմած, որ Ցահէ յապցիք կարող են նորանից պատրաստել իւրեանց գգեսար: Այս խորհրդով անկումն նորա շատ մանուկ տունկեր խիտ առ խիտ միմեանց մտա փութիւր հողի վերայ և աշխատումն, ինչքան կարելի է, ուղղորդ և աւանց շտաւիղներէ գէպ ի վեր բարձրացնել նորան: Երկրորդ կամ երրորդ տարումը կտրումն նորանց և ստորակեղեկայ պատեանը անջատումն նոյն կերպով, պատրաստումն նորանից մուսակլներ նման կտաւ, ինչպէս սովորաբար պատրաստումն թղթանիւթ թիթեու ներքին պատենիցը:

Վաւելի նուազ պիտանութիւն ունին հացածառի տերևները. բաց ի այն օգտակարութենից որ հասարակաց էր նոցա և այլ ամենայն ծառատերևների, այսինքն, երբ որ նոքա վայր էին թափվում և փտումն, պարարտացնումն այն հողը որի վերայ բունը բերել էր այն տերևները. շատ անգամ նորանց կարատումն ծառիցը և գործ են ածում, փաթեթելով նոցա մէջ կերակուր կամ թէ թիսելով պտուղը: Հայկերութեան առաջին պատրաստութիւնը այսպէս էր. բազմաթիւ տերևներ սիտումն խոտով ծածկած գետնի վերայ, խեղչն նոցա վերայ դնումն ուտելիքը առանց սկաւառակի և անթի, որ հրածարելի էին: Մի այդպիսի տերև որ մին ու կէս ամաչափ երկայն էր, լինում ասպ և սեղանի անձնոցիկի փոխանակ և ունէր աւելի յարմարութիւն, ըստ որում կարելի էր վեր առնուլ մի նոր տերև, ինչքան յաճախ կամենայիր: Բուռոս և Համեմարեր կղզիների մէջ ծառայարհորդ Հնդկացիքը գիշերով կրակ են վառում վայրերի հացածառի տերևներից խրեանց բանակի շոր կողմը. այդ կրակը ճայթելով անպար, հալածուակը օձերը:

Զէնս Կուկը իրաւացի գովասանում և հացատու ծառի զարմանալի պտղաւետութիւնը: Եթէ մի մարդ իւր կեանքի մէջ անկած էր միայն 10 հացատու ծառ, ուրեմն, ինչպէս ասում աս Երևելի աշխարհաշրջիկ մարդը, կտտարել է իւր պարտականութիւնը գէպ ի իւր յատուկ զաւակը և իւր գալոց ազգը, այնպէս լիակատար և անթերի կերպով, ինչպէս այն խոշորեղանակ սակաւարեր երկրի բնակիչը որ իւր բոլոր կեանքի մէջ ձմեռնային ցրտի միջոցին վար ու ցանք անելով, ամառնային ջերմութեան մէջ հնձելով, ոչ թէ միայն իւր այժմեան անտեսութեան համար պատրաստում և հաց, այլև իւր զաւակների համար յետ է ձգում մի փոքր յտակ արծաթ:

10. ԿՐԻՆՊՈՒՆ ԶՈՐԸ ՈՐ ԱՆՆՈՒՄ Է ԿՆՆՆՈՒՆ:

Պարոս Քարբելլոյից վերագտնալով գէպ ի Երազուայի ձորերը, միսսանգամ իջեանեցիկը Բարբուլայի շաքարաբոյս անկազործութեան մէջ: Այս տեղ յիշատակի արժանի մի տունկ, որի մասին յաճախ

լաւձ էինք, ասուաւ երևելի բնաբնիչ Լուսինայր, որ ճանապարհորդել է նոր աշխարհի հասարակածի տակ գրած սահմաններումը, գրաւեց մեր բոլոր ուշադրութիւնը, Ծառը ասուաւ այս տեղ Վովածառ, l'arbre de la vache, բոս որում նորա հիւթը պարունակուաւ մի քաղցր, պատուական և սննդարար կաթն։ Աշխարհի սեւամորթ մարդիկը ըմպումն առատապէս այդ բուսականի հիւթը և համարումն նորան այնքան ևս ախորժ, որքան առողջարար սնունդ, Բաց որովհետև փորձը ուսուցանուաւ թէ բոլոր մինչև այժմ յայտնի եղած բուսական կաթնահիւթքը կծու, դառն, շատ կամ փոքր թունաւոր էին, այս պատճառով զարմանալի էր մի այդպիսի ծանօթատուութիւն, Այդու ամենայնի փորձը անտարակուսելի վկայութիւն տուեց ճանապարհորդներին, երբ որ սուրա կացած էին Բարբուլայի սահմանումը, թէ կովի ծառը առագայէս մի սննդատու կով է, և այս անունը կրուաւ արժանապէս։ Պալը զը վակա, ինչպէս ասվուաւ և սպանիարէն, մի գեղեցիկ ծառ է ասեղախնձորենու կերպարանքով, ունի երկայնաձև, սրածայր, մածուցիկ և փոփոխակի ծակոտղ սերկներ, որ ստորին կողմից ունենին դուրս պրծած զուգահասաւար կողեր, մինչև 10 ձկոյթ երկայնութենով, ճանապարհորդների այն տեղ լինելու միջոցին, ծառը չուներ ծաղիկ։ Նոցա վկայելով, պատուը ունի փոքր միս և պարունակուաւ մի, երբեմն և երկու ընկոյղ, Եթէ կովածառի բունի մէջ արած էր մի բացուած, ապա դուրս էր բղխում առատապէս մի մածուցիկ, բուսական թանձր, ամենևին կաթնահամ, ախորժելի, բաշատնական հոտով համեմած մի բմպելի, Լուսինայրը ասուաւ, թէ ևս իմ ընկերների հետ այս համեղ կաթնից, որ մատուցին մեզ զդուքի սրուակներով, թէ երեկոյեան պահուն հանգստանալուց յառաջ և թէ առատուն նախաճաշիկ առնելու ժամանակը խմած եմ բուսական շատ, առանց զգալու մի միասակար ազդեցութիւն։ Դորա մի անյարմարութիւնը միայն, էր նորա սոսնձային յատկութիւնը։ Եւ աշխարհի սեւադէմ մարդիկը և ազատ մշակները որ աշխատումն այս տեղի անկագործութեան վերայ, ըմպումն նորան, թաթախելով նորա մէջ սմինդրի, մանօրի հաց և այլ, Արեւպա և Քասսովէ անունով հացեղէնք, Եւ կալուածի անտեւը հաստացնումը ինձ թէ մշակները յայտնապէս պարարտանումն այն միջոցին, երբ որ Պալը զը վակա ծառը աւելի առատ էր կաթնով։

Այժմ այս կաթը թողուիր արձակ օդի տակ, նորա երեսի վերայ զդայնուաւ մի տեսակ գեղնագոյն թելային, պանրեղէն զանգուած, որ մտնումը կենդանական նիւթին, Այս զանգուածը, եթէ նորան բաժանելիք միւս ջրալի կաթնից, էր ձգական, համարեա թէ որպէս ելաստիկական խէժ. բայց զա յետոյ սկսանուաւ նեխել որպէս սուրն-

ձային հիւժ, ժողովուրդը ասում է պանիր այն, ոչազդու թեմամբ յառաջացած թանձրանիւթին, որ 5 կամ 6 օրի մէջ թթւում է:

Այս հրաշալի ծառը, որ մինչև այժմ մի հատիկ էր աշխարհի վերայ, ինչպէս երևում է, բնտանի է ծովեզերեայ Արդիլի բերան սարերի մէջ, մանաւանդ թէ Բարբուլայի և Մարտկոյրեան ծովափի մէջ տեղումը: Մի քանի բունք այդ ծառիցը կանգնած են նոյնպէս Սան Մարտէո գիւղի մտակայքումը, և Պարոն Բուզեմէլլիի վկայելով, նոյնպէս Քասուքագուս ձորի մէջ, երեքօրեայ ճանապարհով դէպ ի արևելեան կողմը Արարատի: Այս սկանաւոր բնաշինը գտած է այն կաթը նոյնպէս արտօքէի, ինչպէս մեր: Քասուքագուսի բնակիչքը ասում են նորան կաթնածառ. նորա հաստատումն, թէ տերևների գոյնիցը կարող են որոշել այն բունքը որ առաւել կաթնատու էին, ինչպէս հօլիւնները արտաքին նշաններից ճանաչում են մի բնափր կաթնատու կով: Մինչև այժմ, ոչինչ բնաքննիչ յիշատակութիւն չէ արած այս շատ զարմանալի ծառի մասին. որովհետև չը կարողացայ ես, ասում է Լուսինայի, ձեռք բերել այդ ծառի ծաղիկը, այս պատճառով զանց արեցի ընդունել նորան անկարանական կարգի մէջ, բայց կարծում է, որ նա պատկանում է Մապոտեան ծառերի կարգին: Արևելեան Հնդկաստանի ստորագրութեան մէջ, որի հեղինակը է Լորանդացի Ղէար (Lort), գտանվում է մի տեղ, որ, ինչպէս երևում է, յարակցութիւն ունի կովածառի հետ, Այն ծառերի մէջ, ասում նա, որ այս տեղ աճում են վայրենի բնութեան մէջ, ոմանք սպանիական հեղինակներ յիշատակում են մի քանի ծառեր որ բլիսեցնում են իրենանցից մի տեսակ կաթնեղէն հիւժ որ մածնում է և դառնում է ամուր, խեղճանան նիւթ և արձակում է իրանից արտօք հոտ: Գարձեալ միւս ծառեր, որ տալիս են հիւժ, որպէս մածուն զարձած կաթն որ անջնաս գործ է անվում որպէս կերակուր:

Իստոտվանեմ, ասում է Լուսինայի, որ այն շատ, յիշատակի արժանի, տեսիլներից որ հանդիպած են իմ ճանապարհորդութենների մէջ, շատ սակաւները այնպիսի կենդանի տպաւորութիւն են արած իմ վերայ, ինչպէս կովածառի տեսութիւնը:

Ամենայն բան որ յարակցութիւն ունի կաթնի հետ, ամենայն բան որ մտաւորութիւն ունի հաշտու բուսականների հետ, զարթեցնում է մեր մէջ սէր և գուժ որ ոչ թէ միայն այդ բնածին բաների արժանաւորութեան վերայ էին հիմնաւորված, այլ կապակից էին այլ տեսակ մտաւորական պատկերների և զգացութենների հետ: Անհնար է մէջ մտածել, թէ մարդկային սրգը կարող էր հաստատ մեալ առանց ալիւրային նիւթերի, առանց այն անդական հիւժին որ մայրենի սօփնքը պարունակում են իրենանց մէջ, որ և երկուսի եր-

կարտե սկարութեանը պատկանաւոր էր: Հացասու բուսականների Օսլյայնիթը (Amylum) որ կրօնական պաշտօնով մեծարած է շատ հին և նոր աղբիւրի մէջ, տեսած է բուսականների սերմերի մէջ և շատ անգամ գտանջում է նոյնպէս արմատների մէջ: Որպէս կերակուր գործածական կաթը երևում է մեղ միայն կենդանական կազմածից յառաջացած ծնունդ: Ահա այսպէս էին այն տպաւորութիւնքը որ մէք տառցած ենք մեր ամենականութի մանկութիւնից, և այս աղբիւրից էր յառաջանում այն զարմանքը որ զարմեցնում է մեր մէջ վերջիչեալ ծառի տեսութիւնք: Այս տեղ չը կան ոչինչ անտատների փատահեղ հոգնաւորութիւնք, ոչինչ ատառցուր գետերի մեծակայելու չ հասանք և ոչինչ, մշանջեւաւոր միւնով պատած սարեր որ շարժումէին մեր հոգին: Մի քանի կաթիլ բուսական հիւթ յիշեցնում է մեզ բնութեան ամենակարողութիւնք և արդաստարութիւնք: մի սպասած սարակողի վերայ ածում է մի ծառ որի տերեւերը ցամաք ու մածուցիկ են. նորա հասա փայտային արմատները դժուարութեամբ թափանցում են սպասածի մէջ. շատ ամիսներ տարու մէջ, ոչ մի զուարթացուցիչ անձրև չէ խնայացնում նորա տերեւքը. ոտները երևում են զսացած և ցամաքած, բայց եթէ ծակէիր այդ ծառի բուռը, սպա, ո՞վ զարմանք, բղետում նորանից մի մեղմ և անզարար կաթն: Արևածագի ժամանակին աւելի առատահաս է բուսական աղբիւրը. այնուհետև ամենայն կողմից գալիս են սեւամորթ բնակիչքը մեծ մեծ ամաններով, որ ժողովն կաթը, որ յետոյ գեղնանում և թանձրանում երեսի վերայ: Ոմանք գատարկում են ինքեանք խրեանց ամանները ծառերի տակին, միւսերը տանում են կաթը խրեանց զուակների համար: Այս տեղ կարծումս թէ տեսանում էիր անտեսութիւնք հոգիների որ բաժանումէին խրեանց ոչխարների կաթը:

Ահա այսպէս էին այն տպաւորութիւնքը որ կոխածառի տեսութիւնք թողում է ճանապարհորդի հոգու մէջ: Այժմ գիտութիւնք վերլուծում է այս կաթը, ցուցանում է նորա առանձին նիւթերը և բաղկացական մասունքքը: սոցանից շատերը որ շնչաւորներին սեփական էին կարծում, գտանջում են բուսական թագաւորութեան մէջ: Մի հասարակաց կապ գրկախառնում է բոլոր օրգանական բնութիւնք:

Ս' աղուց ահա, յառաջ քան թէ քիմիագործքը վերահասու էին եղած թէ կային փոքր ինչ մամղէն մասունքք ծաղիկ փոշու, տերեւների ողորկութեան, և մեր սալորի կամ խաղողի սպիտակ փոշեւորնէն մէջ, Անդեան սարերի բնակիչքը քվիտիու սահմանի մէջ պատրաստումէին ճրագ այն թանձր մտակեղևից որով պատած է Յերոքսիլոն անդիկոլա արմաւենու բուռը: Հաս տարի չէ, որ Աւրոպայումը վերահասու եղան, թէ պանթանիթը (Caseum) է պանթի արմատական

մասը նշեղէն կաթնի մէջ, բայց զարաւոր ժամանակներով արդէն Պէննզուելայի ծովեզերեայ սարերի մէջ մի ծառի կաթ և այս բուսական հիւթից գոյացած պանիրը համարվումէին առողջ կերակուր, Ինչ բանի վերայ է հիմնած այս օտարաւ ընթացքը մեր պետութեան յատուցողութեան մէջ: Ինչպէս կարողացաւ մի ազգ երկրի մի կիսագնդումը տեղեկանալ այն բանին, որ միւս կիսագնդումը այդքան ժամանակ ծածուկ էր մնացել բնայղծների սրամտութենից, թէպէտ զոքա սուրը էին հարցարնել բնութիւնը և շատ անգամ յայտնի կացուցանել նորա թագուն թագուն ընթացքը: Մորս պատճառը այն է, որ սակաւթիւ սկզբնական նիւթեր և զանազան կերպով զուգարված արմատական մասունք սխտած են շատ բուսական գերդաստանների մէջ, որ այս բնական գերդաստանների ազգերը և տեսակները անհասարակապէս բաժանած են շատարակածի զօտումը և ստան և բարեխառն գօտիների մէջ, որ այն ազգերը, որ կարաուութենից ստեղծած իւրեանց սնունդի առաւել մեծ մասը ստանումէին բուսական թագարութենից, սննդարար արմատական մասունք, ախրային և սնուցիչ նիւթեր յայնանգործումն ամենայն տեղ, ուր բնութիւնը այդպիսի նիւթեր դրած է բուսական հիւթերի, կեղևների, արմատների կամ պտուղների մէջ: Այս օրայն, որ հացատու բուսականները ցուցանումն ամենեկին անխառն և յստակ, մի կծու, այ՞ և թունաւոր հիւթի հետ միասրված գտնելու մէջ, Բարբա պիննատիֆիգայի և Կարտոֆիս մանիչի մէջ: Ամերիկայի վայրենարնակ մարդը, ինչպէս հարաւածովի կղզիների բնակիչքը, ուսել է քաղցրացնել այդ օրայն, մղելով և որոշելով նորան իւր հիւթից: Բուսական կաթնի և կաթնային մղածքի մէջ, անչափ սննդարար հիւթեր, ձուի սպիտակուցը, պանրանիւթը և շաքարը խառնած են ձգական խէժի և կծու և մնասկար մասների հետ, զոր օրինակ Մորֆինը և Բորուսեան թըթութիւնը (*Acidum Borussicum, acidum hydrocyanicum*), Այս խառնուածքը երևումն ոչ թէ անհասարակ սեռերի մէջ զանազան, այլ և սեռակների մէջ որ պատկանումէին նոյն սեռերին: Երբեմն Մորֆինը կամ թէ թմրեցուցիչ արմատական մասն էր, որ, զոր օրինակ, մի քանի, մեկտնի սեռին պատկանեալ բուսականների մէջ, բազիլացումն ստաւել զօրաւոր հիւթը բուսական կաթի մէջ: Երբեմն ձգական խէժը, զոր օրինակ Հեփէս և Քաստիլլոս բուսականների մէջ, և Երբեմն ձուի սպիտակուցը և պանրանիւթը, որպէս սեխածառի և կոփածոսի մէջ: Ահասարակ կաթնահիւթ բուսականները պատկանումն մանուսնդ թէ Եւրօրրիաների, Ուսիցիաների և Ազոցիանեաների գերդաստանին. և որովհետև երկրագնդի վերայ բաժանված բուսական կազմածները հետաքննելով խնայած են, որ այս երկը գերդաստանքը Արևադար-

ձերի տառելի խոր սահմաններումը հանդիպում են բազմաթիւ տեսակներով, ապա կարելի է դորանից կզբախցուցանել թէ մի շատ դորաւոր եղանակ ձեւնաւու է կաթնահիւթի պատրաստութեանը, ձգական խեղճի, ձուի սպիտակուցի և պանրանիւթի կերպարարութեանը: Պայլ զը Վակայի հիւթը անտարակոյս ցուցանում է բուսական կաթի մասին մի արժանի ու շաղրութեան օրինակ, ըստ որում նորա մէջ ոչինչ կծու և փնասակար անկակից նիւթ խառնած չէ ձուի սպիտակուցի, պանրանիւթի և ձգական խեղճի հետ: Բայց սակայն և Էյֆօրբիայի և Վակէպիասի սեռերի մէջ, որ այդքան ընդհանրապէս յայտնի են խրեանց կծու յատկութեններով, գտանված են արդէն այնպիսի տեսակներ, որոնց հիւթը մեղմ ու անփնաս է: Այսպիսիների շարքում են պանրեան կղզիների Թարայրա գուլջէ և Յէյլնի Աակէպիաս լաբաֆներա բուսականքը: Բուրման ճանապարհորդը պատմում է, թէ Յէյլն կղզու բնակիչքը, եթէ չունեն կտփի կաթ, գործ էին անում Աակէպիաս լաբաֆներայի կաթնահիւթը, և թէ սորա տերեւներովը եփում են այնպիսի կերակուրներ որ սովորաբար պատրաստվում են կենդանական կաթնով:

Եթէ սեխածառի, կոխածառի և Հեփէպի կաթնային հիւթերը համեմատելիք միմեանց հետ, ապա կը տեսանելիք մի զարմանալի նմանութիւն այն հիւթերի մէջ, ուր գերակշիռ էր պանրանիւթը, և այն հիւթերի մէջ, ուր գերակշիռ էր ձգական խեղճը: Բոլոր սպիտակ և նոր պատրաստած ձգական խեղճքը, որպէս և այն ջրախիտ (ջուր ներս չձողնող) վերարկուքը որ սպանիական Ամբրիկայումը յորինում են, երկու կտոր կտաւի մէջ անցուցանելով ձգական խեղճից շինած պարզուածքը, արտաշնչում են մի կենդանական զգուկի հետ:

Հացածառի պտուղը չէ իսկապէս հաց, և ոչ Պիզանգ ծառի պտուղը իւր հատունանալուց յառաջ, և ոչ ևս կոճաձե օսլայաւոր արմատըր Մանիօրի, Գիսկորեայի, Կոնիօրիօլու բատաստախ և Կարտոֆիլի: Սորա հակառակ, կոխածառի կաթը պարունակում է պանրանիւթ, ինչպէս սովորու անասունների կաթը: Բուսական կաթնի մէջ գտանվում է ձգական խեղճ և պանիր, և կենդանական կաթնի մէջ պանիր և իւղ, բայց երկուսի մէջ միասին, այսինքն բուսականի և կենդանականի մէջ երկու արմատական նիւթեր, ձուի սպիտակուց և իւղ, բայց և դանազան չափով զանազան տեսակ բուսականների և շնչաւորների մէջ: Գորա բուսականների մէջ, ըստ մեծի մասին, կաղակից են միւս փնասակար նիւթերի հետ որ գուցէ թէ կարող էին քիմիական հնարագործութենով բաժանվիլ նոցանից: Բուսական կաթը լինում է սերնդարար, եթէ չէր պարունակում ոչինչ կծու արմատական մասեր, այլ աւելի պանիր, քան թէ ձգական խեղճ: — Ոմանք կարծում են, թէ

կովածառի հիւժը չէ պարունակում ոչինչ պանրանիւթ, այլ այնքան շատ մտմ, որ սորա համար միայն արժան էր տնկել այդ ծառը. երկրորդ, նորա մէջ կային նրբաթելանիւթ, մի փոքր շաքար, մազնեղական աղ, և ջուր:

Արդարև, կովածառը ցուցանում է մեզ բնութեան անսահման բարերարութիւնը և առատութիւնը շերտ գօտու մջ. նա յիշեցնում է նոյնպէս այն պատճառքը, որ այս գեղեցիկ կլիմայի մէջ յաջողութիւն են տալիս մարդու ծուլութեանը և անհողութեանը. Գանգո Պարկ անգլիացի ճանապարհորդը ծանօթացրել է մեզ Բամբարրայի իւղածառի հետ. Ամբրիկան ցուցանում է մեզ կովածառը: Պլիանգը, Սազոյի ծառը, Գաուրիցիա տունկը, Օրենակոյի արմաւենիքը են հացատու ծառեր, ինչպէս հարաւածոյի կղզիների Բիմա բուսականը, Կրեպենտիայի և Ալեիթիսի պտուղները գործ են անում որպէս անօթեղէնք. արմաւարեր ծառերի ծաղկապտտեանքը և կեղևները տալիս են զգակներ և հանդերձներ առանց կարի: Բամբուսեան կղզեանարուծի կողերը կամ թէ մանուանդ ներսի միջապատերը սպասաւորում են որպէս սանդուղ և բազմօրինակաբար թեթեւացնում են խուղերի շինութիւնը, և տալիս են շինութեան նիւթ աթոռների, կարասիքների և այլ պիտոյքների համար, որոնցից բաղկանում էր վայրենարմաղ աղբերի բոլոր հարստութիւնը. Այդպիսի ծոխ, այդպիսի բազմազան բուսականներ աննշուցանող աշխարհի մէջ հարկաւոր էին զօրաւոր շարժառիթներ, որ կարողանային խթանել մարդը զէպ ի աշխատասիրութիւն, նորան զարթեցնել իւր դանդաղ հոգեղէն քնիցը և կերպարանագործել նորա հոգևոր կարողութիւնքը:

II. ՏՆՎՔԱՆՎՈՆ ԵՒ ԲՆՈՒՄՆԻՆՆԵՐ:

Տեկարանական աշխարհագրութիւնը քննում է տունկերը, միազնելով այն բանին, թէ ինչպէս նոքա բաժանված էին երկրի վերայ, և յատկապէս նայելով զանազան կլիմաներին և այի խառնուածին: Նա յայտնի է կաշուցանում մեր աշխին այն մեծ բուսական ծածկոցը որ երբեմն անօր և երբեմն խիտ հիւսած, բնութեան ձեւքով սիտած է այն խորհրդով, որ երկրային մարմնի մերկութիւնը ծածկէ և կենդանական կեանքին աննպաստ լինի միջապէս կամ անմիջապէս: Այլ և նկատում է նա տնկական թաղաւորութիւնը, ու շաղիբ լինելով բուսականների բնակարանին, սկսեալ սղացանցառ բարձրութեաններից որ անհետանում են սառնարանների մշանջենաւոր ձիւնի մջ, մինչև ծովի անդունդքը և երկրի խորքը, ուր ստորերկրեայ փոսերի մէջ բնակում են գաղանդողոյք (Cryptogamae) բուսականքը որ տակաւին այնքան անյայտ են ինչպէս այն ճճիները որ անանում են նոցանից, բուսա-

ւոր ծածկոցի վերին սահմանը դրած է կամ բարձր կամ թէ ցած, նայելով աշխարհագրական լայնութեանը, այսինքն, ինչքան բարձր զեպ ի վեր կամ խոր զեպ ի ցած էր իջանում ձիւնագիծը: Բայց ստորին սահմանը անձանօթ է, որովհետև աւելի հեշտ կարելի է սարերի վերայ ելանել քան թէ երկրի ներքը ցած իջանել:

Բայց անկարանական աշխարհագրութիւնը դասակարգում է բուսականքը ոչ թէ միայն ուշագիր լինելով սարերի բարձրութեանը և կլիմային, որոնց մէջ կային նորա, և ոչ թէ միայն օդի երբեմն սաստիկ և երբեմն թոյլ ճնշողութեանը, օդի խտնուածին, զիջութեանը և երկրաբան լարողութեանը, որոնց ազդեցութեան տակ կերպարանում են նորա. այլև որչառն էրկրային մարմնի անթիւ բուսականների մէջ երկու կարգեր որ խրեանց կեցութեան եղանակի մասին շատ հետի են միմեանցից:

1. Սմանք բուսականք ածուսնն $\text{A}^2\text{B}^2\text{C}^2$ և ցանուցիր, ինչպէս Եւրոպայումսը Յունուսում Դուրկամարա, Լիւիներս գիւրջիկա, Պոլիւզոնուս Բիստորա, Էնթերիկուս Լիլիազո, Կրատեզուս արիա, Վէյսիա պալուզոլա, Պոլիարիսիուս պիլիֆերուս, Չուկուս սարխարինուս, Ալաւարիս պիստիլլարիս և Եդարիկուս պրոցերուս. Երևագարձերի մէջ նոր ցամաքահողումսը Թեոփրաստա ամբրիկանա, Լիլիանթուս լոնգիֆոլիուս, Էնօֆէա, Յինքունայի սոսակէ շատ տեսակները և այլն:

2. Սիւս բուսականները ածուսնն $\text{A}^2\text{B}^2\text{C}^2\text{D}^2$ և միայն, մրջինների և միջուների պէս, ծածկուսնն ամբողջ սահմանների երես, այն անդից գուրս հալածելով բոլոր միւս տեսակ բուսականները, Յոջա կարգուսն են գեանածին ելակը (*Fragaria vesca*) մաջաուխտաը (*Erica vulgaris*) և կարի շատ միւս բուսականներ: Ընկերական բուսականները աւելի սակաւ հանդիպում են ջերմ աշխարհների քան թէ բարեխտուն և ցուրտ գոտիների մէջ, ուր և զոցա ածելը և տարածվելը, միատեսակ, և ոչ այնքան արտօնելի ու զեղեցիկ է կաշուցանում բուսականների տեսութիւնը: Ելլապէս է Երևագարձեան աշխարհների կերպարանքը, ուր թաղարուսնն առաջին տեսակ բուսականները, այսինքն միայնակապները: Օրենտոլիցի գետտիից մինչև Եմաջանեան մեծ գետի, Մարանտի և Աւրայալէի ափերը, մի տարիարակ որ բաղկացնում է 300 միջոնից աւելի, պատած է աշխարհը մի անընդհատ խիտ անտառով: Եթէ բաժանող գետերը չը լինէին խափան, ապա կապիկները որ այս կողմերի համարեա թէ միայնակ արտապատողքն էին, առանց սար կոխելու հոգի վերայ, կարող էին մի ճիւղից միւս ճիւղի վերայ թուշելով անցանել հիւսիսային կիսագնդից զեպ ի հարաւային կիսագնդը: Բայց այս անտառները չեն այնպէս ձանձրացուցիչ, որպէս մի հիւսիսային աշխարհի կալնու կամ եղևնու ծառաս-

տան ձանձրալի էր իւր տնուր միակերպութենով, Բաժնայն մասը զարգարած է այլ տեսակ ձևերով. այս տեղ, խիտ միմեանց մտ կանդանած են Պոլիտորիա, Բուխենու պէս տերևաւորված Միմոզը և մշտականաչ Մելատոսը, այն տեղ բարձր Ճիւղերի հետ զուգայտանջում են Յեղարպիներու, Վանիլը բուսականից շուրջանակի պատասխան թղեների, Լեցիթիսի տեսակներ և մակարդուն կամնոջ ճոխ ու առատ շեփեան: Աչ մի տունի չունի այս տեղ իշխանութիւն հարածելու միւսը:

Բաժնեին այլպէս են բաժանած բուսականքը Երևադարձեան աշխարհներումը որ սահմանակից են Լուիզիանային և Կոր Մեխիկոյին: Հիւսիսային լայնութեան տան և ետմենորոզ և քսան երկու երորդ աստիճանի մէջ կայ մի սառն, 6000 ոտնաչափ ծոփի վերայ բարձրացած լեռնադաշտակ (որին աշխարհի բնակիչքը ասում են Ենահուար) կաղնի և մի տեսակ եղևնի ծառերով, որ մասնուամեն Pinos Strobus տունկին: Լիկվիդամբար ծառեր և այլ ընկերական բուսականներ Խալափայի գմայլեցուցիչ ձորերի մէջ ծածկում են սարազատու արեւելեան կողերը. հողը, կլիման, բուսականների ձևաւորութիւնը, այն և աշխարհի բոլոր տեսութիւնը ստանում են այս տեղ մի այնպիսի կերպարանք, որ ասես թէ պատկանում էր բարեխառն գոտուն և չունի իւր նմանը ուրիշ տեղ հարաւային Բալթիկայի մէջ: Այս օտար տեսիլքի պատճառը, ինչպէս հաւանական էր, մի մեծ մասնով գոյանում էր նոր ջամբարհողի կերպարանքից, ըստ որում նա չափազանց լայնածուկ էր այս աշխարհներումը և գնալով գնալով բնդարձակվում էր բարձրանալով դէպ ի հիւսիսային բևեռը, որով Ենահուարի եղանակը ասելի սառնանում է, քան թէ, իւր աշխարհագրական լայնութեան և սարերի բարձրութեանը նայելով, պիտոյ է լինէր: Այնուհետև այս բարձր սարազատների վերայից կանաչեան բուսականները առ փոքր փոքր տեղափոխված են դէպ ի հարաւ, և խեցեղեանի Երևադարձի մտ, այժմ տեսանում են Երևադարձի հարաւից սարերը նոյն եղևնիքով պատած, որ սեփական էին Գիւլա և Միսուրի գետերի հիւսիսային աղբիւրասահմաններին:

Եւրոպայի Բաժնականքը ամենայն կերպով բոլորովին զանազան են Երևադարձի բուսականներից. սակաւ բուսականներ միայն հասարակաց էին հարաւային Եւրոպային և հիւսիսային Երևադարձին: Այս տեղ եղած են երկու խափանարկու պատճառներ, որ երկու աշխարհների բուսականների միախառնութեանը բնդգիմացել են. նախ և յառաջ, այն բարձր սարերը որ զուգահետական գոտիների պէս բնդգիմացել են հարաւային բուսականների տեղափոխութեանը դէպ ի հիւսիս. երկրորդ միջերկրական ծովը որ պտտաւելով ամբարաակները յախտեան բաժանել է Եւրոպան Երևադարձից և այդպէս խափանել է Երևադարձի

կան բուսականների ներս մտանելը Եւրոպայի մէջ, Այս պատճառով սակաւ բուսականներ միայն գտանվումէին Նեապոլիտի, Հարաւային Չրանսիայի մէջ և Պիրինէյեան սարերի քամակումը, որ մի տեսակ Գիրբարտարեան կապիկների հետ անիրիկական շեղից էին, բայց սորա, յառաջ քան թէ միերկրական ծովը պատասել էր շամաքահողը Եւրոպայի և Արիւրիայի մէջ (կամ թէ Արարացոց յետ միասին) եկաւորված են այս տեղ, Այդպէս չէր բուսականների բաժանումը Կանադայի և Վեխիկոյեան երկրանեղուցի մէջ. երկու հողասահմանքը իրեանց բուսականքը որպէս թէ փոխել էին միմեանց հետ, և այն բլուրները որ սահմանաւորումէին Թենեսիտիւտի ձորը, պատած են համարեալ թէ նոյն բուսականներով, որ աճումն լայնութեան քառասուն և հինգերորդ աստիճանի տակ զէպ ի հիւսիսակողմը Կանկասարի և Տիւնգանայեւի ալի ծովակի, Ուրեմն այս տեղ մի և նոյն զուգահեռական շրջանակի տակ ուր կային և արեմտեան Հնդկաստանի կղզիքը, ի զուր պիտոյ է որոնելնք Արեւադարձերի մէջ եղած բուսականների բազմութեանկոթիւնը որով հասարակչիւր սահմանները այնքան փառաւորապէս նշանաւոր էին. սորա հակառակ պիտոյ է այն տեղ միասնգամ հանդիպէին մեզ այն կաղնու, նոճու և եղևնու ծառաստանքը որոնց ընկերարար աճելը այնքան ձանձրալի էր նկատողի աչքին Եւրոպայի, հիւսիսային Ասիայի և Կանադայի մէջ.

Ուրեմն բուսականների աշխարհագրութիւնը նկատում այն օրէնքները որոնց հետեւելով բնութիւնը, բաժանել է երկրի վերայ միայնակեաց կամ ընկերակեաց բուսականքը, Նա ջուջանում մեզ զոր օրինակ, թէ առաւելապէս հիւսիսային սահմաներն էին, որ յատկանումն ընկերակեաց բուսականների միօրինակութեանովը. Այսպէս, մացառախոտը (*Erica vulgaris, tetralis* և այլն) ընդարձակվել է Խալանդիու հիւսիսային ծայրից մինչև Հոլստէյնիա և Ղիւնեքերգիա (մինչև մտախուս և երկու աստիճան հիւսիսային լայնութեան), այս տեղից զէմքը դարձուցանում նա զէպ ի արեմուտք և Միւնստրի և Բրեզայի որձաքարեայ տափարակի վերայով հասանում մինչև Անգլիական ովկիանոսի եզերքը, Այս բուսականները ասես թէ անբաղատումն այս աշխարհներին և ընդդիմազրումն երկրագործութեանը այնպիսի խափաններ որոնց շատ փոքր կարողանումը յաղթել նոյն իսկ գերմանական ազգի տոհուն ջանքը, Մշակագործած երկիրը, ինչպէս այն Օտգըր (կանաչապատ տեղերը) Ազիոսոսի աւաղի մէջ, զուրս են երևում այս մացառախոտերի միջից, Այսպէս, Գերմանիայի կարախառն հողասահմանները գոյացել են երկու տեսակ ճարմնային գաղտնազոյգ բուսականներից, այսինքն Միսգնում և Մնիում սերպիլլիթոլում խոտերից որ երբեմն հասարակեալ էին այն գէջ ճարմնային անասուններումը

որ ծածկումէին Գերմանիան, Այդդիսի ընկերակեաց բուսականներ, որ գրեթէ ամենեւին արտաքսել էին ամբողջ աշխարհներէ միւս այլ բուսականքը, սեփական են մանաւանդ թէ բարեխառն գառուն, Այգու ամենայնիւ և Երևադարձերի մէջ եղած աշխարհները ցուցանումն մի քանի այդդիսի բուսականք: Անդէսեան սարագասու քամակը, 9300 ոտնաչափ բարձրութենով ծովի վերայ, ծածկումն միտսեսակ սփռած զեղնածաղիկ բոյսը Շխտէ (*Brachys juniperina*) Շխտիմանի (*Oxala*), Եարափա, մի խոտի տեսակ որ ազգակից էր Պապարոֆորում բուսին, Միւրաիլի պէս տերևաւորված Էսկալիտնան, թփառեսակ Վօլինայք և Տուրքեթիա տունկը որի սննդարար ուղեղը չքաւոր Լնդկայիք շատ անգամ խլումն արջերի ճանկից, Նոյնպէս Ամացունեան գետի մտակայքումը գտանվումն բուսազարդ սահմաններ և ստորին Օրինակչի Սափանայքումը զմայլեցուցիչ Միմոզներ և բլիջուոր մօրթիկեան արմաւենիք, ուր միայն դուրս էր բղխում մի աղբիւր, Նոյնպէս Քվինդիուի ձիւնադատ Ալպերի կողերի վերայ գտանվումն Համարեա թէ անընդհատ անտառներ բամբուսեան եղեգնի և Պիզանդի պէս տերևաւորված Լեւիզոնիայքի, բայց այս բոլոր ընկերակեաց բուսականների համակարգութիւնքը աւելի սակաւ ընդարձակված են և շատ աւելի փոքր են հանդիպում քան թէ բարեխառն գառումը: — Բուսականների աշխարհագրութիւնը տալիս է նոյնպէս շատ մեծակշիտ իրողութիւններ որոնցից կարելի է քննելով եզրակացուցանել մեր երկրաւոր մշտրակի առաջին անշքերը: Նա բաղդաակելով միմեանց հետ շատ զանազան աշխարհների որպէս և հաւասար լայնութիւնների տակ եղած բուսականքը, հաւանական է կացուցանում զոր սրինակ, թէ հարաւային Ամերիկան և Աֆրիկան երբեմն համակից էին, բայց օրգանական ընձիւղների կերպարանվելուց յառաջ բաժանված են միմեանցից: Այդ իրողութիւնքը առաջնորդ ընտրելով, կարելի է խորամուխ լինել նախնական աշխարհի մտայլի մէջ և վճռահաստել այն խնդրը, թէ արգեւք այն խառնիխառն ջրհեղեղից յետոյ որ, ինչպէս հաւանական է, միանգամ ծածկումեր երկրի երեսը, չորացած երկրակեղևը շատ տեղերում միանգամայն բուսուցել է զանազան տեսակ սնկականք, կամ թէ բոլոր բուսական ընձիւղները նախ և յառաջ կերպարանվեցան մի տեղում և այն տեղից տարածվեցան երկրի երեսի վերայ:

Բուսականների աշխարհագրութիւնը քննում և նոյնպէս, թէ արգեւք երկրի անհամար բուսականների մէջ կարելի էր մի քանի արմատական ձևակերպութիւնք երևան կացուցանել և նոցա զանազան տարբերութիւնքը հաւասար տեսակների և սեռերի մէջ համարել միայն նոցա այլանդակութիւնքը: Նա լուծանում և նոյնպէս այն խնդիրը և պատասխան է տալիս այն կարևոր և յաճախ յառաջ բերած հար-

ցումսին թէ արդեօք կային այնպիսի բուսականք որ բնակումին ամենայն կլիմաների, բարձրութենների և աշխարհների մէջ :

Պարոն Փօն Հումբոլդը Հիմնվելով իւր նկատութենների վերայ այնպէս է կարծում, որ մի քանի գաղտնաղոյգ բուսականներ միայն էին, որ բնութիւնը ամեն տեղ յառաջացնում: Գիւրբանում սկոպարիում, Պոլիտրիխում կոմսունէ, Աերուկարիա զանգփնէա և Աերուկարիա լիմոտատա Յկոպոլի աճումեն ամենայն տեղ, բոլոր աշխարհագրական լայնութենների տակ: Եւրոպայում, ինչպէս Հասարակածի տակ, սարերի քամակի վերայ, որպէս և ծովի ափերումը նորա կարօս էին միայն ստուերի և գիջութեան, իւրեանց աճելու համար: Մի քանի ճանապարհորդների կարծիք, թէ մասնաղոյսը սակաւագիւտ էին ջերմ գօտու մէջ, հերքումէ փորձով, երբ որ ներս ենք մտանում Հասարակածի տակ եղած աշխարհների մէջ, չը հերքանալով ծովեզերեացի և մշակեալ երկրի տեսութենովը միայն:

Թէպէտ զեանածին ելակին և մի քանի այլ բուսականների ընծայած էին այնպիսի զիւրատար օրգաններ որ կարող էին տեղափոխվել զէպ ի ամենայն կլիմա, բայց մինչև այժմ մարդը միայն և քանի մի ընտանի անասունք ջոյց են տուած այդ հաստատ քարեղէն բնութիւնը. զորս միայն կարող են զիմանալ ամենայն կլիմայի. և բաց ի մարդոց զօւցէ թէ կարելի էր յառաջ բերել շունը միայն: Ար և կարծումին թէ գտած են մի և նոյն բուսականքը, զորս, աւելի ճիշդ քննութեան տակ ընկնելով, իրաւունք են տապել որպէս էապէս տարրեր բուսականք. Այդու ամենայնիւ այն օթոցը, որով Աստուած ծածկել է մեր երկրի մերկութիւնը, զեռ ևս այնքան փոքր էր քննած ու իմացած, որ կային զեռևս ամբողջ աշխարհաբաժինք, ուր երբէք չէ կոխած ոչինչ անկարանի ոտք. և լաւ էր այս մասին յետ պահել իւր վճռական դատաստանը, ըստ որում կամենալ մինչև այժմ քննած ու իմացածովը վճիռ կատարել բոլոր բուսական աշխարհի վերայ, այնպէս էր, որպէս թէ կամէինք մի բլրից Եւրոպայումը աճանցել երկրասարերի կազմութեան օրէնքները:

Բուսականների աշխարհագրութեան մի այլ խնդիրը մեռումը նոյնպէս այն մեծ քննութիւնը թէ ինչպէս տեղափոխ են եղած աճեցականքը: Այս խնդիրը լուծանելու համար, նա իջանումէ զէպ ի երկրի խորքը և այն տեղ հարձափորձումէ նախնական ժամանակների յիշատակարարքը, որ ամենայն արարածների մայրը պահպանումէ իւր գոգումը: Քարացած փայտ, բուսականների սպաւորութիւնք սպաւածի մէջ, կպրախառն հողակոյտք, ածխաբարք, հարթակշիռ հանքեղէն նստուածք (Ֆիւօքք), փտած և հողացած քակոր, որ մեր երկրաւոր մոլորակի առաջին բուսականների գերեզմանատունն են, ահա

տորա էին հարցարձնելի բաները, Մէք զարմանալով հանդիպումներ հարուային շողկաստանի պատուշներին, արմատներու ծառարուններին, ծառատեսակ Գիլիցէս տուններին, Պիզանցի տերւոններին և Բամբուս եղէգնատուններին, որ լինելով Արևադարձերին սեփական, այնու ամենայնիս պատահումն մեզ ամենացուրտ հիւսիսի հողակոյսերի մէջ, ուր թողած էին նորա, Բուսականների աշխարհագրութիւնը քննում, արդևոր այս, ջերմ կլիմաների պատկանելալ, բուսականը, այն փիղերին, Տապիրներին, Արկոդոլոյաներին, Գիգելֆիաներին ոսկրեղէն յոյուածքը, որ նոր ժամանակներում գտած են Եւրոպայի մէջ, համաշխարհական ջրհեղեղի միջոցին ծովի հոսանքների զորութենով Հասարակածի կողմից էին մղվելով բերված դեպ ի բարեխառն գօտիքը, թէ կար մի ժամանակ, երբ այն տեղ, ուր այժմ հսկայամարմին, սպիտակամազ ստոցարնակ արջը սրում է իւր առամները, ստոցակոտորների վերայ, փիղեր և կրոկոդիլոյաներ խաղ էին առնում Պիզանցի և արմատներու ծառատանի մէջ, Հասարակածի կողմից, ինչպէս երևում է, չէին կարող մղվելով բերվել դոքա. այդ բանին հակառակ է այն հանդարտ դրութիւնը որի մէջ ամբողջ անտառներ և շնչաւորների մարմիններ կուտած ու նստած էին. մտածել, թէ երկրի բևեռասահմանը ունէին մի ժամանակ այնպիսի կլիմա, ուր կարող էր աճել արմատներն. դորան, ինչպէս երևում է, հակառակ էին աստեղարաշխական պատճառներ, Բայց գուցէ կարելի է մեկնել այս տեսիլքը մեծ կլիմայական փոփոխութիւններով, առանց ընդունելու թէ եղած էին բնաւոր վեր ի վայր կործանութիւնք, Զանազան սարերի վայրարբութեամբ գոյացութենից արձակված ջերմանիւթը կարող է յառաջացուցած լինել տեղական ջերմութիւն բևեռական աշխարհների մէջ, Բայց այս տեղ չէ կարելի մանրամասնաբար քննել այս փոփոխութիւնքը. հերթ է միայն ասել, թէ այս խնդիրը և այն հետաքննութիւնքը որ հարկաւոր էին, նորան լուծանելու համար, բուսականների աշխարհագրութիւնը կապակցումն Գեօգնոզիայի (Երկրագիտութեան) Հետ և քննողի առաջև բաց են առնում մի լայնարձակ ասպարէզ հետազոտութեան:

Այն բուսականները որ իւրեանց օրգանների գրգռականութեան մասին այնքան մօտ աղդակից են մարդուն, դարձեալ զանազանվում են սորանից իւրեանց տեղափոխութեան ժամանակովը: Շնչաւորը սկանում է իւր շրջողական կեանքը, երբ որ չափահաս է և կարող է գործ ածել իւր օրգանները, բայց բուսականները սերմի մէջ ահա, որպէս թէ իւրեանց անձնաւոր գոյութենից յառաջ, Արդէս սերմեր, կատարում են նորա իւրեանց ծանաղարհորդութիւնքը փետրաւոր պսակներով, օգնելն փամփուշտներով, թեւաւոր յաւելումներով և ելա-

տիկական շրջաններով. սոցա միջնորդելովը կարող են նոքա ճանապարհ կատարել ոչի միջով և ջրերի վերայից, Աշնանային հողմեր, ծովային հոսանքներ և թռչուններ յաջողութիւն են տալիս այսպիսի անզգտիտութիւնների. բայց այս բոլոր հանգամանքները, ինչքան և մեծ համարէինք նոցա աղղեցութիւնը, չունին այնքան ներգործութիւն, ինչքան մարդը:

Այբր որ մարդը հրաժարվել է թախտական վրանարնակ կեցութիւնից, ժողովումէ իւր չորս կողմը սմանք անասուններ և բուսականներ, որ հողաբարձութեամբ աշխատումէ բազմացնել, երբ որ դոցա օքտակարութեանը վերահասու էր եղած, Այս է երկրագործութեան առաջին հիւնքը: Բարեխառն դասերի որսորդ աղղերի մէջ, այս փոխանցութիւնը թախտական կեցութիւնից դէպ ի երկրագործութիւն կատարվումէ շատ ծանր, բայց աւելի շուտով է լինում այդ բանը Արևադարձեան աշխարհների մէջ, Կէս մի խոտ անտառները խախտումն Արևադարձերի բնակիչքը բոլորովին անձնատուր լինել որսորդութեան, և կէս մի հողի միշտ պողաւտութիւնը աւելի շուտով և առատութեամբ փոխարինումէ նոցա աշխատսիրութիւնը, քան թէ բարեխառն դասերի մէջ: Կամնապէս ջերմ աշխարհներումը, հոսանքների խորութիւնը, արագութիւնը և ջրհեղեղքը, այլև արիւնարբու կրակողիլանները և միշտպ օձերը վտանգաւոր և անպտուղ են կացուցանում ձկնորսութիւնը. և այսպէս հարկադրումէ մարդը պարապել անկագործութեան, ուրեմն ստիպման, ժողովումէ նա իւր խուղի չորս կողմը, մի քանի պիպանդի և Արուսի տունկեր, և սոցանից պիտոյ է պատրաստէ իւր համար շատ ամիսների կերակուր, որ անհնար էր նորան ստանալ որսորդութիւնով և ձկնորսութիւնով: Այսպէս ահա, կլինան և հողը առաւել քան թէ աղղերի ցեղը ներգործումէ այն գանադանութիւնը Բեղուիկեան (անապատակեաց) խաշնարած աղղերի, որաստէր վրանարնակ մարդերի Միսսիսիպպի գետասահմանումը և Օրենսկոյի անտառների բնակիչների մէջ:

Սմանք բուսականք որոնց անկարկութեանը պարապումէ այգեգործութիւնը և երկրագործութիւնը, սկսեալ առաջին դարերից ուղեկից են եղած մարդկային աղղին մի աշխարհից դէպ ի միւսը. Զոր օրինակ խողողի ծառը բերվել է Արուս Թունաց հետ, ցորենը Լոռմայիցոց ձեռքով, բամբակի բոյսը Արարացոց հետ: Կոր ցամաքահողումը, Տօլտեքեան ժողովուրդը անձամբ չի հիւսիսային աշխարհներից ցած իջանելով և անցանելով Գիւլա մեծ գետի վերայից տարածել է ամինդրը Մեխիկոյի և հարաւային աշխարհների մէջ, Կարսոփըլ¹⁾ և

¹⁾ Անուս կարսփըլ, Ինչպէս երևում, յառաջացել է Խառնկանիցը Partinfolio

Քզինօս րոյսքը հանդիպումն մեզ ամենայն տեղ, ուր անց էին կացած Գունդինամարայի (Նոր Գոանադայի) բնակիչքը: Այս ուտելի տունկերի թափառականութիւնքը անտարակոյս են, բայց նոցա առաջին և սկզբնական հայրենիքը մնում մեզ զազունածածուկ և մինչև այժմ անխմանալի: Կասսից ծովի հարաւային և արևելեան կողմերումը, Օքսոսի գետափումը և Քուրդխտանի ձորերումը, որոնց սարակառարքը բարձրանումն զէպ ի մշտնջենաւոր ձիւնասահմանի ներքը, հանդիպումն մեզ ամբողջ անառներ լիտնի, Նոան, սանձի և կեռասի: Բոլոր մրգաբեր ծառերը, որ զարդարումին Եւրոպայի այգիքը, այն տեղ աճումնին արձակ օգի մեջ. բայց թէ այս տեղ էր նոցա նախնի հայրենիքը, կամ թէ երբևէն անկամ լինելով այս տեղ, յետոյ վայրենացած էին, մնում այնքան ևս անհասարակ, ինչքան որ մարդկային ազգի քաղաքաշինութիւնը և այգեգործութիւնը շատ հին է այս աշխարհների մէջ:

Բայց պատմաբանութիւնը տեղեկութիւն է տալիս մեզ զոնկայ, թէ այն պտղաւետ զաշտերը Եփրատէս և Ինդոս գետի մէջ, Կասսից ծովի և Պարսից ծովածոցի մէջ, տուած են Եւրոպային առաւել պատուական տունկերք: Պարսկաստանը բաշխել է Եւրոպային ընկուզի և զեղձի ծառը, Հայաստանը ծիրանի ծառը, փոքր Եփան քաղցր կենասնին և շագանակի տունկը, Ատրեստան իզկենին, Նուռենին, ձիթենին և թթենին, Կատանի ժամանակումը, զոռևս անծանօթ էին Հռոմայեցոյ քաղցր կեռասը, զեղձը և թութը, Հեղինոդոս և Համբրոս բանաստեղծքը յիշումն ահա ձիթենին որ անկազործումը Յունաստանումը և Էգէյեան ծովի կղզիներումը: Տարկվինիոս Պրիակոսի օրերումը (600 տարի Քր. յառաջ) չը կար ձիթենի ոչ Կասսիցումը և ոչ Սպանիայումը և ոչ ևս Եփրիկայի մէջ, Եպպիոս Ալալդիոսի հիւպատոսութեան միջոյն ձիթապտուղը շատ թանգ էր զևս ևս Հռոմումը, բայց Պլինիոսի ժամանակին տեսանումը ձիթենին անկազործ ահա Սպանիայի և Ֆրանսիայի մէջ: Աղիուզենին, որ այժմ մշակագործումն Եւրոպայիք, երևում թէ եկամտաւ րոյս է Եւրոպայումը. այդ տունկը աճումն բայցթեկայ կերպով Կասսից ծովի ափերումը, Հայաստանի և Կարամանիայի մէջ: Ասիայից տեղափոխվել է դա զէպ ի Յունաստան և այս տեղից զէպ ի Վիկիլիա, Փոկէաչիք

որ նշանակում գետնասուկ, ըստ որում սկզբումը համարումն զարան մի տեսակ գետնասուկ, գերմաներէն ասում զա և Erdapfel, այսինքն է գետնախնոր, բայց անկարանութան կարգումը Solanum tuberosum. Գորս պատմութեան մասին յայտնի է ոչոքան, որ 1590 թուական. նկարագրեց այդ բոյսը Գասպար Բուլլն ուսումնականը, և 1623 թն սուրբեր Բալեյը (Walter Raleigh) անկեց նորան Երկնայիտի մէջ:

բերեցին ողկուզներն զէպ ի հարաւային Գրանսիա, Հոսմայեցիք տընկարկեցին նորան Հոհնուս (այժմ. Ռէյն) և Գանուլիոս գետերի և զերբումը, Եւ այն խաղողներու տեսակները որ դասնվումն վայրենի դրութեան մէջ Նոր Մեխիկոյումը և Կանադայումը, որ և, յառաջուց Նորմանների ձեռքով յայտնագործած Եմբրիկայի մասին տուած են անունս Խ-ը-ւ-ի -ը-ն-ը-ն, ամենին տարբեր են այն խաղողի ծառերից որ այժմ տարածված են Պենսիլվանիայի, Մեխիկոյի, Պերուի և Խիլու մէջ:

Մի կեռասներ, հասած պտուղներով բնանաւորված, զարգարեց Լուկուլուսի յաղթական հանդիսով մուտքը Հռոմի մէջ: Եւս առաջին զամն էր, որ Իտալիայի բնակիչքը տեսան այս ախտական տունկը, որ այն Գիկաստօրը, յաղթելով Միհրիդատին, բերեց իւր հետ Պոնտոսի աշխարհից: Եհա մի դար յետոյ կեռասը հասարակեալ էր Ենգլիայի, Գրանսիայի և Գերմանիայի մէջ. Եւ նորուց եկամուտ բոյսը Հորտենզիա դիմանում Եւրոպայի ձմերանը դուրսումը. և կարող էր շատ հեշտ վայրենանալ և դառնալ նոյն իսկ խոնու անտառներին սեփական, Եւսպէս ահա մարդը իւր կամէ որդութեան պէս փոփոխում էրուսականների սկզբնական բաժանումը երկրի վերայ և ժողովում էր մտա ամենահեռու որ կլիմաների անշափ բաղմորինակ բերքերը, Երևելեան և արևմտեան Էնդկաստանումը, Եւրոպացոց անկարկութեաններին մէջ մի նեղ սահման բուսուցանում Եմենի զահվէն, Չինաստանի շարքածին եղզնարոյսը, Եֆրիկայի լեղալը և միւս շատ բուսականներ, որ պտականումին երկու գիսագնդերին ևս. ահա քեզ մի տեսիլք, որ այնքան արժանի էր ուշադրութեան, ինչքան որ նկատողի երևակայութեան մէջ զարթուցանումը այն զարմանալի, միմանոց հետ շղթայակապ անցքերի յիշատակը, որ մարդկային ազգին պատճառ են տուած տեղափոխ լինելու ծովի և ցամաքի վերայով զէպ ի երկրի ամենայն մասունքը:

Կրկրացործ ազգերի անձանձիր ժրաջանութիւնը թեպէտև այս և այն պլտանի բուսականները դուրս է հանել իւրեանց հայրենի հողից և հարկադրել և նորանց բնակել ամենայն կլիմաների և ամենայն լեռնային բարձրութեան վերայ, այնու ամենայնիւ նոցա սկզբնական կերպարանքը այդ երկարատև ստրկութեանից չէ փոփոխված գգալի կերպով, Կարսօֆը որ Խիլի աշխարհումը 11,000 ոտնաչափ բարձր, հաշվելով ծովի երեսից, անկադործվում է, բերում է մի և նոյն ծագիկը ինչպէս այն կարսօֆը որ տնկած են Միքսիկոյի դաշտավայրերումը, Գարին, որով 3000 տարի յառաջ սնանումին Ետրեոսեան Երկրլեւի ձիւնըը, առանց տարակուսի, նոյն գարին էր որ այժմ հնձումներ մեք: Բոյր աճեցականքը և շնչաւորքը որ այժմ բնակումն

երկրի վերայ, ինչպէս երևում, հազարաւոր տարիներից յետոյ չեն այլայլած իւրեանց յատկացուցիչ բնասութիւնը, Այս համաձայնութիւնքը, այս անփոփոխ հաստատութիւնը կերպարանքների, ապացուցանումք թէ այն հակայանէ շնչասրների ոսկրեղէն կազմածներից որ ամփոփումք իւր մէջ երկրի խորքը, չէ պիտոյ ելքակացուցանել, որպէս թէ այժմուս եղած տեսակները այլանդակված էին, այլ մանաւանդ թէ նորա տալիս էին մեզ դուշակել, որ մեր երկրաւոր մուրակը եղած է միանգամ այնպիսի դրութեան մէջ, որ շատ տարբեր էր այժմեան բաների կարգիցը, այլն թէ մեր երկիրը աւելի հին էր, քան թէ գուցէ թէ աւելի յետոյ ստեղծած մարդկային ազգի վոլյոյքը և վեպքը կարող էին դեպ ի վեր գնալ և հասանել նոցա, Այս անփոփոխ կայունութիւնը բնութեան, որ միշտ ծնուցանումք նմանը նմանից, այն ամենին հակառակ է այն բնաբնիշների տեսութեանը, որոնց կարծիքով կաղնիքը յառաջացած էին մամուռներից:

Արկրագործ մարդու ձեռքով մշակվելով եկամուտ բուսականները յաղթումեն ընտանի բուսականներին որ այնուհետև սահմանափակումեն փոքր տարածութեան մէջ, Այսպէս, մշակագործութիւնը հաստատապէս անախորժ էր բնութեան կենդանազրին և արձակ դաշտումը քննող անկարանին, Բայց երկուքը ևս կարող են միմիարովիլ, որ այս արտաքին անյարմարութիւնը երևումէր միայն բարեխառն գառու փոքրիկ բաժնի մէջ, ուր ժողովրդի բազմութիւնը և մարդու բարդական կրթութիւնը առաւելապէս յատաջաղէմ էին, Սորա հակառակ, Արևադարձեան աշխարհների մէջ, մարդկային կարողութիւնը շատ արկար էր, քան թէ կարող էր յաղթել այն առատ առեւտրականութեանը որ գետինը բուսազարդելով ծածկումք մեր աչքից և ոչինչ սեղ չէ թողում մերկ, բաց ի ովկիանոսից և գետերից:

Հաստաղապութիւնը և հայրենիքը ամենայն բուսականների, որ սկսեալ շատ վաղ ժամանակներից ուղեկից են եղած մարդուն նորա բոլոր թափառանքների մէջ, ծածկած են անյայտութեան տակ, մեք չը դիտենք, թէ որ տեղից են յառաջացել այն ալիւրաշատ խոտերի տեսակքը որ մեզ հաց են տալիս, Հատկաւոր հացը տակաին անձանութ էր Հոտոյեցոց, Բոլոր զբոյցները որ ասումէին թէ ցորեանը բերած է Սիկիլիայից, զարին հիւսիսային Ասիայից և այլն, կարտ ևն հաստատութեան, Շատ հեշտ է այն բուսականքը, որ մարդերի ձեռքով տարածված և յետոյ մայրենացած էին զարնալ, Խառնաշփոթել նոցա հետ որ ընտանի են, բայց սկզբումը ածումէին մայրենապէս, Եւ այն բուսականքը որոնց վերայ հիմնաւորված է ջերմ գոտու բնակիչների սնունդը և հարստութիւնը, զոր օրինակ Պիղանդը, սեխի ծառերը, կոկոսեան արմաւենիքը, Կատրոփա և սմինգը աու՛ն-

կերբ, երբէք չեն գտանված, որ ի բնէ աճէին վայրենի գրութեան մէջ: Արդարեւ պարոն ֆոն Հումբոլդը տեսած է Պիլանցի և սեխածառի բուններ, մարդկային բնակարանից հետի, Կասսիկվիարի և Բուսամբնի անտառների մէջ. բայց կարելի է, որ դոքա մարդու ձեռքով բերած էին այն տեղ. պատճառ, այս ահամանների վայրերի մարդը լինելով ծանրաբարոյ և կասկածամիտ, բնորումէ հետաւոր ծակամուտեր, իւր փոքրիկ տնկադործութիւնքը շինելու համար, որ յետոյ փոփոխամիտ երկխայի պէս թողումէ և փոխանակումէ միւսերի հետ: Վայրենացած Պիլանցի և սեխի ծառերը երևումն այնուհետեւ թէ այն հողի բերքն էին, որի վերայ ընկերանումն ընտանի բուսականների հետ: Կմանապէս չը կարողացաւ Պ. Հումբոլդը տեղեկանալ, արդեօք Կարտոֆիլը վայրենապէս աճումէր ուր և իցէ նոր ցամաքահողի վերայ: Այս շատ պիտանի բուսականը որի տնկադործութեան վերայ մեծապէս հիմնած է անպարուղ հիւսիսային Արտադի բնակիչների պահպանութիւնը, ոչինչ տեղ գտանված չէ վայրենի, ոչ հիւսիսային Ամերիկայի, ոչ Անդէսեան լեռնագօտու մէջ եղած աշխարհներումը, այսինքն Կոր Գոանապայի, Կլիտայի, Պերուի, Խիլիու և Խիլիվոտոսի մէջ: Թէպէտ Յոպանիացիք շատ լեռնագաշտակների առած էին խարեական անունս Կարտոֆիլը (Papas de las papas):

Այս և նմանապիսի հետաքննութիւններով բուսականների աշխարհագրութիւնը լուսաբայլ է կաշուցանում երկրագործութեան սկզբընաւորութիւնը, ազդերի տեղափոխութիւնքը և միանգամայն մարդկութեան գլխի անցքերը, ըստ որում հարց ու խնդիր է առնում բուսականների թափառանքը և որոնելով գտանվումէ այն կլիման, ուր նոքա ընտանի են: Այսպէս, և բնութեան փոփոխութիւնքը ստանումն պատմարանական յատկութիւն, և թէ ունէին նոքա ազդեցութիւն մարդկեղէն անցքերի վերայ:

Այս բաները առաջնորդումն մարդուն ղէպ ի սլլ խնդիրներ և հետաքննութիւններ, զարթեցնումն նորա զեղեցկազգաց հողին և զբրգումն նորա խնացականութիւնը, որ հարցանէ. ինչպէս են բուսականքը բաժանած երկրի վերայ. ինչ ազդեցութիւն է ունեցել այս բաժանումը ազգերի երևակայութեան և ճարտարասիրութեան վերայ. ինչով է յատկանում այս կամ այն աշխարհի աճեցականութիւնը. ինչով սաստկանումէ կամ թէ մեղմանումէ այն տիրաւանութեան կամ ուրախամտութեան տպաւորութիւնը որ բուսական աշխարհը ազդումէ նկատողի մէջ: Այս հետաքննութիւնքը հասուցանումն այնքան առաւել օգուտ, ինչքան որ նոքա կապակից էին այն զազանածածուկ հարների հետ որոնջով բնութեան կենդանագիրքը և բանաստեղծքը յառաջացնումն իւրեանց ներգործութիւնը, բնութեան նկատութիւնը

լայնարձակ շարժով, զաշտի և անտառի տեսութիւնը տալիս է մի ամենին այլ քաղցրութիւն, քան թէ մի օրգանական մարմնի անզամազըննութիւն. սորանով լցուցանւումէ մարդու հարցասիրութիւնը, սորանով բոլոր մարդը իւր սրտի խորքումը գտանումէ մի երանական խաղաղութիւն. Ինչքան ուրիշ զգացութիւնը զարթուցանումէ մարգագեփնների գալար կանաչութիւնը քան թէ եղևիներին մուսլ ստուերարկութիւնը. դարձեալ, որչափ այլ զգացութիւնը յարուցանումէին բարեխառն գոտու անտառները քան թէ Արևադարձեան աշխարհներինը, ուր ներարուն արմաւենիքը զէպ ի վեր բարձրանալով Հիմնալքի տերևախոտ կատարների վերայ, ձևաորումն որպէս թէ մի սինազարդ ձեմէլիք, Արդեօք այս զգացութիւնների զանազանութիւնը հիմնած է մարմինների բնածին յատկութեան և մեծութեան վերայ, նոցա սեփական գեղեցկութեան վերայ, թէ բուսականների ներհակութեան և դասաորութեան վերայ. Ինչ բանի վերայ է հաստատած Արևադարձեան բուսականների կենդանագրական գերազանցութիւնը. ինչ պատկերացուցական տարրերութիւնը նկատումներ մէք Աֆրիկայի և Հարաւային Ամերիկայի բուսերի մէջ. Անդեսեան գոտու ալպեան տունկերի և Պիրինէյեան կամ Հարէչեան Ալպերի բուսականների մէջ, Այս հարցուածներին մի մասնով պատասխանումէ անկարանական աշխարհագրութիւնը և առաջնորդումէ մեզ զէպ ի Գալիսիայի և Հարաւային Ամերիկայի բուսերի մէջ. Անդեսեան գոտու ալպեան տունկերի և Պիրինէյեան կամ Հարէչեան Ալպերի բուսականների մէջ, Այս հարցուածներին մի մասնով պատասխանումէ անկարանական աշխարհագրութիւնը և առաջնորդումէ մեզ զէպ ի Գալիսիայի և Հարաւային Ամերիկայի բուսերի մէջ. Անդեսեան գոտու ալպեան տունկերի և Պիրինէյեան կամ Հարէչեան Ալպերի բուսականների մէջ, Այս հարցուածներին մի մասնով պատասխանումէ անկարանական աշխարհագրութիւնը և առաջնորդումէ մեզ զէպ ի Գալիսիայի և Հարաւային Ամերիկայի բուսերի մէջ. Անդեսեան գոտու ալպեան տունկերի և Պիրինէյեան կամ Հարէչեան Ալպերի բուսականների մէջ, Այս հարցուածներին մի մասնով պատասխանումէ անկարանական աշխարհագրութիւնը և առաջնորդումէ մեզ զէպ ի Գալիսիայի և Հարաւային Ամերիկայի բուսերի մէջ. Անդեսեան գոտու ալպեան տունկերի և Պիրինէյեան կամ Հարէչեան Ալպերի բուսականների մէջ, Այս հարցուածներին մի մասնով պատասխանումէ անկարանական աշխարհագրութիւնը և առաջնորդումէ մեզ զէպ ի Գալիսիայի և Հարաւային Ամերիկայի բուսերի մէջ.

Արևադարձեան աշխարհների մի այլ նախապատմութիւնը է և այս. այն մեծ բարձրութիւնը հողի որ Հասարակածի տակ վերանումէ աւելի բարձր քան թէ ամպերի սահմանն էր, ցուցանումէ այս աշխարհի բնակիչներին այն զարմանալի տեսարանը, որ նոքա, թող բանանեան տունկերը և արմաւենիքը, շրջապատած էին և այնպիսի բուսականներից որ յաճախ կարծումէիր թէ սեփական են և բուսական և հիւսիսային ասիական կլիմաներին. Անդեսեան լեռնագոտու ձորերը զարդարած են Հելիոնիպարով և ներատերև Միմոնդերով. աւելի զէպ ի վեր աճումն ծառակերպ Փիլիչեան խոտերը և այն օգտակար բոյսը որ վկայած է որպէս անտարակոյս բժշկական սեղ տննդի համար. Յինքոնիայի բարեխառն սահմաններումը և աւելի վերին տեղերում

բարձրանումն կազնիք, եղևնիք, նոճիք, բերբերիս և ուրուս ֆրու-
տիկոս աուներբը, աշնուք և բաղմամիս այլ բուսականք, որ սովոր
էինք մէք համարել հիւսիսային կերպարանք, Այսպէս, Արևադարձ-
եան աշխարհներէ բնակիչքը վայելումն ասես թէ բոլոր երկրքի և
բոլոր երկրքի տեսութիւնը. բոլոր տեսակ տեսակ բուսականքը ստուել
է երկիրը նորա չորս կողմումը, և երկնականմարը մի բնեւոյց դէպ
ի միւս բնեւոյց չէ ծածկում նորանոց ոչ մինը իւր լուսափայլ աշ-
խարհներոց:

12. ԲՈՒՄԷՆԻԱԿ ԻՐ ԱՆՈՒՆՆԵՐ

Հարիւր եօթմասսուն մղոն Անդոնից հեռացած էի, երբ որ ես,
ասում Եօրից ճանապարհորդը, վեր ելայ մի բարձրաձայրի վերայ և
յանկարծ ոտքիս տակ տեսայ մի զմայլեցուցիչ ձոր, որ կարատվելով
գետերի և աուների հոսանքներով, չորս կողմից փակած էր սարերի
մէջ. Այս ձորի մէջ դրած է քասալիտոնը, մի փոքրիկ քաղաք ցած
աներով, որ իւր անունը ստացել է մի հին բերդից որի աւերակքը դեռ
ևս տեսանումն այս տեղ. Մի նեղ ճանապարհ, որ սարի կողմից
օձապողոտ գնացքով ցած էր գալիս, բերեց ինձ ձորի մէջ, մինչև քասա-
լիտոնի մի փողոցը, ուր գտայ ես մի խճան, շուտով հաց կերայ այն
տեղ և խեղճն շարունակեցի իմ ճանապարհը դէպ ի խոր վերայը.
Մի փոքր ատու որ հասում քաղաքի միջովը, առաջնորդեց ինձ մին-
չև նորա մուտքը:

Այս տեղ մի քանի վայրկեան մնացի ես ամենին զարմացած և
և հիացած այն դէպ ի վեր ապառաժի ահարկու բարձրութեան վերայ
որ տեսայ աչքիս առաջև. երկու կողմից թուփերով կանաչազարդ,
վերեւից անբլած պտտեր և աշտարակներ մի հին բերդի որ վաղ ժա-
մանակներից եղած է այս ապառաժի վերայ և ցածից նորա ոտքումը
մի ահագին բացուած որ ներս է տանում դէպ ի այն վերայը, ուր
ամենայն բան երևում թանձր խուարով պատած, եթէ պայծառ մի-
ջօրեական արևիցը յանկարծ դէպ ի ցած ուղղէր հայեացքը. Երբ
որ պայտիսի հիացքի մէջ կանգնած էի այն տեղ, խոր վերայի մութ
ներասամուտքումը նկատեցի մի խոժոռատեսիլ մարդ որ հարցրեց ին-
ձանից, կամի՞ արդեօք տեսանել խոր վերայը. այս մարդու կոշա-
կայնը սաստիկ թնդիւն պատճառեց վերայի մէջ. Երբ որ ասա՞ի ես,
թէ այ՞ո՞ կամք ունիմ, ապա հարցրեց, կամի՞ արդեօք անցանել խոր
վերայի՞ գետերի վերայից, և խեղճն յատկացրեց այն մի փոքր ար-
ծամը որ իրբև վարձ պիտոյ է տայի նորան, Այս մարդը իւր սեաւ,
զիպացած մաղերով և կեղտոտ պատառոտուն զկեստով, ունէր մի այն-

պիսի վայրենի քարոնեան ¹⁾ կերպարանք, որին աւելի ահաւորութիւն էին տալիս նորա ձայնը և բարբառը, մինչև այն օտարտօի մտորութիւնը որի մէջ ընկնումէ մարդ տեսանելով այս վերապը, սկսեց ահա կապել և կաշկանդել իմ մտքը: Ես հասանեցայ տալ նորա խրնդրած վարձը և նա ասաց ինձ, որ վտասհօսութեամբ հետևեմ նորան և մեք միասին մտանք վերապի մէջ:

Ա վերապի ներամուտումը ձախ ձեռքի վերայ կար մի կտրած ծառի բուն, որի մտա խաղումէին այն անզի երեխայքը: Ճանապարհը դեպ ի վայր գնաց, այնպէս որ ցերեկի լոյսը, որ վերապի բերանի բացուածով ներս էր ընկնում, փոքր առ փոքր սկսեց աղօտանալ: Մի քանի քայլափոխ յառաջ գնալով, ինչ տեսարան հանդիպեց իմ աչքին, երբ որ ես յանկարծ, աջ ձեռքի վերայ, վերապի ահապին կամարի տակ տեսայ մի ամբողջ ստորերկրեայ գիւղ որի բնակիչքը, ըստ որում կիւրակէ օր էր, հանգստացած աշխատութենից, զուարճ և ուրախ, իւրեանց երեխաների հետ միասին նստած էին խրեանց ցած խուղերի գրան մտա: Այս փոքրիկ օթեանները թողած մեր քամակումք, ահա տեսայ ես ցիր և ցան մեծամեծ անիւներ շատ, որանց վերայ այս ստորերկրեայ վերապի բնակիչքը գործի օրերումք մանուսմեն չուաններ: Կարծեցի, թէ տեսանումեմ Իբսիանի ²⁾ անիւը և Դանայիչների ³⁾ անիւը և անզագար աշխատութիւնքը: Ինչքան որ մեք

¹⁾ Քարոնեան, այսինքն վերաբերեալ Քարոնին, որ, ինչպէս ասում են Վանաց առասպելը, Երերտի և Գիշէրի որդին էր, զժողովին աստուած, որ մի հին նուակի մէջ ննջեցնաների հողքը անշուքանումը Երերտ անուն զժողովարի վրայից և զորս հաւար սասանումք մի փոքր արծաթ, որ և այդ պատճառով դնումէն մեռածի լեզուի տակ: Այն ողկը, որանց մարմնը չէին արժանացած թագան, պիտոյ է 100 տարի թափառէին զտափումը, մինչև անշուքանը նորանց Քարոնը:

²⁾ Այս Եբսիանը, ինչպէս ասում են Վանաց առասպելը, էր թագաւոր Լափիթացաց Թեասայիտումը, որ սպանեց իւր աները, բայց Դիտը հաշտեցնելով զժեմիւնդութեան աստուածների բարկութիւնը, հրաւիրեց նորան անշուքանից լինել աստուածներին: Այս անց Եբսիանը բարբառելով Եւնո աստուածուհու սիրտը, կամայտ գրկախառնել նորան, բայց Դիտի ձեռքով, որպէս պատիւ, կտրեցնիցաւ սարսաբան մէջ և կապեցաւ այս անց մի սնուցաւ անուի վերայ, որ նորս հետ միասին պոյսովում անզագար:

³⁾ Դանայիչքը, Վանաց առասպելի ասանդելովք, ասումեն Դանայոսի 50 աղէկները որ անուանացած իւրեանց հորեղբոր 50 որդիների հետ և իւրեանց հօր հրաձեռով (որովհետև սարան մարգարեացած էին թէ նա սպանվելու է փեսաներից մինի ձեռքով) սպանեցին նորանց առաջին գիշէրումը: Հիւպեթեանարան միայն հրաժարվեցաւ այս սպանութենից և խորհուրդ տուեց իւր անուան Նիսիլեոսին, որ փութի: Միւս անուանապարզը զտապարգեցան ոչնչութի պատճով, որ զժողովի մէջ մի

զէպ ի խոր ներս գնացիներ, այնքան ևս այն բացուածը որ շերեկի
լոյսը ներս էր թողում, փոքրացաւ և մթութիւնը ամեն մի քայլա-
փոխից յետոյ յաւերացաւ, մինչև որ մի քանի ճառագայթք միայն
որպէս թէ մի ճեղքից ներս ընկնելով, շոշափումէն այն անօր ծը-
խային ամպերը որ աղբամուղջի միջից բարձրանումէն զէպ ի վերա-
պի կամարը, Լուսի Հետ զՏեաէ նուազութիւնը զարթնցնումէ սրտի
մէջ մի քաղցր սիրամտութիւն, երբ որ վերապի մեղմ զտա ի վայ-
րիցը ներքև ևս գնում, և սակա թէ առանց ջրաի ու վշտի կտրած էր
քո կենդանութեան թելը, որպէս թէ այժմ հանգիստ սրտով զմեռ-
մէիր զէպ ի այն խաղաղ աշխարհը ուր ոչինչ տանջանք չը կայ ա-
ւելի: Աւրջապէս փակվեցաւ ապառաժի բարձր կամարը, ինչպէս եր-
կիները սակա թէ փակվումէ երկրի վերայ, մէք մտտեցանք մի դարպա-
սի, ուր մի պատաւ կին զուրս եկաւ խուզերի մինջը, բերելով եր-
կու ճրագ, որոնչից մի մի հաստ վեր առանք երկուքս: Իմ ուղեցոյցս
բացեց այժմ՝ դարպասը որ ամենեկին ծածկելով այն աղօտ լուսաւո-
րութիւնը որ մտումէր տակաին, տարաւ մեզ այս գիշերային տաճա-
ր՝ ներսը, որի նախադասութեամբ միայն եղած էինք մինչև այժմ:
Այս տեղ այնպէս ջածացաւ ապառաժը, որ մէք մի քանի քայլափոխ
պիտայ է շատ կորանայինք, որ կարողանայինք անշունչ: Բայց ինչ-
պէս մեծ եղաւ իմ հեացքը, երբ որ մէք այս նեղ անցքից յետոյ
կրկին անգամ զէպ ի վեր բարձրացանք, և ևս յանկարծ, ինչքան որ
կարելի էր մէք ճրագների աղօտ լուսաւորութեամբը, աչքի տակ ձգե-
լի կամարի ահաւոր բարձրութիւնը և լայնութիւնը, որոնց հետ հա-
մեմատելով առաջին ահագին բացուածը, որով ներս էինք եկած մէք,
ոչինչ էր ամենեկին: Երբ որ մէք այս տեղ մի ամբողջ ժամ, որպէս
թէ մի սեւա միջագիշերային երկնակամարի տակ, չըջած էինք հաւա-
սար աւազուտ հողի վերայ, ապա փոքր առ փոքր կրկին ջածացաւ ա-
պառաժը և մէք յանկարծ հասանք մի բաւական լայն գետի որ մեր
ճրագների նշոյլից մի զարմանալի ջորացումն պատճառեց, Գետեզրումը
կապած էր մի նուակ և նորա մէջ դրած էր յարդ, Իմ ուղեցոյցը
սասց ինձ, որ ներս մտանում և ամենեկին պարզված հանգստանում
այն տեղ, որովհետև գետի մէջ տեղումը ապառաժը համարեալ թէ
շոշափելու է ջուրը: Երբ որ ևս հանգստացած էի նուակումը, նա
ինչքը ներս մտաւ ջրի մէջ մինչև փորից վեր և սկսեց քարշէլ նուակը
իւր հետևից: Մեր շրջակայքումը թաղաւորումը մի հանգիստ, ահաւոր

Ճակատած կարաւ անցագոր լցուցանեն ջրով: Այս տեղից և գուրս եկած և այն
ուրապական տապը: Գուրսըները ջրի հետակել, այսինքն գտնար և անոցուս գործ
կատարել:

մեակային Հանդարտութիւն, և քանի որ նաեւոր յառաջ էր գնում, այնքան ևս ապտառքը ցածանումներ որպէս մի սեւադորշ ամպ, մինչև վերջումը շոշափեց իմ երեսը, և ևս ընկողմանված հազիւ թէ կարող էի ծրագա գէպ ի վեր պահել կուրծքիս վերայ: Իմ գրութիւնը այս նաեւակի մէջ այնպէս էր, որպէս թէ մի նեղ գապաղի մէջ փակած լինէի, մինչև անց կացանք այս զարհուրելի նեղուցից և ապտառքը միւս կողմումը բարձրացաւ, և իմ ուղեցոյցը դուրս հանեց ինձ գետի հանդիպակաց եզրումը: Մեր ճանապարհը խկոյն լայնացաւ և արձակվեցաւ և դարձեալ ցածացաւ և նեղացաւ: Երկու կողմից տեսանք մեք, անցանելով, մեծ ու փոքրիկ քարացած տուններ և կենդանիք շատ, բայց դադար առնուլ և նկատել նորանց անհնար էր, եթէ կամք չունէինք շատ օրեր մնալ այս վերապի մէջ: Այսպէս հասանք երկրորդ գետին, բայց սա չէր այնքան լայն, ինչպէս առաջինը, և այս պատճառով կարելի էր խկոյն տեսանել նորա միւս ափը: Այս գետի միջից շալակով անցուց ինձ իմ ուղեցոյցը, ըստ որում չէ կար անցուցանողական մակոյկ: Մի քանի քայլափոխ արած, հասանք մի փոքրիկ ջրի որ երկայնվելով մեր առաջնը, հասոյց մեզ մինչև վերապի վերջը: Ծանապարհը որ շարունակեցինք մեք այս փոքրիկ ջրի եզրովը, էր խոնաւ և լարծուն և երբեմն նեղանումներ այնպէս որ հազիւ թէ կարելի էր ոտք փոխել, և վերայ այդը ամենայնի քաղցր էր ինձ այս ստորերկրեայ ջրի եզրումը շրջել և զմայլել զարմանալի կերպարանքովը այն բոլոր շրջակայ առարկաների, որ կոյնին այս խաւարի և տուներների թագաւորութեան մէջ, մինչև յանկարծակի մի ձայն նուազածութեան պէս հետուից ներս հնչեց ականջիս մէջ: Հիացած կանգնեցի ևս և հարցրեցի իմ ուղեցուցից թէ այս ինչ բան է. նա պատասխանեց ինձ, թէ շուտով կը տեսանես: Բայց երբ որ մեք յառաջ գնացինք, դադարեցին այդ քաղցրածայն հնչիւնքը: ազմուկը թուլացաւ և փոխվեցաւ մի մեղմ մրմնջիւն, որպէս թէ վայր էին թափվում անձրևի կաթիլներ: Եւ ինչպէս մեծ եղաւ իմ զարմացքը, երբ որ տեսայ ստուգապէս, թէ վերին ապտառածիցը, որպէս մի թանձր ամպի միջից, վայր էր հոսում անձրև և սորա կաթիլքը, որ այժմ շողշողումին մեր ծրագների նշոյլից, պատճառ էին այն յառաջուց բաժն եղանակաւ որ ձայնին: Այս բանը էր մի փոշեղէն հոսանք որ վերևից, ապտառների երակներով վայր էր թափվում գետնափորի մէջ: Մեք չէ համարձակվեցանք մեր ծրագներովը մտանալ այդ տեսարանին, ըստ որում մեր ծրագները շատ հեշտ կարող էին շեջանիլ ջրեղէն կաթիլներից և յետոյ գուցէ թէ զուր կը լինէր վերագարձի ճանապարհ որսնելը: Ուրեմն մեք շարունակեցինք մեր ճանապարհը այս նեղ ջրի երկայնութենով և շատ անգամ տեսանք կող-

մեակի լայն բաշուածներ ապառաժի պատի մէջ, որ կարծիք էին տալիս մտածելու թէ զորս էին դարձնալ միս վերապներ, Մեք անց կացանք զոցս մտօնց, մինչև իմ ուղեցոյցս նախածանոթութիւն տուեց ինձ մի անշափ փառաշէն տեսարանի մասին, որ շուտով պատկերանալու էր ինձ: Մի քանի քայլափոխ արած թէ շարած, ներս մտանք մի մեծալայելուչ տաճարի մէջ փառաշէն կամարներով որ հաստատոված էին գեղեցիկ սիւների վերայ, որ սեսս թէ կերպարանել էր մի քաջարուեստ ճարտարապետի ձեռք: Այս ստորերկրեայ տաճարը, որին չէր մտեցած ոչինչ մարդկեղէն ձեռք, երևեցաւ ինձ այն բուստին մի գործ, որ իւր կանոնաւորութենով, փառաշէնութենով և գեղեցիկութենով գերազանց էր ամենապատուական շինուածներէցը: Մերտալս լցուած ահով ու զորով, մտքս հիացքի մէջ, տեսնումն էր այս տեղ, բնութեան խորքումը, Արարչի մեծափառութիւնը մերկացած, որ և այս հանդիսաւոր խաղաղութեան ծոցումը և այս սուրբ մնայելի մէջ պաշտեցի ևս յառաջ քան հրաժարվելու այս տաճարի սրահից: Այժմ՝ մտածումները մեր ճանապարհորդութեան վերջինն. այն ուղեցոյց չուրը իւր բնմացքով առաջնորդեց մեզ դէպ ի այլ մասունքը այդ վերապի, ուր ապառաժը վերջին անգամը կամար է կապվում և ապա դարձնալ ցածանումէ, մինչև որ զուգարովումէ հասանքի հետ, ձևացնելով մի փոքրիկ կիսաշրջանակ և այդպէս փակելով վերապը, այնպէս որ ոչինչ մահկանացու չէ կարող մի ոտք ևս յառաջ կոխել: Այժմ՝ կարծումն է, թէ կը սկսանենք ամենամտ ճանապարհորդը յետ դանձալ, բայց պիտոյ էր ինձ ևս աւելի զժուարութենաների տանել և աւելի գեղեցիկ տեսարանների հանդիպել քան թէ մինչև այժմ հանդիպած էի, իմ ուղեցոյցը յետ գալու միջոցին դարձաւ դէպ ի ձախ կողմը, ուր և ևս հետևեցի նորան մի գոգաւոր ապառաժեայ պատի բացուածով: Այս տեղ հարցրեց ինձ յառաջ, արդեօք կամի՞ յանձն առնուլ բաւական երկար միջոց զուրս քերվել մի ապառաժի տակից, որ համարեալ թէ շուտաւաճող հողը. երբ որ ասացի, թէ պատրաստ եմ, ապա ասաց ինձ, որ հետևեմ նորան, բայց զգուշանամ իմ ճրագին: Յետոյ սողացինք մեք ձևերի և ոտերի վերայ գիջին աւաղի մէջ, ապառաժի բացուածիցը որ շատ անգամ հաղիւ թէ ունէր այնքան մեծութիւն որ կարելի էր իւր մարմինը միջոց զուրս սլորել: Երբ որ մեք այս զժուար անցքը կատարեցինք, տեսայ ևս վերապումը մի դէպ ի վեր բլուր, որ այնքան բարձր էր, որ վերնից, ամենաբարձր ապառաժումը, որպէս թէ ամպի մէջ անյայտանումը: Այս բլուրը այնպէս խոնաւ և լլղրձուն էր, որ ևս առաջին քայլս դէպ ի վեր փոխած, խեղոյն ցած գլորվեցայ, բայց իմ ուղեցոյցը բռնեց ձևերիցս և ասաց ինձ, որ միայն աներկիւղ հե-

տնեմ նորան, ըստ որում նա զիսեր Հաստատոս ոտք բռնել, Այժմ վեր ելանք մի այնպիսի բարձրութեան վերայ, և զորա երկու հոգից կային այնպիսի անդունդներ, որ գեղեսւ պտղատում գլուխս, երբ որ մտածումսմ զորա վերայ, Երբ որ մէք կատարի վերայ էինք, ուր բլուրը անդայտանում արատաժի մէջ, իմ ուղեցոյցը կանգնեցրեց ինձ մի տեղ, ուր կարող էի ամուր ոտք բռնել, և ասաց ինձ որ ամենեւին Հանգարտ մնայի այն տեղ կանգնած, Բայց ինքը ճրագը ձեռքին ցած լջաւ բլրիցը և թողեց ինձ միայն: Ես մի քանի ժամանակ կորցրելի նորան աչքից, մինչև որ ապա ոչ թէ նորան, այլ նորա ճրագը կրկին տեսայ մի խոր անդունդքի մէջ, ինչ տեղից նա երևումը որպէս թէ մի գեղեցիկ աստղի նման զէպ ի վեր է փայլում: Երբ որ մի քանի վայրկեան վայելած էի այս անպատմելի գեղեցիկ տեսարանը, յետ եկաւ իմ ուղեցոյցը և շարկով ցած բերեց ինձ զէպ ի փայր լջրժուն բլրիցը. և երբ որ կանգնած էի անդունդքի մէջ, վեր ելաւ նա և թողեց, որ իւր ճրագը վերևումը, ապատաժի մի նեղ ծակից զէպ ի ներքև շողշողէ, որ միջոցումը ես ձեռքով ծածկած էի իմ ճրագը, Եւ այժմ երևեցաւ ինձ, որպէս թէ մի մութ մէջ գիշերում ամպերի միջից զէպ ի ցած է փայլում մի աստղ. արդարև մի այնպիսի տեսարան որ իւր գեղեցկութենով գերազանց էր ամենայն բանից որ տեսած էի իմ սրումս:

Այժմ ամենեւին աւարտած էր մեր ճանապարհորդութիւնը, և մէք շատ աշխատութենով և դժուարութենով յետ դարձանք մեր նեղ ճանապարհորդը, կրկին անգամ Հանդիպեցանք մէք այն տաճարին, որից մի փոքր յառաջ Հրաժարված էինք. միսանգամ լսեցինք անձրևի թափվելը մեզմ մըմնջելով մտից և քաղցրեզանակ հնչելով հնուրից, և Հանգարտաճոս գետերի վերայով և վերայի արձակափայրի միջից յետ եկանք զէպ ի այն տեղի փոքրիկ դարպասը, ուր մէք յառաջուց Հրաժարված էինք ցերեկի լուսից, որ և երկարատե աղջամուղջից յետոյ կրկին անգամ ողջունեցինք. Բայց յառաջ քան թէ իմ ուղեցոյցը բացեց փոքրիկ դարպասը, ասաց նա ինձ թէ այժմ տեսանելու էի մի առասել գեղեցիկ Հանգես քան թէ իմ բոլոր տեսածները. արդարև չէր սխալվում նա. պատճառ, երբ որ նա կհասով շարք բացեց դարպասը, ինձ այնպէս թուեցաւ այր, որպէս թէ բացեցի աչքս զէպ ի Ալիզոնը¹⁾. այսպիսի Հրաշալի Հոգեպայծառ ազտալուսով լուսաորվեցան բոլոր ստարիպքը իմ առաջև. Օրը և-

¹⁾ Ալիզոն կամ Ալիզոնեան գաւառը, Յունաց և Հռոմէացոց առասպելի մտքով, էին այն փառասոր և զեցլեցուցիչ սահմանքը, ուր բարի մարդիկ մահուց յետոյ աննին ի բնանց օթեանքը. ուրեք մի է բանական զբախտ որպէս արդարեւրի կայանք:

րևումը թէ փոքր առ փոքր բացվումէ, և զիշերի աղջամուղջը չբա-
նումէ, Հեռուից կրկին տեսանվումը նախ և յառաջ խուզկրի ծուխը,
ապա և նոյն խի խուշերը. երբ որ աւելի բարձր վեր ելանք մեր,
Հանդիպեցան մեզ նոյն երեխայքը որ խաղումէին կորած ծառի բունի
մտ, մինչև որ յետոյ երկնքի կարմրափայլ ծիրանաղոյն շերտերը ներս
փայլեցին վերապի բացումից և նոյն բոպկին, երբ որ մեր գուրս է-
ինք ելանում վերապիցը, մտանումը արևը արևմտեան կողմումը.

13. Մարմնեղէն — շնորհիւ հիւ եւն թնէրէ յարմարութիւնսն հիւնն զիտ:

Մարմնեղէն աշխարհի մէջ, ինչքան որ կարող ենք նորան բու-
լորել մեր տեսութեան տակ, ամենայն բան կապակից է միտի հետ,
ամեն միւր ունի որոշեալ յարակցութիւնը միտերի հետ. սորանից
յառաջանում մի այլ ճիւղ բնագնումիւն, որ ասումէ Հեռ-Տե-
լե-Նի-Ն (Telelogia) որ և քննում է թէ ինչ խորհրդով ամենայն բան
կար աշխարհի վերայ, Այլև այս խնդիրը թէ ինչ էր խորհուրդը և
ինչպէս էին հնարքը որով լինումը այդ փոխադարձ կապակցութիւնը,
այնքան շատ պատշաճաւ որ ու հարկաւ որ է մեր բականութեանը, ինչ-
քան որ խնդիրը պատճառի և ներգործութեան վերայ.

(Գրգանաւոր մարմններն են առաւելապէս, որ շատ պայծառա-
պէս ցուցանումեն մեզ խորհուրդ ու հնարք ասած բնութեղութիւնը,
այլև ուսուցանումեն մեզ թէ գոքա չէին մի այնպիսի բան որ լիկ
յառաջացած էր մեր իմացականութեան մէջ, մեր նկատողութիւնը
միմեանց հետ կապակցելու համար միայն, Ամենայն որգանաւոր մար-
մին, թէ բուսական և թէ շնչաւոր, է մի առանձին ճարտարակերտ
ամբողջութիւն, որի մէջ բոլորը խորհուրդ և փոխադարձաբար նոյն-
պէս հնարք է, ամբողջը կատարելագործելու համար. Զոր օրինակ
տերեւները են ծառի աճելութեան գլխաւոր գործարանը և անդրադար-
ձաբար պահպանվումեն ծառի կողմից: Մի շնչաւորի ամեն մի անդամ,
ամեն մի անօթ կապակից է միտերի հետ, ամուր մասունքը հոսա-
նուաների հետ, կազմուածքը կեցութեան եղանակի և այն տարրի հետ,
որի մէջ պիտոյ է սպրի նա, և այն սնունդի հետ որ պարարտած
է նորա համար. Կոր բնութեանիւններն աշխատեցուցիչ խուզարկու-
թեաներովը յազմող սպաղոյցներ շատ ենք ասացել թէ տունկե-
րի և թէ շնչաւորների ճարտարաչէն կազմածի մասին. Զոր օրինակ,
ով կարող է առանց հիմնալու նկատել Արանեախ բնութի պատկերա-
ցոյցների մէջ կազմութիւնը ուսնու որդի, որի մարմնը պարունա-
կում չորս հազար մկնամիտերից աւելի: Ինչքան ճարտարակազմ էր
թռչունների մարմնը նոցա շարժողութեանների համար այն տարրի մէջ
որ աւելի թիւթէ է քան թէ նոցա մարմնը. Մեր յատուկ մարմնը,

քանի՜ քանի մտածութեան նիւթ է տալիս մեզ իւր բոլոր մասնե-
րի յարմարագորութեան վերայ, թէ ինչպէս սնանու մէ նա, գործ է
ածում իւր անդամները, և մանաւանդ սպասար է լինում մեր հո-
գեղէն կարողութիւնքը կերպարանելու համար:

Մի օրգանաւոր մարմին անչափ առաւել է քան թէ մի մեքե-
նայ. մի մեքենայի մասունքը շարժումն միայն մինը առաւել մտա-
կայ միւսովը, բայց առաջին զրգողութիւնը գալիս է դուրսից: Օրգա-
նաւոր մարմինը իւր շարժութիւնների պատճառը ունի իւր մէջ յառ-
կապէս: Նա ունի կենդանական զօրութիւն որ բաժանու մէ իւր մէջ ըն-
դունած նիւթերին և ստրանց նորանով սեփականու մէ իւրեան, որ հրա-
ժարված նիւթը միւսանգամ լքանայ: Մորանով կատարվում է կերպա-
րանագործութիւնը սկզբնական սերմից, այլ և մարմնի աճելու թիւնը:
Այն մասունքը, որոնց պաշտոնը էր պատրաստել անդարար հիւթը,
պահպանվում են դարձեալ մարմնի կողմից. այն ոմանք խանդակու-
թիւնք մարմնի մէջ վերանում են կամ թէ անվնասակար են կացուցան-
վում կենդանական զօրութեան գործականութեանով: Այս, անհաս-
կանալի զօրութեանով, որ իմաստասիրում ենք նայելով միայն նո-
րա ներգործութիւններին, կատարվում է ծննդագործութիւնը, կենդա-
նական զօրութեանից մի փոքր բան այնպէս կապակցվելով մարմնի մի
պատշաճաւոր մասնի հետ, որ նա առանձնացած կարող է տեսել և
կերպարանվիլ որպէս մի ամենին նման մարմին: Այս բոլոր բաները
չէ կարելի բացայայտել միայն այս կամ այն զուգահրութեանով շար-
ժողական զօրութեանների:

Բուսականքը անկերպարան նիւթը կապակցում են կենդանական
թագաւորութեան հետ. նորա օդի և հողի միջից ներս են ընդունում
իւրեանց բաղկացական մասունքը և գորանից պատրաստում են օգտակար
սնունդ շատ շնչաւորների համար: Այս խորհրդին պատշաճաւոր էր
բուսականների բազմօրինակութիւնը: Թէպէտե ցորա շատ դանազան
են, այնու ամենայնիւ միատեսակ են կերպարանութեան, անդառու-
թեան և ծննդագործութեան մասին: Բոլոր անկական թագաւորու-
թիւնը է մի մտածութիւն, 40,000 պատիկ այլալյաւ:

Ընչաւոր թագաւորութիւնը ևս առաւել ձոխ է քան թէ բու-
սական թագաւորութիւնը. գոնեայ ցուցակի մէջ ընկած տեսակ տե-
սակ շնչաւորների թիւը համարեալ թէ կրկնապատիկ մեծ էր քան թէ
գիւնական կարգի տակ գրած բուսականների տեսակքը: Բոլոր շնչա-
ւոր թագաւորութիւնը է որպէս թէ մի մտածութիւն որ շատ հազար
անգամ կրկնապատկած է, նայելով տարրի կամ բնականների զանազա-
նութեանը առհասարակ, նոցա անդառութեանը, պիտոյքներին և
վերաբերութեանը ղեպ ի այլ շնչաւորների օգուտը, այլ և նայելով
տունկերի շատ կամ նուազ ձոխ աճելութեանը:

Շնչաւորներէ մէջ յաւելանումէ զորս վերայ և մարմնաւոր կազմածի յարակցութիւնը հոգեղէնի հետ. պատճառ, մէք տեսանումներ որ շնչաւորքը ունին մի ընդարդյա յաջողակութիւն գործ գնելու իւրեանց անդամները ինչպէս պահանջումէր նոցա պիտոյքը, և առհասարակ զգուշանալ իւրեանց բարեկեցութեանը, այլև գիտնն նոքա խոյս առաջ մնասակարիցք: Արեմն մարմնաւորք պիտոյ է նոցա մէջ հոգեղէնին համեմատ կազմած լինէր, և երկուքը պիտոյ է այնպէս պատրաստած լինին, որ ամեն մի տեսակը միւսերի խուռն բազմութեան մէջ կարող էր պահպանել իւր անձը: Բնական ազդեցութիւնը և ճարտարաբութիւնը լցուցանումեն բանաւորութեան պակասութիւնը և էին այն յաջողակութեաների փոխանակ, որ ստանումէ մարդա խորհրդով և զիտաւորութեամբ:

Մեր երկրային մարմնը նոյնպէս օրգանաւորված է մի յատուկ կերպով. պատճառ, նորա մակերևութի վերայ եղած նիւթերը անդադար ձևափոխութեան տակ են, այնպէս որ ամբողջը այնու ամենայնի մտումէ իւր հաստատ գրութեան մէջ: Արեմն կայ այս տեղ մի տեսակ կարողութիւն, որով ամենայն բան անյապակելի, մի և նոյն օրպիտութեան մէջ պահպանւումէ: Նկատելով սարերը և նոցա մէջ պարունակված շնչական և անկական մնացորդները, տեսանումներ, որ մեր երկիրը կրել է մեծ և շատ սաստիկ յեղափոխութիւնք: Ե. յնքան ևս արժանի է զարմանալու, թէ ինչպէս, ամենասաստիկ զղջդիւնների մէջ, կարող էր յառաջանալ մի այդպիսի յարմարաւոր ընկալան բուսականների և շնչաւորների համար: Արդարև սարերը չէր պիտոյ չափել ու կշռել զեղեցիկութեան կանոններով. այդպիսի ահագին մարմիններ չէին կարող գոյանալ առանց արտաքին աւերագործութեան:

Երկրի յատակը ամենայն տեղ պիտանի է բուսականների և շնչաւորների համար, և սոքա կէս մի պատրաստած էին ցամաքահոգի համար և կէս մի ջրի համար. մինը վերաբերւումէ զէպի միւսը: Մի բնեւոյց զէպի միւսը ամենայն տեղ գործ է զբլում: Երկրի մակերևութի այնքան անհասարակ կերպարանքը շատ յարմար էր այս վախճանի համար: Սարերը սնուցանումեն տունկեր և շնչաւորներ, որ ափարկների վերայ չէին կարող աճել:

Գուրը թեպէտ ծածկումէ մի շատ մեծ բաժին երկրի տարածութեան վերայ. բայց եթէ աւելի սակաւ լինէր, ապա չէր լինելու այնքան անձրև, ինչքան հարկաւոր է, և գետերը կ'ունենային ջրի պակասութիւն: Անտարակոյց, այն մեծ բազմութիւնը ջրի կլանելով խեղճողական օդը և այլ տեսակ նիւթեր որ մնասակար էին շնչաւորներին, արդիւնաբար է լինում փոքրացնելով նոցա շափաղանցութիւնը:

Ինչքան սթեան կորուսանումին ցամաքային կենդանիքը, այնքան շահգումակին ջրայինքը :

Չ բարաշխութեան համար ցամաքի վերայ, եղած է շատ խնամատարութիւն : Պարերը, մանաւանդ թէ բարձր սարերը բնումն շոգիքը օդի միջից, այնպէս որ նորա թանձրանալով նոցա վերայ բազկացնումն աղբիւր : Երկրայտասկի անհասասարութիւնը պատճառ է, որ ամենայն տեղ գտանջումն մեծ ու փոքրիկ գետեր, բաց ի մի քանի աշխարհներից որոնց վերայ փոքր էր եղած բնութեան շնորհը :

Հանքերը մի շատ խորհրդաւոր պարզեւ են մարդկային ազգին : Պորա են շատ բացայայտ ակնարկութիւն դեպ ի նորա պիտատութիւնը և գիտնական կրթութիւնը : Դիցո՛ք թէ չը կար երկաթը, ինչպէս ամենեւին այլ պիտոյ է լինէր մեր գրութիւնը : առանց բաւարարին կունեայինք միայն խուղեր կաւից և ծառարուններից :

Օդը որ շրջապատում է մեր երկրային մարմինը, մտա կապակցութիւն ունի բուսականների և շնչաօրների հետ : Բճեցականներին հաստացանում են նոցա սննդեան մի կարեւոր մասը և ընդունում իւր մէջ նոցանից արտաշնչող օդատեսակ նիւթերը : Շնչաօրների կեանքը պահպանելու համար, անհրաժարելի հարկաւոր է նա : Կոր ժամանակներում՝ արած յայտնագործութիւնը թէ օդը բաղադրած է երկու անհասասարակերայ նիւթերից, ցուցանում նորա պատրաստութեան գույքայարմարութիւնը : Օդը ջերմութեան օգնութենով լուծանում է ջուրը, ամպերի մէջ հաւարված և արձակված շոգիքը տանում է իւր հետ և դեպ ի վայր իջանելով արբուցանում շնչաօրները և բուսականները : Բաւական շատ շնչաօրների և միջատների համար սպասաւոր է նա որպէս հնարք արագապէս շարժողութեան մի տեղից դեպ ի միւսը : Մեր լեզուի գործարանը ունին ակնյանդիման յարակցութիւն օդի այն յատկութեան հետ, որ նա իւր ձգականութենով առանում թրթրական շարժողութիւնը, և ականջը գործակից է լինում որսալով այդ շարժողութիւնքը :

Ջերմանիւթը և Ելեքարականութիւնը մեր երկրային մարմնի անորգաւոր մասների համար նոյն բանն էին, ինչ որ կենդանական զօրութիւնը էր օրգանաօրների համար : Ջերմանիւթի միջնորդութենով պահպանվում է կերպարանքների անպարտ փոփոխութիւնը, և օրգանաւոր մարմինների մէջ ևս երևում են մտա լծակից կենդանական զօրութեան հետ : Ելեքարականութիւնը ցուցանում է իւր ազդեցութիւնը մանաւանդ թէ օդի մէջ և գուցէ թէ նորա մէջ ձեւնտու էր ձգական զօրութեան պահպանութեան և առողջութեան : Կա ներկայ է նմանապէս ամենայն մարմինների մէջ թէ հասասարակչիւ կացութենով, և թէ կապած զրութեան մէջ, Ելեքարական զօրու-

Թեան անսո՞՞ր, այո յաճախ զարմանալի ներգործութիւնք պատճառ
են տալիս զուշակելու մեզ, թէ նորա կարող էին սպասաւորել ինչ
ինչ զեռես մեզ անյայտ խորհուրդներէ:

Այսը ունի ամենամբձաւոր յարակցութիւն աչքի կազմածի
հետ, որ իւր բեկանող նիւթերովք առարկայի մի կէտից արձակվող
լուսեղէն շատախորքը շատ ճշտապէս դարձնալ միասորում մի կէտի
մէջ, մարմինը մեզ տեսանելի կացուցանելու համար: Աուսի շատա
խորհրդի անհասարակերպութիւնը սպասաւոր է այն խորհրդին, որ
գուների բազմօրինակութենովք աւելի արագ և հեշտ զանազանելի կա
ցուցանէ առարկայքը, այլև քաղցրացուցանէ մեր տեսութիւնը: Այսը
է իմացական կապը աշխարհային մարմինների մէջ, ինչպէս քարշողա
կանութիւնը է մեքենական կապը:

Սե՛ծ աշխարհային մարմինները շատ ճիշդ լծակից են միմեանց
հետ. մեր արեգակը տալիս է մոլորակներին և նոցա արբանակներին
լոյս և ջերմութիւն. նա անառարկոյս սպասեր է և մի այլ կերպով
այն բազմութիւնը կամեններին (պոչաւոր աստղներին) որ նոյն օրէնքներով
ինչպէս մոլորակները, շարժումն իր իր համակարգութեան գլխա
ւոր մարմնի շուր կողմով, թէ վերադարձական ընթացքներով և թէ
այնպիսիներով որ վազու մէկն այլ արեգակների սահմանի մէջ¹⁾: Աս

1) Արեւու աստղաբաշխները մեծ ուշագրութեամբ սպասումն մի շատ մեծ կո
մախ կրկին երեւելուն, որ, ինչպէս շինչ և իսկէ գիտնաւորքը յառաջուց ստան
են, հասանական է որ 1856 ից մինչև 1860 թուականը պիտոյ է տեսանելի, որ
և, ինչպէս կարծումն, մի և նոյն, գերբիմակ լուսափայլութեամբ տեսան կամեն
է, որ երեւցած է 1263 և 1556 թուականին: Թող մի քանի բառ խոսե՛ք այս
տեղ այս կոմախ վերայ: Պատմութեան մէջ յիշատակած առաւել մեծ կամեններից
մինչ է այն, որ 1263 թուակ. միջոցին երեւցաւ երկնականների վերայ: Համարե
թէ բոլոր պատմիչքը այն ժամանակի իսկումն զորս մասին զարմացրով ու հիտ
քով. ոչ մինչ չէ կարող մտարեթէ թէ իւր կեանքի մէջ տեսած էր զորս հետ
համեմատելի կամա: Իւր գերբազանց լուսափայլութիւնը ցոյց տուեց նա Օգոստոս ամ
սին: Երբ որ նորա գլուխը արդէն տեսանելի էր արեւուն հորիզոնի վերայ, ա
ռաւստան վաղ, ապա նորա պոչը պարզվում էր բացարձակ երկնի միջոցի վերայ զեղ
ի արեւուաշ: Չինացի և Եւրոպացի մասնապիկները վիշտում նորա ահաբեկ մե
ծութիւնը, Չինաստանումը երեւցաւ նորա պոչը ոչ թէ միայն 100 աստիճանաւոր
երկայն, այլև կորացած և նեւաւորված որպէս մի թուր: Նա կատարեց իւր ընթացքը,
սկսանելով Եւրասիոյ աստղադասարանից և անցանելով Ինչոյգանի և Արկուսի աստղերի մի
ջից զեղի Օրիոնը: Արեւու աստղաբաշխների 2 ին երեւցաւ վերջին անգամը,
ուրեմ շորթորդ Սիբրանոս Պատի մեռանելու գիշերին, և, ինչպէս այն ժամանակի
կարծիքն էր, ծանուցանելով այս Պատի կատարածը:

Մի նշանապատի շատ մեծ կամա երեւցաւ 1556 ին. Գեորգիարի վերջին արևու մը,
կատար աստղադասած մէջ, որ և շատ ճշտութեամբ նկատեց Պատլոս Պարթևիկոս պո

բելի է նայնպէս, որ նա, ինչպէս միւս անհամար արեգակները, սպասաւոր է այնպիսի խորհուրդների որ անյայտ են մեզ :

Այսպէս ահա տեսանումներ, որ մարմնեղէն անխարհումը, թէ փոքրիկ և թէ մեծի մեջ ամեն մի՞նք պատշաճապէս կազմած է համեմատելով նորան այն բոլոր բաների հետ, որոնց հետ կապակից էր նա :

Լատական աստղաբաշխը հինգերորդ կարգու կայսրի: Այս կամեմն ասումն էրբեք և Մեծաբնիկանն կամեմ, որովհետև Մեծաբնիկանը բան զրեց զորս վերայ: Մի անկի յետոյ ժամանակի աստղաբաշխ, Դանթհետն անուն, հաշուելով զաստ, որ այս կամեմը շէր մի այլ քան թէ 1263 թուականի երեկոսը և սահմանեց նորա շրջանաւորութիւնը 292 տարի ժամանակով: Այս աստղաբաշխութիւնը կոտարելուպէս հաստատեց Պինդըն, և շինգը զձայրեց այդ մեծ ուղեորի Խնտաբո՛ւ՛ը մի ցայտկի վերայ և որսւնց ներկայ դարս որպէս զորս վերադարձի ժամանակ: Ինչպէս յայտն է, որդին 1818 թուականին բուական հաստատ յոյս ունէին տեսնել նորան, բայց չէ տեսն: Աստ նորոց, բաժնի աստղաբաշխը սահմանել է այդ կամեմի շրջանաւորութիւնը 111,146 որ ժամանակով. ուրեքն այդ մեծ կամեմը տեսանելի կը լինի երկրի բնակիչներին, 1860 թուականի Օգոստոսի ամսումը: Բայց միս զնելով այլ նկատութեաների, այս բանը լինելու էր մի քանի տարի յառաջ, այսինքն 1858 թ: շինգը իւր ծանօթութիւնը այս մեծ անկախելի կամեմի վերայ, որի հետ մի և նայն է համարում նա այն ուղեոր աստղը որ նկատած էր 103 թ, Չիստասանումը 683 թ, և 975 թ Գրիստոսից յետոյ, այսպիսի բառերով. «Այս է ահա այս կարևոր ինչորի որպիսութիւնը. թէ երբ կը լուծանվէր զա, այդ ատին պիտոյ է մեզ ուշագիտ լինել այն միջոցին որ կայ այսուհետև մինչև 1860 թուականը:»



ՊԼՏՄԵՐԵՆԵԿԻՆ ԵՒ ՆՄԵՐ՝

ԱՐԵՒՄՏԵԸ ԵՒ ԵՂԵՆՈՒ ՎԵՐԸՆՈՐՈՎՈՒԹԻՒՆԸ ՈՐ ԵՄԵՏՆԻ Է
ԱՆՈՒՆՈՎԱՍ ՌԵՔՕՐՄԵՆԻՆ Է

Տասն և վեցերորդ դարու եկեղեցական բարեկարգութիւնը և մինը այն համաշխարհայեւ խորհրդաւոր անցքերից, որ մեծապէս ներգործեւ են այն ազգերի բոլոր կրթութեան և լուսաւորութեան վերայ, որ մասնակից էին այդ անցքերին որ և թագաւորութեան և եկեղեցու մէջ յառաջացուցեւ են այնքան նորանոր կերպարանագործութիւնք որոնց վերջը անորոշելի է զեռեւս, Այդ Ռեֆորմացիան ստորագրելով իւր անձը քրիստոնեական Արմէնի տակ, այլև գոյութիւն ըստանալով նորանից, այնու ամենայնիւ ունէր իւր քանակումը ամենեւին մի այլ հանդէս, ամենեւին մի այլ կերպով ձևաւորված աշխարհ, որի մէջ պիտոյ է հրապարակ գուրս զար ինքը, Թեպէտ Ռեֆորմացիայի դիտաւորութիւնը այն էր, որ յետ գառնայ զեպ ի նախնի քրիստոնէութեան պարզութիւնը, վերափն հաստատել Առաքելական եկեղեցու մարբութիւնը, բայց միանգամայն և պիտոյ է նորանով բացվէր մարդկութեան համար մի նոր ստպարեզ իմացական յառաջադիմութեան, Ռեֆորմացիայի արմատական միտքը որ, թէ պայծառապէս և թէ աղօտապէս հասկացված, քաջալերութիւն էր սալիս ամենայն, նորոգութեան ցանկացող մարդու, այն էր որ ազատ շինէ մարդկային հոգին, և սրտի վկայութեանով հասկայնէ նորան իւր ազատութիւնը, Վաղուց ահա Քրիստոսի աւետարանով քարոզված էր ճշմարիտ մարդկային ազատութիւնը, և քրիստոնէական կրօնը մարդկելով անհամար եկամուտ գատարկ և անխորհուրդ ձևերից, պիտոյ է զարթնուր հոգին, ճանաչէր ինքը իւր անձը և իւր ազատութիւնը, և իշխան գառնար իւր վերայ: Միջին դարերը իւրեանց խալաւածամուկ ձևերով, աւարտել էին արդէն իւրեանց ընթացքը, և այն մտացածին, մութն և մի քանի, սիրտ գրաւող, կախարդական ճրագներով լուսաւորված աշխարհի կործանվելուց յետոյ, յիստի նոցա ծրնունքը ևս, այն եկեղեցական ծիսապաշտութիւնը կորուսել էր իւր խորհուրդը և յարգը, Շատ իրողութիւններ, որոնցից անտարակոյս երևումէր, թէ մարդկութիւնը արգարև յառաջ է գնացել, համեմատե-

լով միջին դարերի կրթութեանը, քարոզումին յայտնապէս, թէ մի նոր դարապլուտ պիտոյ է սկսանքի մարդկեղէն կեանքի համար: Արժովհետեւ քրիստոնէական աշխարհի վերանորոգութիւնը հնարաւոր եղաւ այն նախադասարաստոյ իրողութեաններովը միայն, սորա համար, այդ բանը չէ պիտոյ համարել մի հաս մարդու գործ, այլ մանաւանդ թէ հետեանք շատ և աղղու միջնորդող յոռաջանաց անցքերի, որ եթէ չը լինէին, չէր կարող նա ընդունակ հող գտանել իւր սերմերի համար: Այս անդ յիշատակումներ միայն Յապարտութեան արուեստի գիտար, որով կարելի էր մարդու մասնութիւնը որպէս թէ հողմի թեւերի վերայ տանել աշխարհից դէպ ի աշխարհ և փարատել միջին դարերի խաւար մատախուղը. երկրորդ, ովկիանոս ծովի այն կողմումը արած յայտնագործութիւնը, որ ընդարձակեցին մարդկային տեսութեան շրջանակը, որ մի ներդաստան, ամենօրեայ որպիսութեանից զարձուցանելով աչքը ուղղեցուցին դէպ ի այնպիսի աշխարհներ, ուր պատկերանումին ամենին նոր կենդանութեան նշաներ, մի հրաշալի լուսակամարով պատած: Բայց սոչանից ատուել ներգործական գտնաբերումը. ճարտարութեանների և գիտութեանների վերածնելութիւնը ԱՅ երրորդ դարու մէջ, որ այն չոր ու ցամաք, անհիթ և անհամ դարձեցանութիւնը (սքոլաստիցիզմ) ցած կործանեց իւր, յափշտակութեամբ ստացած աթոռից, և անցած գնացած Յշն և Հռոմեական աշխարհի հոգեղէն գանձերը, որ գրեթէ մտացած էին, բայց պարունակումին իրենաց մէջ բուն մարդկային կրթութեան և կատարելագործութեան շատ և ամենազեղեցիկ վաստակներ, շահեցնելով և գործ գնելով, ուղղութիւն տուեց հոգուն դէպ ի մի ասելի ճարտարաց անդաստան, քան թէ այն կարճեցած գիտութեան անդաստանն էր որ մշակվել էր բարբարոսական միջին դարերի մէջ: Այն մարդավայելուչ ուսումնասիրութիւնը, որ շատ մտ եղայրակից էին ճարտարութեանը, շուտով հետեւողներ և հասկացողներ ճարեցին իւրեանց համար, և խալիսայի կողմից իրենաց պայմատագործող և կենդանացուցիչ ճառագայթները արձակեցին դէպ ի այս կողմը: Գերմանիայի վերայ, ինչ անդ նորա Բէլյիլինոս, Երասմոս և զոցա պէս ազամարդերի ցոյց տուցին մարդկային հոգու այնպիսի նոր, ասելի մարդավայելուչ շախմներ, որ յոռաջուց մտքից ևս անցած չէին: Այս շախմներին արխարար հետեւելով և առանց շեղվելու յոռաջ գնալով մարդիկը, պիտոյ է վեր երևեր մի բոլորովին այլակերպութիւն հոգեղէն կենդանութեան մէջ: Բայց այս դիմանական արդիւնքների հետ, որ մանաւանդ թէ յոռաջացած էին նոր հիմնարկած համարարաններից, պատրաստվեցաւ Գերմանիայի մէջ մի տեսակ ժողովրդական մատենագրութիւն, որի մէջ ազգային հոգին պարզամիտ և

ղուարձախօս կերպով Հանդէս կհաւ, և մարդու առողջ բանականութիւնը խիստ և ազդու դատաստանի տակ ձգել այն ժամանակի մուրուսութիւնքը և ապականութիւնքը թէ ընկերական կեցութեան և թէ կեկեցելու որպիսութեան մէջ: Այսպէս փոքր առ փոքր դուրս կհաւ մարդերի գլխից այն միջին դարերի խաւարը և հետ գհետեւ շինվեցաւ մի հասարակաց կարծիք, այն առաւել զորաւոր ոգնականը Ռեֆորմացիայի, որ և յատկապէս յազմող դուրս բերեց նորան: Ի՞նչ արդարեւ անպատճառ հարկաւոր էր մի կեկեցեցական վերանորոգութիւն զըլլ խից մինչև ոտք, այդ բանը 15 ևրորդ դարու մէջ կզամ մեծ կեկեցեցական ժողովների մէջ շատ անգամ խոստովանված էր, և այն ժամանակից յետոյ պակասած չէին մարդիկ, որ յայնմի ու ծածկապէս գանգատէին կեկեցեցական կեանքի սարականութեան և այրանցակութեան վերայ և շատ կարօտով փափայէին մի վերանորոգութեան:

Այն հերձուածքը, որ հռոմեական ընդհանուր կեկեցեցին դատապարտել ու ճնշել էր, որ և պահպանուեալին իւրեանց մէջ աւելի մաքուր քրիստոնէական ուսումի սերմերը, արիւնաշարախ հայածանքների տակ ընկնելով, այնու ամենայնիւ չը դադարեցին մեղադրել թաւաարեալ կեկեցեցու արտատարութիւնքը և պահանջել մի հիմնաւոր ուղղադրծութիւն: Գայթակեցեցիչ մանաւանդ էին կեկեցեցու աշխարհական կառայարութիւնը, արտաքին աստուածագաշտութեան անխորհուրդ մեքենայականութիւնը, այն երկար ու ձիգ և մի մասնով յիմար ծիսապաշտութեան ազմուկը և հանդիսարութիւնը, այլև խանդաղաց կերբիկոսների ամբարտաւանութիւնը, որոնց մէջ և որոնցով չբացել էր կեանքի հոգեղէն տարրը, և հոգին ասես թէ ինքը իւրեանից հրաժարվել ու հեռացել էր: Այլերկիւնները միայն բաղկացնուեալին կեկեցեցին, և սա այնպէս տիրապետել էր մարդուս խղճի վերայ, որ սորա հոգին ու բանականութիւնը չէր աւելի իւր սեփականը, որի հետ կարող էր վարվել ազատապէս: Բայց կերբիկոսների արդիւնքը կապակից էին ժողովրդի երկխայտութեան և տգիտութեան հետ: քահանան համարվուեալ անհրաժեշտութիւն միջնորդ Աստուծոյ և մարդերի մէջ, և հաւատքը գեպ ի այս միջնորդը գրեթէ բոլորովին արտաքանել էր սրտերից հաւատք գեպ ի Աստուած: Ահնայայնի խառնազնաց վարքը թէ ստորին և թէ վերին կարգի հոգեւորների, չէր կարողանում նուազեցնել այն կոյր հնազանդութիւնը, որով ժողովուրդը հետևուեալ իւր կեկեցեցական հոգարարձունների երկխայտալայել առաջնորդութեանը: Այսպէս, մարդադիր կարգերը և անպաշտութիւնը դարձել էին ճշմարիտ քրիստոնէական հաւատի փոխանակ, շողորթիմ կերպարանքը և կեղծաւոր բարեգործութիւնը, մաքուր քրիստոնէական հաւատի նշան: Այս անկարգութեան գլխաւոր բնակարանքը էին

վանքերը, որ սկզբումը ունեւում առաւել ազնիւ խորհուրդներ, դարձել էին այժմ օթեւանների արեղանների աւելորդ բազմութեան, որ ոչինչ բանով նշանաւոր չէին, եթէ ոչ իրեանց սոցիալութեամբ և անտակութեամբ, իրեանց աղտերութեամբ ու դատարկագորտութեամբ, որ և խորամանկութեամբ օգուտ քաղելով ժողովրդի անպաշտութեանց, իմանումէին հաւաքել շատ անգամ ահագին հարստութիւնք։ Բայց եկեղեցու բարձր կարգաւորքը ևս չունէին երբեմն աւելի վերին կրթութիւն, քան թէ ստորին կլերիկոսքը, այլև այնքան ուշադիր էին իրեանց աշխարհական օգտին, որ անկարելի էր նոցա չը ծնել իրեանց աչքը դէպ ի Հոռոմ և հաստարիմ չը մեալ Պապին որ նոցա իրաւունքների պաշտպանող տէրն էր։ Գերմանական ազգի սպագայ գանդաւաններից յայտնուեալ, որ կլերիկոսքը հետ զհետեւ իրեանց ձեռքն էին ձգել աւելի քան թէ ժողովրդի սեփականութեան կէս մասը, Հոռոմեական աթոռի շահասիրութեան և առհասարակ պատճառով, տեղակալ եպիսկոպոսները շատ և շատ անգամ անփոյթ էին առնում իրեանց վիճակների հոգեւոր և մարմնաւոր օգուտը։ Անչափ արծաթ ու ոսկի հասումէին Գերմանիայի վիճակներից դէպ ի Հոռոմ, միշտ նոր ի նորոյ տասանորդներ և տարեկան վրձարներ ուղարկելով այն տեղ, Պապերը միշտ նոր ի նորոյ յորեւելան սօնախմբութիւններ, մեզքի թողութիւններ հրատարակելով և արծաթ պահանջելով։ Այն տարեկան եկամուտքը որ Պապը ստանումը Գերմանիայից միայն, հաշված են մինչև 300,000 գուլդն, կամ 160,293 մանեթ արծաթ։ Մանաւանդ թէ վերջին Պապերը, Ռեֆորմացիայից յտաջ, մինչև այն տեղ անամօթացան, որ զուրա գալով պատշաճի սահմանից, սկսեցին իրեանց անձը, իրեանց խառնագնաց և արատաւոր վարքերի հետ միասին, պաշտպանել այն հետ ու յարմար պարսպի քամակումը. «Թէ պիտոյ էր նայել Պապերի հաւատին, և ոչ թէ նոցա վարքին,» Բայց Պապը, որպէս ծայրագոյն իշխանաւոր եկեղեցու վերայ, ջանադիր էր այն բանի մասին առաւելապէս, որ ազգերիցը կողոպտե իրեանց ազգային քնաւորութիւնը, և այդպէս աւելի ամուր կապով շղթայէ նորանց Հոռոմի հետ և ծառայ շինէ իւր յատուկ օգուտներին։ Այդ պատճառով Հոռոմը հաւան չէր ժողովրդի ազգային բարբերին և օրէնքներին. այդ պատճառով արտաքսած էր մայրենի լեզուն Աստուծոյ պաշտօնից. այդ պատճառով սիրելի էր Հոռոմին, թէ քարոզելով և թէ հարկադրելով, պահպանել այն կապած ու ստաած միակերպութիւնը ամենայն եկեղեցական բաների մջ, Այն իրաւունքը, որով Պապը իշխանութիւն ունէր ընտրել առաւել բարձր հոգեւոր պաշտօնակալքը, կարողութիւն տուց նորան իւրահաճոյ մարդերով լցուցանել Գերմանիայի սահմանները և

նոցանով թագաւորել սոցա վերայ: Պապերի օգուտը պահանջումք, որ նորա երբէք թող չը տային գերմանական տէրութեանը զորանալ միութենով և ինքիշխանութենով: Այսպէս ահա, այն բոլոր քանազրուութիւնք որ 15 երորդ դարու վերջումը և 16 երորդի սկզբումը արեցին, Գերմանիայի ներքին դրութիւնը նորակերպելու համար, խափանվեցան մանաւանդ թէ Հռոմի գործակցութենով: Թէպէտև բոլոր գանդատանքները, որ ամենայն տեղ արած էին այն անկարգութենաների վերայ, որ համառու պատմեցինք ահա, լսելի չեղան և ոչինչ ուղղագործութիւն չը յտաջացուցին, այդու ամենայնիւ անօգուտ շանցան, ըստ որում սորա էին, որ պատրաստեցին այն եղբայրական դաշնաւորութիւնը հասարակաց կարծիքի և Ռեֆորմացիայի մէջ, և այդպէս ճանապարհ թացեցին սորա համար թէ արտաքին աշխարհի հանդիսումը և թէ հոգու և սրտի ներքին աշխարհի մէջ:

Մի շնչին բան է երևում Ռեֆորմացիայի անմիջական առիթը, Այն թողութիւնը, որին հակառակ դուրս գալով Աւթերը, սկսեց իւր վերանորոգութեան գործը, տալիս էր ազատութիւն այն միջրեւրի պատիժներից որ պիտոյ է կրէր մեղաւորը որպէս այս կենսութեան, նոյնպէս և ապա քաւարանի մէջ, Եկեղեցական իշխանութիւնը կարող էր այս պատիժը փոխել, կամ թէ ամենևին թողուլ, եթէ մեղաւորը կը հատուցանէր մի որոշեալ քանակութիւն արծաթի և կը խոստանար այս կամ այն ինչ բարեգործութիւն կատարել: Վկրումը եպիսկոպոսք ևս ունէին իշխանութիւն հրատարակելու այդպիսի թողութիւն, բայց յետոյ, Հռոմեական աթոռը բոլորովին փրայտեաց այդ թողութեան գործին, ըստ որում առատ եկամուտքի աղբիւր էր. յտաջուց զգուշութեամբ միայն օգուտ էին քաղում այդ աղբիւրից, բայց 15 երորդ դարու վերջումը յետ գրեցին ամենայն զգուշութիւն և ամենայն պատկասանք: Մի նոր թողութիւն ծանուցանելու առիթ պակասում չէր երբէք. յորեկան և թողութեանկան տարիքը շատանումէին միշտ. այլև հռոմեական հոգևոր պալատը չէր թագուցանում աւելի, թէ թողութեան խորհուրդը այն էր միայն, որ արծաթ գերիւն քրիստոնէայ ազգերից: Գերմանիա էր մանաւանդ, որ այս թողութիւն վաճառողների անխնայ և անամօթ հարկահանութեան տակ շարաւրդումէր: Այս հռոմեական գործակալների գլխաւորը էր այն վատահամբաւեալ Յովհաննէս Տեցըլ զամինիկեան արեղան, որ զանազան պապերի իշխանութեան տակ իւր գործը շերմեանդութեամբ կատարած էր. այս մարդը մի չափազանց և անմտ մեծախօսութենով իմանումէր գոթիլ և բարձրացնել իւր սպրանքը ժողովուրդի առաջև, և ոչինչ համարելով այն տակութիւնը որ բարձել էր իւր վերայ իւր գայթակղեցուցիչ բարբոժ, անամօթարար հաստատումէր հրապա-

բակաւ, թէ Փրկիչը բոլոր կարողութիւնը յանձնել է Պապին և ինքը
չէ կառավարում աւելի: Կա թողութիւն էր տալիս և այնպիսի մեղ-
քերի, որ մի մարդ զեռեւ գիտաւորութիւն ունէր գործելու, և միայն
չէր զնում Պապի կոնդակներէ մէջ ասած բանին, թէ այն մարդը որ
թողութիւն էր ստանալու, պարտական էր օւնենալ զոնեայ մի զող-
ջացող սիրտ և մի խոստովանող բերան, այլ ստանց որ և իցէ պայ-
մանի վաճառուներ իւր ապրանքը և շահվումներ առատապէս: Այս ան-
գամն Պետրոսի եկեղեցու շինութիւնն էր, որի անունով մեղքի թո-
ղութիւն էին քարագում, թէպէտ հաւարած արծաթը այլ բանի վե-
րայ գործ դրեցին. գորա մի մասը Առն տաններորդ շույլ Պապի
զանձառունը մտաւ, և միւս մասը պիտոյ է լինէր հարսնական բա-
ժինը Պապի քուեր համար: Կոյն իսկ Հռոմի մէջ ծաղր էին անում
զերմանական բարբարոսների համբերութեան և թեթեւհաստութեան
վերայ, և թողութեան եկամուտըրը ասումին «Գերմանացոյ մեղքեր»:
Թողութիւնը վաճառութիւնը ստորաբար այսպիսի կարգով. մի բարձր
կարգաւոր ստանալով զլիսաւոր յանձնարարութիւնը մի սահմանեալ
գաւառի մասին, այնուհետև գործ էր կատարում իւր նուիրակների
ձեռքով: Այս միջոցին, Մայնց և Մագդեբուրգ քաղաքների վիճակը
կառավարումը Ալբրեխտ արքեպիսկոպոսը, Կայսրնախի իշխանի, Եո-
վակիմ առաջնի եղբայրը, որի ստորադրեալ գործակալը էր այն ա-
նանթ Տեցլը: Այս պատանի Աաջնորդը որ իւր կարգովը նախա-
պատի էր Գերմանիայի կայսրնախի իշխանների մէջ, շույլ զեղխու-
թենով կամենումը նմանող լինել քրիստոնէութեան գլխի օրինա-
կին. իւր աղքատացած քակը լցուցանելու համար, թողութեան թըղ-
թերով վաճառաշահութիւն սկսեց Գուրգըր անունով սեղանաւորի
Հեռ Աուդարուրգումը, և մտածումը հատուցանել սորան այն 30000
գուրգըրի արծաթը, որ պարտ էր ասած նորանից և սուած էր Պա-
պին իւր արքեպիսկոպոսական վերաբիւտի համար: Սեղանաւորի գոր-
ծակատարըրը ապահովութեան պատճառով ունէին մի ստանձին բանա-
լի Տեցլի թողութեան զանձարանի համար: Երբ որ սա Իւրբրոր-
գումը փողոցի մէջ ձայն տալով վաճառումը իւր ապրանքը, Մար-
տին Լութեր վարդապետը, որ 1508 թուականից ուսուցչապէս և քա-
րողի էր Ախաւնուրգումը, համարձակվեցաւ ընդդեմ զուրս գալ
պղ անդգամութեանը որով Տչմարիտ քրիստոնէական ապաշխարու-
թիւնը խոստովանութեան կարգի մէջ պիտոյ է թուլանար և նուա-
զէր. բայց երբ որ Տեցլը ահ տուեց Լութերին հերձուածական զա-
տաստանով և կրակի պատուհասով, այն ժամանակը, որ Ամենայն սրբ-
րոց նախատանակի երեկոն էր, 1517 թուականի Հոկտեմբերի 31 ին,
Լութերը բերդի եկեղեցու դրան երեսին զարկեց իւր հռչակուոր 95

առաջարկութիւնքը կամ հակաձառական խնդիրքը, որոնց վերայ ամենայն մարդու հետ պիտոյ է վիճարաներ և հաստատեր նորանց, Այս առաջարկութիւնների պարունակութիւնը այս էր. թէ Աստուած միայն կարող է ստուգապէս թողուլ մեր մեղքը, և թէ Պապը այնպէս, ինչպէս ամենայն կախկոտոս և քահանայ, շնորհում է պրոպիետ աստուածային թողութիւն ապաշխարողներին և հաստատեալներին միայն: Արդարև թողութիւնը կարող էր լինել փրկարար, բայց չէր անպատճառ հարկաւոր, և ոչինչ կերպով նախապատիւ համարելի քան թէ բարեկործութիւնքը. Այլև այդ թողութիւնը վերաբերումներ միայն զեպի եկեղեցական հազարդակցութիւնը, բայց, այժմուս թողութիւն վաճառողքը այնպէս վառթար կերպով գործ էին դնում այդ բանը, և ժողովուրդը այնպէս մոլորումներ դորանով, որ, եթէ այդ անկարգութիւնը հասաներ Պապի ականջին, առելի լաւ կը համարեր նա սուրբ Գեորգի եկեղեցին այրել և փոշիացնել, քան թէ այդպիսի կերպով կառուցանել նորան: Այս Գ5 առաջարկութիւնքը, առանց Առթիւների կամքին, արձակեցին մի պատերազմի նշան, որ տասնուոր տարիներից յետոյ պիտոյ է վերջանար Արևմտեան եկեղեցու երկպառակութիւնով:

Առթիւները իւր առաջարկութիւնքը մի խոնարհական նամակով ուղարկեց Կոստանտնուպոլ Այրբեկախի մաս և խնդրումներ նորանից, որ ըզդաստանայ և նայէ ժամանակի նշաններին. «մի գուցէ որ մի օր վեր կենայ մի մարդ և ընդդիմանայ այդ անկարգութեանը, ինչպէս արգարև երկիւղ կար»: Առթիւները ցանկանումներ իւր նամակի մէջ, որ նորա, որոնց վիճակի պաշտանն էր, զարթնումին և սկսանէին հարկաւոր ուղղագործութիւնքը. Մի և նոյն մտքով գրեց Առթիւները և միւս կախկոտաններին. բայց, ինչպէս սովոր է պատահել, հեղող առաջնորդներին աչքերը փակած էին, և քնի մէջ ձեռքից թողեցին ժամանակը, Կարճ միջոցում Առթիւների առաջարկութիւնքը թեւաօրովնով տարածվեցան բոլոր Գերմանիայի սահմաններումը. անհուսա ալի է, ասումէ այն ժամանակի մարդերից մինը, թէ ինչքան խօսք ու զոյց կար ժողովորդի մէջ այդ բանի վերայ: Բայց կախկոտանները փոխանակ շնորհավաճառութեան ձանապարհը կտրեցու, ուրախ էին մանաւանդ, որ թողութիւն վաճառող արեղան, այն լիբր և ամբարտաւան մարդը, անճարացած ազազակումներ ընդդէմ Առթիւներին, զատաստան դանձելով սորան որդէս հերձուածող, այլև շատ շախազանց ջատագովութեանով հաստատումներ թողութեան յարգը և Պապի կարողութիւնը: Այս բաների վերայ զայրանալով Առթիւները, միւսանգամ գրիչ առաւ ձեռքը և ընդդէմ դուրս եկաւ Տեղըրին: Այժմ Առթիւները քաջութեամբ խոստովանելով Տղամարտութիւնը, շատապից իւր հե-

տեղներէի և բարեկամներէ թիւը, բայց և ընդդէմ նորան հանդէս
դուրս եկան աւելի զորեղ հակառակորդներ, քան թէ Տեղըը: Ուս-
եալ, Գամինիկեան կարգաւոր Յիշմարտութիւններս, որ Պապի պա-
լատի մէջ բարձր պաշտօնակալ էր, իւր կարգակից հոգևորի գործը
պաշտպանեց մեծատուն մարդու թեթևահոգութենով, բայց իւր պատ-
ճառարանութեան մէջ, Տեղըըի պէս, հիմք դրեց իւր բանին Պապի
անտառական վկայութիւնը և անպայման կարողութիւնը: Բայց Լու-
թերը յառաջուց ահա կուսակից ունէր իւր համար գերմանական ե-
կեղեցու կարծիքը. երկու օրի մէջ դուրս եկաւ պատասխանը ընդդէմ
Պրիերիասի գրուածին, և երբ որ սա հրատարակեց մի այլ գրուած,
լին ամբարտաւան արհամարհանքով դեպ ի Լութերը, ապա և սա խոյ-
սատակեց նորան, ինքը հրատարակելով Պրիերիասի գրուածը հարկա-
ւոր ծանօթարանութեան հետ միասին, որի մէջ Լութերը աւելի կոշտ
լեզուով արդէն երեսին զարկեց նորա թուլութիւնը և նենդարտու-
թիւնը: Եւ Է.բ.բ. անունով մի վարդապետ որ հանդիման էր Է.Յ.Ե.Յ.Ե.
քաղաքումը, որ և մինչև այժմ հետի չէր Լութերից, տեղեկան դուրս
եկաւ ընդդէմ սորան, և այն Յակոբ Լուզարատըն, վատահամբա-
հալ զահիճը հերձուածողներէ, որ ահա Բեյլիլինոս զիտնաւորի վե-
րայ բարձրացած էր, թեպէտ չը կարողանալով մնասել նորան, ձայն
տուեց Պապին, որ սրով ու կրակով զատաստան կտտարէ: Ինքը Լու-
թերը իւր առաջարկութիւնքը բաժնեկէն թարգմանած, 1518 թուա-
կանի Մայիսի 30 ին ուղարկեց տասներորդ Լեոն Պապի մօտ, նամակ
դրելով նորան թեպէտ ցածուն և խոնարհ կերպով, բայց ազատ և
վատահոգ հոգով: Եւ ծանօթութիւն տուեց Պապին այն շնորհավաճա-
նութեան մասին որ եղած էր Ախտընրերդի մտակայքումը, և թէ
այս բանի վերայ բարբոսկեցաւ իւր կիրքը. այս պատճառով խնդրուե-
ցաւ Պապի սրբութենից, որ պաշտպան լինի իւրեան, և վերայ այսր ամե-
նայնի չը հրաժարվեցաւ Լութերը լուսախոյլ կաշոյցանել եկեղե-
ցու պահասաւորութիւնքը և Սուրբերի կարծեցեալ աւելորդ արդիւ-
նարբութիւնքը որոնցով իրրե թէ պիտոյ և լինէր մեղքի քառու-
թիւն: Եթէ Պապը գործ դրած լինէր մի փոքր խոհեմութիւն և թոյլ-
տուութիւն, կարելի է թէ այս վեճը վերջանար այժմ: մանաւանդ
որ այն անհաւանութեան լուսութիւնը որ տեղակալ կախկոպտքը պա-
հուսուեցին Լութերի հետ, ծանր և անախորժ էր սորա համար, և սա
ինքը զարհուրած էր այն փոթորիկներէից որ անզգուշութեամբ վեր էր
կաշոյցել. պատճառ, Լութերը դեռևս ամենեւին միտք չունէր հար-
ցաբնենել պապի իշխանութեան և մեծութեան իրաւունքը: Բայց նա-
խախնամութեան խորհրդի մէջ այլապէս էր մտած, Պապը հրամայ-
եց զատաստան բանալ, որի մէջ Պրիերիասը էր և զատաստալ և զա-

տաւոր. այս դատաստանի առաջն պիտոյ է երևեր **Ղուծերը 60** օրէ մէջ, եթէ կամք չունէր այս միջոցումը հաժարվիլ իւր ասածներէց, **Ղուծերը** պարարտս էր, եթէ կը տային նորան ապահով ճանապարհ, անկողմնապահ և բանագէտ դատաստանների առաջն երևել, յոյց տալ իւր արդարութիւնը, կամ թէ ուսանել, ինչ որ չը գիտէր, Սուրբ գրքի վկայութենով, Բայց **Հոռոմ** գնալ, հարցախորձի տակ մտանելու համար, կամք չունէր, և այդ մասին համաձայն էր նորա հետ իւր աշխարհի իշխան կայսրընտիր Ֆրիդրիկոս իմաստունը Սաքսոնիայի. Պապը պատուելով սորան, թոյլ տուեց, որ **Ղուծերը** **Մուգարուրդ** քաղաքի մէջ կարդինալ կայնտանոսի բերանով հարցախորձի: Սորան պատուիրած էր, որ այն համարձակ արեղան որպէս հերձուածող կապանքի մէջ գնէ, կամ թէ արձակէ, եթէ կ'ապաշաւէր և կ'ուրանար իւր խոսած բաները: **Ղուծերը** կայսրի և **Մուգարուրդ** քաղաքի կողմից սպահովութիւն աւած, **1518** թուականի **Հոկտեմ. 7** ին հասաւ այս տեղ: **Կայնտանոս** **Կարդինալը** ուսեալ և խոստահրան զբարոցական մարդ լինելով, նախ և յառաջ կամեցաւ հայրական խրատարանութենով և ուսումնական հերքողութենով պարծանք ստանալ, որպէս թէ կարող էր չընել այն հերձուածող արեղայի միտքը. բայց երբ որ սեսաւ, թէ երկուքը ևս անպատու ձեռքին, ապա երեսը յետ դարձուցանելով «այդ Գերմանացի գազանից որ խոր աչքեր ունէր ճակատի վերայ, և զարմանալի տեսութիւնք գլխի մէջ, «վճիռ կապեց որ, ինչպէս պատուիրած էր Պապը, այնպէս վարվի **Ղուծերի** հետ: Սա իւր անձը արդարև մտանգի մէջ տեսանելով, **Հոկտ. 20** ին, ծածուկ դուրս գնաց քաղաքից, երբ որ յառաջուց բողոքել էր անվերահասու Պապիցը զեւր ի աւելի քաջ վերահասու լինելոց Պապը. և այս բողոքը, փոքր ինչ յետոյ, երբ որ յոյս չը կար արգարութիւն գտանել սղայի կողմից, այլև, երբ որ Պապը մի հրապարակական կոնդակով հաստատել էր շնորհալաճառութեան բոլոր անկարգութիւնը, այդ բողոքը դարձաւ ապա բողոք զեւր ի մի ընդհանուր ժողով: **Ղուծերը** չէր կարող զեւսեալ ապահով պաշտպանութիւն յուսալ իւր իշխանի կողմից, ըստ որում Ֆրիդրիկոս կայսրընտիրը զեռ ևս խելամուտ չէր **Ղուծերի** ճշմարտութեանը, թէպէտ մեծարուներ նորան և երկիւղ ունէր միայն, թէ մի գուցէ հարկադրեալ լինի նորա հալածողը դառնալ: Եւ արդարև նոյն թուականի **Հոկտեմբեր** ամսի մէջ, **Կայնտանոս** **Կարդինալից** թուղթ եկաւ Ֆրիդրիկոսին. սոյն մէջ պահանջուներ նա ուղարկել **Ղուծերը** զեւր ի **Հոռոմ**, կամ թէ արտաքսել նորան աշխարհի սահմանից, **Ղուծերը** այրական համարձակութեամբ արդարացրեց իւր անձը իւր իշխանի առաջն այն ընթացքի մասին, ինչ ընթացքով վարվել էր **Մուգարուրդումը**, իրն-

դրեց նորանից, որ Պիլատոսի պէս գործ չը կատարէ իւր հետ, բայց յայտնեց թէ պատրաստ էր սրտոր գնալ: Քրիզդրիկոս իմաստունը թեպէտ եկեղեցւոցապաշտ իշխան էր, միանգամ ուխտ էր գնացած Նրուսալէմ և արծաթ շատ էր ջրված Սուրբերի նշխարներէ համար, բայց վաղուց պատուիրել էր այն շնորհալաճառներին, որ ոտք չը կոխեն իւր աշխարհի մէջ, և այժմ որք որ աւելի ջերմանումներ նորա սիրտը այն ճշմարիտ աւետարանական հոգովը, որ փայլումէր Լուսների գլորուածներէ մէջ. բայց ի սորանից, Քրիզդրիկոսը երկիւղ ունէր, թէ մի գուցէ իւր սիրելի Ախտարներըզը վերաորվի իւր սիրելի ուսուցչի անպաշտպան կորընչելովը: Այս պատճառով պատասխան գրեց Քրիզդրիկոսը, թէ հաւանելի էր իւրեան Լուսների խնդիրը, ըստ որում սա պահանջումէր արդար դատաստան Գերմանիայի հողի վերայ: Եւ Սաքսոնիայի Կայսրընտիր իշխանի հետ պիտոյ է խնայելով վարվէր Պապը. պատճառ, նա Կայսր Մարքսմիլիանոս առաջինից յետոյ զարձել էր թողարորութեան կառավարիչ բոլոր Գերմանական աշխարհներէ մէջ, որ սարսանական օրէնքով էին. այս բանը փոքր օգնական չեղաւ, Լուսների բարեկամներէ թիրը բազմացնելու համար: Կայտանտը, որովհետեւ աւելի աւերել էր գործը, յետ դանչվեցաւ և նորա փոխանակ ուղարկվեցաւ մի սաքսոնացի աշուուական Կարոլոս Փոն Միլտից, որ եղած էր պապական սենեկապետ: Սա բերել էր Հռոմից այն մեծարական պարգևը ոսկի վարդից յորինված, որ գրաւէ Քրիզդրիկոսի սիրտը զեպ ի Պապի կողմը, բայց ճանապարհի վերայ, քաղաքների մէջ, հասարակաց կարծիքը այնպէս հաստատ գտաւ. զեպ ի Լուսների կողմը, մինչև խոստովանեց, թէ կարող չէր գործքով ևս ամենել նորան Հռոմ: Այս Միլտիցը 1519 թուականին շատ պատուաւոր կերպով հրաւիրեց նորան զեպ ի Աուգսբուրգ, արդարացրեց նորան այն գործի մէջ, որ ընդդիմացած էր թողութեան անարժանապէս պարգևին, բայց աղաչելով աղաչեց նորան, համբերել և պատճառ չը տալ եկեղեցու մնասակար երկպառակութեանը: Լուսները յայտնեց, թէ յոժար էր խողաղութեանը, պատրաստ էր հրաժարվիլ վեճից, միայն թէ պահանջումէր, որ և նորա հակառակորդքը լուռ կենան, Ախձելի խնդիրների մասին կամենումէր հնազանդել այն վճռին որ հաստատելու էին մի քանի դատաւորք, զերմանական եպիսկոպոսների միջից ընտրած, այլև ջրոց տուեց իւր յոժարութիւնը մի գրուած հրատարակել և նորա մէջ յորդորել ամենայն մարդ, որ հնազանդ կենայ հռոմական եկեղեցուն. բայց ի սորանից խոստացաւ թուղթ գրել Պապին և հատուայնել նորան, թէ երբէք զիտաւորութիւն ունեցած չէ նեւր մտանցնել հռոմական եկեղեցու նախապատիւ իրաւունքներին. և յիրաւի այս նամակը, ցածուն հոգով և պատկասան-

քով գրած, ուղարկեց նա ուր հարկն էր: Այսպէս ահա երևումք,
թէ գործը պիտոյ է հաւասարվի, և թէ Լուծերը զեռես շատ պինդ
և ամուր կաշկանդած էր պապական կապանքների մէջ, քան թէ կա-
րող էր ազատել իւր անձը նոցանից: Բայց նորա գործը չէր իւր յա-
տուկ գործը, այլ Աստուծոյ և զերմանական ազգի գործը: Նոյն իսկ
հակառակորդքը Լուծերի պիտոյ է ձեռնաու լինելն նորա սկսուածքը
աւելի ևս յառաջ տանելու: Երկար չը տեսց, որ Էքք վարդապետը
միւսանդամ ամբարհասած և կատաղի կերպով հանդէս կ'ընէր ընդ-
դէմ Լուծերին. մի պայմանադրեալ հակաձառու թեան համար զուրս
տուեց նա մի գրուած, որի մէջ մեղադրումք Լուծերին, որպէս թէ
սխալ է ուսուցել թողութեան բանի և պապական իշխանութեան
մասին: Թեպէտ շատերը ընդդէմ էին այս հակաձառութեանը, մտա-
ծելով թէ տարակուսելի էր այդպիսի ճանապարհով վերահասու լի-
նել Տշմարտութեանը, և այժմ կրկնապատիկ փոստգաւոր էր այդ,
ըստ որում բորբոքվելու էր մի նոր ջերմ կոխ. այնու ամենայնիւ,
այդ հակաձառութիւնը 1519 թուակ. Յունիսի 16 ին գլուխ եկաւ մի
երևելի բաղմութեան մէջ. պատճառ որ Էքք վարդապետի փոստահեղ
կերպարանքը և տրամարանական հմտութիւնը հասաւ էին տալիս: Թէ
նա վճառպէս յաղթող կը լինի հերձուածողների վերայ: Հակաձա-
ռութիւնը սկսեց և վերջացրեց Կարլշտադը, պաշտպանելով իւր առա-
ջարկութիւնը. Թէ մարդա ի բնէ ամենեին անկարող էր բարի լինել,
և թէ ոչինչ արժանաւորութիւն չունէին մարդու գործքը և ասա-
ուածային շնորհի ներքոյ. նա վկայութիւն բերեց Օդոստինոսի խօսքը,
բայց Էքքը, աւելի հին եկեղեցական հարքը և բոլոր գարոցականքը,
երկուքը ևս հիմնաւորվելով սուրբ գրքի վերայ: Էքքը իւր առաջար-
կութեանների մէջ համարձակվեցաւ հաստատել, թէ հոռմական եկե-
ղեցին Միլլետոսի ժամանակից յառաջ գերակայութիւն է ունեցած
բոլոր միւս եկեղեցիների վերայ, և նա որ ժամանակ է սուրբ Պետ-
րոսի աթոռը և հաւասար, ամենայն ժամանակ ընդունվել է որպէս
Քրիստոսի յաջորդ և ընդհանուր տեղակալ: Այս առաջարկութեանը
հակառակ խօսեց Լուծերը, և բորբոքվելով վիճարանութեան մէջ
յառաջ գնաց դէպ ի ներհակ առաջարկութիւնը, թէ Պապը ոչ թէ
աստուածեղէն, այլ մարդկեղէն իրաւունքով էր եկեղեցու գերագոյն
գլուխ: Լուծերը հաստատութիւն ունէր իւր կարծիքի համար սուրբ
գիրքը և աշխարհի մէջ անցած իրողութիւնքը: Այդու ամենայնիւ
Էքքը գատապարտեց Լուծերին որպէս Հուսարեան հերձուածող:
Այսպէս, հակաձառող կողմերը հրաժարվեցան միմեանցից աւելի գառ-
նացած, քան թէ մինչև մտեցած չէին միմեանց: Բնն մի կողմը սե-
փականելով յաղթութեան պսակը, աշխատումք հաստատել իւր իրա-

ւունքը փոքրիկ և նախատական գրուածներէ մէջ: Այս Լէյպցիղեան հակաճառութեան ստոյգ և խորհրդաւոր հետեանքը այն եղաւ, որ Լուծեքը ամբայաւ հոգով և ցած գրեց այն իւր առաջին ահ ու զոգութիւնը պատգամնութեան երեսից: Լուծեքի հետ միասին երիտասարդ Մելանքեթներ եկած էր Լէյպցիղ, որ Բէյթլիմոս անուանի ուսումնականի դործակցութեամբ, 1518 թուակ. ուսումնապետ կարգվեցաւ: Ախտորնբերգի համալսարանումը, որի համար և զարդ ու պարծանք մնաց նա մինչև իւր մահու օրը: Այս Մելանքեթներ շուտով կապվեցաւ Լուծեքի հետ, որչափ այն ջերմ մեծարանքովը որ մինը միասին ցուցանումը, այնչափ ևս այն հաւասար ջանադրութեամբը որ ունեին երկուքը թէ բացայայտելու և թէ յարգելի կացուցանելու Սուրբ գիրքը, Մելանքեթներ, համեմատելով Լուծեքի հետ, աւելի մեղմարարչ լինելով, բայց ուրիշ կողմից կրակոտ և հեշտ գրգռելի, այնու ամենայնիւ աւելի ներողամիտ էր քան թէ Լուծեքը, և կարող էր վերահասու լինել հակառակորդներէ ասածին. բայց Լուծեքը առանց աջ ու ձախ նայելու, զրահաւորված վաղուակը զեպ ի իւր նպատակը, Արդարև Մելանքեթներ աւելի ուսումնական ու ճաշակաւոր էր քան թէ իւր ծեր բարեկամը, բայց շունէր նորա խորագրաց սիրտը և հնարաստեղծ հոգին, և այս պատճառով գործակից էր Լուծեքին որպէս հաւասարիմ խորհրդատու և սգնական միայն, Լէյպցիղեան հակաճառութեան հանդէսի մէջ Էքքը պատգամներ սաստիկ յարձակվեցաւ և Մելանքեթնի վերայ, բայց սա պաշտպանեց իւր անձը մեծ շափաւորութենով և շատ հիմնաւոր պատճառներով:

Այս միջոցումը Գերմանիայի քաղաքական որպիսութեններէ մէջ մի մեծ փոփոխութիւն էր պատահած. Մարսիմիլիանոս առաջինը 1519 թուականին վախճանվելով, Գերմանիայի կայսերական թագը անցել էր Մարսիմիլիանոսի թոռն Կարոլոսի վերայ, որ Մարսիմիլի և Նեապոլիտանիայի թագաւոր էր, և այս ընտրութեանը առաւելապէս գործակից էր գտանված Մարսիմիլի Գրիգորիկոս իմաստունը, որ հրաժարված էր կայսերական թագից: Բայց Կարոլոսը պարտական էր ըստորագրել և երդումով կնքել մի ընտրութեան թուղթ, որի մէջ ասած կար, թէ այն համարձակութիւնը, որով մինչև այժմ հռոմէական աթոռը ընթացել է ինքնիշխան գերմանական եկեղեցու հետ, պիտոյ է վերջանայ և վերացվի, այլև պետք է պահանջել Պապիցը, որ անխախտ պահպանէ այն գաշնաւորութենների պայմանքը որ գերմանական ազգը գրել է նորա հետ: Լուծեքը այժմ մի փոքր միջոց հանգիստ գտանելով, սկսեց աւելի խորամուխ լինել Սուրբ գրքի մէջ, և սորա լուստովը քննելով, ճանաչեց մի հռոմէական թիւր վարդապետութիւն միսի քամաքից, զոր օրինակ եկեղեցու Եօթն խոր-

հարդի 1), Հաղորդութեան բաժանը ժողովրդին չը տալու մասին, և այլն՝ երբ որ Սաբասիայի գուքս Գեորգը և Մէլսինիայի եպիսկոպոսը զանգատեցին այս բանիս վերաբերեալ քարոզի վերայ որ ասած էր Ղուծերը, սա պատասխան տուեց սաստիկ խօսքով, բայց զորս հակառակ խոնարհական ջածութենով զիր գրեց նորընտիր Այսյորին, աղաչելով նորան, որ թող չը տայ առանց հարցաքննութեան և հերքողութեան զատուպարեալ նորան: Ղուծերը զարձուց զէմքը և զէպի Մայնցի կայսրընտիր Ալբրեխտը, որ սորա մտա արդարացնէ իւր անձը այն բամբասանքներէն որ նորա վերայ արած էին: Այսյորընտիր իշխանը իւր պատասխանագրի մէջ յայտնեց, թէ չէ պիտոյ վիճելի

1) Այս բանի մասին հարկուք էր մի ընդարձակ գիտնական ծանօթարանութիւն, մտաւանց որ Հայոց մէջ եկեղեցական ուսումնականութիւն չը լինելով, և շրիտանական եկեղեցու հետ զհեռ արտաքին կերպարանագործութիւնը ամենեին անյայտ ու անձեռնիք է նոցա: Եղիտութիւնը սովոր է և կամեօր լինել. բայց ազաւուծեց եղբայրակա, յաստիկ իւր սիրաւ պղտոր արեւելից և ուշադիր լինել այն շնորհաութեանը որ անաշուտօք ուսուցանում եկեղեցական պատմադրութիւնը: Աշխարհութիւնը ազդեալ, անխիղճ պապականներէ պէս, կա՛ր շունթ, թեկոտ գիտեմ, թէ շնորհաւոր ասելով պիտոյ և շտաբին թի՛նամք գառնա՛: Հեղինակը չէ ոչ Ղուծերական և ոչ Պապական, այլ առաջնաօր քննող ու քննող շրիտանեաց, որի հասարը նոյն է, թէ՛ որ ուսուցանում Յիսուսի քրիստոսի Աւետարանը. նա պատմում և խնկում այն երանելի սուրբ Հարց յիշատակը, որոնց ուսումը համեմայն է Աւետարանին. բայց Աւետարանի ուսումը ճակ է կամ անուս ասել, որ Պապերի և միւսերի խօսք ու կա՛ր յաստիւնայ, այդ բանին հարցով ու մարտիով ընդգիտեմ է նա: Ղախ և յաստի գիտելի է, որ Մկրտութիւնը և Հաղորդութիւնը եկեղեցական լիզատրտութեան մէջ երկրորդ գաբու վերջումը փակեցնան այս հասարակ անուսներէ սակ, թէպէս *μυστήριον* և *sacramentum* (գաղանիք, խորհուրդ, սուրբ, նախարան բան), ստալինը Նոր կտակարանի մարզով նշանակելով ամենայն կրօնաւոր բան, ըստ որում այս կամ այն հիւրով խորհուրդուք էր, և ունէր մի սուսգապէս գաղանի հայեցում. վերջինը նշանակելով ամենայն սքրան կամ սքրոյ բան, էր կուսը ևս վերաբերելով զէպի ի փորդապետութիւնը, էրք կամ գործադրութիւնը: Խորհուրդ ասած բանի առեւի յաստիպէս ըմբռնումը երեւում Եղիտանեա Ոսկերեանի և Օգոստինոսի մէջ, այսպէս. մի երեւելի բան, որի քամակումը հասարը անասում մի աներեւոյթ բան, որպէս հարկուք, կապակցող հնար ամենայն կրօնաւոր ընկերութեան համար: Գրուածք Ոսկերեանի, Հատ. 10. էր. 51. *Μυστήριον καλεῖται, ὅτι οὐχ ἄπορ ἔργον πιστεύουσιν, ἀλλ' ἕτερον ἔργον καὶ ἕτερον πιστεύουσιν*. Գրուածք Օգոստինոսի, Հատ. 5. էր. 770. *Ista dicuntur sacramenta, quia in eis aliud videtur, aliud intelligitur*. Առեւի որոշարար սահմանում գաղապական ս՞քը, Նոր կտակարանի խորհուրդը ընդգիտողը չէ հին կտակարանի խորհուրդներին, այսպէս. մի այնպիսի նշան, որով ներդարեում նշանակեալ բանը. գրուածք Օգոստին. Հատ. 8. էր. 289. *Sacramenta novi Testamenti dicunt solentem, sacramenta veteris T. promi-*

կնդիրները ժողովրդի մէջ ձգել, որ մի գուցէ խախտի Հասարակաց
խաղաղութիւնը: Բայց սորա հակառակ Մերջերարդի եպիսկոպոսը,
որին նշնակէ գրած էր Լուծերը, պատասխան առեց սուր և յան-
զիմանական ոճով: Եւ յայտն ահա, գերմանական եկեղեցու բարձր պաշ-
տօնակալներից յուսալի չէր ոչինչ գործակցութիւն, ըստ որում դո-
քա կամ անձնատուր էին ծոյլ անձնագիրութեան, կամ թէ երկիւղ
կրելով թէ մի գուցէ եկեղեցու վերանորոգութենից փաստ հասանէ
խրեանց անձնական սգոյն, ցանկանումին մնալ մի և նոյն դրու-
թեան մէջ ինչպէս մինչև այժմ եղած էր: Բայց էբբ պատկանը
ամենայն կողմից արհամարհանք տեսանելով և ցաւելով իւր խոյ-

terunt salvatorem. Լորդարդոսի գիրք 3. որ 1. սուս Բ. Sacramentum est invisibi-
bilis gratiae visibilis forma. Տոս 7. Duo sunt in quibus sacramentum consistit,
verba et res. Verba, ut invocatio trinitatis, res, ut aqua, oleum et huiusmodi. Բայց
և աւելի ընդարձակ նշանակութիւնը Երեսրդի դեռ ևս մուտք չու յայտնի Միջին դո-
րերուէն. մինչև յետոյ եկեղեցին սահմանելով և վերելով քանի մը սուրբ արար-
չութիւնք որպէս նախապատրաստութիւնք (sacramenta), անհետացաւ եկեղեցական ըն-
տախտութենից բոստ գաղափար մտտորս կամ secretum, թելեւ, թելեւ երե-
ւում, չոյց Երեսրդ խոսքը աւելի յորժարում յանձնաբն մտտորս.

Եւստին Ժամանակներուէն դեռ ևս անորտ լինելով Երեսրդ բոստ ըմբռնումը,
Ի հորդէ կարելի չէր նշնակէ Երեսրդները թուի սակ ձգել: Բեկերեանք և Օգոս-
տինոսը խոստովանումին մոյն. թե՛ որ սուսգալեւ յարց և կէլն էր սենցած
մշո. սոյնին. թէ Միջրութիւնք և Հարձրութիւնք էին այն երկու Երեսրդքը.
որոնցով պահպանումէն Եկեղեցին: Ե՛ն Ոսկերեանի բանքը. Հոս. 8. էր. 545.
Εξέλαθεν ύδωρ και αίμα ουκ άπλάτ, ούδς δε έτυχεσιν αίτοις εξέλαθεν αί πηγαί άλλ'
έκισού έξ άμφοτέγων ή ίακαλτοία συνίσταται και ίσασιν έι μυσταγωγούμενοι δι' ύδα-
τος άγαγιώτατου, δι' αίματος δέ και σαρκός τριφύμου. Օգոստինոսի Կոստ մէջ
De Symb. ad Catech. յԷ. 6. Quomodo Eva facta est ex latere Adam, ita ecclesia for-
matur ex latere Christi. Percussum est ejus latus, et stotum manavit sanguis et aqua,
quae sunt ecclesiae gemina sacramenta. Բայց որպէս Ոսկերեանը, նշնակէ և Օգոս-
տինոսը համարումին Երեսրդք և միւս շատ բանք, զոր սրբեակ Ոսկերեանը,
Միջրութիւնք և Երեսրդութիւնք, խաչելութիւնք և յարութիւնք, Օգոստինոսը իւր թըչ-
թի մէջ շեղ ի Երեսրդութեանք (Ep. ad Bonif. 22) Հոս. 2. էր. 31. սուսակ. Sa-
cramentum fidei fides est. Իւր Կոստ մէջ De pecc. meritis et remiss. գիրք 2. էր. 26.
Non unius modi est sanctificatio, nam et catechumenos per signum Christi et orationem
manus impositionis pote sanctificari, et quod accipiunt (sal), quamvis non sit corpus Chri-
sti, sanctum est tamen et sanctius, quam cibi quibus alimur, quoniam sacramentum est:
Եբբ որ քանի մը որչեւէ սուրբ գործողութիւնք. որ աւելի երեւի էին սուսան-
պաշտութեան մէջ. սա մտքը մտքը յուսելոցան այն երկու գործողութիւններէ վերայ,
կերպարարելոց մը իրական ըմբռնումէն Երեսրդի, և սորա հետ միասին արժան տե-
ան որչեւէ թուով սահմանել Երեսրդ սուս արարչութիւնքը: Օգոստինոսը յո-

տառակութեան վերայ Աւստրիոյ մը, շատցնելով զայն և զամբ, որ վատարանէ ինչպէս Առթիւնը, նոյնպէս և նորա աշխարհի իշխանաւորը: Երբ որ սա լուր տասցաւ Հռոմից, թէ նորա մասին վատ կարծիք կար այն սեղ, արդարացից իւր անձը, յայտնելով թէ նա շունի իշխանութեան դատելու Առթիւնի վարդապետութիւնը, և այդ բանը թողումէ միւսերին, բայց բնութեամբ ոչինչ չէ կարելի յառաջանել, բայց որով Առթիւնի վարդապետութիւնը շատ խոր արմատացել է ժողովրդի մէջ, Թեպէտ այս միջոցին լինումն սաստիկ յարձակումներ Առթիւնի վերայ, բայց նա զորաւոր սցնական ունելով իւրեան Միլանքիթանի ճաշակաւոր ճարտարախօսութիւնը և արամարանական վար-

ժուր չէր համարել, որպէս թէ խորհուրդներ թիւը բազմացնելով, կոտակումար քրիստոնէութեան պատուականութիւնը: Ենչնորա ստացումը (Հատ. 11, էր. 190). *Christus sacramentis numero paucissimis, observatione facillimis, societatem novi populi colligavit, sicut est baptismus, communicatio corporis et sanguinis et si quid aliud in Scripturis canonicis commendatur. Դիքս ընդդէմ Պատմութիւն 19, 13. Prima Sacramenta praenuntiativa erant Christi venturi: quae cum suo adventu Christus implevisset, ablati sunt, et alia sunt instituta, virtute maiora, numero pauciora. Սա շիւթիտա Երեւոյթացին է, որ առաջին անգամ յիշում է ինչ խորհուրդը. Մկրտութիւն, Հաղորդութիւն, սնունդ, քահանայութիւն, Երեւոյթութիւն և նախաձեռն սրբապետ նշնակեցնելով: Երկրորդն Պատմականաբար յիշում կարձեւաւ երկու խորհուրդը. Մկրտութիւն և Հաղորդութիւն: Հասարակ Մտաբանը, շորս, այսինքն. Մկրտութիւն, ժարին գրեալով, արիւն գրեալով, մասն. և Պետրոս Պատմական շատցնելով խորհուրդներ թիւը հասարակ պիտոյ է աւել որ Հռոմական եկեղեցւոյ մէջ սկսեալ 7 երբոյ զարուց մինչև 12 երբոյ խորհուրդներ թիւը սարսիւրբում երկուսից մինչև մի անբող բազմութիւն, և սարսիւր Երեւոյթացի ընդունումը որպէս խորհուրդ և Պատմական արարչութիւն:*

Խորհուրդներ սարսիւր Երեւոյթութիւն երկուսն Օտտո Բարեկրօնացւոյ վարդապետութեան մէջ. Vila S. Ottonis, Հատ. 2 - Մասն 2. էր. 61. Ինչ անց վարդապետը (1139—89) գնում նորա բերանը այս ստացումը *Discessurus a vobis trado vobis quae tradita sunt nobis a Domino, arriham fidei, septem sacramenta ecclesiae, quasi inquit significativa dona Spiritus sancti. Եւս Երեւոյթութիւն խորհուրդը էին. Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Իտալականութիւն, Վերջին սնունդ, Երեւոյթութիւն, Պատմի հետ մասին և Քահանայութիւն, որ և, սկսեալ 12 զարուց, ընդունելի գտնուեցան երկուսն եկեղեցւոյն Հարց առաջին, որոնց կարգից Պետրոս Լուսարեցի առաջին անգամը աւելի հաստատուեալ իտալականից զարուց, մինչև 1439 թուականին շոր բոլոր Երեւոյթացի Պատմ. Պատմական քաղաքի մէջ, եկեղեցւոյն վանքի և կիւրցի: Բայց առաջին մասնակի սնունդութիւնը զիս ևս աւելի զարուր է երկուսն Երեւոյթացի Հռոմացւոյ զատուութեան մէջ, և թիւը թափուս Արթիւնացին զերեւոյթութիւնը սարսիւր և Մկրտութեան և Հաղորդութեան խորհուրդներն: Ենչ նոյն բանը. Արթիւնացի Հաղորդացւոյ Summa, Մասն 4. Ինչից 8, յոյ. 2. Հատ. 1. Christus duo*

ժուժիւնը, արդարև ճարուսէր միշտ իւր համար նորանոր և աւելի ներգործական բարեկամներ: Այսպէս, կուսակից հանդիսացան նորան զերմանացի ազնուականների մի մեծ մասը, քաջ ասպետներ, ինչպէս Սիլվեստր ֆոն Շաուսբուրգ, Ֆրանց ֆոն Չիրխլըն, Ռալֆիս ֆոն Հուստըն, որ գրչով ու սրով յոժար էր պատերազմել ընդդէմ ամենայն անարդարութեան, որ և արդէն Առթիւնի յառաջ արձակ համարձակ արհամարհած էր Պապեր ու արեղաներ: Այս զերմանական ազնուականների վերայ, որոնցից շատերը առաջարկեցին Ռեֆորմատորին և պատասխարան և իւրեանց սուրբ, ուղղից Առթիւնը որպէս իւր ազգի հարազատ փոխանորդների վերայ, իւր գրուածը այս անուշով. յազազս Քրիստոնէական վարքի բարեկարգութեան, որ և արդ-վեցաւ 1520 թուակ. յունիսի 23ին. (Ցես Առթիւնի գրուածքը, որ հրատարակել է Ալալիս աստուածարանը, Հաս. Ժ. էր. 296 և այլն):

sacramenta instituit per se ipsum, sacramentum baptismi, quod est maxime necessitatis et efficaciae, et sacramentum eucharistiae, similiter propter quotidianam infirmitatem maxime necessarium. Խնդիր 24. յոդ. 1. Sine praedictis dicendum est, quod neque Dominus hoc sacramentum (confirmationem, ԴԲԸԸ), ut est sacramentum, instituit, neque Apostoli. Apostoli confirmati sunt a Spiritu S. immediate sine mysterio et sacramentis. Sed postquam Apostoli, qui erant bases ecclesiae, defecerunt, institutum fuit hoc sacramentum Spiritus S. instinctu in concilio Mildensi quantum ad formam et materiam elementarem. Թովմա Եկեղեցւոյ. Հաս. 3. Խնդիր 62. յոդ. 5. De latere Christi fluxerunt aqua et sanguis, quorum unum pertinet ad baptismum, aliud ad eucharistiam, quae sunt potissima Sacramenta. Եւանջ եկեղեցւոյ. Ինչպէս յայտնի է: Եւրջը առաջին անգամը (1270 թուակ.) խոստովանում 7 Խորհուրդ, բայց փոխանակ Եղաշխարհութեան գրած է Երեզլայութիւն:

Հուանական էր, թէ Խորհուրդների եօթնամթիւը հաստատուել է Հայոց եկեղեցւոյն ոչ յառաջ քան թէ 13 դարու վերջումը կամ 14ի սկզբումը, և թէ Հայոց հին եկեղեցին Ռաբբիական գրուածների հիման վերայ զամուսնուր նշնադրեալ երկու գլխուր եկեղեցական Խորհուրդ, բայց յետոյ պիտոյ է հետեւը յամական եկեղեցւո կարգին:

Այս ծանօթարանութեանց յայտնի է ահա, թէ ինչ պատճառով անհասն էր Առթիւնը Խորհուրդների եօթն թուին, միս զնելով սկզբական եկեղեցւոն, որ ընդունել էր երկու գլխուր Խորհուրդ: Միս հինգ Խորհուրդները, որ զամուսնուն Պաթարիական, Եւանական և մեր Հայոց եկեղեցին, Պրոստաստանական եկեղեցին ին համարու՞ յառկաղա շրիստոսապիր. թէպէտ այս խոստովանում, որ Դարձի մասին կարելի էր շինք առուել Դարձը Եւսր. ԳԼ. 8. 17. 19. 6. Եղաշխարհութեան մասին. Մտաթ. ԳԼ. 16. 9. Եւրջ. 20. 22 և այլն: Քահանայութեան մասին, Դարձը Եւսր. 6. 6. 13. 3. Թ. Տիմոթ. 4. 14. 5. 22. Արեւմտութեան մասին. Եփես. 5. 32. Թ. Կորնթի 7. 7. Թ. Թեսալ. 4. 3. և Վերջին անժան մասին. Եւրջ. 5. 14. Մարգ. 6. 13:

Այս շարացրածի մէջ Ռեֆորմացիայի խնդիրքը յոռաջ են բերվում՝ որպէս մի մեծ ազգային գործ և գլխաւորապէս սորա. . . թէ պիտոյ էր չափի ու սահմանի տակ զնել պապական պալատի զեղխութիւնը, գերմանական ժողովուրդը սպաճով կացուցանել հռոմական ազահ շահաւորութենէյ, Գերմանիայի եկեղեցական պաշտօնների մէջ ազատապէս կարգել բուն Գերմանացիք, վիճելի գործերը վճռել գերմանական դատաստանով, վերացնել տարկապէս երգում տալը եպիսկոպոսներին, վերջացնել Պապի աշխարհական իշխանութիւնը, ինչքան որ դա հիմնած էր խարերայական պարզեատրութիւնների և յափշտակութիւնների վերայ. վաճարներն միտանգամ տալ իւրեանց յոռաջուց օւնեցած խորհուրդը, այսինքն լինել քրիստոնէական ուսումնարանը ժողովրդի դաստարակութեան համար. բաժնալ հարկադրական անկուութիւնը, հաշտութիւն խօսել Բոհեմացոց հետ արդար պայմանների հիման վերայ, հեռացնել Կանոնական իրաւունքը (պապերի և եկեղեցական ժողովների օրինադրութիւնքը եկեղեցական կառավարութեան մասին), աստուածարար մեծարանքը դէպ ի Երիստոսելէս (այսինքն զպրոցական արիստոսելէան փիլոսոփայութիւնը) և կուպաշտութիւնը սուրբերի պատկերներով, վերջապէս բարեկարգել համալսարանների ուսումը և ժողովրդի դաստարակութիւնը, Արդարեւ, այս գրուածով կամենումը Առթիւքը բարեաւ մնա սակ շտովն, և քաջալերել ժողովուրդը, Այն բոլոր անարգութիւնը, որին Գերմանական բարեարտութիւնը այնքան հարիւր տարիներ համբերելով տարած էր, մեղկապարանոց յայտնի կացուցանելով Ռեֆորմատօրը, վասնց և բորբոքեց ազգային անձնազգացութիւնը և այդպէս վճռեց Ռեֆորմացիայի խոռովորդը ընձացքը, Ինքը Առթիւքը ամենեին չէր յօժար գործ կատարել սրով, ըստ որում կարծումը նա, թէ ինչպէս աշխարհը սակզնագործով և և եկեղեցին հաստատով և խօսքի զորութեամբ, նոյնպէս ևս խօսքի զորութեամբ պիտոյ է վերանորոգի եկեղեցին, Շուտով միմեանցից յետոյ դուրս եկան Ռեֆորմատօրի հոգեւից զբուածքը, Այն գրքի մէջ որի անունն է. . . Յազգա Բարեխոնան գերութեան եկեղեցւոյ, որ և պատասխանին էր այն պահանջողութեան, որ Առթիւքը ուրանայ իւր ասածները, հաստատուել նա . . . թէ թողութեան պարզեատրութիւնը խարերայութիւն է հռոմական շողմարարների կողմից, թէ պապականութիւնը չէ աստուածեղեն սահմանադրութիւն, այլ մարդկեղեն, թէ Հաղորդութեան բաժակը վայել է և աշխարհականին, թէ քահանայի օրհնելը և ձաշակելը հաց ու գինին, չէ պատարագ, և ոչ բարեգործութիւն, այլ և այն նորահար ուսումը, որպէս թէ հացը և գինին նիւթապէս փոխարկվումին, կամ թէ մի ճշմարիտ կապակցութիւն սրբած հայի

և տերունական մարմնի մէջ հաւատայ, այդ բանը թողած էր հաւատարի ազատ կամքին: Եկեղեցու խորհուրդքը սահմանափակումն Մկրտութեան, Ազաշխարութեան և Հաղորդութեան կարգերով, որ յատկապէս Քրիստոսի ձեռքով գրած էին, և համարելով եկեղեցին խորհրդաւոր ոչ թէ որպէս մի լոկ արտաքին կարգադրութիւն, յարգի է կացուցանում Հաւատի ամենակարողութիւնը, որ միայն ունէր երանութիւն պարզեող զորութիւն: Եւ յու ամենայնիւ Լուծերը միւսանգամ թողլ տուեց, որ Միլիոնը յոժարեցնէ նորան, հաշտութեան դուռը բանալու հռոմեական եկեղեցու հետ: Եւ յս բանիս ճանապարհ յարգարելու համար, գրեց Լուծերը մի ծառ, «Քրիստոնեայ մարդու ազատութեան վերայ»: Հին ժամանակի ծածկախտութեան հոգով, ազատ ամենայն վիճարանութենից, և այդու ամենայնիւ փակելով իւր սրտի մէջ բոլոր Աւֆորմացիան: Եւ յս ծառի մէջ խօսուած նա գլխաւորապէս հաւատի վարդապետութեան վերայ և ասումէ, թէ Քրիստոնեայ մարդը իւր հաւատովը, որ նորան հարանաչնումէ Քրիստոսի հետ, ամենայն բանի վերայ տէր է, թագաւոր է, քահանայ է. չէ ստորադրած ոչինչ օրէնքի, և ոչինչ արտաքին բանով կապւած չէ. բայց էր նա և ծառայ ամենայն բանի, ըստ օրում Աստուծոյ համար սպասաւոր է ամենայն մարդու, և ոչ թէ երկիւղած կամ երանելի լինելու համար, այլ մարդասիրութեան պատճառով կամեցող էր նոյն իսկ Պապի հրամանները հազարաւոր անգամ կատարել (Պալտսարանութիւն): Եւ յս ծառը ուղարկեց Լուծերը Լեոն պապին, գրելով և թուղթ որի մէջ լուսափայլումէր շատ բարեխիտ հաշտողականութիւն և քաջ անձնագիտութիւն միանգամայն, որի մէջ յիշեցնումէր նա պապին թէ պիտոյ է զարձուցանել վերջին պատահարը, վերանորոգելով իւր ապականեալ պալատը և բարեկարգելով եկեղեցին, և թէ չէ կարելի աւելի երկար թողուլ սորան այդ անկարգութեան մէջ: Արժիւժ Մեղիշեան Լեոնը հաւանելով Եղբայր Փարփնոսի գեղեցիկ քաներարին, յոժար էր բոլոր անցքը համարել մի արեղայական խտանկութիւն. բայց հռոմեական պալատումը յաղթող գտանվեցաւ այն կարծիքը, թէ պիտոյ է մի սաստիկ զարկուածով վերջացնել այն վէճը որ օրէ օր աւելի տարակուսական էր լինում: Եւ յս պէս, հրատարակվեցաւ այն ծանրախորհուրդ կոնդակը 1520 թուականի յունիսի 15ին. սորա մէջ Լուծերի 41 առաջարկութիւնքը (հաստատած բաները) զատապարտումէին որպէս հերձուածողական, սխալական, զայլժակեղեցուցիչ, մալրեցուցիչ և Քրիստոնէի ականջի համար անտանելի. ապա ասած կար, եթէ ինքը Լուծերը կամք չունի 60 օրի մէջ ուրանալ իւր ասածը և գրածը, պիտոյ է նշովի տակ ընկնի, և ամենայն մարդու վերայ հարկ գրվի չը պաշտպանել նո-

բան, այլ ըմբռնել և հասուցանել Հոռմ. սպա թէ ոչ, այդպիսի մարդը կը բանադրվի, այլև կը զրկվի իւր բոլոր գոյրից, Բայց Ռեֆորմատորի սիրտը աճեց և զօրացաւ, երբ որ վճռահասած էր գործը և նա ինքը չունէր աւելի տարակոյս, թէ Պապը սուս քրիստոս է: Թո՛ղ Էբբ պապականը ամենայն ջանադրութիւնով աշխատէր հրատարակել և տարածել դատապարտական կոնդակը, թո՛ղ Մայնց, Քեօլն և Լեօվըն քաղաքների մէջ այրէին Լուծերի գրուածքը, բայց գրեթէ ամենայն տեղ արհամարհանքով ընդունեցին այն կոնդակը, կամ թէ բռնութեամբ ընդդիմացան նորա գործադրութեանը. նոյն իսկ կայսերապետը վախելով, թէ մի գուցէ խառնակութիւն ընկնի ժողովոյի մէջ, հրաժարվեցան ծանուցանել կոնդակի գրութիւնը: Լուծերը փոքր չը ներգործեց հասարակաց կարծիքի վերայ իւր թեթեւատար գրուածովը: «Ընդգէմ սուս քրիստոսի կոնդակին»: 1520 թուականի Նոյեմբ. 17/ին, միսանգամ բողոքեց Պապի, որպէս մի կամակորված հերձուածողի վերայ, զէպ ի մի ազատ քրիստոնէական ժողով, և վերջապէս նշանաւոր գործողութիւնով յայտնեց իւր անդառնալի հրաժարումը պապականութենից. 1520 թուականի զեկտեմբ. 10/ին, համալսարանի աշակերտները առած իւր հետ և ինքը յառաջ ընկած, զուրս գնաց Վիտորնիերգի Լյւստրը անունով քաղաքադրան հանդէպ և Պապի կոնդակը, կանոնական օրինաբարի հետ միասին, կրակը ձգեց որպէս պատասխանի այն հրամանին, որով այրված էին իւր գրուածքը, և ասաց այսպէս. «Արովհետեւ դու Տիրոջ սուրբը արտնջուցիր, թո՛ղ սպա արտնջուցանե և ուտե քեզ կրակը»: Եւն ժամանակը հաստատվեցաւ այն դատողութիւնը որ Երասմուսը արած էր Լուծերի վերայ, երբ որ կայսրընտիր Ֆրիդրիկոս իմաստունը Քեօլն քաղաքի մէջ հարցրեց Երասմոսից, արդեօք կարծիք ունէր նա, թէ Լուծերը սխալված է մինչև այժմ իւր վարդապետութենների, քարոզների և գրուածների մէջ. Երասմուսը պատասխանեց այսպէս. Լուծերը սխալված է երկու բանով. մին որ համարձակվել է վնասել Պապի թագին, երկրորդ, արեղանների փոքին:

Երբ որ առաջին կոնդակի մէջ զարձ գալու համար սուսած ժամանակը անցած էր, և Լուծերը այդու ամենայնիւ հաստատ մնաց իւր կամքի վերայ, 1521 թուականի սկզբումը հրատարակվեցաւ մի այլ կոնդակ, որի մէջ բացարձակ նպովք էր կարգաշար Լուծերի և նորա հետևողների վերայ, Եւս կոնդակի ներգործութիւնը աւելի թոյլ եղաւ քան թէ առաջին անգամինը: Մտքսոնիայի մէջ, ուր հասարակաց կարծիքը այնքան ձեւնտու էր Լուծերին, որ կայսրընտիրը անարժան համարեց բռնութիւն թոյլ տալ, Մտքսոնիայի մէջ երբէք չը հրատարակվեցաւ այն կոնդակը, և ինքը Լուծերը ամենեւին անտես

արեց նորան, Աղայսրընտրի պաշտական քարոզիչը Ապաշտին անունով, որ իւր իշխանի սիրաբ գրաւել էր զկայ ի Անֆօրմացիան, ի զուր աշխատեց չափաւորել Առթիւնի ընթացքը, Սա ոչինչ աւելի չէր պահանջում, բաց ի այն բանից, որ իւր աշխարհի իշխանաւորը թոյլ տայ նորան գործ կատարել, թէև մնասելով իւր անձին, ըստ որում անհնար էր Աստուծոյ զօրութիւնը խախտել, Պատանի կայսր Աարթու Տինգերորդը առաջարկեց Աղայսրընտրին բերել իւր հետ Առթիւնը այն տէրութեան ժողովի մէջ որ առաջին անգամը լինելու էր Աօրմն քաղաքումը, ուր և պիտոյ է հարցաքննվէր Առթիւնը բանագլու մարդիկ բերանով, Աարթուր խոստացաւ նշնպէս հոգարարութիւնը, որ Առթիւն անիրաւութիւն չը հանդիպէ, ինչպէս նոյն ինքը Աղայսրընտրը ցանկացած էր այս բանիս. միայն թէ Առթիւնը թող ոչինչ չը գրէր ընդդէմ Պապի սրբութեանը, Աղայսրընտրը յառջուց հրամարված էր իւր հետ տանել Առթիւնը, բայց յետոյ հարցրեց արանից, արդեօք կամէր գնալ իւր հետ թագաւորական ժողովի մէջ, Առթիւնը պատասխանեց, եթէ Աղայսրը գանչում ինձ, ապա տարակոյս չունիմ ես, որ այդ հրաւերը աստուածակոյս կողմից է, և եթէ չէի կարող ողջանդամ այն տեղ գնալ, պատրաստ եմ այն և իրբև հիսանդ տանել տալ ինձ այն տեղ, միայն թէ ցանկալի էր, որ Աարթուի կայսերութեան սկիզբը չապականվէր ոչ իմ, և ոչ մի այլ մարդու արինով, անաստուածութիւնը պաշտպանելու համար երբ որ կայսրը իմացաւ, թէ Առթիւնը նողովքի տակ է ահա, կամցաւ յետ քարշվել իւր պահանջութեանից, բայց իսկ և իսկ այժմ հարկաւոր համարեց կայսրընտրը տանել Առթիւնը Աօրմն, որին հաւան էր և Առթիւնը, ինչպէս յառաջուց, Եւ այժմ մի քանի մարդիկ պապական կողմից կարծումնին, թէ վէճը կարելի է զեռ ևս վերջացնել խաղաղութեամբ, միայն թէ գործը անցանէր Պապի մտ, օրինաւոր մարդիկ ձեռք. բայց սխալութեանն զորաւ, ըստ որում ցարը մեղմացնել միայն, ինչպէս որոշա բոլոր փորձերի դիտարութիւնն էր, չունէր մի հիմնաւոր օրում, Աերջուպէս մարտի 7 թուականին հրաման արձակեց կայսրը, Առթիւնի բոլոր գրութեքը գօրս տալ մեծաւորնբին. այս բանիս պատասխան արեցին հասարակութիւնը, թէ այդ հրամանը ամենին անսպաս էր, ըստ որում Առթիւնի վարդապետութիւնը շատրի սրտի մէջ արմատացել է ահա, Նոյն միջոցին ժողովոյի փոխանորդըր մի դժուարացուցիչ խնդիր մէջ բերեցին, այսինքն. թող կայսրը հոգարարութիւնի, որ վերջանար այն սպորինաւոր գնացքը, որով հոռմեական պաշտար պարտաւոր էր զերմանական ազգի առաջև, Այսպէս, մի խորհրդական ընկերութիւն կարգվեցաւ, որին մասնակից էին և հոգևոր անձինք. սոցա պիտոյ էր քննել զեր-

մանական ազգի գանգատները: Այլև, նոյն թագաւորական ժողովումը կայսրի առաջն գրեցին 101 թուով գանգատներ, որոնց աւելի մեծ մասը վերաբերումներ զէպի պապական արծաթագերիտութիւնը և զէպի թողութեան քաղմամբու պարզեւտրութիւնը, որոնցով պարզամտքը մտրովումին և զրկումին իւրեանց արծաթից: Բոլոր գերմանական ազգի անունով ասած էր գանգատագրի 28 յօդուածումը, թէ Հարկաւոր է մի վերանորոգութիւն, թէպէտ սորա խորհուրդը այն էր միայն, որ վերջանային մի քանի աւելի խռովեցուցիչ անկարգութիւնք: Սորա փոխարէն, Պապը 14 օր յառաջ միւսանգամ իւր կերպովը դատաստան էր կատարել Լուծերի վերայ և 1521 թուականին, յունվարի 5ին նորա անունը մուծել էր այն վատաշամբաւեալ յիշատակարանի մէջ որ ասումէ Տերունական ընթրիքի կոնգակ, Bella in Coena Domini, այն հերձուածողների շարքումը որ ամենայն տարի աւագ հինգշաբաթի օրին սովորութիւն կայ նգովելու Պապի և նորա կարգիւնայների ներկայութեամբը: Բայց այս կրկին դատապարտութիւնը սակաւ ներգործեց, և աւելի սակաւ, նոյն իսկ Լուծերի վերայ, որ յետոյ ինքը հրատարակեց նոյն կոնգակը սուր ծանօթարանութեամբ, որ լի էր դառն ու կծու արհամարհանքով: Այնուհետև համարձակութիւն կար ծաղր անել Պապի վերայ, և ոչ թէ միայն հեղինակի գրիչը, այլև ճարտարագործի հմտութիւնը փոխեան զուրս եկաւ և գործիք դարձաւ ժողովրդի հանձարին: Հռչակաւոր կենդանագիր Լուկաս Քրանտօր մի փոքր յառաջ պատրաստել էր փայտից կորած պատկերներ, անուն տալով նոցա «Չարչարանք Քրիստոսի և նորա Հակառակօրդի», և սոցա ստորագիրքը շարագրել էր Գեյլերթթունը, Հանս Չարս Նիւրնբերգեան տաղասացը մի քանի տարի յետոյ քանասեղծեց այն զուարճալի երգը, որ սկսանումէ այսպէս. «Ախտարներգեան սոխակը (Լուծերը), որի ձայնը լսումէ, ամենայն տեղ ականջին»:

Կայսերական թղթովը մարտի վեցից հրատարակեալ Լուծերը, որ 21 օրի մէջ ներկայանայ Ա. օրմն քաղաքումը, և ստայաւ ճանապարհի ապահովագիր: Վասպար Շտուրմը, որպէս թագաւորութեան պատգամաւոր առաջնորդեց Լուծերին և այս խորհրդով ասումներ Գերմանիա: Եւ այն իշխանքը որոնց սահմանից անցանումներ Լուծերը, սուեցին նորան ուղեորութեան ապահովութիւն: Ճանապարհի սայլը հոգաց Ախտարներգ քաղաքը, Դուրս Եոզմաննէս Աէյմարեանը ճանապարհի ծախքը: Աւր Ռեֆորմատօրը ներս էր մտանում մի քաղաքի մէջ, շատ քաղմութիւն հանդէպ էր գնում նորան, որ տեսանէ այն քաղաքիտ մարդը որ համարձակվել էր գլուխ բարձրացնել ընդդէմ Պապին: Երբ որ Սպալտտինը Օպղընհէյմ քաղա-

քի մէջ խորհուրդ տուեց նորան, որ չը դնայ ուղղակի դեպ ի Վօրմս, պատասխանեց նորան Լուժերը. « Թեպէտ և լինէին այն տեղ այնքան ստատանայր, ինչքան կղմնորներ կային տանիքների վերայ և այնու ամենայնիս կ'երթայի այն տեղ »: Եպրիլի 16ին ներս մտա քաղաքը. մի բազմութիւն, 2000 մարդուց աւելի, հանդիսով տարան նորան իւր իջեանը, ոչ հեռի Յպիտակ արագիւլ անունով փողոցից, ուր բնակուեալ Լուզովիկոս կայսրընտիրը Փիալցիայի, Միւս օրը ահա, չորս ժամին ճաշուց յետոյ տարան նորան ժողովի մէջ: Փողոցները լցուած էին ժողովրդով, աների ծածկոցը բացեցին, որ տեսանեն այն քաջ, հաւատի համար պատերազմող տղամարդը, թէ ինչպէս նա յառաջ էր դնում դեպ ի մի այնպիսի մեծակշիռ գործակատարութիւն: Ընտանի զօրագլուխ Գէորգ Փոն Գրաուներբըրը բերանով քաջայիբութիւն տուեց Լուժերին, Ալբրիխ Փոն Լուտարն աղնուականը գրաւոր կերպով, Քաղաքապետան ժողովարանի և նախասենեակների մէջ հասարկած էին աւելի քան թէ 5000 մարդ. Լուժերի գրքուածքը դրած էին մի սեղանի վերայ. կրք որ ներս մտա նա, Տրիերեան վիճակի կախկապոսի փոխանորդը Փոն Եքք անուն, կայսրի կողմից հարցրեց Լուժերից, արդեօր խոստովանումէր նա այն տեղ դրած գրեանքը որպէս իւր յառուկ շարագրութիւնը, և թէ ունէր կամք ուրանալու նոցա մէջ ասած բաները: Իսկոյն մէջ մտա փարգապետ Ըուրթըր Վխտարներբը քաղաքից, որ դրած էր Լուժերի հետ որպէս իրաւունքի պաշտպան, և ասաց, թէ նախ և յառաջ պիտոյ է այն գրքերի անունները տալ. կրք որ եղած էր այս, Լուժերը առաջին հարցուածին պատասխանեց. Եյո՞, ևս եւ՞ այդ գրուածների հեղինակը. բայց երկրորդ հարցուածին պատասխան տալու համար, ինզրեց մտածելու ժամանակ, որ և տուեցին նորան: Միւս օրը կրքին անդամ հանդիսացաւ ժողովի մէջ. այժմ պիտոյ է տար վճռական պատասխանը. կրկար միջոց խուռն բազմութեան մէջ սպասելով, զուրս եկաւ ապա, Երբ որ հրամայեցին խօսել, փայլեալագոտեա՞ծ և համարձակ բանախօսութենով յանդիման կայուց նախ գերմանական և ապա լատինական լեզուով այն պատճառները, թէ ինչու համար չէր կարող նա հրաժարուիլ իւր գրուածներից, ոչ նոցանից որ Լուտուճոյ բանը Մուրը գրքի հիման վերայ քարոզումէին, և ոչ նոցանից որ Պապի անատուած գործերին հակառակախօս էին, և ոչ նոցանից որ ընդդիմանումէին Պապի նենգաւոր գործակալներին. բայց կրք որ Տրիերեան կախկապոսի փոխանորդը պահանջեց մի կորոզական ուղիղ պատասխանի, արդեօր կամք ունէր նա ուրանալ իւր ասածները, Եթէ ոչ, ապա Լուժերը կ'ընթաց իւր խօսքը այս արժանի յիշատակի բանովը. « Արովհեան կայսերական մեծութիւնը, կայսրընտիւր

և իշխանաւոր տեսրբը պահանջումին մի անգարդ, պարզ և ուղիղ պատասխան, ապա կը տամ մի այնպիսի, որ ոչ խեղճեղ էր և ոչ կծոյ, Այն ժամանակը միայն կարող էի ևս ուրանալ իմ ասածները, երբ որ Աստուածաշունչ գրքի վկայութեններով, կամ թէ Տրապարակական, պարզ ու պայծառ պատճառներով կը յաղթէին ինձ և կապաշուցանէին իմ սխալները. պատճառ, ևս չեմ հաւատում ոչ Պապերին և ոչ եկեղեցական ժողովներին, բայտ որում անտարակոյս յայտնի է ահա, որ նորա շատ անգամ սխալվել են, և ինքեանք իւրեանց հակառակել են, և ևս այն սրբազան առածներովն որ իմ գրքուածներէ մէջ բերած եմ և գործ եմ գրած, ունիմ սրտի վկայութիւն, և իմ խիղճս կապած է Աստուծոյ խօսքի վերայ. ուրեմն ոչ կարող եմ և ոչ կամք ունիմ ուրանալ մի բան, բայտ որում ոչ ապահով և ոչ խոհեմ գնացք էր ընդդէմ իւր խղճմաններին գործ կատարել. Ահա կանգնած եմ այս տեղ, ուրիշ կերպով ընձանալ կարող չեմ. Աստուած թող օգնէ ինձ. ամեն։

Այս ժամը մի վեհական և մեծախորհուրդ ժամ էր, երբ որ Առթիւրը Առքին քաղաքի մէջ, կայսրի և թագաւորութեան առաջև այս այրական քաջասիրտ բանախառութիւնը արեց. Աւստուածաբան խոստովանումն իւր անձը արտաբին վկայութեններէն ազատ. հաւատը զէպ ի Պապերի և եկեղեցական ժողովներէ անսխալականութիւնը չէ աւելի կապում և կաշկանդում նորան, Այս մասին Առթիւրը կանգնած է մեր աչքի առաջև որպէս յայտնագործող մի նոր աշխարհի, այսինքն. հոգևոր և իմացական ազատութեան աշխարհին, որ հակառակ է կոյր, աւանդութեան և արտաբին վկայութեան վերայ հաստատած հաւատին և դորա հետ կից ստրկութեանը. Արդարև, նա միասնեպամ գտել էր ճանապարհը զէպ ի այն բանը, որ եղած էր հին և նախնի քրիստոնէական եկեղեցու մէջ, որից շատ և շատ խտորված էին յետոյ. Առթիւրը, մի պարզական գործիք Նախահնամուտութեան, վերանորոգելով մարտի քրիստոնէական ուսումը, վերակենցաղեց նոյնպէս ապա հոգու իրաւունքը և այդպէս երախտաւոր եղաւ ոչ թէ միայն իւր հայրենիքին, այլև բոլորանգակ աշխարհին. Այս բանը խոստովանեցին Առքինումը թէ մեծ և թէ փոքր. Աստուած այնպէս մեծարեց նորան, ասումն Սպարապինը, որ նա այն տեղ աւելի նայեցողներ ու հայեցողներ ուներ իւր վերայ, քան թէ իշխանաւորը և պարոնաւորը. Սահմանազետ փիլիսոփայոս իշխանը Հեսանիայի ասաց նորան. և թէ արդար էիք դուք, սէր վարդապետ, ապա Աստուած ձեզ օգնական. Արիս ծերունի դուքը Բրաունչվեղիայի ուղարկեց նորան մի փոքր զովարար ըմպելի արծաթի ամանով, Եւ Սաքսոնիայի կայսրընափր Ֆրիդրիխը ուրախաշաւ ծածկապէս, որ Առթիւրը այնպէս

քաջ էր պահել իւր անձը, նշնպէս բացայայտ երևեցաւ և հակառակորդներին ասելու թիւնը և կատաղութիւնը. ինչ մարդ որ և իջէ կերպով ջոյց էր տալիս թէ լաւակամ էր ղէպ ի Լուծները, գրումէ հայտնութիւնը, նա համարվումը հերձուածող, Թէպէտ զեռ ևս ջանահար էին մասնաւոր և քաղաքական ճանապարհներով յորդորել Լուծները, որ հրաժարի իւր սկսուածքից. զոր օրինակ, Պապի ստուածարան վարդապետ Գոխլեոսը շատ աշխատեց այդ մասին, բայց Լուծները այդ բոլոր յորդորանքներին ընդդիմացրեց Վամալիէլի խօսքը. եթէ այդ խորհուրդը մարդուց է, կը քակովի, բայց եթէ Աստուծուց է, ոչ ոյ չէ կարող դորան քակուել, Վամալ կարծումին թէ չէ պիտոյ սպահովական ընկերակիցք տալ Լուծներին իւր վերադարձի համար, բայց հայտնը և Սարսանիայի զուքս Գէորգը որ Լուծների սաստիկ թ շնամին էր, ընդդիմացան այդ բանին: Այսպէս, Լուծները հրաժարվելով Վօրմա քաղաքից, ստացաւ սպահովական ընկերակցութիւն, միայն թէ այն պայմանով, որ ճանապարհի վերայ ոչ քարող տալով և ոչ գրուածներով չը խողովելուցանէ ժողովուրդը, բայց Լուծները իւր շնորհակալական ծառի մէջ իրաւունք էր պահել իւր համար, որ Աստուծոյ բանը ազատապէս խոստովանէ և քարողէ, Բարիլի Չինն հեռացաւ նա Վօրմա քաղաքից և կայսերական ուղարկուորը առաջնորդեց նորան մինչև Ֆրիդրիք որ Հեսսենեան սահմանումն է, Գորան յանձնեց Լուծները երկու նամակ, մինը կայսրի վերայ, միւսը, թագաւորութեան փոխանորդների վերայ, որոնց մէջ կրկին անգամ շնորհակալ եղաւ իւր սպահով ուղարկուորութեան մասին, բայց զանգատելով, թէ իւր վարդապետութիւնը չը քննեցին և չը հերքեցին Սօրբր գրքի հիման վերայ. այդու ամենայնիւ պատրաստ էր նա Աստուծոյ և իւր հայրենիքին միայն սպասուոր լինել, Հիրշֆելց և Էյդենախ քաղաքներումը քարող տուեց նա, բայց շարունակելով իւր ճանապարհորդութիւնը, Ալմրնշտեյնի սահմանումը, մայիսի 4ին, յարձակվեցան նորա վերայ մի քանի կերպարանափոխ ձիաւորներ, որ կեղծաւոր բանութեանով բարձրացրեցին նորան սայլից, նաեղուցին մի ձիու վերայ և մի քանի ժամանակ պտոյտ ածելով անտառի մէջ, վերջումը, ինչպէս պայման էր կապած, կայսրընա՛ր Ֆրիդրիկոսի կամքով, բերեցին Աարմրուրգ ասած ամրոցը, Էյդենախ քաղաքի մօտ:

Այս դրուական հոգաւարձութիւնը աւելորդ չէր. պատճառ, երբ որ թագաւորութեան ժողովը ցան և ջիբ էր եղած և փոխանորդների մի մասը հեռացած էր, կայսրը պապական նուիրակի, Ալեանդրի խօսքերով բորբոքված, և փոքր, կամ թէ ամենեին չը լինելով տեղեակ հաւատի վերաբերեալ վէճերին Գերմանիայի մէջ, ժողովեց զեռ

ևս ներկայ մնացած փոխանորդքը իւր պալատի մէջ, պատրաստեց մի հրովարտակ, որի մէջ Առթիւնը, որի վերայ բարգաճ ու զիզած էին շատ բամբաստողական նախափններ, և նորա կուսակիցքը հրատարակ-վեցան որպէս հերձուածողք, Առթիւնի գրուածքը որպէս արգելված և նորա պաշտպանը որպէս պարտական մի և նոյն պատժին: Բայց կամենալով այս հրովարտակին այնպիսի երևոյթք տալ, որպէս թէ նա թագաւորութեան լիաթիւ ժողովի խորհրդով և կամակցութեամբ յառաջացած էր, հրովարտակի թուականը խաբերայական կերպով յետ էին խաղաղուցեւ մայիսի 27 ից դէպ ի 8ը, Ալէանդրը, որ այս հրովարտակի հեղինակն էր, նորա մէջ գուրս էր ժայթքել այն բոլոր թիշներ որ երկար ժամանակ եփ էր եկած նորա մէջ, Այս հրովարտակը համարեալ թէ ամենայն տեղ Գերմանիայի մէջ վառ ընդունվեցաւ, միայն թէ հասաւ իւր թշուառ նպատակին, անմիաբանութիւն սերմանելով իշխանաւորների և իւրեանց ժողովուրդների մէջ, ինչպէս Ալէանդրը, մի ժամանակակից հեղինակի վկայելով, ասած է «Թէպէտ գուրս, ո՞վ Գերմանացիք, կամենումք վայր ձգել հռոմեական լուծը, բայց մէք հոգատար կը լինինք, որ գուրս միմեանց մորթէք և խեղդիք ձեր արիւնի մէջ»: Աւրիսի ֆոն Հուստրն հայրեւասէր մարդը շատ անհաւան էր թագաւորութեան ժողովի պլոպէտ խայտատակ վերջին, Կարծումով, ձայն է տալիս նա, որ մեր օրերումը կարելի էր տեսնել, արդեօք Գերմանիան իշխանաւորներ ունի, թէ կառավարումը միայն գեղեցիկ զգեստաւորված մարդաստիւլ արձաններով (քարի կոտորներով):

Արթիւնը ամրոցումը կենումը Առթիւնը աշնուական պաշտանեայ Գէորգի անունով, զգեստաւորված որպէս ապետ, շատ անգամ հիւանդ և տխրամտ, բայց անդադար գործունեայ իւր կողման մէջ: Գերմանիայումը ողբ էին կատարում նորա վերայ, որպէս թէ մեռած կամ անյայտացած էր, մինչև որ այն համարձակ գրուածները ընդդէմ Առանձնական Խոստովանութեան, ընդդէմ Պատարագին նրն ջեշեալների համար, ընդդէմ վանականութեան կարգին, այլև ընդդէմ այն շնորհալաճառութեանը որ նոր ի նորոյ սկսել էր Մայնցի Կայսրընտիր իշխանաւորը, զօրաւոր վկայութիւն տուեցին թէ Աւթորմատորը զեռ ևս կենդանի է: Այս ամբարտաւան իշխանաւորը հարկաւոր համարեց խոնարհվիլ աքսորած արեղայի պատժողական քորոզի ստաջև, և խոստացաւ վերացնել այն անկարգութիւնը: Նոյն միջոցին, ուղղագործեալ վարդապետութիւնը ճանապարհ բացեց իւր համար զանազան տեղերում, չը նայելով պապական կոնդակին և կայսերական հրովարտակին, որ երկուքը ևս չը կարողացան արմատ ստանալ զերմանական սոփորութեան և սրտի մէջ, և ոչս պատճառով լ-

բուսացի էր շատերի սակը, թէ այն թանաքը որով կայսրը ստորագրել էր իւր հրովարտալը, զեռ ևս չորացած չէր, երբ որ սա ամենայն տեղ խախտւեցաւ: Յրիգրիկոս Մոկումը և Նիկողայոս Հասուղմանը քարոզելին Բեւտարանը Յփերաւիայի մէջ, Յովհաննէս Ղանգ, Պօրչէյմ և այլ իրաւաւոր Ինֆուրտի մէջ, Նեոսգլինդըն քաղաքումը տեղական կառավարութիւնը պահանջեց մի աւետարանական քարոզիչ և ստացաւ այդ պաշտօնի համար Թէոդորոս Բելլիկեանը, Պոմմերանիայի մէջ աւետարանական վերանորոգութիւնը յառաջ խաղաց Բուզընհագենսի, Քոֆենսի, ՔետրլՆուսի և միւսերի գործակցութեամբ: Նոյն ընթացքով յառաջ գնաց գործը Յրէյրերդ և Հալբրըշտառ քաղաքներումը, Յրիզլանդիայից մինչև Դանեմարքիայի մէջ: Նոյն իսկ հալածանքը որ այս տեղ և այն տեղ սկսուեան, ձեռնտուէին աւետարանական լոյսի տարածմանը, Յակոբ աւազերէչը հալածված լինելով Նիդըրլանդիայից, քարոզեց Բեւտարանը Բրեմնը քաղաքումը: Բյու բաների համար հարկաւոր չէին մեծ մեծ պատրաստութիւնք, ըստ որում մարուք քրիստոնէական նոր ջանած սերմերը բողոքումն ինքն ըստ ինքեան իւրեանց յատուկ գորութեանով: Բայց մի վճահական ընթացք ջղոյց տուեցին Օգոստինեան կարգի արեղաւքը Մէյսընեան և Թիրիքեան սահմաններումը, որ և խորհուրդ կատարելով Ախտոնըրերգի հոգևորների հետ, հաւանեցին բաց թողուլ ոչ թէ թիւ պատարազը, այլև վանական կեանքը: Պիտանի մարդիկը պահանջեցան, որ լինին քարոզիչք, բայց միւսերը պիտոյ է իւրեանց ձեռքի վաստակով ճարելին իւրեանց հացը: Մի խորհրդակատար ընկերութիւն, բաղկացած Յուստոս Յոֆմանից, Նիկողայոս Բմիդորֆից, Հիերանիմու Շուրֆից և Փրիլագոս Մելանքթիմիչ, որ հրաման էին ստացել կայսրընտրիչը քննել այն իրողութիւնքը, իւր յայտարարութեան մէջ առաջարկեց ուղղակի, թէ պիտոյ էր վերացնել պապական պատարազը բոլոր սահմանի մէջ: այս բանիս համաձայն գտանվեցաւ և Ղութերը այն գրուածի մէջ որ «պատարազի վատթար գործադրութեան մասին» ուղարկած էր Ախտոնըրերգի Օգոստինեան կարգի արեղաներին: Բյու գրուածը մի քանի ժամանակ յետ պահեց Յպալաֆներ, մինչև հրատարակվեցաւ նա 1523 թուականին: Կայսրընտիրը ի բնէ խոհական և զգոյշ լինելով նորաձեւութեաների մասին, երկիւղ ունէր, թէ մի գուցէ պատարազը հետացնելով, վնասվէին այն մեծ նուիրադործութիւնքը որ գորա համար արած էին: Բյու տեղ և այն տեղ, 1521 թուականից սկսեցին նոյնպէս վերացնել քահանայական կարգի անկնտութիւնը, Ղութերի գրուածը հոգևոր ախտադրութեան մասին զեռ ևս դուրս չեկած, Յրիգրիկոս աւազերէչը Քեմբերգի մասել էր ամուսնական կարգի մէջ, սորա հետեից շուտով և Կարլշտաթը, Սա

Քրիստոսի ծննդեան ամին կատարեց տերունական ընթրիքը զերմանա-
կան լեզուով և բաշխեց ժողովրդին հացը և բաժակը. այս բանիս
հաւանեց Լուծերը, և շնորհիմացաւ Ապարընտիրը, միայն թէ պա-
հանջուակը, որ ոչինչ նորաձեռութիւն չը լինէ, մինչև գրուածներով,
վիճարանութենով և քարոզներով պայծառ և միաբան կարծիք ստա-
նային, Բայց երբ որ Կարլշտատը ոչ թէ միայն շատ անտփօր նորա-
ձեռութիւնը սկսեց առնել, այլև փշթելով ու կործանելով բոլոր պատ-
կերազարդութիւնքը, յառաջ զնաց զէպ ի մի վայրենի խոտվական
բռնութիւն, երբ որ Յփրատի կողմից մարդիկ եկան Ախտաբերերգ,
պարծնալով որպէս թէ նորանոր յայտնութիւնք էին ստացել, այլ-
և մոլորամիտ աղտոտութենով և կործանական մարգարէութեններով
փոքր էր մնացել որ խախտէին բոլոր եկեղեցին, այնուհետև չը կա-
րաց համբերել Լուծերը, և 1522 թուակ. մարտի սկզբումը զուրս
եկաւ իր պատասպարանից ատանց մտածելու իր անձնական ապահո-
ւթութեան վերայ և ատանց սկանջ զնելու Ապարընտրի յորդորանքին,
որ Աօրմսեան հրովարտակի կողմից կասկած ունէր Լուծերի համար,
Լուծերը Բոսնա քաղաքից թուղթ գրեց իր իշխանաւորի վերայ, մի
քաջաշնական թուղթ, վսեմական հանդարտութեամբ, ըստ որում
վկայումք սիրտը իր աստուածային կոչման մասին, և հազիւ թէ հա-
սած էր Ախտաբերերգ, իսկոյն սկսեց քարոզել մի ամբողջ շարաթ
ընդդէմ այն անկարգութեանը և փոթորկին որ բարձրացել էր, և
թէպէտ գործ զնելով իր հոգու բոլոր դիմը և կարողութիւնը, այ-
նու ամենայնիւ, այնպիսի ճշմարիտ քրիստոնէական մեղմութեամբ, որ
դրանց ժողովրդի սիրտը, մասնացոյց առնելով հոգու ամենաբարձր
զբօնութիւնը և աղտոտութիւնը, որ կարողացաւ հասկացնել նոցա թէ
եկեղեցու վերանորոգութիւնը պիտոյ է կատարվի խաղաղասէր ընթաց-
քով, սրտի ազատ վկայութեան և Աստուածաշունչ գրքի պայծառա-
խոս տառի հիման վերայ:

Թէպէտ Լուծերի գործը մի ճշմարիտ քրիստոնէական և ճշմա-
րիտ ազգային գործ էր, այնու ամենայնիւ չը պակասելին նորան զօ-
րաւոր և կատարի թշնամիք այս ժամանակումը, Յոցա աստջնորդը
էր Յարսոնիայի զուրս Վեորգը, որ յանդիմանական թուղթ գրեց
կայսրընտիր Քրիզոստոսին և նորա եղբայր Յովհաննէսին այն անկար-
գութեան համար, որ իրբև թէ գործումէին նոցա սահմաններումը,
Նիւրնբերգի կայսերական կառավարութիւնը հրամայեց, որ բոլոր և
պիսկոպոսքը ճիշդ հարցու խնդիր առնեն, տեղեկանան բոլոր նորաձե-
ռութեններին եկեղեցական պաշտօնի մէջ, ըմբռնեն վանքերից փախած
արեղայքը և կուսանքը և պատժեն նորանց, Քէյսեմիայի և Քերզէ-
բուրգի եպիսկոպոսքը որ Վեորգ զուրսի հովանաւորութեան տակ և

ին, ջերմեանոց գտանվեցան այն հրամանի գործադրութեան մէջ, բայց և շատ փոքր պարծանք ձարեցին իւրեանց, և վատ փորձեր արեցին։ Անմիտ գովասանութիւնք Պապի զերապատովութեան և անսխալականութեան վերայ ոչինչ չէին ներգործում աւելի, ժողովոցի վերայ, Լուծերը ունէր մի սաստիկ թշնամի և շէնրիկոս օրթերորդի, Անգլիայի թագաւորի մէջ. սա ցանկանալով աստուածարանի և եկեղեցու արդյանի փառք ստանալ, գրեց, կամ թէ իւր անունով գրել տուեց մի պաշտպանողական ճառ Եօթն Խորհուրդների վերայ, և դորա մէջ մեանմերձ գտանվեցաւ Լուծերի պատուին, Ի հարկէ Հոսոմմը թագաւորի շարադրած գիրքը այնպէս գերազանց տեսան, մինչև կարծումէին, թէ նա կարող էր միայն գրած լինել Հոգւոյն սրբոյ ազգեցութեամբ, և հաւասարապատիւ էր սուրբ Օգոստինոսի գրուածներին, Բայց Աւիֆորմատորը առ ի սրտէ վկայելով, թէ ինքը պատերազմող էր մի այնպիսի թագաւորի համար, որի հետ համեմատելով աշխարհի բոլոր թագաւորները, պիտոյ է ամօթապարտված խայտառակվէին, արձակեց իւր շարդող ու փշոող ճարտարիստութեան կայծակները դէպ ի Բրիտանիայի թագաւորը, ինչպէս դէպ ի մի անպատիւ և խարերայ մարդ։ Թագաւորը տեսանելով թէ աստուածարանի կերպարանքով չք յաջողվեցաւ մտնեալ Լուծերին, սկսեց քաղաքական խորամանկութեամբ ներգործել ընդդէմ նորան։ Անց կացան տարիներ, և Լուծերը յուսադրութիւն ստանալով Դաննմարքիայի թագաւորի կողմից, թէ շէնրիկոս օրթերորդը կը խոստովանէ Աւիֆորմատորի ճշմարտութիւնը, իւր գործի յառաջադիմութեան համար մինչև այն աստիճան անփոյթ արեց իւր պրական արժանաւորութիւնը, որ մի խոնարհական նամակով թողութիւն ինդրեց նորանից և յայտնեց իւր պատրաստութիւնը յետ առնուլ այն նախատական խօսքերը որ յառաջուց ասած էր նորան։ Բայց շէնրիկոսի սրտի խոցը զեռ ևս բժշկված չէր. այն թագաւոր մարդը շամշեց մի արհամարհական սուր վիր աննուլ և Լուծերի թուղթը գործ գնել, նորան հրապարակաւ գետին դարկելու համար, այնպէս որ Լուծերը հապու թէ կարողանումէր միւսանգամ գտանել իւր հոգու քաջութիւնը ընդդէմ Անգլիական թագաւորի հայհոյական գրուածին։ Երբ որ Լուծերը պատերազմ չունէր մի անձնաւոր հակառակորդի հետ, կարող էր նոյնպէս խօսել Տեղ և մեղմ կերպով, ինչպէս երևումէ այն գրուածից, որ այս միջոցին հրատարակվեցաւ. «Պատասխանի այն առակներին որ գործ էին անվում, մարդկեղէն ուսումը հաստատելու համար»։ Սորա հակառակ միւսանգամ սաստիկ և զօրաւոր կերպով քարտնիջ եղաւ նա Պապի և Կլերիկոսների վերայ, այն գրուածի մէջ որ դուրս թողեց ընդդէմ Պապի և Եպիսկոպոսների կարծեցեալ հոգևոր վիճակին։ Այս անգ

խօսուած այնպէս, թէ այսուհետև չը կամէր գործ ունենալ պատկան հոգեւորների հետ, և ոչ ևս պատկանել նոցա, ըստ որում նորա անհնազանդ էին Աստուծոյ բանին, այլև թէ չը կամէր այսուհետև իւր վարդապետութիւնը նոցա հարցաքննութեան և դատաստանի ներքոյ գնել, Այսպէս, Լուծերը հետ զհետեւ կարատելով իւր կապերը պատկանութեան հետ, սկսեց այժմ իւր գլխաւոր ուշադրութիւնը ուղղել այն բանի վերայ, որ ամուր կարգադրութիւն ապա այն եկեղեցական ընկերութեանը որ հրատարակել էր Պապի իշխանութենից. այլ և այս մասին հարցութեանը էին գործում նորանից թէ մասնաւոր անձինք, թէ քաղաքական խորհրդարանք և թէ իշխանաւորք, Բաց ի սորանից, Լուծերը անձանձիր աշխատուելը Աստուածաշնչի թարգմանութեան վերայ, որ սկսել էր Վարթուրդ ամբոցումը, 1522 թուականին դուրս եկաւ բոլոր նոր կտակարանը, և շուտով գորանից յետոյ, Մովսէսի հնգամսեան զիրքը, Սորանից յետոյ հրատարակվեցան հին կտակարանի հաստոր հաստոր գրուածները, որոնց թարգմանութեան վերայ քննութիւն արեցին Լուծերի բարեկամքը հաւաքով միասին, ուշադիր լինելով այն բանին թէ ինչպէս մինչև այժմ հասկացած էին սուրբ գրքի զորութիւնը, և ամենայն զգուշութեամբ և արդար խղճմտանքով գործ կատարելով, Այսպէս 1534 թուականին տպագրութեամբ դուրս եկաւ բոլոր Աստուածաշունչ գիրքը, որի մասին գիտուն և խելացի դատաւորք ասումեն, ,,մի ճարտարապետական գործ գերմանական լեզուի և գերմանական իմացականութեան, հիմք և հաստատութիւն այն գրաւարժ լեզուի և մտածութեան, որով ներգործել են շատ մարդկեղէն հասակներ,, Այսպէս ահա Սուրբ գրքի հիման վերայ պիտոյ է կատարվեր բոլոր եկեղեցական բարեկարգութիւնը, և այդ հաստատման հիմքը ամենայն մարդու քրիստոնէական գիտութեան, զբոլեցաւ այժմ ամենայն մարդու աչքի առաջ, Թէ այդ ինչքան յառաջադիմութիւն էր, բացայայտ է. և այս պատճառով զարմանք չէ, եթէ դուքս Գեորգի պէս իշխանը մի ստատիկ հրաման արձակեց, որ Լուծերի թարգմանութեան օրինակները հաւաքեն և տան մեծաորների ձեռքը. ապա թէ ոչ. մեծ պատիժ կար զանցառուների վերայ, Նոյնպիսի գնացք ցղց տուեցին և Բազաբայի և Մարկոնիայի սահմաններումը.

Երբ որ տասներորդ Լեոն պապը 1521 թուականի զեկտ. 1ին վախճանած էր, նորանից յետոյ 1525 թուականին աթոռ նստեց Հաղիանոս վեցերորդը, Սա, սխոլաստիկեան փիլիսոփայութեան հետ լաւ ծանօթ, այլև բարեսիրտ և արդարամիտ Նիդրլանդացի, լաւց պղծատոր և կարճատես իմացականութեամբ մարդ, յայնամպէս խոստովանեց թէ կամք ունէր ինքնին ձեռնարկել և վերանորոգել մանաւանդ

Թէ պապական պալատը և կլերիկոսների վարքը, Այդու ամենայնիս
մեաց նա Առթիւնի վճառական թշնամին, ինչպէս յառաջուց եղած
էր Աեօվըն քաղաքումը, նա չը կարողացաւ համբերել այն բանին, որ
Աորմանեան հրովարտակի կատարումը պիտոյ է թողվեր թագաւորու-
թեան փոխանորդների ազատ կամքին, ըստ որում կարոյս հինգե-
րորդը զբաղված էր պատերազմով Գրանսիայի թագաւոր Գրանշխոս
առաջինի հետ, և պատրաստութիւնք էր տեսնում կոխ տալու Տա-
ճիկների հետ, Այս պատճառով, Հաղբիանոսը Չիերեզամի նուիրա-
կի ձեռքով մի թուղթ հասարկց նիւրընդերգում հաւարված մեծամեծ-
ների ժողովին, մի թուղթ որի մէջ ջերմութեամբ պահանջումք կէս
մի յիշեալ հրովարտակի զործադրութիւնը ընդդէմ Առթիւնին, որ
երբև թէ երկրորդ Մուհամմէդ էր, յիշեցնելով այսպէս. Թէ ա-
պստամբութիւնը որ եղել է այժմ հոգևոր իշխանութենից, կարող
էր պատահել յետոյ և աշխարհական իշխանութենից, և կէս մի խոս-
տովանումք նոյն թղթի մէջ, Թէ հարկաւոր էր մի վերանորոգու-
թիւն, և խոստանումք օրինապատշաճ կերպով յառաջ տանել նո-
րան, սկաննելով գլխից մինչև ի սոքը, Չիերեզամին պահանջեց, որ
բանտ ձգեն մի քանի քարոզիչք նիւրընդերք քաղաքի մէջ, որ քա-
րողած էին Աեստարանը. բայց քաղաքի խորհրդարանը մերժեց (ան-
տես արեց) այդ խնդիրը, այլև թագաւորութեան փոխանորդը յայտ-
նապէս պաշտպան եղան քարոզիչներին. բայց սորա հակառակ, ըն-
դունելին պապական նուիրակի ծանուցման միւս մասը, և շտապեցին
գրել և պատրաստել հարիւր զանգատ հոռմական ակտոյ վերայ, ա-
պացուցանելով Պապի և կլերիկոսների խորամանկութիւնը և հնարա-
գործութիւնը արձամ օրսալու և Գերմանիայի ուղ և ծուծը քա-
մելու, նոյնպէս Հոգևորներից շատերի անպարկեշտ վարքը, յայտնի
կացուցանելով այն ծուռ վարդապետութիւնը, այն մարդկեղէն սահ-
մանադրութիւնը որ պատճառ էին ամենայն անկարգութեան և կոր-
ծանման, այլև աճ տալով, որ եթէ այս անտանելի անկարգութիւնը
չը վերացվին, ապա ինքեանք այդ մասին հոգարարձու կը լինին.
Որովհետև կարող էին նոքա Պապի յատուկ խոստովանութիւնը վկայ
լերել իւրեանց համար, վասն այս պատճառի բաց և արձակ առու-
մէին ճշմարտութիւնը, նորա բողոքումէն զէպ ի մի ազատ քրիստո-
նէական ժողով Շարասբուրգի, Մայնցի, Բեօլնի, Մեացի կամ մի այլ
գերմանական քաղաքի մէջ, և պահանջումէն որ այդ ժողովը մի տա-
րու միջոցում կատարվի, Գործերը այսպիսի զարձուած տանալով,
ի հարկէ շատ անհաւան էր զորան Պապի նուիրակը, որ և իւր հրա-
ժարական թղթի մէջ յայտնեց, Թէ եկեղեցական ժողովի մասին իրն-
զիր չը կար, այլ խնդիրը այն է, որ այրվին հերձուածոզական զբո-

եանքը և պատժփին նոցա վաճառողքը, ինչպէս ասած է Ղորմեան Տրոյարտակի մէջ, Պապը դուրս թափեց իւր բարկութիւնը մանաւանդ թէ Սարսնիայի կայսրընտիր իշխանի վերայ, շատ անպատշաճապէս նախատեսելով նորա աշխարհի մէջ թագաւորեալ «Լուծերեան անհաւատութիւնը», այլև ահ տուեց նորան Պապի և կայսրի սրովը, Հանդիմանոս վեցերորդը կամենումը արդարև մի վերանորոգութիւն, լայց և իւր խելքի պէս, որ և սխեց իւր պալատական սահմանի մէջ, լայց մի հոռեական Պապ, որ պիտոյ է դատէր այն իրաւունքը և աշխարհութիւնքը, որոնց վերայ հիմնաւորված իւր յատուկ իշխանութիւնը, ի հարկէ աւելի փոքր քան կարող էր յառաջացնել, քան թէ մի հրապարակական ուսուցիչ, որ չունէր ուշադիր լինելու ոչինչ քանի, եթէ ոչ, մշտնջենաւոր իրաւունքին և հասարակաց կարծիքին, Յոռաջ քան թէ Հաղբիանոսը, իւր կարծասե իշխանութեանց յետոյ, մտած էր, Սրբերի շարքը դասեց բնննօ անուճով կայսկոպոսը Մէլյանիայի. այս ապաժամ գործը սուր կերպով ծագարանեց Լուծերը, դուրս տալով մի ստանձին գրուած «Ընդդէմ այն կուսքին և ստանալին, որ պիտոյ է փոռաւորլի Մէլյանիայու մը»:

Իայց Տուծեան հետեւողքը չը ծածկեցին իւրեանց թշնամական դիտաւորութիւնքը, այնպէս որ Եւեռարանականների փոխանորդը կարծումնին թէ պիտոյ է խորհուրդ կատարել այն մասին, թէ ինչպէս ընթանալու էին, եթէ կայսրը սրով յարձակվէր նոցա վերայ, կայսրընտիր Ֆրիդրիկոս իմաստունը այս խնդրի մասին պահանջեց Լուծերի, Մեյլանիանի և Բուզընհաղբների կարծիքը, և սորա իւրեանց կարծիքը տուեցին այսպէս. եթէ կամը ունէին սրով պաշտպանել մի գործ, ապա հարկաւոր էր նախ և յոռաջ վերահասու լինել այդ քանի արդարութեանը. սորանով կամենումնին միայն կայսրընտիր իշխանի հաւատը հաստատել և ամրացնել, թէ նորա գործը արդար էր. Եսթներորդ Ալեմեն պապը, Հաղբիանոսից յետոյ յաջորդելով հոռեական ամբողջ վերայ, 1523 թուականի դեկտեմբեր ամսու մը իմաց տուեց իւր ընտրութիւնը թագաւորութեան փոխանորդներին, որ միւսանգամ հաւաքված էին Վիրբերբերգումը. Եւյն փոռաւոր հանդէսը, որով պապական նուիրակները սովորութիւն ունէին ներս մտանել քաղաք, այնպէս անպատշաճ էր այժմուս, որ կամպէզջի նորրնձայ նուիրակից խնդրեցին, որ յետ դնէ այդ արտաքին ձևերը. այս պահանջողութեանը հնազանդեց և նուիրակը. սորան ձիով հանդէպ գնացին միայն Եւստրիայի արքիդուքս Ֆերդինանդոսը և միւս ներկայ գրտանված իշխանաւորքը. Եւյս նուիրակը միտ գնելով միայն պապական օգտին, յոռաջ բերեց այս երեք բանը. թէ պիտոյ է գործ գրտնել Ղորմեան Տրոյարտակը, թէ անտեղի էր մի ազատ եկեղեցական

ժողով, այլև թէ անարժան էր ուշադիր լինել գերմանական ազգի
դանդառներին որ մի քանի շարակամ մարդերի հնարած բան էին: Եւ
այս թագաւորական ժողովը այնպէս անպատու կըլաւ, ինչպէս միւս
շատերը մինչև այժմ: Հաստ համարեցին բոլոր յըլսերը դնել սպա-
ղալի վերայ և միւսանգամ կրկնել իւրեանց հին պահանջելիքը, ժո-
ղովրդի փոխանորդքը յանձն առան, ինչքան կարելի էր, գործ դնել
Վորմսեան հրովարտակը, և եթէ կը հանդիպէին խախտարար հան-
դամանք, ապա օգնու թիւն կը խնդրէին Նիւրնբերգեան կառավարու-
թենից. միայն թէ այնպիսի շատ հարկաւոր գործի համար, որպիսի
մի աղտոտ քրիստոնէական ժողով էր, պիտոյ է գալոյ թագաւորական
Խորհրդի մէջ Շպէլէր քաղաքումը քննութիւն գործել և տնօրինել
մնացած բաները, ժողովրդի փոխանորդքը պիտոյ է գերմանական ազ-
գի դանդառները հռոմէական աթոռի վերայ միւսանգամ կշռէին, գա-
լոյ թագաւորական ժողովի մէջ վճիռ ու սահման կապէին: Այս ա-
ռաջարկութեններին սաստիկ ընդդիմացաւ Պապի Նուիրակը, և կայսրը
թագաւորութեան ժողովի կողակացութեան մէջ յայտնեց իւր անհա-
ւանութիւնը այդ մասին, և Սպանիայումը նստած մտածումէր ահա
վեր ի վայր շրջել այն վճաահատութիւնքը, որ տէրութեան փոխա-
նորդքը արած էին նորա կըրօր նախաթոռ ներկայութեամբը: Բայց
թէ այն ժամանակի գերմանական թագաւորութեան կորգը, որ փոքր
մի յստաջ լաւացուցած էր, դեռևս ինչքան պակասութիւն և արատ
ունէր, այդ բանը ամենախոր կերպով երևեցաւ այն իրողութեան
մէջ, որ տէրութեան ժողովից դուրս և յետոյ կարելի էր գլուխ բե-
րել մի համարձակ դաշնաւորութիւն ընդդէմ աւետարանական ազա-
տութեանը: Երբքիցուքս Ֆերդինանդոսը, դուքսերը Ալիշէլմուս և Ղու-
ղովիկոս բաւարացի, Չալցրուրգեան, Տրինտեան և Ռեզենսուրդ-
եան կախկապոնները, այլև Բամբերգեան, Շպէլէրեան, Շտրասբուր-
գեան, Ըուգսբուրգեան, Ամստանցեան, Բազելիան, Ֆրէյզինգեան,
Փասսաւեան և Բրիքսեան կախկապոնների փոխանորդքը զիմեցին Ռե-
զենսուրգ, մի դաշն կապելու, որի հիման վերայ, 1524 թուականի
յուլիսի վեցին վճիռ հաստատեցին և յանձն առան, որ իւրեանց սահ-
մանները փակին ընդդէմ Ալտտըրնբերգեան նորաձեւութեններին, և
փտանդի միջոցումը օգնական լինին միմեանց: Արքա, ինչպէս ստած
կար սահմանադրութեան մէջ, կամենումէին Վորմսեան հրովարտակը
ամենայն ճշդութեամբ գործ դնել, եկեղեցական խորհուրդքը և արա-
րողութիւնքը անփոփոխ պահպանել, ամուսնացած քահանայքը և
հրաժարված արեղալքը պատժել եկեղեցական օրէնքի խտուրթնով,
քարոզել տալ Աւետարանը այնպէս, ինչպէս հոգեւոր Հարքը մկնել
են, և այնպիսի ուսուցիչներէ բերանով, որոնց հաւան էր եկեղեցին,

և պահանջել իւրեանց երկրացի ուսումնասեր աշակերտներից, որ երեք ամիս մէջ թողուն Վխտորներգի համալսարանը և սուն զնան. ապա թէ ոչ, զըզվելու էին իւրեանց գոյքից և ոչինչ պաշտան չէին ստանալու. այլև կամք չունէին իւրեանց սահմանների մէջ պատուարան տալ մի Լուծերականի որ դատապարտված էր նոցանից. Մի, կարգադրութիւն ասած, ջուջակի մէջ նշանակեցին այն անկարգութիւնքը որ պիտոյ է վերացվին, և այդ կարգադրութիւնը պատուիրու մեր նոյնպէս հոգևորներին, որ մարգարէութիւն և կախարգութիւն չը գործեն: Այս դաշնաւորութիւնը սկզբից այնպէս էր կարգած, որ հետո կարելի էր ընդարձակել նորան. Բամբերգեան եպիսկոպոսի փոխանորդը պատուէր ստացաւ, որ գրաւէ նոր դաշնակիցներ, և այս բանի մէջ աչք էին ածում Ե. յիշտեփի եպիսկոպոսի և Բոանդընբուրգեան սահմանապետ քաղկիդի վերայ, Պապականութեան կուսակիցքը այսպէս ջանադիր լինելով, աւետարանական հասարակութիւնքը զեռես մնումն ստանց մի հակառակ դաշնաւորութիւն կապելու, ըստ որում յոյս զնկելով իւրեանց գործի արդարութեան վերայ, տակաւին ոչինչ ապօրինաւոր գործ սկսած չէին ընդդէմ Պապին և Ապստին, Բայց որովհետև կաթոլիկների հակառակ կողմը թշնամարար ընդդիմացաւ մի հիմնաւոր եկեղեցական վերանորոգութեան, և այդպէս հրաժարվեցաւ այն մեծ, ազատ, ազգային բարեշինութենից որ պիտոյ է ստանար Վերմանիան, այնուհետև տէրութիւնը երկու կողմը ձեռքովեցաւ և մնում այդպէս, դարաւոր ժամանակներով. ըստ թէ որ կողմից այդ կորստական ձեռքը յտառչուց արած է Վերմանիայի միութեան մէջ, յոյսանի է արդէն նորանից, որ ասվեցաւ վերևումը:

Երբ որ Լուծերը Վերմանեան ժողովի մէջ կայսրի և տէրութեան առաջև աներկիւղ սրտով խոստովանած էր իւր ուսումը, այնուհետև ամենայն տեղ Վերմանիայի մէջ երևումն ամենաջերմ ժամանակցութիւնք Բեֆօրմացիայի գործին, ուր որ այս բանիս խախտան չէր պապականների կողմը սպառնալով, ահ տալով և պատժելով, Բոլոր ժողովուրդը զարթել էր քնից և վկայումք սրտով, թէ հաւատի և կրօնի ազատութիւնը մի անյախշտակելի իրաւունք է, թէ ինքը անել էր ահա իւր իմացականութեան շափ ու հասակը, և անկախ էր արտաքին և պատահական ձեերից, Եւ հասարակ հոգևորքը հետ զհետև սկսեցին տեղեկանալ մտքուր և անխառն բանին Աստուծոյ: Երձակ համարձակ ընդունեցին աւետարանական ճշմարտութիւնը, մանաւանդ թէ աւելի պատանի քահանայքը, որ կամ ըսած էին նոյն իսկ Լուծերի և Մեյլանթթեմի վարդապետութիւնքը Վխտորներգի մէջ, կամ թէ կարգացած էին նոցա գրուածքը. ըստ այսպիսի վրասահութենով խոստովանել Աւետարանը, զեռ ևս ըստ մեծի մասին վը-

տանգաւոր էր, և քնասակար զրկանք ու վիշտ բերող: Պատճառ, Պապի կուսակիցներէի առելութիւնը երկիւղ չունէր գործ գնել բոնաւորական Տնօրներ, ինչ տեղ տկարանումը նոցա հոգեւոր զինքը: Այժմուց ահա նահատակվեցան շատերը որպէս վկայք Ճշմարտութեան, բայց մարտիրոսների թափած արիւնք, ինչպէս յառաջուց, Քրիստոնէից հալածման ժամանակին Հռոմէական տէրութեան մէջ, նոյնպէս և այժմ ոյժ և սնունդ տուեց արիասրտութեանը և հետևողներ ճարեց Աեֆօրմացիային: 1523 թուականին Նիդրլանդիայի մէջ սաստիկ հալածանք վեր կացաւ, որի մէջ երկու արեղայք Օգոստինեան կարգից չը կամենալով, եղբայր Վարօնոսի պէս, ոչինչ կերպով յորդորվել և ուրանալ, դատապարտվեցան, որ սյրվին կրակով: Այս մասին ըստողք տեղեկութիւնք հաւաքելով Աութերը, միթմարական թուղթ գրեց Հոլլանդիայի, Բարանտի, Ֆլանդրիայի քրիստոնէից վերայ, որի մէջ երանի է տալիս նոցա, որ Տէրը նոցա միջից ընտրել էր իւր առաջին մարտիրոսքը: Շփարիայի աշխարհումը, 1524 թուականին կատաղումը մի խելագար դահիճ հերձուածողների վերայ, և Էլզասի մէջ սկսեցին մահու պատիժ կապել Աւետարանականների վերայ. բաց ի սորանից, աւետարանական հերձուածողներ գլխատվեցան և սյրվեցան Ալեքսան, Օֆրն, Փրագ քաղաքների մէջ. նոյն միջոցին Քինցինգիա երկրումը վախճուն քաղաքացիք սպանվեցան իւրեանց աւետարանական դաւանութեան համար: Եւ Մազդեւորդ քաղաքը շատ արամութիւն տեսաւ իւր արխարտ հետևողութեամբը Աեֆօրմացիայի գործին: Հիւսիսային սահմանումը, Գիթմարչըն քաղաքի մէջ մարտիրոսացաւ Ճշմարտութեան համար Հենրիկոս ֆան Յիթֆըն: Բայց յասկապէս կայսրի եղբայր Երքիդոքս Ֆերդինանդոսը ջրջ տուեց, որ հաստատ դիտաւորութիւն ունի Աեզենտուրքի դաշնաւորութեան համեմատ վարվիլ: Ըստ որում արձակեց մի հրաման լի ամենակատարի հալածասէր հոգով. նա յետ առաւ նոյնպէս իւր բուեր Ատարինայի արդէն կատարած հարսնախօսութիւնը Վարսոնիայի թագաւորութեան ժառանգի հետ, և նորա ուղարկած զեպանը յայտնեց համարձակապէս թէ իւր տէրը պարտական չէ համարում իւր անձը, հաստատութիւն պահել հերձուածողների հետ: Աչինչ պակաս չէր այն իւրատութիւնը որով վարվեցան Բաւարիայի մէջ ընդդէմ մարուր վարդապետութեանը. արդարեւ զարհուրելի էր այն ընթացքը որ եղաւ Թիւարլ ֆոն Թուրքինգ մարզու և երկու քահանաների հետ, որ իւրեանց, հերձուածողութեան պատճառաւքով դատապարտեալ ընկերների մինը ազատել էին բանտից, Եւ ծածկապէս մեռուցանումին հերձուածողքը, ինչպէս զոր օրինակ պատահեց Գէորդ Ալեքսիքին, որի բոլոր յանցանքը այն էր, որ Սուրբ Ընթրիքը կատարել էր Հաց և Գինի բաշ-

խելով ժողովրդին: Սորան զանաւո՛ւ էին Աշաֆֆընդուրդ, Հարցաբըն-նու՛թեան պատճառով. բայց վերադառնալու ժամանակին վարձկան սպանողք յարձակվեցան նորա վերայ և խորտակեցին նորան: Այս բանի մասին հրատարակեց Աութերը մի սասակի բողոքական գրուած: 1527 թուականին, Գեորգ Կարպենտարիտը Միւնխեն քաղաքի մէջ, և մի տարի յետոյ Պետրոս Ֆլիշտէթը և Ադօլֆ Քլարընբախը այլ-վեցան թրդէս Հերձուածողք Քեօթի մէջ:

Բայց այսպիսի արիւնշաղախ անցքեր չը կարողացան փակել Ռեֆորմացիայի ընթացքը, այլ ևս առաւել ձեռնուու գտանվեցան նորա յառաջագիմու՛թեանը: Արմնի մէջ Աութերի խօսքերը թողել էին մի այնպիսի անճնշելի սպաւորութիւն, որ օրէ օր առաւել խոստովանողք ծարեցին Ճշմարտութեան համար: Աւր՛ քաղաքումը 1523 թուականին ահա, շատ անգամ խնդրումին քարոզիչներ, մտքուր վարդապետութիւնը ուսուցանելու համար, և որովհետև քաղաքի խորհրդարանը դեռ ևս սեղիք չը տուեց այս պահանջողութեանը, ժողովուրդը օգնեց ինքը խրեան, Աւր՛ի մտակայքումը աւետարանական պաշտօն կատարելով և Սուրբ ընթերիքը ճաշակելով հաւի և զինուսեսակով. բայց միւս տարումը Աստուծոյ բանը քարոզվեցաւ նոյն իսկ քաղաքի մէջ, Ֆրանցիսկոսեան արեղանների եկեղեցու և մայր եկեղեցու մէջ: Հվիարիայումը երեւեցաւ Յովհաննէս Բրինչը որպէս առաջին Ռեֆորմատորներից մինը, և 1523 թուականին ահա, Հվերիշ-հալլ քաղաքումը վերացրեց պատարաղը և նորա հետ կից բոլոր արարողութիւնքը, թէպէտ յառաջուց հիմնապէս զաստիարակելով ժողովուրդը Ճշմարտ հաւատի մէջ: Յովհաննէս Հվերըլը բարեկարգեց ցվէյրիւքեան եկեղեցիքը, և աստուածային պաշտօնը այն սեղ մտքրեց ամենայն անպաշտական նշաններից. նա, Փֆալցգրաֆ Աօլֆրամդի պահանջելով, զրեց մի նոր եկեղեցական կարգադրութիւն: Նոյն Հվերըլը 1523 թուականին, քարոզեց շէյդլիւքումը մտքուր և անպղտոր Աւետարանը: Հորասրուրգի քաղաքական խորհրդարանը, 1524 թուակ. թոյլ տուեց ազատապէս քարոզել, թոռակով արձակեց արեղայքը, և վանքերի եկամուտքը նուիրեց ուրիշ բարի նպատակների, մանաւանդ թէ ուսումնարանների: Հորասրուրգի այսպէս զոմանի յառաջագիմութեան պատճառքը էին լուսաւոր և ժրագլուխ ուսուցիչներ Բուցերը, Կապիտան և միւսք, որ խրեանց սկսած նորաձեւութիւնքը պատճառարանումէին առանձին գրուածների մէջ: Այս տղամարդերին զասակից էին քանի մի այլք. Այկոլամպոպիտը ներգործուակը Էրեքնուրգ ամրոցից որ քաջասիրտ Չիքիւզըն իշխանաւորի ընտկարանն էր, և Աւրիկ Յվինգլին վեր կացաւ որպէս Ռեֆորմատոր Հվեցիայի մէջ:

Ինչ այս Անֆորմատօրին, ինչպէս նորա յառաջագնացին Սարսոնիայի մէջ, թողութեան վաճառողութիւնը առիթ տուեց Հակոբակելու պապական սահմանադրութիւններին: Աւրիի Յիլնգլին, որպէս քահանայ Ելնգլիզին քաղաքի, տեսանելով որ ժողովուրդը բազմութենով գիտումէ պաշտօն մատուցանելու այն տեղի քրիստոսամօր հրաշագործ պատկերին, վաղուց ահա քարոզել էր ընդդէմ ուխտադնացութեան և աստուածապէս պաշտելուն Սուրբ կոյսը Մարիամ: Նորա աւետարանական քարոզութեան համար պատճառ տուեց հրատարակել նորան զէպ ի Յիւրիի: Ինչ տեղ նա 1519 թուականին, նոր տարու առաւօտին, մայր եկեղեցու մէջ, հասարակաց խօսուածքով բարձրացրեց իւր ձայնը, պահանջելով եկեղեցու և քրիստոնէական բարբոսվարքի վերանորոգութիւն: Բունհարդին Սամփսոնը, մայլանդացի արեղայ Գրանդիսկոսեան կարգից, 1518 թուականին, նոյն գործըն էր կատարում այն տեղ, ինչ գործ կատարումը Տեղը արեղան Գերմանիայի մէջ, Յիլնգլին քարոզեց ընդդէմ նորան, և Կոնստանց քաղաքի եպիսկոպոսը ամենին համաձայն էր Յիլնգլիուն այդ բանի մէջ, ըստ որում նոյն եպիսկոպոսն էր որ պատճառ տուեց Յիւրիի քաղաքին կապել իւր գոները ընդդէմ թողութիւն վաճառող արեղային: Երբ որ Շվեյցիայի Երզմեակից դաշնաւորը մի գանգատական թուղիմ գրեցին զէպ ի Հոսմ Սամփսոնի անասակութեան վերայ, Լեոն տաներորդը խոստացաւ պատասխանատու կացուցանել նորան: Յիլնգլին թէպէտ ծանօթ էր Լութերի գրուածներին, բայց չունելով սարսոնացի Անֆորմատօրի կրմաւոր խորամտութիւնը և ականատար հոգին, այլ մանաւանդ թէ հետեւելով իւր առողջ մարդկեղէն բանականութեանը, և ուսանելով սուրբ գիրքը, իւր յատուկ սրտի վկայութեամբ վերահասու էր եղած կրօնի ճշմարտութեանը, և այսպէս, աւելի շուտով քան թէ Լութերը հրատարակեցաւ կաթօղիկութեան հիմերից, և պահանջեց հարկաւորապէս, որ բոլոր քրիստոնէութիւնը միասնեամբ տարգի ու հաստատի սուրբ գրքի հիման վերայ: Նորա պատճառ տալով, Յիւրիի մեծ խորհուրդը 1520 թուականին, հրաման արձակեց որ ազատ տէրութեան բոլոր քարոզիչքը առանորդ առնուն իւրեանց համար սուրբ Աւետարանիչներին և Աստիւաների գրուածքը միայն, և յետ թողուն բոլոր մարդկեղէն սահմանադրութիւնքը: Սորանից յետոյ Յիլնգլին իւր քանի մի պաշտօնակիցներին հետ միասին խնդրեց Կոնստանցի եպիսկոպոսից, որ նա փեսասկար չը լինէր աւետարանի քարոզութեանը, և թողլ տար քահանաներին ամուսնանալ: Բայց երբ որ եպիսկոպոսը նախասական պատասխան տուեց, քաղաքի խորհրդարանը 1523 թուակ. յունիւ. 20ին սահմանեց մի հանդիսաւոր խօսակցութիւն կրօնի վերայ. այս

անդ Յփնդլին հաստատեց իւր 63 ստաջարկութիւնքը, և սոցանով հերքեց կաթօլիկեան եկեղեցու բոլոր խարերայական ցոյցքը: Այսպիսի հակաճառութիւններ, որ միայն սուրբ զբքի վերայ հաստատվելով, կարող էին հասարակաց հաւանութիւնը ձգել զեպ ի Ռեֆորմացիայի կողմը, ճանապարհ բացելին սորա համար զեպ ի Շփեցիայի շատ քաղաքներ: Աւոն Եւզայ անունով ընկերը Յփնդլիու, գործակից ունելով և միւս մարդիկ, նոր կտակարանի թարգմանութիւնը Առթևերի փոխեց զեպ ի Շփեցիայի գերմանական բարբառը, 1525 թուականին, բայց հին կտակարանը 1529 թուակ. թարգմանեց նոյն իսկ երրայական ընտրիկը, Ապպնեցի Աուսրը-Ռոզըն սահմանի հասարակութիւնը մշիւ կապեց 1524 թուակ. որ ամենայն քարոզել որ կուսուցանէր այնպիսի բան, որ չէր կարելի ապացուցանել Սուրբ զբքի վկայութեամբ, պիտոյ է զբկվէր հասցից, բանջարից և պաշտպանութեանց, Բազըլ քաղաքումը ուսեալ և խաղաղաւոր Ոյկոյանպաղիսը ընդունեց Ռեֆորմացիան: Բնուն քաղաքը սկզբումը աշխատեց հետի պահել իւր անձը երկու կողմերի վէճից, և սորա համար քաղաքի մեծ խորհուրդը մերժելով Յփնդլիու Ռեֆորմացիան, իւր կամեցածի պէս վերացրեց ատաւել խոշոր անկարգութիւնքը և հրամայեց խաղաղութիւն: Բայց այդպիսի կիսասիրտ զրուիւնան մեջ անկարելի էր մնալ սևեռապէս, այսպիսի շարժուն ժամանակում. քաջասիրտ Բերթօլդ Հալլերը, որ հասարակ ժողովրդի քահանայ էր մայր եկեղեցումը, պահանջեց մի մշական գործ, և երբ որ քաղաքի խորհուրդը ի զուր աշխատել էր, անորոշ և անհաստատ լծոյլտուութեաներով մշարել գործը, և յետոյ հանդիսաւոր հակաճառութեան մեջ երկու կողմերի խոտոզքը իւրեանց ղյժը չափել էին միմեանց հետ (1528 թուակ.), այնուհետև յաղթեց Ռեֆորմացիան և հետ զհետև տարածվեցաւ քաղաքի մեջ և նորա շրջակայքումը: Այսպիսի օրինակով յառաջուց ահա, խոտոսումնել էին Ռեֆորմացիան Շաֆհաուզըն, Գլաբուա և Զօլտուսն քաղաքները: Բայց եթէ քննենք այս Շփեցիական Ռեֆորմացիայի յատկացուցիչ նշանը, սա դուրսից արդէն զանազանօրէն Սարսնուկանեց, այն բանով, որ աւելի ցամաք էր և աւելի համարձակ յետ էր դառնում զեպ ի ստաբիլական եկեղեցու պարզութիւնը: Անդանները կործանեցին, և այրելին ձեռագործ պատկերները որպէս կապաշտութեան նշաններ: Եւ Պապը որ կարող չէր վիրաւորել Շփեցիացոց սիրտը, այլև, աշխարհի կառավարութիւնը հասարակապետական լինելով, չունէր իշխանաւորների գաւազան ընդիմադրելու բարձրանայն աղաղակող ժողովրդի կալելին: Պապը այսպիսի բաներով կապված, աշխատում էր, ինչքան կարելի է, պահպանել խաղաղութեան երևոյթը. այս պատճառով շատ համարեց նա

ծածկապէս ներդարնել, բորբոքելով զեռ ևս հաւատարիմ թնայած կանտանները (սահմանները) ընդդէմ Անֆորմացիային: Աւելի բարձր իմացական լուսաւորութիւնը քաղաքների մէջ և սարերի ուղիքին, ճանապարհ տուեց Անֆորմացիայի ներս մտանելուն, բայց շինական ժողովուրդը լեռնային սահմանների մէջ հաւատարիմ թնայով հին սովորութիւններին, և առաջնորդ ունելով պապական արեղանք և քահանայք, չէ թողեց Անֆորմացիային ներս մտանել այն տեղ: Լուցերն քաղաքի սահմանադրութիւնը 1524 թուականին, խոստովանեց հրապարակաւ, թէ պաշտպանելու է իւր հին հայրենական հաւատը, բայց այդու ամենայնիւ չէ կարողանալով բոլորովին անմասն լինել Անֆորմացիայից, օգուտ քաղեց նորանից, վերացնելով թողութիւն վաճառելը, ուղղելով կլերիկոսների բարք ու վարքը, սահմանափակելով նոյն եկամուտքը և ընչարձակելով աշխարհական իրաւունքը եկեղեցական գործերի մէջ, Էքք պապականը մեծախօսելով և մի փառաւոր յաղթութեան յոյս տալով, բացեց մի հակաճառութիւն Բաղըն քաղաքումը, 1526 թուակ., ինչ տեղ Այկոյանպաղատսը, ըստ որում Եփնդլին կանխանելով պարանագործութիւնից, չեկաւ, վեճաբանեց Էքքի հետ Լաչի և Գինու փոխարկութեան, Պատարագի, Սուրբերի երկրպագութեան և քաւարանի վերայ, Բանի վերջը այնպէս եղաւ, ինչպէս միւս տեղերում, այսինքն, ամեն մի կողմը իւրեան ընծայեց յաղթութեան պսակը, Բայց զօրաւոր կերպով վեր կուցան յետայ երեք անտառային քաղաքները, Յուզի և Լուցերնի հետ միասին, որ պաշտպանեն հին հաւատը, և երդումն կերան միմեանց հետ, որ սպանեն ամենայն մարդ որ արհամարհող էր Պատարագի և Սուրբերի, երբ որ մի քանի բռնաւորական գործերով հաստատվեցաւ նոցա ի շնամական դիաւաւորութիւնը, այնուհետև վերանորոգեալ կանտանքը փոխարէն հասուցին նոցա, պատու իրելով, ընդդէմ Եփնդլիու հաւանութեանը, որ ոչ ով ապրուստ չէ աման լեռնային կանտանների մէջ, և ոչինչ մարդ առուստըք չունենայ նոցա հետ: Սքա կարտութեան տապնայի մէջ լինելով, սուր զիւր կալան և յարձակվեցան Յիւրիխեան սահմանի վերայ, պատպրլ քաղաքի մօտ 1531 թուականին, հոկտ. II ին մի սաստիկ կռիւ պատահեց և սորա հետ, առաջին արիւնհեղութիւնը կրօնի անունով, Եփնդլին մարդարեւանալով իւր մահը, բայց լի հաւատով զէպ ի Լստուած և զէպ ի իւր գործի արդարութիւնը, հին սովորութեան պէս, ինչպէս քահանայ դուրս ելաւ և գնումը Յիւրիխեան գրոշակի մտից, Լեռնական բնակիչների խելացնոր, սովից աւելի ևս բորբոքված կատաղութիւնը յաղթող դասնվեցաւ, Յիւրիխեցիք յաղթվեցան և Եփնդլին սպանվեցաւ կրօնի մէջ:

Այս համառօտ, թէպէտև, նայելով անցքերի ժամանակին, փոքր մի յառաջադնայ տեսութիւնը արած այս տեղ Շիլլերայի Ռեֆորմացիայի մասին, յետ դառնանք դեպ ի Գերմանիա, Թագաւորութեան քաղաքների մէջ Նիւրնբերգը առաջինը գտանվեցաւ, որ Քրանկոնիայի սահմանումը աներկիւղ և վճռական կերպով խոստովանեց Աւետարանական ուսումը, Այլքան բազմաթիւ մեծամեծների թէ հոգեւորների և թէ աշխարհականների ներկայ լինելը այս տեղ երկու վերջին թագաւորական ժողովների ժամանակին, ոչ թէ չէր նուազեցուցել քաղաքացոյ արիասրտութիւնը, այլ ևս առաւել կենդանացնելով ամբարցուցել էր նորան, 3000 մարդուց աւելի Շաշակեցին սուրբ ընթերցող հացով և զինով, Երբեկուքս Վերդինանդուր բողոքելով այս մասին, քաղաքի խորհուրդը պատասխան տուեց, թէ մարդու սիրտը, կամքը և յոժարութիւնը չէր կարող այն լինել, որ պաշտե մի անքրիստոնէայ գաղափար, այլ հաւատարիմ լինել և մնալ Աւետարանի և Աստուծոյ մարութ բանի մէջ, Սուրբ Զերայդ և սուրբ Լօրենց եկեղեցիների աւագերեցբը ոչ թէ միայն վերացուցին Պատարագը, այլև այս գործը հաստատեցին ստանձին գրուածներով, Նիւրնբերգի օրինակով յորդորվեցաւ և Նեոթիլինգըն ընդունել Ռեֆորմացիան. բոլոր քաղաքը միարան հրաժարվեցաւ պապականութենից և խոստովանեց մարութ վարդապետութիւնը: Սա, սկսեալ Ջորման թագաւորական ժողովի ժամանակից, օրէ օր աւելի հետևողք տաացաւ Քրանկօուրտի մէջ, Մայն գետի վերայ. բայց այս տեղ հասաւ գործը և սաստիկ կոխների որ Աւետարանի հաւատարիմ վկայ Կրսիը ուներ միս կիրիկոսների հետ. քաղաքի խորհուրդը և Հարմմութֆոն Քրոնբերգը կուսակից էին Կրսիին, այլև անուականները յայտնեցին, թէ նորա քահանաներին և արեղաներին ոչինչ տասանորդ տալու չէին, եթէ սորա չը քարոզեն Աստուծոյ մարութ բանը, և 1523 թուականին, քաղաքական խորհուրդը միակամ վճիռ հաստատեց, որ քաղաքի քահանայը այնուհետև քարոզեն միայն Աստուծոյ բանը, և մարութ ու յստակ կերպով: Եւ արեւելեան Գերմանիայի մէջ, Նիդրբրաուզից և Շիլլերի աշխարհներումը միտ ժամանակով ծագեցաւ Ռեֆորմացիայի լոյսը. Նիդրբրաուզիցի մէջ անձաններ աշխատումը Յովհաննէս Բրիգմանը, Շիլլերայի մէջ, Երկու եպիսկոպոսք Յովհաննէս Տուրցօ և Յակոբ ֆոն Զալցե, յաջորդելով միմեանց, Բրաունշվեկիան ընդունեց նոր վարդապետութիւնը, գործակցութեամբ Բուզընհաշենի, թէպէտ ընդդէմ էր դորան աշխարհի իշխանաւորը. Նմանապէս Համբուրգ, Ռոստոք և շատ Պոմերան քաղաքներ, Հոնտինումը քարոզեց Պաւլոս Ռոզիոսը և շատ հաւանութիւն գտաւ ժողովուրդի մէջ, Բայց ծանրակշիւ գործեր պատրաստումին գերմանա-

կան Հոգևոր ընկերութեան սահմանումը, այսինքն, յետոյ ժամանակի Պրուսիայի դքսութեան մէջ, Այս ընկերութեան գլխաւորը Վարկգրաֆ Ալբրեխտ Բաւնդընբուրգեան, ներկայ լինելով թագաւորական ժողովին Նիւրնբերգումը, շատ հաւանած էր այս սեղ Օգիւնդրի քարոզներին, և գրաւոր հաղորդակցութիւն ուներ նոյն իսկ Լուծերի հետ: Երա ջատագովութեամբը յիշեալ Յովհաննէս Բրիգմանը հրաւեր ստացաւ դէպ ի Պրուսիա, և այնքան արդիւնարեր գրտանկեցաւ այն սեղ, մինչև Զամյանդեան եպիսկոպոսը Գէորգ ֆոն Պօլենց անունով, յորդորկեցաւ հրաման արձակել 1524 թուականի յունվարի 28ին, որ Վերտութեան խորհուրդը կատարի Գերմանական լեզուով և Լուծերի թագաւանած աստուածաշունչ զիրքը գործ դրի: Այս Գէորգ ֆոն Պօլենցը առաջինն էր հասնական կաթոլիկ եպիսկոպոսներից որ խոստովանեց մաքուր վարդապետութիւնը: Բայց որովհետև Գերմանական հոգևոր ընկերութիւնը Պրուսիայի մէջ վաղուց ահա կորուսել էր իւր խորհուրդը, այս պատճառով այդ սահմանը կարող էր շուտով փոխարկիլ մի աշխարհական իշխանութիւն: Քեմնիգսբերգ քաղաքումը հաւաքված մեծամեծների ժողովի մէջ Զամյանդեան եպիսկոպոսը յանձնեց Վարկգրաֆ Ալբրեխտին աշխարհական իշխանութիւն և եպիսկոպոսական իրաւունք, և այսպէս մի ամբողջ աշխարհ շինկեցաւ հետեոյ աւետարանական հաւատին:

Բայց և թագաւորութեան սահմանից դուրս, առ փոքր փոքր յառաջ խաղաց Բեֆօրմացիան. զոր օրինակ դէպ ի Գաննեմարքիա, ուր սկզբից ահա երևեցաւ ջերմ յոծարութիւն այդ մասին, ուր և թագուհին, որ Աւստրիայի արքեպուրս Գերգինմանդոսի քոյրն էր, յայտնապէս յաջողութիւն տուեց դորան: Հարաւային սահմաններումը Սափոյիայի լեոնաձորերի մէջ գտաւ Բեֆօրմացիան ընդունակ սիրտք. եթէ արիւնշաղախ հալածանքների երկիւղը չը լինէր, անպատճառ պիտոյ է յառաջանային ամենայն սեղ բաղմամբ աւետարանական եկեղեցիք: Մանաւանդ թէ Կետուր, վանական պատերի մէջ փակած ու ճնշած հոգիք փափազումին Աւետարանի լուսին և նորա բերանով քարոզած ազատութեանը: 1524 թուակ. մի քանի վանական կանայք հարցումն արեցին Լուծերից, արդեօք համարձակութիւն կար դուրս գալ վանից: Լուծերը պատասխանեց հաւանողական կերպով: Բայց յառաջուց արդէն 1523 թուականին, շարքարների շարաթումը 9 աղնուատոճմ կուսանք հրածարված էին Նիմպչըն անունով վանքից Գրինմայի մտ, գործակցութենով Տորգաւեան Խորհրդականի Լեոնհարդ Քեօպպէ անունով. շուտով սորանից յետոյ տասն և վեց կուսանք թողել էին Ախրըրշտեւեան վանքը մանսֆելդեան սահմանումը: Օգոստինեան վանքումը Ախտընբերգի մէջ կային զեռ ևս Լուծերը

և վանահայրը միայն, բայց և սա չը կամելով աւելի երկար թեալ
այն տեղ, Լուծերը 1524 թուականին վանքը յանձնեց աշխարհա-
կան իշխանութեանը և խնդրեց միայն, որ արժանաւոր թոշակ տան
վանահայրը:

Երբ որ մարտը և անպատր հաւատը ընդունված էր ժողովոր-
դի սրտի մէջ, այնուհետև պիտոյ է խտրանվելին շատ և շատ անա-
պաշտական արարողութիւնք, մեռեալ ձեեր և սուրբութիւններ, և
սոցա փոխանակ պիտոյ է լինելին աւելի լաւ, աւելի բանական կար-
գադրութիւնք, ինչպէս որ պատշաճ էր ազատութիւն ստացած խղճ-
մտանքին: Բայց որովհետև չը կար զեռ ևս ոչինչ եկեղեցական կա-
ռավարութիւն աւետարանական մտքով, և որովհետև աշխատութիւն
բոլոր սահմանների մէջ նորոգել միատեսակ եկեղեցական պաշտօն,
վան այս պատճառի շատ բնական բան էր, որ ամենայն կողմից զի-
մումէին զեպ ի Լուծերը և խնդրութիւն նորանից, որ նա, ինչպէս
հին բաների պակասաւորութիւնը ջոյց էր տուել, նոյնպէս առաջնոր-
դական խրատներ տայ աւելի լաւ կարգադրութեանների համար: Երեք-
պատիկ էր այն խորհուրդը, ինչ որ Լուծերը բարի էր տեսնում
միշտ. նախ և յառաջ, որ ճանաչելով ապականութիւնը և ճշմար-
տութիւնը, մի հաստատուն հիւր ստանային լաւի համար. երկրորդ,
թէ չէ պիտոյ շտապել և չափից ու սահմանից զուրս գալ, վերջա-
պէս թէ հարկաւոր էր ամենայն բանի մէջ պատուել խղճի քրիստո-
նէական ազատութիւնը: Ըմենակչիս վկայութիւնը Սուրբ գրքի, որի
վերայ պիտոյ էր հիմնաւորել հաւաստի բոլոր պատկանելիքը, արգա-
րև բաւական չէր, պաշտօնակատարութիւնը լիովին կարգի տակ ձգե-
լու համար: Բայց Լուծերը ընդհանուր գրուածներ հրատարակելով,
հոգ տարաւ նոյնպէս աւելի պատշաճ աստուածապաշտական կարգերի
համար, զոր օրինակ իւր փոքրիկ, 1523 թուականին տպած գրքովը
Մկրտութեան վերայ, ըստ որում՝ Մկրտութիւնը կատարութեան զեռ
ևս լատինական լեզուով և շատ դատարկ արարողութեաններով. բայց
Լուծերը, որպէս այս, նոյնպէս և միւս բաների մէջ պիտոյ է խնայ-
էր տկարների խիղճը, և այս պատճառով պահպանէր մի քանի բան,
որ յետոյ ինքն ըստ ինքեան անհետացաւ: Եւ Սուրբ ընթերցողը կա-
տարելու մասին հրատարակեց նա մի գրուած 1522 թուականին, որի
մէջ հաստատումն նա, թէ այդ խորհուրդը պիտոյ է համարվի շա-
ղորդութիւն քրիստոսի կենդանարար մարմնի և արեանը, բայց ոչ Պա-
ռուսի, իսկ, այլև պիտոյ է ճաշակել նորան շաքի և Գինու տեսա-
կով, թէպէտ զեռ ևս թոյլ էր տուած բարձրացուցանել շաղորդու-
թեան բաժակը: Ըհա այսպէս կարգադրվեցաւ եկեղեցական պաշտօնը
Ախտաբնիւրդի մէջ, և սորանից օրինակ վեր կալան սպա և ուրիշ

աշխարհներ, Եւ եկեղեցական ժամերգութեան մասին շատ աշխատաւոր գտանվեցաւ Լուծերը, ոչ թէ միայն թարգմանելով Պաւլի Սաղմուքը, այլ և շարադրելով և երաժշտապէս յօրինելով իւր հոգեպայծառ երգերը, Բէ Ինչպէս պիտոյ է լինէր բոլոր աստուածպաշտութիւնը Աւետարանի հիման վերայ, նա յանդիման կացուց իւր գրուածի մէջ մակագրումս «կարգ աստուածային պաշտօնի, հասարակութեան մէջ», Բայց զանպատուօր էր նա, թէ ամենայն մարդ այս բանի մէջ իւր յօժարութեան պէս էր վարվում, թէպէտ Լուծերի կարծիքը երբէք այն չէր, որ բոլոր Պերմանիան ընդունէ ճշգրպէս Ախտորներգեան կարգը, Բայց աւելի շատ զժուար ինդիքը էր. փոքր ի շատէ պատկանաւոր կերպով սահմանել յարարելութիւնը Աւետարանական եկեղեցու և աշխարհական իշխանութեան մէջ, Ինչ սեղ եկեղեցական կառավարութիւնը զուրս գնաց կախկոպոսնների ձեռքից, ի հարկէ պիտոյ էր աշխարհի իշխանաւորին հասանէր. այս պատճառով աւետարանական եկեղեցին ամենայն աշխարհում երևում անզական եկեղեցի, և իւր արտաքին կերպարանքովը յարմարվում ամենայն մասնաւոր երկրի օրէնքներին և սովորութեաններին. բայց այդու ամենայնիւ իւրաքանչիւր անզական եկեղեցի ունի համարձակութիւն պահպանելու մի որոշեալ և հաստատ եկեղեցական կառավարութիւն, որ զանազանվում քաղաքական կարգերից, և այդպէս ունի իւր համար մի անսակ ինքնիշխան կառավարութիւն, Այնպիսի միջոցում, երբ բաւական շատ գործ կար, մարտի քրիստոնէական հաստոր սըրտերի մէջ հաստատելու համար, ի հարկէ անհնարին էր մտածել մի որոշեալ եկեղեցական օրինադրութեան վերայ, և նայելով այն ժամանակի Հոգևորներից շատերի ցած կրթութեանը, երբէք կարելի չէր խօսք բանալ մի Սինոդոսեան կառավարութեան մասին, ինչպէս այժմուս կայ, Արդարև այն կախ գրութեանից, որի մէջ ընկաւ եկեղեցին, տէրութեան ստաջև, յառաջացան քանի մի վեհաններ, որ ըզգալիս էին յետոյ, Բայց Լուծերը, որի խօսքը ծանր կշիռ ունէր այն ինդիքներին մէջ, որ վերաբերվում էին եկեղեցու գրութեանը թագաւորութեան մէջ, Լուծերը իշխանաւորներին աներկիւզ ասումը ճշմարտութիւնը, երբ որ նոքա համարձակվում էին անպատշաճապէս ներս խառնվիլ եկեղեցական իրաւունքների մէջ. թող այս, այն ժամանակի իշխանաւորքը առհասարակ ունէին զիս ևս այնքան պատկառանք և համատուութիւն, որ վտահ չէին ամենայն բան իւրեանց հաճոյքին և օգտին ստորադրել, այլ յօժարութեամբ ակամջ էին զնում ուսեալ և բանագէտ հոգևորների խորհրդին. Բեպէտև եկեղեցական կալուածներից շատերը տէրութեան սեփականութիւն զառնալով, ազահ պաշտանկալների ձեռքում մնացին, և, խօսելով Լուծերի բերանով,

յափշտակող ճանկերի մէջ ընկան, այնու ամենայնիւ պիտոյ է հա-
կառակել կաթոլիկների շատ անգամ կրկնած խօսքին, որպէս թէ
ստաշին աւետարանական իշխանաւորքը այն պատճառով միայն այդ-
պիսի ջերմութեամբ պաշտպանեցին նոր վարդապետութիւնը, որ կա-
րողանային տիրապետել եկեղեցու ճոխ կալուածին: Աութիւնի կամքը
այն էր, որ վերացրած վանքերի և մենաստանների կալուածքը գործ
ածվին եկեղեցիների և ուսումնարանների համար, և այս խորհրդով
շարագրեց այն երկու պատուական դրուածքը, « թէ ինչպէս էր հա-
սարակութեան գանձարանի կարգը, և թէ ինչպէս պիտոյ էր կառա-
վարել հօգևոր կալուածները»: այլև յորդորական բան Գերմանիայի
բոլոր քաղաքների խորհրդականների վերայ, որ նորա քրիստոնեայ
ուսումնարաններ հիմնարկէին և պահպանէին: Բայց արդարև պատճառ
կայ ցաւելու որ այն ժամանակը միտք չեն դրած այն բանին, թէ պի-
տոյ էր ժողովրդի իրաւունքը և ազատութիւնը իւր աստուածապաշտու-
թեան և դասնութեան վերայ սպառնալով ընդդէմ տերութեան ներս
խառնվելուն, ըստ որում հասկացած ու իմացած էին, և ինքը Աու-
թիւրը շատ անգամ ասած էր, որ բոլոր եկեղեցական իրաւունքների
աղբիւրը, այն և քաղաքական իրաւունքների աղբիւրը ևս հասարա-
կութիւնն է: Այսպէս սահմանափակումն անհրաժեշտ էր ներքին կենդանութիւնը
ստորագրվեցաւ արտաքին ձևի իշխանութեան տակ, և գործնով իշ-
նաւորքը առիթ ու կարողութիւն ստացան իւրեանց սեփական, դաս-
նոգապէս սահմանեալ քրիստոնէութիւնը զննել ժողովրդի վրէժն, թէ-
պէտ այն եկեղեցական կառավարութեան մէջ որ արդարացի վայել էր
Թագաւորութեան գլխաւորին, որ և յետոյ ասվեցաւ « Ռեֆորմա-
ցիայի իրաւունք», պարունակվում ևս խորհուրդը միայն. թէ քա-
ղաքական իշխանութիւնը ունի իրաւունք տեղեկանալ ամենայն աստ-
ուածապաշտութեան և դասնութեան, արտաքսել և խափանել այն
բանը միայն, որ մեաստկար էր տերութեան նպատակին, այսինքն ընդ-
դէմ էր բարոյականութեան. բայց չունէր իրաւունք հրամայողապէս
սահմանել հասարակութեան մէջ այս կամ այն աստուածապաշտու-
թեան կարգը, և ոչ ևս դատուոր նստել նորա ուղղահաստութեան
վերայ»: Այսպէս, այն գործը, որ պիտոյ է յատկապէս թողած լի-
նէր նշյն իսկ եկեղեցու, նորա Սինհոդոսի իշխանութեանը, խառ-
նելով և շփոթելով քաղաքական գործերի հետ, տեղական եկեղե-
ցիքը դարձան քաղաքական եկեղեցիք, և սորա անխախտելի հետև-
անքը այն էր, որ եկեղեցական նորոգութիւնը և նորա ամենողու-
թիւնը չուտով կապվեցաւ, և ներս մտաւ մի թմրութիւն, որ մտ-
եալ ստոր թագաւոր շինվելով հօգու վերայ, խափանեց ամենայն
յառաջադիմութիւն, բոլորովին հեռացրեց ժողովրդի գործակցութիւնը

և երկար միջոց անգործ կաշուց այն և ամենայն աղղեցութիւն գիտութեան կողմից:

Սարգսնիայի կայսրընտիր Գրիգորիկոս իմաստունը 1525 թուակ. մայիսի 5ին վախճանած լինելով, նորա կղբայր և յաջորդ Յովհաննէս Հաստատամիտը, այլև ամուսի ժառանգ Յովհաննէս Գրիգորիկոսը ետանդուն սիրով և վճռական կերպով պաշտպան դուրս եկան Ռեֆորմացիային, այնպէս որ նա Սարգսնիայի մէջ օրէ օր աւելի տարածվեցաւ և աւելի խոր արմատ արձակեց: Գրանկոնիայի սահմաններումը այնպէս քաջ ներգործել էր Նիւրնբերգի օրինակը, որ Մարկղաթի Բաղիմիրը հրաման ստանալով մասնակից լինել Ռեգենսուրբական գաշնաւորութեանը, հրաժարվեցաւ դորանից: Բայց սառնասրբատութեան պատճառով թողեց գործը առհասարակ այնպէս, ինչպէս եղած էր հնուց, թէպէտ շատ յորդորեցին նորան, որ ազատ ճանապարհ սայ Բւետարանին և վերայնէ անկարգութիւնքը: Յետոյ, երբ որ Մարկղաթի Գեորգը ակնոտ նստեց, գործերը աւելի յաջող զարնուածք ստացան: Բայց ամենից առաւել ջերմ կուսակիցը, որ գտաւ իւր համար Ռեֆորմացիան, էր սահմանապետ Փիլիպպոսը Լեսսենիայի, մի քաջասիրտ իշխան և առաջնորդ, խորամանկ և արդարամիտ միանգամայն, նոր բան սիրող, բայց Ռեֆորմացիային հաւատարիմ մինչև ի մահ, երկխաղած քրիստոնեայ, և այդու ամենայնիւ աստուածարաններից անկախ, կամ թէ անսովոր հոգատարութեանով նոցա սիրտը գրաւող զէպ ի իւր հաճոյքը, ապաւինող զէպ ի աստուածային օգնութիւնը, բայց սեղեակ նշյնպէս աշխարհական ճանապարհներին, որոնցով աշխարհիս վերայ յառաջանում մի հոգեղէն կերպարանաորիտութիւն, նմանապէս մի կարող տղամարդ իւր զօրութեան տարիներումը: Բայց մի աւարինի պատերազմողի կարտա էր և Ռեֆորմացիայի գործը մի այնպիսի ժամանակում, երբ նորա կուսակիցներին աւելի մեծ մասը վախկոտ ու անտիրտ էին: Նա, որի բոլոր գործականութիւնը այսուհետև շատ մաս կապակից է կեկեղեցական բարեկարգութեան յառաջողութեան հետ, հասունապէս կռուելով բանը, ամուր և քաջ ձեռքով սկսեց ներս մուծանել Ռեֆորմացիան իւր աշխարհների մէջ. 1526 թուակ. հոկտ. 31ին հրաւիրեց Լեսսենիայի բոլոր կեկեղեցական ուխտը և աշխարհականներին փոխանորդքը, որ զան Լամբուրգ, հրապարակական կրօնախօսութեամբ վճռեն այն հաւատը որ այնուհետև պիտոյ է լինէր տիրապետողը հայրենի աշխարհի մէջ: Բւետարանական ուսմանը պաշտպան դուրս եկաւ այս սեղ Գրանց Լամբուրտսը Եվինիոն քաղաքից, լինելով յառաջուց Քրանչիսկեան արեղայ, բայց այժմ ետանդուն քարոզիչ մարութի վարդապետութեան հիմքի վերայ: Մի քանի մարդիկ համարձակվելով հակառակել նորան և

պաշտպանել պապականութիւնը, մեծ պարծանք չը ստացան: Այսպէս, երբ որ հասարակաց կարծիքը որքան և իցէ ընդունել էր Ռեֆորմացիան, սահմանապետ Փիլիպպոսը հրամայեց կուսանքներին և արևդաներին խողով խրեանց վանքերը, մարքեց կեկզեղիքը ամենայն կուսապաշտական պատկերազորմանքից և հրախրեց արժանաւոր աւետարանավիտ քարոզիչներ, առանց խախտն գտանելու եպիսկոպոսների կողմից, որ պատվումէին նորա եռանդուն գործակատարութիւնը և անարատ խղճմամբը: Փիլիպպոսի անշահախնդրութիւնը այնքան մեծ եղաւ, մինչև վանական կալուածների գործադրութեան մասին, հարկաւոր համարեց հարցունիցիր ասնել նոցանից որոնց նախնիքը ընծայել էին այն կալուածքը:

Ինչթիւրի բերանով շատ անգամ՝ յայտնած կասկածանքը, թէ մի գուցէ շուտով պատահէր, որ իւր քարոզած աւետարանական ազատութիւնը զեւթ ի շարք գործ զնեին և մոռանային, որ այդ ազատութիւնը ծառայ էր նշնպէս սիրոյ և բնկիրի համար, այդ կասկածանքը երևումէր թէ շուտով պիտոյ է հաստատիլ գործով: Եջնուականների միաբանութիւնը ընդդէմ իշխանաւորներին և եպիսկոպոսներին ասնձահարկած լինելով, ահա զուրս պրծաւ անգուլթ կերպով բեռնաւորված շինականների ահաձութիւնը որ վաղուց արդէն շարժված էր: Այս տասնպէս մարդիկը թիւր հասկանալով քրիստոնէական ազատութեան խորհուրդը, այլև քաջալիքով այն զորաւոր ներգործութեանց, որ Ռեֆորմացիան յատարուցել էր հասարակ ժողովոյի մէջ, հրապարակապէս վեր կացան ընդդէմ աշխարհական և հոգեւոր իշխանութեանը, պահանջելով քրիստոնէական և մարդկային իրաւունք: 1524 թուականին բարձրացաւ այս մրբիկը, երբ որ արեղայ Բէլխենաւանը կողանքի մէջ գրեց մի աւետարանական քարոզիչ, և շուտով տարածվեցաւ բոլոր Գրանկնիայի մէջ, և Բէլյն զեւթ մտոյց քերելով անցաւ զեւթ ի Թիւրինգիա: Եւ առանց Ռեֆորմացիային պիտոյ է բարձրացած լինէր այդ մրբիկը, և գուցէ թէ աւելի սաստկութեամբ: Բայց նեղացած շինականքը կարծումէին թէ գործնով աւելի ևս առիթ ունէին այն բանի մասին: Կոտվարաբքը իրեանց 12 կանոնների *) արդարութեան համար վկայ էին բերում

*) Շինականքի խափութիւնը չէր մի անխորհուրդ և անհիմն բան: Եղաւ պահանջութեք սահմանաւ և որչաւ էին 12 կանոնների մէջ, և արտ վերայ հիմարդկելով զենք բարձրացրելին նորա ընդդէմ խրեանց բանաւորներին: Աւետարանական եղբայրութիւնը զեւթ ևս մի նոր և անորշ գաղափար լինելով, շինականքը կարծեցին թէ խրեանց պահանջութեք հաստատ էին ույց հիման վերայ: Ինչ և է կղած ույց կանոնների հեղինակը, ոչ հետաքննութիւնքը որ արած են, շինականքի սպըս

Սուրբ գիրքը և Մարտինոս Լուծերի խօսուածքը: Պատճառ, երբ որ Մեղանքթանը պիտայ է տար իւր կարծիքը շինականների պահանջողութենների մասին, և ամենեին զատապարտեց այս խոռվութիւնը և հրամայեց շինականներին անպայման հնալանդութիւն, և համբերութիւն

տալութիւնը ամենհարեւոյց յետոյ, և ոչ տասնականների խաղաղութիւնքը կարողացնէ են մի հաւասար եղբայրացութիւն զուրս բերել: Այսչառ միայն երեւում հաւասար: Թե այն 12 կանոնքը զրոտ էին վերին Շղթարայումը, և այն սեղեց տղաչրութեանը սարածված էին Գրանկնիոյի և բուլըր Գերանիոյի մէջ: Այս թեթեաւոր զրուածի պէժ այն բանի մէջ էր մեծաւոյց, որ պարզ և ուղիւտ ունով բացայայտած էին խոռվիքը, որ կար մի շէնարութեան երեւոյթ, որ և Յուսէ մըն. այլն, որ շինականքը և բնութեան հաւասար և հնչ, թեպէտեւ պատմին իւրեանց տասնպարքը: Այս շինականքը վաղուց արդէն անհանդիտ եղած, այժմ ինչոյան իսկոյն, թե ինչ բանի համար պիտայ էր կտի. բանաւ: Դպրս մարտնչեցան այժմ, ըստ որում իւրեանց կարգը հրատարակած էին այն 12 կանոնների մէջ, որոնց բովանդակութիւնը այս է:

Յառաջարանի մէջ աշխատանն շինականքը հերքել այն կարծիքը, որպէս թե նոր քարոզված Աւետարանի հետեւանքը ոչինչ այլ բան չէր, եթէ ոչ, ապառաքութիւն և անհնալանդութիւն զեւր ի մեծաւոյցը: Պատճառ, այս Աւետարանը հրատարակեց յառաջին խաղաղութիւն և սեր, և որովհետեւ շինականների դժնանքը ոչ մի այլ խորհուրդ չունին, եթէ ոչ, Աւետարանի համեայն վարք ունենաւ, ապա Աւետարանը չէր անհնալանդութեան ուղիւր: Արեւն և շինականքը չէին խաղաղորդ. և եթէ Աստուած, որ և Եւրոպիէն ուղիւրը փրկած էր Գարուանի մեղքից, կը համեար լսել իւրեանց ինչիքը, ապա ով կարող էր նորս զատաստանը վատարանել: Ապա հետեւանն նոյն իսկ անանքը:

1. Ամենայն հասարակութիւն պիտայ է ունենայ իրուանք, հետեւեւով բացութեան կարծիքին շնորհել իւր անտարածական քահանան և նորան հանել իւր պաշտմանց, եթէ անարժան էին նորս վարքը:

2. Ամենայն հասարակութիւն պարտական է առաւ, որքանոր տասանորդը ցարենի: Թեպէտ հրատարակած և հին կտակարանի մէջ, բայց ուղիւրի պայմաններով:

iii. Եթէ քահանան այդ տասանորդը տասանուրեք միլիոն այժմ թըքը, այսուհետեւ պիտայ է հասարակութիւնը հաւաքն զարան, և զարանից ապա քահանային պիտան, թեքան որ բուսական էր նորս ապրուտար համար, և անպարզը կէս մի բաշխել առ քահաներին, և կէս մի զարն զնել պատեբազմի պիտայքների համար:

բ. Բայց եթէ մի աշխարհական մարդ հաւաքում տասանորդը, և որքանոր վիշտութեամբ կարող է ապացուցանել թէ հասարակութիւնը այդ տասանորդը վաճառել էր նորան ցրծալով, ըստ որում կերակրի պակասութեան կար: ապա պիտայ էր փոխարինել այն աշխարհականին և տասանորդը արգար պայմաններով զուրս բերել: Բայց եթէ տասանորդ հաւաքողը չէր կարող յառաջ բերել այդ վիշտութիւնը, և բացայայտում, որ նորս նախնիքը խորանակութեամբ կամ բանութեամբ միայն խաղաղացել են այդ տասանորդը, ապա կը կորուսանն նորան առանց փոխարնի:

առանց հակառակութեան, Լուծերը, այն հայրախնամ մարդը իւր ժողովոցի, ջոյն տուեց մի ցաւակից սիրտ զեպ ի ժողովոցի անասելի առաւայանքը, Լուծերը յորդորելով զեպ ի խաղաղութիւն, խոստո-

7. Փոքր աստուերգը կամ արիւնի աստուերգը պիտոյ է վերացիլ ամենին:

8. Յարկութիւնը պիտոյ է բարձի. պատճառ, ընդզեմ էր այն ազատութեանը որ ժրտառի մեռով պարզեան է մարդու: Բայց այդ ժրտառեմեման ազատութիւնը իրման չէ հնազանդութեանը որքնապատշաճ մեծաւորելի:

9. Աւայրեի անասուն, թռչուն և մտին, գնացական շքերի մէջ, որաւու հաճարեմութիւն ունի ամենայն մարդ, բայց ի այն զիպուածից, եթէ մի մարդ յիշատակաւորեմութեամբ կորազ էր ապացուցանել, թէ նա մկեւրի չուրը գնել էր:

10. Եթէ մի հասարակութեան անտաներ բանութեամբ իւրան է, կամ եկեղեցին, կամ թէ աշխարհական իշխանութիւնը, այս ասանց պոյնանի պիտոյ էր յետ առ և նորանց հասարակութեանը, և հասարակութեան անգամը պիտոյ է ի բանց վաւելու և շինութեան փոյրը ասանց արմաթի ասանային այն անգից: Բայց եթէ չը կային միս անանկ անտաներ, քան թէ այնպիսի որանց արդարութեամբ ըստացութիւնը կարելի էր ապացուցանել, այս պիտոյ էր ասացոյի հնա արդար պոյնանելով վնասել զործը: Այս վնասելու էր և այն ժամանակը, եթէ այն անտաները մի անիրաւ ասացոյի մեռցից վնասելով անցան եին մի երբորդ տիրել մեռք:

11. Ծառայական պաշտօնը չէր պիտոյ յաւելանել, այլ պիտոյ էր միս զնել հին ստիբութեանը:

12. Աւարտ ասան ապարանքի մասին, պիտոյ է կաշուածառիթը և շինականի մէջ պահանջի մի այնպիսի պայմանագրութիւն, որ կաշուածառիթը իրաւունք չուներ բանութեամբ հարկ կամ պաշտան պահանջել շինականից: Բայց արժան էր, որ շինականը կամեար ծառայութեամբ պնէր անիրաւ, այնպիսի ժամանակներում, երբ այդ գործը փոստկար չէր նորան:

13. Եթէ ապարանքը այնպիսի բեռնաւորան էին հոյի վարելով, որ աշխատութիւնը շինականին ոչնչու պուտ չէր բերում, այս պիտոյ էր որտանելի մարդեցի վնասութեամբ փոքրացնել զեանի հարկը:

14. Գրատառանի պատիւները չէր պիտոյ, իւր կանցին հեռակեւով, ծանրացնել, այլ պահանջել հին ստիբութիւնը:

15. Եթ որ հասարակութեան ապարանքը արքրեմար կերպով իրաւունք է և, պիտոյ է գարանանք նորան. բայց նորան հնա, որ այնպիսի ապարանք որքնապատշաճ կերպով գնել է, պիտոյ էր եղանակաւոր վնասել զործը:

16. Այն հարկը որ աստուեմ բանին հանգանակել շինականի թոսանց զպոյնից, պիտոյ է վերացիլ որպիս արեւնդգեմ շրկանը այլի կանանց և որբերի:

17. Եթեւէ կանանքից ամեն միւր պիտոյ է կորուսաներ իւր ոյժը, եթէ որբը զրբի հիման վերայ կարելի էր ապացուցանել, թէ անարժան քան էր. բայց որբ հակառակ շինականը պահանջին ի բանց հանար իրաւունք և այլ անարժանութիւնց յառաջ բերել, եթէ կը գրանվելն զպոս, չմեկնով Յուրը զերբը և իջնաբառութիւնը, և ընդզեմ էին Կասուայ և ընկերութեան:

վանց այն պահանջողութեններէն մի քանիքը որպէս արդար, և առաջարկեց որ իշխանաւորքը և շինականքը արգարութեան պայմաններով վերջացնեն վէճը, Բայց երբ որ կատաղի բազմութիւնը սանձը կտրած սկսեց ներգործել սրով ու կրակով, երբ որ մտկկրան մարդիկ առաջնորդ դարձան, ինչպէս Թոմաս Միւնչըրը, և աստուածային յայտնութիւնք և հրաշալի տուրք պատճառ բերելով, հին կտակարանից առած ահաշուքիչ խօսքերով քարաղելին բնդհանուր հաստատութիւն, ներս բերեցին հասարակաց սեփականութիւն և նախտաւկան գրուածներ արձակեցին «ընդդէմ անհօգի, փափկակեաց մարմնաորներին Ախտորներդի», այնուհետև բորբոքվեցաւ Ռեֆորմատորի մէջ մի զորաւոր բարկութիւն, և նա իրաւացի երկիւղ կրելով, թէ մի գուցէ իւր ամենին հոգեւոր գործը շինվի այս խոտմութեան սեփարգութեններէ հետ, հրամայեց իւր գրուածի մէջ «ընդդէմ յափշտակող և մարդասպան շինականներին», խորակել նորանց որպէս կատաղի շունք, Այս գրուածը շատ վատ կարծիք առեց Լութերի մասին. ունեց համարումին այդ բանը որպէս սպառնալից նորա անբրիտանացի-խոտարութեանը դէպ ի ճնշած շինականքը, միւսները որպէս արհամարհելի կեղծաւոր համոզակատարութիւն դէպ ի իշխանաւորքը և մեծամեծքը, Լութերը այս մասին արդարացրեց իւր անձը մի ջոկ գրուածով «Թուղթ բնդհանրական, այն խոտարութիւն փորրիկ գրուածի մասին, որ հրատարակված էր ընդդէմ շինականներին», Երգարեւ, երեւոյթը այնպէս էր, որպէս թէ և Լութերը և Մելանթիթներ կամենումին ամենայն քաղաքական հետևութիւն հետի պահել այն վերանորոգութենից որ եղած էր եկեղեցու մէջ, և շատ մեղադրած են նոցա, որպէս թէ նոքա մի կողմից քարոզած էին բացարձակ իշխանութիւն, և միւս կողմից լուս և անբարբառ հաշտագութիւն, Բայց չէ պիտոյ անտես առնել, որ Լութերը իսկապէս այս երկդատակութեան մէջ ջանահար էր հաշտեցնել կոշտ հակառակութիւնքը, Երբ որ խոտմութիւնը արիւնի հեղեղներով հանդարտեցրած էր, Լութերը, որ զորաւոր կերպով պաշտպանել էր քաղաքական կարգի կողմը, այնու ամենայնիւ պիտոյ է թշնամիների բերանով պարտաւորված տեսանէր իւր անձը, ըստորում նորա քարոզած հոգեւոր ազատութիւնը գործ էին գրել դէպ ի շարք, Բայց և ժողովուրդը կամենումէր նայել Լութերի վերայ այնպիսի աչքով, որպէս թէ նա պաշտակամ էր աւելի, քան թէ ժողովրդի բարեկամ, Այս միջոցում էր ահա, որ Լութերի տեսութիւնը և Ռեֆորմացիայի դեաւքը հաստատվեցան այն ճանապարհի վերայ, որ բացվել էր ահա Ռեֆորմատորի վերադառնալուց յետոյ Աւրթուրոզ ամբողջ, այսինքն, ներքին կենդանութեան կամ հաստակ միայն արժանաւորութեան հետ

միւսանգամ զուգարովեցաւ արտաքին եկեղեցապաշտութեան խորհուրդը. համարձակապէս յիշել ու կործանելը չափաորովեցաւ, պատիւ դնելով ժամանակի ծերութեանը. և սխալեցաւ նոր եկեղեցաշինութիւնը հռոմեական փրատակների վերայ. Կնքը Լուսները վեր կացաւ յետոյ և ճանապարհորդեց զէպ ի Շառլբուրգ, Կորդհաուզըն, Վէյմար, Օրլամպիւնդէ, Քայա և Ենա սահմանները, որ մեղմէ ժողովոյի սիրտը և իւր քրիստոնէական քարոզութեամբը բոլորովին խաղաղեցուցանէ խռովութիւնը:

Եւն ժամանակի մտա, Լուսները թուղթ գրեց մայնցեան կայսրընտիր իշխանին և խնդրեց նորանից հետեւել բանդերմուրզեան Ալբրեքտոսի օրինակին, «կին առնուլ և քաղաքացուցանել իւր հոգեւոր իշխանութիւնը. Շուտով սորանից յետոյ ամուսնացաւ ինքը Լուսները մի կոյս աղջկայ հետ, Կաթարիւսա Փան Բուսս անունով, որ յառաջուց շիտերցեան կարգի արեղայուհի էր Դիմպլըն անունով վանքի մէջ, որ և ինքը Լուսները առաջարկած էր իւր բարեկամներին, Վարդապետ Բաուսիերթմներին Դիւրընբերգումը և Վարդապետ Գլաշին Վիտորընբերգումը, Լուսները ամուսնացաւ 1525 թուականի յունիսի 13, որ ինչպէս ինքը ասում, կատարէ իւր ծնողի կամքը և ցանցնէ սասանայի սիրտը. Եւս ամուսնական կապը չէր ոչ զօրաւոր սիրոյ պատճառով, և ոչ իսկ պիտոյ է համարվի որպէս Անֆորմաստրի գործ, որ իբրև թէ իւր յատուկ օրինակով կամեցած էր հաստատել այն զեղէցիկ մարդկեղէն իրաւունքը, որ իւր քաջասիրտ խօսքովը միւսանգամ սասցել էր, այլ պատկանում էր միայն նորա մասնաւոր կենանքին, այլև խառնակ ժամանակում, ահի ու երկինդի մէջ, շտապով և սասնց բարեկամների զիտութեան, ծնողների միայն ճանապարհ տալովը բնական յօժարութեամբ զէպ ի բնասնեկան երջանկութիւն, կատարվեցաւ այդ ամուսնական դաջը, որի ուրախութիւնը և արտմութիւնը տեսաւ նա այնուհետև:

Ը ինականների խռովութենից մի փոքր յետոյ, նոյն իսկ աւետարանական եկեղեցու վարդապետների մէջ բարձրացաւ մի փնասակար երկպառակութիւն որ դարաւոր ժամանակներով ներգործող գումակեցաւ, երկու կողոր ձեռքելով այն հասարակութիւնը որ հաղիւ թէ գոյացել էր. այսինքն, այն վեճը Սուրբ Ընթրիքի մասին, Կարլշտաոր Թիւրինգեան սահմանումը, ստանց աջ ու ձախ նայելու, յառաջ տարաւ մարրոգութիւնը ոչ թէ միայն աստուածապաշտութեան, այլև վարդապետութեան մէջ. նորա աչքին զեռ ևս շատ պապական էր երևում Լուսների բոլոր գործը և ուսումը. թեպէտ Լուսները մերժելով կաթոլիկեան քահանայութիւնը անպատճառ պիտոյ է մերժէր և սովորական վարդապետութիւնը Գոյափոխութեան մասին, բայց

իւր զգալի ծածկամիտ խորախոհութեան պատճառով կամք չունէր հրաժարելի քրիստոսի պայծառացեալ մարմնի իսկ և իսկ ներկայութենից սուրբ Հաղորդութեան մէջ. մի այլ ծածկամիտ տեսութիւն ընդդիմադրեց նորան Կարլչատա աստուածաբանը, որ մերժելով բոլոր պատկերքը և նշանքը, աշխատուէր ուղղակի նկատել Հոգին, և Հաստատուէր, թէ քրիստոսը սահմանադրելով Սուրբ ընթրիքը, մատնացոյց է արել իւր յատուկ մարմինը, Այս բանի վերայ Կարլչատաի և Առթեմի մէջ մի վէճ բացվեցաւ, որ և խանդարեց Նոցա բարեկամական կապակցութիւնը: Այս Կարլչատաը շինականների խոտովութենից յետոյ, որին մասնակից էր և ինքը, դեռ ևս չը վերագրածած Ախտարները, առանց Առթեմի գործակցութեանը աքսորվեցաւ Կայսր ընտիր իշխանի հրամանով. բայց նա շուտով դառաւ կուսակիցք և համախոհք իւր վարդապետութեանը Տէրունական սեղանի մասին: Այն հալածեալ և անհայրենի մարդուն պաշտպան դուրս եկան մաշտաւոյ թէ Այկոյանապոլիսը և Եփեսոսը և Եփեսոսը թարգմանուէր «Այս է մարմին իմ» պատգամ. «Այս նշանակ է իմ մարմնիս»: Այկոյանապոլիսը տեսանուէր մարմնի պատկերը հայի մէջ որպէս մարմին, Վերջումը Առթեմը հաշտվեցաւ Կարլչատաի հետ, և սա Ախտարները դուրս ընդունելութիւն և պաշտոն դառաւ: Բայց Եփեսոսի աստուածաբանի հետ, որ Կարլչատաի առաջարկութիւնը պաշտպանած էր աւելի հիմնաւոր և յաջողակ կերպով, չը համաձայնեց Սարսոնիայի Աեֆորմատորը, Այս երկու մարդու մէջ եղած վէճը, սկսեալ 1526 թուականից, դարձաւ մի անձնական կոխ երկու հակառակ կողմերի առաջնորդների մէջ, Եփեսոսը ունէր իւր կուսակից և վերին Կերամներայի թագաւորական քաղաքները. երկու կողմերը ևս հիմնովուք սուրբ գրքի վերայ, Այլև Շվեդիայի Աեֆորմատորը աշխատուէր աւետարանական կնիքը դնել իւր ուսման վերայ այն բանով, որ լուսափայլ կայուց, թէ սուրբ գրքի մէջ Հոգին և հաւատը միայն խորհուրդ ունեն իրանութիւն գտանելու համար, Բայց Առթեմը հիմնուէր իւր վարդապետութիւնը քրիստոսի մարմնի ամենայն տեղ ներկայութեան վերայ, ըստ որում անբաժանելի կապակից էր աստուածեղէն անձնաորութեան հետ: Հակառակորդների կարծիքը երևուէր նորան քրիստոսաբացութիւն: Որովհետև այս վէճը պատճառ ստանալով երկու հակառակող կողմերի առաջնորդների ամենեւին պլապեա հայեցումից, յառաջ տարվեցաւ ոչ թէ ուշադիր լինելով դորա խորհրդին զեպ ի երկիւղածութիւնը, այլ միայն դուրսի երեսին, սպա հեշտ էր հասկանալ թէ ինչպէս այդ վէճը կարող էր այնքան սաստկանալ և սահմանից դուրս վազել, մինչև որ վիճարանողքը մոռացան իւրեանց հասարակաց աւետարանականութիւնը և թողլ տուեցին որ

պատասօլի իւրեանց մէջ եղած բնական կապակցութիւնը: Անպուտ եղաւ այն ջանքը, որ մի քանի աստուածաբանք, զոր օրինակ, խոհական և բարեխառն կապիտան, մի ազատ տեսութիւն պահելով երկու հակառակ կողմերի մէջ, յիշեցուցին նոցա աւելի վերին և քրիստոնէական եղբայրութիւնը. ի դուր եղաւ նոյնպէս, որ Հեսսենիայի սահմանապէս Անդգրաֆի Փիլիպպոսը մէջ մտաւ, առ ի սրտէ ցանկանալով հաշտութիւն ձգել, ըստ որում ընդհանուր հակաաւերդների կողմից երկիրալի վտանգը պահանջումէր աւելի պինդ և ամուր միաբանութիւն Աւետարանականների մէջ, Փիլիպպոսը կարծումէր, եթէ գլխաւոր վիճարարը երես առ երես խօսակցութիւն բանային միմեանց հետ, կարելի էր որ նոցա սիրտը փափկանային և մարդասիրապէս և քրիստոնէապէս շինվէին միմեանց հետ, Բայց ինչպէս որ Առթերը ընդունեց այդ բանի հրաւերը, այնուսակ էր ամենին մի բարեխաղոջ հետեանք. և Յօինգլին ներկայ գտանվեցաւ ականայ, Այդու ամենայնի հանդիսաւոր խօսակցութիւնը կատարվեցաւ 1529 թուականի հոկտ. 1ին: Առթերը բառերս «Այս է մարմին իմ», գրել էր իւր առաջև, սեղանի վերայ, որ միշտ ուշադիր լինի նոցա. խօսակցութիւն արեցին զանազան խնդիրների վերայ, բայց Յուրը Առթերի մասին չը կարողացան միաբանվել միմեանց հետ, և կնքեցին բանը այսպէս, որ, թէև անհամաձայն էին այն խնդրի մասին, զոնկայ թող քրիստոնէական սէր յոյց տային մի կողմը միտին, Ինչքան ևս փորձ փորձեցին գլուխ բերել մի ներքին եղբայրակցութիւն, որի համար Յօինգլին արտասուքով (ամանք երկմտ են այս արտասուքի անկեղծութեան մասին, զանազան պատճառներ յառաջ բերելով) տալիս էր ձեռքը, այնու ամենայնի Առթերի կրակոտ սաստկութիւնը խափանեց ու աւերեց բանը: Այս ժամանակից ահա սկըսանվում Աւետարանականների երկպառակութիւնը, ըստ որում այնուհետև օրէ օր աւելի սոփօրութիւն դարձաւ խոստովանակից լինել կամ Յարսոնեան կամ թէ Շվեյցիական վարդապետութեանը, և ուսուցանելով այս զանազան հասկացողութիւնքը, երկու կողմերի հակաակութիւնը ներս մտաւ և ժողովրդի մէջ, Հրապարակական վիճարանութիւնը բոց արդարև շատ տարիներ, բայց այդու ամենայնի երկպառակութիւնը աւելի խոր արմատացաւ սրտերի մէջ.

Այս բոլոր վէճը Հաղորդութեան խորհրդի վերայ շատ անժամանակ բան էր, ըստ որում աւետարանական եկեղեցու դրութիւնը զեռ ևս չէր ապահոված, և թշնամիքը քնած չէին: Երբ որ թագաւորութեան պապական փոխանորդը յայտնապէս և ծածուկ զաշնադիր լինելով աւելի մտ կապվեցան միմեանց հետ, նոյն բանը պիտոյ է առնելին կանուխ և Աւետարանականքը, Բայց այսպէս չեղաւ, մին-

ըն շեաներիայի սահմանապետը կրկին և կրկին անգամ յորդորելով հասկարեց նոցա միաբանութեան հարկաւորութիւնը, նախ և յառաջ թագաւորական քաղաքները միաբանվեցան Ռւլմի մէջ. յետոյ Մարկգոաֆ Բալխիւր Անարախեանը իւր եղբոր Գեորգի և Փիլալցգոաֆ Գրիգորիկոս Աուրախեանի հետ, և սորա Զալֆելց և Քորուրց քաղաքների մէջ միաւորվեցան շեաներիայի սահմանապետ Փիլիպպոսի և Աւքաանիայի կայսրնտիր Յովհաննէսի հետ: Այս անդ ամբացուցին իւրեանց մէջքը, միաբան խոստովանելով աւետարանական հաւատը և սահմանադրեցին քանի մի այլ բաներ, զոր որինակ հոգեւոր կալուածների քաղաքագրութիւնը, մի միայն աշխարհական թագաւորութեան փոխանորդների յարատեւութիւնը և այլն, որ այժմուս առաջարկութիւնք էին միայն, բայց յետոյ գործով կատարվեցան: Այս միջոցումը կայսրը Տօլեդօ քաղաքից հրաման արձակեց մի նոր թագաւորական ժողովի մասին որ լինելու էր Աուգսբուրց քաղաքումը: պատճառ բերելով թէ Աուլմերեան նորագործութիւնը զիս ևս շարունակվումէր, շինականքը Գերմանիայի մէջ և Տաճիկները սահմանների մաս գլուխ էին բարձրացրած: Սորանից յետոյ Աւքաանիայի կայսրնտիր թագաւորապետը խօսք բացեց Ֆրէյլինգալդումը Սահմանապետ Փիլիպպոսի հետ, որ միաբանութիւն գլուխ բերէ աւետարանամետ հասարակութեանն ինչի մէջ: Աուգսբուրցեան թագաւորական ժողովի մէջ 1526 թուականի յունիս: Սին վճիռ կապեցին որ նոյն տարու մայիս ամսումը միասնեզամ հաւաքվին, նիւրնրերեղեան թագաւորական ժողովի սահմանադրութիւնը եկեղեցական մասին հաստատ պահեն, և մինչև զարոյց ժողովը ուսուցանեն Աւետարանը իւր ճշմարիտ մտքով, և ինչպէս ընդհանուր քրիստոնէական եկեղեցին մեկնել է և ընդունել է, առանց խռովութեան և դայթակղութեան: Այսու ամենայնիւ սահմանապետ Փիլիպպոսը անդադար աշխատումէր, որ թագաւորութեան աւետարանական հասարակութիւնքը աւելի պինդ կապով միաւորէ միմեանց հետ. արդարև մայիսի 4ին Տորգաուի մէջ սկսվեցաւ մի այդպիսի միաւորութիւն Աւքաանիայի և շեաներիայի մէջ: Բայց և ժամանակի չափը լցված էր արդէն, ըստ որում կայսրը Սպանիայից աշխատումէր հռոմէական հասարակութիւնքը աւելի մտ կապով միաւորել ընդդէմ Աուլմերի հերձուածողական ուսմանը, և իւր թշնամական գիտաւորութիւնքը գեւոյ ի սորա հետևողքը չէր ծածկում աւելի: Սահմանապետ Փիլիպպոսը քաջ հասկանալով վտանգը, ամենայն զորութեամբ ջանք դրեց ընդարձակել այն դաշը որ կապած էր կայսրնտիր իշխանի հետ, և վերջապէս այն տեղ հասցրեց բանը, որ յունիսի 12ին, Մարգերուրց քաղաքի մէջ շատ աւետարանամետ իշխաններ և գոաֆներ միաբանվեցան այն պայմանադրութեամբ, որ

կենսերով ու գոյքով ձեռնտու լինին միմեանց, եթէ իւրեանց հակա-
ռակորդքը գոյին նոցա վերայ պատերազմով: Մի նմանախի դաշնա-
ւորութիւն գլուխ եկաւ Սաքսոնիայի կայսրընտիր իշխանի և Պրուս-
սիայի զուքսի մէջ: Այն թագաւորական ժողովի մէջ, որ հաւարվե-
ցաւ Շպէյեր քաղաքումը, ինչ տեղ ներկայ էին լուրբ կայսրընտիր
իշխանքը բաց ի Ռանդըրուբգեանից, Աւետարանականների փոխա-
նորդքը անօրինակ համարձակութեամբ պատասխան տուելին կայսրի
գրաւորապէս յանդիմանութեններին. յասկապէս Սաքսոնիայի կայսր-
ընտիրը և Հետսեմիայի սահմանապետը հանդէս դուրս եկան իւրեանց
աւետարանական դաւանութենով, երկուքը ևս բերած էին իւրեանց
հետ իւրեանց յատուկ քարոզիչքը. բայց որովհետեւ կաթոլիկները
չը կամեցան թոյլ տալ սոցա քարոզել եկեղեցումը, մեծ բազմու-
թեան մէջ, իշխանաւորների իջևաններումը քարոզ տուեցին աւետա-
րանական քահանայքը. բաց ի սորանից, սահմանապետ Փիլիպպոսը
իւր աստուածօրանական ուսումնականութեամբ պատկառելի կացուց
իւր անձը եպիսկոպոսների առաջև. նորա սպասաւորների թիւերի և
նորա իջևանի զաների վերայ գրած էին այս բառերը. «Ատուծոյ
բանը կը մնայ յախտեան»: Թագաւորական ժողովի վերջին միջոց
1526 թուականի ոգոստ. 27ին այսպէս եղաւ, թէ պետոյ էր զե-
պան ուղարկելով ինդրել կայսրից, որ զայ Գերմանիա և հոգաբար-
ձու լինի կատարելով մի եկեղեցական ժողով. մինչև այն ժամանակը
պետոյ է ամենայն ազգային փոխանորդ միտ գնելով Արմենեան հրովար-
տակին, այնպէս վարվէր իւր հոգատակների հետ, ինչպէս կարող էր
պատասխանատու լինել Ատուծոյ և կայսրի առաջև: Այս միջոցումը
կայսրը Պապի հետ շատ հակառակութիւն ունէր. այս բանը թագա-
ւորութեան մէջ եղած Աւետարանականներին շատ ոգնական եղաւ: Սո-
քա խաղաղութեան օրերը զորո՞ զբեցին, իւրեանց եկեղեցական բա-
ները աւելի բարւոք կարգադրելու համար. այսպէս, Սաքսոնիայի
կայսրընտիրը, եկեղեցական ուսուցիչների տակ պատկառելով,
հոգատարութիւն արեց եկեղեցու համար, կարգելով իւր աշխարհումը
հոգևոր և աշխարհական գործակալներ, որ և (1527—1529) աս-
ուածպաշտութիւնը և ժողովրդի դատարարութիւնը, հետեւելով Մե-
լանքմնի փոքրիկ աստղնորդական գրուածին, որ աւետարանական հա-
ւատի առաջին դաւանութիւնն էր, հաւասարապէս կարգադրեցին, ա-
մենայն տեղ աւետարանական քարոզիչներ սահմանեցին, և հոգևոր
մնաստանքը վերացնելու համար պայմանաւորութիւն արեցին Նուի-
րագործների հետ. Եկեղեցու վերատեսչութիւնը և ամենական բա-
ների միջոցատուութիւնը յանձնեցին Առաջնորդների որ ասվեցան Սու-
պերինթենդենտք. բայց գերագոյն վերատեսչութեան և կառավարու-

Թեան մասին, ըստ որում եպիսկոպոսների իշխանութեանն էր թողած այդ, ոչինչ բան չը սահմանադրեցին. Կնքը Առ թեքը միանգամ քրնտողութիւն գործելով, վերահասու եղաւ ժողովոցի և նորա ուսուցիչներէ որդալի ադիտութեանը, և մտածելով թէ հոգեղէն պատուութիւնը օգտակար էր միայն կրթեալ ժողովոցի համար, և թէ երկտալքը պիտոյ է լինին սպաղառի ժառանգողքը, գրեց 1529ին երկու քրիստոնէական մատեանք, մէք մեծ, քահանաների գաստիարակութեան համար, միւք փոքր, մանուկներէ և ժողովոցի համար: Սարսնիայի եկեղեցիներէ քննութենից յառաջացած եկեղեցական կարգը դարձաւ գաղափար և օրինակ միւս աւետարանական աշխարհներէ համար:

Շպէլյերեան տերութեանական ժողովի վճռական եզրակացութիւնքը արդարև կարող էին իրաւացի պատճառով հաճելի լինել Աւետարանականներին, եթէ չուտով դորանից յետոյ շատ պարզ կերպով շերտէին որպէս կայսրի, նոյնպէս և կաթոլիկեան հասարակութեններէ թշնամական գիտաւորութիւնքը զեպի Ռեֆորմացիան: Այսքը իւր վէճերը խոսիւայի և Ֆրանսիայի մէջ փոքր ի շատ աւարտելով, սկսեց պարսպել Գերմանիայի հոգևոր գործերին, և Վալդաղալից քաղաքից, 1528 թուակ. օգոստ. 1ին հրաման արձակեց մի նոր թագաւորական ժողովի մասին, որ պիտոյ է գալոց տարու փեալքվար ամուսը կատարվէր Շպէլյեր քաղաքի մէջ, Այն իշխանութիւնը և պատուէրը որ կայսրը տուած էր իւր ղեկայանին, չը տուցին մի լաւ յոյս. այդ ղեկայանը սկսեց խկոյն անմիաբանութիւն սերմանել աւետարանական գիտաւորներէ մէջ, այլև անտես արեց սոլորական քաղաքավարութեան ձևերը: Այստեղական առաջարկութիւնը նայումը կէս մի սաճկական պատերազմին, և կէս մի եկեղեցական գործերին: Այսքը այն իւր յատուկ գիտաւորութիւնը որ էր, Շպէլյերեան թագաւորական ժողովի վերջին վճիռը 1526 թուականից անցոր կացուցանել, եթէ կարելի էր, այս գիտաւորութիւնը չը կարողացաւ նա այնպէս վարագորել, որ չը հասկացվի, թէպէտ մի այլ խորհուրդ չունէր կայսրի առաջարկութիւնը մի առանձին գործախառար ընկերութիւն սահմանելու: Այլև յատկապէս յոյս տալով Աւետարանականներին, թէ լինելու է մի եկեղեցական ժողով, կամենումը կայսրը փակել միւս նորագործութեններէ ճանապարհը, որպէս և պատուիրումը նա, որ կաթոլիկեան պատարագի բարձրագոտի խորհուրդը անխախտ պահպանվի ամենայն տեղ և արգելված լինի քարոզել ընդդէմ նորան: Ընդդէմ այս առաջարկութեանը պատասխանեցին Աւետարանականքը վճռապէս, և միւս օրին յառաջ բերեցին մի հակառակ գրուած, որի մէջ ասած կար, թէ այս խնդիրը չէ կարելի վրձնել միայն կարծիքների շատութենով: Եթէ կամենումէին պահանջել

սոցանից, որ արտաքսեն իւրեանց վարդապետութիւնը, ուրեմն աւելորդ էր խնդրել մի ազատ քրիստոնեական եկեղեցաժողով. իւրեանց քարոզիչքը վաղուց ահա հերքել էին կաթողիկէական վարդապետութիւնը պատարազի մասին, նոյն իսկ Աստուծոյ բանի հիման վերայ. և մի անտեղի պահանջումն էր, որ սոքա թոյլ ապյին իւրեանց աշխարհներէ մեջ պատարաց աննել, թէպէտ հակաապկորդքը իւրեանց աշխարհներումը թոյլ չէին ապիս Սուրբ Ընթրիքը հացի և զինուսեսակով կատարել, Նոյնպէս անպատշաճ էր այն կամեցողութիւնը, որ Աստուծոյ բանը այնպէս քարոզվի, ինչպէս մեկնած են եկեղեցական կողմից ընդունված Հարքը, թէպէտ հարցաքննելի խնդիրը այն էր, թէ որ կողմումն է գտանվում, ճշմարտապէս, սուրբ քրիստոնեական եկեղեցին: Եւ, երբ որ Աւետարանականքը յառաջ բերեցին և այն պատճառը, թէ սուրբ գիրքը պիտոյ է մեկնարանովի նոյն իսկ սուրբ գրքովը, այնուհետև մերժվեցաւ և եկեղեցական Հարց վկայութիւնը, Հակաապկորդքը այնպիսի անպատուութեամբ վարվեցան աւետարանական փոխանորդների հետ, մինչև ամենեին անտես աննելով սոցա պատասխանատուութիւնքը, վճիռ կապեցին Ապրիլի 18 թուականին, որ միւսանգամ ականջ չը դնեն սոցա ասածին, ընդունեցին այն առաջարկութիւնը որ եղած էր մի առանձին գործակատար ընկերութիւն սահմանելու մասին, սուեցին նորան վճռական եզրակացութեան ձև, և պահանջեցին աւետարանական գլխաւորներին, որ հնազանդեն գորան, Ապա և Աւետարանականքը իւրեանց պատասխանատուութեանների իսկութիւնը հաւարեցին մի օրինաւոր ընդդիմախօս ճառի մեջ, որ և ստորադրեցին Սարսնիայի կայսրընտիր Յովհաննէսը, Փարիզոսի Գեորգ Բոանդընբուրգեանը, դուքսերը Էմսս և Ֆրանց Լիւներբրգեանը, Սահմանապետ Փիլիպպոս Հեսսենեանը, Իշխանաւոր Ալօրթանգ Ընհայթեանը և 14 թագաւորական քաղաքներ, Բալլց Կաթողիկէական գլխաւորների կողմից այնպէս սասակացած էր ատելութիւնը, որ յայանեցին Աւետարանականներին, թէ սոքա չունէին համարձակութիւն ոչ հրատարակել իւրեանց ընդդիմարանութիւնը, և ոչ ևս մտ գնել նորան տերունական ժողովի եզրակացութեանը, այլ թոյլտուութիւն կար միայն փակել գիւանի թղթների մեջ և ուղարկել կայսրին: Բալլց Աւետարանականքը այսպիսի բռնաւոր ընթացք տեսանելով, յետ չը քարշվեցան, այլ սիրտ ու հոգի ստատանալով հրատարակեցին իւրեանց ընդդիմախօսութիւնը և գորա հետ կապակեցեցին մի բողոք գեպի ի կայսրը, գեպ ի մի ընդհանուր կամ գերմանական եկեղեցաժողով, և գեպ ի ամենայն անկողնապահ քրիստոնեայ գաւառոր, մի բողոք թէ իւրեանց անունով և թէ իւրեանց հպատակների անունով, այլև ամենների անունով, որ այժմ կամ յի-

այց հաւատալու էին Աստուծոյ բանին, Այս ընդդիմախօսութիւնը (չափնական բառով Պրօտեստանցիս), անշքին համեմատ, պատճառ տուեց անունիս Ընդդիմախօսութեան (Պրօտեստանտք), որ այնուհետև ստացան Աւետարանականքը և պահեցին իւրեանց վերայ, Այս ընդդիմախօսութիւնը ներհակ էր թագաւորութեան մէջ եղած հոռմական կամ թոյլիկների այն անիրաւ և թշնամական պահանջողութեանը, որ Աւետարանականքը յետ դարձուցանվին դեպ ի այն կարգը որ սահմանված էր Աստուծոյ հրովարտակով, արդարև մի այնպիսի պահանջողութիւն, որի յայտնի խորհուրդը այն էր, որ միւսանպատ նորոգվի հին ապականութիւնը և կեղեցուցու մէջ և դատաւարակն ամենեքեան, որ մինչև այժմ ջանք էին արած մարքել ու պայծառապարզել քրիստոնէական հաւատը և վարքը, որ խոստովանել էին Ռեֆորմացիան, մի խօսքով, Պապականների խորհուրդը այն էր, որ մշտնջենաւորվէր հին ծառայութեան հոգին, Այս, պապական կողմից, արած կարգադրութիւնը որով պիտոյ է փակվէր աւետարանական գործի ներքին և արտաքին յառաջադիմութիւնը, մարքած հաւատի արտաքին տարածումը և ներքին կատարելագործութիւնը, այս պապական կարգադրութիւնը մահու հարուած կը լինէր Ռեֆորմացիայի համար, ուրեմև և Պրօտեստանտականութեան համար, որի կենդանական հիմքը և արմատական յատկանշանք է յառաջադիմութիւն իմացական և կրօնական կենդանութեան բոլոր հանդէսների մէջ:

Աւետարանականների փոխանորդը խորհրդակից եղան Նիւրնբերգ քաղաքումը, և զեսպանների ձեռքով ուղարկեցին կայսրին վերջին տերութեանական ժողովի բոլոր բանախօսութիւնքը, Այս զեսպանները հանդիպեցին կայսրին Պիաչենցա քաղաքումը սեպտ. 7 թուականին, և նոյն ամսի 12ին ատենան դանշվեցան, լայց խրատ տուեցին նոցա, որ կարճ խօսեն, և իւրեանց միտքը զրով բացալայան, և նորա կայսերական մեծութիւնը շատխօսութեանով յետ չը ձգեն այն պատուական գործերից, որոնց պարապած էր նա այժմուս, ուրեմև և ամենեին անհաճոյ կը լինէր նորան ունկնդիր լինել երկար ու ձիգ բանախօսութեան: Կայսերական վճիռը որ ամսի 13ին յայտնվեցու զեսպաններին, այսպէս էր. թէ ընդդիմախօսքը պիտոյ է հնազանդեն ժողովի վճռական եզրակացութեանը, ինչպէս որ եղած է, բայց որում անփոփոխելի էր այն սահմանադրութիւնը որ աւելի շատերի հաւանութեամբ արած է: Յորանից յետոյ, կայսրին յանձնած բողոքագիրը ևս առաւել անհաճոյ գտանվեցաւ նորան, որ և հրահայեց բանա զնել զեսպանները, այս բանը տուեց մինչև հօկտ. 30ը: Կոչքը այսպիսի դիտաւորութիւն ցոյց տալով, ի հարկէ բաւական տեղիք կար երկիւղի և կասկածների, և Աւետարանականների գլխաւորքը

ընտանոցներու խորհուրդ կատարեցին, թէ ինչ պիտի անելին, եթէ թշնամին յարձակվէր նոցա վերայ: Անժամանակ էր այժմ այն ինդիբը, արդեօք հարկանոց էր դաշն կապել Բվինգլիու վարդապետութեան զաւանդներէ հետ: Աութերը որ և այժմ մի անյարթելի կերպով ընդդէմ էր ամենայն աշխարհական զորութեան որպէս և իցէ ներս խառնվելուն հոգեւոր բաների մէջ, չը հաւանեց առհասարակ որ և իցէ դաշնակցութեան: Սորա հակառակ, սահմանապետ փիլիպոսը, որ վաղուց արգէն կատարածներով նկատած էր ոսոխներէ զնացքը, շատ յօժար էր ինչքան շուտով, այնքան սրտով վճռել գործը սրի բերանով, Աութերը յառաջուց միանգամ խորհուրդ էր առել Վոյսըրընտիր իշխանին, որ հրատարակեալ Յահմանապետիցը, եթէ սա կամք չունէր բաց թողալ իւր դիտադորութիւնը: Սորա հակառակ, Յահմանապետին ամենեւին անհասկանալի էր այն վախճանութիւնը որ փախուցող դաշնադորութենէց Բվինգլիեան հաւատակիցներէ հետ: Նոյնպէս անխմանալի էր նորան, թէ ինչու չէ պիտոյ պահպանել իւր կողմը թշնամիների երտից, եթէ կը յարձակվին դորա: Թեպէտ սահմանապետ փիլիպոսը փոքր մի յառաջուց խորթել էր Օտտօ ֆին փաք անունով մարդու ինքնահանար վկայարանից, որպէս թէ հակառակորդը ամենայն օրինաւոր կերպով դաշն էին կապել իւրեանց մէջ, և այս սուտ բանի վերայ հիմնադրվելով, ամենքս էր բարձրացուցել իւր աներ Գեորգի, Սուրսնական դուքսի վերայ, և պահանջել էր, որ իւր հաւատակիցքը պատրաստութիւն տեսանեն: Բայց այժմ առ ի սրտէ համաձայնութիւնը Պապի և Վոյսրի մէջ բաց ու յայտնի էր, այլև վերահասու էին եղած, որ երկուքը դաշնադոր են միմեանց հետ, և կայսրը յանձն է առած Ընդդիմախօսների կողմը բռնութեամբ հնազանդեցնել Պապին: Այս պատճառը հերիք չէր: Աւետարանականքը լսեցին նոյնպէս, թէ որպիսի անպատուութեամբ ընդունել է կայսրը նոցա ուղարկած զեւպանքը: Այս բոլոր բաները վառելին ու բորբոքելին Յահմանապետի սիրտը, թեպէտ և այժմ Աութերը, անչափ խաղաղասէր մարդ լինելով, խորհուրդ չէր առիս, որ զէնք շարժեն, և ասուէր. «Աւելի քաղցր է ինձ մտանել, քան թէ արիւնհեղութիւն տեսանել Աւետարանի անունով»: Այդու ամենայնիւ Ընդդիմախօսների փոխանորդքը զեռես 1529 թուականի վերջումը հաւաքվեցան Շվարսա քաղաքի մէջ, և 1530 թուակ. սկզբումը ներկայ բերդ քաղաքի մէջ, որ քննեն գործի որպիսութիւնը և խորհուրդ կատարեն թէ որպիսի հնարներ պիտոյ էր գործ զնել:

Այս գործի մէջ մտնեցաւ ապրիլի 8ը, որ թուի վերայ կայսրը հրատարակել էր Աուգսբուրգի մէջ լինելու տեղութեանական ժողովը: Այս ծանուցական թուղթը գրած էր մեղմ և սիրախոան ոճով, և

ասած էր, տէրութենական ժողովի խորհուրդը այն է, որ կայսրը կամենում էր օգնութիւն պատրաստել ասաճկական պատերազմի համար և փարատել հաւատի տարածայնութիւնըը, Մի և նոյն բանը ասած էր աւելի քաղցր կերպով այն կայսերական նամակի մէջ, որի զօրութեամբ տէրութենական ժողովի օրը փոխած էր մայիսի 1ի վերայ. Որովհետև կայսրը իւր առաջին թղթի մէջ յոյս էր տուած, որպէս թէ կամք ունէր Աուգստուրգումբ սիրով և քաղցրութեամբ ականջ ղնել ամեն մինի բարեխոհութեանը, մտածութեանը և կարծիքին, այս պատճառով յոյս ունէին թէ գալոց տէրութենական ժողովը պիտոյ է լինի մի տեսակ աղագային ժողով, որի մէջ կարող էին խօսք բանալ հաւատի ուսման վերայ և վճիռ հաստատել. Սորա համար Ընդդիմախօսների փոխանորդը պատշաճ համարեցին խրեանց հաւատի գլխաւոր փարզապետութիւնքը համատու ածիոգիւ միասին և կայսրի առաջն ղնել: Մեկնքթօնը յանձն առաւ գրել այդ դաւանութիւնը, հիմնադրելով այն յօդուածների վերայ, որ Աութերը, Յովհան Բուգընհաղեր և Մեկնքթօնը աշխատասիրած և մատուցած էին կայսրնորին Տօրգաու քաղաքի մէջ: Այս դաւանարանական գրուածը պապուրաց Գերմանացոց, բաժանվում էրկու մասն, որոնց առաջինը 21 յօդուածով խօսում էրբխտոնէական հաւատի գլխաւոր խնդիրների վերայ, իսկ միւսը 7 յօդուածով ցուցանում էրկաթիկեան եկեղեցու անկարգութիւնքը:

Այս է այն հռչակաւոր Աուգստուրգեան Գաւանութիւնը Confessio Augustana, որ Աութերականների գլխաւոր հաւատարանական դիրքն է, որի մասին հարկաւոր է սյարան խնամալ, թէ այդ գրուածը Մեկնքթօնի խաղաղաւոր և հաշտողական հոգու րդխում լինելով, պիտոյ է համարվի մի երկիւղած, գործադրական և քաղաքական գրուած, որի մէջ չէ թէ այնքան լուսափայլ էր կաղցուցած Պրոտեստանտականութեան առանձին ձեւերպութիւնը, ինչքան համաձայնութիւնը հին կաթօլիկեան հաւատի հետ և ընդդիմախօսութիւնը այն անկարգութեաներին, որ ըստ մեծի մասին խոստովանված էին այն ժամանակի յայտ կրթեալ մարդերի բերանով, երբ որ Աութերը, որ Աուգստուրգեան ժողովի միջոցին դասնվում էր Քօրուրգ քաղաքումը, բոլորովին հաւանութիւն տուեց այս դաւանարանական գրուածին, Սարտմիայի դիւանապետ Բայերը 1530 թուականին, յունիսի 25ին, Աուգստուրգ քաղաքի մէջ հաւարված տէրութենական ժողովի առաջն կարողաց այն բանը և լատինական ու գերմանական լեզուով յանձնեց կայսրին: Սա հրամայեց իւր աստուածարաններին Երբ, Փարիս, Բոխլէյոս և Ալմայինա անունով, որ գորա հակառակ մի հերքողարանութիւն գրեն, որ և օգտաստի Յին կնրդացին հանդէպ մէջ. մի ողոր-

մելի գրուած, որի թուլութիւնը շատ սիրտ տուեց Պրոստեստանտներին, Բայց երբ որ սեպտ. 22ին Աւետարանականների փոխանորդքը կամեցան մատուցանել կայսրին մի պաշտպանողական ծառ, որ շարագրած էր Մելանքթիմոնի ձեռքով, կայսրը ոչ թէ միայն հրատարակեցաւ ընդունել նորան, այլև հրամայեց հրատարակել մի վճիռ, ամենին անհրաւապէս հաստատելով, թէ Աւետարանականների դաւանութիւնը հերքուած է սուրբ գրքի անտարակուսելի վկայութենէնքով, Այս անարժան ընթացքը վերջովեց և նոյն ինքն Մելանքթիմոնի սիրտը այնպէս, որ նա իւր պաշտպանողական ծառը միւսանգամ մշակեց և տեսք տուած հրատարակեց նոյն իսկ տէրութենական ժողովի միջոցին, յանձըն առնելով նորան իւր ժամանակակից մարդերի և գալոց ազգերի գատաստանին :

Այս բանը ոչինչ սպաւորութիւն չարեց կաթոլիկեանց գլխաւորների վերայ. Բեռնարմաղիայի գործը վաղուց ահա գատասարաւած էր նոցա բերանով, և այսպէս, նոյեմբերի 19 թուականին հրատարակեցաւ տէրութենական ժողովի եզրակացութիւնը, որին հաւան էին միայն կաթոլիկեանքը, և գորա մը ասած էր. կայսերական մեծութիւնը կամենում է մինչև գալոց տարու ազրիւլ ամբար մտածելու ժամանակ տալ ընդդիմախօսներին, արդեօք կամը ունէին անհամաձայն բաների մը միարանգիւլ Պապի, կայսրի և միւս քրիստոնէից հետ, և թէ ոչ. Բայց մինչև այս բանը կը լինէր, չէ պիտոյ նոցա իւրեանց սահմաններումը ոչինչ նոր բան հաւատի մասին տպել, ոչինչ մարդ չը բնադատել զէպի իւրեանց հերձուածք, չարգելուլ պատարագը, ևս հասարակ ոչինչ աւելի նորագործութիւնը չառնել, Այլև, թէ կայսրը կամենում է միջնորդ լինել Պապի մտա մի եկեղեցական ժողովի մասին, որ վեց ամտի միջոցում կը հաւարքի և մի տարուց յետոյ կ'աւարտի. Այս ամենին օրենքնողէմ վճահաստութեանը հակառակ վեր կացաւ Մարտինիայի դիւանապետ Բրիւքրը (Պանտանոս), մի պատուական ճառախօսութեան մէջ հաշածելով և հերքելով բոլոր յանդիմանութիւնքը, և իսկոյն յանձնեց Փիլիպպոսի Գրիգորիկոսին իւր ջատագովական գրուածը Ըուգարուրգեան դաւանութեան վերայ, Բայց սորանից օգուտ չը յառաջացաւ, այլ մանուանդ թէ շարժվեցաւ կայսրի ահաճութիւնը զէպի ի տէրութեան պրոստեստանտական քաղաքները. սորա պիտոյ է լսէին թէ կայսերական մեծութիւնը վճիռ է կապել, որ արմատախիւլ առնէ ընդդէմ «սուրբ հաւատի» մոլորութիւնը. սորանից շատ բացայայտ երևումը թէ կայսրի դիտարկութիւնը պատերազմ է, Այսպէս ահա տէրութենական ժողովի վերջը աւելի փոքր ձևառու էր Աւետարանականներին, քան թէ նորա ըսկիզբը. Արխաիբա Լանդգրաֆ Քիլիպպոսը որ առանց հրատարական

ողջունի թողել էր ժողովը և գնացել էր, թուղթ գրեց իւր, Եւզաբուրբումը յետ մնացած խորհրդականներին այսպէս. յոյց տուցեք քաղաքացոյ այս իմ ձեռագիրը և ասա՛քք նոցա, թէ նորա կանայք չէին, այլ տղամարդիկ. ոչինչ վտանգ չը կայ. Ետուած մեր հետ է. ով որ կամենումէ վախենալ, թող վախենայ, Բշինչ կերպով թոյլ մի տաք, որ Եվնագլինա՛նքը բռնադատվին, հալածվին և յաշխահարվին, ըստ որում Քրիստոսը կոչել է մեզ, ոչ թէ հալածելու, այլ բժշկելու համար, Տղամարդեր դուք, թոյլ մի տաք այդ խոհական իմաստունին, այդ վախկոտին, չեմ կարող այսուհետեւ ասել, Փիլիպպոսին՝, Եյս Փիլիպպոսը Մե՛լանց թման էր որ միաբանութիւն սիրելով, Կաթոլիկեանցը չափազանց սեղիք էր տուած յիշեալ դաւանաբանական գրուածի մէջ:

Արովհետեւ Եւզաբուրբեան տէրութենական ժողովի մէջ զանազանութիւն էր արած ոչ թէ միայն ընդունողների և չընդունողների մէջ, այլև շատ յայտնի ասած կար, թէ անարժան է խաղաղութիւն և միասնութիւն ունենալ այն մարդերի հետ որ մերժել էին ժողովի եղբակացութիւնը, այս կայսերական կամքով ու գիտութենով հրատարակվեցաւ թագաւորութեան երկպառակութիւնը. Եյս բանը պիտոյ է մեծապէս յորդոր լինէր Եւետարանականներն ամենայն կերպով պատրաստելու իւրեանց անձը. Եւետարանականքը խոստովանելով իւրեանց դաւանութիւնը Եւզաբուրբ քաղաքի մէջ և այսպէս քաջ հասկանալով իւրեանց եղբայրակցութիւնը, վերջապէս հոգարարձութիւն արեցին պաշտպանելու իւրեանց անձը. այնուհետեւ իրաւագէտքը և աստուածաբանքը ևս վերահասու եղան այն բանին, թէ անպատճառ հարկուոր էր բռնութեանը հանդիպել բռնութեամբ. Եւ Լութերը հրատարակեցաւ իւր առաջին կարծիքից, որպէս թէ թագաւորութեան փոխանորդների պատերազմողապէս ընդդիմանալը կայսրին մի պահաս խոռվարարական գործ չէր, քան թէ Տորթաի քաղաքացիտը կամենար գլուխ բարձրացնել ընդդէմ Վաքսսնիայի կայսրընտիր իշխանաւորին. Եյնուհետեւ որոշեցին միմեանեցից կայսրը և այն պատերազմող տղամարդը որ Պապի պաշտանեայ էր. այլև Լութերը արձակեց այժմ դարձեալ մի զգուշացուցիչ գրուած իւր շէրիքի հայրենակիցների վերայ, յայտնելով նորա մէջ իւր ահա՛նութիւնը Եւզաբուրբի տէրութենական ժողովի վերջի մասին, միասնորո՛ւմ արձակ համարձակ յոյց տալով պտպական Կլերիկոսներին իւրեանց մեղքերը և յորդորելով զեպ ի խաղաղութիւն, բայց և Եւետարանականներին խորհուրդներ տալով, թէ ինչպէս պիտոյ է գործ կատարել, եթէ պատերազմի հանդիպելին. Դեկտեմ 1530 թուականի զեկտեմբեր ամսին, Եւետարանականների փոխանորդքը հասարկվեցան Շմալթալըն

քաղաքի մէջ և խորհուրդ արեցին մի պատերազմական դաշնակցու-
թեան համար: Հաստեմարտի Լանդգրաֆը յանձն առաւ դաշնաւորու-
թիւն խօսել Գանեմարքիայի թագաւորի, Համբուրցի և միւս ծոփե-
ղերեայ քաղաքների հետ: Այլ և վճիռ կապեցին, որ Ֆրանսիայի և
Ընգլիայի թագաւորներին ծանուցանեն Աուգսբուրցի տէրութեանական
ժողովի գործակատարութիւնքը: 1531 թուականի մարտի 29ի վերայ
պայմանագրած ժողովումը Համլքալդնի մէջ ընդունեցին առաջին ժո-
ղովի արած խորհուրդը և դաշն կապեցին յառաջուց վեց տարի ժա-
մանակով: Յիշատակարանի մէջ ասած կար. Դոցա, որ իրեանց աշ-
խարհներումը լուսմին Աստուծոյ պարզ և անսպական բանի քարո-
ղութիւնը, յայտնի լինի, որ թշնամին զարւո ե նոցա վերայ. բայց
քրիստոնեայ մեծաւորքը պարտական էին ամենայն հոգաբարձութենով
և կարողութենով արթուն լինել, որ մի գուցէ իրեանց հպատակքը
բոնութեամբ ստիպվէին ուրանալ Աստուծոյ բանը և ճանաչած ճշ-
մարտութիւնը: Այսպէս ինքեանք միաւորված էին և վճիռ էին կա-
պել, որ պահպանեն իրեանց անձը, ինչպէս ամենայն մարդու թոյլ-
տուած էր ընական, մարդկեղէն և աստուածեղէն իրաւունքով, որ ե-
թէ մի մասը, Աստուծոյ բանի, աւետարանական ուսման և իւր սուրբ
հաստի համար, վտանցի տակ ընկեր, բոլոր միւսերը անյապաղ,
ամեն մինը ինչպէս կարող էր, թիկունք տային և օգնէին ընկերին
այնպիսի սրտցաւութեամբ, որպէս թէ իրեանց էր հասանում միասը:
Ամենայն կարգի մարդ որ ընդունել էր Աւետարանը, պիտոյ է պաշտ-
պանութիւն գտանէր: Այս միաբանութիւնը թէ ինչքան զօրացու-
ցել էր Գաշնաւորների վտտահութիւնը և հոգին, երևեցաւ 1531
թուակ. յունիսի 4ին Ֆրանկֆուրտի մէջ հաւաքված ժողովումը. այս
տեղ հաստատեցին այն փրկաւէտ վճիռը որ էր, չը պահանջել աստ-
ուածպաշտական արարողութենների միաձեւութիւն Գերմանիայի բոլոր
աւետարանական աշխարհների մէջ, ըստ որում դժուար էր գլուխ
բերել արտաքին արարողութենների միակերպութիւն, և երկրորդ,
հիմնաւոր պատճառ կար երկիւղի, թէ մի գուցէ այդպիսի ջանադրու-
թեններով ճանապարհ տային մի նոր ապականութեան: Միւսանգամ
ժողովներ կատարելով վճուեցին, որ պատերազմի ծախքը կհսով չափ
յանձն առնուն իշխանաւորքը, կհսով չափ քաղաքները, և դաշնա-
ւորութեան գլխաւորքը լինէին Սաքսոնիայի կայսրընտիր թագաւորազը
և Հաստեմարտի Լանդգրաֆը: Դորուց կապած դաշնակցութեան խոր-
հրաւորութիւնը երևումէր արդէն այն բանի մէջ, որ կայսրընտիր
Փայնց և Փիպլց քաղաքները յանձն առան հաշտութեան միջնորդ
լինել Աւետարանական և դաթօլիկեան գործակալների մէջ. նոյն իսկ
կայսրը յոժար էր խաղաղութեան խօսք բանալ, որ և բացվեցաւ խ-

կապէս Շվէյնֆուրտ քաղաքումը: Այս բանի ընթացքը փոքր ինչ խառնվեցաւ, տարածայնութիւն լինելով Աւստրիական Ֆերդինանդոսի ընտրութեան վերայ որպէս հռոմէական արքայ, ըստ որում Աւստարանականքը չընդունեցին այդ ընտրութիւնը, մինչև որ հակառակորդների կողմից արժանի թոյլտուութիւնք եղան, որ Աութերին ևս հաւանելի էին երևում: Այլև, Պրատեստանտների կողմից պահանջողութիւն լինելով, որ պատիւ զրկէր և նոցա որ յետոյ ընդունելու էին Աւստարանական ուսումը, հակառակեցին զորան միջնորդող կայսրընտիր իշխանաւորքը, ըստ որում երկմտութիւն ունէին իւրեանց հպատակներին կրօնական ազատութիւն տալու մասին: Բայց Աւստարանականների գլխաւորքը պիտոյ է ամուր մնային իւրեանց պահանջողութեան վերայ. պատճառ, չէին կարող թոյլ տալ որ իւրեանց նորահաստատ ուսումը կապվի ու փակվի իւր այժմեան սահմանի մէջ, և կորվի նորա աւելի յառաջադիմութեան ճանապարհը, թէպէտ Աութերը ցանկալով խաղաղութեան, և այդ մասին երևումք չափից դուրս ներողամիտ, բայց հակառակ կարծիք ունէին Հեսսենֆայի Աստուածաբանքը և կամնումքին, որ և նորա, որ յետոյ ընդունելու էին Աուգսբուրգեան դաւանութիւնը, յատկապէս մասնակից լինին հաշտութեան դաշին: Նոյն կարծիքը ունէին և Լիւնսբուրգեանքը. Աւստրանոս Բեգիտը թուղթ գրելով Անդգրաֆի վերայ յայանումքը, թէ ստաջարկած հաշտութիւնը կեղծաւոր, խաբիւսայ և աւելի վատթար բան էր քան թէ նոյն իսկ պատերազմը: Բայց Աութերը աղաչեց, որ կայսրընտիր իշխանը, մի լաւ կոչաւ, նամակ գրէ Պաշտակիցների վերայ և յիշեցնէ նոցա, թէ ինչպէս ողորմած և թոյլտուող էր կայսերական մեծութիւնը, Սորա հակառակ Անդգրաֆի փիլիպպոսը խոնդրեց և աղաչեց, որ Սաքսոնիայի կայսրընտիր արքայազը թոյլ չը գտանվի Նիւրնբերգումը, ուր կատարվումքին հաշտութեան պայմանագրութիւնքը: Եւ դիւանապետ Բրիւքքըրը գրումք կայսրընտիր իշխանին, թէ Աութերը այլապէս կը դատէր, եթէ կարողանար բանի խորքը աւելի մտա քննել, և թէ նորա կարծիքը մերժումքին Աւստարանականների բոլոր գետպանքը: Այս տարածայնութիւնը պատճառ տուեց և մի կծանոնողական անհամեստ նամակագրութեան Սաքսոնիայի կայսրընտիր Յովհաննէսի և Հեսսենֆայի Անդգրաֆի մէջ. բայց բարեխառն կարծիքը յառաջ տարվեցաւ. հաշտութեան գաշը Նիւրնբերգի մէջ 1532 թուականի յուլիսի 23ին կապվեցաւ այն պայմանով, որ զորան մասնակից լինէին նորա միայն, որ յառաջուց խստովանել էին Աուգսբուրգեան դաւանութիւնը: Երկու կողմերը ևս խոստացան, որ մինչև զայնց եկեղեցական ժողովը թշնամարար չը յարձակվին միմեանց վերայ: Աւրեմն այս հաշտութիւնը չունէր ոչ-

ինչ այլ խորհուրդ, եթէ ոչ յայտնի կայուցանելու այն իրողութիւնը, թէ Կաթողիկէանք զեռ ևս չունէին զորութիւն վերայ յարձակվելու, բայց Պրօսեստանտանքը անհամարձակ լինելով և խիղճ կրելով չը կամէին վերայ յարձակվիլ, Յարսոնիայի կայսրընտիր թագաւորազը իւր բարերարութենից կարծումէր, թէ այդ հաշտութիւնը պիտոյ է ստուգապէս տեղողական լինի. բայց Լանդգրաւֆ փիլիպպոսը տեսանումէր այդ գործի մէջ ամսթ և նախափնը Պրօսեստանտանտների համար, Հաշտութիւնը այդու ամենայնիս մերժելի չէր բոլորովին, պատճառ որ գորանով արգելած չէր նոր դաշնակիցներ ճարել, այլ հրամայած էր զագարեցնել թշնամութիւնքը մինչև եկեղեցական ժողովի լինելը, կամ գոնեայ մինչև մի հեռաւոր ժամանակ, Եւ կաթողիկէան կողմից այնքան հաւան չէին այդ հաշտութեանը, ինչպէս հաւան չէր Լանդգրաւֆ փիլիպպոսը և նորա կուսակիցքը, Եւյնու ամենայնիս այդ հաշտութիւնը, օգոստոսի 2ին Բեգենարուրգի տէրութեանական ժողովի մէջ, հաստատվեցաւ կայսերական բանով:

Ը ուստով սորանից յետոյ (1532 թուակ. օգոստոսի 16) վախճանեցաւ Յարսոնիայի կայսրընտիր իշխան Յովհաննէսը. նորա որդի և յաջորդ Յովհաննէս Գրիգորիկոսը ևս աւելի ջերմեռանդութեամբ սիրումէր մարքած ուսումը, բայց այժմ կարելի էր համարձակապէս յոյս ունենալ, թէ շուտով չի խախտի խաղաղութիւնը, մանաւանդ որ կայսրը քաջ գիտէր, թէ նա չէ կարող այժմ այնպէս հեշտ թափ տալ իւր վիզը Պրօսեստանտանտների ձեռքից, ինչպէս արած էր Տաճիկների հետ, մտերու մտ յաղթելով նոցա: Եւյն նեղութիւնքը և փնաստառութիւնքը որոնց Պրօսեստանտքը ունէին համբերելու տէրութեան ծայրագոյն դատարանի կողմից, որ ամենեին անձնատուր էր Կաթողիկէանց օգոսին, պատճառ տուեցին արդարացի դանդաւանների, բայց Պապը լաւ համարեց կեղծաւորվիլ այժմ, որպէս թէ կամք ունէր ինքը եկեղեցական ժողով աննել, և սորա մասին առաջարկութիւններ և կանոններ ուղարկեց իշխանների պալատները, Լութերը այս թղթերը, մի մեղմ և հաշտողական հոգով գրած յառաջարանութեանով, հրատարակեց սոցազրութեանը. բայց այնքան ևս սաստիկ կերպով յարձակվեցաւ Յարսոնիայի դուքս Գեորգի վերայ, ըստ որում կամենումէր սա Ընհալթեան թագաւորազները յետ պահել աւետարանական ուսումի խոստովանութեանից, և ասած էր Վիտտըրբերգի մասին թէ «այդ ծակիցը ոչինչ լաւ բան չէ կարող բղիտել, Եւյն այդ դուքսը 800 մարդ արտարեւել էր Լէյպցիգը քաղաքից, որովհետև չէին կամեցած հնազանդել նորա բանաւորական հրամանին, վկայագիր անձուլ իւրեանց խոստովանահօրերից, թէ հաղորդվել էին Յուրը Ընթրիբին մի տեսակով (այսինքն հոշով միայն), Լութերը

միթմարական թուղթ գրելով արտաքսածնների վերայ, թողլ ասեց իւր փոթորկային բարկութեանը յառաջ վաղել. այդ թղթի մէջ ասած էր. «Եթէ մեր ուսումը Աստուծոյ ճշմարիտ բանն է, ինչպէս որ տարակրոյս չունինք մեր, ապա և այն մասին կարող չենք տարակուսել թէ Գեորգ զուբար իւր բոլոր գործակիցների հետ միասին դասապարտվելով մեր ատաջն, պիտոյ է կործանի զժողովի անգունդքի մէջ, որ յախտնական կրակի մէջ այրվի որպէս մի զժողովական հրայրեացք» :

Ալէքսանդր Քարնեղե կախկողտը, որ Ալեմնա եօթներորդից յետոյ, 1534 թուականին, Պալաւ երրորդի անունով յաջորդեց պապական աթոռի վերայ, իւր քահանայապետութեան սկզբումը ցոյց ասեց խեղճն, որպէս թէ շատ ցանկութիւն ունէր մի եկեղեցական ժողով աննել և իւր պապական պալատը բարեկարգել. բայց այդ բանը խափան չեղաւ նորան, իւր երկու թռռները, 14 և 16 տարեկան տղայք, կարգինալ չինել. Ակեղեցական ժողովի մասին պատրաստութիւն տեսաւ մի այնպիսի միջոցով, երբ կարող էր ապահով լինել թէ զորանց ոչինչ չէ յատաջանալու. Կորսա նուիրակ Քերզերիտը այս մասին ծանուցումն աննելով զերմանական պալատներին, եկաւ և Ախտորներեզ, և Լուծերի հետ նախաձաշկի վերայ խօսակցութիւն ունէր, որից Լուծերը տեսաւ պարզապէս, որ Պապի գլխաւորութիւնը ժողովի մասին, ոչինչ հաստատ բան չէր, Պրահաստանտեաները 1535 թուականի ղեկաւ. Յին խորհուրդ կատարելով Շմալքալդըն քաղաքի մէջ, վերահաստ եղան, որ հաշտութիւնը չէր կարող տեղական լինել. պատճառ, այն անդադար կասկածները սրբտերի մէջ և տերութեան ծայրագոյն դատարանի շարունակ կողմնապահութիւնը միշտ բորբոքումին երկու կողմերի թշնամական հողին. Այս պատճառով աւելի ընդարձակութիւն տուեցին Շմալքալդեան զաշնաորութեանը և վճռեցին, որ ղինաւորվին. բայց որովհետեւ կայսրը զրազած էր մի նոր պատերազմով Ֆրանսիայի թագաւորի ֆրանց ասաջինի հետ, և կամք չունէր այժմ կոխ բանալ Պրահաստանտների հետ, վասն այս պատճառի մի քանի ժամանակ զաղարեցին զէնքը, Բյնու ամենայնի Պրահաստանտները հաւարվեցան Ֆրանսիայի քաղաքի մէջ, կարգադրեցին Շմալքալդեան զաշնաւորութեան ծախքը և նորոգեցին նորան ևս 10 տարի ժամանակով. բայց Պապը այժ հրատարակեց, որ ժողովը լինելու է զայնց տարուն (1537 թուակ. մայսին) և Մանտուա քաղաքումը. Եւ որովհետեւ այս ժողովը, ինչպէս երևումը, պիտոյ է զլուխ զար, այս պատճառով Մաքսնիայի կայսրը նախքը պատուիրեց իւր աստուածարաններին կշտադատել և շարակարգել Լատաի մասունքը, որոնց վերայ պիտոյ էր հաստատ մնալ. Բայց

մի երկրորդ պայտական կոնդակի մէջ սեպտ. 23ից ասած էր, թէ եկեղեցական ժողովի խորհուրդը պիտոյ է այն լինի, որ ընտելնջ առնի Ղուկեանի հերձուածը, և սորանից բացսլայտ էր ահա, թէ պրօսեստանտական աստուածարաններին չէին սպասում ժողովի մէջ, Պարագայքը այսպէս լինելով, ի հարկէ տեղիք չը կար մտածելու, թէ հաւաստի վեճերը կարող էին աւարտվիլ խաղաղութեամբ, Ղուկեանը, որի կարծիքը խնդրած էին այդ ժողովի մասին, ասաց պարզապէս. «այո՛ լինելու է մի ո՛չլոս և արհամարհելի ժողով»։ Եւս պատճառով Պրօսեստանտները աւելի ջերմացան և միարանջեցան, միւսանգամ խորհուրդ կատարելով Ըմալքաղըն քաղաքումը 1537 թուականի փետրվ. 7ին, ինչ տեղ ներկայ էին բայ ի զաշնարութեան երկու գլխաւորներէնցը այլ զուրսեր և զբաժներ, քաղաքների փոխանորդքը և 42 պրօսեստանտական աստուածարանք. այս տեղ միարեան յայտնելին Պապի նախրակ Արաստոսին և կայսերական տեղակալ զիւանսպետին, թէ նոցա հարկաւոր չէր մի պայտական ժողով, Բայց մինչև Պրօսեստանտքը հրատարակած էին մարդիկ ուղարկել եկեղեցական ժողովի մէջ և այս մասին իւրեանց անձը արշարացրել էին հրապարակաւ, մի լատներեն և գերմաներեն գրուածով մարտի 5ից, այսպիսի մակագրութեամբ «Պատճառքը թէ ինչու համար Եւետարանականքը հրատարակված ժողովը կասկածելի էին համարում և անօգուտ հասարակաց միութեան համար», սորանից յառաջ Ղուկեանը, 1537 թուակ. յունվարի 5ից, Վայսրընտիր Յովհաննէս Գրիգորիկոսի պատուէրը կատարելով մատուցել էր նորան կարգի գրած Հաւատամասունքը, որ պարունակումէին ամենայն բան որի մասին կարելի էր թողլտուութիւն, և որի վերայ պիտոյ էր հաստատմաւ, ինչպէս ևս զնոր գործը։ Արովհետև Ղուկեանը տանջվելով քարացառութեամբ, ստիպված էր թողուլ Ըմալքաղըն քաղաքը, այս Հաւատամասունքի վերայ ոչինչ բանախօսութիւն չեղաւ միւսանգամ աստուածարանների կողմից. բայց Մելանքթոնը ստորագրելով այդ հաւատամասունքը, յուկեացրեց իւր անունով այս ծանօթութիւնը, թէ նա իւր կողմից յիշեալ մասունքը համարում օղիւղ և քրիստոնէական, բայց Պապի մասին կարծումէր այսպէս, «Իթէ նա թողլ կը տոյ քարոզել աւետարանը, ապա խաղաղութեան աղագաւ և այն քրիստոնէից հասարակաց միութեան համար, որ Պապի իշխանութեան տակ էին և կը կամենային մեալ, թող մարդկային իրաւունքով հաւատակիցների կողմից թողլտուած լինի Պապի գերակայութիւնը իւր եպիսկոպոսների վերայ», բայց օրովհետև Ղուկեանը խկապէս այս խնդիրը Պապի մասին շատ սուր և աստիկ կերպով հարցաքննած էր, այս պատճառով Վայսրընտիրը պատու իրեց Մելանքթո-

նին մի առանձին գրուածի մէջ խօսել Պապի իշխանութեան և զբը-
խաւորութեան վերայ. Եւս յանձնարարութիւնը կատարեց Միլան-
քթմանը, բաց զնելով իւր անձնական սրտի վկայութիւնը և ամենեին
ուշադիր լինով Եւեւարանականների իմացութեանը, վկայութեամբ
Սուրբ գրքի և աշխարհի մէջ եղած անցքերի յոյց տուեց թէ Պապի
առաջնութիւնը և եպիսկոպոսների իրաւունքը չէ գրած աստուածային
օրէնքով. Որովհետեւ Եւուգրուրպեան տերութեանական ժողովի մէջ
1530 թուականից, զեռ ևս հաշտութեան յոյս ունէին Պապի հետ,
վասն որոյ գիտութեամբ խօսք չէր եղած Պապի առաջնութեան վե-
րայ, ոչ դաւանութեան մէջ և ոչ պաշտպանողական գրուածի մէջ.
բայց այժմ վերահասու լինելով թէ անկարելի էր այսուհետեւ հաշ-
տութիւն հաստատել Պապի հետ, համարեցին, որ պիտոյ է ամենեին
քակտովիլ (բաժանովիլ) նորանից, որ և կատարվեցաւ Բնչպէս Շմալ-
քարդեան Հաւատաստանքի, Նոյնպէս և նորա յաւելուածի մէջ. Եւս
գրուածը աւելի որոշարար և ճշդապէս բացայայտուեալ՝ հակառակու-
թիւնը զէպ ի կաթօլիկեան եկեղեցին, և պրօտեստանտեան եկեղեցու
Բնքնիշխանութիւնը և անկախութիւնը, քան թէ Եւուգրուրպեան գա-
ւանութիւնը, միայն թէ նա ստորագրված է ոչ թէ տերութեան փո-
խանորդների ձեռքով, Բնչպէս սա, այլ պրօտեստանտեան Ետուա-
ծարանների ձեռքով, որովհետեւ, Բնչպէս յառաջուց գիտաւորութիւն
կար, պիտոյ է զրվէր պապական աստուածարանների առջև, Բայց
սորանով կատարելապէս զլուխ բերած ազատութիւնը պապականու-
թեանից շնուած մի նշանաւոր դարագլուխ պրօտեստանտեան եկեղեցու
յառաջադիմութեան նկարագրի մէջ. սորա համար Շմալքարդեան Հա-
ւատականները արդարացի պատճառով բնդուելած են նորա գաւանա-
բանական զրբերի մէջ, Եւսն խոստովանութիւնը իւր սրտի մէջ, թէ
նոր եկեղեցին հրապարակաւ ստացել էր իւր Բնքնիշխանութիւնը, թէ-
պէտ առանց մշտնջենաւոր ապահովութեան, շատ օգտակար ներգոր-
ծութիւն ունեցաւ որպէս եկեղեցու ներքին կարգադրութեան, Նոյն-
պէս նորա արտաքին բնդարձակութեան վերայ, Լուծելը մի զարմա-
նալի զործականութիւն ցոյց տալով, այս բոլոր բաների մէջ ազդու-
մէր որպէս շարժողական հոգի, ամենայն կողմից դիմումէին նորա մաս,
Երբեմն քարոզիչներ խնդրելով, Երբեմն ստացանների վերայ զանգա-
տելով. նա կարող չէր այնքան պիտանի մարդ ձեռք բերել, Բնչ-
քան որ պահանջուեալին, Հոռմեան կաթօլիկեան եկեղեցու հետ կրտ-
րելով կապակցութիւնը, զժուար էր օրինապատշաճ կերպով բնտրել
և ձեռնադրել աւետարանական կարգաւորներ, Սոցանից շատերը ստա-
ցած էին իւրեանց կարգը յառաջուց, բայց նորերը չէին կարող Նոյն
կերպով ձեռնադրութիւն ստանալ, ըստ որում եպիսկոպոսքը հրամար-

Վուժին այդ իրաւունքից, իսկ պրոտեստանտական եկեղեցին Հաստատված ու ընդունված լինելով ահա, հարկ էր նորան ինքնին հոգարարձու լինել և ընտրել իւր սպասաւորքը և այսպէս գործ զնել քրիստոնէական եկեղեցու նախնի իրաւունքը ընտրելու և ձեռնադրելու իւր հոգեւորքը, Այս գործը պահաս խորհրդաւոր բան չէր, քան թէ եկեղեցու արտաքին կառավարութեան յանձնառութիւնը տերութեան կողմից, Այն երկու զլիսաւոր լինելը, որոնցով պրոտեստանտական եկեղեցին մինչև այժմ կապած էր հռոմեական քահանայապետութեան հետ, գործնով պատասխեցան բոլորովին. իսկ Առթեւը կամենալով փարատել ամենայն տարակոյս աւետարանական ձեռնադրութեան իրաւունքի մասին, 1533 թուականին դուրս թողեց մի գրուած կաթողիկոսների ծակամուտ պատարագի և արևդանների ձեռնադրութեան վերայ, լուսափայլ կացուցանելով հարցական խնդիրը, Արդարև շատ դժուարութիւն կար աւետարանական եկեղեցու ընթացքը կանոնաւորելու պատշաճապէս. հին անկարգութիւնը այնքան իւր արմատացած էր, որ չէր կարելի խկոյն վերաջնել նորան, և այնպէս հինը խտանելով նորի հետ, երևուժին յաճախ շատ անսովոր և օտարատեսիլ սպեղութիւնք: Փոքր առ փոքր աւետարանական աշխարհներումը զրկեցան եկեղեցական կարգեր, իսկ և սոքա բոլորեքեան արած էին շատ խնայարար և կաթողիկոսական արարողութեանն էրից յետ պահելով այնքան բաներ, որ ինչ և իցէ կերպով յարմարվուժին նոր ուսումին:

Ինչևէ այս բաները լինուժին, պատերազմատեր ֆրիլիպպոս Անդգրաֆը 1534 թուականին մի ամբողջ աշխարհ գրաւել էր պրոտեստանտական հաստի համար. Այս բոլորներգիտյի դուրս Այլիփը արտաքսված էր իւր աշխարհից Շվարիտյի դաշնաւոր քաղաքների ձեռքով, և կարոյոս հինգերորդը մասնաւորել էր այդ գրսութիւնը իւր եղբայր Ֆերդինանդոսին: Արիստիքոս Անդգրաֆ ֆրիլիպպոսը ոչ թէ միայն ջաւելով Այլիփի իշխանի վերայ, այլև մտածելով մի նոր սպարեղ պտորատել պրոտեստանտական հաստին, պատճառ ստացաւ ինքնագլուխ, իսկ զստահանալով պրոտեստանտական դաշնաւորների զորութեան վերայ, մի համարձակ հնարք գործ զնել և միասնեամ յետ լեքել զուքսը և հաստատել իւր աշխարհի մէջ. Երեք շարաթի մէջ զլուխ եկաւ գործը (1534 թուակ. մայիս ամսին), ֆրիլիպպոսը յաղթութիւն գտանելով Աուֆֆըն քաղաքի մտ, մայիսի 13ին, կապվեցաւ հաշտութեան դաշը կաղանու (յունիսի 29ին), որի հիման վերայ թեպէտ Արքիդուքս Ֆերդինանդոսը որպէս հռոմեական արքայ ընդունվեցաւ. կայսրընտիր Յաքսոնիտյի կողմից, իսկ Այլիփընքեան աշխարհի մտին ստացաւ միայն լոկ կալուածատեր իշ

խանի անուն, Այդ համարձակ ձևնարկութեան այդքան բարեխաղ
վերջը ի հարկէ շատ ձեռնաու գտանվեցաւ պրտեստանտականութեան
բանին: Դուքս Ալբրիտը գալոց տարին ամենայն ջերմութեամբ սկսեց
ներս բերել Քեֆորմացիան իւր ժառանգական աշխարհների մէջ և
չը հանդիպեց ոչինչ երեւելի ընդդիմութեան, ըստ որում Գերդի-
նանդոսի թագաւորութեան օրերումը ահա, ժողովրդի փոխանորդքը
խոստովանած էին յայտնապէս, թէ ժողովրդի խաղաղութիւնը կախ
էր այն բանից, որ Աստուծոյ մարտը և պարզ բանը քարոզի ստանց
մարդկային շահանդրութեան և իմաստակութեան, և այս պատճա-
ռով Անտանցի, Աուգստուրգի, Շպէյերի, Արմսի և Ախրցուրգի
եպիսկոպոսքը որոնց վեճակներին պատկանումը և Ախրսըրերգը,
թէ և ընդդէմ ներգործեցին, բայց չը կարողացան քամակ դառնել
վերաբերեցեան ժողովրդի մէջ, Մինչև այս արիական ձեռնարկու-
թիւնը կատարվումը հարաւային Գերմանիայումը, Արևմտեան Երկրի
մտանգաւոր խուփութիւնքը Միւնստերի մէջ գրուեցին Անդգրաֆի
բոլոր ուշադրութիւնը: Այս մտրութեամբ հոգեքը տեղափոխվելով Նի-
զըրլանդիայից դէպ ի Միւնստերեան սահմանը, փնտասկար էին Աւետա-
բանականներին այն պատճառով, որ սոցա հակառակորդքը շիթու-
մին սորանց այն միւսերի հետ: Այս կրկնակնուք մտրեալ հո-
գիքը խոստովանումին Հոգւոյն սրբոյ անմիջական ներշնչութիւնը և
Քրիստոսի մտակայ դալուսքը, մերժումին երեսաների մկրտութիւնը,
պահանջումին, որ հասարակաց լինին գոյր և կանայք, որ ամբարշտ
մարդիկ ընտելնջ լինին և մանաւանդ թէ ամենայն իշխանութիւն որ
դրած էր քաղաքական կարգով: Ի զուր աշխատեց Անդգրաֆի ֆի-
լիպպոսը նախ և յառաջ քաղցրութեամբ հանդիպել նոցա, և այս
պատճառով հարկ էր սուրը ձեռքին վերջացնել նոր թագաւորութիւնը
„Միոն“ (1535 թուակ. յունիսի 24ին), Անդգրաֆը անդադար աշ-
խատումը նոյնպէս փարատել այն երկպառակութիւնը որ կար Ախո-
տըրերգեան և Շվեյցեան Քեֆորմատորերի մէջ Սուրբ ընթրիքի ուս-
ման մասին, և նորա աշխատութիւնքը արդիւնաւոր գտանվեցան գո-
նեայ այն բանով, որ կապվեցաւ Ախտըրերգեան դաշնաւորութիւնը:
Աերին Գերմանիայի տերութեան քաղաքները Ստրասբուրգ, Ան-
տանց, Լինդաու և Մեմինգըն, որ Աուգստուրգումը 1530 թուա-
կանին հաստատ մնացած էին իւրեանց Յփնջլիական դաւանութեան
վերայ, բայց տեսանելով թէ պատերազմի մտանդը զորանում, ցան-
կացան միաւորվել շմալքալգեան դաշնաւորութեան հետ, 1532
թուականին ահա ընդունված էին որպէս մասնակիցք այդ դաշնաւո-
րութեան, ստորագրելով Աուգստուրգեան դաւանութիւնը: Բայց, ըստ
որում ցանկութիւն կար գլուխ բերել մի աւելի հիմնաւոր և ընդար-

ձակ միաւորութիւն Լուծերականների և Յփնդլիականների մէջ, այլև ըստ որում հարկաւոր էր անտեղի կաշուցանել այն նախատնօրր, որպէս թէ Սուրբ Հնորոգութեան խորհուրդը անպատճառ էր, Սորասուրդի մէջ մանաւանդ ձեւորուեցաւ մի միջնորդական դասանութիւն, սահմանադրելով մի ճշմարիտ և հոգևոր ճաշակունի քրիստոսի մարմնի, որ և միաւորելի էր Լուծերի բոլոր ձևերի հետ և խոստովումը նոցանից այն բանով միայն, որ խոստովանումը թէ Հաստատուողքը միայն կարող էին այդպիսի կերպով ճաշակել քրիստոսի մարմնը, Ըյս դասանութեան վերայ Բուշեր և Կասիսո աստուածաբանքը հիմնեցին իւրեանց խորհուրդը որ էր, Ախտընրերգեան և Շփէյցեան քրիստոնեալքը միաւորել, այս բանիս ամենայն զօրութեամբ ոգնական էր փիլիսոփայ Լանգքրաֆը, Բուշերը և Կասիսոն Ախտընրերգի մէջ ներկայ լինելով թողլ տուեցին որ ճիշդ կերպով փորձեն ու քննեն նոցա ուղղահաստութիւնը, և ստորագրեցին Մեյլանթիմոնի ձեռքով շարագրած մի դաշնաւորութիւն (1536 թ. մայիսի 25ին), որ գրած էր ամենին Լուծերի հոգով և միաւորելի էր վերին դերմանիպի յիշեալ աստուածաբանների խոստովանութեան հետ, նոցա յատուկ արուեստական մեկնաբանութեամբ միայն, Եւ որովհետև Լուծերը չը հակառակեց այս մեկնաբանութեանը, ուրեմն և Շփէյցեանքը անկասկած ստորագրեցին այն դաշնաւորութիւնը և հակառակող կողմերը համարվեցան հաշտված, Բայց Լուծերը վերահաստիւնելով, որ այս միաբանութիւնը չէր այժմ աւելի իրաւ և ճշմարիտ քան թէ յատաբուց, այլև կասկածանք յղանալով դեպի փառկասիրտ Մեյլանթիմոնը, նորոգեց վեճը շատ սաստիկ, այսպէս խօսելով. « ըստ որում իմ մի սորս ահա գերեզմանի մէջ է, ապա թող հաստատ մնայ իմ վկայութիւնը ընդդէմ այն մոլորամիտներին և հոգեկորոյսներին ». Բայց իւր կենդանութեան վերջին օրերումը, երևուումէ, թէ ինքը Լուծերը հասկացաւ, որ այս բանի մէջ շափազանց է գտանված.

Թեւեկտ այս, ախտարորոք կերպով արած, վիճախօսութիւնքը Սուրբ ընթերթի մասին վերջապէս պատճառ տուեցին աւետարանական եկեղեցու Բաժանմանը, և գործնով փոքր արդելք չեղան պրօտեստանտական եկեղեցու վոյելչապէս աճեցողութեանը, այդու ամենայնիւ այն նորոգեալ ուսումը նախապէս տարածվեցաւ Գերմանիայի և նորս սահմանակից աշխարհներումը, Բանդընրուրգիայի Կայսրընսիթթազաւորալը գեուես իւր հօր կենդանութեան ժամանակին յօժարութիւն ուներ դեպի աւետարանական ուսումը և Հեսեննեան Լանդգրաֆի և Լուծերի քաջալերութեամբ հաստատված էր այս յօժարութեան մէջ, Երբ որ Յովակիմ առաջինը, որ թշնամի էր Բեթոր-

մաշխային, վախճանվեցաւ (1535 թուակ. յունիսի 11ին), Յովակիմ՝
երկրորդը, որ թէպէտ յոժարամիտ էր զէպ ի Ռեֆորմացիան, բայց
իւր թիւր դատարարակու թեան պատճառով զժուարութեամբ միայն
կարող էր ազատվիլ իւր յառաջուց ստացած պապական գատողու-
թեաներից և մուրրութեաներից, ջոյց տուեց իւր աւետարանատիրու-
թիւնը նախ և յառաջ այն բանով, որ թոյլ տուեց աւետարանական
քարոզիչներին ներգործել իւր աշխարհումը, այլև Հաղորդութեան
խորհուրդը կատարել Հաջի և զինու տեսակով. բայց նորա առաջին
եկեղեցական կարգադրութիւնը որ շարագրել էր մի արեղայ, որ և
ինքը կայսրընտիր իշխանը ուղղած էր իւր յատուկ ձևագով, պարու-
նակու մէր մաքուր աւետարանական սահմանադրութեան չեա և ա-
մենայն կերպ պապական բաներ: Ոչ յառաջ քան թէ 1539 թուա-
կանի Հոկտ. 31ին, Յովակիմ՝ երկրորդը ճաշակելով տէրունական սե-
ղանը Քրիստոսի սահմանադրութեան պէս, վճարար խոստովանեց ա-
ւետարանական ուսումը, որ այնուհետև Բուանդընբուրգի աշխարհնե-
րումը զարձաւ թագաւորեալ Արոն: Ենչն իսկ Սարսնիպի գուքս Գե-
որգը, որ ջերմեանդ կաթողիկ էր, 1539 թուականին մնանելով
անդաւակ, նորա աշխարհքը ևս զբաւիւցան զէպ ի Ռեֆորմացիայի
կողմը: Գեորգի եղբայր Հենրիկոսը սիրելով նորոգեալ ուսումը, սո-
բան յառաջագինութիւն էր տուած իւր փոքրիկ սահմանումը, այլև
միտարվել էր շմալքարդեան զաշխարհութեան հետ: Երգարեւ, թե-
պէտ գուքս Գեորգը իւր իշխանական ակտորը կամեցած էր թողուլ
իւր եղբորը այն պայմանով, որ սա հաստատա մնայ հին կրօնի վերայ,
այլև միտարմիլ Ռեֆորմացիայի հակառակորդների զաշխարհութեան
հետ, բայց գուքս Հենրիկոսը իւր երկու իշխանապետութեան միասին
զանց արեց այս պայմանադրութիւնը, և Գեորգի գիտաւորութիւնը,
որ էր, իւր աշխարհքը կտակով յանձնել Քերպինանդոս թագաւորին,
անկտարա մնաց, նորա մահը շուտով վերայ հասանելով: Եւ երբ որ
Հենրիկոսը Գեորգի մահուց յետոյ ներս մտաւ Գրեզըն քաղաքի մէջ,
պալատի շողմարարքը, որ յառաջուց երգումն էին կերած թէ աւե-
լի լաւ էր նոցա քքսոր գնալ, քան թէ հրաժարվիլ իւրեանց հին
հաւատից, մեծ ուրախութեանով ընդունեցին նորան որպէս իշխան և
գուցէ թէ որպէս իւրեանց հաւաստի բարեկարգութեան պատճառ: Արու-
հեան ժողովուրդը վաղուց ահա իւր սրտի մէջ վճաւ էր Ռեֆորմա-
ցիայի ընդունելութիւնը, այս պատճառով զժուար չէր ներս բերել
նորան, թէպէտ և ընդդէմ էին նորան ժողովուրդի փոխանորդքը: Բայց
և Քեռնի կայսրընտիր իշխանութեան մէջ երևումը թէ մարքած ու-
սումը պիտոյ է յառաջադէմ լինի և ոչ թէ միայն այս տեղ և այն
տեղ ժողովուրդի մէջ, այլ և նոյն իսկ տեղական գերագոյն կառավա-

բութեան մէջ . զոր օրինակ Ղալսարընտիր իշխան Հեռմանը Նոյն և Ղուաֆր Ախտան սկզբից արդէն հաստատ յստարութիւն էր ունեցած զէպ ի աւետարանական հասար և յայանապէս խոստովանած էր նորան . նորա եղբայրը, եպիսկոպոս Մինասրի մէջ , Նոյնպէս սիրով կուպած էր Ռեֆորմացիայի հետ, և որովհետեւ իւր համարիչ հպատակքը չէր կարող պաշտպանել, ցած զրկեյ իւր արժանաւորութիւնը, Սորա հակառակ, Ղալսարընտիր Հեռմանը համարձակապէս զեմուզեմ՝ զուրս եկաւ հարածասէր կլերիկոսներին : 1536 թուականին ահա մի առաջարկութիւն էր արած, յաղթող կայուցանելու Ռեֆորմացիան իւր աշխարհի մէջ, և այս խորհրդով նամակախօսութիւն բացեց Նոյն իսկ Մելանքեմոսի հետ, ինչպէս յտուջ ունեցած էր բուցերի հետ : 1543ին հրամայեց նա ապել և հրատարակել մի ռեֆորմատական առաջարկութիւն, որ առհասարակ համաձայն էր աւետարանական ուսմանը, Ի հարկէ Պապը և կլերիկոսքը զայրացած էին արքեպիսկոպոսի գիտաւորութեան վերայ . ոչինչ պակաս ընդդէմ՝ էին նորան և եկեղեցական գլխաւորքը և համալսարանը . երբ որ եկեղեցական գլխաւորքը արքեպիսկոպոսի սահմանադրութիւնների վերայ բողոքեցին զէպ ի Պապը, Արքեպիսկոպոսը արդարացրեց իւր անձը պարզ և արժանաւոր կերպով, և բողոքեց զէպ ի մի ազատ, քրիստոնէական ընդհանուր կամ ազգային մողով, Աւերջապէս եկեղեցական գլխաւորքը հրամարվեցան հնազանդել Արքեպիսկոպոսին, և շմայլալիկան գաշնաւորքը ոչինչ ձեռնառուութիւն չարեցին իւրեանց մեծակշիւ գաշնաւորին բաց ի գանգատելուց եկեղեցական գլխաւորներին չարախօսութեան վերայ, զէպ ի աւետարանական եկեղեցին : Կնքը Լուիսերը շատ անհաւան էր Արքեպիսկոպոսի ռեֆորմատորական առաջարկութեանը, ըստ որում շատ բան նորա մէջ ընդդէմ էր նորա սրտին և մի քանի բան ևս յես էր պահած կամօխիկեան հասկացողութենից :

Այսպէս ահա շատ իրողութիւնք հանդիպեցան միմեանց, որ ճընչին այն ռեֆորմատորական հոգին որ զարթել էր Բէշն գետի սահմանումը : Բայց մի ուրիշ տեղում խորհրդաւոր յաղթութիւն գտաւ նա, երբ որ Նաուսբուրգի հոգեւոր վիճակը 1541 թուականին առաջնորդ չունէր, եկեղեցական գլխաւորքը շտապով եպիսկոպոս ընտրեցին իւրեանց առաջերեց Կալիս ֆոն Փիլլուզը, որ այնքան ևս ուսեալ, ինչքան որ քաղցրահոգի մարդ էր . բայց Սարսնիայի Ղալսարընտիրը միտեց այդ ընտրութիւնը և անտես արեց եկեղեցական գլխաւորների պատասխանատուութիւնը, որպէս թէ կալսարընտիր պալատականութիւնն էր պաշտպանել միայն այն վիճակը որ անմիջապէս կախ էր տէրութենից, Ղալսարընտիրը վկայ բերելով Անգլիայի, Դանմարքիայի և Շվեդիայի թագաւորների օրինակը, այլև բոլոր Պրոտես-

տանանքի ընդհանուր վերահաստիճանը, յայն տուեց թէ վնասակար էր եպիսկոպոսական իշխանութիւնը. նա մտածուեալք նոյնպէս հեռացնել եկեղեցական գլխաւորքը, բայց միտ գնելով Մելանթոնի գրած և Ղուծերի ստորագրած կարծիքին յետ քարշլեցաւ այդ գործից, այդ կարծիքի մէջ սասած կար, թէ եպիսկոպոսի և եկեղեցական գլխաւորների արժանաւորութիւնը կարող էր պիտանի լինել, հոգեւոր դատարաններ բազկացնելու համար եկեղեցական իրաւունքների և պատուի վերաբերեալ վէճերի մասին, այլև երիտասարդ հոգեւորները հարցաբննելու և ձեռնադրելու, հոգեւոր խորհուրդ կառարելու և եկեղեցիներին քննողական այցելութիւն առնելու համար: Այսպէս ընտրելով անտես առնելով այդ ընդդէմ պատճառները, միտ չը գնելով և կոյսրի անհաստատութեանը այդ բանին, հրատիւրեց եպիսկոպոսանալու նիկողայոս Մատթիոսներ որ և 1542 թուակ. յունվարի 20ին Միտաւեր քահանայի թողակով ներս բերվեցաւ և Ղուծերի ձեռքով, ներկայութեամբ շատ հոգեւոր տեսուչների, ձեռնադրվեցաւ: Մի պաշտօնաւոր կարգվելով կայսրընտիր իշխանիցը, յանձն առաւ այն հոգեւոր վիճակի աշխարհական կառավարութիւնը: Այս բոլոր անցքը, որ շեղաւ առանց փոքր ի շատե՛ր բանաւորութեան, արիական հոգի և ապահովութիւն տուեց աւետարանական կողմին, այնպէս որ նոցա հակառակորդքը ա՛հ և երկիւղ ստացան և չարաւորեցին իւրեանց անհամեստ պահանջողութիւնքը: Բրաունշվեգիայի գուքս Հենրիխսը և Պրոսեստանտեան իշխանաւորքը, Ղուծերի գործակցութեամբ, սաստիկ գրուածներ արձակեցին միմեանց ընդդէմ, արդարև անտես առնելով ամենայն իշխանական և մարդկային արժանաւորութիւն, և երբ որ Հենրիխսը ա՛հ տուեց թէ աւերելու է Գողթրի սահմանը, Սաքսոնիայից և Հեսսենիայից զորք տանելով յարձակվեցան նորա վերայ և հալածեցին նորան իւր աշխարհից (1542 թ.), Գրեթէ թաղաւորութեան բոլոր քաղաքների մէջ վճռապէս յաղթող հանդիսացաւ պրոսեստանտեան կողմը: Աշխարհական իշխանաւորներից Բաւարիայի գուքսը միայն մնացած էր պապականութեան համար որպէս սիւն ամբուրութեան, բայց և սա գեուարութեամբ կարողանուեալք ընդդիմանալ իւր յատուկ ժողովրդի և նորա փոխանորդների յոժարամտութեանը զէպ ի աւետարանական ուսումը: Նոյն իսկ թաղաւոր Պերդինանդսը յորդորվելով և համոզվելով Ղուծերի գրուածներինց և իւր խոստովանահօր օրինակից, որ մեռանելու ժամանակը զգոջացած էր իւր եկեղեցական վարքի ու գործի վերայ, համարելով զորանց խաբուութիւն, խոստացաւ թէ մի տէրութեանական ժողովի մէջ խորհուրդ կառարելով ազգի փոխանորդների հետ, կարգի գնելու է կրօնական վէճքը: Այն ստիպողական հարկը միայն, որի ներքոյ գտանվուեալք Հարսուր-

գեան իշխանաւորների տունը, չը նայելով այդ իշխանաւորների որ
և իցէ անձնական յոժարութեանը, այլ միտ գնելով նոցա կապա-
կցութեանը Սպանիայի, Բելգիայի և Իտալիայի հետ, այն ստրկոգրական
հարկը հաւատարիմ մնալու կաթողիկէական հաւատին, պատճառ տուեց
պահպանելու սորան Գերմանական հողի վերայ:

Ըմալքալղեան դաշնաորութեանը հակառակ, 1538 թուականին
ահա, մի Սուրբ դաշնաորութիւն հաստատեցին Մայնցեան և
Ջալցրուրգեան արքեպիսկոպոսըրը, Բաւարիայի դուքսերը, Վեորգ Սուր-
սոնեանը և Էներիկոս Բոաունշփէլդեանը: Բայց կայսրը, որին շատ
հաճոյ էր այս դաշնաորութիւնը, արտաքին պատերազմերի վերայ
սպասելով իւր արծաթը, հարկադրած էր ոտքի վերայ պահել խա-
ղալութիւնը: Միւսանգամ սկսեցին հաշտութեան փորձեր, թէպէտ
յառաջուց ահա նկատուաւ, թէ անպտուղ պիտոյ է լինէին դոքա-
այն, այս գործի մէջ շատ ջանադիր գտանվեցաւ Բոանդըրուրգեան
կայսրընտիրը որ չէր պատկանում շմալքալղեան դաշնաորութեանը,
Երկու կրօնական խոսակցութիւնը Հագենաու և Վորմսի մէջ այնքան
ևս անօգուտ եղան, ինչպէս տաջինները, Բայց նոր թագաւորական
ժողովի մէջ Ռեզենսուրգումը (1540 թ.), ուր բաց ի իշխանաոր-
ներից և մեծամեծներից ներկայ էին և անուանի աստուածաբաններ,
երևուաւ թէ հաստատապէս միտք ունէին միասնեպա՛մ միարանել եր-
կու հակառակ կողմերը, կայսրը ամեն մի կողմից սահմանեց երեք ե-
րեք ուսեալ և խաղաղասէր մարդիկ. կաթողիկէական կողմից, Իւլիոս
Փոն Պֆլուզը, յովհաննէս Գրոպպերը և ԅովհաննէս Էքքը. աւետա-
րանական կողմից, Մելանքթանը, Մարտինոս Բուցերը և ԅովհաննէս
Պիտտորիոսը, որ պիտոյ է կատարէին դաշնախօսութիւնքը, որոնց յա-
ռաջագիմութիւն տալու համար Գրանվելլյան դուքս հանեց մի համա-
վեցուցիչ գրուած, որ ապա յայտնի է դարձել անունովս «Ռեզենս-
ուրգեան Ինթերիմ». սորա մէջ կաթողիկէական և աւետարանական
գաւանդութիւնքը այնպէս համակարգած ու մտնեցուցած էին միմեանց,
որ այս հիմքի վերայ երևուաւ դուրսից, թէ կարելի է միաորու-
թիւն: Ե. յս գրուածի հեղինակը որ, կարծուան, թէ Գրոպպերն էր,
աշխատել էր այնպիսի ճարտարութեամբ շքեւ և պողպտեւ բանը,
որ հակառակ կարծիքները մի և նոյն խօսքերով բացայայտած էին ա-
ռանց աւելի մտ սահմանաւորութեան. բայց երբ որ սկսեցին աւելի
ճշգրտեալ ծանօթարանել այս խնդրի վերայ, դուքս երևեցան այնպի-
սի անմիարանելի տարրերութիւնք, որ երկու կողմից ևս պիտոյ է ան-
յոյս լինէին գործի յաջողապէս վերջաւորութեան մասին. Թէպէտ
նոյն իսկ Լութերը փառաւոր հանդիսով և կայսրի գիտութեամբ հրա-
ւիրվեցաւ, որ երեւի այս թագաւորական ժողովի մէջ և խօսակից լի-

նի, բայց փորձով հասկացան, թէ ինչպէս յառաջուց սպանալիքը, նոյնպէս և այժմ քաղաքաւարութիւնքը չէին կարող խախտել նորա արտի վկայութիւնը: Այսպէս ահա վերջացաւ թագաւորական ժողովը, ինչպէս վերջացել էին միւսերը, կրկին անգամ խոստովանելով թէ հարկաւոր էր մի վերանորոգութիւն և սահմանադրելով, որ վերջին վճարահատութիւնը կատարվի մի գալոց եկեղեցական ժողովի մէջ, որ լինելու էր Գերմանիայումը, կամ թէ մի ընդհանուր թագաւորական ժողովի մէջ:

Պորանից յետոյ մի քանի ժամանակ թեթեւացաւ աւետարանական հասարակութիւնների դրութիւնը: Կայսրը իւր արտաքին գործերովը շատ զբաղված լինելով, Կարտա էր թագաւորութեան հպատակների օգնութեանը, ըստ որում Տաճիկների կողմից ահ կար Հունդարիպի վերայ: Արեւմե ժամանակի յարմար բան էր, որ շպէշերեան թագաւորական ժողովի եղբակացութեամբ, 1542 թուականին հրամայվեցաւ հաշտութիւն պահել, որ Աւետարանականների ընդդիմախօսութիւնը ընդունվեցաւ ժողովի եղբակացութեան մէջ և խաղաղութեան տեսչութիւնը երկարաձգվեցաւ: 5 տարի ժամանակով, Նոյնպէս պիտոյ էր որ թագաւորութեան ծայրագոյն դատարանը ամենեին հետի կենար թշնամական գործերից զեպ ի Աւետարանականները: Այնու Ամենայնիւ չը գաղարկին այդ ծայրագոյն դատարանի զբեռով թիւնքը զեպ ի Աւետարանականները, որպէս և առհասարակ Շպէշերի մէջ միարան հաւանութեամբ դրած վճիռքը շատ փոքր պահպանվեցան գործով: Սորա համար Աւետարանականքը գալոց թագաւորական ժողովի մէջ Նիւրնբերգումը 1542 թուականին, յայտնապէս հրաժարվեցան թագաւորութեան ծայրագոյն դատարանիցը, ըստ որում սա վարվումը միշտ որպէս մի հաւաստի դատարան, որպէս մի ստեյն Կնիվիլդիցիս: Հետեան Անդգրաֆը, յիշեալ դատարանի գործակալքը այն ժամանակի անտանումէ մի բազմութիւն չար, անպիտան և պապահագի մարդերի: Բաւական նշաններ կային, որոնցից Աւետարանական բանի առաջնորդքը պիտոյ է օրէ օր աւելի լուսափայլ տեսանին, թէ ահա մտանումէ վտանգը: Եւ այց ի վերայ այդր ամենայնի անգործ մնացին զոքա այնպիսի ժամանակում, երբ, մարդկային հաստղութեամբ կռուելով, կարելի էր հաստատապէս յուսալ թէ յաջողապէս կ'երթար բանը: Բայց ի գորանից, շմալբայգեան զաշնաորների մէջ կային մի քանի տեսակ երկպառակութիւնք: քաղաքները անտոյթ թ և անտես արած լինելով իշխանների կողմից, աշխատումին միասնեղամ գտանել Կայսրի շնորհը, ինչպէս արեց և Վորիտց Սթրասնենանը, որ 1541 թուականին, Հենրիկուսի մահուց յետոյ ժառանգել էր իշխանական անժառը: Ինքն հաստատամիս Անդգրաֆի փիլիպպոսը գայթակեցուցիչ սիրու

տիտերով անհաճոյ դարձած հասարակաց աչքին, և մի ջոկ խաղաղութեան գաշն կապելով կայսրի հետ, փակել էր իւր ճանապարհը, Եւս առաւել քնի մէջ ընկան Աւետարանականքը, երբ որ կայսրը 1544 թուակ. թագաւորական ժողովի մէջ Շպէլերուսը իւր ասանձին շնորհը յոյց տուեց կայսրընտիր իշխանին և Աւանդաբանին՝ Այնու ամենայնիւ այդ ժողովի շահաւէտ եղբակացութիւնը շատ տարակուսական բան էր և բոլոր թոյլտուութիւնքը կարող էին շատ հեշտ յետ խլիլ. թող այս. այդ թագաւորական ժողովի դուրսից շահաւէտ երևած եղբակացութիւնը պատճառ տուեց Պապին մի սաստիկ նամակ գրել կայսրին, և առիթ տուեց Առթիւն շարագրելու իւր շանթածից ներհակ գրուածը այսպէս. « թէ Հռոմի պապականութիւնը հիմնարկած է սատանայի ձեռքով »: կայսրը աւարտելով իւր պատերազմը Գրանտիայի հետ և հաշտութիւն հաստատելով Քրիստի քաղաքի մէջ 1544 թուակ. կարող էր այնուհետև աղաատման գործ կատարել ընդդէմ շմալքալիկան գաշնաւորներին. բայց սորանց զեռնս մի քանի ժամանակ անդործ կացուցանելու համար, կայսրը անօրինեց, որ Ռեզենսուրդի մէջ միւսանդամ փորձ փորձեն գաւանդարանական միաւորութիւն հնարաւորելու համար, և աստուածարանքը մատուցին Սաքսոնիայի կայսրընտիր իշխանին մի ստաշարկութիւն, որ այս խորհրդով շարագրել էր Յելլանթմանը, թէկէտ քաջ զիտելով, թէ այդ հիման վերայ գաշնախօսութիւնքը չէին կարող պողարեր լինել, Հոգարարձութիւն ասնելով եկեղեցական ժողովի, աշխատուածին թշնամական ձեռնարկութիւններից յետ պահել Պրոտեստանտանքը, բայց սորա հրաւեր ստանալով մասնակից լինելու այդ ժողովին, ընդունեցին այդ հրաւերը որպէս հրովարտակ պատերազմի, ինչպէս և միւս կողմից կայսրը այդ հրամարմանից կարծիք ստացաւ, թէ ունի ահա մի ցանկալի առիթ պատերազմի. կայսրը ընդունեց Քեօլնեան կանոնիկոսներին ¹⁾ զանգառը իւրեանց կայսրպոսի վերայ և թոյլ տուեց, որ յտառ խաղացուցանեն իւրեանց շարախօսութիւնը, Աւետարանական հոգևորները Նիդրլանդիայի մէջ մահու պատուհաս ստանալով, յայտնի երևեցաւ, որ կայսրը կամք ունի հաստատուպէս գործ կատարել, թէկէտ նորա նպատակը էր առաւել շահ ստանալ, քան թէ Առթիւրականութիւն հալածել, եկեղեցական կայսրածք ձեռք բերել քան թէ եկեղեցական վարդապետութիւնը ուղղել, Եւ արդարև նիւթական օգուտների խառնակութիւնը այնքան ևս, ինչքան կրօնական ատելութիւնը, խախտն էր վեճերի խաղաղութեամբ աւարտելու: Բայց Առթիւրը որ այնքան երկար և արդար սրտով աշխատած էր

¹⁾ Եպիսկոպոսներ և կեղեցու բահուսք:

հրատարեցնել ազգը պատերազմից, արժանացաւ աստուածային շնորհին, կարողանալով խփել իւր աչքերը պատերազմի բոլորովն լուց յառաջ, Նա Մանսֆելդեան Գրաֆից հրաւիրված լինելով զէպ ի Եյսլերն քաղաքը, մի վեճ վճակու համար, մեղմ և խաղաղ հոգով ննջեց խոստովանելով իւր գործը, 1546 թուակ. փետրվարի 18ին, 1545 թուակ. վերջումը բացվեցաւ պապական ժողովը Տիրոլ աշխարհի Տրինտ քաղաքումը, որի խորհուրդը այն էր, որ արմատախիչ առնէ բոլոր հերձուածքը. և արդարև այդ ժողովի բան ու գործը այն եղաւ, որ միջին դարերի բոլոր սուտ և սխալ վարդապետութիւնքը և անկարգութիւնքը, որ հակառակ էին անսարանական հաւատին, նոր ի նորոյ կերէ ու հաստատէ, Պապի նուիրակները և սուրհանդակները անզաղար հսկելով Միւնչոյոսի վերայ, փշեցին նորա մէջ իւրեանց հոգին. այդպէս, ամենայն ազատ կարծիք ճնշվեցաւ և յաղմփեցաւ հռոմէական պալատականների գերակշիռ զորութենովը և Յիսուսեան կարգաւորների ջանքովը, որ ահա սկսել էին զօրանալ, Ահա թէ ինչպէս այն ձեղքուածը, որ բացվել էր կաթոլիկեան և պրոտեստանտեան Գերմանիայի մէջ, անմիառելի դարձաւ զարաւոր ժամանակներով:

Սարսոնիայի կայսրընտիրը և Էսեսնեան Լանդգրաֆը 1546 թուականի յուլիսի 20ին քարոզվեցան որպէս զատապարտվածք քրեական յանցարութեան պատճառով զէպ ի կայսրը և տերութիւնը, Բայց երբ որ կայսրը աշխատումը իւր մտքումը դրած պատերազմին մի այլ յատկացուցիչ նշան տալ քան թէ կրօնական պատերազմի, նոյն միջոցին Պալլուս երրորդ Պապը, յուլիսի 4ին հրատարակեց մի խաչակիր պատերազմ արմատախիչ առնելու հերետիկոսութիւնը, Պրոտեստանտեան զօրքը շուտով հաւաքվեցաւ Շվարիայի և Բավարիայի սահմանների վերայ, և աւելի բազմաթիւ էր, քան թէ կայսրի զօրքը, որ գտանվումը Քեղենսուրուրգի մաս, բայց յետոյ անողական բանակ հաստատեց Լանդահուլմ քաղաքի մերձակայքումը, Անսարանականների մէջ պակասելով մի օրինաւոր միաբանութիւն, այլև քանի մի բաների ուշադիր լինելով նոքա, ձեռքից թողեցին յաջող ժամանակը, և կայսրը կարողացաւ ամրացնել իւր թիկունքը Մպանիացոց, Իտալացոց և Նիդրլանդացոց օգնականութեամբ և այսպէս շուտով յառաջ խաղաց, Գեռ ևս գտնեայ հաւասար էին երկու կողմերի զօրութիւնքը, բայց պրոտեստանտեան իշխանքը վճռական բոլակի մէջ անարի և անպատրաստ գտանվելով, փոքր առ փոքր յետ քարշվեցան: Եանկարծ լուր հասաւ, թէ զուքս Մորիցը տիրապետել է կայսրընտիր Սարսոնիայի աշխարհներին, որ չը թողուր կայսրին տիրապետել նոցա, Այնուհետև կայսրընտիրը հրաժարվեցաւ զէպ ի տուն, Գաշնաւորների

ԿՐՐԸ ցրվեցաւ աշնան վերջումը, քաղաքները հետ զհետև շտապեցին աղաչել կայսրի շնորհը և ստացան զորան այնպիսի ծանր գնով, որով հետև եղած կը լինէր յաղմէլ նորան. ֆեախնեան արքեպիսկոպոսը Պապի հրամանով վայր ձգվեցաւ իւր պաշտանից և կայսերական գործակալներէի ձեռքով հալածվեցաւ աշխարհէնը, Մինչև գարունը, բոլոր հարաւակողմեան Գերմանիան հնուգանդացից կայսրը առանց սուր քարշէլու. Այս միջոցումը Սարսոնիայի կայսրընտիրը տիրապետած էր իւր աշխարհին և իւր եղբորորդու սահմանին մինչև Ալպշիս և Գրեզդն քաղաքները, բայց արդէն յայնմ էր նորան թէ ինչ պիտի լինի իւր վերջը, բայց և այս ստորնայի մէջ ոչ նա և ոչ նորա զաշնակիցքը չը մտարեցին զորձ գնել այն մի հատիկ հնարը փրկութեան, այսինքն ժողովրդի բազմութիւնը վեր կացուցանել իւր հաւատի պաշտպանութեան համար: Կայսրընտիրը իւր հպատակ և վարձկան զարքերով կանգնած էր Ալբէ գետի այն կողմումը. յանկարծ յարձակվեցաւ նորա վերայ կայսրը և Ալբաւեան զաշնումը Միւլրերդի մտ, 1547 թուակ. ապրիլի 24ին, հարկազրկեց նորան կտի գուրս գալ, Կայսրընտիր իշխանէ Կրքը կարճամիջոց, բայց քաջութեամբ պատերազմելուց յետոյ, ցան և ջիւ արվեցաւ, նա ինքը գերի ընկաւ և այդպէս անձնատուր եղաւ Ախտոնընրեզ քաղաքը: Եւ Անդղարաֆը յունիսի 19 թուականին թող տուեց իւր անձը կայսրի կամբին և կապանքի մէջ ընկաւ, թէպէտ նորա փեսայ Սարսոնեան Յորիտը երաշխաւոր էր կացած նորա ազատութեան համար, Այնուհետև շմալքայիտն միւս զաշնաւորքը ևս յանձն առան հնազանդել կայսրին և շնորհ գտան, Արդարև կայսրը ամենեկն թող չը տուեց շիթմել աւետարանական աստուածաբանութիւնը իւր տիրապետած աշխարհներէ մէջ, և երևումը թէ կամենում զորձով հաստատել իւր խօսքը, թէ զխոսարութիւն չունի բնութեամբ խախտել աւետարանական հաստոր, նա պահանջեց միայն, որ յաղթեալքը ընդունեն Տրինտեան ժողովը և զորս փոխարէն խոստացաւ մարդասէր և քրիստոնէական կերպով վարվել նոցա հետ: Մի թագաւորական օրէնք, որ 1548 թուակ. մարտի 15ին հրատարակվեցաւ Աուգուրգումը, սահմանադրեց թէ ինչ կարգով պիտայ էր ընթանալ կրօնի մասին մինչև և կեղեցական ժողովի վճահատութիւնը: Այս զաշնախօսութիւնը գրած լինելով մանաւանդ թէ բոսնիցընրուրդիայի պալատական աստուածաբանի Ագրիկոլայի գործակցութեամբ, թողլ տուեց Պրոտեստանտներին Հաղորդութիւն հացի և դինու տեսակով, քահանայական անունութիւն, վերացումն մի քանի անների և մի քանի անձիչք բարձնողութիւնը կաթոլիկեան վարդապետութեանների, և խոստացաւ թէ խաղաղութեամբ կը զարձուցանվին այն և կեղեցական կալուած-

ները որ աւետարանական իշխանքը ձեռք էին բերած: Այս կարգա-
դրութիւնը, վերին Գերմանիայի շատ քաղաքների մէջ սկսեցին բրո-
նուլթեամբ գործ դնել, բայց նորա ընդհանուր գործադրութիւնը պի-
տոյ է բորբոքէր մի նոր և ժողովրդական պատերազմ: Յովհաննէս
Ֆրեդրիկոսը Սաքսոնիայի բանտի մէջ ևս արիասիրտ մնալով և զէպի
Աստուած սպասինելով, մերժեց այդ կարգադրութիւնը: Դուքս Վո-
րթոնը որին կայսրը շնորհել էր Սաքսոնիայի կայսրընտիր իշխանաւո-
րի արժանաւորութիւն, խնդրեց ժամանակ մտածելու, և այս միջո-
ցումը առաջարկեց ազգի փոխանորդներին և աստուածարաններին, որ
թողլ տան հաւատի այնպիսի բաները, որ բարի խղճմանքով կա-
րելի էր թողլ տալ: Այսպէս յառաջացաւ այն Ալեյքսիզեան Գաշնա-
խօսութիւնը որի մէջ մերժվեցան ընդդէմ աւետարանի հաստատելքը,
յետ պահելով միայն կաթոլիկեան ծիսապաշտութեան մեծ մասը, որ-
պէս մի անխօր բան (Ազիաֆօրն), Նմանապէս պիտոյ էր ընդունել
Պապի և եպիսկոպոսների իշխանութիւնը, եթէ դա գործ կը դրվէր
եկեղեցու շինութեան, այլ ոչ կործանութեան համար: Ազգի փո-
խանորդքը ընդունեցին այդ դաշնախօսութիւնը և գործ դրեցին նո-
րան, թէպէտ մեծապէս ընդդէմ էին դորան շատ հասարակութիւնք
և հոգևորք: Բայց երկու դաշնախօսութիւնքք ևս արհամարհած էին
թէ Պրուսեստանտների և թէ կաթոլիկների մէջ: Ամենայն տեսակ նա-
խատական և անօթախի գրուածներով անխնայ խայտառակեց դորանց
ժողովրդի երգիծարան հոգին, և մազիստրոս Ազրիկոյան ստացաւ դորա-
նից իւր առատ բաժինը: Բայց օտարազգի զորքերը մնալով գերմանա-
կան հողի վերայ և ժողովրդի խղճմտանքը տանջելով այն ստիպողա-
կան դաշնախօսութեան մասին, երևում էր թէ Գերմանիան պիտի դառ-
նայ մի Մպանիական դաւառ, ըստ որում կայսրը պահանջում էր, որ իւր
վտտահամարաւեալ որդի Փիլիպպոս երկրորդը ընտրեն ամուսնի յաջորդ:
Այն ժամանակը իւր սրտի մէջ վճիռ կապեց Վորթոնը, որ մի արիա-
կան գործով վերստին ստանայ այն իւր պատիւը որ կշտողական խո-
րագիտութենով կորուսել էր Գերմանիայի մէջ և այդպէս դարձու-
ցանել թէ տէրութեան և եթէ եկեղեցու ազատութիւնը: Նա ծած-
կապէս դաշներ կապեց Մեկլենբուրգի, Բաանդընբուրգեան սահմանա-
պետ Ալբրիխտի, բանտարկած Անդգրաֆի որդիների հետ, և ընդդէմ
Մեյնթրեօնի խորհրդին դաշն կապեց Ֆրանսիայի հետ թողլ տալով
նորան Մեաց, Տուլ և Ալոպիւն քաղաքները Գերմանիայի: Վորթոնը
յառաջուց պատուէր ստացած լինելով պատժել պրուսեստանտեան Մադ-
դէրուրգ քաղաքը, առիթ ստացաւ զօրածողով լինել և խորագիտու-
թեամբ անգործ կացուցանելով կայսրի կասկածամտութիւնը, 1552
թուակ. մարտի երկուսին յարձակվեցաւ Թիւրինգայից, մին մին խոր-

տակեց կայսրի ցան և ցիր եղած պահագան զօրքը, և մայիսի 22ին կանգնած էր ահա Ինսրրիւքքի հանգեպ, կայսրը հիւանդ հիւանդ փախաւ Ալպեան սարերի նեղ ճանապարհներով, Տրիդենտինեան ժողովք ահ ու զողի մէջ ցիր ու շան եղաւ փոշու պէս, և յուլիսի 31 թուականին նոյն իսկ տէրութեան երաշխաւորութեամբ կազմեցաւ Փասաւեան դաշը, որի զօրութենով պիտոյ է աղատութիւն ստանար սահմանապետ Փիլիպպոսը, Տէրութեան դատարանու՛մը նստէին կիսով չափ աւետարանի դաւանողք և կիսով չափ Աթոռիկեանք, Այլև այն դանդաղները անհետացնելու համար, որպէս թէ օրինազանցութիւն էր եղած ընդդէմ տէրութեանը, և միտքան հաւանութեամբ կարգադրելու եկեղեցական գործերը, պիտոյ է լինէր շուտով մի թագաւորական ժողով, և ասած էր նոյնպէս, որ անպատճառ հաստատի մի անողական խաղաղութիւն մինչև երկրպագեալ կրօնը կը բարեկարգվի: Թագաւորական ժողովի մէջ, որ, մի քանի խափաններ լինելուց յետոյ, 1555 թուակ. փետր. 5ին բաշտեցաւ Աուգուրբուգու՛մը, երևումք, թէ երկու կողմից ևս քաջ հասկացած էին, որ խաղաղութիւնը թագաւորութեան մէջ չէր կարող այլապէս արժատանայ, եթէ ոչ, փոխադարձաբար շնորհելով միմեանց հաւատի պատուութիւն: Այսպէս ահա Անֆորմացիայի իրաւունքը, թեպէտս այդ բանին ընդգիտմանս էր հռոմեական աթոռը, սեփականվեցաւ թագաւորութեան փոխանորդներին, և հպատակքը իւրեանց կրօնը հարձանքի երեսից պահպանելու համար, ստացան միայն իրաւունք աղատօրէն դուրս գնալ աշխարհէնը և զորա համար մի թեթև հարկ վճարել աղագայի համար: Այս Աուգուրբուգեան խաղաղութենով գերմանական Անֆորմացիան ստացաւ իւր ժամանակաւոր վերջաւորութիւնը, բայց այն յետ պահած եկեղեցական իրաւունքը¹⁾ Reservatum ecclesiasticum, որից, ինչպէս լաւ հասկանումին, իսկապէս կախ էր կաթոլիկեան եկեղեցու հաստատութիւնը Վերմանիայի մէջ, պարունակումք իւր մէջ առատ սերմեր գալուց արինաշաղախ պատերազմերի որոնց միջից արդարև յաղթութեան պատկով դուրս գնաց Պրոտեստանտականութիւնը, բայց Վերմանիան պատտա պատտա եղաւ, և այդպէս կրօնականութիւնը միութիւնը, կորցրեց և իւր քաղաքական արժանաւորութիւնը զեպ ի դուրս, և զորանով զարձաւ մի խաղալի բան օտարեկրեայ նեղաւոր քաղաքականութեան ձեռքումք:

1) Այդ յետ պահած եկեղեցական իրաւունքը այսպէս էր. եթէ մի կաթոլիկեան եպիսկոպոս դաւար զեպ ի պրոտեստանտեան հասար, պիտոյ է զրկվեր իւր պաշտօնից, իւր եկամուտից և իւր վիճակից, և եկեղեցու զիրաւորքը ունեին իշխանութիւն նորա փոխանակ ընտրել մի այլ եպիսկոպոս:

ԻՆՎԻԶԻՑԻՕ (Inquisitio).

Լատինական Բառոյս Ինկիզիցիոն խնայումէ այն զարհուրելի Հոգևոր դատաստանը, որ Հռոմեական քահանայապետութիւնը կարգեց և զարաւոր ժամանակներով Հաստատ պահեց, Տերեափկոսները բնաջինջ առնելու համար, Գորա սկզբնաւորութիւնը, յառաջագիմնութիւնը և հետ դճեակ նուազումը պատմելուց յառաջ, թող յատկացնենք այս տեղ Ինկիզիցիոնի բուն էութիւնը, Հոռոմի հոգևոր աթոռը կամենալով իսկապէս հաստատել իւր գլխաւորութիւնը կրօնական բանիւրի մէջ, այլև ձեռք բերել գերազդոյն հոգևոր և աշխարհական կարողութիւն, յղաշաւ իւր մէջ և դուրս փոխեց այդ խորհուրդը արմատախիլ առնելու Տերեափկոսները, Աշուխով պատճառը ներգործութեան հետ, իմացած էին, որ այդ խորհուրդը յառաջ առնելու և գլուխ բերելու համար, անպատճառ պիտոյ է խափանել մարդկային հոգու ազատ անկողովութիւնը, նուաճել, կամ, եթէ կը պահանջէր հարկը, բնաջինջ առնել ամենայն պլաստիկ մարդ, սրտաբասել կամաւոր, թէ կուրորէն և թէ գիտութեամբ, գործակատար ծառայք, և ամենայն տեղ քրիստոնէայ ազգերի մէջ վախկոտութեան և թուլութեան հոգի անկել ու հաստատել, և թէ այս խորհուրդով չէր պիտոյ ոչինչ հնարք անտես առնել, թէ սուրբ և թէ պիղծ, Այս պատճառով, Տերեափկոս ասելով հասկացումներն ոչ թէ միայն Տերծուածողքը, այլև այդ խորքը գործ էր գրվում այնպէս լոյնարար, որ հաստատ դատաւորքը և նոցա գործակատարքը կարող էին վնասել ամեն մարդու, որ թէ և շատ փոքր երևումէր նոցա վաճառոր, մինչև որ այն աշխարհներումը, ուր լինումէր Ինկիզիցիոն, պիտոյ է ամենեքեան զողային ու սարսափելին, և ամենքը (եթէ առհասարակ կարելի էր այս տեղ խօսել մեղապարտութեան վերայ) նոյնքան վաճառի տակ էր, ինչքան որ մեղաւորը, Այս զարհուրելի դատաստանի բնութացքը էր այսպէս. ժամանակ առ ժամանակ հրատարակումներն այն բոլոր բաների ջուշակը, որոնց պարտպումէր Ինկիզիցիոն, և ապա հարկ էին դնում ոչ թէ միայն աշխարհական դատաստանի վերայ, այլև, ինչպէս պատահած է Գրանսփոյլի մէջ, երգմենչումներն ողջոյն հասարակութիւնը, թէ ծանուցանելոց էին իւրեանց մէջ եղած աղանդաւորքը և կասկածելի մարդիկը, և թէ յառաջուց վերաբերվումէր Ինկիզիցիոնի զէպի Տերեափկոսըր միայն, յետոյ սկսեց շուտով հայածել և կախարդքը, ալիմարմոյքը, դուշակողքը, Աստուծոյ հոյհոյրիչքը, սրբապիղծքը, եկեղեցի կողպատողքը և բոլոր այն մարդիկը որոնց կողմից Ինկիզիցիոնի ծառայքը վերաւորութիւն, խափանարկութիւն, կամ թէ որ և ինչ կերպով վնաս էին տեսած, Երեջտասաններոյց Գրի-

գործու պապի ժամանակու մը Ինկվիզիցիան զգրացաւ մինչև այն աստի-
ճան, որ սկսեց հալածել և Հրեայքը, Մահմետականքը և առհասարակ
Ընհատաւ ասած մարդիկը, որպէս և այն անձինքը որ ստանա-
սիրաւ էին զէպիսկոպոսական եկեղեցին: Այն կարծեցեալ հոգևոր
դատարաններէ կուրու թննուով, խնայողութեամբ և խելագործիք հայ-
կաշարով շատ անգամ լոյս էին ձգուում այնպիսի յանցանքներ, որ
նոյն իսկ ամենախիստ հեռուողքը հռոմեական պապականութեան, ու-
նելով լուսաւոր միտք և մարուր դիտարութիւն երբեք կարողացած
չէին լոյս հանել, Այս և բնութեան կապակցութեանը չը խնայ-
եցին այդ դատարարք, ծանր յանցանք դնելով այն մարդու վերայ,
որ իւր արեւակից ազգականը չէր մասնաձ սուրբ դատաստանի ստաշն,
Թէ ինչպէս խիստ էին այս մասին Ինկվիզիցիանի օրինադրութիւնքը,
կարելի է խնայողութեամբ այն սահմանադրութեաներէց որ սկզբումը ե-
ղած են երկու մեծամեծ սիւնհոգաների մէջ, Հռոմումը 1215 թուա-
կանին, և Յուլիոս քաղաքումը 1229 թուականին, Մոչա մէջ ասած
կոյս, թէ ամենայն կախկոյտութեան չկամքը զրկել իւր վիճակից, ու-
րեմն պարտական էր ամենայն տարի քննել իւր թեմքը, ամենայն ժո-
ղովրդապետական եկեղեցում երդմեանքնել երբեք կամ աւելի աշխար-
հական մարդիկ և հարկ դնել նոցա վերայ, որ ծանուցանեն բոլոր կաս-
կածելի անձինքը և պնական գտանվին նորանց պատելուն, Ամեն մի
իշխան, կախկոյտ, կալուածատէր կամ դատարար, որ կը խնայէր
մի աշանդաւորի, պիտոյ է զրկվի իւր աշխարհից, իւր կալուածից
կամ պաշտանից, ամենայն ատն ուր կը գտանվէր մի աշանդաւոր, պի-
տոյ է կործանվի, Աշանդաւորներին և կասկածելի մարդերին մտ, թէ
և զորք լինելին մահարկը հիւանդութեան մէջ, չէր պիտոյ ներս թու-
ղու ոչինչ բռնիք և ոչ մի բնկերակից նոցա յանցանքին, Քշմար-
տապէս զգըջողքը, եթէ նոցա հայրենի աշխարհը կասկածելի էր,
պիտոյ է հետաշվին այն տեղից, և ստանան ուրիշ տեսակ դպետ,
այլև զուրկ մնան բոլոր քաղաքական իրաւունքներէց, մինչև զտար
թողութիւն կը շնորհէր: Այսպիսի պատուէրներ զրկեցան ահա Ինկ-
վիզիցիանի սկզբումը, և ինչ զարմանք, եթէ նա հասանելով իւր ծաղ-
կեալ ժամանակին, ևս առաւել սաստկացրեց իւր պատուէրները, Այս-
նուհետև պատմապարտ կերպով կասկածելի էր ահա այն մարդը, որ
ողորմութիւն էր սուսած մի աշանդաւորի, պատահմամբ հանցիկացած
էր նորան մի և նոյն պանդոկի մէջ, փրկած էր նորան յովամահից
կամ թէ շարունակուող իւր ամուսնակցութիւնը մի աշանդաւորի
հետ: Այս ով չունէր համարձակութիւն ստիբել մի աշանդաւորի մո-
րուք, լուսացք աննել նորա համար, կերակուր վաճառել կամ լուս-
վիլու ջուր տալ նորան, Այս բոլոր բաների մէջ յանցաւոր գտան-

վածքը պատժվումէին Յրանսիայի մէջ մշտնջենաւոր բառարկութեանով: Ով որ յանձնառու էր սպասաւոր լինել մի ազանդաւորի, համարվումէր հաւասար մի այնպիսի մարդու որ զիտէր ազանդաւորութիւնը և չէր ծանուցել զատարներն: Եթէ մի մարդ որչոյն էր առած մի ազանդաւորի, պատժվումէր տասն մինչև քսանամայ բանտարկութեամբ, և բարեհաւատ զաւակներ որ օգնութիւն էին մատուցանում իւրեանց ազանդաւոր դարձած հօրը, պարտական էին մեռնել փայտակուտի վերայ: Այս նոյն ինքն կայսր Յրիդրիկոս երկրորդը յիմարացաւ մինչև այն աստիճան, որ վարձ կարգեց այնպիսի զաւակների համար, որ մասնած էին իւրեանց ծնողքը: Առհասարակ ինկվիզիտորքը (զատարներէքը) տեղեկանումէին մի յանցաւորութեան, ընդհանուր կարծիքից, մատնողութեանով, կամ թէ ինքը պարտաւորը խոտովանելով իւր մեղքը: Այսպիսիների համար չորրորդ Իննոկենտիոս Պապը 1243 թուականին արած էր մի սահմանադրութիւն, որի հիման վերայ իւր անձը մատնող պարտաւորը, զղջալով ճշմարտուպէս, կարող էր ազատվել աշխարհական պատժից: Ըսյց 1246 թուականին, Բեզիէր քաղաքի ժողովը սահմանեց, որ այդպիսիքը միայն չը կորուսանեն իւրեանց գոյքը, ազատ լինին մահու պատուհասից և մշտնջենաւոր բանտարկութենից կամ արքայանքից, Այնու ամենայնիւ իւրեանց անձը մատնողքը ըստ մեծի մասին զրկվումէին իւրեանց գոյքից, և, եթէ ոչ իսկոյն, գոնեայ յետոյ անպատճառ դրվումէին բանտի մէջ: Ով որ միւսի բերանով պարտաւորված էր, կամ թէ որ և իցէ կերպով կասկածանք էր դարձուցել, այդպիսին երեք անգամ գանչվումէր զատաստանի առաջև: Եթէ զա չէր երևում իսկոյն, ապա համարվումէր աւելի կասկածելի, եթէ ոչ պատժելի: Եթէ այդպիսի պարտաւորվածը ամենևին չէր երևում, ապա պատժվումէր ծանր ատուցանողով, բանադրանքով, և, եթէ ըմբռնումէին նորան, մարմնաւոր գանահարութենով: Շատ սակաւ յաջողումէր, փախտականութեամբ փրկել իւր անձը ինկվիզիտորների զատաստանից, որովհետև այն ժամանակներումը, ինչպէս այժմ, շատ սիրումէին ծանուցարար թըղթերով հալածել փախտականը և ամենայն տեղ համարվումէր փախտականութիւնը կամ յանցանքի կամ թէ դարձեալ մեղանշութեան նշան: Եթէ մի պարտաւորեալ գրած էր բանտի մէջ, ապա, Տօրկվեմագա մեծ ինկվիզիտորի օրէնքով, ոչ ով բաց ի խոտովանահօրից չունէր համարձակութիւն մտանալ պարտաւորվածին: Ըսյց Պօրտուգալիայի մէջ չունէր այդ կարողութիւնը և ոչ խոտովանահօրը: Բանտարկված մարդուն թողլ տալ, որ ընթերցանութեամբ մի փոքր մոխիմարվէր, ամենևին չլսած բան էր: Բանտերը լինելով շատ անգամ ստորերկրեայ (գետնի տակին), էին տխուր, փոքրիկ, կեղտոտ և

ժաջահատ ծակեր. կերակուրը էր սովորաբար անպիտան, միտք մի հազուապէս թան, և ջուրը միայնակ ըմպելէն. գանգատել, լալ և աղաղակել արդեւած էր խտապէս, և ծանր պատժի տակ էր: Արպէս բացառութիւն սովորական կանոնից, պատահումք, որ երկու պարտաւորված մարդ փակվումէին մի և նոյն բանտի մէջ, խոհանութիւն էր խելոյն ամենայն համարձակութեամբ խոստովանել իւր որպիսութիւնը, թէպէտ ի վերայ այդք ամենայնի շատ անգամ երկարանումք քննութիւնը ամիսներ ու տարիներ, Նրր որ պիտոյ է սկանսվէր հարցուփորձը, պարտական էր քննութեան տակ եղած մարդը նախ և յառաջ երդնուլ խառով ու աւետարանով, թէ մի ըստ միտքէ սակու է ճշմարտութիւնը. ով որ հրաժարվեցաւ այդ երդումից, նա խելոյն համարվումք մեղապարտ, Նոյն իսկ քննութիւնը ունէր մի օձապոյտ, խառնափնդոր, անչափ մանրակրկիտ և զգուշակից գնացք, պատճառ, աւելի բարւոք էին համարում պատժել մի անմեղ մարդ, քան թէ արձակել մի մեղաւոր. եթէ պարտաւորվածը ստանումք մի փաստարան (աղջօկատ) իւր դասի համար — որ աւելի նման էր մի շնորհացուցութեան քան թէ օրինաւոր ապահովութեան — ապա սա զգուշանալով աղանդաւորի վերայ եղած պատժիցը, չունէր համարձակութիւն սովորական օգնութիւնը հասուցանել նորան, այլ պարտական էր դատաւորի ներկայութեամբը այն բաների վերայ միայն խօսակից լինել պարտաւորվածի հետ, որոնց մասին ահա եղած էր ատենախօսութիւն. Քաստարանը փոխանակ փրկելու իւր պաշտպանութեան յանձնած մարդը, պարտական էր մանաւանդ թէ գործակից լինել նորա վերայ ապացուցանելու իւր յանցանքը: Բաց ի սորանից, դատաւորը ինքեանք ընտրումէին այնպիսի փաստարան, որ երևումք գործակատար մարդ, եթէ դա վկայած էր որպէս մի լաւ հաստատեցաւ և երդումն էր ուսում թէ լինելու է ամենաճիշդ խորհրդապահ այն բաների մասին, որ նկատելու էր, դատախազը և վկայը թէ ով էին, ամենեւին չէր ասումք պարտաւորվածին, և նոցա անուանքը չէին մուծանում և ոչ դատաստանական լողթերի մէջ. եթէ պարտաւորվածը գուշակումք իւր մատնողների ով լինելը և ունէր մի բան յառաջ բերելու ընդդէմ նոցա, ապա կարող էր յառաջ բերել իւր ընդդիմախօսութիւնքը. թէպէտ սակաւ էր պատահումք որ դրա մի մեծ օգուտ բերէին, ըստ որում մի անսովոր բան էր, որ երես առ երես հանդիպէին միմեանց պարտաւորվածը և նորա շար վկայքը, Սորա վերայ յաւելացրու և այն բանը, որ բարեկամ և շարեկամ, պաշտպան և պաշտպանելի, աղջական և դաշնաւոր, հաստատաւոր և անհաւատ մարդիկ ընդունվումէին որպէս վկայք. այն, Նարրօննի մէջ, 1242 թուականին եղած ժողովի սահմանադրութեաննեկի զօրութեամբ կա-

բող էին Ինկվիզիցիանի աթոռի առաջև վկայել և ուխտազանց, ա-
նարգ, աղանգաւոր և յանցաւոր աննինք: Մատնողները Համարվու-
մէին նոյնպէս վկայք, և երկու վկայ որ ուրիշների բերանից լսելով
յայտարարութիւն էին տուած զատաստանի առաջև, Համարվումէին
որպէս մի ականատես և ականջալուր վկայ: Քեպէտ Սպանիայի և
Գրանսիայի մէջ պատժումէին այնպիսի վկայք, որ յայտնապէս սուտ
էին ասած, բայց սուտ վկաների կարգումը Համարվումէին և նորա,
որ Հաստատումէին, թէ ոչինչ մնասակար բան չը գիտէին քննու-
թեան տակ եղած մարդու համար: Եթէ յաջողումը, որ քննութեան
տակ եղած մարդը յազմելով շատ դժուարութենների և խախտնե-
րի, ընդունվէր որպէս անմեղ և ստանար իւր ազատութիւնը, ապա
ղնումէին նորան մի ծանօթ մարդու ակնարկութեան տակ, և եթէ
պատահումը որ և իցէ աննափորք առիթ, իսկոյն նոր ի նորոյ ձգու-
մէին նորան հարջափորձի տակ: Բայց եթէ պարտաւորվածը չէր կա-
րող Ինկվիզիտորների բոլոր տարակուսանքը լուծանել կամ թէ վկա-
ների յայտարարութիւնքը չէին բաւական զօրաւոր, ապա զօրձ էին
ղնում ամենայն որ չորրորդ Ինկվիզիտորն Պապը 1252 թուակ. ներս
բերեց և աշխարհական դատաստանների կազմին թողել, բայց Ուր-
բանտ չորրորդը յանձնեց քաղաքական դատարաններին, և Պալլոս
չորրորդը ընդարձակեց, այդ ամենայնքին պարտական կայացանելով
և այնպիսի մարդիկ որ լոկ կասկածելի էին միայն: Այս անոգոսմ
գործողութեանը երբեմն ներկայ էր տեղական եպիսկոպոսը կամ նո-
րա փոխանորդը. բայց պարտաւորվածը զեւ ևս չը շարշարված, պի-
տայ է կրկին անգամ յորդորվէր մեծապէս, որ խոստովանէ իւր մեղքը
և լուծանէ երկնութիւնքը. եթէ սա անօգուտ եղաւ, ապա մեղա-
ցնումէին նորան ամենեին, ծածկելով միայն անթոյրը: յետոյ սկսա-
նումէր դահիճը ամենքէլ նորան: Եթէ ամենայնքով չը կարողացան
հարկադրել զեպ ի խոստովանութիւն, ապա սովորաբար զօրձ էին
ղնում խորամանկութիւն, ստութիւն և խարեութիւն: Մի հնարի-
մաց մատար հօգի, որ յանձնատու էր այս բաներին, կեղծաւորվե-
լով որպէս պարտաւորված, ընկերանումէր քննութեան տակ եղած
մարդու հետ բանախ մէջ, որ չողորթութեան բառերով, կեղծաւոր
խօսքերով կամ հրապարանքներով առիթ ապ նորան բանբասելու
ինկվիզիտորքը. շատ անգամ կատարումէին այսպիսի պաշտոն նոյն իսկ
ինկվիզիտորքը: Այն պատժների մէջ, որ զրգումէին ապացուցեալ յան-
ցաւորների վերայ, կար միայն մի վճռողական պատժ, մահուտ պա-
տահար. միւսերը էին նախադուան պատժների որոնց խորհուրդը այն
էր, որ պատժվածը, շարշարանքից յետոյ ևս, անդադար ահ ու զողի
մէջ պահվէր սուրբ Ինկվիզիցիանի երեսից, ըստ որում Գամակեան

սուրբ միշտ և հանապազ կախ էր նորա գլխի վերայ: Բոլոր, Ինկ-
վիզիցիոնի ձևերով սահմանած, պատժները բաժանվումէին երկու
մասն, այսինքն կամ Եփեսոսէն էին, կամ թէ Եփեսոսէն: Եկեղեցի-
ցական պատժները էին սորա. 1) Հոգեւոր ուրախ, որով մի հասա-
րակութիւն, մի քաղաք, մի գաւառ, կամ թէ նոյնպէս մի ողջոյն
աշխարհ զընկուսներ կրօնական պաշտօնի հաղորդութենից. այդ ար-
գելը մի քանի բաներից հրատարակելով, միւսերը զարձակ թոյլ
տալով, տեսակ տեսակ էր և զանազան շարիտ. բայց դորա զարհու-
րելի խտուրտները վերջացաւ տասն և վեցերորդ դարու հետ միասին.
2) Բանորոշ որ մի կամ շատ մարդիկ անբաժին էր կաշուցանում
եկեղեցական պաշտօնից, հրատարակուսներ ամենայն հաղորդութենից
հաստատակալներէ հետ, նոյնք էր դնում ամենայն բանի վերայ, ու-
րին կը մտանար բանադրածը, պիղծ քարոզելով նորա ձևեր շուշ-
փածը և արդպէս անպաշտպան ու անգնական կաշուցանելով նորան:
Այս պատճառով, այդպիսի բանադրածը շատ անգամ փախտական էր
լինում իւր աշխարհից. եթէ մեռանուսներ ասանց ապաշխարանքի,
ապա վարվումէին նորա հետ որպէս դատապարտած մարդու հետ. և
եթէ նա յուճանուսներ բանադրանքը, լինումէր մահապարտ: 3) Ուր-
ախոյնութիւն զեպ ի նուիրական տեղեր մտակայ կամ հետաւոր, Ե-
րոպայի կամ Պալեստինայի մէջ, Այսպիսի ուխտագնացքը, եթէ շե-
ին ուղևորվում զեպ ի Արուսաբէմ, կրուսէին մի կապոյտ կանացի
չըջազգեստի պէս հանգերձ, ճանապարհորդութիւն անփոխան և տու-
րակիկ, մի գաւազան կամ թէ խարազան ձևերուսը, իւրեանց մար-
մինը արինաշարախ թակելու համար. դորա իջլանումէին ամենայն,
ճանապարհի վերայ եղած, եկեղեցիներում, որ աղօթէին, ապու-
սումէին ողորմութենից, պահք էին պահում խոտապէս, և տարու մը
ճաշակումէին միս շորս գլխաւոր ասնրի որերումը: 4) Այս-
հերտփկոսի կաշուսթեան տեղումը կամ թէ հերտփկոսական դատա-
բանի մտակայքումը, աղատակեաց կերպով, Սա համարվումէր ասա-
ւել թեթեւ պատժը, բայց և սա կամ սաստկանուսներ կամ թուլա-
նուսներ, և տեսներ բոլոր կենդանութեան միջոցը, կամ թէ առ ժա-
մանակ մի, Ապաշխարողքը պիտոյ է կրէին մի Վանդեմիտ անունով
շապիկ (որ Իտալացիք ասումէին Ալբիթեյլ) որ զանազան ժամանակ-
ներում և զանազան աշխարհներում ունէր և զանազան գոյն. թէ
կուրծքի և թէ քամակի վերայ ամբարած էր մի Անդրեասեան խաչ,
կամ թէ, ինչպէս եղած է ասալին միջոցներումը, երկու խաչը ևս
կային կուրծքի վերայ, Ոչ մի ապաշխարող չունէր համարձակութիւն
ձածկել իւր խաչերը, կամ թէ ապաշխարական շապիկը հանել վե-
րայից յառաջ քան թէ թոյլ տուած էր, ապա թէ ոչ, խիստ պա-

տիտ կար նորա վերայ. Ապաշխարողը պարտական էր ամենայն կիրակէ եկեղեցու մէջ ներկայ գտանձիլ քահանայի առաջն, մի կապոյ գաւազան պահել ձեռքումը և մերկայնել թիկունքը որ ապա ջարդումէր քահանան. բայց մեծ տօներն օրերումը կամ հանդիսաւոր եկեղեցական գործողութիւնների մէջ պիտոյ էր զա ինքը իւր անձը խաբաղանէր. թող այս բանը, հարկ էր նորան ամենայն օր պատարագ լսել, ամեն տարի, բայց ի սօվորական պահերից, երեք մեծ պահք պահել, այցելութիւն առնել այն տներին, ուր տեսած էր կամ խօսած էր հերետիկոսների հետ, և ամեն ամառ առաջին կիրակէին իւր մարմինը պատռել, Պարկեշտութիւնը մի առանձին պարտականութիւն էր նորա համար, և նորա կերակուրի մէջ, բայց ի Ծննդեան, Զատիկի և Հոգեգալստի տօներից, չը կար ոչ միս, ոչ ձու և ոչ պանիր. Մի ապաշխարողի վերայ ծաղը առնել արգելած էր. Աշխարհական կամ քաղաքական պատիժները էին ստրա. 1) Բանտումը բոլոր կենդանութեան ժամանակով, կամ թէ մի կարճ միջոցով, Բանտերը էին փոքրիկ պահարանք, որ առաստաղից ունէին սօվորաբար մի փոքրիկ լուսամուտ կամ դռնակ, այլև երբեմն մի ծակ ևս, աղանդութիւնքը դուրս թափելու և կեանքի պաշարը ներս կոխելու համար. Հատ սակաւ կը պատահէր, որ մի օրինաւոր դուռն բացվէր զեպ ի բանտը. ուրեմն այդպիսի բանտարկածի գրութիւնը այնպէս էր, որպէս թէ կենդանի թաղած էր պատերի մէջ և այդ պատճառով ասվումէր Արմախակ (պտտը վերայից փակած), immuratus, immoré: Այս դժուրակ պատիժը սահմանադրեց Բեզինը քաղաքի ժողովը 1246 թուականին, դարձեալ մեղանշողների համար, որ ասվումէին Relapsi, որ յետոյ ժամանակում դատապարտումէին զեպ ի կրակամահութիւն, Այսպէս մեռանումէին և փախտականքը, կամ այնպիսի մարդիկ, որ շնորհած ժամանակը զանց առնելով չէին երեւած սուրբ ատենի առաջն. Երբեմն կրակամահ էին լինում և նորա, որ մի աղանդաւորի հետ հաց էին կերած, կամ թէ սպասարած էին նորան. Մի այդպիսի բանտ ասվումէր *Vade in pace*, այսինքն, երթ խաղաղութեամբ. այսպիսի բանտեր, Դնկվիզիտների առաջին դարերումը այնքան շատ հարկաւոր էին քրանկատանի մէջ, որ ձեռնհաս չէին լինում լցուցանել այդ հարկաւորութիւնը. և այս պատճառով 1488 թուականին սահմանադրութիւն եղաւ, որ հերետիկոսքը իւրեանց յատուկ տների և քնակաբանների մէջ բանտարգել լինին. Սոցա բոլոր կերակուրը էր միայն հաց և ջուր, որ ասվումէր ցախի հաց և արամութեան ջուր. Թեպէտ կարճ ժամանակով բանտարգելների հետ միայն վարվումէին մի փոքր մարդասիրաբար, բայց և զորս ստանումէին մեծ հանդիսաւոր օրերումը միայն գինի, պանիր, միս և ձու. Բանտարկութեան ծախքը պիտոյ է

Հոգային նշոյն խել յանշատորքը, եթէ ունէին կարողութիւն. եթէ ոչ, ապա Հոգաբարձու էր այդ մասին Յուզանքի գանձարանը, կամ թէ տեղական կառավարութիւնը, կամ թէ, սկսեալ 1258 թուականից, կալուածատնարքը, 2) Այլուստրալիստիքը, որ կրկնապատիկ պատիժ էր նոցա համար, որ փակած էին չորս պատի մէջ, 3) Հարկաւորութիւնը. սա կատարուէր այսպէս ահա. յանշատ մարդը, որի սովորական հանդերձի վերայ կուրծքից և քամակից կախ էր ընկած մի կարմիր լիզու և վիշ վերայ ամբողջած էր մի նշան նորա յանցանքի ցուցակովը, կանդնեցնուէին տեղական եկեղեցու այնպիսի դրան մտա, ինչ տեղ ժողովուրդը մէծ բազմութեանով անց ու գարն էր անուամբ, 4) Յարկաւորութիւնը, որ տալիս էին պատժողութեան օրին, երբ որ յանշատը էշի վերայ նստեցրած, ման էին անուամբ փողոցների միջից և թակոււնէին դալար վայտով, 5) Այլուստրալիստիքը. որ նայելով յանցանքի մեծութեանը կամ թէ յանցանքի գնաւորին, լինուէր նորա մահաց յառաջ կամ յետոյ, եթէ պիտոյ է նա այրվեր մեռանելուց յառաջ, ապա հեղձամղձուկ (խեղդամահ) էին անուամբ նորան. Սպանիայի մէջ ստուգապէս այրելուց յառաջ, շատ անգամ խանձուէին մարմինը, կրակելով թեթեւ յարդ, և այս բանին ծաղր անելով ասուէր ամբոխը իւր գաղանական վայրենաբարոյութեան մէջ, թէ մարտը ևն թողում. Այս և մեռածներին հանդիսա չը կար ընկղկղելիսն ձեռքից, ահա 1179 թուականին սահմանադրեց մի ժողով, թէ հերետիկոսքը չէ պիտոյ թաղել քրիստոնէական. յետոյ ժամանակում, մեռած մարմինքը դարձեալ հանուէին գերեզմանից, եթէ իմացած էին, որ հանգուցեալքը իւրեանց կենդանութեան միջոցին հերետիկոսական յանցանքեր էին արած, Մեռածի վերայ կատարուէին օրինաւոր հարց ու խնդիր և այրուէին նորան, եթէ նորա անմեղութիւնը չէր ապացուցանուում. Եւ գրեանքը, և ճարտարապետական գործերը չը կարողացան շնորհ գտանել այս ամբողջ ընկղկոսութեան անաջն:

Չորրորդ դարումը ահա սկսած էին այրել մի քանի մարդիկ Մանիքեցոց աղանդից, առանց յիշատակելու այն հալածանքները որ տրանից յառաջ, այսինքն սկսեալ երկրորդ դարուց և յետոյ, երբ ամենայն այլահասարակութեան Մանիքեցիք, շատ կամ սակաւ յարուցած էին ընդդէմ հերետիկոսներին. Բայց տասներորդ դարումը միայն բացվեցան հալածանքները խիստապէս և սիրապէս. պատճառ, օրինաւոր զինաշարժութիւնքը ընդդէմ աղանդաւորների սխանութեան այս ժամանակից, Ինչպէս յառաջուց Մանիքեցիքը ասոււմէին հերետիկոսք, նոյնպէս այժմ պապական եկեղեցու իշխանութենից հրա-

ժարվողքը աստուծին Վալդիկեանք այս հերձուածի շինողի անունով որ էր Պետրոս Վալդոս, Ինկվիզիցիոնի նիւթը, և կարելի է ասել թէ նոյն իսկ Ինկվիզիցիոն պատրաստ էր, միայն թէ չը կար դեռ ևս նորա անունը, և ոչ մի կանոնաւոր կառավարութիւն զորա մասին. եւ այս բանը գլուխ եկաւ այժմ, երբ որ ժողովուրդ մեծ քահանայապետ Իննոկենտիոս երրորդը իւր, բոլոր քրիստոնէական ազգերի վերայ հասանող, ուշադրութիւնը դարձուց և դեպ ի Վալդիկեանքը, Իննոկենտիոս Պապը իւր իշխանութեան առաջին տարուամբ ահա, 1198 թուականին, ուղարկեց հարաւային Ֆրանսիա երկու յիսուսիցեան արեղայք Բոյնների և Գվիցո անունով, որ սցնական լինին և քաջալերեն վիճակաւոր եպիսկոպոսները, ըստ որում սորա շատ անգամ թողլ էին գտանված ընդդէմ հերետիկոսներին. և 1215 թուականին, այն հոռակաւոր մեծ անկերտական սինհոդոսը Վատրանի, Հոմի մէջ, կարգ և կանոն դրեց թէ ինչպէս պիտոյ է հալածել աղանդաւորքը, Եւելի յետոյ եղած ժողովներէ մէջ, զոր օրինակ, Տուլուզ քաղաքումը, 1229 թուակ. իններորդ Գրիգորիոս Պապի օրերումը, այդ մասին եղած սահմանողութիւնքը ընդարձակվեցան և բարեկարգվեցան աւելի, ըստ որում զոյն այդ Պապը յղացաւ մի բաղդաւոր խորհուրդ, այսինքն, այն նոր հոգեւոր դասաստանը յանձնել Գովինիկեան արեղաներին, Եւս արեղայական միաբանութիւնը ջուշանումը իւր մէջ այնպիսի մարդիկ որ առաւելապէս կարող էին հաւատի բաների վերայ դատաւոր լինել, Սորա լինելով խստակրոն, շատ աղքատ, դիմացկոտ, անողոքելի, ցնորամիտ նախանձաւորք պապական եկեղեցու, գոյց թէ և վտրբ մի տեղեակ կանոնական և գլխապարտական իրաւունքներէ, այնպէս գերազանց հանդիսացան իւրեանց զործի մէջ, որ ոչ մի ընկերութիւն, հալածելով հերետիկոսքը, չեղաւ այնպէս բաղմարդին, ինչպէս նորա. զեղեցիկ պարձանք, միայն թէ զործը չը լինէր պիղծ և դժոխարմատ, Եւս Գովինիկեան արեղայքը հաստատեցին իւրեանց կացութիւնը Տուլուզ քաղաքի մէջ, ապա տեղափոխ և ողան դեպ ի Կարբոնն, ուր, սկսեալ 1226 թուականից, գտանվումը նորա դատարանը հերետիկոսներէ վերայ, դեպ ի Վոմպելէ, Քարկասոն, Ելքի և Կահօր, և այսպէս ճիւղաւորվեցան միջերկրական ծովեղբերակցի երկայնութիւնով, և յետոյ ներս մտան աշխարհի մէջ, յառաջ խաղալով մինչև Ֆլանդրիա. Երեսայն գաւառը միայն, և բնում թէ տեղապէս ընդդիմացած է այդ արեղաների ներգործութեանը, Եւ հասարակ պիտոյ է ասել, թի ֆրանսիական ազգի բնւորութիւնը ընդդիմադրեց ինկվիզիտօրներին զանազան տեսակ և երկուելի դժուարութիւններ. Զոր օրինակ, մի արինհեղական խաղալութիւն ծագելով Աիոնի մէջ, հերետիկոսներէ գատաւորքը արտաքսվե-

ցան քաղաքից, և 1234 թուակ. վեր կացան Լանգվեզքից մեծ բազմութիւն Տրեաիկոսների, Ճանապարհ ընկան Պիրինէական սարերի վերայով, և կամենումէին Երազոնիայի և Կասալոնիայի մէջ տուն ուտեղ հաստատել, բայց ախոս, որ Ճանապարհէին սպառվեցան ամենեւին: Նոյն Լանգվեզքումը յարձակվեցաւ ժողովուրդը ինկվիզիտորների վերայ և սպանեց նորանց. նոյն թուակ. Կորդես քաղաքի մէջ, և գրեթէ մի դար յետոյ, այսինքն 1320ին բարձրացաւ այն տեղ մի սաստիկ խռովութիւն ընդդէմ նոցա. և թէ այդ արեւնարբու ինկվիզիտորքը ինչքան ատելի էին ժողովրդի աչքումը, բացայայտ և այն նախատական անուանելից որ տուած էին նոցա. դոր օրինակ, անգուժ Բեռնհարդոս Կանչիոն ասվումէր ժողովրդի բերածումը Լեբեդիւնէի Մարտի: Գործը այսպէս լինելով, և թէ Գրանսիայի թագաւորքը չը պաշտպանէին ինկվիզիցիոն, սա դժուար թէ ներս բերած կը լինէր այս աշխարհի մէջ, թնդ թէ կարող էր երկար ժամանակ արմատանալ այն տեղ: Բայց Գրանսիայի թագաւորքը իսրեանց համար շահակա տեսան այդ բանը, և այդ շահակաութիւնը բաւական զորուոր պատճառ էր շատ փոքր կամ թէ ամենեւին ոչինչ չը հոգալու ժողովրդի կամքը: Այս, սկսեալ Լուզովիկոս իններորդից, մասնողներին վարձ էր սահմանած Գրանսիական թագաւորներից: Այդու ամենայնի չը զողարեց ժողովրդի բարկութիւնը. 1234ին ահա, Գոմբիկեանքը 40 հոգի միասին արտաքսվեցան քաղաքից և մագիստրատը պատուիրեց, որ ոչինչ բան չը վաճառեն և չը տան նոցա, ըստ որում հերեակոսների դատաւորքը մի մեռանող Ալրիգեան կին դատապարտել էին, որ կրահամահ լինի: Նոյն տարումը յորբորվեցաւ, ուխամսեայ խռովութենից յետոյ, Կարբոննի մէջ մի պատերազմ ընդդէմ դատարանին, և նոյն միջոցումը ինկվիզիցիոնի գլխաւորը մի փառուոր ձեռ կերաւ Գարկասոնի մէջ: Ավիյունեա քաղաքումը 1242 թ. սպանվեցան 8 ինկվիզիտորք միասին, և այն միջոցին, երբ Քարկասոն քաղաքը 1294 թուակ. բողոքեց դէպ ի փիլիպպոս գեղեցիկը ինկվիզիտորների վերայ, ըստ որում անպարտ մարդիկ դատապարտած էին, գանգատ մատուցին թագաւորին և այլ քաղաքներ, թէ ինկվիզիտորքը, պատճառ տալով որպէս թէ տեղեկութիւնը էին հաւաքում աղանդաւորների մասին, մանկամարդ կանայք հանումն Ճանապարհից և մոլորեցնումն դէպ ի անտակութիւն: Ըուստ սորանից յետոյ բարձրացաւ Քարկասոնումը մի սաստիկ խռովութիւն. ժողովուրդը յարձակվեցաւ դատարանի սպարանքի և Գոմբիկեան մենաստանի վերայ, և ինկվիզիտորքը խայտառակվելով արտաքսվեան քաղաքից, միայն երկու տարուց յետոյ համարձակվեցան նոքա դարձեալ բունաւորվիլ այս տեղ: Գրանսիայի բաղդիքը թագաւոր փիլիպպոս չորրորդը

անհաւան էր այն բանին, որ ութերորդ Բոնիֆացիոս Պապը կաննչու
Ինկվիզիցիոնի առևանք իւր իշխանութեան ներքոյ կաշտուցանել, և այս
պատճառով Ինկվիզիցիոնի կարողութիւնը թուլացաւ. Գրանսիայի մէջ,
թեպէս զեռ ևս երկար միջոց գործակատար էր: Միայն 15 դարումը,
երբ Ինկվիզիցիոն Սպանիայի մէջ հասած էր իւր կարողութեան գե-
րագոյն աստիճանին, սկսեց նա նուազել Գրանսիայի մէջ. բայց կըր-
կին անգամ վերածաղկեցաւ այդ թիւնաւոր ծառը Գրանսիայի մէջ
Ռեֆորմացիայի ժամանակին, առաջին Գրանսիական թագաւորի սրե-
բումը, որ մուկին սիրով սկսեց իւր աշխարհի մէջ յաջողութիւն տալ
Լուծերականների հալածելուն, և 1536 թուականին Փարիզի մէջ
իւր բոլոր պալատականների և հարձերի հետ միասին ներկայ դասն-
վեցաւ մի սյգոյսի պատժողութեան հանդէսի: Երկրորդ Հենրիիոս
թագաւորի սրբումը, որ ևս առաւել թշնամի էր Ռեֆորմացիային,
հարկադրվեցան այն և պարլամենտի խորհրդականքը, հրապարակեան
դպրոցների ուսումնաստարը և ուսուչիչքը ժամադրեալ միջոցներով
կրճտական քննութեան տակ ձգել իւրեանց անձը, և մազխարատքը
ամենայն զգուշութեամբ, մի գուշե թէ մտնեար նոցա և հերետիկո-
սութեան հօտը, պարտական էին քաղաքական պաշտօնից հեռի պա-
հել այնոյսի մարդիկ, որ չէին վերջամ որդեա խտական հաստա-
ւորք: Գրանսիական երկրորդը 1551 թուակ. նոյեմբերի 11-ումը յան-
ձնեց Պարլամենտներին հաւատի դատաստանը, և կարգադրեց, որ նո-
ցա հաստատեին առանձին դատարաններ Ինկվիզիցիոնի համար և գոր-
ծակից ամենէն այդ բանին դատական և անդական ինկվիզիցիոնը:
Եւսպէս ահա յառաջացան ջոկ տեսակ դատարաններ, որ ժողովուրդը
ասումը Այր-ը Արդենտ (Chambres ardentes). ըստ որում և սորա կրակով
դատաստան էին կատարում հաստատաւիտ հերետիկոսների վերայ: Եւս-
պէս ահա Գրանսիայի մէջ տեւելին Ինկվիզիցիոնի դատարանքը երբեմն
աստակ և երբեմն թոյլ ներգործելով, մինչև 1772 թուականը, բայց
Գրանսիական ազգի առողջամիտ և աղտաւեր հոգին միշտ յաղթող
հանդիսացաւ: Եւելի երկար տեւելին հաւատի առևանքը Տուլուզի մէջ,
որ 1617 թուականին, և քարկասանի մէջ, որ 1635ին սյրվեցան
վերջին հերետիկոսքը: Եւյն տեղ վերջացաւ Ինկվիզիցիոն 1772 թուա-
կանին, այս տեղ աւելի յառաջ, այսինքն 1645 թ. ապրիլի 30ին:
Եւսպէս, առաջին ինկվիզիցիոնական առևանքը էին և վերջինքը, թե-
պէտեւ նոյնպէս շատ զարհուրելիքը: Քարկասանի մէջ 1246 թուակ.
դատաստան կատարվեցաւ 1100 մարդու վերայ, որոնցից 305 հոգի
հրակամահ եղան: Բազմութեամբ այրելը պատահած է Եւրիգեան պա-
տերազմի ժամանակին և Ռեֆորմացիայի սկզբումը: Խաւիսի մէջ
ներս բերվեցաւ Ինկվիզիցիոն համարեա թէ մի և նոյն ժամանակին:

տանց արգել գտանելու կառավարութեան կողմից կամ թէ ապրստամբութիւն և բողոք յառաջայնելու ժողովրդի կողմից: Միայն Նեպոլեոնի մէջ չը կարողացաւ զա երբէք արմատ բռնել. և Վենետիկեան Հասարակացեալութեան մէջ, թէև այլ էին Պապի փորձերը, ամենին կախ շինվեցաւ տէրութեան իշխանութենից, և այս պատճառով չը կարողացաւ նա այնքան զարհուրելի ապականութիւնք գործել, ինչպէս միւս Իտալիայի մէջ: Վալդիկեանց ազգիցը միայն, որոնցից երեք Հասարակութիւնք կան զեռ ևս և բնակումնն Պիեմոնտումը երեք ձորերի մէջ Լուզերնա, Պերոզո և Սան Մարինո անունով, տնից ու տեղից քարուքանդ եղան 4000 հոգի, 1560 թուականին, երբ որ կայսր Քրիզթիկոս երկրորդը սքստրական հրովարտակ էր արձակել: Մնտալլո քաղաքումը 88 հոգիք կատարվեցան մարտիրոսական մահով, և մի մարդ, Բենեհարզոս Կոնտե անունով, ձիւթապատ արած կրակ տուեցին, որ ջահի պէս լուսատու լինի տեսանողներին: 1400 թուակ. Վալդիկեանքը Բորելլի անուն ինկվիզիտորի ձեռքով արտարվեցան Տուրին մայրաքաղաքից, և այս միջոցին տեղի քան թէ 50 կնամարդ կորուստ գտան սարերի վերայ ձիւնի մէջ: Երբ որ ութերորդ Ինտոկենտիոս Պապը հրամայեց մի խաչակիր պատերազմ ընդդէմ Վալդիկեանց, սորա ապրեցուցին իւրեանց անձը իւրեանց քաջութեանով միայն. նմանապէս 1560 թուակ. երբ որ մի զօրք 4000 մարդով, որոնց օգնական էին և Սպանիացիք և Քրանսիացիք, զուրս գնաց նոցա հանդէպ: Երբ որ Լուզովիկոս տասն և չորսերորդը վերացուցէ էր Նանտեսեան հրովարտակը, այս բանիս նմանող գտանվեցաւ Սարգինիայի արքայ Կարոլոս Իմանուէլը, և 14000 հոգի Վալդիկեանք բանտարկվեցան և շատերը տարադէր և զան, որոնցից մեծ բազմութիւն կորուստ գտաւ: Հալածանքները Վալդիկեանց ազգի վերայ տեւեցին մինչև առաջին Քրանսիական Ռեվոլյուցիոյի ծագումը, և Նապոլեոնի կործանմանից յետոյ մինչև 1848 տարու Ռեվոլյուցիան:

12. Գերմանիայի մէջ կամեցաւ ամբանալ Ինկվիզիցիոն, բայց զա, փառք և պատիւ. գերմանական ազգի անուանը, չը կարողացաւ այս տեղ արմատ բռնել: Ընթինը, որ 13 դարու սկզբումը կամեաւ մեր դարան իւր բոլոր սարք ու կարգով ներս բերել այն տեղ, եղաւ Կոնրադ Մարրուրգեանը: Երրորդ Գերմանիայի մէջ, ասումէ ժամանակակից Ըլրերիկոսը իւր լատինական ժամանակագրութեան մէջ, սկեսելին այնպէս սաստիկ այրել Տերեափիկոսը, որ սոցա թիւը անքննելի է. այս բանի վերայ առ փոքր փոքր գանգատ բարձրացաւ. շինականներէ կողմից, յառաջ զնալով զէպ ի պատուելի քաղաքացիքը և նոցա կանաչը. ապա ընդդէմ վեր կացան բերդակալ և աղետական սքստն-

ները, վերջապէս և մտակայ և հետակայ գրաքնները¹¹, բայց Կոն-
րազ Գարբուրդեանը 1233 թուակ. իւր ոգնականներով միասին սպան-
վեցաւ մի սղգոյցին խռովութեան մէջ, Այն ասելով թիւը որ ստա-
ցել էր նա բոլոր Գերմանիայի մէջ, չը թողեց երբէք, որ Ինկվիզի-
շիօն հաստատվի այս տեղ, թէպէտ մի քանի կայսրներ և իշխաններ,
դոյս մէջ նոյն ինքն, հերետիկոսութեամբ պարտաւորված, ֆրիզի-
կոս երկրորդը ունէին այժ ոչ փոքր կամք, այն զարհուրելի կարգա-
գրութիւնը ընտանի կացուցանել գերմանական ազգի մէջ, Այնու ա-
մենայնիւ երբեմն պատահումէին այն կարծեցեալ Հաւատական գործո-
ղութիւնքը և այրողութիւնք. առանկ յաճախ և երկար լինումէին
Բրեմընեան վիճակումը, այլև մի Եստրաբուրգեան եպիսկոպոս 15 ե-
րորդ դարումը այրել տուեց 24 մարդ, և Բինգըն աշխարհումը 1457
թուակ. կատարվեցան նոյն մահով 35 քաղաքացիք, Բոհեմիայի մէջ
ներս բերվեցաւ Ինկվիզիշիօն Կայսր Կարոլոս չորրորդի ձեռքով. բայց
որովհետև Ինկվիզիշիօն չուներ այն տեղ բաւական զօրութիւն, այս
պատճառով Պապը պահանջեց կայսր Ալեքսանդրից, որ ստակացնէ
Ինկվիզիշիօնի օրէնքները, բայց Սիգմունդը չեղաւ հաճոյակատար,
Այդու ամենայնիւ, երբ որ Բոհեմիայի մէջ սկսվեցան հաւատի խռու-
նակութիւնքը, Ինկվիզիշիօն աւելի համարձակ սուպարեզ բացեց իւր
համար, և աստհամարտեալ Հոխտորատըն Քեպլաշին կրումէր Գերմանի-
այի մէջ զեռ ևս 16 դարումը մականունս¹², և Երետիկոսների դատաւոր:

Եթէ նայենք Ենգլիայի վերայ, և այս տեղ աւելի բաղդաւոր
չը գտանվեցաւ Ինկվիզիշիօն քան թէ Գերմանիայի մէջ, Գորա կա-
րապետը (յառաջագնաց Նշանները) էին այն հայաճանըները ընդդէմ
խռոտրվողներին կաթոլիկեան Եկեղեցու սահմանադրեալ հաւատից, 14
դարու վերջին կիսամասնումը հոգեւորականքը թողլուութիւն ստա-
ցան ընդդէմ վեր կենալ Առլարդեան և Ալիլէյֆեան վարդապետու-
թեանը և դորդ դրեցին իւրեանց կարողութիւնը, Ինկվիզիշիօնի գոր-
ծակատարութիւնքը սկսվեցան կամ արքայական կարգադրութեաններով
կամ թէ Պարլամենտի հրահաններով, Դմանապէս օրինադրվեցաւ թէ
ինչ Նշաններով կարելի է ճանաչել աղանդաւոր մարդիկը, Այսինքն,
ով որ կանցանէր մի խաշի մտից, առանց համբուրելու նորան, մի
սուրբ պատկերի մտից, առանց երկրպագութիւն տալու նորան, ով
որ մի հրապարակական թատիբի մէջ չէր ցուցանում պատշաճաւոր
անկնածութիւն, ով որ ուներ կամ կարգումը Աստուածաշունչ կամ
այլ գրեանք անգլիական լեզուով, նա հերետիկոսութեան կասկածան-
քի տակ էր և պիտոյ է երեւէր սուրբ տոննի առաջև, Պատահումէր
չատ անգամ, որ սքոտրլոնդի մարդիկ, ըստ որում հանդիպմամբ ու-
նէին մի Աստուածաշունչ անգլիական լեզուով, թէպէտ երբէր կար-

դացած չէին նորան: Ընդլիական ինկվիզիտորներին մէջ առաւել զար-
հուրելին էր Թովմաս Արունդել արքեպիսկոպոսը. շենրիկոս ութն-
բորդի և Մարիամ թագուհու ժամանակին զարձակ լացվեցաւ մի ա-
ւելի լայն սպարեզ ինկվիզիտորի համար. այն, Մարիամ թագու-
հին կամք ևս ունէր Ընդլիական ինկվիզիտորին աւել այնպիսի կեր-
պարանք, ինչպէս Սպանիականն էր. բայց այս խորհուրդը, մարդկու-
թեան բաղդից, անկատար մնաց. Այդու ամենայնիւ երևում չէ, որ
Ընդլիայի մէջ եղած ինչէն կայուն տեսանք հերետիկոսների համար.

Առաւել սոսկալի կերպով գործակատար էր ինկվիզիտորն Սպա-
նիայի մէջ. այս տեղ ներս բերեց զորան Ֆերդինանդոս կաթոլիկ-
եանը Պետրո Վոնզալէց զը Մենզոզա կարդինալի գործակցութենով,
թեպէտ այդ բանին շատ և շատ ներհակ էին Արագոնիայի ազնու-
կանքը. Նոյն իսկ Պապին անհաճոյ էր ինկվիզիտորի ներմուծութիւնը
Սպանիայի մէջ, ըստ որում այդ բանը յառաջացել էր թագաւորի
կողմից և շատ շահաւետ էր նորան: Պատճառ, թէև ինկվիզիտորն
համարվումէր կարգած Աստուծոյ և Եկեղեցու փառքի համար, այնու
ամենայնիւ մի աշխարհական գործ էր դա, որովհետև զատապարտա-
ների կալուածքը հասանումէին թագաւորին, և սա էր որ կարգումէր
աշանդաւորների զատաւորքը: Երբ որ 1480 թուակ. տերութեանական
ժողովի մէջ Տօլէդօ քաղաքումը սահմանադրվեցաւ, որ կարգի մի
ընդհանուր ինկվիզիտօ (general inquisition Suprema), 1481 թուակ. բաց-
վեցաւ այս նոր տեսանք Սեվիլայի մէջ և չորրորդ Սիբաստո Պապը
հաստատեց նորան 1483ին: Առաջին թագաւորական ընդհանուր ինկ-
վիզիտօրը էր Թովմաս զը Տօրկվեմադա, մի անմասն զահիճ, որ և
նոյնպէս Սեգովիայի դոմինիկեան վանքի առաջնորդն էր և Իզարելլա
թագուհու խոստովանահայրը. Նա կարգեց իւր համար թիկնապահք
50 ձիաւոր և 200 սպասաւորք ինկվիզիտօնի. դոմինիկեանց վանքը
Սեգովիայի, կարճ միջոցում այնպէս լցվեցաւ բանտարկած մարդերով,
որ տեղ չը կար աւելի. և այս պատճառով թագաւորը զատարանի
համար տեղ տուեց իւր Տրիանա ամրոցը քաղաքագաւթի մէջ. Այն
դիւանական արձանագրութեաննրից, որ 1834 թուակ. հրատարակվե-
ցան Մադրիդի մէջ, ծանուցանելով ինկվիզիտօնի ձեռքով մորթած
մարդերի թիւը և համարը, երևումէ որ Գիեգօ Պերելլի գործակցու-
թեամբ մնած են 34,952 հոգի, Տրաներոսի գործակցութեամբ 51,167
մարդ, և Տօրկվեմադայի հրամանով միայն 105,285 անձինք, որոն-
ցից կենդանի պլլված են 6000 մարդ. Այս բանի աղապա սկզբումը
ահա բարձրացան ազգային խոռվութիւններ Սպանիայի շատ սահմա-
ներումը. զինաշարժութիւն եղաւ, բայց ինչպէս Սարագոսսան, նոյն-
պէս և այլ քաղաքները յաղթահարվեցան թագաւորի առաւել կա-

բող դաւաղանովը. Նոյն իսկ փորձերը որ արեցին, մեծամեծ զանձե-
բով թաղաւորը կաշառելու համար, անյաջող կացոյց Տորկվեմադայի
խորամանկ հնարագիտութիւնը. Սպանիան դարձաւ նախապատիւ աշ-
խարհը այն հաւատական գործողութենների որ ամբումին Աուստրա-
ֆէ, և թէ ինչպէս էին կատարուում դոքա, պատմե՛ք այս տեղ մի
օրինակ, որից կարող էր մեր ընթերցողը իմաստասիրել միւսերը.
1559 թուակ. մայիսի 21ին Երրորդութեան տանի օրումը տեսան Սպա-
նիայի Ալալազօլիդ քաղաքի մէջ, մեծ հրագարակի տեղումը կիսարո-
ւորակ բարձր առեանք. նոցանից մինի վերայ Սեփիլլայի արքեպիսկո-
պոսը որպէս ընդհանուր ինկվիզիտօր, բոլոր միաբանութիւնը Ինկվիզի-
ցիօնի, այլև չորս միւս եպիսկոպոսք և տերութեան պաշտօնակալները
ներկայ այն տեղ. հրագարակումը, փողոցներումը, պատուհանների
մօտ, նոյն իսկ տանիքների վերայ խուան բաղմութիւն նայեցողների.
Աուստուուն վաղ, վեց ժամից յառաջ փառքով ու հանդէսով բազ-
մեցան արքայական բարձրագիրք նստարանի վերայ ապարանքին հան-
դէպ Յովհաննա թաղուհին, երկրորդ ֆիլիպպոս թաղաւորի քոյրը
և թագի ժառանգ Գոն Արլոսը, որ դեռ ևս 14 տարեկան էր. Սո-
ցա հետ Արքեպիսկոպոսը Սան Ետզա դը Ամբրոսելլայի, բոլոր պա-
լատականքը և միւս շատ ազնուականք. Սորանից յետոյ մի փողոցում,
դինուորեալ մարդերի և ամբոխի միջով, շարժվեցաւ տեղից մի բազ-
մութիւն կալանաւորների դուրս գալով Ինկվիզիցիօնի շինուածից.
չորս կողմից Ինկվիզիցիօնի սպասաւորքը, առաջից մի խաչ սև քողով
ծածկած և Ինկվիզիցիօնի կարմիր դրօշակը, դորս վերայ Պաաի և թա-
գաւորի անունը. սոքա անկվեցան մի այլ պատուանդանի վերայ. Ա-
լանաւորքը կրումին թշուառ մեղաւորների զգեստը Սան Բնիտօ
նունով, որ մի երկար կոտոր ասուեղէն հագուստ էր առանց թևերի,
մի ծակ թաղած գլխի համար. այդ հագուստը առաջուստ և յետուստ
աղատապէս ցած էր իջանում մինչև ծունկերը, ինչպէս մի վերար-
կու. գլխի վերայ ունէին նոքա մի սրածայր գդակ. Այդ վասարազգ-
ների ձեռքերը առաջից կապած էին շուաններով, ձեռքերի մէջ վատ
քահեր կանաչ մոմից. Անդամապէս այրվելու դատապարտածների ըզ-
գեստի և գդակի վերայ նկարած էր մի մարդ շրջապատած բոցերով
և սասանայական կերպարանքներով. Աւելի թեթեւ մահով մեռանե-
լու մարդերի վերայ բոցերի ծայրերը գնումին դէպ ի ցած. նոքա,
որոնց շնորհած էր նոցա կեանքը, ունէին զգեստի և գդակի վերայ
կարմրագոյն անդրեւտեան խաչեր, և սոցա ձեռքի քահերը վատած
էին. Լամարեան թէ ամենների երեսի վերայ տեսանվումին անողորմ
շարժարանքի հետքեր. կալանաւորների գլխին կանգնած էին հինգ
եղբայր և քոյր, զոցա մէջ երկու կրօնաւօր և մի կրօնաւորուհի, և

նոցա մօտ, նոցա պէս զգեստաւորմամբ մի կնամարդի պատկեր որ դրած էր մի միսյանայ արկղի վերայ: Այս պատկերը էր նոցա, զատապարտութենից յառաջ վախճանեալ, մօր Ելէւծօրէ զը Աւերբերջի, որի մարմինը դրած էր այն արկղի մէջ, իւր զաւակներէ հետ միասին նոյն կրակովք պրօկելու համար:

Ինկվիզիտօրքը նստած էին մի ամպհոյսովու տակ մի սեղանի առաջև, որի վերայ կային մի խաչ, ճրագներ և այլ բաներ որ պատկանումէին զոհարեութեանը, Սեղանի մօտ մի բեմ, ինչ տեղից Մելքիօր Կանօ զոմբնիկեանը, պապական գիանականութեամբ անուանի, որ ընտրած էր Եպիսկոպոս Կանարեան կղզիների համար, քարոզ ասաց, քարոզը աւարտմամբ, Սեմօլայի արքեպիսկոպոսը մտնեցաւ արքայական մեծութիւններին և երգումն տուեց նոցա պատարագամատուցի մէջ դրած խաչովք, այսպէս. «Որովհետև Պապի սահմանադրութեամբ և սուրբ եկեղեցական օրէնքներով հաստատած է, որ թաղաւորքը երգմամբ չպի ուխտեն յառաջագէմ կացուցանել սուրբ կաթոլիկեան հաւատը և քրիստոնէական Կրօնը, ապա ձեր արքայական մեծութիւնքը երգումնն Ըստուծոյ և սուրբ Մարիամ կուսի անունով, սուրբ աւետարանով ու խաչով, որոնց վերայ դրած են ձեր արքայական ձեռքերը, որ Գուգ կամենումք օգնական լինել սուրբ Ինկվիզիտօնի զատարանին և նորա պատարներին, ընդդիմանալ հերետիկոսներին և պապական հաւատի ուրացողներին, այլև ամենչուն որ այսպիսիներին յաջողութիւն էին տալիս և պաշտպանումէին, սմանեցուն որ, ինչ մարդիկ և էին, միջապէս թէ անմիջապէս հակառակ էին այս սուրբ զատարանին. նմանապէս որ Գուգ կամէիք ձեր բոլոր հպատակներին պատուիրել, որ հնազանդեն Պապի կարգադրութեններին և կոնդակներին որ տուած էին մեր սուրբ կաթոլիկեան հաւատը պահպանելու համար հերետիկոսների, նոցա ուսման հետեւողների, նոցա անձը ընդունողների, սիրողների և պաշտպանողների երեսից»: Երբայական մեծութիւնքը պատասխանումն այսպէս. «Սեք հաստատումնք այդ երգումը»: Մորանից յետոյ օրհնումն արքեպիսկոպոսը այսպէս. «Ուրեմն Տէր Ըստուածը պարգևէ շատ տարիք ձեր արքայական մեծութիւններին և շէն պահէ ձեր թագաւորութիւնը: Եւ շքեղակայ մարդիկը պիտոյ է երգումն նոյնպէս, ինչպէս արժան էր նոցա:

Մորանից յետոյ յառաջ գանչելով կալանաւորքը, յայտնելով նոցա Ինկվիզիտօնի և աշխարհական դատաստանի վճիռքը, և ամենների վերայ վատ անուն կապելով և նոցա բոլոր զոյքը խլելով, պատուհասակեցան ոմանք կրակի մահով, ոմանք մշանջննաւոր բանապահութեամբ, միւսերը վանքերի մէջ տառապագին ապաշխարելով, Գատապարտածքը, բաց ի մի Էրէպից, էին բոլորեքեան Լուծեալքովք:

քահանայք և քարոզիչք, իշխանուհիք, հասարակ տղամարդ ու կնամարդ, թուով քառասուն հոգի :

Կատալճիոքը կարգալուց և աւարտելուց յետոյ, վերստին ընդունվածքը յետ բիրվեցան զէպ ի իւրեանց բանօր. զէպ ի մահ զատապարտածքը յանձնվեցան աշխարհական իշխանութեանը : Ամեն մինը նստած էշի վերայ և շորս կողմից զինուորներով պատած, տարվեցան քաղաքի զբան առաջև, ուր պատժարանի տեղումը հաւասար հետաորութենով միմեանցից պատրաստած էին տան և շորս փայտակոյտք, և ամեն մինի մէջ անկած մի ցից : Առջա վերայ կապեցին մօրթեւու զոհները. ողորմութիւն ցոյց տալով, նախ և յառաջ խեղղամահ արեցին նորանց. միայն Անտոնիոս Էրցուելը լութեւակներ որ միայն չէր ուրացած իւր հաւատը, այլովեցաւ կենդանի և մեռաւ անկյանդիման արհամարհութեամբ զէպ ի իւր սպանողքը : Նորա բերանը, ինչպէս սօղորութիւն կար, ջջի վերայ կապելուց յառաջ, մի խայթոցաւ որ երկամի դանդանաւանդ (սանձ) զրեցին, որ չը կարողանայ քարոզել իւր հաւատը :

Ահա թէ ինչպէս էին այն հաւատական գործողութիւնքը որ մոլեկրօնութիւնը և ախտարորոգութիւնը կատարուեին որպէս թէ Էստի անունով, այն հաւատի անունով, որի զերագոյն օրէնքը Աերն է, այն հաւատի անունով որի հիմնադիրը չէր եկած կորուսանելու, այլ փրկելու : Ահա թէ որպիսի կուրութեամբ ու զահասիրութեամբ մոլորված էր մի ընկերութիւն, որ կարծումէր կամ թէ կեղծաորութեամբ թէ Քրիստոսի պաշտօնեայ է, մինչև որ յախտենական ճիշմարտութեան և սիրոյ կրօնը զարձուց և շինեց իւր համար այդպիսի սարսափելի գործերի օրէնք :

Ապանիայից, երկրորդ Փիլիպպոս թագաւորի հայրական հոգաբարձութենով փոխադրվեցաւ Ինկվիզիցիոն և Ամբիգլիտի աշխարհների մէջ, ուր առաջին Աուտոգաֆեն կատարվեցաւ 1540 թուականին Փերսիկոյի մէջ : Նրեք ինկվիզիցիոնական ատենաք սահմանադրվեցան Ապանիական Ամբիգլիտի համար և ստորադրվեցան ընդհանուր ինկվիզիտօրի վերին խորհրդարանի տակ : Թէ ինչ կարգով պիտոյ էր վարել դատը, այդ մասին առաջնորդ էր Արագոնիայի ընդհանուր ինկվիզիտօր Նիկոլայոս Կիւմբրիկոսի զիրքը Directorium Inquisitorium, ապա Քարյելանայի մէջ 1503ին, և Էստումը 1578ին : Ով որ Ինկվիզիցիոնի գատասանով յայթահարված էր որպէս հերետիկոս և մահապարտած էր, բայց կամենումէր մեռանել որպէս կաթոլիկ, զորան նախ և յառաջ հեղձանդուկ էին ստնում և ապա այրուեմին, բայց միտերը այրվումէին կենդանի : Վերջին տեսակ մահով, ինչպէս բացայայտ է վերոյիշեալ զիւանական արձանագրութեանն իրից, կատարվեցան 1481ից

մինչև 1808 թուակ. ոչինչ պակաս քան թէ 31,912 մարդ, Միայն 18 երորդ զարու սկզբումը վեցերորդ Ֆերդինանդոսի թագաւորութեան օրերումը նուազեցան Աուստրալիէքը, և նորա յաջորդ Աարոլտս երրորդը օրէնքներով թույլացրեց Ինկվիզիցիոնի կարողութիւնը, Ամենին վերացվեցաւ Սպանիայի Ինկվիզիցիոն Նապոլէոն Ապստի Տրոպարտակով 1808 թուակ. զեկտեմբերի 3ին, Բայց զա, այդ մարդակեր վիշապը սպառել էր 500,000 զերդաստանի երջանկութիւն, և Սպանիական ազգիցը յախշտակել էր 2 միլիոն զաւակ: Թէպէտ Ֆերդինանդոս եօթներորդը կամեցաւ կրկին անդամ ասպարէղ տալ այդ արիւնտ դատաստանին, բայց նախ և յտուջ Սպանիայի Արտեւրը (մեծամեծքը) և յետոյ 1834ից արձակված մի թագաւորական Տրոպարտակ փակեցին զորա Տանապարհը, — Եւ Պօրտուգալիան 1557 թուականից սարսափելի կերպով փորձեց իւր վերայ Ինկվիզիցիոնի գազանական ներգործութիւնը. որ այս տեղից փոխադրվեցաւ ևս զէպի արևելեան Հնդկաստան, Ինկվիզիցիոն վերացաւ Պօրտուգալիայի մէջ Յովհաննէս եօթներորդի թագաւորութեան օրերումը, երբ որ զանազան սահմանափակութեններով, որ 18 երորդ զարուսը արած էին, թույլացան նորա զօրութեան ջիւղը:

Ով որ մեր լեզուագէտ ընթերցողներից ջանկանումէ աւելի մանրամասնարար տեղեկանալ Ինկվիզիցիոնի պատմութեանը, կարող է ուսումնասիրել այս գրուածքը գերմանական և ֆրանսիական լեզուով. Cramer: Briefe über Inquisitionsgericht und Ketzerverfolgung in der römischen Kirche, Leipzig, 1784. Liorente, Histoire critique de l'inquisition d'Espagne, Trad. de l'espagno. par Al. Pellier, Paris, 1817. 4 հատոր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՏԻՐԸ ՊԵՏԵԼԸ ՏԸՃԻԿՆԵՐԻ ԶԵՌՔՈՎ.

1453 ԹՈՒԷԿԸՆԻՆ.

Կոնստանտինոս մեծ թագաւորի պատկանելի, բայց արդէն խախուտացած, աթոռի վերայ բազմեցաւ. Կոնստանտինոս տան և մի երորդը, շատ արքայական տոհմեր արիւնաշաղախ փոփոխութեններով աթոռ նստելուց և աթոռից վայր իջանելուց յետոյ, Բայց մի գուցէ թէ այս աթոռը, որ անպատուել էին այնքան աննշան, թշուառ ու զարշիկի կայսրներ, կործանվի անարժան կերպով, այդ բանի համար, ասես թէ, բազղը պահպանել էր առաքինի Կոնստանտինոսը, Եւ թէ ցամաքած ծառի բունը, որ դարաւոր փոթորիկների մէջ արդէն կորուսել էր իւր տերևապսակը և իւր փառաւոր ոստերը, չէ կարող վերստին մանկանալ, այս բանը արդարև զգումը Կոնստանտինոսը, բայց նորա պարտականութիւնն էր, ինչքան երկար կարելի է, սա-

տակիչ կայինը հետի պահելէլայդ ծառի բունից: «Մեր ժամանակները, յաճախ գանգատած էր կայսրի հայր, իմաստուն Իմմանուէլը, շն կարող ասնել առաքինի տղամարդերի մեծութեանը և ժողովին. մեզ մնացել է միայն, հոգսերից շուարած տանուտիրոջ պէս, խնամատար լինել զգուշութեամբ պահպանելով անշաճ ու զնայած բազդաորութեան աւերակները:» Անստանափնոսը հաստարիմ մնալով այս խրատին, թէև շատ դժուար էր նորան շափաւորել իւր վերաթուիչ սըրտի ձգտողութիւնը, երբ որ սկսեց իւր կառավարութիւնը, թագաւորութեան վերջին դաւառը թող տուեց իւր զահասէր կողորմելին և սահմանափակեց իւր իշխանութիւնը առաւել մտա չըջակալքովը Աստանզնուպուլի, որ մի գուցէ քաղաքական պատերազմով արիւնհեղու-թիւն լինի ժողովրդի մէջ: Կա մի հանդիսաւոր զեսպանութիւն ուղարկելով Ամուրազ հայրա Սուլթանի մտա, աշխատուէր ստանալ նորա հաւանութիւնը, Բայց ինչ է մի թագաւորութիւն, որի մէջ զբաժ կայ քաղաքական երկպառակութեան սերմը. ինչ է մի թագաւոր որի աթոռի հաստատութիւնը կախ է մի կարող մարդու հաւանութենից. Անստանափնոսը քաջ գիտէր իւր որպիսութիւնը, և ինչպէս փորձառու նաւարիւն նախատեսանումէ այն մրրիկը որ պիտոյ է կործանէր նորա դիւրափշուլի նաւը, այսպէս ևս աթոռանըստութեան օրին կայսրի հոգու առաջն պատկերացաւ նորա թագաւորութեան կործանումը: Այս պատճառով լուս և տրտում մնաց կայսրը, երբ Աստանզնուպուլի ժողովուրդը ցնծալով ընդունուէր նորան. և երբ որ նորա հաստարիմ Քրանցան վերադարձած էր իւր զեսպանութենից զէպ ի Արաստան, որի զեղէնիկ թագուհին հարանախօսու-լու էր զնայել նա իւր թագաւորի համար, արդարև քաղաքացուցին կայսրի սիրտը իւր քաղաքացիներին բազմաձայնեայ շնորհաւորութիւնքը, բայց Աստանափնոսը առանձին ժամանակ գտած, իսկոյն գրկախտանեց իւր բարեկամը յայտնելով նորան իւր սրտի ցաւը: Այն, խօսեց կայսրը, ևս ուղարկեցի քեզ հարանախօս զէպ ի Արաստան, կամենալով կատարել իմ ժողովրդի ինչիքը, որ ցանկանուէր ունենալ աթոռի ժառանգ. բայց այլ հոգսեր քան թէ հարանիքի հանդես պատրաստել պահանջումէ մեզանից բազդը: Իմ հոգիս մարդարեւնումէ, որ այս քաղաքի պարիսպները աւելի շուտով կը լսն պատերազմի օրոտը քան թէ հարանիքի երգասացութիւնը, ժողովուրդը իւր թեթևամտութեան մէջ խնդութեան ձայն է բարձրացնում, լսելով թէ Ամուրազ Սուլթանը մեռած է. այն մի ահարկու մարդ է սա, բայց արդարագնաց և իւր պատերազմական գործերից վատակած. բայց այն մանուկ առիւծը որ նստեց նորա աթոռի վերայ, արդեօք նորա քունը տանելու էր հայրական պարծանքների հոխնու տակ. մի թէ չէր

ցանկանալու նա իւր սեփական յաշխմանակները ունենալ, և ինչ կարող են ներգործել արգարութեան և մարդասիրութեան պատճառները ընդդէմ գաշատիրութեան և մանուկ հարստ աշխոյժ (վառուճ) ձգտողութեանը։ Աւրեմն գնահ, իմ հաստարիմ բարեկամ, և օգնութիւն գտնելիք մեզ Արևմուտքի քաջ ազգերը, նոյն ամենեջան հասանելու է վտանգ Յուլիանի ձեռքից, եթէ կործանվեցաւ Առասանդուստիս, որ Եւրոպայի պահպանողական պարիսպն է։ Երանի՛ թէ մի վայրկեան մոռանալին դարա իւրեանց փոքրահոգի անձնասիրութիւնը, ու շաղիք լինելով ընդհանուր փտանդին։ Մեր ամենեքեանքս փրկված էինք, եթէ միայն լինինք, Եւ յետոյ, իմ սիրելի Քրիստոս, երբ որ անցած էր փոթորիկը, այնուհետեւ թող մտածենք ընտանեկան ու բախտութեաններէ վերայ, այն ժամանակը միայն կարող էիր դու գնալ ու բերել այն հարսը որ սիրուեմք իմ սիրար։

Առասանդուստի տիրատեսիլ սարիցը թող բաց նայենք զեպ ի Աշխիանուստիս աշտարակները, ինչ տեղ մի մանուկ թագաւոր, արհամարհելով հին Յուլիանների փառահեղութիւնը, մի խորհրդաւոր կերպով անախմբուեմք իւր թագաւորութեան սկիզբը, պալատականների անօգուտ բաղմութիւնը հեռացուցանելով իւրեանից և պատերազմական խաղաղութիւններ կատարելով։ Ինչ ասեմ Մոհամեդ երկրորդի բնաւորութեան մասին, նորա անունը իւր դարու զարհուրելի բանն էր, նորա բաղուկը մի բարկութեան դաւաղան ազգերի համար, Ափսոս, որ նեղահայեաց մասննագիրներէ կուրացութիւնը և ազգերի յիմար բարեւրութիւնը շատ երկար ժամանակ խուճկ է ծխել այն բնաւորների քթին, որ եղած էին մարդկութեան կողոպտիչքը և սպանողքը։ Փիլիստփայութիւնը, որ ամենայն բանի տալիս է իւր արգարացի գինը և կշիտը, խլել է աշխարհակալներից սոցա անիրաւութեամբ սեփականած փառքը, և նորանց, եթէ ոչինչ այլ պարծանք չունէին բաց ի աշխարհակալութենից, ձգել է մարդկութեան արհամարհանքի ու անեծքի տակ, Երգեօք Մոհամեդ երկրորդը արժանի էր աւելի քաղցր դատաստանի, Այո՛, երկու անգամ կամաւոր կերպով հրաժարվեցաւ նա արքայական գաւազանից որ յանձնած էր նորան իւր իմաստուն և թագաւորելուց ձանձրացած հայրը, ըստ որում սերութեան կարիքը պահանջուեմք աւելի ցորաւոր ձեռք, թագաւորութիւնը զեկաջտելու համար, և այս ազնիւ անձնութեանը զարմանալու պատճառ է տուել սպառազ մարդկութեանը, բայց մոռացած էին, թէ հասարակ որդիական պարտականութեան կատարումը չէ այնքան գոյախանութեան արժանի, ինչքան յանդիմանութեան արժանի էր նորա զանցառութիւնը, մոռացած էին, թէ Մոհամեդ երկրորդը, մանկական հասակից դուրս եկած թէ չեկած, ա-

անց յանգղնութեան չէր կարող խրոխտալ (ձայն բարձրացնել) իւր փորձառու ծնողի վերայ, մտաջած էին նոյնպէս, որ նա միշտ և հանապաղ թժնամի մնաց այն վեզիլներին որ առաջարկած էին միասնաբար ակնարկելու նստեցնել Ամուրազը, Առհասարակ, մի մարդու բնաւորութիւն չէ պիտոյ կզրակացուցանել մի հաստ արարբից, որ կարող էր յառաջանալ շատ զանազան շարժաօթիթներէից, ոչլ անտարակուսելի գործերից և կեանքի բոլոր եղանակիցը, Մօհամմէզը իւր նորանիստ ակնարկ հաստատելով իւր մանուկ եղբորների արիւնով, ցոյց տուեց թէ ինչ տես թագաւորումէր նորա սրտի մէջ. և այն զորոյքը նորա սիրած մանուկների մասին որ հրամայեց նա սպանել իւր Եանիշարների աչքի առջև, կամենալով ապացուցանել թէ նա չէ սիրու ծառայ. այն զորոյքը 12 մանկլաւիկների մասին, որոնց փորը հրամայեց նա պատանել, որ որոնէ այն տեղ մի գողացած սեխ. այս բոլոր բաները ապացուցանումն գոնեայ, թէ նորա ժամանակակիցըր ինչ կարծիք ունէին նորա վերայ, նորա գործերի գումարը էր պատերազմ և բռնաւորական կամահաճութիւն. բայց առաւել զերապանծը, և նորա համարելովն առաւել գովելին, թէպէտ արդարութեան զատալճոտիք, ամենից գարչելի գործը էր Յունական թագաւորութեան կործանումը.

Եւ այն զեսպանների մէջ, որ արեւելքից ու արեւմտքից հաւարվել էին Մօհամմէզի ակնարկ շորս կողմը շնորհաւորելու նորա ակնո նրատակը, Կոստանտինոսի զեսպանըր առաւել յառաջամատոյցքն էին. Ամենների հետ խօսեց Յուլիանը խաղաղութեան և բարեկամութեան խօսքեր. բայց ինչ սպուտ նորա շրթունքի վերայ եղած խօսքերից, և թէ նորա սրտի մէջ յղացած էր պատերազմ. Այս ամենահպարտ մարդը, իւր անշարի գահասիրութենից մոլորված, շամաչեց գործ գնել շատ արհամարհելի նենգաւորութիւն. Այս պատճառով, երբ նա մի քանի ապստամբ գաւառներ հանդարտեցրած էր արագ զինաշարժութեանով, իսկոյն յետ դրեց երեսի պատրուակը (վարազոյրը) և յափըշտակեց անհոգ, քնի մէջ ընկած, Յոյներից նոցա ամենապատուական աշխարհները, որ, ինչպէս ինքը Մօհամմէզը մի փոքր յառաջ հանդիսով հաւատացուցել էր նոցա, թէ մնալու էին անմերձեանալի. Նոյն Մօհամմէզը հրաման արձակեց մի ամուր, սպաննողին զղեակ շինել ծովի նեղուցի մտ, հանդեպ Կոստանդնուպոլսին. Այժմ ահա Կոստանտինոսը բուն հռոմեական սլրականութեամբ հաստատեց մտքումը քարչել իւր սուրբ, որովհետև աւելի նախապատիւ էր համարում մի փոքր վաղ և փառքով ու յաջողութեանով գուրս քարչել նորան, քան թէ աւելի յետոյ, բայց անյուսալի և անողուտ. Բայց բազմութեան վախկոտութիւնը և մեծամեծների անհշարեանաւեր հոգին հար-

կազմեցին նորան ազգի փրկութիւնը որոնել բանագնացութեան (միջ-
նորդակտուութեան) ճանապարհով, ուր այնքան ևս անյաջող է տկար
իրաւունքը ընդդէմ հզոր յափշտակաւիրութեան, ինչքան նոյն իսկ
պատերազմի մէջ, Մօհամմէզը կամենումէր պատերազմ, ուր մնն և կայս-
րին չը մնաց ոչինչ պլլ բան, և թէ կամք չունէր խայտառակել իւր
անձը յաճ իջանելով ամուսնոյ և կամաւոր ծառայութեամբ ընդունել
և պատուել մի ամբարձաւած իշխանի շնորհ, նա թողլ տուեց այն
զղևակի շինութիւնը, և Տաճիկները աւերեցին շրջակայ սպարանը-
ները և տաճարները, որ շինութեան նիւթ ստանան. նորա սպանեցին
քանի մի մարդիկ որ քաջութեամբ պաշտպան էին սուրբ սեղաններին,
անողորմաբար կտորեցին սպասաւորը մի նաւ որ հրաժարված էր
վճարել այն անիրաւ հարկը որ պահանջումէր զղևակի մեծաւորը,
Կոնստանտնուսը սրտմեջաւ և լուս կացաւ. բայց յետոյ մի ամբարա-
ւած Փաշա իւր յատուկ, և իւր բնկերակիցներէ ձեռքը բաց թողեց
կանաչ արտերի մէջ Կոնստանդնուպոլսի շրջակայքումը, Չայրանայով
այս յափշտակութեան վերայ և վրդոված այս արհամարհանքից, սպա-
նեցին շինականը այն անիրաւոյնէրէջ մի քանիքը, և Մօհամմէզը
իւր վերայ անյով այս նախափէքը, արձակեց իւր արիւնձածարա-
զնուորները, որ և այն անբաղդ գիւղը քարոքանդ արեցին և շր-
ջակայ սահմաններումը կտորեցին անմեղ հնձարարը, Այնուհետև
փակեցան Կոնստանդնուպոլսի դարպասները, փողոցները լցվեցան ա-
հարեկեալ ամբոյններով, և ամենախելոտ մարդը ևս հասկանումէր
ահա, որ սրով միայն պիտոյ է վճարի գործը, Բոլոր աշխարհի մէջ
չը կայ մի աւելի մեծ և վսեմաիրաւ տեսարան, քան թէ մի ժող-
ովուրդ որ այն բռպէին, ևր մի կործանական վտանգ պիտոյ է ներս
յարձակվէր, այրական սիրտ և ստանում, և իւր ամենապատուական
և ամենասուրբ սեփականութիւնը փրկելու, իւր կեանքը և պատիւը
պաշտպանելու համար, վեր և կաշնում զենք, որ արիւսիրաւ պատ-
րաստականութեամբ կամ յողթէ կամ մեռանի, Այս սեղ վերջա-
նումը բոլոր զանազանութիւնը սեռի, հասակի և պաշանի. հարիւր
հազարներ քաջալերված են մի հողով, նոցա բոլոր մտածութիւնը
և ձգտողութիւնը լարված, բոլոր զորութիւնը արձակված կապան-
քից, և ընդհանուր զորութիւնը ուռչում սաստկացէս, որպէս մի
գետ, բոլոր մասնաւորների զորութիւնը միախառնվելով նորա հետ,
Մի ժողովուրդ, այսպիսի հողով վառված, զարհուրելի է, թէ և
լինէր փոքրիկ. թող շատ կարող իշխանը խելիւ նայէին զորս վե-
րայ, այնու ամենայնիւ նա ստաւել կարող էր, նա մեայու է հաս-
տատ և ինկելու և արձանի կենդանութեան և պատուութեան, — Այս-
պէս չէր այն այլանդակված հոռմական և յունական ժողովուրդը.

Նակաւք միայն արժանի էին իւրեանց անունին և իւրեանց կայսրին . հարստականքը չը կամեցան իւրեանց գանձերը գործ զնել ընդհանուր հարկաւորութեան համար . նորա պահաւակին իւրեանց սոխին և արծաթը Տաճիկների համար : Քահանայքը, որոնց վերայ գործակցութեան հարկ գրեց Կոնստանտինոսը, հայհոյութիւն նորան որպէս և կեղեցիների կողոպտիչ, և երբ որ նա, արևմտեան ազգերից սգնութիւն ստանալու համար, միաւորութեան դաշն կապեց իւր լատինական եղբայրակիցների հետ, անիծութիւն նորան որպէս հաւատարաց, Եւ սյսպէս, այդ քահանայքը օտարացուցին ժողովրդի սիրտը իւր կայսրի համար և վատասիրաներին առիթ տուեցին արհամարհել հայրենիքի հրախրական ձայնը : Մի քաղաքում, որ ունէր հազարաւոր ունեւոր քաղաքացիք, ինչպէս ցոյց տուեց մի ճիշդ քննութիւն ամենայն փողոցների և տների մէջ, գտանվումէին միայն 4970 մարդ որ կարող էին և կամը ունէին զէն ձեռք առնուլ իւրեանց տուն ու տեղը և պատիր պաշտպանելու համար : Այս փոքրաթիւ զինուորների ցուցակը սխալ լուծեամբ յանձնեց Քրանցեան իւր սիրտը : Մի վհատիւր, ո՛վ իմ հաւատարիմ, խօսեց կայսրը . այն փոքր է զօրքը, բայց ընտիր է . ահա այն տեղ կանգնած են ևս 2000 քաջ օտարականք, որ ազնիւ Յուստինիանին բերած է մեր համար, և մի թէ մեր հետ միասին պատերազմակից չէին արգարութիւնը, աղէտքը և յուսահատութիւնը :

Այս միջոցին Սուլթանի աթոռի շորս կողմը հաւարվումէին Տաճիկների զօրականքը, պատերազմի սովոր Կանիշարքը, արագաշարժ սպահքը և հպարտ փաշաները, ամեն միւր մի զօրագնդով և թագաւորութեան բոլոր կալուածատէր իշխանքը : Երբ որ հնչեց պատերազմի փողը և Սուլթանը խոստացաւ թոյլ տալ կողոպտել, ապա ամենայն կողմից հեղեղվեցան կատաղի և յափշտակատէր բազմութիւնք : Եւ ահա թաւալվելով մօտենում անհամարելի ամբոխը, ահ տարածանելով, որպէս փոթորիկի զիղացած ամպեր, և իւր ճանապարհի վերայ սփռելով կործանութեան հետքեր : Այն տեղ, ուր Եւրոպայի և Ասիայի եղևրքը երկու անգամ մօտենումէն միմեանց և երկու գալարածոյ ծովանեղուցների մէջ փառաւորապէս ձգվում Գրուպնոսիս լայն ջրաղաչարը, ինչ տեղ ճանապարհորդը, շրջապատած անցեալ ժամանակների քաղցր յիշատակներով, սիրտը երկիւղածութեամբ լցված, հիանում քնութեան և մարդկեղէն փառահեղութեան վերայ, այն տեղ, ծովանեղուցի մուտքի վերայ կանգնած է հսկայամարմին Կոստանդնուպոլիսը, Հռոմի պէս ետին բլուրից զէպ ի ցած նայելով երկու աշխարհաբաժինների վերայ : Սա երկու կողմից լուացվելով հեղեղից, և երրորդ կողմիցը արուեստով և մեծաչէն պատնէշներով ամրացրած,

ընդդիմացել էր Պարսից Խոսրովներէ, Արարացոց Խալիֆներէ և միւս բարբարոս ազգերն կարողութեանը, Բայց զարաւոր ժամանակների մըրբիկը, աւելի զօրաւոր լինելով, քան թէ զէնքի անշաւոր հարուածը փորել էր այն հակայաձև պատուարների և աշտարակների տակը, և ինչ որ անընկճելի էր առաջին պաշարողական պարզ մէքենաներովը, պիտոյ է այժմ՝ յաղթահարվէր նորահնար կործանողական անօթնե-րով և գործիքներով:

Տաճիկների միայն և որէ որ աւելի անկողող զօրութեանը ընդ-զէմ, այն անհամար թշնամի զօրքերի և նուերի կատաղի և անդա-գար յարձակումների ընդդէմ ինչ ունէր նոստանտիմոսը, ոչինչ կող-մից օգնութեան յոյս չը լինելով. ուրիմն մնումէր նորան իւր յա-տուկ հանձարի զօրութենով օգնութիւն հնարաստեղծել և գործ կա-տարել մի պատերազմող բազմութեամբ որ 10,000ից փոքր էր: Եւ-րոպայի տերութիւնքը ստոնասիրտ էին մնացած տեսանելով նորան այդպիսի տազնապի մէջ. մի քանիքը յետ են քարշլում՝ երկկողաց, միւսերը կուրացած, պիտորված ասելի օխտով և կարճատես շահա-սիրութենով հրաժարվեցան այնպիսի հարկաւոր օգնութենից: Արդա-րև զետ ևս կարող էր կոյսրը հնազանդելով Տաճիկն, փրկել իւր կեանքը, գուցէ թէ և յաղթողի վնհաննութենից բարկեցութիւն ստանալ իւր համար. բայց նա, առաջին Հոսմուլեցին և աստիճանով և հողով, աւելի արժան համարեց իւր յատուկ և հոռակական ան-ուանը, առաքինութեան մեծ օրինակ թողուլ գալոց ազգերի համար: Որովհետև ոչ քո զբաժ ուխտերի յիշատակութիւնը և ոչ իմ աա-րապայման տեղատուութիւնը չէ կարող զագարեցնել քո զինաշար-ժութիւնը, պատասխանեց քրիստոնեայ կոյսրը Յուլիանի մեծամիտ պահանջողութեանը, ապա հաստատ կաշիք քո ապիրատ սկսուածի վե-րայ: Եթէ Տէրը կը մասնէ քաղաքը քո ձեռքը, ապա նորա սուրբ կաւթին անարտունջ հնազանդելու եմ, բայց մինչև Աստուած չէ վըճ-ուել գործը իմ և քո մէջ, իմ պարտականութիւնս է պատերազմել իմ թագաւորութեան և պատուի համար. — Ահա 52 զարհուրելի օ-րեր անցած էին նոստանուպոլսի քաղաքայինների գլխի վերայից, Թըն-գանօթների որտօի հետ խառնվեցաւ կողկողակին ազաղակը աճ ու գողի մէջ պարանված ժողովոյի. գիշերային հանգարտութեան մէջ լսելի էին միրաւորվածների հառաչանքը և որբացածների կոծը և լայք: Ինչ օգուտ այն քաջ պատերազմողներին, որ սոցա սուրբ մաշումը և ու-տումը Տաճիկների զուեղերը. պատճառած զատարկութիւնքը շուտով լրանումին և ինչքան յաջող էր Յունաց յաղթութիւնը, այնքան ևս արիւնտ գնով պիտոյ է ստանային նորան: Այսպէս առ փոքր փոքր վերջացաւ Յունաց յոյսը, և Մօհամմէդը տեսանելով նոստան-

նուստի աշտարակները իւր գարկերովը խորտակեալ, և պատուարը փշրած, հրաման արձակեց, որ լինի ընդհանուր արշաւանք: Գիշերով պիտոյ է լինելն պատրաստութիւնքը այդ մասին: Քրիստոնէսայքը հեռուից տեսան երկու ծովեզերեայքի վերայ անհամար բոյազաւ կրակներ, որ արած էին պահագանքը, և ծովը շողշողելով մտաւորօր նաւերի հազարաւոր ծրագներից. մի մեծ, փտաւոր, բայց ահաշուքիչ, շարագուշակ տեսարան: Սորա վերայ և այն խառնաձայն շշմոջիւնը շարժօրդ և միմեանց ճնշող զորագունդերի, հազարապատիկ շտապիւնը զենքերի և ապա լուսաբացին, բարձրանայն որտաւեր թրնգանօթների, շալիւնը հարիւրաւոր կործանողական անօթների և հարիւր հազարաւոր պատերազմական ձայներ արինաճարաւ կոխողների:— Ընդպարաստ չէին Յոյները, արթուն և հսկող Կոնստանդինոսը նկատած էր թշնամու շարժողութիւնքը, Կա կես գիշերի ժամուն ժողովեց իւր ազգականքը, իւր բարեկամքը և ազգի պատուական անձինքը ամբօթի մէջ, որ իւր յատուկ անփեշերութիւնը մահաց յառաջ հրեղէն խոտերով ներս փչէ նոցա հոգու մէջ: Կա երգումն տուեց նոցա Հոսի սուրբ անունով, և այն մեծամեծ յիշատակներովը որ շերչապատումին նորան, քաջախիւնց նորանց որ պատկանն աշխարհի և գալոց ազգերի գառաստանից, ջրոց տուեց նոցա թէ ահա ներկայ է ժամը, որ անդառնալի մձակու էր նոցա անձնական, և նոցա ընկերների կեանքը, ազատութիւնը և բաղդաւորութիւնը, թագաւորութեան տնտրութիւնը կամ թէ կործանումը, և թէ կրօնը, պարտականութիւնը և պատիւը ինչ էր պահանջում նոցանից որպէս քրիստոնէսայ մարդերից, եղբայրակիցներից և տղամարդերից: Կարգ գրկախառնեցին միմեանց, արտասուելին, ուխտ գրեցին մեռանել հայրենիքի համար, և ամեն միւր դէպք իւր տեղը, իւրեանց մտքումը դրած լինելով, որ արժանի մեան հռոմէական անուանը: Բայց կայսրը, որի սրտի մէջ շիջել էր այն յոյսը, որ ինքը կամենումը վատել իւր բարեկամների սրտի մէջ, դիմեց զէպի Եփեսոյի տաճարը, որ հաղորդի սուրբ ընթրիքին. և այս տեղից թոռա գնաց նա զէպի ստակել հեռաւոր պատուարը, որ իւր քաղաքացիների մէջ մինչև վերջին բոպէն կատարե զօրավարի և հասարակ պատերազմողի պարտքը և յետոյ մեռանի:

Ահա սկսել էր անհասար կոխը, այսինքն զօրաւոր և տկար կողմերի մէջ. ահա մահը հազարաւոր կերպարաններով հանդիպել էր ամենայն տեղ. ջամաք ու ծով ներկած էին արիւնով:— Բայց ինչ փոյթ էր զա Յուլիանին. նա ուներ բաւական շատ պատերազմողներ, որոնց մարմիններով կարող էր լցուցանել Կոստանդնուպոլիս խանդակները, և այդպէս կամուրջ շինած իւր համար, ճանապարհ բանալ զէպի յազմութիւն: Յոյները երկու ժամ կտորովելով: զեռ

ևս չէին խախտված իւրեանց տեղից, բայց նոցա բազուկները սկսեցին թուլանալ մտրթեւուց, և այժմ Մոսկովայի ներս բերեց կրակի մէջ իւր զօրքի ստաւել ընտիր մասը, զարհուրելի Նանիշաբքը, Այս խորհրդաւոր բուպէի մէջ, քաջ և պատերազմալէա Յուստինիանին, որ զօրավար էր սակաւաթիւ արեմտեան սգնական զօրքին, և կայսրից կարգած էր գերագոյն ասպնորդ բոլոր զօրքի վերայ, վերաւորվեցաւ նեւից, Այս Յուստինիանին սովորած լինելով խրոխտաւ մահու վերայ, այնու ամենայնիւ չը կարողացաւ համբերել իւր վերքի ցաւին, փախաւ գէպ ի քաղաքը, որ կայել ապ վերքը, Կակոյն ձայն տուեց նորան կայսրը որի աչքերը նայումէն ամենայն տեղ, այսպէս խօսելով. Բարեկամ, քո վերքը թեթեւ է, բայց վատնոր ստիպեցուցիչ, դու այս տեղ հարկաւոր ես, ուր կամես փախչել, Աս կամիմ փրկել իմ անձը, փախչելով այն տեղ, ուր ինքն Աստուած յարգարել է ճանապարհը յաղթող Տաճիկներին, ասաց այն, ցաւից ընկճած, մարդը, և պատուարի մի ձեզրից ներս ձգեց իւր անձը քաղաքի մէջ, Շատերը նորա հայրենակիցներից գնացին նորա քամակից, և Աստուանդուպոխը կրթած էր, Յշնըրը յաղթահարված, դէպ ի յետ հալածված լինելով զուրաի շէնքերից, փախան գէպ ի ներքին պատուարը. ահա փոզփոզումը Տաճիկ զրոշակը շատ աշտարակներից, ահա գողգողալով լուսմէն քաղաքացիքը թշնամու յաղթական ձայնարկով թիւերը, և ա իլահ, իլլահուհ, այսինքն, չը կայ Աստուած, բաց ի մինից, և աւանդ, Աստանդուպոխը զարձաւ Խառամբուլ, Այն տեղ միայն, ուր կանգնած էր կայսրը, դեռ ևս շարունակումը պատերազմը. ազգի պատուական և ընտիր մարդիկը փակեցին նորա շորս կողմը. կայսրը աղաչեց նորանց որ սպանեն իւր անձը, որ մի գուցէ կենդանուցն ընկնի անհաստաների ձեռքը, և բաց ձգեց արքայական ծիրանն, որ անձանթ մեռանի իւր պատերազմակիցների մէջ, Բոլորերեան մեռան այս տեղ գեղեցիկ այրական մահով, բայց ոչ մի թշնամի կարող չէր պարծենալ, թէ սպանած է կայսրը, Կորա մարմինը դրած էր իւր մահացուցեալ ընկերներին մէջ և շորս կողմը դիզած մի բլուր թշնամիների զիակունքից, Աստամմ քեղ այն սոսկալի տեսարանը որ պատկերացաւ յետոյ, փախչողների ահ ու գողի ձայնը, անողորմ կոտորումեան հարուածքը, զարհուրանքի գունամափութ թիւերը, յուսահաստութեան հաղարաւոր լաց ու կոծերը, Տները թողած կին անապատ, անպաշտպան. գողալով, որպէս խրտեցուցած ոչխարներ, խուռն բազմութեամբ չըջումէն անբաղղացեալ բնակիչքը փողոցների և հրապարակների մէջ, կամ թէ լցուցանումին սաճարները, որ սուրբ սեղանների մտ պատուարան որոնեն. բայց անօգուտ. բոլորը հեղեղվեցաւ արիւնով, և ինչ որ փրկվեցաւ սրի բերանից, զոհ գարձաւ

յափշտակութեան, Մօհամմէզը իւր համար պահելով քաղաքի շինու-
նութիւնքը միայն, բոլոր Աստանդնուպօլի գանձերը սիրողներէ հետ
միասին բաշխել էր իւր կեղեքիչ զինուորներին, և սորա շտապեցին
գործ գնել այդ անիրաւ թոյլտուութիւնը: Քաղաքի բոլոր թանգա-
գին բաները, յունական շարատութեան և փառքի սկանաւոր գոր-
ծերը, շտապը ջարդուփշուր եղած անց կացան զէպ ի Ցաճկի բա-
նակը, և շուտով յետ եկան կողոպտիչքը, որ կողոպտածներէ անձը
և ունեցած չունեցածը ապահովէն իւրեանց համար: Ասանց միտք
զնելու աստիճանի և հասակի, ասանց խնայելու բնութեան և սրտի
ամենասուրբ կապերին, ինչպէս որ պատահումք, ինչպէս որ ատաղին
ձեռք ձգողի իրաւունքը, կամ թէ առաւել հզօրի կարող հրամանը
վճարումք, այնպէս ևս անբաղդացեալ Յոյեքը անողայ բնասօրի ձեռ-
քով քարշլումէին զէպ ի սարկութիւն: Նորանց կողումէին միասին,
ինչպէս անարգ անասուններ: Այնուական աղջիկը հասարակ ուսմի
հետ, Պատրիկեցին ամենայեօրին ստրուկի հետ, կրօնաւոր կոյսը սոպո
նաւաստիներէ հետ միասին կապած, զդումէին մի և նոյն խարաղանի
հարուածը. սիրելի փեսան բաժանվեցաւ իւր արտասուող հարսից,
բարեկամը բարեկամից. ձերունի հօր գրկիցը դուրս էին քարշում իւր
որդին, և մայրը, որ ահ ու զողով նայումք իւր սիրելի աղջկոյ քա-
մակից, պիտոյ է իւր աչքով տեսնելը թէ ինչպէս նորա աղջիկը իւ-
րանից խլումէին և քարշումէին զէպ ի մի հեռաւոր անձանթ բանս:
Իստանկութիւնը յոյս տուեց շտապերին փախչելու. ողջոյն բազմու-
մութիւններ, չողած ծովեցեկութիւնի վերայ աղաչումէին հետազոյ նա-
ւարկուները, որ ասնուն նորանց իւրեանց նաւակներէ մէջ. անողոր-
լի մնացին ոմանք. միւսերը չափազանց ծանրաբեռնելով իւրեանց մա-
կոյիները փախտականներով, ընկղմեցան ծովի մէջ տեղումք: Ոմանք
փախան սարբի մէջ, բայց որի վերայ հասանումք քամակից եկող
թշնամին, նա պիտոյ է մեռանէր նորա հարուածների տակ: Աւելի
բողոքաւորքը շատ օրերով թափառումէին վայրենի դաշտերումք. ձե-
րակոյտի խորհրդակները, ամենայն կարգի հարաւականներ իւրեանց
դէր և յարմար և փափկալից կեցութեանից դուրս ձգած, սկսեցին ծա-
նօթմանալ սովի հայումաշող տանջանքին և իւրեանց փոքր ի շատե
փրկած բաների ծանրութեան տակ յողոց հանելով, շրջումէին խոցո-
տեալ ուրերով մացառների և փշերի մէջ, դեռ ևս լի էր անբաղդ
քաղաքը սպանութեամբ, յափշտակութեամբ և ամենայն տեսակ բռա-
նակալութեամբ, և ահա Մօհամմէզը յաղթական հանդիսով ոտը կո-
խեց արեւնաթոր փողոցների վերայ, և մի ծանուցարար քարոզումք
ողորմութիւն Յունաց ազգի ողբալի մնացորդին: Մի երկաթի լախա
ձեռքին, վայրենի և խրոխա հայեսցրով, իւր փաշայքը և եմիրները

չորս կողմը պատած, ման առաւ նա ձիով քաղաքի մէջ, ապիբաս զարկուածներով ջախջախեց մի քանի արձաններ, որ համարուներ կուսքի պատկերներ, և նախանձառ հիացքով նայումէր Յունական մեծութեան հոյակապ ստեղծագործութիւններէ վերայ, այն ապարանքներէ և սրահներէ վերայ, որոնց իւր Տաճիկները այն կարող էին տիրապետել և կործանել, բայց ոչ շինել: Այս ճարտարապետական գործերից առաւել ընտիրը, փառաւոր տաճարը Սոփիայի, Յուստինիանոս մեծի անեղծական յիշատակը, Մոհամեդի հրամանով դարձաւ առաջին մզկիթ թաղաւորութեան, և նորա կամքով ու հաւանութեամբ շատ գեղեցիկ շինուածներ թէ հասարակաց և թէ մասնաւոր մարդերի պարգև հասան սոպա դորականներէ կամ թէ նենգաւոր սորուկներէ, որ այն տնօրծելի բնակարանքը Գրացիաներէ և Մուզաներէ փոխեցին անարդ հեշտափրութեան օձիւաններ կամ թէ տնային բրանակալութեան տեղի: Մոհամեդը այս կործանութեան տեսարաններովը յարեցած, թողեց ապա փողոցները և գնաց զէպի Կոնստանտինոսի պատկառելի ապարանքը. սա թողած էր անապատ, պատուարքը և սենեակները խորթաշած իւրեանց զարդից, այս տեղ և այն տեղ կախած էր զեռ ևս մի նախնի կայսրի պատկեր, որ ասես թէ տըրտոււմ էր պղծած ապարանքի վերայ: Մոհամեդի վերայ մի գաղտնի սարսափ եկաւ. նորա սրտի մէջ սկիսեց զարթեցաւ մտածութիւնը մարդկեղէն բաների անհաստատութեան վերայ, և նորա բերանից լսեցին մի հին պարսիկ բանաստեղծի (Չերգաուսիւս) խորհրդաւոր ասացուածք: Սարդը իւր ուստայնը կախել է թաղաւորական ապարանքումը և բուռի զիշխրային երգաստեղծութիւնը հնչումէ Ափրիսափարի սրահներէ մէջ:

ՓԵՐՏԵՆԸ ԵՐԻՒՆԱՀԱԳԱՄԻ ՀԵՐՍԵՆԻՔԸ ԿԵՄ ԹԷ
ԲԵՐԹՈՒՐՄԵՆԸ ԳԻՇԵՐԸ:

Ընդ 1520 թուականին, Պրանցիսկոս առաջինի թաղաւորութեան օրերունը տարածվեցաւ եկեղեցական բարեկարգութիւնը Պրանսիայի մէջ, թէպէտ թաղաւորութեան աչքով էր նայում այդ բանի վերայ. նորա ժամանակին ահա, պիտոյ է կարծեցեալ հերետիկոսներ կրակաւ մահ լինէին փայտակաւի վերայ, միւսերը անտուն և անպաշտպան թափառելին այն երկրումը: Այդու ամենայնիւ եկեղեցական բարեկարգութիւնը ներս չը բերվեցաւ այս տեղ գերմանական Ռեֆորմատորներէ հիման վերայ և հոգու պէս: Կալվինն էր այն մարդը որ մարտնչել վարդապետութեանը տուեց մի այնպիսի կերպարանք ու կնիք, որ ընդունելի էր Պրանսիացի մարդուն: Գենթի քաղաքից, ուր Կալ-

վինը գլուխ բերեց եկեղեցական բարեկարգութիւնը, տարածվեցաւ նա յառաջուց հարաւային Քրանսխայի մէջ. շուտով ընդունեցին նորան քաղաքների մէջ քաղաքաշէրքը, արուեստատորքը և վաճառականքը. պատճառ, Քրանսխակոս առաջինի օրերումը ծաղկելով աշխատութիւնը հացատու արուեստների և վաճառականութեան մէջ, չը մնաց առանց սգոսկար փոխազգեստութեան բոլոր իմացական լուսաւորութեան վերայ, և այս զօրաւոր յառաջողութիւնը պիտոյ է հարկաւորապէս ձեռնառու լինէր և հոգու ներգործականութեանը կրօնական և եկեղեցական ճշմարտութեանների մասին, Ինչ որ Քրանսխակոս առաջինի օրերումը յառաջացաւ որպէս ծիւղ և բողբոջ, այդ կերպարանվելով դուրս երևեցաւ փոքր ինչ յետոյ որպէս հակառակութիւն ընդդէմ հառմեական եկեղեցուն և որպէս քաղաքական հերձուած ընդդէմ թագաւորի յաջորդներին:

Քրանսխակոս առաջինից յետոյ աժող նստեց նորա ևս առաւել սկար որդին, Հենրիկոս երկրորդ (Թագաւորելով 1547ից մինչև 1559), Եւս ժամանակից սկսանվում արքայական հարձերի ազդեցութիւնը տէրութեան գործերի վերայ ներսումը և դէպ ի դուրս, մի ազդեցութիւն որ արդարև կերպ կերպ փոփոխվելով երկարաձգվեցաւ մինչև տան և ութերորդ դարու երկրորդ կէտը Քրանսխայի մէջ մանաւանդ, և այլ միս տեղերում, Հենրիկոս առաջինի պալատականքը բաժանված էին երկու հերձուածք, և այս երկու հերձուածների պարագլուխքը, Քրանսխայի մէջ այն միջոցին, էին երկու սոհմեր արքայական արիւնից. այսինքն, Գլխու տունը և Բարբառու տունը, Գիլեան տունը շտապիղումը Լոթրինգեան դուքսերից. սա հարանարածիւրով 1417 թուակ. ստացաւ Կոմսութիւնը Օմալ, որ Քլոդ դուքսի պատերազմական արդիւնքների պատճառով աւելի բարձրացաւ և զարձաւ 1527 թուակ. Գրքութիւն Գիլեան, Քլոդի որդիներից Քրանսխակոսը, որպէս զօրավար, և Կարոլոսը, որպէս Լոթրինգիայի կարդինալ, բազմազգու գտանվեցան քաղաքական գործերի մէջ: Առհասարակ այս սոհմի իշխանագլուխքը մեծ քանքարաւոր մարդիկ էին պատերազմի, այլև մի մասնով, քաղաքական կառավարութեան մէջ. բայց նոյնչափ ևս նշանաւոր էին իր բնանց գահասիրութեանով, հպարտութեանով և թըշնամութեանով դէպ ի Գրոսեստանտեան եկեղեցին: Նոցա քուեր աղջիկը էր Մարիա Մալեարթ (Շտալանդիոս արքայ Յակոբ հինգերորդի դուստր), երկրորդ Քրանսխակոս Թագաւորի ամուսինը: — Բուրբոնեան տունը հիմնարկեց Ռօբերտ, Սուրբ Լուդովիկոսի կրտսեր որդին, որ 1272 թուականին ամուսնացաւ Բուրբոնեան Բէաթրիքսի հետ: Եւս տունը աւելի մտա ազգակից էր Թագաւորող ցեղի հետ, քան թէ Գիլեան տունը: Բուրբոնեան տանը հարանարածիւրով պատկանումը Նա-

վարքայի արքայութիւնը. պատճառ, Հենրիկոս չորրորդի մայրը, Յով-
հաննէ անունով, էր մի հատիկ դուստրը Նաւարրայի արքայ Հենրի-
կոսի, և Մարգարիտ քուերը Ֆրանսիական ստաշինի, Սա 1548 թ.
ամուսնացաւ. Բուրբոնեան Անտոնի հետ, որ էր Անդամի դուքս, որ
և զորանով զարձաւ արքայ Նաւարրայի. Այս Անտոնի եղբայրը էր
իշխանագն Լուզովիկոս Անգէ, Իմացականութենով և քաջութենով
Լուզովիկոսը անհամեմատ գերազանց էր իւր Անտոն եղբորից: Բուր-
բոնեան տունը ընդունել էր Կալվինի վարդապետութիւնը. նորա ար-
քայազունքը համարվումէին Ֆրանսիայի մէջ որպէս Պրոտեստանտ-
եան հաւատի պարագլուխը. մանաւանդ թէ ծովապետ Կոլիկլին Շա-
տիլիոնեան սոճմից, ամբուլթեան նեցուկ էր զորա համար: Այդ Կո-
լիկլինի ծովապետը մի հանձարեղ ու աշուտամիտ տղամարդ էր, իւր
կանոնների վերայ հաստատ և մեղմարարոյ, ամբապինդ և մարդատէր
բնութենով, Նա ոչ թէ միայն որպէս զօրավար, այլև որպէս մարդ
մեծ էր հասարակաց կշիռի մէջ: Ֆրանսիայումը Պրոտեստանտներին ա-
սումէին Հոգիւն, որովհետև Տուր քաղաքի Պրոտեստանտքը իւր-
եանց աստուածապաշտական ժողովքը կատարումէին զիշերով, և քա-
ղաքից դուրս, և քաղաքի բնակիչքը կարծումէին, որպէս թէ Հուգօ
թագաւորը ձիով ման է գալիս զիշերը և շարձարում նորանց որոնց
հանդիպումը: Պրոտեստանտեան հաւատի ճանապարհքը սխալելու հա-
մար, Հենրիկոս երկրորդը հրովարտակներ արձակեց և արգելանք դրեց
գրքերի վերայ. չէր պահանջին և մահու պատիժներ այս տեղ և այն
տեղ. բայց հրատարակական կոխը երկու եկեղեցական հերձուածնե-
րի մէջ բորբոքվեցաւ. Հենրիկոս երկրորդի մահուց յետոյ:

Այս հարկաւոր նախածանութիւնքը տուած այս տեղ, անցա-
նէր գէպ ի Բարթոլոմէան զիշերի պատմութիւնը, Ֆրանսիան չու-
նէր այնպիսի պատկանաւոր անդաստան ուր կարող էր աճել պրոտես-
տանտեան եկեղեցին, որ հրատարակելով կաթոլիկեան ծիսապաշտու-
թեան, աչքով հաշտող սխառահեղութենից, նորա բուն խորհուրդ այն
էր, որ ոչ թէ մտնովի գէպ ի ունայնութիւն և անկոծութիւն, այլ
զերմութիւն տայ կրօնական զգացողութեանը, խորութիւն տայ երկի-
ղած գիտութեանը, քաջացուցանէ սրտի վկայութիւնը, ամբապնդէ
հաւատը և տայ մի յոժարամիտ ցածուն հոգի: Այն Ֆրանսիայիք, որ
ընդունեցին այդ ուղղութիւնը, մնայով սակաւամիտ, ոչ թէ միայն
յստակացան որպէս մի եկեղեցական հերձուած, այլև որպէս մի քա-
ղաքական մասնաւորութիւն, բայց կրելով իւրեանց վերայ մի ծանր
և ցամաք կերպարանք, չէր կարողացան գրաւել Ֆրանսիական բաղմու-
թեան թեթեւ ու հանդիսատէր հոգին, Այս է ահա, որ պատճառ
տուեց Հուգենոթների գլխի անցքին, Ֆրանսիայի մէջ:

Պրանցիսկոս երկրորդից յետոյ (որ մնաւ 1560 թ. զեկտ. 5ին) ամռո նստեց նորա եղբայր Կարոյոս իններորդը, որ զեռ ևս ահաս լինելով, նորա մայր Կաթարինէ Մեղիշխար կտառաւարու մէր թագաւորութեան գործերը, Եւս Կաթարինէ Մեղիշխար էր մի կնամարզ, անձնատուր փայլասիրութեան և փառասիրութեան իւր պալատական կեանքի մէջ, զահասիրութենով մալորված, թշնամի պրօսեստանտական վարդապետութեան և միարան Գիղեան տոհմի եկեղեցական և քաղաքական հայեացքի հետ:

Եւսմմ, այն երկու պալատական հերձուածքը յատկացան որպէս քաղաքական կուսակցութիւնք, որոնց հետ միախառնվեցան և բաժան բաժան եկեղեցական խնդիրքը, Բորբորվեցան երկու ներքին պատերազմը, որոնց առթ թուեց մանաւանդ թէ տերութեան ընթացքը Պրօսեստանտների հետ: Բայց զեռ ևս պահպուսէր գործը շափ ու սահմանի ներքոյ, մինչև ակնուամիտ դիւանապետ զը ԼՕպիտալը ձայն ու կարողութիւն ունէր, Եւսպէս (1562 թուակ. յունվար ամսին) հրատարակվեցաւ մի արքունի հրաման, որի մէջ թոյլ տուած էր Պրօսեստանտներին կրօնական ազատութիւն. միայն թէ պիտոյ է նոքա յետ տային Կաթարիկներէից խլած եկեղեցիքը, և իւրեանց աստուածպաշտական ժողովները կատարելին քաղաքից դուրս. այլն պիտոյ է արքունի պաշտօնականները ազատ մուտք ունենային նոցա պաշտօնկատարութեան և սինհոդոսների մէջ. Մի քանի շարամ սորանից յետոյ (1562 թուակ. մարտի 1ին) Գիղեանց դուքսը իւր ընկերակիցներով անցանուսմէր ձեռով Շամգանիայի Ղասեյ անուն փոքրիկ քաղաքից, նոյն իսկ միջոցին, երբ Լուզնոթքը մի շտեմարանի մէջ կատարուեալին իւրեանց աստուածային պաշտօնը, Գուքսի ընկերակիցքը հայհոյեցին Լուզնոթքներին, և սոքա հայհոյեցին դարձեալ. բանը հասաւ քարածգութեան. ինքն գուքսին հանդիպեց մի քար, և սորա քամակից յառաջացաւ մի արիւնհեղութիւն, որի մէջ սպանվեցան 60 Լուզնոթք և վերաւորվեցան 200ից աւելի, Եղաղակ բարձրացաւ, թէ արքունի հրովարտակը ժխտած է, Սկսվեցաւ — — — — — գործը. Պրօսեստանտների պարագլուխը էր Քեդէն, Բայց Գիղեան իշխանքը տիրապետելով թագաւորին և նորա մօրը, քարոզեցին նոցա հակաակորդները որպէս սպտամբք, Իշխանազն Քոնդէն, Օրէւան քաղաքը շինեց իւր զօրածողովի տեղը և պահանջեց, որ հաստատ պահի յունվար ամսի հրովարտակը, նոյնպէս և աղատվին թագուհին և նոցա որդիքը Գիղեան իշխանների ձեռքի տակից. Ենչլինայի թագուհի Ելիսաբեթը զաշն կապեց Քոնդէի հետ, և օշնական էր նորան արծաթով ու զօրքով, թէպէտ խնայարար. սորա փոխարէն Լափը զը գրաս քաղաքը թողվեցաւ Բրիտանական զօրքերի կամ-

քին: Այնու ամենայնի. Գիղեան իշխանը յաղթեց Քոնդէին և Կոլիյնի ծովագետին Դաեօ քաղաքի մօտ եղած կառի մէջ զեկտ. 19ին. բայց Օրբէանի պաշարման ժամանակը զուքս Ֆրանցիսկոս Գիղեանը (1563 թ.) սպանկեցաւ Պոլիթրօ անուն հուգնօթեան ազնուականի ձեռքով, որ մի թուփի տակ թաք էր կաշել, Գուքսի աւագ որդին, Հենրիկոս անուն, ժողանորդելով հայրը, ժառանգեց նորա արժանաւորութիւնքը և պաշտօնի վիճակը: Այն երկիւղը թէ մի գուցէ Բրիտանաշիր տիրապետէն Նորմանդիային, պատճառ տուեց Ամբաստան հրովարտակոյժը (1563 թուակ. մարտ ամսին) հաշտութեան դաշն կապել թագուհու և իշխան Քոնդէի մէջ, Այս հրովարտակոյժը թշուառութիւն եղաւ Պրօտեստանտեան ազնուականներին այն սեղերումը, ուր զորս ունէին գերազոյն գատարաններ, ազատապէս և հրապարակաւ պաշտօն կատարել. այլև այն քաղաքներումը, ուր կատարված էր դա մինչև մարտի 7 թուականը, Բայց Փարիզումը չը կար թշուառութիւն, Նոյն միջոցին հրատարակվեցաւ մի ընդհանուր անյիշաւարութիւն:

Մի քանի ամիս յետոյ, Կարօլոս իններորդը (1563 թուակ. օգոստոսի 17ին) Բուէն քաղաքի պարլամենտումը յայտնեց իւր անձը շափահաս, թեպէտ կատաւարութեան սանձը մնաց իւր մօր ձեռքումը: Սա, սկզբից ահա թշնամական աչքով նայելով Հուգնօթեանցի վերայ, երեք շաբաթ անցուց Բայիսնն քաղաքումը, ուր բերած էր իւր գուտար Ելիսարեթը, որ յաակացած էր հարսնանալու Փիլիպպոս երկրորդին, Այս տեղ թագուհի մայրը ընդունեց զուքս Ալբրայից, Փիլիպպոս երկրորդի ծածուկ պատուէրքը այն զաշնաւորութեան մասին, որ պիտոյ է լինէր Ֆրանսիայի հետ, Հուգնօթեանքը բնագինջ առնելու համար, և մանաւանդ նոյա զլիսարները, «պատճառ, մի սալամնն ձուկի գլուխ աւելի պատուական էր, քան թէ 10,000 զորաների գլուխներ»: Այս միաբանութիւնը եղած Սպանիայի հետ, Ամբաստան հրովարտակի զորութիւնը սահմանափակվեցաւ Ռուսիլիոնեան արքունի հրովարտակոյժը 1564 թուակ. օգոստ. 4ից, Այս բանը առիթ տուեց Ելիսարէտ Կարօլոսին. պատճառ, այն պայմանագրութիւնքը Բայիսննի մէջ և այս հրովարտակը հարկապրեցին Քոնդէն և Կոլիյնին միասնագամ զաշնաւորիլի Անգլիայի Ելիսարեթի հետ և միաւորիլի Գերմանիայի Պրօտեստանտաների հետ: Սորա հակառակ թագուհին վարձեց 6000 շվէյցարեան զինուորք, Եթէ այրիացեալ թագուհին կամը ունէր իւր կողմից ձերբակալ առնել (ձեռք ձգել) Կոնդէ և Կոլիյնի իշխանքը, Նոյն բանը գիտաւորութիւն ունէին առնելու սորա մանուկ արքայի մասին. բայց սա իւր մօր հետ միասին ժախտաւ զեւր Ե Մօ քաղաքը, ինչ տեղից շվէյցարեան զին-

սին, բայց սուանց յառաջ խաղալու իւր յաղթութեան ասպարեզի մէջ: Բայց Կոլիյնի ծոփապետի անդուլ և անդադար գործականութիւնը նոր ի նորոյ բարեկարգեց Հուզենսթմենրի գործը. 1570 թ. սգոսս. 8ին Հնարասրփեցաւ Ս² Ժէր²Նէ²Ն խաղաղութիւնը, որով սահմանադրվեցաւ մի բնդհանուր անյիշաչարութիւն. Հուզենսթմենրին շնորհփեցաւ իրաւունք մտանելու ամենայն քաղաքական պաշտօնների մէջ, ազատ կրօնապաշտութիւն ամենայն տեղ բաց ի Փարիզից, այլև ստացան նորա իւրեանց համար չորս ամուր տեղեր. Բոշեն, լա Շարթիմէ, Կոլիյաք և Վոնտոյան, 2 տարի ժամանակով:

Միևեալ այս ժամանակից, պալատը փորձ փորձեց խորամանկութեամբ և կեղծաւորութեամբ քնացնել Հուզենսթմերը. այս թագաւոր Կարոլոս քննորոգողը առաջարկեց իւր քոյր Մարգարիտը որպէս ամուսին իշխան Հենրիկոս Նափարբեանին. Նոյն ինքն զգաստ Կոլիյնին բնդունեց հրաւիրանքը երևել պալատի մէջ, և յանձն առուլ մի զօրքի հրամանատարութիւն այն պատերազմի մէջ, որ կար ընդդէմ Նիդերլանդացոց. այլև նա (1571 թուակ.) Բլա քաղաքումը մծ յարգանքով բնդունփեցաւ թագաւորից, նորա մեր և երկու կործոնների կողմից, այսինքն Բնժուեան և Բլանսանեան զուբսրից, Նա տեղ ստացաւ թագաւորութեան խորհրդանոցումը և 100,000 լիվր որպէս փոխարէն իւր կրած վնասներին: Փազաւոր Կարոլոսը, ինչպէս երևումէր, ընծայեց նորան իւր հաւատը և յետ պահեց գորան իւր գահատէր մօրից և նորա սիրելի իշխան Հենրիկոս Բնժուեանից, Բայս պատճառով այս երկուքը իւրեանց սրտի մէջ յղացան մի խորին ստելութիւն զէպ ի Կոլիյնին, և այրի թագուհին գործ զրեց կեղծաւորութեան բոլոր հնարագիտութիւնքը և իւր խարերոյ արտասուքը, որ միւսանգամ ստանայ իւր առաջին կարողութիւնը իւր որդի Կարոլոսի վերայ:

1572 թուականի ապրիլի ամսին, Նափարբայի թագուհին եկած էր Փարիզ, պսակելու իւր որդին. ամուսնութեան պայմանքը կարգի զրփեցան, բայց թագուհին, հինգ օրից յետոյ, վախճանփեցաւ, ինչպէս հասարակաց կարծիքն էր, թունամահ լինելով: Բուանց ուշադիր լինելու այս բանին, Նափարբեան Հենրիկոսը, Կոլիյնին և մանուկ քանդէն վնային զէպ ի Փարիզ, ուր նոցա զալուատը խարերայ ուրախութեանով սունախմբփեցաւ: Հենրիկոսի ամուսնութիւնը Կարոլոս քննորոգի քուեր հետ կատարփեցաւ: 1572 թուականի սգոստոսի 18ին. Կաթոլիկները և Հուզենսթմերը միասին մասնակից գտանփեցան ամախմբութեանը: Բայց չուսով յետ քարշփեցաւ վարաղոյրը, և սգոստոսի 24ին Բարթոլոմեան զիչերը, որ ծածուկ պատրաստած էին թագուհի մայրը, Բնժուեան Հենրիկոսը և Գիզեան տունը, յանդի-

ման կապուց պալատի արխանտ խորհուրդը, և բարպետ աշխարհի վերայ սարսափ ու զարհուրանք բերելով: Այս գործի նպատակը այն էր խեղապէս, որ սպանեն Հուգենոթմների գլխաւորքը, և յատկապէս ծովապետ Առլիշին: Եւ վասմար հոգի Յօրենէլ անունով, որ իբրև սպանող վարձել էր Գիզեան դուքսը, օգոստոսի 22ին, պատուհանից հրացան արձակեց ծովապետի վերայ, երբ որ սա Լուզից յետ էր գալիս դէպ ի իւր տունը. հրացանը վերաւորեց նորա ձախ բազուկը և ջարդուխշուր արեց նորա աջ ձեռքի մի մատը, Չարագործը փախաւ. Կապարբայի թագաւորը և իշխան Քոնզէն շտապեցին Կարոլոս իններորդի մտա, և խնդրեցին նորանից թողլուու թիւն հրաժարվելու Փարիզից: Թագաւորը ջոյց տուեց շատ սաստիկ բարկութիւն այդ դարանագործութեան վերայ, հրամայեց բանտարկել Գիզեան դուքսը, որ թաք կայաւ իւր անձը ապստելու համար, և երզումն կերաւ պատժել զարանագործը: Ինքը թագաւորը գնաց տեսութիւն ծովապետին, և պահապաններով շրջապատել տուեց նորա օթեանը, որպէս թէ նորան պաշտպանելու համար, Հուգենոթմների գլխաւորքը վճռով վերջով այս դարանագործութեան վերայ, խորհուրդ արեցին, արդեօք պիտո՞յ էր նոցա մնալ Փարիզի մէջ, թէ թողուլ քաղաքը: Առլիշին իւր վերջի պատճառով չը կարողայաւ հետանալ, և հաւատալով արքայի խօսքին, վճռեց որ մնան, բայց Գրօսեստանտեան գլխաւորների ծածուկ խորհրդակցութիւնքը մատնվեցան թագաւորի մօրը, այլև, ինչպէս հաւատալի է, նոցա խօսած բաները իւրեանց մտքումը դրած վերժի մասին, որ պիտոյ է հասուցանելին Գիզեան ազգատոհմին: Այս խորհրդակցութիւնքը թագաւորի մայրը համարեց մի նենգաւոր դաշնադրութիւն, որի վերայ կարող էր հիմնել իւր արխանտ խորհուրդը և յետոյ արդարացնել իւր անձը զարհուրած Կարոպայի առաջև: Այսպէս, ծածուկ, օգոստոսի 23 թուակ, երեկոյին Տուիլերեան շինուածների մէջ խորհուրդ արեցին թագաւորը (որի սիրտը զրգոյմած էր լսելով Հուգենոթմների կարծեցեալ դաշնաւորութիւնը ընդդէմ Գիզեանց, տեսանելով թէ նորոգվելու է քաղաքական պատերազմը, այլև ոմանք պատմելով թէ թագաւորի կեանքը վտանգի մէջ է), նորա մայրը, Եմմուեան դուքսը, Տափաննեան մարեքսաւոր, Բեցեան Կոմսը և այլ պալատականներ, թէ ինչ կերպով պիտոյ է գործ գնելին իւրեանց գլխաւորութիւնք բնաջինջ առնել Հուգենոթմները. պատճառ, թէ իշխանները հաւատացուցել էին նոյն օրի առաւօտուն, թէ Առլիշին առողջանալու է: Այս բանը շուտաքից նոցա վճիռը կտտորելու բոլոր Հուգենոթմները բաց ի Կապարբայի թագաւորից և Քոնզէ իշխանից: Իշխան Էներիկոս Գիզեանը յանձն առաւ առաջնորդել աջարկու գիշերային սպանութեններին, սկսեալ օգոստոսի 24ից մինչև 25ը. այս բա-

նի մէջ առաւելագուստ գործակատար էին վարձկան Շփէյցարացիք և այլ ստարերկրեայ թաշակառուք, կաթնոլիկներին պատուիրած էր լուսաւորել պատուհանքը և որոշելի կացուցանել իւրեանց անձը սպիտակ խաշերով գդակներէ վերայ, թիկնազգեասիկներով և Մարիամ կուսի պատկերներովը վզերի վերայ, Մաս կես գիշերին շներիկոս Գիշեանը 300 մարդով ներս պրծաւ Կոլիյնի օթեւանը. սա իսկոյն վեր թաաւ իւր մահճից. մի Բոհեմացի, իւր Բեմ անունով ¹⁾, սուրը կոխելց նորա կուրծքի մէջ, նորա դին դուրս ձգվեցաւ պատուհանից և Մոնթֆոնեան կախողանիցը կախեցաւ գլխովայր. գլուխը կտրեցին և խելագար ուրախութեամբ տարան հասուցին նորան արքայական գերդաստանին: Սորանից յետոյ թագուհին հրամայեց, նշան տալ զարկելով զանգակները. ետեմ որ արիւնի բաղանիքի մէջ լուացվեցաւ Փարիզը. այս տեղ չը խնայեցին ոչ ծեր մարդերին, ոչ մանուկներին և ոչ յգի կանանցը. կոտորվեցան մաս 3000 մարդ. սոցա դիակուները ձգեցին Յէյնէ գետի մէջ: Նոյն ինքը թագաւորը չամաշեց իւր սպարանքի պատուհաններից հրացան արձակել իւր պրոտեստանտեան հպատակների վերայ, Լուվրի մէջ սպանվեցան Նազարայի թագաւորի և Քոնդէ իշխանի սպասաւորքը: — Հուսով ներս խառնվեցաւ վարձկան սպանողների մէջ և յախշտակասէր ամբոխը. պատճառ, երբէք չէ պակասում ամբոխը, երբ որ մի տէրութիւն մինչև այն տեղ անպատվում է իւր անձը, որ հրամայումը կոտորել իւր յատուկ հպատակքը: — Բայց ոչ թէ միայն Փարիզի, այլև բոլոր թագաւորութեան մէջ պիտոյ է բնաջինջ լինելին շուգենօթքը. այսպէս էր արքայական հրովարտակը օգոստ. 24 թուականից, որ ուղարկվեցաւ դէպ ի գաւառները: Մի քանի տեղակալներ միայն շեղան յանձնառու կատարել այդ հրամանը, ,, որովհետև այդ պատրաստ էին նորա հնազանդել թագաւորի բոլոր հրամաններին, բայց ոչ մարդասպանութեան պատուէրների: Մի ամիս երկարեցաւ այս սարսափելի տեսարանը թագաւորութեան մէջ. օգոստոսի 26ին, նոյն իսկ թագաւորը յայտնեց Պարլամենտի մէջ. թէ ինչ որ անցած էր, բոլորը իւր հրամանով է եղած, ըստ որում Կոլիյնին մի վնասակար խորհրդակցութիւն էր արած ընդդէմ նորան: Տոնեցին մի ընդհանուր գոհարանական տոն, և թագաւորը հրամայեց, որ Բարթոլոմեան օրը ամենայն տարի տօնվի որպէս նշանաւոր օր: Նոյն ինքն թագաւորը Նազարայի և իշխան Կոնդէն ստիպվեցան, իւրեանց անձը փրկելու հա-

¹⁾ Այս մարդը իսկական անունը էր Դիանովիչ. սա կենումը Գիշեանց տանը և, բնութե գոմարման, սեւեռացած էր Լեմբուրգեան կարգիմտի սուրբնուոր ուղից հետ:

մար, մի վայրկեան ուրասա լինել պրօստեստանտական հասար: Հոռ-
մի մէջ տասներեքերորդ Գրիգորիոս պապը հրամայեց այդ անցքի ա-
նունով յիշատակի դահեկաններ զարկել, պատկերներ շինել, և ու-
րախօթեան ու գոհարանութեան տան կատարեց իւր կարգիմայնների
հետ. նոյնպէս Փիլիպպոս երկրորդը Մադրիդի մէջ, Ֆլորենտի դուքսը
չնորհատրեց Փարիզումը հերձուածողների բնաջինջ անելը. բայց
մնացեալ Եւրոպան զարհուրեց լսելով այդ բանի լուրը, և մինչև
ժամանակների կատարածը, բարձրումեան գիշերը պիտոյ է մնայ այն
չստ խաւար թերթերից մինը, որ մեռումն մարդկային ազգի պատմա-
գրութեան մէջ, Ինչպէս վկայումն առաւել հաստատի պատմիչքը,
հաշուել են լուրջ թագաւորութեան մջ պայման պրօստեստանտների
բովանդակ թիւը 30,000ից աւելի, և ինն քաղաքումը, ուր պահա-
պանքը կամը չունէին կոտորել, քաղաքային զօրքը, առաջնորդելով
նորան մտադործ Բոյզօնը, կատարուեալ գահճի գործ. այդ տեղ պայմ-
վեցան 900 մարդ և մարդու ճարպը ծախուեալն կշուով: Շատ մար-
դիկ, որ պիտոյ է մորթվելին, խարեցին խոտամուշքով, որ աւելի
հեշտ կարողանան որսալ նորանց, Միւսերի կեանքը դիւական ուրա-
խութեանով կարճեցին ծանրաբայլ տանջանքների տակ, շատերը զոհ
դարձան վաղուց յոպացած ու պահած թշնամութեան ձեւքումը. —
Իշխանների պարձանքի համար գրած կայ պատմութեան տարեգրքե-
րի մէջ, թէ կայսր Մարտինիխանոս երկրորդը, աները իններորդ կարո-
լոսի, այս զարհուրելի գործը խոստովանեց հրապարակաւ որպէս մի
անջնջելի կեղտ անուն իւր փեսայի թագաւորութեան վերայ, թէ
Ընդդիպի թագուհի Ելիսաբեթը սև հագաւ և սուգ արեց, այլև
Ֆալցիայի և Մարտինիայի կայսրնախորքը հրապարակաւ յայտնեալն իւր-
եանց ահաճութիւնը այս անողորմ ընթացքի վերայ:

Ըսն Լուգեմօթները, որ փրկել էին իւրեանց անձը, ինչ հնարք
ունէին չունէին, գործ դրեցին կամ ապրելու կամ մեռանելու, զոր
օրինակ Բօշելլ, Նիտ և Մօնտօրան քաղաքների մէջ, Բայց երբ որ
Ընժուեան դուքսը Բօշելլ քաղաքի պաշարման միջոցին լուր ստացաւ,
թէ ինքը ընտրվել է Պալտինայի թագաւոր, 1573 թուակ. յուլիսի
1ին յառաջացաւ մի հաշտութեան դաշն, որի մէջ շնորհեցաւ Լու-
գեմօթներին ընդհանրական թողութիւն և ազատապէս կրօնապաշտու-
թիւն իւրեանց քաղաքներումը: Հենրիկոս Ընժուեանը ծանապարհօր-
դելով Նիդըրլանդիայի և Ֆլամանիայի վերայով, ամենայն տեղ լսեց,
որ անհաւան էին նորա արած գործին, և մանաւանդ կայսրնախոր
Ֆրիդրիկոս երրորդի պալատումը Հէյդըլբերգի մէջ, Գեռ ևս մի տարի
չանցած, (1574 թուակ. մայիսի 30ին) մեռաւ կարոլոս իններորդը
իւր 24 տարեկան հասակումը, մի զարհուրելի հիւանդութեամբ: Արիւն

ցայտեց նորա բոլոր քրոնածակերից, նորա հոգին հետ եկաւ կրկին
և կրկին անգամ, փշարագլելով և սարսափելով բոլոր մարմինը այն-
պէս, որ նորա գրութիւնը վատթարացաւ մինչև խելագարութիւն. Այս-
պէս եղաւ Կարոլոս իններորդի կատարածը. բայց եթէ Կարոլոս ին-
ներորդը մնաւ տանջվելով և շարժարկելով իւր խղճմանքի խայ-
թներէց, ըստ որում արիւնազարտ էր կացուցել իւր անձը, սորա հա-
կառակ Տափաննեան մարեշախտը և մահու մահճի մէջ շապաշաւեց
իւր արածներէ վերայ, այլ մանաւանդ թէ յայտնեց իւր խոստովա-
նահօրը թէ քաջայոյս է, որ իւր երախտագործութեամբը Բարթո-
լոմեան գիշերի մէջ, քաւելու է իւր բոլոր միւս մեղքերը:

Ա Թ Ի Ն Ք :

Մէք ոտք են կոխում այժմ մի նուիրական հոգի վերայ, Յունաս-
տան և Աթենք ամենայն պնիւ մարդու համար սուրբ անուններ են:

Լըբու ազգեր շողջողումն մարդկութեան երկնակամարի վերայ
որպէս նախակարգ մեծութենով աստղներ, սորա էին հիմնարկութիւնքը
և պահպանողքը այն քաղաքագործութեան որի պտուղքը վայելում
ներկայ ժամանակս, որ և հետագայ գալոց ազգերի համար պիտոյ է
պատրաստէ զեռ ևս առատ հունձներ. Այս երկու ազգերը Յշմբ ու
Հոսմայեցիք են: Քաղաքագործութեան պնիւ տունքը, — զորան իւ-
րացուցանելով, պահպանելով ու խնամարկելով Հոսմայեցիք, որպէս
հրամանակալք կէս աշխարհի, ծաւալել էին Եւրոպայի վերայ. բայց
չեւրասի մէջ էր այդ բոյսը բնիկ և ընտանի, այն տեղ էին գտել
նորան Հոսմայեցիք, այն տեղ էր ծլած նա, այն տեղ էր աճել ու
պրարցել և հասել էր իւր ամենագեղեցիկ ծաղկին:

Հողը, որի վերայ այն տունքը աճեց, որի վերայ միայն աճել
կարող էր, դա էր ազատութիւնը. Ոչինչ ազգ երկրի վերայ չունէր
այնքան ազատութիւն, ինչքան Յշմբը, ոչ մինը չէր նորան այնպէս
արժանի, ոչ մինը չէ իմացել այնպէս պատուել զորան, ինչպէս
Յշմբը. Սա չէր այն ազատութիւնը, որ միայն քաղաքական կարգե-
րի մէջ է. սա էր այն աւելի վերին, աւելի մաքուր, աւելի սաս-
տաւածեղէն ազատութիւնը, որ խոր արմատանում այն մարդու հոգու
և սրտի մէջ, որ ստացել էր զորան. մի տեսակ ազատութիւն, որ
ամենայն օտարուստ հրամայած լուսաւորութեան թշնամի լինելով,
չէ թողում, որ ոչ մի հոգեղէն կամ մարմնեղէն զորութիւն անկիրթ
և անկերպարան մնայ. որ ամենայն քաղաքացու, ամենայն հասարա-
կութեան, ամենայն ազգային ցեղի թողում է իւր յատուկ ինքնօրէն
կատարելագործութիւնը. որ յառաջանալով այն որոշ և ինքնօրոյն

կերպարանված բնաորութենների զուգախառնութենից, զարթուցանում և այն արարիչ, կարող կենդանութիւնը, այն բազմաչափաց ազդեցութիւնը և այն վերհամբարձ անձնագգայութիւնը, այն անխառնակի ճգնողութիւնը զէպի աղնուազորութիւն և կատարելագործութիւն, — կարճատու ասեմ, այն բոլոր յատկութիւնք Տին Հելլէնական սղգի, որոնց վերայ զարմանումներ և հիանումներ մը, բայց ջլատված ու կալանաւորված լինելով կանխակալ դատողութենների և մտորութեան լարիքն թոսի մէջ, կարող չենք սեփականել մեջ,

Հունաստանի բոլոր ազատ թագաւորութենների մէջ, Աթենքն էր այն տէրութիւնը որի մէջ բուն մարդկային իմացական կրթութեան լոյսը փայլումէր առաւել պայծառ, առաւել քաղցր փայլողութեամբ և առաւել երկար ժամանակ, Այս հին մայրաքաղաքը ճարտարութեան և գիտութեան, իւր սկզբնաւորութիւնը սանում և հասունցումով մինչև առասպելական ժամանակը Կեկրոպիսի, որ լինելով Եգիպտոսից դուրս եկած գաղթականների առաջնորդ, 1500 տարի Քր. յառ. շինեց մի բուրգն, որ, ինչպէս նորաշէն քաղաքը նորա ոտքի վերայ, ստացաւ անունս Կեկրոպիս: Այս անունը յետոյ, այն տեղի պաշտպան աստուածուհու, Աթենասի պտտուի համար, փոփոխեցաւ այն անունը որ կրումէ մինչև այժմ: Գարաւոր ժամանակներով այդ քաղաքը սահմանափակումէր այն ապաստի տարածութեան մէջ, որ բարձրանումէ տափարակի վերայ. յետոյ լցվեցաւ սա շինուածներով, և այնուհետև որոշումէին Եկրոպոլիսը և Կատապոլիսը որպէս Իքթէ և Իքթէ քաղաք: Երբ որ Աթենքը օրէ օր ճոխացաւ բնակիչներով, կարողութեամբ և մեծութենով, ապա քաղաքի հետ, որ չորս ժամի ճանապարհով հեռի է ծովից, ահագին պարիսպներով միաւորվեցան Գիրայոս, Մունիքիա և Փալերոս նաւահանգիստները:

Աթենքի պատմութիւնը բաժանվում է երեք գլխաւոր միջոց ժամանակի: Առաջինը երկարանգումէ առաւել նախնի ժամանակներից մինչև Գարսից պտտեազմը, — 300 տարի իւր շինութենից յետոյ, Կեկրոպիս յաջորդների օրերումը, բացարձակ հրամայող թագաւորների հնազանդելով ստացաւ Աթենքը Թեզէոնի ձեռքով իւր ապագայ հասարակագիտական կառավարութեան հիմքերը: Այնու ամենայնի տէրութեան թագաւորը ասումէին զեռ ևս մի ժամանակ Երբույք, մինչև առաքինի Կոթրոսի անձնազոհ լինելովը (1070 տարի Քր. յառաջ) վերացվեցաւ արքայական պատիւը, որին նորանից յետոյ ոչ որ արժանի չէր համարում իւր անձը, և կառավարութիւնը յանձնվեցաւ բնորոշի խորհրդականների որ ասումէին Երբոտտը, Ներքին երկպատակութիւններ պտտմառ տալով մեծատուն հարստականների բռնակալութեանը, հասցրելին Աթենքը իւր կործանման անգուղղի

րերանին. այս մասնդատոր դրութենէց հանեց նորան, վերստին ծնուցանելով և ամբաստանելով, իւր քաղաքացի Սուլէ, որի անունը փայլումէ ամենայն ժամանակների ստաւել ազնիւ և առաւել իմաստուն մարդերի շարքումը: Նա 590 թուակ. Բր. յառաջ, տուեց Աթենացոց ազգին շատ աղատ քաղաքական կարգեր և օրէնքներ, որ ամենամբուր մարդկութեան հոգի փչելով իւրեանցից, հաստատեցին նորա քաղաքակիցների բաղդատորութիւնը, պահպանելով նորան մինչև վերջին զարերը. օրէնքներ, որոնց դաստիարակիչ հոգին չը վերջացաւ ազգելուց փրկուէա կերպով, երբ որ ժամանակի ներգործութիւնը և պատերազմի փոթորիկները վաղուց արդէն ջազջատել էին ազգի քաղաքական կարգերի ձեւերը: Դեռ ևս Սոլոնի կենդանութեան օրերումը երևեցաւ որպէս միապետ Պիզիստրատոսը, որ քաղաքացիների հերձուածներից մինի գլխատորն էր. բայց սա խոհեմութեամբ պատմումը հասարակապետական ձեւերը և օրէնքները, և ահա նորա որդիների կառավարութեան օրերումը, որոնց մինը սպանվեցաւ, միւսը արսորվելով փախաւ. Պարսից թագաւոր Դարեհի մօտ, դարձաւ ստացան Աթենաիք իւրեանց բոլորամասն ազատութիւնը. — Աթենքը գործաւ առաջին քաղաքը Աստիկայի մէջ. ճարտարութիւնը և գիտութիւնը վերածաղկեցան, առևտուրը հարստացրեց նորա բնակիչքը և բազմապատկեց նորա կարողութիւնը: Նա շինեց նաւեր և իւր գաղթարարներով ու գործատներով միջերկրական ծովի եզերների վերայ սերմանեց յունական լուսաւորութեան սերմերը բոլոր արևմտարումը:

Բայց այժմ բարձրացաւ արևելքումը մի պատերազմի փոթորիկ, որ ահա պիտոյ է բնաջինջ առներ Եունաց ազգը և նորա լուսաւորութիւնը: Այն ժամանակի ամենամեծ թագաւորութիւնը երկրի վերայ, մի շատ իշխանի բացարձակ կամքից շարժվելով, զինուորվեցաւ վրէժխնդիր լինելու մի անարգանքի, որ Աթենացոց հասարակապետական մեծամտութիւնը հասուցեւ էր նորան: Աթենացիք օգնական էին գտանվել փոքր Ասիայի մէջ եղած ապստամբ յունական գաղթարարներին որ Պարսից տերութեան հպատակ էին: Հերթը շէր այս. Աթենացիք խայտառակեցին և արհամարհեցին Պարսից հրեշտակքը որ եկած էին հասուցումէ պահանջելու. այլև միւսանդամ ուղարկած զեսպանքը, որ այն փոքրիկ յունական ազգի վերայ որպէս պատիժ բերած էին հնազանդութեան լուծ, և որպէս այս բանի նշան, պահանջումէին հող և ջուր, անօրինակ գողողութեամբ խեղդեցին ջրհորի մէջ և կենդանի թաղեցին: Դարեհ Բուշտասը (Դարիոս Հիւստասպիս) ուղարկեց այժմ իւր լիբաւորները Հելլեսպոնի վերայով, ուրտելով բնաջինջ առնել այն ամբարտաւան ազգը և նորա բոլոր ցեղակիցքը: Պարսից պատերազմը սկսվեցաւ:

Սորանով սկանձումէ երկրորդ ժամանակամիջոցը Աթենացոյ պատմութեան, երկարաձգելով 384 թուականից մինչև 450 Քրիստոս, մինչև Պերիկլէս, Այս է ամենամեծ վտանգի, ամենամեծ փառքի, ամենամեծ պարծանքի ժամանակը թէ Աթենքի և թէ բոլոր Հելլադի համար, — Երդարև, չը կայ առհասարակ մի առաւել վսեմական տեսարան քան թէ մի փոքրիկ ազգ, որ քաջասրտութեամբ և մահը արհամարհելով, իւր թանգազին ստացուածի, ազատութեան համար, պատերազմումը ընդդէմ մի առաւել կարող թշնամու, բայց համաշխարհական անցքերի բոլոր ընթացքի մէջ ոչ մի սորա նման պատերազմ չէ ցուցանում այնքան ահագին անհասարկութիւն կրուողներէ կարողութեաններէ մէջ, այնքան վսեմական հոգեզգեցում թիւն, այնպիսի անօրինակ տոկունութիւն և տեղութիւն աւելի տկարների կողմից, և ոչ մի պատերազմի յաջող կամ անյաջող կտաարածից չէին ծնանելու այնքան անշարիւի մեծակշիռ հետևանքներ, ինչպէս դորանից, Ինչ պիտոյ է լինէինք մեք, ինչ պիտոյ է լինէր Եւրոպան, եթէ Պարսիկները յաջեող լինելով, յունական լուսաորութեան տունը իւր մանուկ ծլի մէջ բնաջինջ առնէին նոյն իսկ ազգի հետ, և իրենաց զորքերով պատէին արևմտեան ազգերը, Այնուհետև ոչ մի Փոթիսս և ոչ մի Պարսոսիստէս չէր հոգի տալու մարմարիներն, ոչ մի Պինդար իւր վերհամբարձ տաղերգութեաններով չէր զմայլեցնելու մեր սիրտը, ոչ մի Եւրիպիդէս չէր ծնչելու մեր աչքերից քաղցր արտասուք, ոչ մի Հերոդոտոս, ոչ մի Քսենոփոն բացահայտէին ձայնով չէին քարոզելու մեծամեծ գործեր, ոչ մի Պլատոն, ոչ մի Երիստոտէլ դուրս փորած կը լինէին իմաստութեան գանձեր, ոչ մի Յոկրատէս, ոչ մի Եպամինոնդաս չէին փայլելու բարձր ապրիւնութեամբ, Ազատ քաղաքական կարգերի ամենազիջելի օրինակները, պիտոյ է, դեռ ևս պտուղ չբերած, ջնջվէին երկրի երեսից, և այն ժամանակի դեռ ևս կուսիտ ու վայրենի Հռոմայեցին, եթէ կարողացած լինէր դէմ կենալ Պարսից զօրութեանը, չէր անգրելու իւր բարք ու վարքը յունական մուզայի նուագովը, չէր մեղմանալու և աչնուտնալու յունական ճարարութեանովը, գիտութեանովը և բարբրովը, Այս, Հռոմայեցին կը տիրապետէր աշխարհին, բայց չէր կամենալու քաղաքացուցանել նորան, և նոյն իսկ նոր ժամանակի լուսաորութիւնը, որ հին ժամանակի լուսաորութեան հետ, թէպէտ դոցա մէջ գիշերային սար ու ձորեր կային, այնքան շատ և մտա կապերով միասորումէ, չէր յառաջանալու երբեք, կամ իցէ թէ մի յաջող դիպուած այլ ճանապարհով հրաշագործած լինէր այս բանը, այնու ամենայնիւ պիտոյ է լինէր դա շատ աւելի յետոյ, Ահա թէ ինչ խորհուրդ ունի այն իրողութիւնը, որ Մարտիոնի, Մալթիսի և Պլատէյայի մտափայլումը յաջեող հանդիսաւա ազատութիւնը,

Բայց գիցուք նոյնպէս, թէ չէր եղած ոչինչ պատերազմ Պարսից Տեա, ապա պիտոյ է տակ, թէ ոչինչ ընդհանուր վտանգ չէր ստիպելու Յոյները միաւորել իւրեանց զորութիւնքը, չէր բորբոքելու նոցա մէջ ամենաՎերին հայրենասիրտ թեան կրակը, չէր ազգելու նոցա մէջ այնպիսի քաջասիրտ ուրացութիւն ամենայն աշխարհային բանի, այնպիսի անընկճելի անձնազոյլութիւն, ուրեմն և չէր այնպիսի գերազոյն սրինակով հանդիսացնելու ամենայն մարդկային աւարտնութիւն, — այնուհետեւ Յոյնք արած չէին լինելու այն ամենամեծ սխրագործութիւնը, և այն ծանրազնաց կերպով միայն, գուցէ և ոչ երբեք, կատարած կը լինէին փառքի ասպարեզը, որի գոները այժմ բացվեցան նոցա համար, — Ահիլլայանի է, որ յախանձական իմաստութեան ձեռքը կատաւարութեամբ հանգամանքներէ պղպխի շղթայափայլ, մարդկութեան ամենաՎերին վախճանի համար:

Պարսիցի զորքերը, որ ուղարկած էին պատուհասակոծ առնելու և լծի տակ ձգելու Յունաստանը, ահ և սասանութիւն տարածեցին հնոսից արդէն Բարակիլայի, Մակեդոնիայի, Բեսալիայի ժողովուրդըը հնազանդվեցան, և յաղթութեան պարծանքով ներս մտան Պարսիկքը փոքրիկ Ատտիկայի մէջ: Ընդդիմանալ յաջողութեամբ անկարելի էր. ահ և յուսահատութիւն եկաւ անօգնական, անտես արած ժողովրդի վերայ սահմաններումը. ոմանք կամենալով դարձուցանել կորուստը, յոժարակամ յանձն առան ծառայութեան լուծ: Այս տարակուսական բուպէի մէջ հանդիսացաւ Աթենքը: ԱմենաՎերին քաջութեան հոգի ստացած, կազմ և պատրաստ լինելով մեռանել աղատութեամբ, եթէ կարող չէին յաղթել, գուրս զնային բոլոր քաղաքացիքը, 9000 մարդ, քանակապակ աւելի զորաւոր թշնամուն հանդէպ, և, ամենայն մարդու կարծիքով, անփախչելի մահու հանդէպ: Այս մեծ արիւնակը նոյնպիսի քաջութեան հոգի զարթեցրեց Պլատոն, և միւս Ատտիկական քաղաքներէ մէջ: Մարտիմնի մտա Յունաց փոքրամիջ զորքը հանդիպեց Պարսիցի անհամար զորքին: Միլաթադէս, ամենացի զորավարը, յարձակվեցաւ զարմացած Պարսիկներէ վերայ և սոցա գլխովին խորակվիլը ազաջոյց տուեց, թէ մի վերին, կրակոտ հոգեզոյնութեան զորութիւն կարող է երբեմն այնպիսի գործ կատարել, որ կշտողական միտքը չէ համարձակվում երբեք յանձն առնուլ, և թէ անկիրթ բազմութեաների բարոյական զորութիւնը պատերազմի մէջ կարող է երբեմն հրաշներ գործել ընդդէմ վարժ և կիրթ բազմութեաների փիղիքական առաւելութեանը: Յաղթութիւնը Մարտիմնի մտա, ամենազեղչելի յաղթութիւնը որ մի ազգ երբ և իցէ արած է, և որի պարծանքը պատկանում է Աթենացոյ միայն, էր ճառագայթաւետ սկիզբը այն հետ զհետեւ արած քաջագործութեան:

րի, որոնցով Յոյնք փառաւորել են իւրեանց անձր այն մշանջենա-
ւոր յիշատակի արժանի, երկարատե պատերազմի մէջ ընդդէմ Պար-
սից: Գորա առաջին պատուիզ էր մի կարծասե գինազագարու թիւն.
բայց հետ էր գուշակել յառաջուց, թէ Պարսիկը ևս աւելի մեծ
զորութեամբ միւսանգամ գալու է զԵկեմիդիք լինելու այն անար-
գանքին որ հասել էր նորան այս կոտորածով: Հուսով թաւայվե-
ցան, մտնցան և անհամար խումբերը Քսերքսեսի, որ Գարեհից յե-
տոյ փոխանորդել էր թագաւորութիւնը, ահ և սասանութիւն տա-
րածելով: Ետմն որ ու ետմն գիշեր տեւց պատերազմողների շուն,
որ Պարսից մեծ թագաւորութիւնը ուղարկել էր ընդդէմ փոքրիկ Յու-
նաստանին, այն կամրջի վերայով որ Պարսից թագաւորը հրամայել
էր ձգել Հելլեսպոնտի վերայ. մի ամիս տեւց, պատերազմական կա-
րասիրը և հանգերձները բերելու համար: Մի ահադին բազմութիւն
նաւերի, աւելի քան թէ երբ և իցէ ծովը կրել էր իւր քամակի
վերայ, գալիս էր ցամաքային զորքի հետեւից: Ոչ մի ժամանակ, ոչ
յառաջ և ոչ յետոյ, չէ լսված մի այլպիսի բազմութիւն, որ այս
երևումէր բաւական, որ կարողանայ տիրապետել բոլոր աշխարհին,
բայց անշտի փոքր էր, նուաճելու մի քաջատիրո ազգ, որ սիրելով
իւր պաշտութիւնը, պատրաստ էր գնալ դէպ ի մահ: Կանրաշարժ
ընթացքով թափվումէր այս բազմութիւնը թեսալիցի դաշտերի մէջ,
ապականութիւն, սպանութիւն և սասանութիւն տանելով իւր հետ:
Եւտա սարի մտ մի նեղ անցք տանումէ ճանապարհը թեսալիցից
դէպ ի Ետաիկա, այսինքն թերմոպիլեան նեղուցը: Ես լուսմեմ այս
տեղ Էկոնիդասի և նորա երեք հարիւր Սպարտացի ընկերների քա-
ջագործութեան մասին, որ ամենայն ժամանակ բարեբանվել է, այն
քաջագործութեան մասին որ կատարված է հին Հելլացի գրան մտ:
Ամենայն ոք տեղեակ է գորան: Արդարև, այդ գործի ազգեցութիւնը
աւելի զբաւոր գանձվեցաւ քան թէ ամենափառաւոր յաղթութեան
ազգեցութիւնը: Զուր և անօգուտ էր Պարսից զորքերի հեղեղը Հել-
լացի մէջ. նորա քաղաքների պարիսպները թող քանդէին և խորտա-
կէին, բայց չէ կարողացան յունական ազգի քաջայինը հոգին խոր-
տակել: Արպէս մի մեծ սրինակ ամենների համար, որ նոյն գրութեան
մէջ էին, միարանվեցան խորհրդակից քաղաքացիքը թողուլ իւրեանց
տները, տաճարները, հայրենական գերեզմանները, գուրս գնալ քա-
ղաքից, որ չէր կարելի պահպանել, պատապարան որոնել ինքեանց
նաւերի մէջ և այս տեղ միւս հելլենական նաւերի հետ խորհուրդ
կատարել, թէ ինչ պիտոյ էր առնել հայրենիքի սրբութեան համար:
Կերումիք, կանայք և երեխայք, որ հետ էին մնացել, որպէս մա-
հու նուիրվածք, սատակվեցան Պարսից ձեռքով, որ աւերեցին և այ-

րեցին նոյն խնդրի Աթենքը, բայց փառաւորապէս վարձաւորվեցաւ Յունաց քաջասիրտ զոհարերութիւնը այն մեծ ծովային յաղթութեամբ Սալամիս կղզու մաս, որ ստացաւ Բուսիստոկէս զորավարը, այնպիսի սասանութիւն բերելով Պարսից թագաւորի վերայ, որ սա շտապ տագնապով թողեց Յունաստան, դուրս տանելով իւր զօրքի առաւել մեծ մասը. բայց իւր զօրավար Մարդոնիոսը 200,000 մարդով, յետ թողեց զամբարումը որ աւերելու հրաման ունէր նա. Սատակէշ պատերազմը Պլատէյա քաղաքի մաս շուտով ազատեց Աթենք ու Յունաստան և այս փոսնայից, և յետ դարձուց նոցա Պարսից բոլոր աւարը, այլն հասցրեց նոցա անշափ շատ դանձր և պատերազմական կարասիք:

Այժմ փոխվեցաւ պատերազմի կերպարանքը. այսուհետեւ չէր նա մի պաշտպանողական պատերազմ Յունաց համար. այժմ դարձաւ մի յարձակողական և զեկժիւղողական պատերազմ, եւ այս բանի մէջ, շարժող հոգին էր Աթենքը որ և գործակատար եղաւ զփառաւորապէս: Ազատել բոլոր յունական գաղթաբաղաբները փոքր Ասիայի մէջ Պարսից իշխանութեան տակից, արտարեւել Պարսիկները միջերկրական ծովի բոլոր կղզիներէից, ամենին ոչնչացուցանել նոցա ծովային զօրութիւնը, այնպէս թուլացնել նորանց, որ երբէք չը կարողանային յարձակվիլ Յունաստանի վերայ. ահա թէ ինչ էր այդ փոքրիկ ազատ տէրութիւնների զաշտարարութեան խորհուրդը, և այդ խորհուրդը պարձարով կատարվեցաւ Աթենացի Արիստիդէսի և Քիմոնի առաջնորդութեամբ: Հաշտութեան դաշը, որ Քիմոն զօրավարը կապեց Արտաքսերքսէս Առօրինանոսի հետ որ վերդիշիւալ Քսերքսէսի որդին էր (այն Քսերքսէսի որ կամեցած էր բոլոր Հելլադի համար ծառայութեան կապանք պատրաստել), լիամասն աղատութիւն և անկախութիւն բերեց այն ամենայն յունական գաղթաբաղաբներին որ կային պարսից թագաւորութեան սահմանի մէջ. նոյն հաշտութեան դաշի զօրութեամբ, ոչ մի պատերազմական նա Պարսից չունէր համարձակութիւն երևել Յունական ջրերի մէջ, ոչինչ պարսիկ զօրք չէր կարող մտնուալ յիսնեան ծովերեւալքին, աւելի քան թէ երկրորեայ ճանապարհի միջոցով: Այսպէս վերջացաւ այն յիսուն տարի տևող պատերազմը, արդարև մի անշափ փոսնայութիւն բայց և անշափ պարձարով լի պատերազմ, որ երբ և իցէ մի ազգ երկրի վերայ պատերազմել է միւս ազգի հետ:

Աթենական ժողովրդին, որ այն միջոցումը, երբ հարկաւոր էր յանձն առնուլ մահու փոսնոց և զոհ բերել ամենայն բան, միշտ հանդիսադիր էր գտանված այս պատերազմի մէջ, հասաւ նոյնպէս և առաւել ճոխ բաժինը զորս պատեհներէից, Պարսից թողած մեծագանձ

աւարը հարստացրել նորան, և շուտով Աթենասի քաղաքը կրկին վեր
բարձրացաւ իւր աւերակներէից աւելի գեղեցիկ, աւելի մեծ և աւելի
հոյակապ քան թէ յառաջուց էր: Աթենքի ամենագեղեցիկ ծաղիկ
ժամանակը սկսվեցաւ. հարուստ քաղաքացիքը այրական զորութենով
և անձնիմացութեամբ հետամուտ էին այժմ առաւել բարձր բանե-
րի: Բնակատեղէն յաղթողը Սարամինեան ջրերի մէջ, լինելով այժմ
նախախորը քաղաքացոց խորհրդի մէջ, ինչպէս որ եղած էր պա-
րագլուխը պատերազմի մէջ, երրորդ նաւահանգիստ Փալերոսը միառ-
բեց Աթենքի հետ, և Պարսից ձեռքով խորտակած պարսկացիները, որ
կապակցուեցին քաղաքը նաւահանգիստների հետ, նորոգեց այնպիսի
ամուր շինքով, որ նոցա աւերակները և հաղաբարտ տարիներից յե-
տոյ երևումն Աիկլոպեան հսկաների գործեր. գորթ այնչափ լայն
էին, որ նոցա կատարի վերայ կարող էին երկու սայլ միմեանց ճա-
նապարհ տալ, Ըս ու տուրքը: Ծովային կարողութիւնը Աթենքի հա-
ստ մի դժուար հաւատալի մեծութեան աստիճանի. նոյնչափ ևս բն-
դարձակվեցաւ քաղաքը և բազմացաւ բնակիչների թիւը: Բոլոր աշ-
խարհները միջերկրական և սեւա ծովի վերայ, ուր Աթենացիք կամ
նոցա զաշնաւորքը իշխան ու տեր էին, թափուեցին առուտուրքից
յառաջացած դանձները Ատտիկայի մայրաքաղաքի մէջ, որ այժմ, Տի-
րոսից և Քարկեղոսից յետոյ, զարձեւ էր վաճառելի բաների ամենա-
ճոխ շահմարանը երկրի, ինչքան որ զա ծանօթ էր այն ժամանակին,
Ցաճարներ, ամփիթեատրոններ, ձիւնթացութեան տապարեղներ, հոյ-
ակապ շինուածներ հասարակաց դաստիարակութեան համար բարձրա-
ցան անգերազանցելի վայելչութենով և նոյնպէս անգերազանցելի փա-
ռահեղութենով քաղաքի բոլոր մասներումը: Երջակայ ծովեղերեւոյքը
պատած էին շինուածներով որոնց հոյակապութիւնը պակաս չէր քա-
ղաքի շինուածներից: Եկրօցոյիսը Պերիկլէսի առաջնորդութեան օրե-
րումը զարձաւ մի տաճարաշէն քաղաք, և նոյն իսկ շրջակայ կերտ-
ուածքը պատերազմական պատսպարութեան համար, ճարտարպետ-
վեցան անլսելի վառնողութեամբ գործ դնելով ամենախնայագին մար-
մարիանի կտորներ, և զարդարելով ամենափառասուր քանդակներով,
Գորթ փակուեցին իւրեանց մէջ այն դերագանց վաճառական, գերընտիր
բաները, ինչ որ կերպարանող ճարտարութիւնը մի ազդի մէջ և մի
ժամանակում ստեղծագործել է, Ըստ տեղ էր Պարթենոնը կամ թէ
Աթենասի տաճարը, մի շինուած որ իւր աւերակ դրութեան մէջ ևս
հրաշք է աշխարհի համար. նորա մէջ Աթենասի պատկերաբանը,
որ սիրագործել էր ճարտարութեան Հոմերոս, Փիդիասը. այլև սորա
Դիոսը որ ամենախնամ քանդաքաղաքական ստեղծուածն է ամենայն
ժամանակների համար, փղոսկրից կերպուորած, 46 օտնաչափ բար-

ձրութենով, ամենին պատած զուս սսկով, որ աւելի արժէր քան թէ մի միլիոն մանկէթ, Պարթևները հարիւր ու յիսուն տարի սորանից յառաջ պահպանած էր համարեալ թէ ամենին անարատ. երբ որ Տաճիկները պատերազմ ունէին Ղենետիկոցոց հետ, նորա գործ էին անում սորան որպէս վաստիկ շտեմարան. մի թնդանովի օտմը հիմն ի վեր տապալեց սորան և ոչինչ չը թողեց բաց ի զեզեցիկ աւերակներից :

Պրոպիլայքը (τὰ προπύλαια), մեծախառ սիւնազարդ սրահներ, փրիւզեան մարմարիտներից շինած, որոնցից զեա ևս 6 հաս սիւներ կէս մի որմնափակ և կէս մի որմերից զուրս, բարձրանումեն խոր փլատակների միջից, Պրոպիլայքը բաղկացնումին մի արժանի մուտք զէպ ի գլխաւոր շինուածը Պարթևների: Կորանից զէպ ի հիւսիս, Ակրոպոլիսի պարսպներից առաւել վեր բարձրանալով կառուցած էր Երեթթէոնը, մի կրկնաշէն սաճար յիոնեան ճարտարապետութեամբ, աւազասորից, որոց մինը նուիրած էր Պոլիսդեան Աթենասին, միւսը Պանդրոզոսին, Հարաւային ճակատը այս հրաշալի շինութեան կրումին իրեանց վերայ կանաչի պտակերարձաններ (Քարիաթիդք) 25 տանաչափ բարձրութենով, ամեն մինը մի կոտոր մարմարիտներից աւազած, որ և մինչև այժմ, թէպէտ կրճատած և երկու հազար տարու ժամանակի և տարերքի աղէկցութենից խամբացած էր, այնու ամենայնիւ մնում որպէս ճարտարագործութեան հրաշք, Ակրոպոլիսի ճակատակողմումը, նորա ամեն մի վերջումը կառուցած էին երկու թէնատրոնք, մինը փրիւզեան խայտաճամուկ մարմարիտներից, միւսը ալապտարից շինած, Յա (Օղէոն անունով) նուիրած էր նուազերգութեան, նա, իսկական խաղարկութեանը և ընծայած էր Բարթոսին, Այս երկուքի և հետքը անգամ չէ մնացել. 300 տարի յառաջ դոցա հսկայամարմին աւերակները հիացրի տարիկայք էին բոլոր ճանապարհորդների համար. զորս Տաճիկների ձեռքով, ըստ որում ամբողջների շինութեան ձեր փոխվելով և նոր ժամանակի պատերազմական ճարտարութեան պաշտպանող անօթների ներմուծութիւնը պահանջումը զորան, քանդվեցան և գործ դրվեցան որպէս շինութեան նիւթ, Ամենագեղեցիկ կիսաքանդակներ (bas-reliefs) ըմպիւր արուեստագործութեան նշխարներ զեա ևս տեսանելի են Տաճիկների շինած պարիսպների մէջ. Ստորին քաղաքումը, Պերիկլէսի ժամանակին նշանաւոր էին ոչինչ պակաս հոյակապ շինուածներ, որոնցից հասել են մինչև մեր ժամանակները ըստ մեծի մասին աղքատիկ մետցուածներ, հասուկոտոր սիւներ, փլատակների կամ թէ նոր շինուածների միջից զուրս զրուած և կամ թէ այս տեղ այն տեղ գործ անված որպէս հիմնաշէնքեր: Առաւել յիշատակութեան արժանի է Ղենետիկների լայ

տերը, մի հրաշալի գեղեցկութեամբ տաճար, որ այժմ գտանվում
Կապուցինեան վանքի գաւթնումը, որ և արեղայրը գործ են ածում
որպէս խոտառուն, բայց ամենից առաւել, զլիւար գարպարը Աթէն-
քի իւր փտաւոր սինազարդ սրահով, որ Հաղբիանոս կայսրը հրա-
մայեց նորոգել, որ և աւելի անարատ պահպան շէնքն է, որ թողել
է մեզ Աթենական հնութիւնը, մի շէնք, որ 16 պտտերազմալից և
կործանական դարերից յետոյ դեռ ևս զարթուցանում ամենայն տե-
սանդի հիացր ու զարմացրը, Գարպար կամարակապ շինած է մար-
մարիոնեայ քարերից այնպիսի ահագին մեծութենով, նոյն իսկ կա-
մարը այնպէս համարձակ արեղն է կապում, և աշխատութիւնը այն-
պէս բնոր է, որ անհասկանալի էր, թէ ինչպէս կարող էին մարդ-
կեղէն ձեռքեր այդպիսի գործ կառուցանել, Եւ և թէ հազարաւոր գա-
րերից յետոյ ամենեւին անհետանային նոյն իսկ Ակրոպոլիսի հրաշալի
շէնքերը, այս գարպարը տակաւին ասելու է հիացած գալոց ազդե-
րին, թէ ինչ տեղ էր դրած Աթէն քաղաքը:

Քաղաքի պարիսպներից դուրս բլուրները պահարտիւմ էին
հոյակապ ճարտարապետական շինուածներով, որ ըստ մեծի մասին
նուիրած էին հասարակաց ոգտակարութեանը, Հին փիլիսոփաները
և ակազեմեան ուսուցիչքը, ինչպէս յայտնի է, սոյնոր շէնք փակվել
գիջւային և գարշահոտ լտարանների մէջ, այլ շատ սիրումէն արձակ
տեղում կեանք վարել, Նորա ուսուցանումէն բացմեայ, գեղեցիկ
բլուրների վերայ որ, վրա եղանակից պաշտպանելու համար, շրջա-
պատած էին սինազարդ սրահներով: Սոցա պէս էին այն հռչակաւոր
Ել-դի-դու ուր ուսուցանումը Պլատոնը, Արիստոնը (յիցեում), ուր
Երիստակէսը դաս էր տալիս իմաստութիւն, Արեոսարգէսեան բլուրը,
ուր Ենտիսթենէսը շինեց Արեոսիկեան փիլիսոփաների գաբոցը, և այլ
միւսեր: — Քաղաքի այլ շրջակայ վայելուչ տեղերում կառուցած էին
քաղաքական ժողովների համար պատկանաւոր մեծարուեստ շինուած-
ներ, սոցա կարգումն էր Երեւոպոսի բլուրը (որ այժմ Տաճիկների
գերեզմանատունն է) ուր գերագոյն խորհուրդը յայտնումը իւր զա-
տակները, Տերակոյտի տունը, Պրիտանէոնը, Պնիքսը, մի բարձրու-
թիւն որի վերայ Աթէնքի աղատ ժողովուրդը նախնի դարերումը հա-
ւաքումը խորհուրդ տանելու համար, Եւս բոլոր շինուածներից և
սրահներից մնացած է կամ ոչինչ, կամ թէ միայն կիսով չափ թա-
ղած, մացանների և փշերի տակից դուրս ցցուած ջարդուփշուր սի-
նք և զանազան բանդակաւոր գործերի րեկորներ, շատերի մասին
կարելի չէ և ասել, թէ որ տեղ կառուցած էին, Ամենից լու պահ-
ված է Պնիքսը, ազգի ժողովատեղին, դեռ ևս կարելի է տեսանել
ապտաածի մէջ փորած աթոռը ասենարանի, դպիրների նստարանը

և վերջերումը այն պաշտմանակալի տեղերը, որ հրամայում էին լուս կե-
նալ և պարսական էին հսկել պատշաճի և կարգի վերայ, Բայց ոչ
մինը հնութեան յիշատակարաններից որ կային քաղաքի պարիսպնե-
րից դուրս, չէ գրաւում այնպէս մարդու աչքը և չէ այնքան հիա-
ցուցիչ ու զարմանալի, ինչպէս ոչինչիական Գիտսի տաճարի աւե-
րակքը որ կէս ժամ հետաւորութեամբ քաղաքէջը պակասորում մի
բլուր: Այս աշխարհահաշտակ շինութիւնը, Աթենացոց պարծանքը և
ամենամեծ ճարտարապետական գործը, փառահեղութենով և զեղեց-
կութենով գերազանց էր բոլոր միւսերից, այն և նոյն իսկ Պարթե-
նոնից: Անկշտելի գանձեր հինգ հարիւր ասրի գործ էին դրված այդ
շինութիւնը մեծացնելու և զեղեցիացնելու համար, մինչև որ գլուխ
կհաւ այդ տաճարի շինութիւնը Հաղբիանոս Այսյսի օրերումը: Գո-
րան կրում էին իւրեանց վերայ 120 խոզովակած և յօրինած սիւներ
փարոսեան մարմարիոնից, ամեն մինը 60 ոտնաչափ բարձրութենով
և 6 ոտնաչափ ստուարութենով, Կուրական գետինը շրջապատումը
մի մարմարոնաչէն պարիսպ, զէպ ի ներք ձեւաշէնով մի բոլորակ
սիւնաղարդ սրահ անշափելի զեղեցիութեամբ, Բոլոր շինուածը ու-
նէր կէս ժամ ճանապարհի շրջապատ, Կորս կատարի վերայ կան-
գնած էր ոչինչիական Գիտսի հռչակաւոր արձանը 60 ոտնաչափ բար-
ձրութեամբ, նոյնպէս Փիկիտսի ձեռքով կազմած ոսկոց և փղոս-
կրից, Տաճարի ներքը զարդարում էին Եսնաստանի ամենաբազ ճար-
տարապետների ստակել պատուական պատկերները և արձանները: Այս
հրաշալի գործից կան զեռ ևս հաստատ 16 սիւներ, այլ սիւների ա-
ւերակներ, սիւնաղլուխների կոտորներ և զարդեր ցան ու ջիր տեսած
էին, առանձին խարիտներ, խոտով և պատասուկ բուսերով ծած-
կած, կարելի էր տեսանել տակաին, բայց այն անհամար պատկեր-
ներից, որ զարդարում էին նորան, չէ մնացած ոչինչ հետք: — Աւելի
լաւ պահված է Քեղեասի տաճարը, որին մեր ժամանակումը փորձել
է նմանող լինել զերմանական ճարտարութիւնը Աթենոս և Միւնիսն
քաղաքներումը, Այն փառաւոր Պանթէոնից որ մի մեծ տաճար էր,
նուրբած բոլոր աստուածներին, համարեալ թէ ոչինչ չէ մնացել, Գո-
րս օրինակով շինած է Հոսի Պանթէոնը:

Այժմ յետ դասանք զէպ ի մեր համառօտ նկարագրութիւնը
այն անցքերի որ անցած էին այն ազգի գլխից, որ կորուղացել է այդ-
պիսի պատուական բաներ սիրազործել, Մի քանի զճապրութիւնք հե-
րիք էին, մեր խորհուրդը լցուցանելու համար:

Պարսից պատերազմերը, ինչպէս տեսնք վերևումը, հասուցել
էին Աթենքը իւր քաղաքական մեծութեան կատարին և տեր էին շե-
նել նորան անշափելի հարստութենների վերայ, Կա հրամայումը բո-

լոր Ատտիկայի մէջ, նորա փառքը նսեմացոյց Յունաստանի միւս աղաստերութիւնները. այս և Յպարտայի անունը յաղթփնջաւ Աթէնքի անուան մեծութենով: Այս բաները բորբոքեցին ամենական ազգի յեղակիցներէ նախանձը, ըստ որում նա որ ըստ օրէ աւելի քաջ զգալով իւր զօրութիւնը, ստացել էր և անանձելի փառք: Ծագեցան հակառակութիւնք բաժանելով սիրա սրտից, և երբ որ հարստութենից ծնած զեղիտութիւնը օրէ օր աւելի արտաքսեց հասարակապետական առաքինութիւքը, իմացիւր զու. անձնուրացութիւն և մարտիւ հայրենասիրութիւն, այնուհետև մի անձնաւէր անարգ քաղաքացիտութիւն ըսկեց վարել ամենը աղատ տերութիւնների միմեանց հետ ունեցած դործերի մէջ: Գաւաճանութիւնըը ներս մտան, երկպառասութիւնքը քակտեցին յեղ յեղեց և անմիաբանութեան ֆուրիան ¹⁾ վառեց վերջապէս այն ջահը որ պիտոյ է Յոյոնների, Միլիադէսների, Աեոնիդանների և Արիստղեկանների աշխարհէ մէջ լուսատու լինէր համարեա թէ անընդհատ ներքին պատերազմների, որոնց մէջ Յունաց սրտի արիւնը, նոցա զօրութեան ուղեղը և ծուծը քամփնջան ու սպառփնջան, որ և պատրաստեցին նոցա կործանումը: Մեծ Պելլագոննեղեան պատերազմովք, որի մէջ Աթէնք և Յպարտա վիճումէին միմեանց հետ նախագահ իշխանութեան վերայ, սկսանվում էր բորոզ և վերջին միջոյր Աթէնքի քաղաքական կենդանութեան, որ և վերջանում է, Հռոմայեցոց տիրապետելովք կործանութեան քաղաքին և կործանելով նորան (146 թ. Քր. յատաջ). այս ժամանակից բոլոր Հելլասը երևում է որպէս Հռոմական գաւառ, մինչև բարբարոս ազգերը կործանումեն Հռոմի տերութիւնը:

Այս պատերազմը խոնարհեցրեց Աթէնքը և բարձրացրեց Յպարտան հասուցանելով այն աստիճանին, որ ունեցած էր Աթէնքը. Բայց նոյն ինքն Յպարտան պատերազմի բազդի փոփոխականութենով պիտոյ է խոնարհէր Թերայի մեծ տղամարդերին: Ահա բոլոր աղաստ տերութիւնների մէջ զգալի էր թուլութիւն և անզօրութիւն, երբ որ

¹⁾ Փուրիոյք որ և երկնիւայք, Եւսթիզք, Դիբոյք, էին Աքերոնի և Գիլէրի ազգիւմքը, և ստուածուհիք որ անզպար հաւածումէն յոյճարութիւնը: Դոցա անանձերը էին Տիլիոնի, Միլիոյք, Ալիոն: Անունս Փուրիոյ տուեցին նոցա Հռոմայեցիք: Յոյք տուումէն նորանց երկնիւայք և Եւսթիզք: Հիքը պատերազմումէն նորանց որպէս զարհուրելի կոչս ազգիկներ, զի նուորված անզկն խորազանկելով և մի ըստով կամ թէ գաշակով, բայց նորբը տուեցին նոցա և արեւոս զգեաներ և գարշելի կերպարանք: Այլարամարտը նշանակում ֓ուրիան խորազանկել, Տիլիոնիլակ, այլն մի շար և կտապի կնով տալիս էն սովորաբար անունս Փուրիո:

Հիստորիա, Մակեդոնիայի մէջ, Փիլիպպոսի գաւազանի տակ զորանու-
մեր մի աշխարհակալ թագաւորութիւն, որ պիտոյ է ընդարձակեր
իւր կորոզութիւնը գեղեցիկ Հելլադի մէջ, Կայրոսէական կոնիւր (338
թուակ. 4ր. յառաջ) տուեց Փիլիպպոսին գերագոյն իշխանութիւնը
բոլոր Յունաստանի վերայ, Զուր և ունայն էին Հելլենացոց ջանքը
վերստին ազատ կացուցանել իւրեանց անձը Փիլիպպոսի մահուց յե-
տոյ, նորա նաւարեկ եղան, զարկվելով երկրպագութեան ծովածայ-
ոսին, և մանուկ Ալէքսանդրի կարող հոգին յաղթահարեց նորանց,
Թերապի կործանումը մի զգուշացուցիչ օրինակ էր անհանգիստ, միշտ
խռովակեր Յունաց ազգին, որ պիտոյ է հետի կենար այդպիսի փոր-
ձերից, ինչպէս արած էր Թերասը, մինչև Ալէքսանդրը կենդանի էր,
Կորա մահուց յետոյ միասնեամբ վառվեցաւ ազատասիրութեան հո-
գին, Յունաստանի քաղաքները ըստ մեծի մասին միարանվեցան Աքայ-
եան Դաշնաւորութենով, որ պատերազմ լսնան Մակեդոնիայի հետ,
երբ որ սորա թագաւոր Փիլիպպոս կրտսերը խառնուած էր մի կուռով
Հռոմայեցոց հետ, Մակեդոնիան յաղթվեցաւ և զարձաւ Հռոմական
գաւառ, և Աքայեան դաշնաւորութիւնը ընդունեցին յաղթող Հռո-
մայեցիք, Յոյները կրկին անգամ վայելիչին ազատութիւն, բայց այ-
նուհետև անշնչաւ էին զորան, Ազգի քաջարի բնաւորութիւնը հա-
մարեա թէ ամենին բնաջինջ էին արել զհելլոսութիւնը, փախկասի-
րութիւնը, Ասիայի արասները որոնց ծանօթացել էին Յոյնք իւր-
եանց պատերազմական ճանապարհորդութիւններէ մէջ այն տեղ, որ
և հասուցել էին անօրինակ ներութեան աստիճանի, Մասնողու-
թիւնը և անհասարակութիւնը շուտով առիթ տուեցին կարող Հռո-
մայեցոց իշխանապէս ներդործել Յունաց տերութիւններէ բոլոր գոր-
ծերի և վէճերի մէջ, թէ իւրեանց հետ, և թէ ստարերկրեայ ազ-
գերի հետ, Հռոմայեցիք, անունով, դաշնաւորք, բայց զործով էին
Դիկտատորք, Շատ յետոյ հասկացան Յոյնք, թէ ինչ անդունդքի
մէջ էին ընկղմած, Աերջին անգամ — սորանից յետոյ պիտոյ է 2000
տարի քնած մնային Յոյնք — բացավառվեցաւ հին յունական հոգին,
փորքրիկ Հելլասը զենք վեր կալաւ, որ պահպանէ իւր անձը ամենա-
կարող Հռոմի երեսից, բայց այն հին զորութիւնը, որ կարող էր
յաջողութիւն տալ մի այդպիսի կուռի, վաղուց ահա թուրացած էր,
Դաշնաւորքը, Արմեթսի մէջ փակվելով, յաղթահարվեցան աւելի
զորաւոր թշնամուցը, նորա յաղթողի սրի տակ ընկան, նոյն ինքն
փառաւոր Արմեթսը կրակի կերակուր զարձաւ, Յունաստանը խանար-
հեցաւ Հռոմացոց ստրկութեան լծի տակ, ընջվեցաւ և նորա անունը,
Յունաստանը Աքայիա անունով փոխվելով Հռոմական ասաջնոր-
դութիւն:

Հերասի քաղաքական արժանաւորութիւնը յիշուի վերջացած էր. բայց յունական հարաբերութիւնը և յունական բնութիւնը այժմ տիրապետեցին աշխարհին հռոմեական արժուի թեւերի վերայ: Յունաց սլլլանդակեալ ազգը, այն ցածութեամբ սողումը հողի մէջ, իր յաղթողի առաջև, բայց հելլենական գիտութեան և արուեստի ախտի առաջև իւրեանց զլուխը խոնարհեցնումէն հպարտ յաղթողքը: Սորա ամեն չը համարեցին աշակերտ դառնալ իւրեանց յաղթածներին և Հռոմի կայսրները գալիս էին ունկնդիր լինելու փիլիսոփաների լսարաններումը Աթենքի մէջ Պլատոնի և Արիստոտելի վարդապետութեանը: Արդարև, ասեմք Հորատիս բանաստեղծի բերանով, Graecia capta ferum victorem cepit et artes intulit agresti Latio¹⁾: Ճարտարութեան ամեն գանձերից շատերը տեղափոխուեցան դէպ ի Հռոմ՝ որպէս նուիրական ընծաներ կամ թէ որպէս յաղթութեան նշանը, և Հռոմից փոխադրվեցան դէպ ի տէրութեան արևմտայն դաստիարակները, ամենայն տեղ ուսուցանելով, դաստիարակելով և նախանձաւորութիւն զարթուցանելով: Յունական լիզուն դարձաւ հռոմեական պալատի լիզու, և զորանով նորա տեղեկութիւնը հարկաւոր ամենայն կրթեալ մարդերի. այդ պատճառով յունական գրութիւնը սիրելի և ընդունելի դարձաւ: Աթենքը դարձաւ գիտութեան տուն հռոմեական թագաւորութեան համար, և այս մասին մեծ փառք և պարծանք ստացաւ դարձեալ Հաղբանոսի և երկու Անտոնինիանց օրերումը. բայց այս պարծանքը չուտով անց կաշաւ և անգամայն կերպով, երբ որ նոյն իսկ հռոմեական թագաւորութեան աստղը սկսեց գունամախօղիլ, այն աստղը որի ճառագայթները տակ կարող էր Աթենքը փայլիլ դեռ ևս, Բարբերի և Ճարտարութեան ամենէն խանդարումը խալիւայի մէջ, Հռոմայեաց անկարողութիւնը իւրեանց յատուկ ձեւերով աւելի պատուական շէնքեր արուեստագործելու, պատճառ տուեց նոյա Աթենքի ահանաւոր յիշատակարանները բազմութեամբ առնուլ բերել Հռոմ, և վերջին մամանակներումը, երբ որ Արտանդնուպոլիսը, որպէս կայսերանիստ քաղաք, պիտոյ է զարդարվէր յունական Ճարտարութեան գործերով, ամենէն կողուպիշաւ Աթենքը իւր զարդերից: Հուսով սորանից յետոյ եղած յարձակումները բարբարոս ազգերի, որ ապականելով անց կաշան Յունաստանի միջից. վերջումը և քրիստոնէութիւնը, թշնամի լինելով հեթանոսական գիտութեան, և հեթանոսական պաշտներ իւր արտաքին ձեւերով միասին հալածելով, մահու հարուած պատճառեցին Աթենասի քաղաքին: Հինգերորդ դարումը

¹⁾ Այսինքն. յաղթած Յունաստանը գործեալ յաղթեց իւր վայրենարարը յաղբայն, գիտութիւն և արուեստ շորհելով անկրթ և աւախներ:

փակվեցան փոխտոսանքի գործըքը Աթենքի մէջ, մնացած տաճարները փոխվեցան եկեղեցիք: Աթենք քաղաքը փոփոխական իշխանութեան տակ, երբեմն հարստակ Քիւլանդացոց, երբեմն Պէնեսիեցոց, երբեմն Ղատինացոց և երբեմն Գենուացոց, չը կարողացաւ միասնեամբ վեր կենալ: Արդ որ սա վերջումը բոլոր Ատտիկայի հետ 1456 թ. ընկաւ Յաճիկների ձեռքը, հաջիւ թէ նորա դրութիւնը էր մի ուրուական, համեմատելով առաջինի հետ: Բայց Թեղեոսի քաղաքը, Օսմանացոց շորեքհարիւրամեայ ծառայութեան լծի տակ, լինելով եկամուտի աղբիւր Սուլթանի Հարեմի պահպանութեան համար, և անտես թողած ներքինի պաշտաւորների կամքին, պիտոյ է տաներ ամենամեծ երկրաւոր անարգանքի: Չը կար աւելի ոչինչ որենք, ոչինչ կարգ, ոչ հրամայողի և ոչ վշտացածների համար: Աթենքի մէջ չը կային այլևս ոչինչ քաղաքացիք, այլ միայն ամենախտար սարուկների ծառայք: Ամբողջամբ մարդիկ, Հարեմի արտուտալ, անզոյ պահապանքը, մարդկութեան կղկղանք, էին նոցա իշխանքը, և սոցա հաճողքը և կամքը էին այն թիւերը, որոնցից կատած էին Աթենացոց բարին ու չարը, կեանք ու մահը, Թշուտապէս պահպանել իւր կեանքը անարգանքի, համապարտեայ վշտանցուցիչ նախատեսքի և արհամարհանքի տակ, էր նոցա մի հաս, հասանելի նպատակը այս ծառայութեան լծի տակ: Ահա թէ ինչպէս ձյն աղբը, որ հասել էր մարդկեղէն կրթութեան ամենալինին աստիճանին, հաղար հինգ հարիւր տարի դէպ ի ցած գնալով վայր իջաւ մարդկային անարգութեան ամենախորին անդունդի մէջ, և իւր աչքի առաջն ունելով իւր նախնի մեծութեան մշտաբարբառ յիշատակարանները, Արդարեւ, Աթենքը զարհուրելի կերպով իրաւացուցել է իւր վերայ Յանալոսեան առասպելը ¹⁾, «Աղբիւրների մէջ ծարաւի գտանվելով, վայելչութենների մէջ անվայելք մնալով»:

Բայց, զարմանալի՜ ձակասապիւր. Աթենքը անց կենալով այդքան զարաւոր անարգանքի միջով, բարոյական վայրենափոխութեան

¹⁾ Այս Յանալոսը, Փրիզիայի և Պաթլոզանայի թողաւոր լինելով, թշուտապէս Սոււնոց առասպելը, սպանել էր իւր որդի Պնէլոսը, և սոցելութիւն կեանք ասանների առաջին էր զրէչ որդեւ կերակուր: Ատտուանքը զայրամալով այս գործելի գործի վերայ գտաւարանշին նորան զէպ ի տարաբառ, ուր նա սանվելով զարհուրելի սոցի ու ծարաւից, Թ ջրի մէջ կանգնած, էրր որ կամեաւոր խնէ նորանից: Չուրը յնու էր քարջում: և ծառերը նորա շրջակայումը, յնա էին սլրքում, էրր որ նա ձգուէր նեւքը զէպ ի ծառերը: Բայ ի սորանից, նորա զլինի վերայ կտի էր ընկած Թ ապտամի կտոր որ ամենայն բազէ մաւ էր չարգութուր տանելու նորան:

և ապականութեան ամենախորին տղմի միջին ազատել և այն կայծը, որ աւելի յաջող հանգամանքների մէջ կարող է բոցաբառվել մի գեղեցիկ պայծառութենով, Հաւանքն չը կան աւելի, բայց կան սակաւն Յոյն, Հելլագեան ժողովուրդը վերջին հնգամայ քաջ պատերազմի մէջ ընդդէմ իւր բնասորներին, մի պատերազմի մէջ որ նման է իւրեանց նախահարց պատերազմին ընդդէմ Պարսից, և արդարև պակաս չէ նորանից մեծագործութեններով, կըքել է իւր անուան արժանաւորութիւնը և յոյց և սուել, թէ իւր զարհուրելի բարոյական պլանդակութեան մէջ ևս չէ հրաժարվել նորանից իւր քաջադնական հոգին, Հելլագեան ազգը կրկին անգամ ոտքի վերայ է, թէպէտ յիսուի որպէս աւերակք, բայց այնպիսի աւերակք, որպէս Գիտի տաճարի աւերակքը ոլիմպիական սարի վերայ, մի պատկանելի և վսեմափառ աւերակք: Որ մարդը, այդ գործերի մէջ, որով այս ազգը փոստաւորեց իւր անձը մի անհնարին պատերազմ բանալով Օսմանեան բոլոր տերութեան հետ, որոնելով շափ ու կշիռը այն զօրութեան, որ քնած է նորա մէջ, ով կարող էր յառաջուց սահմանել, թէ ինչ պաշտոն գալոց սրբութիւնը պիտոյ է այդ ազգը լիուցանել մարդկեղէն կրթութեան հանդէսի մէջ:

Ըթէնքը որ փոքր ինչ յառաջ էր միայն ըստ մեծի մասին անապատ խուղերի ժողով աւերակների մէջ, և հազիւ թէ 1000 աղքատ բնակիչներով, 1834 թուականից զարձել է Նոր յունական արքայութեան մայրաքաղաք և օրրասօրէ զարգարչում գեղեցիկ շինուածներով և լցվում ժողովրդով:

ՄԱՍԿՈՒՆԵՆԵՍՈՒԹԵԼՆ ԳԺՈՒՆԵՐՈՒԹԻՒՆԵԸ:

Միջերկրական ընկերչը ոչինչ տեղեկութիւն չունի ծովագնացութեան դժուարութենների մասին, որոնց կարելի է միայն խելամուտ լինել ականատես փորձով, Նախի զանգաղը զարկած, իսկոյն նաւերների վերակաշուն հնչեցուցանում իւր փողը դէպ ի նաւաստիների կայարանը, և նորա կերկրեալ ձայնը դէպ ի վեր է զանչում պահապանքը, որ արձակեն գործից իւրեանց ընկերքը, Երկրորդ ձայնարկութիւնը եղած, պիտոյ է ամենեքեան ոտքի վերայ լինին և նախ տախտակամածի վերայ, և ամենայն մարդ նախ յառաջակողմում և զեկի մտ բունէ իւր սահմանեալ տեղը, Կատաղութիւնը երկու տարեքի որ համարեալ թէ մշանջնասոր շարժողութեան մէջ են, կրկնապատիկ զօրութենով յարձակում են նոցա վերայ, Նաւաստիքը, իւրեանց մարմինը ջերմ պահելու համար, անդադար վազվաղում են վեր ի վայր, մինչև որ մի պատահար պահանջումը գործ և աշխատու-

Թիւն . Եթէ Հողմը փոփոխումէ իւր ուղղութիւնը, առագաստները փոխումեն իւրեանց կացութիւնը . բայց երբ որ զօրանում Հողմի սաստկութիւնը, ապա պիտոյ էր կամ ժողովել առագաստները, կամ թէ ամենեւին ամփոփել . Այս վտանգաւոր գործակատարութեան տեսութիւնը զարհուրեցուցիչ էր, գոնեայ այնպիսիների համար, որ սոփոք չէին տեսնել մարդիկ իւրեանց կեանքի հետ խաղալով . Երբ որ առագաստների վայր թողած վերջերը արձակվումն առագաստների վերայ, զարկումն նորանց ձողի և կայմի վերայ այնպիսի սաստկութեանով, որ բոլոր նաւը սարսափումէ դորանից . Զարմանալի թեթեւաշարժութենով և ոչ փոքր քաջութենով նաւաստիքը խելոյն վեր էն մագլցում մինչև կայմերի երկրորդ կամ երրորդ վերագիրը . Այն տեղ կախում են պինդ շուաններով առագաստաձողերը, խոտորնակի վայր իջանելով նաւի վերայ . դոցա երկար ծայրերի վերայ և մէջ տեղումը կախ է մի թղլլ տուած պարան որ յանդուգն ծովագնացների համար ստեկառոյցք էր . Այս պարանի վերայով վեց մինչև ութ նաւաստիք ասպհաճովպէս վազումն երկու կողմից մինչև առագաստաձողի վերջն ծայրերը, ամենեւին աներկիւղ այն Հողմից, որ թռթռուն առագաստը նետում զէպ ի սյս և այն կողմ և ցնցումէ պարանը նոցա ոտերի սակ . Թեպէտև նաւը երբևի՛ումէր և այս շարժողութիւնը անհամեմատ աւելի զգալի էր վերևումը քան թէ նաւի տախտակաչէնքի վերայ . Հաշուած են և Սեքստանտով (վեցերորդաւափով) չափած են, որ կայմը երբեմն, ծովի շատ բարձրանալու միջոցին, 38 աստիճանաւափ անկիւնով ծովումէ ուղղահայեաց գծիցը . Եւ այս միջոցին տեսած եմ, ասումէ ֆորատեր ծովագնացը, որ մեծ առագաստաձողի ծայրը թաթաղվումէր դիզացած ալիքների մէջ . ուրեմն այն նաւաստին, որ մտա 50 ոտնաչափ բարձրութենով, կայմի վերայ կախած, առագաստաձողի ծայրումն էր, պիտոյ է, ամեն մի ալիք գալուց, ձօճանակովի 50 մինչև 60 ոտնաչափ աղեղով . Երբեմն, ասես թէ, կործանվումէր նա ծովի մէջ, և երբեմն բարձրանալով շոշափումէր աստղները . բայց յանդուգն նաւաստին անփորձ պահելով իւր անձը այս բռնուոր շարժողութեններից, խլումէ Հողմի ձեռքից առագաստը, փաթեթումէ նորան, կապումէ պինդ և կատարումէ այդ վտանգալից գործը իւր օգնականների հետ, մի քանի բոպէի մէջ . Նորա հողմը այս գործի մէջ, որպէս և միւսերի մէջ, այն էր միայն, որ ոչ ով այս բռնումը նորանից գերազանց չը գտանվէր իւր յաջողակութենով և քաջութեանով . պատճառ, այս գովանի նախանձաւորութիւնը շատ խոր արժատացած է նորա սրտումը և բղիւումէր մի առանձին զգացողութենից որ հասարակաց էր նոցա . բայց նորա համար մի և նոյն էր, արդեօք ցերեկի լուսովն էր կատարում այդ գործը, թէ գիշերի խոր աղչա-

մղջի մէջ պիտոյ է խարխարէ ձեռքերով: Այն, երբ որ մրբիկը պատուել է մի առաջատու և ծուկնքներովք ջարդուակ և փշուռու ամենայն քան, ոչինչ նաւաստի չէ վախենում մտ գնալ այն փռանդին, այլ աշխատուակ փրկել, ինչ որ կարելի է փրկել: Այն անբնականութիւնը կարծումն թէ կայ ցամաքահող, ապա նաւաստին շատ ժամերի միջոցներով անշարժ նստուակ կայմի ամենաբարձր ծայրի վերայ, և այս միայնակ, գլուխ սրտառող բարձրութենից նայուակ արթնապէս զեպ ի չորս կողմը: Նա ժպտուակ, երբ որ ցամաքի անփորձ բնակիչքը, կամ թէ նորքննայ նաւաստիքը ամեն մի ստատիկ հողմի ստամեն մրբիկ, և կամք չունէր աեւ թէ մրբիկ է, ինչքան որ նաւը կրուակը աւելի շատ առաջատաներ, քան թէ ստորին մեծերը: Արձակ ծովի վերայ նոյն իսկ մրբիկը չունի ոչինչ ահաջոցիչ քան նորա համար. ինչ կը մնասեր նորան, երբ ամբողջած էին առաջատաները, և նաւը, ցուկը սրանկին շեղած հողմի կողմուակ, թիակները ամուր կապած, հետեուակ այլքնների բուռութեանը, կամ թէ ստուգապէս գիտելով որ չը կայ մասկալքումը ոչինչ ցամաքահող, թող են տալիս նախ, մի քանի առաջատաներով թռչել մրբիկի առաջեկց: Երբաւ, այն ժամանակը միայն փռանգաւոր է լինում մրբիկային հողմը: երբ սա տանուակը նաւը զեպ ի մի կողմ, ուր չը կար նաւարկուի համար ոչինչ ապահով նաւահանգիստ, և նորա միայնակ յոյսը անփորձ մնալու նաւարկութենից, հաստատուակը ստապատաների ամբուռեան վերայ: Այս վտանգը չէ հանդիպում յաճախ. սորա փոխարեն, աշխատութիւնքը և անախորժութիւնքը, նաւարկուի ամենաբնական բաժինն էին: Ղեկավարութեան պաշտօնը շատ դժուարեաններից մինն է. ոչ ով չէր կարող գիտնալ զորան կէս ժամից աեւլի, և երբ որ ծովը ծածկուակը զիղացած ալիքներովը, կամ թէ հողմը կատաղութեանը յարձակութեանը, պիտոյ է երկու մարդ կատաղարեին զեկի անխը, ըստ որում զորան սանձահարելու համար, փոքր էր մի մարդու կարողութիւն. պատահուակը երբեմն, որ զեկի անխը այնպէս թռչնուակը իւր հետ մարդը, որ սորա կեանքը վտանգի մէջ էր: Երբ որ նաւը գնուակը հողմին հակառակ, և ծովը մի փոքր խոտոված էր, ապա շատ անգամ ալիքները ներս են դարկում և մանաւոր այն տեղ, ուր կանգնած էր պահապանը որ վերջումը թաց եղած մինչև կաշին, ճիծաղելով միթիթարութեանը իւր թշուառութեան վերայ: Այս ստուկամտութիւնը որ խափան չէ և ուրախամտութեանը, է նաւարկու մարդու բնութեան գլխաւոր նշանադրը, և թէպէս շատ անգամ երևուակը որպէս երկխալական թեթեւամտութիւն, այնու ամենայնիս սահմանակից է ճշմարիտ դործական իմաստասիրութեան, և ինչպէս սա, էր նոյնպէս փորձատութեան և առողջութեան հետեանը, Եզանակի և հողմի արագապէս փոփոխութիւնքը, որ սլղքան յաճախ

Հանդիպումն ծագի վերայ, շատ ձեռնտու էին ամբողջելու նաւասիւնների մարմինը ընդդէմ ամենայն նեղութեան. մերկի և անձրեխի տակ չարչարվելով, քաղցր յոյս ունէր նաւարկուն թէ շուտով գալու էր մեղմ արև և յաջողակ հողմ. և երբ որ գալիս էր փորձանքի ժամանակը և ունայնաճումը այս քաղցր յոյսը, այնու հետև նաւասիւնի և մեծաւորների օրինակը բաւական էր, քաջ ու հաստատ պահելու նաւաստիների հողին. Այն չորեքամսեայ ճանապարհորդութեան մէջ, զեւր ի հարտային բեկոր, ուր նաւաստիքը գրեթէ ամենայն օր նեղանումէին ցրտից և թաշութեանից, ուր սառցապատ առագաստները և պարանները վերաւորումէին այն ձեռքերը որ պիտոյ է մտնանային նոցա, ուր նախ բոլոր ժողովուրդը հաւարվում էին տեղ, որ փրկէ նաւը մտանայ վտանգից, ուր աստանդակն նաւարկութիւնը սառցակոյտների մէջ, որոնցից շատ անգամ պիտոյ էր զդուշանալ, այլև այն շատ մրրիկները սպառումէին մարդու բոլոր զօրութիւնը. այդ ճանապարհորդութեան մէջ, ուր մտաւտուղը համարեալ թէ միշտ ծածկում արեգակը մարդու աչքից, և որպէս մի ճնշողական ծանրութիւն ծանրանում էր բեռի վերայ, — եթէ այսպիսի հանգամանքների մէջ մեծապէս զօրանումը Անգլիացի մարդու տօբանտութիւնը, ապա չէր ամենեւին զարմանալի, Բայց, ասում է Գորստեր ճանապարհորդը, այդպիսի դիպումն չէ հանդիպած ինձ. մեր նախ սպասաւորքը միշտ լուռ և երկայնամիտ էին, երբ որ ամենաչափ միջոցներով նախ տախտակամար, որ նոցա խաղի և հանգստանալու տեղն էր, դարձել էր նոցա համար տանջանքան. բայց անձանծիր գործունեայ էին նոցա, բոս որում նոցա մեծաւորքը գիշեր ցերեկ նոցա հետ միասին համբերակից էին այն ծանր պաշտօնի բարձրինակ ստառայանքներին. նախ պաշտօնեայքը, ամենեւին թաց եղած և պազած ցրտութեանից, մտումէին միշտ տախտակամարի վերայ և չէին հետանում այն տեղից յառաջ քան թէ իր բեռնից պահպանը. նոյն ինքն հրամանատարը նախ, Պարոն Կուկը, ուսումը նոյն կերակուրը ինչ որ ուսումը հասարակ նաւաստին. մի բեռն թեթեւանում և վտանգը անհետանում, երբ որ մեր հետ բաժանորդ էին զոյս և միւսերը, Բայց եւս ասելի ազդող գտանվեցաւ այն ամուր վտառհոթութիւնը որ ունէր ժողովուրդը զեւր ի իւր հրամանատարի իմաստուն կառավարութիւնը, և այն պատկառանքով մեծարանքը, որ ամենեւեան նախ վերայ ցուցանումէին նորա քաներանքներին և նորա արժանապատիւ վարքին. Պարոն Կուկի կէս մի կամուրջապէս հրաժարվելը ամենայն ստանձին վայելչութեանից և կէս մի այն անվաստակելի հոյրական խնամատարութիւնը որ անհամար օրինակներով ցուցանումը նա իւր ստորադրեալներին, անբացնումէին սոցա վտառհոթութիւնը զեւր ի նա, վտանգով նոցա սիրաբար մի անսահման սիրով և մեծարանքով զեւր ի նաւաստուր.

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՃԱՌԵՐ ՎԵՐՆԱՄԵՐԸ ՄՏԱՄԹԻՔԵԼՄԻ:

1. ԳՆՆՈՂՈՒԹԻՒՆԷ ԱՍՏԵՂԱԼԻՑ ԵՐԿՆԷԻ ՎԵՐՈՑ:

Ամեն բան ընտանեան մէջ դաստիարակիչ է, թէ շնչաւորը և թէ անշունչը, թէ փոքրը և թէ մեծը, թէ մասունքը և թէ բոլորը, Ամենայն բան պատմում Աստուծոյ մեծութիւնը, ամենայն բան յիշեցուցանում մեզ մեր կենդանութեան խորհուրդը և մեր պարտականութիւնը: Բոլորը է մեր երկնաւոր Հօր ձայնը, որ մեզ, իւր դասակները, որպէս թէ ձեռքից բռնած սանում, ցուցանում իւր գործերը, գործնով զարթուցանում մեզ զէպ ի մտածութիւն և առաջնորդում զէպ ի իմաստութիւն և երանութիւն: Ամենայն քար, ամենայն բուսական, ամենայն շնչաւոր, ամենայն մարդ քարոզող է նորա իմաստութեանը, նորա կարողութեանը և բարութեանը. մի ուղեցոյց է զէպ ի այն էակը որ ստեղծագործել է ամենայն բան և ամենայն բան պահպանում և կառավարում, որով ամենեքեանքս ենք, ապրումներ և ներգործումներ: Յիբաւի, ամենայն բան որ շրջապատում մեզ, է մի խրատիչ, յիշեցուցանող, զգուշացուցիչ և քաջայերոզ ձայն. մոխթարութիւն այն մարդուն, որ ունի աչք տեսանելու, ականջը լսելու և սիրտ զգալու:

Այոյց բոլոր տեսանելի բաների մէջ չօ կայ ոչ մինը որ այնքան պայծառացներ մեր հոգին, որ և նորան, ասրես թէ, զզրումներ, եթէ հեղեղում նորան շատ ու շատ և մեծ մտածութեաներով և իմացութեաներով միանգամայն, ինչքան ~~ստեղծող~~ ~~ստեղծող~~ ով որ կարող էր այդ տեղ անշարժ և անզգայ մնալ. ով որ այդ տեղ չէր յաւժ ընտանեան Արարչի և Հօր ձայնը, ով որ այդ տեղ չէր գտնուի ամենարարձրեալ կարողութեան և իմաստութեան հետքերը. նա զեռ ևս գամնումներ մարդկութեան ամենացած աստիճանի վերայ և անասունից շատ բարձր չէր:

Արեւմն լսիր դու աստեղալից երկնքի բարբառը, ով մարդ. նա ձայն է տալիս քեզ. ~~Պարտէզ Աստուծոյ Կենտրոնը և Կենտրոնը~~, ~~Եւ Ինչպէս կարող էիր դու այն Յաւիտենականը, Անաստմանը, Ամենակարողը, Ամենիմաստունը, Ամենարարին անգիտանալ այս իւր գործերի մէջ. Որպիսի գործեր. ով կարող է նոցա բազմութիւնը, նոցա անթիւ քանակութիւնը փակել իւր տեսութեան տակ. ով կարող է նոցա մեծութիւնը և հեռաւորութիւնը չափել, նոցա կարգը, կապակցութիւնը, շարժողութիւնը, նոցա օգտակար ներգործութիւնը բոլոր կենդանի և զգայուն արարածների վերայ. ուր էր այս տեղ սկիզբը, մէջը և կատարածը. — Երկիրը շրջափակում քեզ, ով~~

մարդ: Այն երկրագնդի, ուր դու բնակումես, ամենայն կողմից, արևելքից ու արևմտքից, հարաւից ու հիւսիսից երևում է քեզ մի նոր անթուռելի բազմութիւն աստղների, արեգակների և աշխարհների. Ահա քո աչքովդ տեսանումես դու նոցանից անլի շատերը քան թէ կարող էիր համարել. ամենայն կողմից, և անչափելի տիեզերքի շատ հեռուոր տեղերից խիտ խիտ արձակվում են լուսեղէն ճառագայթներ զէպ ի քո աչքը, և եթէ դու զբահաւորէիր դորան արուեստաշէն գործիքներով, ապա դու կը տեսնէիր այն տեղ միլիոնաւոր լուսատու մարմիններ, ինչ տեղ դու յառաջ տեսանումիր միայն մի գունաթմափ փայլողութիւն. Աւ եթէ դու քո իմացականութենով բարձրանայիր մի աստղից զէպ ի միւս աստղ, մի արեգակից զէպ ի միւս արեգակ, և այն տեղից նկատէիր աստեղային երկինքը, երբ գտանելու էիր նորանոր հրաշքների ծայրը, ո՛ր գտանելու էիր Անեղբականի գործերի վերջը և սահմանը. Պուչէ թէ հազար հազար այսպիսի փայլուն մարմիններ որոնց լուսեղէն ճառագայթները սկսեալ աշխարհի ստեղծագործութենից անխնայալի արագութենով հոսում են զէպ ի քո աչքերը, հազարաւոր տարիներ ճանապարհորդելով, զեռ ևս չէին աւարտած իւրեանց ճանապարհը. Աւ ապա մտածիր դու այն ևս անլի անթիւ խուար մարմինքը որոնց համար այս լուսի և կենդանութեան աղբիւրքը կային, որ և դու, թող մի քանիսը նոցանից, կարող չես նկատել ոչ լոկ և ոչ զբահաւորված աչքերով, Պատճառ, քո համար չեն երբէք այն հեռուոր արեգակները, ով մարդ. այս մտածութիւնը կը լինէր քո համար մի աններկիւ ամբարտաւանութիւն. Ինչ որ քո արեգակը, քո երկրագունտը իւր բոլոր բնակիչներով լուսաւորում է, ջրմայնում է, կենդանացնում է թափում զօրութիւն և ուրախութիւն բոլոր զգայուն արարածների մէջ, նոյն պաշտօնը կատարում են այն անհամարելի աստեղախումբը այն աշխարհների մասին որ Արարիչը կարգել է նոցա համար. Աստուծոյ, որ նոյն ինքն իմաստութիւն և սէր է, Աստուծոյ թագաւորութեան մէջ ոչինչ տեղում կարող չէ լինել փառահեղութիւն առանց օգտի, հնարք առանց դիտաւորութեան, պատճառ առանց ներգործութեան. այն տեղ չէ կարող լինել զգայազուրկ, անմխիթար մահամեան հանդարտութիւն. նորա մէջ պիտոյ է ամենայն տեղ թագաւորին զօրութիւն և գործականութիւն, կենդանութիւն և երջանկութիւն: Այ՛ս Աստուծոյ անչափելի արարչագործութիւնը լցուած է հազար հազար կենդանի, զգայուն, մտածող, երանութեան բնդունակ արարածներով որ ամենեւեան փառաբանում են իւրեանց արարիչը և ուրախութեամբ վոյնելում են նորա բարերարութիւնը: Ամենայն արեգակ ունի իւր գործականութեան մէջ կամ փոքր ասպարեզը, իւր մտակոյ կամ հե-

ուսկայ տիեզերական մարմինքը, ամենայն տիեզերական մարմին ունի իւր սեփական բնակիչքը որ իւրեանց լուսարուզիս աղբիւրից ստանումեն լոյս և կենդանութիւն և ուրախութիւն :

Այլ բնէն, եթէ դու, ով մարդ, այս բոլոր արեգակների և աշխարհների անչափելի տարածուն շղթայակապը ոչխատումես բովանդակել քո մտածութեան մէջ և յետոյ քո միտքը վերուզդումես դեպի նա որ այդ բոլոր բաները ստեղծել է և պահպանում, ապա սրտի անխմանալի մեծ պիտոյ է լինի նա, բոլոր աշխարհների արարիչը և հայրը, ամենայն զօրութեան և շարժողութեան աղբիւրը, ամենայն բաների յաւիտեական սկզբնապատճառը : Այլ դու, երկրպագիր նորան, ահով ու գողութեամբ պաշարի նորան, Անխմանալին և Անքննելին, Նորան, որից, որով և որի համար ամենայն բան է, ինչ որ է, լինելու է և լինելոց է յաւիտեան, Նորան, այն ամենակարողը, որ հրամայեց և հաստատվեցան արեգակները և աշխարհները, որոնց մեծութիւնը, հեռաւորութիւնը և քարշղակմանութիւնը այնքան գերազանց են քո մտքով ըմբռնած չափից, տարածութեանից և կշռից, Նորան, որ այդ բոլոր բաները բռնած է իւր ձեռքումը, կրում և կենդանացնում, և նորանով իւր թագաւորութեան բոլոր մասների մէջ ներգործում ամենայն բան, ինչ որ կամենում, Պաշարի նորան, այն ամենխմատ Ճարտարակերտը, որ այդ բոլոր բաները այնպէս մինը միւսի մտ կարգադրել է, մինը միւսից այնպէս հեռացուցել է, մինը միւսի հետ այնպէս զուգարթել է, մինը միւսի հետ այնպէս հաստարակելի է կացուցել, այնպէս սահմանել և նոցա շարժողութիւնը և նոցա ընթացքը, որ բոլորը համաձայն է իւր վախճանական նպատակին, բոլորը ներգործում միանաբար, բոլորը անփոփոխ մնում իւր գործականութեան ասպարէզի մէջ, բոլորը փոխադարձաբար մտանում, բայց չէ շօշափում. ոչինչ թէև շատ սաստիկ շարժողութիւն չէ կործանում միւսը, ոչինչ թէև շատ արագ ընթացք մի տիեզերական մարմնի չէ խափանում միւսի ընթացքը, կամ թէ հանելով նորան իւր սահմանեալ ճանապարհից, սանում իւր հետ : Պաշարի նորան, այն Ամենազմածը, այն Աստուածը սիրոյ, որ այդքան շատ, այդքան անեղբական շատ կենդանութիւն և ուրախութիւն և երանութիւն իւրանից դուրս է բղխեցուցել և միշտ գերհայրական քաղցրութեամբ ցած է նայում իւր բոլոր անչափելի արարչագործութեան վերայ, և նորա վերայ ամենայն բոսկէ թափում իւր ամենակենսագործ և ամեներանցուցիչ աստուածեղէն զօրութիւնը : Այ՛, այ՛, գարձիր դու ամենն ին ջերմեանդութիւն, ամենն ին երկրպագութիւն, ով մարդ, երբ որ դու նկատումես քո Աստուծոյ հրաշքների հանդէսը, զգացիր նորա անեղբական, անքննելի մեծու-

Թիւնը, խորասոյզ եղիւր Տիաջբի մէջ նորա վեմամասնութեան վերայ, թող գոհութիւն և փառարանութիւն քո սրտի խորքիցը վեր բարձրանայ զէպ ի երկնաւոր Աստուածը, և զու երանի սուր քեզ այդ ամենից աւելի արժանի գործի մէջ:

Իւրոյ և հանուցէ քո անշնորհ և սուր Ինքնուրիշ. և այս բանը ձայն է տալիս քեզ աստեղալից երկնքի նկատութիւնը, Նթէ երբեմն ծնանումէ քո մէջ այն շատ յիմարական մարդկային կիւրքը, ընդունայն Հպարտութիւնը, ով մարդ. Եթէ զա պատճառ և տալիս քեզ մտանալու քո տկարութիւնը, կամ թէ քո անձը վերագաս ասնելու քո Լորտայրակիցներից, ապա նկատիր զու այս տեսարանը աստուածեղէն վեմամասնութեան, Աւր նայիր իմ Հեա և պատասխան սուր ինձ. Հարցնումս քեզանից, կարճը ևս զու աստղները Համարել, կարճը ևս զու նոցա ամենների անունը տալ. արդևս զիտես զու այն զորութիւնը որ նորանց կախել է այն տեղ և կրում, որ յատկացուցել է նոցա Համար իւրեանց ընթացքը, որոշել է իւրեանց կացութիւնը, որ Հրամայումէ նոցա ծագել և մտանել, Գիտես զու նոցա ձևակերպութիւնը, նոցա կազմածը, նոցա ներքին որպիսութիւնը. այն միխոնաւոր աշխարհները որ սրտյառնին այն միխոնաւոր կայծակնափայլ արեգակների շորս կողմով, և այն անթուելի արարածքը որ բնակումն այս աշխարհների մէջ, Գիտես զու, թէ երբ այս արեգակների, այս աշխարհների ամեն մինը գոյացել է, թէ ինչքան երկար ամեն մինը իւր շրջանի մէջ պտայ է յառաջ վազէ, ինչքան երկար պտայ է փայլի, և թէ երբ կորուսանումը իւր փայլողութիւնը և վերջանումը: Դարձը ևս զու չափ ու սահման գնել այն զորութեանը որ այս աշխարհատուրը գոյացնումէ, կարգաւորումէ և կառավարումէ. կարճը ևս զու քո մտիւ ի խաւար բնակարանից այն բոլոր անչափելի լուսեղէն տիկերը շրջափակել քո տեսութեան մէջ, Չէիր տեսնելու զու թէ և ահագին Հեաւորութեամբ նոր նոր երկիրներ, նոր նոր արեգակներ, նոր նոր աշխարհներ որ ինչպէս նորա, որ զու այժմ տեսանումն, քո ստրի տակին չբանումին: Եւ եթէ զու այս բանը խառնվանումն և զգումն, եթէ զու զգումն քո տգիտութիւնը և Աստուծոյ անծուծութիւնը, եթէ զու մի քանի Հեաանիք Հայեացք ուղղած էիր զէպ ի վեր և զէպ ի խոր արարչագործութեան անչափելի տարածութեան վերայ, ապա նայիր քո բնակարանի վերայ, ջած նայիր քո վերայ և Համամասիր երկիրը երկնքի Հեա, երեւելին աներևութի Հեա և քո անձը այն բաների Հեա որ քեզանից դուրս է. և յիտայ սաս զու ինձ, թէ ինչ է այն երկրագունար, որ բնակումն զու, Համեմատելով այս անչափելի տիկերքի Հեա, մի թէ զա աւելի մեծ բան էր քան թէ

մի կաթիլ որ կախած էր սախորիցը, աւելի քան թէ մի հաս աւազ որ մածված էր կշռի վերայ, Եւ դու ինչ ես, համեմատելով այն երկրագնտի հետ ուր բնակուեալս դու. Համարիր, եթէ կարող ես, այն մարդերի ազգերը որ քեզանից յետոյ ծնանելու են և որոնց փոշին միանգամ խառնվելու է քո փոշու հետ, համարիր բոլոր շնչաւորքը որ այժմ երկրագնտի վերայ բողբոջուեան, բոլոր մարդիկը որ նորա վերայ ապրուեան և գործուեան. Այս երկրարմակների խումբերը համեմատիր միւս աշխարհի անվերջանալի առաւել բազմաթիւ բնակիչների հետ, և ապա ասա՛ դու ինձ, արդեօք բազկացնուեալիր դու մի մեծ, մի նշանաւոր մասը բոլորի, Ասա, ինչքան հեռանից էր քո գործականութեան ասպարէզը, քանի թիւ չափումեիր դու քո կարողութենովը. ինչ մեծ գործ կատարուեալս դու, թէ և էիր մի աշխարհակալ. այ՛ո դու վեր ի վայր ես խառնուած մի խլրղային սուն, կամ թէ բազմացնուեալս այն մի բուն հողը, որ դու անուանուեալս քո թագաւորութիւնը, մի ուրիշ բուն հողով. Եւ ինչքան հող պիտոյ է դու միանգամ ծածկիր քո հողովը. ինչքան երկար մնալու է այն հողաբլուրը որ փակուեալ գորան իւր մէջ, — Ա՛յ մարդ, մի թէ դու չէիր չքանուած այս երկրի երեսի վերայ այն բոլոր բազմութեան մէջ, և բոլոր երկրի երեսը քո մտածութեան մէջ. մի թէ դու չէիր անհետանուած նոյնպէս այն աշխարհների ևս առաւել մեծ բազմութեան մէջ, որ շրջապատուեան քեզ, Եւ դու զեռ ևս կարող ես հպարտանալ, քո գիտութեան, քո կարողութեան, քո իշխանութեան, քո հարստութեան վերայ մեծամեծ, քո անձը համարել առաւել մեծակշիռը բոլոր արարածների մէջ, զեռ ևս մտածել թէ ամենայն բան քո համար է ստեղծած, ամենայն բան պիտոյ է հնազանդի և ծառայէ քո ցանկութեանը, կարող էիր զեռ ևս մտածել թէ Արարիչք անիրաւութիւն է ասնում քեզ, եթէ նա հոգարարձու է ոչ թէ միայն քեզ, այլև միւսերին. զեռ ևս մտածել, թէ քո ընկերակից արարածքը, այն ճճիքը որ քո մտից սողուեան, զօկումին քեզ, եթէ նորա չեն համարում քեզ աւելի լաւ, եթէ նորա չեն խոստովանում քո գերազոյն իշխանութիւնը, չեն կամենում կուրորեն հնազանդել քեզ, Ա՛յ մարդ, եթէ կարող ես դու այս տեղ, եթէ կարող ես դու, նայելով զէպ ի աստեղալից երկինքը, զեռ ևս հպարտանալ, ապա դու այն միակ բանը որ քեզ արգարե ազնուացնուեալ, քո բանականութիւնը կորուսած էիր.

Ի՛նչոյ իմ դիտաւորութիւնս չէ այն, որ այս նկատութեններովք միջատեցնեմ քեզ, ո՛վ մարդ, կամ թէ փոքրահոգի շինեմ քեզ, Արժան չէ քեզ մեծամեծել, բոլոյց և ոչ ցածամիտ լինել, ոչ աւելի և ոչ պակաս համարել քեզ, քան թէ ստուգութեամբ էիր, Եթէ

աստեղալից երկինքը ձայն է տալիս քեզ . Ճանաչիր քո ունչութիւնը
և ուսիր խոնարհութիւն, ապա դարձեալ ձայն է տալիս քեզ . Ճ--
նաչէր քո սրբանորոգութիւնը և սուր շարժել : Բնութեան գործը էր ինչ,
Յիրաւի, դու քո փորձութիւնովք որպէս թէ չբանուես արարածնե-
րի և աշխարհների անթիւ բազմութեան մէջ, որ չըզայատուեն քեզ .
Յիրաւի, այն տարածութիւնը որ դու բանուես նոցա մէջ պիտոյ է
անչափ փոքր, այն դաշտներ որ դու կտատուես նոցա մէջ, Համե-
մատարար շատ աննշան, և բոլոր երկրաւոր մեծութիւնը, բոլոր փա-
ռահեղութիւնը քո բնակարանների, քո զգեստների, քո ճարտարա-
գործների որպէս երկխոյական խաղալիք երևէր քեզ . այն, ամենայն
հայեացք, որ դու դարձաւանուես աշխարհի անչափելի կազմածի վե-
րայ, ամենայն փորձ որ փորձուես դու, նորա մեծութիւնը, նորա
կարգը, կապակցութիւնը նկարագրելու մտաւորապէս, և այն, ամե-
նայն սեղ զիզած ու կուտած, զժուարութիւնքը և անհուն իտրու-
թիւնքը, որ ամենայն քայլափոխի մէջ զազարեցնուեն քո հետարըն-
նութիւնքը, սորա ամեներևան ասումն քեզ, ինչպէս աղետ, ինչ-
պէս սկար, ինչպէս սահմանափակ էիր դու . դորա յայտարարատ
քարտուսն քեզ, թէ դու կարող ես միայն կարգալ մի քանի ցան-
ուցիք գրանշաններ, հաս ու կտոր վանկեր բնութեան մասերի մէջ,
որ Աննչականը գրել է քո սուտը, և թէ, բաց ի քեզանից, պի-
տոյ է լինելին բանական արարածներ, որ քեզանից զերազանց էին գի-
տութեանով, խելամուտութեանով և զբոսութեանով, այնչափ և աւելի ևս
զերազանց, քան թէ դու էիր համեմատելով նորածին մանուկի հետ,
կեր որ հասած էիր քո երկրաւոր ասպարեզի վերջին . — Բայց իս-
կապէս այս խոստովանելը քո պիտութիւնը և քո սահմանափակու-
թիւնը, ով մարդ, սոյն այս անպար աշխատելը ընդարձակել քո
գործականութեան շրջանակը, սոյն այս համեմատութիւնքը որ դու
կարող ես ասնել քո մէջ և աւելի բարձր եակների մէջ, նոյն իսկ
սխալները որ դու հետաքննութեան ճանապարհուց անուես,
նոյն իսկ անյաջող փորձերը որ դու փորձուես, տեսանելին Անտեսանե-
լու հետ, ժամանակը մշտնջենարութեան հետ, արարչագործութիւնը
Արարչի հետ կապակցելու համար . սորա ասումն քեզ, թէ դու չես
ամենին հող, թէ կայ քո մէջ մի գործական զբոսութիւն, որ շատ
վեր բարձրացնում է քեզ հողի վերայ, որ զես ևս չէ և ներգործում
չէ բոլորովին այնպէս, ինչպէս կարող էր լինել և ներգործել :

Արեւն, թէև դու շատ ցած էիր, ճանաչիր քո բարձրութիւնը,
թէև դու շատ սահմանափակ էիր, ճանաչիր քո արժանաւորութիւնը,
դու, դու միայն բոլոր արարածների մէջ երկրիս վերայ կարող ես
քո աչքերը բաց դարձուցանել այն հողից որի վերայ շրջուես, և

գեղ ի վեր ուղղել նորանց և տեսանել այն տեղ անթիւ արեգակների և աշխարհների խումբեր, քեզ, քեզ միայն բոլոր երկրաւոր արարածների մէջ շարժում և հիացուցանում այս հոյակապ, աստուածային տեսարանը. քո մէջ, տեսանելով այս բաները, ծովանումն մտածութիւններ և զգացութիւններ որ ընդարձակումն քո բոլոր հոգին, գործական են կացուցանում քո բոլոր իմացականութիւնը, որ և աւելի մեծ և բազմութիւ կին, քան թէ կարող էիր բոլորել նորանց քո հասկացողութեան տակ:

Եւ թէ դու միտք ես բերում ապա, թէ մարդը, քո եղբայրը որ այդքան տկար ու սահմանաւոր էր, այս արեգակներից և աշխարհներից քանի միների մեծութիւնը, քարշողականութիւնը, հեաւորութիւնը և անշուքութիւնը միմեանց հետ, թէ և չէր ամենին հաշվում և աւարտում, այնու ամենայնի հաշվումը, նոցա շարժողութիւնը և շրջանաւորութիւնը շարժումը այնպէս ճիշդ, որ հապարտոր սարիներով յառաջ կարող էր հաստատապէս սահմանել այն տեղը որ նորա պիտոյ է բունն անշափելի տարածութեան մէջ, այն հանդիպմունքը որ պիտոյ է միմեանց հետ ունենան, այն օրէնքները որոնց հետեւելով պիտի շարժվին և ներգործեն. այլև, թէ յաւելանաւ սորա վերայ այն բանը, որ քո ընկեր մարդը իւր արուեստական անթմերով կարող է լուսեղէն ճառագայթներ այնքան հեաւոր և լոկ աչքի համար աներևոյթ աշխարհային մարմիններից գեղ ի իւր աչքը քարշել և տեսանելի կացուցանել նորան, և յետոյ իւր մտածութեանով, աւելի եւ արագ քան թէ լուսի ճառագայթն էր, կարող է վերապանաւ աւելի բարձր քան թէ ամենայն տեսանելի բան, և այս բոլորը, ինչքան և անշափելի էր դա, համարել որպէս մի անձան փոքրիկ մասը բոլորի, որպէս առաջին նախագաւթի երկնի. այնուհետեւ չէր պիտոյ քեզ ձայն արձակել. Տէր, ինչ է մարդը, որ դու յիշումս նորան, որ դու սորան, այս հոգի բնակիչը, զարդարել եւ այսպիսի շնորհներով, որ դու այն խաւարի մէջ որ շրջապատում նորան, թող ևս տուել այդքան բան տեսանել և այդքան բարձր բարձրանալ իւր իմացականութեան թևերով:

Եւ թէ յետոյ, արարածներից գեղ ի արարիչը վեր ելանես դու և քո մէջ շատ պայծառանայ այս մտածութիւնը, թէ այն Աստուածը, որ այս արեգակները և աշխարհները ստեղծել է, նորանց և նոցա բնակիչքը կրում և պահպանում, կենդանացնում և խնամարկում, է և իմ Աստուածը, իմ Արարիչը, իմ Պահպանողը. նա զիտէ, նա սիրում և ինձ, նա կամի և իմ երջանկութիւնը. Այս բանը գիտեմ եւ, զգումեմ եւ, որ նա մտն է ինձ, որ նա ամենայն է ամենայնի մէջ. նորա առաջև ոչինչ բան փոքր չէ, ոչինչ բան

մեծ չէ. նորա աչքը շրջափակում էւր տեսութեան տակ ամենայն բան, նորա զօրութիւնը հոգիացուցանում ամենայն բան, նորա գթութիւնը լցուցանում երկինք և երկիր: Եւ այս Եստուածը կարող եմ մտածել ես, այս Եստուծոյ հետ կարող եմ հաղորդութիւն ունենայ, այս Եստուծով կարող եմ ուրախանալ: Երբ որ այս մտածութիւնը կենդանանում քո մէջ, ով մարդ, ինչ երանելի քաղցրութիւն չէր հեղեղելու քո սիրտը. կարող ես դու ապա ապխտանալ քո արժանատրութիւնը, ցած և ստորաբարչ կերպով մտածել քո վերայ և քո մտածանական նպատակի վերայ. կարող էիր դու այսուհետև շամուշել ամենայն անաղնիւ, երեսայական ձգտողութենից և շաշխատել արժանատր կերպով գործ գնել քո գօրութիւնքը:

Ինչպէս. մի թէ դու քո բոլոր ցանկութիւնքը, դիտարութիւնքը, աշխատութիւնքը պիտոյ է գնելիր դազանական, զգայական գործերի և հեշտութենների մէջ. մի թէ պիտոյ է այս երկրի բարութիւնքը համարելիր քո բոլոր երջանկութիւնը. մի թէ պիտոյ է ազատելիր այն վայրուն հողին ու մտերին որ քո ոտքի տակ էր, այդ հողի ու մտերի հետ կապվելիր, քո գօրութիւնքը և ժամանակը կորուսանելիր հողը հողի վերայ կուտակելով և այս, քրտինքով դիզած ու կուտակած, հողի շարք հաշուելով. մի թէ այս պիտոյ է լինէր քո պատուասիրութեան նպատակը, այն աւաղի հատի վերայ որ քո և կողայրակիցներից բնակարանն էր, ջանալ մի փոքր աւելի բարձր աստիճանի հասանել և յետոյ արհամարհանքով ցած նայել նոյա վերայ: Մի թէ այդպիսի ջանացողութիւնը արժանի էին մի արարածի որ կարող է իւր հայեացքը դէպ ի երկինք վերուղղել, մտաւորապէս բարձրանալ միխոնատր արեգակների և աշխարհների վերայ և թափ տալով անցանել մինչև նոյա Աբարիչը:

Ո՛չ. դու ստեղծած ես աւելի բարձր բաների համար, ով մարդ. դու շակիր, և այս բանը բարբառում էր դէպ ի քեզ աստեղալից երկրների նկատութիւնը. Գո՛ւրդի՛ք ու հո՛ւրդի՛ք ի կորուստի՛նք և երանութի՛նք, յո՛ւրդի՛ք Բի՛նդի՛ք նորանձև և ոչ ոքի՛ց որ է որ ուրիշ ընդունիք ուրանձև յոր երանութի՛նք: Տես. այժմ կատարուեալս դու մի ցած պաշտան բաների աստիճանակարգի մէջ. բոլոյ ցանկութիւնը, ընդունակութիւնը, ձգտողութիւնը աւելի բարձր վեր ելանելու, այս բոլոր բաները դու զգումս քո սրտի մէջ, և դորանց չէր կարող Աբարիչը անխորհուրդ սուտ լինել քեզ. Ինչո՞ւ համար պիտոյ է նա այս հրաշքների տեսարանը դրած լինէր քո աչքի առաջ. ինչո՞ւ համար պիտոյ է նա քեզ, որ տեսանում էիր այս բաները, բարձրացուցանէր ամենայն բանի վերայ որ երկրային և անշատր էր, այ՞ ուր քեզ ինքդ քեզանից վեր բարձրացուցանէր դէպ ի իւր սատուածութիւնը, և թողլ

տար, որ քո մէջ բորբորակէն ցանկութիւններ, որ ոչինչ բան այս աշխարհի վերայ չէր կարող լցուցանել, Ա՛շ. նա, Ճշմարիտը, ամենազնաւոր չէ կարող և չո կամի խարել քեզ, ոչինչ կատարելութիւն, ոչինչ երանութիւն գուշակել տալ քեզ, որ պարզեկում քեզ չունէր դիտարարութիւն, Ա՛շ. զօր կարող ևս և պետք է քեզ օրէ օր աւելի իմաստնանալ, աւելի բարի և աւելի երանելի դառնալ, Այս է քո Աբարչի և երկրաւոր հօր կամբը, այս բանը ձայն է տալիս քեզ բոլոր անթաւելի խումբը նորա արեղակներէ և աշխարհներէ: Տես ահա, նորա անչափելի թաղարարութեան մէջ կան լուսի և գիտութեան աղբիւրներ, որ երբէք չեն ցամաքում, որոնցից միշտ և հանապաղ կարելի է բան իմաստասիրել, որ և ոչինչ ստեղծական հանձար չէր կարող պատել երբէք. Այս տեղ է նիւթ մշտնջենաւոր մտածութեան, անվերջանալի յայտնագործութիւնների, միշտ նորանոր գրադութիւնների ամենազնաւոր քաղցր ջերմանալովութեան: Այս տեղ կան անթիւ բնկերութիւնք աւելի ազնիւ, աւելի կատարեալ պաշտոնների Ատուած, որոնց մտանուամէք մէք, որոնց հետ միանում ենք մէք, որոնց հետ միանալով և բնկերակցելով կարող ենք մէք ճաշակել աւելի վերին, մի անասելի քաղցրութիւն և երանութիւն: Այս տեղ կան անվերջանալի հնարներ և ճանապարհներ և շարժարկիներ, մեր զորութիւնքը կրթելու, նորանց բոլորովին կատարելագործելու, մեր գործականութեան ասպարէզը բնագործակելու և լինելու ամենին այնպիսի, որպիսի չէինք կարող այժմ լինել: Այս տեղ հազարապատիկ զմայլելիցուցիչ կերպով տեսանդում ամենայն ուրախութիւն, որ յատուցուց այս կեանքումս պատրաստուեմք մեզ ընտելեան նկատութիւնը, մեր զորութիւնների յայտնութիւնը, բարեգործութիւնը և Ատուածոյ և մարդու սերը: Այս տեղ կան օթեանք ամենամեծ, առաւել հասարակագուտ գործականութեան, օթեանք ամենախորին, առաւել ազգու սիրոյ, ամենամաքուր ատուածեղէն ուրախութեան: Այս տեղ կարող ենք մէք յախտներից մինչև յախտեան ապրել և ներգործել, որ ըստ օրէ առաւել յատազգեմ լինենք, որ ըստ օրէ առաւել պայծառ ճանաչել Ճշմարտութիւնը, առաւել բարի գործել և վայելել, որ ըստ օրէ առաւել մտանալ Ատուածութեանը, հազրդակից լինել նորան, հասանել օրէ օր աւելի մեծ երանութեան: Աչինչ ակնկալութիւնք չէին կարող այս տեղ չափից գուրս մեծ լինել, ոչինչ յոյսեր չափից գուրս համարձակ լինել: Ատուածոյ անկրտկանութիւնը և նորա աշխարհի անչափութիւնը, սորա քանի քանի ակնկալութիւնների աղբիւրներ ցուցանում են մեզ հետաւոր հանդերձեալ կեանքումը:

2. ՄԵՐԴՍ ԸՏՆԳԻՍ Է ԿԸԶՄԸՆԾ. ՈՐ ԼԻՆԷ ԸԻՆԼԷ ՆՈՐԻ ԶԳԸՑՈՂ,
ՃԵՐՏԸՐԸԳԻՐԾ ԵՒ ԻՕՍՈՒՆ ԿԵՆԴԸՆԷՒ:

Մարդուս բոլոր զգայարանքը քանի որ մտ էին գեանին, ունեին և շատ փոքր պարունակութիւն, և ստորին զգայարանքը յառաջադէմ էին քան թէ աւելի աղնիւները, ինչպէս ցուցանում է մայրենացած մարդերի օրինակը: Լոտոտելիքը և ճաշակելիքը էին, ինչպէս գազանների մէջ, նոցա քարշողական ստաջնորդքը: Լոտոտելիքը բարձրանալով գեանի և բանջարների վերայ, շունին այն իշխանութիւնը որ մայր է աչքին: Յա մի մեծ թագաւորութիւն ունի իւր չորս կողմը, և սկսեալ երկխայուժմանից վարժումէ շատ նուրբ շափելով դիճերը և գոյնը: Ականջը, վեր չչուած գոգաթի սակ ունելով զէպ ի ցած իւր գրութիւնը, աւելի մասնումէ այն ներքին սննեկին, որի մէջ հասարկումն գաղափարքը, բայց անասունների սկանջը լրտեսելով զէպ ի վեր է գնում, և շատերի սկանջը ևս, նայելով նորա արտաքին կերպարանքին, սրացած ու շարժը էր:

Մարդս կանգուն գնացք ստանալով, դարձաւ մի ճարտարագետական արարած. պատճառ, զորանով, որ առաջին և ամենագոյնար ճարտարութիւնն է, որ ուսանում մարդս, կարողութիւն է ստանում սա ամենայն բան ուսանել և դասնալ սրպէս թէ մի կենդանի ճարտարութիւն: Նայիր անասունի վերայ. զա մի մասնով ունի ահա մատեր, միայն թէ զորա այս սեղ սմբակացած էին, այն սեղ ճանկերի պէս կամ թէ այլ սեւակ ձեւաորոված և մատերշերով խնդարոված: Մարդս այնպէս կազմած լինելով, որ կանգուն գնացք ունենայ, ստացաւ ազատ և արուեստական ձեւեր, որոնցով կարող է նա ամենանոր բաներ պատրաստել և անդադար շոշափելով որունը նոր նոր պայծառ գաղափարներ, Այսպէս սեօանելով, ուղիղ էր այն փոքր, թէ ձեռքը մարդուս համար մի մեծ սգնական հնարք է, իւր իմացականութեանը յառաջադիմութիւն տալու. պատճառ, քանի քանի զործեր կատարումէ ահա կնքիթը փղի համար: Այն, մարդու ձեռքերի նուրբ զգացողութիւնը սիրած է նորա մարմնի մէջ, և ծայրատեալ մարդերի մէջ շատ անգամ ոտերի մատերը այնպիսի ճարտարութիւնք են արած, որ ձեռքը չէր կարող ներգործել: Չեռքի փոքրիկ բժամասը և ոտքի մեծ բժամասը, որ նայելով նոցա մկնամբների կազմածին, ջոկ ջոկ կերպով ձեւաորոված էին, թէպէտ երևումն միզ անպատիւ անդամներ, բայց ամենահարկաւոր արուեստաշէն օգնականք էին մեր կանգնելու, գնալու, լրմնանելու և ճարտարագործ հոգու համար:

Ըստ անգամ ասած են, թէ մարդը ստեղծած է անգէն, և թէ

նորս սեռական յատկացուիչ նշաններից մինը էր նոյնպէս անհարմար, քան ի վերջոյն, Եւրոպեացիքը, նա ունի զէնք իւր անձը պաշտպանելու համար, ինչպէս միւս արարածքը, կապիկը ահա գործ է ածում իւր գաւազանը և պաշտպանում իւր անձը աւազ ու քար նետելով ընդդէմ իւր թշնամուն. նա վեր է ելանում ծառերի վերայ և փրկում իւր անձը սնկերի երեսից, որ շատ փնասակար էին նորան. նա աների ծածկոցը քանդում և կարող է մարդ սպանել, Աշայրենի աղջիկը Սոնգի աշխարհում լախտով զարկեց իւր քուեր գլխին և իւր քաջ մազլցի վեր ելանելովը և վաղելովը լցուցանում էր իւր զորութեան պակասութիւնը, Արեւն և վայրենացած մարդը, նայելով նորս կազմածին, չէ տանց պաշտպանութեան. և երբ որ նա զէպ ի վեր է ուղղել իւր մարմինը, կրթութիւն է ստացել, ապա որ գազանը ունի այն ճարտարութեան բազմութեան գործիքը, որ ունի մարդը իւր բազուկների, իւր ձեռքերի, իւր մարմնի նրբութեան և իւր բոլոր կարողութեանների մէջ, ճարտարութիւնը աւաւել զորսոր զէնքն է, և մարդը ամենին ճարտարութիւն է, ամենին արուեստայարմար զէնք է, Միայն թէ յարձակվելու համար պակաս էին ճանկեր և ատամներ. պտտաւ, նա պիտոյ է լինէր մի խաղաղաւեր, Հեղաբարոյ կենդանի, մարդակերութեան համար չէ կազմած նա.

Ինչ խորամտիւ ճարտարամտութիւնք ծածկած էին ամենայն մարդու հոգու մէջ, որ այս տեղ ու այն տեղ դուրս են երևում ըստ մեծի մասին, երբ որ մի հարկաւորութիւն, պակասութիւն, հիւանդութիւն, մի այլ զգայարանի անդործութիւն, ծննդական արատաւորութիւն կամ թէ մի պատահումն առիթ էր տալիս այդ բանին. դոշանից եզրակացութիւն անելով տեղիք կար գուշակելու թէ քանի այլևայլ տեսակ զգայութիւններ կային մեր մէջ, որ անյայտ ու ծածուկ էին մնում այս աշխարհումս. Եթէ մի քանի կոյր մարդիկ կարող են մինչև այն աստիճան զորացուցանել իւրեանց շոշափելիքը, լսելիքը, համարողական բանականութիւնը, յիշողութիւնը, որ մի առատելիական բան էր երևում սովորական զգայարաններով մարդուն, ապա կարելի է, որ շատ և շատ անյայտ բազմութեան և նուրբ բաներ դրած լինելին և այլ զգայարանների մէջ որոնց մեր չենք տալիս կերպարանութիւն մեր բազմամասնեայ գործարանի մէջ, Անբը, ականջը. սոցս միջնորդութեամբ ինչքան նուրբ բաների ահա վերահասու է եղած մարդը, և սա մի աւելի բարձր դրութեան մէջ անպտտաւ պիտոյ է աւելի յատաջ գնար, ըստ որում, ինչպէս ասում է Քերքըլինոս բնագիտիչը, լոյսը Ատուածոյ բարբառն է, որ մեր ամենաուրբ զգայութիւնը անզոգար գիր կապելով յոգումն անհամար կերպերով և դուներով. Այն բարեհնչութիւնը որ զգում են մարդկային

լինիքը, որ և կերպարանագործում ճարտարութիւնը, և մի նուրբ շախմատութիւն, որ ազտապէս կատարում հագին զգայութեան օգնութենովը, ինչպէս զարձեւալ Աշքովը, կրք սորա վերայ ներգործում արեգակի ճառագայթը, ցուցանում մի շատ նուրբ կերպարութիւն, Մի անկերջանայի զարմանք պիտի գար մեր վերայ, և թէ մեր մեր կեանքի սահմանի մէջ մի քայլախօս յատաճ խաղալով, պայծառապէս տեսանեմք այն բոլոր բաները որ մեր մեր բազմամասնեայ աստուածեղէն գործարանի մէջ զգայարանների և կարողութիւնների միջնորդելով կատարումներ ազտապէս, և որոնց մէջ անասունը, իւր կազմուածի համեմատ, ասես թէ, սկսանումը միայն կրթել իւրեան, Բայց այս բոլոր ճարտարապետական անօթների, ուղեղի, զգայարանի և ձեռքի—թէ և Արարիչը չը լինէր մեզ տուած մի այնպիսի ազգարան, որ այդ բոլոր բաները շարժէր և կենդանացներ—միակ ազգարանը և խօսելու աստուածեղէն պարզեր, Կուսի գորութենով միայն աչքը և ականջը, այդ և բոլոր զգայարանների իմացութիւնը բազմացնումն այն արարիչ մտածութիւնը, որին պիտոյ է հնազանդէր միայն ձեռքերի և միւս յօդուածների ճարտարապետական կազմաւոր, Կուլ և համը ծնած մարդերի օրինակը վկայում, թէ մարդս, թէպէտե սպրէր մարդերի մէջ, այնու ամենայնիւ անկարող է ստանց լեզուի հասանել բանական գաղափարների, և թէ ինչ անասնական վայրենութեան մէջ մնումին նորա բոլոր ձգտողութիւնը, Կա նմանում ամենայն բանի, ինչ որ տեսանում նորա աչքը, լուսին և վառին, բայց նա աւելի անկատար նմանող է քան թէ կապիկը, ըստ որում ընտրողութեան ներքին նշանը, և նոյն իսկ համակրութիւնը իւր սեռի հետ պակաս է նորան, Կան օրինակներ, որ մի խուլ և համը ծնած մարդ սպանել է իւր կողքայրը, ըստ որում տեսանումը թէ մի խող են մորթում, և նա կամենալով միայն նմանել, ստանափրտութեան թեմայի վեր ի վայր էր խառնում աղերները սպանած կզոր փորի մէջ, Ահա քեզ մի գարհուրելի ազգացոյց, թէ այն գովասանած մարդկային իմացականութիւնը և մեր սեռի զգացողութիւնը ինչքան թոյլ և անկարող էր ինքն ըստ ինրեան, Արեմն կարելի է և պարտ է այն նուրբ լեզուային անօթը համարել մեր իմացականութեան ղեկավար, և խաբը մի այնպիսի երկնային կայծ, որ առ փոքր փոքր բորբոքել է մեր զգացողութիւնը և մտածութիւնը:

Մասունների մէջ տեսանումներ նախապատրաստութիւնը խօսելու համար, և բնութիւնը այս տեղ ևս աշխատում ցածից զեղ ի վեր, մինչև որ այդ ճարտարութիւնը հաստցանում է իւր կատարելութեանը, մարդուս մէջ, Շնչատութեան համար հարկաւոր է բոլոր կուրծքը իւր ոսկրներով, կապելով և մկնամիսերով, միջնամորթը

(Գիտաֆրագմա), այո՛ և փոքրափորի, զվե և վերնարագուկների մասունքը: Ահա, այս մեծ գործի համար բնութիւնը կազմել է ողնաշարի բոլոր սիւնը իւր կապերով և կողերով, մկնամիտերով և երակներով. նա տուել է կուրծքի մասերին այն ամբուժիւնը և շարժակաւնութիւնը որ պատկանաւոր էին նորան. և սկսանելով աւելի ստորին արարածներից զէպ ի աւելի վեր դնաց, ձեակերպելով աւելի կատարեալ թորեր և օգանջական փողովակներ: Նորածին անասունը փափագելով ներս է ձգում առաջին շունչը, այն շտապելով որոնում է նորան, որպէս թէ չէր կարող սպասել նորա վերադարձին: Զարմանալի շատ մասունք մարմնի մէջ կաղնած էին այդ պաշտանի համար. պատճառ, մարմնի ամենայն մասունքը կարօտ էին օդի, իւրեանց աճեցողութեան համար: Արդարև, թէպէտ բոլորեքեան կարօտով որոնում են այս կենդանի աստուածային շունչը, բայց ոչ ամենայն արարած ունի ձայն և լեզու, որ այն հնարաւորութեամբ փոքրիկ անտիներով, շնչափողի գլխովը (լարինքսով), մի քանի անասնելով (կարթիլագոս) և մկնամիտերով, վերջապէս լեզուի հասարակ գործարանովը: Շատ պարզ կերպարանված երևում է մի այն հազարարուեստ ճարտարագործը բոլոր աստուածային մասնութեաների և բառերի, որ մի փոքր օդով, որ անցանում էր մի նեղ ծակից, ոչ թէ միայն շարժեցուցանում է մարդու գաղափարների բոլոր աշխարհը, այլ և հնարագործել է ամենայն բան, ինչ որ մարդիկ միանգամ արած են երկրի վերայ: Մի անշափ զեղեցիկ առաջարկութիւն էր, նկատել այն աստիճանակարգը որով բնութիւնը, սկսեալ անխօս ձկնից, որդնից և սողունից, առ փոքր փոքր յառաջ տանելով արարչագործութիւնը հասուցանում է շնչողական և ձայնաւոր կարողութեան: Թառներ ուրախանում իւր երգեցողութեան վերայ որպէս իւր արուեստական գործի վերայ, նոյնպէս և այն պատուական առանձնաշնորհութեան վերայ որ տուել է նորան Արարիչը: Այն կենդանին որ ձայն ունի, գործ է գնում այդ բանը, երբ որ զգում է իւր մէջ յօժարութիւնը, երբ որ նորա զոյու թեան ներքին որպիսութիւնը կամենում էր արտաբերել որպէս ջառ կամ ուրախութիւն, Նորա նշանախօսութիւնը փոքր էին, և այն կենդանիքը միայն խօսում են նշանացի, որոնց, համեմատարար միւսերի հետ, չէ տուած կենդանական ձայնարկութիւն. քանի միւսերի լեզուն այնպէս է կաղնած, որ նոքա կարող էին արտասանել մարդկեղէն բառեր, թէպէտ զոցա խորհուրդը անհասկանալի էր նոցա: Գուրտի կազմուածը, մանաւանդ թէ մարդու փորձութեան տակ, ասես թէ յառաջադէմ էր քան թէ ներքին կարողութիւնը. բայց այս սեղ ահա փակիլեցու դուրը, և մարդանման կապիլի լեզուն ասես թէ դիտաւորութեամբ և բանի կապվել է այն առանձին կողմնական պարկերովը որ բնութիւնը կախել է նորա շնչափողի վերայ:

Ինչու համար արեց այս բանը մարդկային խօսքի պարզեւտու հայրը. ինչու համար չը կամեցաւ նա թողլ տալ այն արարածին, որ ամենայն բանի նմանումէ, նմանել և այս բանին որ մարդկութեան որոշիչ նշանն է, և այսպէս անլուծանելի արգելներով փակեց նորա համար այդ ճանապարհը, Գնացէք խելագարներ իննբը և լսեցէք նոցա զբոլորը. լսեցէք մի քանի հրեշներ ի և ամենին յիմարների խօսուածքը, և ինքներդ կարող էք ասել ձեզ այդ բանի պատճառը. ինչքան ցաւելի էր մեզ նոցա լեզուն և մարդկային խօսքի պղծեալ պարզեւր. և զա ինչքան պիտոյ է պղծիլէր ախտասէր, բիրտ և անասնական կապիլի բերանումը, եթէ նա մարդկային բառեր — տարակոյս չուներ — թէ կիտով շատ և մարդկային բանականութենով կարող լինէր արասանել. զարշելի հիւսուած մարդանման ձայների և կապկային մտածութենների, Աչ, անարժան էր որ աստուածային խօսքը անարդիլ. այդ պատճառով կապիկը եղաւ համբ, արգարև ասելի համբ քան թէ միւս անասունքը, որոնց մէջ ամեն մինը սկսեալ զորովց մինչև խելզը ունի իւր յատուկ ձայնը, բայց մարդս կազմած է բնութենից խօսելու համար. այդ խորհրդով նորա մարմինը զէպ ի վեր է ձգված, և նորա կործքը կամարակապ ամբացած է մի վերհամարած սիւնի վերայ: Մարդիկ որք ընկած էին անասունների մէջ, մտաւցան ոչ թէ իւրեանց խօսելը, այլև մի մասնով կորցրելն խօսելու ընդունակութիւնը. ահա մի յայտնի ուղեցոյց թէ նոցա կոկորդը այբանդակիվել էր, և թէ կանդուն գնացրով միայն հնարաւոր է մարդկային լեզու: Երգարև շատ անասուններ ունին մարդանման լեզուագործիք, բայց և ոչ մինը նոցանից և ոչ նմանողութեան մէջ ընդունակուն չէ այնպէս շարակից հեղեղապէս թղխելու ցանել այն խօսուածքը որ մէք դուրս ենք թափում մեր բարձրանից ազատ մարդկային կործքից, մեր ասելի նեղ և ճարտարապէս փակած բերանից, բայց զորս հակասակ, մարդս կարող է ոչ թէ միայն նմանել անասունների բոլոր հնչողութեններին և ձայներին, այլև մի աստուած ուսուցել և նորան զաղափարները ձևաւորել որպէս հնչողութիւնք, կերպարանները նշանակել ձայներով և թաղաւորել աշխարհի վերայ իւր բերանի խօսքով: Արեմն լեզուիցն է սկսանում մարդուս բանասիրութիւնը և կրթութիւնը, որովհետև նորանով միայն իշխան է նա իւր վերայ և կարող է մտածել և ընտրել, որոնց ընդունակ էր միայն իւր կազմուածքովը: Քնոզ լինին և պիտոյ է որ լինին ասելի բարձր էակներ, որոնց բանականութիւնը զարթնում աչքովը, ըստ որում մի տեսած նշանացոյց ահա բաւական էր նոցա, զաղափարներ կերպաւորելու և որոշելով նորանց պինդ պահպանելու համար, բայց երկրածին մարդը զեռ ևս աշակերտ է ականջին, որով

առ փոքր փոքր ուսանում են հասկանալ լրջօր լեզուն, Առարկաների տարրերու թիւնը պիտոյ է մի ուրիշ բանի՝ ոգնութենով պայծառանայ նորա հոգու մէջ, ըստ որում այն ժամանակը միայն կարող էր նա, գուցէ թէ յառաջ շնչելով և Տևալով, ապա հնչելով և երգելով բացատրել իւր մտածութիւնքը, Այս պատճառով ահա խորհրդաւոր է մեր հայկական անունը որ տալիս ենք գազաններին, այսինքն Անուշու, Մարդը ստանալով խօսելու գործարաններ, ստաշու Աստուածութեան շունչը, բանասիրութեան և մշտնջենասոր կատարելագործութեան սերմը, մի ցոլացութիւն այն աշխարհաստեղծ ձայնին, որով պիտոյ է նա փրակուել երկրին, մի բառով, այն աստուածեղէն ճարտարութիւնը գաղափարներ ծնուցանելու, այն մալբը բոլոր ճարտարութիւնների:

3. ՄԵՐԴՈՒՍ ԱՐԺԱՆԱՍՐՈՒԹԻՒՆԸ:

Ինչ է մարդուս արժանասիրութիւնը, կամ թէ ինչ բան տալիս է նորան այն յարգը որ ունի նա, և ինչով յայտնվում են նորա արժանասիրութիւնը. և ինչ էին այդ արժանասիրութեան պատճառքը նորա մէջ և նորանից դուրս. ահա խնդիրները որ կամենում ենք քննել այս տեղ:

Ինչպիսիւն ինչպիսիւն է բնասիրութիւնը ազնուացնում են մարդս. Այս է նորա արժանասիրութեան առաջին և նախամեծար պատճառը. Սա գերազանց է կացուցանում նորան երկրի բոլոր արարածներէից. զորանով լինում են հրեշտակների ազգակից, զորանով վերաբանում են զէպ ի Աստուածութիւնը, Մարդը չէ բոլորովին միս, չէ ամենեին զգայական, չէ կապած այս հողեղէն երկրի վերայ, ինչպէս զաշտի անասունքը, չէ նոցա պէս անկարող ընդգիմանալ արտաքին բաների սպասորութիւններին, նա կարող է իւր աչքը բոլոր երկրաւոր և երևելի բաներից զէպ ի վեր դարձուցանել. կարող է մտածել, իւր անէր որոշել ամենայն բանից որ նորանից դուրս է, և իւր մտածութիւնը զանազանել այն զօրութեանից որ մտածում են նորա մէջ. նա կարող է անցնալը, ներկան և դաւըքը բաժանել միմեանցից իւր մտասորական նկարագրութիւնների մէջ. նա սրտի մարտի, պայծառապէս ճանաչում են իւր կենդանութիւնը և նորա ներգործութիւնքը. կարող է հետաքննել բաների պատճառքը և խորհուրդները, կշռել նոցա յարակցութիւնքը մինի և միսի մէջ, աչքի տակ առնուլ նոցա կապակցութիւնքը և հետեանքը, և իմացած ու տեսած բաներից, հազար հազար զիպուածների մէջ, անսխալ կըրակացուցանել այն բանը որ զեռ ևս անյայտ ու անտեսանելի էր նորան. Եւ ինչքան բաներ

կարող է պարունակել նորա հանձարը. ինչքան հեռի է նորա բանահանութեան ձգտողութիւնը և քանի՛ քանի՛ անգամ յաջողված էին նորա քաջայանդուզն փորձերը: Այլ կարող էր հաշուել ու վերջացնել այն բազմութիւնը, այն անհամարելի բազմութիւնը պատկերացողների, գառողութենների, եղբակացութենների, ծանօթութենների և նկատողութենների, որ մարդկային հոգու մէջ նորա կարճատև երկրաւոր կեանքի ժամանակը հաւաքում էին, կուտակում էին, համախմբում էին, միմեանց հետ կապակցում էին, զուգահեռում էին և նիւթ էին տալիս մշտնջենաւոր մտածութեան, Ն. ինչ կայ երկնքումը և երկրի վերայ, ծովն և բոլոր անդունդների մէջ, երևելի և աներեւոյթ աշխարհումը, կարելի և իրական բաների սահմանի մէջ, անցածի խաւարի և ապագայի մութն զիշերի մէջ, արդեօր ինչ բան կայ, որ չը դրդէր մարդկային հոգու հարցասիրութիւնը, որ չը գրադեցուցանէր նորա իմացականութեան գորութիւնը, որ նա շաշխատէր ծանաչել, բացայայտել, հասկանալ հիմնապէս, որ նա չը լինէր ջանահար բողբոջակ այն բանի հետ որ գիտէր ահա, Թող նա հազար անգամ սխալվի, թող նա շատ անգամ երեւոյթը համարէ ճշմարտութիւն, թող լինի նա համեմատաբար սակաւապէս և սակաւահնար, թող նա լինի շատ կողմերից ազէս. բայց ո՞վ կարող է ուրանալ այն բաների արժանաւորութիւնը որ նա գիտէր իրաւաբ, որ նա կատարումը իւր կարողութեններովը. ո՞վ կարող է չը խոստովանել այն ևս առաւել մեծ արժանաւորութիւնը որ ունէր նա, անգաղար ջանադիր լինելով իմանալ, ինչ որ զեռ ևս չը գիտէր և կարողանալ ինչ որ զեռ ևս անկարող էր. ո՞վ արդեօր կը համարձակվի ուրանալ այն արժանաւորութիւնը, որ այս իրողութիւնքը տալիս էին նորան և պիտոյ է տան:

Ընդհանուր, բարոյական ազատութիւնը, մարդու մի այլ յատկացուցիչ նշանն է, մի այլ պատճառը նորա արժանաւորութեան, Նթէ արեգակը, լուսինը և աստղերը և բոլոր մարմնեղէն աշխարհը ներգործումն և շարժումն մերենական և իրենանց համար անյայտ օրէնքներով, եթէ անասունը հետևում է իւր կոյր և անընդդիմանալի ձգտողութեններին և ամենևին կախ է արտաքին բաների ապարդիւթեններից, գորա հակառակ մարդս ո՞չ այն օրէնքներին և ո՞չ այս ձգտողութեններին չէ ստորադրեալ ամենևին ծառայապէս, Նա կարող է այդ օրէնքները հազար կերպով սահմանափակել, փոփոխել և վերացնել, թող չը տալով նոցա խափանել իւր շարժողութիւնը և գործերը. գազանական ձգտողութեններին կարող է նա ընդդիմանալ և ամենևին յաղթել նոցա, Նա կարող է խորհրդածել, բաղդատել, բնարել, առաջարկութիւնք յղանալ իւր սրտի մէջ և նորանց գործ

դնել, դարձեալ հրժարովել նոցանից և փոխանակել միւսերի հետ, Նա զանազանումէ ճշմարտութիւնը մտրուութենից, բարին և չարը, երեւոյթը և իրաւացին. թշուղ չէ տալիս, որ ամեն մի անցաւոր շող-շողին, ամեն մի խաբարոյ փայլողութիւն, ամեն մի գրաւիչ կամ ահաջոցիչ կերպարանը հաներ նորան ճանապարհից, Նա չէ կանգնած միայն ներկայ բոլորի վերայ, նայումէ բաների աւելի հետաւոր հետեանքներին և չունի համարձակութիւն կուրսերն հետեւել ոչ իր զգայարանների գառաստանին և ոչ մի մտի ներքին զգացողութեան, Նա ընտրում և գործում այն բանը որ համարում արդար և բարի, ամենից լաւը ամենայն զիպտածի մէջ. նա մերժում և փախչում նորանից ինչ որ անիրաւ, չար և վնասակար էր, և այս ընտրողութեան և ընթացքի մէջ առաջնորդում և իր խնայականութեան վերահաստ-թեանովը և իր բանականութեան լուսովը, Այս կարող են նորա բանականութեան հասկացողութիւնը շատ անգամ խաբել, այս լոյսը կարող է նորան մտրեցուցանել, բայց և սլոյզէս փակած չէր նորա համար վերագործի ճանապարհը, Նա կարող է նկատել իր մտրուութիւնը, ճանաչել իր սխալները, սպաշաւել իր ընտրութեան վերայ, փոխել իր դնացքը և այս ատուր փորձերովը ուսանել աւելի զգուշութեամբ և աշատութեամբ գործել, Այսպէս կառավարում, այսպէս առաջնորդում, այսպէս տեր և իշխան է լինում նա իր վերայ, մի կերպով և արտաքին բաների վերայ, որ չըջապատում են նորան, Այսպէս, չէր նա ոչ մի կէր ստատական անիւ արարչագործութեան դասակարգի մէջ, ոչ ծառայ իր յատուկ զգայարաններին և ոչ խաղախը աշտարին պատճառների և զիպտածների, Այսպէս, ոչինչ չէր գործում նա, եթէ ոչ, այն, որ նա համարում ամենալաւը այս կամ այն անդամի համար, Այս ինչքան նախապատմութիւն պիտոյ է այս բաները տային նորան բոլոր թէ անչունչ և թէ միայն շնչաւոր բայց անբան արարածների մէջ. ինչ յարգ, ինչ արժանաւորութիւն պիտոյ է ստանային նորա ստաջարկութիւնը և գործերը նորանով, որ ստրա էին յատկապէս իր առաջարկութիւնը և իր գործերը, որոնց պատճառներին, խորհուրդներին, յառաջագոյնութեանը և կապակցութեանը զիտակից է նա, որոնց մասին կարող է նա հաշիւ ու համար տալ միւսերին, Ինչքան աւելի յարգ պիտոյ է ունենար մարդուս մի հատ բարեգործութիւնը, քան թէ այն բոլոր սգասկար տղիցութիւնը որ արեգակը, ստանց սրտի մարով ճանաչելու իր անըր և իր ներգործութիւնը, ծաւալում տեղերքի վերայ:

Իւրջ-նախ-նախ, այն շատ բազմորինակ և անձանկեր գործակա-նութիւնը է երրորդ յատկացուցիչ նշանը, երրորդ պատճառը նորա

արժանաւորութեան։ Արդարեւ բոլոր բաները բնութեան մէջ անզա-
գար շարժումն են և ներգործական են, թէ շնչաւորը և թէ անշունչը,
թէ անբան և թէ բանական աշխարհը։ Ամեն բան կոյ և ունի զու-
րութիւն և ամենայն զօրութիւն ներգործուի, ինչ որ կարող էր և
սխալ էր նորան ներգործել։ Ամենին անգործութիւն, անշարժ դան-
դաղիտութիւն, բոլորովին մահ երևումն արտաքսած Աստուծոյ ա-
րարչագործութեան միջից։ Բայց ինչ տեղ կարելի է գտանել այն-
պիսի մեծ և բազմատեսակ գործականութիւն, ինչպէս մարդու մէջ,
և ինչ տեղ կար մի գործականութիւն որի Տէա կապակից էին սրտի
խոստովանութիւն, խորհրդածութիւնը և գիտաւորութիւնը, եթէ ոչ
մարդու մէջ։ Վարդկային Տոբին երբ է զազարում մասնելոյց, և
ինչպէս արագ, ինչպէս անթիւ բազմութենով նորա մտածութիւնը
Տեսնումն միմեանց քամակից։ Երբ է զազարում նա փոփոխութիւնը
յառաջացուցանել իւր մէջ և իւրեանից դուրս, և ինչպէս բազմօրի-
նակ, ինչպէս մեծ էին այս փոփոխութիւնը։ Ինչքան բարի և շար-
քան, ինչքան սգուս Տասարակաց և ինչքան մնաս Տասարակաց ծնա-
նումն շատ անգամ մարդու մի մտքից, մի բառից, մի նայեցումից,
մի երևից, մի շարժողութեանից, և ինչքան Տեսի, ինչքան անչա-
փելի Տեսի ծաւալումը ազդեցութիւնը այն բանի որ գործում մար-
դըս մտանակի և տարածութեան մէջ։ Ինչպէս զանազան, ինչպէս
բազմատեսակ, ինչպէս խառնաշիտ, ինչպէս լայնասահման, ինչ-
պէս արձակահայտաց էին շատ անգամ նորա գործերը և առաջարկու-
թիւնները։ Ինչ քան կար որ լինումը և սորան չէր նա Տապար կեր-
պիտով մասնակից, և սորանով չէր կրթում նա իւր մարմնեղէն և
Տոբեղէն զօրութիւնը։ Եւ ինչ խառններ, ինչ գիտաւորութիւն-
ներ կարող են ամենեին զազարեցուցանել նորան, կամ թէ բոլոր-
ովին շիջուցանել նորա գործականութեան կրակը։ Ար բանը աւելի ա-
տուի էր նորան քան թէ Տանգիտ և մահ, ինչ քան աւելի ցանկա-
լի էր նորա սրտին քան թէ բազմապատիկ կենդանութիւն և բոցար-
ձակ ներգործականութիւն։ Ար թէ այս չէր այն չափը որով նա
չափում էր անձը, միտքը և արտաքին բաների արժանաւորութիւնը,
Եւ մի արարած այդպիսի անխափանելի, անփաստակելի գործականու-
թենով, այդպիսի գործականութենով որի Տէա կապակից էր սրտի
մտքով անձնագրայութիւն և իւր զօրութեանների իմացութիւնը։ այս
արարածը մի թէ չունէր մի ամենամեծ գերազանցութիւն քան թէ
աւելի նուազ կամ թէ առանց սրտի խոստովանութեան գործող էակ-
ները։ Արդևոր այս բանը չէ՛ սխալ տար նորան մի շատ մեծակշիտ
արժանաւորութիւն։

Չորրորդ, յաւելացուցէր սորա վերայ այն կարգով, որով

մարդս միշտ սովոր է յառաջ գնալ և որ քան զօր կոտորել չիտէ,
և դուք կը գտանէք մի նոր պատճառ նորա նախապատիւ արժանա-
ւորութեանը: Գեղեցիկ է արևակալը, գեղեցիկ է լուսինը, գեղեցիկ
են աստղները, գեղեցիկ են անձնականքը և բուսականքը, որ զար-
դարումն մեր երկրի երեսը, ամեն մի՛նը կատարեալ և անուղղիկ է
իւր տեսակի մէջ. բայց դոքա մնումն որպէս կան, նոցա կերպարանքը,
նոցա գեղեցկութիւնը, նոցա շարժուածքը, նոցա գործականութիւնը
կայ և մնումէ միշտ մի և նոյն. դոքա են ամենին, ինչ որ դոցա
պիտոյ էր և կարելի էր լինել, Յարդը չէ պիտակս. երբէք չէ նա
բոլորովին այնպէս, ինչպէս արժան և կարելի էր նորան լինել. Նա
չէ սահմանափակում ոչինչ տարածութեան, և ոչինչ ժամանակի
տակ, բացարձակապէս և յաւիտեան: Մի կատարելութեան աստճան
ասնումէ նորան զէպ ի միւսը, և ոչինչ ժամանակ չէր նորա կայքը
այնքան բարձր, որ նա չը կարողանար ևս աւելի բարձրանալ. Նորա
ընդունակութիւնքը բացումն, նորա զօրութիւնքը ստատելանումն
նոյն չափով, ինչ չափով նա գործ է գնում և կրթումէ նորանց,
և նորա տեսութեան և գործականութեան շրջանակը այնքան ևս լայ-
նանումէ, ինչքան նորա ընդունակութիւնքը բացումն և նորա զօ-
րութիւնքը բացմանումն: Երբ ուսած էր մարդս այնքան շատ, որ
չէր կարող աւելի ևս ուսանել. արդեօք երբ ճանաչող էր և գիտէր
նա այնքան, որ կարող չէր ևս ստատել ճանաչել և գիտել, Երբ
արդեօք այնպէս յառաջադէմ էր իմաստութեան և առաքինութեան
մէջ, որ չէր կարող աւելի ևս յառաջադէմ լինել նոցա մէջ, Երբ
արդեօք այնքան զօրաւոր և օգտակար էր մարդու ներգործութիւնը իւր
ընկերին, որ չէր հնար ևս ստատել զօրաւոր և օգտակար կացուցա-
նել նորան. և երբ, ասացէք դուք ինձ, վերջանումէին նորա մէջ այն
ձգտողութիւնը, ջանքը և ջանադրութիւնը զէպ ի աւելի վեր, Ով
կարող է այս բոլոր բաների մէջ չափ և սահման գնել մարդկային
հոգուն, այնպիսի չափ և սահման, որոնցից չը համարձակվեր նա
յուսալ թէ, նայելով իւր ընդունակութեանն իրեն և զօրութեանն իրեն
և իւր արարչի կամքին, չէր դուրս գալու մի օր:

Մի թէ չէր նա նոյնպէս անմահ: Այո՛ մարդը — և այս է
նորա արժանաւորութեան հինգերորդ պատճառը — մարդը սահմանած
է անմահութեան համար, Նա պիտոյ է յաւիտեան տեւ, յաւիտեա-
կան կեանք ունենայ, մշտնջենաւոր լինի որպէս բանաւոր, ազատ, ա-
մենագործական, զէպ ի կատարելութիւն ձգտողական էակ: Անմահու-
թիւն, յաւիտեական կեանք. ինչ նախապատմութիւն, ինչ արժա-
նաւորութիւն էին սոքա, Բնութեան համբերէն գեղեցկութիւնքը կա-
րող էին թառամել, ցամաքել և շքանալ. արեգակները և աստղ-

ները կարող են կորուսանել իւրեանց փայլողութիւնը, ամենաճոխ լուսի աղբիւրները նուազել, բոլոր աշխարհը խորասոյղ լինել խաւար գիշերի մէջ, բայց մորգս աւելի երկարակեաց է, գտանում իւր մէջ, հոգիների աշխարհի մէջ, գտանում Աստուծոյ, բոլոր հոգիների Լօր մէջ շատ և շատ աւելի, քան թէ կարող էր նորան տալ բոլոր երևելի աշխարհս։ Աւր են ապա այն սահմանքը որ գրած էին նորան, այն մահկանացութիւն, որ պիտոյ է յախտեան կեայ և յախտեան ներգործէ, Ինչ հրաշափառ լոյս, Ինչ շափով և կշտով զորութիւններ, Ինչ աստիճան երանութեան կարող էին անհնարին կացուցանել նորա համար մի աւելի հրաշափառ լուսի մէջ ձեռնել, ևս աւելի մեծ կարողութիւնք ստանալ, ևս աւելի մարութ երանութիւնք վայելել, Աչ. այս սեղ չէ կարելի մտածել ոչինչ զազարատութիւն, մի անփոփոխ և անշարժ սահման կատարելութեան, Աչ. յախտեան կան սեղութիւն և յառաջադիմութիւն, յախտեան կան աճել և զորանալ ամենայն բանով, որ զեղեցիկ, բարի և ցանկալի էր, յախտեան կան մտաշարժութիւն զեղ ի ամենալերին, միշտ անհասանելի կատարելութիւնք։ Այս է և հա մարդու կենդանութեան խորհուրդը, այս է նորա առաւել պատուական վիճակը, ամենամեծ, ամենալերին արժանաւորութիւնք մի ուրաքած էակի։

Այլն մարգս Աստուծոյ պատկեր է. սորանով բարձրանում նորա արժանաւորութիւնը և ստանում իւր կատարեալ լուսափայլութիւնը։ Մարգս ծագում Աստուծուց, ազգակից է նորան և ունի իւր վերայ տեսանելի հետքեր, թէ բղիած էր Աստուծուց և հաղորդակից էր նորա հետ, Նորա իմացականութիւնը է մի ճառագայթ աստուածեղէն իմացականութեան, նորա զորութիւնք մի բղիւսած աստուածային զորութենից, նորա գործականութիւնք մի բան, որ նման էր անվաստակելի, աստուածեղէն գործականութեանը. այն կարողութիւնք որով նա ձեռնհաս է օրէ օր աւելի կատարեալ լինել, կարողութիւն օրէ օր աւելի մտենալ Աստուածութեանը, նորա անմահութիւնք է Մշտնօրէնաորի անկրօնական սեղութեան պատկեր, և ճանապարհ յախտեան կան հաղորդակցութեան նորա հետ. քանի անգամ որ մարգս մտածում ճշմարտութիւնք, քանի անգամ որ նա կամենում և գործում բարին, քանի անգամ որ նա զգում կարգ և զեղեցիկութիւն, քանի անգամ որ նա սէր և ուրախութիւն և երանութիւն է սփռում իւր շորս կողմը, այնքան անգամ ևս մտածում նա, կամենում, ազգում, զգում և գործում աստուածամեծան կերպով, այնքան անգամ ևս գործում իւր Արարչի և Լօր գործը, այնքան յաճախ ևս յառաջ է տանում ամենաբարձրեալ էակի զխաւարութիւնքը, այնքան յաճախ վայելում նա ասեա թէ մի յստակ, աստուածային երանու-

Թիւն. և ինչքան շատ, ինչքան յաճախ գործուեմք նա պղպեւ, այնչափ ևս մեծ է նորա աստուածանմանութիւնը, այնչափ ևս պայծառապէս փայլումք նորա վերայ. Աստուածութեան պատկերը, այնչափ ևս դժուար էր ուրանալ նորա բարձր սոհմականութիւնը և նորա արժանաւորութիւնը: Այդպէս, Աստուած որպէս թէ սեռանելի կերպով խօսուեալ և գործուեալ նորա մէջ և նորա միջնորդելովք, նորա բերանով վկայութիւն է առին ճշմարտութեանը, նորա բերանով ուսուցանուեալ և յայտնուեալ իւր անձը մարդերին. նորա ձեռքով պաշարպան է առաքինութեան բանին, նորա բերանով միջմարտուեալ վշտացածների սիրտը, նորա ձեռքով առողջարար սպեղանի է դնում արքայութեան վերաւոր սրտի վերայ, նորա ձեռքով Հասուցանուեալ թրշուսաներին օգնութիւն և նպաստ, սովածներին հաց, տխրներին զոբութիւն. նորա ձեռքով գեղեցկացնուեալ աշխարհը և յառաջացնուեալ նորա մէջ աւելի կենդանութիւն և ուրախութիւն: Եւ այսպիսի գործի լինել Աստուծոյ ձեռքումք, այսպիսի նմանութիւն ունենալ նորա հետ, այն ամենակատար էակի հետ, իւր անձը այսպէս մտանցնել նորան և որպէս թէ նորա փոխանորդը լինել երկրիս վերայ, այս բանը մի՞ թէ չէ պիտոյ տար մարդուս մի մեծ, մի ամենամեծ արժանաւորութիւն:

II Երջայպէս քննեցէք մարդս, միտ դնելով նորա արտաքին կերպարանքին, և յարակցութեանը երկրի հետ. քննեցէք այն աստիճանը որ նա ունի երկրի վերայ և թէ ինչ էր նա և ինչպէս ներգործուեալք, համեմատելով երկրի բոլոր միտ ընկալիչներին հետ, այն բաների հետ որ չըջարատուեմն նորան: Եւ այս մասին չէիք դուք ուրանալու նորա արժանաւորութիւնը, Տեսէք թէ ինչպէս նա բոլոր աստիճան արարածների մէջ որ չըջարատուեմն նորան, կանգնած է այն տեղ, քաջ զգալով իւր անձնաւորութիւնը, ամենայն բանով գերազանց նոցանից և իշխան նոցա վերայ. թէ ինչպէս ամենայն բան քարոզուեալ նորան որպէս այս երկրի և նորա բնակիչների թաղաւոր, որպէս իւր Արարչի տեղակալ նորա վերայ, որպէս քահանայ բնութեան, Նայեցէք, թէ ինչպէս հեռահայեաց տեսութեամբ նա իւր չըջակոյց բաները աչքի տակ է ձգում, բաժանուեալ, կարգադրուեալ, կապակցուեալ, պարունակուեալ. թէ ինչպէս երբեմն վերուդրուեալ իւր հիացած հայհաջքը երկրից դէպ ի երկինք, և ապա երկինքից դէպ ի երկիր ցած է նայում զմայրիցան հօգով, և գորովագութ օրով մտանում ամենայն բանի, ինչ որ նորա շորս կողմումք ապրուեալ և գործունեայ է. թէ ինչպէս նորա զթառառ սիրտը բացում և այն ցախի և ուրախութեան անհամար հեղեղներին որ ամենայն կողմից թափում են նորա վերայ, և նա խորատոյզ է լինում սիրոյ և մեծարանքի ամենաբարձր

զգացողութենների մէջ, Ինչպէս գեղեցիկ, ինչպէս վսեմական է նորա կերպարանքը, ինչպէս խորհրդաւոր նորա երեսի ամեն մի գծագրութիւնը, նորա մարմնի ամեն մի գրութիւնը, ամեն մի շարժողութիւնը, ինչպէս կենդանախօս է նորա աչքը, ինչպէս գորս մէջ պատկերանումը նորա բոլոր հոգին, և անընդդիմանալի բռնութենով պահանջումը երբեմն պատկառանք, երբեմն ստորադրութիւն և խնայողութիւն, երբեմն սէր, այժմ ազգումը քաջութիւն և արիասրտութիւն, ապա, ուրախութիւն և խաղաղութիւն է սփռում իւր շորս կողմը, ինչպէս նա մի լոկ հայեցումով զազարեցնումը շարի զենքերը, ոչնչացնումը անիրաւութեան զարանդործութիւնքը, փարստումը վիշաբ տառապեալ մարդու սրտից, և այն տեղ, ուր թագաւորումին խուար և տրտմութիւն, գոյացնումը լշյս և երգնային ուրախութիւն, Ո՛վ ապա կարող էր անգիտանալ մարդու արմանաւորութիւնը, և ո՛վ կարող էր ուրանալ թէ ամենայն բան երկրի վերայ աննշակից է մարդուս, թէ ամենայն բան նորանով կենդանութիւն է ստանում, գեղեցկանումը, կապակցումը և լինումը հնար մարդկային երջանկութեան և Աստուծոյ փառաբանութեան, Ինչքան բայնտարած է նորա իշխանութիւնը և ներգործութիւնը թէ միջապէս և թէ անմիջապէս, ինչպէս հրամայումը նա նոյն իսկ տարերքին և բնութեան ծածուկ զորութեններին, և ինչ փոփոխութիւնք, ինչ յեղաշրջութիւնք չէ յառաջացնում նա իւրեանից գուրս, ինչ անապատ նորա աշխատիրութենայք չէ փոփոխում գրախտ, և ինչ գրախտ չէր մոյջելանում ևս առաւել, և թէ նա բնական այն տեղ և շինումը, Երեսակայեցէք ձեզ, որպէս թէ երկիրս զատարկ էր մարդերից, և չը կային նորա վերայ բանաւոր արարածներ, ինչ պիտոյ է տեսանէիք գուք այն տեղ, այն գետ ևս կը տեսանէիք գուք մեծ գեղեցկութիւնք շատ, բայց փոյլիցն քան թէ հեղ, ահարկու քան թէ զմայլեցուցիչ գեղեցկութիւնք, այն գետ ևս շատ կենդանութիւն, բայց կենդանութիւն առանց սրտի վկայութեան, առանց մտածութեան, առանց յատկապէս մայելութեան, առանց յարարիրութեան զեպի Արարիչը, Ո՛չ, բնութիւնը զեղեցիկ է, հիացուցիչ գեղեցիկ է, բայց մարդս ևս առաւել զեղեցկացնումը նորան, ժողովումը բոլոր ջոկ ջոկ ցիր ու ցան գեղեցկութիւնքը որ չըջապատուան նորան, տեսնումը, զգումը, մայելումը և ուրախանումը նոցա վերայ, Բնութիւնը պաշտւետ է, անապատելի պաշտւետ է, բայց մարդս յառաջադիմութիւն է տալիս այդ պաշտւետութեանը, կառավարումը նորան, տալիս է նորան առաւել հասարակագոյտ ուղղութիւն, Բնութիւնը լի է կենդանութեամբ, բայց մարդս բաղմապատկումը, բարձրացնումը, աշնուացնումը այդ կենդանութիւնը և երանելի է լինում մայելելով նորան:

Այսպէս ահա մարդը այս երկրաւոր արարածներէ տէրն է, բնութեան քահանայադարձն է, որի սրտից ու բերանից բարձրանում է դէպ ի երկինք բոլոր անշունչ և շնչաւոր արարածներէ գոհութիւնը և փառաբանութիւնը. այն միջնակէտը, որի մէջ նորա բոլոր շրջակայքը մաւորութիւնն և բոլորեքեան հասանումն իւրեանց նպատակին, կամենումէք զուր կշտել նորա զորաւոր և օգտակար աղեցում թիւեր ամենայն բանի վերայ, սպա համեմատեցէք միայն մարդարնակ աշխարհները անմարդարնակ աշխարհներէ հետ. համեմատեցէք Աւրուպայի և Ասիայի զուարճալի դաշտերը Ամերիկայի անապատներէ հետ. այս տեղ հալուածաւ է լինում բնութիւնը, անհոգ և անխնամ թողած. այն տեղ առատութիւն և ուրախութիւն ծիծաղումն ծանապարհորդի երևոյն. Այս տեղ ծածկած է երկիրը անանջանելի անասուներով, անչափելի ճախիններով. նորա պտղաբերութիւնը, ոչ ով նորան առաջնորդ չը լինելով և օգուտ չը քաղելով նորանից, ինքը իւր անձը խեղդում է ապականումէ. և երկրի երեսը խաւարով պատումն թուռաւոր զոլորչիւնը, Յորտ հակառակ, միւս տեղ արեգակը անխափան ծաւալում է իւր յոյր և ջերմութիւնը, ջրերը ունին գնացք ու անցք, և վտառոտող շողիքը փարատութիւնն. հողմը մաքրում օդը և մոլաստոր բաժանում է օգտակար բանջարներէց, Ինչ տեղ չէ մարդս և չէ ներդարձում, այն տեղ անշէն անապատ էր, այն տեղ թագաւորումն ցուրտ, անմթօթմար լուսութիւն և մահ, Ինչ տեղ երևում է մարդս, ինչ տեղ ապրում և ներդարձումն նա, այն տեղ ևս ծանապարհ է բացում իւր համար, այն տեղ երկիրը զարգարում է ծաղիկներով և պտուղներով, այն տեղ օդը տանում է իւր հետ առողջութիւն, զորութիւն և անուշահոտութիւնք, այն տեղ պայծառանում է և կենդանանում է ամենայն բան, այն տեղ լսելի էին հօտերի աղաղակը և մարդերի ուրախութեան ձայնը. Եւ ինչքան աւելի գեղեցիկ և փառաւոր էր բնութիւնը, ինչքան ճոխ, ինչքան օգտաբեր է լինում նա մարդուս մշակող և գործադիր ձեռքի տակ, Այնուհետև, ամենայն բան լինում է հայելի Աստուածութեան, զպրոց իմաստութեան, աղբիւր վայելչութեան, հնար վարժութեան և կատարելագործութեան, նախաձաշակ աւելի մաքուր ուրախութեանների և աւելի վերին երանութեան, Այնուհետև, ինչպէս մտ կապակից էին երեկիքը Անբերութի հետ, ներկան սպաղաղի հետ, մարմնեղէն աշխարհը հոգեղէնի հետ, արարածը Արարչի հետ. Եւ մարդը լինելով մի այսպիսի խորհրդաւոր եակ և պայքան բաների պատճառ, մարդը ունենալով այդպիսի հանձար, այդպիսի ապտուութիւն, այդպիսի գործականութիւն, կարողանալով իւր անձը օր քան զոր կատարելագործել, մարդը որ անմահ է, աստուածանման է, և երկրի վերայ ունի

այդ աստիճանը և այդպիսի յարարերու թիւնք զեպ ի բոլոր միւս արարածքք. մի թե զա չէ պիտոյ ունենար մի մեծ արժանաւորութիւն, մի նախապատիւ յարդ Աստուծոյ և բոլոր խոհական եակներք առաջև :

Այս ուրեմն ճանաչիր և հասկացիր քո արժանաւորութիւնք, քո զօրութիւնքք, քո պատուականութիւնքք, ով մարդ, ճանաչիր և հասկացիր ուրախ և շնորհակալ սրտով : Այդ բաները չեն ցնորականութիւն, չեն ամբարտաւանութիւն. զոքա անձնաճանաչութիւն են, որ հիմնադրուեալ ճշմարտութեան վերայ, և զու ճանաչելով քո արժանաւորութիւնը չէիր կարող ամբարտաւան լինել, քանի որ զու կը պահպանէիր նորան, քանի որ զու կարող էիր քո աչքը և հոգին վերադղել զեպ ի նա որ տուել և քեզ այդ զօրութիւնքք, այդ պատուականութիւնքք, այդ արժանաւորութիւնք և զորս ճանաչողութիւնը որ և ամենայն բոլոր նորայ տալիս է քեզ, և նորան փոտարանել պարտական ևս զու ամենայն զբութեանով որ կայ քո մէջ : Աչ. ճանաչիր և հասկացիր քո բանական բնութեան բոլոր յարգը, քո նախապատիւ դրութիւնք, ընդունակութիւնք և կարողութիւնքք : Այս թե ոչ. զու չես կարող արժանապէս զօրձ դնել նորանց, չես կարող լինել, կատարել, մոյլել, ինչ որ զու, քո բնութեանը և կոչմանը համեմատ, պիտոյ է լինէիր, կատարելի և մոյլելիք. ապա թե ոչ. զու չես կարող պարտաւճար գտանովի զեպ ի քո Աբարիչը, և ոչ քո բնկերակից արարածներին ցուցանել այն շնորհը որ պարտու պատշաճ է քեզ : Աչ. պիտոյ է որ զու ինքզ քո համար, որ ամենայն մարդ քո աչքումը լինէր մեծարանքի արժանաւոր, ամեն միը պիտոյ է լինէր քո համար որպէս մեծակշիւ, հարկաւոր անգամ բաների շղթայակապի մէջ, ամեն միը որպէս մի շատ պիտանի, անհրաժարելի կարևոր եակ որ ամենայն բանի վերայ ներգործութիւն ունէր, որի ազդեցութիւնը, թող երևէր նորս ասպարեզը շատ և շատ նեղ, այնու ամենայնիւ անպատմելի մեծ էր և պիտոյ է ներգործէր յախտեան :

3. ԵՅՁՅԻ ՊԱՐԳԵՆԵՏԵՐԹԻՒՆԸ :

Մարդկութեան զերազանցութիւնը է խոսելու կարողութիւնը. այս բանը ոչինչ տարակուսի տակ չէ, Թեպէտև անասուններին մեր շրջակայքումը պակաս չէ մի կարողութիւն յայանելու միմեանց խրեանց զգացողութիւնքք, և այս հաղորդակցութեան հնարը նոցա մէջ նոյնպէս ձայներ կին. բայց Խօշէլ, հասկանալի խորհրդաւոր բառեր կազմել, նոցանից ջոկ ջոկ յատկացած պատկերազոյցներ նշանակել, այս բանը Աստուծոյ կենդանի արարածներին անհամար բազմութեան մէջ երկրիս վերայ կարող է միայն մարդը, նորան միայն պարզեած

է քաղցր և անոյշ ձայն, բաշտայտ արտաբերութիւն, խելացի և կապակից խօսուածք. նա միայն կարող է ամենայն բան, այն ամենայն տեսակ զարնուածներով կենդանի և աղչու կերպով ասել, և այդպէս իւր սրտի խորհրդին հաղորդել միշտ: Աւրինն ինչպէս մեծակշիռ բան է խօսելու կարողութիւնը, տեսնելով այս կողմից միայն: Մարդկու թեան արժանաւորութիւնը լուսախայլումէ քո ճակատի վերայ, երբ որ դու բացումես շրթուներդ խօսելու համար. այն ժամանակը երեսուս զու մի էակ, որ կենդանի արարչագործութեան մէջ երկրիս վերայ ունի ամենակատարեալ մարմին. այն ժամանակը յայտնումես զու քո անձը որպէս մի հագի որ կարող էր բանականադէս մտածել և դատել, աշտարար կամենալ և գործել, այն ժամանակը ունիս զու իշխանութիւն բանալ խորհուրդներ, ծանուցանել զգացողութիւնք, բացայայտել զխաւորութիւնք, որ նշանաւոր են կացուցանում քեզ որպէս իմաստուն, ազնիւ, աստուածաման արարած. ամենայն բան որ քեզ տալիս է առաւելութիւն անասունի վերայ, ինչ բարի և մեծ բան, ինչ սիրելու արժանի և զեղեցիկ բան աւելիս զու քո մէջ, լինումէ զգալի, զդետաւորումէ ձայներով, շարժումէ նոցա սիրող որ լսումն քեզ. յառաջանում ամենայն տեսակ ներգործութիւնք, երբ որ դու խօսումես մտածելով և կշռելով. ահա թէ ինչպէս անգին յարգ ունի խօսելու կարողութիւնը որպէս մարդկութեան գերազանցութիւն. Եւ ինչպէս մեծակշիռ բան է դու, եթէ քննենք զորան որպէս ընկերութեան կապ. ընկերութեան ծոցի մէջ միայն, ամուր կապակցութեամբ մեր նմանների հետ միայն կարող ենք մեր տնել և աճել, Եթէ պետք էր, որ կենդանութեան կայծը չը հանգչէր իւրից մեր ծնելուց յետոյ, եթէ պետք էր, որ մեր տկար մարմինը զորանար և կատարելագործվէր, եթէ արժան էր որ մեր ամենայն բան յառաջ տանկինք, ամենայն բան վայելէինք, որի համար ստեղծած ենք, ապա կարօտ էինք մեր ճողայրակիչներին, ապա պիտոյ է, որ նոցա բազուկը պաշտպանէ մեզ, նոցա բարնայականութիւնը իմամատար լինի մեզ, նոցա իմաստութիւնը ատենորդէ մեզ. ապա պիտոյ է, որ նոցա օրինակը վտակ մեր սիրտը զեպ ի բարին, և նոցա կենակցութիւնը մեր հետ ամենայն տեսակ օգուտ և ուրախութիւն հասուցանէ. ապա պիտոյ է մեզ լինել անգամք մի ընկերութեան, որի մէջ ամենայն բան ճշգրտապէս կապակից է միւսի հետ. յայց անկարելի կը լինէր այս ընկերութիւնը, այս զեղեցիկ, օգտակար, ամենին հարկաւոր ընկերութիւնը, եթէ խօսելու կարողութիւնը չը հիմնարկէր զորան: Արովհետև մեր հասկանումներք միմեանց, որովհետև մեր կարող են պարզ ձայներով բացայայտել ամենայն բան որ կար մեր սրտումը, որովհետև մեր հնարաւոր են միմեանց հետ խոր-

Հրդակից լինել, միմեանց խոստումն առնել և ամենայն տեսակ դաշն և պայման կապել, որովհետև խաբրի զօրութիւնը կարող է պատշաճաբար ուղղութիւն տալ մեր գործականութեանը, մեր կարոտութեաների լցուցանելը հեշտացնել, և մեր վայելչութեանը աւելի բազմօրինակութիւն և քաղցրութիւն տալ, Այս պատճառով ահա միաբարձութեանը և բազմապիսեանց գերդաստաներ, ընկերութիւններ և լուսաբարձութեանը. այս պատճառով ահա կապակցութիւնը են հաստատում ամենայն ազգերի և աշխարհների մէջ, այս պատճառով ահա մի ամբողջ մարմին է դառնում մարդկութիւնը, որի մէջ ամենեքեան զգումն իրեանց անձը որպէս միմեանց աղցակից, միմը մօտ է քարշում միսին և որոնում միակցութիւն, Այս կապը ահա, որ կապում ամեն մի ջոկ մարմին իւր ընկերի հետ, որ շատ օտար մարդեր մտնելու միմեանց, որ ազգեր միաբարձեւ ազգերի հետ, և վերջապէս բոլոր էրկիրը պատում ամենայն կողմից — այս կապը ահա է խօսիչ զբարեկեցութեանը, և այն կարողութիւնը, որից ծնանում իտքը, խոսելու կարողութիւնը, և այս մասին անկշտի խորհրդաբար բան է, Բայց դա, այդ կարողութիւնը պիտի ճանաչուի է նոյնպէս, և դորանով լինումը դորա յարգը յատկապէս անչափելի, քանակ և աշխատել, որ մեր բանականութիւնը զարթնու և ճանաչել ճշմարտութիւնը, որ մեր սիրտը ազնուանայ և ուսանի ինքնիշխան և ազատ կերպով գործել և հնապանգել իւր պարտականութեանը, որ մեր բնութեան ամեն մի զօրութիւնը աճէր, զբարեւար և յառաջագեւ լինէր, որ մեր Երարչի պատկերը օրէ օր աւելի յայանի երկեր մեր վերայ և մեր անձը պայծառանալով հասանէր աստուածանմանութեան, ահա մեր երկրաբար կեանքի վախճանակա՞ն նպատակը, ահա մեր կատարելագործութեան պատկեր, Բայց լեզուն է, որով այս բոլոր իրողութիւնը պիտոյ է գլուխ գային, Մայրական սիրոյ քաղցր հնչողութիւնը զարթուցանումն մեր հոգին իւր առաջին անգիտութեանից, և որպէս թէ արձակումն հոգին իւր կապիցից, և քուիչ էին դրա, այնինքն խօսիչ զօրութիւնը և ճոխութիւնը, զմայլեցուցիչ և թովիչ աղցեցութիւնը, որով մեզ ամենայն բան շնորհչումն, որին կարոտ էինք մեր, Բառերով տալիս են մեզ առաջին ուսումը, բառերով անուցանումն մեր սիրտը, բառերով կրթումն մեր զատողականութիւնը, բառերով բացումն մեզ ճշմարտութեան սրբարանը, բառերով զարթուցանումն և սրացուցանումն մեր զգայութիւնը, բառերով ծանուցանումն մեզ բարեկամութիւնը իւր խորհրդատուութիւնը, պատմարանութիւնը աշխարհի փորձերը, տեղութիւնը իւր օրէնքները, կրօնը իւր վարդապետութիւնը և իւր պահանջելիքը, իւր քաջալերութիւնը և իւր մոխմարութիւնը, Ինչքան աւելի ուշադիր էինք

այն բանին որ բար խօսումն մեր հետ, ինչքան աւելի յօժար լինենք լսելնք ամենայն բանի որ խօսքը բարի և արդար է խոստովանում, այնքան ևս կը թեթևանայինք և ապահով կը լինելնք, ինչպէս հարկըն էր. Աւ բայ ի սորանից, մի թէ լեզուն չէր նոյնպէս բոլոր գիտութեաններէ վարժապետը, ամենայն տեղեկութեաններէ պահպանողը, բոլոր գիտելի պահարանը, բոլոր մեծակէլու յաջողութեաններէ քարոզիչը, բոլոր լու բաների ընդարձակողը երկրիս վերայ. Մի թէ նա չէր, որ գիտութեան և իմաստութեան հեղեղը հազար հազար ճանապարհներով մի ազգից տանում զեւր ի միս ազգ և առ փոքր փոքր տարածում ամենայն աշխարհներում և կողմերում, Մի թէ չէ ամենին ճշմարիտ, թէ խօսելու կարողութիւնը է մի մեծ հնար ամենայն մարդկեղէն կրթութեան, մի հնար վերադնելու մեր անըր զեւր ի Աստուած և դաստիարակելու մեզ մեր երկնաքաղաքացի կոչման համար.

Այս ով որ մասնակից էր այս անգին պարզեմին, ով որ այս զբաւոր, ընդհանրապէս պիտանի գործին ունէր իւր իշխանութեան ասկ, մի թէ չէ լինելու պատասխանատու նորա գործադրութեան մասին, մի թէ չէ պարտական հաշի ու համար տալ թէ ինչպէս էր գործածել նորան, Բայց այս պատասխանատուութիւնը որ չէ կարելի բաժանել խօսելու կարողութեանից, երկրորդ խնդիրն է, որին պիտոյ է ուշադիր լինինք մտածելով այս կարողութեան վերայ. Այսինքն, հեշտ բան էր ջրոյ տալ այս տեղ, թէ ամենեքեան, ինչպէս որ գործ էին գրել խօսելու կարողութիւնը, պատասխանատու էին Աստուծոյ և մարդու տաղե, և շատ ճշգրտապէս պատասխանատու.

Այնանի ամենայն մարդու որ կարող է բաներով յայտնել իւր միտքը, որ չը գիտէ փորձով այն վատարազգի թշուառութիւնը, որին պակաս էր լեզուն, Բայց մայ նոյնպէս ամենայն մարդու, որ այս բաղդատորութեան գինը չէ ճանաչում, կամ թէ այն գործ է անում նորան զեւր ի շարք. պատճառ, ամենեքեան, ամենեքեան առանց բացառութեան պատասխանատու են այդ մասին. Մարդկութեան յատկացուցիչ զերազանցութիւնը է խօսելու հնարաւորութիւնը. այդ անհակառակելի է. Արեւմե կղեր դու ով որ լինէիր, բայց, եթէ դու չը բնութեան արժանաւորութիւնը անպատճառաւ կամ թէ պահպանուան չը խօսուածքի մեջ, եթէ դու չը խօսուածքովը ջուշանումս քեզ մի ջած, գաղանական, անմիտ արարած, կամ թէ մի բանական, ազնիւ, երկերի հետ ազգակից եակ. այս երկու ջակ բաները գծուար թէ մի և նոյն էին չը համար. այս մասին անպատճառ պիտոյ է պարտական մնալ դու, կամ թէ արժանի դասնիս: Մարդկային ընկերութեան կապը է խօսելու կարողութիւնը. և այս վճած բան է, բոլոր կարգադրութեաններէ, զանազանութեաններէ պահպանութիւնը, բո-

լոր քաղաքական կապակցութիւնների տեղականութիւնը հաստատած է խօսքի արդար գործադրութեան վերայ. մի՛ թէ թոյլտուութիւն կայ ծոյիլ այս արդարութեանց, մի՛ թէ ամէն մարդ չէր պատասխանատու, արդեօր իր խօսուածներովը խանգարումը թէ պահպանումը, խախտումը թէ ամբայնումը հասարակաց միաւորութիւնը. Այլէ, մի մեծ հնար ամենայն կրթութեան է խօսելու կարողութիւնը. և այս բանը ոչինչ տարակուսի տակ չէ. բայց մի՛ թէ ամենայն մարդ, ով որ և լինի, պարտական չէր որոնել կրթութիւն, մի՛ թէ արժան չէր որ ամենայն մարդ յաջողութիւն տայ կրթութեանը և իր բոլոր գործութիւնները գործ դնէ այս գլխաւոր մարդկեղէն նպատակի համար. Ուրեմն, ինչքան պարտաւոր է մնում այն թշուառականը որ, թէպէտ կարող էր իւր մտածութիւններին մասնակից առնել միտերը և զարմեակ ուսանել նոցանից և ուղղել իւր անձը, մնում մի սուր, արատաւոր մարդ, այն թշուառականը որ չէր գործակից գտնույ իւր շրջակայ մարդերի լուսաւորութեան և կրթութեան մասին. Թող ամենայն մարդ լսէ այս բանը, թող ամենայն մարդ որոճայ սորան լւր սրտի մէջ, ամենայն մարդ, որի շքութիւնը բաց էին. ներգործել մարդկութեան ամենարածը բաների վերայ ունի իրաւունք ամենայն մարդ, ըստ որում պարզեւած էր նորան խօսքի զարմանալի կարողութիւնը. Անկարելի է անտես առնել այն խնդիրը, թէ ինչպէս է ներգործում նա. արդեօր իւր ներգործելովը յաջողութիւն է սախս թէ խախտարար է աստուածադիր խորհուրդներին, արդեօր նա լինումը գորանով բարերար, թէ թշնամի իւր սեռին.

Ընդարև այդպէս է. Աստուծոյ և մարդու առաջև պիտոյ է մեզ պատասխանատու լինել թէ ինչպէս գործ էինք դնում խօսելու կարողութիւնը. Մտածիր միայն, թէ ինչ էր Աստուծոյ գործը և կամբը, երբ որ նա պարզեւեց քեզ խօսելու կարողութիւն. Այդ կարողութեանովը գերազանց է կացուցել քեզ և տէր է շինել բոլոր անասունների վերայ. Չէ. նա չէ կարող անպատիժ թողուլ քեզ, եթէ դու մի այդպիսի մեծական գերազանցութիւն գործ կ'առնես թեթեւատութեանով, կամ թէ կամու և զխտութեամբ դեպ ի չարը գործ կը դնես. Ամենին կամեցող էր Աստուած, որ թագաւորէ երկրիս վերայ բարեկամական կապակցութիւն, որ միարանութիւն և տէր միաւորէ բոլոր մարդիկը. այս պատճառով ահա տուեց նա նոցա և քեզ այդ գեղեցիկ պարգևը, խօսքը. Ուրեմն նա կը պատժէ ու կը պատուհասէ քեզ, եթէ դու ջանագիր ես նոցա սուրբ զխտաւորութիւնը ունայնացնել, եթէ դու խախտումես մարդերի միաւորութիւնը և նոցա ասպահով հաղորդակցութիւնները, եթէ դու քո լիզուն չարաշար գործ դնելով զարթուցանումես կասկածանք և սկսանումես թնամութիւն.

Աստուած սահմանել է լիզուն, որ լինի կրթութեան ճանապարհ, որ գործնով տարածվին իմաստութիւն և առաքինութիւն, երկիրազօնութիւն և սէր զէպ ի Երարիւն: Ահա սորա անաշտ զատաստանի առաջն պիտոյ է լինիս պատասխանատու, եթէ զու քո խօսքովը ոչ թէ խրատուսն զէպ ի բարին, այլ մոլորեցնուսն զէպ ի շարր, ոչ թէ ուղղուսն, այլ զայլմակղեցուցիչ ևս լինում, ոչ թէ բարին ևս յառաջ տանում, այլ շարր: Եւ ինչ պէտք էր ասել ինձ այն մարդերի մասին, որոնց հետ հաղորդակցումէ քեզ խօսելու կարողութիւնը: Որովհետեւ զու կարող ևս խօսել, այս պատճառով կարող ևս և ներգործել ամենայն բանի վերայ որ հարկաւոր էր նոցա. այսինքն նոցա ճանաչողութեան, նոցա բարբուխարքի, նոցա միաւորութեան, նոցա բաղաւորութեան վերայ, շունեին նոքա իրաւունք համար պահանջել քեզանից այս գործակատարութեան աղագու. շունեին նոքա իրաւունք արհամարհել, պատժել քեզ, եթէ զու անարդարութեանով և ստախօսութեանով թիրուսն և ամենեին անհաստատ ևս կացուցանում այն մի հաստ ճանապարհը որով մարդ մարդու բան է հասկացնում: Եթէ թէ շունեին նոքա համարձակութիւն արհամարհել և պատժել քեզ, եթէ զու զէպ ի վատն ևս գործ գնում խօսքի զորութիւնը և քաղցրութիւնը, եթէ զու միծացնուսն ճշմարտութիւնը և տարածուսն սխալ կարծիքներ, Երգեւոր շունեին նոքա տեղիք արհամարհել և պատժել քեզ, եթէ զու պաշտպանուսն պակասուոր բանը և խօսելու կարողութիւնը գործ ևս գնում մի փասակար մոլորութեան պատճառ լինելու. շունեին նոքա պատճառ արհամարհել և պատժել քեզ, եթէ զու քո անպարկեշտ խօսքերովը վերաւորուսն նոցա սիրաւ, հայհոյական խօսքերով վատահամբաւուսն նորանց, բամբասանքերով խանդարուսն նոցա խաղաղութիւնը, փասակար խօսուածներով խանդարուսն հասարակաց հանգստութիւնը և երջանկութիւնը: Եկէք խոստովանենք. մի տարակուսելի զօրութիւն է, մի շատ զժուար պատասխանի տալու բան է խօսելու կարողութիւնը: Աստուած և մարդիկ ոչ թէ միայն կոչու են, այլև ոչոք է մեզանից հարցուխորձ անեն նորա գործադրութեան մասին:

Մեկի բան ունեիք ասելու այս տեղ. մեր պարտական ենք ամենաճիշդ կերպով համար տալ Աստուծուն և մարդերին: Ասեցէք թէ ինչպէս սաստիկ խօսումէ այդ մասին ինքը մեր Տէրը. «Ասումս՝ ձեզ թէ ամենայն զատարկ բանի համար, որ խօսած էին մարդիկ, պիտոյ է պատասխանատու լինին զատաստանի օրումը»: Մատթ. գլ. 12. Հ. 36: Եթէ կարծէք որ այս խօսքը չափազանց խիստ է: Բացառելով է որ Բրիտոս զատարկ բաների անուն տալով, հասկանումէ անզգոյշ,

անխորհուրդ և փնասակար բաներ, Արդեօք կա՞ր թղլրուութիւն այն աստուածատուր պարգևը, որ մարդկութեան նախապատգութիւնն է, որ մեծամեծ խորհուրդներէ և ճշմարիտ կրթութեան ճանապարհ է, գործ գնել անմիտ զատարկարանութեան, անխորհուրդ վայրախօսութեան և ժամափաճառ բանարկութիւններէ վերայ, Արդեօք իրաւացի չէ՞ր Առաքելու խօսքը, որ ձայն է տալիս. « Զգո՛յշ կացէք, որ մի տգեղ խօսք դուրս չը գայ ձեր բերանից. » Եփես. գլ. 4. Է. 29. Եւ մի թէ յայտնի չէ, թէ ինչ կարողութիւն ունի մի լոկ բառ. չէ՞ր կարող մի երկդիմի ասացուած պատճառ տալ շատ փնասակար երկպառակութիւններէ, մի պիղծ կատակախօսութիւն սպականել անմեղ սրտեր, մի թեթեւամիտ ստախօսութիւն պատճառ տալ անփերձանալի կատակամտութեան, մի անարգ յիշոցատուութիւն մեր ընկերներէ սիրտը խոր խոցոտել, մի կտտաղի սպաննալիք ահ ու գող և մաշացուցիչ սասանութիւն տարածել, ջէր պատահած ձեզ, որ դուք մի լարեմիտ խօսքով պատճառած լինէիք ահա՞նքութիւն, ցաւ, խռովութիւն, մի աղետալի բան, որոնց վերայ դուք ինքներդ զարհուրած լինէիք, Այն խօսքը որ միանգամ փակել է բերանից, չէ կարելի յետ դարձուցանել. մեր իշխանութեան տակ չէ սահմանել այն սպաւորութիւնքը և ներգործութիւնքը որ յառաջանումն մեր խօսքից. « Լեզուն, ձայն է տալիս Առաքելալը, մի փոքր անդամ է, բայց մեծ մեծ բաներ է յառաջացնում. տես ահա թէ մի փոքրիկ կրակ որպիսի անտաններ պրկելով ասերում. » Եսայիք. 2, 5. Մեր խօսքերը կարող են զստնալ կայծեր որ պրումնին առանց մեր կամեցողութեանը, սլաքներ որ շատ վտանգաւոր կերպով խոցոտումնին, սուրեր որ մեր ընկերներէ սիրտը ծակումնին միջից, Եթէ արժան էր խոստովանել ճշմարտութիւնը, ապա չէ պիտոյ անփոյթ լինել այդ բաների և ոչ մինի մասին, ըստ որում չը գիտենք զորս հետեւներ, թէպէտ պարտական էինք երաշխաւոր լինել այդ մասին, և ոչ թէ միայն մի հասարակ և թեթեւ, այլ մի շատ ճիշդ և դժուար հաշիւու համար ունենք տալու. « Բո խօսքիցը, ասումն Տէրը, կ'արդարանաս դու և քո խօսքիցը կը զատապարտվիս դու. »

Այս հետաքննութիւնը ինքն ըստ ինքեան առաջնորդումն մեզ զեպի երրորդ խնդիրը որի վերայ պարտական են Քրիստոնեւայքը մտածել, երբ որ խօսումնին. այսինքն այնպէս գործ գնել խօսելու կարողութիւնը, ինչպէս պատշաճ էր իւր խորհրդին, Եթէ այդքան ծանր էր այն պատասխանատուութիւնը որ կայ մեր վերայ այդ մասին, ապա չէր պիտոյ մեզ զգաստութեամբ քննել թէ ինչպէս էր լինելու խօսքի գործադրութիւնը, Եթէ կամենումնք անդատապարտելի գտանվիլ Աստուծոյ և մարդերի առաջն, Այդ մասին ամենալու տեղեկու-

Թիւնը տալիս է մեզ Քրիստոսի աւետարանը: Սա հրամայումէ մեզ մեր ամենայն գործերը, ուրեմն և խօսքի կարողութիւնը ստորագրել Սիրոյ օրէնքի և առաջնորդութեան տակ. և եթէ Սէրն է, Ճշմարտ սէրը զէպի և Ստուած ու մարդ, որ մեզ սիրտ և հօգի է տալիս այդ կարողութիւնը գործ զնելու մէջ, ապա ոչինչ տարակոյս չը կայ, թէ մեր գորան գործ կը զնէինք ինչպէս հարկաւոր էր. այսինքն Ճշմարտութիւն, ուղղութիւն և բարեմասնութիւն յառաջ տանելու համար:

«Իսպ ձգեցէք ստութիւնը, ձայն է տալիս Առաքելը (Եփես. 4, 25). Ճշմարտութիւն խօսեցէք ամեն միտք իւր ընկերի հետ, պատճառ որ անգամք ենք միմեանց,» Տեսէք ահա առաջին անհրաժարելի պատուէրը որ տալիս է մեզ Սէրը խօսելու կարողութեան մասին. Երժան է մեզ խօսել Ճշմարտութիւն, արժան է մեզ խօսել ոչ թէ լոկ Ճշմարտութեան համեմատ, այլև Ճշմարտութեան համար, եթէ խօսումիք Ճշմարտութեան համեմատ, ապա յայտնումենք միայն ինչ որ մեր սրտի մէջ կար, և այդպէս մեր բառերը և մտածութիւնքը, մեր խօսքերը և զգացողութիւնքը ամենեին համաձայն են միմեանց. ուրեմն չէինք խօսելու այլապէս և այն միջոցին, երբ որ զժուարութիւն կար արդարապէս վարվելու, երբ որ մեր աղտատմութեան համար ունէինք տեղիք կասկածելու, թէ մի գուցէ վատամարդիկ լինինք և փնասի հասանենք: Բայց երբ որ խօսումենք Ճշմարտութեան համար, ապա վերացնումենք ամենայն թիւր հակացողութիւն, հերքումենք ամենայն սխալանք, արմատախիւ ենք առնում ամենայն մոլորական կարծիք, տալիս ենք մեր ընկերին ամենայն օգտակար ծանօթութիւն, տարածումենք ամենայն փրկաւետ յայտնագործութիւն, յառաջ ենք տանում ամենայն բարելու ճարտարութիւն և զխաւթութիւն, և քարողումենք, զովասանումենք, պաշտպանումենք բանակաւորութեան և Կրօնի ամեն մի վարդապետութիւնը, ամեն մի պատուէրը, ամեն մի խրատը. և այսպէս լինումենք մարդուր, հաւատարիմ, աներկիւղ վկայք և խոստովանողք Քրիստոսի և նորա Աւետարանին: Այլապէս խօսելու համարձակութիւն չունի ոչ մի քրիստոնեայ: Ենկարելի է աստուածատէր լինել առանց արժանապէս և աստուածափայլել կերպով գործ զնելու այն ամենամեծ նախապատմութիւնը որ Աստուած շնորհել է մեզ, այսինքն է խօսելու կարողութիւնը. Եւ մի թէ Ճշմարտութեան Հայրը, մի թէ նա, որին ասելի է ամենայն կեղծաւորութիւն, որ պատժումէր ամենայն խարէութիւն և յայտնումէր ամենայն նենգաւորութիւն, կը կամենար որ մեր խօսելու կարողութիւնը այլապէս գործ զնէինք, քան թէ Ճշմարտութեան կանոններին համաձայն և Ճշմարտութեան օգտի համար. Եւ եթէ մեր սիրումենք մարդկութիւնը, եթէ կայ մեր սրտի մէջ լուակամութեան մի կայծ,

այս չէր պիտոյ, որ սուրբ լինի մեր համար ամենայն մարդկեղէն ընկերութեան պատկեր, որ անպատմ լի մեծակշիռ լինի մեր աշխուժը այն մեծ ճանապարհը ամենայն մարդկեղէն կրթութեան: Կարող էինք այլ կերպով աւելի օգտակար լինել աշխարհին, քան թէ մեր արգարութեամբը յառաջագեմ առնելով հաւատարմութիւն և հաւատ, քան թէ մեր ճշմարտախօսութեամբը պատուաւոր կացուցանելով մեր ասացածքը և խոստումները, քան թէ այրական և ամուր հոգով հըսկելով այն զաշնաւորութեան ղերայ որոնց վերայ հաստատած է մարդկային ընկերութեան կարգը և բարին, քող այս բանը, մի թէ մեք, մարդկութեան որդիքս, չէինք միմեանց հետ անզամբ, ինչպէս ասում է Վասիլայը. ուրեմն չէր պիտոյ մեզ բաղկացնել մի մարմին, որի վերայ իշխան էր մի հոգի և մի սիրտ, որի մէջ ամենայն անդամները ամեննին զուգապատշաճ էին միմեանց, որի մէջ ամենեքեան արգարամիտ էին և օգնական միմեանց, Այս տեղ այլ ճանապարհ չը կայ. եթէ կամք չունինք անարգել մեր անձը և կորուսանել միանգամայն միւսերի հաւատը դեպ ի մեզ, եթէ կամք չունինք ամենամար պատասխանատուութեան տակ ընկնել Աստուծոյ և մարդերի առաջ և լինել ուրացող այն բանին որ մեծակշիռ և սուրբ էր մարդկութեան համար, այս չունինք համարձակութիւն, խօսելու կարողութիւնը ոչինչ ժամանակ այլապէս գործ զնել, քան թէ ճշմարտութիւնը յառաջ տանելու համար: — Աւրեմն և ընկերի վարքը — համար: Կի աւելի բարձր խորհուրդ, քան թէ ուղղագործութիւնը, քան թէ սերմանել հաստատուն առաքինութիւն և բարեպաշտութիւն չը դիտէ Սէրը: Այլ որ սիրում է Աստուած, պարտական է յազոդութիւն տալ բարի բանին, ինչպէս Աստուած. պարտական է հոգարարձու լինել, որ Աստուծոյ կամքը կատարվի երկրի վերայ ինչպէս երկնքումը. պարտական է ոչ թէ միայն ինքը պահպանել Աստուծոյ պատուիրանքը, այլև իւր մերձաւոր մարդիկը քաջալերել, որ հնազանդ լինին նոցա: Եւ եթէ դուք սիրումք մարդկութիւնը, այս մի թէ ամենամեծ հարկ չը կար ձեր վերայ պահել մարդիկը այն մեղքից որ կործանիչ էր նոցա, առաջնորդել նոցա զեպ ի առաքինութիւն, որի վերայ հաստատած է մեր գոյութեան ամենամեծ արժանաւորութիւնը, նոցա սիրալ լցուցանել երկիրը զածութեամբ որ աւետապարգև էր այս և միւս կեանքումը: Կորանից ահա իսկոյն բացայայտ է, թէ ինչպէս պիտոյ է ձեզ խօսել, թէ ինչպէս արժան էր ձեզ գործ զնել խօսքի մեծապարկ շնորհք: Արդէս հնար ուղղագործութեան, ամենաճշմարտ և ամենապսակ կրթութեան արժան էր ձեզ գործ զնել նորան, քող ոչ մի ժամանակ չը վախճի քո բերանից մի բառ, որ կարող էր ճանապարհ տալ թեթեւատուութեանը, զարթուցանել անպարկէշտ ցան-

կուժիւնք, գրգռել զէպ ի յանցաւորութիւն, նուազեցուցանել Աստուծոյ երկիւզը և պատկառանքը նորա պատուիրաններից, Թո՛ղ ոչ ինչ աղեղ բան դուրս չը գայ ձեր բերանից, ձայն է տալիս Առարեալը, Բայց յաւելաջնումե նա, «ինչ որ բարի էր պիտանի շինութեան համար,» այսինքն, ինչ որ կարող էր վառել մեր սերը զէպ ի բարին, ամբացուցանել մեր աչնիւ աչնիւ խորհուրդները, հնարաւորել մեր ճիշդ պարտավճարութիւնք, արժնացուցանել մեր զգայութիւնքը զէպ ի ամենայն աչնիւ և մեծ բան, ամբայնդէլ մեր հաւատը զէպ ի Աստուած և Քրիստոս, ինչ որ կարող էր մեր հոգին ամենայն երկրաւոր բաններից վեր բարձրացուցանել զէպ ի Աստուած և երկինք, Թող այս լինի ձեր բերանի ամեն մի շնչողութիւնք, Թող այս լինի ձեր խօսքի կենդանարար հոգին, Թող դորանով շարժի և հոգիանայ ամենայն մարդ որ կը լսէր ձեզ, Թո՛ղ այդ բանը հնչէ ամենայն մարդու սրտի և խղճմտանքի մէջ, որ կը մտանար ձեզ, Ինչ ազդողականութիւն կը տար ձեզ խօսելու կարողութիւնք, եթէ դուք այսպէս գործ զնէիք նորան, ինչ զորութիւնք կը զարթուցանէք դուք բարոյական աշխարհումը, եթէ այդպիսի զգրութիւնք բղխումին ձեր բերանից, և ինչպէս մի ժամանակ կ'արդարանայիք ձեր խօսքիցը, ինչ զոյութիւն կը հասանէր ձեզ և Աստուծոյ կողմից, երբ որ դուք նորա դատաստանի առաջն վկայ կը գտանէիք ձեր գործելին այն մարդինը որ դուք ձեր զգուշացուցիչ խօսքերովը փրկել էք, ձեր քաջալերութեններովը սրտայնդել էք և ձեր խօսքի զորութենովը մոխիմարել էք այս և այն ցաւի մէջ և մահու վերջին ժամումը,

Արդարեւ, բարեշնչութիւն, ամենայն տեսակ բազդաւորութիւն և ուրախութիւն պարտական ենք մեր յաջողեցուցանել խօսքի կարողութենովը. սա վերջին կերպն է, ինչ կերպով քրիստոնեայ մարդուն պիտոյ էր գործ զնել այդ կարողութիւնք, «Ձեր խօսքը թո՛ղ լինի ամենայն ժամ շնորհայի, որպէս թէ աղով համեմած. իմացէք թէ ինչպէս արժան էր ձեզ պատասխան տալ ամենայն մարդու,» քարոզումե Առաքեալը. Աղոս. 4, 6. Մի մեծ, զեղեցիկ հանդէս, որի մէջ կարող էք դուք երջանկութիւն և օրհնութիւն սերմանել, որի մէջ կարող էք դուք հաճութիւն և ուրախութիւն տարածել, բայց և համարձակ է ձեր առաջն, եթէ կարողանայիք դուք այնպէս խօսել, եթէ գիտէիք դուք տալ ձեր խօսքին այն զորութիւնք և ոյժը, այն շնորհք և քաղցրութիւնք, որ պահանջումե Առաքեալը, դուք կը դատենք բամբասեալ մարդիկ որոնց անմեղութիւնք արժան էր ձեզ յայտնի կացուցանել, պարտաւորեալ մարդիկ որոնց պիտոյ է պաշտպանելիք, անարգեալ անձինք որ պիտոյ է ընդունելիք ձեր հովանաւորութեան տակ, ճնշեալ և տառապեցուցեալ մարդիկ որոնց համար պիտոյ է

բարեխօսելիք ազգու կերպով, որ և պարտական էիք ազատել ժողովրդից, դուք կը հանդիպէիք յուսահատ մարդերի որոնց կարող էիք սիրտ տալ, հոգսերով պաշարվածներն որ կարող էիք հանդատացնել, արտում մարդերի, որ կարող էիք մոխիթարել, ահ ու զողի և տարակուսանքի մէջ ըմբռնվածներն որոնց կարող էիք շտապել օգնութիւն հասուցանել, եւ երբ որ դուք վշտացած մարդու սիրտը պայծառացնումք ձեր պլցելութենովք, երբ որ դուք վաստակարեկ (կտրած ու ջարդած) մարդուն հանդիստ էք պատրաստում ձեր խօսուածներովք, եթէ դուք ընկերական կենցաղավարութեանը տախտ էք նորանոր քաղցրութիւնք ձեր ուրախամիտ հանձարովք և պարկեշտ զուարճախօսութենովք, եթէ դուք ամենայն անմկ ուրախութիւն ձեր խօսուածքովք ազնուացնումք և համմտումք. եթէ չէր կարելի ապանջ դնել ձեզ, առանց մեզմ և քաղցր կերպով սրտաքարչ լինելու զէպ ի ձեր կողմը, առանց մոռանալու ձեր մօտ իւր բոլոր ցարը և վիշտը, առանց զգալու իւր սիրտը քաղցրացած և հաստատված. եթէ դուք կարող էիք ձեր մերձաւոր ընկերքը, որ ուշադիր էին ձեզ, խօսքի թևերի վերայ առ փոքր փոքր տանել և բարձրացնել զէպ ի երկինք և Աստուած, ապա ինչ օրհնած մարդիկ էիք դուք ձեր ընկերների համար. ինչպէս պատրաստական սրտով ուշադիր կը լինէին սաքա ձեր շրթունքներին, ինչպէս յաժարական կը բացէին իւրեանց սիրտը ձեր ասածներին և կը մոխիթարվէին նոցանով, Աստուծոյ այսպէս խօսել թող լինի մեր ջանկութիւնը, մեր անդադար ջանքը և ջանազորութիւնը, Կաղաղութեամբ կը մտանինք մեք միանգամ. շնորհակալու մարդիկ կը լսյին, կ'արտասուէին մեր շրթունքը փակվելու ժամանակին, եթէ նոցանից ոչինչ բան չէր դուրս եկած, եթէ ոչ. բարեացականութեան և սիրոյ բառեր, եթէ մեր վերջին շունչը էր զեռ ևս աղօթք և օրհնութիւն մեր կըրպարկիցներն համար:

ԲՆՆԱՍՏԵԼ ԵՒ ԹՈՒԹԻՒՆՔ:

Ե. ԱՆՍ ԿԵԶԸՍԻ ¹⁾ ՏԵՍԻԼԸ:

Լաւ Կաղաքը, որի անունը մարդկութեան արդիւնազորք բարեբարինքի շարքումը փոյլ լինու է յաւիտեան, և այնքան առաւել պայծառ լուսով, ըստ որում նա երևումէ այն ապրիքանների զժոխասեաւ անունների մօտ, որ սրով, տանջանքով և ստրկական գործերով մի

¹⁾ Բարթոլոմէո զը Լաւ Կաղաք, կախկորս գիտօք քաղաքի մեքոնկելուժը, ձեան էր Սեփիւսի մէջ 1474 թուականին: Այս. օրհնեալ յիշատակի արժանաւոր, պաշտ

միլիոն անմեղ մարդիկ մորթեցին 15 տարու մէջ. այս ճաշարալեզու, ժրագլուխ, անվաստակելի բարեխօսը տառապեալ մարդկութեան, այժմ որպէս իննսուն տարօք ծերունի զրած էր մահու մահճի մէջ. Թեպէտ ահա փախաղուսներ նա վարձին երկնքումը, այնու ամենայնիւ ահ ու զոգի մէջ էր, զարձուցանելով երեսը զեպի անանց մըշ-անջննաւորութիւնը: Այս երկիւղը նման էր մի նազելի, սիրող հարսի երկիւղի, որ այն բոսկումը, երբ պիտոյ է բաղդաւորվէր նա և իւր սրտի ցանկութիւնքը պիտոյ է պսակվէին, ահ ու զոգի մէջ է մտածելով իւր զրութեան փոփոխութեան վերայ: Ասա կազարը զիտակից էր իւր սրտի մարբութեանը և իւր կեանքի անարատութեանը, նա ուզից նայել էր թագաւորների երեսին և երկիւղ չունէր ոչինչ երկրաւոր դատաւորից. բայց այն դատաւորը, որին պիտոյ է ներկայանաւոր այժմ, Աստուած էր. և մի անսահման սրբութիւն և արդարութիւն ահացուցիչ էր Ասա կազարի համար: Աւ արդարագնաց մարդու համարձակ աչքը, ինչպէս մեղապարտի աչքը, ցած է թերութիւր հայեացքը արեգակի հանդէպ:

Վորա մահճի մտա նստած էր իւր արժանի կարգակից եղբայրը, նոյնպէս մի ծեր մարդ և շատ տարիներով բարեկամ նորա հետ. և սա լինելով հասասարապէս արդարագնաց, մի քերուշ սիրով կապված էր Ասա կազարի հետ, այլև խոստովանելով իւր պակասութիւնքը հիանումը և մեծարումը նորան: Սա տեսանումը ցուցելով թէ իւր բարեկամը, որի կողմից շէր հեռանում ինքը, որ ըստ օրէ աւելի լուռ ու մունջ է լինում և մաշվում, և յոյս էր տալիս նորան, որ յոյս զարթուցանէ իւր յատուկ սրտի մէջ: Բայց Ասա կազար ծերունին, սիրտը լցուած այն մեծ մտածութեամբը անանց մշտնջննաւորութեան

պնը բուն Եմբիկացոց, որոնց սիրապետել էր Ազանիան. ջրան և շատ տարօք (1398 թ.) իւր հոր հետ մտան ուղեկից լինելով աշխարհահռչակ կալուստեան զեպի նոր աշխարհը, և կրկին անգամ 1502ին, և յետոյ մտած էր Դամբիկեան կարգի մէջ, յանն առաւ լինել շրթտանութեան տառալեւ Սան Դամբիկ կղզումը, երբ որ ինքը շատ զրուսանէր Եմբիկացոց պոտի համար մատուցած էր կայսր կարուստ հիւնդերոցին: Սորանից ստացաւ նա և քաղաքապետի իշխանութիւն կալուստեան կղզու վերայ, Թեպէտ և անասելի արգելափակներ և հաշտանք կրելով, այնու ամենայնիւ չէր հրճարգիցաւ պաշտպան լինել այն վտարապաշտ և անարժանապէս ցուսնացած Եմբիկացոցը: 50 տարի կացաւ նա նոր աշխարհումը, 12 անգամ նաւարկեց օվկիանոսի վերայով զեպի Ազանիան, որ ջտապով լինի տառապեալ ժողովրդի համար, վերջումը ցած զրեց իւր վեճակը և 1551 թուակ. վերադառնալով Ազանիան, վախճանեցաւ Մարտիոյ քաղաքումը 1566ին, որպէս ազնիւ պաշտպան այն վտարապաշտների: Ահա թէ իմ էր Ասա կազարը, մարդ, Խանաչոյց և պաշտպանուց մարդկութեան իբրուունքներին:

վերայ, ինդրեց սորանից որ դուրս գնայ և թողու նորան մենակ իւր գատաւորի հետ :

Լաս Կազասը, հանգստացած մահճի մէջ, մտածումը իւր բոլոր անցած կեանքի վերայ . ուր և դարձուցանումը իւր աչքը, ամենայն տեղ տեսանումը սխալանքներ սխալանքների վերայ և ահարկու մեծութենով . սոցա հետևանքները պատկերանումին նորա առաջև որպէս մի լայնատարած ծով, և ամենայն բարեկործութիւն երևումը նորան անմասն այն փորրիկ և պղտոր արդիւնքից որ յուսացած էր ինքը . դա երևումը որպէս մի աղբիւր անապատի, որ աւազի մէջ չքանումը, առանց մի կանաչ հասկ կամ մի ծաղիկ զարդարելու նորա եղբրը : Զգնալով, կորագլուխ, ամսթահար վայր ընկաւ նա իւր մտքումը Աստուծոյ առաջև և աղաղակումը սրտի խորքից . Մի գնար իմ հետ գատաստան, թող ողորմութիւն գտանեմ քո ամտի առաջև, ո՞վ արարածների Հայր :

Մեղանդի զօրութիւնքը շատ թոյլ էին և չէին կարող տանել հոգու ճգնողութեանը . ինչքան ևս աշխատումը նա արթուն մնալ, այնու ամենայնիւ շուտով յաղթեց նորան քունը, կնքելով նորա արտեսանուէրը : Եւ յանկարծ երևեցաւ նորան, որպէս թէ երկրի աստղերը ունէր իւր ոտերի մտ, շրջումը ամպերի վերայ մի անվերջ տարածութեան մէջ, և տեսանումը մի շատ հեռաւոր տեղում մի մեծափառ խաւար պատաստովելով աստուածային փառքի մի մի հատ լուսեղէն ճառագայթներից, և շորս կողմը շրջապատած հրեղէն զինուորութեններով, որ ամպերի միջից բարձրանումէին և իջանումէին դէպ ի աշխարհները : Հազիւ թէ նորա աչքը ըմբռնած էր այս տեսարանը և սքանչացած էր նորա սիրտը, խկոյն երևեցաւ նորա առաջև ծանրահայեաց դեմքով կանգնած գատաւորի հրեշտակը պահելով ձախ ձեռքին մի տոմար և աջ ձեռքով պարզելով նորան : Զոր օրինակ մի մահու սարսափ բռնումը գլխապարտօմ մարդու սիրտը, տեսանելով գատաստանի առեանը, ուր պիտոյ է թմախլէր նորա արինը, նոյնպիսի սարսափ զղզղեց ծերունու հոգին, երբ որ Ամուհը նախ և յառաջ արտասանեց նորա անունը, ապա ցղց տուեց նորան այն բոլոր ազնիւ զօրութիւնքը որ ամիրտիւ էր նորա հոգու մէջ, այն բոլոր գեղեցիկ և մեղմ շարժումքը որ պատրաստել էր նորա արինի մէջ, և այն բոլոր առիթքը և օգնական հնարները առաքինի լինելու, որ զուգահէտեւ էր նորա զրութեան հետ, այնպէս որ Լաս Կազասին երևեցաւ, թէ իւր բոլոր բարեմասնութիւնը բղխում Աստուծուց և չէ մնալու իւրեան օչինչ սեփականութիւն բաց ի իւր սխալանքներից և մեղքերից :

Եւ յամ սկսանելով հրեշտակը պատմել Լաս Կազասի կեանքը,

որոնումը նորա երեսասարգական հասակի սխալներն էր, բայց չէր
քտաւ ոչինչ, Չղջութեան առաջին արտասուքը ջնջել էր նորանց.
սա միայն գրած կար, այս արտասուքը և ամենայն հաստատ գիտաւոր
ութիւն դէպ ի բարին և ամենայն ամօթ կրկին արած սխալների վերայ
և ամենայն խաղաղ ուրախութիւն լցուցած պարտականութեան
վերայ և ամենայն քաղցր զգացողութիւն որ դիտէ ծնուցանել ան-
ձնուրաց մարդասիրութիւնը, և ամենայն ազնիւ պատերազմ մարմնա-
սիրութեան հետ, որ ապստամբեցուցանուեալ մարդս Աստուծոց, Այ-
նուհետև սկսեց նորա սիրտը քաջալերվիլ յուսով. և թէպէտ նորա
սխալներն էր աւելի էին քան թէ ծովի աւազը, բայց և նորա բարի
ու ազնիւ գործերը լի և առատ էին, և բարին ամուսնը և սխա-
լները նուազումը նոյն չափով, ինչ չափով նորա տարիքը յառա-
ջանումէն և փորձը և մտածութիւնը ամբայնումը հոգու կարողու-
թիւնը, և վարժութիւնը լա բաների մէջ գորացնումը նորա յոժա-
րութիւնը և ներգործականութիւնը, Բայց նորա և ամենալա արդիւնքը
չէր կատարեալ Աստուծոյ առաջև, և առաւել ընտիր գործերի աղ-
բիւրը դեռ ևս պղտոր էր իւր խորբումը.

Աստուծոյ հրեշտակը շուտով բարձրացրեց ձայնը և նորա խօսքը
առատ հոսանք ստացաւ. պատճառ, երեսասարգը հասել էր իւր այ-
րական կատարելութեանը և հանդիսացել էր որպէս մարդկութեան
նահատակ այն կողմների մէջ, որ երբեմն էին երջանկութեան և խա-
ղաղութեան բնակարանք, բայց այժմ անէծքի և սպանութեան օթե-
ւաններ, ինչ որ նա այս տեղ կրել էր, այն ազնիւ մարդը, և մա-
նուանդ ինչ որ արած էր այս տեղ, զոր օրինակ. թէ ինչպէս այն
անմեղների ամեն մի կարիքը նորա յատուկ կարիքն էր, ինչպէս նո-
րա բոլոր հոգին վառվեցաւ և բորբոքվեցաւ մի այնպիսի գործականու-
թեամբ որ դեռ ևս անչիջանելի վառումը նորա ծերութեան օրե-
րումը, թէ ինչպէս ճանաչելով իւր իրաւունքը, քաջասիրտ ընդդէմ
զուրս եկաւ կարողների վրէժխնդրութեանը և բարձրածայն անէծք
կարողաց այն արծաթասիրութեան վերայ, որ մարդասպան էր, այն ամ-
բարտաւան հաւատի վերայ, որ ժպտելով նայումը պղ բանին, և այն
քաղաքագիտութեան վերայ որ մոռանումը պատժել պղ շարագոր-
ծութիւնը. թէ ինչպէս նա մի կողմից դէպ ի միւս կողմը, անիշխ
առնելով մրիկների և քարածայրերի վտանգը, թռչումը ծովի ան-
զուղների վերայով, որ երբեմն գնայ բողոքէ արքայական ամոռի
առաջև, և երբեմն յոյս և միտմարութիւն բերէ անմեղութեանը.
Թէ ինչպէս նա մտանումը այն հպարտ աշխարհակալի առևանք, որ
նախապատիւ իշխանն էր երկու աշխարհի մէջ, և նորա յանցանքը
որոտեցուցանումը նորա սրտի մէջ, մինչև որ երևումը նորան թէ ա-

Հա կանգնած է տիեզերական դատաւորի առաջն, և դժոխքի անշիջանելի բոցերը ահա մտանումն իւր Հիւանդութեան մահճին: Այլ և թէ ինչպէս նա յարձակումէր իւր նաւարկեալ յոյսերի աւերակների վերայ և իւր բարձրածայն լացը և արտասուքը ուղարկումէր զէպի երկինք, բայց դարձեալ ժողովելով իւր սյրական զօրութիւնը, միւսանդամ անցանումէր ասպարէզ անվեհեր քաջութենով և անձանձիր յղանումէր միշտ նորանոր խորհուրդք և առաջարկութիւնք. թէ ինչպէս ամեն մի յոյսի ճառագայթ, որ ծագումէր այն թշուառացանների համար, ուսուցանումէր նորա սիրտը մի անպատմելի ուրախութենով. թէ ինչպէս նա, ամենայն ուրախութենից և ամենայն մոխթարութենից հրաժարելով, թաղումէր իւր անձը խոր ասանձնութեան մէջ և երկիրը նորա համար չէր, եթէ ոչ մի բանա, և նորա սրտի բոլորամասն փափազը ուղղած էր այնուհետև զէպի կատարած, և անանց մշտնջենաւորութիւն: Այս բոլոր գործերը, այս բոլոր տառապալից հոգաբարձութիւնըը շարշարեալ մարդկութեան համար, գրած կային Աստուծոյ առաջն իւրեանց ամենին մարբութենով: արժանաւորութենովը, գեղեցկութենովը: Արք որ հրեշտակը յառաջ գնաց կարդալով, Ղաւս Ազգասի երեսը վառվեցաւ աւելի լուսապայծառ կարմրութեամբ, նորա շնչառութիւնը աւելի թեթեւացաւ, նորա հայեացքը աւելի կենդանութիւն ստացաւ և նորա շորս կողմը պատեց մի աւելի մարբը և քաղցր լուսափայլութիւն: Պատճառ, ճշմարտասիրութիւնը և արդարասիրութիւնը, թեև անգործ և անվաստակ ոչինչ չունեին հանդէս բերելու, եթէ ոչ վկայութիւն և արտասուք, ըստ որում չէ կար թողլուութիւն գործ գործելու և վաստակ վաստակելու, ունի մի բարձր, անասելի արժանաւորութիւն երկնքումը:

Իսպայ զեւ ևս կանգնած էր ծերունին, նայեացքը ամպի վերայ ցած թողած, պղտոր և մտածող ծանրութիւն ճակատի վերայ. պատճառ, նորա սիրտը տաղնապի մէջ էր այն վատարազ խորհրդատուութեան պատճառով, որով նա ինքր, անդրատա յուսահատութեան մէջ, մի ազգի վիշտ թեթեւացնելու համար, ճնշել էր միւս ազգի ազատութիւն. նորա հոգին մտածելով թափառումէր զամբիայի և Սենեգալի սահմաններումը, խորամուխ լինելով այն աշխարհների ներքը, ուր մի մշտնջենաւոր պատերազմ բիրաւորներ բիրաւորների վերայ ձգումէ նենգաւոր և բոլորական բարբարոսների կապանքի տակ: Աւերջացէս, անհամար պատուական գործերից յետոյ, հանդէս եկաւ այս ահաւոր գործը իւր տղեղ և անճոռնի հետեանքներովը, ինչպէս մի գժոխային ապիրատութիւն և աւելի արիւնշաղախ և արտասուախառն, քան թէ էրր և իցէ այն զղջացող ծերունին երազած էր իւր ամենախաւար գիշերների մէջ, Այն բոլոր զարհուրելի ամբարշտու-

Թիւնքը և անմեղութեան ողբը և աղաղակը յիշելի էին Աստուծոյ առաջև. այն, այն բոլոր ծառայացած մարդերի անասելի, անմտածելի, անվերջանալի հեծհեծանքը բնիկ աշխարհի մէջ, ծովի վերայ, կղզիների վերայ, այն բոլոր ոգևոյառ տառապանքը, այն բոլոր խառազանաղաղութիւնքը, փոխանակ կազդուրման և հանգստի, այն բոլոր սուգը և կոծը մահու երկիւղի մէջ, այն բոլոր անբարբառ լուծիւնը վերջին յուսարկութեան մէջ, Ղաս Աղաւսը կանգնած էր այն տեղ այնպիսի գրութեան մէջ, որպէս թէ զարհուրանքը պիտոյ է չիք զարձուցանէ նորան, Ղա չէր մտածում այժմ այն Աուրբի, Արդարի վերայ, որի աչքից ոչինչ խաւար չէ կարող ծածկել մի արտու, և ոչինչ լուսեղէն թևարկութիւն չէ կարող ապահով կացուցանել. սիրտը լցուած ամենափոքրին ողորմութենով, նա մտածուէր միայն իւր հաղաբարտը եղբայրակիցների անվախճան թշուառութիւնը, երբ որ հրեշտակը տեսաւ, թէ մի խոր ապաշաւութիւն իւր շար օձերովը յարձակվեցաւ նորա սրտի վերայ, և թէ նա իւր բնութեան թանգագին գոհարը, այսինքն Անմահութիւնը, պատրաստ էր զո՛հ բերել, միայն թէ կարողանար քաւել իւր յանջանքը, այն ժամանակը արտասուեց և ինքը հրեշտակը:

Ի այց մի ձայն սրբարանի միջից, մեղմ և սիրալից, որպէս մի հաշտեցած հօր ձայն, հրամայեց հրեշտակին. «Գատաւիր այդ տոմարը, և հրեշտակը խեղճն պատասեց նորան, և նորա կոտորները ցան և ցիր լինելով ունջացան. Ահա ջնջած են, խօսեց հրեշտակը, քո տկարութիւնքը Աստուծոյ առաջև, բայց նորա հանդէպ լուսեղէն տառերով գրած կայ քո անունը, եթէ նա կամենար պատժել սխալանքների ինչպէս քո սխալանքներն էին, ապա ոչ մինը քո եղբայրակիցներից չէր արդարանալու նորա առաջև, և երկիւրք կը մնար անպատ և անբաղաբացի: Ղա իջուցել է հողիքը հողի և մոխրի մէջ, որ նոքա սխալանքների միջով անցան են դէպ ի ճշմարտութիւն, և զայնթակելով հասան են դէպ ի առաքինութիւն և ցաւելով — դէպ ի երանութիւն:

Գուրա հանիր իմ սրտիցը, խօսեց հառաչելով Ղաս Աղաւսը, որ մի արտասուքի հեղեղ վայր իջուցանելով զարձևալ կարողացաւ խօսել. գուրա հանիր իմ սրտիցը, եթէ կարող ես, այն գործի յիշատակը. ապա թէ ոչ, ես յախտեան պիտոյ է իմ դատաւորս իմ մէջ գտանեմ. ինչպէս դու պատասեցիր այն թուղթը, պատասիր նոյնպէս այն բանի յիշատակը այս տեղ, իմ սրտի ներսումը. ապա թէ ոչ, նոյն իսկ Աստուծոյ ներկայութեան մէջ կարտու կը մնամ ես երկնային շնորհին, և նոյն իսկ երանութեան գոգոււմը նստած, պիտոյ է հանգիստ ինդրեմ փախաղով:

«Ո՞վ մահահանացու զու, ձայն արձակեց հրեշտակը. որ տեղ հայ երանութիւն, եթէ ոչ քո յատուկ սրտի մէջ, և որ միւս բանօք կարող և զա ծաղկել քո համար, որ երբէք չէիր կարող անարատ և անսխալ լինել որպէս Աստուած, եթէ ոչ այն բանօք, որ զու ճանաչումես քո անձը որպէս զործակատար զէպ ի բարին քո ամենայն զօրութենով, և առ ի սրտէ հաւատարիմ սէր ունիս զէպ ի քո եղբայրակիցների առաւել աննշանը ևս. այլև նոյն իսկ սրտցուցութեան մէջ, որի մէջ զու սխալված էիր, զգումես քո հոգու ազնուականութիւնը:» — «Բայց զո՞ւ. այս անշարիւի, անպատմելի թաւառութիւնը, այսքան հարիւրաւոր տարիներ,» — «Գորա, խօսեց հրեշտակը, կը քաղցրանան, կը լիանան երանութենով քո Արարչի աշխարհաստեան նախախնամութեան մէջ, Գու ճանաչելիք քեզ քո տկարութեան մէջ, այժմ ճանաչիր նորան իւր հրաշափառ մեծութեան մէջ:»

Այն նա հրամայեց ամպին, որ նա որոտալով արձակվի երկնքի երեսից, և յետոյ ձեռք ձեռքի տուած ներքև իջան նորա ստեղծագործութեան մէջ. Այն ժամանակը սկսեց պոտյոյթիլ երկիրը ծերունու ոտքերի տակ և Ամահը մատնացոյց արեց նորան անապատ սարեր, մշտնջենաւոր ձիւնով պատած, և սևաստեղի խոռօպոյղ փոթորիկների սասանութիւնը և վայրենի կատաղի մրրիկների կործանութիւնը. Պարերից զէպ ի ցած հոսումէն փոսկներ և հեղեղաւաներ և նոցա եղբրբումը ուրախանումէն միլիոնաւոր մարդիկ, աղմկալից փոթորիկների միջով թափումէր օրհնութիւնը երկնքից և զաչտ ու անտառ վերածաղկումէն աւելի գեղեցիկապէս, և ինչ տեղ մրրիկները պատճառած էին կործանութիւնը, այն տեղ աւելի ազատ շնչումէր կուրծքը և կրկին կարմրափայլումէն լիցերը. պատճառ, խորտակված էր այն ժամտախտի թոյնը, որ շոգիներով բերվումէր այն կողմից և նա հալածված ու կործանված էր անպուշտի մէջ. Այսպէս, նա տարաւ այն հիացած մարդը մի ցաւալից տեսարանից զէպ ի միւս ցաւալից տեսարան, երևելի աշխարհից զէպ ի աներևոյթը, և նորա սիրտը նոյնքան ևս քաղցրանումէր, ինչքան որ Արարիչը վերահասու էր կուցուցանում նորան այն վերին գիտութեններին որոնց խորին խորհուրդը ոչինչ մարդկեղէն ձեռք չէ կարող բանալ մարդկեղէն տեսութեանը. այսինքն թէ ինչպէս Անկորականը եզրական բաների ալեկոծութեան և խոտջութեան միջով կատարումէ իւր ընթացքը զէպ ի իւր հրաշափառութեան տաճարը, այնպէս որ ոչինչ արատ և ոչինչ սխալանք չէ մեծ մտեղծագործութեան ամենայն խորութեան և ընդարձակութեան մէջ, սկսեալ առաջին լուսաւորից զէպ ի վերջինը, և թէ ինչպէս աշխարհի մէջ սրտի վշտակրութիւնը զարթունցանումէ հո-

դու գործականութիւնը և զստնում մայր և դայեակ ամենայն մեծ և
զեղեցիկ զգացողութեան մարդու մէջ, և թէ ինչպէս, մի սասար եր-
կնամարի տակ, այն յափշտակեալ ստրուկը մոզոգումէ իւր համար
սպաւորութիւններ—մի ստացում, մշանջնաւոր ժամանակի համար—
սպաւորութիւններ որոնց մէջ քնած կին հաղարար երանացուցիչ
գիտութիւնք, ինչպէս որ պողասերմի մէջ քնած է հունձը, կամ
թէ շտաւիղներէ մէջ անտար. թէ ինչպէս կենդանութեան գերա-
զոյն միջոցներումը, նորա համբերատար, վշտացած, կեղեքեալ հո-
գուցը վերածաղկում ամենայն առաքինութիւն, և նորա ծագիկները
այն ամենահեղ և ամենազիւ առաքինութիւնք, այն, որ բարդակա-
նութեան կատարն է և մարդկութեան լրութիւնը, իմացիբ դու. Եւրը
որ և սխեթմ թշնամին գրկախառնել գիտ. թէ ինչպէս նոյն իսկ
վշտացուցիչը և սոնակոխիչը անմեղութեան, թէ և շատ հիւանդ, վե-
րաւոր և խանգարեալ էր նորա բնութեան ամեն մի զորութիւնք, այ-
նու ամենայնիւ առողջանումէ իւր կորստական արտոյց, այնպէս որ
նորա բոլոր խոտարտութիւնք էր միայն նորա փրկութեան յաղա-
գածքը, մի աւելի գար ու փոս և փշալից արտոյգի ճանապարհ որ
հետարդար լինելով Աստուծուց, միսանգամ տանում զեւ ի եր-
կներ. թէ ինչպէս ամբարշտութեան կատարի վերայ բուսանում թըշ-
ուառութիւնք և թշուառութեան մէջ ապաշաւութիւնք, և ապաշա-
ւութեան մէջ առաքինութիւնք, և առաքինութեան մէջ երանութիւնք
և երանութեան մէջ միշտ աւելի վերին առաքինութիւն. թէ ինչ-
պէս ամենայն երկրաւոր սարածայնութիւն մեղկանումէ և անհետանու-
մէ զուգածայնութիւնների մէջ, և ողբերգութիւնք ջնձութեան ձայ-
ների մէջ.

Իւշաղիբ լինելով, ահից ու սարսափից ըմբռնած, սկերբըր զո-
գալով, Աստուծոյ մերձաւոր ներկայութիւնը զգալով, կանգնած կ'ը
ծերուեն հրեշտակի առաջ և հիանումը ուսանելով Սիրոյ խոր-
հուրդը, Ապա իսկոյն վայր բնկաւ նորա աչքերից որպէս թէ մի կե-
ղեանք, շքացան սպեղութեան ստուերքը և նորա անհիմն կերպա-
բանքները. իսկոյն լուսացաւ նորա սրտի մէջ մի օր, արարչագործու-
թեան ներքին խորհուրդը հասկանալու համար, մի լուսաղտ, լու-
սապայծառ, երանելի օր և նորա արշալոյսը հիացք էր, Բայց զեւ
ևս ծածկապէս գողումը նորա ամեն մի ջիւղ ջուակցութեանց և արբ-
ամութեանց. նորա հակառակամարտ զգացողութիւնքը զուգախառնվե-
ցան և նոր ի նորոյ թորթորումին արտասուքը թշնի վերայ, Ո՛վ
դու, ձայն արձակեց նա այժմ, խոնարհեցուցանելով իւր ծունրը ամ-
պի մէջ և ձեռքերը և աչքերը վերուղղելով զեւ ի երկիւր. ո՛վ դու,
որ խնդրումի ես սկսեալ իմ մանկութեանց, որ և այժմ ջուցանու-

մէ ինձ իւր երեսը, ինչպէս նա էր, ամենին քաղցրութիւն, ամենեւին զուժ և սէր, ո՛վ իմ հայր և ոչ գտաւոր, ո՛վ հայր բոլոր արարածներէ, և քո բոլոր աշխարհներէ հայր, Աստուած իմ, Աստուած իմ, որ ցուցանումս ինձ այն տեղ մի փրկութեան հունձ, ինչ տեղ իմ յիմարութիւնը սերմանել է կորուստ, որ փարատումս իմ սրտի բոլոր հոգսերը և վիշաք, և թողումս ինձ զգալ իմ հոգու մէջ, թէ անձնանուէր լինելը քեզ, միայն երանութիւն է, տեսանել քո փառքը նորա լուսովուն է, թէ կամենալը բարին, այն կամենալը միայն, ձգտողութիւնը միայն զէպ ի բարին վարձատրումս զու այսպիսի հոգեպարար խնդութեանով, և նոյն իսկ սխալանքները յեղափոխումս վերջումը նորանոր խնդութեաններէ պղբերներ, Քստաւոր, անհասունելի Աստուած, զու որի պարծանքը երկինքն է, որի պարծանքը ևս հոգս և մոխրոս. . . շունիմ՝ այլևս կարողութիւն խոսելու, իմ հոգին սպառումս:

Այս արդարեւ սպառվեցաւ նորա հոգին, լոնց նորա լեզուն, Օգնութիւն մատուցանելով, ձեռքը զէպ ի նա ձգտելով բարձրացրեց նորան հրեշտակը, և քաղցր, անպատմելի սիրալից նայեալքով զրկախոտնեց նորան և ողջունեց եղբայրարար:

Այս տեղ զարթեցաւ Աստուածը. երբ որ բացեց աչքը, տեսաւ իւր երկրաւոր հրեշտակը որ կամաց կամաց մտնումներ նորան, սկանջ զնկու նորա շնչատութեանը, Աստուածը կամեցաւ խօսել, կամեցաւ այն երանութեանից, որ լցուցանումներ իւր հոգին, բարեկամական բաժինը հատուցանել իւր կարգակից եղբորը, բայց նորա աչքը չիջաւ ահա, նա թուլացաւ և պարզեց մարմինը զէպ ի մահու հանգիստ, Գողալով և անբարբառ խոնարհված էր եղբայրը իւր, հոգին աւանդած, բարեկամի վերայ. սպա մտնեցաւ նորան, համբուրեց իւր ստաւ եղբայրը և լաց եղաւ, նորա զէպ ի երկինք վերուզղած հայեացքը և նորա կցած ձեռքերը պաղատանք էին կատարում, որ և իւր վախճանը այնպէս բարի լինի, ինչպէս այս արդարի վախճանը, Պատճառ, այն ազնիւ մարդու մահը մեզմ էր և մի կամաց ու հանդարտ ննջումն մանուկի իւր մօր գոգումը, և մի խաղաղութիւն հոգու, որպիսի կարող էր բղիւնել Աստուածգիտութեանից և անձնաճանաչութեանից, ծիծաղումներ զեւ ևս նորա մեռած երեսի վերայ:

Է. ԳԵԼԻԼԵԻ ¹⁾ ԵՍՏԵՂԵՐԵՇԻԻ ԵՐԵՉԸ:

Գալիլէին, որ անմոռանալի արդիւնք է ցրյց տուել զիտութեաններէ համար, ոյժմ ապրումներ խաղաղ և փառաւոր ծերութեան մէջ

¹⁾ Այս անունն բնակաւ Իտալացի քնած լինելով 1563 թուականի փետրվար

Քլորենտի սահմանումը, Արշևորի անունով վիճակումը, Ահա զրկած էր նա իւր սուսել պատուական զգայարանիցք, այնու ամենայնի ուրախանումը նա գարնան վերայ, կէս մի փափագելով վերագտնա-

րի 18ին Պիլա քաղաքումը, սկսեալ կանուխ ժամկութենից ցուցանումը մի սակաւագիտա թղթագրութիւն մըքնական գործերի մէջ, շատ հնչու նմանելով ամենայն տեսակ մըքնակների կամ թէ հնարելով նորանոր անմանք: Նորա հայրը սուեց գաստարակել նորան հին լեզուների, նկարչութեան և երաժշտութեան մէջ, և, թէպէս անկոր մարջ չէր, այնու ամենայնի ուղարկել նորան 1581ին Պիլա, որ այն տեղի համալսարանումը ուսանի բժշկականութիւն և Արիստոտէլեան փիլիսոփայութիւն: Այս փիլիսոփայութիւնը, Արշևորի անունով անուանուածութեանը խանգարած լինելով, գրգռեց վաղուց ահա նորա սաստիկ անհամբերելը որ և շէ ծածկեց նա երբեք, թէպէս գործածով վաստահարութեան որպէս մի շատագով վնաս և անմասն մարջ: Հաջի թէ 19 տարեկան, նկատելով միանգամ Պիլայի կամօր գիկէ կեկեղցու մէջ մի կանթիկի Խնամութիւնը, միայն շրջեց Խնամակի որեք ներքի վերայ, որ և սահմանեց սուտքն անցումը և գործ գրեց, ժամանակը չափելու համար, թէպէս Խնամակի այսպիսի գործադրութեան զապախար կատարելութիւն ստացաւ յետոյ, նորա որպէս և ժամանակ թէ Հիւրիկենի ձեռքով: Գալթիին մինչև այժմ համարեա թէ ամենին զարկ լինելով տեսական անգլիկութեններից Մութեմտակոյի մէջ, սկսեց այսուհետև ամենայն եռանգով պարտել այս գիտութեանը Օստիլի շէշի վարժարանի մաս, այնպէս որ այս բանի վերայ մտացաւ բժշկականութիւնը և փիլիսոփայութիւնը, այլև նորա հայրը ստիպեց գաստեցաւ պատուութիւն նորան, որ հրատարի շէշի վարժարանիցը: Ի վերայ այս ամենայնի Գալթիին ծածկապէս շարունակեց իւր սիրելի ուսումը և կարճ միջոցով սուարեց Եւկլիդեսի երկրաչափութիւնը և Արիստոտէլեան մըքնակարանութիւնը, այլև կարողացաւ ստանալ իւր հոր թոյլտուութիւնը հրատարակելու բժշկականութենից և պարտելու իւր տրած սուարիաներին: Այն նոր երեկէի գիտալ, որ սրեց նա սուաշարքելով Արշի մեղեկի գրուածներից, այսինքն և Հիւրիստոտէլեան կշտի կամ թէ Հեզուկաշտի գիտալ 1586 թուականին, պատուելի անուն Խարեց նորան և պատուա տուեց հրատարակելու նորան որպէս Մութեմտակոյի ուսուցիչ Պիլայի համալսարանումը: Այս տեղ հսկողութեան զարե կէս ժամանակ թէ ընդգեմ փիլիսոփայութեանը, և սորան հերքելու համար, Անդրուսթեան մասին փորձեր կատարեց Պիլայի աշտարակից և ցոյց տուեց, որ ծանրութիւնը ոչինչ ներգործութիւն չունի անկանող մարմինների տրոպութեան վերայ: Նորութիւնը այս փորձերի որակ տեսնաես ևր մի անպիմ բազմութիւն, որպարե մեծ զարմանք ու մեծարանք յառաջացեց, ցոյց և վեր կացեց շատ հսկողութեանը, որ և ամենայն տեսակ հաշտանքներով ստիպեցին նորան վերջումը, 1592 թուականին, հրատարակել իւր պաշտանից և զուտ գնալ Պիլայից: Նա տեղափոխեցաւ զկոյ ի Քլորենտ, և շատով արանից յետոյ Աննակիկեան ներքայնը հրատարակեց նորան որպէս ուսուցիչ Մութեմտակոյի զկոյ ի Պիլայում, որ նա սուտքն էր, որ սկսեց իտալական լեզուով ուսուցանել: Նորա գաստուութիւնը գասն մի անսովոր մեծ հաւանութիւն, և Եւրոպայի ամենահասարակ կոչ-

լոյ ստիակի ձայնին և անուշահոտ ծաղիկներին, և կես մի կամենալով նորոգել իւր սրտի մէջ անցած ու գնացած ուրախութիւնների քաղցր յիշատակը:

Մերից հուարօրէցան նորա մտ աշակերտներ: 1597 թուականին հնարեց նա Համա-մասական կորկէնը: Բոլոյց տեւի մեծակշիռ էին նորա ֆիզիքական յայտնագործու-թիւնքը որ սրած է 1602ից: զոր որինակ, թէ այն սարսուծութիւնքը, որ մի տե-կանոց մարմին անցանում հաստար միջոցների մէջ, տնային այնպէս ինչպէս անհո-ւասար թիւերս 1, 3, 5, 7, 9, 11 և այլն: այսինքն, մի անկանոց մարմին, որ ս-առքին սեկանդի մէջ անցած էր 15 ամաւաթ, երկրորդումը անցանում 35, եր-րորդումը 75 և այլն: Նորայիտ հեռացոյցի (որ ստացաւ նորանից կատարելագործու-թիւն, որպէս և շերտաւաթը) ոչնայնիւմ կարճ ժամանակի մէջ սրեց նա պետկե-լաս մեծանն ստեղծարարչական յայտնագործութիւնք: զոր որինակ, նա սառքինն էր որ նկատեց լուսնի սարերը և ուսուց նոցա բարձրութիւնը շտիւկ նոցա ստու-բեց, որ անգամն բիծերը, Մարի կառքը որունց որպէս առանձին առանձին ստեղծը և յայտնեց իւր կշռադասութիւնը թէ ըստը յարգապողը կարելի էր, տեւի պայծառ հեռացոյցներով տեսած, ինչ ինչ ստեղծեր որունը և բաժանել: Առաւել յիշատակի մտնան է նորա յայտնագործութիւնը Իպոսների սրբանակների, սպա յայտնագոր-ծութիւնը Սասունում որ է արեգակի բիծերի: Սոցա միահարցն յառաջադրու-թիւնից արեւելեց զեղ ի արեւուտը եղբարեկեց նա թէ արեգակը հաւաքուի ունի: Երբ որ նա վերստին ստացել էր իւր պաշտանը որպէս ուսուցիչ Մթնեմակայի, 1610 թուականին կրկին անգամ հրատարակեց զեղ ի Պիպիս, որ գաստառ լինի: այս անց իւր Սալմաի անունով բարեկամ անարանցումը Alle selvo, սիման հաս-տատելով, նկատողութիւնք արեց անոր մարմինների լոյսազոյթիւնան վերայ և զգու-շուոր նկատութիւններով վեհուտի և Մարտի փոփոխական լուսնիբարարանքների վե-րայ հաստատեց կարգերիկոս ստեղծարարչի ուսուցանելու կարգը: Բոլոյց որովհետեւ այս բանը, որպէս անհամեմատ ըստուանընչի մի քանի անգների հետ, մտնած էր որպէս հերետիկոսական ուսուց, այս պատճառով և վալիէինն պարտաւորեցան հե-րետիկոսութեան անունով և գանջվեցան զեղ ի Հոմ, որ սուրբ անթոի սառլե սր-գարացուցան էր անը: Բոլոյց ոչ այն փաստերը որ նա յառաջ բերեց, և ոչ այն խոստովանութիւնը որ անարարեցաւ կոչուց նորա զխոսութիւնը, արգելադրարութիւնը և շերտանոցն կոթոյթութիւնը, չէ կարողացան խոփանել ժողովեալ սաստա-մարանների գաստմիտը: .. Պիպիէ թէ արեգակը անշարժ կանգնած է աշխարհի միջ-նամուրումը և մի անակցի, ծուռ և հերետիկոսական կարծիք, որովհետեւ զա հակա-ապ էր սուրբ գրքին, ուրանալ թէ երկիրը հաստատած է աշխարհի միջնամուր-բումը, թէ անշարժ էր, այլն պիպիէ թէ սա ունի սրական շրջանակութիւն, և նշնպէս մի անակցի, սխալ և գանձեց մշտրահաստ կարծիք: .. Զուր կզուս Գալի-լէի քալ և ինասուն պատճառարանութիւնք իւր վարդապետութեան համար, նա-րա հանարի վնքը ոչինչ չէ կարողացաւ սպիւկ արեգակական սխտարութեան վե-րայ, և նա ստիպեցան ուրանել, որ ոչինչ բան չէ իսակ և ոչինչ գրուած չէ ուղե-որպէս կարգերիկոսի վարդապետութեան ընտանգութիւն: Աշտպէս, 1617 թուա-

Միանգամ, իւր կենսերի վերջին զարունին, հրամայեց նա իւր առաւել կրօնսեր և երախտագէտ աշակերտին Ախիլանի անունով, որ տանէ նորան Արշէտրի տեղի շրջակայ գաւառը։ Նա նկատեց որ, հա-

կանին վերադարձաւ նա զեղի Գլորենա և սկսեց վերստին պարտել իւր առեղա-
բաշխական առումն որ նշն շտիով սիրելի դարձաւ նորան, ինչ շտիով ջանահար
էին նորա թշնամբը խախտել նորան։ 1618 թուականին գրեց նա երեք մտա-
ւոր ասեղաների (կամաների) վերայ, որ այն միջոցմը երեսն էին։ Յիսուական
կարգաւոր Գրաստիւն այս գրուածի վերայ վե՛՛ր բացեց Գալիլէի աշակերտի հետ, այս
բանը պատճառ ասեց Գալիլէին պաշտպանել իւր աշակերտը, թէպէտ և որքանով
իւրեան թշնամի շինեց Յիսուական կարգաւորը։ Իւր ասաները տարաւ սահման և
աշխատութեան պատուը, այն գրուածը «Dialogo sopra i duo sistemi del mondo, Ptole-
maico e Copernico» որի մէջ երեք մտք ներս են բերվում խառնով, մինչ շատա-
գովելով Կոպերնիկոսի, մինչ Գալիլէոյոսի վարդապետութիւնը և երբեք ըստ
տեւով երկուքի վարդապետութիւնը միմեանց հետ, բայց անմիջա թողելով վիճե-
լի ինչորէր։ այս գրուածը ձեռքին, 1630 թուականումը զնոց Գալիլէին զեղի
Հում, որ ասանայ Գալի հաստութիւնը նորա սովելու մասին։ Շատ աշխատութիւն
կրելուց յետոյ ստացաւ այս հաստութիւնը, և 1632ին սկսեց ասեց իւր գործը
Գլորենոյի մէջ։ Այս գիրքը հրատարակելով, իսկոյն վեր կացաւ նորա վերայ մի նոր
փոթորիկ, անպատ ևր նորա յառաջ բերելը, թէ իւր գիրքը սպան և Հումի Գա-
լի թողլուութեամբ, թէ նա կանցած էր միայն զառաջութեան տակ Էդել այն
երկու վարդապետութիւնը, ասանց յառաջաւ գումանելու մինչ կամ թէ միւրը.
նշնայեա անպատ գամակցաւ Զոսմանոյի մեծ գուքի բարեխառութիւնը նորա հա-
մար, Էյն Նաւը յանմովցաւ Ինկիզիցիական զառարանին և նշն ինչի Գալիլէին
զանմովցաւ սորա ասանի առաջն, թէպէտ հիմանց էր նա, այնու անմանոյի ստիպ-
վցաւ 1633 թուականին երեւել Հումի մէջ, Ինկիզիցիանի ասանի առաջն ծանր
իջան թողութիւն ինչորէլ իւր հաստատած կարծիքների մասին և որքանով իւր ա-
ստցանալը, և յետոյ անորով ժամանակով գրվցաւ բանաբ մէջ։ Երբ որ նա որ-
տասանած էր որքանութեան խոսքերը, ասումն թէ չը կարողացաւ համբերել, որ
կամայ Էյնով, որքը զեանին զարկելով, չը յաւելացնէր «E pur si muove» այսինքն,
այնու անմանոյի շտիով Էյն երկիրը։ Յետոյ արեակեցին նորան բանախց և որքան-
քին սկզբումը, որ կենայ եպիսկոպոսական արքանքումը Ալեքանդի մէջ, յետոյ տա-
րապիւր արեցին, որ սպրի Արշէտրի վիճակումը Գլորենոյի մաս։ Այս անց պարագու-
մը նա շննութեան ըստ Բալիլիսիսի և Մեքենականութեան վերայ, յայտնադար,
ծնց զեա ևս, թէպէտ կիսով շտի կարացած ահա, լուսնի ճեմալը, շտանակեց
իւր ջոպանները Էյնիսիսի արքանակ աստղների մասին և գաղափեց, որ նկատ-
ելով նոցա ընթացքը կարելի է սպաս շտուել երկայնութիւնը սահմանելու համար,
Այս, իսու, անբնութեանց և անզամացաւթեանց շտուարվելով, սպասվցաւ նորա
մարմինը 1632 թուակ. յաւով, Չին, մի ծանրաբալ աննգով և թողեց այն հա-
մարեկութիւնը հոգին, որի նմանը զմուսր թէ միանգամ բնական էր հաշիվն կեր-
պարանքի մէջ, աշխատաւ գուրս հասել տիեզերքի մէջ։

մմտակելով իւր կարողութեանը, անչափ շատ հեռացել էր իւր օթեւանից, այս պատճառով խնդրեց իւր առաջնորդից կատակօրէն, որ նորան դուրս չը բերէ Քլորենտի սահմանից: Գու գիտես, ասաց նա, ինչ որ ես ստիպիւցոյ խոտանալ սուրբ գատաատանին: — Ախիլանին նստեցրեց նորան հանգստանալու մի փոքրիկ հողեղէն բարձրութեան վերայ. և Գալիլէին այս տեղ մտա լինելով ծաղիկներին և խոտերին և ասեա թէ նստած անուշահոտ շոգիների մէջ, մտարեց այն ջերմ կարտու թիւնը գէպ ի աղատութիւն, որ միանգամ Հոովի մէջ գարնան մտանալու միջոցին զարթել էր նորա մէջ: Դա կամնումը այժմ ահա այն վերջին կամիւլ գառնութիւնը, որ զեռ ես կար նորա սրտի մէջ, դուրս թափել իւր անողորմ հալածողների վերայ, բայց իսկոյն զսպեց իւր կիրքը և յանդիմանեց ինքը իւր անձը այս խօսքովս: Կուզեմքիցս հոգին կարելի է թէ բարկանայ իմ վերայ:

Ա իյիանին, որ զեռ ես տեղեակ չէր այն երազին, որի վերայ ակնարկութիւն էր առնում Գալիլէին, խնդրեց որ նա մեկնարանէ այս խօսքը: Բայց այն ծերունին, որի համար երեկոն շատ հով էր և նորա հիւանդ ջիւղերի համար շատ խոնար, կամեցաւ յառաջ վերագառնալ գէպ ի տուն և ապա մեկնել իւր խօսքի խորհուրդը:

Գու գիտես, սկսեց նա խօսել մի փոքր հանգստանալուց յետոյ, թէ ինչպէս աղետալի էր իմ կեանքը Հոովի մէջ և ինչքան յետացաւ իմ աղատիլը բանարդելութենից: Երբ որ տեսայ ես, թէ ոչ իմ պաշտպանների, Եղիշէան իշխանների առաւել զբարւոր բարեխօսութիւնը իմ համար, և ոչ իսկ իմ ուրաստ լինելը այն բաներին որ հաստատած էի, ոչինչ պտուղ և աղիւցութիւն չունեցան: միանգամ սիրտս լցուած անմիտիմար մտածութեններով իմ բազդի վերայ, և հոգիս խոտոված գէպ ի նախախնամութիւնը, ցած ընկայ ես իմ մահճի վերայ և ձայն արձակելով այնպէս բարձր, ինչքան զու կարող էիր միայն մտածել, խօսեցի այսպէս: Ով Գալիլէի, ինչքան անարատ և եղած քո կեանքը, ինչ դժուարութեամբ, ջերմեամեղարար սերելով քո կոչումը, ձանադարհորդելով անցած ես դու մի սուտ իմաստութեան մոլորաշախիղների միջից, որ խնդրելիք այն լոյսը որ չէիր կարողանում գտանել. ինչպէս դու քո հոգու բոլոր զօրութիւնքը գործ ես դրած, որ պատերազմելով հասանելի ճշմարտութեանը և յաղթահարելով գետնին զարկելիք այն հնացած ու արմատացած սխալ կարծիքները որ փակումէին քո ձանադարհը: ինչքան խիստ տնտես լինելով գէպ ի քո անձը, շատ անգամ հրաժարված ես դու սեղանից, որին ցանկացած էր քո սիրտը, և դիմու բաժանը, որ կամեցած էիր դատարկել, յետ ես քարշած քո շրթունքից, որ չը լինէիր զանդադկտ, իմացական աշխատութենների մէջ: ինչպէս զրկած էիր քեզ քնե-

լու ժամերիցը, որ այդ ժամանակը նուիրէիր իմաստութեան, քանի՜ անգամ, երբ ամենեքեան քո շորս կողմումը թաղած էին անարդիւն հանգստութեան մէջ, իւրեանց վաստակած մարմինը նորանոր հեշտասիրութենէն չամար ամբայնելու, քանի՜ անգամ ցրտից զողջացած էիր զուրացման անզուտ, որ նկատէիր երկնակամարի սքանչելիքը, կամ թէ պղտոր անպարտա գիշերնէն մէջ քո լապտերի լուսի մտահան էիր, որ քարոզէիր Աստուածութեան փառքը և լուսաւորէիր աշխարհը: — Ա՛յ թշուառ Գալիլէի, ո՛ր է սպա քո աշխատանքի պտուղը. ինչ օգուտ ունիս զու այժմ այն քո բոլոր վաստակներէց, որոնցով փառաւորեցիր քո Արարիչը և լուսաւորեցիր մարդկութիւնը: Ահա, որ քո սրտի ցաւը քո զան վատարազու թեան վերայ ցամաքեցնուաւ քո աշխարհի տեսողական հիւթքը, որ դոքա, այդ հաւատարիմ օգնականքը քո հօգուտ օրէ օր աւելի գոսանումն, որ շուտով այդ արտասուքը, որ զու այժմ չես կարողանում պահել, քո աշխարհի շքանք որ լոյսը պիտոյ է յախտեան բնաջինջ առնել:

Այսպէս խոսելով ինքս իմ հետ, ո՛վ Ալիլիանի, յետոյ զարձուցի զեմքս լի նախանձով զեպ ի իմ հալածողքը: Այս անարժանները, ասումի ես, որ զազանածածուկ ձևերով վարագուրումն իւրեանց տխմարութիւնը և պատկառելի զգեստով իւրեանց արատը, սոքա, որ իւրեանց դատարկագորտութիւնը՝ լըրարար սնուցանելու համար, սրբազործումն մարդկեղէն խարէութիւնքը որպէս Աստուծոյ ասացուածք, և այն իմաստուն մարդը, որ ճշմարտութեան ջահը զեպ ի վեր է բարձրացուցանում, կատաղարար զեանին են զարկում, որ մի՛ գուցէ նորա լոյսը խախտ լինի նոցա հեշտասիրական քնին. այս վատմար հոգիքը որ միայն աշխատումին իւրեանց մարմնասիրութեան և աշխարհի ապականութեան համար, ինչպէս ծիծաղումն դոքա իւրեանց ապարանքներումը միսերի հոգսի և տառապանքի վերայ. ինչպէս դոքա ամենայն բանից զուրկ էին կացուցել արժանաւոր մարդը, իսկելով նորանից այս և նորա ամենասուրբ ստացուածը, նորա պատիւը: Արպիսի երկիւղածութենով վայր է գլորվում նոցա առաջնայն ժողովուրդը, որի ձեռքից խարերայարար յախշտակած էին նորա արտերի պտուղը և իւրեանց համար ուրախութեան սեղաններ են պատրաստում նորա հասերի պարարտութենից և գինի նորա խաղօղի հիւթից: — Բայց դու, ո՛վ վատարազգ Գալիլէի, որ քո անձը նուիրած էիր Աստուծուն և քո կոչմանը միայն, որ ոչ մի ժամանակ չես թողել, որ արժատանար քո սրտի մէջ մի կիրք, եթէ ոչ այն ամենամաքուր և ամենասուրբ կիրքը, ախոյեան լինել ճշմարտութեան. որ դու, մի աւելի ընտիր քահանայ Աստուծոյ, յայտնեցիր նորա սքանչելիքը աշխարհակարգի մէջ, նորա սքանչելիքը այն շնչին որդնի մէջ, մի՛

Թէ արժան էր քեզ այժմ զուրկ լինել այն մի հաս բանից, որին կարօտով փափագումէիր զու, այն մի հատիկ բանից որ տուած է նոյն իսկ անաստի անասուններին և երկնքի թռչուններին — Ազատութենից, Այդ որպիսի աչք էր որ հակումէ մարդու բազդի վերայ, որպիսի արգար, անկողմնապաշ ձեռք, որ բաժանումէր կեանքի բարութիւնքը, Անարժաններին թողլ է տալիս զա ամենայն բան խլել և սեփականել իւրեանց, արժանաւորները զուրկ և կարօտ է պահում:

Այսպէս գանդասելով, քունս տարաւ. երազումս տեսայ ես, որպէս թէ մտնումէր մահճին մի պատկասելի ձերուծի: Պա զպարեց և լուս հաճութենով նայումէր իմ վերայ, և իմ աչքս, լի հիացքով, զիցայ առաւ նորա մտախոհ ձեւակաւի և արծաթափայլ գանձ զուր գլխամագլի վերայ: Ով Գալիլէի, ձայն տուեց նա, ինչ նեղութիւն որ զու այժմ կրումես, կրումես այն ճշմարտութիւնների համար, որ ես ուսուցի քեզ, և նոյն սնապաշտութիւնը, որ այժմ հալածումէ քեզ, կը հալածէր և ինձ, եթէ մահճը չը լինէր ինձ փրկած յախտնական փրկութենով: — Գու Կոպերնիկոսն ¹⁾ ես, ձայն արձակեցի ես և զրկատանջի նորան, յառաջ քան թէ կարող էր նա պատասխանել ինձ: Յիրաւի քաղցր են, ով Ախիլանի, արիւնի ազգակցութիւնքը որ հաստատել է նոյն ինքն բնութիւնը, բայց ինչքան աւելի քաղցր են հոգու ազգակցութիւնքը: Ինչքան աւելի թանկագոյին և մտերիմ քան թէ եղբայրական սերբը, էին ճշմարտութեան կապերը: Ինչ երանական նախազգացութիւններով, թէ պիտայ է ըն-

¹⁾ Թէ ով էր այս Կոպերնիկոսը, իրուանք ունին հարցնել մը ընթերցողքը: ուրեք թնջ ծանթութիւն տանք և զորս մտին, ինչպէս ծանթութիւն տուցինք Գալիլէի իտալացի մտին: Նիկոլայոս Կոպերնիկոսը, մի հուշակար մտիւնտակոս և աստղագրայի, ծնած է արեւմտեան Եւրոպայի թարն քաղաքումը 1473 թուակ և փախնած 1513ին: Երբ որ նա աւարտել էր իւր ուսումը Կրակովիայումը և սրբաբժշկականութեան վարդապետ արած էր շատ Թանապարհորդութիւնք, իւր հայրենի աշխարհումը ստացաւ մի երեկոյի կանոնիկոսութեան վիճակ և քաղաքի կառավարութիւնք: Այս սեղ իւր պարտոյ ժամանակը գործ գնելով, հանդես ընրեց մի նոր ստղագրայական վարդապետութիւն որ յայտնի է անուանաւ Կոպերնիկոս Էլլիպտիկոս, որ ուսուցանումէ թէ արեկակը պտոյտումէ միայն իւր ստանդքի վերայ: Բայց ոչ երկրի շրթ կողմովը, այլ մանուակը թէ երկիրը շարժումէ արեկակի շրթ կողմով: Այս վարդապետութեանը հակառակորդք շատ գանձվեցան, և մանուակը թէ հակական ինկվիզիցիանի ասեանք մերձեց նորան սրբաւ հիւրսկիտական ուսում, բայց նա ամենայն սեղ յայտնու հանդիստաւ: Կոպերնիկոսն, 1509 թուականին, թարն քաղաքումը, կտուցին մի առանձին յիշատակարան: Այս մեծ մարդու վարդապետութենէն ձեռն առաւել արժանի են ընթերցանութեան Ախիլանքի գրուածք և վարդապետ Ալեսանդրի շարագրութիւնը, ապան 1522 թուականին:

գարձակիլի ներգործականութեան շրջանակը, պիտոյ է առաւելանայ
Հոգու գորութիւնը, պիտոյ է աղատապէս առ ու սուրբ լինի գիտու-
թեան բոլոր գանձերովը, Հանդէպ է գնում մարդ այն բարեկամին,
որ, իմաստութիւնը առաջնորդելով նորան, ներս է մտանում մեր մտա-

Բնա, խոսեց ծերունին գարձակ գրկախառնելով ինձ, ահա միւս-
անգամ տակ էմ ես այն կերպարանքը, որի մէջ փակած էի յա-
ռաջուց և կամիմ այժմ իսկ լինել քեզ, ինչ որ լինելու եմ ազա-
գայումը, այսինքն քո առաջնորդ, Պատճառ այն տեղ, ուր կայան-
քից արձակված Հոգին, անդադար գործականութեամբ, անխառնակե-
լի ազդու միշտ, այն տեղ Հանդիսորդ է միայն աշխատութեան փո-
խանակութիւն. իւր յատուկ Հետաքննութիւնը Աստուածութեան խոր-
քերի մէջ փոխանորդում այն դաստիարակութեան Հետ, որ մեր տա-
լիս ենք աւելի յետոյ եկաւորներին երկրիցը, և առաջինը, որ մի-
անգամ պիտոյ է առաջնորդէր քո Հոգուն զէպի Բնեղրականի գի-
տութիւնը, Դս եմ. — Դս, ձեռքիցս բռնած տարաւ. ինձ մի ցած ի-
ջած անպի մտա և մեր թոխչը առանք երկնքի անշափելի տարածու-
թեան մէջ, Բյս տեղ տեսոյ ես լուսինը, ով Ալիփանի, իւր սա-
րերով ու ձորերով. տեսոյ Երրորդորդի աստղները, Պլէյադքը և
Օրիոնը. տեսոյ Բերգակի բիծերը և Խալիտերի լուսինները. ամենայն
բան, որ ես այս ցած երկրի վերայ տեսած էի առաջին գամը, տեսոյ
այն տեղ աւելի պարզ, անդրաՀասոր աչքով, և շրջեցոյ երկնքի
վերայ Տիանալով ինքս իմ վերայ, ինչպէս երկրի վերայ շրջում մի
մարդասէր Հոգի իւր յատուկ բարեգործութեանների մէջ, Բմենայն
ժամ, որ երկրի վերայ ցաւով ու տառապանքով շահեցուցել էի ես,
այն տեղ պողարեր գարձաւ. երանութենով, որ երբեք չէ կարող զգալ
նա, որ գիտութենից անտեսան մտանում այն աշխարհը, Բյս պատ-
ճառով ահա, ով Ալիփանի, չը կամիմ ես և ոչ այս գորդոջուն Հա-
սակի մէջ դադարել խնդրելուց ճշմարտութիւնը. պատճառ, ով որ
գորան որոնած է այս տեղ, նորա Համար կը վերածաղկի այն տեղ
ու բախութիւն, ուր և գարձաւցանէր իւր աչքը. ամեն մի Հաստատու-
ված տեսութենից, ամեն մի փարատված տարակուսանքից, ամեն մի
յայտնված գաղտնիքից, ամեն մի շքաշող սխալանքից ծնանելու է մի
Հոգեպարար խնդութիւն, ԲՀա, ես զգայի այս բոլոր բաները այն
գմայլիցուցիչ բույճների մէջ, բույց և այս մի Հատիկ բանը որ զգա-
ցի ես, մնացել է ինձ. պատճառ, իմ Հիացքի մէջ ընկզմած Հոգին
չը կարողացաւ այն բոլոր երանութենների ծովումը առանձնապէս
ուշադիր լինել ամեն մի ջոկ երանութեան.

Աչքը որ ես տեսանելով այս բաները Տիանումի նշա վերայ և
արանջանումի այն էակի մեծութեան վերայ, որ այս բոլորը, լի ա-

մնակարող իմաստութենով, սակզեւ էր և իւր միշտ հոգարարձու սիրովը պահում և պահպանում, իմ առաջնորդի խոսակցութիւնը սուեց ինձ աւելի վերին ըմբռնողութիւնք: Աչ թէ քո զգայարանների սահմանքը, ստուժեր նա ինձ, էին և տիեզերքի սահմանքը: Թեպէս անձնածեղի հետաւորութեններից անհամար արեգակներ ուղարկումն իւրեանց փայլողութիւնը զէպ ի քեզ. միւս շատ հազարաւորներ, անկարելի քո սեսութեան համար, փայլումին անվերջ եթերի մէջ. և ամենայն արեգակ որպէս և ամեն մի գունտ որ շրջանակումն ւորան, լցում է զգայուն էակներով և բանական հոգիներով: Ինչ տեղ միայն կարելի էին շախչներ, այն տեղ թաւալումն և աշխարհային մարմիններ, և ինչ տեղ միայն կարող էին երջանկանայ էակներ, այն տեղ ևս կան և շարժումն էակներ: Չը մեաց և ոչ մի թիղ տեղ Անեղբայնութեան բոլոր անշախելի տարածութեան մէջ, ուր անսես Երարիչը չը տեղդէր կեանք կամ թէ կեանքի համար սպասուոր նիւթ. և այս բոլոր անհամար բազմապան էակների մէջ թագաւորում, սկսեալ ամենամեծիցը մինչև ամենափոքր հիւլէն, անդժրելի կարգ. մանջեւաւոր օրէնքներ հիացուցիչ ներդաշնակութենով ձայնարկումն երկրից զէպ ի երկիրք, արեգակից զէպ ի արեգակ: Անմահ իմաստունի համար դրած էր այս տեղ յախտնից յախտան մի անվերջանալի նիւթ նկատողութենների և անսպասելի էր նորա երանութենների աղբիւրք. բայց ինչ օգուտ կար այս բանի ասելուցս քեզ այժմ իսկ, ով Գալիլէի, պատճառ, այդ երանութիւնքը չէ կարող ըմբռնել մի հոգի, որ դեռ ևս մի դանդաղ ընկերակցի հետ կապած, չէ կարող իւր աշխատութեան մէջ աւելի յառաջդէմ լինել քան թէ կարող էր զխանայ իւր ընկերի դժբ, և ահա զգում է իւր անձը դարձեալ յետ քարշված զէպ ի հոլը, երբ որ հոգիւ թէ սկսած էր բարձրացուցանել իւր անձը:

Թող այսպիսի հոգին, ձայն տուեցի ևս, չը կարողանայ ըմբռնել այդ երանութիւնքը իւրեանց բոլորաման աստուածային լիութենով, բայց անտարակոյս է, որ նա, ով Առօրնիկոս, ծածոթ է դոյս և գիտէ դոյս որպիսութիւնը և էութիւնը, Պատճառ, ինչ ուրախութիւնք պարտաստում մարդուս իմաստութիւնը սոյն իսկ երկրաւոր կեանքի մէջ. ինչ զմայլեցուցիչ հեշտութիւն զգում հոգին այս մահկանացու մարմնի մէջ ահա, երբ որ նորա ըմբռնողութենների անորոշ աղտաւուրսի մէջ սկսանում պարզվիլ օրը և գնալով գնալով աւելի պայծառանում նորա փայլողութիւնը, մինչև որ բազմում գիտութեան լիակատար լոյսը, ցուցանելով հիացած աչքին սահմաններ լի անվերջանալի գեղեցկութեններով: Միայն բեր դու, որ այդքան խոր միջամուխ և զար Եստուծոյ գաղտնիքների մէջ և նորա արարչագործութեան

խորհուրդը յայնմի կաշուցիր, միտք բեր այն բոլորն, երբ զարմեցաւ թո մէջ այն առաջին համարձակ մտածութիւնը, և թո հոգու բոլոր զորութիւնըք ուրախութեամբ ձգտվեցան զէպի տյն կողմը, որ բմբունեն այդ մտածութիւնը, կերպարանեն և կարգադրեն նորան. միտք բեր, երբ որ թո բոլոր նկատողութիւնըք զարմանալի համաձայնութենով կապակցած միմեանց հետ պսակել էին շինուածը, թէ ինչ արբեղած սիրով զարձեալ աչքի տակ ձգեցիր զու թո հոգու զեղեցիկ գործը և իմացար թո նմանութիւնը այն Անեղրականի հետ, որի վերայ կարող էիր զու մտածել: Այո՛, այո՛, ով իմ առաջնորդ զու, և այս երկբաւոր կեանքումս իմաստութիւնը ճոխ է երկնային ուրախութեններով. և եթէ այդպէս չը լինէր, ապա ինչո՞ւ համար պիտոյ է, նորա զոգումը նստած, այնպէս խաղաղ աչքով նայէինք աշխարհի ունայնութենների վերայ:

Այն ամէր, որ կրումեր մեզ իւր վերայ, խոնարհված էր զէպի երկիր և, ինչպէս թվումեր ինձ, ցած իջաւ այժմ շուտի սարերից մինի վերայ: Աշխարհի մայրաքաղաքը դրած էր մեր աչքի առաջև. բայց, լի խորին արհամարհանքով, վերևից զէպի ի ցած պարզելի ձեռքս և խօսելի պայպէս. թող իր բեանց աչքումը մեծ երկին այդ ապարանքների հպարտ բնակիչները, ըստ որում ծիրանի զգեստով զարդարած էր զոցս մարմինը և ոսկի ու արծաթ զոչս սեղանների վերայ յուցանումին այն առաւել թանգագին բաները, որ տալիս են Աւրոցան և Հնդկաստան: Բայց ինչպէս արծիւը նայումեր այն որդնի վերայ մետաքսեղէն հիւսուածի մէջ, այնպէս ևս նայումե իմաստունը այդ պահասամիտների վերայ. պատճառ, զորս կապած էին իր բեանց հոգովը, որ շին կարող զուրս գալ այն հոգեղէն թերթիցը որի հետ մտածուած էին, բայց ազատ իմաստունը վեր ելանելով իւր բարձր գիտանոցի վերայ, աչքի տակ է ձգում աշխարհը, կամ թէ նկատողութեան թեկերի վերայ բարձրանումե զէպի Աստուած և զբունումե աստղների մէջ:

Արբ որ ևս այսպէս խօսումի. ով Ախիլանի, մի հանդիսաւոր ծանրութենով թողպեցաւ իմ առաջնորդի երեսը, նորա եղբայրաբար զրկախառնող ձեռքը բաց լնողեց ինձ, և նորա աչքը արձակեց մի սպասնաղին հայեացք մինչև իմ հոգու ներքը. ով անարժան զու, ձայն տուեց նա, մի թէ զու այդպէս ահա զգացել ևս երկրի վերայ այն երկնային ուրախութիւնըք, թո անունը փառաւորել ևս ազգերի իմաստուն մարդերի առաջև, աճեցուցել ևս թո հոգեղէն կարողութիւնըք, որ նորա շուտով արձակվելով իր բեանց հոգեղէն կապանքից սկսանեն աւելի ազգու ներդործել և յախտեան յառաջ գնալ ճանաչելով ճշմարտութիւնը. և այժմ երբ որ Աստուած արժանացու-

ցել է քեզ հալածանք կրելու, երբ որ քո խմատութիւնը պիտոյ է քեզ արժանաւոր կացուցանէ, և քո սիրաբ պիտոյ է զարգարքի առաքիտութեններով, որպէս քո հոգին պայծառ ճանաչութեններով, այժմ այդ բոլոր բարութենների յիշատակը ջնջվել է ամենին, և քո հոգին ամպտամբելով վեր է կենում ընդդէմ Աստուծոյ:

Այս տեղ զարթեցայ ևս իմ երազիցը, և տեսայ իմ անձը երկրի բոլոր վայելչութենից դարձեալ ներքև ձգած իմ անապատ բանտի մէջ, և արտասուքի հեղեղով լուսչի իմ մահիճը. ապա բացեցի աչքս գիշերային խաւարի մէջ և խոսեցի այսպէս. ո՞վ առատաւեր Աստուած, այս ոչինչը, որ քեզանով դարձաւ մի ինչ, անհասան է դտանվել քո ճանապարհներին. այս հող ու մեխիրը, որին տուէցիր դու հոգի, իւր արժանաւորութեանն է ընծայում այն բանը որ քո սողորմութեան շնորհն է. այս անարժանը, որ դու սնուցած ևս քո լանջքի վերայ և քո հայրական սրտի մտ, որին դու բաշխել ևս ինչ ինչ կաթիլ երանութիւն քո յատուկ բաժակիցը, մտացել է քո շնորհը և իւր պատուականութիւնը. Չարկիր սորա աչքը կուրութեանով, թող որ երբէք չը լսէ նա բարեկամութեան ձայնը, թող ծերանայ բանտի մէջ, և յօժար հոգով համբերէ այդ վշտին, շնորհակալ կենայ յիշատակելով իւր վայելած ու բախտութիւնքը և երանի տայ իւրեան, սպասելով հանդերձեալ կեանքին:

Այս իմ բոլոր սիրան էր, ո՞վ Ախիւանի, որ ևս դուքս բղիկեցուցի այս աղօթքի մէջ, բայց ոչ թէ զժգոհի միմունջը, այլ շնորհակալու սրտի յօժարեամբ հնազանդութիւնը լսել էր Աստուած, որ տեղծեց ինձ այդքան երանութենների համար: Տես ահա, ևս ապրումամ այս տեղ ազատ, Երչեալի սահմանումը, և այսօր առաջին անգամն է, որ իմ բարեկամը բերել է ինձ գարնան ծաղիկների մէջ:

Գալիլէին որոնեց իւր աշակերտի ձեռքը, որ շնորհակալու սրբտով սեղմէ նորան, բայց Ախիւանին վեր կալաւ իւր վարձապետի ձեռքը և պատկառանքով մտնեցուց նորան իւր շրթունքին:

3. ԻՒ ՀՐԵՆՏԵԱՅ ԿԵՆՑ:

Արպէս վերջին ժամի հրեշտակ, որ մեք խիտա բառով ասումենք Մ-՛, ուղարկվումե մեզ առաւել քաղցրասիրտ և զթած հրեշտակը, որ մեղմապէս և հեղորար բաժանէ կեանքից մարդու համբած սիրաբ, և ասք ձեռքերով, առանց ճնշելու, տանէ նորան ստան կուրծքիցը զեպ ի վերին ջերմացուցիչ եղեմը: Նորա կըրայրը է առաջին ժամի հրեշտակը որ երկու անգամ համբուրումե մարդու երեսը, առաջին անգամը, որ սա սկսանէ երկրաւոր կեանքի ասպարեզը, երկրորդ ան-

գամը, որ նա վերևումը առանց ցաւի դարձնու. և ժպտելով մտանէ միւս կեանքի մէջ, ինչպէս լալով մտած էր այս կեանքի մէջ.

Արբ որ պատերազմի գաշտերը լցուած էին արիւնով և արտասուքով, երբ որ վերջին ժամի հրեշտակը զոգոզողուն հոգիներ դուրս էր քարշում մարմիններիցը, ապա արտասուքով լցվեցաւ նորա քաղցրահայեաց աչքը և խօսեց նա. «Մէ, ևս կամք ունէի մեռանել միանգամ ինչպէս մի մարդ, որ կարողանայի փորձով իմանալ նորա վերջին ցաւը և հանգստացնել նորան, երբ որ վերացնումի նորա կենդանութիւնը: Անհամար դասք հրեշտակների, որ երկնքումը սիրումի միմեանց, ժողովեցան զժամախրտ հրեշտակի շորս կողմը և խոստացան սիրելի հրեշտակին, թէ մահու. բողբոջ յետոյ լուսեղէն կամար կը կապեն նորա վերայ, որ իմանար նա թէ այս է մահը. և նորա եղբայրը, որի համբոյրը մեր ստած շրթունքը արձակումէ, ինչպէս առաւօտեան ճառագայթը պաղ ծաղիկները, քնքուշ սիրով զրկեց երեսը նորա երեսի վերայ և ասաց. «Եթէ միսանգամ համբուրեմ քեզ, իմ եղբայր, ապա դու մեռած էիր երկրի վերայ և դարձեալ դատնութեան մեր շարքումը»:

Արբաը լցուած զժով ու սիրով, ցած իջաւ հրեշտակը պատերազմի գաշտի վերայ, ինչ տեղ դեռ ևս մի գեղեցիկ աշխոյժ երեսասարդի սիրտ արտօումը նորա ջաղջախմած, տակաւին շարժուն կուրծքի մէջ. այն քաջ տղամարդի մտ կանգնած էր միայն իւր հարսը, բայց սորա ջերմ արտասուքը անզգալի էր նորան. հարսի լաջը և սուզը հնչումի միտայի շրջակայքումը որդես մի հետաւոր պատերազմի աշտակ, Աղորմելի տեսարան, հրեշտակը շուտով ծածկեց երեսասարդի մարմինը և հարսի պէս կերպարանք առած գրկատունեց նորան և մի ջերմ համբոյրով դուրս ծծեց նորա վերաւոր հոգին ճեղքած կուրծքի միջեց — և տուեց իւր եղբորը, եղբայրը միսանգամ համբուրեց հոգին երկնքումը և նա ժպտեցաւ ահա:

Ա երջին ժամի հրեշտակը, որպէս մի կայծակի շառաւիղ միջամուխ եղաւ այն անաղատ կերպարանքի մէջ, բորբոքեց մեռելափն և զօրութիւն տալով սրտին, սկսեց նոր ի նորոյ շրջաբերել ջերմացած կենդանական հոսանքները, բայց ինչպէս էր նորա գրութիւնը այս մարմնաւորութեան մէջ, նորա լուսապայծառ աչքը ընկզմեցաւ նոր ջլակագժ հոգու պողպտքների մէջ, նորա լուսուն մտածութիւնը այնուհետեւ դանդաղ քայլով ման էին գալիս ուղեղի գոլորշապատի մէջ. ամենայն առարկաների վերայ ցամաքեցան այն խօնաւ քնքուշ գունախոյլութիւնը որ մինչև այժմ աշնանային հոգութիւն էին տարածում իրենանց շրջակայքումը. նորա տօժագին օղի միջեց սկսելին ծակել նորան, այրել, ցաւեցուցանել և սևացուցանել գունաւոր բիծե-

րով. բոլոր ախտերը մտնեցան նորան աւելի աղտոտած, աւելի կատաղարար և աւելի մերձատրապէս և երևումին նորան բնական ազգեցութիւն, ինչպէս մեզ անասունների բնական ազգեցութիւնը. սովզ ասնջումեր նորան, ծարաւը այրումեր նորան և ցաւը կեղերումեր նորան. ո՛հ, նորա խորտակված արիւնաշաղախ կուրծքը սկսեց բարձրանալ և նորա առաջին շնչառութիւնը էր նոյնպէս նորա առաջին յոգոցճանութիւնը իւր թողած ու հրաժարված երկնքի վերայ: Այս է ահա մարդու մահը, մտածումեր նա իւր մէջ. բայց չէ տեսնելով մահու խոտոտացած նշանը, ոչ հրեշտակ և ոչ լուսեղէն կամարակապ, խեղճն խելամուտ եղաւ, որ այս բանը միայն է մարդկային կեանքը:

Արեկոյեան պահուն նուազեցան հրեշտակի հողեղէն զորութիւնքը, և մի ճնշողական հողագունտ, ասես թէ, թաւալումեր նորա գլխի վերայ. պատճառ, քանը ուղարկեց իւր պատգամաւորքը. ներքին պատկերները փոխարեւոյն իւրեանց արեւախալութենէնց զէպ ի մի գոլորշախառն կրակ, ուղեղի մէջ ընկած ցերեկի սառւերքը խառնակվեցան միմեանց հետ ամենեին անկարգ և անձոտնի կերպով, և մի սանձարձակ զգայականութիւն գլուխը բարձրացնելով յարձակվեցաւ նորա վերայ. պատճառ, երազը ուղարկած էր իւր պատգամաւորքը: Աւերջապէս քնի դիպարդը կրկնապատիկ պարզվեցաւ նորա վերայ և քնի գերեզմանի մէջ ներքև թողած, կար նա միայնակ և սառն, ինչպէս մ.թ. թժուառ մարդիկս լինումները այն տեղ, Բայց յետոյ, զու, ո՛վ երկնային երազ, քո հազարաւոր հայելի պատկերներով հանդիպեցար նորա հոգուն և տեսակ տեսակ կերպերով ցոյց տուցիր նորան հրեշտակների դասք և մի լուսեղէն կամարակապ, և հողեղէն մարմինը ասես թէ ազատվել էր իւր նիւթական խժամներից: Ա՛հ, ասաց նա, ի զուր հիանալով իւր բազդաւորութեան վերայ, ուրեմն իմ ննջումն էր իմ մեռանելը, Բայց որովհետև նա միւսանգամ զարթեցաւ ճնշած սրտով և շողախոված մարդկային արիւնով և տեսաւ երկիրը և գիշերը, սպա խօսեց այդպէս. Սա չէ մահը, այլ նորա պատկերը միայն, թէև տեսած էի աստղաղարջ երկինքը և հրեշտակների դասքը:

Աւերախոխված նահատակի հարսը չէ գիտէր, որ իւր սիրած աղամարդի կուրծքի մէջ բնակումներ մի հրեշտակ. նա սիրումեր զեռ ևս նորա անճեւտացած հոգու ուրուականը, և զեռ ևս բռնած էր իւր հրաժարված բարեկամի ձեռքը: Բայց հրեշտակը նախանձելով իւր յատուկ կերպարանքին, մարդկեղէն սրտով վերստին սիրեց հարսի խաբված սիրտը. նա չէ կամեցաւ աւելի յառաջ մեռանել քան թէ հարսը, որ կարողանայ այնքան երկար սիրել սորան, մինչև նա միան-

գամ երկնքումը կը ներէր սորան, որ սա փարփելով մի հաստ սերկի լանջքի վերայ, գրկախառնել էր միանգամայն և մի հրեշտակ և մի սիրական, Բայլ հարսը մեռաւ աւելի յառաջ. անշամ օրերի աղէտքը շատ խոր կորսուցել էին այս ծաղիկի գլուխը և սա ջարդած ու փշրած մնաց իւր սիրածի գերեզմանի վերայ: Ո՛հ, նա ծածկվեցաւ արտասուող հրեշտակի աչքի առաջէ, ոչ որպէս այն արեգակը, որ վայելչահասակաց բնութեան հանդէպ ընկղճուած ծովի մէջ, և սորա կարմրախոյլ կոհակները վեր էին զարկում ղեպ ի երկինք: Այլ որպէս հանգարտ լուսինը որ կէս գիշերին արծաթազտուած իւր փայլը և գունաթափելով անհետանում անզգալի: Մահը յառաջուց ուզարկեց իւր աւելի հեղ քոյրը, սրտի թափաշումը. սա շուշափեց հարսի սիրտը, և նորա ջերմ երեսը պաղեցաւ, նորա թշերի ծաղիկները թառամեցան, ձկնան գունաթափ ձիւնը, որի տակին ծլում և կանաչում անանց մշանջննաւորութեան գարունը, սրտեց նորա ճակատի և ձեռքերի վերայ: Այս տեսարանը գուրս ճնշեց հրեշտակի լցուած աչքերից մի այրող արտասուք. և այն միջոցին, երբ որ նա մտածուէր թէ իւր սիրտը մի արտասրի կերպարանքով բաժանվում էր իւրեանց որպէս մի մարգարիտ իւր փափկացած տաշախիչը, ապա արթնացաւ հարսը որ վերջին անգամը խելագարփի, միսանդամ բացեց աչքերը, գրկախառնեց նորան և մեռաւ, երբ որ համբուրել էր նորան, այսպէս խօսելով. Այժմ քո մտ կ'ը, եղբայր, Այժմ կարծեց հրեշտակը, թէ իւր երկնային եղբայրը առած էր նորան համբոյրի և մահու նշանը. բայց նորա վերայ չը պատեց ոչինչ լուսնդէն կամարակապ. այլ մի տրտմութեան խաւար, և նա յոգոց հանեց, իմանալով որ այս բանը չէր նորա մահը, այլ մարդկային սրբտի ամենջանքը մի ուրիշի մահու վերայ:

Ա՛յ գուր տառապեալ մարդիկ, ինչպէս կարող էիք դուք, վատակածներդ, զիմանալ այդ ցաւին. ո՛հ, ինչպէս կարող էիք դուք ձերութեան հասանել, եթէ այդպէս ջաղջախփումին ձեր ծաղկափթիթ հասակների ծառատունկերը, և ապա գլորվումին հողի մէջ. եթէ ձեր բարեկամների գերեզմանքը այն սանդուղներն էին, որոնց վերայով ներքև էիք իջնում դուք ձեր յատուկ գերեզմանի մէջ, և եթէ ձերութիւնը էր մի սառած պատերազմական գաշախ անբարբառ և անպատ երկեղեղեան ժամ: Ա՛յ անբող մարդիկ, ինչպէս կարող է ձեր սիրտը այդ բանին տանել:

Ա՛ւրախութեալ նահատակի հոգին հեղ հրեշտակի կերպարանքով փոխադրվեցաւ խառասիրտ մարդերի մէջ, նոցա անիրաւութենների, յանցանքի և անտարբութեան տգեղ և անճոռնի կերպարանքների մէջ. այ՛ո՛, այն երկնային, ղեպ ի մարդկեղէն աշխարհը ցած իջած

Հրեշտակի քամակը կորացուցին երկամի գաւազանների տակ, որ ող-
ջոյն աշխարհներ ճնշումէին զեւր ի գետին, որ և մեծատունները, ջոկ
ջոկ բռնաորներ ամեն մինը իւր սահմանի մէջ, որէ որ աւելի ծանրա-
ցնումն. հրեշտակը տեսնումը պակաղարդ, նշանաւոր գաղանների
ճանկերը որ գերիտումին արդէն փետուրը զգած որսը և լուսմը սորա
թոյլ թեւաշարժութեանով հոգեմարբը. նա տեսնումը բոլոր երկրա-
գունտի վերայ սեւածանուկ ուրակապ սղերով պատասխան յանձնքի
վիշապ զժը, որ իւր թունաւոր գլուխը խորամուխ արած ծածկում
մարդկային կուրծքի մէջ: Ա՛հ, այս բաները տեսնելով, նորա փա-
փուկ սիրտը, որ մշանջնաւոր ժամանակով կացած էր սիրալից քաղ-
ցրը հրեշտակների ընկերութեան մէջ, վերաւորվեցաւ մի գառն ասե-
լութեան խոցով, և այն սուրը սիրալից հոգին դարձաւ բեցաւ այս ներ-
քին երկրպատակութեան վերայ իւր մէջ, Ա՛հ, ձայն արձակեց նա,
ցաւ և ինձ մարդուս մահը. բայց ո՛չ ով յանդիման չէր, որովհետեւ
չերեկցաւ ոչինչ հրեշտակ:

Ընտուհեան հրեշտակը մի քանի օրի մէջ ծանձրացաւ այն կեան-
քից, որին համբերումը մեր կէս դար, ցանկացաւ հրածարվիլ այս
աշխարհից: Արեկոյնեան արևը քարշումը նորա ազգակից հոգին. նո-
րա փնտրած կուրծքի փշուրները ցաւեցնելով սպառումին նորա զո-
րութիւնը, Արեկոյնեան սղը գունաթափ թշերի վերայ, դուրս գնաց
նա զեւր ի գերեզմանատունը, այն կանաչապատ յեանակողմը կեան-
քի, ուր արտաքին պատեանքը բոլոր զեղեցիկ հոգիների, որ սովոր
էր զգեստաւորել ինքը, լուծանվելով հոգ էին դառնում: Քաղցր ու
ցաւելի կարտուութեանով կանգնեց նա անպատմելի սիրական ննջեցեալ
հարսի մերկ գերեզմանի վերայ և նայումը զեւր ի թառամեալ երե-
կոյնեան արևը: Ընտ տեսնել տաղանի վերայ նկատեց նա իւր ցաւա-
լից մարմինը և մտածումը այսպէս. Դու ևս լուծանվելով պիտոյ և
հոգ դառնայիր այս տեղ, ո՛վ իմ թուլացած կուրծք, և այսուհետեւ
չէին լինելու ոչինչ ցաւք, եթէ չը պահպանեի քեզ սօքի վերայ:
Ընտուհեան սկսեց նա հեղութեամբ մտածել մարդու ծանր կեանքի
վերայ, և իւր վերաւոր կուրծքի տրոփմունքը վկայութիւն տուեցին
նորան, թէ ինչ ցաւերի գնով ստացած էին մարդիկ իւրեանց առա-
քնութիւնը և մահը. թեպէտ շատ յոճարութեամբ կանցած էր այս
ցաւերից ազատել այն մարմնի մէջ բնական ազատ հոգին: Շատ խոր
շարժվեցաւ նորա սիրտը մարդկային առաքնութեան վերայ, և նա
անչափ սիրելով մարդկութիւնը, արտասուեց, որ հողածինքը, ստիպ-
ված իւրեանց բնագատող պիտոյներից, ստորաքարչ անպիտի տակ և
լայնատարած մասախուզների քամակումը կատարելով իւրեանց կեան-
քի որոշեալ ճանապարհը, այնու ամենայնիւ չեն դարձուցանում իւր-

եանց աչքը պարտականութեան արեղակնային աստղից, այլ իւրեանց խաւարի մէջ սիրողապէս տարածուած իւրեանց գիրկըրը զեպ ի ամենայն ամենջված կուրծք որ հանդիպումեր նոցա, և շունէին ոչինչ այլ հոգեպայծառ յոյս, քան թէ արևի պէս ծածկվիլ հին աշխարհումը և երևել նորումը, Այս քաղցր հիացքը բացեց նորա վէրքը, և արիւնը, հոգու արտասուքը, թափվեցաւ նորա սրտից սիրելի դամբարանի վերայ, խախտաւ և լուծական մարմինը քաղցրապէս արիւնասպառ լինելով գլորվեցաւ հոգի մէջ զեպ ի իւր սիրական հարսը. երանական արտասուքներ ընկզմեցին արևամուտքը մի վարդակարմիր հոսական ծովի մէջ, մի բաշակայ արձագանգ, որպէս թէ երկիրը հնուց անց էր կենում հնչողական եթերի միջով, ելևէջ էր առնում խոնաւ փայլողութեան միջից, Ապա մի մութ ամպ, կամ թէ մի սակաւատեղ գիշեր անց կացաւ հրեշտակի մտից և լի էր քնով, Այժմ մի ճառագայթազարդ կամար կապվեցաւ նորա վերայ և հազարուոր հրեշտակներ պատեցին հրափայլ թևերով, Այս տեղ եւ զու գարնեալ, ով խաղարկու երազ, խոսեց նա. բայց առջին ժամի հրեշտակը մտեցաւ նորան ճառագայթների միջից և համբոյր տալով նորան, ասաց. Ահա, այս է մահը, ով զու մշտնջենաւոր եղբայր և երկնաքաղաքացի բարեկամ— նոյն բանը կրկնեցին և երեսուսարդը և նորա սիրական հարսը:

Վ.Ը.Բ.Բ.Ը.Գ.Բ.Թ.Թ.Ի.Ի.Ն.Բ.:

1. ՀՊ.ԵԿԻԵՅԻ ԹԵԳԵՆՈՐ ԿԵՐՈՒՍՍ ՏԵՍԵՐՈՒԵՐՈՐԷ:

Կարոլոս 12 երորդը, որ ասվում է Լիսիսի առիծ, մի դարձանայի երևելթ մարդկութեան մէջ, էր Կարոլոս տասն և միերորդի և թագուհի Ալբրիկե Ելէոնորէի որդին, ծնած 1682 թուականի յունիսի 27ին: Մանուկ արքայազը, պարզե ստանալով բնութենից մի արագ բմբուռողութիւն և աջողակ ընդունակութիւնը, գերազանց յառաջադիմութիւնը ցոյց աուեց պատմարանական, աշխարհագրական և մտքեմտարկան գիտութեանների մէջ. նորա ընթերցանութեան սիրելի գիրքը էր Քուրցիոսի պատմութիւնը Ալէքսանդրի քաջագործութեանների: Մի առանձին քանքար ուներ նա և սաար լեզուներ ուսանելու համար, այնպէս որ շատ հեշտութեամբ ուսաւ գերմանական, լատինական և զաղղական լեզուն, թէպէտ նա վերջինը արհամարհումը և երբէք չէ խօսած որպէս թագաւոր, և ոչ իսկ օտար զեսպանների հետ: Նորա դաստիարակների մէջ, որ Հվեղայի ամենապատուելի ուսումնական մարդիկն էին, իւր աշակերտի բոլորամասն վրաստահութիւնը ստացաւ մանաւանդ թէ Երբիս Բենցելիոս անունով կրօն-

ուսոյցը որ մի բազմազեա աստուածարան էր, որ և յետոյ Կարոլոսի
հրամանով կարգվեցաւ Լոյսկոպոս Աւիսալայի: Կարոլոսը 15 տարե-
կան էր, երբ որ նորա հօրըը մահաւանջեցաւ, և սա կամեցած էր,
որ իւր որդին մինչև իւր 18 տարին մնայ հոգաբարձուների իշխանու-
թեան տակ և նորա մեծ մայրը Հեղզիդ Ելեոնորէ անունով յանձն
առնու կառավարութիւնը: Մանուկ կրակոս Կարոլոսին անտանելի էին
երևում այս հոգաբարձութեան երեք տարիքը. նա ցանկանումը ան-
կախութեան և արդարև իւր սիրելի և առաջին նախարար կոմս Պի-
պերի գործակցութենով հասցրեց բանը այն տեղ, որ ժողովրդի փո-
խանորդքը տակաին 1697 թուականին քարոզելին նորան չափահա-
սակ. Բայց լինելով կառավարիչ թագաւոր, այնու ամենայնիւ շատ
փոքր հոգացողութիւն ունէր թագաւորութեան մասին. Այս գործե-
րը, որ պահանջուեցին իմացական աշխատութիւն և մարմնաւոր հան-
դիսա միանգամայն, տակելի էին նորան. նա սիրումը սաստիկ մար-
մնաւոր շարժողութիւնք, զոր օրինակ սրախաղութիւն, հեծելութիւն,
արջօրսութիւն, էին նորա սիրելի պարագայութիւնքը: Այսպիսի ձգտո-
ղութիւնքը, այլև նորա լիբա վարքը, նորա հոգաբարձութիւնը և իրա-
տապարանցութիւնը տեսանելով Շվեդացիք, չունէին պատճառ, ոչ-
ինչ օգտուէա բան յուսալու իւրեանց նոր թագաւորից: Դեռ ևս ոչ
ով չը գիտէր թէ ինչ բաներ քնած էին նորա մէջ. նոյն ինքն Կարո-
լոսը ծանօթ չէր այն հնարներին, որ պիտոյ է առաջնորդէին նորան
դէպ ի փառք. հարկաւոր էր այս տեղ մի խեղճ, նորա մեծամեծ
ընդունակութիւնքը զարթուցանելու և նորա առաջև մի փայլուն ա-
պարեզ բանալու համար: Այս խեղճը չուտով գտանվեցաւ: Աստուց
ահա դրացի թագաւորութենների նախանձը շարժել էր այն քաղաք-
կան գերակշռութիւնք, որ Շվեդիան ունէր Եւրոպայի հիւսիսակող-
մումը, մանաւանդ թէ սկսեալ Օլիվեան խաղաղութեան դաշնիցը: Ա-
րևմն, երբ որ մանուկ Կարոլոսը, որ երևումը թէ ապրումէ միայն
որսորդութեան համար, աթոռ նստեց, դրացի տերութիւնքը կարծու-
մէին, թէ ահա ժամանակ էր խոնարհեցուցանել այս թագաւորու-
թիւնը: Եւ այսպէս երեք թագաւորք, Գաննմարքիայի Քրիզրիկոս
չորրորդը, Պրոյնիայի Քրիզրիկոս Օգոստոսը և Ռուսաստանի Յար Պետ-
րոս առաջինը, որ սրտումը խորհուրդներ յղեցած լինելով իւր տե-
րութիւնքը բարձրացնելու համար, շատ կարտուով ցանկանումը մի նա-
ւահանդիսա ունենալ Բալտեան ծովի վերայ, դաշն կապեցին ընդդէմ
Շվեդիային և պատճառեցին մի հրայրեացք որ չուտով տարածվեցաւ.
նոցա թագաւորութենների և բոլոր հիւսիսի վերայ. քսանամեայ պա-
տերազմի նշանը տուեց Գաննմարքիան: Սա անիրաւարար յարձակվե-
ցաւ. Հոլտեկյն-գոտտորպեան Դուքսի վերայ և 1700 թուականին պա-

շարեց Քեօնինդն քաղաքը, պահանջելով որ դուքսը հրամարդի իւր, յառաջուց ապահով կացուցած, թագաւորութիւնից: Սա անուանացած լինելով Կարոլոսի քուեր հետ, շտապեց զէպ ի Շվեդիայի պալատը և սցնութիւն խնդրեց իւր խնամուցը. Կարոլոսը առանձնապէս սիրելով այս ազգականը, զգլխացաւ Գաննեմարքիայի ընթացքի վերայ և խոստացաւ սցնութիւն: Զօրքի հարկապետոջը հոգալուց, այլև ներքին կառավարութեան համար կարգադրութիւններ առնելուց յետոյ, այնպիսի կարգադրութիւններ որոնց զօրաւորութեան վերայ զարմացած մնաց թագաւորութեան խորհուրդը, հրաման արձակեցաւ, որ նաւերը իւրեանց զօրքերով յառաջ խաղան, Նա ինքը 1700 թուականի մայիսի 8ին թողեց Ստոքհոլմը, որ երբէք չը վերադառնայ այն տեղ: Կարլըրոնույումը նաւ նստեց նա, նորան կրող նաւի անունը էր «Կարոլոս թագաւոր»: այնպիսի ահագին մեծութեամբ, որ մինչև այժմ անսած չէր. նա կրումը իւր վերայ 120 թնդանոթք: Ախճակը ընկել էր ահա. Կարոլոսը դուրս էր հանել իւր սուրը պատեւից, որ միտանգամ ներս չը կտէ նորան: Երբ որ Գոտտօրպի կուսակիցների զօրքը աննայն կողմից վերայ հասանելով ներս խաղացին Լօլստէյնի մէջ ընդդէմ Գաննեմարքացոց, նոյն միջոցին յաջողեցաւ Շվեդացոց նաւերին այնպէս մտանալ Կոպենհագեն մայրաքաղաքին, որ կարելի էր ստրակոծել նորան: Կարոլոսը առաջարկեց զէպ ի ջամար դուրս գալ և ցամաքի կողմից սկսանել պաշարել Կոպենհագենը, որ ծովի կողմից փակած էր արդէն: Զօրապլուխ Քեօնշիլդը համաձայնեցաւ այս առաջարկութեանը, զայնմանալով այն բանի վերայ, որ մի այդպիսի խեղաքի և համարձակ խորհուրդ լուսմը մի անխորձ մարդու բերանից: Շվեդացի պատերազմական նաւերը արձակելով իւրեանց թնդանոթները, զոցա հետ միասին ներգործելով և Լօլլանդացոց և Ենդլիացոց ֆրեգատքը որ միտցած էին նոցա հետ, Շվեդացոց զօրքը ջամար է դուրս գալիս Լուսթրիերքի մաս, մի քանի մղոն հեռաւորութենով Կոպենհագենից, Գաննեմարքացիք հասարկ էին այն տեղ իւրեանց հեծելազօրքը և պատրաստել էին մի քանի թնդանոթներ: Կարոլոսը լինելով յառաջագին նաւակներից մինի վերայ, չը կարողացաւ սանձահարել իւր անհամբերութիւնը. 300 քայլաչափ զեռ ևս հետի լինելով եզերիցը, ձգում է իւր անձը ծովի մէջ, սուրը ձեռքին. պաշտանաւորքը և սուկականքը հետևում են նորան, և Գաննեմարքացի ամենասաստիկ կրակի տակից, Շվեդացիքը ոտք են կոխում ջամաքի վերայ: Կարոլոսը, որի համար տակաւին մի անձանոթ բան էր հրացանի ներգործութիւնը, հարցնում է իւր կողքին կանգնած զօրապլուխ Մօրտարից, թէ այս ինչ շտապիւն է. «Ե.Յ.Է էր թըընամիներէի գնտակները,» պատասխանեց սա. «բարեք է, ասաց թա-

գաւորը, այս թող այսուհետեւ լինի զա իմ առաւել սիրական երա-
ժշտութիւնը, և կոսմոսագետներ անձնատուր եղաւ և պոստոսի 5/ն
կարողութիւնը թեկադրեց Տրաքիոնիական հաշտութեան գաղթ, որի զորու-
թեանով նորոգվեցաւ Ալթանայիական գաղմարութիւնը, և Գաննմար-
քիական պարտական էր Գոստորպի դուքսին հասուցումն առնել և խոս-
տանալ, թէ ոչինչ պնտութիւն տալու չէ Էվեդիպի թշնամիներին,
Բայց կարողութիւն առաւել քաղցր էր այն պարծանքը, թէ 6 շար-
թի մէջ աւարտած է պատերազմը:

Այն միջոցին, երբ այս անգամ լինումը Գաննմարքիայումը,
Պոլոնիայի արքայ Օգոստոսը պաշարած ունէր Տիգան որ այն ժամա-
նակ Էվեդոսոց Արիլանդիա գաւառի մայրաքաղաքն էր, բայց չէ կա-
րողացաւ սիրապետել նորան, Եղնայեւ քաջ ընդդիմացաւ Ինգերման-
լանդիայի մէջ Կարվա ամրոցը այն Ռուսական ամրութիւն որ ըստ մա-
սին զինաւորված նետերով ու լախտերով բերել էր Յար Պետրոսը,
վայրենի գաղաններն պէս մտա քշելով, կարողութիւն զմտեց, որ յառաջ
պատերազմով դնայ Պետրոսի վերայ, 16000 հետեակ և 4000 ձիա-
ւորք 200 անցուցանող նաւերի վերայ ծովային ճանապարհ հասա-
րելով ցամաք գուրս եկան Պերնաու քաղաքի մտա, կարողութիւն 4000
հետեակ ու ձիաւոր մարդով միւսերից յառաջ գուրս եկաւ, Բեվայի
վերայից ընդդէմ խաղալով թշնամուն, Կորս հանդէպ գուրս բերած
գունդերը առանց կուռելու դէպ ի փախուստ գարձան, 1700 թուա-
կանի նոյնքը, 20ին երկու կողմի զորքերը հանդիպակաց էին միմեանց,
Ինքը կարողութիւն կարգադրեց թէ ինչպէս լինելու էր կռիւը, մի քա-
նորք մամի մէջ Էվեդոսիք յարձակվելով առան Ռուսաց ամրաշէն
բանակը և երկոյնի վճապէս յաղթող գաւնվեցան տանապատիկ
աւելի բազմաթիւ թշնամու վերայ, Կա ինքը կուռի միջոցին մի մե-
րուս տեղում կորուսանելով մի կոշիկը, յառաջ էր գնացել գուլ-
պալով, Երգարն այս անուանի յաղթութեան օրը խորհրդաւոր էր
կարողութիւն բոլոր կեանքի համար, զա բորբոքեց այն, յաղթութեանով
արբեցած, 18 տարեկան երիտասարդի սրտումը մի այնպիսի սանձա-
կետոր հակամտութիւն դէպ ի պատերազմական բանակ ու կռիւ, ո-
րով պապակց նա իւր թագաւորութեան բոլոր կարողութիւնը, Այնու-
հետեւ գարձաւ նա մի լոկ պատերազմող և իւր կենցաղաւարտութեան
մէջ, նա հրամարվեցաւ ամենայն ուրախութեանց, որպէս հասարակ
զորական հանգստանումը կոչաւ մահճի մէջ, ուսումը խոչոր կերա-
կուր, կուռքը հասարակ դէստ և թշնամի էր ամենայն վայելչասի-
րութեան, մանաւանդ թէ գինու և կանանց մասին, Մի սակաւա-
գիւտ համեստութեան սպացոյց տուեց նա, կռիւր աւարտելուց յետոյ,
այն բանովը, որ կուռի յայտարարութեան մէջ իւր յատուկ ձեռքով

քննեց ամենայն խօսքեր, որ քաղցր էին կարգաւ անձնասիրութեան
 համար, բայց կարող էին վերաւորել Պետրոս Յարը, Մի յանկար-
 ծահաս ահ ու զող եկաւ Ռուսաստանի վերայ, և Պետրոսը կորած
 էր, թէկ Վարդապետը կամեցած լինէր օգուտ քաղել իւր յաղթութե-
 նից և իւր բոլոր զօրութենովը յարձակվել Ռուսաստանի վերայ,
 Ինչպէս հետ կարողացած կը լինէր նա կործանել Պետրոսի մանուկ
 հիմնարկութիւնը Ֆինլանդեան ծովածոցի մէջ. նորա յատուկ, և Եւ-
 բոսպոլսի քաղցը գոցել թէ ստանալու էր մի աւելի յաջող ընթացք.
 բայց Վարդապետը կարծելով սխալարար, թէ մի զարկուածով անլնաս
 էր կացուցած Ռուսերը, յառաջ չը գնաց իւր յաղթութեան սասա-
 բեղի մէջ, այլ դարձաւ զէպ ի Պոլսոնիս, որ յաղթահարել իւր ան-
 վտանգ, թէպէտ շատ ստելի թշնամին, արքայ Օղոստոսը, Սա հան-
 դիպելով Պետրոսին Վիտլանդիայի Բինգըն քաղաքումը, աւելի ամուր
 միասորվեցաւ. նորա հետ Վարդապետը բոլոր ձեռքը անցուցանելով Նար-
 վայի շրջակայ Վայս անուն տեղումը, 1701 թուականի գարնան մի-
 ջոյին երևեցաւ Վիֆլանդիայի մէջ ոչ հետի Նարվայից, Սարսոնիայի
 զորքերը Գրեմս գետի երկայնութենով, այն տեղ ուր այս գետը առա-
 ւել լայնանումէր, ճակատեցուցած էին, որ միւս գետերի վերայ
 կանգնած Ըվեղացոցը թող չը տան անցանել այս կողմ, Ըվեղացիք
 փորձելին անցանել գետը յուլիսի 9 թուականին. Վարդապետ, մի Գե-
 ներալ - Աղիտանտ ֆէյտերքրանց անունով և մի մանկլաիկ ֆլին-
 քով շարեւ՛ անունով նորա հետը, գտանվումէր մի փոքրիկ նաւակի
 մէջ, ոչ հետի այն ուրա՛ն՛գ զննուորներից որ պիտոյ է սկսանէին
 յարձակումը. նոյն իսկ գործի միջոցին, կոչումէր նա հետոտա, ա-
 աջնորդելով հետեակ զօրքին, Սարսոնիայի հետեակ զօրքը քաջու-
 թեամը զէմ կացաւ, բայց երբ որ պահեստի գունդերը, 24 բառա-
 լիսն Ռուսք, զէպ ի փախուստ դարձան, յառաջ քան թէ մտած է-
 ին կրակի մէջ, ստիպվեցան և Սարսոնացիքը յետ քարշվել սաստկա-
 պէս յառաջդէմ Ըվեղացոց երեսից, որ թէպէտ չէին բաղմամբ,
 բայց աւելի գերազանց պատերազմական արուեստի մէջ, Վարդապետ չու-
 սով սորանից յետոյ գնաց Միտաու. կուրլանդիայի բոլոր քաղաք-
 ները խոնարհեցան նորան. նորա ընթացքը նման էր աւելի մի ճա-
 նապարհորդութեան քան թէ մի պատերազմական շուրի. անյոպաղ
 յառաջ գնաց զէպ ի Վիտլանդիա և այն տեղից զէպ ի Պոլսոնիս,
 հաստարկիմ բարեկամութեան ուխտ և դաշն քարոզելով Պոլսոնիայի
 հասարակապետութեանը, այլև պաշտպանութիւն առաջարկելով նո-
 րան իւր թագաւորի բանաստեղծեան երեսից, Օղոստոսը զարհուրե-
 լով այս բանի վերայ, ու զարկեց նորա հանդէպ իւր գեղեցիկ համանին
 Աուրորա Փօն ֆեօնիհամարք, որ այն մանուկ քաջ տղամարդի սիրտը

որսոյ սիրոյ թակարթի մէջ, Բոյց Կարոլոսը չը յիմարացաւ Սամ-
փունի պէս Գալիլայի գեղեցկութենով, նա թողլ չը տուեց, որ յան-
գիման երևի նորան Աուրորա գեղեցկուհին, այլ պատահելով նորան
մի փոս ճանապարհում, ուր շէր կարող զէպ ի այլ կողմ շնորհել,
զգտելը վեր առաւ և առանց մի խօսք ստելու, դարձուց ձին:

1702 թուականի մայիսի 14ին, Կարոլոսը առանց ընդդիմութիւն
գրանելու ներս մտաւ Ալարսովիայի մէջ և ծածուկ խորհրդակցու-
թիւնը առնելով մանաւանդ թէ դահերեց Կարգինալ Բողձիկյոսիկու-
հետ, որ համախօս էր Ֆրանսիական - Վորիսակեան կողմին, յայտնեց,
թէ այն պայմանով միայն տալու է հասարակապետութեանը հաշտու-
թիւն, և թէ կամէին մի այլ թագաւոր ընտրել, Բանը այսպէս լինե-
լով, Օգոստոսը հասկացաւ թէ կրուով միայն պիտոյ է վճարի ար-
քայական ամուսին վերաբերեալ խնդիրը, Շտապով մտաւ և գանչում
իւր Վարսոնաչիքը, հաւարում և սակաւամիտ, հաւատարիմ մնացած
Պոլոնացիքը և յուլիսի Մին համարձակում և կրի քանալ Կարոլոսի
հետ Կլիսով քաղաքի մտաւ Բոյց , Վարսոնիայի հեշտուակը հսկան ,
ընկզման փափկութեան զրգանքի մէջ, չը գիտեր զօրքի առաջնորդ
լինել. թէ և նորա գրութիւնը, նայելով երկրի հողին, շատ յաջո-
ղակ և գրեթէ անմտանալի էր, այնու ամենայնիւ յաղթվեցաւ միան-
գամայն: Այն մէծ աւարի մէջ որ Շվեդացոց ձեռքը անցաւ, կային
500 կանայք Օգոստոսի ընկերակցութենից. Վորսոնց անեղծ ու անա-
բատ յետ ուղարկեց Կարոլոսը, Բոյց և յաղթողքը ունէին ողբալու
մի կորուստ. Կարոլոսի խնամին, Լոյստեյնիայի դուքսը, որ ինչքան
չըջանկատ նոյնքան և քաջ զօրավար էր, սպանվեցաւ մի թնդանութի
ոմբով նոյն իսկ առաջին յարձակման միջոցին, Կարոլոսը դարձաւ
այլմէ գէպ ի Կրակովիա. յուլիսի 31 թուակ. հասանելով այս տեղ,
յառաջ ևն գնում Շվեդացիք Բաղնիքեան քաղաքագաւթի միջովը
մինչև ներքին քաղաքի փակած դարպասը որ և բռնութեամբ առնու-
մեն, Քաղաւորը լինելով մինը առաջին ներս մտանողներից քաղաքի
մէջ, հալածում և կուսակալը, Ստարոստա Ալիլայոսիկին, որ փախչու-
մէ գէպ ի ամրոցը, և սորա հետ միասին ներս է մտանում Կարո-
լոսը, Ահա մի թնդանութեանի Լէյսեմանա կամելում մի այլ թնդ-
անութի արձակել որ ուղղած էր այն դարպասի վերայ, որի միջով
ներս էին մտանում Շվեդացիք, քոյց Կարոլոսը վերայ հասանելով,
ձեռք է ձգում այն պաշտանաւորի ձէրքը, դարկում նորան գետնին
և խլում լուցիկն ձեռքիցը, Ի դուր եղաւ կայսերական նախարարի,
Կոմս Յինդնգօրթի աշխատութիւնը մի հաշտութեան դաշն հնարաւո-
րելու Շվեդիայի և Պոլոնիայի մէջ. Բոյց սորա հակառակ մի այլ
հանգամանք խախտանքի գրանցեցաւ Կարոլոսի մեծամեծ առաջար-

կուժեններին. միանգամ ձիով ման էր գալիս թագաւորը բանակի մէջ. վրանների շուանքը փաթաթվելով ձիու ոտքերին, վայր ընկաւ ձին և խորտակեց թագաւորի ձախոյ բարձքը: Օգոստոսը ուրախանալով այս անջքի վերայ, յոյս ունէր մի փոքր բարեկարգել իւր գրութիւնը, և շուտով աւարտեց Լիւրլինումը այն տէրութենական խորհուրդը որ, ինչպէս հրատարակված էր յառաջուց, պիտոյ է լինէր Յանգովեր քաղաքի մէջ. Եւր խորհրդի մասնակիցքը յայտնեցին իւրեանց կուսակցութիւնը նորա հետ և վճուեցին որ 50,000 մարդ զօրք պատրաստ լինի թագաւորի կամքը կատարելու համար: Բայց անկալութենից զուր շուտով առողջացած էր Կարոլոսը և սկսեց իւր գործակատարութիւնը հրովարտակ արձակելով թէ լինելու է մի տէրութենական ժողով Վարսովիայի մէջ, հակառակ Լիւրլինեան ժողովին: Նորա քանքը և քանադուրութիւնը այն էր և մնաց միշտ, որ աթոռից ներքեւ ձգէ Օգոստոսը, Նորա աւելի բանադէտ զորավարները հասկանումէին այս ընթացքի անխոհեմութիւնը, այսինքն այս տեղ: Պոլնիայի մէջ, կամակորութեամբ ժամաւաճառ լինել մի անհարկաւոր բանի վերայ և անհոգութեամբ թողլ տալ Թուսերին զօրանալ, որ Լիթվանդիայի և Ինգլիսիանդիայի մէջ անդադար կոխ ունենալով Շվեդացոց հետ, կրթումէին պատերազմական արուեստումը: Եւ նորա մտերիմ մերձաւորքը չը ծածկեցին իւրեանց ահաճութիւնը այդ բանի վերայ. բայց այդպիսի ազդարարութիւնք ոչինչ չը կարողացան ներգործել Կարոլոսի խստապարանոց կամակորութեան վերայ. նա թող տուեց, որ այն երկու թագաւորական ժողովքը գրչի ծայրով պատերազմն միմեանց հետ, բայց ինքը զօրացնելով իւր կողքը նորաւոր օգնութեններով Շվեդիայից, որոնումէր իւր թշնամի Սաքսոնացիքը: Սքառ տեղի տուեցին և բուղ գետի վերայով յետ քարշփեցան. Կարոլոսը մի հուն գտաւ, իւր ձիաւորների հետ լող տալով անց կացաւ գետիցը և հանդիպեց նոցա Պոլսուսկի մտա: Եյս տեղ կանգնած էին 10,000 մարդ որոնց առաջնորդումէր մարեջախտ Ստէյնաուս. Կարոլոսը 1703 թուականի ապրիլի 21ին յարձակված թէ չը յարձակված թշնամիների վերայ, այս կնամարդիկը իսկոյն դէպի փախուստ դարձան: Ենօգուտ եղաւ Ստէյնաուսի փորձը, երկու գունդերով մի վայրկեան ընդդիմանալ Շվեդացոցը, և նա ստիպվեցաւ փախաւական լինել և ցրվեցաւ նորա զօրքը:

Կարոլոսի առաւել մերձաւոր նպատակը այն էր, որ տիրապետեալն ամրոցին, ուր Օգոստոսը իւր ամենայն տեղ չարզված զօրքերի մնացորդովը պատսպարան էր որոնած, բայց չը կարծելով իւր անձը ապահով այս տեղ, թողած էր այս քաղաքը, և զօրաժողով լինելու համար շրջումէր Պոլնիայի այն գաւառներումը, ուր զեռ ևս եկած

էին Շվեդացիք: Թօնն ամբողջ պաշարումը սկսվեցաւ սեպտ. 22ին. գնդապետ Ռեօրլը 5000 մարդով պաշտպանեց իւրեան յանձնած ամբողջ մի ամիս երկար, յետոյ անձնատուր եղաւ որպէս պատերազմական զերի:

Ըստմ րուական երկար ժամանակ անց կացաւ տունց նշանուոր պատերազմական հարուածների, բայց նոյնքան ևս գործական էր քաղաքականութիւնը: Օգոստոսը յիրաւի վայր ձգվեցաւ ամբողջ և նորա փոխանակ արքայ գրովեցաւ Պօզննիայի Աւշիվոզ Ստանիսլաուս Լեսչինսկին, այնու ամենայնիւ աշխարհի խաղաղութիւնը չը հաստատվեցաւ միսանգամ. երկու կողմերի, այսինքն Սաքսոնական և Շվեդեան Տերաւածների կոխը յառաջ գնաց կատաղութեամբ: Երբ որ Կարոլոսը նոր թագաւորի ընտրութեանը Աարսովիայի մէջ ներկայ էր գտանված, զարձաւ դէպ ի իւր զօրքը հաւաքված Լեւերբոգի հանդէպ, որ 1704 թուականի ոգոստոսի 6ին շրջափակվեցաւ և միւս օրին արշաւանքով աւովեցաւ: Երժանի է գոյասանութեան, այն ժամանակի համար, թէ ինչպէս բարեկարգ ընթացք ցոյց տուեց Շվեդացոց զօրքը, սորա, ներս մտած քաղաքի մէջ, կարգադրվեցան ամեն մարդ իւր տեղումը, և թէպէտ զանազան համարաք տարածված էին քաղաքի մէջ թաքցրած մեծամեծ զանձերի մասին, բայց ոչինչ զորական զուրս չեկաւ իւր կարգից որ կողոպտէ: Քաղաքի վերայ յարձակվելու միջոցին, Կարոլոսը, Ախրանմերբոգայի թագաւորազնի Տեա, զարձեալ մինն էր առաջիններից որ սուր կոխեցին քաղաքի պատուարի վերայ:

Բայց Օգոստոս թագաւորին յաջողեցաւ խորել իւր հակառակորդը. նա փրապետել էր Աարսովիային, ուր գնդապետ Լօտը 1500 մարդով նստած էր, և հալածել էր Ստանիսլաուս թագաւորը, Կարոլոսի երևելը միայն թուական էր, միսանգամ անսրուղ կացուցանելու Օգոստոսի ստացուածքը. այնուհետև զարձաւ նա դէպ ի Էուլընբուրգը, որ Պօզննի մէջ մի սաքսոնական գնդի հրամանատար էր, բայց այժմ աւելի կարող Շվեդացոց երեսից շատ զժուարութեան մէջ ընկաւ: Եյնու ամենայնիւ, այս խոհական և քանքարաւոր զօրագլուխը կարողացաւ շատ պատուաւոր կերպով ձեռքել և անցանել թշնամիների միջից և դուրս բերեց անկարելի երևեցած անուանի յետագարձը Օղբը գետի վերայով: Երբ որ այս բանի համարաք լսեց Կարոլոսը, ձայն արձակեց. Եյսօր յաղթած է մեզ Էուլընբուրգը:

Ըստպէս ահա հնազանդեցրած էր Պօլոնիան, խոնարհեցուցած էր Գաննմարրիան, նորաչէն թագաւորը Պրուսիայի որոնուներ Շվեդիայի շնորհը, և Օգոստոսը ձանձրացած իւր անյաջող խաղից, հետացած էր դէպ ի իւր սաքսոնական կալուածները: Ըստմ Կարոլոսը

կանգնած էր այն տեղ յնձալով սրպէս յաշխոյ . բայց մի թշնամի, ըստ երևութիւն յաղմված, սրէ սր աւելի բարձրացնուաւր գլուխը . այս մարդը էր Ռուսաց մեծ Յար Պետրոսը, որ, ինչպէս վերևումը ակնարկութիւն եղաւ, շատ թուլարարօգնելով Յարստանացոյ, այս տեղ աւ այն տեղ ոտքը յառաջ էր գրել Ինգերմանլանդիայի մէջ, այն 1703 թուականին սկսել էր շինել մի նոր մայրաքաղաք Ռուսաց թագաւորութեան, տակաւին Շվեդական Տոզի վերայ, և կարճ միջոցում տիրապետեց բոլոր աշխարհին . Պետրոսը ժողովուրդը փորձականութիւն, ընդունուաւր իւր պաշտանի մէջ բնաւ գործակատարներ, սոյնորեցնուաւր Ռուսերին պատերազմական կարգ և կանոն . բայց ամենից առաւել պիտանի էր պատրաստութիւնը այնպիսի նաւերի, որ կարող էին բարևան ծովի մէջ ճակատ առ Շվեդական նաւերին : Նորոց հանդիպելով միմեանց Գոտչնայի մէջ Պետրոսը և Օգոստոսը, խորհարգ արեցին . և 1705 թուականի հոկտ. ամսին 70,000 մարդ Ռուսք ոտք կոխեցին Պոլանական սահմանի վերայ, Եւսն միջոցին, երբ որ Կարոլոսը ընդգեմ գնաց նոցա և շատ տեղերում զարկեց նորանց, զիպող ժամ գտանելով Շուլթրուրգը 20,000 մարդով անշանուաւ Օղըր գետից և 1706 թուակ. յունվ. 12ին կսիւ է տալիս Շվեդեան զնդապետ Ռենշիլդի հետ Ֆրանս շտաբթ քաղաքի մօտ . Շվեդացիքը 2 ժամից յետոյ և այս տեղ մեռք բերեցին յաղմութիւնը . բայց մի ամբողջութեամբ ապականվեցաւ Շվեդեան զորագլխի պարձանքը . սա գերի տանելով 1500 մարդ թշնամիներից, հրամայեց սրով մաշել այն ողորմելիքը որ ծուր իջած աղաչել էին խնայել նոցա կեանքը . բայց Կարոլոսը շուտով ներս ընկաւ Շվեդիայի և Վաուդիցի վերայով Յարստիայի մէջ, չը հոգալով ապանալիքը Գերմանիայի թագաւորական ժողովի, որ միտ գնելով իւր պատուին հակառակ դուրս եկաւ այդպիսի ասպատակութեան գերմանական Տոզի վերայ, Կարոլոսը ոչինչ տեղ ընդդիմութիւն չը գտաւ . զանգակները զարկելով, գրեթէ ինչպէս 1630 թուակ. Գուստաֆ Աղօլֆը, ընդունվեցաւ նա սրպէս պաշտպան սրտեստտական հաւատին . Սակաւութիւ սարսոնական զորքերը որ չէին Գրեղզի, Տորգաւի և Ախտանբերգի մէջ, յետ վախան մինչև Տիւրինգեան անտառի ներքը, Կարոլոսը հաստատեց իւր սխևանը Ալթրանշթեղի մէջ, ոչ հետի Վիտցենից, և այնուհետև սկսեց հարկահանութիւն գործել բոլոր Յարստնիայից, զորաժողով լինել և հրամայել սրպէս իշխան, Հասարակ զորականը ստանուաւր որը 2 ֆունտ հաց, երկու ֆունտ միս, երկու շաբի գարնհիթ և մօտ 5 կոպէկ արծաթ բանջարի համար . Բաց ի սարանից, թաշաւորուաւր զորքի մէջ մի ամենախիտ կարգ և կանոն, ամենայն կամահաճոյ փաստ որ զորականներից հասած էր հպատակներ-

րին, փոխարինու մեր, և գործողը պատժու մեր խտտապէս: Կարոյաւ,
այնքան մերձաւոր լինելով Ախիջըն քաղաքին, յանկացաւ տեսանել
այն պատերազմի դաշտը ուր նորա մեծ նախահայր Գուստաֆ Եղորթը
1632 թուականին ապանված էր: Երկու քաղաքացիք, որ իւրեանց
Տօրերի աւանդութենէից ճշդապէս ծանօթ էին այն տեղին, առաջնոր-
դեցին նորան: Ապա Կարոյաւը իւր մերձակայ մարդերին, այսինքն
Վիւրթրերդիայի արքայաղնին, Կոմս Բենշիլդին, Նիրսթին և միւս
պաշտանակալներին մեկնեց թէ ինչպէս ճակատեցուցած էին այս տեղ
զորքերը, մի ըստ միջոէ երկու հակառակորդ կողմերի զորագունդերը
որոշելով, և կերեց իւր ծանօթարանութիւնըր այսպէս. «Աս աշխա-
տած եւ՛ մ այնպէս ապրել ինչպէս նա, Ըստուած տայ ինձ այնպիսի
վերջ, ինչպէս նորան»: Օգոստոսը, որի վերայ սասանութիւն էր բե-
րել Կարոյաւի այսպիսի բնաւորութիւնը, իսկոյն Պալմենայից ուղար-
կեց նորա մտա իւր խորհրդականը Իմֆօն և Փֆինդսան անունով,
որոնց իշխանութիւն էր տուել հաշտութեան դուռն բանալու: Սո-
քա Կարոյաւի հետ շտապով մի դաշն կապեցին, որ զեռ ևս կարտա էր
միայն Օգոստոսի հաւանութեանը: Բայց նոյն միջոցին Օգոստոսը ստի-
պած լինելով օգնել Ռուսերին Կարելի մտա, որ մի կտիւ ունէին Շվե-
դացոց հետ, թաքցրեց Ռուսերից իւր արած դաշնախտութիւնը, և
որովհետեւ պատահմամբ յաղթող գտանվեցաւ, ապա փառքով ու պատ-
ուով ներս գնաց Վարտովայի մէջ և համբու տարածեց թէ իւր խո-
տած հաշտութիւնը Կարոյաւի հետ սուս բան էր: Բայց ուխտազանց
թագաւորը բաւական չուսով հարկադրեալ գտանվեցաւ հրաժարել
Ռուսերից և ինդրել Կարոյաւից նոյն հաշտութիւնը որ մի փոքր յա-
ռաջ ուրացած էր: Դստ անձամբ անձին հանդիպեցաւ Կարոյաւին, Օգոս-
տոսը հսկայածեւ, բայց փափկամարմին և կնամարդի, արուեստական
մտղերով և սովհեհիւս զգեստով, բայց Կարոյաւը աւելի փոքրահասակ,
ամենին որպէս բուն զորական, մտղերը կարճ խուլած, փոքրիկ զգակ
զլիսին, և ինչպէս սովոր էր կրել, մի կապոյտ պատմածան խոշոր
ասուեղէնից և պղնձի կոճակներով, կաշնդէն վարտիքով, երկայն կո-
րաքիթ կոշիկներով և մի մեծ սրով, Ալբրանշթեզուեր կապվեցաւ
խաղաղութեան դաշը: Շվեդացիին պահանջեց, որ Օգոստոսը մշտապէս
հրաժարի Պալմենայից, նորա վերայ թագաւոր խտտութեան Կտանիա-
լաոսը, յետ քարշլի ամենայն հաղորդակցութենից Շվեդիայի թըշ-
նամների և մանաւանդ Ռուսերի հետ, թողլ տայ Շվեդացոց ձմեռնայ-
ին օթեան ունենալ Կարսանիայի մէջ և դուրս տայ Աիֆլանդացի
Պատկուլը որ այն միջոցին Ռուսաց զեկայան էր Կարսանիայումը: Օգոս-
տոսը պիտոյ և յանձն անուր այս բոլոր բաները, և այնքան վա-
թար գտանվեցաւ մինչև դուրս տալ վերջիշեալ Պատկուլը: Սորան

ուշինչ չը համարելով Կարոլոսը, եթէ ոչ մի Լիթիանդայի, ուրե՛ն իւր բուն հպատակ, այլև քրեական յանցանքով պարտաւորված, առանց միտ դնելու կամ թէ անղեակ լինելու ազգերի իրաւունքին, որով Պատկու զեասպանի կեանքը պաշտպանվումէր որպէս մի սուրբ բան, Կարոլոսը սուրի սակ կոխելով ամենասուրբ բնական իրաւունքը, մեծամտելով իւր կարողութեան վերայ, հրամայեց կենդանոյն փշրել նորա սակերը, զխառակ նորան և շորս կոտոր ճնդրել. մի անջընջելի կեղտ անուն Կարոլոսի վերայ: Այլև կամեցած էր Կարոլոսը ձեռք բերել այն վատթար հոգի Գլեմինցը, բայց սա լաւ ճանաչելով իւր տիրոջ թուլութիւնը, ինքը իւր համար հոգաբարձու եղաւ փախստական լինելով դէպ ի Պրուսիա, ըստ ի սորանից Կարոլոսի կացութիւնը Յարսոնիայի մէջ շատ արժանի է յիշատակի. ճանապարհին ահա, երբ որ անց էր կենում Էլեղիայից, օգնութիւն խնդրեցին նորանից խաստպէս հալածված Պրուսաստանտները. նա խոստացաւ օգնել նոցա, մի պարզախոս նամակ գրեց դէպ ի կայսրը, այլև հրամայեց, որ շորս զորագունդ ներս խաչան Էլեղիայի մէջ, եթէ հարկաւոր կը լինէր, բնութեամբ վերստին ստանալու այն եկեղեցիքը որ Յիսուսեանքը իւրել էին Պրուսաստանտներէց, և ստիպեց կայսրը, որ այն միջոցին զբաղած լինելով Ֆրանսիայի հետ, կամք չունէր մի նոր թշնամի յարուշանել իւր վերայ, զարձայանել Լուծերականնէրին 125 եկեղեցիք և 6 հատ նորուց շինել, բոլոր նշանաւոր տերութիւններէց զեկայաններ ուղարկվելով նորա մտ, հետամուտ էին վերահասու լինել այն առաջարկութիւններին, որ այս քաջ աղամարդի հոգու մէջ ծածկած էին. Սոցանից մինը, ինչպէս երևումէ, կարողացաւ միայն իսկամուտ լինել զոցա, այսինքն Յարլորո զուրքը. այլև սորա խօսքով համոզվելով Կարոլոսը, խաղաղութիւն շնորհեց գերմանական թագաւորութեանը, եթէ Կարոլոսը զաշնաւորութիւն հաստատէր Լուղովկոս տան և չորսերորդի և Սուլթանի հետ, Գերմանական թագաւորութիւնը անպատճառ ստանալու էր իւր անբողջութիւնը. Երգարև Կարոլոսը, միայն թէ կարողացած լինէր չափաւորել իւր անէը, հաստատ մնալու էր այն բարձր կարողութեան աստիճանի վերայ, որին հասուցել էր նորան Ալթրանշթեղեան հաշտութեան դաշը. Եւրոպական տերութիւնքը խոստովանեցին նորան որպէս արքայ Պոլոնիայի, և Ռուսաստանը զժուար թէ կը հրաժարվէր մի ընդունելի հաշտութեան դաշից. բայց Կարոլոսի ամբարտաւանութիւնը կամ թէ նորա ճակատագիրը առաւ տարաւ նորան դէպ ի խորխորատ. նա կամենումը նոյնպէս ամտոից վայր ձգել Յարը, ինչպէս արած էր Օգոստոսի հետ: Սիրտը լցուած այս խորհրդով, 1707 թուականի օգոստ. 22ին, Ալթրանշթեղից զուրս եկաւ 45000

մարդով, որ գայ Ռուսաստանի վերայ: Սվոր վայրի մտ, սեպտ. 11ին, անց կացաւ նա Պոլտնիայի սահմանից. մի անշան կուռից յետոյ, ոչ հետի Գրոզնոյից, Շիլոգաշիք անց կացան Նիեմն գետի սառուչի վերայով և տիրապետելին Գրոզնոյին, որ Ռուսերը և Նոյա հետ Պետրոսը, մի գիշեր յառաջ թողած ու գնացած էին: Կարոլոսը ունէր իւր մտա 600 ձիաւոր միայն. այս բանը իմանալով Յարը, ուղարկեց գնդապետ Միւլենթելը 1500 ձիաւորով, որ գիշերով յարձակէին քաղաքի վերայ: Սաստիո թեւամբ վերայ վազեցին Ռուսերը, այնու ամենայնիւ դաշտի պահապանքը այնքան երկար ընդդիմացան թշնամուն, մինչև պտորաստվեցաւ քաղաքագահ զորքը և հալածեց թշնամիքը: Կարոլոսի խորհուրդը, որ էր տակալել Ռուսերը դեպի մի վճռական կռիւ, անկատար մնաց. անդադար հալածելով փոխաստական թշնամին և շատ անգամ մեծ նեղութիւններ կրելով, հասաւ նա, 1708 թուակ. յունիսի 15ին, այն գետին, որ աւելի քան թէ 100 տարի յետոյ պիտոյ է այնքան հաշակաւոր անուն ստանար աշխարհի պատմութեան մէջ, այսինքն Բերկլինային: Յիրաւի հարց ու խնդիր էր եղած, թէ արդեօք, եթէ շվեդեան զորքը աւելի յառաջ խաղար դէպի Ռուսաստանի ներքը, յուսալի օգուտը հաւասարակշիւ էր այն ձախորդութիւններին և վշտերին, որ պիտոյ է յանձն անուր նա, այդքան շատ հեռանալով իւր հայրենի աշխարհից: Բայց թագաւորի պատերազմախրտութիւնը չը դիտէր ոչինչ սահման. այլև միւս պատճառներ յորդորումէին նորան ներս յարձակելի Ռուսաստանի մէջ, Այսինքն, Մաղեպպա, Հեթմանը Կոզակների, անգոհ լինելով Ռուսաց իշխանութենէց, վազուց սպասումէր պատեհ ժամանակի, որ ազատէ իւր անձը այդ լծի տակից: Դա 25.000 Կոզակներով մտանցած էր այժմ Ասլինիայի սահմանին և սղայմանախոտութիւն արեց Սոանիսլաուսի հետ, որ պիտոյ է յորդոր մատուցանէր Կարոլոսին ներս յարձակելի Ռկրայինի մէջ: Այս գաւառի պտղաւետութիւնը, որպէս և ամենեւին յարմարութիւնը պատերազմ մղելու համար, ըստ որում այս տեղից կարելի էր ներս մտանել Ռուսաց աշխարհների մէջ, այլև համարաւ թէ շատ մարդիկ դառնացած լինելով կտառվարութեան վերայ, սպասումէին միայն օտարականների գալստեանը, որ ապստամբութեան զրօշակը վեր բարձրացնեն, ստիպելին Կարոլոսը ընդունել Մաղեպպայի առաջարկութիւնը: Բորոսովի մտա անց կացան Բերկլինա գետը. յուլիսի 4ին, Վարիս գետի միջով, ուր ընկնացաւ նա մինչև վիղը, յառաջ խաղալով խորտակեց Ռուսաց պատնէչքը Գօլովի տեղի մտ, և Մօզիլի տա անցանելով Գնեպր գետիցը ընկաւ Ղալմուխների մէջ որոնց շատերը սպանեց իւր յատուկ ձեռքով, և հառածելով թշնամին, որ միշտ փոխաստական էր լինում և իւր քամա-

կից ասերակ էր կացուցանում ամենայն բան, հասաւ մինչև Եմբընեակի սահմանը, Եմբընեակի վերայով գնումը ճանապարհը ղեկ էր Գոսկիւս - բայց Կարոլսը, իւր զորքի ակնկալութենից զուրս, թողեց այս ճանապարհը և դարձաւ ղեկ էր Ռեկրային, Գեուսնա գետի մօտ պիտոյ էր Գաղեպոյան 30.000 մարդ կողակներով, իւր շատ նշանաւոր գանձերով և բաւական մեծ պաշարով ու պատերազմական հանդերձանքով միաւորվէր նորա հետ: Գեկ էր նոյն կողմը շտապումը հետուից, Լեյբլանդիայի կողմից, քաջասիրտ Լեոպոլտովի մի ահագին պատերազմական և կերակրեղէն պատրաստութենով որ բարձած էին 8000 սայլի վերայ և սոցա հետ 16000 պահապան զինուորք: Վաստակներ ճանապարհների որ պիտոյ էր ընտրէր Կարոլսը, որք որ յաւելացնումը զժողովրդները, Գնդապետ Լաղերբրանն, որ 5000 մարդով և շատ մշակներով յառաջ էր գուրս եկած, մնորովեցաւ ահագին անտանների մէջ և մոլորեցուց բոլոր զորքը: 15 միլոնաչափ խոտորիւ էին ճանապարհից, և երբ որ 4 օրից յետոյ, նկատեցին իրենց սխալմանը, բաւական շատ թնդանութներ և սայլեր կորած էին ճախիմների մէջ: 12 օր անասելի տառապանք և ամենանկեղէն կարտութիւն կրելով, հասաւ վաստակած զորքը Գեուսնայի եղբուններին, Բայց փոխանակ գտանելու Գաղեպոյան պայմանեալ տեղումը, գետի միւս կողմի արևմտը կանգնած էին Ռուսները որ և մի փոքր ժամանակ ընդդիմանալով յետ քարշիկեցան, Մի քանի օրից յետոյ երևեցաւ Գաղեպոյան որպէս փախստական, նորա գիտաւորութիւնը ապտամբեցուցանելու Ռեկրայինը, մասնորոթեալը յայնմ վէլ էր Ռուսներին, որ և յարձակվեցան կողակների վերայ, խորասկզբին շտապը, իրեցին Շվեդացոց համար ժողոված պաշարքը, կողպակցին ամենայն տեղ և այրեցին քաղաքներ ու գիւղեր, 6000 կողակ, որ փախստական Գաղեպոյայի հետ միացան Շվեդացոց հետ, ահա շնչին պատուգը այն դաշնաւորութեան որ Կարոլսը արած էր այդպիսի թանգ գնով: Նոյն միջոցին, այսինքն 1708 թուակ. սեպտ. 29ին, Ցարը Լեյբնայի մօտ յարձակվել էր զնդապետ Լեոպոլտովի վերայ, լինելով սա ճանապարհի վերայ ղեկ էր Ռեկրային, Շվեդացոց ամենաքաջ ընդդիմութիւնը զուր և անօրոտ գտանվեցաւ աւելի քաղվամիւ թշնամու. առաջն. 7000 պաշարաբեր սայլեր ընկան յաղթողների ձեռքը: համարեալ թէ բոլոր շվեդական զորքը ցրվեցաւ կամ թէ խորտակվեցաւ, Եւս յաղթութեան հետեանքը անհաշուելի մեծ էին, Կարոլսի քաղքը, երևումը, թէ հասած է իւր շրջանադարձին. նորա այրական քաջութիւնը փոխվեցաւ իշխանական ամբարտաւանութիւն, նորա բաղդի տառուգ պիտոյ էր հրաժարվէր նորանից:

Եւս զոտող Կարոլսը, թէև ամենախուր գրութեան մէջ էր,

այնու ամենայնիս արհամարհեց խոհեմութեան խրատը որ էր յետ
դառնալ զէպ ի Պոլսնիս: Նա հաստատեց իւր ձեռնային օձեւանը
Ռեհրայնի մէջ, Ահարկու ձմեռը լցուց նորս տառապանքի պակասոր-
դը. զօրակները մտա կերակրից ու զգեստից անասելի նեղութիւնք
կրեցին, հազարաւորներ մեռան ջրախց, Էփեզիայից չէր կարող ոչինչ
լուր հասանել նոցա. արդարեւ այն տեղ ժողոված էր նոր զօրք և
կար արծաթ ևս, բայց դոքա պիտոյ է 280 մըն ճանապարհ կատա-
րեին և թշնամիների միջով, Պետրոսը ամուր և հաստատ մնաց իւր
միանգամ գրած կանոնի վերայ, որ էր թշնամին փոքրիկ կոխներով
մաշել ու արորել, և զգուշանալով գլխաւոր կոխներից որոնց մէջ
Էփեզացոց զօրքը շատ բանով զերպանց էին Ռուսերից, որսալ նո-
րան Ռուսաստանի անտապանների ներսը, ուր սուլը և ցուրտը ինքնին
ոչնչացնելու էին նորան: Սկիւթացիքը ահա վաղաժամանակեայ գա-
րերի մէջ գործ էին գրել այդ հնարը Գարեհի արշաւանքի միջոյն.
նոյն հնարը գործ գրեցին Ռուսերը 1812 թուականին Նապոլէոնի
ներս յարձակելու ժամանակին: Չմեռը անտօր սաստիկ լինելով,
սահմանվեցաւ զինադադարութիւն որ և Ռուսերին ցանկալի էր, բայց
գալոց (1709) տարու փետրվար ամսից նոր ի նորոյ սկսվեցան թշնա-
մութիւնքը: Կարգուք իւր յոյսը դրել էր մի գլխաւոր կտուի վե-
րայ, որ և աշխատուէր հնարաւորել որպէս մի հաստիկ ճանապարհը
որ կարող էր առաջնորդել նորան զէպ ի փրկութիւն. բայց երբեք
մտարեցում չէր, թէ կարող է անյաջողութիւն պատահել մեծ գոր-
ծերի մէջ. Նորա հաւատը թէ անյաղթելի է ինքը, երևեցաւ արդէն
փետրվարի 11ին, Կրասնովոստի մտա պտտահած կտուի մէջ, Նորա
բոլոր զօրքից մեռւմին զեւ ևս 18,000 մարդ, և սոքա պահպանվե-
ցան միայն Փաղպաղայի հոգարարձութեանով. ապա թէ ոչ, սովա-
մահ կը լինէին. Ի վերայ այս ամենայնի, Կարոլոսը իւր աչքը մտել
էր Մոսկայի վերայ. մի փոքր ամրացնելով իւց մէջքը Զապորոզեան
Կողակներով, մայիսի սկզբումը կանգնած էր Պորտաւայի առաջև, որ
պաշարէ սորան: Այս քաղաքի տիրապետութիւնը անչափ խորհրդա-
ւոր էր Էփեզացոց համար. այս տեղ ժողոված էին ամենայն տեսակ
պաշարեղէնք. ձեռք բերելով գորան, բոց էր այնուհետև ճանա-
պարհը զէպ ի Մոսկոյս, կամ թէ գոնեայ կարող էին Էփեզացիք ա-
ռանց կարօտութեան սպասել մինչև կը ստանային այն օգնութիւնը
որ գալու էր Էփեզիայից, Ախիլանդիայից, Պամբուսիայից և Պոլո-
նիայից: Այս պատճառով Կարոլոսը մինչև յունիս ամիսը շարունա-
կեց իւր յարձակումները ամրապահեաւ Պորտաւայի վերայ. ապա ե-
րևեցաւ ինքն Պետրոսը մեծախումբ զօրքերով, որ փրկէ քաղաքը.
Նա բանակ կարկեց նորա մտակալքումը և ամրացրեց իւր մէջքը նո-

րանոր զօրութիւնք ստանալով, Այս մտաւորութիւնը երկու թշնամիների առիթ տուեց մի քանի փոքրիկ կոիւնների, բայց սոցանից շատով վերահասու եղան Շվեդացիք, որ այժմեան Ռուսերը Նարվայի Ռուսերը չեն, այլ ամենին այլ մարդիկ, Այս փոքրիկ կոիւններից մինի մէջ Կարոլսը վերք ստացաւ ձախոյ ոտքի մէջ. հրացանի գրնտակը ոտքի մատերի մտից ներս էր թափանցել և դուրս էր եկել կրունկի մտից, Առանց միտ դնելու այս բանին, շարունակեց նա խաղաղ հոգով իւր հրամանատուութիւնը, թէպէտ պիտոյ է սաստիկ ցաւ զգար. երբ որ նորա շրջակայ մարդիկը նկատեցին, որ արիւն է կաթում նորա կոշիկից, ապա խոստովանեց նա թէ վիրաւորված էր, Երբ որ Կարոլսը յետ էր զարձած գէպ ի բանակը, այնպէս ուռած էր նորա ոտքը, որ կոշիկը չէր կարելի հանել վերայից, այլ պիտոյ էր գէպ ի վայր կտրել նորան, Կոմս Պիպերը և բոլոր զորապետները վախեցան տեսնելով վերքը, Գազաւորին ստար թուելով տարակուսական լուծիւնը իւր շրջակայ մարդերի, հարցնում վերաբայ Նաումանից թէ ինչ էր այդ ահարկութեան պատճառը. սա յայտնում թէ վերքը անխոսնոք չէր, որովհետև երևումէին ահա այրեացքի նշաններ. ապա Կարոլսը, առանց մի երկիւղ ջղոյ տալու, պատասխանում. «Անաս չունի, կտրիր,» և խաղաղ հոգով նայում, երբ որ ցուեցուցիչ հատուածներ առնումեն նորա ոտքի մէջ, Շուտով, բոշկի ճարտարութեամբը մինչև այն աստիճան ատոզջացաւ Կարոլսը, որ կարող էր տանել տալ իւրեան, թէպէտ բոշկութիւնը ջերմութեան և անդադար տենդի պատճառով կարող էր միայն ծանր քայլով յառաջ խաղալ, Եռլիսի 8ին զարկվեցաւ այն հռչակաւոր կոիւր Պարտավայի մտ. թէպէտև Շվեդացիք հերոսական հոգով նուիրեցին իւրեանց անձը, թէպէտև գործ զրեցին իւրեանց բոլոր պատերազմական ճարտարութիւնը, և նոցա գորավորը ջղոյ տուեց մի անընկճելի զօրութիւն հոգու, այնու ամենայնիւ յաղթահարվեցան նոքա նոյնպէս բարեառաջնորդ և քաջասիրտ թշնամու ձեւերով, որ բայ ի զորանից կոիւ էր տալիս իւր ամենամեծ ազգաշինական գործերի համար, որ և բազմութեամբ, պատերազմական անօթներով և աւելի յաջող դրութեամբ շատ զերազանց էր, Երկու արիւնաշաղախ ժամոյ յետոյ, երբ ահա կոտորված էին 10,000 Շվեդացիք, սկսեցին ամենքեան փախչել, Գազաւորը միայն, որ տանումէին պտոզարակով, չը կամեցաւ երես զարձուցանել, Գնդապետ Պոնիատովսկին նորա կողքին էր և հրաման տուեց երկու սպասաւորների, որ սոքա կանքի տակից վեր առնուն թագաւորը և հեծուցանեն ձիու վերայ, թէև ցաւը շատ խափան էր նորա յառաջադիմութեանը, Պոնիատովսկին 500 մարդով ամենայն կարգից շրջապատեց թագաւորին և զոցա օգնութեամբ ձեղ-

քեց և անց կացաւ Ռուսաց զօրախումբերի միջով: Նորա տակի ձին սպանվեցաւ, և վերաւոր Վիետա գնդապետը տուեց նորան իւր յատուկը. երբ որ նորա հասած էին պատերազմական ազխին, վեր առան զերի տարած կոմս Պիպերի սայլը, նասեցրեցին նորա մէջ թագաւորը և ճանապարհ ընկան զէպ ի Դնեպր: Բայց փշրվեցաւ և սայլը. միւսանգամ հեծուցին թագաւորը ձիու վերայ և գիշերով, յուլիսի 9ից զէպ ի 10ը, հասան Դնեպրին որ և մեծ զգուարութիւնով անց կացան: Բայց Աեօֆեհաուփթը որ 14,000 մարդ զօրքի մնացորդովը փախած էր Նոյն գետի մտ, իւրայինների հետ միասին, անձնատուր և զաւ իշխան Մենշչիկովին. — Ահա թէ ինչպէս խորտակվեցաւ Վարոլուսի մեծագոր կարողութիւնը. մի օր բաւական եղաւ, 9 տարու յաղթութիւնների պաուզքը չիք դարձուցանել: Նորա բոլոր զօրախումբերից մնացին նորան մի քանի հարիւր մարդ, որպէս մերկ ուղեկիցք նորա անմխիթար փախտականութեանը. Նորա առաւել ընտիր զօրավարքը գերի էին տարած, նորա անթիւ պաշարեղէնքը և պատերազմական անօթները կորուստ էին գնացել, կորած էր և նորա անյաղթելի քաջութեան պարծանքը և Շվեդական պատերազմողների անձնախտահարութիւնը, և նա, որի երեսից մի փոքր յառաջ դողում էին մեծակարող թագաւորներ, անապատ դաշտերի մէջ թախտուտ մը այժմ վերաւոր, անհանգիստ և անօգնական, և պիտոյ է երջանիկ համարէր իւր անձը, երբ որ նա Օչակովի մտ կարող էր ոտք կոխել Տաճկաստանի հողի վերայ և մի օտար տէրութեան մէջ պաշտպանութիւն գտանել Ռուսերի հալածանքից: Այժմ նորանոր յշտերով գլուխ բարձրացուցին Վարոլուսի թշնամիքը. Գանեմարբիայի թագաւորը և Սարսանիայի Վայսրընտիր իշխանը նորագեցին իւրեանց դաշնաւորութիւնը և համարձակվեցան խախտել հաշտութեան դաշը: Օգոստոսը, ոչինչ քարոզելով Ալթրանշթեղեան պայմանագրութիւնը, որ իրբէ թէ անբրիստոնեայ խտութեամբ արած էր, կրկին անգամ տիրապետեց իւր Պոլոնիային, Ստանիսլաւսը, Վարոլուսի կամբով միայն թագաւոր լինելով, տեսաւ իւր աթոռի կործանումը, երբ որ ահա կործանվել էր իւր պաշտպանի կարողութիւնը: Գրիգորիկոս չորրորդը ցամաք գուրս եկաւ Շօնըն գաւառումը. Պետրոսը յառաջ խաղաց Ախիւնդիայի մէջ, և միւս տէրութիւնքը, որ յառաջուց վերաւորված էին Շվեդիայի ամբարտաւանութեանից, պատրաստ էին վրէժ-խնդիր լինել: Բայց կառավարութիւնը Ստրհոլմի մէջ հոգարարձութիւն արեց հին Շվեդեան սահմանը պաշտպանելու համար: Սեպտեմբր 1711 թուակ. մարտի 10ին անտորձ շինականներով քարզեց ու հալածեց Շօնընից Գանեկացոյ ընտիր զօրքը: Նոյն միջոցին ուղարկեցին զօրքի գունդեր զէպ ի Վինլանդիա, որ դադարեցնեն Ռուսերի

յառաջաւարժութիւնը: Բայց չը կարողացան ընդդիմանալ աւելի բազմաթիւ թնաման: Կարողաւր պատուով ընդունած լինելով Տաճիկներէց, Բենդերի մտ լիման հաստատեց և արտուէր այս սեղ արքայապայել փառքով: Եւ այս սեղ ղեւ ևս մասնուէր նա, այն փախտականը, որ աթոռից ցած ձգէ Պետրասին, և ամենայն հնար գործ զրեց զրդոզելու: Տաճիկները զեւ ի մի նոր պատերազմ ընդդէմ Ռուսներին: Երբաւ, Տաճկաստանը 1710 թուակ. նոյնմը. 21ին պատերազմ յայտնեց Ռուսաստանին, կէս մի իւր յատուկ ահաճութենաների պատճառով, և կէս մի Կարալուսի յորդորածներով: Մեծ վեղեր Բալղաշի Մեհնեմզը ահա 20,0000 Տաճիկներով շարժել էր սեղից, և Ղրիմի մէջ այնպէս փակել էր Յարը, որ նա չէր կարող փրկու թիւն գտանել: Եւս միջոցին Կարալուսը, որին չէին հաւատացած զորքի առաջնորդութիւնը, թեպէտ այս բանը շատ ցաւեցուցիչ էր նորան, անհամբերութենից շատց տաղնապով աճապարեց զեւ ի Տաճիկների բանակը. բայց երբ որ հասաւ այն սեղ, մեծ վեղեր արդէն թողել էր Յարին, որ ձողոյրէ իւր անձը: Մի գերմանացի աղջիկ Կարթա անունով, իտալանդեան գաւառից, որ Յարի հոմանին էր, որ և յետոյ կաթարինէ անունով գարնաւ Յարուհի և ինքնակալուհի բոլոր Ռուսաստանի. այս աղջիկն էր, որ իւր մարգարաններովը գրաւեց մեծ վեղերի ագահ սիրտը, և սա թող տուեց արդէն փակված Ռուսներին փրկել իւրեանց անձը, և այդպէս ունայնացրեց Կարալուսի բոլոր առաջարկութիւնքը: 1711 թուակ. յուլիսի 23ին կառվեցաւ խաղաղութեան գաշը Ֆայրսինի մտ. սորա պայմաններէց միւնը այն էր, որ Կարալուսը իւր վերագարձի ձանադարհումը զեւ ի Շիւղիա, անհանգիստ չը լինի Պետրասի ձեւքով: Թեպէտե Կարալուսը ղեւ ևս երկու անգամ Տաճկաստանի կողմից պատերազմ յայտնել տուեց ընդդէմ Պետրասին, բայց չուտով նորագլելով հաշտութիւնքը, որպէս և պալտատականների ցած դաւանանութիւնքը կրկին անգամ խափանեցին պատերազմի գործը, և չուտով ակնարկութիւն արեցին Կարալուսին, որ վեր կենայ գնայ իւր հայրենիքը: Կարալուսը ասաց, թե պատրաստ էր, եթէ կը տոյին նորան 10,0000 մարդ, որ զոցանով վերադառնայ զեւ ի Ղարնիա: Արովհետե այս պահանջումը կարելի չէր կատարել, նոր պայմանախաւսութիւնը եղան, և նա 1713 թուականին ասացաւ 60,0000 թալեր ձանադարհի ծախք, բայց չը շարժվեցաւ սեղիցը: Եւս բանի վերայ զայրանալով Սալթանը, հրամայեց բնութիւն գործ զնել: Բայց այժմ Կարալուսը երեսը տուեց մի երկաթի կամակորութեան (այս պատճառով և Տաճիկները անուն տուեցին նորան Գնմիրաշ, այսինքն երկաթալուխ), չընախակեց իւր լիմանը և 300 շիկոցի մարդով մի ողջոյն որ պաշտպանեց իւր անձը

Հաղարատ աստիճանների երեսից, սոցանից սպանեց շատերը և դժուարութեամբ միայն ձեռք բերեցին նորան, երբ որ կամենումը ձգել իւրանձը մի այլ տուն, բայց կոշկի խժամը խախտն լինելով, վայր բնկաւ նա: Այս արժանայիշատակ օրը էր 1713 թուակ. փետրվարի 12ը. նորան բերեցին Գեմիրթաշ, Ազրիանուպոլսի մաս, բայց նորա կամակորութիւնը մնաց անյաղթելի. այսպէս Գեմիրթիպոլսը մնաց նա մահճի մէջ 10 ամիս երկար, տանց միանգամ սոքի վերայ կանգնելու. Ինչքան որ նա ճանկաստանումն էր, 4 մեծ վեղերներ միմանց քամակից վայր ձգել տուեց, նա յոյս ունէր թէ երկար մնալով այս տեղ, կարող էր մի մեծ աստիական զորքի աաջնորդ դառնալ և գործ կատարել, բայց երբ որ ահա սպառել էր ամենայն հնարք, և նորա բոլոր յոյսերը անպտուղ էին մնացել, վեր կայաւ իւր պաշտօնատեղերից մինի ճանապարհագիրը, զգետը փոխած և կեղծեալ ծամեր զլիտին գրած, հեծաւ յանկարծ մի ձիւ վերայ և ուղեկից առած իւր հեռ, Գիւտինգ գնդապետը, ճանապարհ է ընկնում զէպ ի Յորալլունդ, 16 օր պառչոյ գալով Անգարիայի, Աստրիայի, Բալթարիայի, Փիլիպիայի, Աւստրիայի և Յեկլենբերգի վերայից, որ հետի մնայ Յարսնիայից և Պրուսիայից, Երբ որ նա անցանումը Քասսելիայից, ասեա թէ ճանաչվեցաւ, բայց որովհետեւ մի բաժակ զինի դատարկեց (տառօին և մի անգամը իւր բոլոր կեանքի մէջ), ապա դուրս եկաւ կասկածանքի տակից, որովհետեւ յայտնի էր թէ Կարոլոսը անննկն զինի չէ խնում: Եւ ոչ պարտաւմը ծանօթ կացոյ իւր անձը, թէպէտ Էնսեն - Քասսելիայի ամրոտաժառանգ իշխան Ֆրիդրիխսը մի փոքր յառաջ ամուսնացած էր Կարոլոսի երկրորդ քուեր հեռ Ալթրիկե Ալեոնորե անունով, Կարոլոսը մի տեսը նշյեմբերեան զիշերով հասաւ Յորալլունդին որ համարեալ թէ միայն մնացած էր նորան զերմանական հողի վերայ. նա ջոյց տուեց իւր անձը որպէս սուրհանդակ որ հարկատու լուրեր բերած էր Գիւքն զբարակեմն: Բայց շուտով քարոզվեցաւ նորա գալուստը և խեղճ լուսաւորվեցան բոլոր աները և ընդհանուր ուրախութիւն եկաւ ժողովրդի վերայ, Գալլոց առաւօտուն սկսեց Կարոլոսը իւր սուրբական պարագաւորը: Բայց ինչպէս փոխւած էր բաների որպիստ թիւերը 1709 թուականից յետոյ. որպիսի Քեաներ հասած էին տերութեանը, Երզաբէ Գանեպետը, ինչպէս ասվեցաւ վերեւումը, Սանկտի ձեռքով հայածիւմ էին Շվեդիայից ուր ներս էին յարձակվել, բայց նորա տիրապետեցին Բրեմընեան և Ալերդընեան վեմաներին, և կողպտութեան ճանապարհը բաց լինելով, օրե օր երեւեցան նոր թշնամիներ, Պրուսիայի թագաւորը մտաբերեց այժմ թէ իրաւունք ունէր Շվեդեան Պոմմերանիայի վերայ, և Գանեմարքիան նորոգեց իւր պահան-

չորս թիւնքը Հոլանդիայի և Շվեդիայի մասին. այժմ Մերլեն-
 բուրգիան իւր ցանկաւեր աչքերը դարձուց Ախմարի վերայ, և Հան-
 նոպիան և Միւնստրը անյօժար շէին օգուտ քաղել Շվեդիայի ձա-
 խորդութենից: Երբաւի, քաջ Ստենքոքը զարկեց գաշնաւոր թշնա-
 միքը Գազերուշի մտ, (1712 թուակ. դեկտ. 9ին), այնու ամենայ-
 նիւ ստիպվեցաւ յետ քարշվել դեպ ի Հոլանդիա մինչև Քեննինգըն,
 և փոքր մի յետոյ շրջափակվելով Գանեւացոց կողմից, պայմանադիր
 լինել իւր անձնատուր լինելու մասին: Պետրոսի նշանաւոր տիրապե-
 տութիւնքը արեւելեան դաւանների մէջ նոյնպէս յիշեցինք վերևումը.
 Լիթվանդիա, Էստլանդիա և Ինգերմանլանդիա, գերմանական գաւառքը
 Շվեդիայի, դարձած էին Ռուսաց կալուածք. Ռիգան, քաջապէս պաշտ-
 պանելով իւր անձը, հնազանդվեցաւ. նոյնպէս ձեռք էր բերած Յարը
 Կուրլանդիան և Ելբինգը առատ պատերազմական պաշարներով միա-
 սին, այն տարածել էր իւր աշխարհակալութիւնքը և Ֆինլանդիայի
 վերայ: Ըյս բոլոր բաները եղած էին այն միջոցին, երբ որ Կարոլսը
 գտանելու մեր Տաճկաստանումը. Շվեդական ծերակուտի և կառավարու-
 թեան ազդարարութիւնքը արհամարհարար կամ թէ ահա՞մութեամբ
 մերժած էր Պետրոսը. այսուհետև գրեթէ անկարելի էր փրկութիւն.
 Շվեդիան, ամենայն կողմից նեղվելով թշնամիների ձեռքով, գտան-
 վու մեր վերջին թուլութեան մէջ. առ ու սուրբը նուազել էին, ար-
 ծաթ, հաւատ առ ու սուրբի մէջ, այն և մարդիկ սրկաս էին (200000
 Շվեդացիք, ինչպէս ցուցանումը հաշիւը, գերի էին ընկել Ռուսե-
 րի ձեռք). այնու ամենայնիւ ժողովուրդը քաջախելովեցաւ յուսով,
 երբ որ լսեցին Կարոլոսի գալստեան համբար, Բոլոյ նա մնաց իւր
 թշուառութեան մէջ նոյնպէս մեծամիտ, ինչպէս իւր բազդի օրերումը
 եղած էր, և սա, ասեա թէ յաւիտեան հրաժարվել էր իւր հին տի-
 րականից. Յուրհանդակներ սուրհանդակների վերայ եկան բերեցին
 տխուր լուրեր. Հաննոպրեան և Գանեւարքեան զօրքեր պաշարեցին
 Ախմարը. Պրուսիացիք, Գանեւացիք և Սարսոնացիք եկան Ստրալուն-
 դի վերայ. Ռուսերը յաղթող էին գտանվել ծովի վերայ և երկիւղ
 կար, մի գուցէ ոտք կոխեն և ցամաքի վերայ: Ռուսաց ցամաքազօրքը
 տիրապետեց հետ զհետ բոլոր Ֆինլանդիային: Ռեզեզով կղզին ձեռ-
 քից գնացած էր ահա. Ստրալունդը շրջափակվեցաւ 36000 մար-
 դով. պաշարմանը ներկայ էին Գանեւարքիայի և Պրուսիայի թա-
 գաւորքը. ամբողջ մէջ կային 9000 մարդ և նոյն ինքը Կարոլսը:
 1715 թուակ. հոկտ. 19ին, գիշերով, սկսեցին ներդրծել թշնա-
 միքը, բոլոյ Կարոլսը մի քանի ամիս քաջութեամբ պաշտպանեց իւր
 կողմը, նոյնմը. 15ին, 12000 մարդ, առաջնորդելով նոցա Ընհայ-
 թեան Լեպոպրը, յարձակվեցան Բիգեն կղզու վերայ, նոյն միջոցին

երր այն տեղ էր Կարոլոսը 2000 մարդով, Կուռի խառնակութեան մէջ մի դանձաղի Լէյտենանտ Ճանաչեց թագաւորին, ձեռք ձգեց նորա վերայ և ձայն տուեց, որ անձատուր լինի, բայց Կարոլոսը սպանումէ նորան թախանչայի զարկուածով, Ըյս դանձաղի Լէյտենանտի ձայնարկութիւնը զարթուցել էր նորա ընկերների ուշադրութիւնը Կարոլոսի վերայ, որ և զգուարութեամբ ազատվեցաւ գերութենից, թեպէտ ոչ անվիրաւոր մնալով, Նա վերադարձաւ զէպի Սորալզունդ. Բիզին կղզու վերայ եղած զօրքը, երկու օր կուտից յետոյ, գերի գնաց. որովհետև Սորալզունդը և նորա պահապանքը օրէ օր աւելի մնասահարվումին թշնամու կրակի երեսից, վերջապէս խորհրդականների ազդարարութիւնքը յաղթեցին Կարոլոսի կամակարութեանը, և սա պիտոյ է շտապով գնար հետանար, որ սպահով լինի Ռուսերի նաւերից, Գեկտ. 20ին նաւ նստեց նա 10 մարդով և յաջողութեամբ ծածկվեցաւ թշնամիների աչքից, 24ին պայմանագիր եղաւ Սորալզունդը, փոքր մի յետոյ և Վիսմարը, որ պիտոյ է անձնատուր լինէին, Ըյսպէս ահա Շվեդացոց բոլոր կալուածները գերմանական հողի վերայ, Գուստաֆ Աշտրիֆի փառաւոր յաղթութենների բոլոր պտուղքը կորուստ գնացին, Կարոլոսը ցամաք դուրս եկաւ Խստաք քաղաքումը Շվեդների և գնաց զէպի Կարլսբրոնաւ. բայց Սորհօլմը կամենումը վերադին տեսանել իբրև յաղթող միայն, Կարլսբրոնայից կառավարումը նա հոգարարութիւնքը թէ զօրքի և թէ նաւերի պատրաստութեան համար. ժողովեցին 15 տարեկան մանուկներ, ցամաքաջօրքի պահասորդը որպէս և իցէ լրացուցանելու համար. ծովային աւազակները պիտոյ է լինէին պատերազմական նաւերի փոխանակ, Ըյսպիսի զրահաւորութենների ծախքը հոգալու համար թեթեւագին զահեկան կտրեցին, և ամենախիստ հարկահանութիւնք ծանր ծանրացան հիւթը ծծած աշխարհի վերայ, Ըյս միջոցին, Երբ որ Կարոլոսը 1716 թուակ. մարտ ամսին ամենին յանկարծ արշաւեց Նորվեգիայի վերայ, Բարոն ֆոն Գեօրց, Էոլստեյնիտյի նախարարը և Կարոլոսի նոր մտերիմ բարեկամը, աշխատումը քաղաքագիտական արուեստներով լուծանել ընդդէմ Շվեդիայի արած դաշնաւորութիւնը, Ըյսինքն, Յար Պետրոսը ոտք զնկելով Մեկլինբուրգիայի վերայ առաջարկումը այս աշխարհի դուքսին, որ փոխէ Մեկլինբուրգիան Լիֆլանդիայի կամ թէ Կուրլանդիայի կալուածների հետ, Բայց դաշնաւորքը իրաւացի պատճառ ունենալով կասկածելու այն բանից, որ Ռուսաստանը պիտոյ է ոտք հաստատէր գերմանական հողի վերայ, սկսեցին արթնանալ և նախանձաւ աչքով նայել աւելի Ռուսաստանի, քան թէ Շվեդիայի վերայ, Գեօրցը անյապաղ օգուտ քաղելով այս կասկածանաւութենից թշնամիների մէջ, ծածուկ պայմանաւստ եղաւ Պետ-

բոսի Հետ։ Աորս զօրութիւնը այս էր. Աարոյսը և Պետրոսը, երկու մեծ մարդիկը Հիսուսի մէջ, պիտոյ է անկեղծօրէն հաշտակէին միմեանց Հետ և ապագայումը միասին գործակատար լինէին։ Ռուսաստանը պիտոյ է պահէր իւր համար իւր աւելի մտակոյ կալուածները Պիտանդեան ծովածոցի մաս, և զորս փոխարէն պիտոյ է Ստանիսլաւոսը վերստին հաստատվէր որդէս թագաւոր Պալոնիայի. այն՝ յուսայի կացուցիկցաւ նշնպէս, որ Աարոյսը ամուսնանայ Պետրոսի աղջիկ մեծ իշխանուհի Աննայի Հետ։ Բայց բազդը այլապէս էր սահմանել. Աարոյսը կանգնած էր իւր ասպարէզի վերջումը։ Այս բոլոր պայմանախօսութիւնը մի շփեղեան լրարեւրի թղթից, որ ընկած էր Գանձացոց ձեռքը, յայտնվեցաւ հակառակորդներին, եթէ այս պայմանագրութիւնը գլուխ եկած լինէր, զորանից միանգամայն փնտալելու էին շատերը. Գանձամարքիան պիտոյ է զողար զորանից, Սաքսոնիան զրկվէր Պալոնիայից. Աարոյսի ամուսնութիւնը Պետրոսի աղջկայ Հետ պիտոյ է անկարելի կացուշանէր Հեսսենեան Պրիգլիկոսի աթոռաժառանգութիւնը. այլև, եթէ Աարոյսը միւսանգամ հասանէր մեծ կարողութեան, պիտոյ է Շվեդեան արնուականների ինչ ինչ յոյսերը ունայնանային։ Եւ այսպէս խորհուրդ արեցին, որ սպանեն Աարոյսը, յառաջքան թէ Գեօրցը. Յարի ձեռքով անորազրամ պայմանախօսութիւնը իւր Հետ, կարող էր հասանել Շվեդիա, Աւելի մանրամասնարար տեղեկութիւնը այս սպանութեան խորհրդի մասին յայտնի չէ զեռ ևս։ Սա պատահել է ձեռնամ միջոցումը 1718 թուականին, Մի փոքրիկ շվեդեան զորախումբ, որին առաջնորդ էր Արմֆելդը, այն միջոցին, երբ անցանումը Կորվեգիան Շվեդիայից բաժանող սարերի վերայով, շատ ողբայի կերպով ցրտամահ էր եղած. մի այլ զորախումբով Աարոյսը պաշարումը Քրիգրիխսշալլ անունով ամրոցը հարաւային Կորվեգիայի մէջ. մի Քրանսիայի, զնդապետ Մեդրետը, կառավարումը պատերազմական շինութիւնքը. թագաւորը ջերմութեամբ աշխատում էր զործերի վերայ, ներկայ էր ամենայն տեղ և յաճախ վերահասու էր լինում խրամների որդիսութեանը, 1718 թուակ. զեկտ. 11ին վերստին զնաց այն տեղ և կողքը տուած մի պտուտարի վերնապսակի, նկատումը շինութիւնքը. նորա մտ գտանվումը միայն վերջիչեալ Մեդրետը և աշակից զորապլուխ Վիկերը, նշնպէս Քրանսիայի. Երբ որ թագաւորը շախից գուրս երկար անշարժ մնաց, մտեցան նորան իւր ընկերակիցքը և գտան նորան իւր արիւնի մէջ շաղախած գետնի վերայ, և ձեռքը սրի երակակալի վերայ։ Մի ֆալկոնետի որումը ջաղջախել էր նորա քունքը։ Կորա ծոցի մէջ գտան Գուստաֆ Ազօրֆի պատկերը և մի աղթագիրը։ Այսպէս ահա կնքեց իւր ասպարէզը այն կարող պատերազմաւեր իշխանը, մի աղամարդ

այնպէս քաջ հոգով ու սրտով, որ զարմացրեց աշխարհը. բայց եթէ այս զորութիւնը ունեցած լինէր իւր առաջնորդ, խոհեմութիւնը, շինած կը լինէր նորան ամենամեծ պատերազմողը, և եթէ այդ զորութեան հետ ընկերացած լինէին մարդկութիւն և քաղաքացի քաղցրաբարդութիւն, ապա կը լինէր նա մի ամենագաղտնական թագաւոր, իսկ վերջին պարձանքը արհամարհեց նա իւր սոյգատական մեծամասնութեան մէջ և առաջինից ևս անմասն ու անբաժին գտանվեցաւ իւր յանդգնութեան և տարապայման կամակորութեան պատճառով, իւր անուանի ժամանակակից և հակասակորդ Պետրոս առաջինի հետ, որ մի քաջ պատերազմող մարդու պարձանքի հետ կապակցումը և մի խոհական թագաւորի պարձանք, ոչինչ կերպով չէ կարող համեմատելի կարելոսը, Պետրոսը մի մեծ և հոյակապ գաղափար յղանալով իւր սրտի մէջ, այսինքն քաղաքացւոյցանել իւր տերութիւնը, դարձաւ Ռուսաստանի զերագոյն կարողութեան արարիչ, բայց կարելոսը քանզեց և սուրեց իւր աշխարհի զորութիւնը, կարելոսի մասն հետ միասին զնջվեցաւ Շվեդիայի անունը մեծ տերութիւնների շարքից: Այս պատճառով կարելոսի շախազանցութիւնը թէ առաջինութեան և թէ արատաւորութեան մասին մի շատ տարօրինակ տեսիլք է պատճառելութեան մէջ, բայց ոչինչ չաղէ տեսիլ, այլ մի գլուշաշուցիչ խրատ թագաւորների և ազգերի համար, Գեծամեծ առաջարկութիւններով ծովային դործի, վաստակարարութեան և առուստարքի մասին զըստած էր նա իւր կեանքի վերջին օրերումը, Նորա թագաւորական անունը ժառանգեց իւր քոյր Ռարիկէ Ելենորէն, որ, ինչպէս յիշվեցաւ վերևումը, Հեսսենայի ժառանգ իշխան Ֆրիդրիխի ամուսինն էր, կարելոսի պատմութիւնը գրել է նորա մտորմնակա Նորբերգը. Եղլերգը հրատարակեց պատերազմական ծանօթարանութիւնը նորա մասին. ընթերցանութեան արժանի, թեպէտ պատմարանըն ոչ միշտ հաստատի է Ալբրեխտի Histoire de Charles XII. Նորա պատմութեան մասին ապիս է ամենամոր և շատ մանրամասն տեղեկութիւնը Ենսենը իւր Bearbeihung von Lundblads Karl XII շարադրութեան մէջ:

Զ. ԵՐԿՐԱՐԻ ՔԵՒԻՐԻԿՈՍ ՄԵԾԸ.

Արին Պրուսիական մատենագիրքը ասումն և մի հատիկ Ֆրիդրիխու, էր 18 երրորդ դարու ամենամեծ թագաւորը, որդի առաջին Ֆրիդրիխու Ալեքսեյովի և թագուհի Մարիա Գորոթեայի, որ Հաննովրի արքայազնուհին էր, ծնեցաւ 1712 թուականի յունվարի 24ին, կոյսը կարելոս վեցերորդը, ցար Պետրոսը, Պալմիրայի արքայ Օդոստոս երկրորդը, Հոլլանդիայի ազգի փոխանորդքը և կանտոն Բեքնը միջնորդներով վկայ գտանվեցան նորա մկրտութեան հանդէսին:

1. **Վասն և յառաջ քննենք Ֆրիդրիկոսի մանկութեան օրերը.** Ռազաւորացն մանուկը յանձնած լինելով ազնուական Քամերէ տիկնոջ գերագոյն տեսչութեանը, Ֆրանսիայից փախտական պրոտեստանտոսի զը Ռօբուլի ձեռքով պարզապէս և պարկէշտապէս մեծացաւ. Այս զը Ռօբուլ կինը եղած էր նոյնպէս նորա հօր մանկութեան պասաւորը: Արովհետեւ զաստիարակիչ կինը խօսումք միայն ֆրանսիարէն, այս պատճառով արքայացն Ֆրիդրիկոսը սխեւալ մանկութեանից սուգրեց աւելի սիրել այս լեզուն, բայց գերմանականի հետ կիսատ միստո ծանօթացաւ. իւր հաստորանական գրքից և երգարանից, որոնցից, որպէս պատիժ, պիտոյ և անգիր ուսանէր շատ անգամ, այլև խօսելով սպասարկների հետ. Նմանապէս նորա ժամանակ անցուցանելու գրքերը էին ֆրանսիարէն, Սխեւալ եօթն տարեկան հասակից, յանձնվեցաւ. նա վախճումն տարօր գեներալ կոմս Ֆինզընշտէյնին և գեղապետ պարոն ֆոն Քալքշտէյնին. Այս մտրդերի որդիքը և Բայրուտի իշխանազունքը էին նորա խաղընկերք: Իսկական դասատուն էր բանապէտ Գիւհան զը ժանդեօնը որի հետ ծանօթացած էր թագաւորը Սորալզուձդի խրամների մէջ, երբ որ նա ֆելդմարշալ գրաֆ Գոնայի որդուն առաջնորդել էր զէպ ի այն տեղ որպէս նորա դաստիարակիչ: Մանուկ Գիւհանը ուսած էր իրաւարանութիւն և փիլիսոփայութիւն, և մնաց ժառանգ թագաւորացնի մօտ 1716ից մինչ 1727ը, և մի այնպիսի ներքին բարեկամութեան կապ գոյացաւ աշակերտի և ուսուցչի մէջ, որ վաղուց ահա թագաւորը, համարեա թէ նախանձելով այդ բանին, կամեցաւ հեռացնել Գիւհանը, և նորան պատժեց յետոյ ժառանգ արքայացնի անհնազանդութեան համար, թէպէտ Գիւհանը չէր այլևս թագաւորացնի ուսուցիչ: Ինքը Ֆրիդրիկոսը քաղցր երախտագիտութենով խոստովանել է, թէ ինչքան իւր անձը պարտական էր համարում իւր վարժապետին, թէպէտ Գիւհանը չունէր մի գերազանց քանքար, և Ֆրիդրիկոսի կրթութիւնը այն ժամանակից միայն ստացաւ օրինաւոր և զձեռական ընթացք, երբ որ աւելի յետոյ թողլուութիւն եղաւ նորան կենակցութիւն ունենալ միս ուսումնականների հետ Ռէյնսերբրգումը, Գիւհանը դասատու էր արքայացն մանուկին փիլիսոփայութեան, ֆրանսիական զպրութեան, պատմագիտութեան մէջ և առաջնորդեց նորան մինչև 15 տարեկան հասակը, և այսուհետև ազատ էր նա, ըստ որում այժմ թագաւորը արքայացնի ուսումնական կրթութիւնը համարումք կատաւեալ: Էին լեզուների մէջ դասատուութիւն չը ստացաւ Ֆրիդրիկոսը, բայց խաւրկանին պարագումք սիրով. հին պատմութիւնը, ինչպէս թագաւորի կամքն էր, համառօտ և վայր ի վերոյ, բայց նորը, մանաւանդ թէ Պրուսիայի պատմութիւնը հիմաւորապէս զաս տուեցին

նորան: Կրանի ուսումը ստացաւ արքայազը պալատական քարոզիչնե-
րից Անդրեաս և Նոյեմբերիս անունով. մաթեմատիկական և պատերազ-
մական գիտութենաների մէջ զատարակեց նորան Յայտար Շեննինգն.
ևս աւելի յառաջագիմութեան համար պատերազմական ուսման մէջ
հոգարարձու եղան նշյն իսկ վերին և ստորին վերատեսուչքը Ֆինքն-
շտէյն և Քալքշտէյն. Յորա պարտական էին նոյնպէս ժառանգ արքայ-
ազնի համար արած ծախքի մասին ճիշդ հաշիւ տալ. թագաւորը տե-
սանուժը հաշիւները և յաճախ յաւելցնուժը իւր հաւանողական
կամ չհաւանողական ծանօթարանութիւնքը: Ամենայն բան որ կարող
էր խափան լինել թագաւորազնի պարագումունքին և նորան յետ ձգել
իւր պատերազմական վարժութենաներից, հետացրած էր: Աստուածա-
շունչ գիրքը և պատերազմողական վարժութեան կանոնները էին միայն
նորա ուսանելի գրեանքը որ թագաւորը թոյլ էր տուած արքայազնին.
սաստիկ արգելած էր նորան ուսանել կաբաւանք և սրնգածութիւն.
Գոցա փոխանակ, իւր համար ընկերակիցք ստացաւ նա աղնուական
տղաներ, որոնց հետ պիտոյ է յաճախ վարժէր իւր անձը զինաշար-
ժութեան մէջ և ներկոյ լինէր զորքի հանդէսումը: Այնու ամենայ-
նիւ թագուհին որպէս սիրալից մայր ստանձին կերպով կարողացաւ
լլտուցանել արքայազնի կարտուութիւնը աւելի պատուական զբուսնընե-
րի. նա հոգատար եղաւ ծածկապէս զատարակելու նորան սրնգածու-
թեան մէջ և պատրաստեց նորա համար նուագածութեան հանդէս-
ներ. այլև կարգեց նա իւր պաշտանի մէջ անուանի սրնգածու Քվան-
ցը, տեղի տալով արքայազնի աղաչանքին: Այս Քվանցը ամենայն
տարի երկու անգամ քանի մի շաբաթ ժամանակով զալիս էր Գրեզ-
գնից Քերլին. առաւօտու վաղ ժամերումը, երբ որ գիտէին թէ թա-
գաւորը զրաղած է, կամ թէ ճաշից յետոյ տանը չէր, Քվանցը պա-
րագումը սրնգածութեան ժառանգ արքայազնի հետ: Այնուհետև սա
հանուժը վերայից իւր նեղ զինուորական զգեստը, արձակուժը մա-
ղերի հիւսքը, հրամայումը զանդրացուցանել մաղերը à la française,
քամակի մաղերը պարկի մէջ գնել և հազնուժը մի ուկեհիս պատ-
մուժան: Այժմ երևուժը և Քվանցը խնկաւորված և զարդարուն մա-
ղերով, մի կարմիր հանդիսաւոր զգեստով, որ շատ աւելի էր թա-
գաւորին: Արքայազն Ֆրիդրիկէ, ամենախրիստի քոյրը Ֆրիդրիկոսի,
որ յետոյ զարձաւ. Բայրուտի սահմանակալ կոմսի ամուսին, սովոր
էր մասնակից լինել այս ընկերութեանը. ներկոյ էր լինում այս տեղ
և կաբաւանքի վարժապետը, որի առաջև Ֆրիդրիկոսը պարձնումը
թէ ունի ամենափոքրիկ սորը բոլոր կաբաւող տղամարդերի մէջ: Մի
անգամ յանկարծ վերայ հասաւ թագաւորը, երբ որ պարագումնին
երկու սրնգածուքը, Քվանցը թագ կաշաւ կրակատեղումը, սրնգնէրը

և երաժշտական խաչերի անտրանները հեռացուցին շուտով, ժառանգ արքայազը փոխեց խեղչն պատմութեանը և հագաւ իւր զննութեան զգեստը. բայց մազերի պարկը յայսմի կաշուց թաղաւորին, որ այս անգ պահգումին օտարներեայ հազուամներ, Նա հրամայեց որոնել հանգերանդէնի պահարանքը, կրակի մէջ ձգել ճամկաւոր կերպասի պատմութեանները և ֆրանսիական գրեանքը ուղարկել ծախելու գրաւաւաճառի մօտ: Այսպիսի անցքերով օտարացան միմեանցից հօր և որդու սիրտերը, Թագաւորը երկիւղ ունէր, մի գուցէ որ ամտի ժառանգը զանայ փափկասէր և վատնող, նա ցանկանումէր անսանել նորան աւելի երկիւղած, աւելի պարզարարոյ, աւելի ժիր այն վարժութեաններին և գործերին մէջ որ, նորա կարծիքով, կարող էին միայն կացուցանել նորան բարւոք զննութիւն և պատերազմող: Յորա հակասել շատ ատելի էր արքայազնին հօր խիստ, մանր բաներով բնուաւորված պաշտօնը, նորա յիշոցատու թիւնը, անիծելը, թախելը, Այն թամբարու քարշող ընկերքը թագաւորի, այն սուպ խեղկատու թիւնքը որ պատահումին նորա պաշտօնի մէջ, այնքան ևս անհաճոյ էին Գրիգորիկոսին, ինչքան զօրջի օրաւափ երկար ու ձիջ հանդէաները և վայրենի տարապայման որսագնացութիւնքը: Նոյն խեղ ստեղծաւոր նուագարանի (le clavier) և գեներալբաթի հետ շատ սեր ունէր Գրիգորիկոսը և ինչպէս երևումէր, այն պատճառով, որ զորանով կամենումէր հայրը հեռացնել նորան սրնգածութենից, Այն միջոցին, երբ որ թամբարու քարշողների ընկերութիւնը զուարճանումէր պալատական ծագածուններով, Գրիգորիկոսը աւելի ուրախ էր Գլխահանի հետ միասին նստել հանդարտ լսարանի մօտ և ընթերցումը կտնայելի, Բասինի և Ալբերտի գրուածքը, այլև Եռանայ և Հոսմաւոց ահանաւոր հեղինակների ֆրանսիական լեզուով թարգմանութիւնքը, Այժմ, երիտասարդութեան հասակի մէջ, արտօմակ ստացաւ մանուանդ թէ զէպ ի յառաջուց անհօգ թողած հին պատմութիւնը, Ալէքսանդրը և Կեսարը զարձան նորա սիրելի քաջ մարդիկը:

1727 թուականի սեպտ. ամսին, Գրիգորիկոսը արձակիլեցաւ իւր երկու վերառեսուչների տաղնորդութեան տակից, այնուհետեւ թագաւորը անդադար պահումէր նորան իւր յատուկ ակնարկութեան տակ. զնգագլուս Բօնուփը և Կայրօլինզը զարձան նորա կենակիցք: Տան և վեց տարեկան արքայազնի բարբ ու վարքի վերայ շատ փնտասկար ազդեցութիւն ունեցաւ մի ճանապարհորդութիւն զէպ ի սարսնական Գրիգորիկոս Օգոստոսի, Պոլոնիայի թագաւորի զեղին պալատը, Գրիգորիկոսը բորբոքիլեցաւ սորա, ազգրէն ամուսնութենից ծնած, աղջիկներից միմի, այսինքն փափկամարմին Օրգելակայի սիրովը: Բայց ինքը թագաւորը տարաւ նորա մօտ գեղեցիկ Գորմիերա մանկամարդը և սո-

րա հետ խաղալով Բրիգրիկոսը կորցրեց իւր սրտի կուսուծիւնը, Բանը բանից անցել էր ահա, երբ որ հայրը դրուշաքրեց նորան և հրամայեց հետանալ այն տեղից, պատճառ այս անպարկեշտ Օգոստոսը թէ հօրը և թէ որդուն ահա ջղյց էր տուած մերկանդամ գեղեցկութիւնը ճառագայթաւեա լուսի տակ: Մի վատ փոխարէն էր, որ Պոլսոնայի թագաւորը մի փոքր յետոյ պարզէ ու զարկեց Բրիգրիկոսին սպիտակ արծիւի նշանը թանգազին շրջապատով, Նոյն միջոցին նորա հայրը բարձրացրեց նորան մինչև Օբերստ Աւստրիականի աստիճան, այլև 1729 թուակ:

Ապագուհին վաղուց ահա մտածուիւնք ամուսնացնել իւր որդի Բրիգրիկոսը և իւր դուստր Բրիգրիկէն իւր ազգակից անդլիական թագաւորացնեցի հետ, և թագաւորը յոժար էր իւր դուստրը հարսնացնել անդլիական ամուսի ժառանգին, բայց կա՛ր չու՛նէր հարսն բերել իւր տուն ոչինչ անգլիական թագաւորացնուհի: Եւստրիայի խորամանկ գեւապանը Բերլինի մէջ, կունս Մէքքնդորֆն անուսով, և Պրուսիական գեներալ և նախարար Գրումպրոֆը որ երկուքը ևս մեծ ազդեցութիւն ունէին թագաւորի վերայ, ուշադիր լինելով Ավստրիայի սպինը, զորք գրեցին ամենայն հնարքով Բերլինը աւուստրիական ստաւարիութիւնը քակտելու և խախտելու համար: Նորա բարեկցեալ թագաւորին պատճառ տուեցին խառութիւնս հանդիպելու թագուհուն, որ անընդհատ նամակակցութիւն ունէր Անգլիայի հետ: Թագուհին գիտազարմութիւն աննելով, թագաւորը անգլիական գեւապան շոթհամի ստաղն զուրս թափեց նորա իշխանաւորի նամակները և զարկեց ոտքով զէպի գեւապանը: Մասնագութիւնսը հասուցին թագաւորի ականջին, թէ ամուսի ժառանգը իւր խնամութեան մասին թուղթ է գրած զէպի Աննան, որ և հօր աչքին երևեցաւ մի զարհուրելի յանցանք: Արքայազնի հետ վարկեցաւ թագաւորը շատ անարժան կերպով, միանգամ մայրիկից բռնելով և գեանարարչ աննելով նորան զէպի պատուհանը, որ խեղդէ նորան վարագորի լարերով: Այս հայհոյեց նորան հայրը, անասով մասթարի անուն կապելով նորա վերայ: Եւ թէ իմ հայրը վարվէր իմ հետ այսպէս, խուսեց զէպի նա, սպա հարար անգամ մինչև այժմ փախած կը լինէի ես: Ըլոյց զու սիրա չունիս, զու մի վասթար հագի ես: Դա պահանջեց արքայազնիցը, որ հրածարվի ամուսի ժառանգութենից և թողու նորան իւր մերձաւոր եղբայր Ալիհեյմսին: Ըլոյց արքայազը քաջ հասկանալով իւր պարծանքը, պատասխան տուեց, թէ ինքը աւելի պատրաստական կանքով կտրել կը տար իւր գլուխը, քան թէ կը հաւանէր այդ բանին: Ըլոյց եթէ թագաւորը հրայաբանական հրովարտակով կը ծանուցանէր թէ ամուսի ժառանգութենից հանուսն նո-

րան, ըստ որում շէր իւր օրինաւոր և հարազատ որդին, այնուհետեւ սա տեղի կը տար թագաւորի կամբին: Երբ որ իմացաւ թագաւորը, թէ արքայազը 7000 թաւեր պարտք է արել, մի սաստիկ հրաման արձակեց, որ ոչ ով պարտք չը տայ մի անչափահաս մարդու, և ոչ իսկ արքայական կամ այլ իշխանական տոհմի զաւակի. սպա թէ ոչ. շարաշար կորնչելու է: Նոյն իսկ զբրի հանդեսուժը, բոլոր պաշտօնականները ներկայ լինելով, ժառանգ արքայազը պիտոյ է լսէր իւր հօր խոնարհեցուցիչ և անարժան յանդիմանութիւնը:

Այնպէս Գրիգորիոսը հաստատեց ժտութիւնը, որ փախչելով զէպի Ենդլիա, փրկէ իւր անձը այդպիսի վարեցողութենից նորա հետ, այսպէս մտածուձեր նա ստանալ և իւր հարաւը, Երկար ժամանակ պահուակ իւր մէջ այս խորհուրդը, որին մասնակից էին իւր մանկութեան ընկերակիցքը պարոն ֆան Քաստե և Քէյթ. թէ երբ և ուր պիտոյ է ժամադիր լինէին փախստեան մասին, զորա վերայ շատ մտածութիւն արեցին. բայց անզոյշ լինելով բարեկամքը չը կարողացան, ինչպէս հարին էր, ամուր պահել այդ խորհուրդը, մանաւանդ թէ փառասէր Քաստեն, որ շատ սիրուձեր պարծենալ արքայազնի զէպի նա ցոյց տուած հաւատովը, Գրուձըրովը և Յեքքնդորֆըր զիտեին այդ բոլոր զիտաւորութիւնը, յառաջ քան թէ միւսերը սկսած էին յառաջ տանել նորան, 1730 թուականին, թագաւորը յանձն տաւ հարաւային Գերմանիայի վերայով ճանապարհորդել զէպի Բէյն գետի սահմանքը և զէպի շոյլանդիա. և արքայազը թոյլատրութիւն ստացաւ ուղեկից լինել նորան. այս ճանապարհորդութեան միջոցին պիտոյ է կատարվեր փախուստը. Քաստեն ժողովեց հարկաւոր եղած արծաթը. Քէյթը, որ այն ժամանակին Ղեկըրմն էր, պիտոյ է հոգարարձութիւն անէր զէպի Ենդլիա անցանելու համար: Յուլիսի 15ին զորս զնացին Բերլինից և յառաջուց զէպի սարսնական զբօսարանակը Միլիերգի մօտ. Այս տեղ ահա կամք ունէր ժառանգ արքայազը հետանալ իւր հօրից, բայց արքայ Օգուստոսը որ իւր Բերլինուձըր եղած, զեսպանի ձեռքով տեղեկացած էր ժառանգ արքայազնի զիտաւորութեանը, համոզեց նորան, որ իւր հիւրասիրութիւնը չը խառնակէ այդպիսի անստորձ կերպով: Այս տեղից զնաց թագաւորը զէպի Ենարխա, Մարկգրաֆի մօտ. և սա զիտէր ահա փախստեան զիտաւորութիւնը, և չը կամենալով գտնելոյ, որ այդ զայնկա կղեցուցիչ գործը կատարվէր իւր պալատուձը, թոյլ չը տուեց արքայազնին և ոչ իսկ հեծանել իւր արտոի ձիաների վերայ, Գրաֆ Յեքքնդորֆըր Բերլինից նամակներ ստացաւ Ենարխաուձըր, որ ծանուցանուձին նորան թէ թագաւորութեան ժառանգի փախուստը քաղաքի խօսակցութեան նիւթն էր, և նամակները ցոյց տուեց թագաւորին:

որ այնուհետև գնդապետ Բոխովին և գեներալ Ալալովին պատուէր տուեց զգուշանալ, մի գուցէ լմէ փախչի արքայազը. այս լմէ ոչ. նորա լինելու էին պատասխանատու: Անարախից գնաց Ճանապարհորդութիւնը դէպ ի Աւելյն. Շտէյնշիբուրտումը, ոչ հետի Զինցհէյմից, պիտոյ է վերջապէս յառաջ տարվէր փախստեան խորհուրդը: Թագաւորը զիշերային իջեան էր ընտրած մի քանի շտեմարանների մէջ. ժառանգ արքայազնի մտ ընած էր գնդապետ Բոխովը և մի սենեկային սպասաւոր. թագաւորի թիկնապահ մանկլաւիկ Քէյթը, որ Աւելյումը եղած Աէյտենանտ Քէյթի կրտսեր եղբայրն էր, համոզվեցաւ ժառանգ արքայազնի խօսքով, որ ձիաներ բերէ նորա համար և ուղեկից լինի նորան: Կրր որ այն երկու սեղանակից ընկերքը խորքնի մէջ ընկզմած էին, արքայազը հանգերծը փոխեց և հետացաւ. բայց շտեմարանի դարպասի աղմկից զարթնեցաւ սենեկի սպասաւորը, ազաղակ դործեց. նորա ձայնը լսեցին մի այլ շտեմարանում, ուր ընած էր Ալալովը: Բոլորեքեան շտապումն զէպ ի գիւղը, ուր գտանումն ժառանգ արքայազը յեցած մի սայլի վերայ և սպասելով իւր ձիաներին: Զիանքը հասանումն, արքայազը կամենումէ հեծանել, բայց պաշտանակալքը խափանումն նորան և բռնութեամբ և խեղբարեքով. նորա խոստանումն լմէ ոչինչ չէին ասելու թագաւորին այդ անցքի մասին, միայն լմէ կամեար նա իւր գինուորական հագուստով դուրս ելանել: Եւ արդարև թագաւորը այս անցքից ոչինչ չիմացաւ. բայց միտ օրին արքայազնի թուղթը, որ գրած էր Քատտէի վերայ, հասանումէ թագաւորին և ծանուցանումէ նորան բոլոր բանի որպիսութիւնը: Գիտելի է, որ ժառանգ թագաւորազը այս անցքը երկու օր յառաջ գրած է լինում Քատտէին, տեղեկութիւն տալով նորան լմէ անպատճառ փախչելու է և հրամայելով նորան, որ քամակից հասանէ Անգլիա: Բայց այդ նամակի երեսը գրելով այսպէս. « Հասցէ Աէյտենանտ Քատտէին, Նիւրնբերգի վերայով », շտապելուց մոռացել էր բառս « Քերլինի մէջ »: Նիւրնբերգի նամակատան կառավարիչը կարծեց լմէ այս նամակը պատկանումէ մի պրուսիական զորավարով պաշտանաւորի Քատտէ անունով, որ այն միջոցին Նիւրնբերգումն էր, և յանձնեց սորան: Այսպէս ահա ստացաւ թագաւորը իւր որդու յառուկ ձեռքով գրած վկայագիրը որ ակնյայտի ստացուցանումէր նորա գաւաճանութիւնը: Ֆրանկֆուրտից թագաւորը ժառանգի հետ նաև նստելով գնաց դէպ ի Աւելի և հրաման տուեց բանտարկելու Աէյտենանտ Քէյթը, բայց սա մի փոքր յառաջ փախած էր, և Հոլլանդիայի վերայով գնաց Անգլիա. յետոյ մտաւ Պորտուգալացոց պաշտանի մէջ, մինչև Ֆրիդրիկոսը, հօր մահուց յետոյ, վերստին գանչեց նորան դէպ ի հայրենիք և շինեց նորան Օրկեստ

Ղէյտենանա, գլխաւոր ակադեմիա և հոգարարնու Եկեղեցիայի: Դորա եղբայր մանկլաւիկ Քէյթը աղափնցաւ մի ոչորմա՞ծ գանահարու-թենո՞վ, նախ և յառաջ բանա զբնացաւ, ապա կոխփնցաւ հրացանա-կիր զինուորներէ մէջ, Բայց պարոն քատակն որ անպշու շու՞թեամբ մնացած էր Բերլինի մէջ և արքայազնի բանտարկփնաց յետոյ, լսման-փնցաւ և զինուորական տակնով զատարարփնցաւ զէպ ի մշանջնեա-ւոր բանտարկելութիւն. բայց թագաւորը սաստկացրեց պոյ վճիոր մահու պատահասով: Եւ արգարև սրամահ եղաւ այն վատարողը Քիւտարին քաղաքի մէջ 1730 թուակ. սկստ. Յին, թէպէտ շատ մարդիկ բարեխոսութիւն էին արած, Եւ ժառանգ արքայազը իւր բան-տի լուսամտոսից պիտոյ է ականատես լինէր իւր բարեկամի զէպ ի մահ տանելուն: Եւ այլ մարդիկ որ միջպէս ոչնական էին եղած արքայ-ազնի փախտակներ — ուղղակի մասնակիցք բաց ի Քատակից և երկու եղբայր Քէյթեաններէջ չը յայանփնցան — կամ թէ կասկածելի էին երևում թագաւորին, փորձեցին իւրեանց վերայ թագաւորի բարեու-թեան գաճութիւնը, ռմանք շատ խտտապէս: Քաղաւհուն յանդիմա-նելով յանդիմանեց թագաւորը և յայանեց նորան, թէ անչարժ և անյելիկ վճիռ է կատել, որ ժառանգ արքայազը մահալ պատահասփի: Եւ արքայազն Ֆրիդրիկէ քուերը որ պարտաւորփնցաւ որպէս մա-նակից իւր եղբոր դործին, ահ տուեց թագաւորը թէ մեռուցանելու է նորան. Պալատական տիկինը ֆոն Քամբը, իսկաւի աղաբարու-թեններով, յետոյ երկու միւս տիկնայր յորդորեցին նորան չափա-ւորել իւր խտութիւնը. Օրիորդը ֆոն Բիւլով որ թագաւհու տա-ջին պալատական օրիորդն էր, և նորա եղբայրը կասկածելի լինելով թագաւորին, որպէս թէ միջնորդ էին եղած թագաւհուն և անգլխա-կան պալատին, արտորփնցան զէպ ի Ղիսփանիա, և երկու ժամի մէջ պիտոյ է պատարտփնէին և ճանապարհ ընկնէին: Ֆոն Մոնտսլիեո սե-նեկապետը որ թագաւորութեան ժառանգին պարօք էր տուել մի ար-ծաթադրոխ, պատիժ կրեց, նախ և յառաջ զբնփնցով իւր արծա-թից և յետոյ 1000 դահեկան ոսկի տուգանք վճարելով. երբ որ սա ծածուկ հեռացաւ Բերլինից, նորա պատկերը ամաշտուցին կախալանի վերայ, Տէրութեանական և տանձնական գործերի նախարարը ֆոն Քերպհասուցն արձակփնցաւ իւր պաշտօնից և արտորփնցաւ զէպ ի իւր ազարակը. Դիւհանը որ եղած էր արքայազնի վարժապետ, տարա-գրփնցաւ զէպ ի Մեմել. շատ պաշտօնակալներ և Պատալամեան ու-ուսնարանի կառավարչի Դոսիս անունով գուտորը որ իւր երջեցողու-թեան և զեղեցկութեան պատճառով սիրելի էր ժառանգ արքայազ-նին, չղթանելով կապած տարփնցաւ զէպ ի Սպանդաու, ուր այդ աղ-ջիկը երեք տարի բանտարկեալ մնաց, Յետոյ, երբ որ Ֆրիդրիկոսը

աժող նստեց, սոցա և միւսերին, իւրեանց կրած զբեռներէն չամար
չատուցումն արեց ինչքան կարելի էր, թէպէտ ամենեւում փոխարի-
նել արգարե անկարող էր նա: — Ինչք արքայազը անարժան նախա-
տերներէի շատ ասրաւ և կրկար ժամանակ մահաւ փառնգի մէջ էր,
Հայրը առաջին անգամը Հանդիպելով նորան Քրանկիֆուրտի մէջ, բրո-
նեց նորա կուրծքից և գուազանի գլխովը խեթկեց նորա քիթը և
արիւնաշաղախ արեց, Աւելելումը հրամայեց թաղաւորը, որ ամբողջ
հրամանատար գննեբալ ֆոն Մազելը բերէ նորան իւր առաջև, և բար-
կացած հայրը խուսեց նորա հետ այսպէս. « Ինչու կամեցար դու հրա-
ժարիլի քո պաշտօնից, պատասխանեց որդին. « Երբ մահու գուք
փարտուեք իմ հետ ոչ թէ որպէս ձեր որդու, այլ որպէս ձեր ըստ-
բուհի հետ: — « Դու մի վատանուն փոխատուական ես, որ ոչ սիրտ
ունիս և ոչ ամօթ: — « Ես ունիմ այնքան, ինչքան դուք, պա-
տասխանեց ժառանգ արքայազը. ես կամեցայ միայն գործ զնել այն
բանը, ինչ որ դուք ասած էք թէ անելու էիր իմ տեղումս: »
Եյս վճնական պատասխանը ևս առաւել զարագրեց թագաւորի սիր-
տը. նա դուրս քարշեց սուրը, որ սպանութիւն գործէ, բայց զննե-
բալ Մազելը անվնէհեր սրտով բռնեց թագաւորի ձեռքը և ձայն ար-
ձակեց. « Եղանեցէք ինձ, տէր թագաւոր, բայց ինչայնչէք ժառան-
գի կեանքը: » Թագաւորը շտարժամ մնալով, զննեբալը այս միջո-
ցին կրկին տարաւ արքայազը զէպ ի իւր սենեակը, Աւելելից բերվե-
ցաւ սա զէպ ի Գրեթելիվալդ, Բերլինի մաս. այս տեղ կատարվե-
ցաւ նորա վերայ առաջին գառատուական քննութիւնը. յետոյ տա-
րան նորան Քրիստրին: Կորա Հանդերձեղէնի պահարանը, և զբան-
քը թուով 3000 հատոր որանեցին և վեր առան. զբաղեալի պաշտան
կատարող սպասաւորը արտորվեցաւ զէպ ի Գեմել, ժառանգ արքայ-
ազնին թողլուութիւն չեղաւ ոչ սրինգ անելու, ոչ զիրք և ոչ
թուղթ ձեռք անելու, ոչ զանակ ու պատասխարող գործ անելու և
ոչ հաղորդութիւն անելու միւսերի հետ. նա կրուեալ մի հնտի
կապոյտ վերնազգեստ, նստած էր փայտեայ պատուանդանի վերայ,
կերակուրը տանուեալ մանրած, և ոչ մինը նորա սպասաւորներէից
չունէր համարձակութիւն մտնելու նորան. Կախազահ պարտն ֆոն
Գրեթելովը մի ծակ բացեց տանիքից, որ մտիթարութիւն մատուցանէ
բանտարկածին, Համարեա թէ բոլոր զբացի թագաւորները, նոյն խկ
կայսր Կարոլուս վեցերորդը բարեխօս գտանվեցան Պրուսիայի թագա-
ւորացիի համար. Պատերազմական դատաստանի առաջև պատասխանեց
արքայազը անվնէհեր սրտով, և արդարապաշտ զննեբալները Անհալթ,
Կաթլցմեր, Բուրգլենբրոք ուղղակի յայտնեցին թագաւորին, թէ նա
չունէր իշխանութիւն առանց օրինաւոր և հրագարակական քննու-

Թեան վերայնեւ ,, գնդապետ Ֆրիդրիկոսի ,, կեանքը : Այ՞ սարուն Ռուդոլֆներոզը պատանեց վերայի զգեստը և ձայն արձակեց . ,, Եթէ ձեր մեծութիւնը խնդրումէ արիւն , ահա վեր առէք իմս . բայց ժառանգի արիւնը չէք ստանալու , ինչքան որ ես համարձակութիւն ունիմ խօսելու ,, :

Ա կրջապէս թագաւորազը բացեց իւր ականջը քարոզիչ Միւլլերի խրատարանութեանը , զգճաց և յայանեց թէ պատրաստ էր թողութիւն խնդրել իւր հօրից , Այս լուրերը , զոցա վերայ յաւելացնելով այն համարը թէ աթոռի ժառանգը դարձել է շատ կրօնասէր , այլև ուրիշ պալատների միջնորդութիւնքը , զոր օրինակ կայարի բարեխառութիւնը որ քաղցր էր հայրական սրտին , շարժեցին ծնողի գօթք Ֆրիդրիկոսի վերայ , 1730 թուակ . նոյեմբ . 17ին հրամայեց հայրը շնորհել ժառանգի կեանքը , և սորա փոխարէն , որդին հնազանդութեան ուխտ դրեց : Ֆրիդրիկոսը վերստին ստացաւ իւր ազատութիւնը , բայց պիտոյ է մնար տակաւին Քիւստրինումը և աշխատէր որպէս պատերազմական և կալուածական գործերի խորհրդական . նա սկսեց ամենայն յօժարութեամբ ծառայել իւր նոր կոչմանը և ուսանել հիմնաւորապէս թէ ինչպէս պիտոյ է կառավարել թագաւորական եկամուտքը , արտաքին կարգերը և անտեսական գործերը , 1731 թուակ . օգոստ . 15ին , հայրը առաջին անգամը երես առ երես խօսելով որդու հետ , թոյլ տուեց նորան իւր Ֆրիդրիկե քուեր հարսանիքի հանդէսին մասնակից գտանձել ապարանքումը , քաղաքական զգեստով , Այս Ֆրիդրիկէն սիրելով իւր եղբայրը և կամենալով հօր սիրտը ամենին հաշտեցնել , հաւանած էր ամուսնանալ Քայրութի ժառանգ թագաւորազին հետ : Մի քանի օր յետոյ , Ֆրիդրիկոսը վերստին ստացաւ իւր զննուորական զգեստը , բայց պիտոյ է կրկին անգամ վերադառնար դէպ ի Քիւստրին . սպա կարգվեցաւ գնդապետ և ստացաւ մի յատուկ զօրախումբ : Այնուհետև թագաւորը խորհուրդ յղացաւ իւր մէջ պսակելու աթոռի ժառանգը . սա ականայ յօժարվեցաւ , երբ որ լսեց հօր բերանից , թէ կամք ունի խօսել նորա համար կին Բրաունշվիցիայի օրիորդ թագաւորազին Եղիսարեթը , որ կայսրեղբօր զուտրն էր : 1733 թուակ . յունիսի 12ին պսակվեցաւ Ֆրիդրիկոսը անուանի արքայ Մոդհէյմի ձեռքով , և նորա ամուսնական անարարութիւնը կարգադրվեցաւ . այժմ Բերլինի մէջ բաւական խնայօրէն : Ֆրիդրիկոսը , իւր զօրախումբը բարեկարգ և լիակատար դրութեան մէջ ցոյց տալու համար , ստիպվեցաւ պարտք առնուլ կայսրից և Անգլիոյից . նորա ականայ կամքով յանձն առած ամուսնութիւնը մնաց անզուակ . Ֆրիդրիկոսը ուսաւ պատուել իւր ամուսինը , բայց սիրել ոչ երբէք , 1734 թուակ . թագաւորը յանձնեց որդուն

գատատանական գործերը. գալոց տարումը դարձաւ նա զեներալ-մայ-
իօր. Աւելի մայելչացաւ ժառանգ թագաւորազնի կեանքը, երբ որ
Ռէյնսբերգ փոքրիկ քաղաքը, 12 մղան Ռերլինից հեռի, որպէս սե-
փականութիւն թողնուեցաւ նորան, ուր և նա, ինչպէս կամք ունէր,
հաստատեց կամ նորոգեց ապարանքն ու այգին. Սկսեալ 1736 թ.
օգոստոսից կացաւ նա այս սեղ մինչև իւր հօր մահը, ապրելով մի
շատ քաղցր և խելացի ընկերութեան մէջ. Յառաջուց, այսինքն 1734
թուակ. 12000 պրուսիացի մարդերով գերմանական թագաւորու-
թեան զորքի հետ միասին պատերազմ դնաց Ֆրանսիացոց վերայ, բայց
այս գործը ոչինչ պատերազմական պարծանք չը բերեց նորան, թէ-
պէտ շատ օգտակար եղաւ նորան, պատճառ առով ծանօթանալու ճե-
րունի Եւզենիօսի ¹⁾ հետ, այլև վերահասու լինելու իւր և գերմա-
նական թագաւորութեան թոյլ կողմերին. Նա զրեց զէպ ի Ռերլին
այսպէս. «Պաշնաւորների զօրքը է մի խառնակութեան զպրոց և մի
դաշտ առանց դարնի պսակների»: Չմնը վերադարձաւ նա զէպ ի
Ռերլին:

Ռէյնսբերգումը ժողովեց իւր մտա մի ընկերութիւն առաւել սի-
րարժան, հանձարաւոր և ճարտարագործ մարդերի, ամենայն կերպով
չաճ և օգուտ քաղելով ժամանակէնը. Ֆրիդրիխսը յաճախ աշխա-
տումը ողջոյն գիշերներ, պարապումը փիլիսոփայութեան, պատմա-
բանութեան և լեզուագիտութեան, յառաջ էր տանում թագաւորու-
թեան գործերը, Քուպպին մտակայ քաղաքումը կրթումը իւր զե-

¹⁾ Պրանց Եւզենիօս, արքայազն Սափոյայի, Նաթ Փարկումը 1663 թուակ.
որ էր մինը առաւել երեւելի աւարիական զորավարներից, նա սկզբումը սահմանված
լինելով հոգեւոր պաշտանի համար, այնու ամենայնիւ շատ յոժարութիւն ունէր զէպ
ի գիւտարական պաշտանը: Նա խնդրեց, որ կարգեն նորան ֆրանսիական զօրքի մէջ.
բայց արհամարհութեամբ մերժեցին նորան. և նա սահմաններից դիմեց զէպ ի ու-
սարիական զօրքը. այս սեղ շուտով հասաւ սեղանալ զեներալի առնիւմի, մեծ
յաջմութեանով պատերազմ տուեց Յաննիկերի հետ, և այն պատերազմումը, որ կար
Ֆրանսիայի հետ Սպանիական ամուսի ժառանգութեան մասին, շատ քաղցաւոր և յա-
ջոյ գտանուեցաւ: Նորա յաջմութեանը յառաջուցին հաշտութեան դաշտաւորու-
թեանը Վարլովից և Պատարովից քաղաքների մէջ, և այն զլինովն հարուստը որ
Մարլբորդի հետ միասին հաջրեց նա ֆրանսիական զօրքերին շեղուեալ, Տուրին
և Ռ.զենարդե քաղաքների մտա, պատճառ տուեցին Նուբրովիսա սասն և շրտերոր-
զին շատ և շատ ապաշուակելու, որ յառաջուց անարժանապէս մերժել էին այգովտի
մեծարարութիւնը: Նորա քաղ պատերազմուց Եւզենիօսը մնաւ Ալեքսանդրի մէջ 1736
թուակ. անմահացած իւր քաղաքործութեանեւրով, և նոյնպէս անուսնի որպէս շա-
ղաքակա մարդ, ոչինչ պակաս սիրոց և յառաջացոցից գիտութեան, որպէս և սր-
գարտաշու առաջինի անձն իւր մտածաւոր կեանքի մէջ:

ղեցիկ զօրախումբը. ապա լինումը նուազածութիւն, կատարումսին թատրոնական հանդէսներ, հասարակաց կարասներ և զանազան նուագարաններով երաժշտութիւնք: Մի արի նամակակցութենով և ժամանակ առ ժամանակ այցելութիւն զնայով ղեկ ի Բերլին, դուրսի մարդերի հետ միշտ հաղորդակից էին Ռէյնսերբըեան բարեկամքը: Երևելի ուսումնական և ճարտարագործ մարդիկ թէ կարճ և թէ երկար միջոցով գամումներ այս տեղ Գրիգորիկոսի հետ կենակից, ըստ որում խելաշի իշխանաւորքը սիրումն նոյնպէս և ականաւոր մարդերով շքեպատել իւրեանց շորս կողմը: Գրիգորիկոսի մտ հէտ էին գալիս և հանձնարար օտարականք, զոր օրինակ Ալգարօստի վենեափկեցին, մի ճօրիմաստ մատենագիր և ասողամիտ կրիպիկոս, որ շատ ճանապարհորդած մարդ էր: Աւ Աօլտեր ֆրանսիացու հետ նամակախօսութիւն բացեց Գրիգորիկոսը և գրեց նորան այսպէս. «մեր խափառար երջանկութեան համար Ռէյնսերբըումը պակաս է մեզ մի Աօլտեր միայն. թեպէտ զուք սպրումիք մեզանից հետի, այնու ամենայնիւ մեր մէջ էք»: Հաստատեցին Բայխարդեան կարդի նշան և մի տեսակ պատերազմական խաղարկութեան ընկերութիւն, որոնց առաջնորդը էր Գուրբեն: Ամենայն ասպետ որ մասնակից էր այս խաղարկութեանը, ստացաւ մի քաղցրահամ համ թէ հին անուն. նոյն ինքն Ռէյնսերբը ասվեցաւ Ռեմոսերբը:

Ռէյնսերբըի մէջ յառաջացան և Գրիգորիկոսի առաջին գրումքը. 1738 թուականին հրատարակվեցան նորա «Նկատողութիւնքը քաղաքագիտութեան այժմեան դրութեան վերայ Աւրոպայումը»: Ենտոյ «Նմոխմութիւնքը», ինչ գրումի մէջ կամեցաւ նա բռնկալութեան գովասանող, իշխանների հաճոյախօս, ֆլորենտինացի Մարիափելիի Principe անուն գիրքը հերքել, այսպէս պատճառարանելով. «Նուսքինութիւնը և մարդասիրութիւնը և թաղաւորների միայնակ կարողութիւնը, բայց անսանձ կամեցողութիւնը կործանիչ է: Այս միջոցներումը մտաւ նա Գրեյմաուրեան ¹⁾ կարգի մէջ. սկզբումը ջեր-

¹⁾ Գրեյմաուրեան կարգը է մի ընկերութիւն բարի խորհուրդներ յաղպելնելու և յառաջ ասնելու համար: Այս ընկերութեան միջոցմբը իւրեանց ճակատագր զոր ճակատարութիւնքը սխառումն և յառաջ են ասումով օրինակելով և խօսքի սնորով, որ ասած էին օրնայիւրներից. թշուառ ասում նոյն իսկ գերմանական բառս Գրեյմաուրեր, այսինքն սպառնալով: Այս կարգի սկզբնաւորութիւնը ծագել է Ենդլխայց (17 երարգ գարումը), որ պայծառ մտանող, ըստարեւել մարդիկ մտրամվեցան բննելու և նամալելու բնութիւնը, բայց իւրեանց գիտաւորութիւնը, այն ժամանակի հալածասիրութեան պատճառով, ճակատ ենին պատկերազարկան նշանների և արտաքին արարչութեանների սակ, որ ասած էին օրնամաններից, օրնայից և շտաբը այդ ընկերութեան միջոցմբ էին. զիցս հասարակումն և օրնայիւրների ընկերութեան սան մէջ:

մասիրտ միարան էր սորան. յետոյ, երբ որ պատերազմը գանչեց նորան զէպի գաշտ, չեղաւ մասնակից այդ միարանութեան խորհրդին.

Արքային ժամանակու մը, արքայազը շատ սիրելի էր իւր հօր աչքին. նորա զորագունդը համարեալ թէ բոլորովին բաղանու մը վեց տանաչափ բարձրահասակ մարդերից, որոնց ամեն մինը արժէր 1000 թալեր: Ետան յաճախ օրինակ էր բերում հայրը միւս զորագունդերի համար. հայրը շատ անգամ այցելութիւն էր գալիս զէպի Ռէյնսերից. հայր ու որդի անակնկալ ուրախութիւն էին պատրաստում միմանց փորձիկ ընծաներով և աշխատում էին ուղարկել միմանց այգու նախահաս պտուղքը: Երայն թէ Քրիզդրիկոսի կրօնական հայեցումներին անհասան էր թագաւորը, և թողնց նորան իւր կաւթին, բայց համարում էր նորան մի ազատամիտ մարդ: Տակաւին երկու օր իւր մահուց յառաջ գրխատանց նորան հայրը, և ձայն արձակեց ասելով. փառք քեզ, Աստուած, որ պարգեւել ես ինձ այսպիսի արժանաւոր որդի և ժողանց. 1740 թուակ. մայիսի 31ին, թագաւորը յանձնեց կառավարութիւնը Քրիզդրիկոս որդուն և մնաւ քաջութեամբ որպէս Գաստն հոսմայեցի, և անմտով խաղաղութեամբ որպէս մի ընտանի մարդ, որ իւր վերայ յապկապէս կամենում էր տեղեկանալ մահու խորհրդներին:

2. Գրիգորիոս Գրիգորի Բարեպետը, հետեւելով Նոր Երեսնանց Եպիսկոպոսի Երեսնանցին: Կանուկ թագաւորը ժողանցեց մի աշխարհ 2275 քառակուսի մղն տարածութենով և ոչ ակելի քան թէ 2½ միլիոն բնակիչներով. բայց մի բարեկարգ զօրք 80.000 մարդով պատրաստ էր հնազանդել նորա հրամաններին և մի դանձ 8—9 միլիոն թալերով բաց էր թագաւորի գործակատարութեան համար: Այս, տերութեան ներքին կառավարութիւնը կարգաւորած էր, բայց լինելով ծանրաշարժ, չունէր այնքան արդիւնաւոր ազդեցութիւն ժողովրդի բարեկեցութեան վերայ: Պրուսիայի դրութիւնը, համեմատելով միւս տերութեաններին, չէր կարող երբէք նշանաւոր ասվել. Թագաւոր Քրիզդրիկոս Ալէքսեւոսը համարում էր այս մասին մի զորքի հրամանատար ասանց զօրավարական պարծանքի և աշխարհակալական հողու, այն մասին, մի վաճառական որ չունէր սիրտ մեծամեծ առաջաբխութեաններ համար, միւս մասին, մի անգում բնաւոր և հողեմաճառ մարդ: Սկսեալ այն ժամանակից, երբ որ Պրուսիայի անունը վերջին 20 տարու մէջ չէր ստացել ոչինչ պարծանք պատերազմի դաշտում, կայսերական Աստրիայի մեծամտութիւնը համարում էր այս արքայութեան կարողութիւնը որպէս նուազած և ոչընչացած: Աստրիան սիրելով զեւ եւ նայել Քրիզդրիկոսի վերայ որպէս մի հպատակ իշխանաւորի վերայ, ակելորդ էր համարում հաս-

տաս Քնալ իւր խոստման մէջ, որ արած էր Ֆրիդրիխսին Իւլիս և Բերգ կալուածներէ մասին, և ամենայն կերպով փորձել տուեց նորան իւր գերակշիւ զօրութիւնը: Աւարիայի օրինակը ազդեց և զրացի պալատներէ վերայ, և սորա մեծամիտ գոռոզութենով նայումին Պրուսիայի Հանդարտ և մի փոքր ծանրաբայլ յառաջագիտութեան վերայ և չը կարողացան ձանաչել խոշոր կեղևի մէջ փակած ուղեղաւոր պարունակութիւնը: Այն Համբուր, թէ ամտի ժառանգ Ֆրիդրիխսը որպէս մի ստահակ, դժգոհ, անհանգիստ երիտասարդ 18 տարօք բանտարկվել էր Քիւստրինի մէջ, այդ Համբուր յայտնի էր ամենեցուն. բայց թէ չափ և Հասակ ստանալով և դառնալով մի խոհական այր, դուրս էր եկած բանտիցը, այդ բանը, երևումը թէ ոչ ոք չը գիտէ: Աւելորդական զուարթամիտ բարեկամակիցներէ ջնծութեան ձայնը Հասաւ թափանցեց պալատներէ ծածուկ ու անմատչելի ներսը, զարձաւ սովորական խօսակցութեան և զրոյցի նիւթ երուպական թագաւորներէ ապարանքներումը. բայց թէ Աւելորդի մէջ Ֆրիդրիխսը իւր բարեկամներէ Հետ քննած ու զննած էր քաղաքագիտութեան, թագաւորական անտեսութեան և պատերազմական հըմտութեան խորքերը, ուսած էր փիլիսոփայութեան խրատները, խնդրած ու գտած էր ժամանակի խորհրդաւոր նշանները, ամենայն կերպով յարգարել էր ձանապարհները դէպ ի մի մեծ ասպարեզ. այս բաները դուշակումին հազիւ թէ Աւրտերի պէս մարդիկ, թնոյ թէ նախարարները և խոստովանահայր արեղայցը Աիլեննայի և Աերսայլի պալատներէ մէջ: Արդարև, ինչպէս որ Բերլինումը օմանը ձանձրացած լինելով հին խոստահրաման թագաւորիցը, ուրխանումին յուսալով մի ուրախից կեանք պալատի մէջ և մեծ գործակատարութեան հանդէս քաղցր արքայական արեգակի ծառագոյթներէ տակ. նոյնպէս և շատ պալատներ սպասումին որ և իցէ փշրանք ձեռք ձգելու այն ճոխ ժառանգութենից, որ խոստախրտ խնայողի և պահպանողի ձեռքից անցած էր որպէս թէ մի շայլարար փատնողի ձեռք: Այսպէս ահա բոլոր աշխարհը խարվեցաւ Ֆրիդրիխսի ամտանստութեան ժամանակին, և նա միայն, որ կանուխ դաստիարակված էր կեանքի դառն զարոյցումը, պայծառապէս ձանաչել էր իւր անձը և ստացել էր հոգու ամրութիւն և հաստատութիւն, գիտէր և խոստովանումը իւր մէջ թէ ինչ կարող էր և կամենումը ինքն:

Ֆրիդրիխս երկրորդը իւր մտանող հօր ձեռքից ստանալով արքայական թագը, այլև գորա Հետ մի զօրաւոր օրինակ թէ ինչպէս մի թագաւոր կարող էր և պատերազմական զաշտից դուրս մեռանել քաջ և աներկիւղ մահով, իսկոյն կենդանի սրտով զգաց նա, թէ հարկաւոր էր իւր թագաւորութեան նուազած պատիւը միւսանգամ

ուրի վերայ կանգնեցնել օտար տէրութենների առջև. այս պատճառով խոհեմութեամբ գործ դրեց իւր ժառանգեալ գանձերը և հնարները և սոցա օգնելովը կարգադրութիւններ արեց որ ոչինչ տարակոյս չը թողնէին նորա դիտաւորութեան մասին, որ էր Պրուսիայի դրութիւնը Եւրոպական թագաւորութենների մէջ մի քանի աստիճան աւելի վեր բարձրացնել: Իւր թագաւորութեան առաջին ամսումը ահա զօրաւոր կերպով զուրս եկաւ Ֆրիդրիկոսը որպէս պաշտպան Հեսենիայի Ղանդղրաֆին, երբ որ Վայինցի կայսրընտիր իշխանը մասն էր պահանջում սորա ստացած ժառանգութենից որ էր կոմսութիւնը Հանաու: Եւս վէճը, որ այնքան սաստկացած էր, մինչև կայսրընտիրը ահ տուեց թէ բունութիւն գործ կը զնէ, որպէս միջնորդ քաղցրութեամբ վերջացրեց Ֆրիդրիկոսը: Նոյն միջոցին բազմացրեց նա իւր զօրքը 15 խումբերով, և Ղիւթթիխան կախկոպոսին, որ յանդուգն համարձակութենով սեփականել էր իւրեան իշխանական իրաւունք Պրուսիային հասած Հերտալլ գաւառի վերայ, հանդիպեց 12000 մարդով, որ յարձակվելով նորա սահմանի վերայ պիտոյ է պաշար և պատերազմական հարկ հաւաքէին: Երբ որ կախկոպոսի գանձաւոր, որպէս թէ աշխարհի խաղաղութիւնը խախտել է, և կարոլոս վեցերորդի ազգարարութիւնը տէրութենական ժողովի բերանով չը կարողացան Ֆրիդրիկոսի մտքը փոխել, այնուհետև կախկոպոսը յանձն առաւ հաշտութեան պայմանը, և 210,000 թալլերով գնեց Հերտալլ գաւառը որ հետաւոր սահման լինելով, չէր այնքան պիտանի կալուած Պրուսիայի համար:

Տէրութեան ներքին բարեկարգութեանը նուիրեց Ֆրիդրիկոս գալոց ամիսները. այս գործերի մէջ հասանումէ կոյսը կարոլոս վեցերորդի մահու համբաւը. այժմ 1740 թուակ. հոկտ. 20 էր, Տենդով արտացած թագաւորը իսկոյն վեր է կենում իւր մահճից, և իւր խորհրդականների հետ միասին մի քանի օր ծածուկ աշխատում է վերջացնում մի պատերազմի առաջարկութիւն ընդդէմ կարող Եւստրիային, Նախ և յառաջ պետք էր յարգի կացուցանել Պրուսիայի արդարացի, բայց երկար ժամանակ անհօգ մնացած, այն և մտապած իրաւունքը Ղիզնից, Բրիգ, Ալեյաու և Եգեննդօրփ նախարարութենների վերայ. ապա դեռահասակ Վարիամ Բերեզիայի, շատ կողմերից փորձութեան մէջ եղած ժառանգութիւնը որ Պրագմատեան Սանքցիօնի ¹⁾ զօրութենով պիտոյ է հասանէր կայսր կարոլոսի ան-

¹⁾ Սանքցիօ պրագմատիկա (Sanctio pragmatia) սափաւոր Հռոմայեցց ձէլ այն պատահականութիւնը որ կայսրը, խորհրդակց լինելով իւր նախարարների և խորհրդականների հետ, որ սափաւոր Պրագմատեանք pragmatia, սալիս էր մի հաս-

դրանիկ ազգեան, այլև Եւստրիական տէրութեան, վայրիկան մի տեղեց խախտված, Տիմուշքը և նորա արտաբնատ նեղի մէջ բնկած դրութիւնը շահաստացութեան հրաւեր էին մատուցանում մի փոստաւեր, իւր աշխարհի սահմանքը ընդարձակել ջանացող թագաւորի, Գեղեցիկ, Պրուսիայի համար այնքան յարմարադիրը Շլեզիան իւր գրիթէ 2 միլիոն բնակիչներով և 3 միլիոնի եկամուտով հրապուրումը (քարշուներ) գործ ու վաստակ սիրող Գրիգորիկոսի սիրար. Գրիգորիկոսը շատ անգամ ասած էր թէ ինչպէս պիտի վճարէր այն երկզիմի կեանքը Պրուսիական տէրութեան, որ կայսրը չափը իշխանաւորութեան պէտ աւելի, քան թէ մի ազատ արքայութեան համ էր տալիս: Գրիգորիկոսը 1740 թուակ. գեղեցիկներին 28000 մարդով ներս մտաւ Շլեզիայի մէջ, և Վոլֆիցի մտա տուած կոխը վճանց նորա լազդի յաջողութիւնը: Ըրտափոյթ յառաջ գնալով առիթ տուեց Գրիգորիկոսը հրատարակելու մի առաջարկութեան որ արած էր Ղերայլեան պալատումը, Եւստրիական տունը խոնարհեցնելու համար, Սպանիան, Բաւարիան, Վարսոնիան միարանվեցան Նիմֆրնուրգի մէջ (1741 թուակ. մայիսին) մի դաշնաւորութեանով որի խորհուրդը այն էր, որ Հարսուրգեան ազգատոհմից յափշտակեն կայսերական թագը և հատուկօրր անեն Մարիամ Թերեզիա թագուհու միապետութիւնը: Եւ Գրիգորիկոսը միաւորվեցաւ այդ դաշնաւորների հետ. 1742 թուակ. մայիսի 17ին միասնգամ յաղթող գտանվեցաւ նա բացարձակ դաշտի մէջ Խոտուզիցի մտ, և առանց խորհրդակից լինելու իւր դաշնաւորներին, Մարիամ Թերեզիայի հետ կապեց այն Բրեսլաւեան հաշտութեան դաշը (1742 ի յունիսի 11ին), որի զօրութեանով ստացաւ բոլոր Շլեզիան բաց ի Թեչընեան իշխանութեանց և քանի մի այլ կայսրածներից: — Եւս էր առաջին շլեզիական պատերազմը, Բայց Եւստրիացոց յաջող պատերազմը ընդդէմ միւս դաշնաւորներին, որով և Պրուսիայի իշխանութիւնը Շլեզիայի վերայ խախտվեցաւ, այլև Մարիամ Թերեզիան չը կամենալով կայսր խոստովանել ետեւե-

րութեան մեղով մատուցած ինքնազրի: Գերմանիայի մէջ, Պրուսիական Կանցլեր առիւթ այն: պատերազմական և քաղաքական մարտերով յիշատակի կարգազրութիւնը որ արած է կայսր Կարլուս վեցերորդը իւր աշխիկ զուտներէ համար, Դորա զօրութեանով պիտի և որ, էթէ կայսրը մուսներ առանց արտ զուտի, նորա կայսերակց գուտրների տեղբունիչը բոլոր Եւստրիական տէրութեան մէջ համարվեր որքաւոր մտանց և ունեւոր իրաւունք կայսերական սթառ նստելու: Եւս տունը ստացաւ այդ կարգազրութիւնը այն իրաւութեանց, որ նորա հաստատուող շատ աշխատութեամբ և ջանաբութեամբ գրուեց թէ նոցա հումանութիւնը, որ ձերմարտակա մասնակից էին այդ իրաւունքին, և թէ մեծամեծ տէրութեաններէ երաշխաւորութիւնը, գորա պահպանութեան մասին:

բորդ կարելու կարիքներսը Քախարայի, որ ընտրած էր ահա, և ոչ
խէ յետ տալ նորան Բոհեմիայի թագը, պատճառ տուեց Քրիզրիկոսին
միտասնգամ բարձրացնել զէնքը ընդդէմ Աւստրիայի։ Նա մի նոր
զաշնուորութիւն հաստատեց Քրանսիայի հետ (1744 թ. յունիսի
5ին) և ահա սգոտ. 21 թուակ. նորա զորապետ զինթրֆելդը ներս
է մտանում առաջին Պրուսիացոց հետ Բոհեմիայի մէջ. սեպ. 10ին
բացումեն Փրագի իրամենքը և 16ին անձնատուր²է²լինում քաղա-
քը։ Թեպէտ նորա ստիպեցան թողուլ Բոհեմիան, բայց 1745 թ.
յաղթութիւնքը Մարիաու., Սորբ., Հեններգորֆ, Քեննեսգորֆ քա-
ղաքների մտ, ուր զարկվեցան Աւստրիացիք և սոցա հետ այժմ զաշ-
նուորութեմ Մաքսանացիք, յառաջացրեցին մի նոր հաշտութեան պայմա-
նադրութիւն Գրեզդնի և Բերլինի մէջ (գեկտ. 26ին). զորանով հաս-
տատվեցաւ Քրիզրիկոսի իշխանութիւնը Շլեզիայի վերայ, — Այս և
երկրորդ շլեզիական պատերազմը, 1745 թուակ. գեկտ. 28ին, Քրիզ-
րիկոսը առաջին և վերջին անգամը յաղթական հանդիսով ներս մտաւ
Բերլինի մէջ. նոյն օրի երկղոյն տեսութիւն գնաց նա իւր մերձի
մահ հիանդ ուսուցիչ Գիւհանին։

Այժմ եկաւ հասաւ Պրուսիայի համար մի օրհնեալ ժամանակ
խաղաղութեան, Ճարտարութիւնք և գիտութիւնք փառաւորապէս ծաղ-
կեցան թագազարդ Յանսուսեան փիլիսոփայի հանճարեղ հոգարարու-
թեան ներքոյ. ոչինչ պակաս յառաջագեմ եղաւ աշխարհի նիւթա-
կան օգուտը և շահը, Պրուսիան սկսեց նշանուոր յարգ և պատի-
ստանալ Եւրոպայի նախադահ թագաւորութիւնների մէջ, Այս պար-
ծանքը նախանձ ու երկիւղ յառաջացրեց եւրոպական ցամաքաչօղի
զրեթէ բոլոր պալատների մէջ. այլև Մարիամ Թերեզիան չը կարաց
մոտանալ այն զրկանքը որ հասել էր նորան, կորուսանելով Շլե-
զիան, Այսպէս ահա Աւստրիան, գերմանական թագաւորութիւնը,
Քրանսիան և Սաքսոնիան զաշնուորութիւն կապեցին ընդդէմ Քրիզ-
րիկոսին. այս զաշնուորութեանը ընկերացաւ և Քրիզրիկոսի անձնա-
ւորական թշնամին, Ելիսարեթ կայսրուհին Ռուսաստանի, այլև Շվե-
դիան։ Սոցա գիտաւորութիւնը այն էր, որ ամենին հասուկոտոր ա-
նեն Պրուսիական միապետութիւնը, վերացնեն արքայութիւնը և խո-
նարհեցնեն Քրիզրիկոսը, շինելով նորան Աւստրիայի հպատակ իշխան
մի քանի հարիւր քառակուսի մղանաչափ կալուածով, Քրիզրիկոսը իւր
ծածուկ լրարներնէր ձեռքով հասաստի տեղեկութիւն տաացած այդ
զաշնուորութենից, այլև Մարիամ Թերեզիան երկղիմի պատասխան-
ներ տալով Քրիզրիկոսին, սա խեղոյն, անկարծելի արագութեամբ,
1756 թուակ. սեպտ. ամսին, 70,000 մարդով ներս յարձակվեցաւ
Շլեզիայի մէջ, Այս երրորդ շլեզիական, եօթնամեայ պատերազմը,

այս պատերազմը երեք կանանց հետ, ինչպէս ասումըր Գրիգորիկոսը, այսինքն Մարիամ Թերեզիայի, Փոմբազուրի ¹⁾ և Ռուսաց կայսրուհի Ալեքսանդրովնի հետ, էր ոչ թէ միայն Գրիգորիկոսի պահաւոր զօրավարական, այլև քաղաքական ճարտարագործութիւնը: Այս պատերազմը պատերազմումէ նա, շատ անգամ իւր անձը և իւր թագաւորութիւնը փրկելու համար. շատ անգամ երևումէ նա չիք դարձուցած, բայց միշտ վեր է կանգնում դարձեալ, և նորա անսպառելի հանճարը միշտ գտանումէ հնարք ու ճանապարհ. այս էր մի վիշապի հետ պատերազմ. բայց նա մնումէ հաստատուն և որպէս ևս որպէսկան քաղազուն զուրս է գնում ասպարէզեցը. — Վեղբուսը չունէր Գրիգորիկոս ոչ մի գաշաւոր. միայն Անգլիայի հետ զբաժ կար մի պայման, որ նա հետի մնար պատերազմիցը. աւելի օգուտ չէր կարելի ստանալ անգլիական պարլամենտից որ անմիաբան էր իւր մէջ. յետոյ, երբ Անգլիան Քրանսիայի կողմից, որի հետ պատերազմ ունէր նա ամերիկական կալուածների մասին, յարձակումն տեսաւ իւր Հաննովրիայի վերայ, ապա ուղարկեց Պրուսիային օգնութեան արձաթ և մտակցեց նորան որպէս զաշնակիցք Հաննովրիան, Հեսսենիան և Բրաունշվէյգը: Աղբա ինքն ըստ ինքեան տկար էին, բայց ինչպի կերպով պէտք ածովելով, ապագայումը շատ օգտակար եղան Գրիգորիկոսին: Այնու ամենայնի. Պրուսիայի նիւթական գորութիւնը կարող չէր համեմատուիլ այն համարէն զգորութենների հետ որ նորա հակառակորդը կարող էին գործ գնել և յիրաւի գործ գրեցին: Աթէ չը լինէր Գրիգորիկոսի պէս մարդը, Պրուսիա կը խորտակվէր նոյն իսկ առաջին տարումը. Գրիգորիկոսի հոգին էր որ շնչումէր պրուսիական պատերազմողների և պրուսիական ազգի մէջ: Այս շատանգամ հարուածներ ստանալով մինչև ի կործանումն, զոր օրինակ Քօլլին, Հասսերէր, Յիւլիխաու, Քուններսդորֆ, Մաքսըն, Գոսսեգերնզօրֆ, Երեսլաու, Հօխբիրխն, Լանդաշաւթ քաղաքների մաս, բայց ևս աւելի յաճախ յաղթող գտանվելով, որպէս Լոպոզեց, Ռօսբախ, Լիւթն, Քրեյնելչ, Յաւնզօրֆ, Լիգնից, Տօրգաու, Մարբուրգ, Լանգենզալցա, Բաւրքքօրֆ, Ֆրէյլերգ, Ալիհէլմաթալ քաղաքների մաս,

¹⁾ Այս Փոմբազուր կինը էր Լուզովիկոս ասան և հինգերորդի հուշկաւոր հարձը շատ անձան ասէնց. բայց զա լինելով յառաջուց Նիթիւ անունով ստորին վարձաւորի անունն, իւր զնչեցիութեան պատճառով հասաւ թագաւորի տեսութեանը և որոս վերայ մի այնպիսի աննախարող իշխանութիւն ստացաւ, որ ամենայն բան պաշտօնի մէջ կտէ էր նորա կողմից: Թէպէտ այդ կինը ոչ տկամուոր ինչպիսիէն. նով և ոչ շնորհալի խառնցութենով նշանուոր լնէր: Մի հաս բարերարութիւնը, որ նա ցուց է տուած Քրանսիային, եղաւ նորս մահը 1763 թուականին:

դուրս և գնում նա կուտի ասպարեզիցը, թէպէտ ոչինչ տրապետութիւնք չը գործելով, բայց զարմաք ու գովասանութիւն հնձելով բոլոր աշխարհի բերանից, ահացուցիչ լինելով իւր հակառակորդների համար և ամբացած ինքը իւր մէջ և իւր ազգի մէջ, Այսպիսի պատերազմում անպատճառ խորտակված կը լինէր մի այլքը նորա ժամանակակիցներէց, Այնուհետև Պրուսիան ստացել էր իւր համար մի մեծ տերութեան տեղ ու պատիւ Ռուսաստանի, Անգլիայի, Աւստրիայի և Ֆրանսիայի կողքին:

Ֆրիդրիկոսը այս եօթնամեայ պատերազմի մէջ ունեցած հոգեղէն և մարմնաւոր աշխատութիւններից զարձել էր գրեթէ մի ծեր մարդ. երեսը ցուցանումէր արդէն խորշումանք, մէջքը կորացել էր, բայց հոգին զալար էր զեռ ևս, և սիրտը, ինչպէս խոստովանումէր ինքը, անսրտիտիս:

Այսուհետև նորա գլխաւոր գործականութիւնը նուիրած էր իւր աշխարհի նորոգութեանը և բարեկարգութեանը, բայց զեռ ևս մի քանի անգամ ազգու կերպով միջամուխ եղաւ օտարերկրեայ քաղաքականութեան մէջ, միանգամ ոչ առանց նշանաւոր շահաստացութեան հոգով և ժողովոգով, բայց ոչ այնքան ձեռնառու նորա քաղաքական պարծանքին. յետոյ ըստ մեծի մասին, առանց մեծ նիւթական օգտի, բայց յաւելացնելով նորա բարոյական պատիւը, Պոլոնիայի որպիսութիւնքն էին, որ առաջին անգամը գործական կացուցին նորա քաղաքական ազդեցութիւնը դուրսի թագաւորութիւնների վերայ:

Պոլոնիայի արքայ Օգոստոս երրորդը 1764 թուականին վախճանված լինելով, Ֆրիդրիկոսը Ռուսաց կայսրուհի Կաթարինայի թեւալորութեամբ յօժարվեցաւ օգնական լինել նորա սիրելի Մամուլաւ Պոնեւատովսկու աթոռանստութեանը Պոլոնիայի մէջ, Արովհետև Աւստրիան և Պրուսիան ցանկացած էին թագաւորեցուցանել մի Մարսոնացի, այս պատճառով Ֆրիդրիկոսը և Կաթարինան իւրեանց մէջ պայման կապեցին, որպէս թէ այն խորհրդով, որ Պոլոնական թագաւորի ընտրութիւնը և տերութեան օրինադրութիւնքը ոտքի վերայ պահպանեն, այլազաւան (լուծերական և ուժօրմատեան) Պոլոնացիքը պաշտպանեն և Մամուլաւը թագաւոր կարգեն: Այն միջոցին, երբ որ 40,000 մարդ Ռուսը ներս մտան պոլոնական հասարակապետութեան ծոցը և զննաւորված Մոսկովիտեանք խոռովեցան ընտրող փոխանորդների մէջ, կանգնած էին և սրուստիական զորքեր Պոլոնիայի սահմանի վերայ: Ֆրիդրիկոսը Կաթարինայի կողքին կատարումը մի աննշան, աննախանձելի պաշտն. բայց առանց պատերազմի չէր կարող ընդդիմանալ նորան, և ամենին ստանասիրտ մնալ այս տեղ, ընդդէմ էր իւր օգտին: Այսպէս ահա Ֆրիդրիկոսը գործակից դաւն-

վեցաւ թագադիր լինելու Կաթարինայի սիրականին. այլև յանձն առաւ նա չը թողուլ ամենին, որ Աւստրիան ներս խառնօր Գոլոնա-կան գործերի մէջ. բայց թողլ տուեց և անհոգ մնաց, երբ Ռուսաս-տանը Գոլոնական Հասարակապետութեան իրաւունքները. . . . անա-կիս էր անուս՝ Այն ժամանակին, Տաճկաստանը միայն իւր արգա-րասիրութենոյ ամաչելոցրեց մեծամեծ տերութիւնըը, 1768 թուակ. պատերազմ բանալով Ռուսիայի Հետ, Գոլոնիային արած թշնաման-քի համար, Ռուսաստանի յաջողութիւնը այս պատերազմի մէջ, ծանր հոգաւր յառաջացրեց Գրիգորիկոսի սրտումը իւր յառուկ ապագայ գրու-թեան մասին. այնուհետև մտեցաւ նա մանուկ կայսր Յովսէփի եր-կրորդին, երես առ երես հանգիպեց նորան և պայմանագրեց նորա հետ, որ նորա միասին միջնորդ լինին Տաճկաստանի և Գոլոնիայի համար, Բայց Տաճկաստանի ամենին խորտակվիլը կապեց նոցա ճանապարհը, մինչև որ և նորա չը համարձակվեցան վճարելի ընդդիմանալ յաղ-թող կայսրուհուն, Աւելի լաւ համարեցին նորա յառաջուց ապահով կացուցանել իւրեանց գործակատար աղջեղու թիւնը ձերայած ու թու-լացած Գոլոնիայի վերայ, որ մի գուցէ թէ հարկ լինէր նոցա, բո-լորը թող տալ Հիւսիսային կարողութեանը, Մի քանի ամիս անցած, Աւստրիայի զորքերը, միս չը զնելով Ռուսիայա Պոնեատովելու ընդ-դիմախօսութեանը, 1770 թուականին ներս խաղաղին Գոլոնիայի մէջ. նոյնպէս ներս շարժվեցան Գրուսիայիք, պատճառելով թէ կամք ու-նէին շղթայ կապելով փակել ժամտախօսի ճանապարհը. մի Ռուսաց զորախումբ մտաւուց կանգնած էր նոյն իսկ աշխարհէ մէջ, Այս մի-ջոցին, առաջին անգամը Տաճկաստանի կողմից առաջարկութիւն եղաւ թաժանելու Գոլոնիան, Աւստրիան և Տաճկաստանը պիտոյ է միասոր-վէին, Ռուսերը հալածելու և Գոլոնիական Հասարակապետութիւնը իւրեանց մէջ թաժանելու, Բայց մի քանի ամիս յետոյ Կաթարինա կայսրուհին նոյնպէս խորհրդակից եղաւ Գրուսիայի թագաւորազն Էնն-րիկոսի հետ, Գոլոնիայի թաժանելու մասին, Գրիգորիկոսը ակրումը անհասան էր այդ խորհրդին, բայց տեղի տուեց այն մտածութեանը թէ իւր, արևելեան և արևմտեան կիսաշախի ձեղքած, թագաւորու-թեանը կարելի էր այդպէս համալցութիւն տալ. այլև երկիւղ ու-նէր թէ մի գուցէ Աւստրիան և Ռուսիան, և առանց նորա հաւա-նութեանը, թաժանեն իւրեանց մէջ Գոլոնիան, և յետոյ ինքը ան-մասն ու անթաժին մնայ, առանց կարողանալու պահպանել Գոլոնիայի ինքնիշխանութիւնը, Երբ որ Կաթարինան յայտնեց, թէ իւր վե-րայ կ'անուր բոլոր եւրոպական պալատների յանդիմանութիւնը այդ մասին, այնուհետև 1772ին, փետր. 17ին գրվեցաւ Պետերբուրգի մէջ անբաղդ Գոլոնիայի մասնատութեան հրովալտակը. առհասարակ 3000

քառակուսի մղոն բաց կտրեցին Պոլսնիայից. Պրուսիան սկզբումը ստացաւ 630 մղոն, բայց իւր բաժինը 1773 և 1774ին բաւական անձնահասճոյ կերպով ճոխացրեց մինչև 46000 մղոնաչափ և 18000 բնակիչներով. Պոլսնիայի այսպէս տխուր ճակատագիրը կարգաւով, պիտոյ է ցաւի ամենային աչնիւ և արդարապաշտ սիրաւ. բայց «Սահման քաջաց զէնք իւրեանց, որչափ հասանէ, այնքան ունի» ասումէ Լայոց խոր քաղաքագրեա, իմաստուն ձերունի Մովսէս Խորենացին. Եւ արգարև, քաղաքականութեան մէջ չը կայ փափկասիրտ մարգասիրութիւն, այլ մի թագաւորութիւն կլանումէ միւսը, և թէ սա որ և իցէ պատճառով կարող չէր պահպանել իւր ինքնիշխան դրութիւնը. յափշտակութեններով միայն յառաջացել են մեծամեծ թագաւորութիւնները. այս մասին անբարոյականութեան կեղտ անուն կապել տիրակալտոյների վերայ անսեղի էր. ինչ ազգ չէ կարող իւր անձը ինքնօրէն կառավարել և պահպանել, ինչ մարդ կորուսել է իւր բարոյական ազատութիւնը, կարօտ է օտարի առաջնորդութեանը, պիտոյ է հնազանդօրէ օտարի իշխանութեանը, պիտոյ է ստրկանայ և ծառայէ միւսի խելքին ու կամքին. այսպէս է աշխարհային բաների կարգը, թէ երեկ, թէ այսօր և թէ գալոց օրը. Բայց մեր յետ զսոնանք զէպ ի մեր պատմութիւնը.

Ղաւթի մեծ պարծանք ճարեց իւր համար Քրիզիթիոսը վերջին քաղաքական անցքերի մէջ, որոնց մասնակից էր ինքը, Բաւարիական աթոռի ժառանգութեան մասին պատերազմ յարուցանելով խափանեց նա, որ այն մասնատող և յարմարակից աշխարհները ձեռք բերող Պոլսնիական, որին նա ինքը գործակից էր եղած Պոլսնիայի մէջ, գործ չը գրվի և Գերմանիայի վերայ. Մի գուցէ որ Աւստրիան տիրակալեա Բաւարիային, Քրիզիթիոսը 80,000 մարդով դուրս գնաց զէպ ի Ռուսիա, և հաշտութեան գաշը, որ կապվեցաւ Թեւրնի մէջ, փրկեց Բաւարիայի ինքնիշխանութիւնը. Քրիզիթիոսը ստացաւ իւր համար այն օգուտը, որ նորա ժառանգական իրաւունքը Անսլախ և Բայրութի իշխանութենների վերայ ընդունելի եղան. Այսուհետև Քրիզիթիոսը, որովհետև Ռուսաստան և Աւստրիա աւելի մտանցան միմեանց, զարմեալ աւելի ամուր կապվեցաւ Անգլիայի հետ, բայց և նմանապէս 1785 թուակ. բարեկամական և վաճառաշահական դաշն գրեց հիւսիսային Ամերիկայի միաբանեալ տերութենների հետ. նոյն միջոցումը երևեցաւ Լոլլանդիայի մէջ, Լայթենաւերների և Օրաննանց միջնորդ¹⁾

¹⁾ Օրանները սաբուսթին կուսակիցը Օրանեան արքայազնի որ Լոլլանդիո ժառանգական անգլոփախ էր. սորա պաշտպանութեան ժառանգական անգլոփախ կառավարութեան կերպը Ընդդէմ Լայթենաւերը ստան համախոհներն. որ սփռւ ինքնով.

բայց նորա առաջարկութիւնքը անպատշաճ մնացին, այլև նա շատ հաստատ կամեցողութիւն չունէր այդ մասին: Եւելի գորաւոր կերպով ընդդէմ դուրս եկաւ Ֆրիդրիկոսը, երբ որ կայսր Յովսէփոս երկրորդը փորձ փորձեց ստանալ Քաթարիա փոխանակութենով, և յառաջուց Ճանապարհը կտրելու համար, որ Հարսուր բզեան ազգաստճմը երբէք չը կարողանայ այդպիսի շահաստացութեան փորձեր ստնել, 1785 թ. յուլիսի 13ին, Սարսնիայի, Հաննովերիայի, Բրաունշվեգիայի, Լեւսեն-Քասելի, Յփէլդրուքենի և Հիւսիսային Գերմանիայի առաւել շատ իշխանների հետ հաստատեց այն դաշնաւորութիւնը որ ասումէ բէրլին-իւն իշխանների դաշնաւորութիւն, որ և պիտոյ է պահպանել գերմանական թագաւորութեան օրինադրութիւնը և զինուորեալ ձեռքով ընդդիմանար ամենայն անիրաւութեան: Պմանք կարծումէին, թէ Ֆրիդրիկոսի գիտաւորութիւնը էր մի հիւսիսային գերմանական կայսերութիւն: Եւս բանին ընդդիմախօս լինելով Յովսէֆ երկրորդը, նոյն իսկ Աւստրիական հաշտութեան զօրութենով ջոյց տուեցին նորան մի այդպիսի դաշնաւորութեան օրինապատշաճութիւնը: Եւսպէս, Ֆրիդրիկոսը ապահով կացուցանելով գերմանական ազգի հայրենիքը, աւարտեց իւր քաղաքական ասպարէզը և հրաժարովեցաւ աշխարհի անցքերի տեսարանիցը, երբ որ ահա գրեթէ կէս դար զխաւորապէս ներգործական էր դառնելը նոցա մէջ:

3. **Պրուսիայի և Ռուսիայի միջև ընդհանուր կապուածութիւնը:**
 Նոյն միջոցին, երբ որ Ֆրիդրիկոսը, ինչպէս պատմեցինք, իւր թագաւորութիւնը մեծացուցել էր և այդքան աշխատաւոր էր դառնոված եւրոպական և գերմանական կարգերի պահպանութեան համար, կառավարումը և իւր տէրութիւնը մի ճշմարիտ անվատական զօրծականութենով, բացարձակ ինքնիշխանութենով և գրեթէ ամենազայեաց հակողութենով: Կառավարութեան սանձերը ձեռք առած, իսկոյն ջոյց տուեց իւր անձը որպէս ինքնակալ. նորա մանկութեան կենակից ընկերքը ոչինչ ազդեցութիւն չունէին կառավարութեան գործերի վերայ և ըստ մեծի մասին գործակատար էին ստորակարգ պաշտօնների մէջ. նոյն ինքը-Քէյթը ստացաւ մի չափաւոր իշխանութիւն միայն: Բայց արքայախոյնել կերպով հոգ տարաւ նա իւր մօր համար, իւր եղբայրները դաստիարակել տուեց իւր աչքի առաջև. նորա թագուհի ամուսինը ապրումը նորանից բաժան, և ձմերան միջոցին միայն բարեկենդանի օրերումը և թատրանի մէջ տեսանումէին նոքա միմանց, Թագուհին երբէք եկած չէ Սանտուսի ամբարանոցը, որ Ֆրիդրիկոսի սիրած բնակարանն էր:

ժողովական տեղակալի մեծ կարողութեան վերայ, կամեւումէն առաջ Հոլլանդական հասարակագիտութեանը մի աւելի ազատ օրինադրութիւն:

Վերա թաքաւորութեան առաջին կարգադրութիւնքը ուղղած էին դեպ ի իւր հպատակների օգուար, որի համար ջերմեանդութեամբ հոգատար էր նա մինչև իւր վերջին շունչը: Յիսանելով իւր կառավարութիւնը, նախարարներին խրատ տուեց, որ երկզիմի գործերի մէջ իւր յատուկ օգուար յետագաս առնեն քան թէ աշխարհի օգուար, որ նորան անձանձիր յիշեցուցանեն, եթէ երբ և իցէ անիրաւելու էր դեպ ի ժողովուրդը: Սովածներին բացեց իւր շտեմարանքը և 4000 ազրատ կանանց համար հրամայեց պատրաստել մանելու սենեակներ, Հասարակաց կարծիքին հրապարակախոս բերան տալու համար, որպէս և ինքը կամենալով նորա վերայ ներգործել, հաստատեց նա Գորմէյի գործակցութենով երկու նոր օրագիր Քերլիւնի մէջ, և Հալլէի համալսարանը բարձրացնելու, այլև իւր հօր անիրաւութեանը զարման տանելու համար, զարձեալ հրաւիրեց իւր մտարտաքսած փիլիսոփայ Ա. օլֆին. իւր բոլոր հպատակներին ապահովութիւն տուեց կրօնի և հաւատի ազատութեան մասին: Երբ որ փրակտեան էր Շլիզիային, հանդիսարար արտասանեց նա, թէ այդ դատարի կրօնական կարգերը պիտոյ է անփոփոխ մնան, միայն թէ կարող էին խաղաղութեամբ ապրել միմեանց հետ:

Ղառաստանական պատիժների շարքից խեղոյն դուրս ձգեց տանջանքը, սկզբումը թողլ տալով մի քանի բացառութիւնք, բայց յետոյ ամենին անհետ կացուցանելով դորան. նմանպէս խափանեց նա մանկասպան կանանց դնելը պարկի մէջ և խեղդամահ առնելը ջրով, այլև եկեղեցական ապաշխարութիւնք մեղուցեալ կանանց վերայ. սակրատորութիւնք թողլ տուեց միայն, երբ որ յանցարար հեղձամղձուկ էին արած: Պատերազմական արուեստի մէջ փոքր բան գտաւ նա փոփոխելու. միայն աշխատուէր նա զբաւակաները իւր աղնուականներից ընտրել և առհասարակ, աւելի քան թէ արժան է, վերադաս էր համարում աղնուականքը, զինուորական պաշտօնակալք և բարձր աստիճանաւորք ընտրելու ժամանակին: Ստակական զինուորների պատուախրութիւնք բորբոքելու համար, կարգեց այն պատուանշանք, որ ասգումը Ordre pour le mérite այսինքն նշան վասն արդիւնաբարութեան: Սոպա վարեցողութիւնք մեղմացրեց նա: Մեծածախ հրակայամարմին պահպան զորագունդը հին թագաւորի հետ միասին վերջացաւ և ապա ջրուեցաւ. դորա հակառակ յաւելացան մի քանի տեսակ զորագունդեր, զոր օրինակ Եգերք և Քելզեկերք և եօթն հրացանակիր զորախումբք. այլև թնդանօթանից զորականքը ստացան Ետնիշարների պէս թմբուկներ, փոխանակ հին պարկուպղուկին:

Վաստակախրութիւնք կամենալով յառաջագէտ կացուցանել, իւր թագաւորութեան առաջին ժամանակումը գործակից ընտրեց Գուց-

կոխկէլց անունով վաճառականը և կարգեց մի առանձին կառավարութիւն մանուֆակտուրներին և առուսուրքի համար: Տէրութեան գշջքը գործ գրեց այնպիսի ճիշդ անտեսութենով, ինչպէս իւր հայրը: Բայց այնքան ևս առատանուն էր ճարտարութեան և գիտութեան գանձերը ստանալու համար, ինչքան որ վերնագոյն կեանքի ուրախութենների և վայելչութենների մասին: Դեռ ևս իւր թագաւորութեան առաջին տրերումը հրաւիրեց իւր մտա հոշակաւոր մաթեմատիկոս Մուլերոյին, շինելով նորան իւր Ակադեմիայի առջնորդ: Աւուրքի հետ պայմանախառութիւն արեց, Գրիգորիկոսը գրել էր մտքումը շինել մի Օպերայի տուն Բերլինի մէջ, Պոլինիաքի հին յիշատակարանները ստանալ արծաթով, գրամատողովի սենեակ հիմնարկել, մի ֆրանսիական թատրոնային ընկերութիւն կարգել, մի իտալական Օպերա հաստատել, և ահա բորբոքվելով առաջին շեղեական պատերազմը, ի հարկէ անկատար մնացին և այդ առաջարկութիւնքը: Բայց շուտով սկսեց Գրիգորիկոսը նոր ի նորոյ կարգի դնել թագաւորութեան ներքին բաները և աւելի մեծապայելուչ կերպով:

Այն միջոցը, որ անցաւ երկու առաջին շեղեական պատերազմների աւարտան և եօթնամեայ պատերազմի մէջ, է Գրիգորիկոսի անձաններ, երբեմն մի փոքր շտապով օրինադրութեան և կառավարութեան ամենազովանի ժամանակը: Պատճառ, թէ և նա եօթնամեայ պատերազմից յետոյ երբէք չը դադարեց զօրութիւնը կերպով կառարեւազործել իւր տէրութեան շինութիւնը, այնու ամենայնիւ ապագայ տարիներումը ընթացաւ աւելի կոշտութենով, և աւելի յաճախ քան թէ յառաջ շեղվեցաւ դէպ ի միակողմանի տեսութիւններ, սրտեց հետեանքները այնքան օգտակար չէին թագաւորութեանը:

Տուրևաութեան, վաստակատրութեան և երկրագործութեան կարգը պլլափոխվեցաւ եսկան կերպով: Գրիգորիկոսը, սկսեալ 1746 մինչև 1756ը հիմնարկեց 280 գիւղեր և գաղթաբազարներ: Եօթնամեայ պատերազմից յետոյ յաւելացան նոյնքան ևս շինութիւնք, մանաւանդ թէ աշխարհի պոլոնիական մասնումը: Պոլսցան ֆարրիկոսք և ամենայն տեսակ մանուֆակտուրք: Յաւելի է, որ նա շատ անգամ հանդիպեց և խորհրայ մարդերի, և նորա մեծաւաճառութեան (մոնոպոլիտի) կարգը կապեց մասնաւորների ազատ գործականութիւնը: Նա յառաջ տարաւ բոլորը ստանց ապարէզ տալու առանձնականներին: Երգելելով բազմովին խաղերը (հաղարդեան խաղերը) ներս բերեց Նոտերիայք (վիճակարկական խաղեր), որ խաղազոյների արծաթը մնայ աշխարհի մէջ: Նոյն պատճառով ուսանողքը ունեին միայն համարձակութիւն յաճախել դէպ ի ընտանի գաբոցքը և համալսարանքը: չը կար հրաման գնալու օտար աշխարհ, և ոչ ևս գուրա տա-

նելու սկիւն և արծաթ, Ներս րեբովեցա մի աւելի թեթեւեղ զբաժ, որ ասումքր զառուժանեան արծաթ, Առուստրքի և վաստակարարութեան համար կարգեց Գրեգորիկոսը մի հինգերորդ կասափարութիւն, զնենրալ գիրեբարտիում անուևով, Օստրիգլանդիայումը, որ 1744 ժառանգութեամբ ստացել էր, Կնգն քաղաքը շինեց ազատ նաւահանգիստ, հիմնարկեց մի ասիական ընկերութիւն, որ առուստրք լինի Ձինաստանի հետ, ուր և յիրաւի 1752ին արձակվեցաւ առաջին Պրուսիական նաւը, Պոլսցաւ և մի քննաբան ընկերութիւն, բայց որպէս սա, նոյնպէս և ասիական ընկերութիւնը խանդարվեցաւ շուտով, Աւելի ակողական պատշէներ բերեց թագաւորի հօգարարձութիւնը մրցարներ ծառերի և գետնախնձորի մշակութեան համար, որ սկզբումը շատ վարքը հասանութիւն գտաւ և գրեթե բռնութեամբ սխալ է յառաջ տանվեր, Եթեմանայ պատերազմից յետոյ այս բոլոր սկուսածները շարունակվեցան և աւելի քան թե քանանայ խաղաղութեան միջոցում բերեցին ճոխ պատշէներ, թեպէտ զոչանից մի քանիքը ծառայելով միակողմանի հայեցողութեան, երեկան յետոյ շատ նեղիչ և ծանր, Համարեալ թե բոլոր վաստակատերական առաջարկութիւնքը, զոր օրինակ ստացան, ֆարթոսի, թղթի մանուֆակտուրքը և այլն, հաստատվեցան թագաւորի ծախքով, նա այնքան յառաջադէմ կառուց վաստակատերութիւնը որ 4 միլիոնի կտաւ և այնքան ևս բուրգ կարող էին դուրս ուղարկվի Պրուսիայից մաճառելու համար, թամբարտի մաճառաշահութիւնը նախ և յառաջ մի միլիոն թալերով վարձու տուեց, յետոյ կարգեց զորս համար մի ընդհանուր կասափարութիւն, որով թամբարտի արդիւնքը հասան մինչև 1.200000 թալերի, Ղահվին դարձաւ նոյնպէս արքունի մանուֆախան, և իրաւունքը բովելու նորան, վկայական թղթերով շնորհվումը հարստականներին միայն, Նոյն հարկի տակ ընկան վաստիկ փայտը և սղը, Տերեղուցիչ էր մարդկութեան բարեկամին տեսանել, որ այդպիսի կերպերով աղքատ քաղաքացին և շինականը զրկվումէին իւրեանց շատ անմեղ, այն շատ հարկաւոր սննդական և կենսական պիտոյքներեց, և ինչ էին սոցա հետեւները, խարերայութիւնը որ այդպիսի պատճառներով շատ խոր զըրգեցին ժողովրդի բարոյականութեան հիմունքը, Մի շուտի բան էր, որ թագաւորը տերութեան ելումուտի կարգադրութիւնը և կասափարութիւնը յանձնեց օտարականներին, մանաւանդ թե ֆրանսիացոց, սորա էին կենսական պիտոյքների, մճարելի հարկերի և մարսերի ընդհանուր վերահաղորդը (Administration générale des accises et péages), որ և դարձեալ իւրեանց հայրենակիցները ներս էին բերում որպէս ստորին գործակատարք, Այս կեղեքիչ մարդիկը անշարի տակի էին քաղաքացիներին աչքումը, թեպէտ

Ֆեասելով ազգին, յիբաւի սգուս էին բերում արքունի գանձատանը, Ասճատականութիւնը յառաջադէմ աննելու համար շինեց նա մի արքունի սեղան (Baque) իւր եղբայրակից սեղաններովը դաւառների մէջ, և զորս համար զուրս հանեց 8 միլիոն թալեր: 1772 թուակ. գոյացաւ մի ծովային վաճառականութեան ընկերութիւն ալջիաներով. այդ ընկերութեանը շնորհեց թագաւորը աղի մենափաճառութիւնը, և այնպիսի իրաւունք, որ նորա միայն կարող էին ամենայն տեղ մեղրամոմով սուսուարք անել: Եւ աղքատացած աղնուականների համար կարգեց մի փոխառութեան սեղան, ինչ տեղիչ կարող էին նորա աւելի թեթեւ պայմաններով արծաթ փոխ անուլ, երբ որ մի կերպով գնահատած էին նոցա անշարժ գոյքը: Գործածական արծաթը շատ անպիտան լինելով, կորցրեց իւր արժանաւորութիւնը և փոխարինվեցաւ աւելի լաւով, Եւ այդ փոփոխութեանից մասնաւոր մարդիկ մեծ զրկանք կրեցին, Գորա փոխարէն, թագաւորը սովի տարիներումը, 1772ին, բացեց իւր շահմարանները և հայ վաճառեց կամ թէ հասցրեց ժողովրդին շափաւոր գնով. նոյն իսկ Սաքսոնիայից գալիս էր ժողովուրդը Պրուսիա, սովից փրկութիւն գտանելու համար, Եւ անայն տարի ալջելական ճանապարհորդութիւնը գործելով, վերահասու էր լինում ամենայն բանի, և ոմանք պաշտանակալք ահով ու զողութեանով սպասուեին նորա գալտեանը: Ի վերայ այդը ամենայնի բազմօրինակարար խարուսեին նորան սուս սուս յայտարարութեաներով, և նորա գաղթականների շտաբը որ Հիմարիկէ էր Պոլսնիայի և Օստրիլիլանդիայի մէջ, անկարգ կառավարութեան պատճառով աւերվեցան, Ձինուորական գործը անդադար մինչև իւր վախճանելը բարեկարգուեալ և լրացուցանուեալ, նա իւր զորքը համարուեալ այն կարողութիւնը որ մեծացուցել էր Պրուսիան, որի վերայ հաստատուեալ Պրուսիայի պատուի պահպանութիւնը, Երգարև, ինչ որ Ֆրիդրիկոսը կարողացաւ յառաջացնել թէ լուսաւորութիւն, թէ կրօնական պղտուութիւն, թէ արդարադատութիւն և հաւասարութիւն որէնքի առաջև, այդ բոլորը կարելի էր միայն նորա զօրքի ուժով, որ համեմատելով փոքրիկ Պրուսիային մի անսովոր բան էր, Եւ յիւ Ֆրիդրիկոսի զօրքը և նորա խիստ զինուորական կարգը շեղաւ Ֆեասակար Պրուսիային, որովհետև Ֆրիդրիկոսի պարծանք էր իւր ազգի պարծանքը, և Գերմանացիք որ և այսօր ևս մի անգլխաղի և ֆրանսիացի աւելի յառաջ պատուուեին և որոնուեին քան թէ իւրեանց յատուկ համեստ հայրենակիցը, Ֆրիդրիկոսի ձեռքով ստացան մի քանի ժամանակ աղնի անձնաճանաչութիւն և պատուելի անուն ասարականների առաջև, Ֆրիդրիկոսի զօրքը Ֆեասակար եղաւ նորանով միայն, որ Գերմանիայի բոլոր փոքրիկ իշխանները օրինակ առան նորա-

նից, աղնուականների համար պահեցին մեծաւորների պաշտօնքը, ըսկան կուսալարել նիդակով ու հրացանի ոտքով և իւրեանց շինականները աղջականների պէս կրթած վաճառեցին աւելի շատ սուղոյն, այն ամենը տալով նորանց և ովկիանոսի միւս երեւր:

Քրիդրիկոսը մինչև իւր մեռանելը մեծապէս հօգարարձու էր օրիփնադրութեան և օրինավարութեան մասին: Այս գործի համար ընարեց նա Քօքչէի, որ ահա Քրիդրիկոս Այլհեմիսի օրերումը իրաւունքների նախարար էր, օրին և Քրիդրիկոս երկրորդը բոլորովին բաշխել էր իւր հաւասար Թագաւորը կամենումը, որ լինի միութիւն տուած օրէնքների և դատաստանական ընթացքի մէջ, որ համատուփի վէճերի այն երկար ու ձիգ ակողութիւնը որ եղած էր հին կարգերով, որ լինի խիստ հակողութիւն գատաւորների վերայ, որ արտաքովին ուսումնական և խորամանկ համակական, և հնացած գերմանական սահմանողութիւնքը, այլև այն վիճարանութիւնքը որ յաջողութիւն էին տալիս նենգաւոր օրինածութեանը, Այս բաները ճանաչած ու կամեցած լինել է Քրիդրիկոսի արդիւնքը, բայց զոչա գործադրութիւնը պատկանում է Քօքչէի նախարարին, որի կամքին թողած էր զա ամենին: Այն ծանօթ անցքը որ հանդիպել է այն մարդուն որ մի ազօրիք ուներ Սանուսի ամարանոցի մօտ, ապացուցանում է թէ Քրիդրիկոսը պատրաստ էր իւր յատուկ անձնական օգուտը ստորագրել արդարութեան տակ. պատմութիւն է լինում, որ թագաւորը ահ տալով ազօրեպանին, թէ նորա ազօրիքը որ տեղադրուցանում էր իւր արբայական ամրոցը, կը հրամայէ բռնութեամբ քանջել և բաց ձգել, եթէ ազօրեպանը չը կամեր յոժարական վաճառել նորան թագաւորին, ազօրեպանը համարձակվեցաւ զարձաւ ահ տալ թագաւորին, թէ բողոքելու է գէպ ի Բերլինեան խորհրդարանը, և այսպէս թողվեցաւ աէր իւր ժառանգական կալուածի վերայ: Օրէնքների և դատաստանի բարեկարգութեան գլխաւոր գործը պատրաստ էր ահա 1755 թուականին, և Քօքչէին կամենալով հաճոյակատար լինել զէպ ի թագաւորը, յիրաւի շատ շտապով կատարեց իւր գործը: Օրինապահպանութեան վերայ սուր աչքով հսկում էր թագաւորը. նա ինքը պահանջում էր յայտարարութիւն, թէ ինչքան վէճեր վճռած էին, և թղթերի լուսանցներումը սաստիկ ծանօթարանութիւնք գրելով գատաւորների վճռահատութեան վերայ, յանդիմանում էր և նախատակած էր առում նորանց, Աւերջին վճիռը բոլոր ծանր ֆաստադրատութեանների մէջ պահեց թագաւորը իւր համար. նա կամ հաստատում էր, կամ թէ ջրում էր գատարանների կողմից սահմանած պատժները. նա կամենում էր իւրին հարցախորձել ամեն մի մահապճոխ պատճառները. ինքը միայն կամենում էր հրամայական կալանաւորու-

Թիւն կամ բանտարկութիւն, և թէ զորք հարկաւոր էին երևում. իւր պաշտօնակալներին և նախարարին չը կամեցաւ նա հաստատել այն վտանգաւոր զէնքը, այսինքն ինքնակարգութիւնը, ինչպէս նորա ժամանակին լինումը այլ տէրութիւններէ մէջ. Ի վերայ այդք ամենայնի չը հասաւ նա իւր առաջը զբան նպասակին. յիշաւ արմատախիլ արեց նա հին անկարգութիւնքը, բայց շուտով երևեցաւ, որ մի ամենին այլ սերմ նոր ի նորոյ սերմանված էր. Այն կարող և կանոնը որ վէճերը վարելու մասին, և այն Օրինագիրքը որ Քօրէնէին աշխատասիրել էր և Գրիգորիկոսի զործադրութենով ներս բերեց, այնքան սակաւ պաղարևր եղան, ինչքան Քրէյմսյեցի կարգադրութիւնքը Բաղարխոյի մէջ. 18 դարումը պիտոյ էր զարձեալ վեր ի վայր փոխել ամենայն բան. և այս նոր կարգադրութիւնը և օրինադրութիւնը ևս տեսան, որ թերի ու անկատար էր 19 և բրորդ զարու համար: Պրուսիայի ընդհանուր երկրական իրաւունքը, որ Քարմերի աշխատութիւնն էր, հրատարակվեցաւ ոչ յառաջ քան թէ Գրիգորիկոսի մահուց յետոյ: Թէ պատճառութեան աները և բանտերը շատ վատ դրութեան մէջ էին, այդ բանը գուցէ թէ չէ հասած թագաւորի գիտութեանը: Բայց մի օրինակ միայն յայտնի է, որ ջուջանու մէ մեջ, թէ ինքը իմպերատր ներս խառնվելով դատաստանի ընթացքի մէջ, և սա ի սրտէ ցանկանալով պնեւել, այնու ամենայնիս մի մեծ անիրաւութիւն գործեց, իմացիր զու Եւանջիլիան Էնէն¹⁾. նա կա-

¹⁾ Այս վէճը, որ 1779 թուականին, Նեյմարքեան գաւառումը գիւտարկի մէջ և բերլիկի իրաւաբանու մը վարված է, որ և իւր ժամանակին մեծ համբաւ ստացաւ բաւարարելու մէջ, կէս մի շատ որում աւելի մաս առիթ էր ստացած այն բաւարարի վերանորոգութեանց որ եղաւ Պրուսիայի իրաւաբանութեան մէջ, և կէս մի որ պէտք ունեցաւ որ արեւակ, թէ ինչպէս սխալված բան էր, երբ որ մի թէեւ շատ բարեմիտ իշխանութիւն կարող վճարահատութեանով ներս էր խառնում այնպիսի վէճերի մէջ ուր հարկաւոր էր արեւապաշտան գաւառական վճարահատութիւն: Ինչպէս վերջումս մինչև այժմ մնացած յիշատակարանքը, այսպէս էր գործը: Եղբրեպան Եւանջիլը իւր կնիւղ հետ մասին ուներ ժառանգապէս վարու ստացած աղբիքը որ Նեյմարքի մէջ եղած Պրոսիացի գիւղի մաս կառուցած էր և սովորաբար Խեցեղանի աղբիք (Die Krebsmühle), որովհետև այս աղբիքումը սխալ 1773 թ. թէեպէս և շատ անգամ յիշուցած էին նորան, չէր հասուցել ստրկական վարքը Գեուգորթի գրովին, այս պատճառով 1778 թ. գաւառումս բացվեցաւ և աղբիքը պիտոյ է վաճառվեր արեւքով: Եւանջիլեան անուանակիցքը բուշուրցին գիւտարկի գաւառումումը, թէ պարան Գեուգորթը չիմած է մի ձկնարան զբաղարի վերումը սառի մաս. բայց գիւտարկեան գաւառումը մերեկ այդ պատճառը, որովհետև պ' Գեուգորթը աղբիքումին հետ կապած պայմանի հիման վերայ իրաւունք ուներ չիմել այդ ձկնարանը: Սրանից յետոյ Եւանջիլը զիմեց Գրիգորիկոսի մաս զեղ ի Պատուած

մենուձք իւր կարող դատաւճռովք մի արդարութեան օրինակ հանդէպ կացուցանել, բայց ինքը մի ամենաճանր օրինադանդութիւն արեց:

Գրիգորիկոսը թեկեա իւր տերութեան մէջ շատ ներդաճափա էր զեպ ի այլ և այլ դատանոց հերձուածքը և կուսակցութիւնքը, այնու ամենայնիւ աշխատուձք փոքր ի շատե պահպանել հին կարգերը: Թողովոյին թողեց իւր եկեղեցական տաղարանը և այն դաւանարանական զիրքը, որով նա վարկել էր մինչև այժմ. նա ապահովեց մենաստանների, այո՛ և Շլեզիայի մէջ եղած Եփեսոսեանների կացութիւնը. նա գովասանութեամբ խտուձքը յիսուսեան արեղանների ուսումնականութեան և դաստիարակութեան մասին: Բայց 1776ին հարկադրովեան զոքա բաց թողուլ լաբեանց անուձքը և առանձին զղեսար և կարող էին որպէս «արքայական գարոյի քահանայք»: պարս-

և այս տեղ 1779ին բողոքեց Գեոպորթի վերայ, առանց յիշելու թէ թէք պարսկան էր հասուցանել արած, ժառանգական վարձը ուղարկել մասին. նոյնպէս չը յայտնեց նա, թէ իւր կողմէ պարսուտեալ պարտքը պայմանի հիման վերայ իրաւունք ունէր շինել նկարանք: Միտ արին ահա, Բիւտրինեան գաւառնը հրաման ստացաւ Թերլինեան իրաւարանից, որ քննէ Եւոսլիեան գանդաւը, և այս բանին պետց է գործակից լինէր զիտպիտ Լեոքիքը Եփեսոս քաղաքից: Սա վերահասութիւն գործելով տեղի որպիսութեանը, ամենին ուշուպիս բան թէ գաւառանքի փոխանորդը, հասկացաւ և համարեց թէ գաւառանքը մեծ անիրաւութիւն է արած ուղարկութեան, և այս կարծիքը յայտնեց թագաւորին իւր ազդարարութեան մէջ, որ յետց Երեկտ անձիկը և հարեանցի: Բայց Պրիզիկոս երկրորդը հաստ ընծայելով նորան, հրամայեց անյառող արգարացուցանել Եւոսլիքը և իրա յանդիմանութիւնը գրեց գաւառաբարոյ կուստարութեանը: Սա հայտարարու ելաւ մի բանագիտ մարդու ձեռքով կրկին անգամ վերահասութիւն գործել տեղի որպիսութեանը, բայց չը կարողացաւ ուշուպիս վճիւնէլ գտաւը, քան թէ 1779 թմուակ. հոկտ. 28ին վճուած էր, այսինքն թէ մերեկի է Եւոսլիեանց գանդաւը Գեոպորթի վերայ: Եւոսլիքի կնոջ ուղղակի թեղիքը թագաւորի անուձքով, հասցրեց զարձը Թերլինի արքայական գաւառանքին, որպէս թէ սա կարող էր վճիւս տալ նորա անուս Յացան բողոքին: Եւ այս գաւառանքը մի քանի ամիս յետց հաստանց Բիւտրինեան կուստարութեան վճահասութիւնը: Թագաւորը շատ բարկացաւ կարգաւով նորան ուղարկած յայտարարութիւնը այդ մասին: Դեկտ. 11ին, մեծ զիւսակիտ ազատուրք Գիւրաւը հրաման ստացաւ այն երկր խորհրդականների հետ միասին, որ առաջարկած էին այդ գաւառիցը, երկու մասին զալ Սանտուսի արքայը: Դիւսակիտը յանդիման լինելով թագաւորին, լսեց իսկոյն, որ այսուհետ արևակիտ իւր պաշտանից, և այն երկր խորհրդականքը աշխատանքի ձեռքով սարգեան զեպ ի քաղաքային բանա: Այլև թագաւորի մաս այս բուլետին ներկայ եղած, զպառնի գործերի անուձքն խորհրդականը պետց է թագաւորի յատակ ընթանով ասած բանը արեւնադրեր մի թեղի վերայ, որ և զեկտ. 12ին հրատարակեցաւ լրացրերի մէջ և յատաւորեց ամենայն տեղ գործաւք ու մարդութիւն:

պել միայն կաթօլիկեան մանուկների գաստիարակութեանը: Նա շատ ուրախ էր այս բանումը հակառակորդ երևել Պապին և բոլոր Եւրոպային: Նորա մահուց յետոյ և Շլեյխայումը ամենին վերացուցին յիսուսեան կարգը: Երբ որ Ֆրիդրիկոսը քաղաքական պաշտաններ ունէր, յանձնելու, նկատումին, որ պրոտեստանտեան զաւանդներին, որ այնքան արժանաւոր էին ինչքան կաթօլիկեաները, ցուցանուիք նախապատուութիւն: Բայց միւս բաների մէջ հետեւումը այս հիմնական կանոնին. «Le gouvernement laisse à un chacun la liberté d'aller au ciel par quel chemin il lui plait, qu'il soit bon citoyen.» «Իմ թագաւորութեան մէջ կարող է ամենայն մարդ երանութիւն գտանել իւր ձեռով և կարգով, թող լինի միայն բարի քաղաքացի:» Բայց Ֆրիդրիկոսի ներդաստութեան յարգը շատ փոքր համարելով Գեօթեն, զամ և երգի:

Եւս բանը սալիս է մի շատ բացայայտ սպոցոյց թէ ամենամարտ սրբաբուրսութեամբ հոգիացած թագաւորը այնպէս էր խելամուտ եղած իւր սրտումը, որ պէս թէ գտարածքը այս վեճի մէջ անլուծի անբաւութիւն էին արած մի սպցոտ մտքով, այն պատճառով, որ սորա հակառակորդը եղած էր մի հարուստ աշխուհան. ուրե՛ն հասարակութիւնը գաստատելի առաջին հաստատ պահելու համար, պիտոյ էր մի որինակ աչքի առաջին կոցուցանել: Եւսինքն Ֆրիդրիկոսը մուշտեւով զլիտպետ շեղքնդի և Եւսոլիեան անուանակիցների կիսաշնորհու ծանթարարութեամբը, մասնումը սիրապէս, թէ չբաղանջը, Դերպոսիեան ձկնարանի պատճառով, զրկած էր հարկաւոր եղած շրջը, և այդպէս իւր շահակաութիւնը կորստանելով, կորուսել էր միանգամայն և իւր վարձահատոյց լինելու պատճառը: Նոյն սրին, զեկտ. 11 ին հրամայեց թագաւորը բանարկել քիստարիեան կառավարութեան շորա նախապատի իւրհրդականները, այլն կառավարութեան առաջնորդ զբաժնի միջնակները և աշխուհան Գեապոսիքը արձակելցան իւրեանց պաշտակց: Բանարկեալ առեկանուարների պատճեւու մասին, պիտոյ է Քրտապարտութեան գտարանը վճիւ կապեր ամենայն խառութեամբ, որ հրամայումը սրեւքը, Եօլոյն սխովցութեան թիւնը և սորա աւարտելոց յետոյ, Քրտապարտութեան իրաւարանի ձեռակցոյ իւր պատճառահաստատ կարծիքի մէջ յայտնեց թագաւորին թէ գտատառնով ղեկած պաշտանակիցներից ոչ մինը պարտաւոր չէր ոչինչ յանցանքով, այլ մանուակ ամենեքեան զործակատար էին եղած Եւսոլիեան վեճի մէջ, իւրեանց պարտակաութեան և ինչնեամբն համակցին: Յերթիւեան նախարար Յեղիլը մասուցանելով այս կարծիքը թագաւորին, յայտնեց նորան մի ուղղակի ծանուցական թէքթիւով, թէ հիմաւորելով Քրտապարտութեան գտարանի ձեռակառի կողմից բերած պատճանների վերայ, չէ կարող ընդգիւ իւր սրտի վկայութեանը գտապարտակն վճիւ կապել պաշտանուարների վերայ: Եւսու ամենայնիւ թագաւորը հաստատ թաց իւր կաճի վերայ, կարծելով մշտ, թէ պիտոյ է մի արդարութեան սրբինակ յանգիտան կոցուցանել: 1780 թուակ, յուլով. 1 ին արձակեց նա իւրանց մի հրովարտակի զեպ ի նախարարը, սխանելով այդպէս. «Շտտ զարեանում ես, անտանելով ձեր երեկեան սրի նախկից, որ զուք կամը չուէք, իմ հրամանիս հա-

ծարանութենով զբաժանորումք ընդդէմ նորան իւր բանաստեղծական գրուածի մէջ, ուր նախարարը և թագաւորը, Համան և Ահաւիւրս, խօսելով միմեանց հետ, ասումք Ահաւիւրսը.

Mein Freund, ich lobe dich, du sprichst nach deiner Pflicht,
Doch, wie's die Andern sehn, so sieht's der König nicht
Mir ist's einerlei, wem sie die Psalmen singen,
Wenn sie nur ruhig sind und mir die Steuern bringen.

.. Ի՞մ բարեկամ, ես գովումեմ քեզ, դու խոսումես, ինչպէս պարտ էր քեզ
Բայց ինչպէս նայումեն միւսերը, այդպէս չէ նայում թագաւորը.
Ինչ մը է նայն է, թէ ո՞ւմ էին երգում իւրեանց սուգամեծերը.
Իրան թէ հանդիսու էին և բերումին ինչ հարկերը .. :

Ինչ ազդեցիկ ևս յառաջանումէր Ֆրիդրիկոսի ներդաշնանութիւնը զկեպ ի այլադասանքը, այնու ամենայնիւ թագաւորը այն նկատարէր զարուստը զարմացրեց թէ Պրուսեստանականքը և թէ Աթոնիականքը, ոչ թէ միայն հաստատ պահէ լով բոլոր Աթոնիկեան կարգա-

մանցն զճիւղ կապել զառարանի պաշտմանակներէ վերայ, որ Անուշի գործի մասին բանտարկում էին: Արեւն եթէ զուք չը կամբք զճիւղ ուղ, ապա ես թէք կը սամ այդպէս ահա ..: Երանից յետոյ երկու խորհրդակաճք արդարացուցիցան: Միւսերը պաշտմանց հանգիցան և զառարարութեան միամտոյ բանտարկութենով բերգի մէջ, հասուցանելով Անուշիեան ջրաղացի գինը և այն զրկանքը որ հասան էր մահանգական վարտարին: Արդայական կարող խորի զբաւթենով աննկարար պատարովանքը սարգիցան զկեպ ի Սպանդաս: Եղան զՔարելի արծաթը, Նէյմարցեան զառարանի զնահասութենով, եղան 980 ուլիթմաւը 12, կո. 10 փննիկ: Երբ որ այս հասուցումը արան էր և Անուշիեան անուսիններին ճիւղ զարմացան էր ջրաղացը, ապա թագաւորը արծաթեց բանտից արգարութեան մարտիրոսը, սասանց որպէս և իցն թեթեւացնելու նոցա ստասպետը զբաւթիւնը: Փրկիչիկոսի երկրորդի մահուց յետոյ, նոր յաղորդի ստաթին թագաւորական գործերից մինը եղան և այն, որ 1780 թուակ. յունվ. 1 թի զՔահասութիւնը ունշուայ, զառարարութեան արդարացուցական զճիւղ ստացան և ակրութիւնը խոստացու միւսանգամ կարգել նորանց թագաւորական պաշտանի մէջ: Այլի հրամայեց թագաւորը իւր բանտից վերստին զՔարել նոցա այն արծաթը որ բանտարկութեանը հասուցան էին Անուշիեան անուսիններին, և սորա մացին սեր ջրաղացի վերայ: Այս նախախառնութենից ամենին լուսափայլ է ահա, թէ թագաւորներ ես, որպէս մարդիկ, կարող են սխալ գիւլ. թէն ինեթն շատ ինչը և բարեփո. անտալը Եստաս և միայն: Բայց այն զառարարը, որ այնքան պինդ և անուր արգարացուլու էին, որ ակելի լու համարելին յանն անուլ թագաւորի ահանութիւնը և այնքան զառն հաշտանք, այդպիսի զառարարը ինչքան պտուսի և մեծարանքի արժանի են: Գեղեցիկ խօսել և զրեւ, լուս փոքր բան է, բայց զեղեցիկ զորել. իւր որսի վայութեան համար մարտիրոսանուլ, ահա ամենամեծ գործը:

արութիւնքը Շլեզիայի մէջ, այլև շինելով մի Վաթոյիկեան եկեղեցի
Բերլինումը, և այն պատասխանով որ տուած է իւր կառավարու-
թեան պաշտօնակալներին Հալբերշտատումը, ևրբ դորա կամենումին
բռնադատել կարգաւորքը հազրդութիւն և թողութիւն տալ մի կա-
թոլիկ մարդու, որ բանադրած էին նորա մի ամուսնութեան պատ-
ճառով որ ընդդէմ էր իւրեանց սահմանագրութեաններին: Գովինի-
եանքը, ասած է այն պատասխանի մէջ որ թաղաւորը տուած էր կա-
ռավարութեանը, անմեղադրելի են, և թէ նորա թոյլ չէին տալիս
աղաչաւորին մասնակից լինել այն եկեղեցական խորհրդին որից նա
ինքը զուրկ է կացուցել իւր անձը, հասկեական եկեղեցու ընդդէմ
ամուսնութենով, և այնքան ևս մնալու է դորանից զուրկ, ինչքան
որ այդ եկեղեցու անգամ էր և այլն: Ախճասէրքը հաւատի մասին
և հաւատից հանողները անտանելի էին նորա համար. այդպիսիքը
համարումէր նա վատթար մարդիկ, և ով որ այս կողմից կասեցանելի
էր նորա աչքումը, նորան հանդիպումէր խտուութեամբ և անիրաւու-
թեամբ: Այս պատճառով և պատուիրեց նա Հերնուսերներին, որ
աղնուական մանկունք շընդունին իւրեանց ուսումնարանի մէջ: Քրի-
զրիկոսի սեփական հաւատը չէր եկեղեցու հանդանակեան (սիմբոլական)
հաւատը. նա ունէր իւր սաանձին կրօնը և հետևումէր պարզին, դոր-
ժականին, բարոյականին առաւել քան թէ դաւանութեանը: «Կա-
խապատիւ հերձուածը, ասումէր նա, պիտոյ է մնայ իմ աչքումը այն,
որ աւելի դորաւոր կերպով աղչումէր բարբուժարքի վերայ, և ըն-
կերական կեանքը շինումէր առաւել ազահով, առաւել մեղմ, առա-
ւել առարինք: Կոյնպէս անտարակոյս է, որ Քրիզրիկոս երկրորդը
անասուածեան չէր, թէպէտ շատ փոքր ժամապաշտ. -Il n'y a rien de
plus cruel, ասում էինքը, que d'être soupçonné d'irreligion. On a beau faire tous
les efforts imaginables pour sortir de ce blâme, cette accusation dure toujours. այսինքն.
Չը կար ոչինչ այնպէս անտանելիցաւ, և թէ ոչ անկրօնութեան կաս-
կածանք տալ ուրիշներին: Անպտուղ էր ամենայն ջանք և վատակ
գուրս գալու այդ նախատինքի, այդ միշտ ծանր մեղադրանքի տակից:
Նորա կրօնական հայեացքը մտենումէր Համայնաստուածեան կրօնին¹⁾,
Աստուծոյ մասին մի գաղափար ստանալու համար, նորան պատկերա-
ցումէմ ինձ որպէս աշխարհի զգայարանի շարժառիթ, որպէս այն
խմայականութիւնը որ կապակից է բոլոր ներկայ աշխարհներին կազ-

¹⁾ Այս համայնաստուածեան կրօնը որ յաճական բառով ասումէ Գանթեխանս,
է այն փոխաբայական սեպութիւնը, որ ուսուցանում է թէ բոլոր տէրերը և Թ
հաւանապարտանակիչ ենք: Աստուած: Համայնաստուածեան կրօնաւորի աստուածը է
տէրերը:

մակերպութեան հետ: Գորա զոյութեան ազացոյցը տալիս է մեզ աշխարհի համակցութիւնը և զուգապատշաճութիւնը և մարդու բանասրութիւնը. պատճառ, եթէ լինէր բնութիւնը մի անկենդան և անբան էակ, նա չէր կարող տալ մարդուն այն բանը որ շունի ինքը»: Առաջ. գրուածք Ֆրիդրիկ. տպած Բերլինի մէջ. շատ. 8. 4. 104.

Նոյնպէս ներողամտ էր Ֆրիդրիկոսը զէպի երգիծական գրուածներ, որ վերաբերվում էին նորան յատկապէս. միայն թէ չէր համբերող պարսաւանքների արքայական արժանատրութեան և կառաջրութեան վերայ. «C'est à moi, գրում է նա իւր Գարժէ անունով զպրին, որ կամենում էր ջրել մի երգիծական գրուած, à faire mon devoir et à laisser dire les méchants». Ինձ կը հասանէ միայն կատարել իմ պարտականութիւնը և թողուլ անզգամներին խօսել»: Երբ որ նա զահճէն արքունական հարկի տակ էր գրել, միանգամ տեսաւ նա մի գարշիկի պատկեր բերդի վերայ զարկած, որ ցուցանում էր նորան շատ ողորմելի կերպարանքով, մի պատուանդանի վերայ նստած և մի զահճէի սանդ սոքերի մէջ, մի ձեռքով աղալով զահճէն և միւս ձեռքով զգաստութեամբ հաւաքելով ամեն մի դուրս ընկած հատիկ. ձայն արձակեց թագաւորը ժողովրդի խօսն բազմութեան մէջ. «Այդ պատկերը մի փոքր ցած կախ արեցէք, որ ժողովուրդը դուրս չը ձգէ իւր վիզը»: Իսկոյն ծիծաղելուց կոտորվեցաւ ամբոխը, որ յառաջուց այնքան բարկացած էր: Սորա հակառակ, ամենայն կարելի կերպով հալածանք յարուց նա իրաւագէտ Մոզերի վերայ որ հրատարակել էր մի անանուն գրուած «Pöbeliche Geschichte der Staatsfehler, welche die europäischen Mächte in Rücksicht der Häuser Bourbon und Brandenburg begangen haben». մի այլ անգամ, տանց արդար բնութիւն կատարել տալու, կամ թէ մի որոշեալ պատճառ յառաջ բերելու, հրամայեց նա Սպանդաու քաղաքի մէջ արով պատել զաղտնի խորհրդական Ֆերբերը որ շատ անորոշ կերպով պարտաւորված էր իւր կասկածելի նամակագրութեան և ցրուած գրուածների մասին. այս անցքը եղած է 1746 թուակ. հոկտ. ամսին:

Ժողովրդի իմացականութիւնը յառաջադէմ առնելու զպրոցներով, փոքր է եղած Ֆրիդրիկոսի հոգաբարձութիւնը, համեմատելով ուրիշ բաների հետ: Արատատրած զինուորներ, պաշտանաժամար ստորին աստիճանատրներ կարգվում էին զպրոցական վարժապետք: Նոր ընծայ ուսումնարաններ, զպրոցական ուսուցիչք պատրաստելու համար, էին մասնատր մարդերի ձեռնարկութիւնք. նմանապէս իրական տեղեկութեանների ուսումնարանները: Եւ զէպի համախարանըր գտանվեցաւ նա բաւական ինչպանն, բայց միւս կարգատրութիւնքը, զոր օրինակ ճարտարութեան և գիտնատրութեան ակադեմիայքը վե-

Հանձն Հոգանաւորութիւն զսան նորա կողմից: Ամենայն տեղ, մա-
նաւանդ թէ նորաչէն Պոստղամի մէջ, այլև Բերլինումը յառաջացան
բազմաթիւ Հոյակապ շինուածներ. արասաւորված զինուորներ ի սուներ
իւր զեղեցիկ մակազրով -*Laeso et invicto militi*-, զմբէթաւոր Հեղձիղեան
եկեղեցին, գրասունը մակազրովս -*Nutrimetum spiritalis*- էին նորա տեղ-
ծագործութիւնքը: Նոր կենդանութիւն տուեց նա գիտութեններ ի սկա-
զեմիային. Չար, Չիսմիլիս, Թիերոլտ, Չիլբրշլաղ, Ֆորմլյ, Էյլեր,
Մարկգրաֆ և այլն զարձան նորա միարանք. նա ինքը գործակից էր
նոցա ուսումնական երկասիրութեններին: Իւր յատուկ անձը շրջա-
պատեց թագաւորը սկանաւոր մարզերով, ըստ մեծի մասին Ֆրանս-
սիական ազգից, բայց զոցա մէջ կային և Գերմանացիք, Շվեդացիք
և այլն: Աօլտեր, Մոսկերտի, Ալգարոթթի, Գ'Արժան, զըլա Մետրի,
Պուքէ, Յակոբ և Գէորգ Քէյթեանք, Բաստիանի, Բուզնաքիեօլդ ու-
սումնականքը և զօրայեւա մարզիկ որպէս Աինթրֆելդ, Չէյլից,
Յիթն, Շաղօթ, Շտիլէ և այլն բազկացնումէին նորա բնկերութիւնը
Սանսուսի ամարանոցի մէջ, ուր բաց ի թագաւորաշնուհի Ամալիայից
և կարաւիչ Բարբերինայից, որ յետոյ ասվեցաւ Քօքչէի, չունէին
ելուճուտը ոչինչ կանգլք: Առաւել պատուասիրած Տիւրը էր Աօլտեր.
մի անհաստալի բան էր թէ ինչպէս թագաւորը կրկին և զարձեւալ
զգուճը ձգտողութիւն զէպ ի այս մեծամտ Ֆրանսիացին, որ այն-
քան նենգաւոր, այն և չարահնգաց վարք էր ցոյց տուած զէպ ի նա,
Այս Աօլտերի մարմարոնեայ լանջագատկերի Համար բաշխեց նա 200
ուկի և Տրամայեց պատարագ անել նորա հոգու համար: Աերջին
աարիներումը թագաւորի ձգտողութիւնը չէր այնքան մեծ զէպ ի
Ֆրանսիական դպրութիւնը, ինչքան յառաջ. այդու ամենայնիւ եր-
բէք յանձնառու չեղաւ նա նուիրել զերմանական լեզուին մի հիմնա-
ւոր ուսումնասիրութիւն: Եթմնամեայ պատերազմի միջոցին, ծանօ-
թացաւ նա Ալյպիղումը, բաց ի միւս ուսումնականներից, և այն ժա-
մանակի հոչակաւոր առակախօս Գելլերթի Հեա և նորա գրած առակ-
ներիցը մի քանիսը կարգալ տուեց իւր մօա. -*C'est le plus raisonnable
de tous les sorans Allemands*- գրեց նա Գ'Արժանին: Գոթ չեղ ուսումնականը
երեւեցաւ նորան իմաստակ, ունայնասէր և նորա ոտանաւորքը ցուրտ
և անալի: Բայց և այն քաղցր տպաւորութիւնը որ Գելլերթի գրուածքը
արած էին նորա վերայ, անպտուղ մնաց: Արդարև Գերմանացին իւր
Գելլերթի Հեա իրաւունք ունի միայն ցաւելու, որ Ֆրիդրիկոսը չե-
զաւ նոյնպէս զերմանական դպրութեան զաշտումը իւր ազգի պարա-
գլուխ, ինչպէս որ պատերազմի զաշտումը առաջնորդել էր իւր ազ-
գին զէպ ի յաղթութիւն և պատիւ: Բայց ճշմարիտ է Գեթթէի խօսքը,
որ բերենք այս տեղ. -*Եթէպէս և Ֆրիդրիկոսը չէր սիրում զերմա-*

Նական զպրու թիւնը, այնու ամենայնիս կողմնակի նպաստամատոյց եղաւ նորա յառաջադիմութեանը, թեև Եր ալով գերմանական հոգուն, որ կարողանայ բարձրանալ մի ականաւոր զպրութեան աստիճան, Մեր զպրութեան առաջին ճշմարիտ և իսկական կենդանութիւնը Գրիգորիկոս մեծի ձեռքով և եօթնամեայ պատերազմի սիրագործութենէն ետևը ներս բերվեցաւ գերմանական բանաստեղծութեան մէջ, Կլէյմի պատերազմական տաղերգութիւնքը, Ռամբերի վերտառութիւնքը և Ղեւսինցի Միննա ֆոն Բառնհէյմ անունով գրուածը էին այն հոյակապ պոեմաբոյի պողատորիչ զգրութեան առաջին արդասէքը, Բանաստեղծական քանքարներէ պահասութիւն երբէք եղած չէ Գերմանիայի մէջ, բայց ինչ որ պոեմա էր Գերմանական բանաստեղծութեանը, էր մի նիւթ և ազգահարազատ նիւթ, Եյս նիւթը ալով Գրիգորիկոսը, ոչ թէ դարձաւ մեր ճշմարիտ ազգահարազատ բանաստեղծութեան պաշտպանը, այլ արարիչ պատճառը, Եյս բանը թող ամենայն ուշադրութեամբ և մտառութեամբ կարգան մտածել սիրող հայազգի մարդիկը:

Արդէս Էֆենդէք անձանձիր աշխատումք Գրիգորիկոսը. նորա բոլոր գրուածքը առաջին անգամը տպած Բերլինի մէջ 1788 թուակկացուցանումին 25 հատոր, թէպէտ շատ թերի էին, Պառաւորապէս և արքունի ծախքով տպվեցան նորա գրուածքը 1846 ին Բերլինումը, Ընաչառապէս քննելով այդ մատենագիր արքայի վաստակքը, պիտոյ է խոստովանել, թէ ինչքան և զանազան էր Գրիգորիկոսի քանի մի մասնաւոր բաների, այն և ամբողջ տեսակ տեսակ գրուածքների արժանաւորութիւնը, այնու ամենայնիս տեսանլում և նոցա մէջ մի ճոխ երևակայութիւն. զոնեայ ոչ մի տեղ չէ նա զեղջկախոս, ոչ մի տեղ ունայնբարան, Կայն իսկ պատերազմական գործերի և ճանապարհորդութենէն մէջ չէր դադարում նորա վաստակաւոր գրիչը, Ըստ օտուն վաղ վեր կենալով ճարումք նա ժամանակ դորա համար. առ հասարակ Գրիգորիկոսը մի անդազար գործական, զգաստ և աշխատակեր մարդ էր, Ընենայն օրի ներս մտած գործերը նորա նոտարիտքը ջոկ ջոկ տեղերում կարգաւորած զնումին նորա առաջն. շատ անգամ անչափ լակնացի կերպով իսկոյն գրումէր նա վճիւր թղթերի լուսանցների վերայ, Կապէս կառավարումէր նա միայն. նորա նախարարների առաւել շատերը էին միայն նորա հրամանների կատարողքը. որպէս ինքնակալ, յաճախ վարումէր նա խտուութեամբ, բայց իւր ներքին բնաւորութեամբը չէր նա խիստ մարդ, Եթէ արժանացած լինէր նա մի գեղեցիկ ընտանեկան բաղդաւորութեան, անպատճառ անհետանալու էին մի քանի կուպութիւնք նորա արտաքին կենցաղավարութեան մէջ, Կորա սիրաբը դէպ ի թագուհին մնաց միշտ սառն

և անհակամիտ: Թագի ժառանգ արքայազն Լեյբորդրդին չէր նորան սիրելի սկզբումը, որովհետև երևումէր նորան անբնդունակ և խռնազնաց. բայց զէպ իւր քոյրերը էր նա մի ուշադիր և քաղցր եղբայր. իւր Լեյբորների մէջ առաւել մերձաւոր էր նորան արքայազն Հենրիկոսը որ եօթնամեայ պատերազմի մէջ մեծ արգիւնք էր ցոյց տուել նորան. բայց յետոյ գաղջացաւ նոցա սիրաբ միմեանց հետ. կործումն լեւ Հենրիկոսը չէր կարողացել մոռացուիմեան տալ այն անհոգութիւնը որ ցուցել էր Ֆրիդրիկոսը այն միջոցին, երբ Պոլոնիայի լծագը առաջարկած էին Հենրիկոսի համար, բայց Ֆրիդրիկոսը մերժել էր այդ առաջարկութիւնը: Մանուկ Թագաւորազնների մէջ իւր Լեյբորդրդի Հենրիկոս Արալուսին սիրումը նա շատ քնքուշ սիրով, բայց նորա վաղաժամանակեայ մահը — մի գեղեցիկ զուարթ երիտասարդ էր դա և մեռաւ ծաղիկ հանելուց — շատ խոր տրամեցուց նորան. երբ որ Թիւրքոսը կամենումէր կարգաւ նորա առաջև այդ վաղամեռիկ երիտասարդի գովասանքը, լծագաւորը փղձկեցաւ արտասուքով, Եմենամեծ քաղաքական կամ պատերազմական տաղանայր կարող չէր բեկանել նորա հերոսական հոգին. միանգամ միայն 1758 ձախորդ տարումը, Հոբելրիխեան հարուածից յետոյ, երևում լեւ մի զարհուրելի խորհուրդ տիրապետել էր նորա վերայ. իւր գրակարգաց լը Քատտին ասած է նա մի առաւօտ. «Եթէ գործը շատ վատ գնաց, ունիմ մտախ մի բան, որով կարող էի վերջ տալ այս ողբերգական խաղարկութեանը»: Բայց շուտով վերադարձաւ նորա հին սրտայնդութիւնը:

Ֆրիդրիկոսը իւր յատուկ կեցութեան մէջ շատ պարզ և անտես էր. վերջին տարիներումը, կարելի է ասել լեւ ապրումը ժլատաբար. մի անային գանձ հաւաքել, գարձած էր նորա համար մի ախտ: Թագաւորի բոլոր պալատական տնտեսութեան ծախքը փոքր ինչ աւելի էին քան լեւ 200,000 բելյոսթալեր. նորա բոլոր հագուստները, մեռանելուց յետոյ, 400 լծալերով ծախեցին մի հրէայի վերայ, Եւելորդ էր նկարագրել այս տեղ նորա երիտասարդութեան շատ վայելուչ, ներբակազմ, բայց յետոյ մի փոքր կորացած մարմնի կերպարանքը: Եշխարհի վերայ, Նապոլեանից յառաջ, ոչ մի լծագաւորի պատկեր չէ այնքան հազար հազար օրինակներով տարածված, ինչպէս Ֆրիդրիկոսինը, լեւ պետ նա միանգամ միայն, մի ժամ նստած էր Յիդենիս պատկերահանի առաջև: Ֆրիդրիկոսի գնացքը փոքր ինչ անհոգ էր, այնու ամենայնիւ շոյտ և խոթոտ: Եօթնամեայ պատերազմը կանուխ ձերացրեց նորան: Եհա 1775 լծուականից տանջվումէր նա յոգացաւութեամբ. սա և հեմօրրոյիդքը որ անժուժկալութեանից և անփոյթութեանից դարձան սոլորթկան, շատ անգամ շինու-

Անն Զորան զայրացկոտ և զրդոելի: Այնուհետև նոյն իսկ նախարարքը ապահով չէին Զորան կծանող դառնութենից, իւր սպասաւոր հուզարի վերայ փշրեց միանգամ իւր սրինգը, և Զորան գաւազանը ևս գործակատար էր բաւական յաճախ Թէպէտ նա չէր սիրում ոչ որսորդութիւն և ոչ խաղ, այնու ամենայնիս պահուածքը նա մեծ բաղձութիւն անդգամ շնորհի, որոնց պիտոյ է սպասաւորը ողջոյն տար յորձակիտը: Զորան բոլոր սրելիի ձիանքը ունէին մականուններ, զոր որինակ կեսար, կոնդէ, Բախլ, Քառունից, Շաղկօլ, Պիտո, Բուտակ, Երբ որ Բուտակ անուն նախարարը անհաւատարիմ գտանվեցաւ զեպ ի թագաւորը, պիտոյ է Զորան անուանակից ձին սայլի մէջ լծած, նարնջենիք կրէր: Զորան վերջին հիւանդութիւնը, մի փորձըրդոցութիւն, բնորոնեց Զորան այն միջոցին, երբ որ մտածուածք Զոր Զոր ֆորրիկայք հաստատել է արդիւնաւորութիւնք յառաջացնել, և այս մասին կարտոսով սպասուածք ոչխարներ ստանալու Յոսանիայից: Բժիշկներ ճամբութեանը շատ հաւատ չէր բնծայում նա. սովորաբար ինքն էր իւր յատուկ բժիշկը, և Զորան զեղորոջը էին խաշնդեղ (ոտանդ), զլաւարեքեան աղ և փսխեցուցիչ սեղ. եթէ սոքա չօգնեցին, այնուհետև պիտոյ է օգնէր բժիշկը. բայց եթէ և սա պատուիրումը ժուժկալութիւն, ապա թագաւորը արձակուածքը Զորան: 1786 ին. ամսուն ժամանակը, այնքան սաստկացաւ Զորան ջրգոցութիւնը, որ Բերլինեան բժիշկները անշոյս էին զաղարեցնել Զորան: Գանչեցին հաշակաւոր բժիշկ Յիմմի բանը Հաննովրիայից. բայց թագաւորը և այժմ չը կամեցաւ ժուժկալել իւր զժուարամարտելի կերակուրներէց. մահճի մէջ ամենեւին կարող չէր հանգստանալ և հազիւ թէ կանգուն նստել ակոտի վերայ. այնու ամենայնիս մի ցաւի նշան, մի արանկութիւն ցոյց չը տուեց նա, գործակատար էր, ինչպէս յատաճ, կարգալ էր տալիս իւր համար. և Զորան իւր յատուկ վերջին կարգացած գրեանքը էին Հենրիկոս չորրորդի վարքը և Սուետանի գործը Հոռմեական կայսրների մասին:

1786 թուակ. օգոստ. 17ին, առաւօտուն վաղ, երկու և երեք ժամի մէջ, վախճանվեցաւ. Գրիգորիկոս իւր հասակի 75 երորդ տարումը և իւր թագաւորութեան 46 երորդուժը: Բարեկամ ու թշնամի լսելով Զորան մահու յուրը, սասանութիւն եկաւ նոցա վերայ, թէպէտ վաղուց մարդարեւացած էին այդ բանը: Աշխարհը զգաց որ իւր ամենամեծ ժամանակակից մարդը գնացել է:

3. ԲԵՆԵԼՄԻՆ ՖԻԼԵՆԿԻՆ:

Մի այնպիսի ժամանակ որ սասանուածք մանկութիւն, ինչպէս մերը, անպատճառ պիտոյ է իւր արգանտից ճշմարտ և բարի բանե-

րի հետ միասին ծնանի և մուլար ու վաթմար բաներ, Աերջիմներէ կարգումը բաց ի միս բաներից իրաւունք ունինք զասել անշարութիւնը և տարապայմանութիւնը, արուեստակեալ ճանապարհով արդիւնք հասուցանելը և գրեթէ յանցար խորհրդով ու հաշուարարութենով շտապեցուցանելը բնութեան ընթացքը, Իրաւունք ունինք, ասումեմ, և թէ նայենք մեր պատրեան գաստարակութեան վերայ, և թէ քննենք, թէ ինչպէս էին այդ գաստարակութեան պտուղները, աշխարհի կենցաղավարութիւնը և ընկերական կեանքը, որովհետև մեր ժամանակի գաստարակութիւնը ոչ թէ բնական ընդունակութեններէ հիման վերայ կերպարանումը և յայտնի էր կացուցանում, այլ ջանադիր էր ներս մղել ուսումը, վարժել մեքենայապէս և ձեւաորեւ կամամտածարար, Փոխանակ անօգուտ գանդաններ բարձրացնելու այդ մասին կամ թէ Միոնի պահագանների պէս ապաշխարութիւն և ուղղութիւն քարոզելու, գուցէ աւելի օգտակար կը լինէր հանդէպ կացուցանել այս տեղ մի լուսափայլ օրինակ, որ ցուցանումը մեզ այն արուեստակեալ գաստարակութեան ամենին հակառակը. այսինքն մի առողջ, զօրաւոր, պարզ ինքնակերպարանութիւն դէպ ի մի արտաբին, յարմարաւոր, ընդհանրաշահ և պարկեշտ կեանք, մանաւանդ որ այդ օրինակը համարեալ թէ զբաժ է մեր և անցեալ դարու համաշխարհական պատմութեան սահմանադրելի վերայ, Մի այդպիսի օրինակ է, անտարակոյս, այն տղամարդը որ յաջողութիւն տուեց և գործակից գտանվեցաւ հիւսիսային Ամերիկայի գաղթականների աղատութեանը անդրախան մայր աշխարհի ծանր լծի տակից. որ կեանքի բազմօրինակ ձախորդ խառնակութենների մէջ մնաց միշտ միամիտ և խոհեմ, քաջասիրտ և հաստատ, թեթեւաշարժ և զուարթամիտ, առանց դժուարութեան պահելով միջասահմանը անհաստատութեան և կեղծարտութեան մէջ. մի աշխատասիրութեան, տնտեսութեան և պարզութեան օրինակ, այսինքն Բենիամին Քրանկլինը, հիւսիսային Ամերիկայի քաղաքացի, աշխարհաշէն և մասնագիր մարդ, իւր դարու շատ սկանաւոր տղամարդերից մինը.

Իննիամին Քրանկլինը ծնած է Մասսիուսեթմ գաւառի Բուտոն քաղաքումը, 1706 թուակ. յունվ. 17ին, Կորա հայրը, որ սկզբումը ներկարար էր, 1682ին տեղափոխվեցաւ դէպ ի Ամերիկա ուր պարսպումեր սապոնագործութեան և մումաշինութեան, Բենիամինը լինելով իւր ծնողի 17 զաւակների մէջ տան և հիւնդերորդը, սահմանված էր հոգևոր պաշտօնի համար. այս պատճառով, եւր որ ուսած էր ահա կարդալ, գրեցին նորան մի լատինական դպրոցի մէջ. բայց որովհետև հօր կարողութիւնը անբաւական էր տալ նորան ուսումնական գաստարակութիւն, այս պատճառով հայրը վեր առաւ նորան

և կարգեց իւր գործի մէջ և ապա թողլ տուեց նորան ուսանել տպագրութեան արուեստը իւր աւելի հասակաւոր Բակոր անուն եղբոր մօտ, որ վերագործած էր Անգլիայից, Տասներկու տարեկան մանուկը եռանդուն սրտով նուիրեց իւր անձը այս արուեստին և ցոյց տուեց յառաջագիմութիւն, բայց չը հրաժարվեցաւ իւր ընթերցասիրութենէից, կարգալով պիտանի գրքեր և այդ բանի վերայ գործ զնելով իւր ազատ ժամանակը և շատ անգամ գիշերի մի մասը, Եանօթանալով գրավաճառների աշակերտների հետ, կարողացաւ նա ձեռք բերել աւելի շատ ընթերցանելի գրեանք, քան թէ յառաջուց ունեցած էր, որ և մի քանի պատմական և ճանապարհագրական մտօնանք էին, Այլև մի հարուստ վաճառական, որի ուշագրութիւնը գրաւել էր այդ ժրջան և խելացի մանուկը տպարանի, յօժարական առաջարկեց նորան իւր պատուական գրքերից օգուտ քաղել, Այս միջոցումը շուտով զարթեցաւ և Քրանկլինի բանաստեղծական հոգին, նորա առաջին գրաւոր աշխատութեններին պատկանումն երկու կարաւերգութիւնք (բալլադք) որ տպագրեց նորա եղբայրը, որ և ինքը շրջելով վաճառումէր քաղաքի մէջ, Հայրը այս բանի համար սաստիկ յանդիմանութիւնք տալով Քրանկլինին, սա յանձն առաւ հրաժարիլ իւր բանաստեղծական ձգտողութենից և վարժել իւր գրիչը արձակատես շարագրութեան մէջ և տպարանումը այս բանին այնպիսի անվաստակելի զիմացկոտութենով, որ քաջայոյս է յաղթել ամենայն դժուարութենի, Նորա կերակուրը էին միայն բանջարեղէնք, և պղպիտի կեցութենով յետ ձգեց նա ոչ թէ միայն իւր հացկերութեան թոշակի կէտը գրեանք զնելու համար, այլև յետ պահեց մի քանի ժամ գրեանք կարգալու, Երբ որ 1720 թուակ. նորա եղբայրը ձեռնարկեց հրատարակել մի լրագիր, սորա համար բենիամին Քրանկլինը գրեց մի քանի ճառեր, որ յօժարութեամբ ընդունվեցան հասարակութեան կողմից առանց իմանալու հեղինակի անունը, Պատճառ, Քրանկլինը իւր գրաւոր գործակցութիւնքը, գիշերին, ծածկապէս ներս էր կոխում դրան տակիցը, որպէս թէ զօրջա հեղինակը մի ոտար մարդ էր, Երբ որ Քրանկլինի եղբայրը յետոյ, մի անհասանելի ճառի պատճառով, բանտարկվեցաւ, ինքը Քրանկլինը քաջութեամբ և յաջողակութեամբ յառաջ տարաւ լրագիրը, այնպէս որ կարող էր նորան իւր յատուկ անունով հրատարակել, երբ իւր եղբայրը օրէնքով արգելվեցաւ այդ բանից, Այս խորհրդով ստացաւ նա ազատութեան թուղթ, թէպէտ մի մասնաւոր պայմանագրութեան մէջ պարտական կացուց իւր անձը մնալ իւր եղբոր մօտ, մինչև լրանայ աշակերտութեան ժամանակը, Տհաճութիւններ յառաջանալով եղբորների մէջ, Քրանկլինը խախտեց իւր պայմանը, և որովհետև նորա եղ-

բայրը աշխատուձեր խափանել նորա գործատուացութիւնը քուստնի մէջ, հարկադրվեցաւ նա թողուլ և գնալ այս քաղաքից, ուր սիրելի գրքերի մի բաժինը վաճառելով, ճանապարհի արձաթ ճարեց իւր համար և գարձաւ դէպ ի Նեղ-Եօրք (Նիւ-Եօրք), բայց և այս սեղ պաշտօն չը գտանելով, գնաց դէպ ի Ֆիլադելֆիա, ուր շքաւոր գրութեան մէջ վերջապէս գործ գտաւ իւր համար մի տպարանի մէջ, Գաւառապետ Ռիչիամ Բէյթի կողմից քաջալերվելով մի սեփական տպարան հաստատել, և որպէս թէ հաւատրնծայութեան նամակներ ստանալով նորանից, գնաց 1724 թուականին դէպ ի Լնդօն, որ մտադրեալ տպարանի բոլոր հարկաւոր պիտոյքը ձեռք բերէ, բայց յառաջուց Նշանվել էր իւր տանուտիրոջ աջկից հետ Միս Ռեդ անունով, Եկած Լոնդոն, տեսաւ Ֆրանկլինը, որ փոխանակ այն հաւատրնծայութեան նամակներին իւր համար, ուղարկած էին անպիտան թղթեր, և այդպէս ստիպվեցաւ նա միսանգամ դարձուցանել երեսը դէպ ի իւր սովորական արուեստը, Նա գործ ստացաւ հոչակաւոր Պալմերի տպարանումը և մի մետաֆիզիքական ճառով, որի մէջ աշխատուձեր հերքել Ուոլլաստոնի գրուածը Բնական կրօնի վերջ, ծանօթացաւ շատ և ականաւոր մարդերի հետ, որոնց կենակից լինելով ընդարձակեց իւր տեսութեան շրջանակը, Կամենալով ճանապարհորդել Եւրոպայի մէջ, հանդիպեց մի Պենսիլվանացի վաճառականի Գենհամ անունով, որ առաջարկեց նորան հաշուապահի պաշտօն, և թէ կամք ունէր նորա հետ վերադառնալ դէպ ի Ֆիլադելֆիա, Ֆրանկլինը յանձնառու եղաւ այդ պաշտօնին և 1726ին կրկին եկաւ Լոնդոն, Ֆրանկլինը կարծուձեր թէ կարող է մշտնջենաւոր բարեւա մնալ ասել տպարանի տողաշարին, և ահա մի վատխմար հիւանդութիւն, որ և նորան մահճի մէջ ձգեց, դէպ ի գերեզման տարաւ նորա հացատու պարոնը, և Ֆրանկլինը առողջանալուց յետոյ միսանգամ հարկադրվեցաւ զստնալ դէպ ի տպագրական գործը, Որովհետև այն տպարանումը, ուր աշխատուձեր նա, շատ անգամ պակասուձին տատեր, փորձ փորձեց իւրը տատեր թափել, որ և աւելի բարւոք յաջողվեցաւ նորան, քան թէ յոյս ունէր. որպէս և յետոյ տախտակներ և տաւեր պատրաստեց թղթարձաթ տպելու Նեղ-Երզնէ գաղթաբաղաքի համար և այդպէս աւիթ ստացաւ կատարելագործելու պղնձատպութիւնը, Էռուտով սորանից յետոյ հաստատեց մի սեփական տպարան իւր Մերիդիթ անունով աշակերտի հետ, և ժրագլուխ ու ճիշդ գործակատարութենով այնպէս բարեկարգեց իւր տպարանը, որ կարող էր յանձն առնուլ մի լրագրի կառայարութիւն, և այս գործի մէջ անշեղլի պահեց մի արդարութեան կարգ, մերթելով ամենայն անձնական թշնամանք և պահաբակութիւն, Կո-

բա ընկերի, որի անյաջողականութիւնը վաղուց ահա նկատել էր Պրանկլինը, կարճ միջոցից յետոյ յանձնեց սորա գործի հոգարար-
ձութիւնը ամենեւին միայն. և Պրանկլինը բարեապակամ մարդերի ոգ-
նութենով կարող էր հասուցանել այդ գործի հետ կից եղած պար-
տաւճարութիւնը: Մի փոքրիկ գրուած, նոր թղթարձած գուրս տա-
լու մասին, որ շարադրեց նա այս միջոցումը, այնպիսի մեծ համրա-
տոացաւ, մինչև ընտրեցին նորան վրայագիրնների տպագիր, որ այն-
քան նիւթական շահաւետութիւն հասցրեց նորան, որ կարող էր
գրաւճառի խանութ բանալ, այլև թղթավաճառութիւն գործել:
Պրանկլինի խոսեցեալ Միս Ռեդը, նորա բոլոր բաշակայութեան մի-
ջոցին ստանալով նորանից մի նամակ միայն, ամուսնացած էր մի այլ
մարդու հետ, բայց անբաղդ լինելով այդ ամուսնութիւնը, խզվե-
ցաւ յետոյ, երբ որ Միս Ռեդի ամուսինը անյայտացել էր: Պրանկ-
լինը շտապեց արդարացուցանել իւր անարդարութիւնը, առաջարկեց
նորան իւր ամուսնութիւնը և պակիվեցաւ նորա հետ 1730 թուակ:
Միւս տարումը յրացաւ իւր մէջ մի հասարակաց, շտաբի գործա-
կցութենով հիմնարկելի գրադարան Ֆիլադելֆիայի մէջ, որ և նորա
խելացի հոգարարութեան տակ շուտով գլուխ եկաւ և օրինակ դար-
ձաւ միւս դաղթարարքների համար: Պրանկլինը անվաստակելի գոր-
ծակատարութենով աշխատուէր ձոխացուցանել իւր գիտութիւնը,
որ իւր անձը ընկերութեան մէջ պատուելի կաշուցանեւ և այս կող-
մից, այս պատճառով սկսեց նա պարսպել հին և նոր լեզուների որ
մինչև այժմ ամենեւին օտար էին մնացած նորան: Պենսիլվանիայի
գաղթականների Պարլամենտը խոստովանելով նորա քանքարները,
1736ին ընտրեց նորան իւր նոտարիոս, և այս ընտրութիւնը շա-
տարիներ միմեանցից յետոյ կրկնվեցաւ, և 1737ին կառավարութիւնը
կարգեց նորան Պենսիլվանիայի նամակատան գլխապետ: Այս բարձր
պաշտօնները պատճառ տուեցին նորան, աւելի քան թէ յառաջ, մա-
նակից լինելու հասարակաց գործերին: Այս միջոցին մի թեթեւ զըր-
ուած արձակելով, գլուխ բերեց մի գործ որ չէին կարողացած գլուխ
բերել քաղաքապետի և գաղթականների խորհրդածողովի բոլոր ջա-
նադրութիւնը, այսինքն մի գինուորութիւն, որին ընծայեցին կա-
նայքը մետաքսեայ դրօշակներ, որոնց մակագիրը պատրաստեց ինքը
Պրանկլինը: Երբ որ ընտրած էին նորան Ֆիլադելֆիայի գործի զըն-
դապետ, համատուութեամբ հրաժարվեցաւ գորանից, բայց այդ գոր-
ծուք գրաւեց քաղաքապետի և գաղթականների վերին ծերակուտի հա-
ւատը, մինչև այն աստիճան, որ զորս ամենայն հասարակաց կար-
գադրութենների մէջ խորհուրդ էին հարցնում նորանից, այլև 1743
յանձնեցին նորան գրաւոր կերպով ցոյց տալ թէ ինչպէս պետոյ էր

մի փիլիսոփայական ընկերութիւն Հաստատել Ամերիկայի մէջ: Այս ընկերութեան առաջնորդը զարձաւ Ֆրանկլին և մնաց այդ պաշտօնի մէջ մինչև իւր մեռանելը: Այս ժամանակին են պատկանում և նորա ելքարական փորձերը որ առաջնորդեցին նորան զէպ ի խորհրդաւոր գիտք Առշ-ին-է-լ-ը մեքենայի և էլէտր-լ-ը թռչարանի: Անուսումնական սպադիր մարդու գաղափարքը այս առարկայի վերայ սկզբումը շատ փոքր հաւանութիւն գտան, բայց երբ որ Բի.Փօն Ֆրանսիացին թարգմանեց նորա գրուածը «New experiments and observations on electricity» և այդպէս տարածեց բոլոր Եւրոպայումը, ապա նշյն ինքն արքայական ընկերութիւնը Անգոնի, որ յառաջուց արհամարհեւ էր Ֆրանկլինի գիտերը, ընտրեց նորան իւր միտքան և 1753 ուղարկեց նորան պարզև մի ոսկեղէն մեղալիտն: Այս միջոցին աւելի նշանաւոր դարձաւ և նորա քաղաքական կեանքը: 1747 թուականին ընտրվեցաւ նա Պենսիլվանիայի և Ֆիլադելֆիայի գաղթածողովի միտքան, և այս պաշտօնի մէջ երեւելի կացուց իւր անձը որպէս նախանձաւոր Հասարակաց օգտին: 1753 թուականից կարգվելով ընդհանուր կառավարիչ նամակատան բոլոր անգլիացի գաղթականների համար որ կեած էին Ամերիկա, չը խափանվեցաւ մտածել իւր հայրենիքի օգտի վերայ, այլ ևս ստաւել յղացաւ իւր մէջ և զարթնեցրեց միտքի մէջ այն մեծ խորհուրդը, որ էր մի գաշնաւորական միտքանութիւն, մի ազգային ժողովարան և մի կենտրոնական տեղի կառավարելու բոլոր, Հիւսիսային Ամերիկայի մէջ եղած, բաժան բաժան գաղթականների գործերը: Մի այսպիսի խորհուրդ մի ըստ միջէ ստուերագրելով առաջարկեց նոցա որոշակի, երբ 1754 թուականին, ետեմանայ պատերազմի միջոցին, Անգլիան իւր գաղթականքը օգնական էր գանձել ընդդէմ Ֆրանսիային, և նոցա փոխանորդքը հրաւիրել էր զէպ ի Ալբիի. այս տեղ վճարար խորհուրդ կառարվեցաւ այն առաջարկութեան վերայ, որին հաւանեցին և անգլիական թագաւորութեան և գաղթականների գործակալքը: Բայց անգլիական կառավարութիւնը մեթեց գորան որպէս թէ շատ հասարակագիտական էր, և գաղթականների կառավարութիւնը անտես արեց նորան որպէս թէ շատ բռնաւորական էր: Բողոքօքի պատերազմական գործակատարութեանը ընդդէմ Ֆրանսիացոց, որ Կանադայի կողմից կամք ունէին յարձակվելու, օգնական գտանվեցաւ Ֆրանկլինը թէ իւր երաշխաւորութեանով և թէ իւր արծաթով, բայց երբ այդ պատերազմական գործակատարութիւնը ձախորդ գտանվեցաւ, Ֆրանկլինը ազգային ժողովի մէջ յառաջ տարաւ մի օրէնք որ հրամայումէր մի զինուորութիւն կազմել յօժարակամ մարդերից և վարժել նորանց: Ինքը Ֆրանկլինը հրաման ստացաւ պահպանել Հիւսիսակողմեան արևմտեայ սահմանը, որ

անապահոյժ էին կաշուցել բնիկ Ամերիկացիք, զորաժողով լինել և ամբողջներ շինել. բայց նորա պատերազմական ասպարէզը շատ կարծառեւ եղաւ. հազիւ թէ վերջացրել էր նա իւր պաշտպանողական պատրաստութիւնքը, և ահա յետ գանձեցին նորան դէպ ի գաղթականների խորհրդաժողովը, ուր հողատէր ունեւորների և ժողովրդի մէջ եղած վեճը սաստիկ խռովութենով զուրս էր յարձակվել. Գաղանի խորհրդարանը մի խնդրագիր պատրաստեց անգլիական թագաւորի վերայ, հողապարտների կալուածքը հարկի տակ ձգելու մասին, և Գրանկլինը յանձնարարութիւն ստացաւ այդ խնդրագիրը մատուցանել թագաւորին, Նա 1757 թուակ. յունիսին եկաւ Անգլիա, ուր Ճնալով մի քանի ժամանակ, և Մասսիուսեթսի, Մարիլանդի և Գեորգիայի գաղթականքը ևս ընտրեցին նորան իւրեանց զործակալ. Արդարեւ, Գրանկլինի պատկառելի անձը կշիտ տալով վեճեց հարկահանութեան խնդիրը, և 1762ին յետ եկաւ նա Ամերիկա, ուր Պենսիլվանիայի ժողովը շնորհակալ եղաւ նորանից, վարձատրեց նորան 5000 ֆունտ ստերլինդով և խելոյն միւսանգամ ընտրեց նորան գաղթականների ժողովի անգամ. Նորա գրուածը կանաչայի մասին ունեցաւ այն հետեւաւերը, որ Աւոյթե զնդապետը զուրս գնաց պատերազմով ընդդէմ Գրանտիացոց և սոքա կանաչայի աշխարհը թող տուցին Անգլիային. Երբ այն ծանրախորհուրդ երկպառակութիւնքը, Անգլիայի Անքահարկը Ամերիկայի մէջ ներս բերելու պատճառով, ծագեցան, Գրանկլինը որ իւր գաղթականների խորհրդաժողովի մէջ առաջին ընդդիմացողը գամնվեցաւ այդպիսի անարգար հարկահանութեան, միւսանգամ որպէս Պենսիլվանիայի և այլ աշխարհների զործակալ գնաց դէպ ի Անգլիա, և այս սեղ թէ բերանով և թէ գրով այնքան ևս ապատակէս ինչքան բանիմաց կերպով պաշտպանեց իւր հայրենիքի իրաւունքը, որ էր Ինքն-գործ-ութեան իրաւունքը, որ և հաստատեց բանականութեան օրէնքի, բոլոր բրիտանական կարգերի և բոլոր բրիտանական հպատակների բուն և ընդունված իրաւունքների հիման վերայ, այլև վկայ բերելով այն տգատապարզ և հրովարտակները որ գաղթականներին տուած էին երկրորդ Յակոբ թագաւորի ձեռքով, Թէ գաղթականները պիտոյ է պատաստվելով քակտվէին իւրեանց մայրենի աշխարհից, այդ բանը տակաին չէր մտածում Գրանկլինը. նա լինելով խաղաղասէր, սեղիք չը տուեց և Գրանտիայի ներս խտնվելուն հիւսիսային Ամերիկայի գործերի մէջ, Գրանկլինը իւր պաշտօնից հանված և երկիրդի մէջ, մի գուցե թէ բանտարկվի, բայց Օքսֆորթեան համալսարանի կողմից, 1762ին, իրաւագիտութեան վարդապետի դիպլոմ ստանալով, յետ եկաւ Ամերիկա, Գիլդաքեմֆիսոյին հասած թէ չհասած Գրանկլինը, ցնծութեամբ ընդունեցին նորան իւր քաղաքա-

կիցքը, և իսկոյն ընտրվեցաւ նա ազգափոխանորդեան ժողովի անդամ և զարկաւ առաջնորդ այդ ընտրեալներէ, որ պիտոյ է հոգարարձու լինէին հասարակաց սպասոյժութեանը, Այնուհետև Գրանկէներ առաջինն էր, որ, ինչպէս վաղուց յղացած էր իւր մէջ մի հիսփսային ամերիկական դաշնաորութիւն, հրապարակաւ դուրս թողեց բերանից այն մեծ խօսքը, Այն-ի-՛ն-՛ն միւսի իշխանութենից, Մի ընդհանրական թղթով, որի մէջ Անգլիացոց աներաւութիւնքը հասարած ու գրած էին զորաւոր լեզուով, պատրաստեց նա գործը, և նորա, Զէֆֆերանի և Ադամի բանաստեղծեամբ կրկին անգամ հաստատուելով մարդկային իրաւունքներէ պահանջելիքը, 1776ին, յուլիսի 4ին սահմանադրվեցաւ, որ քարոզչի անկախութիւնը, այնուհետև Գրանկէներ առանձնապէս և հրապարակաւ ջատագովեց այս սահմանադրութիւնը որպէս անփոփոխելի, Անգլիական հաշտարար զեպանի առաջն, Այլև ազգափոխանորդներէ ժողովը Գրանկէներ գործակցութենով գրաւոր խորհրդակցութիւն լայնեց Հոլլանդիայի հետ, օգնութիւն խնդրելու եւրոպական թագաւորութեններէց, և նա էր նշնապէս, որ առաջարկեց ժողովին, հարկաւոր պիտոյքը ձեռք բերելու համար, թղթարձած շինել, և այս պատճառով ցած գրեց իւր սեփական գոյքից 4000 ֆունտ ստերլինգ, Ազգու և զորաւոր կերպով աշխատելով աշխարհի պատերազմական պատրաստութենների վերայ, հարկաւոր զեպանութիւնը արձակելով զէպի Կանադա և զէպի Քալիֆոռնի զորախումբերը, այնուհետև յանձն առաւ միջնորդել Գրանկէական տէրութեան յայտնի դաշնաորութիւնը, և այս խորհրդով 1776 զնաց զէպի Գրանկիս, ուր 1776 թուակ. դաշնաորութեան պայմանը կապելուց յետոյ, հանդիսացաւ որպէս հիսփսային Ամերիկայի 13 միաւորեալ տէրութենների լիակարող նախարար, Անգաղաբ հոգարարձու լինելով նպաստ և օգնութիւն ձեռք բերելու, ճաւեր հրասարակելով լրագրների մէջ, թարգմանութեններով, գրուածներով և բերանացի խօսուածքով աշխատուեալ այս սուղ Եւրոպայի հասարակաց կարծիքը գրաւել զէպի Ամերիկացոց գործը, որ և խոստովանուեալ և քարոզուեալ որպէս մարդկային ազգի ազատութեան և աշխարհաշինութեան գործ. նոյն միջոցին աշխատուեալ նա քաջակերելով և իմաստուն խորհուրդներ տալով հաստատապահել իւր հայրենակիցների սրտայնդութիւնը, Երկար ու ձիգ ջանադրութեններից յետոյ, Գրանկէներ բազմամարտար գործակատարութիւնը, որ բացայայտ և նորա նամակներից և օրագրական յիշատակարաններից, Ռուսաստանի և Աւստրիայի միջնորդելով, հնարաւորեց մի շատ շահաւէտ հաստատութիւն իւր հայրենիքի համար, որ և 1783 թուակ. սեպտ. 3ին, Փարիզի մէջ ստորագրեց Գրանկէներ անգլիական գործակալների հետ:

Քրանկլինը միշտ հաւատարիմ մնալով իւր մարդասիրական գաղափարներին, քաղաքական խօսակցութեանների մէջ հրապարակաւ հակառակորդ դուրս եկաւ այժմ, ինչպէս արած էր յառաջուց որպէս մտանշաղիր, ընդդէմ այն բարբարոսութեանը, որ մի թշնամի տէրութեան անմեղ հպատակքը թողլ էր տալիս վշտացնել կամ կողոպտել, և ուրախացաւ տեսանելով, որ մի ապահովական պայմանագրութիւն այս մասին ընդունվեցաւ այն բարեկամական և փաճառական դաշնաւորութեան մէջ, որ կապեցին հիւսիսային Ամերիկան և Պրուսիան։ Երբ որ Քրանկլինը հասել էր իւր մեծ նպատակին, յաղթութեամբ պակշտած ծերունին վերադարձաւ դէպ ի իւր ազատված հայրենիքը։ Քաղաքացիական պատերազմը տարան քարացաւութեամբ արտացած Քրանկլինը դէպ ի Հալբը դը Գոսս։ Այս տեղից նա նստելով Ճանապարհ ընկաւ և իւր նաւարկութիւնը գործ դրեց բնագրական նկատողութիւններ անելու համար, և այս միջոցին շարադրեց մի պատուական գրութիւն, թէ ինչպէս պիտոյ էր ուղղադործել նաւարկութիւնը։ Ամերիկայումը, թնդանութիւնը որոտալով և զանգակները հնչելով, որջուներին նորան իւր ազատուած ազգի ցնծութեան ձայնը և իւր մեծ բարեկամ Աաշինգտոնի և պաշտանակալների, Պենսիլվանական ժողովի, հասարակութեանների և ուսումնական միաբանութեանների, համալսարանների և ուսումնարանների շնորհակալական ու շնորհասօրական գրութիւնները, երբք անգամ միարան հաւանութեամբ իւր քաղաքակիցքը ընտելցին նորան պենսիլվանական տէրութեան կառավարիչ, և որպէս առաջին փոխանորդ նորա կողմից ազգային ժողովի մէջ, աշխատաւոր գտանվեցաւ նա ամբացնելով և մտքերելով հիւսիսային Ամերիկայի մանուկ ազատութիւնը, Եւրոպիան և սկարութիւն, մանաւանդ թէ նորա քարացաւութեան զորանալը սփայնցին նորան վերջումը, 1788 թ. ամենին հրաժարվել հասարակաց գործերից, Նա ապրումէր իւր հոգու անձերանալի զորութեանովը, միշտ զուարթապէս պարտաւելով ուսումնականութեան և հայրենական գործերի, որպէս և միշտ հաղորդակից մնալով իւր մտտեկայ և հետակայ բարեկամների հետ, բողոքաւոր իւր թուաների մէջ, իւրաշէն բնակարանում, մինչև 1790 թուակ. ապրիլի 17ին հասաւ նորա կատարածը. սորանից մի փոքր յառաջ ստորագրել էր այն թուղթը, որ ստրկութիւնը վերացնելու համար հաստատած ընկերութիւնը, որի նախարարը ինքը Քրանկլինն էր, պիտոյ է մատուցանէր ժողովրդի տեղակալներին։ Բոլոր Ամերիկայի մէջ նորա յիշատակը պատուեցին տիրութեան հանդէսներով. Ազգային ժողովը հրամայեց իւր ամենամեծ քաղաքացի պատուի համար մի ամիս սուղ անել. Քրանսիական ազգային ժողովի մէջ այսպէս որոտաց նոր Պերիկլէս Միլարոն. «Մեզաւ Քրանկլինը. այն հոգին որ

Ամերիկային ազատութիւն շնորհեց և լուսեղէն հեղեղներ թափեց բոլոր Եւրոպայի վերայ, ահա վերադարձել է զէպ ի աստուածութեան ծոցը։ Այն իմաստունը որ պատկանումէր երկու աշխարհների, այն տղամարդը, որի մասին միմեանց հետ վիճումն գիտութենների տարեգիրքը և ազգերի յիշատակարանքը, ամեն մինը իւրեան սեփականելով նորան, այն տղամարդը ունի մի բարձր տեղ մարդկեղէն աշխարհի մէջ։ Ազգերը պարտական են միայն սուգ առնել իւրեանց բարերարների համար, ազատ մարդերի փոխանորդներին չէ պիտոյ այլ անձինք քան թէ մարդկութեան հերոսըր մեծարևի կացուցանել։ Ես առաջարկումմ, որ ազգային ժողովը երեք որ սուգ առնէ Քրանկլիննի մահուան վերայ, ժողովը միայն հասանութեամբ ընդունեց Միրաբյուի առաջարկութիւնը, և Քրանսիական ազգի անունով ցաւակցական թուղթ ուղարկեց հիւսիսային Ամերիկացոց ժողովի վերայ, որ և շնորհակալական թղթով հիւսիսային Ամերիկացոց կողմից պատասխան գրեց։ Հայրենի աշխարհի գաւառներ, քաղաքներ, հասարակագլու շինուածներ պատուեցին իւրեանց անձը և Քրանկլինի յիշատակը, ընդունելով նորա անունը։ Բայց իւր տապանաբարի համար սահմանել էր Քրանկլինը այսպիսի վերադիր. «Այս տեղ է դրած սպագորդ Բենիամին Քրանկլինի մարմինը (մի հին գրքի կազմի պէս, որի միջից հանած է նորա պարունակութիւնը, որ և կորուսել է իւր ճակատը և ոսկեզարգութիւնը) որպէս ճճիների կերակուր. բայց նոյն իսկ գործը կորած չէ, այլ, ինչպէս հաւատ ունի նա, միանգամ երևելու է աւելի գեղեցիկ, հեղինակի ձեռքով վերստին տեսած ու կատարելագործած սպով»։ Արդարև շատ փոքր պատահած է, որ բայցը այնպէս քաղցր աչքով նայած լինէր մի մահկանացուի վերայ, ինչպէս նայած է Քրանկլինի վերայ, որ սկսեց իւր ասպարեզը որպէս մի աղքատ աշակերտ սպարանի, բայց որպէս իւր հայրենի աշխարհի կառավարութեան անգամակից, որպէս իւր ազգի ազատող, պատուած ու մեծարած երկու աշխարհների մէջ, ընտանեկան և քաղաքական բաղդաւորութեամբ մայելչացած, իւր արժանապատիւ ալեզարդ գլուխը խոնարհեցրեց զէպ ի հանգիստ։ Բայց փոքր է պատահել նոյնպէս, որ մի տղամարդ այդպիսի եռանդով, այդպիսի ճգնողութենով և անձնադրութենով ձգտեցած լինէր զէպ ի մեծը և ալիւրը, և այնքան փոքրիկ, իւր յատուկ զորութեամբ ձեռք բերած հնարներով գլուխ բերած լինէր այնպիսի գործեր, ինչպէս Քրանկլինը, Նորան պարտական է իւր հայրենիքը ոչ թէ միայն բազմաթիւ շատ օգտակար կարգադրութենների համար, զոր օրինակ հրապարակական գրատունքը, Ամերիկայի փիլիսոփայական ընկերութիւնը, Քիլագլիֆիայի համալսարանը, որի կառավարութեանը 30 տարի շատ սիրով գործա-

կից էր, միարանութիւնքը վասն Հաստատելու Հասարակաց տներ, ուսումնարաններ, հիւանդանոցներ, տպարաններ և գրախանութներ, յաստաշագեմ կացուցանելու երկրագործութիւնը, վաճառաշահութիւնը և վաստակատիրութիւնը, վերացնելու սարկութիւնը, թեթեւացնելու բնիկ Ամերիկացոց գրութիւնը և բարեկարգելու բանտերը: Նա տուել է իւր հայրենիքին մի աւելի կանոնաւոր պօլիցէյական կարգ, հաստատել է առաջին ապահովական ընկերութիւնը կրակի երեսից, որպէս և առաջին հրաշիջական կարգերը: Նա հիմնարկել է մի կանոնաւոր զօրախումբ աշխարհի չափահաս բնակիչներից, հաստատել է մի բարեկարգ հաղորդակցութիւն գաւառների մէջ. նա է նոյնպէս, որ պարզեւել է մարդկութեանը զանազան փառաւոր գիւտեր, որոնց մէջ նախապատիւ էին կայծակնահաս ձկնորսները, շարմնեկա անունով նուագարանի կատարելագործութիւնը, պղնձաուպումեան մամուլը, անտեսական հնոցքը, քերմապէս յաջողութիւն տալով դաստիարակութեան անբին, աշխատաւոր գտնովեցաւ մանուկների կրթութեան համար, հոգատար լինելով մանաւանդ թէ արուեստաւորների դաստիարակութեանը, որին նորումս ուշադիր են եղած և Անգլիայի և Գերմանիայի մէջ. նոյն միջոցին վեր բարձրացրեց նա իւր ազգի բարոյական, իմացական և քաղաքական կրթութիւնը մասնագրութեան ճանապարհով, հասարակաց հեշտ հասկանալի գրուածներ տարածելով և մանաւանդ թէ իւր, ամենազնիւ հոգով շարագրած, պիտիւլիանական լրագրովը և իւր պատուական, ժողովրդի գործածութեան համար պատրաստած, օրացուցովը, որ հազար հազար օրինակներով ծաւալվեցաւ բոլոր Ամերիկայի մէջ: Մի արժանի նմանողութեան օրինակ է տուել մեզ Ֆրանկլինը իւր «ձերունի շէնրիկոսի առակներ» անունով գրքի մէջ, ինչ տեղ նա մի անգերագանցելի հմտութեանով բարոյական խրատները կերպարանում և գործ է դնում բարեկամութեան և ընդհանուր մարդասիրութեան պարտականութեանների վերայ, ժամանակի պիտաութեան, բարեգործութեանի երջանկութեան վերայ, այն բանի վերայ թէ հարկաւոր էր իւր յասուկ բարեկեցութիւնը կապակցել հասարակացի հետ, այլև աշխատասիրութեան պտուղների և վայելչութեան վերայ. նորա «Միտարդի իմաստութիւն» անունով գրքից ուսանումնք թէ ինչպէս պիտոյ է լինէր ժողովրդի ընթերցանութեան համար շարագրած գիրքը: Նորա օրական յիշատակարանները իւր բանագեւ գիպլոմասեան միջնորդատեսութեանների մասին, նորա ծանօթարանութիւնքը ֆլասապարտութեան օրէնքների, ծովային վաճառականութեան, ծովային սպասարակութեան վերայ, նորա ճառը այն բանի մասին թէ պիտոյ էր պաշտօնաւորներին թռչակ վճարել և այլ միւս բաների մասին, ունին

տեղական արժանատիութիւն: Բայց Գրանկլինը առաւելապէս ահա-
նաւոր է կացուցել իւր անձը, պաշտպանելով իւր Տայրենական աշ-
խարհի իրաւունքը, ազատութիւնը և քաղաքական կարգերը: Նորա
հեղանկան գրուածը որի մէջ Պրուսիան հարկի հրովարտակ է ար-
ձակում զէպ ի Անգլիացիք, ըստ որում սորա հին Յարսոնացոց սե-
րունդք էին, կամ թէ նոցանից գաղթական էին գնացած զէպ ի
Անգլիա. այլև նորա բանաստեղծութիւնքը թէ ինչպէս մի մեծ թագա-
ւորութիւն պիտոյ էր այնպէս կառավարել, որ գործը լինէր որպէս
թէ փոքրիկ թագաւորութեան կառավարութիւն. նորա բարեկամա-
բար գրած նամակը ժառանգական ազնուատոհմութեան վերայ, կամ
թէ բաղդատութիւնը որ անուամբ նա Հրէաների և ամբիկական Ան-
տիֆեօղերալիստաների մէջ, և այն զեղեցիկ պարօղիան այն մարդերի
վերայ որ ջատագով էին սեւամորթ մարդերի ստրկութեան համար,
միատեսակ զերազանց են, ինչպէս իւրեանց զաւարձացուցիչ կերպա-
բանքովը, նոյնպէս այն ճարտարութենովը, որ մի ճոխ հանձարի բո-
լոր կարողութիւնը լարելով, հիմնաւորապէս վերահասու լինելով
մարդերի և բաների որպիսութեանը, պիտէ բժշակել ամեն մի առար-
կայ իւր շատ պարզ և զլիսուոր կողմիցը, ուղիղը պարզ իրաւա-
ղղայութեան և մարդկային բանականութեան հիմքի վերայ լուսափայլ
կացուցանել, և վիճելի հայեացքը նոյն իսկ հակառակորդի աչքով
նայելով ջրել և ո՛նչպցնել: Այլև լինելով շատ տեսակ բաների
վերայ բազմահմուտ մատենագիր, քաղաքական մարդ, միջնորդախօս,
օրէնստու, հայրենիքի ազատող, տերութեննների հիմնարկող, իւր զե-
ղեցիկ և ճոխ կենդանութեան մէջ ջրոյց է տուել մեզ այդ սակաւա-
պիստ մարդը մի ամենակատարեալ օրինակ թէ ինչպէս պիտոյ է լի-
նէր մեր ժամանակի նոր քաղաքացին. այսինքն մի պարզ, հանգար-
տապէս քննող, զէպ ի հասարակաց օգուտը ուղղեցուցած ներգոր-
ծութիւն և բանաւոր պատճառների վերայ հիմնած առաքինութիւն:
Այսպիսի առաքինի քաղաքացի երևումէ նա յատկապէս և իւր կեանքի
ու ներգործականութեան մէջ, այդպէս ևս կարողացաւ նա այնքան
զերազանց յաջողակութիւն ստանալ և այնքան զարմանալի քաջ ներ-
գործել, բնութիւնը չէր բաշխել նորան մի յատկապէս ինքնագիտ
հանձար, բայց նա ձեռք բերեց իւր յաջողութիւնքը ամենախոհեմ
և անփաստակէ լի կերպով հարցաքննելով և օգտակար կացուցանելով
իւր բոլոր զօրութիւնքը, իւր բոլոր ժամանակը և ամենայն հնարներ
որ երբ և իցէ գտանումեր նա, և միշտ տէր լինելով իւր անձնի վե-
րայ, զգաստ, չափաւոր և սակաւապէտ լինելով: Նա, ինչպէս պատ-
մումէ ինքը, զգուշութեամբ ուշադիր էր այն բանին, որ ոչ թէ մի-
այն աշխատասէր և բարեխառն լինի, այլև ոչինչ զոցս հակառակ

կարծիքներ չը ապ միակերին: Նա կրուձք պարզ զգեստ և երբէք չէր երևում հրապարակական զրօսարաններէ մէջ, նա երբէք զնացած չէ ձուկն որսալու կամ թէ զաշտումը որս առնելու: Նորա միայնակ զրօսանքը էր սասորինջ խաղալ, որ շատ սիրումք: Իւր պարագ ժամանակի առաւել մեծ մասը գործ էր գնում նա քննելոյ և ուղղելոյ իւր անձը. այո՛, նա յղացաւ իւր մէջ այն համարակ խորհուրդը, այսինքն ձգտիլ զեպ ի բարոյական կատարելութիւն: Այս խորհուրդը զլուխ բերելու համար մտարեց նա ճշդապէս բաժանել իւր ժամանակը քսան և չորս ժամի մէջ, և կանոններ սահմանել, որոնցով իւր վարքը և զգացողութիւնքը կարող էր ճշդապէս կարգադրել: Առաւօտու 5 ժամուն վեր էր կենում նա, առաջին երեք ժամը նուիրումք աստուածագաշտութեան, ուսումնասիրութեան, անձնամաքութեան և նախաճաշիկի: 8 ից մինչև 12 ը աշխատումք իւր գործի մէջ. 12 ից մինչև 2 ը կարգումք և ճաշ էր ուտում, ապա նոյնպէս անպարագ էր մինչև 5 ժամը. յետոյ բնձայումք ժամանակը իւր զերդաստանին և ընթերցանութեան մինչև 10 ժամը, 10 ից կամ թէ 11 ից մինչև 5 ժամը հանգստանումք նա, որ միւս օրին նոյն կարգով վճար էր կեանքը: Այն կանոնքը որ յիշեցինք վերևումք, ասումքին Առաքինութիւնք կամ Խրատք, որ պիտոյ էր պահել յիշողութեան մէջ, որ և այսպէս էին: Հեղաբարոյութիւն, յուսթիւն կամ թուժկալութիւն գատարկաստութեանից, կարգասիրութիւն, հաստատութիւն կամ ամուր կանք կատարելու իւր խոտմունքը և պարտականութիւնքը. բաւականութիւն, ժրջանութիւն, անկեղծութիւն կամ թէ հեռի կենալ ամենայն խաբելութեանից, արդարութիւն կամ թէ հաստատուն կամք ոչ ում անիրաւութիւն շտանելու փառքութիւն, մարքութիւն, հոգու խաղողութիւն, պարկեշտութիւն, ցածութիւն: Այս բաներովը ջանադիր էր նա նմանող լինել քրիստոսին և Յովբառեսին: Կամենալով հաստատ մնալ այս կանոնների վերայ, որոնցից և թէ խոտրված էր, սովորութիւն ուներ այդ սխալները նշանակել իւր օրական յիշատակարանի մէջ, պիտոյ է շատ գծուարանար նորա կեանքը: Գորա փոխարէն և ստացաւ նա առաւել պատուական պսակը, որ մի հեղինակ էրք և իցէ հիսուսէ է մի արժանաւոր գլխի համար, այսինքն Գալամբերի զեղեցիկ խօսքը, որով նա Ֆրանկլինը հանդիսակից կացուց Փրանսիական Ճեմարանին:

Eripuit coelo fulmen sceptrumque tyrannis!
 Երկնքից իւրէն կոծակը, բռնաւորն ընդ գաւազանը:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆՔԻ ԵՒ ԽՏԱՆՈՒԹՒՆՆԵՐ:

1- ԸՍՏՈՒՆԾ .

Ս կրուղղիբ քո միտքը և ըմբռնիբ այն ամենամեծ մարդկեղէն խորհուրդը: Այն տեղ ուր անանց մշտնջենաւորութիւնն է, այն տեղ ուր անսահմանութիւնն է և ուր սկսանումէ գիշերը. այն տեղ մի անեղբական հոգի տարածանումէ իւր բաղուկները, գրկախառնումէ այն ասագին վայրասահ տիեզերքը, կրումն նորան և ջերմացնումէ: Նա և գու և ամենայն մարդիկ և բոլոր հրեշտակները և բոլոր ճճիները հանգստանումեն նորա հայրական թեաքութեան տակ, և այն աշխարհների և արեգակների մոմսուն և ալեկոծուն ծովը որպէս մի հասմանուկ գրած է նորա գրկի մէջ, Նա այս ծովի, այս աշխարհների ծովի միջից, ուր խեցեմորթեան ծառեր երկիրներով բեռնաւորված տարուրերվումեն, նայումէ և տեսնումէ ամենախոք խեցեմորթի վերայ մածուցած որդնիկը որ ես եմ, և նա տալիս է այդ որդնիկին առաւել ընտիր բաժինը, մի երանելի սիրտ, մի հանդերձեալ կեանք և մի աչք որ կարող է վեր նայել զէպ ի իւր արարիչը, զէպ ի քեզ, ով Աստուած, զէպ ի քո հայրական սիրտը:

Ըստուած մշտնջենաւորութիւն է, Աստուած ճշմարտութիւն է, Աստուած սրբութիւն է. նա ոչինչ չէ՛, նա է ամենայն բան. սիրտը ըմբռնումէ նորան, բայց ոչինչ միտք. բոլոր անեղբականը և անխնային մարդկեղէն բնութեան մէջ է նորա ցոլացումը. բայց աւելի խորամուխ լինել թող չը համարձակիլի քո ասարեկ սիրտը: Արարչագործութիւնը որպէս մի վարագոյր, արեգակներից և հոգիներից հիւսած, քողարկումէ Անեղբականի երեսը և յախտեանքը անց են կենում այդ վարագուրի մօտից առանց յիս քարչելու նորան այն փայլողութեան երեսից, որ ծածկումէ նա:

2- ԿՐՕՆ ԵՒ ԻՄԵՒՈՒՆՔ .

Երբ որ մարդս ջանահար լինելով ծանաչել և գիտել, հասնումէ այն սահմանին, որի վերայ ոտք կոխել և անցանել չունէր երբէք համարձակութիւն. երբ որ նա այն անտեսանելի կարողութեան վերայ, որ կառավարումէ նորա կեանքի ընթացքը, առաջարկումէ խնդիրներ, որոնց պատասխան տահու համար զուր և անօգուտ էին նորա իմացականութեան աշխատութիւնքը. երբ որ նեղումին նորան վշտեր և ցաւեր, որ ոչինչ մարդկեղէն կարողութիւն հնարաւոր չէր հասուցանել նորան, և ոչինչ մարդկեղէն կարողութիւն բաւական չէր դարձուցանել նորանից. երբ որ նա հասկանումէ, թէ ինքը ստորագիր էր մշտնջենաւոր օրէնքների որոնց սկզբնաւորու-

Թիւնը չը գիտէ նա, որոնց յառաջագայութեանը չէր ինքնը գործակից և որոնց սիրտիսութեան մասին չունի ոչինչ գառալճիս. այնուհետև մի հաս հոգեղէն կարողութիւն պղտակով նորան յուսահատութեան վտանգից, տանուաճ գէպ ի խաղաղութիւն, հաշտեցնելով նորան իւր հետ և արարչագործութեան հետ. այս է հաւատի կարողութիւնը, Արօնը:

Եւ ընկերական կեանքի պայմաները, որոնց էութիւնը կարող է մարդս պայծառապէս ճանաչել, առանց այնպիսի խնդիրներ չանդիպելու, որոնցից պիտոյ է յետ քարշլէր նորա իմացականութիւնը, նեղումն նորան ցուերով ու վշտերով, որ ըստ մեծի մասին այնպիսի էին, որ յառաջանումն հաւասարակից մարդկերից և կարող էին զոցս ոգնութենով հեռացիլ, և զոքս ստորագրումն նորան հարկեցուցիչ որէնքներ թակ և հրամայումն նորան հրաժարիլ իւր ազատ կամքից, մի տեսանելի մարդկեղէն իշխանութեան տեղի տալու համար: Այս հրամանին յոժարակամ հնազանդել յորդորում նորան այն կարողութիւնը որով հասկանումը և ճանաչումը նա իջ-----ուր, Մեք հաշտումնը կեանքի հետ առ հասարակ, հաւատի և կրօնի միջնորդութենով. բայց ճանաչելով իրաւունքը հաշտումնը կեանքի հետ թագաւորութեան մէջ:

3. ԱՐՈՆ ԵՒ ԲԵՐՈՅԵՎԵՆՈՒԹԻՒՆ.

Արօնը մի շարժառիթ է, որ ներգործում է միշտ. բոլոր միւսերը ներգործումն միայն յատկացեալ ժամանակներով և յատկացեալ հանգամանքներ ի մէջ. նա վերարեբում է գէպ ի մարդը որպէս մարդ, բոլոր միւսերը գէպ ի յատկացեալ որպիսութիւնը: Արօնը պարհակում մարդու բոլոր կենդանութիւնը. ամենայն միւս շարժառիթները սահմանաօրովումն նորա տեղութեան մի մասնովը, կամ թէ ենթադրումն մի յատկացեալ որպիսութիւն նորա մէջ: Ամենումնիք շարժել մարդու սիրտը պատուի և ամօթի ազգարանովը. բայց կան մարդիկ որ ապրումնին այնպիսի անյայտութեան մէջ, որ զոցանից ոչ մինին հասանելու չէին. և ամենայն մարդու մէջ կային գործեր, որ այնպէս ծածուկ էին, որ այն վարձատրութեանը չեն հասանում, և այս պատճիցը ազատումն: Ամենումնիք մարդը գործող կացուցանել ջերմուանդ պաշտանկատարութենով հասարակաց բարեկեցութեան համար. բայց շատ թագաւորութենների մէջ այնպէս էին քաղաքական կարգերը, որ մարդս առանց մեծատոհմ լինելու, առանց արքունի պաշտոն ունենալու չէ կարող ոչինչ, գոնեայ ոչինչ երևելի բան առնել մարդկային ընկերութեան համար: Ամենումնիք նորան, ցոյց տալով թէ իւր գործերը ինչ ազդեցութիւն ունենն նորա յա-

տակ սրտի վերայ, աղնուացուցիչ էին թէ վատթարացուցիչ, խոր-
շնչուցանել արատից և որսալ նորան զեպ ի իւր պարտականութիւնը-
րայց, թող այն, որ այս քննողութիւնը շատերի համար անչափ նորը
էր և ենթադրուեալ մի կրթեալ իմացականութիւն, զոյն այդ քնն-
ողութիւնը հարկաւորապէս աւաջնորդուեալ զեպ ի մտածութիւն Աս-
տուծոյ և հանդերձեալ կեանքի վերայ, որ էթէ չը լինէին, ապա
մեր ներքին կատարելութիւնը պիտոյ է լինէր մի ցնորական բան կամ
թէ մի անխտր բան մեր համար: Բայց, էթէ կայ մի Աստուած, ուրեմն
և կայ միշտ, ազգուեալ մարդու վերայ նորա կեանքի ամեն մի բովումը,
և ամենայն գործ որ ուր և իցե կատարվումք աշխարհի մէջ, ունի
յարարելութիւն զեպ ի Աստուած: Այս պատճառով, էթէ կրանը
չը լինէր ևս բարոյականութեան հիւք, այնու ամենայնիւ պիտոյ է
համարվի նա բարոյականութեան ամենին հարկաւոր նեցուկը, այժմ,
նորա միայնակ պահպանողը:

3. ԽՂՃԻՏՆԵՔ ԵՒ ԿՐԾՆ.

Խղճութիւնը է մարդերի բուն էութիւնը իւր լիակատար պայծառ-
զարդութեան մէջ, երկնային սկզբնամարդը. նա չէր այս կամ այն
բանը. նա չէ հրամայում մեզ ընդհանուր խօսքերով. նա չէ բաղ-
կանում որիչ որիչ առարկանութեններից, կայ միայն մի հաս Աս-
քինութիւն, այսինքն մարդը, հաստատուն կամք, որ վճռողութեան
բովումը խելոյն որոշում և ընտրում: Հարցախորձել թէ ինչու հա-
մար պէտք էր յանձն առնուլ այս կամ այն առարկանութիւնը, նոյն
բանն էր, էթէ ծառը հարցնէր ինքը իւրեանից թէ ինչու պիտոյ է ինձ
աճել և այս կամ այն ծիւղերը արձակել: Եւ կամենալ շարը, ոչինչ
այլ բան չէ, քան թէ ծառը յօժարակամ խորտակէր իւր ոստերը,
որ այնպեպանը այլևս չուրախանար նոցա վերայ: Կարող էինք առանց
մեր յատուկ չար կամեցողութեանը, զեպ ի վեր աճել հետեւ լով միայն
մեր խղճմտանքի զրդողութեանը, ապա կը լինէինք և կը մնայինք
միշտ և հանապաղ բարի:

Ինչ որ այսպիսի կերպով երևում օրպէս մեր ներքին բնու-
թեան անհասկանալի հարկաւորութիւնը, օրպէս մի ընդհանրական
օրէնք միայն առանց սահմանեալ պարունակութեան, այդ բանը յրանի
զօրութենով դառնում է մի զարմանալի ընտանի, անվերջ բազմօրի-
նակ և ամենին խաղաղապարզ և աշխարհ, մի անհասկանալի սրտա-
կից հաղորդակցութիւն բոլոր աստուածատէրների մէջ, մի լսելի ներ-
կայութիւն ամենկատարեալ անձնաւոր էակի, նորա կամքի, նորա
սիրոյ մեր սրտի խորքումը: Եւ է օրպէս թէ մեր խղճմտանքի ազա-
տութիւնը, այն անչափ պայծառ հայելին որի մէջ տեսանում ենք մեր

յատուկ առաւել պայծառապարզած բնութիւնը որպէս մի կերպարա-
նաւոր պատկեր մեզանից զուրս և ճանաչումներ մեր հոգու առաւել
ներքին դրողութիւնքը որպէս սիրոյ օրէնքներ: Մի այդպիսի ազա-
տութիւն հոգևոր բնական հարկաւորութենից կարող է միայն նա բաշ-
խել մեզ, որ դորան անկակից է շինել մեզ. այսինքն այդ ազատու-
թիւնը պիտոյ է լինի Արարչի յայտնութիւնը, Ճշմարիտ Աստուծոյ
յայտնութիւնը, եթէ չէ պիտոյ, որ տանէր մեզ դա զէպ ի մար-
բութիւն և թշնամութիւն մեր հետ յատկապէս:

5. ԵՐԵՄԻՐ ԵՅԵՔԻՆՈՒԹԻՒՆ.

Ո՛վ որ իւր ձգտողութիւնքը և գործերը սահմանում և ուղղե-
ցուցանում նայելով կեցութեան դիտաւորութեններին և հանգամանք-
ներին, գորանով, եթէ ոչ միւս բաներով, մեզանչում զէպ ի իւր
աւելի վերին անձնաւորութիւնը, ուրեմն զէպ ի սուրբ կարգը աշ-
խարհի և զէպ ի Աստուածութեան կամքը: պատճառ, ամենայն զո-
րութիւն, և ազատ, անձնագիտակից զորութիւն, պիտոյ է իւր բնու-
թենից յառաջանալով գործէ և ազգէ, բայց ոչ, որպէս լի է կրա-
ւորարար թելադրի մի ստար և արտաքին բանից: Այո, վերաբե-
րելով զէպ ի Աստուած, նշնպէս մեռմը դա Ճշմարիտ մեր համար,
պատճառ, ինչքան որ Աստուած մեր աչքի հանդէպ դրած էր որպէս
մի արտաքին շարժառիթ, առանց որպէս մի զթառատ և սիրալից հայր
խորամուխ լինելու մեր բոլոր սրտի մէջ, այնքան ևս մեր կամիլը և
տանելը չէ Ճշմարտապէս երկիւղած և աստուածապաշտական: Այնու-
հետև մեր ոչինչ բարի բան չէինք ասնում առանց մի սահմանալ
շարժառիթի, ուրեմն և անձնաճանաչութեան միջնորդելովը զեռ ևս
չենք վերագարձել զէպ ի առաջին անմեղութիւնը, զեռ ևս չենք
զարձել որպէս մանուկները. այլ գլուխն ու սիրտը ապրումն մի
բաժան կեանքով, ամեն միւր իւր համար. նա շատ անգամ մտածում
խոհեմ և բարի, բայց ըստ մեծի մասին շատ յուշ, գործից յետոյ.
Երբ որ միւսը հետեւել է արդէն բոպէի հրապոյրներին:

6. ՓՐԿՈՒԹԻՒՆ.

Փրկութենովը միւսանգամ դարձել ենք մեր Աստուծոյ զաւկ-
ներ, ինչպէս որ նա արարչագործութեան ժամանակին ստեղծել էր
մեզ. մեր գորանով խկապէս վերագարձել են զէպ ի մեր հօր օրե-
ւանը, և ստացել ենք միանգամայն և բաշխաւորութիւն, որ երբէք
արտաքովելու չենք այն տեղից. պատճառ, շնորհք և շնորհարաշխա-
կան հնարներ շատ և առատ տուած են մեզ: Քրիստոսովը միւսանգամ
հաշտվել են միմեանց հետ երկինք և երկիր, մարմին և հոգի, կեանք

և մահ, սխուածը և կատարածը, Այսուհետև չէ կեանքը մի ահ ու զողով ծառայութիւն և խաւարամիտ երկխոյ, նա աեր է և կարօտութիւն. մահը սիրելի է, ոչ թէ այն պատճառով, որ վերջացնումը կեանքի տառապանքը, այլ որովհետև տեղափոխումը զեպ ի հոգու հայրենիքը. մեր հոգին դարձեալ ստացել է իւր ճշմարիտ բնութիւնը և ազատութիւնը. նա չէ այլ ևս կապած մարմնի տեղութեան վերայ, ննջեցեալների հետ ունի նա հաղորդակցութիւն. ամենայն բան յառաջ է վարում մեզ զեպ ի այն կողմի աշխարհը, զեպ ի մշտնջենաւորութիւնը. ամենայն բան վերացնում մեր սիրտը զեպ ի Ամենարարձրեալը, զեպ ի Ամենամարտը. մեր սերմանումները և հնձումները մշտնջենաւորութեան համար: Առաքինութիւն և երջանկութիւն, գործ և վարձատրութիւն, ոչ թէ այս երկրի վերայ, այլ միւս կեանքումը պիտոյ է միմեանց հետ զուգապատշաճօրէն մշտնջենաւորպէս. անբաղդութիւնը չէ կարող խողովել բարեպաշտի սիրտը, ոչ բաղդաւորութիւնը անպատիժ կացուցանել ամբարիշտը. հոգևոր և ներքին են ամենայն գործելու շարժառիթները և խորհուրդները, հոգևոր և ներքին է մարդու առնչութիւնը զեպ ի մարդ և մարդկութեան առնչութիւնը զեպ ի Աստուածութիւն. արտաքին կապերը թոյլ և խզելի են, բայց ներքին կապերը անմատչելի են արտաքին բռնութեան համար: Այսպէս ահա, փրկութենովը ամենայն բան փոփոխվել ու յեղաշրջվել է. նպատակը դարձել է հնար, մահը կեանք, վիշտը որհնութիւն. և այսպէս կարող ենք ասել ստուգապէս, թէ մարդը կորուսել էր իւր Աստուածը, արարածը իւր արարիչը, զուակը իւր հայրը, մարմինը իւր հոգին, հոգին իւր հայրենիքը, բայց դարձեալ գոքա գտել են միմեանց և պիտոյ է մշտնջենաւոր հաղորդակից մեան միմեանց հետ. մարդը քնած էր և երազ էր տեսնում և զգումը ևս իւր անձը երջանիկ իւր երազների մէջ, բայց նա զարթել է, և նոր կեանք և ճշմարիտ երանութիւն բացվել է նորա աչքի առաջ. ինչ որ նա չէր կարող զուշակել մտքով, որովհետև շատ մեծ էր նորա համար, այժմ դարձել է նորա համար անտարակոյս ճշմարտութիւն:

ԲԱՐՈՅԵԿԵՆ ՄՏԸՄՈՒԹԻՒՆԻ:

ԼԵՁՈՒՆ.

Մահ և կեանք լեզուի վերայ են գրած. Թշուէս գործ կը գնես նարան, սփուկս ևս կը լինի քո վերջը:

1. ՄՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՉԸՓԸՁԸՆՏՈՒԹԻՒՆ.

]]եր խօսուածքը պիտոյ է լինէր հեզ, համարձակ, ճշմարիտ և անխորդախ: Զգուշացիք երկղիմութենից, ննջաւորութենից և

կեղծաւորութենից. թէպէտև չէր օգտակար ասել միշտ ճշմարտութիւնը, բայց և ոչինչ ժամանակ չը կայ թոյլտուութիւն ընդդէմ ճշմարտութեան խօսել, Եթէ դու անզգուշութենով ասած ես մի սուտ բան, աշխատիր ուղղել այդ սխալանքը, հրաժարվելով նորանից, Գիտարարատիր չքմեղութիւն, թէև դա այնպէս էր միայն, որ դու խոստովանումէիր քո յանցանքը, ունի աւելի պատուականութիւն և աւելի մեծ ներողական զօրութիւն, քան թէ մի խարերայական չքմեղութիւն որ պիտոյ է տար քեզ անմեղութեան երևոյթ, Բայց այն խարէութիւնը որ դու գիտութեամբ գործուցես, աննրելի է միանգամայն. չար մարդը միայն շրջումէ պտուտական ճանապարհներով, բայց ո՛վ որ պարզ ընթացք ունի, շրջումէ ապահով, Ստութիւնը, երկգիմութիւնը և կեղծաւորութիւնը միշտ բացայայտ նշան են թոյլ հոգու և վատթար սրտի:

Եւ ոչ ևս համարձակութիւն կայ խօսուածքի մէջ սահմանից դուրս հանել իւր սրտի զգացողութիւնքը, Սուրբ Օգոստինոսը իւր «խոստովանութենների» շորթորդ գրքի մէջ գրած է. «Նորա հոգին և իւր բարեկամի հոգին եղած էին մի հոգի միայն, և թէ այս բարեկամի մահուց յետոյ անտանելի էր նորան իւր կեանքը. պատճառ, այն ժամանակից յետոյ ապրած էր միայն կէս կեանքով, բայց և նոյնպէս երկխոյ էր ունեցած մահուց, մի գուցէ որ նորա բարեկամը ամենեին մեռանէր»: Բայց այս քնքուշ խօսքերը երևումին նորան յետոյ չափազանց ճոռսմախօսութիւն և աւելորդարանութիւն: Ըյս պատճառով իւր հրաժարական գրքի մէջ մերժումէ նա դորանց և ասումէ յիմարութիւն, Գաւիթ մարգարէն ձայն է տալիս. «Գիր աւեր պահապան բերանոյ իմոյ և դուռն ամուր շրթանց իմոց»:

2. ՍԵՂՆԻ ԵՒ ՇԼՏ ԽՕՍԵԼԸ.

Սակաւախօսութիւնը, որ հին ժամանակի իմաստունքը պղքան գովասանած են, այն չէ, որ մի քանի խօսք ասէինք, այլ այն է, որ աւելորդ բան չը խօսէինք, Պատճառ, խօսուածքի մէջ ոչ թէ նայումն բառերի թուի վերայ, այլ մանաւանդ նոցա իմաստի վերայ. ուրեմն պիտոյ է փախչել չափազանցութենից թէ սակաւխօսութեան և թէ շտախօսութեան մէջ, Յուցանել իւր անձը չափից դուրս ծանր և տարապայման գիտուն, և ընկերական ժողովի մէջ մանակից չը լինել հասարակաց խօսակցութեանը, նշան է կատկածոտութեան և մեծամիտ արհամարհութեան, Գորա հակառակ անդադար զրուցել և միշտ առաջինը լինել խօսելու մէջ առանց միւսերին ժամանակ ու պարագ տալու, որ և նոքա, ինչպէս ցանկանումին, խօսակից լինին, ապացոյց է թեթեամտութեան և յիմարութեան:

պատճառ, ինչպէս բժիշկները քննելով հիւանդի լեզուն, քաջ տեղեկանում են նորա մարմնի օրպիսութեանը, նոյնպէս մեր խօսքերը ճշմարիտ յայտարարք էին մեր հոգու օրպիսութեանը :

Յ. ԲԱՄՐԱՍԱՆԵՐ .

Բամբասանքը մի տեսակ սպանութիւն է. պատճառ, երեքպատիկ է մեր կեանքը. ի՞նչպէ՞ս կեանքը, որ Աստուծոյ շնորհն էր, շուքուողը, որ պահպանումներ հոգու միջնորդութենով, և Իսկուհիք, որ հաստատում է ամբիւն և բարի համբաւի վերայ, Բամբասողը իւր լեզուի մի խայթոցովը գործում սոխորարար երեք սպանութիւն. նա անխիթական կերպով սպանում իւր յատուկ հոգին, կողոպտում նորանից, որին բամբասում էր, քաղաքական կեանքը և մահու շտի վերաւորում այն մարդու հոգին, որ ականջ էր դնում նորան. պատճառ, ինչպէս մի իմաստուն մարդ ասել է. բամբասողը և բամբասողի ունկնդիրը (լսողը) ղև ունին իւրեանց մէջ. մինի մտ նստած է նա լեզուի վերայ, միւսի մտ, ականջի մէջ, կամ թէ, ինչպէս ասում էր Դաւիթ սաղմոսերգուն. « Բամբասողը սրել են իւրեանց լեզուն ինչպէս մի իծ » : Բայց իծերը ունին երկժանի լեզու, և մի այդպիսի լեզուով բամբասողը խոցոտում և թունաւորում միանգամայն ինչպէս այն մարդու անունը, որի վերայ խօսում էր, նոյնպէս և նորա սիրտը, որ ունկնդիր էր բամբասողին, և ոչինչ օգուտ չը կար նորան, եթէ լսողի սիրտը զբաժանուած էր մի ազնիւ գեղթափով ընդդէմ թունաւոր բամբասանքին :

Նորա, որ իւրեանց բամբասանքի ժամանակը գեղեցիկ յառաջարանութիւններ են անում կամ ամենայն տեսակ քաղաքավարական գոխասանութիւն և սեր մէջ են բերում, էին ամենից առաւել խորամանկ և առաւել թունաւոր բամբասողները : Նորա ասում են, զոր օրինակ. « Այ՛ո՛, շատ սիրումի ես նորան, կամ թէ, այլ մասին ոչինչ վատ բան յայտնի չէր ինձ նորանից. կամ թէ. արդարեւ նա մի իրաւասէր և կրթեալ մարդ էր — բայց ինչ որ ստոյգ էր, պիտոյ է խոստովանել. ահա այս ինչ բանում պակասաւոր է նա, և այլն : Այ՛ որ կամենում են ասածից լինել, նա իւր աղեղի նետը, ինչքան կարող էր, պինդ քարշում գէպ ի իւր կողմը, բայց այն խորհրդով, որ նա ևս աւելի սաստկութենով արձակէ նորան. Այսպէս ևս, ինչպէս երևում է, այն մարդիկը բամբասանքի նետը քարշում են գէպ ի իւրեանց կողմը, որ այնքան ևս յաջողակ կարողանային զարկել լսողի սրտին և այնքան ևս խոր թախանցել նորա մէջ :

Այս առաւել անգութ, թէպէտ ոչ այնքան չարաչար էր այն բամբասանքը, որ մէջ են բերում կատակարար. Մորթիները ինքն

բառ ինքեան չէ մի արագաստան թոյն. այլ մանաւանդ ներգործու-
մեր նա բաւական ծանր և կարող էր հակառակ հնարներով անգործ
կացուցանելիլ. բայց եթէ խառնելիք նորան զինու հետ, ապա ոչինչ
զեղով չէր կարելի խափանել նորա ազդեցութիւնը: Այսպէս ևս
այնքան ամուր մնումը նստած լսողի սրտի մէջ այն բամբասանքը,
որ համեմտումը մի սրամիտ կամ թէ ծիծաղեցուցիչ խտրով: Այն
ժամանակը դառնում նս իսկապէս մի իժի թոյն, որ յառաջաց ներ-
գործումը մի անորժ խողշաւեր, բայց դորանով ընդարձակումը սիրաբ
և փորտախրը և այդպէս աւելի խոր ներս է ծծվում:

4. ԲԵՐԵՆՎԵՄՈՒԹԻՒՆ.

Մշտաբնէր ինչքան զատարկ ու ամպի կը լինէր, եթէ նորա
վերայ մտածելիք միայն սարեր ու գետեր ու քաղաքներ. բայց այս
տեղ և այն տեղ ծանաչելի մի մարդ որ համաձայն էր մեր հետ, որի
հետ կարող էինք մեք և լուս կերպով կենակից լինել. ահա թէ ինչ
քան զարգարումը մեր համար այս երկրագունդը որպէս մի բնակելի
այգի:

Այլ որ հաւատումը բարեկամութեանը, պարտական է հարկաւո-
րապէս հաւատալ և առաքինութեանը, մի այնպիսի կարողութեան,
որով մարդը ստանում Պատուածայնութիւն: Այլ որ մի այդպիսի կա-
րողութեան կամ թէ առաքինութեան չէ հաւատում, անհնար է
նոյնպէս, որ հաւատար նա մի ճշմարիտ իսկական բարեկամութեան.
պատճառ, երկուքը ևս հիմնաւորվում են մի և նոյն արամադրութեան
վերայ զէպ ի մի անշահախնդիր, ազատ, անմիջական և այդ պատ-
ճառով անփոփոխ սեր:

Մյս աշխարհի վերայ չը կար մի այնպիսի վսեմական, այնպի-
սի երանական ժամ, ինչպէս այն ժամը, երբ մի մարդ հանդէս էր
գալիս, առաքինութեանով գաւառորմած և սիրով հոգիացած, և արհա-
մարհումը բոլոր վստանգները և ցուցանումը մի բարեկամի, թէ ինչ-
պէս է իւր սիրաբ, Այսպիսի մի կեանք, այսպիսի մի վերհամար-
ձութիւն հոգու աւելի պատուական բան է, քան թէ այն հեշտա-
ցուցիչ ունայնասիրութիւնը որով մարդիկ վարագորում են իւրեանց
անձր անօգուտ հնարագործութեաներով: Բայց կատարեալ պարզմտու-
թիւնը վայել է միայն առաքինութեանը. այն մարդը, որի մէջ կայ
կասկածառութիւն և խաւար, թող փակէ իւր սիրաբ զիչերային փա-
կանքներով և ներկերով. թող չար և վատթար մարդը ինայէ մեզ
և չը բանայ մեր առաջն իւր մեակլտաին (մուսած ու փոսած ներսը),
և ով որ չունի իւր վերայ մի դուռն որ բացվումը զէպ ի երկինք
այդպիսին թող փակ պահէ իւր զժոխահայեաց զարպար:

5. ԳՆՏԵՐԿԱՆՁՆՈՒԹԻՒՆ.

Դատարիանն մարդը ոչ թէ մի անպիտան ծանրութիւն էր երկրին, ոչ թէ միայն մի անպտուղ ծառ, որ անարժան էր իւր տեղին, այլև էր նա՛ մի փնասակար տունկ, որ հիւթը և հողը գողանում էրկրի վերայ եղած առողջ և օրտակար բուսականներէց, Նա մի օխտացեալ անդամ է մարդկային ընկերութեան մարմնի վերայ, որ ապահանում առողջ անգամները և ունիչ գործ չէ կատարում, եթէ ոչ կորուստ և կործանութիւն տարածելով, ըստ որում երկրի և կեանքի բարութիւնը զոհ է բերում իւր կլանող հեշտասիրութեանը. նա չէ ուսում իւր հացը արժանապէս. պատճառ, առանց աշխատութեան արժանի չենք հաց ուտելու:

6. ԼՍԻ ԵՒ ՎՍՑ ՕՐԵՐԸ.

Մեր մարդիկ շատ անգամ գանգատումենք, թէ լաւ օրերը այդքան փոքր էին և վատ օրերը այնքան շատ, և ինչպէս երևում ինձ, ըստ մեծի մասին, առանց արդարացի պատճառի, եթէ մեր ունենայինք միշտ մի բաց սիրտ և կարողանայինք վայելել այն բարութիւնը որ մեզ պատրաստում Ըստուած ամենայն օր, ապա կ'ունենայինք ևս բաւական զօրութիւն տանելու շարին, երբ որ գալիս էր գաւ. Արտնեղութիւնը և ահաճութիւնը որ մի և նոյն բանն էր, ինչ որ ծուլութիւնն է, ըստ որում և նորա ծուլութեան պէս մի բան էին. մեր բնութիւնը շատ յոժարված է դէպ ի այդ կողմը, բայց եթէ ունենք այնքան ոյժ և զօրութիւն, որ կարող էինք միանգամ այրական հոգի առնուլ, այնուհետև գործը զուարթութեամբ յառաջ է գնում, և մեր աշխատսիրութեան մէջ գտանումենք ճշմարիտ վայելչութիւն:

7. ՀԵՐՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ.

Երանելի էին այն մարդիկը, որոնց ծնունդը իսկոյն բարձրացնելով նորանց աղատումէր մարդկութեան ցած աստիճաններից. երանելի էին նորա, որոնց հարկաւոր չէր անց կենալ այն հանգամանքներէ միջով, կամ թէ միանգամ ցած իջանել այն հանգամանքների մէջ, որոնց մէջ քանի մի պատուական մարդիկ շարւարվումին իւրեանց կեանքի բոլոր ժամանակը. Ընդհանուր և ուղիղ պիտոյ է լինէր այդպիսի բարձրականգուն մարդերի հայեացքը. հենչա պիտոյ է լինէր նոցա կեանքի ամեն մի քայլափոխը. նորա ի ծնէ դրած էիւ որպէս թէ մի նաւի մէջ, որ կարողանային, դէպ ի միւս կողմը անցանելու ժամանակին, ինչպէս որ մեր ամեներևանքս պիտոյ է անցանելնք, օգուտ քաղել յաջող հողմից և սպասել մինչև կը դադարէր անյաջող հողմը. բայց սորա հակառակ, միւսերը միագլուխ լող տա-

լով շարչարվումեն, յաջող հողմից շատ փոքր արուս ունէին և մըրբկի միջոցին, շուտով սպառվելով զօրութիւնքը, կորնչումին, Ինչ յարմարութիւն, ինչ հեշտութիւն սալիս էր մի ծննդական զոյք, և ինչպէս ապահով ծաղկումէր մի վաճառականութիւն որ Հիմնած էր մի լաւ արծաթալիխի վերայ, այնպէս որ ոչ ամենայն ծախուից ձեռնարկութիւն խեղճ անգործ է կացուցանում աշխատաւորը, Կիւ էր կարող երկրաւոր բաների արժանաւորութիւնը և անարժանութիւնը աւելի լաւ ճանաչել, քան թէ նա որ սկսեալ մանկութենից վայելումէր նորանց, և ով կարող էր իւր հոգու զօրութիւնքը այնքան վաղ ուղղեցուցանել զեպ ի հարկաւորը, պիտանին և ճշմարտար, ինչպէս նա, որ իւր սխալները կարող էր ճանաչել այնպիսի հասակում, երբ սակաւին ունէր նա կարողութիւն և հնարք մի նոր կեանք ըսկանել:

Ինչ մարդու իւր ժառանգական հարստութիւնքը հասուցած էին մի կատարելագուս հեշտ կեցութիւն. ով որ, եթէ կարելի է ինչ այսպէս խօսել, սկսեալ մանկութենից տեսնումէ իւր շորս կողմումը մարդկութեան բոլոր երկրորդական բաների առատութիւնը, այդպիսին, ինչպէս պատահումէ յաճախ, սովորումէ այս բարութիւնքը համարել առաջին և ամենամեծ բանը. բայց մի բնատուր ականաւոր մարդկութեան արժանաւորութիւն մնումէ նորա համար անհասկանալի: Մեծատուն մարդերի վարքը փոքրիկների հետ, այլև իւրեանց մեջ յատկապէս, չափած է արտաքին պատուականութենների կշիռով. նորա ամենայն մարդու թոյլ են սալիս ունենալ իւր պատուանունը, իւր աստիճանը, իւր զգեստը, իւր ձիանքը և կտրերը, բայց ոչ յարգի կացուցանել իւր արժանաւորութիւնը, Բայց զուք մի զատապարտէք այդ մեծատունները, այլ մանաւանդ ցաւեցէք նոցա վերայ. Պատճառ, այն երջանկութիւնը որ մեր խոստովանումներ արդէս ամենավերինը, որ և բղիտումէ բնութեան ներքին ճոխութենից, սակաւ էր պատահում, որ զգային նորա խորին սրտով, Մեզ, աշքասներխտ միայն, որ ունենէք կամ սակաւ կամ թէ ոչինչ, պահած է այդ քաղցրութիւնը. առատապէս վայելելէ բարեկամութեան երջանկութիւնը, Մեք չենք կարող մեր սիրելիքը ոչ շնորհով բարձրացուցանել, ոչ բարեացականութեամբ յառաջադէմ առնել և ոչ պարզեցնելով բաղդաւորել, Մեք ոչինչ չուենէք, բաց ի մեր սեփական աննից. այս բոլոր սեփական աննը պիտոյ է ընծայ բերելը, և եթէ սա պէտք է մի փոքր արժանաւորութիւն ունենար, ապա այդ ստացուածը պիտոյ է մշտնջենաւոր ընծայ տայինք մեր բարեկամին. Ինչ վայելչութիւն, ինչ երջանկութիւն և սուտիկ և ընդունողի համար, Ինչ երանելի գրութեան հասուցանումէր մի զ Հաւատարմութիւնը բարեկամութեան

մջ. նա մարդկային անշար կեանքին տալիս է մի երկնային հաստատութիւն, նա կացուցանում է մեր հարստութեան գլխաւոր արծաթազուխը:

8. ՀՆՅՐԵՆՆԵՍԻՄՈՒԹԻՒՆ.

Եւն բոլոր զգացողութիւնքը որ շողկապում են մարդ մարդու հետ և առաջնորդում են զեւր ի առաքինութիւն, ազնիւ զգացողութիւնք էին: Դոպա կարգում էր և հայրենասիրութիւնք: Եւն մի քանի մարդիկ սովոր են պարծենալ ի բնանց ընդհանուր մարդասիրութենով, և այդպէս փորձեցանել հայրենիքի սէրը. զորքա ասում են. «, մեր հայրենքը աշխարհն է. այն անկիւնը ուր ծնած էինք մեր, շունէր իրաւունք պահանջել մեր նախապապի սէրը. պատճառ, զա չէ կարող վերացաս կացուցանել իւր անձը հասնամտելով ուրիշ աշխարհների հետ, ուր կարելի է նոյնպէս, կամ թէ ևս աւելի լաւ ապրել, Հայրենասիրութիւնք չէր ոչինչ այլ բան, և թէ ոչ մի տեսակ իւրասիրութիւն, որ սիրապետել էր շատ մարդերի վերայ, իրաւունք տալով ասելու բոլոր միւս մարդկութիւնք: Եւսպէս են խօսած մի քանի մարդիկ, բայց զու թողլ մի տուր, որ լինիս այդպիսի իմաստակութեան խաղախը, ըստ որում զորքա խորհուրդը այն էր, որ անարգէ և յիմարութիւն ու մալորութիւն ասէ այն բաները որ բարձրացնում են մարդու հոգին և քաջալերում են զեւր ի առաքինութիւնք: Արդարեւ կարող ենք ասել, թէ բոլոր աշխարհը մեր հայրենիքն է, և Արտը պատուիրում է մեզ ամենայն մարդ, առանց խորելու նորա աշխարհը կամ պաշտանի վիճակը, համարել մեր եղբայր և սիրել, որովհետեւ ամենեքեանքս էինք և պիտոյ է լինելնք մի և նոյն Հօր զուակներ, Բայց այս ճշմարտութիւնք, որ դրած էր ամենայն մարդկեղէն ընկերութեան վերայ որպէս հարկ և կանոն, չէ վերացնում միւս աւելի նեղ ընկերական յարակցութիւնքը, և ոչ իսկ Արտը կամք ունի արմատախիլ ասնել աշխարհից ոչ հայրենիքի սէրը, ոչ ծնողների և զուակների մեջ եղած սէրը և ոչ բարեկամների և ազգականների մեջ միասորող կապը: Պատճառ, և այս մի ստոյգ իրողութիւն է թէ մարդկութիւնք բաժանվում է զոկ զոկ ազգեր, և այս բանը սրբած է նոյն թէքն Աստուծոյ կամբով, որ Հին ուխտի մեջ ընտրել էր մի առանձին ժողովուրդ, որի մեջ ծանուցել է իւր աւետարագե խոստումները: Ամենայն ժողովուրդ է մի ամբողջ ընկերութիւն մարդերի, որ միասորված են միմեանց հետ օրենքներով ու բարքերով, հասասոր լեզուով, ազգով և տաճմով, հասարակաց պարծանքով, նեղութեաններով, յուսով, և եթէ ոչ այս բոլոր բաներով, զոնեայ նոպա մի մասնով առանձնապէս կապակից էին միմեանց

Հետ: Գի այսպիսի հոգեղէն ու սրտակից հաղորդութիւն և հաւատարութիւն մի ազգի անդամներին մէջ ասել թէ հասարակաց անձնագաշտութիւն էր, նոյն բանն է, եթէ սակեր, թէ ծնողների և զուակների մէջ սերը մի դաւաճան դաշնաւորութիւն է ընդդէմ միւս մարդկութեանը: Աչ. հայրենասիրութիւնը է միշտ մի ազնիւ զգացողութիւն, թող վերաբերվէր նա դէպ ի մի մեծ կամ փոքր աշխարհ: Չը կայ ոչ մի ազգ, որ չունենար իւր սեփական փառքի և պարծանքի յիշատակները. զոր օրինակ իշխաններ, որ համեմատաբար շատ կամ սակաւ պատիւ էին բերած ազգի անուանը, բարի կարգեր, երևելի քաղաքներ, այս կամ այն գերապանծ բնաւորութիւնը, աղամարդիկ որ իւրեանց քաջասրտութենով, իւրեանց խնաստութենով, իւրեանց գիտութիւններով և ճարտարութիւններով հռչակաւոր էին գտանված: Արեւմտեացի պատճառներ կային, նախապատիւ սիրով սիրելու այն գաւառը, այն քաղաքը, այն գիւղը ուր ծնած էինք: Բայց պիտոյ էր զգուշանալ, մի գուցէ որ հայրենասիրութիւնը, թէ նորա աւելի լայն և թէ աւելի նեղ սահմանի մէջ, շիտթէներ այն սնտիառութեան հետ որպէս թէ ծնած էինք այս կամ այն աշխարհի մէջ, և դորանից քաղէինք մեզ ասելութեան ատիւմ դէպ ի միւս ազգերը և ժողովուրդները: Այդպիսի կոպտա և ստելի հայրենասիրութիւն, փոխանակ անարխիսութիւն լինելու, էր արդարև մի արատաւոր բան և փոքրահոգութեան նշան. զառաձառ, թէպէտև հայրենի աշխարհի սերը մի պատուական բան է, այնու ամենայնիւ չունի նա համարձակութիւն խախտելու սերը դէպ ի մարդկութիւն, և ոչ ևս խցելու այն կապը որ միւսօրելով բոլոր ազգերը, շինուած նորանց մի ազգ Աստուծոյ առաջն:

9. ԵՐԵՎԱՆԻ ԵՆԻՍԵՅՍԻՐՈՒԹԻՒՆԸ .

Ինտութիւնը առանց մարդու ձեռքին երևումէ կոպտա և փայրենի, և այդպէս ևս պիտոյ է լինէր նա, որ հարկադրվէր մարդը մշակագործել նորան, որ նա ինքը ջանք զներ դուրս գալ վայրենական գրութեանց, ճանաչէր իւր անձը որպէս բանական էակ և բանակաւորաբար ապրէր և ներգործէր: Առաջին քայլափոխը այս գրութեանց դէպ ի դուրս, ձգումէ մարդը ցաւի ու ստատպանքի մէջ. նորա կարօտութիւնը աճումն և զօրանումն, և ստիպելով պահանջումն, որ մարդը լցուցանէր նորանց: Բայց մարդը ի բնէ ծղլ և զանգաղկոտ էր, ինչպէս այն նիւթը որից կերպարպանված է նա: Ահա բուհանվումէ մի պատերազմ կարօտութեան և զանգաղկոտութեան մէջ. նա յաղթող է հանդիսանում, բայց սա զանգատումէ դառնապէս: Ահա մարդը իւր երեսի քրտներով գործումէ երկիրը և բարկանում,

որ երկիրը բերումէ փուշ և տատակ որ պիտոյ էր մարդուն զուրս խլել: Աչ թէ արատի աղբիւր է կարօտութիւնը, այլ գործականութեան և առաքինութեան շարժառիթ. ծուլութիւնն է բոլոր արատների աղբիւրը: Ասյնելի շատ ինչքան կարելի է, անաշխատ գտանձիլ ինչքան կարելի է, այդ բանը աւերված ու խանգարված բնութեան պահանջելիքն է, և այն խանգարված բնութեան արատները: Աչինչ փրկութիւն չը կայ մարդու համար, մինչև նորա բնական զանդազկտութիւնը չը յաղթահարվի յաջողապէս, և մինչև մարդը գործականութեան մէջ, այն գործականութեան մէջ միայն, չը գտանէ իւր ուրախութիւնը և իւր վայելչութիւնը: Այդ էր ահա այն ցախ խորհուրդը որ զուգակից է ամենայն կարօտութեան հետ. այդ ցաւը պիտոյ է զրդէ զէպ ի աշխատութիւն. այդ էր ամենայն ցախ խորհուրդը, այդ էր մանաւանդ այն ցախ զիտաւորութիւնը, որ զըրդումը մեր սիրտը, տեսանելով մեր ընկերների անկատարութիւնը, աւերված բարքը և թշուառութիւնը: Այդ որ այս ցաւը և այն զանն ահաճութիւնը չէ զգում, մի վտարար հոգի է. բայց ով որ զգումէ, պարտական է աշխատել ազատել իւր անձը այդ ցախից, լարելով իւր բոլոր զօրութիւնքը, և ինչքան կարելի է, ուղղելով, բարեկարգելով ամենայն բան իւր սահմանի և շրջակայքի մէջ, Գիցո՞ւք թէ նորա աշխատութիւնը ամենեին անպտուղ էր (բայց նա միշտ պողաբեր է, թէպէտ մարդս չէր խոստովանում զօրան), այնու ամենայնիւ զգալով ահա իւր գործականութիւնը և ճանաչելով իւր սեփական զօրութիւնը որ նա ասպարէզ էր զուրս բերում ընդդէմ ընդհանուր աւերութեանը, կարող էր նա մոռանալ իւր ցաւը և վիշաւը. Գո՞ղ այս հատուածը լաւ կարգան մեր Հայկազնեան մարդիկը և ճանաչեն իւրեանց այրական կոչումը աշխարհի մէջ:

10. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՄԱՐԴՈՒ ՍՐՏԸ .

Այր որ ախորժելի հովիտը իմ շրջակայքումս տարածումէ իւր շողիքը, և բարձրացած արեգակը մի ծառախիտ անթափանցելի մութ անտառի երեսը պտտած էր, և հազիւ թէ մի քանի ճառագայթներ ներս էին ցայտում այն ծառաղարդ տաճարի մէջ, և ես սպաս հանգստացած էի բարձրահասակ խոտի մէջ վայրասահ վտակի մտտ, և աւելի մտախց կրկրի վերայ հազարաւոր փոքրիկ խոտեր գրաւումին իմ օւշադրութիւնս. երբ որ ես այն փոքրիկ արարածների միմունջը հասկերի մէջ, այն որդնիկները և ճանճիկները անհամար կերպարանքներով զլուսնի աւելի մտակցած իմ սրտին, զգումնի ներկայութիւնը Ամենակարողի որ ստեղծել է մեզ իւր պատկերի պէս, զգումնի գոյութիւնը այն Ամենասիրողի որ մեզ կրումէ և պահպանումէ մշտնջի-

Նաւոր երանութեան մէջ քաղցրացած, — իմ բարեկամ, եթէ այն միջոցին միմանուեմք իմ աշքիս շորս կողմը և աշխարհը իմ շքահայրուսն, և երկինքը տարբանուեմք իմ հոգու մէջ որպէս մի սիրելի մարդու պատկեր, այնուհետև շատ անգամ փափագուեմք և մտածուեմք ինքս իմ մէջ. Երանի՛ թէ կարողանայիր դու փնէլ լնդձի վերայ այն բանը, ինչ որ այդքան լիովին, այդքան ջերմ կենդանի էր քո մէջ, որ զա կարողանար լինել քո հոգու հայելին, ինչպէս քո հոգին կենդանի Աստուծոյ հայելին էր:

11. ԲՆՈՒԹԻՒՆ. ԱԶԵՏՈՒԹԻՒՆ. ԱՍՏՈՒՇԵՐ.

Կնուծիւնը իւր տեւողութեան ամեն մի բողբէ մէջ է մի շղթայաւիպայ ամբողջ բան, և դու չէիր կարող ոչ մի հատիկ աւաղ խափտել իւր տեղից, առանց մի բան փոփոխելու նորա անշափելի ամբողջութեան բոլոր մասներումը, թէպէտ այդ բանը գուցէ թէ զգալի չէր քո տեսութեան համար: Պատճառ, այս տեւողութեան ամեն մի բողբէն սահմանած է բոլոր անցած ու գնացած բողբէներովը, և սահմանելու է բոլոր գալոց բողբէները. և դու չես կարող ներկայուսն և ոչ մի հատիկ աւաղի դրուծիւն այլապէս մտածել, քան թէ նա էր, առանց հարկադրվելու ամենին այլապէս մտածել բոլոր անցած գնացածը դէպ ի վեր, և բոլոր ապագայն դէպ ի ցած: Փորձիր դու, եթէ կամենումս, այս ամենանուրբ աւաղի հատիկը որ տեսանումս դու. մտածիր սորան մի քանի քայլափոխ աւելի հետի դէպ ի երկիրը դրած. ապա այն հողմը որ գորան հեռացրած էր ծովից, պիտոյ է աւելի սաստիկ եղած լինի, քան թէ եղած էր ստուգապէս. բայց այն ժամանակը պիտոյ է և յառաջագնաց եղանակը որ այդ մըրբկի և նորա սաստիութեան պատճառն էր, այլապէս եղած լինի քան թէ էր. նոյնպէս դարձեալ նորանից աւելի յառաջագնացը, որ պատճառ էր այդ եղանակին: Այսպէս ահա մի անորոշելի և անսահմանելի շափով դէպ ի վեր գնալով կը գտանես դու մի ամենին այլ եղանակաւորութիւն ոգի, քան թէ ստուգապէս եղած էր, և ամենեւին այլ կերպ որպիսացեալ մարմիններ որ ազգեցութիւն ունէին այդ եղանակաւորութեան վերայ, որպէս և սա նոցա վերայ: Եւ ինչպէս կարող ես դու իմանալ — որովհետև չէր տուած մեջ միջամուխ լինել բնութեան ներքը, ուրեմն բաւական էր այս տեղ ջղջ տալ կարելի բաները — ինչպէս կարող ես դու իմանալ, արդեօք այն եղանակի միջոցին, որ հարկաւոր էր տիեզերքի մէջ այդ հատիկ աւաղը աւելի հետի դէպ ի ցամաքը տանելու համար, չէր սովամահ, ցրտամահ կամ ջերմամահ լինելու քո պապերից մինը, մինչև կը ծնանէր այն որդին որ քո հայրն է. այնպէս որ և դու չէիր լինելու աշ-

խորհի վերայ և ոչ ևս այն բոլոր գործերը որ յոյս ունիս զու կատարել ներկայումս և ապագայումը, ըստ որում մի հատիկ աւազ խախտել է իւր տեղից և տարվել է զեզ ի այլ կողմ: Զարմանալի խորհուրդ:

Ահա, սա է խիստ բնական հոգի երկաթի անուրը: Այսու ամենայնիս գիտես զու, ով մարդ, որ զու ոչ թէ միայն տեղափոխումս այն հատիկ աւազը ուր և կամէր, այլև ցամաքեցնումս ջրեր և հաւասարումս սարեր, այդ բանը քո Աշտուհիան է, քո իշխանութիւնը ընտնեան մէջ: Եւ զարնեալ, ինչ որ ևս փոխախումքի զու և կործանումքի, ինչպէս ևս ազգումքի զու այն երկաթի անուրի վերայ, զարնեալ նորոգումք հաւասարակշռութիւնը և ամեն բան յարմարումք բոլորին և գնումք իւր կարգովը: այս էր Աստուածեղեն կամքի տէրութիւնը, որ թաղարումք ընտնեան մէջ և ընտնեան վերայ, որ սահմանումք հողմերի գնացքը և ստեղծագործումք ազատ մարդը:

12. Մ Ե Բ Դ Ը.

Մարդը մարմնաւորապէս կապած է երկրի հետ ինչպէս իւր բնակարանի հետ և աշխատում նորա վերայ լցուցանել իւր պիտոյքը, բայց իւր հոգու մէջ կրում անմահութեան սերմը, որ կարտ էր մի այլ այգեստանի: Երբ որ նա հետաքննումք որ և իջէ մի աղնիս քանքար, իսկոյն գտանումք ամենայն տեղ անկատարութիւնք և հատուկտոր բանք. ամենազնիւ բանը այս աշխարհի վերայ երբէք գլուխ չէ բերված. ամենամարտը բանը, սակաւ է պատահումք որ գտանէր հաստատութիւն և տեղովութիւն. մեր իմացականութեան և սրտի գորութիւնների համար այս երկրաւոր հանդէսը էր միայն վարժութեան և փորձութեան տեղի: Այս բանը հերքապէս ապացուցանումք մարդկութեան պատմութիւնը իւր բոլոր փորձերով, պատահարներով, ձեռնարկութիւններով և յեղափոխութիւններով: Այս տեղ և այն տեղ երևած է մի իմաստուն, մի բարի մարդ և ցանկ է մտքեր, խորհուրդներ և գործեր ժամանակների հեղեղի մէջ. մի քանի այլքներ ոլոր ոլոր լինելով, հասանքը եկաւ և տարաւ իւր հետ այն և նոցա հետը: Այս մարդերի աղնիս գիտարութիւնների մարդարիտը կորաւ, գնաց: Յիմարներ թաղարած են իմաստունների խորհուրդների վերայ և վառնող որդիք ժառանգած են իւրեանց փողովող ծնողների գանձերը: Ինչպէս որ մարդուս կեանքը այս տեղ չէ սահմանված, որ լինի յախտնական, նոյնպէս և այս բոլորակ մշտաշարժ երկիրը չէ մնացական ճարտարաշէնքերի գործատուն, յախտնական բուսականների այգի, մշտնջենաւոր բնակութեան ամարանոց: Մեր գալիս

ենք ու գնումներ. ամեն մի ժամ բերումք այս տեղ հազարներ, և հազարներ վեր է կաշնում և տանումք այս երկրից. Սա մի իջևան է ճանապարհորդների համար, մի մուրթական աստղ որի վերայ գալիս են տեղափոխական թռչուններ և յետ են շտապում տեղափոխական թռչուններ. Ընասունը վերջացնումք իւր կեանքը. թէպէտև զա, բարձր խորհուրդների պատճառով, չէ բոլրում իւր կեանքը տարիներով, այնու ամենայնիւ հասանումք իւր ներքին վախճանին. դորա յաջողակութիւնքը լրացած էին, զա է, ինչ որ պիտի լինէր. Մարդս միայն հակառակարանութեան մէջ էր իւր հետ և երկրի հետ. պատճառ, ամենակատարեալ արարածը իւր բոլոր օրգանական կերպարանքների մէջ, էր նշոյնպէս և առաւել պակասաւորը, նայելով նորա սեփական նոր կարողութեան կատարելագործութեանին, թէև նա յազնալով կեանքից տեղափոխվէր այս աշխարհից, Պատճառը այն է յայտնապէս, որ, մարդու կացութիւնը վերջանալով այս երկրի վերայ, սկանումք մի այլ կենդանութեան ասպարէզ, որի հետ համեմատելով նորա կարողութիւնքը այս տեղ, երևումք նա որպէս մի երկխոյ իւր առաջին վարժութեանների մէջ. Արեմն մարդս պատկերացնումք միանգամայն երկու աշխարհ, և այդ բանը յառաջանումք նորա կրկնապատիկ գոյութեանից.

13. ՄԵՐԴՈՒՄ ԲԵՐՈՅԵԱԿՆ ԵՐԿՆԵՆՈՐՈՒԹԻՒՆԷՐ.

Սեր արժանաւորութիւնը և մեր զօրութիւնը զգումներ մեք աւելի խոր կերպով, և թէ ասումք ինքներիս, ինչ որ ամեն մարդ մեր մէջ ինքը իւրեան կարող էր ասել. այսինքն, իմ կենդանութիւնս զուր և անխորհուրդ չէ. ևս մի հարկաւոր յաղում ևս այն մեծ շղթայակապի մէջ որ սկսեալ առաջին մարդու գիտակցութեանից (անձնաձանաչութեանից) դուրս է պարզվում մինչև անանց մշտնջենաւորութեան ներսը. Եւ դու, ով որ լինէիր, դու որ ունիս մարդկային կերպարանք, և դու անդամակից էիր այս հասարակութեանը. թէպէտ ևս ծանօթ չեմ քեզ և ոչ դու ինձ, այնու ամենայնիւ ևս ներգործումք քո վերայ և դու ներգործումք իմ վերայ. Պատճառ, ինչպէս մեր հասարակաց կոչումը այն է ստուգապէս, որ մեք լինինք բարի և օր ըստ օրէ առաւել յառաջագէտ՝ զէպի բարին, այդպէս և ստուգապէս գալու է մի ժամանակ, երբ կը բացօթյալովէր մեզ, որ մեք կադակից էինք միմանց հետ, փոխադարձ աղատօրէն տալու և ընդունելու գեղեցիկ շաղկապովը. — Եւ ամենայն մեծ, իմաստուն և ազնիւ բան, որ միանգամ եղած է մարդկութեան մէջ, այն բոլոր բարերարքը մարդկեղէն ազգի որոնց անունները համաշխարհական պատմագրքի մէջ արձանագրած են, և այն աւելի շատերը, որոնց ար-

դիւնաւոր գործերը մնացած են, բայց անունները չը կան. ամենեքեան սքրա աշխատել են իմ համար. նոքա սերմանել են, բայց ես եկել եմ հնձելու. ես ոտք եմ կոխում այն հողի վերայ, ինչ տեղ բնակել են նոքա, և մասնուամբ նոցա թողած օրհնութենով լի ժառանգութեան մէջ, Ես կարող եմ, եթէ կամէի, մի և նոյն վսեմական խնդիրը առաջարկել ինձ, որ նոքա առաջարկել են իւրեանց. այսինքն, մեր հասարակաց եղբայրական ազգը աւելի իմաստուն և աւելի երջանիկ կացուցանել. ես կարող եմ յառաջ տանել, շինելով ինչ տեղ նոքա ստիպված էին թողուլ և դադարել. ես կարող եմ այն տաճարը, որ նոքա անկատար թողած գնացին, մտակցնել իւր կատարելութեանը:

« Բայց և ես պիտոյ է թողում և դադարեմ, ինչպէս նոքա » կարող էր ինձ ասել մի մարդ. այդ էր ահա և ամենից առաւել վսեմական մտածութիւնը. ուրեմն, եթէ ես յանձն առնուի այն խնդիրը լուծանելու, չեմ կարող երբէք գլուխ հասուցանել. ուրեմն ես կարող չեմ, թէև իմ կոչումը այն էր ստուգապէս, որ յանձն առնուի այդ գործը, ես կարող չեմ դադարել *Ներդրելու*, ուրեմն և ոչ դադարել *Ընելու*: Եյն բանը որ ասումն մահ, չէ կարող խափանել իմ գործը. պատճառ, իմ գործը պիտոյ է լրանայ, բայց ոչինչ ժամանակի մէջ չէ կարող լրանալ. ուրեմն իմ լինելութեանս չէ սահմանած ոչինչ ժամանակ, և ես մշտնջենաւոր եմ: Ես առաջարկելով ինձ այն մեծ խնդիրը, նոքա հետ միասին գրաւել եմ մշտնջենաւորութիւնը զէպ ի իմ կողմս: Ես համարձակ վեր եմ բարձրացնում գլուխս զէպ ի ահլնկէց ապառաժեայ սարերը և զէպ ի կատաղի քարավազքը և զէպ ի ճայթոզ ու ճարձատվոզ ամպերը որ հրեղէն ծովի մէջ լող են տալիս, և ասումն նոցա. ես մշտնջենաւոր եմ և ախոյեան եմ դուրս գալիս ընդդէմ ձեր կարողութեանը. դուք, ամենեքեանքդ, կործանվեցէք իմ վերայ, և դու, երկիր, և դու, երկինք, խառնակվեցէք վայրենի խռովութենով, և դուք, բոլոր տարերքդ, փրփրացէք, կատաղեցէք և պատերազմելով ջարդուփշուր արեցէք այն մարմնի վերջին փոքրիկ հիւլէն, որ ես ասումն իմ սեփականս. — բայց իմ կամքը միայն իւր ամուր առաջարկութեան հետ միասին պիտոյ է ազատ և հանդարտ շրջի տիեզերքի աւերակների վերայ. պատճառ, ես յանձն եմ առել իմ կոչումը, և նա աւելի տեւ, զական է քան թէ դուք. նա մշտնջենաւոր է, և ես մշտնջենաւոր որպէս նա:

ՀՕՐ ԿՏԵԿԸ ԻՒՐ ԶԼԵԵԿԻՆ.

.. Ուրի և արծաթ շունի՛մ, բայց ինչ որ ունի՛մ, — սալի ևս քեզ ..

Քաղցր որդեակ.

Ընչա՛ փոքր առ փոքր մտանումս ժամանակը, որ պիտոյ է գնայի այն ճանապարհը որ անդառնալի է, Ես չեմ կարող առնուլ քեզ իմ հետ և թողումս քեզ մի աշխարհում, ուր բարի խորհուրդը աւելորդ չէր: Ոչ ով ի ծնէ իմաստուն չէ. ժամանակը և փորձը ուսուցանումն այս տեղ և սրբումն կալը: Ես աւելի երկար տեսած եմ աշխարհը, քան թէ դու: Ոչ ամենայն բան, որ փայլումը, սկի է, իմ որդի. և ես քանի անգամ տեսած եմ, որ այս կամ այն աստղը վայր ընկաւ երկնքից և այս կամ այն գառազանը որի վերայ յուսացած էին, խորտակվեցաւ: Այս պատճառով կամենումս քեզ մի քանի խրատներ տալ և ասել քեզ, ինչ որ տեսած էի, և ինչ որ ժամանակը ուսուցել է ինձ:

Ոչինչ բան մեծ չէ, եթէ չէ բարի, և ոչինչ բան ճշմարիտ չէ, եթէ չունի հաստատութիւն:

Մարդը չէ այս տեղ իւր հայրենի սիւնանումը, և նա դիպուածով չէր շրջում հողեղէն զգեստը վերային: Տես ահա, բոլոր միւս բաները, որ ընկերակից էին նորան, գնումն և անցանումն առանց գիտութեան. բայց մարդը գիտակից է իւր անձինն (ճանաչում է իւր անձը) և է որպէս թէ մի բարձր և ամուր պատ, որի մտքից ստուերները թափառելով անցանումն, թուր բաները որ կային նորա շրջակայքումը, ստորագրեալ են օտարի կամքի և կարողութեան տակ. և միայն հաւատարիմ է եղած (յանձնված է) ինքը իւրեան և իւր կեանքը կրում է իւր ձեռքումը. մի և նոյն չէ նորա համար, արդեօք զէպ ի աջ, թէ զէպ ի ձախ կ'երթար: — Տեղիք մի տուր այն կարծիքին, որպէս թէ նա ինքը կարող էր իւր անձը փրկել և ինքը ամենից լաւ գիտէ իւր ճանապարհը: — Այս աշխարհը շատ սակաւ էր նորա համար, և անտեսանելի աշխարհը անյայտ ու անգիտելի է նորան: — Ուրեմն խնայիր քեզ և անօգուտ ջանք մի արա. մի պատրաստիր քեզ ցաւ և պահպանիր քո անձնաճանաչութիւնը: — Անարժան համարիր քեզ, շար գործեն: — Մի կապիր քո սիրտը անցաւոր բանի վերայ:

Ճշմարտութիւնը չէ յարմարվելու մեզ, սիրելի որդեակ, այլ մեք պարտական ենք յարմարվիլ նորան: — Ինչ որ դու կարող ես տեսանել, տես և դժբա՛ղ զիր քո աչքերը. բայց անտեսանելի և մշտնջե-

նաոր բանի մասն, թող առաջնորդէ քեզ սուրբ գիրքը, Հաւատարիմ կացիր քո հայրենական կրօնին և փախիր ամենայն վիճարանութենից զորա վերայ. Աստուած ինքը կ'առաջնորդէ քեզ:— Աչ ովից մի վախեցիր այնքան, ինչքան ինքդ քեզանից. պատճառ, մեր մէջ յատկապէս բնակում ասն զաստուորը որ շը գիտէր սուտ ասել, որի ձայնը աւելի ծանրակշիռ է քան թէ ողջոյն աշխարհի հաւանութիւնը և բոլոր հին ազգերի խնայտութիւնը: Հաստատ կան զիր քո համար, իմ որդի, որ երբէք ընդդէմ նորա հրամանին չը գործես. ինչ զիտաստութիւն ևս ունէիր զու, յառաջուց մտածիր զու և խորհումք հարցրու քո ներքին զաստուորից: Ազգրումը կը խօսէ նա կամոց և մեղով և կը կակաղէ որպէս մի անմեղ երեսայ. բայց եթէ զու կը պատուես նորա անմեղութիւնը, ապա կ'արձակէ նա իւր ձայնը և կը խօսէ քո հետ աւելի մեծարարաւ:

Աստուոր յօժարութեամբ միակերից, և ինչ տեղ խօսք է բացվում խնայտութեան, մարդկեղէն երջանկութեան, աստուծափախութեան և ազնուամտութեան վերայ, այն տեղ ականջ գիր մտադիւր, Բայց մի հաւատար շուտով և ամենայն բանի. պատճառ, ոչ ամենայն անպեր ջուր ունին իւրեանց մէջ, և կան տեսակ տեսակ խօսակցութիւնք: Ամանք կարծումն շատ անգամ, թէ ունէին իւրեանց մէջ այն բանը, որի վերայ կարող էին խօսել և խօսումնին, Բայց այդպէս չէ, իմ որդի. բռտերը լսկ բռտեր են, և ինչ տեղ զգրա հեշտ ու շոյտ թռչումնին բերանից, այն տեղ զգաստութեամբ զգուշացիր քո մասին. պատճառ, այն ձիւները որ մի սայլ բեռնատարած գանձերով, ձգումնին իւրեանց քամակից, գնումն ծանր քայլով:— Աթէ մի մարդ կամենումը քեզ խնայտութիւն ուսուցանել, ապա նայիր նորա երեսին. եթէ տակաւին կարծումը իւր անձը արդարեւ խնայտուն, ապա թէեւ լինէր նա շատ ուսած և հոշակուոր, թող նորան և հրածար գիր նորա կենակցութենից: Ինչ որ մի մարդ չունի, այդ բանը կարող չէ տայ և միակերին: Այն մարդը չէ ազատ, որ կամենումը կարողանայ առնել, ինչ որ կամենումը, այլ նա է ազատ, որ կարող էր հօշոնու, ինչ որ արձան էր նորան առնել: Աս այն մարդը չէ խնայտուն, որ մտածում թէ զիտէ, այլ նա է խնայտուն, որ վերահասու լինելով իւր աշխատութեանը, փորձով բժշկվել էր իւր ամբարտաւան մտածութենից: Աթէ հարկուոր էր քեզ խնայտութիւն, ապա որձեր նորան միայն, և ոչ թէ քո անձնականը. կարելի քո կամքը և համբերութեամբ պատիր հետեանքներին:

Մտածիր յաճախ սուրբ բաների վերայ և միամիտ կաց, որ անոգուտ չէր քեզ այդ, և խմորը զորանով կը թթուէր բոլոր որը: Ծաղը մի արա ոչինչ կրանի վերայ, պատճառ, զորան արգարապէս

պատուներ հոգին, և դու չը գիտես, ինչ բան ծածկած էր աննշան պատկերներէ տակ, — Շատ հեշտ էր արհամարհել մի բան, իմ որդի, բայց հասկանալ զորան աւելի լաւ էր, — Մի՛ ուսուցանիր ուրիշներին, մինչև ինքզ ուսած չը լինիս: — Պաշտպանիր ճշմարտութիւնը, ուր և երբ կարող ես, և թող քեզ նորա համար առնն և արհամարհեն, բայց իմացիր, որ « անշուք » բանը չէ ճշմարտութեան բանը, և զգուշացիր, որ այդ երկուքը չը խառնվին միմեանց հետ. ապա թէ ոչ. կարող էր ճշմարտութիւնը յաղթահարվել քո անձնական գործից. այնուհետև կը մնայիր դու անվարձ, — Բարի բանը արա՛ ինքզ քեզանից, որովհետև բարի էր զա, և հոգս մի արա, թէ ինչ կը ծնանի զորանից, — Կամեցիր միշտ մի և նոյնը, լայց կամեցիր սրտից խորքիցը:

Կնամք տար քո մարմինն, բայց ոչ այնպէս, որպէս թէ քո քո հոգին էր, Հնազանդ կացիր մեծաորներին և թող ուրիշները վիճարանեն նոցա գործակատարութեան վերայ: Երգարացնաց եզիր ամենայն մարդու հետ, բայց քո գաղտնիքը մի՛ հաւատար խելոյն ուժ և իցէ: — Մի՛ խառնվիր օտար գործերի մէջ, բայց քո սեփական գործերը կատարիր մտադիւր, — Աչ ովի հետ մարդահաճութիւն մի՛ արա և թող մի՛ տուր նոյնպէս, որ առնեն քո հետ, — Պատուիր ամենայն մարդ իւր կարգին համեմատ, և ապա թող ամաչէ նա, եթէ անարժան էր քո պատուին. մի՛ լինիր ոչ ովի պարտական, բայց յառաջամասնոյց եզիր, որպէս թէ ամենեքեան քո պարտատեարքն էին, — Մի՛ կամեցիր միշտ ցոյց տալ քեզ վեհանձն, բայց եզիր միշտ արգարասէր, — Օգնիր և տուր յոժարութեամբ, եթէ ունիս, և մի մտածիր թէ մի մեծ գործ ես կատարել. բայց եթէ չունիս, ապա մատուցանելով և մի բաժակ սառն ջուր, չունիս տեղի մտածելու թէ փոքր էր այդ, — Մի՛ ստա, ինչ որ գիտես, բայց իմացիր ինչ որ ստուժես, — Ընձնատուր մի՛ լինիր մեծատուններին, — Մի՛ նստիր անդգամներէ ընկերութեան մէջ, որովհետև զորա առաւել վատթարքն էին բոլոր արարածներէ մէջ, Պատուիր և հետեւիր ոչ թէ կեղծաբար, այլ ճշմարիտ կրօնապաշտներին: Մի մարդ որ իւր սրտի մէջ ունի ճշմարտապէս Աստուծոյ երկիւղը, է որպէս արեգակն, որ փայլում և ջերմացնում, թէպէտ խօսում չէր, — Երա՛ ինչ որ արժանի էր վարձի, բայց մի՛ պահանջիր ոչինչ վարձ, Եթէ դու վիշտ ունիիր, ապա զանգատիր դու քեզ, և ոչ միւսերին, եթէ մի կերպով կարող էիր համբերել:

Աչր որ մտած էի ես, փակիր իմ աչքերը և մտածիր, որ ես տեղափոխված էի դէպ ի մի աւելի լաւ կիսնք, — Օգնական եզիր քո մօրը, պատուիր նորան, ինչքան կենդանի էր նա և թողիր նո-

րան իմ գերեզմանի մօտ. Ըմենայն որ մտածիր մահու և կեանքի վե-
րայ, և ուրախ ու զուարթ կաց: Մի գնար այս աշխարհից, ստանց
քո սերը և մեծարանքը դեպ ի քրիստոնեական Հաւատի Հիմնադիրը
որ և իցե գործով յայտնի կացուցանելու:

Գ Յ Հ Ե Բ Դ

Ս. Բ Ա Բ Ն Ե Ի Դ Ե Ն Ե Ն Ե



Բ Ր Վ Ը Ե Ն Դ Ը Կ Ո Ւ Թ Ի Ի Ե Ն .

	Կնդրանկար-նիւնք .	Եջի .
1. Մարզը	1	2.
2. Մարզու աշխատատեղութեան աշխիւրը և շարժառիթը	3	4.
3. Բանակը	4	5.
4. Ենչէն և շէն բնութիւնը	5	8.
5. Կարգը և Ենկարգութիւնը բնական աշխարհի մէջ	8	12.
6. Ենտանեկը և ստանապաս սահմանները բնակիչը	12	13.
7. Հողմերի պատկարութիւնը	13	14.
8. Հրաբուխի սարի արտահոսութիւնը և սպախմանութիւնը	14	15.
9. Չորս հասկները	15	22.
2. Կառնիւն Կորսիւն-նիւնք .		
10. Սուրբ Պետրոսի եկեղեցին	22	28.
11. Ծովը	28	29.
12. Բնութեան հրաշքները աննախորդ բաների մէջ	29	31.
13. Եղիպտոսի Որդուկը	31	32.
14. Խան կամ Բարձրաւոր	32	33.
15. Արեւելեան աշխարհի հիւրատեղանքը	33	35.
16. Արարիւյն անապատը	35	38.
17. Կամուսիւն շուքը	38	42.
18. Թեյն գետի ջրվեժը Հաֆսուաղն թաղարի մաս	42	44.
19. Նշի անտարածք բնութեան սյւլ անձ	44	48.
20. Գարնան վերադարձը	48	51.
21. Ենկարգի աստուած գաշտուողի մէջ	51	52.
22. Ենկարգի երեկոն գաշտուող	53	55.
23. Սասցալէն սպարակը	55	57.
24. Բուստիլ անունով բանուր Փարիզի մէջ	57	58.
25. Ժողովրդի վայելչատեղութիւնը Ենկարգի թաղարի մէջ և Նորս շրջակայքում	59	62.
26. Շվեյցարի աստիճան վերադարձը	62	64.
3. Բնութեան քրտարանի Կորսիւն-նիւնք .		
27. Ղեկավար սարի արտահոսութիւնը 1793 թուականին	64	70.
✓ 28. Մասին սարի արտահոսութիւնը 1830 թուականի Յունիսի 20ին	70	79.
29. Լիտարանի երկրաշարժութիւնը	79	86.
30. Դաշտուողի և Ենկարգի	86	102.
31. Պերս	102	114.
✓ 32. Այրաբառ գուռուտի պողպարութիւնը	114	117.
4. Ստանապանի ճամբ .		
1. Բնագրասով գիտութիւն	117	133.
2. Բնագրասովեան ինչպե՛սիկ պատուր և շահուտութիւնը	133	149.
3. Ընդհանուր նկատուածքները կենդանական թաղարիութեան մասին	149	156.
4. Թե՛ ինչպե՛ս և լիծում բուսականները աճեցողութիւնը	156	169.
5. Արագութիւնը	169	174.
6. Եւրոպայի նշանակը	174	182.
7. Հոնկարներին ծառերը երկրի վերայ	182	186.
8. Հոնկարու ծառը (Artocarpus)	186	190.
9. Կամուսու ծառը որ ասում և կոչւմաւ	190	196.
10. Յնկարանական աշխարհայրութիւն	196	209.

11. Հասարակական խոր գիրացը	209 — 215
12. Կարմիր գլխի աշխարհի մէջ եղած բաների յարակցութիւնը փոփոխուող հետ	215 — 220

5. Գաղութնական ճամբեր.

1. Երևանեան եկեղեցու վերանորոգութիւնը որ յայտնի է անուանաբար Երևանի մեջ	221 — 299
2. Ինկիզիտիոն (Inquisitio)	300 — 317
3. Կասանդուպուզի տիրակալները Տաշիզի մէջ	317 — 327
4. Փարիզեան արհեստագործի հարսանիքը, կամ թե՛ Բարթոլոմէան գիշերը	327 — 337
5. Եթէնք	337 — 352
6. Ծովագնացութեան գոյնարութիւնը	352 — 355

6. Ինտերպոլիտն ճամբեր (Ինտերպոլիտն) Երևանի մէջ.

1. Քննչութիւնը տասնչորսից երկնքի վերայ	356 — 365
2. Կարգաւորական կազմակերպութիւնը, որ լինի անկէ յարկաւոր, Երևանի մէջ	365 — 370
3. Կարգաւորական արժանաւորութիւնը	370 — 380
4. Լեզուի պարզաւորութիւնը	380 — 389

7. Բանասիրական ճամբեր.

1. Լուս Կապուտի տեսիլը	389 — 397
2. Գալիլէի տասնչորսից երկնք	397 — 407
3. Ինքնակրթութիւնը	407 — 412

8. Գաղութնական ճամբեր.

1. Երևանի թաղերի Կարգաւորական արժանաւորութիւնը	412 — 433
2. Երևանի Պարիզի մէջ	433 — 469
3. Ինքնակրթութիւնը	469 — 481

9. Գաղութնական ճամբեր և Երևանի մէջ.

1. Երևան	482 — 483
2. Կրթական Երևան	— —
3. Կրթական Երևանի Կարգաւորականութիւնը	483 — 484
4. Երևանի Կրթական Երևան	484 — 485
5. Կարգաւորական Կարգաւորականութիւնը	485 — 486
6. Փրկութիւնը	— —

10. Բարձրագոյն ճամբեր.

1. Կարգաւորական և Կարգաւորականութիւնը	486 — 487
2. Կարգաւորական և Կարգաւորական	487 — 488
3. Կարգաւորական	488 — 489
4. Կարգաւորականութիւնը	489 — 490
5. Կարգաւորականութիւնը	490 — 492
6. Կարգաւորական և Կարգաւորական	— —
7. Կարգաւորական և Կարգաւորական	— —
8. Կարգաւորականութիւնը	492 — 493
9. Կարգաւորական աշխարհագրութիւնը	493 — 494
10. Կարգաւորական և Կարգաւորական	494 — 495
11. Կարգաւորական, Կարգաւորական, Կարգաւորական	495 — 496
12. Կարգաւորական	496 — 497
13. Կարգաւորական արժանաւորականութիւնը	497 — 498
14. Կարգաւորական խոր գաղութնական	499 — 502

